ԼՐԱՎՈՒՅ ՇԱԼԱՊՈՎ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

VIII

ԳԻՐՔԸ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԻՆԸ ՀԱՏՈՐՈՎ

86134

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԻՆԸ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ ՈՒԹԵՐՈՐԴ

ԸՆԿԵՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
2016

ՀՏԴ 316:001
ԳՄԴ 60.5+72
Շ 301

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա՝

**Լ. Գալստյան, Վ. Դևրիկյան, Ավ. Խաչիկյան,
Վ. Կիրակոսյան, Ս. Մարգարյան,
Ա. Մանուկյան, Ս. Սարինյան, Ե. Փամբուկյան**

Հատորի խմբագիր՝ **Ա. Մանուկյան**
Բնագրելը պատրաստեցին և ծանոթագրեցին
Մ. Սարինյանը և Լ. Ավետիսյանը

Շանթ Լևոն
Շ 301 Երկերի ժողովածու/Լ. Շանթ. – Հ. VIII, Ընկերաբանական և գիտական աշխատություններ – Եր.: «Գիտություն» հրատ., 2016, 711 էջ:

ՀՏԴ 316:001
ԳՄԴ 60.5+72

ISBN 978-5-8080-1008-6
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2016
© ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ԱԶԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՔ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԺԽՏՈՒՄ ՄԵՐ ՇՈՒՐՋԻ ԱՊԱԶԳԱՅԻՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային զգացումը, ինչպես և ազգության գաղափարի գնահատումը չա՛տ պղտորված ու խանգարված է մեր մտավոր դասակարգին մեջ վերջին երեսուն-քառասուն տարիներու ընթացքին:

Տարբեր է հարցը ժողովուրդի լայն շերտերուն համար: Բուն իր հողին վրա ապրող երկրի ժողովուրդը ո՛չ ազգասիրական հափշտակություններն ու ծիծաղելիությունները կճանչնա, ոչ ա՛լ հակազգային զգացումներու համար տեղ ու հասկացողություն կա անոր առողջ հոգիին մեջ. ան հայ մարդն է, որ կտառապի իր հայ ըլլալուն համար ու կմաքառի հայ մնալուն համար՝ առանց երկար-բարակ դատողություններու և ցուցադրության, բնականորեն, պարզորեն, իր կյանքն է, իր գոյությունը: Մինչ գաղութներու ժողովուրդը կտրված իր հողեն ու ջուրեն, հեռու իրականութենեն ու դիպքերուն անմիջական մասնակցութենեն, այրող ու անհանդիստ կարոտի մը մնջեն կտեսնե ամեն բան և այլազան գույներով. որով և ավելի խոստուն, ավելի աղմկոտ ու ցուցադիր զգացում մը ունի դեպի իր բացակա հայրենիքն ու ազգությունը. այնպես որ ավելի շուտ պատճառ ունինք զանգատելու անոր հիվանդոտ ազգասիրութենեն, քան ազգային զգացումի տկարացումեն:

Այդ տկարացումը անվիճելի է սակայն մեր մտավոր ըսված դասակարգին մեջ և պատճառն ալ շատ պարզ: Քիչ-շատ ուսում առած մարդը մչտական չիման մեջ է իր ժամանակի ընթացիկ գաղափարներուն հետ. և ինչքան ալ հարևանցի ու մակերեսային ըլլա չփումը, այդ գաղափարները կդառնան այն աղբյուրը, ուրկե ինքը կվերցնե կյանքը ըմբռնելու եղանակը:

Վերջին երեսուն-քառասուն տարիները սոցիալիզմի տիրապետությունն էր. այսինքն՝ վարդապետության մը, որ ամբողջովին հենված է տնտեսական դասակարգերու բաժանման վրա, կուսումնասիրե կապիտալի ու բանվորության միջև եղած ներկա ու ապագա պայքարը, և որու նպատակն է սրել, հասունցնել ու արագացնել այդ երկու հատվածներուն միջև եղած կռիվն ու

ընդհարումը: Ինքնին, ուղղակի կերպով ազգութեան դեմ ոչինչ չունի սոցիալիզմը. բայց երբ իր բոլոր ուժովը կհրահրէ ժողովուրդի մը տարբեր մասերուն միջև եղած չահերու ու ձգտումներու հակադրութեունը, բնականորեն ազգային կապը կխախտի, կթուլնա, կգունաթափի, և ազգային արժեքներն ալ կգնաթափին:

Մյուս կողմեն՝ անընդհատ պրոպականտ կմղվի բոլոր երկիրներու «աշխատավորութեյունը» իրար կապելու և միահամուռ գրոհ տալու համար կապիտալի վրա, խորտակելու համար բոլոր արգելքները, որ բանվորը բանվորեն կզատեն, կտրտելու համար բոլոր կապերը, որ բանվորը ոչ բանվորին կկապեն: Այս գաղափարով բռնկած ու այդ գաղափարի համար ոգորող պրոպականտիստի մը, հրապարակագրի մը կամ մատենագրի մը հոգիին մեջ, երբ մանավանդ հոն ավելի խանդավառութեյուն կա, քան մտավոր հասունութեյուն, ազգային գոյութեյունը, ազգային ինքնութեյունը, ազգային բաժանումները թշնամի երևույթի մը հանդամանքը կստանան:

Իսկ երբ դասակարգային ու տնտեսական այդ պայքարը տեղի կունենա Արևելքի նման խառնազգ միջավայրի մը մեջ, ինչպես է Բագու, Բաթում, Թիֆլիս, Պոլիս և մեր Հայրենիքը, ուր ազգային կռիվը կմղվի միաժամանակ դասակարգայինեն անհամեմատ կարևոր չափերով ու թափով, խաչաձևելով ու խաթարելով մյուսի ազատ շարժումները, գարմանալու շատ բան չի մնար, եթե ազգային դրոշակը կդառնա ատելութեյան, հալածանքի ու հայհոյանքի առարկա:

Արդ՝ այս ազդեցութեյուններուն կամ անոնց արձագանգին տակ ինչ ձև է ստացած ազգայինի ու ազգութեյան ըմբռնումն ու գնահատումը մտավորականի մը հոգիին մեջ:

Ամենեն առաջ կա թարմ ու դեռ չգործադրված ուժեր ունեցող հոգեկան ընդհանուր տրամադրութեյուն մը, որ սովորաբար կապված է նաև թարմ տարիքի հետ: Երջանիկ պատանութեյունը չի սիրեր աչքի տակի երևույթները, մոտակա գոեհիկ իրականութեյունը: Ան կսիրե բարձրանալ վերերը, սավառնիլ իր չինած ու երևակայած աշխարհներուն մեջ: Ան կպաշտե բացարձակը, հավիտենականը, ծայրահեղը ու գլուխ չունի թերատ ու անցողակի

բաներու: Անոր համար անցյալը հեքիաթ մըն է միայն և ո՛չ ներկայի ու ապագայի հիմքը: Անոր համար ներկան պատահական շրջան մըն է միայն ձանձրալի ու անկարևոր: Կարևորը ապագան է. այն լուսավոր, այն արդար, այն գեղեցիկ ապագան, որուն ինքը կհավատա իր սրտին խորքեն: Վե՛րջ ամեն մարդկային թշվառութեան ու տառապանքի. վե՛րջ մարդկային գազանութեան, արյան, հափշտակութեան ու պատերազմի. վե՛րջ ամեն չհագուրծուումի, անհավասար ու անբնական աշխատանքի, բոլոր մարդիկ՝ հավասար ու նման իրար իրենց տնտեսական պայմաններով, կրթական վիճակով ու ամեն իրավունքներով. ո՛չ իշխող, ո՛չ իշխված, ո՛չ ճնշող, ո՛չ ճնշված, ամենուն աշխատանքը՝ նույն չափով, ամենուն կյանքը՝ նույն հարմարութիւններով. և ամենքը իրար կապված և ամենքը իրարու հյուսված՝ մեծ համամարդկային բազդավոր դոյութիյուն մը ունենալու համար:

Այս արքայութեան տեսութեամբը հափշտակված հոգիի մը համար ի՛նչ չնչին ու ճղճիմ հարցեր են «Հայրենիք» ըսված հողի մասնավոր կտորի մը համար իրար գլուխ պատռելը, լեզվի ու կրոնի նման անհատական բաներու շուրջ վիճելը և ազգային ավելի ևս անխմաստ բաժանումներն ու խնդիրները:

Մենք անցնինք ավելի հասուն, ավելի դրական ու ավելի տեսական միտք ունեցողներու ըմբռնումին: Ի՞նչ է անոնց ըսածը:

«Մարդիկ ապրեր են դարեր ու դարեր տոհմերով ու ցեղերով և ազգութիյուն չեն ճանչցած: Կազմեր են ահագին պետութիյուններ ամեն տեսակի ազգեր իրարու խառնած, ուր դեր է ունեցեր միայն պետական շահը և անհատական շահը: Ազգային միութեան գաղափարը և ատոր կապված ազգային զգացումը համեմատաբար շատ նոր հնարված բան է. և գլխավորապես վերջին դարերու ուժեղ թագավորներու ջանքերովը՝ իրենց բացարձակ միապետութեանը սկզբունքային տևական հիմք մը տալու համար, ինչպես և իրենց հողերը «կլորցնելու» հրաշալի պատրվակ մը. մյուս կողմեն ալ ազգային սկզբունքը համարելով ամբողջ ժողովուրդը հպատակութեան մեջ պահելու և չհագուրծելու նոր սանձ մը: Իսկ հիմա այդ ազգութեան գաղափարին վրա հեծեր են կապիտալիստները և ազգային տնտեսութիյունը բարձրացնելու

դիմակին տակ՝ կատիպեն իրենց երկրի բանվորությունը. և այդ ճնշման տակ արտադրված ապրանքներուն նոր շուկաներ ձեռք բերելու համար կաթլքեն պատերազմներ, կվարեին գաղութային քաղաքականություն՝ քամելով թե՛ իրենց աշխատավորությունը և թե՛ հեռավոր ժբաղդ ժողովուրդները: Ազգային գաղափարը իր ծնած օրեն եղեր է և է մի՛շտ ժողովուրդները խուզելու և կեղեքելու միջոց մը, իսկ զանազան ժողովուրդներու մեջ՝ կռվի ու ընդհարման պատճառ, ճիշդ այնպես, ինչպես և կրոնները: Բռնության ու կապիտալիզմի գործիքն են ատոնք և բռնության ու կապիտալիզմի վերացման հետ ալ պետք է վերանան: Համենայն դեպս ո՛չ մեկ ազգեցություն չի պիտի ունենան պետական կյանքին ու կազմության վրա: Պետությունը պետք է զատվի ազգութենեն, ինչպես արդեն զատված է կրոններեն: Ազգությունը շա՛տ-շատ անհատական համակրանքի ու հակակրանքի խնդիր է, կախված անհատի հոգեբույքեն ու կամքեն: Եղի՛ր ինչ կրոնքի որ կուզես, իսո՛ ինչ լեզվով որ քեզի հաճելի է, դավանե՛ քեզի ա՛յն ազգության, որուն որ սիրտդ կքաշե. ճիշդ այնպես, ինչպես որ քու անձնական գիտնալիք բանդ է պատկանիլը այս կամ այն երաժշտական ընկերության կամ մարմնամարզական ակումբին: Իսկ հանրային, պետական կյանքը պետք է հիմնվի աշխատավորներու տնտեսական փոխհարաբերությունների վրա, քանի որ մարդկային ամբողջ զարգացումն ու քաղաքակրթությունը ինքը արդյունք է մարդոց տնտեսական պայմաններուն, այսինքն՝՝ մարդու ըլալուին, արդյունաբերածին և այդ արդյունաբերության չարժումին ու բաշխումին»:

Կա և երրորդ սուվար խումբ մը, որ բնավ համոզված չէ, թե աշխարհիս երեսին ամեն բան միայն տնտեսական պայմաններու վրա է հիմնված և որոշ կերպով կզգա այն խոր կապը, որ կա իր և ազգակիցներու միջև: Բայց և այնպես այն աստիճան ազդած է վերի ու վերինի նման դասումներեն, որ պղտորված է իր մտածումը և երկվության մեջ է իր հոգին. ավելի կզնրադասե այդ հարցերը շատ չփորփրել: Ջէ՞ որ «սոնղիմենդալ» բաներ են վերջապես և հետազիմական, հակառակ ժամանակի ոգիին, և նեղ գաղափար-

ներ կամ դոնե այդպես են նկատված իր ամենի կտրուկ ընկերներու, դրացիներու և կուսակցություններու կողմե:

* * *

Ահա՛ ազգային ինչ ըմբռնում և հոգեկան ինչ վարանք կներկայացնե մեր արդի «մտավոր» դասի մեկ բավական խոշոր հատվածը: Ի՛նչ զգալի կորուստ մը մեր ազգային մաքառման միջոցին և ի՛նչ չուայլ ուժերու վատնում մը մեզի նման փոքրիկ ժողովուրդի մը համար: Ճի՛շդ է, ատոնցմե շատերը ավելի ուշ, տարիքի ու փորձառության աճումին հետ կուգան ինքնին դեպի ազգային արժեքներու և ազգության ավելի ուղիղ գնահատումը և ավելի խոր ըմբռնումը, բայց և այնպես պարտք կա ամենուս վրա օժանդակելու, որ արագ ու լայն չափերով կատարվի այդ սթափումը:

Իրա՞վ, այդպես պատահական ու անցավոր բա՞ն մըն է ազգն ու ազգայինը: Իրա՞վ է, որ երեկվան ծնունդ է ան ու վաղը դատապարտված է մահվան: Իրա՞վ է, որ կեղեքողներու և բռնակալության զենքն է անիկա և քաղաքակրթության զարգացման հետ պետք է դառնա անհատի քմայքեն կախված ավելորդ հագուստ մը:

Այն ժամանակ Հանուն ինչի՞ է, որ կկրե հայ ժողովուրդը իր այս անպատմելի տառապանքը և անօրինակ խաչելությունը, եթե որևէ ճշմարտություն կար այդ մարդոց ըսածին մեջ: Եթե ազգությունը այդ աստիճան արհամարհելի բան մըն է ու անկարևոր մարդկային զարգացման համար, ավելի լավ չէ՞, որ այդ պարոնները և այդ պարոններուն հետն ալ ամբողջ հայ մտավորականությունը քարոզեն մեր ժողովուրդին, որ ձեռք վերցնե իր հայությենեն ալ, քրիստոնեությենեն ալ, դառնա թուրք, քուրտ ու պարսիկ, ձուլվի, միանա անոնց հետ. կամ երթա թափվի եվրոպական ժողովուրդներու ծովուն մեջ, խառնվի ու վերջանա, և ազատվի իր վզին ինկած այս սոսկալի լուծեն, այս դարավոր նահատակությենեն:

Բայց զարմանալի է, որ այդ քարոզը ոչ ոք չի կարպար, ո՛չ իսկ ազգությունը հեգնող ու ասպազգայնացած պարոնները: Ին-

չո՞ւ: Եվ ինչո՞ւ ինքը ժողովուրդը կծառանա այդ գաղափարին դեմ և դարեր ու դարեր կմաքառի, կուվայտի ու կծվաստվի իր ուժերուն ու կարողության ներածին չափազանց անդին իր ինքնուիյունը պահպանելու համառ ջանքերով. և իսկույն ավելցնեմ ինչպես բոլոր մյուս ժողովուրդները:

Ամեն կենդանական բնազդ անհրաժեշտության մը ծնունդ է ու կծառայե կյանքի ու գոյության նպատակներուն: Այդպես ալ ամեն ընկերային բնազդ անհրաժեշտություն մըն է հանրային կյանքի համար և քաղաքակրթության պահպանումին ու զարգացմանը կծառայե:

Եվ երբ բոլոր ժողովուրդները բոլոր ժամանակներուն մեջ այդպես համառ ու ամուր կպած են իրենց երկրին, իրենց անկախության, իրենց լեզվին ու կրոնին, վարք ու բարքին, սովորություններուն, նիստ ու կացին, վերջապես այն ամենուն, ինչ որ ազգային կանվանենք. կնշանակե, թե հոտ չատ ավելի հիմնական, բնական, մեծ ղեր ունեցող և անհրաժեշտ երևույթ մը կար մեր առջևը, քան հարստահարիչներու հնարած վարպետությունը կամ անհատներու քեֆեն կախված սանդիմենդալություն մը, ինչպես որ այդ մարդիկը համոզել կուզեն ինքզինքնին ու մեզի:

Բ. ԲՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԵՐԱԾ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչո՞վ է, որ ժողովուրդ մը ուրիշ ժողովուրդներեն կզանազանի և ինչո՞վ է, որ, ընդհակառակը, նույն ժողովուրդի անդամները կապված են իրարու:

Բնականաբար ամենեն առաջ ծագումը, արյան կապը, նույն նախահայրերեն առաջացած ըլլալը, ցեղը: Ընտանիքն ու ազգակցությունը ամենեն նախնական ու բնական կապն է մարդոց մեջ: Եվ իրենց ծագումը մեկ աղբյուրե մը ըլլալու միտքը այն աստիճան հարազատ ու անհրաժեշտ է եղած հետզհետե պիտակցության եկող ժողովուրդներուն, որ ամեն մեկը իր ինքնուիյունը և իր

մասերու փոխադարձ կապը բացատրելու համար ստեղծեր է, բանաստեղծեր է իրեն համար նախահայր մը՝ տալով անոր նույն ժողովուրդին անունը և նույն ժողովուրդի հոգիին համապատասխան հերոսական գործեր:

Այսպես, օրինակ, մեր Հայկի աքանչելի առասպելը, ուր, եթե խորը նայինք, հայ ժողովուրդի ամբողջ պատմութիւնն է մարմնացած, այսինքն՝ հայ ժողովուրդի համառ ու հավիտենական մաքառումը իր ինքնուրոյնութիւնն ու ազատութիւնը ձեռք բերելու համար: Հայկ է Հայ-իկ, այսինքն՝ հայ մը, ինչպես Արմենակ՝ արմին մը, նույն ձևով Հնդ-իկ, պարս-իկ:

Բայց այդ տեսակ զատարուն ցեղեր չատ հազվադեպ են նույնիսկ մարդու ամենահինկական համախմբումներուն մեջ: Իրենց մշտական կռիվներու ընթացքին բռնած գերիները, տուն ընդունված ծառայողները, հյուրերը, պաշտպանյալները հետզհետե կընտանեննան, կամուռնանան և մեկ-երկու սերունդ ետքը կդառնան նույն ցեղի մաս: Դրացի ցեղեր, երբ կհաղթեն, կուգան ոտքի տակ կուտան, կբռնաբարեն ու կերթան, կամ կնստին ու սերունդե սերունդ կխառնվին հին ցեղին: Եվ եթե պատմութեան լույսովը մոտենալ կարողանանք ամեն մեկուն, ժողովուրդ չկա հիմա, որ քանի մը ժողովուրդներու խառնուրդ չըլլա, որոնք իրենց կողմին խառնուրդ մըն են ով գիտե ինչ հայտնի ու անհայտ ցեղերու ու տարրերու:

Այդ միևնույն պատճառով ժողովուրդի մը զանազան մասերը նույն ու նման խառնուրդ չեն ներկայացներ: Մեկ մասին մեջ այսինչ ցեղը ավելի է չեչոված ու չկա կողմնակի տարրերու արյունը. մինչ մյուս մասին մեջ ցայտուն են ցեղագրական բոլորովին այլ տարրերու գծերն ու հատկութիւնները:

Այնպես որ, առանց նվազեցնելու ժողովուրդի մը ծագման ու կազմավորման մեջ այսինչ ու այնինչ ցեղերու բերած արյան մեծ չափը և ընդհանուր առմամբ ընդունելով, որ ժողովուրդ մը կատարքերի մյուս ժողովուրդներեն ցեղագրական իրեն հատուկ բաղադրութիւնամբ մը, չենք կրնար ըսել սակայն, թե ազգի մը բոլոր մասերն ու անհատները կապված են իրարու նույն ու նման

ցեղային կազմով ու ծագումով. Համենայն դեպս Երբե՛ք նույն չափով ու նույն աստիճանի:

* * *

Ցեղեն եաքը տեղը:

Ժողովուրդի մը ապրած տեղի դիրքը, բարձրութիւնը, գոտին, լեռներուն կազմը, ջրային ավազանները, կլիման և ուրիշ բազմաթիվ աշխարհագրական հանգամանքները հիմնական կարևորութիւն ունին ինչպես ընդհանրապես գործարանավոր մարմիններու բոլոր երևոյթներուն, այնպես ալ մասնավորապես մարդկային կյանքի գոյութեան ու կազմավորմանը վրա: Թե ժողովուրդ մը ինչերն և ինչպե՞ս կհանէ իր ուսեասը, թե ինչ կընէ, ինչ կսեւնայ, ինչ կմտածէ, և կմտածե՞, դյուրին ձեռք կբերե իր հացը, թե՞ մեծ աշխատանքով ու հնարամտութեամբ, այս բոլորը կախված է շրջապատող բնութենեն: Իսկ այս բոլորը իրենց կնիքը կդնեն ժողովուրդի նիստի ու կացին, սովորութիւններուն, բարքին, ինչպես և համայնական, դատակարգային և իրավական ըմբռնումներուն ու կազմութեանը վրա: Ժողովուրդի մը մեծութեան ու անկման, ծաղկման ու կծկումին, հաջողութիւններուն ու ձախողանքին մայրը նորեն իր ապրած երկրին դիրքն է ու վիճակը և այդ դիրքին զուգորդող պայմաններըը:

Մեր հայրենիքի ամեն ուղղութեամբ վազող ու իրար կտրտող բարձր ու հպարտ լեռներուն կպարտինք մինչև հիմա մեր ինքնութեան պահպանումը և մեր տոկունութիւնը այս աստիճանի քաղաքական աննպաստ պայմաններուն մեջ: Բայց այդ լեռներուն կպարտինք նաև մեր նախարարներու բաժանականութիւնը և ուժեղ պետական ամբողջութեան մը կազմել չկարողանալնիս: Պոնտոսի սեպ իջնող ու պատնեշի նմանող բարձր լեռնաշղթային կպարտինք, որ երբեք չենք կրցեր հասնիլ ծովուն, չենք ունեցեր հենարան մը թուրանական հորդաներու վիժումներուն առեն, ուր գոնե մասամբ ամփոփվիլ կարողանայինք. մնացեր ենք ամեն տեղ ճամբու վրա, ենթակա անոնց վայրագութիւններուն ու ոտքոտումին. կտրվեր ենք մեր ազգակից ու հոգեկից արևմտյան ժողովուրդներեն ու ընկղմեր ենք թուրան-մահմետական ծովուն մեջ:

Մեր հայրենիքի աշխարհագրական-պատմական դիրքին կպարտինք, որ մեր երկիրը պատեհապատի հավիտենական դաշտ մըն է եղած ակիզբեն ի վեր, որովհետև ինկած է եղեր ամեն անգամ երկու խոշոր պետութիւններու և հաճախ երկու հակադիր քաղաքակրթութիւններու իրար ընդհարվող սահմանին վրա:

Հայրենիքը իր գետնի տակովն ու երեսովը անշուշտ որ չատ մեծ դեր ու ազդեցութիւն ունի իր մեջն ապրող ժողովուրդի գոյութեան, տնտեսութեան, կազմութեան ու պատմութեան բոլոր կողմերուն վրա: Եվ այդ կապերով ան կինջե ամբողջ ժողովուրդն իրար: Եվ իրրև անոր կերակրողն ու ամբողջ կյանքի կենակիցը, ինչպես և անոր փառքին, հիշատակներուն և մեռելներուն հանգստարանը, կդառնա ամբողջ ժողովուրդի սիրուն, հարգանքին ու պաշտամունքին առարկան, որով և ամենքը իրար կողող նոր կապ մը:

Բայց պետք չէ մոռնալ և հետևյալը: Նախ՝ քիչ չի պատահիր, որ նույն հայրենիքին մեջ և նույն պայմաններուն տակ կապրին միասին բոլորովին տարբեր ցեղեր ու ժողովուրդներ, թեև իրարու կից և երբեմն խառն, բայց ամեն մեկը իր ուրույն կյանքով: Երկրորդ՝ քիչ չի պատահիր, որ ժողովուրդի մը խոշոր հատվածները կերթան ապրելու օտար երկինքներու տակ, կկազմեն հզոր գաղութներ, կապրին զարերով առանց տակայն օտարանալու իրենց մայր ժողովուրդեն: Երրորդ՝ հայրենիք ըսածը բավական առաձգական ամբողջութիւն մըն է, աջեն ու ձախեն կերկարի ու կսեղմի զարերու ընթացքին: Բավական է ակնարկ մը նետենք պատմական ատլասի մը վրա, ո՛ր ժողովուրդինը որ կուզենք, համոզվելու համար, թե իրենչ անհավատալի ձևափոխութիւններ ունի իր սահմանագիծը: Եվ վերջապես՝ հայրենիքի մը բոլոր մասերը աշխարհագրական նույնութիւն չեն ներկայացներ, ունին իրենց տափին ու անտառը, ցած ու բարձր, ծովային ու լեռնային մասերը: Ուրիշ խոսքով՝ ժողովուրդի զանազան մասերը ենթակա չեն նույն աշխարհագրական ազդակներուն:

Այնպես որ առանց ժխտելու աշխարհագրական քանի մը հիմնական ու էական գործոններու ազդեցութիւնը ժողովուրդի մը ամբողջութեանը վրա ընդհանուր առումով, ինչպես և ընդու-

նելով, որ ամեն ազգի դոյութեան հետ կապված է բնականորեն որոշ երկրամաս մը, չենք կրնար ըսել սակայն, թե հայրենիքն է ազգերը իրարմէ զատողը, ո՛չ ալ մանաւանդ, թե աշխարհագրական և անկե բխող տնտեսական պայմաններն են ժողովուրդի մը մասերն ու անդամները իրարու կապողը:

Ցեղային ու աշխարհագրական գործոններու հետևանքն է ժողովուրդի մը ֆիզիքական ու հոգեկան կողմը: Մազի ու մորթի գոյնը, աչքերը, դիմագծերը, գանգի կազմութիւնը, ձեռք ու ոտքի երկարութիւնը, հասակը. վերջապես մարմնական մեծ ու փոքր բազմաթիւ տարբերութիւններ ու բնորոշ նրբութիւններ կան, որ հատուկ են այս ու այն ժողովուրդին, ճիշդ այնպես, ինչպես չատ մը ժառանգական գծեր սովորական են ամեն մեկ ընտանիքի: Նմանապես ժողովուրդ մը ավելի կամեցողական հատկութիւններով է օժտված. մյուսը ավելի նուրբ է իր զգացումներով, ավելի ներքին ու երազկոտ. ուրիշ մը, ընդհակառակը, մտաւոր կարողութիւններով է, որ աչքի կ'ինկնա և ասոնցմե ամեն մեկուն մեջ իրենչ տեսակներ, իրենչ երանգներ: Մեկ խոսքով՝ բնաւորութեան, ճաշակի, զգացումի, մտքի ու կամքի չատ առանձնահատկութիւններ, թերութիւններ, ընդունակութիւններ, հակումներ և ունակութիւններ կան, որ մարմնական գծերու ու կազմին նման բնորոշ են այս կամ այն ժողովուրդի մեկ ստվար մեծամասնութեան: Սակայն այդ բնորոշ գիծերն ու հատկութիւնները երբեք այն աստիճան ընդհանուր, հաստատ ու լրիվ չեն, որ կարող ըլյան ժողովուրդ մը մյուսներեն առանձնացնելու կամ նույն ժողովուրդին պատկանող անդամներուն իրարև չափանիշ ծառայելու:

Նախորդ երեք պայմաններեն ավելի չոշափելի է գուցե պատմութեան դերը ժողովուրդի մը ուրույնացման վրա: Ինչպես որ ամեն մարդու ապրած կյանքը, կենսագրութիւնը միայն ա՛յդ մարդուն է հատուկ, այնպես ալ ժողովուրդի մը հայրերու ու նախահայրերու ապրածը, զգացածը, կրածը, ըրածը, բոլոր պատմական դեմքերը, բոլոր կատարված դեպքերը, մեկ խոսքով՝ ամբողջ անցյալը միայն այդ ժողովուրդինն է, որով և կզատվի մյուս ժողովուրդներեն: Բայի ատկե՝ ընդհանուր կերպով ամենքը հու-

պող դեպքերը, հուշերը, հաջողություններն ու տառապանքները, ինչպես և հին ու նոր սերունդներուն կատարած ընդհանուր ճիգերն ու աշխատանքը՝ ընդհանուր չահը, ընդհանուր ձգտումները, երազանքն ու տենչանքները ամենաուժեղ կապն է, որ ժողովուրդի մը տարբեր սերունդները, մասերը և անհատները կսեղմե իրարու:

Սակայն որպեսզի պատմությունը այդ գատող ու զողդղ դերը խաղալ կարողանա, պետք է որ գիտնանք այդ պատմությունը, ուրեմն պատմությունը գիտցողներուն համար կարևորություն ունի միայն. իսկ պատմությունը դժբաղդաբար շատ քիչերուն է ծանոթ, ան ալ խիստ պոչաուռ ու վայրիվերո: Ատկե զատ կան շատ ժողովուրդներ, որ պատմություն գրեթե չունին, երբեմն և առանց գրեթե-ի: Եվ վերջապես ժողովուրդ մը, առանց իր պատմությունը գիտնալու ալ, շատ աղեկ կզգա ու գիտե իր առանձին ժողովուրդ մը ըլլալը:

Ուրեմն այս չորս կետերեն և ո՛չ մեկը չի կրնար առանձնացնել ժողովուրդ մը ինքն իր մեջ, ո՛չ ծագումը, ո՛չ հայրենիքը, ո՛չ ֆիզիքական ու հոգեկան կազմը, ո՛չ ալ անցյալը: Սակայն այդ չորսն են ժողովուրդի մը գոյացման, ժողովուրդի մը որոշ ուղղությամբ զարգացման, ժողովուրդի մը իր հատուկ կերպարանքն ստանալուն ամենաէական գործոնները, ծնող, առաջացնող պատճառները, ժողովուրդներու հատկորոշման պայմանները:

Ասոնց կողքին կա երևույթներու ուրիշ շարք մը, որոնք բնական կերպով կուգան մեր մտքին դեմը, երբ կխոսինք ժողովուրդներու իրարմե ունեցած տարբերության մասին և որոնք նախորդ հիմնական պայմաններուն արդյունք են, նախորդներուն հետևանքը, պտուղը, ինչպես, օրինակ, ժողովուրդի մը լեզուն, կրոնը, պետությունը, արվեստը:

Այս նոր խումբը արդեն ամբողջովին ժողովուրդի ծնունդն է, ժողովուրդի հանրային կյանքին ու աշխատանքին արդյունքը, ժողովուրդի մշակածն ու ստեղծածը: Ատոր համար ալ կանվանենք մշակութային, կուլտուրական երևույթներ:

Եվ քանի որ հատկորոշման հիմնական պայմաններեն ո՛չ մեկը չի կրնար վճռական չափ ծառայել ժողովուրդ մը ուրիշներեն

որոշելու, կմնա որ այդ հատկանիշը փնտրենք հիմա ժողովուրդի մը կուլտուրական երևույթներուն մեջ:

Գ. ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐՈՒ ԲԵՐՄԱ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչո՞վ է, որ ժողովուրդ մը ուրիշ ժողովուրդներեն կզանազանի. և ինչո՞վ է, որ, ընդհակառակը, նույն ժողովուրդի անդամները կապված են իրարու:

Բազմաթիվ մանր ու խոշոր առանձնահատկություններ ունի իր մեջ ժողովուրդի մը կենցաղը, այսինքն՝ վարած առօրյա կյանքը, աշխատանքը, աշխատելու եղանակը, ապրուստն ու կապուստը, նիստ ու կացը, կարգն ու կանոնը, վարքն ու բարքը, սովորությունները, կրթությունը: Ասոնցմե շատերը խիստ բնորոշ են, կբացատրեն ամբողջ ժողովուրդի մը հոգեբանությունը, զարգացման աստիճանը, ծագումն ու հնությունը, այլև խիստ խորը արմատներ ունին ժողովուրդի հոգուն մեջ: Ատով ամենքը կկապվին իրարու, և իրենք ալ արդյունք են ալդեն ժողովուրդի մը անդամներուն իրար հետ ունեցած այդ առօրյա կապակցության:

Բայց այդ նույն սովորություններն ու կրևույթները մենք կգտնենք գեղակից կամ դրացի ուրիշ ժողովուրդներու, հաճախ նաև շատ հեռավոր ժողովուրդներու մեջ, որոնք սակայն մոտիկ են իրարու քաղաքակրթության աստիճանով և տնտեսական պայմաններով: Այսպես, օրինակ, սարերու մեջ խաչնարածությամբ ապրող հայ գյուղ մը շատ ավելի մեծ նմանություններ ունի իր կենցաղով, նիստ ու կացով քրտական համայնքի մը, քան բոլորովին այլ գբաղումներու և քաղաքակրթական պայմաններու ենթակա հայ քաղաքացի բնակչության:

Ինչքան ալ մեծ կարևորություն ունենա կենցաղը իր ներքին ու արտաքին բոլոր կողմերով, երբ ժողովուրդի մը դեմքը և համայնական պատկերը ըմբռնել և որոշել կուզենք, հերիք չէ

սակայն, օրինակ, Հայու մը Հայ լլլալը Հատկանշելու կամ ավելի ևս Հայ ժողովուրդը մյուսներեն անջատելու համար:

Ժողովուրդի մը կենցաղին մեկ մասը կկազմե իր Հանրային գործերը վարելու, ընդՀանուրի տնտեսությունը ղեկավարելու, ամբողջության պետքերը Հոգալու, տնօրինելու, ինչպես և կարգ ու կանոնին Հսկելու ու կառավարելու եղանակը:

Անշուշտ պետական Հիմնական ձևերը, դասակարգերու բաժանումը և անոնց փոխադարձ պարտքն ու իրավունքը, ինչպես և պատերազմի ու վարչական մնքենաները զուտ կերթան քաղաքակրթության աստիճանին ու տնտեսական պայմաններուն: Ճշմարիտ է նույնպես կառավարական ու պետական նույն սիստեմներու իրարմե փոխառություն ժողովուրդե ժողովուրդ:

Բայց Հենց Հարցն ալ Հոս է, որ, չնայելով սկզբունքներու և Հաստատություններու նմանության ու իրարմե կապկումին, մեծ տարբերություններ և նուրբ առանձնաՀատկություններ ունի պետական նույն ձևը տարբեր ժողովուրդներու մեջ: Ամեն ժողովուրդ իր ցեղին, իր տեղին, իր պատմության ու իր կազմին Համեմատ կձևե իր պետությունը կամ կՀարմարցնե իր կազմին, եթե Հափստը պատրաստ է գնված:

Մյուս կողմեն՝ պետությունը ամենեն ավելի աչքի իյնող արտաքին ամբողջությունն է ժողովուրդի մը թե՛ մյուս ազգություններու Հանդեպ և թե՛ ինքն իր մեջ: Կառավարական, դատական, զինվորական, կրթական, Հարկային և այլ վարչություններու և Հաստատություններու ցանցը ամեն ինչ իրարու կօղակե և կկազմե միություն մը: Եվ բոլոր այն ժողովուրդներուն Համար, որոնք ամբողջովին միացած են միայն մեկ պետական կազմի մը մեջ, բնականաբար պետությունը կդառնա ժողովուրդը ընդգրկող, առանձնացնող ու ներկայացնող դեմքը:

Սակայն ինչքա՜ն Հեռու է դժբաղդաբար իրականությունը ազգագրական այդ վիճակեն: Նախ՝ կան ժողովուրդներ, որ դեռ կապրին իրարմե անջատ ցեղական կազմով: Բազմաթիվ են այն ժողովուրդները, որոնք ամբողջովին կամ իրենց ավելի ու նվազ մեկ կարևոր Հատվածով «Հպատակ» են ուրիշ ժողովուրդներու: Եվ վերջապես անոնք ալ, որ Հաջողած են ամբողջապես

ամփոփելու պետութեան մը կազմին մեջ, սովորաբար իրենք են, որ կնատին ուրիշ ժողովուրդներու վրայ. և պետութիւնը, իր ժողովուրդի սահմաններեն դուրս գալով, կընդդրկե ուրիշները, հաճախ շատ հեռավոր ժողովուրդներ ու գաղութներ:

Այս պայմաններուն տակ, պարզ է, որ պետութիւնը չի կրնար ժողովուրդ մը անճնավորել, չի կրնար ժողովուրդ մը գատել ու ամբողջացնել:

* * *

Կրոնը ժողովուրդի մը ըմբռնումն է ու հավատքը շրջապատող բնութեան դեռևս չբացատրված ուժերու ծագման ու էութեան մասին, մասնավորապես մարդկային հոգիի էութեան, ծագման ու ապագայի մասին, ընկերական փոխադարձ հարաբերութիւններու ժամանակ մարդոց ներքին պարտավորութիւններու մասին և այս բոլորը և ամբողջ տիեզերքը ղեկավարող վերին սկզբնական էակի մը կամ էակներու գոյութեան մասին: Այդ էակի սիրտը շահելու, փառաբանելու, մեր օգտին տրամադրելու կամ մեր երախտագիտութիւնը մատուցանելու համար կազմակերպած տոները, հանդեսները, պաշտամունքն ու ազոթքները կկազմեն կրոնի արտաքինը, եկեղեցին: Թե՛ ներքինը և թե՛ արտաքինը ղեկավարելու, ուսուցանելու և մասնագիտորեն գործադրելու համար ան ունի իր վարչութիւնն ու պաշտոնեութիւնը:

Հոսկե պարզ է, որ կրոնը առնչութիւն ունի կյանքի բոլոր կողմերուն հետ և հյուսված է ժողովուրդներու մտածումին, զգացումին, վարքին, բարոյականութեան, հանրային կյանքին ու կազմին, պետական հարցերուն ու վարչութեան: Այդ պատճառով ալ չափազանց մեծ կարևորութիւն ունի տիրողներու ու կառավարողներու դիրքին ու շահերու համար և ա՛յնքան մեծ դեր է խաղացած պատմական դեպքերու ընթացքին:

Եթե հարցին խորքը նայինք, պետք է ըսենք, որ ամեն ժողովուրդ ունի իր հատուկ աստվածը, իր հատուկ եկեղեցին, իր հատուկ դավանանքն ու եկեղեցական կազմը: Սա ո՛չ միայն ճիշդ է հին կամ նախնական հեթանոս ժողովուրդներու վերաբերմամբ, այլև մեր արդի ժողովուրդներուն, որոնք հասած են միաստ-

վածութեան գաղափարին: Բոլորովին այլ է պարսիկի, թուրքի, արաբի և միջինաֆրիկյան կամ միջինասիական դանագան ցեղերու ու ժողովուրդներու պաշտած մահմետականութիւնը. բոլորովին տարբեր է Հայու, ռուսի, կաթոլիկի ու բողոքականի քրիստոնեական դավանանքն ու եկեղեցին: Եվ վերջապես կաթոլիկութիւնը նույնը չէ ֆրանսացիի մը, սպանացիի մը ու լեհի մը համար, ինչպես որ շատ տարբեր է պրուսական, անգլիական ու ցյուրիխյան բողոքականութիւնը: Նույն ընդհանուր սկզբունքներն ու պաշտամունքը ամեն ժողովուրդ իր հոգիին, իր պատմութեան ու իր պայմաններուն համեմատ կձևակերպե: Տարբերութիւնները հաճախ շատ մանր կթվին ու երկրորդական նրբութիւններու մեջ կերևին, բայց ճիշդ այդ մանր ու նուրբ բաներն են, որ կզանազանեն մարդու մը դեմքը մյուս մարդու դեմքեն:

Բայց և այնպես կրոնն ալ չէ այն կապը, որով ժողովուրդ մը կուրույնանա ու կանջատվի մյուսներեն: Արդի քրիստոնյա իրականութեան մեջ մանավանդ քիչ կպատահի, որ ժողովուրդի մը բոլոր անհատները նույն կրոնը ունենան. հաճախ ժողովուրդի մը զանազան մասերը կպատկանին տարբեր եկեղեցիներու. և վերջապես անհատներ ու խումբեր կան, որոնք կրոն չունին, այսինքն" չեն պատկանիր պաշտոնապես կերպով ճանչցված կամ անպաշտոն եկեղեցիներեն ու դավանանքներեն և ո՛չ մեկուն:

* * *

Այսպեսով կհասնինք լեզվին:

Լեզուն կբխի ժողովուրդի մը հոգեբանութեյան բուն խորքերեն և արդեն ինքնին անոր հոգիին հարազատ մեկ կտորն է: Մինչև մարդուս միտքը չծնի իր լեզուն, բանականութիւնը թև առնել չի կրնար ու չի կրնար սավառնիլ հոգեկան ու քաղաքակրթական բարձունքները:

Լեզվի մը բառերուն կերտվածքը, հնչական հատկութիւնները, նախադասութիւններուն չենքը, չարքը, կապակցումը, ոճը, ինչպես և բառերուն իմաստը, նրբութիւնները, փոխաբերումները, այլաբանումները բոլորը պտուղ են այդ ժողովուրդի մտածելու ու դատելու եղանակին, զգացումին, ճաշակին, բնավորութեյանը:

Լեզուն մշտական հաղորդակցության միջոցն է ժողովուրդի մը անհատներուն ու մասերուն մեջ, որով և ամենքը իրարու կապող ամենեն պզտիկ ու բնական կապը:

Լեզուն ինքը կապված է ժողովուրդի մը կրոնքին ու պաշտամունքին, որով ունի հանրային սրբացում մը. կապված է վարչության գործառնություններուն, կառավարության մեքանիզմին, օրենքին, կրթության, որով ունի պետական արժեք մը. կապված է առօրյա կյանքին, անձնքին ու օրհնանքին, ուրախության ու սուգին, երգին ու երաժշտության, որով ունի հանրային զգացական թրթիռ մը. հիմքն է ժողովուրդի մը բանահյուսության, գրականության ու գիտության, որով ունի ստեղծագործական գրավչություն մը և այս բոլորը միայն ա՛յդ ժողովուրդին պատկանող անհատին համար:

Լեզուն իր ժողովուրդի հետն է միշտ, հենց որ երկու հոգի իրարու քով գան, և նույնիսկ երբ մարդ բոլորովին մինակ է: Ձէ՞ որ մենք սովորաբար բառերով կմտածենք, լեզվով. մարդս իր լեզվով մշտական խոսակցության մեջ է իր ժողովուրդին հետ:

Բայց և այնպես հերիք չէ և լեզուն՝ ժողովուրդ մը ժողովուրդին կտրուկ կերպով զատելու համար, ո՛չ ալ ժողովուրդի մը անդամները ընդհանուր հայտարարի բերելու համար:

Բռնության, տնտեսական հարկադրանքի, երբեմն և քաղաքակրթական գերազանցության հետևանքով տիրող ժողովուրդները մուցնել կուտան հպատակ ժողովուրդին իր լեզուն: Շատ ավելի առօրյա երևույթ է, երբ անհատներ ու խմբեր կերթան օտար ժողովուրդի մը գիրկը, կապրին հոն, կխոսին անոնց լեզուն և սերունդե սերունդ մոռացության կուտան մայրենի լեզուն, առանց ազդեցութենեն կտրվելու:

Պետք չէ մոռնանք նաև բարբառները: Ժողովուրդի մը զանազան մասերը, աշխարհագրական ու պատմական պայմաններու ազդեցության տակ, հետզհետե այն աստիճան փոփոխության կենթարկեն ընդհանուր լեզուն, որ երբեմն կհասնին իրարու անհասկնալի վիճակին: Ասոր վրա եթե ավելցնենք հին ու նոր գրական լեզուներու առաջացումը, որոնք հաճախ խիստ կչեղին կենդանի բարբառներեն, ստիպված ենք խոստովանելու, որ

ժողովուրդի մը պանապան մասերն ու դասերը գրեթե տարբեր լեզուներ կգործածեն:

* * *

Կմնա կուլտուրական ստեղծագործություններու վերջին խումբ մը, որ պետք է նկատի ունենանք, երբ ժողովուրդ մը հատկորոշող նշանը կփնտրենք, այսինքն՝ այն ստեղծագործությունները, որոնք կծառայեն հոգին արտահայտելու: Երգ, հեքիաթ, առասպել, առակ, առած, վեպ, բեմախաղ, ճառ ու քարոզ, գիտական, փիլիսոփայական ու կրոնական ուսումնասիրություններ, ուսումներ, մեկնություն, վերլուծություն, քննադատություն: Ինչպես և եղանակներ, նվագներ, արձան, նկար, քանդակ, խոյակներ. ճարտարապետական ոճեր ու զարդեր, հյուսկեր ու կառուցումներ՝ ըլլա չինքերու վրա, ըլլա կարասիներու, գորգերու, գենքերու և ամեն տեսակ ուրիշ իրերու ու նյութերու վրա:

Այս բոլորը, այսինքն՝ գիտությունն ու գեղարվեստը, արդյունք են մեր ներքինը ձևակերպելու, մեր ներքինը արտահայտելու բնական պահանջին, որով և խիստ անձնական են. ինչպես ամեն մեկ անհատի վերաբերմամբ, այնպես և ամեն ժողովուրդի: Ամեն ժողովուրդ իր ցավը, իր որոնումները, իր կարոտը, իր սիրածն ու ատածը, իր ձգտածն ու երազածը, իր մտածումներն ու համոզումներն է, որ կարտահայտե իր անպիր բանահյուսության, իր գրականության ու գեղարվեստներու բոլոր ճյուղերովն ու տեսակներովը:

Ժողովուրդի մը հոգին թափանցելու ամենեն կարճ ճամբան անոր գրականության ու գեղարվեստական մյուս ստեղծագործություններուն մոտիկեն ծանոթանալն է: Որ է և ամենեն չիտակ ճամբան ժողովուրդ մը սիրելու: Իսկ նույն ժողովուրդի անդամներուն վերաբերմամբ շատ ավելի զորեղ է բնականորեն գրականության, գիտության ու գեղարվեստի այդ կապող ու սեր ներշնչող ուժը:

Բանաստեղծական ու գիտական ամեն մեկ նոր ու խոր արտահայտություն, պլաստիկ արվեստներու ամեն մեկ նոր ու արժեքավոր ստեղծագործություն նոր գտհար մըն է ժողովուրդի մը

Հոգեկան արտահայտութիւններու գանձարանին մէջ, նոր հաւելում մը ժողովուրդի հպարտութեանն ու ինքնագիտակցութեան, և նոր սիրող ու սիրցնող ամուր կապ մը ժողովուրդի բոլոր անդամներուն միջև:

Հոմերոս[1]*, Հերոդոտոս*[2]*, Սոկրատես*[3] *անուններ են, որոնք դարեր ու դարեր Հույնը Հույնին են կապեր, անոր Հույս և Հպարտութիւն են ներշնչեր իր ստրուկ ու ծանր օրերուն թուրքի լուծին տակ, և ԺԹ-րդ դարու սկզբին ազատութիւն են բերեր անոր. այո՛, Էսխիլեսը*[4]*, Պլատոնն*[5] *ու Արիստոտելը*[6]*: Եվ պարապ խոսք չէ՝ չգիտեմ որ անգլիացի պետական մարդուն բացականչութիւնը, թե ինքը առանց վարանելու մեկդի կ'ետեր Հնդկաստանը, իրեն պահելու համար իր Շեքսպիրը*[7]*:*

Այս բոլորի հակառակ, երևակայեցե՛ք, ի՜նչ չափազանցում ու միամիտ եզրակացութիւն կըլլար, եթե ըսեի, թե Հայերս Հայ ենք և մեկ ժողովուրդ, որովհետև նույն երգերը կերգենք և նույն Հեքիաթները կպատմենք: Երկրորդ՝ ճիշդ չէ, թե ժողովուրդի մը բոլոր մասերը նույն երգերը կերգեն և նույն Հեքիաթները կպատմեն: Երրորդ՝ երգածին և՛ եղանակը, և՛ խոսքերը Հաճախ բոլորովին նույն են ղրկից ու ղրացի ժողովուրդներու երգածին Հետ: Եվ վերջապես ի՜նչ անդունդ կա դեռ դժբաղդաբար այդ տեսակետեն ժողովուրդի մը լայն խավերուն և ուսում առած փոքրամասնութեան մը միջև: Ամբողջ գեղարվեստն ու գիտութիւնը, ավա՜ղ, գոց գիրք մըն է ժողովուրդներու ստվար մեծամասնութիւններուն Համար, ո՛չ անոր ճաշակն ունին, ո՛չ Հասկացողութիւնը: Իսկապես ըսած՝ ամեն ժողովուրդ երկու-երեք տեսակի կամ աստիճանի գիտութիւն և գեղարվեստներ ունի իր մեջ:

Ուրեմն՝ ընդունելով, որ գիտական ու գեղարվեստական ստեղծագործութիւնները չափազանց կարևոր գործոն մըն են ժողովուրդի մը մասերն ու անդամները իրար կապելու, և որ այդ ստեղծագործութիւններու ամբողջութիւնը անտարակույս առանձին տեսակի փունջ մըն է մարդկութեան մտատիճարին մեջ դրվելիք, չենք կրնար ըսել սակայն, թե այդ երգերումն է, որ ժողովուրդ մը կուրսյանա ու կզատվի թե՛ դեպի ներս, թե՛ դեպի դուրս: Կար ժամանակ մը, երբ այդ երկերը չկային, բայց ժողովուրդը

կար: Եվ եթէ երևակայենք, որ Հանկարծ այսօր այդ բոլորը ոչնչանա ու կորավի, ժողովուրդը չի դադրիր ժողովուրդ մը ըլլալե. թեև անշուշտ աղքատացած ու փետրաթափ ժողովուրդ մը կդառնա:

Դ. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒՆ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովուրդները հատկորոշող թէ՛ հիմնական-բնական, թէ՛ կուլտուրական երևույթներեն և ո՛չ մեկը չի կրնար բացարձակ սկզբունք մը դառնալ ժողովուրդ մը մյուսներեն անջատելու և իրմով ընդգրկելու ժողովուրդի մը բոլոր մասերն ու անհատները, իբրև ուրույն ամբողջություն մը:

Այդ բացարձակ բնորոշող սկզբունքի մը պակասը հարևանցի դատողներու կողմե նկատվեր է իբրև հիմք ժխտելու համար ժողովուրդներու իրարմե ջոկ ու տարբեր ամբողջություններ ըլլալը: Կա՛ն միայն մարդկային խմբեր, որոնք իրենց ծագումով կապված են այս որոշ կամ անորոշ խումբին, իրենց աշխատանքովն ու տնտեսական շահերովը ուրիշ խումբի մը, կխոսին երրորդ խումբի մը լեզուն կամ քանի մը լեզու միաժամանակ, իսկ իրենց կյանքովն ու պետությամբը կապված են տարբեր խումբերու. ի՞նչ ըսել է առանձին ժողովուրդ: Իսկ եթե ամբոխներուն մեջ մեկը ինքզինքը Հայ կանվանե, մյուսը՝ Թուրք, ուրիշ կամ վրացի, երբեմն կրոնքը աչքի առաջ ունի, երբեմն խոսած լեզուն, երբեմն իր ծագումը, այսինքն" մնացորդ մը հին ու նեղ ըմբռնումներու, բաժանումներու և ատելություններու, եթե արդյունքը չէ բոլորովին նոր արվեստական դրդումներու և չինծու ազգասիրության:

Բայց այսպես դատելով մենք ժխտելու ենք նաև մատիսի տարբեր բան ըլլալը գրիչեն և զանազանելու ոչխարը այծեն, ո՛չ ալ արևը լուսինեն: Ուրկե՞ գտնենք այդ մի՛կ բացարձակ սկզբունքը մարմին մը մյուս մարմիններեն զատող, երբ ամեն մարմին բազմաթիվ հատկություններու գումարն է միշտ և երբ այդ հատկություններեն ամեն մեկը ուրիշ բոլորովին տարբեր տեսակի մարմիններու մեջ ալ կա անպայման:

Լեզու, կրոն, հայրենիք կամ պետություն, ամեն մեկը առան-

Ձին առած, անկարող է ժողովուրդ մը մյուս ժողովուրդներեն գաղել ամեն պայմաններու մեջ, ամեն դիպքի համար, թեև առանցմե ամեն մեկը առաջնակարգ կարևորութիւն ունեցող հատկութիւն է՝ ժողովուրդ մը ժողովուրդներեն տարբերող:

Ապրող թե անկենդան մարմին մը, ինչպես և ամեն ընկերական հաստատութիւն ու երևույթ ահմանադրելու համար պետք է առնենք իր բոլոր էական հատկութիւններու գումարը միասին. այն ժամանակ արևը կզանազանվի լուսինեն և ոչխարն ալ այծեն:

Որոշ ցեղային ծագում ու խառնուրդ ներկայացնող, որոշ աշխարհագրական միջավայրի մեջ ապրող, որոշ պատմական անցյալի ու ներկայի տեր, որոշ փիզիքական ու հոգեկան կազմով, որոշ աշխատանքներ, աշխատելու եղանակ, վարք ու բարք ու սովորութիւններ ունեցող, որոշ կրոնական ըմբռնումներով ու պաշտամունքով, որոշ պետական ձևով ու կազմով, որոշ լեզվով և որոշ հոգեկան ստեղծագործութիւններու ժառանգորդը եղող ժողովուրդ մը բոլորովին տարբեր և ուրույն էութիւն մըն է իր նման ուրիշ էութիւններու հանդեպ:

Ճիշդ այնպես, ինչպես որ մարդկային էակ մը ուրույն մարդկային միութիւն մըն է, տարբեր մյուս մարդկային արարածներեն իր ծննդովը, իր արդեն ապրած կյանքովը, իր մեծցած միջավայրովը, առած կրթութիւնովը, իր փիզիքական ու հոգեկան խառնվածքովը, իր գործունեութիւնովն ու ստեղծագործութիւններովը: Այս բոլորը երբ միասին կառնենք, մարդը կդադրի պարզ միավոր մը ըլլալե միլիոնավորներու թվին մեջ և կդառնա անհա՛տ մը, մե՛կ-հատիկ մը. բացառիկ մը իր նմաններու ծովուն մեջ:

Այդ բոլոր հատկութիւններու և իրողութիւններու գումարն է, որ կկազմե մարդու մը անհատականութիւնը: Այդպես ալ ժողովուրդի մը առանձնահատուկ բոլոր բնական ու կուլտուրական տվյալներու գումարն է, որ կկազմե ժողովուրդի մը անհատականութիւնը:

Ժողովուրդներու համար «անհատական» բառի փոխարեն կգործածենք սովորաբար «ազգային» բառը և ժողովուրդներու անհատականութիւնը կանվանենք ազգութիւն:

Որով և կառանանք հետևյալ պատասխանը.

Ժողովուրդ մը ուրիշ ժողովուրդներեն զատողն ու առանձնացնողը իր ապգութիւնն է և ժողովուրդի մը մասերն ու անհատները իրարու կապողը՝ իր ապգային գծերը:

* * *

Ժողովուրդի մը անհատականութիւնը կազմող բոլոր երևոյթները, ըլլա՛ն հիմնական-բնական թէ ստեղծագործական-կուլտուրական, բոլորն ալ շատ սերտ կերպով կապված ու հիւսված են իրարու, իրարմէ կծնին, իրար կպայմանավորեն, կներգործեն իրարու վրա, կուժեղնան իրարմով ու իրար ավելի կշեշտեն:

Այսպես՝ ցեղի ծնունդն են փիզիքական ու հոգեկան բազմաթիվ հատկութիւններ, բայց որոշ աշխարհագրական պայմաններու տակ. տարբեր պայմաններու տակ նույն արյունը տարբեր արդյունք կուտա ու կառանանք ուրիշ ցեղ. իսկ նույն պայմաններու ազդեցութեան տակ ինչքան երկար մնան, այնքան ավելի կամրանան ու կընդհանրանան այդ հատկութիւնները:

Ժողովուրդի մը պատմութիւնը իր խոշոր գծերով արդյունք է մեկ կողմեն իր ապգագրական ունակութիւններուն ու հակումներուն, մյուս կողմեն՝ իր հայրենիքի ընձեռած բնական, տնտեսական ու քաղաքական պայմաններուն: Բայց մինչ այդ անցյալը հետզհետե կկազմվի, իր կազմվելովն իսկ կազդե և՛ հայրենի պայմաններուն վրա, և՛ ապգագրական ունակութիւններուն: Չէ՞ որ այդ ունակութիւններու գործադրութիւնն է ինքը, իսկ գործադրել ըսել է սրել, ավելի զարգացնել:

Ցեղեն ու տեղեն կախումն ունեցող բան է ժողովուրդի մը զբաղմունքին տեսակն ու եղանակը: Իսկ տնտեսական պայմաններեն և այդ բոլորը ղեկավարելու ու պաշտպանելու պետքեն կառաջանան վարչական մեքենան, դասակարգերը և պետական կազմը, որոնք իրենց հերթին կազդեն աշխատանքի ձևերուն վրա և կբերեն զբաղմունքի նոր տեսակներ: Առանց բարձր պետական կեդրոնացած կազմի և առանց անոր բերած աշխատանքի կազմակերպութեան և կատարելագործված արհեստի ո՛չ մեկ բուրգ չէր

անկվի Նեղոսի ափին: Արդեն բուրդ լսածը բարդ ու կատարելության հասած ստրկական աշխատանքի անմահ կոթողն է:

Մարդուս միտքը կզարգանա շրջապատող բնության գործած ազդեցության տակ, ինչ չափով որ աշխատանքը ազատ ուժ և ժամանակ թողնե. և բնության ու աշխատանքի ներշնչած ուղղությամբը: Բայց անգամ մը ծնված միտքը ինքը կծնի նոր մտքեր, որոնք իրենց կողմեն կազդեն կուլտուրական կյանքի բոլոր երևույթներուն վրա և այն բնական ու տնտեսական պայմաններուն վրա, ուրկե իրենք ծագում են առեր:

Բառը պատուղ է մարդկային կենակցության և իր մտածումները ուրիշին հաղորդելու պահանջին, այսինքն՝ կուլտուրական կյանքի. բայց ծնված օրեն՝ ամենեն խոշոր ազդակն է մտքի զարգացման և ծնողը վերացական ըմբռնումներու, ընդհանրացումներու, սիսթեմներու, գաղափարներու, մայրը ամեն գիտության, ամեն փիլիսոփայության, ամեն բանաստեղծության ու աստվածության:

Լեզվի խորունկ ազդեցության տակ է կրոնական, պետական, դատական և առօրյա ամեն երևույթ, որովհետև ամեն ինչ բառով պետք է որակվի, բառով կատանա իր ավելի կամ նվազ մնայուն ըմբռնումը: Իսկ մարդկային վեճերու և կռիվներու մեծագույն մասը արդյունք են նույն բառի տարբեր ըմբռնումին կամ տարբեր ըմբռնել ուզելուն:

Մարդիկ հաջողությունը կքաչեն իրենց հետևեն, զորավարները՝ բանակներ և կուսակցությունները՝ ժողովուրդներ, բառերու հմայքովը: Բառերը հաճախ արյունոտ հեղափոխություններ կբերեն, և հեղափոխություններ կան, որ պարզ բառափոխություններ են:

Հայրենի բնության ու մայրենի քաղաքակրթության ծոցին մեջ և անոնց մատակարարած հյութերովը սնված կզարգանան գիտությունները և կբացվին գեղեցիկ արվեստները մտքի, ձայնի ու ձեռքի միացած ճիգերուն մեջ: Բայց իր կողմեն ամեն գիտական երկ ու գյուտ, ամեն բանաստեղծական ամբողջություն, ամեն եղանակ, չենք, արձան կամ նկար իր ազդեցության բաժինը ունի և՛ իր ճյուղի զարգացմանը վրա, ինչպես և լեզվի, և՛ քաղա-

քակրթութեան բարձրացման վրա, նույնիսկ Հայրենի բնութեան տեսքին ու Համայքին վրա, որովհետև գիտութիւնները կուգան փորելու ու չինելու, իսկ բանաստեղծութիւնն ու գեղարվեստները՝ նկարագրելու ու սիրցնելու:

Եվ այսպես կարելի է չարունակել շատ երկար և առանց մասնավոր ճիգի, որովհետև անհամար կապերով, անթիվ հանգույցներով իրար մեջ անցած, իրար օղակված ու խճճած դնջուկ մըն է անհատականութիւնը:

* * *

Ինչքան վայրենի ու նախնական վիճակի մեջ է մարդը, ինչքան ցած է քաղաքակրթութեան աստիճանը, այնքան նվազ են ու տկար իր անհատական գծերը: Մարդիկ շատ ավելի նման են իրար իրենց պետքերովն ու դրդումներովը, իրենց ձգտումներովն ու դործելու եղանակովը, իրենց զգացածովն ու մտածածովը և աւտնց արտահայտութիւամբը: Ինչքան ավելի զարգացած է մարդը, կրթութիւն ստացած, կարդացած, մտածած, ինչքան Հարստացած է իր Հոգին բազմակողմանի չիւմներով, փորձառութիւամբ, լայն տեղյակութիւամբ ու նուրբ զգայութիւններով, ինչքան շատ է ապրած, կրած, աշխատած ու ստեղծած, ինչքան շատ են մարզված իր այս կամ այն ընդունակութիւնները, այնքան ավելի չեչտված և ուժեղ են իր մեջ իր անհատական առանձնահատկութիւնները: Ի՛ր ճաշակը, ի՛ր սերերը, ի՛ր կարծիքները, ի՛ր դատումը, ի՛ր վճիռը, ի՛ր ըրածը, ի՛ր ըսածը, ի՛ր ձգտածը, ամեն ինչ իր վրա կկրե իր ինքնութեան կնիքը, և իր մեջ ամենեն ավելի իր գնահատած բանը իր եսի անկախութիւնն է:

Նույնն է և ժողովուրդներու վերաբերմամբ: Ինչքան նախնական ու վայրի է ժողովուրդի մը վիճակը, այնքան նման է ան իր Հոգեկան կյանքովն ու Հոգեկան շարժումներովը մյուս իր աստիճանին վրա գտնվող վայրենիներուն. երեխաներու Հոգեկան կյանքը իր հիմնական գծերովը շատ նման է իրարու ամեն տեղ: Եթե այդ նախնական ժողովուրդները նույն զբաղումն ունին, ուրիշ խոսքով՝ եթե նույն են և աշխարհագրական պայմանները, անոնք կնմանին իրարու նաև իրենց նիստ ու կացով, զարդերովն ու

գենքևրովը, կահ-կարասի, բնակարան, այսինքն՝ կյանքի արտաքին կողմերովը: Ատոնց բոլորի լեզուն քանի մը տասնյակ բառերեն անդին չանցնիր, որոնք բուռ կապմութեան և հնչական օրենքներու նորեն աստիճ նման են իրարու: Նմանապես և կրոնական առաջին ըմբռնումները, պաշտամունքի ձևերը, կուռքերը, ինչպես և բոլոր գեղարվեստներու առաջին փորձերն ու քայլերը: Այդպես ալ դիվակարութեան, հրամանատարութեան ու կրոնապետութեան ձևերը:

Քաղաքակրթութեան դեպի վեր դիմող ընթացքին հետ հետզհետե կշտանան ու կշեշափին տարբերութիւնները, թևքումները, ճյուղավորումները, ամեն մեկուն մասնաւոր հակումներն ու մասնաւոր զարգացումը. իր ձևի լեզու, այլ ձևի արվեստ, նոր ձևի ըմբռնում, իր տեսակի կրոն, այլ տեսակի պետական կապմ, նոր տեսակի ժողովուրդ: Եվ կամաց-կամաց այն աստիճան կվատանան այդ ազգային գծերը, որ նույնիսկ նույն աշխարհագրական պայմաններն ու նույն պատմութեան ու տնտեսական կյանքը ունեցող ժողովուրդներին անգամ խորապես կտարբերին իրարմե, ինչպես հույներն ու փյունիկեցիք[3]:

Եվ ինչքան կբարձրանա քաղաքակրթութեան աստիճանը և ինչքան երկար կապրի ու կաշխատի ժողովուրդը, այնքան չատ կդիզվին նյութական ու հոգեկան այդ ազգային գանձերը՝ քաղաքներ, տաճարներ, պալատներ, ջրանցքներ, արձան ու նկար, արհեստ ու արվեստ, վիտուէթյուններ, փիլիսոփայութիւն, դիր ու հաշիվ, այնքան կնրբանա ու կհարստանա լեզուն իր հատուկ ճամբովը, այնքան իրենց ուրույն խորութիւնն ու վեհութիւնը կստանան մտածումն ու պաշտամունքը, այնքան կբարդին ու կզանազանվին քաղաքական ձևերը, ըմբռնումները, քաղաքացիական ձևերն ու ըմբռնումները, աշխատանքի ձևերն ու տեսակները, նույնիսկ կռվելու ձևերն ու արվեստը: Եվ այս բոլոր հետզհետե աճող ու կուտակվող առանձնահատուկ ձևերեն, իրերեն ու երևույթներեն ամեն մեկը նոր կապ մըն է ժողովուրդի մը անդամները իրարու կապող, նոր հպարտութիւն մը ընդհանուրին, նոր սիրու, հարգանքի ու համակրանքի աղբյուր մը դեպի իրեններն ու դեպի իրայինը:

Համայնական եսի պատկերը միշտ կա ժողովուրդներու մէջ: Բայց այս բոլոր ստեղծագործական աշխատանքի ու արդիւնքի պատկերքին տակ ան կ'հաստատնա ու կ'երեւան ազգային գիտակցութեան: Ամէնքը կ'ակտին փնտրելու իրենց իրար կապող բոլոր հին ու նոր կապերը, կրնդգծեն իրենց առաւելութիւնները ու առանձնահատկութիւնները և գիտակցորեն կ'ձգտին, որ ամէն ետքը ստեղծեն ու արտադրեն ամէն ինչ իրենց կնիքովը, դրոշմեն ամէն բանի վրա իրենց ազգային ետը, իրենց ոգին, և ամենեն սուբը բանը կ'դառնա իրենց համար իրենց ազգային ուրոյնութիւնը, իրենց անհատականութեան անկախութիւնը:

Ուրիշ խոսքով՝ մարդկութեան ու քաղաքակրթութեան զարգացման հետ ազգութիւնն ու ազգայինը ո՛չ թէ կ'նուազնա, կ'հյուծվի ու կ'մեռնի, ինչպես մեզի մատուցանել կուզեն, այլ ընդհակառակը, քաղաքակրթվիլը ու միշտ բարձր ձգտիլը ամենեն հիմնական պայմանն է ազգութիւններու զարգացման, ազգային գծերու ուժեղացման, ազգային գանձերու դիզման, ինքնուրոյնութեան պնահատման:

Ջմոռնանք, ինչպես որ հասարակութեան մը մէջ անհատներու բոլոր մեծութիւնը, արժեքը, իրենց գեղեցկութիւնը, տաղանդը, առաքինութիւնը, իրենց բոլոր բուլրն ու հրապոյրը ո՛չ թէ ուրիշներու հետ ունեցած նմանութեան մէջն է, այլ ընդհակառակը, անոնցմե ունեցած տարբերութեան մեջ, իրենց ինքնութեան, իրենց անհատականութեան: Այդպես ալ ժողովուրդները միայն այն չափով արժեք ունին մարդկութեան համար, հրապոյր ու գեղեցկութիւն մարդկութեան առջև, ինչ չափով որ չեչտված ու գրավիչ են իրենց ազգային գծերն ու ընդունակութիւնները, ինչ չափով որ մեծ է ժողովուրդի մը ազգային կամքը, տաղանդն ու ստեղծագործութիւնը:

Ե. ՀԱՇՄ ՈՒ ՀԻՎԱՆԴ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

Առողջ ու բնական պայմաններու մէջ ամեն ժողովուրդ ունի, և պետք է որ ունենա, իր յրիվ անհատականութիւնը, այսինքն՝

ազգութիւնը կազմող թէ՛ բնական և թէ՛ կուլտուրական բոլոր երևոյթները: Սակայն քիչ չեն այն ժողովուրդները, որոնք պատմական բազմադիմի պատճառներով զրկված են իրենց անհատականութիւնը կազմող մեկ կամ նույնիսկ մեկ քանի կողմերե, բայց և այնպես կորուսած չեն բոլորովին իրենց անհատականութիւնը և կապրին թերի անհատականութեամբ մը. սոսնք հիվանդ կամ հաշմանդամ ժողովուրդներն են:

Ջէ՞ որ հասարակութեան մեջ ալ պակաս չեն առանց ձեռքի ու ոտքի ապրող մարդիկ, կան և առանց ստամոքսի կամ ամորձիքներու ապրողներ: Այդպես ալ ժողովուրդներ կան, որ կապրին ներքինի վիճակի մեջ, ստամոքսը հանած կամ կես թոքով, քաշքշվելով, արհեստական սնունդով, աղճատված ու հևալով:

Բայց անհաս չէա, որ ապրիլ կարողանա առանց սրտի կամ բոլորովին առանց թոքի կամ առանց մարսողական գործարաններու: Այսինքն՝ կան կյանքի կողմեր, որոնցմե զրկվիլը անմիջական մահն է անհատականութեան: Կան ուրիշ կողմեր, որոնց կորուստը դանդաղ մահն է անհատականութեան: Բայց կան և այն տեսակի կորուստներ, որոնք թեև կզրկեն անհատականութիւնը կյանքի լրիվ վայելքեն ու հմայքեն, իր կորովեն ու թափեն, բայց թույլ կուտան պահպանելու կամ առնվազն քաշ տալու իր գոյութիւնը բավական երկար ժամանակ, այսինքն՝ քրոնիկ հիվանդ վիճակով:

Ուրիշ խոսքով՝ ժողովուրդի մը անհատականութիւնը չաղվող երևոյթներեն ամեն մեկը նույն արժեքը չունի իր կորուստին բերած հետևանքներուն տեսակետեն:

Ցեղի կորուստ՝ ըսել է նոր սրյան խառնուրդ: Եթե այդ խառնուրդը կկատարվի ցրիվ, թեթև ու սովորական չափերով, ժողովուրդի անհատականութեանը գործնականապես ազդել չի կրնար: Իր բերած ժառանգական նոր գծերը կավելցնեն թեթև երանգներ միայն, որոշ փոփոխութիւններ, առանց սակայն հիմնական ազգային գծերը փոխել կարենալու:

Եթե այդ խառնուրդը կկատարվի զանգվածորեն և կեդրոնացած մեկ վայրի վրա, հետևանքը կըլլա զգալի փոփոխութիւն մը այդ մասի ժողովուրդի ֆիզիքական ու հոգեկան պատկերին, ինչ-

պես և քաղաքակրթության: Այսպես կան ամեն երկրի մէջ այլատարր ու այլակազմ դաւանութիւններ, սեռակ մը ստորաբաժանում մեծ ամբողջութեան, որուն կապված են սակայն կուլտուրական ընդհանուր կապերով, իբրև պետութիւն, կրթութիւն, լեզու, կրօն, գրականութիւն:

Եթէ այդ միացնող կապերը խզվին, այսինքն՝ պետութիւնը քայքայվի, պետական լեզուն վերանա, գրականութիւնն ու կրթութիւնը չխաղան իրենց դերը, հետզհետե կառանձնանան այդ ցեղային այլատարր ու այլակազմ մասերը ու կդառնան նոր ժողովուրդ, նոր անհատականութիւն: Նույն հետևանքը կստացվի, երբ երկու ժողովուրդներ կուգան ու ամբողջովին կխառնվին իրարու, այսինքն՝՝ կառաջանա նոր ժողովուրդ մը, նոր անհատականութիւն մը, թեև չատ հաճախ իր վրա կկրե հինի անունը:

Ուրեմն՝ դպրոցի հոսանքով կատարված արյան խառնուրդը միշտ հակում ունի անհատականութիւնը փոփոխութեան ենթարկելու, նորը ծնելու: Կուլտուրական ընդհանուր կապերու գոյութիւնն է, որ կխանգարե անջատումը և առաջը կառնե անհատականութեան կորուստին, եթե որոշ չափը անցված չէ:

Ագգութիւններու կյանքին մէջ արյան խառնուրդը այլադիմութեան աղբյուրն է, մինչ քաղաքակրթական հաստատութիւնները՝ պահպանողական աղբյուրը:

* * *

Հայրենիքը կկորսվի, երբ ժողովուրդ մը, ժողովուրդի մեկ մասը դուրս կնետվի իր հողեն քաղաքական ու տնտեսական բազմատեսակ պատճառներով: Ժողովուրդի մը ամբողջական տեղահանութիւնը, ցեղերու արշավանքը, թափառումը հովվական տնտեսութեան ու ցեղային կազմակերպութեան հետ կապված երևույթ է և քաղաքակրթութեան տարածման հետ կվերանա հետզհետե: Ժողովուրդի մը ամբողջովին ցրիվ գալը, ինչպես հրեաներն են, չատ բացառիկ պայմաններու արդյունք է: Իսկ, ընդհակառակը, ամենեն սովորական ձևն է, երբ ժողովուրդի մը ավելի կամ նվազ կարևոր մասերը կգաղթեն:

Գաղութներու անհատականութեան կորուստին կամ պահ-

պանման տեսակետներն վճռական են երկու կետ՝ արյան խառնուրդը և քաղաքակրթության ազդեցությունը:

Եթե նոր Հայրենիքին մեջ ժողովուրդ մը ապրի առանց տեղական տարրերուն հետ ամուսնական կապակցության մեջ մտնելու և պահել կարողանա իր կուլտուրական հատատատությունները, այսինքն՝ իր վարչական մեքենան, լրտնը, լեզուն, կենցաղը, կդառնա գաղութ մը եվրոպական իմաստով. կնշանակե՝ եկած է կուլտուրապես ցած ժողովուրդի մը դրացի և ուժը իր ձեռքն է. և իր անհատականությունը գրեթե կմնա անփոփոխ, Համենայն դեպս ո՛չ շատ տարբեր, քան երկրի մը գանազան գավառները, հաճախ շա՛տ ավելի քիչ:

Եթե պահել կարողանա իր քաղաքական ու քաղաքակրթական ազդեցությունը, բայց արյունը խառնվի, կամաց-կամաց կառաջանա նոր ժողովուրդ մը, ինչպես Միջին ու Հարավային Ամերիկայի Հանրապետությունները՝, ըսել է՝ հետզհետե կխառնվի ու կփոխվի նաև քաղաքակրթությունը:

Եթե նոր Հայրենիքին մեջ, ընդհակառակը, խառն ամուսնություններ խուսափե, բայց իր քաղաքակրթական հատատատությունները ամբողջովին պահել չկարողանա, և ամենեն առաջ իր կառավարական կազմը, վերջն ալ լեզուն, կնշանակե՝ եկած է կազմակերպված ժողովուրդի մը գիրկը, իբրև հպատակ գաղթականություն, և ուրկե սակայն խիստ կտարբերվի իր անհատականության մյուս կողմերով:

Ինչքան ժամանակ որ խառն ամուսնություններն հեռու մնա, կնկատվի միշտ իբրև եկվոր ու առանձին ժողովուրդ, թեև իհարկե չափազանց կրճատված ու աղճատված անհատականությամբ: Իսկ ամուսնական կապերե հեռու մնալու ժամանակը ուղիղ հարաբերական է երկու ժողովուրդներու քաղաքակրթության տարբերությանը: Ինչքան տարբերությունը չատ, այնքան խառնուրդը ուշ. որովհետև այդքան ալ չատ ժամանակ է պետք իրար վարժվելու, իրար տանելի դառնալու և փոխադարձ նախապաշարումներե ու զզվանքե ազատվելու: Երբեմն զզվանքն ու ատելությունը այնքան մեծ են, որ տասնյակ դարեր կրնա տևել

այդ անջատումը, ինչպես, օրինակ, «Հրիատոսին խաչող» հրեաներու հանդեպ քրիստոնյաներու վերաբերումը մինչև վերջերս:

Հալածանքը, ատելությունը, գովանքը, արհամարհանքը և կրոնական նեղսրտությունը այն պատնեշներն են, որոնք կարգելեն հյուրընկալ ժողովրդին իր հյուրին հետ խառնվելու և եկվոր ժողովուրդին կստիպեն ինքն իր մեջ ամփոփվելու, կծկվելու և պահելու երկար-երկար դարեր ցավագար ու երկու-երես անհատականություն մը, որովհետև տնտեսական պայմաններու ճնշման տակ թողնելու է շատ բան իր սեփական քաղաքակրթութենեն և դառնալու է դո՛ւրսը ուրիշ ազգի մարդ, տո՛ւնը՝ իր ազգի:

Իսկ հենց որ արյան խառնուրդը սկսի, այսինքն՝՝ երբ հաճախադեպ դառնան խառն ամուսնությունները, աննեցուկ ու թռիչքի զուրկ դարձած քաղաքակրթության վերջին մնացորդները կթափին և եկվորը հետզհետե կդառնա տեղացի ժողովուրդ: Թեև իհարկե դեռ երկար ժամանակ կմնան տարտամ հիշողություններ, տարօրինակ համակրանքներ և քանի մը սրբություն դարձած իր կամ գիրք պահարաններուն անկյունը: Օրինակ՝ Գալիցիայի[10] և Տրանսիլվանիայի[11] երբեմն նշանավոր հայ գաղթականության այսօրվան վիճակը, որուն նման են դառնալու, ավա՛ղ, աշխարհի չորս ծայրերը բույն դնող մեր արդի փախստականները:

Հայրենիքի կորուստը ճակատագրական է ժողովուրդի մը անհատականությանը համար, բայց ո՛չ ինքնին, այլ որովհետև իր հետևեն կբերե արյան խառնուրդ և սեփական քաղաքակրթության փճացումը:

* * *

Այս բոլորի մեջ նկատելի է կուլտուրական երևույթներու խաղցած վերջնական դերը: Եվ բնական է. այդ երևույթներուն մեջն է, որ անհատականությունը կարտահայտվի. այդ կուլտուրական երևույթներովն է, որ անհատականությունը կմարմնավորվի, ձև, դրոշմ ու կերպարանք կստանա: Ծագումը, աշխարհագրական պայմանները, ձեռք բերված ֆիզիքական ու հոգեկան կազմը և արդեն ապրած կյանքը տակեն աշխատող գործոններ են, շատ խորը, հեռուն: Ինչ որ տեսանելի, զգալի և ունելի է, անոնց

ազգեցութեան արդիւնքը նպոյ կուլտուրական երեւոյթներն են: Անոնք՝ վարը, արմատը, մէջի մեղ. ասոնք՝ վերը, լուսին մեջ տարածված ճիւղերը, տաղաւրիթը, ծաղիկն ու պտուղը: Ասոնց ներկայութեամբ է, որ մենք պիտենք անհատականութեան մը գոյութիւնը. ինչքան ատեն որ ասոնք կան, կա և անհատականութիւնը: Երբ ճիւղերեն մեկ քանի հատը քսանան ու որդնակեր դառնան, հիվանդ է ծառը. իսկ երբ քաղաքակրթութեան բոլոր ճիւղերը չորնան, ծառը մեռած է: Կրնան արմատները նոր ընձիւղ տալ, կառաջանա նոր ծառ հին արմատին վրա, բայց հին անհատականութիւնը մեռած է: Եվ իրոք իրենց քաղաքակրթութիւնը կորուսած ժողովուրդներեն չատերը, խառնվելով նոր ազգագրական տարրերու հետ, կվերածնին, կառեղծեն նոր ժողովուրդ, նոր անհատականութիւն, բայց հին անհատականութիւնը մեռած է իր քաղաքակրթութեան հետ միասին: Իտալիան հիմա մեծ պետութիւն է, նոր ժողովուրդ, նոր քաղաքակրթութիւն՝ ծլած հին Հռոմի ավերակներեն. բայց Հռոմայեցին մեռած է վաղուց իր քաղաքակրթութեան հետ միասին:

Կուլտուրական երեւոյթներեն ամենեն հաճախ և ամենեն առաջ կորուստի ենթարկվողը ժողովուրդի մը պետական-կառավարական կողմն է. այն պարզ պատճառով, որ արշավողներու ու տիրապետողներու առաջին ու գլխավոր ցանկացածը երկրին տիրանալն է, դիզված հարստութիւնները յուրացնելը և իրենց հրամանին տակ ժողովուրդի աշխատանքը շահագործելը. և ատոր համար պետք է կոտրել ժողովուրդի ուժը, կամքը, վարիչ մտքենան:

Զրկված իր պետութենեն ու անկախութենեն ու ընկճված ուրիշի կամքին տակ՝ ժողովուրդ մը դեռ կրնա պահել իր անհատականութիւնը այդ հաշմանդամ վիճակին մեջն ալ, եթե ճնշում ու հալածանք չկա կուլտուրական մնացած կողմերուն վրա և եթե անկախութեան կորուստին չի ընկերանար խառն ամուսնութիւնը:

Եթե պետութեան կորուստին կընկերանա նաև կրոնափոխութիւնը տիրող կրոնի օգտին, անհատականութիւնը փարած լեզվին՝ վերջին ճիգերը կթափի պահպանվելու համար. բան մը, որ սակայն երկար տևել չի կրնար, որովհետև կրոնակցութիւնը դուռ

կրանա խառն ամուսնութիւններու և կգրավէ ժողովուրդի մը անհատականութիւնը պաշտպանելու վերջին ամրոցը՝ ընտանիքը. և կինցաղն ու լեզուն կկորսնցնեն իրենց վերջին ոտքի տեղը:

Կպատահի կորսուստը պետութեան ու լեզուի՝ պահելով իր ուրույն կրոնը, կենցաղը և ազատ մնալով արյան խառնուրդեն: Այս պայմաններուն մէջ աղճատված և ողորմելի անհատականութեան մը մնացորդը կփարի ամբողջովին եկեղեցիին, ինչպես էր Թուրքիայի չարք մը վայրերու հայութիւնը ասկե հիսուն տարի առաջ:

Բայց այս ամենը ժամանակավոր ու անցողակի վիճակներ են և բնական լուծումը շատ չի ուշանար հետևյալ երկընտրանքին տակ՝ մահ կամ ազատութիւն:

Անհատականութիւնը կա՛մ պիտի ստանա իր լրիվ կուլտուրական գործարանները, պիտի դառնա իր կամքին ու վարչութեան, իր աշխատանքին ու ստեղծագործութեան տեր ժողովուրդ մը, այսինքն՝ պիտի առողջանա, կա՛մ պիտի մեռնի: Հյուծումը կրնա տևել ավելի կամ նվազ երկար, հոգեվարքը կրնա ըլլալ աւելի կամ նվազ համառ, բայց պետք է մեռնի. որովհետև ուշ կամ կանուխ գալու է արյան խառնուրդը, լեզվի ճնշումը և կրոնափոխութեան հարկադրանքը, որովհետև ոչ մեկ տիրող ժողովուրդ չի կրնար հանդուրժել, որ իր մարմնին մէջ իր քաղաքակրթութիւնը մերժող, արհամարհող, դիմադրող ուրիշ ժողովուրդ մը ամուր բույն դրած ըլլա. որովհետև կիսատ կյանքով ու հավիտյան արհամարհված, հալածական, ընկճված ու զրկված ապրելուն մէջ իմաստ չկա ժողովուրդի մը համար:

Եթե դեռ կենսունակութիւն ունի իր ջիղերուն մէջ, կհասնի իր ազատութեան, պետք է հասնի իր անկախութեանը, իր անհատականութեան լրիվ արտահայտութեանը:

Եթե չունի այդ կենսունակութիւնը, եթե ուժերը չեն պատեր, կհալվի, կճուլվի ու կխմորվի ավելի ուժեղ ժողովուրդներու զանգվածին մէջ:

Ասոր համար է, որ ամեն պրկանք ու հալածանք, ջարդ ու տարագրութիւն, ամեն, ամեն վայրագութիւն իմաստ ունի ժողովուրդի մը համար և՛ կրելու, և՛ տոկալու, քանի որ այդ բոլոր

տանջանքը ան կկրեն ձգտելուն համար, դիմադրելուն համար, ունենալու համար իր յրիվ անհատականութիւնը, հասնելու համար անկախութեան:

Զ. ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՎՈՐ ՄԱՐՄԻՆԸ

Հայ ժողովուրդ կամ հայ ազգ ըսելով՝ սովորաբար կմտածենք հայ անհատներու գումարը, մեծամասնութիւնը կամ առաւելին բոլոր հայ անհատները միասին առած: Այսինքն՝ մեր միտքը միշտ կուտակված անհատներու շուրջն ու վրան կթափառի, անհատներու պարզ միացում: Գիտականորեն մտածող միտքն է միայն, որ ժողովուրդ կամ ազգ ըսելով, կհասկնա անհատներե վեր ավելի բարձր կարգի ամբողջական նոր և ուրոյն մարմին մը, ինչ որ իրապես այդ բառերը կներկայացնեն:

Նույնիսկ ծովը կաթիլներու պարզ գումար մը չէ: Միլիոն միլիոնավոր կաթիլներ չարեցեք ձեր երևակայութեան մեջ քով քովի և դուք չեք ստանար ծով, այլ կաթիլներու չալքեր: Ծով դառնալու համար պետք է որ այդ կաթիլները կապվին, միանան իրարու, կազմեն նոր հսկա ամբողջութիւն մը իրեն հատուկ ահեղ տեսարաններով, իր ներքին ու արտաքին նոր ուժերով և նոր արդյունքներով: Այսպես է և ձյան հյուսքը, այդպես է անապատը, այդպես են ընդհանրապես բոլոր մարմիններն ու երևույթները, որոնք կգոյանան իրենց բաղադրիչ նույն ու նման մանրիկներու պարզ միացումովը նոր ամբողջութեան մը մեջ:

Այդ նոր ամբողջութեան ուրույնութիւնը կդառնա ակընհայտնի, երբ բաղադրիչ մանրիկները նույն ու նման դերով ու դիրքով չեն միանար իրարու, այլ զանազան հատվածները տարբեր դերով ու դիրքով: Այսպես, օրինակ, դդալ մը, սեղան մը, խոշորացույց գործիք մը, կարի մեքենա մը շատ ավելի որոշ և ուրույն ամբողջութիւններ են և մենք արդեն չենք ալ մտածեր, որ փայտի կամ երկաթի մանրիկներու գումարն են անոնք: Այդպես ալ ընկերական կյանքի մեքենաներն ու գործիքները, օրինակ՝ բանակը, որ դինվորներու պարզ գումար մը չէ, այլ որոշ կազմով, կարգով ու

ոգիով կուվելու հսկա գործիք մը. քանդն գործիքին հատուկ կարգն ու ոգին և կունենաս ո՛չ թե բանակ, այլ այս անգամ իրոք որ պինդար անհատներու խուժան մը, որ ամենեն մեծ պատիժն է ու պարտութիւնը հենց իր պաշտպանելիք երկրին համար:

Ազգը պարզ հավաքածու մը չէ նույնացեղ անհատներու, այլ այդ անհատներու կապակցումեն կազմված և ավելի բարդ, ավելի բարձր տեսակի ուրույն ու ամբողջական մարմին մը, գործիք մը, մեքենա մը, եթե կուզեք, իրեն հատուկ կազմով, նոր երևույթներով, նոր ուժերով, նոր հետևանքներով: Ինչպես որ իր հերթին՝ մարդ անհատը ինքը կենդանական բջիջներու պարզ հավաքածու մը չէ, այլ բարդ ու ամբողջական նոր տեսակի էակ մը, թեև ամբողջապես կազմված է բջիջներե, տարբեր-տարբեր տեսակի բջիջներե:

Ազգը ոչ միայն նոր և ուրույն մարմին մըն է, նոր և ուրույն մեքենա մը, այլև կյանք ունեցող մեքենա մը:

Կյանք ունին այն մարմինները, որոնք կառաջանան իրենց նման մարմիններե՝ բնելով իրենց հետ անոնց բոլոր հիմնական հատկութիւնները ու կազմվածքը, որոնք կապրին, այսինքն՝ կգործադրեն իրենց կազմն ու հատկութիւնները, կփոփոխվին, կաճին, կբարձրանան՝ հարմարվելով շրջապատող պայմաններուն. որոնք կծնին իրենցմե իրենց նմանները ու կմեռնին, այսինքն՝ կմաշվին ու կքայքայվին:

Արդ՝ ազգերը կծնին իրենց նմաններեն ու կծնին իրենց նմանները: Նախապատմական ժամանակներուն մեջ թե ինչպես է առաջացեր ընտանիքը, որ ազգերու նախնական ձևն է, շատ հետաքրքիր է իբրև պիտական հարց: Բայց հիմա մեզի համար գործնական կարևորութիւն չունի, քանի որ պատմութեան լույսին տակ ինկած շրջանին մեջ ազգերը առաջացեր են և կառաջանան իրարմե:

Ազգը ազգ կծնի և այդ ծնունդը կկատարվի երկու ճամբով. երկու կամ ավելի ժողովուրդներ կխառնվին, կձուլվին իրարու, և կդոյանա նորը: Երկրորդ ճամբան ճյուղավորումն է. մայր ժողովուրդի մեկ մասը կբաժնվի և նոր պայմաններու աղբեցութեան տակ, հետզհետե փոփոխվելով, կառաջանա նոր ժողովուրդ, որուն

սովորաբար կրնկերանա նաև նոր արյան խառնուրդ: Այդ երկու գործոնները, այսինքն՝ խառնուրդ ու հյուպատություն, ընդհանրապես կաշխատին միասին:

Այսպես՝ արդի եվրոպական ժողովուրդներուն մեծագույն մասը, հետն ալ Հին Հայերը, պարսիկներն ու ինառւանները միևնույն մայր ժողովուրդե մը առաջացած քույր ազգեր են:

Հայերս հիմա խառնուրդ ենք ուրարտական մեծ ժողովուրդի մը ու եկվոր հայերուն, որոնց սակայն դարերու ընթացքին խառնվեր է բազմաթիվ ուրիշ տարրերու արյունը, առաջնները սեմական և արիական ծագումն, վերջին հազարամյակին ալ թուրանական ցեղերու:

Վերջին երեք-չորս դարերու ընթացքին են առաջացեր Միջին և Հարավային Ամերիկայի ազգերը եվրոպական գաղութներու և տեղացի բնիկներու խառնուրդեն:

Մեր աչքերուն առջևը կազմվելու վրա է Միացյալ Նահանգներուն մեջ նոր ազգ մը անգլիական հիմքով ու շատ տարրերու խառնուրդով: Արդի անգլիական ազգը ինքը գլխավորապես ծնունդ է անգլերու ու նորմաններու խառնուրդին, չհիշատակելու համար ավելի հին չերտերը: Եվ այսպես բոլորը:

Մնվելեն ետքը ազգերը դարե դար կմեծնան, կհասունանան, տարիք կքաշեն: Ունին իրենց տղայությունն ու երիտասարդությունը, առնության ու ծերության հասակը՝ այդ տարիքներուն հատուկ բոլոր բնորոշ հատկություններով:

Ապրող ժողովուրդներու մասին որակումներ տալը վտանգավոր բան է, ինչպես և ապրող անհատներու մասին. հանկարծ բոլոր ենթադրություններդ սուտ դուրս կուգան: Բայց կարծեմ ճշմարտությենեն շատ հեռու չենք ըլլար, եթե ըսենք, օրինակի համար, որ ռոմանական ազգերը՝ Ֆրանսա, Իտալիա, Սպանիա, Հասունության տարիքը ավարտելու վրա են կարծես: Մինչ անգլոսաքսոն ժողովուրդները[12], ընդհանրապե՛ս ասած, եկեր են հասունության գագաթին: Գերմանացիք երիտասարդական կռվազանություն և հոխորտանք ունին դեռ, բայց նաև նվով ու աշխատանքով, և վստահ, որ վաղը իրենցն է ապագան: Ռուսները դեռ տղա են, պատանի, կյանքով լեցուն, բայց անկշիռ և ըրածնին չեն գիտեր.

Հանկարծ թռիչք մը, կաշխատին, կտիրեն ու կշինեն, մեկ ալ տեսար քացի կուտան, կքանդեն:

Եվ ամեն երկար ապրող ժողովուրդ ունի իր զառամ շրջանը: Ինչպես Բաբելոնը, Հռոմը, Բյուզանդիան և արաբական խալիֆայութիւնը, նոր նոր, Թարմ և կիսամայրենի ցեղեր պետք է գան թևևրեն մտնելու, որ կարողանա ոտքի կենալ. հաճախ այդ պիչատիչ օգնականներու թևևրուն մէջն ալ իր չունչը կփչէ զառամյալը: Բոնի մահով գացող ազգեր ալ կան և քիչ չէ անոնց թիվը, որովհետև կյանքի կռիվը, տիրապետութեան ու հափշտակութեան համար կատարված մենամարտը. ինչպես և դղրունի դարանի մտած ու վայրագ սպանութիւնները միայն անձերու մէջև չէ, որ տեղի կունենան, այլև քաղաքակրթութիւններու: Թուրքերու նենգ ու դարանամուտ ճիգը հայութիւնը ջնջելու՝ քաններորդ դարու «բարձր» քաղաքակրթութեամբ սոնքացող[13] ազգերու աչքին առջևը կատարվող իրողութիւն մըն է:

* * *

Ազգերը ապրելով՝ իրենց էութիւնն ու գոյութիւնը պահպանելու և զարգացնելու համար կաշխատին ու կգործեն՝ հարմարվելով շարունակ իրենց ներքին ու շրջապատող նոր պայմաններուն. և նոր պահանջներուն համեմատ ալ հետզհետե փոփոխելով իրենց գործունեութեան եղանակն ու միջոցները. և քայլ առ քայլ կատարելագործելով արդեն անգամ մը փորձված ընդունված ձևերն ու համբաները աշխատանքի նոր բաժանումով: Ասով ալ կամաց-կամաց կառաջանան ու կզարգանան ազգային մարմնի զանազան գործարանները:

Այդ տեսակ գործարաններ են ժողովուրդի մը քաղաքական, վարչական, ռազմական, հարկային, կրոնական դրութիւնները՝ իրենց բազմաթիվ հաստատութիւններով ու բաժանումներով:

Այդ տեսակ գործարաններ են կրթական, դիտական, մասնադիտական, դեղարվեստական ու գրական հիմնարկութիւնները իրենց բոլոր օժանդակ հաստատութիւններուն հետ:

Այդ տեսակ գործարաններ են արհեստներ, արվեստներ, ինչպես և առուտուրը, դրամատուներ, ամեն տեսակի արդյունարերական, բաշխական ու սպառողական ընկերութիւնները, կոոպերատիվները, դրամատիրական ու բանվորական կազմակերպութիւնները:

Այդ տեսակ գործարաններ են դատարանը, օրենքը, սովորութիւն, բարոյականութիւն, նույնիսկ քաղաքավարութիւն, Հասարակաց կարծիք, լրագրութիւն: Այդ տեսակ գործարաններ են ամեն կարգի ու նպատակի խմբումները, ընկերակցութիւնները, ակումբները, կուսակցութիւնները:

Այսպեսով՝ ազգը կենդանի գործարանավոր մարմին մըն է, ապրող ամբողջութիւն մը՝ կազմված պանապան մասերե, որոնցմե ամեն մեկը կաշխատի մյուսներուն Համար, որոնցմե ամեն մեկը կկատարե միայն որոշ գործ մը, լրացնելով մյուս մասերուն աշխատանքը և գոհացնելով մյուսներուն պետքերը, որոնցմե ամեն մեկը կրնա ապրիլ միայն ապրեցնելով մյուսները, պահելով ու ապրեցնելով ամբողջութիւնը:

Եվ ազգութիւնը միակ բնական և հիմնական ընկերական մարմինն է, քանի որ բոլոր մյուս ընկերական կազմակերպութիւնները, հիմնարկութիւնները, խմբակցումները իր գործարաններն են, իրմե ծնված, առանց իրեն ապրելու անկարող ու անիմաստ:

Իսկ քաղաքակրթութիւն, կուլտուրա ըսվածն ալ բառ մըն է արտահայտելու Համար այդ ընկերական գործարանական մարմնի արդեն ստեղծած գործարանները, այդ գործարաններուն գործունեութիւնը և այդ գործունեութենեն առաջ եկած արդյունքները՝ բոլորը միասին առած: Քաղաքակրթութիւնը այն վիճակն է, որուն Հասած է ազգ-օրգանիզմը: Ազգի մը բոլոր օրգանները քաղաքակրթական օրգաններ են. և ազգը ինքը քաղաքակրթութիւնը արտադրող օրգանիզմն է:

Բնութեան ստեղծած բարձրագույն օրգանիզմը մինչև Հիմա:

Բնութիւնը միայն երեք աստիճանի գործարանավոր մարմին ունի, երեք աստիճանի գործարանային ամբողջութիւն, երեք աստիճանի անհատականութիւն:

Առաջին աստիճանը՝ միաբջիջ էակները, որուն կպատկանին բոլոր մեկ բջիջէ մը կազմված նախնական արարածները, բույս թե կենդանի, մանրէ ու բակիլ:

Երկրորդ աստիճանը՝ անհատական դործարանային էակներ, որոնք արդյունք են բջիջներու կապակցության նոր ու ավելի բարձր ամբողջության մը մեջ, և որուն կպատկանին բոլոր բազմաբջիջ բույսերն ու կենդանիները իրենց հազարավոր տեսակներով ու անհամար անհատներով, մարդն ալ մեջը:

Երրորդ աստիճանը՝ ընկերային ապրող մարմինն է, ժողովուրդները, ազգերը, որոնք արդյունք են բուսական կամ կենդանական նույնացեղ անհատներու կապակցության բարձրագույն աստիճանի ամբողջության մը մեջ, որովհետև միայն մարդու հատկությունը չէ ազգ ու քաղաքակրթություն առաջացնելը:

Նույնատեսակ ծառերն կազմված պուրակն ու անտառն ալ իր տեսակի ազգ մըն է իրեն հատուկ քաղաքակրթությամբ: Իսկ կենդանական աշխարհի բոլոր տեսակներուն մեջ դժվար չէ հանդիպիլը ընտանիքի, որ ազգի նախնական ձևն է, կան նաև շատ ավելի բարդ ձևերով խմբական կյանք վարող կենդանիներ: Միթե իր տեսակի ընկերային կազմակերպություններ չե՞ն կենդանական հորդաները, երամակներն ու երամները: Եվ վերջապես մեղուներն ու մրջյունները, և այնքան ուրիշներ, իսկական ժողովուրդներ ունին և բարձր քաղաքակրթություն:

Այսպե՛ս ուրեմն. ազգը հավաքածու մը չէ, պատահական խմբում մը չէ, արվեստական կապակցում մը չէ, այլ ապրող և իրար պայմանավորող գործարանային կապակցություն մը, բնական ամբողջություն մը, հիմնական ընկերային մարմին մը: Դարերու ընթացքին և անդուլ աշխատանքով բնության առաջացուցած բարձրագույն տեսակի գործարանավոր մարմինը, քաղաքակրթություն արտադրող ընկերային մարմինը:

Է. ԸՆԿԵՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԸ ՍՐԲԱԳՐԵԼՈՒ ՃԻԳԵՐ

Ընկերային մարմինը առաջացած է, կապրի ու կգործե, ինչպես ամեն գործարանավոր մարմին, մղված իր գոյությունն ու

իր զարգացումը ապահովելու նկրտումն է: Իր գոյությունը, իր զարգացումը իրին ամբողջությունն է. որովհետև ամեն գործարանավոր մասնի դնկավար սկզբունքը ամբողջ օրգանիզմի օգուտն է, օրգանիզմի ամբողջության զարգացումն ու ապահովումը:

Բայց մյուս կողմեն ընկերական այդ բարդ միությունը կազմված է մարդ-մասնիկներն, որոնք ունին ու կպահեն իրենց անձնական գոյությունը, ունին իրենց ուրույն կամքն ու ձգտումը, իրենց մասնավոր հաչիվն ու շահը, պետքն ու կարիքը: Եվ ամբողջության շահն ու օգուտը չի ծածկեր ամեն անգամ ու չի համապատասխաներ ամեն մեկ անձի մասնավոր շահին ու ձգտումին:

Եվ եթե այդ բարդ ընկերական կազմության համար էականը ամբողջության բռնած ուղին է ու ամբողջության հառաջդիմությունը և երկրորդական կարևորություն ունի իրեն համար իր հյուսվածքը կազմող ամեն մեկ մասնիկի վիճակը, նույնը չէ և նույնը չի կրնար ըլլալ բաղադրիչ մասնիկներուն համար: Ընդհակառակը, ամեն անձ ստիպված է իր օգուտը, իր վիճակը մտածելու, անոր համար ամենակարևորը ինքն է, ամենեն առաջ ի՛ր գոյությունը, նաքը՝ ամբողջությունը:

Այսպեսով ընկերական կազմի և իր բաղադրիչ անհատներուն մեջ, ինչպես և խումբերուն, գործարաններուն և գործարաններու մասերուն մեջ կա մշտական դժգոհություն, չահերու հակադրություն, պայքար: Ամենքը նույն դիրքի վրա չեն, ոչ ալ նույն արժեքն ու դերը ունին, ո՛չ ալ հավասար աշխատանք կկատարեն և ոչ ալ մանավանդ աշխատանքին արդյունքը ամենուն հավասար կհասնի: Մնկ խոսքով՝ ընկերային կազմի և ընդհանրապես օրգանական կազմի հավիտենական հիվանդությունը տնտեսական ու վարչական անհավասարությունն է, որուն զույգ կերթա նաև կես-բերան սրտունչ մը մարդկանց մեջ եղած բնական անհավասարության դեմ, ինչպես է դեղեցկությունը, տաղանդը, խելքը, ուժը, առողջությունը:

Բոլոր դարերու և բոլոր ժողովուրդներու մեջ պրկվածներն ու անիրավվածները փորձած են տիրող կարգերը փոխելու, դիմադրելու, ապստամբած են ու կռված, և մարդկային պատմության

մեկ խոշոր մասը հենց այդ կոմիտներու պատմությունն է: Այդ մաքառումներուն կից և այդ մաքառումներեն ավելի ևս խթանված ազնիվ ու մտածող մարդիկ գլուխ են կտրեր ու ճիգեր են թափեր գտնելու համար այնպիսի ձև մը, այնպիսի վիճակ մը ընկերային կազմի, որ այդ անարդարությունը, անհավասարությունն ու շահագործումը գոնե մեղմեին, տաչեին, նվազ անտանելի դարձնեին:

Այդպիսի մաքառումներեն մեկն է և արդի բանվորական կուսիը կապիտալի դեմ, և այդ տեսակ մտքի ազնիվ ճիգ մըն է սոցիալիստական աշխարհայացքը:

Կամ ավելի ճիշդ է՝ ըսենք սոցիալիստական աշխարհայացքները, որովհետև մեկը չէ, շատ տեսակ են անոնք և իրարմե խորապես տարբեր շատ մը հիմնական հարցերու մեջ: Այսպես՝ սեփականության բացարձակ ժխտումեն սկսած, կան զանազան աստիճանավորություններըը միայն արտադրական միջոցներու ընդհանրացման, ան ալ զանազան ձևերով, հասնելով մինչև կոոպերատիվները, որոնք ինքզինքն կհամարեն ամենեն գործնականը այս ջանքերուն մեջ և որոնք սակայն կտրուկ կանգնած են մասնավոր սեփականության սկզբունքին վրա: Նույնն է ազգային հարցի վերաբերմամբ. ազգ-օրգանիզմները հիմնովին քանդելու և տեղը նոր տնտեսական հիմքերու վրա համամարդկային միակ օրգանիզմ մը դնելու երազեն սկսած, ազգություններու խնդրին ձևնք դալցնելու զգուշացողներուն վրայով, մինչև ազգայնության արժեքը լիովին ընդունող և ընկերային արդի օրգանիզմը միայն անտեսական կողմեն սրբագրելու առաջարկը:

Այս բոլորին մեջ մեզի հիմա մասնավոր կերպով հետաքրքրողը ծայրահեղ խումբն է, քանի որ ան է թշնամին ուրույն ազգությունները գոյության, այսինքն՝ անոնք, որոնք կհավատան ու կձգտին հարցի «կարճ ու կտրուկ» և «արմատական» կերպով լուծմանը:

Եվ առաջին հայացքով իսկապես որ շատ կարճ ու կտրուկ և արմատական կթվի հետևյալ դատողությունը.

«Սեփականության հետ կապված են եղեր միշտ այնչա՛փ թշվառություն, չահագործում, անարդարություն. ուրեմն կորչի՛

սեփականութիւնը: Ազգութեան հետ կապված են եղեր միշտ այնքան ճնշումներ, պատերազմներ, կեղեքում, կողոպուտ ու հարստահարում. ուրեմն կորչի՛ ազգութիւնը»:

Բայց այս սճով կարելի է շարունակել. «Կնոջ ու սիրու հետ կապված է եղեր միշտ այնքան տառապանք, նախանձ, տուելութիւն, գազանութիւններ ու սպանութիւն. ուրեմն կորչի՛ կինն ալ, սերն ալ»:

Հապա ուտե՞լը. ուտելու համար չե՞ն բոլոր տնտեսական կռիվները ու կեղեքումը, իրար հոշոտելն ու իրարու ձեռքն հափշտակելը. ուրեմն կորչի՛ ուտելը:

Ո՛չ. սա արմատական մտածում չէ, այլ պարզապես անարմատ մտածում, ան ալ չափազանց միամիտ տեսակի: Այս դատողութեամբ, եթէ կուզէք, ձեզի ըսեմ ամենեն կարճ ու կտրուկ ու ամենեն արմատական միջոցը մարդկութիւնը իր ներկա ու ապագա բոլոր հոգերեն ու չարչարանքեն միանգամայն ընդմիշտ ազատելու. «Կորչի՛ կյանքը»:

* * *

Հարցի «արմատական» կերպով լուծման հավատքն ունեցողներուն ծրագրին մեջ այնքանը խիստ պարզ է, որ փնտրված հավասարութիւնն ու արդարութիւնը ձեռք ալիտի բերվի զոհելով անհատականութիւնը թե՛ մարդ-անհատներու և թե՛ ժողովուրդ-անհատներու՝ ազգերու: Անձերու անհատականութիւնը պետք է զոհվի, քանի որ կպահանջվի ամեն սեփականութեան և ամեն այխատանքի բացարձակ համայնացում. և ամեն ձեռնարկ, ձեռնբեցութիւն, փորձ ու ճիգ կեղրոնի մը ձեռքով ու հրահանգով և կեղրոնի մը նշանակած մարդոց միջոցով ու ճամբով. քանի որ կպահանջվի հնար եղածին չափ դարձնել ամենքը իրարու հավասար, իրար նման և վերցընել մեջտեղեն ամեն մրցում: Պետք է զոհվի ժողովուրդներու անհատականութիւնը, քանի որ կպահանջվի քայքայել առանձին-առանձին ազգերու գոյութիւնը, ջնջել անոնց մեջ եղած զանազանութիւնները, բոլորին շաղվել իրար և առեղծել մեկ ժողովուրդ ու մեկ խմոր:

Արդ՝ օրգանական և ընկերային կյանքին մեջ տեսակի մը բոլոր անհատներուն համար նույնը եղող, բոլորին ընդհանուր եղող, բոլորը իրար նմանցնող, իրար հավասարցնող գծերն ու հատկությունները անհամեմատ ավելի հին ու հիմնական կողմերն են, հին ժառանգություններ, հինին կառչած, հինը պահող, ինչպես, օրինակ, բնազդները կամ օրգաններու ծագման ու զարգացման աստիճաններն ու ձևերը. այսինքն՝ հավասարցնող, նույնացնող, ընդհանրացնող սկզբունքը կյանքի պահպանողական սկզբունքն է: Եվ ընդհակառակը, տեղին ու պարագային համեմատ փոփոխվող, հարմարվող, հնարող ու տարբերվող գծերն ու հատկությունները, անհատը անհատն ու ցեղը ցեղեն զանազանող նրբություններն անհամեմատ ավելի նոր ձեռք բերված կողմերն են, նոր ժառանգություններ, որոնք նոր ճամբաներ կբանան, նոր ձևերու կձգտին. այսինքն՝ կյանքի հառաջդիմական սկզբունքն են:

Ով որ կհետևի մարդկային ընդհանուր գծերու վրա, ով հավասարություն կքարոզե, մարդոց և ժողովուրդներուն նմանեցում կպահանջե, «լայն մտասաներու» հոգը ունի աչքի առաջ և ավելի «միջակ» մարդով կհետաքրքրվի, ան իր հոգիին խորքը պահպանողական է: Ով ավելի դին կուտա մարդոց անհատական կողմերուն և ժողովուրդներու ազգային առանձնահատկություններուն, ով կսիրե տարաձևն ու բացառիկը ու կջատագովե մրցումն ու ձեռներեցությունը, ան իր հոգիովը հառաջդիմական է:

Ասոնք են մարդկային հոգիին երկու հիմնական տիպերը, երկուքն ալ անհրաժեշտ և իրար լրացնող, որովհետև կյանքը այդ երկու հակադիր սկզբունքներու հյուսքեն է կազմված: Եվ ճիշդ ատոր համար ալ մտածմունքն ու ճգտումը կսկսի դառնալ անաուղղ ու հակաբնական, երբ կուզվի հիմնել կյանքը միայն մե՛կ սկզբունքի վրա, միայն ի՛ր սկզբունքի վրա. և ինչ աստիճանի որ բացարձակ չեչտված ըլլա միայն իր սկզբունքը և անտեսված հակադիրը, այն չափով կըլլա հիվանդոտ ու հետադիմական, այսինքն՝ հակառակ օրգանական ու ընկերային կյանքի բնական ընթացքին ու զարգացմանը:

Այս է պատճառը, որ անհատականությունն ու ազգությունը

խնդիր ուզող «արմատականներուն» մտածումն ու ձգտումը, Հակառակ բոլոր արատին ձևերուն և փբուն բառերուն, իսկապես ոչինչ չունի իր մեջը բարձրացնող, Հակառակ է Հառաջդիմութեան. առաջ տեսակի պահպանողականութիւն ալ չէ, այլ ծայրահեղ ու բացարձակ միակողմանի պահպանողականութիւն, այսինքն՝ Հետադիմութիւն:

* * *

Մարդս ու մարդկային ընկերութիւնը սկիզբը կուլը գործիք մըն է բնութեան ձեռքը, կը գործե ու կը պարտադրի, կ'ինե ու կ'իմանա Հպատակելով բնութեան դրդումին, ինչպես կ'ըսեն՝ բնազդին, կ'ըսնքի պահանջին և ապրելու օրենքին, առանց ոչինչ գիտակցելու, առանց քննական մտածումի իր ըրածին ու թողածին վրա:

Բայց Հետզհետե, մտքի ու քաղաքակրթութեան աստիճանական զարգացման Հետ, կուգա անդրադարձումը դնե իր ըրածը և վերլուծումը շրջապատող բնութեան և իր մեջի բնութեան: Եվ ինչ չափով որ բնութեան գաղտնիքները կսկսին գոյցվիլ ու բնութեան օրենքները կսկսին բացվիլ, մարդն ու մարդկային ընկերութիւնը կսկսին փորձեր ընել այդ բացված օրենքներուն Հիման վրա, Հետևիլ բնութեան, կապկել բնութիւնը. այսինքն՝ կ'ուզան արագացնել բնութեան կատարելիք գործը ու նպաստավոր պայմաններ կստեղծեն անոր աշխատանքին Համար. և կամաց-կամաց նույնիսկ կծառայեցնեն բնութիւնը իրենց ուզած նպատակներուն Հասնելուն Համար. միայն միշտ ենթարկվելով բնութեան օրենքներուն: Ինչն է մեր գիտնականներու ու մասնագետներու կատարածը մեր արտերուն, այգիներուն, ախոռներուն ու գոմերուն, դպրոցներուն, Հիվանդանոցներուն ու աշխատանոցներուն մեջ:

Եվ գիտութիւններու արագ քայլերուն ու ձեռք բերած աներևակայելի Հաջողութիւններուն զուգընթաց՝ կավելնա նաև մարդու Հանդգնութիւնը բնութիւնը Հղկելու, բնութեան կոպիտ կողմերը սրբագրելու, բնութեան թերին լրացնելու: Արդեն մարդու Հոգիին մեջ միշտ եղեր է ու կա դիմադիր ու Հպարտ պահանջ մը բնութեան Հակառակ երթալու, բնութեան օրենքները ոտքի տակ տալու, բնականը ընկճելու ու ենթարկելու մարդկային կամքին.

ասոր դասական օրինակը կուսակրոնությունն է, աշխարհից փախչելը, անհամար տեսակի ճգնությունները, որոնք միշտ հյուսված են եղեր բոլոր դարերու քիչ-շատ բարձր կրոններուն:

Այս բոլոր գիտական ու հակագիտական, հոգեկան բարձր թռիչք ունեցող ու մտավոր տափակության արդյունք եղող խառնուրդին մեջ մեծագույն մասը իհարկե սին ճիգեր են ու մարդկային մեծամտություն: Իսկ այն քիչն ալ, որ մարդիկ հաջողած են «հղկելու» կամ «լրացնելու», հաջողած են միայն մեկ պայմանով՝ ենթարկվելով ու հարմարվելով փոփոխել ուզված իրի կամ երևույթի ներքին բնական օրենքներուն: Ուրիշ խոսքով՝ նորեն հետևելով բնության:

Այդպես ալ է, և այդպես ալ պետք է ըլլա բնականաբար, մեր ընկերային օրգանիզմը սրբագրելու միջոցին: Բնության հակառակ ոչինչ չենք կրնար: Ազգերը կան և առաջացեր են կյանքի բնական անհրաժեշտությամբ և դարերու համառ աշխատանքով. ատոնք մարդկային քաղաքակրթությունը արտադրող բնական օրգանիզմներն են և կբանին իրենց ներքին բնական օրենքներով: Այդ օրգանիզմը ոչնչացնել ձգտիլը կամ քեֆիդ փչածին պես փոխել ու փոփոխել ուզելը նույնքան միամիտ ու անմիտ ցանկություն մըն է, ինչքան տենչալը, որ մարդս ուրիշ տեսակ չինված ըլլար, օրինակ՝ աչքերուն մեկը ծոծրակին վրա ըլլար, մյուսը՝ ճակտին, մեկի տեղ երեք գլուխ ունենար և երկու թուչունի թևեր՝ իր թիկունքին: Եվ իրոք, ատոնք բոլորը և ատոնց նման ուրիշ շատ ցանկություններ տղայական հասակի սիրած երազներն են և բոլոր ժողովուրդներու հեքիաթներուն մեջը լեցուն: Բայց տխուր իրականության մեջ մարդը միշտ նույն անթև մարդն է, միապլուխ ու աչքերն ալ քթին դրացի:

Այո՛, կրնա փոփոխիլ և՛ մարդու մարմինն ու հոգին. և չէ՞ որ փոխվելով ու փոփոխվելով է ան հասեր իր այս արդի վիճակին. և հավիտյան պետք է փոխվի ու փոփոխվի, քանի որ կապրի, բայց ճիշդ նույնքան երկար համառ ու դանդաղ աշխատանքով, ինչպես որ կազմվեր է, առաջացեր է իր ամեն մեկ մասն ու հատկությունը: Կփոփոխվի, եթե իրոք որ համապատասխան է կյանքի պետքին ու

զարգացման պահանջին, բայց անպայման ենթարկվելով մարդկային օրգանիզմի բոլոր բնական օրենքներուն:

* * *

Ճիշդ այդպես ալ ընկերային օրգանիզմը: Հիմնական ու արմատական երևույթներին կարելի չէ փոխել և ոչինչ: Իսկ ավելի երկրորդական բաներին ինչ ալ որ կարելի է «հղկել» ու «սրբագրել»՝ կարելի է միայն ատիճանական համառ ու երկար ջանքերով և անպայման հպատակելով ընկերային օրգանիզմի ներքին օրենքներուն, այսինքն՝՝ հետևելով այն ճամբուն, որով առաջացեր է ան և որով ան կզարգանա ու առաջ կերթա:

Հետևաբար, եթե կուզենք, որ ընկերային կյանքի ցավոտ կողմերը հնար եղածին չափ մեղմանան, եթե կուզենք, որ ավելի արդար ըլլա աշխատավորին վարձը, և ավելի թեթև՝ փոքրի, տկարի, անժառանգի վիճակը, եթե կուզենք, որ գազանը հնար եղածին չափ զսպվի մարդկային անհատներուն և ժողովուրդներուն մեջ, և աղնվությունը ավելի տեղ ունենա մարդկային հարաբերություններուն մեջև,- պետք է աչքի առաջ ունենանք միշտ մեր կատարած ճիգերու միջոցին, որ գործ ունինք բնական-ընկերային օրգանիզմի մը հետ, և մեր ջանքերը պետք է հարմարցնենք այդ օրգանիզմը ստեղծող ու վարող ներքին օրենքներուն:

Ապա թե ոչ՝ տաղանդը, մրցումն ու ձեռներեցությունը խեղդել ուզելով, անհատականությունն ու ազգությունը արհամարհելով հեռու չենք երթար: Կյանքը կերթա իր ճամբով, մեր տգայական սիրուն երազները կմնան հեքիաթներուն մեջ. և մեր այս բոլոր հուզումն ու պահանջը կդառնան զուր աղմուկ և անզուսպ իրարանցում, օրվան հետ եկած, օրվան հետ անցնող:

Ը. ԱԶԳ ՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Մարդկային ընկերային օրգանիզմին ամենեն պարզ ու նախնական ձևն է ընտանիքը, այսինքն՝՝ ամուսնական ու արյան կա-

պերով իրարու զոդված մեկ-երկու սերունդներու կենակցութիւնը ընդհանուր տնտեսութեամբ և ընդհանուր ղեկավարութեամբ:

Երբ ընտանիքին թիվը չատ կաճի և զգալի կդառնա որսի, արոտի կամ հողի սակավութիւնը, ընտանիքը ստիպված է բաժնվելու, որուն հաճախ կընկերանան նաև ազգակիցներուն մեջ ծագած ներքին կռիվները:

Եթե անջատվող մասը իր բնակութեամբ չատ չի հեռանար մայր ընտանիքեն, երկու ընտանիքներուն միջև կմնա կապը ո՛չ միայն ծագման ու լեզվի, բարքի ու կրոնի, այլև տնտեսական ու վարչական կապերու այն մասով, որ կվերաբերի ընդհանուրին. և միացած ուժերով կատարվող բոլոր ձեռնարկութիւններուն, կռիվներուն ու պաշտամունքի միջոցին բնականորեն առաջնութիւնը կմնա մայր ընտանիքի պետին ձեռքը. կնշանակե ընտանիքը ճյուղավորվեցավ, դարձավ տոհմ ու հետզհետե ցեղ՝ պահելով իր ընդհանուր վարչական պետը և իր պետական միութիւնը:

Եթե, ընդհակառակը, անջատվող մասը հեռանա աշխարհագրապես կամ եթե բաժնված է քեն ու կռվով, այն ժամանակ մայր ընտանիքին օղակող բոլոր տնտեսական ու վարչական կապերը կկտրվին, անջատվողներու ղեկավարը կդառնա նոր ու անկախ պետ. և կառաջանա նոր ընտանիք, հետզհետե նոր տոհմ, նոր պետական միութիւն:

Եվ այս ձևով քիչ-քիչ չատցող, իրարմե բաժնված ու իրարմե ծագող մայր ու դուստր և քույր ցեղերու միջև կմնա իհարկե լեզվի, բարքի, ծագման ու անցյալի կապը, այսինքն՝՝ բոլորը միասին կներկայացնեն մե՛կ ժողովուրդ:

Ժողովուրդ մը, որ կազմված ըլլա մեկ ընտանիքե մը, մեկ ցեղե մը, նախապատմական անտառներու թավուտքին խորքը պատահած ու անցած երևույթ է: Պատմութեան լույսին տակ ինկած հին ու նոր բոլոր ժողովուրդները, ինչքան ալ նախնական ըլլան ու փոքրաթիվ, արդեն հասած են ցեղերու կազմութեան, այսինքն՝՝ ամեն նախնական ժողովուրդ բաղկացած է քանի մը պետական միութիւններե, որոնք և հաճախ մշտական կռվի մեջ

են իրարու դեմ: Որով և իրականութեան մէջ պատահող առաջին պետական ձևը կդառնայ ցեղային, ցեղապետութիւնը:

Երբ ուժի ու հաղթութիւններու հետևանքով ցեղապետներն մեկը իր ազդեցութեան ու կամքին տակը կառնէ քանի մը այլասեռակից ցեղեր ու ցեղապետներ, և սաստրաբար իրեն վերագրելով մայր ցեղի տիտղոսն ու իրաւունքները, ըլլա՛ իրաւացի կամ հենց այնպես միայն իր հմայքը ավելի զորեղացնելու համար, կառաջանայ պետական զարգացման երկրորդ աստիճան մը՝ իշխողը, իշխանը, իշխանապետութիւնը:

Երբ ներքին որոշ պայմաններու հետևանքով, հաճախ քաջութեան ու զենքի հմայքով, արտաքին արշավանքներու փայլով կամ հողերու նվիրումով այդ իշխաններեն մեկը հաջողի իրեն կապելու և իրեն ենթարկելու նույն ժողովուրդի մյուս իշխողները առավել կամ նվազ իրականորեն, կառաջանայ պետական զարգացման նոր աստիճան մը: Ինչքան ալ հզոր ու խիստ ըլլա իշխողներուն իշխողը, ամեն մեկ իշխան իր հողերուն վրա ազատ տեր է ու տիրական իր «ժողովուրդին». միայն որոշ գինական, տնտեսական և ծիսական պարտավորութիւններով է ենթակա իշխողներու իշխողին:

Պետական զարգացման հաջորդ աստիճանն է միապետութիւնը: Այսինքն՝ երբ մեծ իշխանը կամ կենդրոնական կառավարութիւնը կհաջողի խլել իր իշխաններուն ձեռքեն անոնց իրենց հողերուն վրա ունեցած անկախութիւնը, կապել բոլոր իշխանները անմիջապես իր անձին ու իր պալատին, իբրև շուք ու զարդ, և միացնել ամբողջ երկիրն ու ազգը մեկ տնտեսական-վարչական կուռ ամբողջութեան մեջ:

Այսպեսով, երբ ժողովուրդները կզարգանան իրենք իրենց, առանց տևականորեն ճգմվելու օտար տիրապետութեան մը տակ, շատ հստակ ու կանոնավոր կերպով մեզի կբերեն երկու իրարու հյուսված եզրակացութեան:

Նախ՝ որ սկիզբները ազգութիւնը ավելի լայն շրջանակ է, քան պետութիւնը: Ամեն ժողովուրդ իր մեջը ունի շատ մը առանձին-առանձին տնտեսական-վարչական միութիւններ, անկախ իշխաններ, անկախ քաղաքներ:

Երկրորդ՝ որ ամեն ժողովուրդ իր քաղաքակրթութեան զարգացմանը զուգընթաց ձգտում ունի այդ իր բաղադրիչ մանր պետական միութիւնները իրարու կապելու, օղակելու, սեղմելու, ձուլելու և առաջացնելու մեկ տնտեսական-վարչական ամբողջութիւն մը, մեկ կեդրոնով, որ ընդգրկի հնար եղածին չափ ամբողջ ազգը, այսինքն՝ դառնա ազգային պետութիւն:

* * *

Այս ընթացքը հիմնովին կփոխվի, երբ ազգերու պետական զարգացման որևէ մեկ աստիճանին վրա օտար ժողովուրդ մը կուգա, կհաղթե, կպրավե անոնց հողերը և կհպատակեցնե իրեն: Կստանանք հպատակ ազգեր ու տեր ազգ մը, և պետութեան ալ նոր ձև մը՝ տիրապետութիւն:

Տիրապետութեան ամենեն թեթև տեսակն է, երբ հաղթողը երկիրը ոտքի տակ տալե ու կողոպտելե հարքը, ծովու մը տեղատվութեան նման, կքաշվի ետ՝ հաղթված ազգի վզին դնելով տարեկան ավելի կամ նվազ ծանր տուրք մը, զինվորական օժանդակութեան պարտավորութիւն և իր գերիշխանութեան ճանաչումը: Որու փոխարեն հին պետութիւնը կմնա իր բոլոր օրգաններով, հաճախ և հին տեղական վերին իշխողը, թեև կաշկանդված ու լուծի տակ, իբրև դաշնակիցը, իբրև օգնականը, իբրև ենթարկյալը «արքայից արքային»՝ նայելով իրական ուժերու փոխհարաբերութեան:

Տիրապետութեան ավելի լրիվ ձևն է, երբ գրավված երկիրը, իբրև նոր նահանգ մը, կմիացվի տիրող իշխանութեան ընդհանուր պետական սիսթեմին, իբրև անոր մեկ անբաժան մասը և ամբողջ վարչական, զինվորական ու հարկային գեկավարութիւնը կանցնի նոր պետութեան ձեռքը: Հին պետութիւնը այլևս չկա, բայց կա հին ազգը իր տեղական փոքր իշխաններով:

Տիրապետութեան ամենեն կատարյալ ձևն է, երբ տիրող ժողովուրդը կոտորածով, տեղահանութեամբ, տնտեսական արգելքներով, կրոնական հալածանքով, իրավական ամեն տեսակի խտիրներով ու խառն ամուսնութեամբ կհաջողի տկարացնել, մաշել ու

ոչնչացնել հին ազգը և վերջին մնացորդներն ալ ձուլել իր հետ: Կնշանակե՝ նոր տիրապետութեան սահմաններուն մէջ հին ազգը մեռաւ:

Տիրապետութիւնը, երբ նոյնիսկ կթուլյատրե, որ հանգիստ ապրին հպատակ ազգերը իր իշխանութեան տակ և պահէն իրենց ազգային քաղաքակրթութեան մնացորդները, կթուլյատրե ակամա՝ հաշիվե կամ հարկե ստիպված. և միշտ ծուռ կնայի անոնց վրա, ըլյա վախի պատճառով թէ անհագութեան: Տիրապետութիւնը ըստ իր էութեան թշնամի է միշտ տիրված ազգերուն և ընդհանրապես «ազգ» գաղափարին. անիկա առաջ կքշե «պետութիւն» գաղափարը:

«Ազգութիւնը նեղ երևույթ է, մանր մտածում, հին մանր պետութիւններու խղճուկ մնացորդ: Եվ ինչո՞ւ են պետք այլևս այդ զանազան տեսակի ազգերը, երբ կա պետութիւնը, մեծ ու հսկա, որու պաշտպանութեան տակ կապրին ամենքը, որու գավակներն են ու հավասար անդամները, ամենքը, «առանց ազգի ու կրոնի խտրութեան»: Եվ ի՞նչ կարիք հազար տեսակ լեզուներու. կարևորն ան է, որ մարդիկ իրար հաղորդել կարողանան իրենց միտքն ու իրենց գործը և ինչքան հնար է լայն շրջանակի. ահա՛ պետական լեզուն, մեկ լեզու մը ամենուն համար, ու վերջացավ գնաց: Եվ ի՞նչ անպատշաճ բան է նույն պետութեան անդամներուն համար քսան տեսակ եկեղեցի, քսան տեսակ պաշտամունք, երբ կարելի է և այնքան ալ դիւրքի ու տնտեսական առավելութիւններ ունի պատկանիլը պետական եկեղեցիին»:

Իհարկե այս ու սոր նման դատողութիւններու մէջոցին կխոստափին հիշատակելե, որ այդ պետական ըսված կազմը, պետական կրոնը, պետական լեզուն տիրապետող ազգի սեփական ազգային լեզուն է, տիրապետող ազգի ազգային կրոնը, ազգային քաղաքակրթութիւնը, և որ ան իր ազգութիւնը կքշե պետական անվան տակ և իր ցանկութիւնը մյուս ազգերը մաշել ու հալելն է ի նպաստ իր ազգութեան:

Եվ եթե քիչիկ մը ուշադրութեամբ հետևելու ըլյանք, պիտի տեսնենք, որ մեր ապազգային ու հակազգային քարոզիչներեն շատ շատեր իրենց այդ «լայնախոհ ազատամտութիւնը» ստացած

են տիրապետող ազգերու ազգային կրթական հաստատութիւններուն մէջ, ուր ամբողջ ուսումը կտարվի տիրված ազգերու ազգային նկատումներուն և բնդհանրապես ազգային գաղափարին դէմ արհամարհանք ներշնչելու ոգով և, ընդհակառակը, պանծացնում «պետական» քաղաքակրթութեան բոլոր կողմերուն:

Այսպեսով՝ բռնակալութեան ու տիրապետութեան տակն է միայն, որ պետութիւն գաղափարը ավելի լայն շրջանակ ունի, քան ազգը, քանի որ նույն պետութեան սահմաններուն մէջ կապրին շատ ազգեր: Եվ բռնակալութեան ու տիրապետութեան ժամանակ է միայն, որ մեջտեղ կուգա ազգերու անհատականութիւնը ճգմելու և ոչնչացնելու երևույթը, ինչպես և ազգային գաղափարի արհամարհանքը, թեև այդ բոլորը կկատարվի տիրապետող ազգի թիվը, դիրքը և քաղաքակրթութիւնը բարձրացնելու ու տարածելու նպատակով, այսինքն՝՝ վերջ ի վերջո նորեն ազգային գաղափարի հաղթանակին համար:

* * *

ԺԸ դարը, իբրև հետևանք Արևմտյան Եվրոպայի քանի մը դարերու գաղութային, տնտեսական ու մտավոր զարգացման, բերավ նոր ըմբռնում մը՝ ժողովուրդի տիրականութեան, ժողովուրդի սյուվերենիտեի ըմբռնումը: Ժողովուրդը ինքը պիտի ըլլա իր երկրին, իր կառավարութեան, իր քաղաքակրթութեան, իր տնտեսութեան տերը, տնօրինողն ու վարողը. ընկերային ամեն երևույթի հիմքը ժողովուրդն է, և ինչ որ կկատարվի՝ պետք է կատարվի ժողովուրդի կամքով ու ժողովուրդի համար:

Եվ այս հիմնական գաղափարն է եղած այն լծակը, որով ուղղութիւն ու թափ են ստացեր քաղաքական կյանքն ու կուլտուրական շարժումները ամբողջ ԺԹ-րդ դարու ընթացքին և մինչև այսօր: Ֆրանսական մեծ հեղափոխութիւնը, ինչպես և անոր արձագանգը եղող բոլոր հաջորդ հեղափոխութիւնները բոլոր երկիրներու մէջ, այդ գաղափարի ծնունդն են. և այդ գաղափարի դրոշակովն են տեղի ունեցեր և մինչև այսօր ալ տեղի կունենան քաղաքական ներքին ու արտաքին մաքառումները նույ-

նիակ Չինաստան, Պարսկաստան ու Թուրքիա, ինչքան ալ որ մակերևույթային ըլլա ու խորթ ժողովրդական գաղափարի եվրոպական ըմբռնումը արևելյան կյանքին ու հասկացողության համար:

Ժողովուրդի տիրականության գաղափարին կպարտինք մեր պարլամենտներն ու հասարակապետությունները, լրագրության ու հանրային կարծիքի հսկայական դերը, պարտադիր կրթությունը, ժողովուրդներու կյանքին ու ցավին մոտիկ ծանոթացումը, ժողովուրդի տնտեսական վիճակի բարելավման զանազան տեսակի ծրագիրներն ու ձեռնարկները, ինչպես և ամբողջ ժողովրդական բանահյուսության մը լույս աշխարհ գալը: Ժողովուրդի տիրականության սկզբունքը տիրած ու զեկավարած է կյանքի բոլոր երևույթներու վրա:

Այդ գաղափարի մեկ անխուսափելի եզրակացությունն է նաև հպատակ ու տիրված ազգերու անկախության պահանջը. և այդ պահանջի գործադրությունն է վերջին մեկ ու կես դարու ազատական կռիվներուն չարքը: Պելճիքա, Իտալիա, Սերպիա, Հունաստան, Նորվեգ, Բուլգարիա, Լեհաստան, Ֆինլանտիա, Ունկարիա, Չեխոսլավակիա և ուրիշներ ստացան իրար եռևեռ իրենց քաղաքական ազատությունը՝ ունենալով իրենց թիկունքին քաղաքակիրթ մարդկության նյութական ու բարոյական աջակցությունը, համենայն դեպս համակրանքը: Անշուշտ այդ համակրանքն ու աջակցությունը երբեք չեն եղած անշահախնդիր, և ի՞նչ կա այս մեղավոր աշխարհիս երեսին, որ տակը հաշիվներ ու շահեր չունենա: Հարցը հոս չէ, այլ թե ինչպե՞ս ամենքը ստիպված են հարմարցնելու իրենց շահերը այդ օրե օր բացարձակ սկզբունք դարձող ըմբռնումին հետ:

Եվ ատոր ամենեն լավ օրինակը այս վերջին համաշխարհային պատերազմն է, որը ստացավ երկու սկզբունքներու ընդհարման կերպարանք: Մեկ կողմը Գերմանիան, ուժի, բռնության, խլելու, ճզմելու ու տիրապետության սկզբունքը,- հին ճամբան՝ շատ բնորոշ կերպով իրեն դաշնակից ունենալով երկու քայքայվող տիրապետություններ, ինչպես հին Ավստրիան ու Թուրքիան: Մյուս կողմը Անգլիան, որ խմբեր էր շուրջը «հանուն ազգերու անկախության» մյուս կռվող ժողովուրդները. դարձավ դրոշա-

կիրը ժամանակի պահանջին, որով և իր կողմը ունեցավ քաղաքակիրթ աշխարհի համակրանքը: Առավ ալ դաշնակիցները հաղթեցին, քանի որ Միացեալ Նահանգներու մասնակցությունը, որով հարցը լուծվեցավ, բացարձակ կերպով այդ սկզբունքի հաղթանակին համար էր, այսինքն՝ որ ժողովուրդ մը ուրիշ ժողովուրդի դխուն չի պիտի բռնանա:

Այնքան ուժեղ է դարձած արդին նոր սկզբունքի ճնշումը և ժամանակի պահանջը, որ աշխարհիս ամենեն մեծ ու կարող տիրապետությունը չատոնց սկսեր է իր դխուն ճարը մտածելու: Եվ խելոք մարդուն հատուկ քաղաքականությամբ իր վրա է վերցուցեր իր տիրապետության մեջ այդ սկզբունքը գործադրողի դերը, և իր կայսրության տիրապետական ձևը վերածելու վրա է դաշնակցական ձևի: Ավստրալիա, Զելանտա, Հարավային Աֆրիկա, Կանատա, ուր անգլիական տարրն է տիրողը, ստացած են տեսավել կամ նվազ լայն ինքնավարություն, իսկ իր ո՛չ անգլոտարր գաղութները՝ կես կամ քառորդ անվանական ինքնավարություն, ինչպես է Հնդկաստան, Եգիպտոս, Արաբիա, Միջագետք, Հրեաստան և ավելի մանրերը:

Եվ տարակույս չկա, որ հետզհետե բոլոր տիրապետությունները ստիպված պիտի ըլլան հետևելու նույն ուղղության: Նշանակալից է, որ պոլշևիկները անմիջապես հետևեցին Անգլիայի օրինակին: Ուկրայնա, Ատրպեյջան, Վրաստան, Հայաստան, Սիպիր և դեռ ուրիշներ կեդրոնական Ասիայի մեջ, խորհրդային, «անկախ» ու «ինքնուրույն» պետություններ են, և «դաշնակից» խորհրդային Ռուսաստանին: Ինչ փույթ, թե բառերը չափազանց խոշոր են ու անճիշդ իրականության հանդեպ. կարևորն այն է, որ ժամանակի պահանջած ձևերը պահված են:

Մարդկային մտքի, խղճի ու քաղաքակրթության կողմեն դատապարտված է արդեն տիրապետությունը, և պետք է ոչնչանա ժողովուրդի մը բռնացումը ուրիշ ժողովուրդի մը վրա: Ճիշդ այնպես, ինչպես որ մարդկային մտքի, խղճի ու քաղաքակրթության կողմեն դատապարտվեցան ու ոչնչացան ստրկությունը և անհատներու ճորտությունը, իբրև անհատի մը բռնացումը ուրիշ անհատի վրա: Եվ ինչպես որ ճանչված է արդեն ամենուն կողմն

անհատներու մէջ եղած իրաւական հավասարութեան սկզբունքը, ինչ աստիճանի ու վիճակի մէջ ալ որ գտնուի անհատը հասարակութեան մէջ – բավական է, որ հասած ըլլա իր հասունութեան տարիքը – այդպես ալ արդին հասունցած ըմբռնում մըն է և վարվան իրականութիւնը, թէ ամեն ազգ իրավունք ունի և պետք է ունենա իր անկախ գոյութիւնը, իրավապես հավասար մնայնեցուն, ինչքան ալ որ փոքր ըլլա. բավական է, որ հասած ըլլա որոշ հասունութեան աստիճանի:

«Ամեն ազգ իր պետութիւնը»: Ա՛յս է այն սկզբունքը, որուն հասեր է մարդկային գիտակցութիւնը, գործնական կյանքի թելադրանքը և արդարութեան պահանջը: Այսինքն՝ ա՛յն սկզբունքը, ինչ որ եղեր է բոլոր դարերու բոլոր ժողովուրդներուն քնապդական ձգտումը, գործած է արդին իրավական գիտակցութիւն և քաղաքական պահանջ:

Այս բոլորեն կրնանք հաներ ազգի ու պետութեան մէջ եղած հարաբերութեան վերաբերմամբ հետևյալ երեք ամփոփումները:

Առաջին՝ երբեք չէ՛ եղած և չկա պետութիւն մը, ինչքան կուզե նախնական ըլլա կամ կատարելագործված, որ ազգութիւն չունենա: Դեռ ավելին. ամեն պետութիւն միշտ հպարտ է եղեր իր ազգութեամբ, ինչքան ալ համեստ ըլլա իր վիճակը, և չանացեր է ամրացնել ու տարածել իր սեփական քաղաքակրթութիւնը: Եթե հաջողեր է տիրելու և նսեմելու ուրիշներու թիկունքին, միշտ աշխատեր է նաև անոնց վիզը փաթթելու իր սեփական անհատականութիւնը, իր ազգութիւնը: Իսկ ամեն տիրված ու բռնաբարված ազգի ջանքը եղեր է ազատել իր անհատականութիւնը այդ վիճակեն և համառ գիմադրութեամբ մաքառեր է մինչև իր ուժերու բացարձակ սպառումը իր ազգութիւնը պահպանելու համար:

Երկրորդ՝ իր հիմնական, բնական պայմաններուն մէջ պետութիւնը մեկ ազգութեան մը մեկ գործարանն է միայն, այն գործարանը, որ կվարե ընկերային մարմինը կազմող անհատներուն ու զանազան մյուս գործարաններուն փոխադարձ գործունեութիւնն ու գործակցութիւնը. տեսակ մը գլխու ու մեջքի ուղեղ, տեսակ մը ընկերային ջղային սիստեմ ու ջղային կեդրոն:

Եվ ինչպես որ նախնական կենդանիներու մարմնին մէջ մեկը չէ, այլ շատ են կանկիրոն հանգուցյները'' և որոնք սակայն կենդանական օրգանիզմի զարգացման հետ իրարու կուգան ու կկազմեն մեկ հիմնական կեդրոն մը ամբողջ օրգանիզմին համար, այդպես ալ ընկերային կյանքը վարող իշխողները նախնական աստիճաններու վրա շատ են, բայց քաղաքակրթության զարգացման հետ կձգտին միանալու և կազմելու մեկ կեդրոն, մեկ իշխանություն, ազգային պետություն:

Երրորդ՝ տիրապետությունն է, որ բանի կերպով կզրկե տիրված ազգությունները իրենց սեփական կամքեն ու սեփական ղեկավարութենեն՝ ոչնչացնելով անոր պետական կազմը և ի'ր կամքին, ի'ր ղեկավարության, ի'ր պետական կեդրոնին ենթարկելով այդ հաշմանդամ դարձած ժողովուրդները: Այս ցավոտ պայմաններուն դեմ է, որ կբողոքի ու կմաքառի հետզհետե զարգացող մարդկային քաղաքակրթությունը և կձգտի վերադարձնելու ամեն ազգին իրմեն խլված կամքն ու ղեկավարությունը և ապահովելու անոր անկախ գոյությունը. ատով է, որ քայլ առ քայլ պիտի մոտենանք ապագա իտեալ վիճակին, երբ ամեն ազգ միայն մեկ պետություն ունի, և ամեն պետություն կծառայե միայն մեկ ազգի, երբ մարդկությունը պիտի ճանչնա միայն ազգ-պետությունը:

Թ. ԱԶԳ, ԸՆՏԱՆԻՔ ՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքը երբեմն, նախապատմական ժամանակներուն մեջ, եղած է մարդկային կենակցության միակ և ամենապայման ձևը, ազգության առաջին, ամենապարզ վիճակը:

Երբ իր հյուղավորումով և այդ հյուղերու կապակցումով, որուն հաճախ կհյուսվին նաև ուրիշ բուներե եկող ընտանիքներ, հետզհետե կառաջանան ավելի բարդ և ավելի լայն մարդկային խմբակցություններ, ինչպես են ցեղերն ու ժողովուրդները, ընտանիքը չի դադրիր գոյություն ունենալե և կապրի իբրև ստորաբաժանում մը, իբրև բաղադրիչ մաս մը այդ ավելի բարձր տեսակի ընկերական ամբողջության. կապրի խառնուրդ գոյությամբ մը՝

մասամբ մտանելով ընտանիքի մեր արդի ըմբռնումին, մասամբ դեռ իր վրա պահելով չատ մը գծեր ու գործեր, որոնք ըստ էութեան կապտականին պետութեան կամ ընկերային օրգանիզմի մյուս օրգաններուն:

Բայց ինչքան ժողովուրդի քաղաքակրթութիւնը կզարգանա, ինչքան կկատարելագործվի ընկերային օրգանիզմը, և աշխատանքի հարատև բաժանումով կառաջանան նոր ու նոր օրգաններ հատուկ ամեն մեկ աշխատանքի ու գործունեութեան համար, ընտանիքին վրայեն հետզհետե կվերցվին բոլոր պետական, դինական, դատական, կրոնական գործերուն մնացորդները, որով ընտանիքին կմնա իր հին դերերեն միայն մեկը, ամենեն հիմնականը, ամենեն կարևորը՝ սեռի պահպանումը, նոր սերունդ հասցնելը, որ և հիմնապատճառն է մարդկային կենակցութեան: Եվ ընտանիքը այս կերպով կվերածվի հատուկ ու որոշ օրգանի մը, կդառնա ազգութեան ամենակարևոր օրգաններեն մեկը, սերունդ արտադրող, սերունդ մեծցնող, սերունդ դաստիարակող օրգանը:

Ազգը պահողը, ազգը չարունակողը, ազգային ոգին, ազգային գծերը, ազգային քաղաքակրթութիւնը, ըլլա ժառանգութեամբ թե կրթութեամբ, նոր սերունդներուն փոխանցողը ընտանիքն է գլխավորապես. ան է, որ կդնե ազգային դրոշմը անհատին վրա ամենեն ավելի: Եվ ճիշդ ատոր համար է, որ ընտանիքն է գլխավոր հենարանը ամեն ազգութեան. հի՛մքը, միջնաբե՛րդը, ուր և կապատանի ժողովուրդի մը անհատականութիւնը, երբ թշնամիները իրար եռևն կվսլեն ու կգրավեն դուրսի ամրոցներն ու պարիսպները: Եթե գրավեցին ընտանիքը՝ մեռավ ազգութիւնը: Ասոր մեջն է խառն ամուսնութիւններու վճռական դերը ազգերու կյանքին ու մահվան վրա:

Մասնավորապես ճակատագրական են խառնազգի ամուսնութիւնները թուլ և փոքր և հպատակ ազգերու համար: Խառնազգի ընտանիքը Բաբելոն մըն է, ուր մարդիկ կխոսին տարբեր լեզուներով: Ինչքան ալ երկու կողմեն իրարու դեմ գան սիրով, մեղմութեամբ, լայն մտածումով և փոխադարձ զիջումներով, երբեք չեն կրնար լեցնել լիովին այն վիհը, որ կա տարբեր հոգեբա-

նուիրյուններու, տարրեր պատմական դիրքի ու ձգտումներու և տարբեր քաղաքակրթական ժառանգութիւններու միջև:

Ամենեն բաղդավորը խառնապգի ամուսնութիւններուն մեջ այն դեպքն է, երբ ամուսիններեն մեկը կարծես կծալե իր ազգութիւնը, արվեստորեն ազգափոխ կըլլա, չի նայիր եաին ու իր ամբողջ հոգին կդարձնե ամուսնու ու գավակներու ազգութեան կողմը: Եվ ամենեն դժբաղդը խառնապգի ամուսնութիւններու մեջ տիրող ու հպատակ ազգերու միջև կայացածն է. որովհետև տիրողի արհամարհանքը, մեծամտութիւնը ու վերեն նայիլը, ինչպես և տիրվածի վիրավոր, բողոքող ու խայթոց հոգին հաճախ կբախին իրարու ընտանեկան սեղանին վրա, և ազգային փոխադարձ դժգոհութիւնները, ատելութիւնները, քննադատութիւններն ու կռիվները կպլրդին ամուսնական առագաստեն ներս:

Եվ այս տեսակի հարկի մը տակ մեծցող սերունդը երկակենցաղ էակ մըն է, ջուրի ու ցամաքի վրա միաժամանակ ապրող, բայց ո՛չ ջուրին մեջ կարդին լողալ գիտե, ո՛չ ցամաքի վրա մարդավարի քալել. և հաճախ կվերջանա անով, որ ջուրն ալ կատե, ցամաքն ալ, թեև իր հոգիին խորքը լուռ տենչանք մը կմնա միշտ վառ՝ կա՛մ ջուրինը ըլլալու, կա՛մ ցամաքինը:

* * *

Ընտանիքը, եթե մեկ կողմեն ընկերային օրգանիզմի սերունդ հասցնող կարևոր օրգանն է, մյուս կողմեն անհատի մը լրացումն է, ամբողջացումը, անհատի մը մեծ ու լայն եսը: Արդեն ընտանիքի առանձնահատուկ գծերեն մեկը հանդեպ ընկերային մարմնի մյուս օրգաններուն այն է, որ անհատ մը կրնա այդ օրգաններեն մեկուն կամ մյուսին պատկանիլ կամ ոչ, կրնա պատկանիլ քանի մը օրգանի միաժամանակ կամ հաջորդաբար, բացառիկ պայմաններու մեջ չպատկանիլ ոչ մեկ օրգանի. Համենայն դեպս բազմաթիվ են այն օրգանները, որոնց ան ո՛չ պատկանած է և ո՛չ ալ կպատկանի, բայց մարդ չկա, որ ընտանիքի մը չպատկանի կամ դոնե պատկանած չըլլա:

Անհատը կծիկ մըն է ծնողներուն պատրաստ ստացած կարողութիւններու, հատկութիւններու, գործարաններու եւ գործունեութեան: Եվ պորտի կապին հետը չէ, որ կկտրվի ստացման այդ կապը, ո՛չ ալ կաթի ընդհատումին հետ, ո՛չ ալ «երեք տարին» լրանալուն: Ան մշտական հարորդակցութեան մէջ է, մշտական յուրացման, մշտական խառնուրդի իր ծնողներուն հետ, դեռ երկար տարիներ, երբեմն չատ երկար տարիներ, թեւ անշուշտ ինչքան ծնունդին մոտիկ, այնքան ուժեղ են այդ կապերն ու ստացումը. և ինչքան անհատը կհասունանա, այնքան կթուլնան նոր ապրեցութիւնները:

Անհատը ամբողջովին թաթխված է իր ընտանիքին մէջ ու խմորված անոր խմորին՝ յուրացնելով անոր վատ ու լավ առանձնահատկութիւնները, արտաքին ու ներքին առավելութիւնները, անոր չեշտը, շարժումը, լեզուն, վարքը, ըմբռնումը, սովորութիւնները: Ամեն անհատի մէջ կապրի ու կշարունակվի խոշոր կտոր մը իր ընտանիքեն, և արդէն ինքն ալ մեկ կտորն է իր ընտանիքին, շարունակութիւնը ընտանիքին, ընտանիքի շարունակելին:

Բայց կա և նո՛ր ընտանիքը, ի՛ր անհատի կազմած ընտանիքը, երբ նոր պտյգ կվառի իր նոր օճախը նոր սերունդ մը տաքցնելու ու կերակրելու: Ջամուանացած կինը, չամուանացած այրը, գավակ չունեցող զույգը, որոնք չեն քաշած ընտանիքի հոգն ու ցավը, որ չեն կրած գավակ մեծցնելու լուծը, որ չեն զոհած իրենց հանգիստն ու հարմարութիւնները նոր սերունդի զարգացման գործին, դեռ լրիվ անհատներ չեն. դեռ կազմվող անհատներ են, դեռ մարդ դառնալու պատրաստվող մարդիկ, դեռ ընտանիքցու էակներ են: Մինչև նոր ընտանիքը չկազմվի, մարդուս լրացումն ու ամբողջացումը չի գար. և՛ ֆիզիքական լրացումը, և՛ հոգեկան, և՛ բարոյական, և՛ քաղաքացիական:

Իզուր չէ, որ մեր ժողովուրդը ամուսնանալուն կըսե՝ «աշխարհ մտնել»՝ ազատ մարդը նկատելով իսկական ու լրիվ աշխարհքեն դուրս. կըսե նաև «կարգվիլ», կարգի մտնել, կարգավորվիլ, կարգ ստանալ, մարդու կարգ մտնել, կատարել, ինչ որ կարգ ու պահանջն է աշխարհի. նույնն է և «պակվիլ», իբրև կյանքի պաակը, լրացումը, ամբողջացումը, ինչպես թագավոր մը,

որ մինչև թագը չկապն, դեռ թագավոր չէ լրիվ, և արդեն Հարանիքը, մանավանդ գյուղի, թագադրութեան Հանդես մըն է իր բոլոր մանրամասներով և նորապսակները՝ «թագավոր» ու «թագուհի»:

Ջամուռնացած մարդու կիսատութիւնը ավելի Հստակ տեսնելու Համար պատկերացուցէք ձեզի «տունը մնացած աղջկան» կյանքն ու գոյութիւնը, ըլլա Հին թե նոր ձևի: Թեև կնոջ Համար մանաւորապես ծանր է այդ վիճակը, բայց լրիվ ու ամբողջական կյանք մը չէ անշուշտ անընտանիք ու անզավակ «Հավիտենական ամուրի»-ի մը վարած կյանքը, իրեն Համար, անձնական տեսակետեն ալ: Իսկ եթե դիտենք երևույթը իր Հանրային երեսեն, պարզապես Հանցանք մըն է ընտանիք չկազմելը. և ապագային անշուշտ ենթարկվելու է օրենքի Հարվածին. իբրև Հասարակ դասալքութիւն, իբրև պարզ փախուստ մը սերունդ մեծցնելու իր պարտավորութենեն, պինդորագրութենեն փախչողի մը նման:

Այսպեսով՝ անՀատը իր ամեն կողմերով և գրեթե իր ամբողջ կյանքի ընթացքին անխզելի Հյուսված ու դնջուկված է երկու ընտանիքի. և բնականոն պայմաններու մեջ Հանրութեան կներկայանա կա՛մ իբրև ընտանիքի մը զավակը, կա՛մ իբրև ընտանիքի մը ծնողը: Եվ ընտանիքն զրկված ապրիլը, ըլլա վաղահաս որբութեամբ թե ուշացած ամուրիութեամբ, խոչոր ու դժբաղդ անբնականութիւն մըն է, անկանոնութիւն մը թե՛ անՀատին Համար և թե՛ ընկերութեան:

* * *

Ընտանիքը ամենեն Հիմնական, ամենեն սկզբնական և ամենեն ընդՀանուր կապն է անՀատը ազգութեան օղակող: Բայց չուտով անոր կընկերանա երկրորդ օղակ մը, իբրև առաջինի ընդարձակումը. ընտանիքին Հետ անմիջական չփման մեջ եղող ազգականներու, ծանոթներու և ընկերներու շրջանակը, ընտանիքը ընդգրկող Համայնական կյանքը, գյուղը, թաղը, քաղաքը. մեկ խոսքով՝ այն միջավայրը, ուր ընտանիքը կապրի, որուն մեջ կմեծնա անՀատը և որու ծոցին մեջ կսկսի ինքն ալ աշխատելու սովորաբար:

Քաղաքակրթութեան զարգացման Հետ կավելնա և երրորդ

կարևոր օղակը՝ կրթական հաստատությունը, երբևէն իբրև օժանդակը ընտանիքին, երբևէն իբրև անոր մասնակի փոխարինումը, ինչպես են մսուրները, մանկանոցը, որբանոցը, գանազան տեսակի պիշերօթիկները, մանկապարտեզը. բայց ավելի հաճախ լրացնելով, խորացնելով, գիտության ու մասնագիտության վերածելով ընտանիքի ու միջավայրի մատակարարած դաստիարակությունն ու պատրաստությունը. ընտանիքն ու միջավայրը այլևս առանձին չեն կրնար բավարարել կյանքի անհամեմատ բարդացած պահանջները: Իսկ այդ կրթական հաստատությունները, բոլո՛րը, բայց մասնավորապես պարտադիր նախնական դպրոցը և ընդհանուր միջնակարգ վարժարանները, բոլո՛ր ժողովուրդներու մէջ անխտիր, կծառայեն մտոնն ծանոթացնելու անհատին ազգային անցյալն ու ներկան, լիովին յուրացնել տալու ազգային լեզուն, գրականությունը և ամբողջ ազգային քաղաքակրթությունը և ներշնչելու ազգային ըմբռնում ու գիտակցություն:

Ընտանիք, միջավայր և դպրոց. այս երեք պինդ կապերով այնպես է փաթթված անհատը ազգության, որ հիմնովին պարապ խոսք է, թե մարդու քեփեն է կախված այս կամ այն ազգության պատկանիլը կամ ո՛չ: Ընդհակառա՛կը, ամեն մեկ անհատ այնպես որոշ ու այնպես հաստատ տեղավորված է իր ազգային պատյանին մեջ, ինչպես նռան մեջ՝ յուրաքանչյուր հատիկը: Եթե հայ ընտանիքի զավակ ես, հայ միջավայրի ծնունդ և հայ դպրոցի պտուղ, ուր կուզես գնա՛, ինչ կուզես ըրե՛, չես կրնար փախչիլ քու հայությենեդ: Ան ինչպես որ քու մեծ քթիդ վրան է ու ազվոր աչքերուդ խորքը, այնպես ալ քու չեչտերուդ տակը, քու բնավորության հիմքը, ընդունակություններուդ ու թերություններուդ եաին, ճաշակիդ, զգացումներուդ ու երազանքիդ հակումներուն մեջ: Խոսե, ինչ լեզու կուզես, քանի լեզու կուզես, միևնույն է, պետք է մտածես հայերեն, համենայն դեպս հայավարի:

Անշուշտ պատկերը բոլորովին կփոխվի, երբ այդ օղակներեն մեկն ու մեկը կամ մեկ-երկուքը փտած են, փրթած են, երբ անհատի մը ընտանիքը կամ միջավայրը կամ կրթությունը ազգային չէ, մանավանդ եթե երկուքը կամ երեքը միասին: Ահա այն ժա-

մանակ է, որ կբացվի դուռը, ուրկն կվիչեն ապազգային քամիները և կքշեն շիտակ դեպի ազգափոխութիւն:

Ազգափոխութիւնը ծանր գործողութիւն է և դիւրին չի կատարվիր, սովորաբար կքաշէ դոնե երկու-երեք սերունդ, կուզե ըլլա սիրապետութեան ճնշման տակ թե գաղթականութեան հետևանքով: Ո՛չ հին ազգութենեն կտրվիլը թեթև գործ է, ո՛չ ալ նոր ազգութեան հարիլը. և ո՛չ ալ նոր ազգը այդպես առանց այլևայլութեան պատրաստ է անմիջապես քեզի իսկապես իրը համարելու:

Ահա՛ այդ փոխանցման միջոցին է, որ կծագկի ապազգային հոգևբանութիւնը:

* * *

Մարդս խորունկ պահանջ մը ունի իր գործերն ու վարմունքը հնար եղածին չափ համաձայն պահելու իր սկզբունքներուն և բարոյական ըմբռնումներուն: Ատոր համար ալ, երբ չենք կրնար հարմարվիլ մեր սկզբունքներուն, մեր սկզբունքները կհարմարցնենք մեզի:

«Ի՞նչ բան է որ ազգը, ի՞նչ կարևորութիւն ունի ազգութիւնը, ինչո՞ւ են պետք այդ նեղ ու ավելորդ կաշկանդումները: Ես մարդ մըն եմ. ամբողջ մարդկութիւնը իմ ցեղս է, ամբողջ աշխարհքը՝ իմ հայրենիքս. կերթամ, ուր որ ինձ հաճելի է, ուր որ ավելի հարմար է ճաշակիս, հակումներուս ու հաշվիս: Կխոսիմ այն լեզուն, որ ամենեն ավելի գործիս կուգա և ամենեն ավելի օգուտ կրնա տալ ինծի: Ի՛մս են մարդկութեան մտքի, արհեստի ու արվեստի բոլոր արտադրութիւնները հավասարապես, և ես կուզեմ վայելել բոլորը: Եվ ես կուզեմ բանալ իմ ուժերս լիուլի, ինչպես և ընդունակութիւններս, ես կուզեմ աշխատիլ մարդկութեան համար, ամբողջ մարդկութեան»:

Ամենեն առաջ խոշոր թիւրիմացութիւն է մտածելը, թե մարդկութեան համար ծառայելը տարբեր բան է ազգութեան համար կամ ընտանիքին ու իրեն համար ծառայելեն:

Մարդս կաշխատի ամեն բանե առաջ իր ու իրեններուն պետքին ու ապրուստին համար. իսկ իր աշխատութեան արդյունքը կերթա սովորաբար ծառայելու ընկերութեան ուրիշ անդամներուն

կամ Համայնքին ու պետութեան: Այսինքն՝ ամեն աշխատանք, ուզես-չուզես, գիտակցիս թե ոչ, ուղղակի կամ չեղակի ճամբաներով կծառայէ քու ժողովուրդին և կբաւականցնէ ապագային տնտեսութիւնը, վարչութիւնը, դիտութիւնը կամ սանդծագործութիւնը, կուգա կետ մը, դիծ մը ավելցնելու ժողովուրդի մը դարերուն ի վեր կատարած աշխատանքին ու կուտակած քաղաքակրթութեան: Եվ որովհետև բոլոր ժողովուրդները մշտական ու սերտ շփման մէջ են իրարու հետ, իրարմէ կգնեն, իրարու կծախեն, իրար կընդօրինակեն ու կթարգմանեն, իրարմով կապրին ու իրար համար կարտադրեն, ժողովուրդի մը գրկին մէջ կատարված ամեն աշխատանք վերջիվերջո կերթա կթափվի մարդկային ընդհանուր աշխատանքի ծովուն մէջ:

Չկա՛ աշխատավոր, որ մարդկութեան ու մարդկային քաղաքակրթութեան համար չաշխատի, ինչքան ալ համեստ, անձնական, ազգային ու աննշան ըլլա իր աշխատութեան անմիջական նպատակը, ձևը, տեղը, դերն ու չափը:

Ատոր համար է, որ մենք միշտ հարգանք ունինք ու պատկառանք կզգանք ամեն աշխատանքի հանդէպ ու ամեն աշխատավորի, ըլլա արտի մը ցանքն ու հունձը, ըլլա դարբրին թե դերձակ, ըլլա դաս մը դպրոցին մէջ կամ պաշտոնյա մը՝ ծռած իր հաշվեթուղթերուն վրա, ըլլա եկեղեցիի մը կառուցումը թե գիտական երկ մը:

Ամեն աշխատանք կծառայե մարդկութեան. բայց ամեն աշխատութիւն կկատարվի որոշ տեղի մը վրա, որոշ պետական պայմաններու և հսկողութեան տակ, ամեն աշխատավոր կպատկանի ընտանիքի մը, համայնքի մը, ժողովուրդի մը: Նոյնիսկ միմիայն բարձրագոյն մաթեմատիկի խնդիրներով զբաղվող մասնագետն անգամ, որ կծառայե վուտ գիտութեան և իբրև թե ազգութեան հետ ոչ մեկ կապ ու գործ չունի, կմտածե ու կխոսի որոշ լեզվով մը, մտածելու ժառանգված որոշ եղանակով մը, դասախոս կամ պաշտոնյա է որոշ երկրի մը, որոշ համալսարանի մը և իր աշխատանքովը կպատրեցնե որոշ ազգի ընտանիք մը: Այսպես է. ամեն աշխատանք կկատարվի ազգութեան մը միջոցով և կնպաստե անմիջապես ազգութեան մը զարգացմանը: Մարդկութեան ծառա-

լելու միակ ճամբան ազգութեան մը ծառայելն է, որովհետեւ ամեն աշխատանք հնարաւոր է միայն ընկերային օրգանիզմի մը միջով:

Երկրորդ՝ այրված սրտի մխիթարանք և մեծխոսիկութեւն է միայն ըսելը թե՝ «Կերթամ, ուր ինծի հաճելի է, կապրիմ, ուր ինծի հարմար է և կխոսիմ այն լեզուն, որ գործիս կուգա»: Որովհետեւ բնաւ քու կամքեդ ու հաճույքեդ կախված բան չէ այդ բոլորի ընտրութիւնը. և այդ ընտրութիւնը նոր չէ, որ պիտի կատարվի:

Այս տեսակի ճառեր մտածողը կա՛մ հիվանդ ու հպատակ ազգի մը գավակն է, տիրապետողի թաթին տակը ճզմված, կա՛մ օտար ազգի մը գիրկը նետված գաղթական մը. երկու դեպքի համար ալ որոշ ու պարտադիր է այն լեզուն, որ խոսիս պիտի, հավնիս թե չհավնիս, և կյանքի այն ձևը, որ վարես պիտի: Դեռ ավելին. նոր միջավայրիդ մեջ գլուխդ պահել կարողանալու, ձեռնարկած գործիդ մեջ հաջողելու և քեզի դիրք մը ստեղծելու համար ամեն կերպ պետք է աշխատիս ըմբռնելու և յուրացնելու քու տերդ դարձած ժողովուրդի աշխատելու եղանակը, պահանջները, քմայքները, ճաշակը, զգալու և մտածելու առանձնահատկութիւնները, նիստ ու կացը, երբեմն մեծ դժվարութեամբ, ակամա և երկար ջանքերով: Հին առածը կըսե. «Ուր որ ապրիս, պետք է ծածկես հոնտեղի գլխարկը»:

Երրորդ՝ իմաստ մը ունի և կարելի է ազգութիւնը արհամարհել, երբ այդ թշնամանքը ուղղված է քու սեփական մայր ազդիդ դեմ, բայց անլմաստ ու կեղծ ճարտասանութեւն մըն է միայն. երբ ուղղված է բոլոր ազգերու գոյութեան դեմ և ընդհանրապես ազգութեան գաղափարին դեմ: Հազվագյուտ բան չէ, որ մարդիկ կամա թե ակամա կորսնցնեն իրենց ազգութիւնը, թողնեն իրենց ազգը. կամ կտրվիլ ուզեն ժողովուրդե մը, որ զրկվեր է իր անկախ պետութենեն ու բազմաթիվ կուլտուրական հաստատութիւններեն. մոռնալ ուզեն իրենց ծագումը, որ միայն դժվարութիւններ ու անհամութիւններ կհարուցանե իրենց: Կարելի է մերժել այս կամ այն ազգը, կարելի է փախչիլ այս կամ այն ազգութենեն, բայց կարելի է միայն մեկ պայմանով մը, որ ճանչնաս, հարգես և ստանձնես ուրիշներու, ավելի ուժեղներո՛ւ և ավելի բաղդավորներո՛ւ ազգութիւնը, որ իսկույն երթաս հարելու

ուրիշ ժողովուրդի մը կամ որ արդեն հարած բլլաս ուրիշ ժողովուրդի մը. որովհետեւ անհատն ու ընտանիքը չեն կրնար օդի մեջ կախված մնալ, առանց որևէ ընկերային օրգանիզմի մը պատկանելու:

Ո՛չ ուրիշ ազգերն ու պետութիւնները կհանդուրժեն այդ անկերպ ու անկանոն դրութիւնը և ո՛չ մտնաւանդ ինքը անհատը կրնա դիմանալ տեւականորեն այդ անբնական ու անհոգի ցուրտ վիճակին:

* * *

Անհատը, իր ազգէն կտրված, նուազն է, ինչ բառը նախադասութենեն դուրս. դեր չունի. իսկ իմաստ ունի ու չունի: Դեր մը ու որոշ իմաստ մը առանալու համար, իր իսկական նշանակութիւնը, իր ներքին նրբութիւնը արտահայտել կարողանալու համար պետք է հյուսված բլլա նախադասութեան մը մեջ:

Բնականոն պայմաններու մեջ անհատի մը կյանքին ամենեն հարմար միջավայրը իր ազգին է: Հոն է, որ անոր հոգին ամենեն ավելի խորը կթափանցե ու կհամակրուի իր շրջապատողներու հոգին, կյանքը, աշխատանքն ու էութիւնը: Օտար ազգի մը մեջ ինչքան ալ երկար իրենց կյանքովը անոնց կենակցիս, օտար մըն ես միշտ. թե ի՛նքդ այդպես կզգաս և թե անո՛նք այդպես կվարվին:

Եվ իր հարազատ միջավայրին մեջն է, ուր ամենեն ավելի լրիվ կրնա բացվիլ անհատի մը հոգին. իր ընտանեկութիւններն ու ընկերութիւնները առաջացնող պայմաններու տակն է, որ ամենեն ավելի հաջող կերպով կլանին այդ կարողութիւնները ու նրբութիւնները. իր աշխատելու եղանակին և իր կատարած աշխատանքին պետք ու ճաշակ ունեցողներու շրջանակին մեջն է, որ կծաղկին արհեստներու ու արվեստներու առանձնահատկութիւնները ու տեսակները: Եվ ինչքան սերտ է կապը ամեն աշխատավորի ու իր ազգութեան, այնքան ավելի դյուրին է ու բնական իր կատարած գործն ու պաշտոնը, որովհետև իր մկաններուն ու ջիղերուն մեջովը ազգի մը ժառանգական ու դարավոր կարողութիւններն ու մտածումներն են որ կաշխատին:

Եվ այնքան ավելի լրիվ է, հյութալից ու կենսունակ անհատի

մը հնարքը, դպրոցը, արտադրությունն ու ստեղծագործությունը, ինչքան ավելի առատ է ծծած հայրենիքի արևին շոյանքը և մայրենի հողին հյութերը: Բոլոր տեսակի տաղանդները այնքան ավելի արժեքով են և այնքան ավելի խորը, ինչքան ավելի խորն են իրենց արմատները ժողովուրդի հոգիին հոծ խավարին մեջ: Բոլոր տաղանդները հայոց արտահայտություններն են ամբողջ ժողովուրդի մը: Անհատը, ինչքան կուզե մեծ ըլլա, իր ժողովուրդովն է մեծ, իր ժողովուրդը ներկայացնելով, իր ժողովուրդը բարձրացնելով: Անհատի մեծությունը կծլի ժողովուրդի մը մեծության ծոցեն և հիվանդ ժողովուրդները հիվանդ մեծություններ կծնին:

Եվ ինչպես որ անհատի մը ֆիզիքական ու հոգեկան ուժերը իր ժողովուրդն է, որ կբխին, այնպես ալ այս աշխարհիս երեսին անհատի մը մեծագույն մխիթարությունն ու հպարտությունը կբխին նույն ժողովուրդին և նույն ժողովուրդի քաղաքակրթությանը ծառայած ըլլալու գիտակցութենեն: Որովհետև ի՞նչ է որ անհատը և անհատի գործը, ինչքան ալ կուզե մեծ ու կարևոր ըլլա: Օրվան մը կյանք, որ կվառի ու կանցնի, տեղը կմնա պարապ անուն մը, իբրև մոխիր: Մեծ ու բարդ ամբողջության մը պատկանելու ղժացումը և այդ ամբողջության թափած հարատև ճիգերուն ու ջանքերուն համար վաուված ըլլալու գիտակցությունն է, որ ավելի խոր իմաստ ու տևականություն կուտա մեր կատարած աշխատանքին, որով և ավելի արժեք ու տևականություն՝ մեր անհատական կյանքին:

Այս բոլորը բնական պայմաններու մեջ պարզ բնազդներ են ամեն մեկ անհատի հոգիին խորքը, առանց գիտնալու, առանց մտածելու, ճիշդ այնպես, ինչպես ծիծեռնակը, որ իր բույնը կշինե, ինչպես մեղուն, որ մեղր կկրե իր փեթակը: Երբ այս բոլորի մասին կխոսվի, ըսել է՝ արդեն հիվանդ են պայմանները:

Անհատի ծագումը և ստացած ժառանգությունը, ծծած կաթն ու կրթությունը, անհատի ընտանիքն ու կյանքին մեջ ունեցած դիրքը, անհատի տաղանդն ու ստեղծական ուժը, անհատի կատարած գործն ու գործին տևականությունը, այս բոլորը ազգային սեփականություն է, դարևոր աշխատանքի և երկար սերունդներու ապրումով ձեռք բերված արդյունք ու հետևանք:

Անհատը բողբոջ մըն է, տերև մը, ծաղիկ մը՝ ծլած այդ ծառի ճյուղերեն մեկուն վրա, և կծառայի գոյությանն ու զարգացմանը այդ ծառին:

Եվ ատոր համար է, որ անհատը, ազգեն կտրված, այլևս կենսական դեր չունի, թեև կրնա ըլլալ ինքնին շատ ընդունակ, կենսալից ու բուրումնավետ, թուփեն փրցված աղվոր ծաղկի մը նման:

Ժ. ԱԶԳԵՐՈՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ազգերու փոխադարձ չփումը միշտ է եղեր, նույնիսկ պատմության հնագույն շրջաններուն մեջ, և սովորաբար մեր ենթադրածեն շատ ավելի չափերով: Եղեր է թե՛ առևտրի ու բարի դրացիության երթևեկն ու հաղորդակցությունը, թե՛ պատերազմի ու տիրապետության հետևանքով ավելի սերտ կապն ու գործակցությունը:

Դարերու հետ այդ չփումը բնականորեն ավելի ու ավելի է չեշտվեր ու բազմակողմանի դարձեր: Ինչքան որ ազգերը քաղաքականապես զարգանան, այնքան ավելի շատ կարտադրեն թե՛ նյութական, թե՛ բարոյական բարիքներ, և մյուս կողմեն կկատարելագործեն ու կդյուրացնեն հաղորդակցելու միջոցները և կկարճեն գործադրվելիք ժամանակը:

Այդ տեսակետեն մեծ դեր է խաղցած ցամաքային ղխավոր ճամբաներու կատարելագործությունն ու ձիերու գործածությունը հին աշխարհի համար, իսկ ծովային ճամբաներու բացումն ու շոգիի գյուտը՝ մեր արդի քաղաքակրթության համար:

Շոգենավ ու շոգեկառք՝ ահա՛ մայրը արդի նյութական ու բարոյական հաղորդակցության անօրինակ զարգացումին. չէ՞ որ այդ մոր մեծցուցածն են նաև փոստան ու լրագիրը: Եթե վրան ավելցնենք հեռագիրն ու հեռախոսը, և նորագույն գյուտերը՝ անթելն[15] ու օդանավը, պարզ կդառնա, թե ի՛նչ ենք չահած մեր մտքերու, մեր ապրանքներու ու մեր անձերու փոխադրության ու

Հաղորդակցութեան տեսակետեն, թե՛ իբրեւ արագութիւն, թե՛ դիւրութիւն եւ թե՛ քանակով:

Նայե՛ անգամ մը վրադ, նայե՛ ամենօրեայ սեղանիդ՝ փնտրելով ծագումն ու անցած ճամբան ամեն մեկ իրի, ակնարկ մը նետե օրաթերթիդ տված անթել ու թելավոր հեռագիրներու դեղին: Ի՛նչ կապ աշխարհքի բոլոր մասերուն միջեւ, աշխարհքի բոլոր ազգերուն: Ամենքը կաշխատին ամենուն համար: Ամեն մեկուն առած սխալ թե չիտակ քայլը այս կամ այն ձեւով կզգայի ամենուն, առնվազն հետաքրքիր է եւ ուշադրութիւնը կգրավե ամենուն: Եվ ինչ հսկայական տնտեսական ձեռնարկներ կխորհվին, կհիմնվին ու կգործեն ամեն օր դրամագլուխներով, որոնք արդիւնք են աշխարհիս բոլոր մասերեն հասնող բաժնեվճարներու. և կվարեն աշխատանքներ, արդիւնագործութիւն ու հիմնարկութիւններ, գնում ու վաճառում, բոլոր ազգերու հետ, բոլոր ազգերու հողին վրա և հողին տակը, բոլոր ազգերու ջուրերուն վրա և ջուրին տակը:

Այս ասսիճանի սերտութեան, բարդութեան, հաճախութեան ու բազմակողմանիութեան հասած հարաբերութիւնները այլևս անկարելի է թողնել առանց հսկող, վարող ու դժվարութիւններն ու դժգոհութիւնները հարթող վերին մարմնի մը, եթե կուզենք առաջն առնել տնտեսական խոշոր անախորժութիւններու, ընդհարումներու, քրիզներու, անակնկալ հսկայական կորուստներու, սովի, ատելութեան ու պատերազմներու:

Մանավանդ որ հետզհետե կատարելագործվող պատերազմական գործիքներն ու մասնագիտութիւնը, ընդհանուր պարտադիր զինվորութիւնը և քաղաքակրթութեան հետ, թեև դանդաղ, բայց և այնպես նրբացող մարդկային խիղճը անհանդուրժելի կդարձնեն տասնյակ միլիոնով մարդկային կյանքերու և տասնյակ միլիարդներով կուլտուրական բարիքներու այդ սանձակոծ ու գազանային փճացումն ու վատնումը:

Այս բոլորեն ահա՛ ծայր կառնե միջազգային մարմնի մը գաղափարը, որ մեկ կողմեն չափավորեր ազգերու զինումն ու զինվորումը, և հնար եղած բոլոր միջոցներով հաշտեցներ ու վերջացներ զինական ընդհարումները ազգերուն մեջեն, իսկ մյուս կողմեն

դառնար կանոնավորող ՀաստատուԹյուն մը գլխավորապես տնտեսական, բայց և ընդհանրապես ամեն տեսակի միջազգային հարաբերուԹյուններու:

Մտանավոր հարցերու վերաբերմամբ և մտանավոր պետուԹյուններու մեջ այդ ուղղուԹյամբ քայլեր արդեն առնված էին գործնականին մեջ: Պետք էր ընդհանուր և օրինական և ամենուն կողմե ընդունված ՀաստատուԹյուն մը: Մեծ պետուԹյուններու միջև տեղի ունեցող քանի մը խարխափումներեն ետքը առաջին այդ տեսակի փորձ մը եղավ Լահեի խորհրդաժողովը[16] պատերազմեն առաջ. իսկ պատերազմեն ետքը երկրորդ ավելի որոշ, ավելի լայն ու ավելի պաշտոնական փորձն է ահա՝ Ազգերուն լիգան[17]:

Անշուշտ դեռ չա՛տ Թերի ու չա՛տ անուժ մարմին մը, ինչպես որ կըլլան բնականաբար ամեն բանի առաջին փորձերն ու որոնումները, բայց ատիկա՛ է ճամբան: Ա՞յս լիգան է, որ պիտի կատարելագործվի հետզհետե, Թե՞ պիտի գա ուրիշ մը կամ գուցե ուրիշներ, ատոր պատասխանը կուտա առաջիկա դարերու պատմուԹյունը:

Ինչ որ հիմա գիտենք, այսչափն է միայն, որ ազգերուն կանոնավոր, տևական ու օրինական կապակցուԹյունը կյանքի ու զարգացման բերած անհրաժեշտուԹյունն է. և այս Թե այն ձևով պետք է իրականանա ազգերու դաշնակցուԹյունը: Հետզհետե դառնալով ավելի ու ավելի լրիվ, անխտիր բոլոր ազգերու մասնակցուԹյամբ և քայլ առ քայլ կյանքի բոլոր բազմակողմանի երևույԹները ընդգրկելով, ստեղծելով միջազգային տնտեսական վարչուԹյուն, միջազգային օրենք ու դատարան, միջազգային քինվորական ու քաղաքական հսկողուԹյուն, միջազգային լեզու, միջազգային չափեր և ուրիշ:

Այսպեսով՝ Թե՛ օրվան միջազգային քաղաքականուԹյան իրական ընԹացքը և Թե՛ ապագայի հեռանկարը մեզի ցույց կուտան ո՛չ Թե ազգերու ոչնչացումն ու վերացումը, այլ ընդհակառակը, բոլոր ազգերու գործակցուԹյունն ու կապակցուԹյունը: Ազգե՛րն են, որ եղա՛ծ են և ե՛ն բնական հիմքը մարդկային խումբերու և միուԹյան. այդպես ալ ազգե՛րն են, որ կամաց-կամաց

պիտի դառնան հիմնական միավորները համամարդկային կապակցութեան ու գաղնակցութեան:

* * *

Իսկ ինչե՞ն գիտենք, որ հենց ազգերու կապակցումը չէ, որ տանելու է մեզի դեպի ապգերու վերացումը:

Հետզհետե կապերը կսերտանան, հարաբերութիւնները կխտանան, բոլոր ժողովուրդները կվառնվին իրար, բոլոր բարքերը, կյանքի բոլոր ձևերը, նիստ ու կացը կնուչնանա, բոլոր լեզուները կմեռնին՝ տեղի տալով միակ հարուստ ու հրաշալի լեզվի մը, ամբողջ մարդկութիւնը կկառավարվի միայն մեկ հատիկ արդար ու խելացի վարչութեան մը ձեռքին տակը՝ մեջտեղեն վերցընելով բոլոր մանր ու խոշոր անձնասեր ու ինքնամոլ պետութիւնները, և կուգա իտեալ միութիւնը, մարդկութիւնը մե՛կ խմոր, մե՛կ ազգ, մե՛կ պետութիւն, մե՛կ լեզու, մե՛կ քաղաքակրթութիւն:

Նախ՝ որպեսզի այդ տեսակ բան մը հնարավոր դառնա գոնե ենթադրաբար, պետք են հազարամյակներ: Որպեսզի ռուսը, չինը, ֆրանսացին ու գերմանացին, քաֆրն[18] ու թուրքը թողնեն կամ մոռնան իրենց լեզուն, սովորութիւնները, կյանքի ըմբռնումը և նոր լեզվով մը մտածեն, գպան ու խոսին, փոխվին հոգեպես և խմորվին մարդկային միակ տիպին՝ դուրս գալով իրենց ազգային կաշիեն. ատոր համար առնվազն այնքան ժամանակ է հարկավոր, ինչքան ժամանակ որ անհրաժեշտ է խառն ամուսնութիւններու և երևակայական նույն ու նման կյանքի պայմաններով նեգրի, հնդիկի, մոնգոլի ու եվրոպացիի աչքերը, քիթը, գանգն ու կազմը ընդհանուր հայտարարի բերելու համար:

Իսկ ինչ որ հազարավոր տարիներե ետքն է իրականանալու, ատոր մասին վիճելը հիմա մեզի համար գործնական ո՛չ մեկ արժեք չունի: Ատոր վրա հիմնել ցանկանալը մեր այսօրվան բռնկիք ընթացքին՝ կըլլա կատարյալ երեխայութիւն, որովհետև ինչքան ալ որ իմաստուն ու խորատես բաներ ուզենք ու մտածենք այդ հեռավոր ապագաներու մասին, պետք է վստահ ըլլանք, որ ժամանակին կատարվելիքը ո՛չ մեկ նմանութիւն չէ ունենալու մեր արդի կարճ խելքով մտածածի ու երևակայածի հետ: Միևնույն է,

թե ասկէ քանի մը հազար տարի առաջ քարայրներուն անկյունր պպզած ու արջի մորթին մէջ փաթթված մարդը մեր արդի քաղաքակրթութեան վրա իր խնդճ գլուխը հոգնեցներ:

Մինչեւ հիմա ազգերն են եղեր մարդկային ընկերութեան հիմնական միութիւնը, անոնք են և հիմա, և անոնք են ըլլալու հաստատ համենայն դեպս դեռ բավական երկար դարեր. ասիկա չմոռնանք: Իսկ անկե ետքր հետաւոր ապագաներու մասին ով ինչ կուզն թող երազն կամ հավատա ու դավանի, իր բարի ցանկութիւնը: Աւելիկա դուցե չաւելուն համար ավելի կրոնական պետք մըն է, քան քաղաքական ու քաղաքացիական:

* * *

Բայց քանի որ արդին մտեր ենք կարծիքներու ու հավատալիքներու աշխարհը, պետք է հայտնեմ, որ ես անձնապես բնավ համակարծիք չեմ և չեմ կրնար հավատք ընծայել միազգ ու միախմոր համամարդկային միակութեան մը:

Եվ ահա թե ինչու:

Նկատելի է, որ տիեզերքի ու աշխարհիս բոլոր հիմնական երևույթներու առաջացման մէջ կգործեն միաժամանակ երկու հակադիր ուժեր կամ, ավելի ճիշդ է ըսեմ, նույն ուժի երկու հակադիր ծայրերը: Այսպես՝ տիեզերքի արդի կայուն վիճակը արդյունք է վանողական ու ձգողական ուժերու միաժամանակ գործելուն. եթե գործեր միայն ձգողական ուժը, բոլոր երկնային մարմինները կսեղմվեին իրարու, կճզմվեին, կպնդանային ու կգոյանար միակ կարծր ու անկենդան զանգված մը, անշարժ ու անաստան: Ընդհակառակը, եթե գործեր միայն վանողական ուժը, բոլոր աստղերը, բոլոր մարմինները, բոլոր մասերն ու մասնիկները կվանեին իրար, կցրվեին, կփախչեին իրարմե, և տիեզերքը կդառնար ատոմներու փոշի, այսինքն" երևի բնավ ատոմ ալ չէր ըլլար:

Նույն երևույթը օրգանական կյանքին մէջ, ուր ժառանգականութիւնն ու փոփոխականութիւնը, իբրև երկու հակադիր ուժեր, կուգան միաժամանակ գործելու և ծնունդ ու զարգացում կուտան կյանքին: Ամեն բույս ու կենդանի հասեր է իր արդի վիճակին իր այն ունակութեան չնորհիվ, որ անգամ մը ձեռք

բերված հատկութիւնը կպահէ պինդ ու կհանձնէ հաջորդին. նպատը պահել, ինչքան կարելի է պինդ պահել, չթողնել, որ նպատեն չնոսրի, փոխուի ու կորչի: Բայց եթէ օրգանական մարմինը միայն այս ունակութիւնը ունենար, հաւաջդիմութիւնը կանգ կառներ հենց առաջին քայլին վրա: Սակայն կգործէ անոր կից երկրորդ մեծ սկզբունքը օրգանական կեանքի՝ նախորդին տրամագծորէն հակադիր՝ հարափոփոխութիւնը, այսինքն՝ ամեն ապրող մարմնի մշտական փոփոխումը, մշտական հարմարումը իր շրջապատին և իր վրա ազդող նոր պայմաններուն. հոսկե կառաջանան անթիւ ու անվերջ նոր ձևեր, նոր ունակութիւններ, որոնք ժառանգութեամբ կամրանան, կպահվին և օրգանական կեանքը կհարստանա ու կբարդանա:

Նույն երևույթը մարդուս կուսուրական կեանքին մէջ, ըլլա այդ երևույթը քաղաքական, կրոնական, գիտական թէ ուրիշ, ուր այդ երկու հակադիր ու միաժամանակ գործող ուժերու անունն է պահպանողականութիւն և հառաջդիմականութիւն:

Բնութիւնը այսպես է, մեկ ձեռքով կհրե, մյուս ձեռքով կքաշե: Մինչև որ նույն ուժի բացասականն ու դրականը իրարու չի բախին, էլեքտրական կայծը դուրս չի գար:

Այդպես ալ ահա՛ մեր ընկերային կազմը մեկ կողմեն ձգտում ունի ավելի ու ավելի մեծ նմանութիւն առաջացնելու իր բազադրիչ միավորներու մեջ, ավելի ու ավելի չատցնելու անհատներու իրար հետ ունեցած ընդհանուր և նման կողմերը, ավելի ու ավելի բազմացնելու ազգերու միջև եղած նմանութիւնները, որով և հետզհետե կչատնան անհատը անհատին և ազգը ազգին կապող ընդհանուր հատկութիւնները: Մյուս կողմեն կգործե հակադիր ուժը. ինչքան անհատը զարգանա, ինչքան կյանքը բարձրանա, ինչքան ազգի մը քաղաքակրթութիւնը բարդանա, այնքան ավելի շատ և ավելի ուժեղ կդառնան անոնց առանձնահատուկ նրբութիւնները կամ հինները փոփոխելու ըստ իրենց անհատական պահանջներուն կամ հինն ու նորը սրելով ու չեչտելով որոշ ուղղութեամբ: Մեկ կողմեն՝ հավասարացում, մյուս կողմեն՝ անհատականացում. մեկ կողմեն՝ կեդրոնաձիգ, դեպի նույնութիւնը, նմանու-

թյունը, միությունը ձգտող ջանքեր, մյուս կողմից՝ կեղրոնախուս, դեպի տարբերություն, բազմազանություն, ուրույնություն:

Սիթին մեր աչքին առջև չի՞նք տեսնում, թե որքան շատցած են, հինին հետ համեմատած, մարդը մարդուն և ազգը ազգին նմանեցնող մտքի, ըմբռնումի, ճաշակի, ապրուստի, հագուստի, աշխատանքի ու պետական կազմի ընդհանուր զարձած երևույթները: Բայց և միաժամանակ որքա՜ն ավելի ու ավելի ուժեղ կերպով կշեշավի մեր աչքերուն առջև, մարդու և ազգերու զարգացմանը գուգընթաց, ամեն անձի, ամեն ընտանիքի, ամեն ազգի ուրույն անհատականությունը: Ինչքան իրար կշփվինք, ինչքան իրար կընդօրինակենք, ինչքան շատերու հետ կապրինք, ինչքան իրարմե կտրվինք ու իրար կկապկինք, այնքան ավելի կշեշավի ու կմեծնա մեզմե ամեն մեկուն իրարմե ունեցած տարբերությունը և տարբերություն ունենալու դիտակցությունը: Նույնն է և ազգերու վիճակը:

Ատոր համար է, որ ես չեմ կրնար երևակայել աշխարհիս բոլոր անկյունները և բոլոր ժողովուրդներուն մեջ նույն պետական, վարչական, դատական, կրթական, կրոնական կազմը, ինչքան ալ հեռավոր դարերու մեջ միտքս մխրճի. ընդհակառակը, քանի կհեռանամ, այնքան տարբերությունները շեշտված կտեսնեմ: Իհարկե, շատ սկզբունքներ կըլլան նույնը, թե՛ արդեն գոյություն ունեցող սկզբունքները և թե՛ մանավանդ դեռ ծնվելիք սկզբունքները, բայց այդ սկզբունքներու ըմբռնման ու գործադրության ձևը, չափը և եղանակը կըլլա հիմնովին տարբեր: Եվ ինչքան ընդհանուր սկզբունքներն ու ընդհանուր կերպերը շատնան, այնքան ալ բնականաբար կշատնա այդ սկզբունքներու ու կերպերու տարբեր առումը և փոփոխակները:

Օրինակի համար, անցընենք մեր մտքին առջևեն հասարակապետական ու պարլամենտական սկզբունքներու և կերպերու ըմբռնումն ու գործադրումը եվրոպական, ասիական, աֆրիկյան, ամերիկյան ու ավստրալիական զանազան ժողովուրդներուն մեջ, որոնք բոլորն ալ իրարմե են կազապարած իրենց հաստատությունները և իրար են կապկած: Եվ իրա՛վ, ինչքան նման ընդ-

Հանուր գծեր. բայց և ինչ ահագին զանազանութիւն, երբ ատոնց-մէ ամէն մէկը մյուսներուն հետ կհամեմատենք:

Ատոր համար է, որ ես չեմ կրնար երևակայել, թէ մեկ ու միակ լեզու մը խոսին ժողովուրդները ամեն տեղ, և մեռնին ու չքանան բոլոր մյուս եղած ու ըլլալիք լեզուները: Նույնիսկ եթե ենթադրեմ, որ կախարդական գավազանով մը այսօր իրականություն դարձած ըլլա այդ անկարելիությունը, վաղն իսկ կսկսվին տարբերություններն ու զանազանացումները աշխարհիս զանազան գոտիներուն, կլիմաներուն, բարձունքներուն ու տափաստաններուն վրա: Միթե նո՞ւյնն է մնացեր անգլերենը, մանավանդ խոսվող անգլերենը, բրիտանական կղզիներուն, Միացյալ Նահանգներուն ու Հարավային Աֆրիկայի մեջ և այլուր, քանի մը դարեն ատոնք տարբեր լեզուներ են: Ես կտեսնեմ լեզուներու ճյուղավորումը, չատացումը, բայց չեմ տեսներ ոչնչացումն ու վերացումը: Ընդհակառակը, ապագային, երբ միջազգային լեզու մը ընդհանրանա մարդկային զանազան մասերուն միջև հաղորդակցությունը դյուրացնելու համար, երբ վերնան արվեստական-քաղաքական արգելքները և մարդկային խումբերուն իրական ազատություն տրվի իրենց սիրած և ուզած լեզվովը արտահայտվելու, լեզուները պետք է ավելի չատնան ու մանրանան: Նույնիսկ արդի միևնույն գրական լեզուն գործածողներուն մեջը անջատում կկրնա. օրինակ՝ փոքր ռուսներու[19] ճկուն ու սիրուն լեզուն, որ մեծ ռուսները[20] մինչև հիմա բռնի խեղդեր են, և ինչքան, ինչքան ատոնց նմանները:

Հետո՝ պետք չէ մոռնանք, կենդանի խոսակցության ու կենդանի գրականության մեջ, ինչպես և բեմի վրա, համեմատաբար իՆչ սառն է ու չոր գրական լեզուն ամեն ժողովուրդի մեջ՝ համեմատելով «ժողովուրդի» գունավոր, աշխուժ ու «համ ու հոտ» ունեցող լեզվին հետ: Ընդհանրացման ու տարածման անխուսափելի թերությունն է ատիկա:

Եվ ճիշդ ատոր համար կասկած չկա, որ ապագա միջազգային լեզուն իր բոլոր գործնական առավելություններուն կից, անհամեմատ ավելի սառն, անհամ ու անկենդան է ըլլալու, քան արդի գրական լեզուները, որով և անհամեմատ ավելի խորթ բոլոր

ժողովուրդներու կյանքին, սրտին ու բերնին: Անիկա միշտ պիտի մնա իբրև սովրովի լեզու մը, երբեք մայրենի:

Այսպես ալ չեմ կրնար երևակայել նույն բարքն ու վարքը, նույն սովորութիւնները ու կարգը, նույն սանդծնու կերպերը, նույն աշխատելու եղանակը, նույն Հոգեկան հակումները, նույն թերութիւնները ու առավելութիւնները, ուրիշ խոսքով՝ նույն Հոգեկան խմորը ամեն ժողովուրդի մեջ, ինչքան ալ որ սերտանա անոնց փոխադարձ չփումը:

Առաջին հայացքով այս բոլոր բաներուն մեջ եղած ազգային տարբերութիւնները կրնան նկատվիլ չատ պատահական, երկրորդական, անկարևոր ու չնչին: Բայց միթե այդպես չէ՞ անհատներու մեջ եղած զանազանութիւնն ալ:

Այդ բոլոր «մանր ու մունր» ու «չնչին» բաներն են, որ գումարվելով դիմքը դիմքեն, Հոգին Հոգիեն և ժողովուրդը ժողովուրդեն կտարբերեն: Ո՛չ թե ուղղութիւններու Հետզհետե կրճատումը և բոլորի Հունցումը մեկ ընդՀանուր տաշտի ու խմորի մեջ, այլ ընդՀակառակը, քանի դարերը Հեռանան, այնքան ազգերը պետք է չատանան և ավելի մանրանան. ճիշդ այն չափով, որ բնական պայմաններուն ավելի ազատ ընթացք տրվի և քաղաքական տիրապետական նկատումներ Հակառակ ուղղութեամբ չաշխատին:

Մարդկութեան և քաղաքակրթութեան զարգացումը մեզի կտանի դեպի ավելի ապակեդրոնացում, դեպի փոքր ազգութիւնները, իՀարկե ընդՀանուր դաշնակցութեամբ:

Եվ վերջապես իՀնչ չար ու դաժան երազ է ատիկա, անպատճառ մե՛կ ազգութիւն մը, մե՛կ պետութիւն մը, մե՛կ լեզու մը, վերջապես միայն մե՛կ ժողովուրդ մը ստեղծելու երազը: Սինամուն է, եթե ձգտինք ունենալու մեկ տեսակի պատուղ մեր այգիներուն մեջ, մեկ տեսակի խմիչք ու երաժշտութիւն, մեկ տեսակի գործարան ամեն մեկ առարկայի արտադրութեան Համար, մեկ ազգի ձուկ ծովերուն տակը և մեկ ազգի բանահյուսութիւն գրական ծովուն մեջ:

Անկարելի է ու ավելորդ այդ բանի սահմանավորումը, իզուր է մեր վախը այլազանութիւններեն, և անպատուղ է մեր պայտամունքն ու խտեալացումը միասնութեան ու միաձևութեան:

Ժամանակ մը մարդիկ կերազեին միայն անդիի աշխարհին համար այդ իտեալը, երբ բոլորս միասեռ ու միաձև հրեշտակներ պիտի դառնանք ու պիտի վայելենք հավասարապես Աստծու մը տեսութիւնը: Այդ հավատքը հիմա փոխադրեր են ասդիի աշխարհը, թեև մարդիկս չատ հեռու ենք անսեռ հրեշտակներ ըլլալե և ավելի ևս հեռու ճշմարտութիւնը տեսնելե:

Բնութիւնը սակայն, որ մեր երազները հաշվի առնել չգիտե, այդ կարգի միատեսակութիւններ, միահունցութիւններ ու միապանգութիւններ չի սիրեր: Բնութեան ստեղծագործական եղանակը հիմնված է շարունակ նոր գույներ ու նոր ձևեր, նոր տեսակներ ու նոր ազգեր առաջացնելու վրա:

Եվ կարծեմ մեզմե ամենեն ավելի իմաստունը և իր բանը դիտցողը բնութիւնն է նորեն, ինչպես և ամենեն ավելի օգտակար ու գեղեցիկ ստեղծագործութիւններուն հեղինակը նույն բազմազան ու բազմացեղ բնութիւնն է նորեն:

ՄԵՐ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՄՔԵՐՈՒ ԸՆԴՀԱՐՈՒՄ

I. Ազգային ձգտումներ

Ժողովուրդի մը անկախութիւն ձեռք բերելը ազգամիջեան քայլ մըն է, մտանն կամ հետևեն կշտշափին շատ մը ազգերու հաշիվ-ները, մանաւանդ ձեռնտու է կամ աննպաստ մասնաւորապես մեկ-երկու ժողովուրդի շահերուն ու ձգտումներուն: Եվ ատոնցմե ամեն մեկը, գործին ընծայած կարևորութեան չափովը և իր կարողութեան համեմատ, կջանա օժանդակելու կամ խանգարելու:

Եվ երբ մեր միտքը, իրերը կանխել ուզելով, ըմբռնել կցանկա, թե այդ ընդհանուր հրմշտուքին ու քաշքշուկին մեջ մեր անկախութեան դռնեղը ո՞ւր պիտի պտտի և ի՞նչ գծով, ամենեն առաջ պահանջ կզգայվի որոշելու, թե որո՞նք են այն ժողովուրդները, որոնք մասնաւոր կերպով լուրջ շահեր և ծրագիրներ ունին այն հողամասերուն մեջ ու շուրջը, որ մենք մեր հայրենիքը կանվանենք:

Սակայն ի՞նչպես պիտանանք մյուս ժողովուրդներուն ուզածը, ի՞նչպես իմանանք մեր դեմի ժողովուրդին դիտավորութիւնը: Ջէ՞ որ շատ բան պարզ չեն ըսեր, ամենեն կարևորը կծածկեն. հաճախ ըսված խոսքին ու կատարված գործին մեջ տրամագծորեն հակասութիւն կա: Խաբեութիւնը հնագույն դարերեն համարվեր է հիմքը քաղաքականութեան: Քաղաքականութիւն բառը ինքնին նույնանիշ է դարձած կեղծիք բառին, ինչպես որ շատ տեղ վաճառականութիւնը՝ խաբեբայութեան:

Մյուս կողմեն՝ հաստատ ու անհերքի բաներ չեն ժողովուրդներու ցանկութիւններն ու բռնած ընթացքը: Շատ կպատահի, որ այսօրվան ծրագիրը համապատասխան չըլլար վաղը առնված քայլին՝ նայելով իրենց ներքին պայմաններուն, կուսակցութիւններու պայքարին, ընտրութիւններու հետևանքին կամ արտաքին դժվարութիւններուն: Երբեմն նույնիսկ իրար հակառակ կարծիք կունենան նույն մինիստրութեան պատկանող երկու անդամը, օրինակ՝ վարչապետն ու արտաքին գործերու նախարարը, արտաքին գործերու նախարարը և պատերազմականը, և ատոր համեմատ ալ

քայլեր կառնեն, խոսքեր կզրուցեն, որոնք իրար կհերքեն. և այդ քաոսին մեջ կարծես հնար չէ ըմբռնելը, թե ի՞նչ է դեմոկրատ բռնած ընթացքը, իր ուզածը, ո՞րն է իսկականը, երեկվա՞նը, թե՞ այսօրվանը:

Ճշմարիտ է այս բոլորը «օրվա» քաղաքականութեան տեսակետեն, երբ աչքի առջև ունինք առօրյա շարժումները, օրը օրին առնված քայլերը, օրվան պիկպակները: Բայց երբ երևույթներուն նայինք քիչ մը վերեն և աչքի առաջ ունենանք ավելի երկար ու տևական ժամանակներ, միշտ որոշ նկատելի է ժողովուրդի մը գլխավոր ձգտումը, այն հիմնական ուղղութիւնը, որով ան կերթա, ինչքան ալ որ ծուռումուռ ըլլա իր քալած գիծը ու պիկպակներ տա: Ճիշդ այնպես, ինչպես որ բարձրութենեն դիտված գետի մը կամ ճամբու մը ուղղութիւնը միշտ պարզ կերեվի է որոշել, ինչքան ալ որ շատ ոլորներ, հետս դարձումներ ու կոտրտուքներ ունենան ճամբան ու գետը:

Օրվան պիկպակներուն և առօրյա շարժումներուն նուրբ հոտառութիւնը ունենալը կարևոր է օրվան բռնելիք քաղաքականութեանդ համար: Իսկ առնոյ ընդհանուր ուղղութիւնը, ժողովուրդներու հիմնական շարժումն ու տևական քաղաքականութիւնը ըմբռնելը անհրաժեշտ է քու սեփական տևական ու հաստատ ճամբադ ընտրելու համար, որը նույնպես մյուսներուն նման կրնա շատ կոտրտվիլ ու ծռմռվիլ գետնի պայմաններուն հարմարվելով, բայց և այնպես պետք է ունենա իր հաստակ ու որոշ ուղղութիւնը:

Եվ ամեն ժողովուրդ ունի իր հիմնական, մեծ, ընդհանուր քաղաքականութիւնը, որուն կձգտի, որուն համառ կհետևի, թեև երբեմն շատ դանդաղ ու շատ աննկատելի: Այդ խոշոր գծերով, այսպես ըսեմ, ծրագրային քաղաքականութեան կից կերթա այդ ծրագրի առօրյա մասնակի ու հնարավոր գործադրութիւնը՝ նայելով դրական ու իրական պայմաններուն ու պատեհութեան, իր ելքերովն ու էջքերովը, նահանջելով, հառաջանալով, կանգ առնելով. այսինքն՝ գործնական քաղաքականութիւնը, օրվան քաղաքականութիւնը:

Ժողովուրդներու այդ գլխավոր ձգտումները միշտ մեր

մարքին դևմ ունենալը անհրաժեշտ է ամեն մեկ գործնական քայլ առնելու ժամանակ. ատիկա է ուղեցույցը, կողմնացույցը, օրվան դահավեժ դեպքերուն ու հակընդդեմ փոփոխություններուն առջևը չի մոլորվելու, գլուխդ չի կորսնցնելու համար, մանր ու խոշոր հակասություններու հորձանքին մեջը չի խեղդվելու համար, և անցողակի բարեկամություններուն ու թշնամություններուն վրայեն քու իսկական ուղեկիցդ, շահակիցդ, հենարանդ ու հակառակորդդ իրարմե որոշել կարողանալու համար:

II. Ժամանակի ոգին և հասարակաց կարծիք

Ազգամիջյան ամեն մեկ չարժման հաջողությունը, արագությունը և ուղղությունը էապես ու նախապես կախված է այդ ազգային ձգտումներու փոխադարձ ընդհարումեն: Սակայն այդ հիմնական ու արմատական մասնավոր ազդակներեն զատ կան միջազգային տեսակի ավելի լայն ազդակներ, որոնք իրենց ազդեցության բաժինը կբերեն ժողովուրդներու կատարած ազգամիջյան չարժումներուն վրա:

Այդ ուժերուն կարգեն ամենեն լայնը և ամենեն կարևորը այն ընդհանուր ուղղությո՛ւնն է, որ բռնած է համամարդկային քաղաքակրթությունը, այն ճամբա՛ն, որով հիմա կքալե մարդկային զարգացումը, այն ղեկավար ըմբռնումնե՛րը, որ յուրացուցած է և իբրև անհրաժեշտություն մը կնկատե մարդկության ամենեն առաջադեմ մասը, այն ամե՛նը, ինչ որ կարճ բառով կրնանք անվանել ժամանակի ոգին:

Քաղաքակրթության զարգացման ամեն աստիճանի վրա պատմական ամեն խոշոր ու հիմնական շրջան ունի իր ժամանակի ոգին, իր տեսակետները, իր սկզբունքները, որոնք խորապես կազդեն բոլոր ժողովուրդներու չարժումներուն ու ձգտումներուն:

Ամեն ձգտում, որ ժամանակի ոգիին հոսանքովը կերթա, հաջողելու հավանականությունը ունի իր հետ, և ընդհակառակը, ժամանակի ոգիին հակառակ գնացողը կթիավարե հոսանքին ընդդեմ և մեծ վտանգի մեջ է ջրերու ուժեն քշվելու ու սուզվելու:

Եվ իմաստուն պետությունները իրենց չահերն ու հաշիվները կհարմարցնեն ժամանակի պահանջած ձևերուն ու ըմբռնումներուն: Հենվելով ժամանակի ոգիին՝ անոնք դյուրացում ու թեթևություն կուտան իրենց ձեռնարկներուն, ընդհանուրի համակրանքը կապահովեն իրենց թիկունքին և կունենան մեծ հպարտությունը քաղաքակրթության ծառայած ըլլալու, որ ինքնին արդեն ուժ ու վստահություն ներշնչող գիտակցություն մըն է:

Որով և իրենց առած քայլերը բարձրության մը, ազնվության մը կբաշեն իրենց եսեն, ինչքան ալ որ այդ քայլերը իրե՛նք առած ըլլան զուտ ներքին անձնական չահերե դրդված: Մինչդեռ այդ նույն չահերը և նույն անձնական հաշիվները, երբ կատարվին արհամարհելով ժամանակի հակումներն ու ըմբռնումները, իրենց վրա կկրեն հետադիմության կնիքը, հանրության հակակրանքը և կնկատվին իբրև թշնամություն ու թշնամանք՝ նեռված քաղաքակրթության երեսին:

Ժամանակի ոգին իր հետ ունենալը խոր ու ներքին առավելություն մըն է, ներքին զսպանակ մը, ներքին հաջողանք մը: Շատ ավելի մակերեսային, շատ ավելի խախուտ և շատ ավելի արտաքին առավելություն մըն է հասարակաց կարծիքը քեզի հետ ունենալը, որը այդ կարգի երկրորդ ընդհանուր ու միջազգային ազդակ մըն է ժողովուրդներու առած քայլերուն վրա:

Հասարակաց կարծի՛ք, այսինքն՝ զանազան ժողովուրդներու ղեկավար մարդոց Համակրանքն ու Հակակրանքը: Իսկ ղեկավար մարդիկն են բարձր պետական պաշտոնեությունը, վերին հոգևորականությունը, խոշոր դրամատիրությունը, զանազան կուսակցություններու պարագլուխները, գիտության ու գեղարվեստի քանի մը աչքի իյնող դեմքերը և ատոնց բոլորի առջև բերանը եղող լրագրությունը: Ուրիշ խոսքով՝ բազմագույն ու այլակաշի ամբոխ մը, որ երբեք նույն չահերն ու տեսակետները չի կրնար ունենալ. կես մասի այո՛-ն անպայման կերպով մյուս կեսի ո՛չ-ն է, որով բոլոր տեսակի Համակրանքներն ու Հակակրանքները վերջ ի վերջո իրար կչեզոքացնեն ընդհանրապես:

Եթե քու հաշվին ավելցուկ մըն ալ մնա, բավական տարակուսելի է իր արժեքը. որովհետև այդ Համակրանքն ու Հակա-

կրանքը չատ հաճախ ծնունդ են ագիտութեան, անտեղեակութեան, պատահականութեան, կամ կրխին քու վիճակիդ հետ բնաւ կապ չունեցող կողմնակի, երբեմն անխոստովանելի աղբիւրներե, որոնք քեզի օգնելն աւելի կվնասեն, եթե հանկարծ ուզենաս լրջորեն հետեւիլ ղեկավարութեանդ այդ արատահայտութեան վրա: Աւելի ևս դիշ, եթե այդ արատահայտութիւնները արդիւնք են գութի, կարեկցութեան, խղճահարութեան, որովհետև հոտ կպակսի հարգանքը, որը միակ և իսկական հիմքն է ամեն համակրանքի:

Անշուշտ արժէք ունի այն հետաքրքրութիւնը, որ առաջացած է քու արժանիքիդ, քու կարողութիւններուդ, քու կամքիդ, կուիդ ու ձգտումներուդ բնական գնահատումեն: Նմանապես այն համակրութիւնը, որ կրխի արդարութեան սկզբունքեն, իրավունքի գիտակցութենեն, ժամանակի ոգիի պահանջեն և որ կնայի ուրիշ ժողովուրդի մը վրա, ինչպես հավասարի, և արդարութիւն կուզե անոր համար:

Ջանա՛նք մեզի հետ ունենալու այս տեսակի համակրանքը, եթե կրնանք, որովհետև ասիկա ալ ուժ մըն է վերջապես ու ազդակ մը: Միայն երբեք չմոռնանք, որ զործի ու կյանքի մեջ այդ բոլոր համակրանքներն ու հարգանքները մարզիկ չատ դյուրութիւնեմբ կծալլեն ու կդնեն իրենց գրպանը ցնոր տնօրինութիւն, եթե իրենց չահերուն ու տրամադրութիւններուն հանկարծ հակառակ դուրս գա: Հեռվեն ու տեսականորեն պատրաստ են և՛ արդար ըլլալու, և՛ կարեկցոտ, բայց երբ հարցը կմոտենա ու կանցնի գործնական հողին վրա, իսկույն վարիչ սկզբունքը կդառնա հաշիվը: Եվ քու բարեկամդ է ա՛ն, որուն չահը քու չահիդ հետ զույգ կերթա, և միայն ա՛յն չափով, ինչ չափով որ քու թշնամիդ ան է, որուն ձգտումներն ու քու ձգտումներդ իրար կխաչաձևեն: Ո՛չ մեկ համակրանք, հարգանք կամ գութ հոտ քեզի չի օգներ: «Կցավիմ, բայց...»՝ ահա՛ պատասխանը:

Այս բոլորը թեև չափազանց տարրական ու ակնհայտնի բաներ են, բայց մեր ժողովուրդը, որ նորեկ մըն է քաղաքականութեան ասպարեզը, իսկապես նորեկ ալ չէ, այլ պարզ ընտրելի մը միայն, և մյուս կողմեն ա՛յնքան չատ է եղած թշնամիներով չրջապատված, ա՛յնքան զրպարտութիւն, սուտ ու կեղծիք է թափվեր

իր վրա և ա՛յնքան իրավացի ու անիրաւ մեղադրանք իր գլխուն, որ դարձած է չափազանց զգայուն՝ համակրական ամեն մեկ ցույցի, ամեն քաղցր խոսքի, նոյնիսկ պարզ քաղաքավար սիրալիրութեան հանդեպ և աւտոնց վրա մեծ հույսեր կկապէ: Երևույթը հասկնալի է անշուշտ, բայց ժամանակ է արդեն, որ ձեռք բերենք քիչ մը աւելի քաղաքացիական հպարտութիւն և քիչ մըն ալ նուազ քաղաքական միամտութիւն:

III. Միջազգային սեղան

Ժողովուրդի մը առած քայլերուն վրա ազդեցութիւն ունեցող միջազգային երրորդ ուժ մը կներկայացնեն զանազան տեսակի վեհաժողովները, բարձրագոյն խորհուրդները, խորհրդակցութիւնները և աւտոնց արդիւնքը եղող զանազան միջազգային դաշնագիրները. մեծ տարբերութիւն մը չունի և Ազգերու լիգան[1]:

Աւտոնց բոլորի միակ նպատակն է դուրսը իրար ընդհարվող շահերու ու ձգտումներու հետևանքին վաւերացումը, ձեռք բերված հաջողութիւններուն իրավական ձևակերպումը և անոնց տևականութիւն տալու ջանքը: Ուրիշ խոսքով՝ հաղթողներուն համար է, ուժեղներուն ծառայող գործիք մը: Եվ այդ միջազգային իրավական սեղաններուն շուրջը կատարվածն ալ նույն դուրսի անողոք կռվին շարունակութիւնն է:

Եվ եթե մեջնմեջ, հոս ու հոն կրնա պատահիլ, որ հասարակաց կարծիքը ունենա վայրկենական բռնկումներ հանուն ազնվութեան, ասպետութեան, արդարութեան, հանուն մարդկային իրավունքի, քաղաքակրթութեան ու զարգացման, հո՛ս, այս միջազգային սեղաններուն շուրջը այդ բոլոր սիրուն բառերը վերջնականապես կնկատվին իբրև պարզ քաղաքավարական դարձվածներ: Եվ շատ ծիծաղելի կդառնան բոլոր անոնք, որոնք հանկարծ ուզենան այդ բառերուն լրջորեն վերաբերվիլ. միևնույնն է, թե միամիտին մեկը վեր կենար և մինիստրի մը նամակին տակը գրված «Ձեր խոնարհ ծառան» խոսքերը հանկարծ իրենց իսկական իմաստովը առներ:

Այդ ժողովներուն մէջ ձայն ունի միայն ուժը: Եվ ով կուզէ այդ ժողովներուն մէջ իրական հաջողութիւն մը ձեռք բերել, պետք է ուժ ունենայ իր ետևը: Իսկ այն փոքր ժողովուրդները, որոնք հարկ եղած ուժը չունին, և կամ մեզի նման եղող ու չեղող ժողովուրդներ են, որոնք բնաւ աթոռ ալ չունին այդ ժողովներուն մէջ, երբ իրենց իրաւունքը կպահանջեն, բնականաբար ստիպված են կախվելու ուժեղի մը փեշեն կամ քանի մը ուժեղներու՝ նայելով, թե ինչ հարաբերութիւն կա իր և անոնց շահերուն միջև:

Եվ ժողովին մէջ իհարկե կբարձրանա քու հարցդ, երբեմն նույնիսկ շատ մեծ աղմուկով ու հնչուն բառերով: Ինչքան բառերը հնչուն են և «արդարութեան» ու «ազնվութեան» հովեր ունին իրենց վրա, այնքան կնշանակէ քիչ կարևորութիւն ունի քու հարցդ խոսողի շահուն համար: Որովհետև այդ բոլոր աղմուկը և քու ամբողջ խնդիրդ հավելվածական զենք մըն է միայն քու պաշտպանիդ ձեռքը իր սեփական շահերը առաջ քշելու համար, հավելվածական սպառնալիք մը, վերադիր ճնշում մը իր հակառակորդին դեմ:

Եվ երբ քու հարցդ ավարտած է արդեն իր սպառնալիքի դերը, իսկույն կնետվի մանր պիջումներու կողովը՝ հրամցվելու համար հակառակորդին, շատ ավելի իրական ստացումներու փոխարեն: Իսկ քաղաքավարութեան ձևը փրկելու համար դաշնադրին կամ արձանագրութեան մէջ կարելի է մտցնել ո՛չ մեկ արժեք չունեցող վերացական հոդված մը:

Այնպես որ՝ ով մեզմե մեծ հույսեր կդնե միջազգային սեղաններուն վրա, միշտ պետք է հիասթափված մնա. մինչև այն օրը, երբ մենք ինքներս որևէ ուժ ներկայացնենք և մեր հարցը դառնա ուժեղ պետութեան մը հաշիվներուն մեկ մասը, մտնե լրջորեն անոր ծրագիրներուն մէջ: Հա՛, այն ժամանակ կքալե և ինքնիրենը, առանց մեր մասնավոր հետապնդումին. այն ժամանակ իրենք կքաշեն քեզի մեջտեղ, կհրեն քեզի առաջ, կխափսան ականջիդ պետք եղածը, ձեռքդ թուղթեր կկոխեն և ցույց կուտան հարկ եղած դռները:

Միջազգային սեղաններուն վրա մեծ հույսեր չդնելը խելացիութիւն է անշուշտ, բայց այդ սեղանները արհամարհելն ու

բնավ կարևորություն չտան այ կրառնա անմտություն: Ժողովուրդ մը, երբ նպատակի մը կձգտի, իրավունք չունի ո՛չ մեկ բան արհամարհելու, որ այս կամ այն առիթանով կրնա իրեն նպատակավոր ըլլալ: Պետք է չահագործել ամեն միջոց, ինչքան այ թուլլ ըլլա մեր ունեցած ակնկալությունը: Ամեն գաղ, երբ հարց մը կուգա միջազգային վեհաժողովներու ու խորհրդակցություններու բոլոր սեղաններուն վրա, արդեն ինքնին կդառնա իրավական գոյություն մը ու կտանա բարոյական ուժ մը, որ անպին նետելու բան չէ, մանավանդ երբ ատոր կմիանա մեծ պետություններու խոստովանությունը մեր տված պինվորական աջակցության, իրենց տված հատակ խոստումներուն և մեր անկախության պաշտոնական ու իրավական ճանաչումը: Ատոնք բոլորը թեև հիմա գործնականապես անարժեք, բայց մուրհակներ են մեր ձեռքը. և մենք կմնանք միշտ պահանջատեր մը, թեև անզոր ու իր խոսքը քալեցնել չի կրցող պահանջատեր մը:

Ո՛չ հասարակաց կարծիքը ձեռքն բաց թողնենք, ո՛չ ալ հրաժարվինք պետություններու միջազգային ժողովներուն մեջ մեր իրավունքը պաշտպանելի: Բայց ինչքան քիչ հույս դնենք այդ կողմնակի, հավելված օժանդակություններուն վրա, այնքան ավելի առողջ կըլլա մեր բռնած քաղաքականությունը, այնքան ավելի կեդրոնացած կըլլան մեր ուժերն ու ուշերը, այնքան ավելի միակամ կգիտնանք մեր ընելիքը և այնքան նվազ կունենանք ավելորդ հիասթափումներ և այդ արտաքին հիասթափումներուն կապված անօգուտ ու անիմաստ հուսաթափություններ:

IV. Պատահմունք

Շատ չատերուն հոգիին խորքը կա և վերջին ապդակ մը, որուն չուրջը հույսեր կհյուսվին և անորոշ սպասումներ:

«Ինչե՜ր ըսես աշխարհիս երեսը չեն պատահիր. երեկվան մուրացիկը վաղվան թագավորն է. ի՞նչ գիտնանք՝ ի՞նչ է գրված մեր ճակտին: Բա՛ղդ, բաղդի ձեռքն է ամեն ինչ»:

Այսպես կմտածեն արևելքցին քիչ մը մխիթարելու համար իր կոխկռտված ու դառնացած հոգին, քիչ մը արդարացնելու համար իր կամքին տկարությունը, քիչ մըն ալ մեղմելու համար իր վախը, որ ան ադամ կերպով կզգա իր ցանկություններուն առջևը բարձրացող դժվարություններուն դեմ:

Բայց և ընդհանրապես, բա՛ղդ, պատահմո՛ւնք, դիպվա՛ծ, դեպքերու բերո՛ւմ բառեր են, որոնք չարունակ կուգան մեր շրթունքին ծայրը, երբ մեզի ցնցող ու մեր չնախատեսած մեկ դեպքին հանդիպ կգտնվինք: Եվ դիպվածը անշուշտ ունի իր որոշ դերը պատմական երևույթներու ընթացքին:

Կան այն տեսակի իրողություններ, որոնք ամեն հաշվե ու նախատեսութենեն դուրս կկրնան, ինչպես, օրինակ, կարևոր անձի մը հանկարծական մահը, հրամանի մը մեջ սպրդած և իմաստը փոխող տառասխալ մը, երբեմն շատ մանր, երբեմն շատ լայն ու խոշոր պատահականություններ: Բայց եթե քիչ մը ավելի խորը դիտենք, այս տեսակի երևույթները սովորաբար կազդեն միայն այն իմաստով, որ կհետաձգեն, կդանդաղեցնեն կամ կարագացնեն դեպքերը, որ ինքնին անշուշտ մեծ կարևորություն ունեցող իրողություն է:

Սակայն երբ կառնենք դեպքերու երկարատև հաջորդական ընթացքը, շատ սակավ կպատահի, որ առոնք խաղան կտրական դեր. օրվան ծնունդ են և կազդեն օրվան վրա, բայց հիմնական, արմատական պատճառները փոխել ու մեջտեղեն վերցընել չեն կրնար, և ջուրը նորեն ճամբան կգտնե:

Պատահմունք ու դիպված կոչվող երևույթներուն անհամեմատ մեծագույն մասը այն տեսակի դեպքեր են, որոնք բնականորեն կբխին ժողովուրդներու ընդհարվող ձգտումներեն և պատմական պայմաններու պատճառական անհրաժեշտութենեն: Ապագա պատմագիրը անոնց բոլոր թելերը օր մը մեկիկ-մեկիկ պիտի քակե ու ցույց տա, որ ուրիշ կերպ բնավ կարելի ալ չէր. տարբեր հարց է սակայն, որ ժամանակակիցներս չէինք տեսած, չէինք ըմբռնած, չա՛տ պատճառներով:

Դեպքերու ընթացքին մեջ եղողը, կռվին մասնակցող գինվորի մը պես, ամեն ինչ որոշ դիրքե մը միայն կտեսնե, որոշ կիրքե

մը, որոշ հոգեկան տրամադրութեան մը միջով, ուր յանկութիւնն ու իրականութիւնը հաճախ իրար կշփոթվին: Դնպքերուն մեջ եղողը չգիտեւ շատ ու շատ բաներ ու չի կրնար գիտնալ, ինչ որ ապագա պատմիչը օտար աղբիւրներն ու արխիվներն կտեղեկանայ:

Վերջապես, կատարված դեպք մը, ըլլա ընկերական թե փիլիսոփայական, շատ ավելի դիւրին է վերլուծելը, պատճառներն ու հետևանքները հանկերը, քան դեռ լրիվ չկատարված կամ նույնիսկ բնաւ չկատարված դեպքը:

Այսպես, օրինակի համար, իրաւ հետևելով ցարական բնժիմին տակ մնծցած ժողովուրդի մը հոգեբանութիւնը, Գերմանիային ներմուծված սոցիալիզմի քառասնամյա անմարս յուզացումը, պատերազմի առաջացուցած վայրենացումն ու հոգնութիւնը և հրեաներու դեմ եղած երկարատև հալածանքներն ու ջարդերը Ռուսաստանի մեջ, կարելի ըլլա դուցե հիմա եզրակացնել, թե շատ բնական ու անխուսափելի էր պոլշևիզմի, այսինքն" սոցիալական ցարիզմի երևան գալը: Բայց քանի մը տարի առաջ ան իր առաջացման միջոցին բոլորովին անսպասելի ու դիպվածական երևույթի մը տպավորութիւնը կըներ:

Այդպես ալ Կարսի առաջ մեր զինվորներու պատերազմելե հրաժարիլը, որ սարսափելի անակնկալ մըն էր նույնիսկ մեր զինվորներուն վիճակը և մեր բանակի բոլոր թերին ու տկարը մտաիկեն գիտցողներուն համար, պատմիչ մը հիմա կրնա համրել իր մատներուն վրա բազմաթիվ պատճառներ ապացուցանելու համար, որ այդ դժբաղդութիւնը անխուսափելի հետևանքն էր թուրքի, ռուսի ու մեր վոխհարաբերութիւններու ու վիճակին:

Անհատներու մասնավոր կյանքին մեջն անգամ դիպված, բաղդ ու պատահար ըսվածը սովար մեծամասնութեամբ պարզ ու բնական հետևութիւնն է իր բնավորութեան ու վարմունքին, իր չնորհքին ու թերութեան, ինչպես և իր շրջապատողներու չահերուն, տրամադրութիւններուն ու հակազդեցութեան. թեև շատ հաճախ ապացուցանել չենք կրնար, որովհետև ազդակները թաղված են անհատական հոգիներուն խորքը: Ազգերու կյանքին

մէջ Հանրային են այդ ազգակներն ու պատճառները և ատոր համար ալ անհամեմատ ավելի մատչելի՝ քննութեան ու նչմարելի:

V. Կամքերու բախումը

Բաղդը, պատահմունքը և դէպքերու բերումը կրնան օգնել մեր անկախութեանը այն իմաստով, որ Հանկարծ Հարմարութիւն կատեղծվի, դյուրութիւններ կունենանք և ավելի արագ կկատարվի իրագործումը:

Կրնա պատահիլ, որ Հասարակաց կարծիքն ալ վճռական վայրկյանին ձեռք մեկնե մեզի և օգնե, որ ուզքի բարձրանանք:

Օր մը Հավանական է, որ միջազգային վեհաժողովները Հանեն մեզի համար նպաստավոր որոշում մը, երբ շահերը Հարմար դասավորվին, որով թեթևցնեն և վավերացնեն մեր ճիգերը:

Այս երեքեն ալ ավելի կրնա մեզի, թեև անտես, մեծ ծառայութիւն մատուցանել և մեծ օժանդակութիւն ժամանակի ոգին, ժամանակի պահանջը:

Բայց ամենեն լավառես պայմաններուն մեջն անգամ այս ընդՀանուր ու միջազգային ազդակներուն ըրածը կըլլա միայն նպաստելը, օգնելը, թեև տալը, արագացնելը: Սակայն մեր մէջ չատեր կան դժբաղդաբար, որոնք այդ միջազգային ազդեցութիւններեն ո՛չ թե դյուրացում մը կսպասեն ու նպաստ մը մեր գործին, այլ ամբո՛ղջ գործը և մեր ամբո՛ղջ Հայրդութիւնը օտարներեն կակնկալեն: Ասոնք ո՛չ միայն Հեռու կկենան ու չեն մասնակցիր մեր ժողովուրդի թափած Հուսահատ ճիգերուն ու պայքարին, այլև կմեղադրեն անոր առած «խելագար» քայլերը, որոնք միայն «արյուն ու ավեր կբերեն», և կՀուսան, որ օր մը բաղդը, Հասարակաց կարծիքը և միջազգային վեհաժողով մը թև թևի մտած պիտի գան ու պիտի Հրամցնեն մեզի կազմ ու պատրաստ ու նո՛ր-նոր անկախութիւն մը՝ արծաթե ափսեի մը վրա դրված:

Ավա՜ղ, այդ տեսակ աքանչելի նվերները ընող բարի ոգիները Հին Հնքիսթներու մէջ միայն կապրին: Մեր իրական աշխարհին մէջ սիրողը ուրիշ ոգիներ են, որոնք իրենց տված ամեն մեկ

կամիկ բարիքի փոխարեն քու արյունդ կուզեն, քու տանջանքդ ու քրտինքդ և ան ալ չա՛տ:

Պատրաստ ու «տիպլոմատիկ համբով» առացվելիք նվերներու գաղափարը և ասոր նման նանիր ու տարտամ հույսերը երբ դնենք մեկ կողմ, մնջաեղ կմնա երկու բան, երկու չատ պարզ ու չատ հիմնական բան՝ մի՛ր կամքը և մեզի հետ մասնավորապես առնչություն ունեցող մյուս ազգերուն կամքը:

Այդ թեր ու դեմ կամքերու արյունատ ու դաժան բախումին մեջեն է, որ ծնի պիտի մեր անկախությունը: Ծնի պիտի երկար երկունքով, որը սկսած է վաղուց, երեք սերունդ է արդեն, և չատ դժվար ծնունդով, որովհետև չատ ճախորդ է մեր աշխարհագրական դիրքը ու չատ բարդ են մեր շուրջի պատմական ու ցեղապրական պայմանները:

Իրականության հանդեպ աչքերը գոցելը խելացի մարդու գործ չէ: Կյանքի կռվին մեջ հուսահատիլը կենսունակ մարդու գործ չէ:

Պարտական ենք վերջապես ամենքս պարզ ըմբռնելու, թե միայն մե՛նք կրնանք տալ մեր անկախությունը մեզի: Մենք ինքնե՛րս պետք է ձեռք բերենք և՛ մեր հայրենիքը, և՛ մեր անկախությունը հարատև մաքառումով, համառ կամքով ու վճռականությամբ, իյնալով ու ելլելով, ճանկռտելով կտոր-կտոր, վրցնելով ծվեն-ծվեն: Իսկ եթե ձեռք բերել չենք կրնար, իրավունք չունինք ապրելու իբրև ուրույն ժողովուրդ:

ԺԱՄԱՆԱԿԻ ՈԳԻՆ

Ա. ԱՐԵՎԵԼՔ ՈՒ ԱՐԵՎՄՈՒՏՔ

I. Ասիա և արևելյան քաղաքակրթություն

Մարդկային քաղաքակրթությունը ծայր է տված աշխարհիս զանազան անկյուններուն մեջ. բայց տեղի, դիրքի, կլիմայի և այլ

աշխարհագրական-տնտեսական պատճառներով բարդ ու բարձր զարգացման հասած է առաջին անգամ Ասիայի հողին վրա, գիտավարապես չորս մեծ գետերու ավազանին մեջ՝ Յանցեկյանկ[2], Գանգես, Եփրատ և Նեղոս. որովհետև Եգիպտոսն ալ առանց մեծ խղճի խայթի կարելի է կցել Ասիային, այն աստիճան կտրված է եղեր ան Աֆրիկայի մյուս մասերեն և կապված միշտ Ասիային թե՛ պատմութեյամբ, թե՛ աշխարհագրութեյամբ:

Քինաատանն ու Հնդկաստանը ապրած ու մնացած են մեկուսի: Քաղաքակրթութեյան զարգացման տեսակետեն մասնավոր կարևորութեյուն ունի վերջին երկու դիտահովիտներու խաղցած դերը. որովհետև Միջագետքի ու Եգիպտոսի ստեղծագործութեյան և անոնց իսառնուրդին առաջացած ժառանգութեյան վրա է, որ հիմնված ու կառուցված է մարդկային քաղաքակրթութեյան արդի հոյակապ շենքը:

Այսպեսով Միջագետքի ու Եգիպտոսի և իրենց չուրջի երկիրներուն մասնավոր առավելութեյունը իրենց ստեղծած քաղաքակրթութեյան տարբերութեյանը մեջ չէ մյուս երկուքեն, այլ իրենց դիրքի. կից ու մոտիկ ըլլալով այն ժողովուրդներուն, որոնք չարուներակելու և կատարելագործելու էին անոնց թողած ժառանգութեյունը: Միջագետքի ու Եգիպտոսի քաղաքակրթութեյունը եթե մնար միայն ասիական հողի վրա և չանցներ ավելի Արևմուտք եվրոպական ժողովուրդներուն ձեռքը, մենք չէինք ունենար մեր արդի եվրոպական, արևմտյան քաղաքակրթութեյունը, այլ կունենայինք միայն արևելյան քաղաքակրթութեյուն մը, որ իր ամենազարգացած ձևին մեջ կհամապատասխանե մոտավորապես Եվրոպայի միջնադարին. կունենայինք միայն ասիական քաղաքակրթութեյուն մը:

Իսկ ի՞նչ բան է Ասիան:

Ասիան աշխարհիս ամենեն խոշոր ու միազանգ ցամաքն է: Ասիան անապատներու երկար շարք մըն է՝ եզերված ու իրարմե կտրված բարձր լեռներով ու սարահարթերով, սկսած Սահարայեն մինչև Ճափոնի ծովը[3]: Սարավանդ ու անապատ, այս է ընդհանուր տիպը:

Թե՛ անապատներու և թե՛ սարավանդներու վրա մարդկային ապրուստի գլխավոր միջոցը խաշնարածութիւնն է. իսկ հովիտներուն մէջ և մինչև մեկ որոշ բարձրութիւն՝ երկրագործութիւնը, որ իր կարևորութեամբ կրնան երկրորդ տեղը: Եվ սակայն համեմատ ալ Ասիայի բնակչութեան սակաւ մասը խաշնարած է, թափառական կամ կիսաթափառ ու քոչվոր. իսկ երկրագործութեամբ զբաղվող մասերը կտրտված են իրարմէ անապատներով ու վիթխարի լեռներով և չունին իրարու հետ հաղորդակցելու արագ ու դյուրին միջոցներ, կապրին ցրված ու անջատ-անջատ: Մյուս կողմեն՝ թե՛ խաշնարածութիւնը և թե՛ խաշնարած-երկրագործութիւնը երկուքն ալ շատ մեկերպ ու դանդաղ պարապմունքներ են և գրեթե դարերով որևէ փոփոխութեան ու կատարելագործութեան չեն ենթարկվիր, կկրկնվին նույն ձևով: Հետևաբար այդ զբաղումներով ապրող ժողովուրդը, թեև ապատ ժամանակ ունի, բայց արտաքին դրդումը չունի, կյանքի պահանջին ճնշումը չունի իր միտքը հոգնեցնելու, իր միտքը լարելու: Հայցի աշխատանքեն ազատ մնացած դադարի ժամանակը կա՛մ միտքը բնավ չի գործեր, այսինքն" ինքզինքը կուտա ծուլութեան, կա՛մ եթե կմտածե՝ իր մտածումները կերթան ո՛չ դեպի գործնական կյանքի ու գործնական պետքերուն շուրջը, այլ ավելի փիլիսոփայական, վերացական, ներհայեցական երազանք մը, տեսակ մը դանդաղ ու նույն կետին չորս կողմը շուռ եկող կլիաքուն մտոլորում:

Եվ հետզհետե այդ վիճակը անոր համար կդառնա պահանջ մը սիրելի ու որոնելի, կդառնա իր դադարը, իր զվարճութիւնը, իր բավականութիւնը այդ կես-քուն, կես-արթուն վիճակը: Հոսկե կծնի հաշիշի, աֆիոնի, սուրճի, հին սոմայի, նոր ծխախոտի, ծխամորչի ու նարգիլեի և ընդհանրապես կիսագրգիռ ու կիսամթիր տվող ամեն տեսակ միջոցներու մասնավոր սերը:

Այդ տեսակ միջոց մըն է նաև իր ամենօրյա քանի մը անգամ կրկնվող աղոթքը միշտ նույն անհասկնալի բառերով:

Այդ տեսակ մշուշոտ ոլոր-մոլոր մըն է և՛ իր փիլիսոփայութիւնը, և՛ աստվածաբանութիւնը, և՛ քաղաքավարութիւնը, և՛ խոսվածքին ոճը:

Ան իր մոքերուն պարզ կերպարանք մը տալը չատ չի սիրեր, այլ գալարել, պատցնել ու իրար մեջ հագցնել՝ իր արաբևակներուն նման, իր մոզայիկին ու իր գորգերուն նման, իր հազար ու մեկ գիշերներու մեջնմեջ հեքիաթներուն նման: Եվ երբ կփորձե քանդակ մը կամ նկար մը, ձախլիկ դուրս կուգա և ավելի այլաբանական, քան իրական:

Իր աշխատանքեն ու միօրինակ կյանքեն կառաջանա և իր հակակրա՛նքը ամեն փոփոխության, ամեն նորմուծության, և իր պաշտամո՛ւնքը ամեն հինի, ընդունվածի, սովորական դարձածի, և իր խորին երկրպագությո՛ւնը հեղինակության:

Հավատացող է ջերմեռանդ և հարցերուն ու երևույթներուն քննադատորեն մոտենալը համարած է ու կհամարե սրբապղծություն, թե՛ կրոնական հարցերուն, թե՛ պետական, թե՛ հանրային-իրավական: Վերը՝ աստվածներն ու դևերը, վարը՝ իշխողներն ու մեծերը. այդպես է եկեր ու այդպես պիտի երթա. և ան միշտ հլու է իր պետերուն, և մեծ տարբերություն մը չունի, թե ո՞վ է այդ պետը, որ իր մարակը կշաչեցնեն անոր գլխուն:

Բայց ասիկա չի նշանակեր, թե իր քաղաքական կյանքը հանդիստ է եղած ու խաղաղ կանցնի: Ընդհակառա՛կը. մանր-մունր սահմաններ, մանր-մունր թշնամություններ, մանր փառասիրություն ու մանր անկախության սեր. և խաչինք պահող մարդու հատուկ պնդագլխություն, կովազանություն. և խաչինք պահող մարդուն հատուկ մորթելու վարժություն, գողնալու ու հափշտակելու դիշատիչ ու հնավանդ բնազդներ:

Եվ այդ միշտ ոտքի վրա եղող խաչնարած մասը պատիժն է ու պատուհասը ավելի արդյունաբերող, ավելի աշխատող նատակյայց երկրագործ մասին: Ուրիշներու աշխատանքը ուտելու. ուրիշներու դիպած հարստությունները կողոպտելու և ուրիշներու չենցուցած քաղաքները ավերելու տենչը չարունակ պրես է թափած անապատներեն ու սարավանդներեն միշտ նոր ու նոր թափառական ցեղեր գետահովիտներու անհամեմատ ավելի քաղաքակիրթ մասին վրա. եկեր են, ամեն մինչ մորեխի պես կերեր ու ոչնչացուցեր և իրենք ալ շուտով ոչնչացեր են՝ տեղ տալով նոր կազմվող «պետություններու»: Պետություններ, որոնց սահմանները ամպի

կտորի պես մեկ կերկարին, կլայնանան, մեկ կկծկվին ու կպատըռվին ծվեն-ծվեն: Թեև բոլորն ալ ուսական անվանական գլուխ մը դավանիլը բնական կդտնեն, ինչպես էին հին պարթևական ու պարսկական արքայից արքաները, արաբական խալիֆեները, Թուրքիայի սուլթանը. և ինչքան հին, հետու ու գուտ անվանական, այնքան ավելի սուրբ ու հարգելի:

Եվ սիրող խաչնարած գաւառուհյան իբր հետևանք՝ այդ ժողովուրդները երբեք չեն կրցած հիմնովին տարբերել իրարմե պետութիւնն ու կրոնը: Պետութիւնը անոնց համար ընտանիք մըն է, ցեղ մը, ցեղին պետը՝ իրենց իշխողը և կրոնապետը: Կրոնապետական բռնակալութիւններ են բոլորը: Եվ ընդհանրապես ահագին է կրոնքի ուժը: Մտավոր ամեն շարժում ու կրթութիւն կեդրոնացած ու կապված է կրոնքին: Կրոնավորներն են, որ կղեկավարեն հասարակութեան միտքը. և կրոնական կապն ու գիտակցութիւնը այդ պատճառով շատ ավելի խոր է և ուժեղ, քան պետականն ու ազգայինը:

Եվ այս պահպանողական ու բռնատիրական մթնոլորտին մեջ ընտանիքը համառորեն կպահէ իր հին ձևը՝ բազմակնութիւնը: Եվ հենց որ կներեն անհատի անտեսական պայմանները, կինը զատված է ու բանտարկված, այրերու հետ խոսելու իրավունք չունի և ընդհանրապես դեմքը ծածկված: Եվ ատոր համար ալ տուները դուրսեն ավելի բանտի կնմանին, քան բնակարանի. չորս հատ մերկ, բարձր ու կոպիտ պատերով կտրված են աշխարհքեն:

Ա՛ս է Ասիան:

II. Եվրոպա և արևմտյան քաղաքակրթություն

Հիմնովին տարբեր է պատկերը, երբ Փոքր Ասիայի ափերեն դեպի արևմուտք կնետենք մեր հայացքը: Եվրոպան ցամաքի բգկատած կտոր մըն է, որ իր բազմաթիվ ձեռքերովն ու ոտքերով, խրված է ամեն կողմեն ծովուն գիրկը՝ կազմելով մեծ ու փոքր թերակղզիներ, կղզիներ, ծոցեր ու խորշեր:

Եթե Ասիայի ծովերն անգամ ցամաքային են, ինչպես Վանը, Ուրմիան, Կասպիականը, Արալը, Բայքալը[5], ընդհակառակը, Եվրոպայի ամենացամաք մասին անգամ ազատ ծովը ճիպ է ըրած մոտենալու. Հյուսիսեն՝ Պալթիկը[6] իր թևերով, հարավեն՝ Սևն ու Ազովը: Եվ ընդհանրապես ամբողջ եվրոպական ցամաքին վրա զգալի է ծովուն չունչը, կարևորությունն ու ազդեցությունը: «Եվրոպական» ըսված կյանքը ծովուն նվերն է, եվրոպական քաղաքակրթությունը իրե՛ն հատուկ եղող կողմերովը ծովային քաղաքակրթություն է:

Եթե հետևինք եվրոպական ժողովուրդներու խաղցած պատմական դերի հաջորդականությանը, կտեսնենք, որ դիրակատարությունը կանոնավոր կերպով կերթա դեպի արևմուտք և հյուսիս՝ միշտ քալելով ծովուն. Հունաստան, Հռոմ, միջնադարյան Իտալիա, որուն վրա հենած է Գերմանական սրբազան կայսրությունը, Սպանիա, Փորթուգալ, Ֆրանսա, Հոլանտա, Անգլիա. և հիմա ալ, նորեն ծովուն քալելով, Գերմանիայի ու հյուսիսային երկիրներու վրայով, կքալե դեպի Ռուսաստան:

Եվ անշուշտ պատահականություն չէ, որ հիմա՝ ծովու տիրապետության այս դարաշրջանին, աշխարհիս մեծագույն պետությունը, քաղաքակրթությունն ու քաղաքականությունը վարողը Անգլիան է ու անգլո-սաքսոն ցեղը, այսինքն՝՝ հյուսիսային Եվրոպայի ամենեն ավելի ծովային երկիրը և ծովային ժողովուրդը:

Եվ մինչև որ եվրոպական ժողովուրդ մը ծովը չէ դուրս եկած, մարդկային քաղաքակրթության համար չէ ստացած այն կարևորությունը, ինչ որ ունի: Հունաստանը ծովու վրա է եղեր շատ կանուխեն. Հռոմը, մինչև չհեծավ նավերը՝ Կարթակենը[7] քանդելու, Միջերկրականի միահեծան տերը չդարձավ, պատմության մեջ երկրորդական դեր ուներ. Փորթուգալի փառքը իր «արկածախնդրությունն» է օվկիանոսներու վրա. Սպանիայի, Հոլանտայի ու Ֆրանսայի մեծությունը սնուցողը ծովն է եղած իր ծոցի հեռավոր գաղութներով: Անգլիայի բարձրացումը կսկսի այն օրեն, երբ կնետվի ծովը, իսկ իր համաշխարհային կայսրությունը՝ մեկ-երկու ծովամարտե:

Գերմանական հոգիին մնջ քաղաքական խոշոր դեր մը խաղալու ունակը արմնցավ Թե չէ, իր առաջին պահանջն էր նավեր չինելը:

Ծո՛վ: Ով իր հացը կհանեն ծովեն կամ ծովուն վրայով, պետք է կռվի ծովուն հետ, պետք է միշտ արթուն ըլլա, խիզախ, արագ, ձեռներեց ու հնարամիտ: Ջէ՞ որ տախտակի կտորի մը վրա է միշտ: Եվ իրնչքան աշխատանք, խնամք, մտածում, արհեստ ու կատարելագործում կպահանջե այդ տախտակի կտորը:

Նավուն վրա ապրիլ կնշանակե չարունակ տեղափոխվիլ, չարունակ չփման ու հարաբերութեյան մնջ գտնվիլ բազմաթիվ ժողովուրդներու հետ, տեսնել, լսել, առնել, ծախել, այսինքն՝՝ դիտողութեյան հարստացում, մտքերու հարստացում, գրպանի հարստացում: Ապրանքներ ու պահանջներ, որ ինքը նոր կտեսնե. ապրանքներ ու պահանջներ, որ ինքը ամեն տեղ իր հետը կտանի: Նոր պահանջներուն նոր գոհացում տալ պետք է, նոր ապրանքներուն՝ նոր կիրառութեյուն:

Ինչքան՜ աշխատանք և իրնչ աշխատանք. ո՛չ միօրինակութեյուն ունի, ո՛չ հանգիստ ու սահման. միշտ պետք է նախատես ըլլաս, միշտ պետք է մտածես, գտնես ու հնարես, միշտ դեկավարես: Ու կգործեն միտքն ու ձեռքը, ու կգործեն մեքենաները այդ երկուքի հրամանին տակ:

Եվ այդ բոլոր աշխատանքը գործնական հիմքի վրա. գործնական միջոց մը, ելք մը, արդյունք մը ձեռք բերելու համար:

Նույնիսկ վերացական ու փիլիսոփայական մտածումը կկատարվի առանց իրականեն ու բնականեն բոլորովին կտրվելու. տեսակ մը դրական փիլիսոփայութեյուն[8], ուր ամեն բան մարդուն շուրջը կդառնա ու մարդեն անդին շատ չի հեռանար:

Ծովուն տիրողն ու հրամայողը, ծովի զսպողը պտտիկ մարդն է իր պտտիկ տախտակի մը կտորին վրա: Մա՛րդը, ծովո՛ւ մարդը կդառնա բարձրագույն ըմբռնումը. աստվածները բոլորովին կմարդկայնանան. Ոդիսևան[9] ու Պալլաս Աթենասը[10] կխառնվին իրար, որովհետև երկուքն ալ ծովու մարդու իտեալացումն են: Իր աստվածներուն պես իր գեղարվեստն ալ մարմին ունի, մարդկային մարմին, հստակ ձևեր, հստակ գծեր, որոշ շրջագիծ. իսկ դիտական

մտածումը՝ հստակ բաժանումներ, հստակ կատեգորիներ, կանոնավոր չինք, լրիվ կառուցում ու պարզ սիսթեմ. ամեն ճապաղ, անորոշ, մշուշոտ, խճողված բան բավարարություն չի տար, կնկաամվի թերի:

Մարդը իտեալ, մարդը հաղթական, մարդը ձեռներեց, մարդը հնարող, ասոնք զանազան բառեր են արտահայտելու համար միևնույն բանը, արևմտյան հոգիի անհատականության պաշտամունքը: Ամեն նավավար, ամեն նավագնաց, ամեն նավաստի իր հատուկ ճամբան ունի, որ ինքը կբանա, ի՛ր գլուխը ունի, ի՛ր մտածումը, ի՛ր ծրագիրը: Եվ հետզհետե ամենքը կքննեն ու կքննադատեն և ամենուն ձեռքի չափն ու կշիռը իր անհատականությունն է ու իր փորձառությունը: Նույնիսկ աստվածներու ըսածներն ու ըրածները կենթարկվին դատումի ու կհեգնվին, նույնիսկ ազգային մեծագույն հերոսները և ամենապատկառելի դեմքերը: Ո՛չ մեկը չուզեր իր մտքի անկախությունը զիջել ուրիշին:

Հոսկե քայլ մըն է միայն դեպի քաղաքացիական անկախությունները: Ա՛յս աստիճանի ինքնուրույնության հասած միտքը լռելյայն կրնա ենթարկվիլ հնադարյան թագավորի մը քմահաճույքին և հետզհետե ընդհանրապես ուրիշներու հրամանին: Ամեն մեկը կուզե, որ իր տեսակետը հաղթանակե. ուրեմն ամենքը պետք է մասնակցին հանրային գործերու որոշումին, պետական նավի ղեկավարումին: Տեմոկրատիզմը, Աֆրոդիտեի[11] նման, ծնած է ծովեն, միայն ո՛չ փրփուրեն, այլ ծովուն հետ մաքառելեն, պայքարելեն:

Նույն պատճառներեն ու նույն խորքերեն է, որ դուրս կպղպջա կրոնական ազատամտությունը: Որովհետև քննադատությունը կծնի սրբագրելու պահանջ, սրբագրությունները՝ բազմազանություն: Իսկ միևնույն բանի այդքան բազմատեսակ ըմբռնումներուն առաջ կծնի ճակատագրական հարցը. «Արդյոք այս բոլորը մեր հնարած բաները չե՞ն»: Եվ կամաց-կամաց սրբազան կուռքը կդառնա հեռավոր աստծու մը արձանը, աստծու արձանը կվերածվի բարոյական գաղափարի մը մարմնացումին, մինչև որ

կերթա ու կանգավորվի պետրվեստական մյուզեի մը մեկ պատվավոր անկյունը:

Ահա՛ Եվրոպան:

Անշուշտ Եվրոպայի բոլոր մասերը հավասարապես եվրոպական չեն, ո՛չ ալ բոլոր դարերն ու բոլոր ժողովուրդները նույն քաղաքակրթական արժեքը կներկայացնեն: Ինչպես և Ասիայի հին ու նոր ժողովուրդներուն ու ժամանակաշրջաններուն մեջ ասիականութիւնը խոշոր տարբերութիւններ ունի. և այս ու այն հասկութիւնը չեշտված է կամ ոչ՝ տեղական ու ցեղական մասնավոր պատճառներով. բայց իր հիմնական գծերովը բոլորի վրա դրած է նույն քաղաքակրթութեան կնիքը:

Եվրոպա ու Ասիա, այսինքն՝ ծով ու ցամաք, շարժում ու թմբիր, հառաջդիմութիւն ու պահպանողական ոգի, անհատական ճիգ ու հեղինակութիւն, տեմոկրատիզմ ու բռնակալութիւն, մարդկային հպարտութիւն ու «քու ողբիդ փոշին»: Մեկ կողմը շարժուն դրամագլուխ, գործարաններուն մուխը և ապրանքներու շրջանառութիւնը, մյուս կողմի հարստութիւնը՝ խաչինք ու հող: Հոս օր օրի շատցող կրթական, գիտական ու մասնագիտական կրթարաններ, վարժարաններ, փորձարաններ, ընկարաններ ու համալսարան, հետզհետե ավելի անկախ ու ավելի ազատ թափով, շունչով ու աշխատանքով. հո՛ն նույն կրոնական հաստատութիւնները և կրոնավորներու փեշին փակած մոնթերը, ամեն մեկուն ձեռքը նույն անհասկանալի լեզվով գրված խրթին ու հաստափոր սուրբ գիրք մը, որուն անունը թեև դարերուն ու ժողովուրդներուն հետ կփոխվի, բայց որուն էությունը միևնույն է հավիտյան:

Աս է գուգակշիռը Հոնիական ծովեն[12] դեպի արևմուտք ու դեպի արևելք եղող աշխարհներուն. այսինքն՝ գրեթե կատարյալ հակադրութիւնը իրարու, եթե մտնենք հոգիներու ու իրերու էության խորքը: Ատոր համար է, որ Արևելքն ու Արևմուտքը իրար լեզու չեն հասկնար, իրար չեն համակրեր, թեև իրարու տարօրինակութիւն և իրարև չահագործելու նյութ կհետապրքրվին իրարմով: Բոլոր արտաքուստ չտայլված քաղաքավարութիւններուն հակառակ՝ ներքուստ կարհամարհեն իրար. և ամեն տեսակ

պրաւոր ու բանաւոր ցուցադրված բարեկամութիւններուն հակառակ՝ խորապես թշնամի են իրար:

Երկու տարբեր քաղաքակրթութիւն կամ, ավելի ճիշդը, նույն քաղաքակրթության երկու տարբեր տարիքները: Մեկը ծեր, վրան-պլուխը հինցած, աչքերը ափսոսանքով հառած իր եսին, դեպի «հին ու բարի ժամանակները». մյուսը երիտասարդ, նոր ու տարօրինակ զգեստներով, աչքերը սևեռած միշտ դեպի առաջ, դեպի խորհրդավոր հեռուները:

Բ. ԱՍԻԱԿԱՆ ՈՒ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԴԱՐԱՎՈՐ ՄԵՆԱՄԱՐՏԸ

I. Առաջին երկու հազարամյակները

Արևելք ու Արևմուտք՝ երկու թշնամի:

Եվ այդպես եղեր են մի՛շտ:

Եվրոպայի ծնած օրեն, այսինքն՝ արիական ժողովուրդներու Միջերկրականի կապույտին վրա երևցած օրեն եղեր է միշտ այդ երկուքի փոխադարձ թշնամությունն ու հակառակությունը, իրար զգեստնելու, իրար տիրելու փոխադարձ ձգտումը:

Եվ երբ ուշադրությամբ կդիտես պատմությունը, տեսակ մը կանոնավոր ետ ու առաջ չարժում կտեսնես այդ երկուքի ընդհարման մեջ: Երբեմն մարդկության պահպանողական կուսակցությունն է, երբեմն հառաջդիմական՝ն, որ կհաղթե, առաջ կուգա, իր ձեռքը կառնե համամարդկային գերիշխանությունը և ի՛ր սկզբունքներուն կենթարկե քաղաքակրթության ընթացքը. նո՛ւյն ձևով մոտավորապես, ինչպես անգլիական պարլամենտին մեջ կանոնավոր կերպով վիգերն[13] ու թորիները[14] իրար ձեռքե կխլեն երկրին կառավարությանղեկը ու իրար կհաջորդեն:

Բնականաբար բախումը տեղի կունենա այն կետերուն վրա, ուր երկու քաղաքակրթությունները երես երեսի կուգան:

Սկիզբը խոսքը Արևելքինն է:

Հույներու. Հռոմիականի ավերը ոտք դնելին սկսած մինչև Ալեքսանդր Մակեդոնացին, այսինքն՝ շուրջ հազար տարի, քաղաքականութեան ու քաղաքակրթութեան վարիչը Նինվեն[15] է ու Բաբելոնը[16], եաքը՝ Պարսկաստանը: Վերջինս իր իշխանութեան տակ կմիացնէ ասիական այն բոլոր երկիրները, որոնք ինկած են Միջերկրականեն մինչև Հնդկաստան ու միջինասիական անապատները, Եգիպտոսն ալ մնջը առած. ինչպես հիմա կանվանենք՝ ամբողջ Մերձավոր Արևելքը[17], այսինքն՝ Ասիայի միակ մասը, որ մշտական չփման մեջ է եղած Եվրոպայի հետ մինչև նորագույն դարերը:

Այս միջոցին արևմտյան հոգին, ստեղծագործութիւնն ու պետականութիւնը արդեն այնքան ուժեղցեր, կազմակերպվեր ու հարստացեր էր Հունաստանի մեջ, որ վերջին երկու հարյուր տարիներու ընթացքին պարսիկ թագավորներու գլխավոր ջանքն ու երազանքը հույներու անձին և ունեցածին տիրելն էր, որը մասամբ միայն հաջողեցան, գրավելով Փոքր Ասիայի ափերը և Թրակիան[18], իսկ մնացած մասերուն վրա առավել կամ նվազ անվանական գերիշխանութիւն մը:

Այս հազար տարվան արևելյան առաջնութեան կհաջորդե երկրորդ հազարամյակ մը՝ մակեդոնական արշավանքեն մինչև արաբական պետութեյան մը ասպարեզ գալը, երբ գերիշխանութիւնն ու քաղաքակրթական ղեկավարութիւնը կանցնի արևմուտքի ձեռքը: Նախ՝ Ալեքսանդրի չափազանց տիպիկ արշավանքը, եաքը՝ Սելևկյան[19] ու Պաղոմյան[20] տները, եաքը՝ Հռոմայեցիք, վերջն ալ՝ Բյուզանդիոնը: Այսինքն՝ սկիզբը Հելլենիզմի[21] տիրապետութիւնը, ոգին ու քաղաքակրթութիւնը, իսկ վերջը՝ քրիստոնեութիւնը:

Քրիստոնեութիւնը իբրև դավանանք ու պաշտամունք խառնուրդ մըն է ու եզրակացութիւնը Մերձավոր Արևելքի և հունահռոմեական բոլոր կրոնական ըմբռնումներուն ու ձգտումներուն: Իսկ իբրև բարոյական ու ընկերային խտեալ բոլորովին նոր թռիչք մըն է մարդկային մտքի ու զգացման. ծովու բերած քաղաքակրթութենեն ալ անդին անցնելու ոստում մը:

Կյանքի ու ծովու փոթորիկները հաղթահարելու իր փորձերեն ետքը՝ մարդու հոգին ճիգ կընե իր ներսի ղին, իր խորքերուն մեջ փոթորկող կրքերուն ծովն ալ դադարելու. ընկճել կուգն իր եսական ձգտումները, իր անձնական վայելքները, ուրիշները շահադործելու ներքին բնազդը: Ուժի, վայելքի ու եսի տիրապետութեան դեմ բուռն բողոք մըն է ու քարոզ մը սիրո, անձնվիրութեան ու այլասիրութեան: Խոր, ջինջ ու ծավի բարոյականութիւն մը իր շուրջի ծովուն նման. և հեռավո՛ր բարոյականութիւն մը, մեզի համար դեռ չա՛տ հեռավոր ու ետ-ետ փախչող բաց ծովերու հորիզոնին նման:

Բայց Արևելքի մեկ կարևոր մասին տեր դառնալը, արևելյան ժողովուրդներու հասկացողութեանն ու ճաշակին հետ մտածիկ ու տևական չփումը, ինչպես և ներքին քաղաքացիական կռիվները և տնտեսական պատճառները հետզհետե բավական կաղճատեն արևմտյան ոգին նույնիսկ բուն իր հողին վրա: Իսկ Քրիստոսի երրորդ դարեն սկսած՝ հյուսիսեն անվերջ դեպի հարավ խուժող գերման ցեղերու ողողումին տակ Հռոմեական կայսրութիւնն ու քաղաքակրթութիւնը կամաց-կամաց կվերածվին փլատակներու, և ծովու հոգեբանութիւնը կմարի վերջնականապես:

Եվրոպան դարձած է Ասիա, այսինքն՝՝ ցամաք, այսինքն՝՝ միջնադար:

II. Երրորդ կամ մահմետական հազարամյակը

Եվ ճիշդ այդ վայրկյանին է, որ Մերձավոր Ասիան ուզի կելլե նոր թափով: Արաբիայի անապատներուն մեջ կծլի նոր կրոն մը, ու նոր պետութիւն մը, որ մեկ-երկու տասնյակ տարիներու միջոցին տեր կդառնա Հինտիքուշի[22] լեռներեն մինչև Ատլանտիկ տարածվող աշխարհին:

Սահարայի խորքերը ու Սահարայի շուրջը, միջին Ասիայի անապատները և այդ անապատներուն շուրջը ամե՛ն տեղ հաղթական է այդ նոր կրոն-պետութիւնը՝ մահմետականութիւնը. և բոլոր այդ մանր ու խոշոր ժողովուրդները կքաշե ու կկապե իրարու: Որովհետև ինքը ծնունդ է անապատի, որովհետև իր դա-

վանականը խիստ պարզ է ու մատչելի, որովհետև չի հարկադրիր որևէ լուրջ զրկանք ու պարտավորություն. ընդհակառակը, կխոստանա ամեն բարիք ու վայելք թե՛ այս և թե՛ մյուս աշխարհին մեջ, բավական է, որ հետևիս իրեն: Իսկ չհետևողը դուրս է ամեն օրենքե և իր անձն ու գույքը ուղղափառներու տրամադրության տակ. տիրե՛, խլե՛, առևանգե՛, ջարդե՛ ու հափշտակե՛ այսինքն՝ ամենաբնական բարոյականությունը ամեն մարդու, մանավանդ կիսավայրենի ժողովուրդներու. ուժի ու եսի բարոյականությունը, գիշատիչի հին ու հնավանդ իտեալը:

Եվ երբ արագ կերպով կսկսի աճիլ արաբական քաղաքակրթություն մը, արևելյան կյանքի ու ճաշակի, արևելյան մտքի ու զգացումներու նոր ու փարթամ ծաղկում մը՝ իր ձեռքն առնելով և՛ առեւտուր և՛ արհեստ, փիլիսոփայություն ու բժշկություն, և՛ գիտություն, և՛ արվեստ, անդին՝ արևմուտքի մեջ, միայն քրիստոնեությունն է, որ ապրած է հինի ավերակներեն և կամաց-կամաց կտարածվի ամբողջ Եվրոպայի ցամաքին վրա՝ հետզհետե ցածնալով ու հարմարվելով կիսակիրթ նոր ցեղերու ճաշակին ու բարքերուն: Եվ չատ չանցած Արևելք ու Արևմուտք գաղափարները կնույնանան մահմեդական ու քրիստոնյա բառերուն: Եվ կսկսի անհաչտ ու երկարատև կռիվը այդ երկուքին միջև դարեր ու դարեր հանուն քրիստոնեության և հանուն մահմեդականության, թեև այդ քրիստոնեությունը մեծ տարբերություն մը չունի մահմեդականությենեն: Որովհետև թե՛ Բյուզանդիոնը և թե՛ պապականությունը, թեև չարունակությունը հին արևմտյան քաղաքակրթության և ղեկավարը քրիստոնեության, բայց ինքնին իրենց ոգիով և ըմբռնումով դարձած են բոլորովին արևելյան:

Հիմքը հեղինակությունն է, քարացած տոկմանները և աստվածապետական սկզբունքները. նո՛ւյն սելը փարթամության ու վայելքի նույնիսկ հոգևորականության մեջ, նո՛ւյն ծարավը հափշտակելու ու ջարդելու և նո՛ւյն անհագուրդ վեճը աստվածաբանական նրբություններուն չուրջը: Պապականությունը բուռն ձգտում մըն է նմանվելու արևելքի խալիֆայության: Եվ ժամանակի ամենեն ավելի արևմտյան, ամենեն ավելի ծովային

ոչի ունենալով կատարը, այսինքն՝ լոմպարտական քաղաքները[23] *անոնք ալ նվազ արևելք չեն. նույն չունչը՝ ամեն տեղ:*

Դարաշրջանը վարողը Ասիան է: Երբ արաբներու ուժը կսպառի, մահմետականութեյան դրոշակը Մերձավոր Արևելքի տիրապետութեյան հետ կանցնի Սիջին Ասիայի անապատներեն դուրս հորդող թուրանական ցեղերու ձեռքը: Անոնք իրենց զարգացման ցած աստիճանովը ոչինչ չեն բերեր մահմետական քաղաքակրթութեյան, բայց իրենց խաչնարածի թարմ կուվասիրութեյամբ տեր կդառնան և՛ խալիֆներու հավաքած հոդամասերուն, և՛ արաբական ու պարսկական կուլտուրայի արտադրութեյուններուն, կքշեն մինչև Պոլիս, կտիրեն Պալքաններու, մինչև Դանուբի ջրերը և անկե անդին մինչև Վիեննայի պարիսպները. այսինքն՝ կհասնին Արևելքի հառաջխաղացման ամենալայն սահմաններուն:

Վայրկյան մը ամբողջ Եվրոպան Ասիայի սուրին ու սպառնալիքին տակն է: Հառակե ալ արագ կակսի անկումը Օսմանյան կայսրութեյան[24]*:*

Այսպեսով յոթներորդ դարեն մինչև տասնյոթերորդը, ուրեմն նորեն մոտավորապես հազարամյակ մը, Արևելքն է գերիշխողը և՛ իր գենքովը, և՛ իր դիրքովը, և՛ իր ըմբռնումներովը:

III. Արևմտյան նոր դարաշրջանը

Ժե-րդ. դարեն արդեն կամաց-կամաց կպատրաստվի Արևմուտքի նոր զարթոնք մը, արևմտյան մտքի ու արևմտյան մարդու նոր շարժում ու գործունեութեյուն: Եվ այդ զարթոնքը նորե՛ն չնորհիվ ծովերուն, մեծ ծովերուն, օվկիանոսին:

Փորթուգալն ու Սպանիան ծովային նոր համբաներ կփնտրեն, կուզեն հասնիլ Հնդկաստանի հարստութեյուններուն ու համեմներուն՝ ծովու ճամբով: Վասկո դե Կաման[25] *Աֆրիկայի շուրջը կընե և Եվրոպայի առաջին նավը կմտնե Հնդկաստան: Քրիստափոր Քոլոմպոսը*[26] *կձգտի ավելի կարճ ու շիտակ ճամբի՝ միշտ Արևմուտք երթալով Արևմուտքը հասցնել Արևելք: Կգտնվի և՛ այդ ճամբան. բայց մինչև այդ ճամբան գտնվիլը կբացվին*

Ամերիկան, Ավստրալիան և, եթե կուզեք, նաև Աֆրիկան, այսինքն՝ աշխարհիս ուղիղ կեսը:

Ինչ ցնցում մարքի ու հոգիի. ինչ չարժուամ. մինչնաւարյան ըմբռնումներու և ասիական հեղինակութեյան ամբողջ շենքն է, որ կփլի: Նո՛ր հորիզոններ, նոր երկիրներ, նոր մարդիկ, նոր բարքեր, նոր հարաւութեյուն, նոր բույսեր ու կենդանի. և հետզհետե նոր-նոր գաղութեներ, նոր խառնուրդ ժողովուրդներու, ապրանքներու, կյանքի ձևերու և հոգեբանութեյան: Եվ նոր մշակական հաղորդակցութեյուն այդ բոլոր նորութեյունները իրարու կապող, մի՛շտ ծովով: Ասպարեզը ծովու մարդունն է, գերիշխանութեյունը՝ ծովուն վրա ամենեն բարձր կարողութեյունը ցուցադրողին: Փորթուգալ, Սպանիա, Հոլանտա, Ֆրանսա ու Անգլիա կմրցին իրարու հետ. բոլորն ալ կապերին օվկիանոսին եզերքը, բոլորն ալ իրենց գեմքը դարձուցած են դեպի նոր երկիրները, դեպի նոր ծովերը, դեպի նոր ճամբաները, որ կառնին Ասիա:

Եվ ասկե ետքը մնծ ազգերու բաղդը կվճռվի ծովուն վրա, կռիվները կըլլան գաղութներու համար: Մնծ պետութեյուններու բարձրացումն ու անկումը կպայմանավորվին իրենց գաղութային քաղաքականութեյամբ, իրենց հզորութեյունն ու արտադրութեյունը կսնվին գաղութներու հարաւութեյամբ: Հազարավոր մղոններով հեռու կղզի մը, հանք մը, չուկա մը, հարմար դիրքով ծովուն մեջ ցցված ժայռի կտոր մը շատ ավելի մտիկ ու կարևոր է հաճախ, քան դրացի ընդարձակ տարածութեյուններ:

Այդ ծովային կռիվներուն, արշավանքներուն, երթևեկին, առևտուրին ու արկածախնդրութեյուններուն մեջեն ահա՛ կծնի նորեն Հի՛ն արևմտյան ոգին, Հի՛ն Հունահռոմայեցին, Հին եվրոպացի մարդը. միայն շա՛տ ավելի լայն հորիզոններով, շա՛տ ավելի լայն ազգութեյուններու մասնակցութեյամբ և շա՛տ ավելի լայն ու խոշոր աշխատանքով: Եվ բնական կերպով կվերակենդանանան Հին պետական ավելի ազատ ձևերը, Հին կրոնական ազատախոհութեյունը, Հին ժողովրդավար սկզբունքները, մարդկային արժանիքի ու բարձրութեյան Հին ըմբռնումը, Հին պաշտամունքը անհատականութեյան, Հին ուիրող Հոգին ու գործնական մտածումն ու

փիլիսոփայությունը, ինչպես և գործի, շարժման ու աշխատանքի սերը:

Եվրոպայի այս նոր բարձրացումը, որ ծայր կուտա ԺԵ ու ԺԶ-րդ դարերին և կամրանա ԺԷ ու ԺԸ-րդի ընթացքին, ԺԹ-րդ դարու սկիզբեն բացարձակ տերն է աշխարհքի:

Եվ այս նոր ու բուռն գործունեության դեմ, գիտության ու թեքնիկի այս հանդուգն զարգացման դեմ, պետական ու վարչական այս նոր ըմբռնումներուն ու կարգերուն դեմ և այսքան ազգերու միահամուռ ու միակամ արշավանքին ու կամքին առաջ Արևելքի կազմն ու ոգին անկարող էր դիմադրելու, մանավանդ իր արդի խարխլած ու հնադարյան վիճակին մեջ: Պետք է խոնարհեր գլուխը. և մանավորապես Եվրոպայի հի'ն ախոյանը՝ Մերձավոր Արևելքը: Բոլոր մահմետական պետությունները անխտիր կա'մ բոլորովին ենթարկվեցան եվրոպական իշխանության, կա'մ պահած են թեև արտաքին երևույթը անկախության, բայց իսկապես խաղալիքն են եվրոպական պետություններու. և եթե դեռ կտևեն, արդյունք է պարզապես եվրոպական պետություններու միջև եղած մրցակցության:

Այսպեսով՝ արևելյան ոգիի երկրորդ տիրապետությունը, այսպես ըսենք, մահմետական ծագումը, արդեն չատոնց փակված պատմություն մրն է, իր մոտավորապես հազար տարվան գերիշխանությենեն ետքը Արևմուտքի հանդեպ: Այդ գերիշխանությունը առնվազն երկու դարե ի վեր անցած է Եվրոպայի ձեռքը, ինչպես և մարդկային քաղաքակրթության ու հառաջդիմության ջահը:

Եվ ինչպես որ մահմետական հազարամյակին նույնիսկ մեր պապերն ու Բյուզանդիոնը, նույնիսկ Վենետիկն ու Ճենովան ու խաչակիրները[27] ենթարկված էին արաբական ու արևելյան ըմբռնումներուն, ձևերուն ու ոգիին, առանց գիտակցելու, մինչև անգամ մահմետականության դեմ կռվիլ ուզած միջոցին, այնպես ալ հիմա մահմետական երկիրները, իրենց գոյությունը պահպանել կարողանալու համար գոնե իբրև երկրորդական պետություններ, ստիպված են վոխ առնելու Եվրոպայեն գենքեր, մտքեր, հաստա-

աւելիւններ, պարպամնոնները ու տնտեսական ձևեր բոլորովին հակառակ իրենց էութեան ու հոգեբանութեան:

Բայց ուրիշ ճար չկա: Եվ ասիական ժողովուրդներեն միայն անո՛նք կրնան հիմա դեր մը խաղալ պատմութեան մեջ և արժեք մը ներկայացնել քաղաքակրթութեան համար, որոնք իրապե՛ս յուրացնել կարողանան արևմտյան ոգին: Մինչև հիմա միայն ճապոնն է այդ ժողովուրդը. և բացատրութենն ալ շատ պարզ, չէ՞ որ ծովու ազգ է. ան Եվրոպան է Ասիայի ամենաարևելյան ծայրին:

Արդյոք և այդ երկրորդ արևմտյան դերիշխանութեան ու քաղաքակրթութեան շրջանը ունենալո՞ւ է իր խորհրդավոր հազարամյակը, ինչպես եղեր է մինչև հիմա նախորդ կրկնակի փոխանցումներու ժամանակ, թե՞ տևելու է ավելի կարճ կամ ավելի երկար, հարց մըն է, որ զուշակութիւններու աշխարհին կպատկանի:

Այսքանը միայն կրնանք ըսել այժմ, որ սկզբնաձը դեռ խիստ նոր ու թարմ չարժուած մըն է, դեռ դարերու ապագա ունի իր առջևը և իրենց ուժերը դեռ լրիվին չգործադրած ժողովուրդներ կսպասեն հերթի:

Երբ Հոգնի ու խոնարհի անգլո-սաքսոն տարրը, եռևը կեցած է Գերմանիան և Հյուսիսը, խիստ աշխատող, մտածող, կազմակերպող ու ձեռնարկող ժողովուրդներ: Իսկ գերմաններուն եռևը՝ սլավոն տարրը, ռուսները մասնավորապես, այնպես որ դեռ շատ մեծ են եվրոպական մտքի ու ոգիի պահեստի ուժերը և պատմական հնարավորութիւնները:

Շարք մը գարերե եռքը հավանական է այս կամ այն ձևով կրկին վերադարձ մը պահպանողական գերիշխանութեան, ցամաքային ոգիին, ասիական տեսակետներուն. նորեն տեսակ մը նահանջ դեպի ետ, տեսակ մը էջքի ու հանգստի շրջան:

Թե ուրկե՞ պիտի փրթի վոթորիկը՝ իհարկե կպատկանի նորեն զուշակութեան աշխարհին: Եվրոպայի մեջ սուտ ու իրավ վախ մըն է եղած «դեղին վտանգեն», այսինքն՝՝ Հիմալայան պատնեշին ու չինական պարիսպներուն եռևը սուսիկ-փուսիկ կծկտած ժողովուրդներեն, որոնք քիչ-քիչ սկսած են խլրտիլ: Ո՞վ գիտե, արդյոք պատմական նոր պարմոնք մը ունենալու չէ՞, նոր Կոն-

Փուչյիոսով[28] *մը խթանված, այդ սարսափելի յուռ. 400 միլիոնը. և ոգողելու չէ՞ իր հեղինակության ու պահպանողականության պաշտամունքովը և անապատի ու սարավանդի իր հասկացողություններովը մինչև Ատլանտյանի ափերը:*

Այն ժամանակ մեր խեղճ անհատականության ու ազատամտության միակ փախուստի ճամբան կմնա իր ծովը. դեպի Ամերիկա, դեպի կղզիները:

Բայց ենթադրություններուն ներված խախուտ սահմանը չափեն ավելի անցած չըլլալու համար դնե՛նք վերջակետ:

Գ. ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

I. Իր բնորոշ գիծերը

Հիմա մենք կապրինք արևմտյան քաղաքակրթության և ծովու տիրապետության դարաշրջանին մեջ: Այդ դարաշրջանի սկիզբն ենք, այդ դարաշրջանի ելքին վրա: Ան իր բովանդակ ուժը, բովանդակ ծաղիկը չէ բացած դեռ. և հասուն պտուղը դեռ շատ է հեռու: Դեռ շատ կան նախորդ շրջանեն ու ցամաքային քաղաքակրթություններեն մնացած ձախորդ ու հետամնաց ժառանգություններ, որոնք պետք է ավլվին մեջտեղեն տեղ բանալու համար նորերուն ու ժամանակի պահանջին:

Եվ որովհետև ծովն է առանցքը արդի քաղաքակրթության՝ բոլոր ցամաքներն ու կղզիները ո՛չ թե ծովերով կբաժնվին իրարմե, ինչպես որ կըլլա ասիական տիրապետության շրջանին, այլ ծովերով կկապվին իրարու: Եվ կստացվի սերտ շփում ու գործակցություն աշխարհիս բոլոր մասերուն մեջև. քաղաքակրթությունը կդառնա համամարդկային, միջազգային, իրարու հյուսված, իրարու հագցված, իրարու կապված: Եվ հսկայական չափերու կհասնի միջազգային տնտեսությունը, որուն ազդեցությանը կենթարկվի ամեն ազգային տնտեսություն և ինքն ալ ակամա կձգտի միջազգային դերի:

Այդ համատարած կապն ու չփումը, այդ ապրանքներու, ձեռնարկներու, արտադրություններու դիշեր-ցերեկ պայար չունեցող երթևեկը խթան կդառնա ամեն հարստանալ ուզող, ամեն դեր խաղալ ուզող ազգի, որ պրաղվի ամենեն առաջ արդյունաբերութեամբ ու առուտուրով: Աշխատութեան չեչոը դաշտերու ցանքսերեն ու լեռներու արոտներեն կվոխադրվի գործարաններդ, նավահանգիստները և հաղորդակցութեան կապ ներկայացնող քաղաքները: Ու քաղաքները կդառնան աշխարհքներ, ուր տեղի նեղութենեն խեղճ բնակչութիւնը իրարու քով ապրելու անկարող՝ հարկադրված է ապրելու իրար գլխու:

Այս տնտեսութեան և այս երթևեկին թե՛ նոր-նոր նյութեր, թե՛ նոր միջոցներ հայթայթելու համար մարդկային միտքը լարված աշխատանքի վրա է: Եվ գիտակա՛ն աշխատանքի, այսինքն՝ բնութիւնը ուսումնասիրելու, և տեխնիկակա՛ն աշխատանքի, այսինքն՝ բնութիւնը կապկելու և իրեն ծառայեցնելու: Ասոր արդյունքն է, որ օր չկա, որ նորութիւն մը չբերե, որ նոր գյուտ մը չելլե մեջտեղ:

Նորելու, փոխելու, հնարելու, կատարելագործելու այդ անհանգիստ տենչը ընդհանուր է ամեն տեղ ու ամեն բանի մեջ ժամանակիս մարդուն հոգիին խորքը: Մեր դարը չեչոված հառաջդիմական դար է: Ամենքը առաջ կնային ու կճգտին դեպի վեր: Հոգիները սլացք ունին, հանդգնութիւն, վստահութիւն և հավատք մարդկային ուժին: Եվ ով ամենեն ավելի ունի այդ սլացքը, հանդգնութիւնը և հավատքը իր հոգեկան ուժերուն՝ ա՛ն է, որ կհաղթե այս դարաշրջանին մեջ:

Եվ ճիշդ այդ պատճառով մեր դարաշրջանը անհատականութեան դար է. հիմնական պահանջը՝ անհատի ազատութիւնը, հիմնական ճգտումը՝ բանա՛լ ճամբաները ամենուն առջևը. ըրպեսզի ամենքը կարող ըլլան դեպի վեր չարժվելու, ամենքը կարող ըլլան կրթվելու և ընտրելու իրենց հարմար եկող աշխատանքը, ամենքը կարող ըլլան գործադրելու իրենց չնորհքը, իրենց տաղանդը, իրենց ուժերը, ամենքը հնար ունենան լսելի ընելու իրենց ձայնը, ըսելու իրենց մտածումը, և ապագիզը բաց ըլլա ամեն մրցումի:

Տեմոկրատիզմ բառը կնշանակէ «ճամբա՛ տվիք ամենուն». և տեմոկրատիզմի իտեալն է՝ տա՛լ հնարաւոր լայն աստիճանը անհատներու ազատութեան, որպեսզի հանրութիւնը չահի. և օգա՛կի՛լ հանրութիւնը սերտ ինքն իր մէջ և զարգացնել համայնական դպացումն ու գործունեութիւնը, որպեսզի բոլոր անհատները օգտվին:

Այս ներքին դրդումներուն համեմատ ալ ձևվեր են ու կձևվին մեր արդի կառավարութիւնները և պետական կազմը: Գերագոյն սկզբունքն է բոլոր անհատներու մասնակցութիւնը, այսինքն՝ ժողովուրդի տիրայնութիւնը. ամեն ինչ ժողովուրդի համար ու ժողովուրդի կամքով: Որով ամեն պետական ու վարչական մարմնի հիմքը կդառնա ընտրութիւնը, ընտրական սիսթեմը, իսկ ձևը՝ ժողովը, ամեն տեսակի մեծ ու փոքր պարլամենտներն ու համաժողովները: Եվ դարուս բոլոր ներքին քաղաքական մաքառումներն ու հեղափոխութիւնները վերջ ի վերջո կդառնան այդ երեք իրարմե բխող իրավական գաղափարներուն տրվելիք իմաստին ու սահմանումին շուրջը. ժողովուրդ, ժողով և ընտրութիւն:

II. Ազգերու անկախացումն ու դաշնակցումը

Նույն ներքին զսպանակներուն համեմատ ալ ժողովուրդներու արտաքին քաղաքականութեան, գաղութներուն և իրար հետ ունեցած փոխադարձ հարաբերութիւններուն վրա տիրող սկզբունքը հետզհետե կդառնա ազգային գաղափարը: Նախորդ դարաշրջանին ժողովուրդներու ներքին քաղաքականութիւնը հիմնված էր տիրող թագավորական տան մը իրավունքներուն վրա, և ժողովուրդը ձայն չուներ, նույն էր և արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ: Այսինչ իշխող տունը խլելով կամ ժառանգելով տեր էր դարձած որոշ երկիրներու և ժողովուրդներու, առանց որևէ կարևորութիւն տալու այդ ժողովուրդներու ցանկութեան:

Բայց երբ կուգա ժողովուրդներու ինքնիշխանութեան գաղափարը, երբ քաղաքակրթութեան զարգացումը կսկսի պահանջել,

թե ժողովուրդ մը ի՛նքն է, որ պետք է որոշե իր կազմն ու կառավարութիւնը, բնականորեն ինքնին կուգա տիրված ու բռնի կերպով միացված ազգութիւններու անջատման պահանջը և նաև ազգութեան բռնի կերպով բաժնված մասերը միացնելու պահանջը. որով հետզհետե պատմութիւնն ու իրականութիւնը կբռնեն ազգային ճամբան, այսինքն՝ պետական միութեան հիմքը կնկատվի ազգային միութիւնը: Ամեն ազգ ինքն է տերը և ինքը պետք է ընտրե ինչպես իր ներքին կառավարութեան եղանակը, այնպես ալ իր պետական արտաքին վիճակը:

Այս ըմբռնումի առաջին արդիւնքն է բազմաթիվ «Հպատակ» ազգերու ազատագրվիլն ու առանձին պետութիւններ կազմելը ԺԹ-րդ դարու ընթացքին և այս վերջին պատերազմին իբրև հետեւանք: Այդ ուղղութեամբ աշխատանքը շարունակվելու վրա է. և մեր անկախութեան հարցն ալ հիմա հերթական է, ո՛չ միայն անոր համար, որ մենք կձգտինք և որ կան գուցե մեզի նպաստավոր ուրիշ ազգերու շահեր, այլև այն մեծ ընդհանուր պատճառով, որ մարդկային քաղաքակրթութեան դրած պահանջն է ատիկա. մեր ժամանակի ոգի՛ն է, որ կպահանջե:

Նաև ըմբռնումեն կբխի միջազգային քաղաքականութեան մեջ արմատ ձգող երկրորդ կարևոր երևույթ մը: Տիրապետութիւնը, ուրիշ ազգերու պլխուն տիրելը մեկ անգամեն միջտեղեն վերնալ չի կրնար. նախ՝ որովհետև ամեն պատմական երևույթ իրականութիւն կդառնա համառ դիմադրութեամբ և աստիճանական երկարատև զարգացմամբ. մյուս կողմեն ալ այդ դանդաղութիւնը որոշ չափով անհրաժեշտ է քաղաքակրթութեան զարգացմանը և ապահովութեանը համար: Այնպես որ տիրապետութիւնը դեռ երկար կմնա, բայց տիրապետութեան հին ձևը այլևս երկար մնալ չի կրնար: Բռնակալութիւնները, բացարձակ տիրապետութիւնները, ժողովուրդներու ստրկացումը, ապազգայնացումը և դիմազուրկ դարձնելը կնկատվին հակառակ դարուս ոգիին, իբրև թշնամանք մարդկութեան, իբրև արգելք քաղաքակրթութեան զարգացման և իբրև անբարոյական երևույթ:

Եվ ճիշդ ատոր համար ալ քաղաքակրթապես ամենեն բարձր կեցած ամենեն մեծ տիրապետութիւնը կջանա իր կայսրութեան

վրայեն վերցնել տիրապետական ու բռնակալական տեսքը և հետզհետե կվերածվի դաշնակցային ձևի՝ տալով իր հպատակ ժողովուրդներուն կա՛մ լայն ինքնավարութիւն, կա՛մ կեանկախութիւն, կա՛մ գոնե անկախութեան մը ապտաքին երևոյթը: Անխուսափելի կերպով Անգլիային հետևելու են այն մյուս ազգերը, որոնք գաղութներ ունին և հպատակ ազգեր, որովհետև անկարելի է դիմադրել հասունցած ըմբռնումներուն և ժամանակի հրամայական ստիպումին. քիչ մը ավելի ուշ կամ քիչ մը ավելի կանուխ, բայց բոլորն ալ պետք է երթան այդ ճամբով:

Տիրապետութիւններու դաշնակցային պետութեան վերածվելուն զուգահեռ և անոր աղդեցութեան տակ, տեսակ մը անոր մեծ ուժին հակակշռելու համար, արդեն ծայր է տված միջազգային երրորդ ըմբռնում մը, որ է փոքր ազգերու դաշնակցութիւնը, խմբակցումը՝ իրենց շահերը պաշտպանել կարողանալու համար, իրենց ձայնը անհրաժեշտ եղած չափով լսելի դարձնելու համար: Պալքանյան դաշնակցութիւնը[29], Փոքրիկ Անտանդը[30], Միջին Ամերիկյան դաշնակցութիւնը[31], Պալթիկ երկիրներու դաշնակցութիւնը[32], Կովկասյան դաշնակցութիւնը[33] այդ կարգի փորձեր են ու ճիգեր:

Եվ այս երկու ձևի դաշնակցային ուղղութեան քովեն կքալե չորրորդ միջազգային ձգտում մը՝ այդ բոլոր դաշնակցութիւններն ու ազգերը իրար կապելու համամարդկային մե՛կ և ընդհանուր դաշնակցութեան մը մեջ. այդ ձգտումի առաջին մարմնացումն է, թեև դեռ շատ թույլ ու թերի, Լեմանի[34] ափին տեղավորված Ազգերու լիգան:

Այսպեսով՝ ժամանակի ոգին մեզի կտանի մե՛կ կողմեն դեպի մանրացումը պետութիւններու, դեպի փոքր, անկախ ու ազատ ազգերու առաջացումը, և մյո՛ւս կողմեն այդ անկախ ազգութիւններու զանազան աստիճանի կապակցումն ու դաշնակցումը իրարու հետ:

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Ա. ԱՆԳԼԻԱՅԻ ՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱԿԱԴԻՐ ՉԳՏՈՒՄՆԵՐԸ

I. Ասիայի հարավը և Անգլիա

Եվրոպայի արշավը դեպի Ասիա սկիզբը ուղղված էր գլխավորապես Հնդկաստանի վրա: ԺԶ-րդ դարուն փորթուգալցիք էին. հոսանքը ավելի մեծցավ հաջորդ դարուն, երբ արևելյան ծովերու գերիշխանութեան հետ նաև Հնդկաստանի առուտուրը անցավ Հոլանտացիներու ձեռքը: Բայց թե՛ հարաբերութիւնները և թե՛ ընդհարումները տեղացի իշխաններուն հետ անհամեմատ ավելի չեչավեցան ֆրանսացիներու ժամանակ մինչև ԺԸ-րդ դարու կեսերը, ուրկե սկսած՝ առաջնութիւնը ծովերու վրա, ուրեմն և Հնդկաստանի չահագործումը կանցնի Անգլիային:

Եվրոպական այդ արշավը Ասիայի վրա իր իսկական լայն չափերուն կհասնի սակայն ԺԹ-րդ դարու ընթացքին, մասնավորապես չոգեմնքենայի գյուտեն ետքը: Իրար հետևե կգրավվին կամ մեծ պետութիւններու ազդեցութեանը կենթարկվին Հնդկաստանեն դեպի ավելի արևելք գտնվող երկիրները՝ Պիրման[35], Սիամ[36], Անամ[37] մինչև Չինաստան ու կղզիները:

Այդ միջոցին Անգլիան իր տիրապետութիւնը կտարածե ամբողջ Հնդկաստանի վրա մինչև Հիմալայի բարձունքները, որուն կմիացնե նաև Պիրմանը մեկ կողմեն, Պելուճը[38] մյուս: Միևնույն ժամանակ կքաշե հողը դեպի Հնդկաստան տանող կարճ ճամբուն: Իր ձեռքն են Ճիպրալտար, Մալթա, Եգիպտոս, Ատեն[39], այսինքն՝ բոլոր դռները, երբ կբացվի Սուեզի ջրանցքը[40]: Հերթը կհասնի Պարսից ծոցի ու ծովի արաբական ու պարսկական ափերուն, այսինքն՝ դեպի Միջագետք: Իսկ ով տեր է Եգիպտոսին ու աչք ունի Միջագետքի վրա՝ անհրաժեշտ է, որ ունենա Պաղեստինն ու Սյուրիան, միակ կապը, միակ ճամբան այդ երկուքը իրարու

գոդող. այդպես է եղած միշտ անցյալին մեջ, և այդ է պատճառը, որ Հրեաները Հայրենիք չունին:

Եվ ահա՛ այս համաշխարհային պատերազմը տվավ Անգլիային և՛ Միջագետքը, և՛ Պաղեստինը, և՛ հարկ եղած մասը Սյուրիայի: Այսպեսով Անգլիայի ազդեցության շրջանակը առանց ընդհատվելու կանցնի Հիմա Գապի[11] գլխեն ամբողջ Աֆրիկայի արևելյան մեջքովը, Նեղոսի հովիտով ու Հրեաստանով մինչև Միջագետք: Այս բոլորը Հնդկաստանեն բաժնողը Պարսկաստանի հարավն է. պարզ է, որ իմնալու է ան ալ Անգլիայի անմիջական ազդեցությանը տակ, որով անընդհատ կապը կհաստնի Պելուճ, Հնդկաստան ու Պիրման: Եվ չանցնիր մեկ-երկու տասնյակ տարի, որ անգլիական դիրեկտ վագոնին մեջ նստած կարելի պիտի ըլլա սանալ Աֆրիկայի հարավային ծայրեն մինչև Ասիայի արևելյան անկյունը մի՛չտ անգլիական վարչության ու վերին հսկողության հովանիին տակ:

Այս ընդարձակ աշխարհներուն մեջ կապրին բազմաթիվ բազմամիլիոն ժողովուրդներ. այդ ժողովուրդներուն մեկ մասը մասնավորապես Ասիայի մեջ եղած են երբեմն հսկայական պետություններ և ունեցեր են բարձր քաղաքակրթություն. և հիմա ալ ունին իրենց հատուկ արևելյան կյանքը, իրենց ուրույն իրավական, պետական ու վարչական ձևերն ու ըմբռնումները, իրենց տարածված ու վարգացած լեզուները, կրոնները, արվեստները և վարք ու բարքը: Եվ ժողովուրդներու այս ծովուն վրա տիրապետող անգլիական տարրը չնչին թիվ մըն է միայն, և ուրիշ բան ալ չի կրնար ըլլալ երբեք: Բուռ մը բարձրադիր պաշտոնյաներ ու դինվորականներ, այլև առևտրականներու ու արդյունաբերողներու խումբ մը, քիչիկ մըն ալ գործք, մանավանդ նեղ վայրկյաններուն. ահա՛ բոլորը:

Այնպես որ անգլիական տիրապետություն ըսվածը Ասիայի մեջ գաղթային վիճակ չէ, երկիրը հիմնված չէ անգլիական տարրին վրա: Անգլիացին ամբողջ հարավային Ասիայի վարիչն է, կառավարիչը, հրամայողն ու օգտվողը և այդ մտքով ալ տերը. բայց տանտերը չէ: Ավելի չուտ կապալառուի է նման: Եվ այդ աշխարհներուն մեջ իր ներկայությունն ու վարչությունը պարզա-

պես ջրհան մեքենայի պես բան մըն է կանոնավոր կերպով ու պիտական կատարելագործութիւնմբ քաշելու համար տեղական հարստութիւնները և, ընդհակառակը, ողողելու համար այդ երկիրները անպիտական գործարաններու արտադրութիւնմբ: Եվ այդ մեքենայի սկզբունքն է՝ հնար եղածին չափ քիչ մարդով, հնար եղածին չափ քիչ ծախսով, հնար եղածին չափ մեծ շահ: Եվ ատոր համար ալ ամեն չարժուսմ կկատարվի կշիռքով:

Անգլիացին իսկույն իր հետը կբերե կարգ ու կանոն, հանդիստ, համբաներ ու երկաթուղի, կապիտալ և աշխատանքի կազմակերպութիւն, լավ վճար, քանի մը կրթ. հաստատութիւններ՝ պաշտոնյա ու օժանդակներ հասցնելու համար իրեն. և այս բոլորը անշուշտ բարիքներ են տեղացիներու համար. բայց մնացածով այլևս չի հետաքրքրվիր: Իրենք իրենց մեջ կապրին իրենց անգլիական կյանքովը, իրենց անգլիական հաղմարութիւններով, բոլորովին կտրված տեղական ժողովուրդեն. և չափազանց ալ բարձրեն կնային տեղացիին վրա: Շատ խոր և շատ մեծ վիհ կա տիրողի և տիրվածի կյանքի, հոգիի ու ապրուստի եղանակներուն մեջ. անլցելի՛: Անգլիացին միշտ օտարական մըն է իր ասիական տիրապետութիւններուն մեջ և ատված, չսիրված օտարական մը. բան մը, որ անգլիացիին համար ոչ մեկ կարևորութիւն չունի. բավական է, որ Հանդիստ մնան տիրվածները: Անգլիացին այդ ժողովուրդներու ո՛չ վճացումը կուզե, ո՛չ ալ անգլիացումը. ո՛չ այդ ժողովուրդներու բարձրացմանը համար շատ հոգ կտանի, ո՛չ ալ զարդացմանը. իր միակ ուզածն է, որ տնտեսական օգտագործման իր լարած մեքենան կանոնավոր ու անարգել բանի: Եթե երբեմն մասնավոր ճնշումներ գործ կդնե կամ բացառիկ հոգածութիւն ու օժանդակութիւններ ցույց կուտա տեղացիներուն հանդեպ՝ դրդիչ պատճառը միշտ նույնն է. մեքենան պետք է լավ բանի:

Նույն պատճառով ալ հաճախ շատ ավելի ձեռնտու է իրեն իր դեմը ունենալ կիսանկախ ինքնավարութիւններ, քան պարզ ու անմիջական իր տիրապետութիւնը. երբ մանավանդ մեծ ծախքերու, մշտական դժգոհութիւններու և զորամասեր դրաղեցնելու հարց կա մեջտեղը: Թող երթան ապրին, ինչպես որ կուզեն, թող

ըլլան «անկախ» և իրենք իրենց մէջ պետութիւն խաղան. հերիք է, որ բոլոր կարևոր հարցերուն մէջ իր «ներկայացուցիչներու» կամքեն ու հրահանգեն դուրս գալ չկարողանան, հերիք է, որ իր նավերուն, երկաթուղիներուն ու տնտեսական ձեռնարկներուն առջևը ճամբան լայն բաց ըլլա և, ընդհակառակը, մյուս մրցակիցց ապրերուն առջևը ճամբաները պինդ գոցվին:

Այս տեսակ դանագան ձևի ու մեծութեյան «կախյալ անկախութեյուններու» ահագին հավաքածու մըն է Հնդկաստան ըսածը: Այս տեսակ կախյալ անկախութեյուններ են հիմա Միջագետքը, Պաղեստինը, Արաբիան, Եգիպտոսը Մերձավոր Արևելքի մեջ: Այդ տեսակի փորձ մըն է Ատրպէյջանի, Վրաստանի ու Հայաստանի կախյալ անկախութեյուններու պաշտպանութեյունը Կովկասի մեջ: Այդ կախյալ անկախութեյան վիճակին բերելու ճիգ մըն էր Պարսկաստանի հետ կապած ու քանդած վերջին դաշնագիրը: Նույն կախյալ անկախութեյան գիրկն էր, որ ան կհրեր երեկ Ավղանիստանը և ուր հրե պիտի վաղը Թուրքիան:

Այսպեսով՝ Ասիայի ամբողջ հարավին վրա իր թաթը դրած է Անգլիան: Կազմելով հսկայական տնտեսական ու վերին վարչական ամբողջութեյուն մը անգլիացիներու ձեռքով ու Անգլիայի համար: Եվ իրարմե կտրված, հաճախ հակադիր, մանր ու մանրուք տեղական կառավարութեյուններ, սահմաններ ու տնտեսութեյուններ տեղացիներու ձեռքով ու տեղացի ժողովուրդներու համար:

II. Ռուսաստանն ու ռուս ոգին

Ժ.Զ և Ժ.Է-րդ դարերեն կսկսի նաև Եվրոպայի արշավանքը Հյուսիսային Ասիայի վրա. արշավողն է Ռուսաստանը: Իսկ նույն Ժ.Թ-րդ դարու ընթացքին, երբ Անգլիան կճգնի ամբողջ Հարավային Ասիան իր իշխանութեյանը ենթարկելու, Ռուսաստանն ալ առաջ կչարժվի Հյուսիսեն, կլրացնե Արևելյան Սիպիրի գրավումը, կհասնի Ծովուն, կանցնի Կովկասյան լեռները, կտեղավորվի կամաց-կամաց Մերձավոր Արևելքի եզերքին և կվերցնե ամբողջ Միջին Ասիան:

Իսկ ի՞նչ բան է ինքը Ռուսաստանը:

Ռուսաստանը հողի այն ընդարձակ կտորն է, որ կկապե Ասիան Եվրոպային, և շատ դժվար է որոշել՝ Ասիայի՞ն կպատկանի, թե՞ Եվրոպային: Եվրոպայի ամենեն ասիական մասն է, քանի որ ահագին ցամաքային զանգված մը կկապմե և կտրված է ազատ ծովերե: Բայց Ասիայի համար ալ իսկական Ասիա չէ, ո՛չ անապատ ունի, ո՛չ ալ լեռներ ու լեռնաղաչտեր, այլ ընդարձակ ու անսահման տափարակ մը առատ ու ջրդի գետերով, հողը բարեբեր, որով և ժողովուրդի հիմնական աշխատանքը դարձած է երկրագործությունը, որ ասիական քաղաքակրթության վրա դրած է իր անջնջելի կնիքը:

Կանոնավոր, միակերպ ու հողին կապված աշխատանքն ու սպրուստը անշուշտ ռուսին ալ ուժեր են դանդաղկոտություն ու պահպանողականություն, եղածին կապված մնալը, տիրողներուն հպատակվիլը և իր կյանքին ու վիճակին վրա տեսակ մը ֆաթալիստ[42] հայացք, որը միշտ ու ամեն տեղ հենարանն է բռնակալության ու տգիտության: Ռուսը իր հոգիին այդ գծերովը դեպի Արևելք կհակի, մանավանդ որ մշտական հարաբերության մեջ է եղած իր ասիական հարևաններուն հետ, երեք դար կրեր է թաթարին լուծը և իր արիական երակներուն մեջ շատ ունի մոնգոլական արյուն:

Բայց իր ընդարձակ ու անվերջ տափաստանները, ուր որ նայիս՝ նո՛ւյն ու միօրինա՛կ, և՛ սիրելի, և՛ ճնշող միաժամանակ, դրեր է իր բնակչության վրա տխրության ու ձանձրույթի չեշտ մը, որ անոր երիտասարդ հոգիին մեջ կառաջացնե խորին պահանջ մը դուրս գալու այդ ձանձրույթեն ու միօրինակութենեն. և կուտա անոր հոգեկան անհանգստություն մը, հոգեկան չարժունություն մը, ուրիշ բան մը գտնելու, ուրիշ բան մը ճարելու, այդ սովորականեն, այդ տափերեն ու տափարակներեն ավելի անդին ու ավելի վեր: Ռուսի հոգին որոնող, պրպտող, ինքզինքը քրքրող գիծ մը ունի, կարծես քար մը կա իր խղճին վրա: Եվ միևնույն ժամանակ փովելու, հոսելու, տարածվելու հակում մը, որ արդյունքն է այդ որոնումին, իր հարթ հողին, իր մեծ թվին ու իր երիտասարդության: Հոգեկան այդ անհանգստությունն ու տարածականությու-

նը, որ համրա կրանա արկածախնդրութեան ու ձեռնարկութեան, ռուսին չատ կմոտեցնե արևմտեան հոգեին: Միայն կա հիմնական տարբերութիւն մը. իր առած չարժուն ու քայլերը չատ ավելի նվա՛զ գործնական են, որովհետև օրվան անմիջական պետքեն չէ, որ կրխին. և չա՛տ ավելի կրավորական են՝ ենթարկվելով շրջապատին ու կողմնակի մղումին. կգտորվի, որովհետև թեք է գետինը:

Անգլիացին երբ կետ մը, անկյուն մը կվերցնե կամ կթողնե, կմոտենա կամ կհեռանա, միշտ հաշիվ կա մեջը, որոշ ու գործնական. կա՛մ նավթ է, կա՛մ բամպակ, կա՛մ պղինձ, կա՛մ չուկա, կա՛մ դիրք է, կա՛մ դուռ, կա՛մ հենարան: «Ձեռքս կհասնի, ուրեմն վերցնեմ» նշանաբանը, եթե որևէ դեր ալ կխաղա, համենայն դեպս չատ երկրորդական: Իսկ երբ Ռուսաստանը կքշեր դեպի Միջին Ասիայի խորքերն ու անապատները, դեպի Արալ, դեպի Խիվա[13], Բուխարա[14], Սմրղանդ[15], անոր այդ քայլերը ղեկավարող մարդիկը իհարկե չէին մտածեր Թուրքեստանի բամպակի մասին, և եթե բացի տիրելու տենչեն ուրիշ բան մը կմտածեին, մտածմունքնին այն էր, թե այդ երկիրներուն ետևը կա աշխարհ մը, որուն անունը Հնդկաստան է և որ կգտնվի անգլիացիներուն ճանկը և որ պետք էր խլել անգլիացիներուն ճանկեն: Ինչպես որ երբ դեպի Կովկաս կուգային, Բագվի հանքերը չէին իրենց դրդիչը, որը դեռ ևս չորս պատի մեջ մշտավառ պաշտամունքի առարկա մըն էր տեղացիներուն համար:

Դրդիչը պարզապես տիրելու, տարածվելու, մեծնալու պահանջն էր, նոր երկիրներու յուրացումը, կլանումը, ռուսացումը: Անգլիացին չահագործելու համար կուգա. ատոր համար է, որ եթե հարկ եղավ, կբավականանա «ազդեցութեան շրջանակով», տիրապետութեան ժամանակ ալ միշտ աթոռին ծայրը նստած հյուրի մը պես է: Ռուսը, երբ կքալե երկրի մը վրա, կուգա տեղավորվելու համար, Ռուսաստան չինելու. չահի, հանքի ու ապրանքի հաշիվները ետևեն կուգան, հետևանք են տիրապետութեան և ո՛չ պատճառ: Ռուսը առաջ կչարժվի առանց երկար-բարակ մտածելու, առանց ինքն իրեն պարզ հաշիվ տալու. դեպքերն են, որ կվարեն, բնազդներն են, որ կհրեն:

Եվ բանակներուն եռանդն կամաց առաջ կսահի ինքը ժողովուրդը՝ իհարկե վայելելով նոր տիրված երկիրներուն մեջ առավելութիւններ, հողերուն լավ մասը, առանձնաշնորհումներ: Որով և ռուսը իր տիրապետութեան բոլոր անկիւններուն մեջ իր տանն է: Ու կսկսի նշանավոր խմորումը:

Ուր ժողովուրդները նախնական վիճակի են դեռ, ցրիվ, փոքր ու անկազմակերպ, տիրվածներու կյանումը ու յուրացումը կկատարվի ինքնին, առանց ավելորդ աղմուկի ու առանց մասնավոր ջանքերու. կաշխատի ամենակարող ժամանակը: Իսկ երբ նոր տիրապետութիւնը կզարնվի ավելի մեծ ու ավելի բարձր քաղաքակրթութեան հասած ու ավելի կազմակերպված ժողովուրդի մը, հարկ կզգացվի օժանդակ միջոցներու: Եվ մեջ կուգա ազգային ճնշումներու, սահմանափակումներու, արգելքներու ու հալածանքներու ամբողջ ծրագիրը իր պանապան աստիճանավորութիւններով՝ նայելով տեղին, պայմաններուն ու ժամանակին:

Ռուս կառավարութեան թափած այդ ջանքերուն մասնավոր կերպով կնպաստեն տիրող ու տիրված տարրերուն մշտական ու խառն կենակցութիւնը և երկուքի ապրուստին ու քաղաքակրթութեան աստիճանին ու վիճակին մեջ մեծ տարբերութիւն մը չգտնվիլը. որու հետևանքով չափազանց պարզ, հավասար և ընտանի կդառնա տիրող ու տիրված ժողովուրդներու փոխադարձ շփումն ու վերաբերումը: Նույն ռուսական կրթութիւնը նույն կրթական հաստատութիւններուն մեջ, որով ստիպված է անցնելու ամեն մեկը, որ դիրքի մը կձգտի, ավելի ևս իրարու կկապե աճող սերունդները և ընդհանուր հակումներ կուտա անոնց. իսկ խառն ամուսնութիւնները կլրացնեն պատկերը:

III. Ռուսաստանը Մերձավոր Արևելքի մեջ

ԺԹ-րդ դարու սեմին ռուսները ուռք դրին Կովկաս, հյուսիսեն նայած՝ Անդրկովկաս: Դերբենտ, Շիրվան, Կուրի Հովիտ, Թիֆլիս ու Վրաստան իրենց քնական առաջացումն է: Կուրի Հովտին տիրողը պետք է տիրե և այդ Հովտին վրա տիրող լեռներուն՝

Ղարաբաղ, Ղափախ ու Լոռի. իսկ ով տեր է հայկական բարձրավանդակին՝ անխուսափելի կերպով պետք է իջնի մինչև Արաքս. այս բոլորը կատարված իրողություն էր արդեն 1827-ին:

Պարսկաստանի հետ առայժմ իր հաշիվը մաքրելեն ետքը, հերթը կհասնի Թուրքիային: 28-ի և 77-ի պատերազմները Ռուսաստանին կկցեն ամբողջ Կարսի նահանգը և Աճառիան[46]: Եվ պարզ էր ամենուն համար, որ ասիկա առաջին հանգրվանն էր միայն:

Արարատյան դաշտի միջով չինվող երկաթուղիի երկու ճյուղավորությունները դեպի Սարը-Քամըշ[47] և դեպի Ջուլֆա, երկու սլաքներու նման, ցույց կուտային ռուս դիտավորություններու ուղղությունը: Եվ վերջին պատերազմի միջոցին ռուս-թուրքական սահմանը իրավ որ նահանջեց մինչև Եփրատ ու Տրապիզոն՝ ամբողջ «Թուրքահայաստանը» թողնելով ռուսներուն, մինչև պոլշևիկյան քայքայումը:

Եվ այդ հարցը դեռ բայց հարց է, հակառակ թուրքո-պոլշևիկյան բոլոր սիրաբանություններուն ու պինդ-պինդ կնքված դաշնագիրներուն: Ռուսներու չարժումը դեպի Պարսկաստան նմանապես հասած չէ իր վերջնակետին: Ռուսներու ջերմեռանդ «պաշտպանությունը» Ուրմիայի շրջանի քրիստոնյաներուն, երկաթուղիի գծին մինչև Թավրիզ երկարիլը հերիք էր ինքնին: Բայց կա մեջտեղ և անգլո-ռուս համաձայնությունը իր «ազդեցության շրջանակներով»: Որ Ավղանիստանի վրա ալ իրենք «իրավունքներ» ունին՝ ռուսները երբեք չեն ծածկած:

Այսպեսով՝ Մերձավոր Արևելքի մեջ Միջերկրականեն մինչև Հիմալայա ամբողջ գծին վրա երկու չատ որոշ չարժում կա: Հարավեն անգլիացիք կամաց-կամաց կձգտին տարածելու իրենց տիրապետությունը կամ ազդեցության շրջանակը՝ հասնելու համար իրենց բնական սահմանին, որ և Եվրոպայի սահմանն է և ռուս տարրի սահմանն է, այսինքն՝ Սև ու Կասպից ծովերուն, կովկասյան լեռներուն և թուրանական հարթերուն: Իսկ ռուսները հյուսիսեն արդեն չատոնց անցեր են այդ անգլիական բնական սահմանը և կձգտին ավելի վար, ավելի հարավ, մինչև... մինչև իրենց բնական սահմանը:

Ռուսաստանը ամեն կողմն դնելի ծովերը կհասի. բայց հյուսիսային ծովերը պիտանի չեն, արևելքի ծովերը խախուտ են Չինի ու Ճափոնի պատճառով և հեռավորության, արևմտյան ծովը չատ նեղ է և կոկորդը սեղմված է գերման ժողովուրդներու ձեռքին տակ, իսկ Ռուսաստանին պետք է ազատ ու բաց ծովը. արդեն ինքն ալ կզգա, որ ինչքան կուզե մեծ ըլլա իր ցամաքային զանգվածը՝ ինքը դեռ այն իսկական մեծ պետությունը չէ. իսկական մեծության հասնելու համար պետք է իրեն ծովը:

Իսկ ազատ ու բաց ծով ունենալու համար կինչանակե Թուրքիայի գրավումը: Նույնիսկ Պոլսին ու նեղուցներուն տեր դառնալը կըլլա խախուտ ու ժամանակավոր հաջողություն մը առանց Փոքր Ասիային տիրելու: Որպեսզի համաշխարհային ծովերուն վրա ռուս դրոշակը հաղթական ծածանիլ կարողանա, անհրաժեշտ է, որ ռուսական երկաթուղին Էրզրումի ու Անգորայի[18] վրայով հասնի իր բնական ծայրակետին՝ Յումուրթալըք և Հայտար փաշա[19]՝ Կիլիկիա և Մարմարա: Իր իշխանության տակ մոտ քսան միլիոն թուրքական զանգան ցեղեր ունեցող պետության մը համար բնավ արտասովոր երազ մը չէ եղածներուն վրա 4-5 միլիոնի չափ այ օսմանցի թուրք ավելցնելը:

Պարսից ծոցի հարցը քիչիկ մը ավելի հեռավոր է և ավելի մեկուսի և ոչ անմիջական. բայց որ ռուս քաղաքական երևակայության դեմ Հնդկական օվկիանոսի ալիքներն այ կծփան, չափազանց բնական է: Օմանի[20] ու Պարսից ծոցերուն հասնիլը միևնույն է, թե ուզիդ մեկը դնես Հնդկաստան. այն նշանավոր Հնդկաստանը, որուն վրա միշտ իրենց աչքը անկեր են բոլոր լայնակոկորդ տիրապետողները Ալեքսանդր Մակեդոնացիեն սկսած մինչև Անգլիա և Ռուսաստան:

Ռուսները ունին իրենց բնական սահմանը, որուն մեջ կմտնեն բավական հողեր, որոնք արդեն անցած են կամ անցնելու վրա են անգլիական ազդեցության գծին մեջ: Անգլիացիք ունին իրենց բնական սահմանը, որուն հողերեն խոշոր կտորներ ռուսներուն ձեռքն են հիմա և բաց թողնելու բնավ տրամադրություն չունին: Ուրիշ խոսքով՝ արևմտյան երկու մեծ պետություններ, մեկը՝ ամենեն ցամաքայինը և ամենեն խոշոր զանգվածը, մյուսը՝

ամենեն ծովայինը և ամենեն լայնածավալը, կեցած են Մերձավոր Արևելքի մեջ դեմ դեմի՝ բռնած իրենց դիրքերը և պատրաստվելով նոր հարձակումներու, մեկը՝ ծովեն դեպի ցամաք, մյուսը՝ ցամաքեն դեպի ծով:

Թե ինչո՞վ կվերջանա Մերձավոր Արևելքի այս հյուսիս ու հարավի ընդհարումը, այս նոր տեսակի Իրան ու Թուրանի կռիվը, և ո՞վ է ըլլալու հաղթողը այս դարավոր գոտեմարտին մեջ, Ռուսաե՞ն, թե՞ Զոհրաբը[51], անշուշտ կպատմե օր մը կես-հնգ-նանքով ու կես-կարևկցոտ ապագա մեծ Ֆիրտուսին[52]:

Հիմա մեզի համար կարևորը, և չափազանց կարևորը, ինքը իրողությունն է: Մերձավոր Արևելքի բոլոր կետերուն վրա, Միջերկրականեն մինչև Հիմալայա, դեմ դեմի են ռուսն ու անգլիացին: Եվ Մերձավոր Արևելքի բոլոր խնդիրները, առանց բացառության, բոլոր բաց ու գոց հաշիվները, բոլոր առնված չիտակ ու երկմիտ քայլերը, բոլորը սերտ կապված են այդ երկու հակամարտ ձգտումներուն:

Թուրքիա, Հայաստան, Վրաստան, Ատրպեյջան, Քյուրտիստան[53], Պարսկաստան, Ավղանիստան, նաև Միջին Ասիա, այն նույն երկիրներն են, որոնք անմիջապես առարկա են այդ երկուքի վեճին ու ախորժակին: Եվ այս երկիրներուն մեջ ո՛չ մեկ քայլ, ո՛չ մեկ չարժում կարելի չէ, որ անմիջապես չի հուզե կամ չի քսվի թե՛ հյուսիսի, թե՛ հարավի հաշիվներուն. կամ ավելի ճիշտը խոսած՝ որ չի բխի կա՛մ հյուսիսի, կա՛մ հարավի ձգտումներեն ու դրդումներեն, ինչքան ալ որ արտաքուստ այդ երևույթը չունենա:

Եթե չըլլար Անգլիայի դեպի հյուսիս ձգտումը, ռուսները վաղուց հասած կըլլային Պոլիս, Իզմիր, Կիլիկիա, Պասրա[54] ու Պուշիր[55]: Եթե չըլլար ռուսական ձգտումը դեպի հարավի ծովերը, Անգլիան հիմա չատոնց հասած կըլլար իր բնական սահմանին և բոլոր մեր դրացի երկիրները, մեզի հետ միասին, ենթարկած իր տնտեսութեանն ու հրամանին: Եթե դեռ «ազատ» Ավղանիստան մը կա, եթե դեռ Պարսկաստան մը կա աչխարհիս երեսին ճգված իր բաղդին, եթե դեռ Թուրքիա մը կա, որ կհոխորտա և, նոր ծեծ կերած երեխայի մը պես, իր տան կտուրեն բռունցք ցույց կուտա

Եվրոպային, պատճառը այն է, որ մեկ Հարսին երկու փեսա կա մեջտեղը:

IV. Մյուս շահագրգռված պետություններում դիրքը

Անգլիային ու Ռուսաստանին զատ իհարկե կան և ուրիշ պետություններ, որոնք շահեր ու հաշիվներ ունին Մերձավոր Արևելքի մեջ:

Գերմանիան վերջին պատերազմեն առաջ սկսած էր լուրջ մրցակցություն մը այդ երկուքին. և իր ծրագրին հիմքն էր՝ ամեն կերպով օգնել Թուրքերուն և առաջն առնել, որ նոր հողամասեր չանցնին Անգլիայի ու Ռուսաստանի ձեռքը, և իրենց այդ օժանդակության ու «բարեկամության» փոխարեն իրենց տնտեսական ու քաղաքական ազդեցությունը տարածեն այդ երկիրներուն վրա:

Իր վերջին պարտությամբ և Ավստրիայի կործանումով, որ գերման տարրի դեպի Արևելք շարժման կասեցումը ըսել է, և սլավոն պետություններու վերահաստատումով հիմա չատ է կտրված Ասիայեն: Մինչև հիմա Գերմանիան տարածված էր և մեծցած՝ դրացի սլավոն ցեղերն ու տարրերը ուտելով և անոնց հողերը խլելով: Այնպես որ անոր մեջքին փաթթված արդի սլավոն պետություններու գոտին երկար ժամանակվան համար բավականաչափ զբաղում ու աշխատանք կուտա անոր և բավականաչափ ամուր արգելք է անոր դեպի Փոքր Ասիա խոյանքը զսպելու համար: Թեև անշուշտ միշտ պետք է մատ խառնե հոնտեղի գործերուն մեջ և միշտ պետք է թուրքերուն օժանդակի մե՛րթ Անգլիայի, մե՛րթ Ռուսաստանի դեմ:

Գալով Գերմանիայի հինավուրց ախոյանին՝ ինչքան ժամանակ որ ֆրանսացիք պինդ նստած են Ալեքսանդրետի[56] ծոցին խորքը, չեն կրնար չհետաքրքրվիլ Կիլիկիայով և ետևի եփրատյան հողամասերով: Այսօրվան ֆրանքո-թուրք մտերմությունը օրվան քաղաքականություն է, ինչպես և օրվան քաղաքականություն է ռուսևթուրք սիրաբանությունը՝ Անգլիայի վրա ճնշում բանեցնելու դիտավորությամբ, ամեն մեկը իր հաշվին: Թուրքերը ռուս-

ներուն դեմ ունեցած իրենց բնական առելութեամբ ու բնական վախով մշտական և սրտակից դաշնակիցներ են Գերմանիային:

Գերմանիան, նմանապէս, վախ ալ ունի, առելութիւն ալ Ռուսաստանի հանդէպ, որը կարտահայտվի ցուցադրված արհամարհանքով: Ռուսաստանը Գերմանիային ավելի բեղուն ու բազմաթիվ, Գերմանիային ավելի թարմ ու երիտասարդ, սպառնալից թաթ մըն է Գերմանիո թիկունքին, ճիշդ այնպես, ինչպես որ Գերմանիան ինքն է մշտական սպառնալից թաթ մը Ֆրանսայի թիկունքին՝ միևնույն պատճառով: Իսկ ով Գերմանիայի բնական դաշնակիցն է, Ֆրանսացիի սրտին մէջ իսկական համակրանք չի կրնար ունենալ: Եվ վերջապես, ի՞նչ արժեք ունին և՛ բարեկամութիւնը, և՛ դաշնագրերը, երբ այնտեղ Կիլիկիայի բամպակը կա և Արղանայի[57] հանքերը. Կիլիկիայի ապագան դեռ բաց հարց է:

Ֆրանսան հիմա չկրցավ ու չուզեց երկար կռվըտուքի մեջ ըլլալ թուրքերուն հետ, զորք ու դրամ վատնել և մեծ ուրախութիւն պատճառել իր հակառակորդներուն. ընդհակառակը, այն անախորժ բեռը Անգլիայի վիզը նետելու չարախնդութիւնեմբ լքեց առայժմ և՛ պղինձը, և՛ բամպակը, և՛ իր «առպետական» խոստումները հայ ժողովուրդին ու հայ կամավորներուն: Բայց երբ վաղը մեկ ուրիշը իջեցնե նոր հարված մը Թուրքիային, Ֆրանսան հոն է, ինքն ալ պատրաստ միջամտելու և իր «դարաւոր» իրավունքը պահանջելու, իր բամպակը և իր Արղանան:

Ուրիշ խոսքով՝ ավելորդ պատառի քաղաքականութիւն, «ինչո՞ւ Անգլիային ետ մնամ»-ի քաղաքականութիւն, որը միշտ իբրև երկրորդական, քովընտի երգի կտոր մը, հնչե պիտի փոքրասիական ամեն երաժշտութեան միջոցին՝ խառնակելով ու պղտորելով հիմնական եղանակին հստակութիւնը:

Երրորդ մեծ պետութիւնը, որ Մերձավոր Արևելքի հանդեպ հիմա մասնավոր հետաքրքրութիւն ցույց կուտա, Ամերիկայի Միացյալ Նահանգներն են, ուր դրամատիրական ազդեցիկ խմբակ մը կջանա մղելու իր կառավարութիւնը մոտավորապես նույն դերը խաղալու Փոքր Ասիայի մեջ, ինչ դեր որ կխաղար առաջ նման դրամատիրական ազդեցութիւններու տակ:

Ասոնք կցանկան, որ, ինչքան հնար է, չատ բան մնա Թուրքիային և ազատ ամեն անտեսական պարտավորութիւններե դեպի ուրիշները, որպեսզի գան իրենք իրենց Թուրքիայի «բարեկամն» ու «վերաշինողը» և շահագործեն իրենք: Ասոնց համար Հայը, Թուրքը, քիւրտը, Հույնը Թվանշաններ են միայն, ստեղծված Բարձյալի անքննելի կամքովը անոնց գրպանի միլիարդները բազմապատկելու համար:

Երեկ, երբ Թուրքի քիմը գետին կքսվեր, մի՛ծ, մի՛ծ Հայաստան մը կուգային անոնք, ոչ միայն «ծովե ծով», այլ մինչև Կասպից ծով: Ա՛յ, այն ժամանակ Ամերիկան Հանձն կառներ Հայաստանի մանդատ[58] և կուգար «վերաշինելու». և իրնչ Հայաստան. ընդարձա՛կ ձեռնարկութիւն մը: Մանր գործերու հետ գլուխ չունին ամերիկացիք. խոշոր ձեռնարկութիւններ ու խոշո՛ր տոկոսներ:

Այսօր, որ Թուրքի քիմը տնկված է բոլոր Հովերուն, նշանաբանն է Մե՛ծ Թուրքիա մը. և իհարկե նորին չատ աղեկ կըլլար մինչև Կասպից ծով, Բագվի ու Մուսուլի[59] նավթերն ալ մեջը: Այսպեսով՝ հակառակ ամերիկյան ժողովուրդի մեզ հանդեպ ցույց տված համակրական վերաբերումին և նյութական անգնահատելի նպաստին, Ամերիկայի կառավարութիւն բռնած դիրքը մեզի համար կրնա դառնալ ճակատագրական: Ո՛չ անոր համար, որ Միացյալ Նահանգները տվին մեզի հաստատ Հույսեր, ձգձգեցին, ուշացուցին ու լքեցին՝ խմցնելով բաղդեն զարնված ժողովուրդի մը հիասթափութիւն և հուսահատութիւն դառն բաժակը. այլ որովհետև այդ դրամատիրական խմբակի հաշիվները կրնան բերել մեզ հայութիւն վերջնական փլուզումը: Անոնք իրենց լայնարձակ ձեռնարկութիւններու սիրուն՝ թե կուտան, սիրտ կուտան Թուրքերուն շարժվելու դեպի Կովկաս և ազատելու այդ երկիրները «պոլշևիկներու անիծված լուծեն». իսկ մենք լավ գիտենք, թե ինչ ըսել է հայութիւն համար Թուրքիայի Կովկաս մտնելը:

Ինքնին Ամերիկայի տնտեսական ու քաղաքական ներկայութիւնը Մերձավոր Արևելքի մեջ կրնար չատ օգտակար փոփոխութիւն մը մտցնել այնտեղի ուժերու ու ձգտումներու դասավորման մեջ, եթե ատիկա ըլլար լուրջ պետական ու քաղաքական

քայլ մը: Բայց դժբաղդաբար Միացյալ Նահանգներու ո՛չ քաղաքականութիւնը, ո՛չ ալ ներկայութիւնը մեր սահմաններու վրա վայելելու հույսը կրնանք ունենալ, բայց անոնց ընձեռած միլիոններով կատարելագործված թնդանոթներ ու դիպուկած ախորժակներ: Ուրիշ խոսքով՝ ամերիկյան որոշ քաղաքական ձգտում չէ մեր դեմը եղածը, այլ օրվան դեպքերուն կապված տնտեսական անկայուն խաղեր:

Կա և Հունաստանը, թեև ոչ մեծ պետութիւն, բայց մյուսներեն անհամեմատ ավելի սերտ կերպով կապված Մերձավոր Արևելքին թե՛ իր անցյալովը, թե՛ ներկայովը և թե՛ ապագայովը: Իհարկե, մեծ միամտութիւն կըլլա երևակայելը, որ թուրքերը «ծովը թափեցին հույները» և հարցը փակվեցավ. որ թուրքերը ավլեցին ու սրբեցին ամբողջ Փոքր Ասիան ու Հայաստանը հույներեն ու հայերեն և հարցը փակվեցավ: Պատմութիւնը շատ է տեսեր այդ կարգի ավերածութիւններ ու մաքրագործութիւններ. և թուրքերը իհարկե առաջինը չեն, որ իրենց անկարողութիւնը սրբագրել են ուզած չարդերով ու բռնի միջոցներով:

Բայց ավելին կոթը, եթե այսօր թուրքին ձեռքն է, վաղը շատ դյուրութեամբ կրնա անցնիլ հույնին ձեռքը կամ ուրիշի մը, և նույն ավելով թուրքերը կսրբվին իրենց հափշտակած վայրերեն: Քաղաքակրթութեան համար չինողը արժեք ունի, ոչ թե քանդողը: Անշուշտ, ցախավելն ալ ունի դեր մը պատմութեան բեմին վրա, բայց ստորին, երկրորդական դեր մը. մինչ պատմութիւնը վարողը շատ ավելի խոր ուժեր և երևույթներ են, որոնք չեն ավլվիր թուրքին ավելովը, ոչ ալ թուրքին սուրովը չեն ջարդվիր:

Փոքր Ասիայի ափերը ծովուն կպատկանին և միշտ ծովուն են պատկաներ. կարելի է տիրել ու բռնանալ, բայց չենցնել ու արժեցնել կրնա միայն այն ժողովուրդը, որ առևտուրն ու արդյունագործութիւնը և ծովը ունի իր ձեռքը: Մյուս կողմեն՝ հույն տարրը և հույն պետականութիւնը, որ քայլ առ քայլ բարձրանալու վրա է, ոչ մեկ կերպով չի կրնար հրաժարիլ այդ փոքրասիական ափերեն. ատոնց վերստին գրավումը պարզապես ժամանակի հարց է: Համենայն դեպս հույներու ձգտումը ըլլա պիտի միշտ, ինչքան ժամանակ որ Հռնիական կղզիներուն վրա հույն

գոյութիւն ունի. և անոնք ձեռքէ բաց չեն թողնելու առաջին հարմար առիթը, որ դուցե շատ ալ սպասել չտայ:

Այսպէսով՝ կան քանի մը ապգիր, որոնք այս կամ այն ձևով հյուսված են Մերձավոր Արևելքի շարժումներուն, բայց անհամեմատ կերպով երկրորդաբար, եթե աչքի առաջ ունենանք Անգլիայի ու Ռուսաստանի բռնած դիրքն ու դերը: Մյուսները ավելի շուտ օժանդակող կամ խանգարող ու բարդացնող հավելվածներ են այդ երկուքի ձգտումներուն ու շարժումներուն, քան անկախ քաղաքական ուղղութիւն: Բացի Հունաստանեն, մյուսներու միջամտութիւնը չի բխիր իրենց պետական անհրաժեշտութենեն և տևական քաղաքական դիծ մը չի ներկայացներ, որով կրնան օրվան քաղաքականութիւն:

Բոլորովին ուրիշ է հարցը Անգլիայի և Ռուսաստանի համար: Մերձ. Արևելքի մեջ այդ երկու ազգերու ներկան ու ապագան է, որ կվճռվի: Պարտութիւնը Միջագետքի, Եգիպտոսի ու Սյուրիայի մեջ Հնդկաստանի կորուստը ըսել է և Անգլիայի անկումը, իբրև համաշխարհային դեկավար պետութիւն: Կովկասեն ու Փոքր Ասիայեն քաշվիլը Ռուսաստանի համար հրաժարիլ ըսել է բաց ծովերեն, հրաժարիլ ըսել է համաշխարհային կարևոր արժեք ներկայացնելեն, հրաժարիլ ըսել է ապագա մեծագույն պետութեան երազներեն:

Բ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՉԳՏՈՒՄ�ը

I. Օսմանյան կայսրության բարձրացումն ու անկումը

Թուրք ցեղերը ծնունդ են միջինասիական անապատներուն. մեկ կտորն են այն թուրանական խաչնարածներու հոտանքին, որ պատմության հնագույն ժամանակներեն սկսած պարբերաբար խուժած են Իրանի ավելի բարձր քաղաքակրթության ու հարըստության սիրացած ժողովուրդներուն վրա:

Այդ մշտական հոսանքը ուժ ստացավ մանավանդ, երբ արաբական խալիֆայության թուլացումով ամբողջ Մերձավոր Արևելքը խառնակ ու անպաշտպան վիճակի մեջ էր: Թուրք ցեղերը սկսան հարձակվիլ, կողոպտել, տիրանալ ու նստիլ. հիմնեցին սուլթանութիւններ Պարսկաստանի արևելքն ու արևմուտքը, նաև Միջագետքի մէջն ու շուրջը. կամաց-կամաց անցան և՛ Եգիպտոս, և՛ Փոքր Ասիա, որովհետև խալիֆայության եռևեն սկսած էր քայքայվիլ նաև Բյուզանդական կայսրութիւնը, որուն սարսափելի հարված հասցուց մանավորապես չորրորդ խաչակրութիւնը[60]:

Փոքր Ասիայի մէջ հաստատված մանր ու խոշոր թուրք իշխանութիւններուն մէջ հետզհետե մանավոր դիրք գրավեցին օսմանցիք, գլխավորապես Պոլսին ու ծովուն մոտիկ ըլլալուն պատճառով. թե՛ ավելի քաղաքակրթութիւն ձեռք բերին և թե՛ ավելի ուժ ու հանդգնութիւն՝ մշտական կռվի մէջ ըլլալով իրենց մեր ավելի ուժեղին հետ: Հարյուր, հարյուր հիսուն տարվան ընթացքին դարձած էին արդեն ուժեղ պետութիւն մը և տերը գրեթե ամբողջ Փոքր Ասիային, չուտով և Թրակիային:

Ժե-րդ դարու կեսին Ջաթիհ[61] գրավեց Պոլիսը, ուրկե Թուրքիայի սահմանը հասավ մինչև Դանուբ և Դանուբեն չա՛տ անդին: Իսկ ղեպի հարավ, տիրելով խալիֆայության բոլոր արևմտյան հողերուն, Եգիպտոսի վրայով օսմանյան իշխանութիւնը տարածվեցավ հյուսիսային Աֆրիկա: Միայն մահմետական աշխարհի արևելյան մասը մնաց իր տիրապետութենեն դուրս, որովհետև նույն միջոցին Պարսկաստանի մէջ ալ առաջացեր էր նմանապես մեծ պետութիւն մը, որուն հետ Թուրքիան տևական պատերազմի մեջ էր. և ճիշդ հայ ժողովուրդի վրայովը կանցներ այդ երկու մեծ մահմետական պետութիւններու անընդհատ ետ ու առաջ չարժվող, այրվող ու ավերվող սահմանը:

Օսմանյան կայսրութիւնը ժէ-րդ դարուն վերջերը հասած էր ամենալայն տարածման: Վիեննայի պատերուն տակ կոտրվեցավ իր թափը[62] և սկսավ աստիճանական քայքայումը թե՛ արտաքին, թե՛ ներքին: Այն տիրապետութիւնները, որոնք հիմնված չեն տիրող տարրի տնտեսական ու քաղաքական առավելութիւններ-

րուն վրա, անոր անդուլ հոգեկան աշխատանքին վրա, այլ արդյունք են միայն պատերազմական ոգիի և հափշտակելու, հարստահարելու և ուտելու անհագ տենչանքին, կսկսին անմիջապես քայքայվիլ, հենց որ կհասնին այն պատին, ուրկե անդին անցնիլ չեն կրնար ու կանգ կառնեն: Կանգ կառնեն իսկույն նաև քաջութիւնն ու պինդորական առաքինութիւնները, կսկսվին պինդորական ըմբոստութիւնները, պալատական դավերը, դեխութիւն ու խառնակութիւն, զավառական վարիչներու ինքնագլուխ կամայականութիւնները, հաղորդակցութեան խանգարում և տնտեսական մեքենայի բոլորովին անպիտանացումը. կշեշտվին զգայական վայելքներու սուր ծարավը և ծուլութիւնը: Ով քիչիկ մը չնորհք ունի կամ կապեր, կձգտի դառնալ պետական անգործ պաշտոնյա լայն ռոճիկով և մանավանդ կաշառվելու, կողոպտելու լայն հարմարութիւններով:

Ա՛յս է Թուրքիո պատկերը վերջին երկու հարյուր տարվան ընթացքին: Ճիշդ այն միջոցին, երբ Արևմուտքը նորեն կկապվեր ծովուն, եվրոպական ժողովուրդները կստանային նոր թափ, նոր մտավոր շարժում, նոր աշխատանք ու նոր պետականութիւն: Սկսած Ֆրանսական մեծ հեղափոխութենեն, որ այդ նորութիւններու ամենացայտուն արտահայտութիւններեն մեկն է, կսկսվի ընդհարումը այդ հին ու խարխլած զուտ ասիական կրոնապետութեան և եվրոպայի կազմակերպվող նոր ու մեծ պետութիւններու միջև: Եվ Թուրքիան այդ օրեն կդառնա չարունակ հարձակման ենթակա և կտոր-կտոր իր մասերեն գրկվող, եվրոպացիներու ձեռքը խաղալիք, անոնց շահերուն մեջտեղը տարուբերվող և ժամանակի պահանջեն ու ոգիեն չափազանց ետ մնացած, կործանվող պետութիւն մը, պետութեան մը կիսականգուն ավերակը:

Այդ ավերակի բոլոր ծերպերեն ու ճեղքերեն ներս կսպրդին եվրոպացիները, իրենց ձեռքը կառնեն առուտուրը, գործերը, ձեռնարկութիւնները և կամաց-կամաց իրենց թաթը կդնեն եկամուտի բոլոր աղբյուրներուն վրա: Թուրքիան օրե օր ավելի սերտ կկապվի ամբողջ աշխարհի հարաբերութիւններուն ու տնտեսութեան, և օրե օր ավելի ևս զգալի կդառնա իր միջնադարյան հետնյալ վիճակը Եվրոպայի ու Ասիայի կապը եղող այդ չա-

փազանց կարևոր անկյունին վրա: Իր հողերը, ինչպես և իր ծովերը, ինկած են Անգլիո և Ռուսաստանի ձգտումներուն սահմանին վրա. և բազմաթիվ պետություններ զանազան տեսակի ու աստիճանի հույսեր ու հաշիվներ ունին անոր թողնելիք ժառանգության վրա:

II. «Երիտասարդ Թուրքիա»

Ժառանգորդներու այդ չատությունն է պատճառը և մանավանդ Ռուսաստանի չատ խիզախ դեպի Հարավ շարժվիլը, որ կստիպե եվրոպացիները, և մանավանդ անգլիացիները, արվեստական միջոցներով երկարելու Թուրքիայի գոյությունը: Խաղ մը, որ դեռ այս վայրկյանիս ալ կչարունակվի. որովհետև պոլշևիկներու արդի բռնած դիրքը ուրիշ բան չէ: Դերերն են միայն փոխված: Ջէ՞ որ հիմա Հարձակվողը Անգլիան է, որ կատվի փափուկ քայլերով դեպի հյուսիս կշարժվի:

Եվրոպայի հետ այդ մոտիկ չփումը, ինչպես և ԺԹ-րդ դարու կեսերին Պոլիս հիմնված Համալսարանը[63] եվրոպական ուժերով, միջնակարգ ու մասնագիտական վարժարանները, լրագրությունը, պետական հաշվով Եվրոպա ուսանող ուղարկվիլը հետզհետե կառաջացնեն դեպի դարուն վերջերը նոր Թուրք երիտասարդություն մը, որը արևմտյան կյանքին, օրինակներուն և գրքերուն ազդեցությանը տակ կուզե կեցնել Թուրքիայի գահավեժ անկումը, կուզե առաջն առնել իր պետության օրե օր ավելի փշրվելուն և կձգտի վերանորոգել իր հայրենիքը:

Հաջողելու համար առաջին պահանջն է՝ խորտակել Համիտյան միապետությունը՝ տեղը դնելով պարլամենտական կարգեր: Երկրորդ պահանջն էր՝ փեթըռտել իրենց վրայեն եվրոպացիներու հյուսած սարդի ոստայնը, ազատել իրենց տնտեսական աղբյուրները եվրոպացիներուն ձեռքեն և դառնալ եկամուտներուն տերը:

Երրորդ պահանջն էր՝ ինչ գնով ալ որ ըլլա վերջ տալ քրիստոնյա Հպատակներու Հավիտենական ապստամբությանը, որ պետքի վերնա մեջտեղեն պատրվակը եվրոպացիներու մշտական

միջամտութեան Թուրքիայի ներքին գործերուն: Սկիզբը վայրկեան մը մտածեցին Համաձայնութեան դալ քրիստոնեա տարրերուն հետ՝ ընդունելով ամենուն համար օսմանցիական հավասարութիւն: Բայց իսկոյն պիտի ինկան, որ Թուրք տարրը բացարձակապես անգոր էր ազատ մրցման պիտանելու Հույնին, Հային ու արաբին հետ, և հավասար պայմաններու տակ թուրք բարձր պաշտոնյան մատի վրա համրվելիք առարկա մը պիտի դառնա, և ուժը, դերն ու դիրքը պիտի անցնին «օտարներուն»: Եվ սկսան շատ ափսոսալ և հրապարակավ արտահայտել, թե ինչու նախորդ հաղթական սուլթանները չէին ջարդած ու ոչնչացուցած իրենց սիրած քրիստոնյաները, քանի դեռևս եվրոպական հսկողութիւն չկար իրենց գլխուն և ազատ էր իրենց ձեռքը:

Այս տրամադրութիւններու պտուղն են 1908-ի Հեղափոխութիւնը[64], Իթթիհատի կուսակցութիւնը[65], թուրք ազգայնականութեան չեչովիլը, գերմանացիներուն վրա հենվիլը, վերջն ալ անոնց միանալը պատերազմի միջոցին, հայկական ջարդերը, հունական ջարդերը, բոլոր կապիտուլասիոններու և ամեն տեսակի կապանքներու և պարտավորութիւններու ջնջված հռչակվիլը, քեմալական և այժմ օրը օրին մեր աչքերուն տակ կատարվող դեպքերը:

Եվ ահա կեցած ենք հիմա բոլորովին նոր տեսակի Թուրքիայի մը հանդեպ: Կտրված են իր մարմնեն եվրոպական ու ասիական ընդարձակ ոչ թուրք մասերը. ջարդված, աքսորված ու մաքրված է դեռ իր ձեռքը մնացած երկիրը ոչ մահմետական տարրերեն: Զուտ թուրքական պետութիւն մը և հասարակապետութիւն մը. երկրին տերը՝ մեջլիսը, սուլթանութիւնը ջնջված գոնե առայժմ. և խալիֆայութիւնը՝ անջատված պետութենեն, իբրև միայն կրոնական պետ: Իսկ եվրոպացիներուն ըսված է՝ «բարև տանք իրարու, դրամ ու ապրանք ալ տանք իրարու, բայց Հեռվեն Հեռու»: Այսինքն՝ ժողովուրդի տիրականութիւն, պարլամենտական սիսթեմ, ազգայնական սկզբունք և ամփոփ երկիր մը՝ ինքն իր գլխուն և ինքն իր տերը: Հարուստ, բերրի և ընդարձակ երկիր մը, լուսի հերիք իրենց թվին ու կարողութիւններուն. նույնիսկ եթե դեպքերու հառաջիկա անխուսափելի զարգացումով՝ անջատվին

Թուրքիային դէմ մնացած վերջին ոչ թուրք մասերը՝ Հայաստանը, Քիւրտիստանը, Կիլիկիան և Հոնիական ափերը:

Ճիշդ է, երկիրը քարուքանդ է, քաղաքները՝ ավերակ, առուտուրն, արհեստն և ֆինանսն Հասկցող քրիստոնյա տարրը պակասած, իսկ թուրքերը իրենք ո՛չ մասնաւոր սեր, ո՛չ ալ ընդունակութիւն են ցոյց տված աշխատանքի՝ մինչև հիմա. ո՛չ դրամ կա, ո՛չ ձեռներեցութիւն և ո՛չ մասնագիտական ուժեր: Բայց ի՞նչ ընեն, ասկե ետքը կստեղծվի, ասկե ետքը կաշխատին. չէ՞ որ հիմա իրենք իրենց են, չէ՞ որ հիմա իրենց ձեռքը և իրենց վրա է մնացած ամեն բան. և վերջապես, կօգնեն բարեկամները աջեն, ձախեն, ամեն կողմեն: Այդ կյավուրներուն[66] բարեկամութիւնը միշտ փորձանք է, իհարկե, բայց քիչիկ մը վարպետ քաղաքականութիւնամբ տակեն դուրս կուգան: Եվ հետզհետե այդ սիրուն ու սքանչելի դիրք ու հող ունեցող երկիրը լարված չանքերով ու խաղաղ աշխատանքով կդառնա նաև սքանչելի պետութիւն մը Եվրոպայի ու Ասիայի դռանը, եվրոպական ու ասիական քաղաքակրթութիւններու խառնուրդեն:

Այսպե՛ս կմտածե հայ մարդը՝ իր ցավն ու վրեժը խեղդել չանալով, այդ նոր Թուրքիային հետ բարի հարևանութիւն ցանկանալով և ուրիշներու ձգտումներն ալ իր արշինով, իր հոգեբանութիւնամբը չափելով: Չէ՞ որ ինքը հարազատ, ամփոփ անկյունի մը կարոտը ունի, հանգստի տենչը և աշխատելու, ստեղծելու ծարավը:

Բայց ի՛նչ կմտածե ի՛նքը՝ այդ նոր Թուրքիան, ի՞նչ է ի՛ր ուզածը, ինչի՞ կձգտի:

III. Արդի Թուրքիային մեջ տիրող հոգեբանութիւնը

Պարտական ենք տեսնելու իրականութիւնը և սին երազներով չօրորենք մեզի: Այսօրը ծնունդ է երեկվան, և վաղը պիտի ըլլա ծնունդը այսօրվան: Ի՞նչ էր երեկ Թուրքիան և ի՞նչ է այսօր:

Կրոններու, ազգերու և տարածութիւններու տիրող ահագին կայսրութեան մը մեկ կրճատված, խուզված ու վիրավոր

կտորն է այսօրվան Թուրքիան: Այսօրվան Թուրքիան ժառանգորդն ու մնացորդն է մեծ պետութեան մը, որ մահմետական աշխարհի ու մահմետականութեան վերին վարիչն էր, միա՛կ մեծ ներկայացուցիչը, և՛ պաշտպանը, և՛ հույսը: Երեկ Թուրքիան զուտ ասիական պետութիւն մըն էր՝ միջնադարեան, ամբողջ հոգիովը կապված հեղինակութեան սկզբունքին, կրոնին ու հինին, զուրկ առևտրական, արդիւնաբերական ու ստեղծագործական կարողութիւններե, կողոպտող ու հալիշտակող պետութիւն մը, որ դարեր ու դարեր ապրեր է ուրիշներուն աշխատանքը ուտելով, իր հպատակները կեղեքելով, որ սովոր է դուրին կյանքի, որ սովոր է սոնքալու[67], ուրիշներու գլխուն մեծավոր, հրամայող ու պաշտոնյա նստելու, և որու հոգիին մոտիկ միակ իսկական աշխատանքը զինվոր խաղալն է:

Երեկ այսպես էր Թուրքիան և Թուրքիայի պետականութիւնը վարող վերին շերտի հոգեբանութիւնը. որովհետև միշտ որոշ շերտ մըն է, որ կվարե պետութիւններն ու ժողովուրդները: Արդ՝ փոքրանալով, քրիստոնյաները չարդելով և քանի մը պետական ձևեր Եվրոպայեն փոխ առնելով դեռևս հոգիները չեն փոխվիր, չունեցած կարողութիւնները չեն ստացվիր, և եղած հակումներն ու բնազդները չեն ոչնչանար: Հոգեբանութիւնը, ընդունակութիւնները, մտածելու եղանակը, ինչպես և աշխատանքի վարժվիլը շատ ժամանակի և հարատև ջանքերու կկարոտի և շատ կամաց-կամաց և շատ մասնակի կերպով:

Դժվար բան չէ պետական ամենահառաջդիմական ձևերը ընդունելը և այդ ձևերուն տակը հին ու հնադարյան ըժիմն ու սովորութիւնները պահպանելը: Միթե չունի՞նք այս վայրկյանիս մեր աչքին առջևը պոլշևիզմը, որ սոցիալիստական ամենաթունդ նորաձևութիւններուն տակը ասիական բռնապետութեան վատթարագույն հնութիւնները կգործադրե:

Բայց դժվար է, չափազանց դժվար է իր վեհութեան, տիրապետութեան ու ընդարձակութեան մեծամտութիւնը թողնելը, համեստ ու համառ աշխատանքի փարիլը, ծուլութենեն հետ վարժվիլը. չափազանց դժվար է աղքատացած իշխողի վիճակը: Իր միակ մտածումը նորեն հինին դառնալն է. և եթե հանճն կառնե

Համեստ ու աղքատիկ փողոցներէ անցնիլը, հանձն կառնէ այդ ծուռ ճամբով իր հին պալատը հասնելու համար: Իր աչքերն ու իր ուշը հառած են միշտ անցյալ փառքին, իտեալը ետևն է: Պետք է անցնի քանի մը սերունդ, որ ժողովուրդի վարիչ մասերը հաշտվին կատարված իրողութեան հետ. համենայն դեպս պետք է անցնի այն սերունդը, որ տեսեր է իր «մեծութիւնը» իր աչքերովը: Ականատես ու դերակատար սերունդի միակ երազը իր հին «մեծութիւնը» վերահաստատելն է:

Ո՞րն է արդի Թուրքիայի դեկավար սերունդը: Ինչպես երեկ, այնպես ալ այսօր, նույնն է և վաղը. երկու որոշ ուղղութիւն կա Թուրքիայի բաղդը վարող վերին շերտին մէջ: Նախ՝ զուտ մահմեդական քաղաքակրթութեան հարած ու հենած մարդիկ, իրենց ամբողջ հոգիովը Արևելքի ու ցամաքի մարդիկ, մեծցած ու կրթված հարազատ միջավայրի ազդեցութեան տակ. և երկրորդ՝ մարդիկ, որոնք Եվրոպայի շոշափումը ունին իրենց կաշվին վրա, ապրած են եվրոպական միջավայրի մեջ կամ կարդացած, և իրենց հոգիին մեջ արևելյան խմորին արևմտյան շպար մըն է քսված: Այսինքն՝ հին թուրքեր և նոր թուրքեր. վերջիններս երեկ իթթիհատական կկոչվեին, այսօր քեմալական, վաղը նոր անունով մը պիտի իջնեն աստարեկ, երբ խմբական նախանձը Քեմալին[68] ալ տապալե:

Բնական է, որ հինները կկազմեն ստվար մեծամասնութիւնը և նորերը, ինչպես ամեն տեղ, փոքրաթիվ են անհամեմատ: Բայց ատոր փոխարեն նորերը կըլլան միշտ ավելի ձեռներեց, ավելի խիզախ, ավելի աչքի իյնող և գործ տեսնող, մանավանդ այդ տեսակ ցնցումներով հարուստ ու տակնուվրա վայրկյաններուն. որով գործնական կյանքին մեջ առաջնութիւնը կանցնի իրենց ձեռքը: Հին մեծամասնութիւնը, միշտ տեսակ մը դժվարաշարժ ու հոգնած, առաջավոր դիրքերը թողնելով նորերուն, անոնց սանձերը միայն կրնանա պահել իր ձեռքը և իր ծանր թաթը անոնց ուսին, որ իր շահերու թուլլատրած սահմանեն չատ անդին չանցնին:

IV. Հին թուրքերու տեսակետը

Արդ՝ ատոնցմէ ամեն մեկը իրմէ անկախաբար կնայի արդի Թուրքիայի վիճակին, ըրածին ու ընելիքին:

Հինը պարզ է: Իրերուն կնայի հին Թուրքիայի տեսակետով, ամեն ինչ մահմետական ապակիներու միջով, հենված հնազանդության, հոգևոր արքունյան, Ղուրանին[69] ու շերիաթին[70]. արդին մեծ մասով ալ հոգևորականներ են կամ անոնց անմիջական ազդեցության տակ մեծցած: Ասոնց համար կասկը, առանցքը, կարևորը մահմետականությունն է. այդ կրոնի պաշտպանության ու տարածման, վերածաղկումին ու վերջնական հաղթանակին համար են պետությունները. և Թուրքիան մասնավորապես, որ ժառանգորդն է խալիֆայության: Անոնց հայացքը ուղղված է դեպի բոլոր մահմետական երկիրները, և անոնց երազն է հավաքել նորեն բոլոր մահմետականությունը, գոնե բոլոր սյուննիները[71], նոր օսմանյան կայսրության մը մականին տակ և վերստեղծել ընդարձակ, հզոր, բաղդավոր և ուղղափառ պետություն մը և կյանքերուն քիթը քսել պետին: Որովհետև բոլոր մյուս կրոնները ամեն մեկ իսկական մահմետականի աչքին ցած ու ողորմելի բաներ են, և քրիստոնյա եվրոպացիներու հաջողությունները ու բարձրացումը անոր համար հիվանդ անբնականություն մըն է. ան կսպասե իրերու մոտալուտ բժշկության ժամին, երբ նորեն Մահմետի դրոշակը պետք է երթա աշխարհներու վրայեն իբրև գերիշխողը բոլորին: Նոր Թուրքերու առած արևմտյան քայլերուն անոնք համաձայն են և օժանդակ այն չափով, ինչ չափով որ քրիստոնյաներու ոտքը կկտրեն Թուրքիայեն, կջարդեն ու կփախցնեն, ինչ չափով որ կխաբեն եվրոպական «սարսաղ» պետությունները զանազան արտաքին փոփոխություններով ու երևույթներով. և հակառակ են կտրապես ամեն փորձի, որ ավելի խորը երթալ կուզե և որը իրապես Թուրքիան ներքնապես մոտեցնել կուզե արևմտյան ըմբռնումներուն:

Նորերը ավելի բաց աչք ունին աշխարհիս երեսին կատարված ու կատարվող երևույթներուն վրա. հասկցեր են, որ փոխված են ժամանակները և կրոնի վրա հենվելեն իրենց օգուտ չկա:

Արդեն իրենց հոգիին մէջ կրօնական զգացումը կա՛մ թմրած է եվրոպական վարակումով, կա՛մ ուղղակի հակառակ են տրամադրված կրօնքին, որովհետեւ ատ է իրենց հակառակորդ կուսակցութեան ամենեն ուժեղ զէնքը: Այն աստիճան ուժեղ, որ իրենք իրենց բոլոր նորամուծութիւնները ստիպված են հարմարցնելու Ղուրանի տառերուն, հաճախ պետք է դիմեն բռնապրոսիկ ու քաչքչուք մեկնութիւններու՝ իրենց ուզածը կերպ մը մաքսանենգութեամբ անցընել կարողանալու համար. և իրենք ալ անձամբ պետք է կրօնական զգացում, հավատք ու հարգանք կեղծեն՝ ամբոխը իրենց հետեւեն քաշելու համար: Իսկ երբ հոգիներուն մէջ կղպտրի կրօնը ժողովուրդներու ընդհանուր և հիմնական կապը ըլլալեն, պետութեան մը նեցուկը կմնա բնականորեն ազգային գաղափարը, ինչպես արեւմուտքի մէջ: Եվ նոր թուրքերու ամենեն կարևոր նորութիւնը, և իրական իսր արժէք ներկայացնող նորութիւնը, իրենց բարձրացուցած դրոշակն է: Թուրքութիւնը այն սրբութիւնն է անոնց համար, ինչ որ մահմետականութիւնը հիներուն. և այդ նո՛ր սրած զէնքը անոնք կհակադրեն հիներուն և ատոր վրա հենված կձգտին զինաթափ ընելու նաև Արևմուտքը՝ դարձնելով արևմտյան պետականութեյան հիմքը իրենց ոտքին կայան:

V. Նոր թուրքերու տեսակետը

Նորերուն համար Օսմանյան կայսրութեյան մեծութիւնը մահմետականութեյան մեջը չէր, այլ որ ան թուրքերու կայսրութիւնն է: Անոնց հայացքը ուղղված է միշտ դեպի Միջին Ասիայի անապատները Կովկասի ու Պարսկաստանի վրայով, ուրկե իջած են իրենք: Անոնք հպարտութեյամբ կնային դեպի արևելք, մինչ հին թուրքերը կնային գլխավորապես դեպի հարավ, դեպի արաբական անապատները Սյուրիայի ու Միջագետքի վրայով: Նորերու հոգիին խորքը եթե ոչ աստելութեյուն, գոնե խոշոր չկամութեյուն մը կա դեպի արաբները, որովհետև կզգան, որ անոնք միշտ բարձր են եղած իբրև ստեղծագործող ժողովուրդ. և ավելի ևս մեծ արհամարհանք մը դեպի չին[72] պարսիկը, որ իր բոլոր մեղքերուն

վրա նաև արիական արյուն ունի: Նոր թուրքերը ունին հիմա այն միամիտ և րոմանտիկ հափշտակությունը, գովասանքն ու պանծացումը իրենց թուրքական գծելու, հատկություններու, հերոսներու ու անցյալի, ինչ որ հատուկ է ամեն զարթնող զգացումի առաջին թարթափումներուն: Հիշե՛նք մեր հին «հերոսներու» անվերջ չարանը բանաստեղծություններու և տրամաներու մեջ՝ գովաբանելու ու բարձրացնելու համար, ինչ որ հայ է ու հայկական կամ գոնե հայկական է համարված: Թուրքերը հիմա նույն հոգեկան վիճակին մեջ են, ինչպես և իրենց պոռոտախոս ճառերն ու «մեծ» սուլթաններ պանծացնող տրամաները: Այդ «փառավոր» անցյալի վերակենդանացումը, ազգային զգացումի ու գիտակցության զարթնումը նույն է մեզի և անոնց համար. միակ տարբերությունը այդ անցյալի հեռավորություննն է: Մեր Վարդաններն ու Արշակները հին-հին դարերուն խորունկեն մեզի խոսող մեծություններ էին, որոնք չատոնց անցեր են գացեր և անկե հոգը չատ չուր է վազեր հայ կամուրջներուն տակեն: Մինչդեռ թուրք հանդիսականներուն առաջ վերակենդանացած Սելիմները, Ջամիհները, Ելլդըրըմները ու Թիմուրները[73] դեռ երեկվան մարդիկն են, որոնք հիմներ ու բարձրացուցեր են թուրք պետությունները և մասնավորապես այն թուրք կայսրությունը, ուրկե կդղար ամբողջ Եվրոպան և որուն դիմացը նույնիսկ այսօր Անգլիան ու Ֆրանսան ըևերանսներ կընեն: Կայսրություն մը, որ դեռ կա, դեռ ուժ ունի, իզուր կկարծեն նենգ թշնամիները, թե ինկած է արդեն ու վերջացած. իրենք չուտով ցույց կուտան աշխարհին, որ Թուրքիան դեռ կա, և ի՞նչ Թուրքիա: Ա՛յն, ինչ որ անիկա վաղուց պիտի եղած ըլլար. Թուրքիա մը, որ ընդգրկե իր մեջը բոլոր թուրք ժողովուրդները անխտիր, համայն թուրքքությունը Վոսփորեն սկսած մինչև Բայքալ՝ Կովկասի, Հյուսիսային Պարսկաստանի ու Մինչին Ասիայի վրայով. որովհետև ի՞նչ բան է որ հիմակվան այս ողորմելի Թուրքիան. ընդամենը հազիվ չորս-հինգ միլիոն թուրքություն, մինչ անդին միայն ռուսական տիրապետության տակ անոնց թիվը գրեթե քսան միլիոնի կհասնի: Պետք է միանան բոլոր այդ թուրք տարրերը միակ թուրք պետության մը իշխանությանը տակ: Եվ այդպեսով է միայն, որ կարելի է մոռցնել ու դարմանել

Օսմանյան փառահեղ կայսրութեան վերջին դարերու կրած նվաստացումն ու անկումը: Թուրքական կայսրութիւնը ոչ միայն կործանված չէ, այլ դեռ նոր չինվելու ու բարձրանալու վրա է:

Ուրիշ խոսքով՝ վերջին անդամահատութեան ցավը դեռ շատ սուր կերպով զգացող Թուրքիայի մեջ հիմա տիրող հոգեբանութիւնը մե՛կ է. պզտիկցած, կտրտված ու կոտրտված Թուրքիան դարձնել նորեն մեծ ու փառավոր կայսրութիւն մը, ինչպես որ երբեմն էր: Հինները հոս հասնելու համար գիտեն միայն հին ճամբան՝ պանիսլամիզմը. նորերը գտեր են նոր ճամբա՝ պանթուրքիզմը: Պանիսլամիզմը իր ժանգոտած նետերը մասնավորապես կուղղե դեպի Հարավ՝ Անգլիայի դեմ, մինչ պանթուրանիզմի նոր գնած նոր-նոր գնդացիրները ուղղված են գլխավորապես դեպի Ռուսաստան:

VI. Պանիսլամիզմ ու պանթուրքիզմ

Առաջին նայվածքով կարծես ասոնք երկու հակադիր ըմբռնումներ են, երկու իրար հակառակ քաղաքական ուղղութիւն. բայց քիչ մը խորը նայելը հերիք է՝ տեսնելու համար, որ արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ այդ երկու ուղղութիւններուն մեջ ոչ միայն հակամարտութիւն ու հակասութիւն չկա, այլ չկա նույնիսկ հիմնական տարբերութիւն մը:

Հինները ինչո՞ւ պիտի ըլլան հակառակ, որ իրենց իսլամական հպարտութեան վրա ավելնան նաև ազգային զգացումներ ու թուրքական հպարտութիւններ. և ե՞րբ չեն եղեր այդ երկուքը իրարու հյուսված: Հիմա կշեշովի քիչ մը ավելի, ուրիշ ոչինչ: Ի՞նչ վնաս: Եվ նորերու պանթուրքիզմ ըսածը նույն պանիսլամիզմի մեկ մասն է միայն և բնական կերպով կտանի հոն, ուր հինները կձգտին. որովհետև Վոսփորեն մինչև Հիմալայա տարածվող թուրք կայսրութեան մը դեմ ալ ո՞վ կրնա պատնեշ քաշել, որ ան չի շարժվի դեպի հարավ և դեպի Աֆրիկա, այն բոլոր անկյունները, ուր մահմետական կա: Այսպիսով հիներուն համար նորերուն առաջարկը

պարզ տաքտիկի հարց մըն է. պետք է կշռել հակառակորդ դիրքերն ու ուժերը և առար համեմատ:

Առայժմ, երբ Անգլիայի ամած հարվածը դեռ շատ թարմ է, երբ Անգլիան Պոլսեն երևելու ու չերևնալու խաղերուն մեջն է դեռ, և նեղուցներուն մեջ ամուր տեղավորվելու դիտավորութիւնն ունի ըստ երևույթին, շատ դժվար է, իհարկե, հակառակ կողմի պատճառներ ու առերութիւն չունենալը. մանավանդ որ այս նոր տեսակի ռուները այնքան սիրալիր են, պատրաստակամ ու պիջող: Օրվան քաղաքականութիւնը հակառակորդական է և ավելի համիտլամական: Բայց քամինները հենց որ քիչ մը փոխեն իրենց ուղղութիւնը՝ իսկույն պզալի պիտի դառնա բոլորին, և սառն մաքերը արդեն իսկ կտեսնեն հիմակվընե և պիտեին երեկվընե, որ այդ չէ ուղիղ ճամբան:

Մյուս կողմե՝ հետզհետե ակներև կդառնա, որ հակառակ ընդհանուր կրոնին, արքութիւններուն և աշխարհահայացքին՝ մահմետական ժողովուրդներու մեջ եղած վիճակի ու չահերու տարբերութիւնը քանի կերթա կշեշավի: Վերջին պատերազմի միջոցին մահմետականներ շատ կային, որ կյավուրներուն ձեռքին տակ թուրքերուն դեմ կկռվեին: Այս պայմաններուն մեջ մեծ հույսեր չի կարելի դնել համիսլամական շարժումի մը հաջողութեան վրա. պատերազմի սկիզբը ջիհատի[74] կանաչ դրոշակը մեկերկու անգամ փորձեցին հրապարակ հանելու, բայց բան դուրս չեկավ. վաղվան համար ալ ավելիին հույսեր ունենալը խելացի չէ: Իբրև մշտական սպառնալիք մը, անգլիացիները վախցնելու իբրև խրտվիլակ մը համիսլամականութիւնը ունի իր որոշ արժեքը. ունի նաև արժեք մը կրոնակիցներին դրամական և այլ օժանդակութիւններ առանալու համար. բայց առայժմ միայն այդչափ:

Հետո՝ համիսլամական շարժումը միայն Անգլիային չէ, որ կսպառնա. ուրիշ եվրոպական պետութիւններ ալ կան՝ Ֆրանսան, Իտալիան և մանավանդ Ռուսաստանը, որ շատ հաշտ աչքով չեն նայելու այդ երկսայրի շարժումներուն: Քրիստոնյաները իրարմե անջատ պահելու համար, մեկուն չահին դիպչելու միջոցին, մյուսներուն շատ ձեռք չպիտի տալ. ընդհակառակը, պետք է ջանալ, որ առնված քայլը նպաստավոր ըլլա մյուսներու չահին: Ահա՛ այդ-

պես է համամիութիւն չարժումը, որովհետև Թուրքութիւն կայ միայն Ռուսաստանի սահմաններուն մէջ, որով Անգլիան կզառնա իրենց կողմը, ինչպես որ ան միշտ իրենց կողմն է անցեր, երբ Ռուսաստանն է եղեր Թուրքերուն սպառնացողը:

Եվ վերջապես, գաղանիք մը չէ ոչ մեկուն համար, որ ինչպես անցյալին մէջ, այնպես ալ ապագայի հանդեպ Թուրքիայի մեծ ու իսկական թշնամին «Հյուսիսի արջն» է իր ահագին բնակչութիւնով, միլիոններու բանակով, Թուրքի վայրագութիւններն ոչինչով եւս չի մնացող իր քաղաքներով, Թուրքի գլխուն իջեցուցած մեկը մյուսեն անագորույն հարուածներով և Պոլսին հասնելու իր բացահայտ տենչանքով: Եվ Թուրքը ներքին խոր վախ մը ունի ռուսին հանդեպ. կըմբռնեն, որ ասիկա մյուս եվրոպացիներուն նման չէ, շատ է մոտիկ իրեն, ոչ միայն իբրև դրացի, այլև վարչութեան ու տիրապետութեան ասիական գծերով. և աղոտ կերպով կնախազգա, որ հոնկե է գալու վերջին հարուածը: Ասոր համար ալ Թուրքերը, հին ըլլան թե նոր, ապահովութիւն չունին, մինչև ռուսները Կովկասեն անդին չի քաշվին:

Եվ այս ուղղութեամբ Թուրքերու ջանքեր Թափելը բնավ նոր չէ: Պանիսլամիզմի, պանթուրանիզմի, տարպեյճանիզմի ձևերուն տակ այս վերջին տասնամյակներու ընթացքին քանի մը անգամ փորձած են կովկասյան մահմետական տարրը չարժելու ռուսներուն դեմ, Կովկասը փրցնելու ռուսներուն ձեռքեն: Նույնիսկ բարեկամ ու սիրելի պոլշևիկներուն դեմ քանի անգամ կրկնվեցան նույն փորձերը: Եվ այդ ճիգերն ու պրոպականդը կանգ չեն առներ Կասպիականի ափերուն, Բագվի նավթերուն վրա, կերթան մինչև Արալ և Արալեն անդին: Դեռ քանի մը ամիս առաջ էր, որ նշանավոր Էնվեր[75] անկախութիւն կհայտարարեր Թուրքեստանի մէջ և վերջնագիր կուղարկեր պոլշևիկներուն: Թեև քեմալականները երդում-պատառ կըլլան համոզելու համար իրենց թանկագին բարեկամները, թե ոչ մեկ կապ չունին Էնվերի հետ և հակառակ են այդ տեսակ գաղափարներու:

Թեև Եվրոպա ուղարկված պոլշևիկյան ներկայացուցիչները դիւանագիտական խոշոր ձևերով կհայտարարեն, թե պարապ խոսքեր են համամիութիւնի մասին ըսված բաները, թե այդ տեսակ

բան գոյութիւն չունի, բայց կմոռնան ծածկելու իրենց ուրախութիւնը Էնվերի ապանութիւնը քանի մը անգամ հրատարակելու ու տարածայնելու առեն, ինչպես և շատ անճարակ կերպով ուրիշներուն վրա նետել կ'ուզեն Ճեմալը[76] սպաննել տալերնին, որը, ինչպես զէշ լեզուները կ'ըսեն, կերթար Էնվերի և Ճեմալի անձնական հակամարտութիւնը մեղմելու և ընդհանուր համաթուրք չարժումը ավելի սերտ կազմակերպելու:

Եվ վերջապես, թուրք վարիչները բնավ չեն ալ ծածկեր մասնավոր բարեկամական խոսակցութեան մէջոցին. «Դուք՝ հայերդ, դժբաղդաբար իննկած եք թրքութեան զարգացման բնական ճամբուն վրա: Ինչ որ կատարված է հայերու հետ և ասկե ետքն ալ դեռ կրնա կատարվիլ՝ անշուշտ շատ ցավալի է, բայց ի՞նչ կրնանք ընել, թուրքերս պետք է որ տերը դառնանք Կովկասին»:

Այսպեսով՝ թե՛ անցյալ և թե՛ ապագա վախը ռուսեն, թե՛ անցյալ և թե՛ ապագա հակամարտութիւնը ռուսի և անգլիացիի մէջև, թե՛ մինչև հիմա եղած և հիմա ալ նոր թափով չարունակվող պրոպականտը ռուսական թուրք տարրերուն մեջ, թե՛ ապստամբական ու անջատողական արդեն կատարված փորձերը, ուր միշտ օսմանցիի մատը եղեր է, ըլլա Երյտըզի պալատին մեջ[77] դարբնված, Իթթիհատի կլուպին մեջ թե քեմալական մեջլիսի ետևի սենյակներուն խորքը, և վերջապես թուրքերու բացահայտ հայտարարութիւնները ակներև կդարձնեն, որ Ռուսաստանի թուրք տարրերը Թուրքիային միացնելը հետզհետե կդառնա «Օսմանյան կայսրութեան» թե՛ պաշտպանողական և թե՛ հարձակողական անհրաժեշտ ծրագիր մը: Եվ առաջին հերթին իհարկե Կովկասի գրավումը, որը արդեն կիսովին կատարված ալ է: Կարսը օսմանցիներուն ձեռքն է, Նախիջևանի և Արաքսի հովիտը իրենց ձեռքն է իրականապես, Օլթիի շրջանը իրենց ձեռքն է գործնականապես, իսկ Կովկասի ամբողջ արևելքը Ատրպէյջանն է, որը, արդեն քանի մը անգամ պոլշևիկներուն դեմ զենք բարձրացուցած և ընկճված, անհամբեր կսպասե օսմանյան զորքի առաջ չարժվելուն: Հաջող վայրկյան մը, կռնակի կողմեն ապահովութիւն, Անգլիայի բարեկամ «չեզոքութիւնը», ներքին խառնակութիւն մը պոլշևիկյան թագավորութեան մեջ, և եթե դեպքերը քիչ մը

հաջող դասավորվին, Թուրքիան կգրավե Թիֆլիսը, կմաքրե ձեռաց Հայկական սարավանդը Հայ տարրեն, ինչպես որ մաքրեց հինգ վիլայեթները[78], և պրծավ գնաց:

VII. Ռուսաստանի «քայքայումը» և Անգլիայի «օժանդակությունը»

Պրծա՞վ: Ահա՛ հոտ է հարցը: Հարց մը, որուն պատասխանը իհարկե պիտի տա ամենեն առաջ Ռուսաստանը:

Ենթադրենք նույնիսկ, որ բոլոր պայմանները նպաստեցին, ծրագիրը հաջողեցավ և թուրքերը գրավեցին ամբողջ Կովկասը: Լա՛վ. քանի՞ տարվան համար: Որովհետև ո՛վ իր հույսը կդնե Ռուսաստանի վերջնական քայքայման, փեռեկոմման և թուլացման վրա՝ շատ փուխր ավազի վրա կչինե իր չենքը: Հարյուր միլիոնը անցնող, միաձույլ, մեկ կետի վրա կեդրոնացած ժողովուրդ մը, որ դեռ իր Հասունության ալ չէ հասած, արիական ժողովուրդ մը, աշխատանքի և ստեղծագործության ընդունակ, և արդեն այնքա՜ն նշաններ ու ապացույցներ տված իր չնորհքին ու կարողություններուն՝ այսքան համեմատաբար կարճ ժամանակի մեջ, չի կրնար հանկարծ հրապարակեն քաշվիլ ներքին հեղափոխության մը հետևանքով: Ընդհակառակը, այդ հեղափոխությունը ինչքան ալ ցավոտ ըլլա և ավերած բերե, ծնունդն ու արտահայտությունն է իր ուժին ու կենսունակության:

Բոլոր մեծ հեղափոխությունները առաջին աստիճան մը ունին, որ կկազմե իսկական հեղափոխությունը, այսինքն՝ արդեն հասունցած ու քայքայված հինի վերացումը:

Բայց ոչ մեկ հեղափոխություն հոտ կանգ չի առներ, հոտ կանգ առնել չի կրնար. նայելով ժողովուրդի տարիքին, խառնվածքին, մտավոր ու տնտեսական Հասունության՝ այս կամ այն աստիճանի ավելի առաջ կանցնի իր հնարավոր նպատակեն: Քանդված կարգերը նոր քանդումներու տենչանքը կբերեն, թափված արյունը՝ արյուն թափելու ծարավը, նոր ու հասարակ մարդոց դեր ու դիրք ստանալը կբանա բոլոր ախորժակները, և ամեն մարդ կձգտի

ինքը առաջ իյնալու և իր երազած ու չերազած բոլոր բարդությունները մեկ անգամին ու անմիջապես իրականության դարձնելու: Եվ մարդն ինչքան անպատրաստ է ու դեռ տգա, ինչքան թարմ ոգևորություն ունի ու թեթևամտություն, ինչքան որ քիչ գործ է տեսած և քիչ կապեր ունի կյանքին՝ այնքան ավելի հախուռն է:

Եվ կուգա հեղափոխության երկրորդ աստիճանը, հիվանդապին, դաժան, նեղմիտ ու մսեռանդ շարժուձմ մը, երբ մարդը կարծես կձգտի ուրանալու իր հոգիին խորքը եղած մարդկայինը և մեջտեղը կմնա մերկ ու ահռելակ մարդ-գազանը: Մոնտանյարները[79] Ժրանտալի մեջ, պոլշևիկները Ռուսաստանի մեջ հեղափոխության այդ աստիճանը կներկայացնեն: Հանրային ցնցումի գերագրգիռ վիճակ մը, հիվանդության նման բնական ու կանոնավոր ընթացքով, հիվանդության մը նման հաստատ ու որոշ ախտանիշներով և հիվանդության մը նման անօգուտ, անխմատ և ապարդյուն. որովհետև հենց որ հեղափոխության ջերմը պակսի և սկսի դանդաղ ապաքինումը՝ ամեն ինչ կամաց-կամաց կվերադառնա իր նախորդ վիճակին և այդ բոլոր իրարանցումեն, հուրհեն, արյունեն ու բանդագուշանքեն չի մնար ոչինչ: Կմնա միայն, ինչ որ կատարված էր հեղափոխության առաջին աստիճանին վրա, այսինքն՝ մեր դարուն համար՝ հողը կանցնի գյուղացիին ձեռքը և միապետությունը կանձահարվի կամ կվերացվի:

Եվ այդ արդյունքն ալ կատանանք ոչ անմիջապես. ծայրահեղությունը ծայրահեղություն կծնի. և կազդուրվող ժողովուրդին մեջ կառաջանա աստելություն մը ամեն տեսակի ժողովներու ու համաժողովներու, կոմիտեներու ու խորհուրդներու դեմ, կկորչի հավատքը ընտրական ու հավաքական մարմիններուն հանդեպ, և ան ընազդորեն կփնտրի երկաթի բազուկ մը, որ կարգ ու կանոն բերե, հանգիստ աշխատանք և իր ձեռք ձգած հողը իր վրան վավերացնե: Եվ արդեն հարթված է ճամբան Նապոլեոնին[80] ու Նապոլեոնիկներուն համար, որոնք իսկույն կմաքրեն հեղափոխության երկրորդ աստիճանի վերջին մնացորդները և ապաքինող ժողովուրդի նոր եռանդը կուղղեն դեպի դուրս, պատերազմներու ու տիրապետության:

Եվ Ռուսաստանը հիմա հասուն է արդեն: Շատ որոշ զգալի է պինվորականներու հետզհետե ձեռք ձգած գերիշխող ազդեցությունը, և որը սկսած է կռել ու նորել բանակը, վերականգնել հին ձևերը. արդեն մոցուցած է պարտադիր զինվորություն ամբողջ երկրին համար, մեջը հաշված և «դաշնակիցները»: Ընկեր Նապոլեոնը չատ չի ուշանար: Կրնա պատահիլ, որ կեդրոնի այդ ցնցումներու միջոցին ռուսները ստիպված ըլլան երկրորդ անգամ թողնելու Կովկասը՝ պոլշևիկներու սերմանած անծայր զզվանքին ու ատելության հետևանքով: Բայց վա՛յ Թուրքիային, եթե այդ խառնակ վիճակին օգտվիլ ուզենա ու գրավե Կովկասը: Ռուսական բարձրացող առաջին ալիքը կնետվի անոր հողերուն վրա. իսկ թե մինչև ո՞ւր՝ ո՞վ կրնա ըսել:

Իր հույսը դնել եվրոպական պետություններու մրցակցության ու օժանդակության վրա՝ սին երազ մըն է նորեն Թուրքիայի համար, ինչպես որ վերջին երկու դարերու իմաստուն պատմությունը արդեն համոզած պետք է ըլլա Թուրքերը: Այո՛, միշտ այս կամ այն պետությունը չահերով հակառակ է ըլլալու ռուսներուն և պատրաստ դողունի կամ բացարձակ կերպով հրահրելու Թուրքերուն ձգտումը՝ անոնց ձեռքով իրեն համար չափանակներ հանել տալու համար կրակեն: Բայց նախ պետք չէ մոռնանք, որ ռուսեն ավելի Անգլիայի դեմ լարված ազգեր կան, մանավանդ այս վայրկյանին, որոնք իրենց հույսերը ռուսներու վրա դրած են և այդ աժտահարեն կսպասեն մյուս աժտահարի սանձահարումը, ինչպես, օրինակ, Ֆրանսան:

Գալով Ամերիկայի Թուրքերուն թիկունք դառնալուն՝ անշուշտ մեծ սիրով պատրաստ է Անգլիան Թուրքերը նետելու ռուսներուն վրան, եթե պարագաները այդպես պահանջեն, ինչպես որ հույները նետեց Թուրքերուն վրա. բայց անոր օժանդակությունը չատ որոշ սահման մը ունի: Անիկա երբեք չի կրնար համաձայնիլ, որ ստեղծվի ահագին և ուժեղ Թուրք-մահմետական պետություն մը իր Հարավային Ասիայի տիրապետություններու գլխուն, ուր բացի Հնդկաստանի արևելքեն ամբողջ բնակչությունը մահմետական է. որովհետև այդ ժամանակ է միայն, որ կուգա իսկական պանիսլամիզմը:

Բոլոր իսլամները ոտքի հանելու համար ուժեղ ու մեծ իսլամական պետութիւն մըն է անհրաժեշտ. նստած տեղեդ փեթվաններով[81] ու թղթերով իսլամները ոտքի չեն կրնար հանել, բայց երբ իսլամ խոշոր ուժ մը շարժվի, անոր համայքին ու պահանջին տակ կշարժվին բոլորը: Եվ ճիշդ ատոր համար ալ շատ խախուտ հենարան է Անգլիան թուրքերու ձգտումներուն համար:

Ըլլալ փոքրիկ պետութիւն մը, իր ապրանքներուն համար հետամնաց աղվորիկ շուկա մը, ծովափերն ու նեղուցները այս կամ այն ձևին տակ իր ազդեցութեան թողած և ուսներուն դեմ կռվտելով, հա՛, Անգլիան ատոր համաձայն է և Թուրքիայի գոյութիւնը իրեն այդպես կպատկերացնե: Այնքա՜ն մահմետական «պետութիւնները» կան իր հրամանին տակը «անկախ», հատ մը ավելի: Բայց մեծ ու ուժեղ, իսկապես անկախ մահմետական պետութիւն մը, իր Հնդկաստանի կողին և Միջափետքին տիրող սարերուն վրա, Անգլիան ինչպե՞ս կրնա ստեղծել: Ատիկա կնշանակե վերջ իր տիրապետութեանը Հարավային Ասիայի վրա. իրեն համար ասիկա շատ ավելի սպառնալից է, քան ռուսական վտանգը:

VIII. Ժամանակի ոգին հակառակ պան-շարժումներու

Եվ վերջապես բաներ կան, որ դարն ու ժամանակը թույլ տալ չեն կրնար: Թուրքիայի ուզածն է ազգութեան գաղափարը,- ավելի ճիշդ կըլլա, եթե ըսենք՝ ցեղակցութեան գաղափարը,- չինել իրեն համար նոր դրոշակ մը և ատոր անունով վերահաստատել նորեն ընդարձակ բռնապետութիւն մը՝ ջնջելով այդ կողմերը մնացած վերջին ոչ-մահմետական հայերն ու վրացիները, խեղդելով ոչ-թուրք ժողովուրդները, ինչպես են պարսիկներն ու քյուրտերը, իսկ մնացած մոնգոլական ծագում ունեցող ժողովուրդները ենթարկելով իրեն, ծառայեցնելով իրեն, աշխատցնելով իրեն համար և ինքը անոնց ոչինչ չի տալով, չարունակ պինվոր ու տիրող խաղալով, ինչպես մինչև հիմա: Այսինքն՝ Թուրքիան հիմա կձգտի

ճիշդ այն բանին, ինչու համար որ կործանվեցավ Օսմանյան պետությունը:

Անիկա կհուսար, որ, միայն դրոշակիդ դույնը փոխելով, կհաջողիս քեզի կործանող պատճառները վերստեղծող դարձնելու, առանց փոխելու հոգիդ, առանց փոխելու քաղաքականութիւնդ, առանց բարձրացնելու տնտեսութիւնդ քու սեփական ուժերովդ:

Ասիկա մեր դարուն մեջ անկարելի է. և ոչ միայն հայերու, վրացիներու, պարսիկներու և քյուրտերու տեսակետեն անհանդուրժելի է այս տեսակի նոր Լենկթիմուրյան պետութեյան[82] մը վերստեղծումը, այլ նույնիսկ մոնգոլական ծագումե եղող ժողովուրդներու ցանկութեյան ու շահերու տեսակետեն: Երբ թուրք պրոպականտիստը հանուն իսլամի, հանուն ազգային անկախութեյան կուգա գրգռելու Ատրպէյջանի, Թուրքեստանի, Եգիպտոսի, Միջագետքի ու Հնդկաստանի թուրք, արաբ ու հնդիկ կրոնակիցները կյավուր տիրապետողներու դեմ, անշուշտ որ կգտնե և՛ լսող ականջներ, և՛ համակրող սրտեր, և՛ ձեռնարկող երիտասարդ ձեռքեր. այնքան բնական է և ինքնին հասկնալի: Բայց պատկերը բոլորովին կփոխվի, երբ կրոնակցութեյան կամ ցեղակցութեյան դիմակին տակ Օսմանի[83] թոռները հեծնել կուզեն մյուս ժողովուրդներուն կռնակը և անոնց ձեռքին աշխատանքն ու անոնց երկրին հարստութեյունները ծծել կփորձեն:

Հոս արդեն մեծ տարբերութեյուն մը չի մնար ռուսին, օսմանցիին ու անգլիացիին միջև: Օր.՝ Ատրպէյջան մը մեծ հափշտակութեյամբ իհարկե պատրաստ է ռուսներու լուծեն ազատվելու, անկախ պետութեյուն մը դառնալու համար. և անշուշտ երախտապարտ պիտի զգա ինքզինքը իր ցեղակից օսմանցիին հանդեպ, եթե ան օգնե իրեն իր նպատակին հասնելու. բայց որ Ատրպէյջան մեկ նահանգը դառնա Օսմանյան պետութեյան և կթան կովը Պոլիս կամ Անգորա նստած էֆենտիներուն, ո՛չ, ատիկա արդեն տարբեր հարց է:

Գերմանիան ալ ուներ իր պանգերմանիզմը, այսինքն՝ Հոլանտան, Դանիմարքան, Շվետը, Ավստրիան ու Զվիցերիայի մեկ խոշոր մասը իր պոչին կապելու ախորժակը. բայց բան դուրս չեկավ: Ռուսաստանն ալ մեծ ծրագիրներ ուներ Լեհաստանը, Զե-

խաստանը և բալքանյան պետութիւնները իր կառքին լծելու պանսլավիզմի անվան տակ. նորեն բան դուրս չեկաւ: Ինչ որ անհամեմատ ավելի մեծ և ուժեղ Ռուսաստանը չի հաջողեցաւ, ինչ որ անհամեմատ կուլտուրապես բարձր և ստեղծագործող Գերմանիան չի հաջողեցաւ, իհարկե որ հաջողիլ չի կրնար ամեն տեսակետե շատ ավելի ողորմելի Թուրքիան: Այդ կարգի ծրագիրներուն հակառակ է ժամանակի ոգին:

Ի՞նչ է բերելու Թուրքիան Խիվայինն ու Բուխարային, Պարսկաստանին ու Կովկասին: Երեկվան Թուրքիան աչքերնուս առջևն է, ինչպես և Թուրքի հոգեբանութիւնն ու ստեղծագործական անկարութիւնը. և ոչինչ չէ փոխված երեկվընե մինչև այսօր: Այդ տնտեսական վիճակով, այդ հոգեկան աղքատիկ միջոցներով, աշխատանքի այդ անսիրելութիւնով, իսկ կյանելու ու լափելու լայն կոկորդով, ընդարձակ ու բարեբեր երկիրները գարերու ընթացքին անապատի վերածելու մեծ չնորհքը ունեցող օսմանցին ի՞նչ է բերելու իր ցեղակից ժողովուրդներուն, որ ռուսներուն ձեռքեն խլել կսպառնա՝ ճոճելով օդին մեջ այդ միևնույն ռուսեն կամ անոր նմաններեն փոխ առած սուրը:

Փոխ առնված սուրերու այդ խրոխտ ճոճանքը միայն մեկ հատիկ հետևանք կրնա ունենալ՝ վերջնական ոչնչացումը Թուրքիայի անկախ գոյութեան: Արագացնելով ռուսոթուրք ընդհարումը, որ այսպես թե այնպես գալու է անպատճառ, համոզիչ պատրվակ մը ու կատաղութիւն տալով ռուսներու առաջ չարժուժին և մյուս կողմեն ղրկելով անգլիացին, իբրև չարիքներու փոքրագույնը, կերպ մը համաձայնութեան գալու Ռուսաստանի հետ, որ բնավ անկարելի բան չէ: Եվ ահա՜ կբաշվի «ազդեցութեան շրջանակի» գիծ մը Անատոլուի սարերուն վրայեն արևմուտքեն արևելք, որուն նմանները վերջին պատերազմեն առաջ քաշված էին արդեն թե՛ Փոքր Ասիայի և թե՛ Պարսկաստանի կրծքին վրայով: Սա՛ չըլլար, անշուշտ, անգլոռուս մեծ վեճին վերջնական հարդարումը, բայց կըլլա թուրքական հարցի վերջնական լուծումը:

Սակայն այս բոլորը մե՛ր դատողություններն են, մե՛ր հասկացողությունը, մե՛ր խելացիությունը, մե՛ր, կողքեն դիտող մարդու, քիչ մըն ալ ո՛չ շատ բարյացակամ մարդու. ուրիշ է Թուրքի դատողությունը, Թուրքի խելացիությունը:

Հավանորեն կյանքն ու պատմությունը բերեն պիտի կամացկամաց նաև Թուրքը այս դատումին ու հասկացողության: Բայց ո՞վ գիտե. կույր են եղեր միշտ դեպի իրենց անկումը դիտողները. անդունդը պտորվող քարը քանի հատակին կմոտենա, այնքան ամուր կգլտորվի:

Եվ եթե գան պիտի նույն հասկացողության, ե՞րբ, ինչքա՞ն ժամանակ է հարկավոր հոտ հասնելու համար: Կյանքը ունի դանդաղումներ, բայց ունի և այդ դանդաղումին սահմանը: Այդ սահմանեն անդին անիկա չի սպասեր: Կուգան ավելի հարմարվածները, ավելի չուտ չարժվողները կզարնեն, կտապալեն ու կանցնին. ժամանակ չեն տար ուշքի գալու շատ ետ մնացողին, շատ ուշ հասկացողին:

Եվ վերջապես, պիտի կրնա՞, պիտի ունենա՞ Թուրքիան հարկ եղած հոգեկան ճկունությունը ժամանակի նոր պայմաններուն, նոր պահանջներուն հարմարվելու համար. պիտի կրնա՞ աշխատիլ ու իր տնտեսությունը իր ձեռքը պահել, թե՞ նորեն, ինչպես մինչև հիմա, իր երկրին բոլոր ձեռնարկները, բոլոր եկամուտները, բոլոր ծրագիրները ծախե պիտի Եվրոպային:

Այս հարցերուն պատասխանը պիտի տա քսաներորդ դարու պատմությունը: Առայժմ մեր գիտցածը այսքան է, որ հիմա հիմնովին տարբեր է Թուրքի դատողությունը, Թուրքի խելացիությունը և բոլորովին ուրիշ է Թուրքի ճգտումը:

Ան երեկ մեծ պետություն էր, կտիրեր ազգերու, կուտեր անոնց չնորհքն ու աշխատանքը, կհալածեր ու կջարդեր. ինքը տերն էր, պաշտոնյա ու զինվորական: Եվ հիմա նորեն ծարավը ունի զարնելու ու ջարդելու, տիրելու նորեն ուրիշներու գլխուն, տիրապետելու ընդարձակ աշխարհներու վրա, միջին դարերը ետ բերելու: Ինչո՞ւ անպատճառ ուզան ու անգլիացին պիտի ըլլան

այդ երկիրներուն ու ժողովուրդներուն տիրապետողն ու շահագործողը. Թուրքիան ինչո՞վ է պակաս:

Բաղդ է, պիտի փորձե, պիտի ընե իր ձեռքեն եկածը՝ օգտվելով եվրոպացիներու իրարու հետ կռվըտելեն, այսօր պոլշևիկներն ու ֆրանսացին, որոնք մտեր են իր թևերը, վաղը գերմանացին ու անգլիացին. «Մեծ է Աստված»: Եթե իրենց բոլոր ուզածին ալ որ չհասնին, գոնե մեկ մասին կհասնին Աստուծմով, կկրկնապատկեն իրենց թիվն ու տարածութիյունը ու կամրացնեն իրենց թիկունքը, ինչքան հնար է, հյուսիսի սպառնալիքեն:

Ջմռռնանք, որ այդ «գոնե մեկ մասը» Կովկաս ըսել է և ամենեն առաջ մեր դժբաղդ հայրենիքին վերջին կտորը, որուն վրա հայ կապրի դեռ:

ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԸՆԴՀԱՐՄԱՆ ԳԾԻՆ ՎՐԱ

Ա. ԱԶՆՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

I. Ակնարկ մը մինչև քրիստոնեություն

Հայ ժողովուրդի պատմության վրա երեք նայելու ըլլանք բարձրեն, կգտնենք չորս կարևոր տարրեթիվեր, որոնք հիմնովին կտարբերին իրենցմե առաջ եղած անցյալը իրենց ետևեն եկող վիճակեն: Այդ չորս թիվերն են. 1) Յոթներորդ դարու կեսերը Քրիստոսե առաջ, 2) Չորրորդ դարուն սկիզբը Քրիստոսե ետքը, 3) Տասնմեկերորդ դարուն կեսերը, և 4) Տասնիններորդ դարուն սկիզբը:

Յոթներորդ դարեն առաջ Հայաստանի Հողին վրա ապրող ժողովուրդը արձանագրություններու Հալտի[84] անվանված ժողովուրդն է իր բազմաթիվ ցեղերով, որոնք զանազան խմբումներով կկազմեն մեծ ու փոքր իշխանություններ և որոնք միացած իրարու կներկայացնեն ավատական միապետություն մը: Այդ Ուրարտուի թագավորությունն է, որ ոչ միայն կդիմադրե իր ժամանակի ամենեն հզոր Ասորեստանի թագավորներուն իր անկախությունը պաշտպանելու համար, այլև Մենուաս և Արգիստիս[85] թագավորներու օրով կդառնա Ասորեստանի լուրջ ախոյանը և գերիշխանությունը իր ձեռքը ձգել կուզե: Դեպի յոթներորդ դարը սակայն ան կսկսի իյնալ մասամբ ներքին թուլացումով, մասամբ ալ Հյուսիսեն խուժող կիսավայրենի ցեղերու ցնցումին տակ:

Հայ ժողովուրդը, որ Եվրոպայի արդի ժողովուրդներուն ազգական արիական ցեղերու խումբ մըն է, կմտնե Ուրարտուի Հողերեն ներս, կգրավե ու կընկճե ամբողջ Հալտական երկիրը մինչև Ուրմիա և մինչև Կորդուք:

Եվ ահա՛ մոտավորապես յոթներորդ դարու կեսեն է, որ կսկսի այդ երկու ժողովուրդներու խառնուրդը. ավելի բարձր քա-

քաքակրթութեան հաստած հայութիւնը և ապրելի թարմ ու կորովի եկ-
ւորներու: Հաջորդ դարու ընթացքին արդեն կատարված իրողու-
թիւն մըն է այդ երկու ժողովուրդներու լեզուի, կրօնի, բարքի ու
իշխանութեան կատարյալ ձուլումը և առաջացումը նոր ժողո-
վուրդի մը, որ իր վրա կպահէ սիրասպետողի անունը՝ հայ ու հա-
յութիւն: Ճիշդ այնպես, ինչպես քանի մը դար առաջ դեպի Պերո-
պոնես[86] և կղզիները իջնող թարմ ու կիսավայրենի ցեղերը, տի-
րելով ու խառնվելով արդեն բարձր քաղաքակրթութեան տեր նա-
խորդ միկենյան ժողովուրդներուն[87], կկազմեն հույն ժողովուրդը:
Այսպեսով՝ Քրիստոսե առաջ յոթներորդ դարու կեսը մեր ժողո-
վուրդի ծագման տարեթիվն է:

Հապիվ է կատարված ժողովուրդներու ձուլումը, հապիվ է
սկսած հին ու նոր իշխաններու նոր ամատապետական միացում
մը նոր Տիգրաններու ձեռքին տակ, որ արևելքեն վեցերորդ դարու
կեսին կբարձրանա արագ Մերձավոր Արևելքի ամենեն մեծ միա-
պետութիւնը և արագ տապալելով Լյուդիան[88], Բաբելոնը, Քար-
քեմիշը[89], Հեթիթեյան մնացորդները[90] և Եգիպտոսի փարավոնները,
իր իշխանութիւնը կտարածե Հիմալայեն մինչև Սահարա. և
կշարժվի դեպի Եվրոպա մինչև Մարաթոն[91] ու Սալամինա[92], ուր
առաջին անգամ բեմ դուրս կուգա Հաղթական՝ ասիական
Արևելքին դեմ եվրոպական դիմադրող Արևմուտք մը:

Պարսիկներու թևին տակ ինկած փոքրիկ հայ ժողովուրդը
չէր անշուշտ, որ ալիսի կարողանար դիմանալ այդ հսկայական
ուժին: Բայց ապաստանած իր լեռներուն և օգտվելով քաղա-
քական անցուդարձեն՝ հայերը մինչև հինգերորդ դար համառ
դիմադրութիւն մը ցույց տվին հաճախակի ըմբոստացումներով,
ինչպես որ կվկայե Դարեհի բիսիթունյան արձանագրութիւնը[93].
մինչև որ իհարկե ընկճվեցան, և հայ իշխանները ենթարկվեցան
պարսկական սադրապներուն:

Չորրորդ դարուն վերջը կշարժվի Արևմուտքը դեպի Արևելք.
Ալեքսանդր Մակեդոնացին[94] արևմտյան սիրապետութիւնը,
քաղաքակրթութիւնը և ոգին կպտտցնեն մինչև Հնդկաստան: Հայ
իշխանները կիյնան Սելևկյան իշխանութեան[95] սահմաններուն մեջ,
գործնականապես ինքնագլուխ:

Շուտով կառաջանան երեք-չորս խմբումներ իրենցմէ ամենէն ազդեցիկներուն չուրջը, մինչև որ այս կիսանկախ իշխանապետներեն մեկը երկրորդ դարուն վերջերը[96] այնքան կուժեղանա, որ կմիացնէ բոլոր Հայ իշխաններըը իր ձեռքին տակ և կկազմէ առաջին Հայկական կայուն պետութիւնը՝ Արտաշիսյան հարըստութիւնը[97]:

Տիգրան Մեծ[98] չատ չանցած դուրս կշարժվի Հայկական սահմաններեն, և ինչպես երբեմն Արգիստիս, կիջնէ դեպի Սիրիա և կհիմնէ Հայկական տիրապետութիւն մը, երբ կզարնվի արևմտյան ամենեն մեծ ու ամենեն հզոր պետության՝ Հռոմի հակադիր շարժումին՝ դեպի Արևելք արշավին: Երկար մաքառումե մը ետքը՝ Տիգրան ստիպված է տեղի տալու և քաշվելու իր զուտ Հայկական սահմաններուն ետին, Եփրատեն արևելք:

Եվ այդ օրեն Հայաստանը կդառնա Արևելքը Արևմուտքեն զատող սահմանը, Արևելքը Արևմուտքին կապող երկիրը, Միջագետքի հետ միասին: Եվ այդ օրեն կսկսվին հետզհետե ուժեղցող պարթևներու և Հռոմի երեք դար տևող կռիվները՝ Հայաստանն ու Միջագետքը իրենց ազդեցության շրջանին մեջ պահելու համար:

Հայ թագավորները՝ սկիզբը Արտաշիսյան տունեն, ետքը պարթևներուն ազգական Արշակունիներեն[99], անվերջ կռիվներու մեջ են՝ երբեմն մեկուն հարելով, երբեմն մյուսին, իրենց անկախությունը պահել կարենալու համար: Հզոր Հռոմի կամքը արհամարհել չեն կրնար և ենթարկված են անոր վերին գերիշխանությանն ու վավերացումին. թեև պարթև թագավորական տան հետ ունեցած իրենց ազգակցական կապերով, շահերով ու համակրանքներով անհամեմատ ավելի կապված են Արևելքի հարևաններուն:

II. Քրիստոնեությունը իբրև զենք ազգային ինքնապաշտպանության

Չորրորդ դարու սկիզբն է, որ Հայաստանն ալ, իբրև դաշնակիցը Հռոմի, Հռոմեական ամբողջ պետության մը հետ միասին և անշուշտ անոր ազդեցության տակ կընդունի քրիստոնեու-

թյունը[100]: Քրիստոնեությունը ընդունիլը իրողություն մըն է, որ հիմնովին կփոխե հայ ժողովուրդի քաղաքական ու քաղաքակրթական դիրքը, վերջնապես և անքակտելիորեն կկապե Հայաստանը արևմտյան աշխարհին, կդարձնե այդ բուռ մը ժողովուրդը հառաջապահը արևմտյան մտքին, կրոնին ու ձգտումներուն և կդառնա այն վեմը, որուն վրա կառուցված է հայ ժողովուրդի ամբողջ ապագա կյանքն ու վիճակը, բաղդն ու տառապանքը մինչև մեր օրերը:

Հայերը թե՛ իրենց ծագումով և թե՛ մոտիկ հարաբերության մեջ գտնվելով Սելևկյան իշխանության և Հռոմի հետ՝ բնականաբար մշտական հոգեկան շփում ունեին Արևմուտքի հետ նաև քրիստոնեությունը ընդունելեն առաջ: Բայց իրենց արյան կեսը ըլլալով ուրարտական և ապրելով արևելյան ժողովուրդներու կյանքին ու չրջանակին մեջ, օգակված պարսիկներուն ու պարթևներուն՝ հայերը իրենց կենցաղով, վարք ու բարքով, ըմբռնումներով, ոգիով ու հակումներով կապված էին Արևելքին. Արևելքի ժողովուրդ էին:

Քրիստոնեությունն էր որ արմատապես փրցուց հայ ժողովուրդի հոգին Արևելքեն և կապեց Արևմուտքին: Մինչև քրիստոնեություն հայը կկռվեր ու կդիմադրեր գլխավորապես Արևմուտքի թշնամիին չենթարկվելու չանքերով և իր օգնությունը կսպասեր Արևելքեն, իր թիկունքը հենած էր պարթևներուն: Քրիստոնեությենեն ետքը իր գլխավոր թշնամին, որուն դեմ կմաքառի իր գոյությունը պահպանելու համար, Արևելքն է՝ սասանյանները, արաբները, թուրքերը, և իր հույսը դրած է միշտ Արևմուտքի վրա, թիկունքի քրիստոնյա պետություններու վրա:

Հայերը քրիստոնյա են դարձած ո՛չ մասնավոր հակումով, ո՛չ մասնավոր հապճեպով, ո՛չ ալ իրենց կամքով, ինչպես ընդհանրապես բոլոր ժողովուրդները: Կրոնքը փոխելը կըլլա միշտ բռնի և միշտ կապված քաղաքական հաշիվներու: Բայց անգամ մը քրիստոնեությունը յուրացնելեն ետքը հայերը իրենց ամբողջ հոգիով և իրենց բոլոր ուժովը փարեցան այդ նոր կրոնին, և ամեն հալածանք ու նահատակություն հանձն առին այլևս չզատվելու հա-

մար քրիստոնեութենեն և մասնավորապես քրիստոնեության այն ձևեն, որը անգամ մը ընդուներ և յուրացուցեր էին:

Հոտ անշուշտ դեր ունի նոր սկզբունքներու և նոր դավանանքի ներշնչած ոգևորությունն ու հափշտակությունը, մանավանդ մեր առաջին քրիստոնյա դարերուն. հոտ, գուցե, դեր ունին նաև արիական հայու որոշ հոգեկան տրամադրությունները դեպի քրիստոնեական սիրո ու անձնվիրության քարոզները: Բայց կթվի, որ այդ բոլորեն դուրս և այդ բոլորեն վեր հայությունը այս աստիճանի համառ կերպով Արևմուտքի նոր կրոնին կապողը եղեր է ուրիշ պատճառ մը՝ իր ինքնուրույնությունը, իր անհատականությունը, իր անկախությունը պահպանել կարողանալու տենչը:

Ամեն տեղ, բայց մանավանդ Արևելքի մեջ, ուր տիրապետությունները կրոնապետություններ են, կրոնքի դեմ եղած հալածանքը ազգային ուրույնության և մասնավորապես քաղաքական անկախության դեմ մղված կռիվ է. որով ազգ, կրոն ու անկախություն միշտ սերտ կապված են իրարու, և իր կրոնին փարիլը կդառնա զենք մը, միջոց մը իր ազգային անհատականությունը պաշտպանելու, իր պետական ազատությունը պահպանելու: Մանավանդ որ, իբրև լեռնաբնակ ժողովուրդ և մշտապես հզոր հարևաններե կլանվելու սպառնալիքին տակ գտնվելով, հայու մեջ մասնավորապես շեշտված է եղեր անհատականությունը: Շեշտված է եղեր ամեն բանի մեջ ուրույն ըլլալու, ուրիշներու հոտին չխառնվելու, ինքն իր համար ջոկ ու ազատ ապրելու բնազդական ծարավը. ամեն օտարներե վերուցած բան իսկույն իր դրոշմին ենթարկելու, յուրացնելու, յուրայնացնելու ձգտումը: Արդեն այդ անհատականացման, յուրայնացման մեջն է հայ մտքի ու հոգիի մեկ բնորոշ հիմնական գիծը, գուցե և իր տաղանդներուն հիմնաքարը:

Կարելի է, որ հայու քրիստոնեությունը ընդունելուն վրա անգամ իր ազդեցության բաժինը ունեցած է այդ ինքնապաշտպանության զգացումը. որովհետև մեր քրիստոնյա դառնալեն հազիվ կես դար առաջ կտապալվի Պարթևական հարստությունը և անոր հաջորդող Սասանյան տունը[101] կվերակենդանացնե զրադաշտական կրոնը, որուն ճնշումը չուտով զգալի կդառնա նաև

Հայաստանի վրա: Սասանյաններու տիրապետական ձգտումներուն քաղաքականապես պաշտպանվելու համար հայերը ստիպված էին ավելի սերտ անդամակցելու Հռոմին. այդպես ալ անոնց սկսած կրոնական ճնշումը, չատ կարելի է, փութացուց, դյուրացուց հայերու քրիստոնյա դառնալը:

Համենայն դեպս հավիտ քրիստոնեությունը արմատացած էր Հայաստանի մեջ, հինգերորդ ու վեցերորդ դարերու ընթացքին, համառ կռիվ է իրենց նոր կրոնի պաշտպանության համար. և ղեկավարն են ու պլխավոր պետականատերը Մամիկոնյանները, որոնք թե՛ իրենց երկրի դիրքով և թե՛ կաթողիկոսական տան հետ ունեցած ազգակցական կապերով չատ ավելի ուժեղ չափերով ենթարկված էին արևմտյան ազդեցության. մինչդեռ Սյունիքը, ամենեն ավելի արևելքը Հայաստանի, դեռ կիսովին հեթանոս էր և հակված արևելյան քաղաքականության:

Դեռ նոր էր թուլցած պրադաչտականության ճնշումը, որ յոթներորդ դարու կեսերուն նոր սպառնալիքով ոտք կդնե Հայաստան, ամբողջ Մերձավոր Արևելքը իր համայքին ու տիրապետության տակ միացնող նոր միաստվածյան կրոնքը՝ մահմետականությունը: Եվ իր առաջին չփման օրեն մինչև այսօր Հայությունը անընդհատ մաքառման մեջ է այդ կրոնին դեմ, ահագին զոհերով, ահագին ուժեր ատոր վրա վատնելով, բայց դիմադրած է մինչև այսօր, մերժած է, չէ ուզած: Որովհետև ընդունիլ մահմետականությունը՝ կնշանակե ազգովին խառնվիլ այդ մահմետական ծովուն մեջ, խեղդվիլ ու կորչիլ: Ինչ պիտի մնար հայ ազգութենեն արաբներու և մանավանդ թուրանական ցեղերու այն հեղեղին տակ, որ ողողեց Հայ Հողը, եթե քրիստոնեության անջլատեը գոյություն չունենար: Կրոնքի նույնությունը պիտի բերեր խառն ամուսնություն և խառն կենցաղ, և պիտի առաջանար նոր խառնուրդ մը, ուր հայկականեն կմնար մոտավորապես այնքան, ինչքան որ ուրարտականեն մնացեր է հայկականին մեջ: Հայ ուրույնությունը մեռած կըլլար վաղուց՝ դառնալով թուրքի, թաթարի, մոնգոլի, օսմանցիի ու ատրպէյջանցիներու հոգին ու քաղաքակրթությունը ազնվացնող տարր մը: Ինչպես և եղած է մասամբ:

Քրիստոնեությունը ոչ միայն գրաղաչտական ու մահմեդական կրոններուն դեմ է, որ խաղցած է այդ հոգեկան ու քաղաքական անկախության պաշտպանի դերը, այլ նույնիսկ մյուս քրիստոնյա ժողովուրդներու դեմ, որոնք նույնպես չանացած են իրենց դավանանքին դարձնելու Հայ եկեղեցին՝ իրենց քաղաքական ու քաղաքակրթական տոպրակին մեջ կոխելու համար Հայությունը:

Բյուզանդիանը[102] Քաղկեդոնի ժողովեն[103] սկսած մինչև իր քայքայումը ծրագրեն չէ հանած Հայաստանը ուղղափառության դարձնելու չանքերը: Եվ ամեն անգամ Արևելքեն եկող հարձակումներուն դիմադրել կարողանալու համար և հենց իրենց բյուզանդական սահմանները պաշտպանել կարողանալու համար, երբ ստիպվեր ենք դիմելու կամ հենվելու հույնին, միշտ անխափան կերպով մեր դեմն են ելեր կրոնական միության վեճերը, ճնշումը և պահանջը:

Նույնն է նաև լատին եկեղեցիին վերաբերմամբ. խաչակիրներու հետ մեր Կիլիկյան իշխանության չփումը սկսելուն պես կսկսվի նաև եկեղեցիներու միացման անվերջանալի առուտուրը: Երբ պետք է եղած Արևմուտքի զործակցությունն ու օժանդակությունը՝ ետ մղելու համար ամեն կողմեն հուպ տվող մահմեդական օղակը, պաշտպանելու համար Ասիայի միակ քրիստոնեական նավահանգիստը՝ Այասը[104], ինչպես և ամրացնելու համար մեր դոյությունը, որ քրիստոնեության միակ հենարանն էր ասիական հողերու վրա ԺԳ և ԺԴ-րդ դարերուն, մենք ստացեր ենք կանոնավոր կերպով պապերու խոստումներն ու օրհնությունը, ամենաշատը՝ չնչին դրամական օգնություն, բայց ատոր փոխարեն կաթոլիկ հոգևորականներու արշավանք, կրոնական ժողովներ ու պատակտում և շատ սիրալիր հրավեր՝ մտնելու կաթոլիկ եկեղեցիին ծոցը: Եվ այդ ներքին կրոնական, կուսակցական, պալատական ու լատինական վեճերուն ու խառնակություններուն մեջն է, որ մամլուքները[105] կուտան վերջին հարվածը Կիլիկիայի թագավորության[106]:

Այսպեսով՝ ամեն կողմե մեր Հայրենիքին վրա հարձակողները, մեր երկրին վրա աչք ունեցողները, մեզի յուրացնելու և

մարսելու ախորժակ ունեցողները մոտեցեր են միշտ Հավատափոխության ծրագիրը թեւի տակ, մեր հոգիները փրկելու քնքուշ հոգածութեյամբ. և զարմանալու ոչինչ չկա, որ Հայութեյունը իր ամբողջ հոգիով փաթթվեր է իր եկեղեցիին վիզը՝ սկիզբը իր քաղաքական անկախութեյունը պաշտպանելու համար, վերջին դաժան թուրան-մահմետական զարերուն ալ դնեն իր հոգեկան անկախութեյունը, իր ազգային գոյութեյունն ու ուրույնութեյունը փրկելու համար:

III. Քրիստոնեությունը իբրև հիմնական պատճառ մեր ազգային հասունացման ու կոզիացման

Քրիստոնեութեյունը բերավ գիր, հատուկ հայ գիր, իհարկե, արևմտյան օրինակներուն վրայեն, բայց Հայ սովորութեյան համաձայն բոլորովին յուրացուցած, Հայացուցած:

Գիրը բերավ թարգմանութեյունը Սուրբ գրքի և ուրիշ եկեղեցական երկերու և արևմտյան գրականութեյուն, չուտով և ինքնուրույն Հայ գրականութեյուն կրոնական, բանաստեղծական, գիտական, փիլիսոփայական և պատմական: Իսկ գիրն ու գիրքը ամենեն գլխավոր միջոցն է ժողովուրդի մը ինքնագնահատութեյան, ինքնորոշման, ինքզինքը իբրև ամբողջութեյուն մը զգալուն:

Գիրքը ապրող, տևող, չմեռնող խոսքն է, որ տարածութեյուններուն ու ժամանակներուն վրայեն կխոսի հեռավորներուն, եկող սերունդներուն, գալիք սերունդներուն և այդ բոլորը կկապե իրար, բոլորին զգալ կուտա իրենց կապը, իրենց ընդհանուր անհատականութեյունը և կարթնցնե ազգային գիտակցութեյունը, որը ավելի ևս ուժ կուտա անոնց ազգային բնական զգացումին ու բնազդին: Եվ կծնի պահանջը ունենալու երկ մը, որուն մեջ նկարված ըլլա այդ ընդհանուր անհատականութեյունը, իր ամբողջ եսը, Հայու Հին ու նոր լրիվ պատկերը, իր ծագումը, անցյալը, ներկան, իր ամբողջ կենսագրութեյունը, իբրև միութեյան նոր և ուժեղ օղակ մը:

Այդ պահանջին ծնունդն է Մովսես Խորենացիին «Հայոց պատմութեյունը»:

Այդ հատորին վրա շատ է գրված, շատ է խոսված, շատ են քրքրեր խեղճ գրքույկը, քններ են իր բոլոր տեսակետներն ու ևերը, երբեմն նկատեր են իբրև ճշմարտության վերջին խոսք, երբեմն իբրև ստախոս պատմիչ ու չինծու գործ, բայց չեն մոտեցեր այդ գրքին իբրև գրական խոր ու ինքնաբուխ ստեղծագործության մը՝ արտահայտություն ու բավարարություն տալու համար իր ժամանակի ոգիին, ինչպես որ կըլլան բոլոր արժեքավոր գրական երկերը:

Խորենացիի պատմությունը իր տեսակի քերթված մըն է, արձակ ու պարզ «Շահնամե» մը Ֆիրտուսիեն քանի մը դար առաջ, բայց նույն նպատակով և նույն ծրագրով. գծել իր ժողովուրդի ծագումն ու աճումը՝ հենվելով թե՛ բանավոր և թե՛ գրավոր բոլոր հնարավոր և իրեն հասանելի աղբյուրներուն վրա, այդ աղբյուրները իրար հարմարցնելով, լրացնելով, կենդանացնելով ու գեղեցկացնելով. այսինքն՝՝ ինչ որ կընե ամեն գեղարվեստագետ, ինչ որ կընե ամեն պատմաբան, գիտակից թե անգիտակից. որովհետև իր եսն ու հասկացողությունները, իր ճաշակն ու լրացումները մեջը չխառնող «առարկայական» պատմագիրը գեղեցիկ առասպել մըն է, որուն կհավատան միայն անոնք, որոնք պատմական գրքերը բանալու սովորությունը չունին:

Պատմագրի ու բանաստեղծի միջև սահման քաշելը չափազանց դժվար գործ է, որովհետև խիստ շատ են բանաստեղծական հուբե ու թափե զուրկ բանաստեղծները և, ընդհակառակը, քիչ չեն ճաշակ, երևակայություն և գեղարվեստական հրապույր ունեցող պատմաբանները: Բացի ատկե՝ ինչ որ հիմա մեզի համար արժեքավոր է գեղարվեստական տեսակետեն, ան իր ժամանակին և իր ժողովուրդին համար արժեքավոր է եղած իբրև պատմություն: Եթե հույները իրենց բոլոր դպրոցներուն մեջ Հոմերոսը կարդացնեին, առաջին և հիմնական պատճառն այն էր, որ համոզված էին, թե ատիկա իրենց իսկական անցյալն է, իսկական պատմությունը: «Շահնամեն» պաշտելի է մինչև հիմա պարսիկներուն համար, որովհետև ամենեն առաջ իրենց անցյալը կպատմե իրենց, իրենց ազգային եսն ու հերոսները կգծե ու կգովե:

Ճիշդ այդ աչքով է նայեր հայը դարեր ու դարեր Խորենացիի

վրա, ոգևորվեր է անով, հպարտացեր է իր Հայկերով ու Տիգրաններով և ներշնչվեր է դեպի ապագան վատահությամբ: Ատոր մեջն է «Շահնամեներու» և Խորենացիներու պատմական դերը. այդ գրքերը ժողովուրդներու հավաքական անհատականությանը կերպարանք կուտան, ուևականություն և նոր ուժ. կարծես հին վեմքերե ու հին գիպքերե կխոսին, բայց անոնց խոսքը ուղղված է միշտ նոր սերունդներուն և օրմա կյանքին:

Հայ գիր, հայ գրականություն, նորագյուտ հայ անցյալ մը, հայ եկեղեցի և նոր գրագետ եկեղեցական դասակարգ մը,– այս բոլորը անմիջական արդյունքն է քրիստոնեության և այս բոլորը մեյ-մեկ նոր պատնեշ ու խրամատ հայությունը գատող ընդապատի Արևելքեն: Քրիստոսի 300 թվականը մեր պաշարման թվականն է, երբ հայությունը կլսեևնա Արևմուտքի աևաջավոր գիրք մը՝ պաշարված Արևելքով, քրիստոնեական հրվանդան մը՝ խրված սկիզբը գրադաշտական, վերջն ալ մանավանդ մահմետական ծովուն մեջ: Մինչև ԺԱ-րդ. դարու կեսերեն թուրանական ցեղերու ողողումը կկտրե այդ հրվանդանին արմատը արևմտյան ցամաքեն և հայությունը կդառնա կատարյալ կղզի մը այդ թուրան-մահմետական ծովուն մեջ:

Ճիշդ հոս է արդեն մեր կյանքի ու բաղդի ամենեն տրամատիկ կողմը. մենք կկտրվինք Արևելքեն ու կկապվինք Արևմուտքին այն միջոցին, երբ սկսված է անկումը արևմտյան քաղաքակրթության ու տիրապետության, երբ սկսված է, ընդհակառակը, Արևելքի ուժեղացումը, Արևելքի տիրապետության ու քաղաքակրթության տարածումը և մարդկության ցամաքային ու ասիական դարաշրջանը:

IV. Մեր ազնվականության փճացումը թուրանական դարերու ընթացքին

Հազիվ քիչ մը հանդարտած է փոթորիկը, ահա՛ եևևեն նոր հորձանք. կփոխվին եկողներուն անունները, վեմքի ու մարմնի ձևերը, գործածված լեզուն, բայց նույն է միշտ անոնց գործած

վայրագութեան ձևերը: Եվ այդ բոլորի արդյունքը, երեք-չորս դարերու ընթացքին, ոչնչացած է մեր ազնվականութիւնը, ջարդուփշուր է եղած հայ քաղաքացի դասակարգը ու գաղթած աշխարհիս չորս ծայրերը, իսկ հայ գյուղացիութիւնը, թվով խիստ կրճատված և զրկված հարթավայրերու իր բարեբեր հողերեն, քաշված ու կծկտած է սարահարթներուն բարձրերը և դարճած է մեծ մասով ճորտը Թուրք, քյուրտ, պարսիկ, մոնգոլ, արաբ, թաթար, մահմետական հողատերերուն, որոնք հետզհետե ավելի ու ավելի կշատնան, կտիրանան լավագույն հողամասերուն ու կտեղավորվին:

Մինչև ԺԱ-րդ դարն ալ հայը շատ էր տեսած և՛ արշավանք, և՛ հպատակութիւն, և՛ անկախութեան կորուստ. իր արդեն տասնուերը դարերու դոյութեան միջոցին իրար վրա հաշված հազիվ այդ ժամանակի կեսը ունեցած էր իր անկախ պետականութիւնը. և այդ անկախութիւնն ալ մեծ մասով շատ կախյալ անկախութիւն մըն էր, իբրև պաշտպանյալ, իբրև դաշնակից, իբրև թևարկյալ իր անհամեմատ ավելի ուժեղ ու աչխարհակալ հարևաններուն: Եվ դեպի ներս ալ կուռ ու ճույլ միութիւն մը չէր ներկայացներ. ավատական թագավորներ էին, երբեմն առավել կամ նվազ ուժեղ բռունցքով, որուն կենթարկվեին մեր մյուս մեծ ու փոքր նախարարները. իսկ ավելի հաճախ Թուլլ ու տկար վերին իշխողներ՝ ձևականի ու անվանականի մոտեցող գերիշխանութեամբ մը մյուսներու գլխուն: Բոլոր մանր իշխանները գործնականին մեջ գրեթե լիովին անկախ էին, կապրեին ու կտիրեին իրենց գլխուն, ունեին իրենց զորքը, կկռվտեին իրարու հետ, հաճախ և իրենց թագավորին դեմ:

Այնպես որ՝ եթե պետական արտաքին կազմն ու վիճակը աչքի առաջ ունենանք, պիտի ըսենք, որ Հայութիւնը կիսովին իսպառ զուրկ է եղեր պետականութենե, կիսովին ունեցեր է միայն ոչ-կուռ, խախուտ պետականութիւն մը: Բայց ատոր փոխարեն անիկա ունեցեր է միշտ մինչև Թուրանական արշավանքները ներքին պետականութիւն մը, արդեն կուռ ու ամուր ներքին պետականութիւն մը: Այդ ներքին պետական կազմի հիմքը մեր

նախարարներն են, իսկական իշխողները, իսկական տերը իրենց Հողին և Հողի վրայի մարդուն:

Արդյոք իրենց իշխանապետը եղեր է Հեռավոր Տիգրոնի արքայից արքան, թե՞ ավելի ևս Հեռավոր Հռոմի իմբերատորը, թե՞ իր քովիկը Արտաշատ, Անի կամ Վան նստող իր ազգային թագավորը՝ ժողովուրդի վարչական, տնտեսական, դատական ու զինվորական ներքին կազմին ու կյանքին մեջ տարբերություն շատ է չնչին: Հիմնական միությունը իրականին մեջ նախարարություններն են. և ամբողջ Հայ Հողն ու Հայ ժողովուրդը բաժնված է այդ նախարարներուն մեջ. ինքը թագավորը պարզ նախարար մըն էր իր սեփական Հողերուն վրա: Եվ բնավ չափազանցություն մը ըրած չենք ըլլար, եթե մինչև ԺԱ-րդ դարու մեր պատմությունը անվանենք Նախարարական Հայաստան՝ հեթանոս և քրիստոնյա ենթաբաժանումներով:

Ահա՛ այդ հիմքն է, որ կքանդվի ԺԱ-րդ դարեն սկսած, այդ մեր ներքին պետականությունն է, որ կքայքայեն թուրանական ցեղերը՝ փճացնելով և սպառելով քանի մը դարերու ընթացքին մեր իշխանական տները, որոնք արդեն նախորդ արաբ ոստիկաններու չրջանին բավական կրճատվեր ու ճղակտոր էին եղեր: Վերջին մնացորդները մեր նախարարական ազնվականության կապաստանին Կիլիկիա՝ ստեղծելով նոր թագավորություն մը, կամ կմտնեն բյուզանդական ծառայության մեջ, ինչպես որ դեպի Հյուսիս քաչվողներն ալ կդառնան վրացական պաշտոնյաներ ու կխառնվին վրացի իշխանական տներուն:

Լենկթիմուրի[107] արշավանքին մակընթացությենեն ետքը ԺԴ-րդ դարուն վերջերը լեռներուն մեջ միայն պարսկական դրոշմ առած՝ կտեսնեն քանի մը ազնվական տներ մինչև մեր օրերը. ինչպես և փշուրներ կմնան Սասունի բարձունքներուն վրա և Տավրոսյան սարերուն ծայրը: Այսինքն՝ մեր Հայրենիքի ամենեն բարձր կետերը՝ Զեյթուն, Սասուն, Ղարաբաղ: Եվ շատ բնական է, որ մեր վերջին դարերու անկախության փոքր, հուսահատ, բայց համառ շարժումները կապված են եղեր այդ երեք անուններուն: Անկախության հիմքը, զորավիգն ու պահողը մինչև ԺԹ-րդ դար ամեն տեղ եղած է մեր ազնվականությունը:

V. Հոգևորականությունը իբրև վարիչ ու ներկայացուցիչ

Իր ազնվականության ոչնչացումովը Հայ ժողովուրդը կդառնա ստրուկն ու ճորտը օտարին, օտար Հողատիրոջ, օտար իշխողին, ամեն տեսակի ու աստիճանի խաներու, բեկերու, աղաներու: Իր հայրենիքին մեջ, ի՛ր հողերուն վրա օտար մըն է այլևս ինքը, արհամարհված մը, աշխատող գրաստ մը, անտեր ու անպաշտպան: Միակ դասակարգը Հայության վիճակը մտածող, քաղաքակրթության մնացած փշրանքները պահպանել ջանացող, ժողովուրդի տառապանքը մեղմացնելու ճգնող և տիրող բռնակալներու Հանդեպ իբրև Հայ ժողովուրդի ներկայացուցիչ ու միջնորդ, կմնա միայն Հոգևորականությունը:

Մինչև քրիստոնեությունը միակ Հայ ղեկավար դասակարգն էր ազնվականությունը, որովհետև քրմական դասը թե՛ իր կազմով, թե՛ իր կյանքով և թե՛ իր մտավոր մակարդակով կրնանք առանց մեծ սխալի համարել այդ նույն ազնվականության մեկ տեսակը: Քրիստոնեությունը կբերե նոր տեսակի ղեկավար դասակարգ մը, Հոգևոր իշխանություն մը, մտավորական ազնվականություն մը՝ աշխարհականեն տարբեր և՛ իր կազմով, և՛ իր կյանքով, և՛ իր մտավոր կրթությամբ:

Այս ազնվականությունը Հաստատված չէ ժառանգականության վրա, որովհետև վարդապետ ու եպիսկոպոս կրնա դառնալ ամեն գեղջուկ. և իշխանություն մըն է ընտրական սկզբունքով, գոնե կաթողիկոսի և եպիսկոպոսներու վերաբերմամբ. տեսակ մը ժողովրդական ազնվականություն: Իր անդամները կապրին կուսակրոն, ըլլա ցրիվ, ըլլա վանքերու մեջ Հավաքված, տեր են ընդարձակ կալվածներու և եկամուտներու, բայց ո՛չ անձնապես, այլ իբրև վարիչը եկեղեցական Հարստության: Եվ ոչ միայն բոլորն ալ գրագետ են, առավել կամ նվազ չրջապատված գրքերով, այլ շատերը Հատուկ ճամբորդած են Հեռավոր Արևմուտքի մտավոր կեդրոնները, լեզուներ գիտեն, ոմանք նույնիսկ անուն են Հանած

իրենց ժամանակի կրոնական-փիլիսոփայական աշխարհին մեջ և կնցած են ժամանակի բարձրագոյն մտավոր մակարդակին վրա:

Ասոնց մեջեն է, որ դուրս են եկած մեր հոգևոր ու աշխարհիկ բանաստեղծութիւններու, երգերու ու քերթվածներու, ճառերու, մեկնութիւններու, գիտական ու փիլիսոփայական ուսումնասիրութիւններու, պատմական երկերու բազմաթիվ հեղինակները մեկ ծայրեն մյուսը բոլոր դարերուն մեջ:

Իբրև ընտանիքե գուրկ վարչական մարդիկ, անոնք չարուներ տեղերնին փոխելու վրա են նաև իրենց հայրենիքին մեջ, որով և մոտիկ ծանոթ են և՛ ժողովուրդին, և՛ մեծավորներուն, և՛ ժամանակի պայմաններուն, և՛ ներքին ու արտաքին քաղաքական դրութեան: Այս աստիճանի պատրաստութիւն, դիրք, անուն և մեծ հեղինակութիւն վայելող հոգևոր առաջնորդները բնականաբար չէին կրնար խոշոր ազդեցութիւն չունենալ մեր ժողովուրդի քաղաքական հարցերը վճռելու ժամանակ, մանավանդ որ այդ քաղաքական հարցերը, ինչպես տեսանք, միշտ սերտ կապված են եղեր կրոնական հարցերուն:

Եվ քրիստոնեութեան մուտք գտած օրեն այդ նոր հոգևոր ազնվականութիւնը եղած է երկրորդ կարևոր գործոնը մեր ժողովուրդի բաղդը և քաղաքականութիւնը վարող, կից մեր աշխարհիկ ազնվականութեան, մինչև թուրանական դարերը: Իսկ մեր նախարարական տներու վերջնական սպառումեն ետքը, մինչև ԺԹ-րդ դար, անոնք կղառնան միա՛կ ղեկավար դասակարգը: Եվ չնայելով իրենց վիճակի հետզհետե վատթարացման, սարսափելի քաղաքական պայմաններուն ու հալածանքներուն և խավար արևելյան շրջապատին և բռնակալութեան ստորնացնող թաթին տակ իրենց կրած տափակացումին՝ նորեն անոնք են, որ հայ վանքերու կիսավեր անկյուններուն մեջ հայ գիրն ու գիրքը կվղթահատեն, անցյալի մը աղոտ ծանոթութիւնը ունին և անկարող հառաչանք մը՝ դեպի ապագան:

Եվ հազիվ Շահ-Աբբասյան արշավանքեն ետքը[108] ԺԷ-րդ դարու կեսերուն կանգ կառնեն դարուկես տևող թուրք ու պարսիկ կռիվները մեր հողերուն վրա և քիչիկ մը շունչ կառնե մեր երկիրը, նորեն անոնք են, այդ դժբաղդ ու թշվառ կաթողիկոսները էջ-

միածնի կիսափուլ հոդապարիսպներուն եւևը կծկուած և ավելի ևս խեղճ եպիսկոպոսներու ու վարդապետներու ցրիվ շարք մը, որ Այունիքի մէջ մնացած ազնուական ընտանիքներու պետերուն հետ ինչ-որ ծածուկ երթևեկներ ունին, մեջեմէջ խորհրդաւոր նամակներ կփոխանակվին, մարդիկ կղրկվին Պոլսի վրայով դեպի Արևմուտք՝ պապերուն, կայսրերուն ու թագաւորներուն և դեպի Հյուսիս՝ նոր ասպարեզ իջնող Հյուսիսի նոր քրիստոնյա թագաւորին[109]*:*

Իշնչ կուզեն տպիտուքյան, մահմետականուքյան և անապատի զաւակներուն լծին տակը ճգմված ու չարդված այդ մարդիկը:

Կուզեն Արևմուտքի հետ կապ հաստատել, Արևմուտքեն օգնուքյուն կուզեն, որ չարժվիլ կարողանան, որ ոտքի ելլել կարողանան, որ այդ անիծված թուրանական լուծեն դուրս գալ կարողանան, կուզեն անկախուքյուն ու կերազեն Հայաստանի թագաւորուքյուն:

Դեպի Արևմո՛ւտք, դեպի քրիստոնեուքյո՛ւն:

Իր կղզիին մէջ մինակ մնացած Ռոբինզոնն[110] *է, որ կարոտով լեցուն հայացքը կպտոցնե չրջապատող անսահման ծովուն վրա. ե՞րբ պիտի երևա նավ մը, ազատուքյուն բերող, քաղաքակրթուքյուն բերող, նոր ապագան բերող նավը:*

Եվ այդ դաժան թուրան-մահմետական ծովու մռայլ մեգերուն ու խավար մառախուղներուն եւևեն օր մը վերջապես նավը երևցավ: Երևցավ ԺԹ-րդ դարու ճի՛շդ սկիզբին: Եվրոպան էր, որ կուգար. իհարկե ո՛չ Հայուն կանչովը, ո՛չ ալ Հայուն համար, այլ պատմուքյան կանչովը և իր շահերուն համար, բայց կուգար: Եվ իր հետն ալ բոլորովին նոր պատմական չրջան մը՝ Հայուն համար:

VI. ԺԹ-րդ դարը և նոր ղեկավար դասակարգ

ԺԸ-րդ դարու վերջին տարիները՝ Ղարաբաղի մելիքները արդեն մտած էին ռուսներու իշխանուքյան տակ. դարամուտին գրավված է Թիֆլիսը և սահմանը կհասնի մինչև Լոռի, մինչև Փամպակ: Երկրորդ քայլը կառնվի քառորդ դար մը վերջը, 1827 և

28 թվերուն, նախ պարսիկներուն, ետքը թուրքերուն դեմ. Հայությեան երկրորդ խոշոր կտոր մը փրցված է մահմետական բռնակալութեյան ճանկերեն: Ներսես եպիսկոպոսը[111], ապագա կաթողիկոս, Հայ կամավորներու պլուխն է, ամբողջ Հայ ժողովուրդը շարժվող ռուս բանակներուն հետն է իր հոգիովն ու ձեռքեն եկած ամեն օժանդակութեյամբ, և Հայ զորավարներն են պլխավոր հրամանատարները: Երրորդ քայլը կառնեն ռուսները ուղիղ 50 տարի ետքը, և իբրև հետևանք 1877 թվի ռուս-թուրքական պատերազմին՝ Կաղզվան[112], Կարս, Արտահան և Բաթում կմիացվին Ռուսաստանին. ամբողջ նոր Հայկական շերտ մը: Չորրորդ քայլը կառնեն ռուսները այս վերջին պատերազմին, կհասնին Հայութեյան գրեթե ցեղագրական և պատմական սահմանին՝ գրավելով Վան, Մուշ, Երզնկա, Էրզրում ու Տրապիզոն, մինչև պոլշևիկյան խառնակութեյունները:

Ռուսական տիրապետութեյունը բերավ օրենք ու ապահովութեյուն և տնտեսական ավելի լայն շարժում. այսչափը հերիք էր, որ Հայ ժողովուրդը սկսեր արագ բարձրանալ, բարգավաճիլ ու Հարստանալ, քանի որ ընտիլ էր աշխատանքի և աշխատութեյունը սիրող: Ռուս տիրապետութեյունը բերավ Հայուն նոր դիրքեր ու պաշտոններ թե՛ վարչական բաժնին մեջ և թե՛ բանակին: Եվ ահա՛ տնտեսապես բարելավվածները, առևտուրով զբաղողները, զինվորականներն ու պաշտոնյաները առաջացուցին նոր քաղքենի դասակարգ մը մեր մեջ, որ ինքն իր գործին Հաջողութեյանը Համար պետք ուներ գիրի, տիրապետող լեզվին և «կրթութեյան»: Մանավանդ իր զավակներուն Համար, որովհետև քանի կերթար մրցումը կմեծնար և պատրաստված ըլլալու անհրաժեշտութեյունը կավելնար:

Կյանքի մեջ Հաջողելու, առաջանալու հիմնական պայմանը կդառնա ուսումը: Ամեն Հայ, որ քիչիկ մը ծայրը ծայրին Հասցնելու ընդունակ է, կմտածե իր զավակը գիմնազիոն դնելու, Համալսարան ղրկելու. գյուղի ունևորը, տերտերը, քաղաքի մեջ կոպեկ կոպեկի վրա դրած խանութպանը, վաճառականը և, իհարկե, պաշտոնյան ու զինվորականը ամենքը իրենց զավակներուն «ուսում» տալու ետևե են:

Եվ տարվե տարի արագ կբարձրանա տոկոսը Հայ ուսումնա-վարտներու թե՛ միջնակարգ դպրոցներեն և թե՛ Համալսարաններեն: Եվ որովհետև զինվորական ու քաղաքացիական պաշտոն-ները մասամբ արդեն բռնված են և մասամբ ալ արվեստականորեն նոր բեժիմի կողմեն վակված են Հայերու համար, այդ նոր երիտա-սարդությունը կնեռավի ազատ կամ արդյունաբերական արվեստ-ներու վրա՝ բժիշկ, փաստաբան, մեքենագետ, էլեքտրագետ, քի-միագետ, գյուղատնտես, ուսուցիչ, գիտական աշխատավոր և գե-ղարվեստի մարդիկ:

Նույն երևույթն է, որ տեղի կունենա Թուրքիայի ծովեզերքը բնակող Հայության մեջ: ԺԹ-րդ դարու առաջին կեսին Թուրքիան հետզհետե կմտնե Եվրոպայի անմիջական ազդեցության ու քոնթ-րոլին տակ, գլխավորապես ծովեզերքը. չոգենավն ու երկաթուղին նոր և ուժեղ թափ մը կուտան Հաղորդակցության. և այս բոլորի հետևանքը կըլլա ծովեզերքներու Հայ բնակչության համեմատա-կան ապահովությունը և առուտուրով ու նոր ձեռնարկներով զբաղվելու հնարավորությունը: Նույն պահանջը պատրաստված մարդոց թե՛ պետական, թե՛ եվրոպական հաստատություններու համար, նո՛ւյն դպրոցական ծարավը և Հայու եվրոպական-տե-ղական միջնակարգ վարժարանները թափվիլը և նո՛ւյն վազքը դեպի եվրոպական համալսարանները, սկիզբը՝ գլխավորապես Ֆրանսա:

Եվ հետզհետե կկազմվի նոր մտավոր դասակարգ մը, աշ-խարհիկ մտավորականություն մը, նոր տեսակի զբաղումներով, նոր տնտեսական պայմաններով, նոր իր կենցաղովը, իր հագուս-տեն սկսած մինչև իր մտածումները, ճաշակն ու գաղափարները, ամեն ինչ նոր ձևված եվրոպականի վրա, արդյունք եվրոպական կյանքի հետ մոտիկ շփման և եվրոպական կրթության:

Մեր Հոգեկան առաջին սերտ կապը Արևմուտքի հետ եղած է չորրորդ դարուն սկիզբը քրիստոնեության ձևի տակ և ատոր արդյունքը եղած է մեր Հոգևոր մտավորականությունը: Երկար դարերու ընդհատումի ետքը մեր Հոգեկան երկրորդ վերստին կապակցումը Արևմուտքի Հոգիին հետ կկատարվի ԺԹ-րդ դարուն և ատոր պտուղն է մեր արդի մտավորականությունը: Ահա՛ այդ

նոր մտավորական դասակարգն է, որ չուտով իր ձեռքը կառնէ հայ ժողովուրդի բաղդին ու ձգտումներուն ղեկավարութիւնը, ինչպես և կզառնա անոր բոլոր ազգային ու հանրային հաստատութիւններուն, ընկերութիւններուն, կրթութեան, գրականութեան ու գիտութեան ստեղծողն ու կազմակերպողը: Հին հոգևոր մտավորականութիւնը, իր գերիշխանութիւնը պահելու թեթև դիմադրութենն մը ետքը, ինքն ալ ենթարկվելով ժամանակի ոգիին, կուպա, կվստահվի աշխարհիկ մտավորականութեան ընդհանուր հոսանքին:

Ազնվականութիւն, հոգևորականութիւն և մտավորականութիւն՝ ահա՛ այն երեք աստիճանները, որոնցմով անցեր է հայ իրականութեան ղեկավարութիւնը:

Ժողովուրդ մը ինքզինքը վարելու, պաշտպանելու, իր համայնական գործերը տնօրինելու համար միշտ անհրաժեշտութիւնն ունի գործադրող մը, առաջնորդ մը ստեղծելու. և մի՛շտ և ամե՛ն ժողովուրդի մեջ կառաջանան վարող դասակարգեր ժամանակի ոգիին և ժողովուրդի հոգիին ու պայմաններուն համեմատ. ատոնց վրա և հենված կըլլան պետութեան ու ազգութեան բոլոր մյուս օրգաններն ու հաստատութիւնները: Առանց այդ տեսակ ղեկավար դասակարգի մը ժողովուրդը զրկված է իր կամքի ու ձգտումներու ձևակերպումեն ու արտահայտութենեն, ամեն ինչ կմնա բնազդներու տարտամ ու իրար խաչաձևող շարժումներուն մեջ: Ինչպես և զրկված է իր կազմակերպող և առաջնորդող տարրեն, որով կզառնա ցրիվ ամբոխ մը, ինչքան ալ չնորհք ու կենսունակութիւն ունենա իր մեջ:

Այդ ղեկավար դասը նույն է ազգերու համար, ինչ որ սպայութիւնն ու հրամանատարութիւնը բանակներուն համար: Եվ ատոր համար է, որ ամեն անգամ նոր ղեկավար դասակարգի մը մեջտեղ գալը նոր դարաշրջան մը կբանա ժողովուրդի համար, մանավանդ որ նոր դասակարգի մը առաջ գալը ինքնին արդյունք է փոխված պատմական պայմաններու և նոր պահանջներու:

Այսպեսով՝ ԺԹ-րդ դարուն սկիզբը տարեթիվն է հայութեան Եվրոպային կապվելուն, քրիստոնյա պետութեան և եվրոպական կյանքի հայ հողի վրա ոտք դնելուն. նոր պատմական ու տնտե-

սական գործոններու և նոր մտավոր դասակարգի մը, որ և հիմնադիրն ու ղեկավարը կդառնա մեր նոր քաղաքակրթական ճիգերուն, հայ ոգիի սթափվելուն, հայ ձգտումներու նոր դուն ու ձև ստանալուն և հայ կամքի ասպարեզ իջնելուն:

Բ. ՀԱՅՈՒԹՅԱՆ ՉԳՏՈՒՄԸ

I. Նոր մտավորականության առաջին երեք սերունդներուն երազն ու քարոզը

Այս մտավորականութիւնը, որ արդյունք էր եվրոպական գաղափարներուն ու կրթութեյան, բնականաբար դավանելու էր նույն սկզբունքները, որ ԺԹ-րդ դարու տիրող ըմբռնումներն են եվրոպական կյանքին, գիտութեյան և իտեալներուն մեջ: Իսկ դարուս ամբողջ եվրոպական քաղաքականութեյունը, ներքին թե արտաքին, ինչպես և ամբողջ քաղաքակրթական աշխատանքը կդառնա մեկ հիմնական սկզբունքի չուրջը՝ ժողովուրդ:

Ժողովուրդն է ամեն ինչ, և ամեն ինչ ժողովուրդի համար: Երկրին տերը, իր տնտեսական ու քաղաքական կյանքին վերին տնօրինողը պետք է ըլլա ժողովուրդը: Ամեն օրենք, կարգադրութեյուն ու ձեռնարկ պետք է կատարվի ժողովուրդի բարօրութեյանն ու զարգացմանը համար: Ժողովուրդներու տիրականութեյան այս հիմնական ըմբռնումին արդյունքն են բոլոր երկիրներու մեջ՝ կառավարութեյան ընտրական կազմը, պետականութեյան պարլամենտական ձևը, կրթութեյան պարտավորիչ և ընդհանուր դառնալը, գիտութեյունն ու գեղարվեստները հանրամատչելի ու ժողովրդական դարձնելու ջանքերը, ընդհանուր պինվորագրութեյունը, լրագրութեյունը և հասարակաց կարծիքի ստացած կարևոր դերը: Ժողովրդական սկզբունքի ներքին երեսն է սա. իսկ նույն սկզբունքի արտաքին երեսը կներկայացնե ազգային անկախութեյան հարցը:

Ամեն ազգ պետք է ինքը իր բաղդին տերը ըլլա և ազատ

ուրիշ ազգերու լուծեն: Հոսկե կառաջանա փոքր ու տիրված ազգերու ազատագրության պահանջը. և ա՛յդ պահանջի գործադրությունն են բոլոր անկախության կռիվներն ու ապստամբությունները, որոնք կլեցնեն ԺԹ-րդ դարու եվրոպական պատմությունը:

Բնականաբար այդ նույն սկզբունքն էր դառնալու իր ներքին ու արտաքին երեսներով նաև հիմնական դավանանքը և գործունեության ուղեցույցը մեր նոր առաջացող մտավորականության համար: Մանավանդ որ Արևմուտքեն իբրև խոեալ, իբրև պիտության վերջին խոսք և քաղաքակրթության իբրև բացարձակ պահանջ, ներս խուժող այդ դաղափարները կատարելապես կհամապատասխանեին Հայ ժողովուրդի ներսեն ու բնականեն առաջացած ամենակենսական պահանջներուն: Զրկված երկար դարեր ազնվական դասակարգե, ունենալով միայն ժողովուրդեն դուրս եկող և ժողովուրդով ապրող հոգևոր առաջնորդներ և ընտելացած իր հոգևոր-ազգային գործերուն մեջ ընտրական սկզբունքին և հիմա ալ ունենալով միայն այդ նոր մտավոր դասակարգը՝ կազմված ժողովուրդի բոլոր խավերեն, բնական կերպով ուրիշ ճամբա չուներ, ամեն ինչ պիտի կատարեր ընկերություններ կազմելով, ժողովներով և ընտրություններով:

Նույնպես հարազատ և մեր պատմական պահանջներուն համապատասխան էր նաև ժողովրդական սկզբունքի արտաքին կողմը՝ ազգային անկախության և ազատագրման գաղափարը: Չէ՞ որ մեր մտածող մարդոց տենչն է եղած ատիկա նույնիսկ Թուրքական ամենամռայլ դարերուն և չէ՞ որ Հայության դարավոր տանջանքն էր Թուրքական լուծը և անկե ազատվիլը՝ իր բնական բաղձանքը:

Եվ Հայու համար քրիստոնյա պետության մը գալը համազոր էր իր ազգային անկախության գաղափարին: Իսրայել Օրիի[113], Ներսեսներու և նմաններու միամիտ համոզումն էր, որ քրիստոնյա պետությունները գան թե չէ՝ Հայ Թագավորություն պիտի ստեղծեն:

Այդ երազը Հայաստանի ռուսական բաժնի վերաբերմամբ իհարկե չուտով փարատեցավ. առայժմ այնքան մեծ էր Թուրքի լուծեն ազատված ըլլալու ուրախությունը, քրիստոնյա Հովանիի

մը տակ հանգիստ ու ազատ ապրելու ու աշխատելու կարելիութիւնը և այնքան հզոր էր ռուս զենքի և պետութեան հմայքը, որ ոչ ոքի մտքին անցնիլ չէր կրնար ռուս տիրապետութեան դէմ որևէ չարժում:

Սակայն տարբեր էր հարցը Հայաստանի դեռ չազատված մասերուն համար. Թուրքիան կործանվող պետութիւն մըն էր. և ամենուն աչքին առջևը հեռագիտի քրիստոնյա փոքր ազգերը, որոնք մեզի նման զարերով հեծեր էին թուրքի լուծին տակ, հիմա մեկիկ-մեկիկ կատանային իրենց ազատութիւնը ապստամբելով և եվրոպական ժողովուրդներու համակրանքովն ու օժանդակութեամբը: Ինչ ավելի բնական, քան ձգտիլը նույն ուղղութեամբ:

Այսպեսով՝ թե՛ գրքերու և համալսարաններու մեջեն յուրացուցած իտեալները, թե՛ ուրիշ ազգերու գործնականապես իրականացուցած փորձերը և թե՛ մեր ներքին վիճակն ու հոգեբանութիւնը և դարավոր մահմետական ստրկութեան դեմ խորին ներքին ատելութիւնը կհյուսվեին իրար. և ամեն քիչ-շատ գրի ու գրքի երես տեսած Հայու համար կդառնա հոգեկան անխուսափելի պահանջ մը ազգային ազատութեան ձգտիլը Հայաստանի թուրքական բաժնին վրա:

Անշուշտ, նայելով ամեն մարդու ապրած տեղին՝ Ռուսաստա՞ն, թե՞ Թուրքիա, Ծովեզե՞րը, թե՞ ներսերը, թե՞ Եվրոպա, նայելով ամեն մարդու դիրքին ու տնտեսական վիճակին, ինչպես և ստացած կրթութեան աղբյուրին, այլև ամեն մարդու անհատական տեմպերամենտին, ամենուն մեջ նույն չափով և նույն ձևով չարտահայտվիր այդ պահանջը: Ունինք ավելի զգուշները, խոհեմները, զգացող ու չարտահայտողները. ունինք կես բերան ու աչքի խորհրդավոր կծկումներով արտահայտվողները. ունինք և բարձրաձայն խոսողները. և վերջապես բոլոր ձայնովը պոռացող խենթերը:

Բայց որ բոլորի հոգիին մեջը կա, ավելի կամ նվազ չափով, այդ ազգային ազատութեան սերը, երազը, ձգտումը, ատոր տարակույս չկա: Ե՛վ հոգևորականներ, սկսած պատրիարքներեն ու կաթողիկոսներեն, և՛ Թուրքիայի ու Ռուսաստանի պետական պաշտոնյաներ, և՛ տիպլոմատներ, և՛ «ազգային» ու «բարեբար»

Հարուստներ, և՛ արհեստավորներ, որոնք արդեն դպրոց են տեսած և լրագիր կկարդան, և՛ խմբագիր, և՛ վարժապետ, և՛ բանաստեղծ, և՛ թատերագիր, ամե՛նքը, ամե՛նքը: Ամեն տեղ միևնույն պաշտամունքն է հայ լեզվի, սկիզբը գրաբար, վերջը և աշխարհաբար, նույն պաշտամունքը «Հայոց պատմութեան». իրար ետևե լույս կհանվին մեր հին պատմիչները, մեր հին ձեռագիրները: Մյուս կողմեն դպրոցներ, հանդեսներ, ճառեր, ներկայացումներ, լրագիր ու գիրք, և բոլորը «ազգային», և ինչ թունդ ազգային. ինչքան որ թունդ կրնա ըլլալ միայն նոր զարթնող ժողովուրդի մը առաջին անքննադատ ու դյուրահավան ինքնագովութիւնը ու իրեն սիրտ տալու պահանջը:

Չկա՛ հայ լեզվի նմանը, ո՞վ կրնա համեմատվիլ մեր պատմիչներուն, բացառի՛կ են մեր բոլոր հին քաջերն ու հերոսները, քրիստոնեութիւնը մենք ենք ազատեր մեր դիմադրութեամբ, խաչակիրները ամեն ինչ մեզի են պարտական: Եվ ահա՛ կուգան թև ունեցող բանաստեղծները՝ Ալիշանը[114] կերգե «Հայոց աշխարհիկ», Պեշիկթաշլյանը[115], «Դու զո՞վ խնդրես», Ծերենցը[116], իր «Երկունք»-ը, Աբովյանը[117], «Հայաստանի վերքը», Նալբանտյանը[118], «Ազատն Աստված». կհասնի Գամառ-Քաթիպան[119] իր «ազատ» երգերով և Րաֆֆին[120] իր «Հեղափոխական» վեպերով. և դեռ ինչքա՜ն, ինչքան ուրիշներ, բոլոր մեր թատերագիրները, մեր բոլոր արձակ գրողները:

Ուրիշ խոսքով՝ մինչև 80-ական թվերը, այսինքն՝՝ մեր նոր զարգացող մտավորականութեյան առաջին երեք սերունդները, միասիրտ ու միաբերան ցանկացած են ու ձգտած ազատութեյան: Եվ ատիկա արտահայտողները մեր ժողովուրդի ամենեն սիրելի դեմքերն են: Անոնց քարոզներն են եկեղեցիներու բեմեն, անոնց ճառերը՝ ազգային ժողովներու մեջ, Խրիմյանի[121], Վարժապետյանի[122] և այնքա՜ն աշխարհականներու, որոնց ականջ կդնեի ժողովուրդը ամենեն մեծ սիրով ու հափշտակութեյամբ: Անոնց գրութեյուններն են ամենեն ջերմ կարդացվածները, և անոնց երգերն են բերնե բերան երգվողները:

Եվ ամենեն ավելի կազդեն ու կգրավեն այն գիտական, պատմական ու վիպական երկերը, որոնք ուղղակի կամ չեղակի Հայ ժողովուրդի այդ ցավոտ կետը կշոշափեն:

II. Խոսքի շրջանին կհաջորդե գործի շրջանը

Ժթ-րդ դարու ուխտաւնական թվականներուն էր, որ «բանը» կակի մարմին առնել: Այնքան ժամանակ միահամուռ կերպով երազված, քարոզված, կանչված ու դովաբանված ազատութեյան ձգտումին կհաջորդի վերջապես գործնական ձգտումը, ծայր կուտան Հայ Հեղափոխական կազմակերպութեյուններն ու շարժումները: Վանի, Էրզրումի, Զեյթունի, Սասունի ու Պոլսի քանի մը նախնական, տեղական շարժումներեն ու խարխափումներեն ետքը կուգան արմենական[123] և հնչակյան[124] ավելի կազմակերպված ցույցերն ու խլրտումները և վերջապես Կովկասեն, և չա՛տ բնական կերպով Կովկասեն, Հրապարակ կիջնե Հայ Հեղափոխական դաշնակցութեյունը[125]:

Մեր Հեղափոխական շարժումներուն դեմ թուրքերու հարուցած հալածանքներեն ու ճնշումներեն ազդված, մանավանդ վերջին տարիներու Հարյուր Հազարներու հավաքական ու գազանային ջարդերեն ցնցված՝ շատերը սկսան մեղադրել մեր երիտասարդութեյունը, որ իր անժամանակ և հախուռն ապստամբական ցույցերով ու կռիվներով պատճառ եղավ Հայ ժողովուրդի փճացման:

Նախ՝ միամիտ և չափազանց միամիտ են անոնք, որ կկարծեն, թե ազատութեյունը ձեռք կբերվի առանց զոհի, առանց Հալածանքներու, առանց արյան ու գազանութեյուններու. ազատութեյան տենչացողը այդ զոդզոթայով պետք է անցնի:

Երկրորդ՝ ավելի ևս միամիտ և խորապես միամիտ են անոնք, որ կկարծեն, թե կարելի է սասնյակ տարիներով և հասարակութեյան բոլոր ներկայացուցիչներու միջոցով, ճառերով, երգերով, գրքերով ու դպրոցներով շարունակ Հեղափոխութեյուն խաղալ, ազգային զգացումը Հրահրել, անկախ կյանքի իտեալը դրոշմել նոր սերունդներու մտքին ու սրտին վրա և ետքը նստիլ խելոքիկ մը

առանց գործնական քայլ մը առնելու, մինչև որ... մինչև որ... ես ի՞նչ պիտեմ մինչև երբ: Որովհետև այդ խոհեմ մարդոց որ լսելու ըլլանք, երբեք այդ գործնական քայլը առնել կարելի պիտի չըլլա. միշտ ապասելով հետաւոր «պատեհ առիթներու», որոնք իհարկե երբեք ալ գալու չեն. որովհետև այդ «պատեհ առիթներն» ալ, ինչպես ամեն բան, ձեռք կբերվին երկար աշխատանքով, նախնական «իզուր» զոհերով ու պատրաստութեամբ: Այդ պատեհ առիթները հանկարծակի չեն գար, ոչ ալ ա՛յնպես պատահաբար: Երեսանց ու վայրիվերո նայողը միայն այդպես կկարծե:

Ա՛ն, ով կցանկա, որ հեղափոխութիւնը մտած չըլլա մեր ժողովուրդին գիրկը, պետք է անիծե ամենեն առաջ մեր դպրոցները, մեր գրագետները, մեր պատրիարքներն ու ընկերութիւնները, ան պետք է անիծե ռուսները, որ մտան Հայաստան, պիտի անիծե եվրոպացիները, որ եկան Թուրքիա, քիչիկ մը կյանք, շարժուձ ու քոնթրոլ բերին, բերին գրքեր ու հիմար գաղափարներ:

Հա՛, այս բոլորը եթե եղած չըլլար, գուցե և մեր ջարդերը տեղի չէին ունենար, ոչ ալ մեր հեղափոխական շարժումները և մեր ժողովուրդը մինչև հիմա կապրեր Թուրքին ու քյուրտին լուծին տակը՝ խորովվելով մաղմաղ կրակի վրա:

Իսկ ցանկալ, որ ժողովուրդ մը կրթվի, եվրոպականանա, իտեալներ ձեռք բերե, տեսնե, թե ինչպես կապրին աշխարհիս երեսին ուրիշ ժողովուրդներ, տեսնե թե իրեն բաղդակից մյուս փոքր ժողովուրդները ինչպես ազատութեյուն ձեռք կբերեն իրար ետևե, և ինքը Հանգիստ ու լռիկ, խելոքիկ մը նստի, սպիկա պահանջելը ժողովուրդի մը և անոր մտավոր դասակարգին կնշանակե անզգա ու ապուշ երևակայել ժողովուրդ մը և գուրկ ամեն բնականութենե ու կենսունակութենե: Ատիկա ժողովուրդի մը համար ոչ թե խոհեմութեյան և իմաստութեյան նշան կդառնար, այլ կըլլար պարզապես ծայրահեղ ստրկամտութեյուն, անբնականութեյան աստիճանին հասած կամքի ու թռիչքի բացակայութեյուն: Ոչ մեկ կենսունակ և ընդունակ ժողովուրդե այդ տեսակի «իմաստութեյուններ» կարելի չէ պահանջել, և այն պարզ պատճառով, որ անկարելի բաներ են ատոնք:

Ամեն հանրային շարժուձ կսկսի գաղափարով ու քարոզչու-

թյամբ, բայց խոսքի շրջանին անխուսափելի կերպով կհաջորդե դարձի շրջանը: Հին սերունդները կբավականանան քարոզելով, նրագելով, տենչալով: Բայց ահա՛ քարոզն ու տենչը կհաստնանան, այլևս խոսքով բավականանալ չեն կրնար: Միծաղելի կդառնան հին երգերը, «Ա՛խ, Հայաստան, վա՛խ, Հայաստան», հին ճռճռան ճառերն ու օրհղեն անրջանքները. մարդիկը կնեռվին առաջ՝ ինչ դնով ալ որ ըլլա իրագործելու այդ իտեալները և ձեռք բերելու իրենց ազատութիւնը:

Հին հափշտակութեան կհաջորդե նոր հափշտակութիւն. պղտիկները դպրոցեն կփախչին «ֆեատայի» երթալու, գաղտնի հավաքումները կդառնան հմայք ու ոգևորութիւն, և «երկիր» մտնելը՝ գերագույն ցանկութիւնը երիտասարդի: Ու իրար ետևե կշարժվի անվերջ շարանը՝ ձեռքը ուսմբ ու հրացան. կերթան կրակին բերանը, կլեցվին բանտերը, կճոճին կախաղանները, մեկ իյնողին կհաջորդեն երկուքը, երեքը: Կմասնակցին ժողովուրդի բոլոր խավերը, տերտերն ու վարդապետը կան մեջը, արհեստավորներ ու վաճառականներ, մանր խանութպան ու վարժապետներ, բժիշկ, լրագրող, խոհարարն ու կոշկակարը, հողագործն ու հացագործը, և պաշտոնյաներ, բոլո՛ր դիրքերը, բոլոր զբաղումները, պյուղացին ու քաղաքացին, լեռներեն ու եվրոպական մայրաքաղաքներեն. ապացույց, թե ինչ աստիճանի ժողովուրդի հոգիովն էր շարժումը և ինչ աստիճանի ժամանակի ու հանրութեյան պահանջ: Հաջողեցա՞նք, թե՞ տանուլ տվինք պատերազմը, ելքի՞ ճամբուն վրան ենք հիմա, թե՞ անդունդի, թողնե՛նք, որ պատասխանե ժամանակը:

Այսքանը պարզ է մեզի, որ անխուսափելի էր բոլորը, բնական հետևանք բնական պատճառներու:

Ջմոռնա՛նք նաև, որ այդ «վիժած» ու «խելագար» ճիգերն են, որ կրթեր են ու կկրթեն մեր ժողովուրդին կամքը, կբարձրացնեն անոր ինքնագիտակցութիւնը, կհրահրեն երկար հպատակութեյան միջոցին թանձր մոխիրով ծածկված հանրային զգացումները, դուրս կքաշեն դարավոր հալածանքի ու անտերութեյան տակ իրենց պատյաններուն մեջ կծկտած խխունջ հոգիները և մեր հիվանդոտ եսականութիւնները կմղեն անձնազոհութեյան ու

այլասիրութեան: Մինչեւ որ ժողովուրդ մը չի վարժվի անձնապահութեան, չի՛ ունենար իր ազատութիւնը. մինչեւ որ ժողովուրդ մը չի վարժվի իր եսը ենթարկելու համայնքին, չի՛ ունենար իր պետականութիւնը:

Մեր այս վերջին քառասուն-հիսուն տարիներու հեղափոխական չարժումները ոչ միայն հանցանք մը ու մեղադրանք մը չեն հայուն համար, այլ անոր ամենեն մեծ արժանիքը և վերջապես անոր ամենեն մեծ հենարանը, ինչքան ալ որ կուլլերը տեսնել չուզենան:

Մեր թշնամիները, ինչպես և մեր «բարեկամ» պետութիւնները, ամենեն առաջ և գլխավորապես մեր կամքի այդ գործնական արտահայտութիւնն է, որ հաշվի կառնեն, երբ մեր մասին կխոսվի: Թուրքը հայ ժողովուրդի հետ ի՞նչ թշնամութիւն ունի որ, ան հակառակ է միայն Դաշնակցական «խմբակին». այսպես կհայտարարեին իրենք: Ցարերը ամբողջ Դաշնակցութիւնը կուղեին հավաքել իրենց բանտերուն պատիվը ավելի բարձրացնելու համար. այսօր ալ Ռուսաստանի պոլշևիկյան չեքաները դաշնակցական որսալու վրա են չարունակ:

Եվ զարմանալու ալ ոչինչ չկա, քանի որ մինչեւ հիմա Դաշնակցութիւնն է եղեր գլխավորապես գինական ու գործնական ներկայացուցիչը հայ ժողովուրդին կամքին:

Լավ աշխատող գրասեին և կթան կովին ո՞վ բարեկամ չէ. անախորժը սմբակներն են ու կոտոշները. և կաթը հանգիստ կթելու համար նախ պետք է կապվին այդ կոտոշները:

III. Պատերազմի բերած հույսերն ու հուսալքումը

«Լա՛վ. թողնե՛նք անցյալը. ինչ որ եղեր է՝ եղեր է: Իսկ հիմա՞. ասկե՞ետքը. վերջապես ի՞նչ ենք ընելու ասկե ետքը. ո՞րն է ըլլալու Հայութեան խելացի ձգտումը»:

Ինչքան ալ որ ինքնին անհեթեթ ու լուսնի վրայեն նոր վար իջած մարդու խոսք ըլլա այս հարցը, բայց և այնպես հիմա ո՛ր կողմ ալ դառնաս՝ կհանդիպիս այդ հարցին: Վերջին քանի մը տարիներու արտասովոր դեպքերը, ինչպես և եվրոպական դիվանա-

պիտութիւնը, չափեն ավելի խաղացին մեր ջիղերուն հետ և չափեն ավելի տմարդի կերպով. և հիմա ցնցված ու անառողջ են հայուն ջղերը:

Բավական է հարևանցի ակնարկ մը մի՛միայն զինադադարեն առղին հայկական հարցի կրած փոփոխութիւններուն վրա՝ վերակենդանացնելու համար այն ցնցումը և այն անկումը, որ կրած է հայու հոգին:

«Ազատ ու անկախ Հայաստա՛ն: Հանգի՛ստ եղէք, ապահո՛վ է ատիկա, ինչ ալ որ պատահելու ըլլա. միայն, իհարկե, մանդատ յով»,- այսպես կկրկնեին մեզի ամեն կողմե դիվանագիտական աշխարհի առյուծներն ու վագրերը:

Ծրանսացիք ամեն կերպ կհասկցնեին, որ Ծրանսան պահանջենք իբրև մանդատեր. անգլիացիք ցույց կուտային ամերիկացիներուն դռները: Եվ իրավ, սկզբնական թեթև վարանքե մը ետքը Ուիլսըն[126] կհայտարարե պարզապես, թե Միացյալ Նահանգները հանձն կառնեն Հայաստանի մանդան, «որովհետև ամբողջ ամերիկյան ժողովուրդը իրմեն այդպես կպահանջեր»:

Եվ կհասկցնեն, որ Ամերիկան կուգա օգնելու այն պայմանով, որ կազմվի մեծ Հայաստան մը՝ Կիլիկիայի ծովափեն մինչև Կուր գետը՝ մեջը առնելով նաև ինքզինքը անկախ հայտարարած Երևանյան Հանրապետութիւնը:

Եվ ահա՛ հայերու հույսերը հասած են իրենց պագաթնակետին. իրենց կհրամցվի միացյալ ազատ Հայաստան մը, հետն ալ Ամերիկայի պաշտպանութիւնը և վերաշինութիւնը: Սա ինչ աներևակայելի բաղդ, որ բնավ նման չէ հայու բաղդին: Եվ ինչ Հայաստան, «ծովե ծով»: Եվ ամենքը կվիճեն, սիրտ կհատցնեն՝ ինչպե՞ս քաշեն սահմանը, որ ավելի բնական ըլլա, Տրապիզոնե՞ն, Տրիպոլիսե՞ն[127], թե՞ ավելի արևմուտք:

Ուրիշներ այդ տեսակ բնական սահմաններու առաջ ալ կանգ առնել չեն ուզեր, պետք է անպատճառ Սեբաստիան հետը ըլլա, հապա Կեսարիա՞ն. ինչպե՞ս կարելի է կեսարացիները դուրսը թողնել. և ախորժակներ կան, որ կհասնին մինչև Ամասիա, Այնթապ, Մերտին: Նույնիսկ անոնք, որոնք երկրին ու իրերուն ծանոթ են մոտեն և պիտեն, որ պետութիւնները սուրով կձևվին,

ոչ թե մկրատով, և չատ աղեկ կհասկնան այս տեսակ Հայաստանի մը Հայաստան չըլլալը, այլ Հայ, Հույն, քյուրտ ու Թուրք կանտոններու[128] կապակցում մը, նույնիսկ անոնք կտարվին ընդհանուր Հոսանքեն: Աստվա՛ծ իմ, ինչե՜ր ըսես չի պատահիր պատմության խաղերուն մեջ, դուցե նոր Զվիցերիա[129] մը ծնի այդ Հայաստանեն:

Եվ մինչ ամերիկյան կառավարությունը կուսումնասիրե երկրի աշխարհագրական, ցեղագրական, տնտեսական պայմանները, երկաթուղային և օթոմոբիլի համբանները, կհաշվի հարկ եղած դրամագլուխները, կամաց-կամաց կբացվի, որ այդ բոլոր ոգևորության միջոցին մոռցվեր էր պզտիկ բան մը՝ Մոնրոյի սկզբունքը[130]:

Ամերիկացիք, ճիշդ է, կհամակրին Հայերուն, չատ օգնած են և չատ ալ պատրաստ են օգնելու, բայց Մոնրոյի սկզբունքը ավելի կսիրեն, քան Հայերը: Հոգ չէ, թե բոլորովին մոռցեր էին այդ սկզբունքը, երբ միլիոններով պինվոր և միլիարդներով դրամ կթափեին Ցրանսայի հողին վրա. հիմա միտքերնին էր ինկեր այդ սկզբունքը, որովհետև Ուիլսընի հակառակ կուսակցությունը միտքը դրեր էր անցնիլ կառավարության գլուխը. և տապալելու համար Ուիլսընը, պետք էր տապալել անոր պաշտպանած առաջարկներն ու գաղափարները:

Եվ խե՜ղճ Մեծ ու Ծովե ծով երջանիկ Հայաստան. ինչպես որ թեթև ու օդի մեջ ստեղծվեր էր աշխարհիս մյուս ծայրին վրա, այնպես ալ թեթև ու արագ փուլ եկավ նորեն աշխարհիս մյուս ծայրին վրա:

Եվ երբ Սևրի մեջ Կլեմանսոն[131] իր արամազդյան չանթերը և մարդկության զայրույթը թուրք ներկայացուցիչներուն երեսին զարնելեն ետքը անցավ դաշնագրին, Հայաստանը արդեն պատկառելի չափերով հավաքեր էր իր փեշերը՝ ուրիշներուն տեղ ընելու համար: Ցրանսացիք օգտվելով Միացյալ Նահանգներու հրաժարումեն՝ արդեն մտեր էին Կիլիկիա և տիրացեր:

Սևրի դաշնագիրը[132] կընդուներ ու կվավերացներ անկախ ու ազատ Հայաստան մը Թուրքիայի հին հինգ վիլայեթներու սահ-

մանին մեջ միայն: Եվ Հայերը, թեև քիչիկ մը դժգոհ, բայց վերջապես ասչափին համար ալ «առայժմ» չնորհակալ էին:

Մնկի տող կատանայինք երեք հատ Հայաստան՝ բոլոր ճաշակներուն բավարարութիւն տալու համար: Կիլիկիան՝ Ցրանկո-Հայաստան մը՝ մանաւորապես հարմար մեր բարձր առևտրական ու դրամատիրական դասակարգի ծրագիրներուն համար: Կովկասյան Ռուսահայաստան մը, որ կարելի էր թողնել Դաշնակցութեյան «ֆեռայիներուն ու սոցիալիստներուն»: Եվ վերջապես Սևրյան միջին Հայաստան մը, որ կվերապահվեր Ռամկավար կուսակցութեյան թագավորութեյանը:

Եվ մինչև Ուիլսընի կապույտ մատիտը գծելու վրա էր այդ թագավորութեյան սահմանները, կամաց-կամաց բացվեցավ, որ մոռցված էր ուրիշ փոքրիկ բան մը: Այս անգամ մոռցողը անգլիական ծովակալն էր, որ Տարտանելը չուտով իր առջևը բացված տեսնելու չտապեն՝ չէր պահանջած թուրք ուժերու զինաթափումը: Եվ ծայր էր տվեր քեմալական չարժումը, որ սկիզբը «ըմբոստութեյուն» էր ու «ավազակութեյուն», բայց հանկարծ դարձավ «Անգորայի պետութեյուն»:

Եվ օգտվելով եվրոպական դիվանագիտութեյան դանդաղկոտութենեն և տեսնելով, որ ոչ ոք իր դեմը ուժ բանեցնելու տրամադիր չէ, ան սկսավ ավելի հանդուգն քայլեր առնել: Մանավանդ որ «ընկճված ու հարստահարված ազգերու պաշտպան» պոլշևիզմը դարձեր էր իր դաշնակիցն ու օժանդակը: Այդ դաշնակցութեյան առաջին պտուղը եղավ «դաշնակներու իմպերիալիստ և բուրժուա-կապիտալիստական բռնակալութեյան անկումը» Հայ ժողովուրդի ուսեն. այսինքն՝՝ անկախ Հայաստանի կեսը գրավեց Թուրքիան, կեսը՝ Ռուսաստանը:

Եվ Լոնտոնի մեջ Անգորայի հետ համաձայնութեյան մը գալու եվրոպական դիջումներու միջոցին Հայաստանը այնքան սկսավ փնչերը քաշել ու կծկտիլ, որ դարձավ պտտիկ «օճախ» մը: Թեև դեռ ոչ ոք չգիտեր, թե ինչ ըսել է և ինչ պիտի հասկնանք այդ օճախով, բայց և այնպես դժբաղդ Հայութեյունը ամեն կողմ ինկած՝ սկսավ տեղ մը փնտրել այդ օճախը վառելու համար: Եվ նորեն բարի ախորժակները դարձեր էին դեպի Կիլիկիա, որը այդ միջոցին

ֆրանսացիք անկարող ըլլալով պահելու, և ամբողջ Հայ բնակչութեան փճացման ու ցրվելուն պատճառ ըլլալին համը, հանձներ էին Թուրքերուն՝ «ծախելով» անոնց նաև իրենց թնդանոթները:

Սկսած էր ֆրանս-անգլիական բացահայտ հակամարտութիւնը: Եվ Թուրքերը, իհարկե երես առած ռուսական, ֆրանսական և իտալական այդ իրարու հետ մրցող ավանտներեն, բնականաբար այլևս օճախներու մասին լսելու բնավ տրամադրութիւն չունեին: Ինչ օճախ, երբ Հայը ինքը չգիտեր, թե ուրտեղ է իր օճախը:

Եվ խե՛ղճ օճախ, ինքնիրենը առանց վառելու մարելցավ, երբ վրա հասավ Հունական զորքերու պարտութիւնը կամ ավելի ճիշդ է ըսենք՝ կռվի հրաժարիլը. ճիշդ ինչպես Հայերը Կարսի առաջ: Այնպես որ՝ Լոզանի կոնֆերանսին[133] մեջ Հայաստանի անկախութիւնը վերածվեր էր արդեն հին նախապատերազմյան ինքնավարութեան նման բանի մը և ան ալ միմիայն «Կարսի Հողերուն շուրջը»: Բայց Թուրքերը կարապես հոնկե ալ վռնտեցին, և Հայաստանի անկախութիւնը, մնալով բոլորովին օդի մեջ, ամպի մը պես հալեցավ, հալեցավ, կետ մը դարձավ ու չքացավ:

Եվ այս ծանր գավեշտին զուգահեռ կերթա Թուրքիայի մեջ մեր վերջին մնացորդներուն ոչնչացումը և վերջին բույներուն ավերումն ու ցրիվ գալը: Կիլիկիայեն, Իզմիրեն, Մարմարայի ափերեն ու Պոլսեն Հայերը դուրս կվտարվին ու կփախչին: Եվ Թուրքիայի երբեմնի մեծաթիվ ծովեզրյա բարեկեցիկ Հայութիւնը տուն ու դործն զուրկ կվատիառի հիմա ամեն ճամբաներուն վրա իբրև թշվառ գաղթական:

Ուրեմն վերջացա՛վ: Ա՛լ վերջացած է կատակերգութիւնը, և վարագույրը՝ իջած: Եվ այդ վարագույրին փակվելովը կարծես բացվեր են ամենուն աչքերը:

«Մեր մինչև հիմա ըրածը անմտութիւն էր: Ո՛չ, Հանցանք էր: Անխոհե՛մ թեթևամտութիւն: Ո՛չ, ըոմանթիզմ էր: Հապա՛, այսպես կըլլա կրակի հետ խաղալը»: Մեկ խոսքով՝ սխա՛լ էր, Հայութեան մինչև հիմա ըրածը սխալ էր: Պետք է Հայութիւնը փոխե իր ընթացքը, պետք է վերաքննութեան ենթարկե՛նք «Հին

արժեքները», հին ձգտումները, մեր բոլոր ուզածը, մեր բոլոր ըրածը: Նո՛ր, պետք է նորեն նստինք ու նորեն մտածենք: Պետք է խելքի գանք վերջապես:

Լա՛վ, գա՛նք խելքի:

IV. Քննադատներ, որոնք կմեղադրեն հայ ժողովուրդը իր անկախությանը ձգտելուն համար

Եվ խելքի գալու համար պետք է ամենեն առաջ հարցը հանենք իր ուղիղ ճամբուն վրա: Ի՞նչն է, որ սխալ է եղած, ի՞նչը պետք է փոխվի: Այն նպատա՞կը, որուն դիմած է մինչև հիմա հայ ժողովուրդը, թե՞ այդ նպատակին հասնելու համար իր բռնած ճամբան: Ո՞րն է եղած հայուհյան սխալը, իր անկախութհյանը հասնելու ձգտո՞ւմը, թե՞ այդ անկախութհյան հասնելու համար իր ընտրած ու գործ դրած միջոցները:

Դժգոհներին չատ չատերուն համար հարցը բռնվելիք ճամբու մասին է: Որ հայը կձգտի ու պիտի ձգտի իր անկախութհյանը՝ կհամարին չատ բնական ու անխուսափելի և իրենք ալ կցանկան նույնը. և ճիշդ ատոր համար ալ նոր ճամբաներ կփնտրեն, քանի որ հինները հանդիպեցան այս տեսակ փիասքոյի[134]:

Հարցը կհանգի վերջ ի վերջո՝ որո՞ւն վրա հենվինք, ռուսի՞ն, անգլիացիի՞ն, թե՞ թուրքին: Հույս դնե՞նք, թե՞ չղնենք Եվրոպայի վրա. հեղափոխութհյա՞մբ չարժվինք, թե՞ «խոհեմութհյամբ». այս վայրկյանիս որևէ չարժում ընե՞նք, թե՞ համակերպինք, դարմանենք մեր վերքերը և նոր ուժ հավաքենք. սպասենք նո՞ր ռուսներուն, թե՞ կապվինք նաև պոլշևիկներուն: Այսինքն՝ զուտ տաքտիկ հարցեր, օրվան բռնվելիք քաղաքականութհյան հարցեր, չա՛տ կարևոր ու կենսական հարցեր:

Այս իմաստով ո՛վ կրնա հակառակ ըլլալ և՛ մտածելուն, և՛ փոփոխելուն, ինչ որ կարելի է մտածել կամ փոփոխել: Թեև ինծի կթվի, որ ինչքան ալ նստինք և ինչքան ալ մտածենք, արդի կատարվածեն և կատարվելու վրա եղածեն մեծ տարբերութհյուն մը չէ ունենալու մեր նոր մտածումը: Որովհետև կյանքի ընթացքը իր

օրենքներն ունի, պանապան ուղղությամբ քաշող արտաքին ու ներքին ուժերը որոշ ուղղությամբ կտանին մեր ազգային գնդակը:

Բայց և այնպես միշտ օգտակար և լուրջ գործ է ըրածին ու կատարվածին վրա խորհիլը, գիտակցաբար և բազմակողմանի կերպով հարցերը ըմբռնելը և ատոր համեմատ չարժվիլը: Բան մը, որ կյանքի մեջ արդեն ինքնին կատարվելու վրա է բնականաբար. ամեն կուսակցություն, ամեն օրգան և միտք, որ քիչ-շատ ազդեցություն ունի մեր ազգային կյանքի վրա, կաշխատի այդ ուղղությամբ: Եվ պիտի աշխատի:

Խնդիրը հիմնովին կտարբերի, երբ քննադատությունը ուղղված է հայության հասնիլ ուզած նպատակին դեմ, մեր անկախության ձգտումին դեմ: Անշուշտ, շատ սակավ են անոնք, որ քիչ մը խոր ու անվերապահ կերպով թաղվելեն եսքը իրենց հոգիին մեջ, կարողանան ըսել, թե կմեղադրեն հայ ժողովուրդը կամ անոր ղեկավար մտավորականությունը, որ անիկա ձգտած է իր անկախության, որ իրենք հակառակ են եղած հայու անկախության, որ իրենք հիմա գոնե կուզեն, որ հայը չի ձգտի այլևս այդ անկախության, և կամ կկարծեն, որ հայը կարող է չի ձգտիլ այդ անկախության: Սակավ են, բայց կան, և բոլորովին ալ արհամարհելի չէ անոնց թիվը: Եվ երկու տարբեր արմատներե կաճին այդ հոգիները:

Նախ՝ մարդի՛կ, որոնք բանի տեղ չեն դներ ազգային գոյությունը, կհեգնեն ազգային գաղափարը ընդհանրապես, հակառակ են մանր սահմաններու, մանր տնտեսություններու և մանր զգացումներու: Հայուն վրա կնային իրրև մարդու մը վրա և այդ հայ ըսված մարդուն կցանկան հանգիստ կյանք ու տնտեսական բարօրություն: Եվ տեսնելով, թե ինչպես կտառապի այդ դժբաղդ հայ ըսված մարդը խելոք չի նստելուն և անարժեք անկախություններու ձգտելուն համար, խորհուրդ կուտան, որ թողնենք այդ հիմար ու ճղճիմ հասկացողությունները, պինդ բռնենք վորավոր պետության մը պոչեն և հանգիստ ուտենք, խմենք, աշխատինք, շահինք ու ապրինք մեզի համար մարդավարի:

Այս կերպ մտածողներն ու խորհրդատուները կրնան շատ ազնիվ մարդիկ ըլլալ և իրենց խորհուրդները կրնան տալ շատ

բարի դիտավորութեամբ, բայց միևնոյն է, մենք ականջ չունինք անոնց համար: Ջափազանց տարբեր մակարդակներու վրա ենք կեցած և չափազանց իրար հակադիր. ինչ որ մեզի համար արժեք ունի, անարժեք է անոնց համար. և ինչով որ իրենք կոգևորվին, ցավոտ ժպիտ մը կպատճառե մեզի:

Այդ խորհրդատուները չեն հասկցած և չե՛ն կրնար հասկնալ, թե ինչո՞ւ համար այս աստիճանի շատ են «մանր» ու «նախապաշարված» տեսակի մարդիկը, որոնք պատրաստ են և՛ իրենց ապրուստը, և՛ իրենց հանգիստը ոտքի տակ տալու և կրելու ամեն գրկանք ու տառապանք իրենց ժողովուրդի ազգային մակարդակը, ազգային քաղաքակրթութիւնը և ազգային անկախութիւնը քայլ մը ավելի առաջ քշած ըլլալու համար. և որոնք իրենց այդ ձգտումին մեջ կգտնեն և՛ իրենց մեծութիւնը, և՛ իրենց մխիթարութիւնը, և՛ իրենց հոգեկան հանգիստը:

Այդ խորհրդատուները կնմանին որոշ գույներու հանդեպ կույր եղող անհատներուն, ինչ որ հաճախ կպատահի բժշկութեան մեջ, որոնք, օրինակ, կապույտը միշտ իբրև կանանչ կտեսնեն. և ատոր համար ալ շատ կզայրանան մեր տխմարութեան վրա, որ ապուշ տարբերութիւններ կդնենք, և որ երկնքի կապույտին համար առանձին սեր ունինք և առանձին գնահատում դաշտերու դալարին համար:

Այդ խորհրդատուներու միտքը չի ուզեր ըմբռնել, որ մարդը մարդ է ազգային ամբողջութեան մը մեջ, որ մարդը արդյունքն է ու մեկ օղակը այդ ամբողջին, և որ մարդուս անհատական բաղդավորութիւնն ու հանգիստը շատ սերտ կապված է իր ժողովուրդի վիճակին ու բաղդին:

V. Քննադատներ, որոնք պահել կուզեն միայն մեր «ազգային» գոյութիւնը

Երկրորդ խումբը, ընդհակառակը, ազգային դաղափարն ալ կգնահատե, ազգային քաղաքակրթութիւնն ալ, կսիրե իր մայրենի լեզուն և հայ գիրքը, և ճիշդ ատոր համար է, որ խորհուրդ

կուտա՝ ձեռք վերցնենք մեր անկախության երազեն: Ան մեր անկախությունը կհամարե անկարելիություն, համենայն դեպս հիմակվան համար և առավել կամ նվազ մոտավոր ապագաններու համար: Եթե թուրքին ճանկեն ազատինք ալ, ռուսին ճանկեն չենք ազատիր. իզուր ջանքեր են, իզուր և վնասակար. ավելորդ տեղը պիտի դրգռենք նաև ռուսները մեզի դեմ, մեր բուրդը պիտի դզեն աշխարհքի չորս հովերուն և պիտի կորսնցնենք ամեն ինչ: Մինչդեռ եթե ձեռք վերցնենք այդ առանձին պետության գաղափարեն և անկախության երազանքեն, Հանդիստ կապրինք Ռուսաստանի գրկին մեջ իբրև ռուսահպատակ, տնտեսապես կբարգավաճինք, թվով կաճինք և մեր ազգությունը, լեզուն ու գրականությունն ալ կտևե. այո՛, անշո՛ւշտ, երկրորդաբար, թեև միշտ թևը կախ և ենթարկված պետական քաղաքականության, բայց կտևե, կզարգանա, ինչպես, օրինակ, վերջին պատերազմի նախօրյակին:

Վերի տողերու շատ վտանգավոր «այո՛», «անշո՛ւշտ», «թեև», «բայց»-երը մեջտեղեն վերցնելու համար նախ պետք է կարուկ կերպով պատասխանել հետևյալ հարցին: Եթե այդպես երկար ժամանակ մնանք բարձր քաղաքակրթության հասած և հետզհետե ավելի ուժեղցող ռուս տիրապետության տակ, առանց ներքին լարված դիմադրության, կդիմանա՞ մեր ազգային հոգին, առանձնահատկությունները, գրականությունն ու լեզուն: Այո՞, թե՞ ոչ:

Ոմանք պիտի խոստովանին, որ ո՛չ, չեն դիմանար: Հետզհետե չատցող խառն ամուսնությունը, մասնավորապես մեր մտավորականներու շրջանակին մեջ, որոշ ոգիով ու սիսթեմով տարված պետական ընդհանուր կրթությունը, ամեն կարգի ու տեսակի դիտումնավոր արգելքներն ու դժվարությունները, ինչպես և արվեստորեն ներշնչված արհամարհանքը դեպի այդ «մանրուք» երկրորդական ժողովուրդներն ու լեզվիկները սերունդե սերունդ կմաշեն ու կմեռցնեն, ինչ որ հայկական է:

Հայերեն լեզուն պատերազմեն առաջ մեր ռուսահայ մտավորական դասակարգին մեջ կա՛մ ամենևին չէր գործածվեր, կա՛մ հոս ու հոն եթե կգործածվեր ալ, կգործածվեր շատ երկրորդաբար

և այնպես չքոտի ու աղավաղված, որ ավելի լավ էր չգործածվեր: Կարգին հայերեն խոսողը բացառություն մըն էր, որուն առջևը հայերեն խոսիլ կամչնային մյուսները:

Այլևս ինչ խոսինք գրքի ու գրականության մասին: Հա՛, իբրև ազգասիրություն, իբրև հասարակական պարտականություն կամ իբրև տեսակ մը բարեգործություն, նայելով մարդոց մտավոր մակարդակին, շատ տեղ կտասցվեին հայերեն լրագիրներ, երբեմն նաև գրքեր, որոնք կքաշքշվեին սեղաններուն վրա առանց սակայն ոչ ոքի կողմե կարդացվելու:

Եվ ինչո՞ւ պիտի կարդային, երբ շատ ավելի հարուստ ու մեծ ու բազմակողմանի թերթեր ու գրքեր թափված էին նույն սեղանի վրա իրենց համար շատ ավելի հարազատ դարձած իրենց դպրոցական լեզվով: Ո՛չ, այս պայմաններուն մեջ ազգային ոգի չի դիմանար: Առանց ազգային լրիվ գոյության, առանց պետական անկախության՝ հայ քաղաքակրթություն ունենալու գաղափարը անճար ինքնախաբեություն մըն է, կամ ծալված խաբեություն մը, կամ կես-գիտակից խոստովանություն մը, որ ինքը հայ ժողովուրդի օրերը համրված կկարծե:

Ուրիշները պիտի պնդեն այո-ն: Հայ ինքնությունը, հայ լեզուն, ոգին ու գրականությունը կդիմանա՛ն ու կզարգանան նաև օտար ժողովուրդի մը պետականության տակ և անոր բնական ու արվեստական բոլոր կաշկանդումներուն հակառակ, եթե հայ ժողովուրդը ունի իր մեջը կենսունակություն և եթե կա գիտակից աշխատանք և կազմակերպված կուլտուրական դիմադրություն հայ մտավորականության կողմե: Ջէ՞ որ Ռուսաստանի մտավորականներեն շա՛տ շատերը վե՛րջն են սովրած հայերենը, իրենց ջանքերով, ազգային գիտակցությամբ, և ամեն կողմ սկսած էր շրջանակներ կազմվիլ հայ գրքի, հայ մտքի ու հայ գրականության տարածմանը նպաստելու համար: Այս ճամբով կարելի է շատ հեռուն երթալ:

Այսպես պնդող մարդը, իրա՛վ որ, շատ կարճատես պիտի ըլլա՝ չտեսնելու համար, որ այդ աստիճանի կենսունակություն ունեցող ժողովուրդ մը, այդ աստիճանի ազգային հպարտություն զգացող մտավորականություն մը, այդպես զարգացման հասած ու

կարդացվող գիրքն ու պրականութիւնը այլևս բավականանալ չեն կրնար իրենց կիսատ ու աղճատ գոյութիւնեմբ և կամա-ակամա պիտի ձգտին իրենց լրիվ ծագկումը, իրենց ազատ շարժումը ձեռք բերելու:

Ճիշդ է, պատերազմին առաջ շատերը սկսեր էին հայերեն սորվիլ, ջանքեր ընել հայերեն կարդալու և ամոթ զգալ իրենց մայրենի լեզուն չգիտնալեն. բայց եթե քիչ մը ավելի խորը նայինք, պիտի տեսնենք, որ այդ սորվող, ջանացող ու ամչցողները անոնք էին, որոնք հայ հեղափոխութեան ցանցը կհյուսեին և կամ այդ ցանցի անմիջական ազդեցութեան տակն էին: Այդ երկուքը արդեն իրար կապված են միշտ. ազգային կուլտուրայի սերը հեղափոխութիւն կառաջացնե, հեղափոխութիւնը առաջ կբաշե ազգային կուլտուրան:

Որ կողմ ալ որ դարձնենք՝ եզրակացութիւնը նույն է: Այն մարդիկը, որ ազգայինը կսիրեն և պահել կուզեն, բայց խորհուրդ կուտան անհրաժեշտութեան առաջ ձեռք վերցնենք մեր անկախութեան ձգտումեն, կըսեն բան մը, որ խորապես չեն մտածած և չեն նայած քիչ մը ավելի հեռուն: Եվ մարդս ակամա այն տպավորութիւնը կստանա, որ այդ դժգոհները պարզապես «անիծված ու անլուծելի հարցը» իրենց վիզեն նետել կուզեն եկող սերունդներուն վիզը: Իրենք արդեն չա՛տ են հոգնած, բոլորը տեղահան եղած, տակնուվրա դարձած, և տարիներու ճյուռն ալ նստեր է արդեն իրենց մորուքին: Եվ բնազդական ձգտում մը զարթնած է հիմա իրենց մեջ պատառ մը հանգստութեան, ինչ գնով կուզե ըլլա, գոնե այնչափ մը, ինչպես որ էր պատերազմին առաջ, որը «այո՛, իհարկե, մեծ բան մը չէր թեև, բայց...»:

VI. Ամբողջ հայոց պատմությունը հայ ժողովուրդի անկախության պայքարն է

Ով ջարդված է՝ բնականաբար կքաշվի մեջտեղեն, ով հոգնած է՝ կնստի, բայց ատով ոչինչ չի փոխվիր: Ետ քաշվողներուն տեղը կուգան նորերը, մեկ նստողին տեղը ոտքի կելլեն ուրիշ-

ները: Եվ եթե այսօր մենք բոլորս ալ քաշվինք ասպարեզեն, վաղը հրապարակ կուգա նոր սերունդը՝ հին դրոշակը բարձր պահած իր ձեռքին, որովհետև անիկա ալ ապրիլ պիտի ուզե իր ազգային կյանքովը: Վերջապես պետք է հասկնանք, որ ինքն իր տերը ըլլալու և իր անկախության հասնելու պահանջը իմ ու քու հնարած խաղը չէ, ո՛չ մեզմով է սկսած և ո՛չ մեզմով կվերջանա:

Ազգը ապրող օրգանիզմ մըն է, որ քանի կենդանի է, ուզե-չուզե, ենթարկվի պիտի իր գոյության օրենքներուն: Եվ այդ օրենքներուն ամենեն առաջինը իր լրիվ գոյությունը ունենալու, իր բոլոր ֆունկսիոններուն տերը ըլլալու պահանջն է: Ամեն հիվանդ օրգանիզմի առաջին ձգտումը առողջանալն է, այսինքն՝ վերստին ձեռք բերել իր բոլոր օրգաններու ազատ ու առողջ գործածությունը, որոնցմե զրկված էր, և այդ պատճառով խանգարված, թուլացած ու տխեղծ էր դարձած ամբողջ օրգանիզմը:

Իր կամքեն ու պետականությենեն զրկված ժողովուրդ մը, ինչքան ժամանակ որ կապրի, միշտ պիտի ձգտի, անխուսափելի կերպով պիտի ձգտի իր կամքն ու իր ազատ պետությունը ձեռք բերելու: Կկարողանա թե ոչ՝ ատիկա տարբեր հարց է, բայց որ պիտի տենչա ու ձգտի՝ ատոր տարակույս չկա: Հենց որ դադրեցավ այդ պահանջը, հենց որ մեռավ անկախության ձգտումը, կնշանակե սկսված է ժողովուրդին հոգեվարքը: Իր ջիղերուն ու հոգիին մեջ կենսունակություն զգացող ժողովուրդ մը հրաժարիլ չի կրնար երբեք իր այդ ամենաբնական ձգտումեն:

Հայ ժողովուրդը, որ քսանյոթը դարերու գոյության ընթացքին իր կյանքին կեսը հպատակ է ապրած, մի՛չտ ձգտեր է ձեռք բերելու իր թանկագին կորուստը և կռիվ է մղեր աշխարհիս ամենեն հզոր բռնապետություններուն դեմ՝ հասնելու համար կամ պահելու համար իր անկախությունը:

Հայոց պատմությունը դիմադրություններու ու ապստամբություններու անվերջ շարան մըն է Դարեհներու ու Սելևկյաններու ժամանակներեն սկսած, Հռոմի ու Սասանյաններուն վրայով, մինչև արաբները, Բյուզանդիա և Թուրանական հորդաները: Եվ մինչև ԺԱ-րդ դարուն կեսերը իր բո՛ւն հայրենիքին մեջ կրցած է պահպանել իր ներքին անկախությունը միշտ և հինգ-վեց

անգամ հաջողած է նաև արտաքին անկախ պետականութիւն հիմնելու, որոնք երկար դարեր են տևած: Ամենեն սև ու մռայլ շրջանը ԺԵ-են մինչև ԺԹ-րդ դարն է, երբ կմարին բոլոր բոցերը չորս-հինգ դարերու անընդհատ ավերածութեան ու սրածութեան և թուրք-մահմետական տիրապետութեան քայքայումին տակ. բայց հոտ անգամ չէ մարած անկախութեան կրակը և մոխիրներուն տակեն կկայծկլտան երբեմն կայծերը:

Ժողովուրդ մը, որ այսքան-այսքան անգամներ ինկած ու կանգնած է, որ Համաու տևած է և ձգտած նորեն ու նորեն իր անկախութեանը, ինչպե՞ս կարող է հիմա ձեռք վերցնել իր այդ ձգտումեն, երբ իր մեջը առաջացած է նոր գիտակից մտավոր դասակարգ մը և ընդհանրապես նոր թափ է առած իր հոգին ու նոր հպարտութիւն: Վերջապես մենք ժողովուրդ մըն ենք ընդունակ, աշխատող, հին ու նոր արժեքներ ներկայացնող, և՛ կռված, և՛ կռվող, և՛ մարդկութեան առաջ պահանջատեր: Եվ ան ալ հրաժարինք հիմա, մեր այս դարուն մեջ, երբ հետզհետե կգիտակցվի անկախ ազգութիւններու դերը պատմութեան մեջ, երբ ազգն ու ազգութիւնը կդառնան հիմքը պետութեան, երբ փոքր ազգութիւններու անկախութեան նշանաբանն է դրված մեջտեղ, երբ նույնիսկ սոցիալիստական քառակուսի դատողութիւններու մեջն անգամ սկսեր է թափանցել ազգային անկախութիւններու առողջ լույսը, և երբ «բոլորի՛ն, բոլորի՛ն, բոլորի՛ն» պոլշևիկներն անգամ սկսեր են ազգայնականութիւն խաղալ:

Ո՛չ: Հայ մտավորականութիւնը միշտ ղնեն պիտի իր ծրագրին գլուխը Հայու անկախութեան պահանջը, ինչքան ժամանակ որ Հայը անկախութեան չունի:

VII. Հայ անկախության կռիվը թուրանական դարերու սկզբին ու ավարտին

«Բայց,- կկրկնեն իբրև գերագույն առարկութիւն,- այդ անկախութեան ձգտումը կրնա պատճառ դառնալ մեր ազգութեան

վերջնական քայքայումին, կրնանք բոլորովին ոչնչանալ այդ անհավասար կռվին մեջ, իբրև ազգություն. կրնանք մեռնիլ»:

Այո՛, կրնա՛նք, կրնա՛ պատահիլ: Կռվի մեջ նետվողը և՛ կվիրավորվի, և՛ կրնա մեռնիլ: Բայց մեռնելեն վախցող ժողովուրդը ո՛չ կրնա ապրիլ ու ղիմանալ, ո՛չ ալ իրավունք ունի ապրելու, իբրև ուրույն գոյություն, իբրև ջոկ անհատականություն: Եվ իր վախովը ան չազատիր մեռնելե. միայն կմեռնի քաչքչվելով, հյուծվելով, արհամարհվելով ու ոտքի տակ երթալով:

Ինչի՞ է նման ամեն արժանիքե զուրկ ու ստորին ազգային գոյություն մը: Արդի ու անցյալ մեր բոլոր հալածանքը, մեր բոլոր տառապանքը, մեր մարդկային արժանապատվության այս բոլոր ոտնահարումը, անազատ կյանքի այս բոլոր լեղին եթե մենք կկսմենք, կկսմենք միայն մե՛կ նպատակով, որ ղիմադրենք, մաքառինք, հանձն առնենք ամեն ինչ, մինչև որ ոտքի հանենք նորեն մեր ժողովուրդի լրիվ քաղաքակրթություն, լրիվ ինքնուրույնություն:

Իսկ եթե գոյություն պիտի չունենա այդ ձգտումը մեր հոգիներուն մեջ ու չի պիտի վարե մեր չարժումները հանրային կյանքին մեջ, ինչ արժեք ունի այլևս այս կիսատ ու քառորդ ազգային ցավագար գոյությունը, որ պահելու աշխատինք:

Ինչ օգուտ մեզի և ինչ օգուտ ուրիշներուն: Անհամեմատ ավելի իմաստ ունի ցրվիլը, ձուլվիլը ուրիշ ազգերու հետ և ապրիլը իբրև նոր ազգի մը մեկ առողջ անդամը. և ինչքան չուտ ու արագ, այնքան լավ:

Բայց չե՛նք մեռնիր: Ժողովուրդները իրենց անկախությանը ձգտելնուն համար չէ՛, որ կմեռնին: Շատ ավելի ճիշդ է հակառակը. կմեռնին ապրելու կամքն ու վճռականությունը չունենալնուն համար: Եթե հայությունը դիմացեր է այսքան դարեր, իր դիմադրությամբն է դիմացեր, դիմադրելով, որ չկլանվի, դիմադրելով, որ ապատվի: Եթե իր անկախության համար մաքառիլը մահ բերեր, հայությունը արդեն տասնյակ անգամներ պետք է մեռած ըլլար: Կամքը ո՛ւժ է, մե՛ծ ուժ, չա՛տ ավելի մեծ ուժ, քան սովորաբար կկարծվի: Սրե՛նք մեր կամքերը բոլոր միջոցներով. ատիկա է այն միակ զենքը, որ իրապես կպաշտպանե մեզի մահեն,

սուիկա է այն միակ սուբ պենքը, որ մեր բարձրացման ու մեր զարգացման առջևը ճամբա կըբանա:

Ինչպես երեկ, ինչպես այսօր, այնպես ալ վաղը նո՛ւյնն է Հայութեան ձգտումը, և ուրիշ բան ալ չի կրնար ըլլալ, մինչև որ մենք ալ մտնենք վերջապես ազատ ու առողջ ազգերու շարքը: Անկախութեան այս ձգտումը և նոր կապված մաքառումները, իրա՛վ է, ուտեն պիտի մեր ստեղծագործական ուժերու, մեր քաղաքակրթական ընդունակութիւններու և մեր աշխատանքի լավագոյն մասը, ինչպես որ կերեր են մինչև հիմա. բայց ա՛յս է կյանքը, ա՛յս է պահանջը մեզի շրջապատող պայմաններուն. ուրիշ ճամբա չկա:

Համենայն դեպս պատմական իրողութիւնն այն է, որ այն օրեն, երբ թուրանական ցեղերը ոտքի տակ տվին և ավերեցին Հայաստանը, հայ ազգը երկու մեծ շարժում ունի կատարած, երկու համառ ճիգ՝ իր անկախութիւնը ձեռք բերելու:

Առաջինը թուրանական դարերու սկիզբին, երբ դեռ մեր աղնվականութեան մնացորդները կային, որոնք և հիմնեցին նոր ու անկախ իշխանապետութիւն մը Տավրոսի բարձունքներուն վրա, որը շուտով դարձավ Կիլիկիայի թագավորութիւն և երեք դար կրցավ իր առողջ կյանքը ունենալ շրջակա հետզհետե զորացող մահմետական օղակին մեջ. և ինկավ, որովհետև մինակ մնայ իբրև քրիստոնյա և կտրված Արևմուտքեն, որովհետև դարաշրջանը Ասիային էր, որու հորձանքին դեմ Բյուզանդիոնն անգամ դիմանալ չի կրցավ:

Երկրորդ մեծ ճիգը անկախութեան, ահա՛, կկատարե հայ ժողովուրդը հիմա, թուրանական տիրապետութեան ավարտին. կկատարե՛, որովհետև եկած է արևմտյան մտքի ու պենքի հաղթանակին դարաշրջանը. կկատարե՛, որովհետև ինքը վերսին կապվեցավ Արևմուտքի ոգիին ու քաղաքակրթութեան. կկատարե՛, որովհետև իր սպառած աղնվականութեան վոխարեն ձեռք է բերեր հիմա նոր վարիչ ու կազմակերպող դասակարգ մը՝ իր մտավորականութիւնը:

Ինչքա՜ն դժվարութիւններ է քաշած Կիլիկիայի մեր անկախութիւնը ոտքի կանդնելու համար: Ինչքա՜ն համեստ ու փոքր

են եղեր իր սկիզբները. քանի՜-քանի անգամ ինկած է չնչատ և ուժասպառ, ընդհատված է, կարծես վերջացավ ամեն ինչ և մարեցյավ ամեն կայծ, ամեն հույս: Բայց ահա՜ Թորոս[135] մը, կամքի հանդուգն չարժում մը, պայմաններու հաջող փորձ մը, և անկախությունը նորեն ելած է ոտքի, նորեն կմաքառի ու իր ոտքերուն ավելի ամուր տեղ կրնե և կհասնի ծովուն և կհասնի թագի, հակառակ շրջապատի հույն, թուրք, լատին դրացիներու անվերջ դավին, դիմադրության, հարձակումներուն ու թշնամության:

Նույն վիճակը և նույն ապագան կսպասե մեզի և հիմա: Երթե մեկ կողմեն մեր արդի պայմանները ավելի ծանր են, քանի որ կամաց-կամաց նահանջող Բյուգանդիայի մը փոխարեն հետզհետե բարձրացող ու արևմտացող Ռուսաստան մը ունինք հիմա մեր կողքին, բայց մյուս կողմեն մեզի հետ է ժամանակի ոգին ու քաղաքակրթության պահանջը:

Մենք ալ, անշուշտ, դեռ շատ պիտի ելլենք ու իյնանք. մեր հողամասերն ալ սկիզբները սաստիկ համեստ ու փոքրիկ. և բավական ժամանակ ունենանք անկախություն մը հավանորեն սաստիկ կախյալ ու խեղճուկրակ, մոտավորապես ինչպես արդի Խորհրդային Հայաստանը, օրինակ: Եվ ա՛ն ալ դեռ շատ պիտի գտնեն, ատոր համար ալ պիտի մաքառինք, հարկ եղավ զենքով, ուրիշ անգամ պասսիվ դիմադրությամբ և պատմության ու վայրկյանի ընձեռած բոլոր միջոցներով:

Գուցե և խլեն նաև այդ չնչինը և ոչնչացնել ուզեն:

Պետք է սկսինք նորեն, պետք է սկսինք ծայրեն այդ Զիսիֆոսի[136] աշխատանքը, մինչև որ ոտքերնիս ամուր դնենք մեր հողին, մինչև որ հասնինք ծովուն, մինչև որ հասնինք թագին, մեր կատարյալ անկախության:

Այսպե՛ս կշինվին պետությունները: Եվ գիտե՛նք, որ դժվար շինվելիք չենք է մե՛ր պետությունը:

ՉԳՏՈՒՄՆԵՐՈՒ ԳԾԱԾ ՈՒԼԻՆ

Ա. ԹՈՒՐՔԻԱ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ

I. Թուրքիայի մեջ հայկական հալածանքներուն առաջին երկու պատճառները

Մինչև 1828 թվականը Թուրքիայի տիրապետությունը հայկական նահանգներուն մեջ անվանական է: Այս հողամասերը կկազմեն Պարսկաստանի հետ ունեցած սահմանին մեկ կարևոր մասը և կներկայացնեն անվերջ դաշտ մը անվերջ պատերազմներու, աչքի հետու, հակողոքենեն հետու. երկրի իսկական տերերն են քյուրտ աշիրեթներու պետերը, զանազան տերեպեյիներ, գործնականապես բոլորովին ինքնագլուխ: Թուրք տարրը չափազանց աննշան և միայն մեկ-երկու քաղաքներու մեջ: Ընդարձակ կիսավեր ու կիսատեր տարածություն մը մասամբ հետևանք Թուրքիայի կեդրոնական քայքայման ու վարչական անփութության, մասամբ ալ դիտմամբ ձգված այդ վիճակին մեջ, իբրև բնական անջրպետ մը Թուրքիայի ու Պարսկաստանի միջև:

Ռուսներուն Կովկասի մեջ երևալը և 1828-ի հաղթանակը կբանան Թուրքերուն աչքը հյուսիսեն ցած չարժվող մեծ վտանգին դեմ, և կառավարությունը արագ ու կտրուկ միջոցներու կդիմե իր հակողություն ու տիրապետությունը ամրացնելու համար այդ ռուսամերձ հողամասերուն մեջ: Կկտրեն քյուրտերուն դիմադրությունը, երկիրը ըլլորեն կենթարկվի Օսմանյան կեդրոնական վարչության և կբաժնվի վիլայեթներու:

1877-ի պարտությունը, նոր հողերու կորուստը այդ սահմանին վրա և ռուսներու պարզ դիտավորությունը ավելի ևս հարթավ, ավելի ևս առաջ չարժվելու, վերջնականապես կվախցնեն ու կխրթնեցնեն Թուրք կառավարությունը: Եվ որովհետև ռուսները իրենց բոլոր հարձակումներու միջոցին քրիստոնյաներու պաշտպանության անունով կխոսեին, Թուրքերը անմիջապես կձեռնարկեն անաղմուկ կերպով այդ պատրվակը մեջտեղեն վերցընելու:

Մնկ կողմեն կստեղծվին «Համիտյան գնդերը», այսինքն՝ կեդրոնական կառավարութ֊յան վստահութ֊յունը վայելող և անկե օժանդակվող քյուրտ ցեղապետներ, որոնց կտրվին ռուսական սահմանին մոտիկ եղած հողերը և ազատ իրավունք տիրանալու, փճացնելու և փախցնելու հայ գյուղերն ու հայ տարրը, որը առանց ատոր ալ շատ նվազած էր ու քարուքանդ էր եղած պատերազմի միջոցին և հաջորդող դեպի Կովկաս գաղթին պատճառով: Մյուս կողմեն կսկսվի սիսթեմատիկ աշխատանք մը հայ տարրը հողազուրկ դարձնելու Հայաստանի մեջ և անտանելի դարձնելու անոր տնտեսական ու վարչական վիճակը, որպեսզի հայերը թողնեն ու հեռանան: Թե՛ բռնի ու բացահայտ, թե՛ վարչական ու տնտեսական մեքենայութ֊յուններով հողերն ու գյուղերը արագ կերպով կհաստատվին նոր եկվոր մահմետականներու անվանը. և օր օրի կմեծնա հայու պանդխտութ֊յունն ու գաղթը:

Այնպես որ հայկական հալածանքը բուն մայր հողին վրա կսկսվի 77-են և արդյունք է ռուսական հառաջխաղացման դեպի հայկական հողերը, ռուսական սպառնալիքին և ոչ թե հայութ֊յան հեղափոխական շարժումներուն: Հայ ինքնապաշտպանութ֊յան փորձերն ու հեղափոխական առաջին քայլերը թեթև ուշացումով կհետևին ու զուգ կերթան թուրքերուն՝ հայութ֊յունը ոչնչացնելու ու փախցնելու ծրագրին: Բայց այդ բոլորը տեղի ունենար թե ոչ, հիմնական իրողութենեն ոչինչ չէր փոխվելու. թուրքերը պե՛տք է դատարկեին Հայաստանը հայ տարրեն. և ատոր պատճառը մե՛նք չէինք, այլ ռուսական վախը:

Այսպեսով՝ թուրքերու հայութ֊յան դեմ բունած թշնամական դիրքին առաջին պատճառը հայու քրիստոնյա ըլլալն է, որով ան պատրվակ կծառայեր ռուսական արշավանքներուն, օժանդակ կդառնար ռուսերու շարժումին և իր համակրանքներովն ու սպասումներովը բնականորեն կապված էր ռուսներու հաջողութ֊յան:

Թեև թուրքերու՝ հայ տարրը Հայաստանեն հալածելու ծրագիրը ծագում չէ առած հայ հեղափոխական շարժումներեն, ինչպես որ թուրքերը դիտումնավոր կերպով կստեն, և մեր մեջ ալ շատերը կկրկնեն կարճատեսութ֊յամբ, բայց, ինչ ըսել կուզե, որ հայ հեղափոխական շարժումներուն առաջ գալը հաստատեց

թուրքական երկյուղը, ավելի ևս պրպտից, կատղեցուց և ընդհ. դարձուց անոնց հալածանքը ամեն տեղի հայութիան դեմ: Այլևս բուն Հայաստանի հայութիւնը ցրիվ տալու ու մեջտեղեն վերցնելու ծրագիրը չէ միայն, այլ ընդհանրապես առհասարակ հայուն դեմ, իբրև ապերախտ ու ապստամբ ժողովուրդ մը, իբրև ներքին թշնամի: Եվ այն վայրագութիւնը, ինչ որ հերթով անոնք ունեցած էին հույնին, սերպին ու բուլգարին համար, հիմա դարձավ շատ բնական կերպով մեր դեմը:

Միշտ պետք է շատ որոշ կերպով իրարմէ զանազանել «երկրի» հայութիւնը Թուրքիայի մյուս մասերու հայութենեն, մասնավորապես ծովեզերյա մասերու հայութենեն: Վերջիններս գաղութներ էին և բոլորովին տարբեր պայմաններու տակ: Եվ այն միջոցին, երբ թուրքերը Հայաստանի հայութիւնը կնկատեին իբրև վտանգավոր տարր և «մաքրելու» եռևեռ էին, ոչինչ չունեին, օրինակ, Պոլսի հայուն դեմ. ընդհակառակը, այդ գաղութ հայերուն վրա կնայեին իբրև լավ ծառայող և շատ օգտակար հպատակներու վրա, մասնավորապես ԺԹ-րդ դարու կեսերուն շուրջը. որովհետև հունական ապստամբութենեն ետքը հայերը դարձեր էին հույն տարրին տեսակ մը փոխարինողն ու հակադրվողը թուրքիայի առևտրական, ֆինանսական ու վարչական գործառնութիւններուն մեջ: Հայ հեղափոխութիւնը մեկ-երկու տասնյակ տարի ետքը բոլորովին փճացուց այդ գաղութ հայերու ու թուրքերու մեջ եղած լավ հարաբերութիւնը. և հոս է մեր էֆենտիներու հեղափոխութեան դեմ ունեցած պայրուքին ամենեն գլխավոր պատճառը:

Հայ հեղափոխական ցույցերը ամեն անգամ անախորժութիւններ կպատճառեին թուրք վարչութեան. ատոնց ետևեն միշտ կուգար եվրոպական միջամտութիւն, միջազգային քննիչ հանձնաժողովներ, զանազան «նոթ»-եր[137], բարենորոգումներու պահանջ ու ծրագիրներ: Կառավարութիւնը իհարկե միշտ կհաջողեր հարցը խեղդելու, ծրագիրները կմնային օդի մեջ, բայց քանի կերթար՝ խնդիրը կլրջանար ու կդառնար վտանգավոր, մանավանդ որ եվրոպական պետութիւնները չարունակ կքրքրեին ու կշահագոր-

ծեին մեր Հարցի այդ անլույծ վիճակը Թուրքիայի հետ իրենց ուրիշ հաշիվները մաքրելու համար:

Ուրիշ խոսքով՝ Թուրքի հայու դեմ ունեցած ատելության, հալածանքին ու թշնամության երկրորդ պատճառը, բնականաբար, է՛ր հայու անկախության ձգտիլը, հեղափոխական ցույցերն ու չարժումները և բարենորոգումներու պահանջը: Թուրքը կզգար, որ այլևս հայերը իր հպատակության տակ պահելու անկարող էր. ատոնք մշտական սպառնալիք մըն էին իր ծոցին մեջ, մշտական հնոց մը՝ ցնցումներու, խառնակության և եվրոպական միջամտության:

Այս երկու պատճառները լիովին հերիք են բացատրելու համար մինչև հիմա կատարված սոսկումները, ինչպես և այս վայրկյանիս Թուրքերու բռնած անհաչտ ու անզիջող դիրքը մեզի հանդեպ, մանավանդ եթե աչքի առաջ ունենանք չատ հեռուն չմտածող ամբոխի ու մեծամասնության տրամադրությունը: Բայց եթե միայն այս երկուքը ըլլային հայ ու Թուրքի թշնամության պատճառը՝ չարիքը կըլլար չատ ավելի փոքր, և անկարելի չէր ելքի ու իրար հասկնալու ճամբա մը գտնելը: Որովհետև գոնե անոնց ղեկավարները չատ աղեկ կհասկնան, որ «Հայն» ու «քրիստոնյան» դատարկ խոսքեր են միայն ռուսին համար, և հայությունը վիճացնելով չէ, որ առաջը պիտի առնեն Ռուսաստանի դեպի Հարավ չարժման: Ընդհակառա՛կը, այդ տեսակետեն, մանավանդ հիմա, արդի ստեղծված վիճակեն ետքը, հայ տարրի իսպառ ոչնչացումը բնավ ձեռնտու չէ Թուրքիայի չահերուն. իր կողն է, որ կմերկացնե ռուսի Հարվածներուն դեմ: Որովհետև եթե պետք է կորսնցնեն այդ «արևելյան նահանգները», ըլլար լրիվ թե մասամբ, մի՛չտ Թուրքիայի համար անհամեմատ ավելի ձեռնտու է, որ այդ հողամասերեն կազմվի պզտիկ Հայաստան մը իրեն կից, իրեն ու ռուսներուն մեջտեղը, եվրոպական վերին հսկողության մը տակ, քան թե այդ նահանգներն ալ երթան միանալու ծովածավալ հսկա պետության հողերուն և այդ պետությունը դարձնեն զուտ Թուրք հողերուն անմիջական ու չատ վտանգավոր դրացին:

II. Հայ ու թուրքի գոյակցության երկրորդ պատճառը

Հայ ու թուրքի հարաբերությունը անհաշտ և սուր դարձնողը իսկապես երրորդ պատճառն է, մանավանդ սակն ետքը: Որը է Թուրքիայի հարձակողական ծրագիրը. այսինքն՝ օսմանցիներու ձգտումը իրենց իշխանությունը տարածելու բոլոր թուրանական ժողովուրդներուն վրա, հիմնելու ընդարձակ թուրանական կայսրություն մը և, այդ ձգտումը իրականացնելու իրրև առաջին քայլ, քշել ռուսները Կովկասեն և այդ երկիրները միացնել Թուրքիային: Իսկ այդ միացման տևական ու արմատական հաջողությանը համար ամենեն կարևոր պայմանն է միանգամ ընդմիշտ սրբել Հայաստանը իր հայրենի վերջին կայանեն, և Աճառիայի, Ղազախի, Գանձակի, Ղարաբաղի, Նախիջևանի ու Կարսի թուրք ու մահմետական տարրերը իրար բերելով՝ առաջացնել միաձույլ ամբողջություն մը և պինդ նստիլ Սևանի լիճը ընդգրկող տիրական բարձունքներուն վրա:

Ոչ միայն որևէ սահմանի ինքնուրույն Հայաստանի մը կազմությունը, այլ նույնիսկ հայու պարզ գոյությունը անտանելի է հայ հողերուն վրան՝ պանթուրքական ծրագիրներու հաջողության տեսակետեն: Մեր գոյությունը դառնալու է նորեն հավիտենական «Հայկական հարցի» մը բույնը, իսկ մեր անկախությունը, սեպի մը նման, խրվելու է Փոքր Ասիայի, Ատրպեյջանի ու Ատրպատականի թուրք ու մահմետական տարրերուն մեջ՝ սպառնալով օրե օր ավելի պինդ խրվելու, ամրանալու և բաժնելու այդ ցեղակից կամ կրոնակից ժողովուրդներն ու տարրերը իրարմե: Ուրիշ խոսքով՝ թուրք-մահմետական սահմանադրության դեմ ուղղված քրիստոնեական ու արևմտյան սպառնալիքի ամենեն վերջին սուր ծայրն ենք մենք, որ կծակե, կցավցնե ու կպատռե թուրքական վերստին տիրապետության ու մեծության տենչերը:

Որով և թուրքերու պանթուրանական ձգտումը և հայերու անկախության ձգտումը իրարու տրամագծորեն հակառակ կուգան: Մեր ծրագրին հաջողությունը անոնց խոշոր ծրագիրներուն ձախողանքն է, իսկ անոնց ծրագրին հաջողությունը՝ մեր ոչնչացումը: Ինչքան ժամանակ որ թուրքերու ձգտումը, հանուն իրենց

թուրանական ընդարձակ տիրապետութեան, Հայաստանն ու Հայութիւնը վերջնապես բնաւեր դարձնելն է, մեր ու թուրքին միջև, բնական է, հաշակցողութեան լեզու չի կրնար գոյութիւն ունենալ: Ասոր համար ալ երեխայութիւն են այն բոլոր մխամիտ առաջարկները, որոնք մեջտեղ կ՚ելլին աչեն ու ձախեն, թե այսպես կարելի չէ, պետք է չիտակ հարաբերութեան մեջ մտնել թուրքերուն հետ, պետք է կերպ մը համաձայնութեան գալ և իրար հասկնալ: Այդ տեսակի բոլոր փորձերը, ինչպես մինչև հիմա, ասկե ետքն ալ դատապարտված են դուրս չի գալու կեղծուպատիր հավաստիացումներու և ուռուցիկ, գոց ըրած խոսքերու տափակ շրջանակեն: Որովհետև եթե մարդիկը քիչ մը ավելի չիտակ ըլլալ ուզեն, քան քաղաքավար, պարզապես պիտի ըսեն. «Թույլ եք ու փոքր, ուրեմն պետք է հնազանդիք ձեր ճակտի գիրին, այսինքն՝ պետք է մորթվիք, ցրվիք, ձուլվիք ու ոչնչանաք»:

Թեև լինքնին մեռածին ծրագիր մըն է պանթուրանիզմը թե՛ քաղաքական և թե՛ քաղաքակրթական պատճառներով, և անոր հաջողիլը հավանականութենե չափազանց դուրկ, բայց մեզի համար կրնա ունենալ երկու չատ ծանր հետևանք:

Նախ՝ այդ ձգտումը կրնա ծնունդ տալ Կովկասի վրա արշավանքի մը իրենց համար նպաստավոր վայրկյանի մը մեջ, գուցե և ժամանակավոր գրավումի մը, որը Հայ ժողովուրդի համար ըսել է՝ նորե՛ն կոտորած, նորե՛ն փախուստ և գաղթ դեպի հյուսիս. այսինքն՝՝ առնվազն մեր թվի կեսին կորուստը, երբ նորեն վերադառնանք մեր ավերակ հողերը: Վերջին տասնամյակի սարսափելի կորուստներեն ետքը այս նոր հարվածը կհասցնի մեզի կատարյալ արյունաքամ վիճակի:

Երկրորդ՝ ենթադրելով, որ կերպ մը կարողանանք դիմադրել ու պաշտպանվիլ այդ սարսափելի աղետեն, կամ որ չի հաջողվի գրավումը, կամ որ բնավ հարցը արշավանքի մը կարելիութեանը չի հասնի, նորեն Թուրքիայի այդ հարձակողական ծրագիրը չատ դժբաղդ կերպով ազդե պիտի թե՛ հայու, թե՛ թուրքի և թե՛ ընդհանրապես ամբողջ Կովկասի կյանքին ու քաղաքական ուղղութեանը վրա: Թուրքի ու մեր մեջ ավելի խոր ու տևական պիտի դարձնե փոխադարձ անվստահութիւնը, ատելութիւնը և թշնա-

մուրյունը: Պիտի վերցընե մեջտեղին հնարավորությունը քիչ-շատ մարդավարի ու հանգիստ հարաբերություն ու ապրուստ ունենալու մեր մահմետական ղրացիներուն ու կենակիցներուն հետ: Մեղի պիտի ստիպե ավելի կամակատար դառնալու ռուսին հանդեպ. որովհետև երբ ժողովուրդի մը ֆիզիքական լրիվ վիճացումն է թուրքին ծրագիրը և մեր ամբողջ հայրենիքի վերջնական հափշտակությունը, այլևս ամեն ուրիշ հաշիվ ու ձգտում կանգ կառնե. միայն մե՛կ նպատակ՝ խանգարել թուրքի ծրագիրներուն կարելիությունը, ինչ գնով ալ որ ըլլա. ատ կդառնա օրվան սև անհրաժեշտությունը. և ռուսի հետ մեր ունեցած ավելի բարձր տեսակի հաշիվները կմնան վաղվան:

III. Հայաստանի ու Թուրքիայի ապագա կապը

Անշուշտ, պայմանները հիմնովին կփոխվին, երբ թուրքերը պատմության ու իրականության արտաքին ճնշումին տակ, ինչպես և իրենց տնտեսական ու կուլտուրական անկարողությունները ներքին հարկադրանքին մղված հասնին ավելի համեստ, բայց և ավելի առողջ, ավելի քաղաքակիրթ և իրենց վիճակին ավելի համապատասխան քաղաքականության մը, ինքն իր պատյանին մեջ ապրելու և իր կուլտուրական զարգացման համար աշխատելու քաղաքականության: Թուրքերուն մեջ հիմա ալ կան մարդիկ, որ ավելի հեռատես են և այդ ուղղությամբ կմտածեն. բայց ատոնք հիմա մատի վրա համրվող հատիկներ են. պետք է, որ համոզումը դառնա ընդհանուր:

Երբ թուրքերը հասնին այս իմաստության և լքեն իրենց սահմաններեն անդին արշավելու ծրագիրները, անմիջապես կփոխվին նաև Մերձավոր Արևելքի քաղաքական փոխհարաբերությունները, և կվերանա հայ ու թուրք զգացումներուն ու վերաբերումին մեջ եղած թշնամությունը, որովհետև կջնջվի հայ ու թուրք ձգտումներու մեջ եղած արդի ճակատագրական հակամարտությունը: Եվ այն ժամանակ իրենց արևելյան սահմաններուն վրա փոքր ու անկախ երկիրներու ստեղծումը, ինչպես ըլլալու են Հայաստանը, Վրաստանը և Ատրպեյջանը, ոչ միայն իրենց

որևէ վնաս տալ չի կրնար, այլ ընդհակառակը, կդառնա Թուրքիայի քաղաքական ձգտումը, իբրև իրենց սեփական պաշտպանութեան համար անհրաժեշտ պատնէշ մը ռուսներու ոտնձգութիւններուն դեմ: Թուրքական նո՛ր քաղաքականութիւն մը, որ համապատասխան է նաև անգլիական շահերուն և իր ետևը ունի թե՛ միջազգային պահանջը և թե՛ քաղաքակրթութեան համակրանքը:

Դեռ ավելին: Անկախ Հայաստան մը, ինչպես և մեր փոքր ղրացիներու անկախութիւնը, միակ պայմանն է, որ Թուրքիան ինքն ալ կարողանա վերջապես ազատ ու անկախ դառնալ իսկապես: Որովհետև երկու պետութեան մեջ ինկած, ծավալով, ուժով, տնտեսական միջոցներով և քաղաքակրթական կարողութիւններով ավելի փոքր պետութիւն մը իսկապե՛ս ազատ դառնալու համար, ոչ միայն արտաքուստ ու ձևականորեն, պետք է որ այդ երկու պետութիւններու ճնշումեն ու քմահաճույքեն ձերբազատվի: Իսկ ատոր համար անհրաժեշտ եղող ուժը, եթե պանթուրանիզմով ստեղծելը անկարելի է, կարելի՛ է ստեղծել ընդհանուր ձգտումով և միացած ջանքերով վիճակակից ղրացի ժողովուրդներուն հետ: Հայ, վրացի, թուրք ու ատրպէյջանցի, գուցե և պարսիկ, երբ միաձայն նուէն պահանջը կղնեն մեջտեղ, երբ հարավի ու հյուսիսի ճնշումին դեմ իրենց շահերն ու ձգտումները կնույնանան, ատիկա կդառնա ուժ մը և չատ լուրջ ուժ մը, որը չի կրնար հարգանք չազդել: Մոտավորապես այնպես, ինչպես որ հիմա Բալքաններուն մեջ նման շահերու գործակցութիւն մը ձև առնելու վրա է:

Այդ իսկապես անկախ փոքր պետութիւններու գործակցութիւնն ու շահակցութիւնը կունենա և այն առավելութիւնը, որ կդառնա լայն գոտի մը Միջերկրական Արևելքի հարավն ու հյուսիսը իրարմե զատող, ռուս-անգլիական ձգտումներու հակամարտութեանը քնական սահման մը քաշելով: Այսինքն՝ կդառնա համաշխարհային խաղաղութեան նոր ու կարևոր գրավական մը և միջնադարյան տիրապետական հակումներուն նոր ու կարևոր հարված մը, քաղաքակրթութեան զարգացման նոր քայլ մը:

Փոքր ազգերու այս գոտին գա պիտի ուշ կամ կանուխ, որովհետև ժամանակի պահանջն է, քաղաքակրթութեան զարգաց-

ման պահանջը, միջազգային խաղաղության պահանջը: Մանր ազգությունները կազմությունը և մանր ազգությունները չղթայով իրարմե զատելն ու չեզոքացնելը մարդկային զարգացման խիստ նկատելի ընթացքն է և արդեն այսօրվան իրականությունը: Պալթիկ ծովեն մինչև Սև ծով այդ տեսակ չղթա մըն է, որ կձգվի ռուս ու գերման յանկությունները Հակառակ և ռուս ու գերման Հակամարտ շահերուն մեջտեղը: Ալպյան լեռներեն մինչև Լա Մանշ փոքր ազգերու չղթա մըն է, որ վերջ ի վերջո պիտի ֆրանքո-գերման Հակամարտ շահերը Հարդարելու Ֆրանսայի ու Գերմանիայի կամքին Հակառակ: Արվեստական ազգ մը պիտի ստեղծվի, արվեստական պետություն մը, գերմանո-ֆրանս էլզաս Լորենեն[138], ինչպես որ արդեն արվեստական ազգեր ստեղծված են վալոն-ֆլաման Բելճիկայեն[139] և գերման-իտալո-ֆրանս Զվիցերիայեն, այդ արդեն վաղուց Հյուսվիլ սկսած չղթան փակելու համար:

Մեծ ու աղետավոր Հակամարտություններու առաջն առնելու Համար եթե կյանքը նույնիսկ արվեստական ազգեր ու պետություններ ստեղծելուն կՀամնի, պարզ է, որ Հին ու կենսունակ ազգերե կազմված գոտին և՛ ժամանակի պահանջն է, և՛ քաղաքականության անհրաժեշտությունը:

Այսպեսով՝ տարօրինակ ու ճակատագրական փոխհարաբերություն մը կա Թուրքի ու Հայու վիճակին ու ապագային միջև: Ինչքան ժամանակ որ, սև ամպի մը նման, Թուրքիան կախված ըլլա մեր Հոգիին վրա իր ազգասպան ծրագիրներովը, խանգարելով մեր Հանգիստը, դավելով մեր գոյության և դժվարացնելով մեր զարգացումն ու անկախացումը, այնքան ժամանակ ինքն ալ ենթակա է ըլլալու ռուսներու սպառնալիքին ու վախին, զուրկ Հանգիստե ու ապահովութենե, զուրկ իսկական անկախութենե, տնտեսապես Հետնյալ երկիր մը՝ նորեն մատնված եվրոպացիներուն ձեռքը, և քաղաքականապես խաղալիքը Անգլիային: Իր Հանգիստը, ապահովությունն ու զարգացումը կարծվածեն չատ ավելի մեծ չափերով կախված է կովկասյան փոքր ազգերու վիճակեն ու անկախութենեն, և մասնավորապես Հայաստանի անկախութենեն ու դիրքեն: Ինչքան չո՛ւտ Հասկնան Թուրքերը այս

պատմական կապը և ինչքան խո՛րը տեսնել կարողանան մեր ու մեր փոքր հարևաններու ունեցած մեծ կարևորությունը Թուրքիայի թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական ապառազրմանը համար, ա՛յնքան ավելի շուտ և ա՛յնքան ավելի շատ կշահին և՛ իրենք, և՛ մենք, և՛ մեր հարևանները, և՛ Մերձավոր Արևելքի ընդհանուր կյանքն ու քաղաքակրթությունը:

Ուրիշները մոռնալով, ամբողջ ժողովուրդներ սպաննելու գնով իր տիրապետությանը ճամբա բանալ ուզելը պատմության մեջ կկոչվի բարբարոսություն:

Ապրիլ և ապրեցնել, բարձրանալ ու բարձրացնել՝ ատոր մեջն է քաղաքակրթությունը:

Եվ ատո՛ր է, որ կձգտի Հայ ժողովուրդի մտավորականությունը:

Եվ ատոր մեջն է մեր ու Թուրքի մե՛ծ տարբերությունը:

Եվ ատով է, որ պատմության մեջ մեր վրեժը պիտի առնենք Թուրքեն:

Բ. ԱՆԳԼԻԱ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ

I. Կովկասի մեջ Անգլիայի բռնած դիրքը կախումն ունի Ռուսաստանի վիճակեն

Անգլիական դեպի հյուսիս ձգտումին ամենեն լայն չրջանակը մինչև Կովկասյան լեռներն են և միջինասիական անապատները: Այսինքն՝ Մերձավոր Արևելքի բոլոր երկիրներուն Անգլիայի քաղաքական ու տնտեսական դեկավարության տակ մտնելը: Այդպես ալ կըլլա, եթե ռուսները քաշվին Անդրկովկասեն և Միջին Ասիայի գոնե հարավային մասերեն:

Անգլիայի այս ձգտումը անկարելիության կդատապարտե Թուրքիայի տիրապետական ծրագիրները: Որովհետև, եթե պատահի, որ Հավանականության հակառակ, պոլշևիզմի բերած քայքայումը շատ ավելի արմատական ըլլա, քան մենք կենթադրենք, և ներքին պատակառումներն ու կռիվները ռուսներուն ոտքը կտրեն

Կովկասեն տևական կերպով, իսկույն Անգլիան կիջնէ ասպարեզ և թույլ տալ չի կրնար, որ թուրքերը շարժվին դեպի Բաթում, Բագու և ավելի հեռու: Իսկ թուրքերը, ինչքան կուզեն հոխորտան, առանց Անգլիայի հրամանին տեղեն շարժվիլ չեն համարձակիր, մանավանդ այն ժամանակ, երբ Ռուսաստանի այդ աստիճանի անկումով Անգլիայի դիրքն ու ազդեցությունը բարձրացած կըլլա հիմակվանեն անհամեմատ ավելի: Հենց որ ռուսները լրջորեն քաշվին Կովկասեն, Անգլիան ինքն է, որ պիտի երևա նորեն Բաթում, Թիֆլիս, Բագու, ինչպես և Կարս, Թավրիզ և Էնզելի[140]:

Բայց այս վիճակը ստեղծվելու համար անհրաժեշտ է դեմը բոլորովին ինկած և ուժասպառ Ռուսաստան մը, համենայն դեպս քանի մը կտորներու բաժնված և տնտեսապես կախյալ դիրքի հասած Ռուսաստան մը: Պոլշևիկյան առաջին ցնցումները արդեն մատուցին անգամ մը այդ թանկագին ծառայությունը, և անգլիացիք ըրին արդեն առաջին փորձ մը Կովկասի տիրացման, իհարկե, շատ զգուշ: Ջեին եկած առանձին, այլ Ֆրանսայի ու Իտալիայի հետ, եկած էին ամբողջ եռապետություն մը և իբրև հին Ռուսաստանի պաշտպան դաշնակիցները: Բայց ինչպես հայտնի է, բոլոր եռապետություններու մեջ երկու հոգին կըլլան միայն ձևը վրկելու համար և անձնասիրությունները չոչնչելու, իսկ իրական հրամայողը կըլլա միշտ Հուլիոս Կեսարը[141]: Անգլիան ո՛չ միայն իր հրամաններուն տակն առավ Կովկասը, այլև իր ուռկանը նետեց ամբողջ Պարսկաստանի վրա իր նշանավոր անգլո-պարսիկ դաշնակցությամբ:

Սակայն Դենիկինի[142] վրա դրված հույսերը չի տվին սպասված արդյունքը, ո՛չ ալ Հյուսիսային Կովկասի ապստամբությունները, ո՛չ ալ կովկասյան «անկախ» հանրապետություններու դաշնակցությունն ու դիմադրությունը: Դեռ ամեն ինչ շա՛տ էր նոր, շատ էր հանկարծ, շատ էր անկազմակերպ. բոլորը նո՛ր գաղափարներ, նո՛ր հնարավորություններ, նո՛ր ձևեր, նո՛ր հեռանկար: Եվ պոլշևիկները սկսան հառաջանալ դեպի Կովկասի հին ու պատմական միակ ղուռը՝ դեպի Դերբենտ՝ «կապիտալիստական Եվրոպայի ճիրաններուն տակ հեծող թշվառ ժողովուրդներուն կարմիր ազատություն բերելու»:

Եվ Անգլիան կամացուկ մը հեծավ իր նավերը ու քաշվեցավ ո՛չ միայն Բագվեն ու Բաթումեն և Կասպիական Պարսկաստանեն, այլև լքեց Հարավային Պարսկաստանը, դադրեցուց Իրաքի մեջ փորած նավթային հորերու բանեցնելը և մինչև անգամ սկսավ «սպառնալ», որ քաշվելու է նաև Միջագետքեն՝ ամեն տեղ ազատ ասպարեզ բանալով հառաջացող պոլշևիկներուն. և վերջապես դաշն կնքեց անոնց հետ՝ պոլշևիկներու ուժին ու դիրքին հետ համեմատած՝ չափազանց զիջող ու կամակատար պայմաններով:

Ինչո՞ւ այս արագ նահանջը: Պոլշևիկյան չռնդալից բացատրութեամբ՝ անգլիացիք վախցան կարմիր բանակներու երևումեն և կարմիր գաղափարներու հաղթական ընթացքեն իրենց ասիական տիրապետութեուններու սահմաններուն վրա: Անգլիական խոնարհամիտ բացատրութեամբ՝ իր ներքին բանվորական շարժումները արգելք էին կոմունիզմի հետ ընդհարումի, մյուս կողմեն պոլշևիկներու հետ բարեկամութեունը ցանկալի էր Ռուսաստանի մեջ տնտեսական ու առևտրական առավելութեուններ ապահովելու համար Անգլիային: Ջէ՞ որ պոլշևիկներու հետ նշանավոր առևտրական դաշնագիր մը կա մեջտեղը, որ չորս տարիե ի վեր հա՛ կնքվելու և հա՛ գործադրվելու ջրերուն վրա է մեծ ցուցադրութեամբ:

Եվ իհարկե այս բոլոր հայտարարված պատճառները չեն իսկական պատճառը անգլիական նահանջող բարյացակամութեան պոլշևիկներու հանդեպ: Եվ չե՛ն այն պարզ պատճառով, որ շատ բարձրաձայն են հայտարարված և շատ ցուցադիր կերպով: Եվ այնպես կթվի, որ բուն պատճառը շատ ավելի դժվար խոստովանելիք քնքշութեուն մըն է: Անգլիացիք պարզապես սիրահարված են Ռուսաստանի ներկա կառավարութեան վրա: Այն գաղտնի ու հաշիվը գիտցող սերերեն մեկը, ուղղված հարևանիդ կնկանը, որ մարդ բոլոր հնարավոր միջոցներով կջանա ծածկել և ցույց չի տալ ուրիշներուն: Հաճախ նույնիսկ հակակրանք, հակառակութեուն ու թշնամութեուն ձևացնելով. երբեմն ալ մատնելով իր քնքշութեունը հակառակ իր կամքին:

Ինչքան որ մեծ է Անգլիայի հակամարտութեունը Ռուսաստանին և Ռուսաստանի մեծութեան, այնքան ավելի խորունկ է իր

ներքին համակրանքը և բարյացակամությունը անոր արդի կառավարության հանդեպ: Անգլիան այն պետությունն է, որ բոլոր պետություններուն չատ ավելի մանրամասն և մտրիկին, օրը օրին կճանչնա պոլշևիզմը իր իսկական բույնին մեջ. և չատ լավ գիտե, որ չկա Ռուսաստանի բարձրացումը ո՛չ տնտեսական, ո՛չ կուլտուրական, ո՛չ բարոյական, ո՛չ քաղաքական, քանի պոլշևիկներու բռունցքին տակն է:

Երկինքեն ղրկված բացառիկ բարի ոգի մըն է պոլշևիզմը Անգլիայի համար, որպեսզի քանդե ու փճացնե իր ախոյանի այսքան տարիներու ընթացքին բարձրացուցած պետական շենքը, տնտեսական բարգավաճումը, կուլտուրական աշխատանքը և հասցուցած մտավորականությունը:

Անգլիացին ինչո՞ւ պիտի ցանկա պոլշևիկներու պարտությունը. ընդհակառակը, թող տևեն, ինչքան կարելի է երկար, թող ապրին ու քայքայեն, թող տարածվին ու փռվին և՛ Թուրքիա, և՛ Պարսկաստան, և՛ բոլոր շուրջը՝ ամեն տեղ աստելություն ու զզվանք ներշնչելով Ռուսաստանին հանդեպ, ծաղր ու հեգնանք ռուսական պրեստիժին ու մեծության դեմ: Թող կապե՛ն միտքը, աշխատանքը, մրցումն ու ստեղծագործումը. թող ապաննեն մարդոց հոգին ու բռնանա՛ն իրար գլխու: Թող վո՛ւլ գան ու ավերին երկաթուղիի գծերը, կամուրջները, նավարանները, գործարանները, շենքերն ու տները, և թող իրենք հպարտանան իրենց պաշտոնական թերթերուն մեջ, որ այսինչ նահանգի այսինչ գործարանը օրական չգիտեմ քանի տասնյակ հաղար ասեղ կպատրաստե, որ այս տարի հողը չգիտեմ քանի հարյուր դեսիատին ավելի է մշակված, որ 7-8 տարի ետքը, երբ բոլոր «հիվանդ» լոկոմոթիվները հիմնովին կարկտված ըլլան, Ռուսաստանը կունենա այնքան, որ իր պետքերուն բավարարություն կուտա: Իսկ իրենք թող խլե՛ն երկրագործի լծկան ձիերը և անոր աշխատանքին ամբողջ արդյունքը, թող հաչվե՛ն հավերը և տուրք դնեն ածվելիք ձվերուն և հարվելիք ու չհարվելիք կարագին վրա, թո՛ղ անեծք, հուսահատություն, սով ու մահ ցանեն Ռուսաստանի բոլոր գյուղերն ու անկյունները:

Ինչո՞ւ պիտի ձգտի Անգլիան պոլշևիզմի վերացման. ան ուր-

կե՞ կրնա գտնել ավելի սուր գործիք մը իր ախոյանը տաշելու ու մաշելու:

Եթե այս բոլոր ներքին ու արտաքին ցնցումներըչ տակնուվրայութիւնն ու ավերումը, իրա՛վ որ, Հասցնեն Ռուսաստանը բզկտված, հոգնած ու հիվանդկախ վիճակի մը, առավել կամ նվազ երկար ժամանակի մը համար, ատով ինքնին կհարթվի ճամբան նաև Անգլիայի պերիշխանութեյանը Մերձավոր Արևելքի բոլոր մասերուն վրա: Հո՛ս ապստամբութեյուն, հո՛ն միջամտութեյուն, և ահա՛ կստեղծվին մանր ու մեծ անկախութեյուններ, բնական ու արվեստական, թե՛ Թուրքիայի հողերուն վրա, թե՛ Պարսկաստանի, ինչպես և Կովկասի ու Միջին Ասիայի: Ինչքան շատ, այնքան լավ: Քանի մը կետեր, որոնք տնտեսական կամ ռազմական մասնավոր կարևորութեյուն ունին, կմտնեն Անգլիայի անմիջական վարչութեյան տակ, ինչպես, օրինակ, «Ահռեական Հանրապետութեյան» Բաթումը, ուր կվերջանան Բագվի նավթային խողովակները, ուր պիտի վերջանա Թավրիզ-Ջուլֆա-Կարս երկաթուղային գիծը, այսինքն՝ Հյուսիսային Պարսկաստանին դեպի բաց ծով վազող ամենեն շիտակ ու կարճ ճամբան, և ուր կրնան հանգիստ վայրել իր առևտրական ու ռազմական նավերը: Մնացած բոլոր մասերը կըլլան անկախ, զանազան աստիճաններով, անգլիական վերին «ղեկավարութեյան» տակ. միայն Հաղորդակցութեյան ճանապարհները կըլլան անոնց «Հսկողութեյան» ներքև, ինչպես նաև քիչ-շատ կարևոր տեղական արդյունագործութեյունը, իհարկե նաև չուկան: Ահա՛ այս տեսակ անկախ երկիրներեն մեկն ալ կրլյա Հայաստանը:

Իսկ եթե շատ ավելի պնդակազմ դուրս գա Ռուսաստանը, հաջողութեյամբ անցնե պոլշևիկյան հիվանդութեյունը, և կամաց-կամաց առանց մեծ, նոր ցնցումներու, պուրժուական հակադեկրետներով, ետև-ետև կոմունիզմով, կամ ընկեր Նապոլեոնի մը ռազմաշունչ խողովակով, վերադառնա մոտավորապես նախապոլշևիկյան վիճակին և վերսկսի աշխատանքն ու վերականգնումը, բնականաբար պիտի վերադառնա նախապոլշևիկյան վիճակին նաև Մերձավոր Արևելքի քաղաքականութեյունը:

Անգլիացիք առայժմ ո՛չ կարող են, ո՛չ ալ սրամադիր լուրջ

պատերազմներ վարելու, պետք է աշխատին քաղաքականութեամբ, համաձայնութիւններով, ազդեցութեան շրջանակներ գծելով Ռուսաստանի հետ: Մյուս կողմեն ալ միջազգային իրավունքներու անունով, արդին եղած որոշումներու, տրված խոստումներու անունով, ազգութիւններու ինքնորոշման սկզբունքով Անգլիան պիտի աշխատի կիսանկախ գոյութիւններ առաջացնելու Ռուսաստանի դեմ, Ռուսաստանի մեջ՝ անոր կովկասյան տիրապետութիւնը հնար եղածին չափ խախուտ պահելու համար, հնար եղածին չափ արգիլելու համար Ռուսաստանի ավելի ևս ցած սահիլը, հնար եղածին չափ իր ու Ռուսաստանի միջև շփումը նվազեցնելու համար և միշտ բաց դուռ մը պահելու ապագա հնարավորութիւններու առջևը: Հայաստան ալ այդ «հնար եղածին չափ»-ի խախուտ ցուցակին մեջն է:

II. Հայաստանի ներկայացուցած կարևորությունը Անգլիայի համար

Անգլիայի բռնած դիրքը մասնավորապես Հայաստանի վերաբերմամբ կբխի երկու հիմնական մտածումե:

Նախ՝ Հայաստանը կներկայացնե ցեղագրական պատ մը, որ արևելյան թաթարական-թուրանական տարրերը կբաժնե Փոքր Ասիայի օսմանցիներեն. և միակ հնարավոր, բնական պատը. և չափազանց հարմար, որովհետև անոր բարձրացնելը կարելի է հիմնել և՛ ժամանակի պահանջին վրա, և՛ արդարության զգացումներու, և՛ տրված խոստումներու, և՛ քաղաքակրթական տեսակետներու: Իսկ այդ բաժնող պատը շատ է կարևոր Անգլիայի հանգըստին և իր տիրապետության տևականության համար Միջերկրական Արևելքի հարավին վրա, ուր բոլոր ժողովուրդները մահմետական են, որով և ուժեղ մահմետական պետության մը հարևանությունը չա՛տ է անախորժ ու վտանգավոր:

Բայց Հայաստանը պատվար մըն է նաև ռուսներուն հանդեպ: Անգլիայի համար խիստ է մտահոգիչ, եթե ռուսները անարգել ու անպայման տիրանան Հայկական բարձրավանդակին և

առանց այլևայլութեան հասնին մինչև Հայկական Տավրոսին, որուն հարավային էջքերը Քյուրտիստանն է և հարթութիւնը՝ Միջագետքն ու Ասորիքը: Հայկական բարձրավանդակին բացարձակ տիրապետող Ռուսաստան մը մշտական սպառնալիք մըն է մինչև Պարսից ծոցը և ուժեղ ճնշում մը՝ մինչև Հնդկաստան: Անգլիայի պետական մարդիկ հաճախ են շեշտած Հայկական բարձրավանդակի կարևորութիւնը անգլիական տիրապետութեան համար Ասիայի մեջ:

Անգլիան չի ցանկար մեր հողամասերու թուրքին ձեռքը մնալը, մանավանդ ասկե ետքը, երբ օսմանցի էֆենտիները պանթուրանիզմի ձին հեծնել կ'ուզեն. բայց ան չի ցանկար նաև, որ այդ անառիկ բերդին մեջ ամրանան ռուսները: Եվ ասոր համար է, որ Անգլիան ձգտեր էր, ու ձգտի պիտի, մեր հայրենիքը անկախ երկիր մը դարձնելու և միշտ պաշտպան է կանգնած, գոնե սկզբունքով, մեր անկախութեան պահանջին ու ճիգերուն:

Նույնիսկ, եթե ամեն ինչ սև տեսնելով, ենթադրենք վայրկյան մը, որ թուրքերուն հաջողվի Կովկասի մեջ մնացած հայութիւնն ալ ցրվելու ու ոչնչացնելու, նորեն օր մը պետք է ծնվի այդ անկախ Հայաստանը հայերու ամեն կողմերե հավաքված մնացորդներովը: Ճիշդ այնպես տեսակ մը բունի ու կիսարվեստական կերպով, ինչպես հիմա առաջանալու վրա է Հրեաստան մը, և ինչպես վաղը ծնվի պիտի Քյուրտիստան մը, և ո՞վ գիտե, գուցե նաև Ատրպատական մը՝ Ուրմիայի շուրջը: Անկախ Հայաստանը անհրաժեշտ մեկ հետևութիւնն է Անգլիայի ասիական ընդհանուր քաղաքականութեյան, իր մահմետական տիրապետութեյան և անգլո-ռուս հակամարտութեյան:

Բայց Անգլիայի նման համաշխարհային դեր ունեցող պետութիւն մը, աշխարհիս բոլոր ծայրերուն վրա հազար տեսակ հաշիվներով ու շփումներով կապված մյուս պետութիւններուն, որոնք չորս աչքով կհսկեն իր ամեն մեկ քայլին, ինչպես և կախված իր ներքին մեծ ու փոքր հազար տեսակի տրամադրութիւններե, ընտրութիւններե, մրցումներե և կուսակցական հաշիվներե, չի՛ կրնար իր ուշադրութիւնը պահել մեկ կետի մը վրա ու մեկ հարցի շուրջը, չի՛ կրնար իր ուզածը անմիջապես իրագործել: Ան

չի՝ սիրեր շտապելը, կգերադասեր պատեհութիւններեն օգտվիլը, և հետզհետե՝ շատ բան թողնելով ժամանակին ու բնական հասունացումն. և մանավանդ չի մոռնար երբեք իր նշանաւոր սկզբունքը՝ «Հնար եղածին չափ քիչ ծախսով»:

Աւորը Համար է, որ երբ առնված քայլ մը ավելի գլխու ցավ կպատճառէ «առայժմ», քան օգուտ, և հետանկարին վրա ուժերու նոր լարում կպահանջվի, անիկա իսկույն կհարմարվի վայրկյանի նվազագույն չարիքին ու կամաց մը ետ կքաշվի, ինչպես, օրինակ, իր Կովկաս ու Պարսկաստան գալն ու քաշվիլը: Պատրվակ մը միշտ կարելի է ճարել և միշտ կարելի է պճնազարդել իր ետ ու առաջ շարժումները զանազան համամարդկային ու մարդասիրական գեղեցիկ գլխարկներով, ատ ալ եթե հարկ համարեց: Իսկ իր «ուղքի վրա» և «հյուրի մը նման» քաղաքականութիւնը, որ ամեն տեղ շատ քիչ մարդով կերևա, ավելի ևս դյուրին ու հնարավոր կդարձնեն իր այդ ծփուն շարժումները:

Աւորը Համար է, որ երբ ինքը առաջ չարժվիլ չի կրնար կամ չուգեր, իսկ թուրքի առաջ չարժվիլը քաջալերելը իր հաշվին չի գար, ստիպված է համակերպելու ոչ միայն ռուսի Կովկաս մնալուն, այլ նույնիսկ մեկ-երկու խոշոր քայլերով ավելի առաջ գալուն. իհարկե, չանալով կարելիին չափ թուլցնելու այդ հառաջխաղացման նշանակութիւնը, չեզոքացնելու այդ չարժման հետ կապված սպառնալիքը ցնոր տնօրինութիւն:

Աւորը Համար է, որ ան պիտի համակերպի նաև ռուսներու կողմեն Հայկական վիլայեթներու մեկ մասին գրավմանը, եթե հարկը ստիպեց. միևնույն ժամանակ պիտի չանա ռուսներու այդ քայլին տալու միջազգային կերպարանք, կարծես տեսակ մը պետութիւններու ընդհանուր համաձայնութեամբ կատարված գործ, կա՛մ իբրև հանձնարարութիւն մը Ազգերու լիգային կողմե, կա՛մ իբրև մասնավոր համաձայնութիւն մը իր ու ռուսին միջև՝ նայելով, թե ե՞րբ և ինչ պայմաններու տակ կկատարվի ռուսներու առաջ չարժվիլը և ինչ տեսակի կառավարութեան ձեռքով:

Սակայն ձգտումը նույնն է միշտ: Հայաստանի գրավումը զարձնել, գոնե ձևականորեն, միջազգային հսկողութեան ենթակա իրողութիւն մը, իբրև իրականացումը Հայաստանը Թուրքիայեն

անջատելու և ուրույնացնելու միջազգային խոստումին: Այդ միջազգայնացումը, ինչքան անվանական ըլլա, ունի միշտ իր արժեքը. բաց դուռ կթողնե ժամանակի ու պատեհութեան առաջ այդ անվանականը ավելի իրականի մոտեցնել տալու համար:

Ուրիշ խոսքով՝ Անգլիան այն միակ պետութիւնն է, որ իր սեփական հաշիվներեն ու չահերեն դրդված՝ ամենեն բնական ու պարզ պաշտպանն է հայու անկախութեան ձգտումին, ինչ ձևի տակ և ինչ չափով որ հնար ըլլա իրագործելը և կատարելագործելը:

Գ. ՌՈՒՍԱՍՏԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ

I. Ռուսներու «իրավունքը»

Ռուսը Կովկասեն դյուրութեամբ ձեռք վերցնել չի կրնար: Դարե մը ի վեր այդ երկիրներուն տիրողի ու տեր եղողի հոգեբանութիւնը, Անգլիայի հզորացման առաջն առնելու ցանկութիւնը, իր ներքին ու միջինասիական նահանգներուն մեջ թուրք խլրտումները կանխելու անհրաժեշտութիւնը, Թուրքիայի վրա անմիջական ճնշում բանեցնել կարողանալու պետքը, վերջապես Բագվի նավթը և տնտեսական ուրիշ առավելութիւններ չափազանց ուժեղ ազդակներ են, չափազանց ուժեղ մակնիսներ:

Այս բոլորի ավելի պաշտպանողական գույն ունեցող դրդիչներուն վրա պետք է ավելացնել նաև հարձակողական ազդակը, որ հարազատ մայրն է մյուս բոլոր դրդիչներուն: Այսինքն՝ ծավալելու, տարածվելու, Պոլսին տիրելու, ծովերուն հասնելու ռուսական հին ձգտումը, որ գոյութիւն պետք է ունենա միշտ, ինչքան ժամանակ որ գոյութիւն ունի ահագին ռուս ժողովուրդ մը ու ահագին ռուս պետութիւն: Եվ այս տեսակետեն տարբերութիւն չկա հին ու նոր ռուս կառավարութիւններուն մեջ. բոլորի ձգտումն ալ նույնն է՝ ցար, սոցիալիստ, «կատե»[143] թե պոլշևիկ:

Ինչպես ամբողջ թուրք-պոլշևիկ բարեկամութիւնը, այնպես

ալ մասնավորապես պոլշևիկներու ըրած հողային պիջումները Թուրքիային մինչև Արփա-չայ, իհարկե, զուրկ են լրջութենե: Օրվան մը համար ընդունված կարգադրություններ ենատոնք, մինչև որ իրերը ստանան իրենց բնական ընթացքը: Եվ այն անվութությունն ու պատրաստակամությունը, որով կկատարվին այդ պիջումները Թուրքերուն, ամենեն լավ նշանն է պոլշևիկ ռուսներու ոչ-լրջության և այն վստահության, որ անոնք ունին, թե այդ հողերը վաղը իրենցն են նորեն, հենց որ ուզենան: «Ա՛խ, էրզրումը ձե՛րն է, իհարկե, բայց առայժմ... պե՛տք է մեզի Թուրքերուն բարեկամությունը» կըսեին անոնք Հայաստանի հին կառավարության հետ իրենց ունեցած հարաբերություններու ժամանակ: Եվ այդ «ձե՛ր»-ը այն տեսակ մտերիմ շեշտ մը ուներ իր վրան, որ շատ դժվար էր զանազանել «մեր»-են:

Եվ եթե պոլշևիկները քիչ մը ավելի երկար դիմանան իրենց դահին վրա, որ ժամանակ ստանան իրերը հաստուննալու և Թուրքերը քիչիկ մը ավելի կապվին Անգլիային, մենք կրնանք ականատես ըլլալ զվարճալի տեսարանի մը: Հայերու և Հույներու իմպերիալիզմին դեմ Թուրքերը պաշտպանելեն ետքը պոլշևիկները հանկարծ կրնան դառնալ հայկական Հարցի Թունդ պաշտպանը Թուրքերուն դեմ:

Ինչ հրաշալի առիթ և՛ ցանկալի երկիրներ տիրելու, և՛ իրենց դիրքն ու վարկը բարձրացնելու Թե՛ համակիրներու աչքին, Թե՛ հակառակորդներու: Տեսե՛ք, եվրոպական «եսամոլ» ու «պուրժուա» պետությունները հրապարակով ճառախոսեցին, խոստացան, ստորագրեցին, ետքն ալ առանց ամչնալու խաբեցին, լքեցին ու վախցան. բայց ահա՛ Հիմա Խորհրդային Ռուսաստանն է, որ կառնե Հարցը իր ձեռքը և կպատե խորհրդային դարձած Հայությունն ու Հայաստանը նորեն պուրժուա դարձած Թուրքերուն վայրագությենեն:

Իսկ եթե պոլշևիկները ժամանակ չունենան մինչև Հոտ Հասնելու, միևնույն է, իրենցմե ետքը ինչ կառավարություն ալ որ գալու ըլլա, չի կրնար ճանչնալ Կարսի դաշնագիրը[144]: Նույնիսկ նախապատերազմյան Սարը-Քամըչի սահմանը, որ Թուրքերը հիմա պինդ-պինդ ջնջված կհայտարարեն, վաղը նույն Թուրքերը

մեծ սիրով պիտի ուզենան վերականգնել, բայց ապարդյուն: Ռուսները պահանջելու են շատ ավելին, պահանջելու են իրենց «իրավունքը». և պահանջելու են ոչ թե թղթերով ու ժողովներով, այլ թնդանոթներով, որը թուրքերուն խոսք հասկցնելու միակ ճամբան է եղած մինչև հիմա:

Եվ ի՞նչ են պահանջելու, մինչև ո՞ւր: Իտեալը միշտ բաց ծովերն են, իհարկե. բայց հոտ հասնելու կա երկու եղանակ: Կա՝ աստիճանական գրավումը, քայլ առ քայլ, հանգրվանե հանգրվան, ամեն կես դարը անգամ մը, առաջ շարժվելով ժամանակին հետ: Կա՝ անմիջական գրավումը, մե՛կ ոստյունով, հանդուգն թափով մը. օգտվելով Թուրքիայի խեղճ վիճակեն և Եվրոպայի գլուխը խառն դրուխենեն՝ լուծել Պոլսի ու բաց ծովերու կենսական խնդիրը: Ասոնցմե առաջին ճամբան կարելի է անցնիլ Եվրոպայի համաձայնությամբ, առնվազն չեզոքությամբ: Երկրորդ ճամբան կտանի շիտակ եվրոպական պատերազմի:

II: Աստիճանական շարժում

Առաջին ճամբու ընտրությունը կրլլա հետևանք պոլշևիզմի անփառունակ մահվան. երկրորդ ճամբուն ընտրությունը՝ արդյունք պոլշևիզմի մեծադղորդ անհայտացումին: Տրոցկիի[145] նշանավոր խոսքն է. «Մենք գուցե ստիպվինք հեռանալու. բայց երբ հեռանանք, այնպես պիտի գոցենք դուռները մեր ետևեն, որ ամբողջ աշխարհը դղրդա»:

Անփառունակ մահ կնշանակե պոլշևիզմի տապալումը ներքին ու արտաքին նոր ցնցումով մը և կամ պոլշևիզմի անճնասպանությունը հետզհետե սահելով, կամաց-կամաց մոտենալով դեպի հին Դուման[146] ու հին կուսակցությունները. դիցո՛ւք և նոր անուններու տակ:

Նոր կազմված կառավարությունը, ինչ ձևով ալ որ աշխարհք գա, իսկույն պիտի աշխատի ջնջելու պոլշևիզմի վերջին հետքերը, պիտի ջանա ինքզինքը մարդկության ազատարարը ներկայացնելու պոլշևիկյան սարսափներեն, պիտի ջանա քաղա-

քական ու տնտեսական սերտ կապակցութեան Եվրոպայի հետ, պիտի ներկայանա իբրև հին Ռուսաստանի չարունակութիւնը և իբրև հին դաշնակիցը Ալպիեներուն[147], պիտի պահանջե իր արդար բաժինը ընդհանուր ավարեն և մասնավորապես իրեն հասանելիք կտորը Թուրքիայի վերջին մասնատումեն. չէ՞ որ թուրքերուն դեմ ինքն էր գլխավոր կռվողը, չէ՞ որ տիրեր էր մինչև Եփրատ, մինչև Երզնկա ու Տրապիզոն. «ռուս արյունով» է գծված այդ սահմանը:

Իսկ այդ ռուս արյունով գծված սահմանը ճիշդ այն սահմանն է, որ քանի-քանի անգամներ գծեր են հասարակ թանաքով մեծ պետութիւնները պատերազմեն առաջ հայկական բարեկորոգումներուն համար, որ գծեր է Ուիլսընի մատիտը պատերազմեն ետքը անկախ Հայաստանի համար, որ և կկազմե միևնույն ժամանակ թուրք տարրի արևելյան բնական սահմանը: Ինչ իրավունք ունի այլևս թուրքը այդ հողերուն վրա, և ո՞վ իրավունք ունի զրկելու Ռուսաստանը իր իրավունքեն:

Եվ իրա՛վ, սիրված նորափեսայի դերին մեջ եղող նոր Ռուսաստանի մը այդ «արդար» պահանջը ո՞վ է մերժելու: Անգլիայի բոլոր հակառակորդները ծափահարեն պիտի բոլոր ուժով, և Ֆրանսան ամենուն գլուխը՝ չնայելով իր նշանավոր թրքասիրութեյան: Բոլոր չեզոքները ստիպված են խոստովանելու, որ ռուսի ըսածը սխալ չէ, և ո՞վ կրնա արգիլել, և իրե՞նց ինչ: Իսկ Անգլիան վաղուց հաշված ու նախատեսած է այդ բոլորը և պիտի աչխատի ինչքան կարելի է սուղ ծախելու, «պայմաններով» ու սահմանափակումներով ծախելու, միևնույն ժամանակ թուրքերու պաշտպանը դառնալու նորեն և իր մահմետական տիրապետութիւններուն մեջ վառվող դժգոհութիւններուն վրա ջուր լեցնելու:

Ոչ միայն որևէ լուրջ ընդդիմութիւն չպիտի ըլլա ռուսական այդ «բնական» պահանջին դեմ, որուն անշուշտ ընկերանալու է նաև բանակներու չարժումը, այլ նույնիսկ անոր կողմը պիտի ըլլան քաղաքակիրթ մարդկութեյան համակրանքը և պետութիւններու երախտագետ համաձայնութիւնը: Ավելի քիչ հավանական է, գրեթե անխուսափելի, պաշտոնական կամ կիսապաշտոն առաջարկ մը ռուսներուն, ըլլա Դաշնակիցներուն կողմե, ըլլա Ազգերու լիգայի, որ Ռուսաստանը իր վրա վերցնե Հայաստանի մանդան:

Ասիկա կդառնա ամենեն պարզ ճամբան ազատվելու համար այն հիմար ու ոչ-պատվաբեր դրուխճենեն, որուն մեջ խրված են մեծ պետութիւնները այդ կոչմարային հայկական հարցի պատճառով: Մանավանդ որ հետզհետե ամենքը սկսած են գալ միևնույն եզրակացութեան, թե այդ անախորժ հարցը չի կրնար լուծվիլ առանց Ռուսաստանի միջամտութեան: Թուրքական Հայաստանին մեջ հայ չկա, և ոչ մեկ հայ ոտքը չի դներ հոն, ինչքան ատեն որ թուրքի իշխանութեան ստվերը երերա այդ կողմերը. իսկ Ռուսաստանեն զատ ոչ մեկ պետութիւն չկա, որ զորք ղրկել հանձն առնե այդ ավերակ երկիրները և իր ողջ գլուխը կոխե թուրքի ու ռուսի սուրերուն մեջտեղը: Եվ վերջապես, իր հողին վրա ապրող ամբողջ հայութիւնը հիմա ռուսի ձեռքին տակն է. ինչ որ կազմվի, այդ հայութիւնմը պիտի կազմվի գլխավորապես, ուրեմն և ինչ որ կազմվի, ռուսներու համաձայնութիւնմբը, ռուսներու միջոցովը և ռուսներու զինվորական գրավումովը պիտի կազմվի:

Այդ զինվորական գրավումը պիտի կատարվի Եվրոպայի հանձնարարութիւնմ՞բ, հայու անունով ու մասնակցութիւնմ՞բ, թե՝ առանց այդ կարգի «ձևականութիւններու», ուղղակի իբրև ռուսական արշավանք, անշուշտ մեծ կարևորութիւն ունի այդ հողամասերու հետագա քաղաքական վիճակին վրա: Բայց ինչ ձևով ալ որ գրավումը կատարվի, Թուրքիայի այդ հայկական հողերուն Ռուսաստանին կցումը չի կրնար նկատվիլ իբրև պարզ ու սովորական տիրապետութիւն մը: Որովհետև այդ հողամասերուն բազդը կես դար է արդեն, որ միջազգային սեղանի վրա է դրված. որովհետև սկզբունքով ու դաշնագրերով ընդունված է հայ ժողովուրդի «անկախութիւնը» թե՝ եվրոպական պետութիւններուն կողմե, թե՝ ռուսի ու թուրքի. որովհետև Թուրքիան ինքը պիտի բարձրացնե այդ երկիրներու անկախացման հարցը, իբրև միջին ճանապարհ մը. որովհետև գոյութիւն ունի վերջապես «անկախ» Հայաստան մը, ինչքան ալ խեղճ ըլլա, իբրև շարունակութիւնը եվրոպական պետութիւններու կողմե ընդունված ու վավերացված մեր հին կառավարութեան: Պոլշևիկներուն հաջորդող ռուս կառավարութեան համար չափազանց դժվար է, առանց

այլևայլուԹյան, այս բոլորը չեղյալ նկատելը. մանավանդ որ Անգլիան ու Գերմանիան ալ պիտի ջանան, իհարկե, անկարելի դարձնելու համար այդ «պարզ ու մաքուր» գրավումը:

Այնպես որ՝ կովկասյան Հայաստանը Թուրքիային նոր փրցվելիք կտորին հետ միասին ներկայացնելու է, դռնե սկզբունքով, իրավականորեն, տեսակ մը առանձին, իր տեսակի ուրույն ամբողջուԹյուն մը, իբրև հայկական ինքնավարուԹյուն, գուցե և Ազգերու լիգային վերին հսկողուԹյան ու պաշտպանուԹյան տակ, լիովին կապված Ռուսաստանին և հանձնված անոր անմիջական հոգացողուԹյանն ու ղեկավարուԹյանը: Իսկ ասիկա գործնականին մեջ կրնա ստանալ շատ ձևեր ու աստիճաններ. զերոյի ցրտուԹյանը հասնող անվանական ու պաղ «տեղական ինքնավարուԹենե» մը սկսած մինչև քիչիկ մը ավելի ջերմ ու ավելի վերին աստիճանները գործելու ու ինքնավարելու ազատուԹյան գռնե ներքին, տնտեսական-կուլտուրական գործերու մեջ. կրնա հասնիլ նաև ավելի բարձր աստիճանները, բայց կրնա իջնել և զերոյեն ցած, մինչև ճնշում ու հալածանք, մինչև Գալիցին[148]*, եԹե ոչ ավելի վատ:*

Սկիզբները հավանորեն սկսելու ենք շատ սառնորեն, կրնա պատահիլ նաև զանազան անկանոն ելևէջներ մեր անկախուԹյան ջերմաչափին վրա՝ նայելով ռուսներու պետական զարգացման ընԹացքին, կազմվելիք կառավարուԹյուններու ոգիին և ուղղուԹյանը, ինչպես և արտաքին քաղաքական դիպքերուն, ներքին «ազգային» պահանջներուն ու խլրտումներուն և վերջապես մեր կամքին ու վճռականուԹյանը: Բայց տարակույս չկա, որ ընդհանուր առումով, հետզհետե չեչտվելու ու զորանալու է մեր քաղաքակրԹական ու պետական անկախուԹյունը տարիներու հետ միասին ԹԹ՛ մեր աչխատանքով ու լարված ձգտումով, ԹԹ՛ Ռուսաստանի մեջ հետզհետե արմատ բռնելիք դաշնակցային կազմին հետևանքով, ԹԹ՛ անգլիական քաղաքականուԹյան բերած ազդեցուԹյամբ և ԹԹ՛ ընդհանրապես ժամանակի ոգիին ու քաղաքակրԹուԹյան ընդհանուր պահանջին ենԹարկվելով:

Իսկ անմիջական շարժում դեպի ծովերն ու դեպի Պոլիս կնշանակե շռնդալից մահը պոլշևիզմի՝ դիկտատորի մը ծնունդովը հենց իրենց ծոցեն, կնշանակե ռազմաշունչ ոգևորություն և խիզախ հարձակում դրացիներուն վրա, կնշանակե փայլուն ու վճռական հաղթանակներ թե՛ եվրոպական, թե՛ ասիական ճակատներուն վրա, կնշանակե գրավումը ամբողջ Փոքր Ասիայի գոնե հյուսիսային մասին:

Այս պայմաններուն տակ Հայաստանը կդառնա տեսակ մը թիկունք, ցամաքային հաղորդակցության գլխավոր ճամբան և ներքին նահանգ: Որևէ հայկական ուրույնության մասին խոսելը կդառնա ծիծաղելի. չատ-չատ վեմստվոյություն[19] մը, ան ալ չսիրված, իբրև խորթ զավակ:

Այս աստիճանի մեծ ռուսական հաղթանակ մը բոլորովին ալ անկարելի բան չէ: Իրավ է, որ Ռուսաստանը տնտեսապես շատ է քայքայված, հոգեպես շատ հոգնած ու ցնցված ամբողջ տասնյակի մը պատերազմներեն ու հեղափոխություններեն, բայց հենց այդ ցնցումն ու քայքայումը, այդ ճնշված ու ինկած դրությունը կրնա ծնիլ արշավանքներու սերը: Որովհետև ատիկա է մնացած միակ միջոցը, որ կրնա արագ բարձրացնել ժողովուրդի ինկած տրամադրությունը. իսկ ժողովուրդները պահանջ ունին այսքան նվաստացումներե ու զրկանքներե ետքը հոգեպես բարձրանալու:

Կրնա՛ պատահիլ: Բայց պարզ է, որ այդ հաղթանակներուն ստեղծած դրությունը տևական ըլլալ չի կրնար: Այդ տեսակ տնտեսական ու հոգեկան մաշված ուժերով բռնկիլն ու տիրելը անկարելի չէ, նույնիսկ նպաստավոր պայման է, բայց տիրածը պահելն ու տևելը, ահա՛, ինչ որ դժվար է ու անկարելի: Կքամվին ժողովուրդին վերջին ստեղծագործական ու եռանդուն կարողությունները, ժողովուրդը երկար ժամանակվան համար կդառնա ուժասպառ:

Մինչ հակառակորդները քանի կերթան կչատնան, կուժեղնան, կկազմակերպվին, որովհետև այդ խիզախ Ռուսաստանը չափազանց կերպով կխանգարե ազգերու հավասարակշռությու-

նը: Խոսելով միայն Մերձավոր Արևելքի մասին՝ Պոլսին ու Փոքր Ասիային տիրացած Ռուսաստան մը միայն Անգլիային ոտքը չէ, որ կկոխե, այլև բալքանյան երկիրներու, այլև Գերմանիայի, այլև Միացյալ Նահանգներու և ուրիշներու: Որով Թուրքիայի պաշտպանները նորեն սաստիկ կչատնան. և անխուսափելի կերպով կկազմվի նոր կոալիսիոն մը, իհարկե, Անգլիայի նախագահությամբ, մինչև որ փոխադարձ հարվածներու և հաջողություններու ու անհաջողություններու հավասարակշռումով ջրերը ստանան իրենց սովորական ընթացքը, և վերադառնանք մոտավորապես իրերու հին վիճակին:

Պոլիսը միջազգային, փոքր Թուրքիա մը՝ զուտ թուրք հողերուն վրա. և այս անգամ արդեն անպայման անկախ Հայաստան մը, և անկախը առանց չակերտելու: Ռուսական ու թուրքական մասերեն կազմված Հայաստան մը, միջազգային քոնթրոլի տակ, իբրև բաժնող պատվար մը կովող կողմերուն միջև, գուցե չեզոք ազգի մը կարճատև մանդայով:

Դ. ՄԵՐ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

I. Հավանականություններու սանդուղը և Ռուսաստանի դերը

Մինչև հիմա ըսվածները եթե սխեմայի վերածելու ըլլանք՝ մեր հառաջիկա անմիջական ապագայի մասին կարելի է գծել հետևյալ աստիճանացույցը առավել կամ նվազ հավանական կարելիություններու, վատթարագույնեն սկսած դեպի ավելի նպաստավորները:

Ա. Վատթարագույնն է, երբ ռուսներու քաշվելուն կամ պարտության հետևանքով թուրքերը տևականորեն գրավեն Կովկասը, ջարդեն ու ցրվեն մնացած հայությունը և մեզի բոլորովին կտրեն մեր հայրենիքեն: Հայը կդառնա առժամանակ մը անհայրենիք հրեա ժողովուրդ: Ատո՛վ ալ, իհարկե, չի վերջանար հայուն գոյության ու անկախության կռիվը, բայց կմտնե բոլորովին ուրիշ հունի մեջ և մեր ենթադրություններու սահմանեն դուրս: Եվ եթե

երկար մնանք այդ վիճակին մեջ, Հայութեան մահը անխուսափելի է, իբրև ազգութիւն:

Բ. Ռուսաստանը, ըլլա պոլշևիկյան թե նոր, կվերացնե մեջտեղեն այն համեստ ներքին կուլտուրական-վարչական «անկախութիւնը», որ դեռ մնացեր է Խորհրդային Հայաստանի մեջ, և Հայութիւնը կդարձնե պարզ ու հասարակ հպատակը Ռուսաստանի, իսկ Հայաստանը ռուսական պարզ նահանգ մը, կուզե ըլլա արդի պոլշևիկյան սահմաններով, կուզե ըլլա ավելի ծավալուն, Թուրքիայեն գրավված նոր գավառներով, ռուսի անունով ու ռուսի հաշվին: Այսինքն՝ կստեղծվի պատերազմեն առաջ Կովկասի Հայութեան ունեցած քաղաքական վիճակը: Ուրեմն՝ ռուսական պարզ տիրապետութիւն:

Գ. Ռուսաստանը, ըլլան Եվրոպայի հետ հասկացողութեան եկած պոլշևիկները թե մանավանդ պոլշևիկներու սահումով կամ տապալումով առաջացած նոր կառավարութիւն մը, միևնույն է, արդի սահմաններուն մեջ թե Հայ Հողամասերու նոր կցումներեն ետքը: Բայց գործնականին մեջ կկրճատե նույնիսկ արդի Խորհրդային Հայաստանի մեջ գոյութիւն ունեցող ինքնուրույնութիւնը՝ ջնջելով տեղական հայկական կառավարութիւնը և փոխարենը կեդրոնեն ուղարկելով ընդհանուր կառավարիչ մը, դիցուք և բավական քաղաքավարի հնչող անվան մը տակ, և Հայ ինքնուրույնութիւնը կհավասարցնե զեմստվոներուն՝ ան ալ համեմված ներքին ազգագրական էնդրիկներով և ամեն գործի մեջ խառնելով կառավարչի մատն ու աչքը: Հավանորեն նույն պայմաններու տակ պիտի գտնվին նաև մեր բաղդակից հարևանները՝ Վրաստանն ու Ատրպեյջանը: Այսինքն՝ լոկ անվանական ազգային ինքնուրույնութիւն մը:

Դ. Ռուսաստանը, պոլշևիկյան թե ուրիշ, կընդունի Հայաստանի ինքնավարութիւնը, ըլլա Սևանի լճին շուրջը կծկված, ըլլա ավելի լայն հայկական շրջանակի մը վրա, կա՛մ ռուսական ներքին քաղաքական պատճառներով, կա՛մ Եվրոպայի կողմեն ստացված հանձնառութեան մը իբրև իրագործում: Ինքնավարութիւն մը միայն ներքին կուլտուրական-վարչական գործերու մեջ և կեդրոնի առավել կամ նվազ անմիջական հրահանգին ու հսկողութեան

տակ: Ճանապարհները, ֆինանսական ու արդյունաբերական լայն ձեռնարկությունները, ժանդարմային ու զինվորական գործը, ինչպես և արտաքին քաղաքականությունը պահելով ամբողջովին կեդրոնական կառավարության ձեռքը: Այսինքն՝ մոտավորապես այն քաղաքական վիճակն ու հարաբերությունը կեդրոնի հետ, ինչ որ կներկայացնե այս վայրկյանիս Խորհրդային Հայաստանը:

Եթե հաշվի չառնենք պոլշևիկյան դիկտատուրայեն ծագող մտքի, խոսքի և հոգեկան ազատության ճնշումը, ինչպես և կոմունիստական փորձերու արդյունքը եղող տնտեսական սահմանափակումները, բռնագրավումները և հարկադրանքը, որոնք բոլորովին խեղդիչ ու անտանելի կդարձնեն պոլշևիկյան մթնոլորտը, պարտական ենք խոստովանելու, որ իբրև քաղաքական վարչաձև, անոնք տված են Հայաստանին ու մեր հարևաններուն այն մաքսիմում անկախությունը, ինչ որ Ռուսաստանը կրնա համաձայնիլ տալու իր բաղադրիչ մասերուն, առանց արտաքին ճնշումի. գոնե առայժմ: Այսինքն՝ կուլտուրական ու վարչական սեղմ ինքնավարություն, կեդրոնի վերին հսկողության ու ղեկավարության տակ:

Ե. Ռուսաստանի պահանջին, պատերազմական սպառնալիքին կամ արդեն կատարված հողային դրավումներուն հետևանքով Թուրքիան կդիմե միջնորդ դատարանի, կամ Ազգերու լիգան կմիջնորդե իր կողմեն, կամ հարցը կուգա միջազգային խորհրդաժողովի մը առջև, և Ռուսաստանը հարկադրված կըլլա ճանչնալու Հայաստանի ներքին անկախությունը, իբրև Ռուսաստանի անբաժանելի դաշնակիցներեն մեկը: Հայաստանը կունենա իր սեփական կառավարությունը, զորքը, տնտեսությունը, բայց ենթարկված Ռուսաստանի վավերացման ու հսկողությանը, սերտ կապված անոր տնտեսությանը և ամբողջովին ենթակա անոր արտաքին քաղաքականությանը: Ուրիշ խոսքով Հայաստանի ներքին անկախությունը Ռուսաստանի գերիշխանության տակ:

Զ. Ռուսաստանի տկարության, պարտության կամ ներքին բաժանումներու հետևանքով՝ ռուսները կստիպվին քաշվելու Կովկասեն, և նորեն այդ հողամասերուն վրա իբրև վերին հսկող կներկայանա Անգլիան, այս կամ այն ձևի տակ: Նորեն կյանքի կուգան Հայաստանի, Վրաստանի, Ատրպէյճանի ու Ահմադիայի Հանրապե-

տուժյուններըը՝ ենթարկված անգլիական հրահանգներուն, վերին տնտեսության ու արտաքին քաղաքականության: Մոտավորապես նույն քաղաքական դրությունն ու հարաբերությունը, ինչ որ էր նախորդը. միայն անգլիական ներքին քաղաքականության, քաղաքակրթության և ոգիին բերած տարբերություններուն պատճառով՝ քանի մը նոր առավելություններով ու քանի մը նոր անհարմարություններով: Որով կունենանք Հայաստանի ներքին անկախությունը անգլիական գերիշխանության տակ:

Է. Նոր եվրոպական պատերազմ մը նաքը, ուր Ռուսաստանն ու Անգլիան իրար դեմ են, Ռուսաստանը կհարկադրվի հաշտություն խնդրելու, որու պայմաններուն մեջ Հայաստանը կճանչցվի անկախ ու զատ պետություն մը, չեզոք ու անձեռնմխելի, իբրև կովող կողմերը իրարմե անջատող հողամաս. գուցե չեզոք ազգի մը կարճատև մանդայով:

Արդ՝ եթե քիչիկ մը ուշադրությամբ նայելու ըլլանք այս կարելիություններու ցանկին, իսկույն պարզ կդառնա, որ մեր անմիջական մոտավոր ապագային վրա կտրական նշանակություն ունեցողը ամենեն առաջ Ռուսաստանի բաղդն է: Եթե Ռուսաստանը պառակտեցավ, տկարացավ կամ պարզապես ստիպվեցավ թողնել Կովկասը, մեր առջևը կբացվի երկու ծայրահեղ ուղի, կա՛մ ոչնչացումը մեր ձգտումներուն ու մեր Հայրենիքի՝ Թուրքիայի հառաջխաղացումովը, կա՛մ անգլիական գերիշխանության տակ մեր անկախության անմիջական իրականացումը: Ռուսական նահանջը Մերձավոր Արևելքեն կբերե մեզի մեր վիճակին արագ լուծումը. «կամ դե՛նը, կամ դե՛սը» ինչպես կըսե ժողովուրդը: Մինչդեռ ռուսական հաջողությունը, հառաջխաղացումը կամ պարզապես իր դիրքերուն վրա մնալու չափ կարողություն ունենալը կպահե մեզի ու մեր Հայրենիքը ռուս իշխանության տակ և մեր ինքնուրույնության ու անկախության ձգտումը կստանա ծանր, երկարատև ու աստիճանական զարգացման բնույթ:

Ուրիշ խոսքով՝ մեր անկախության և գոյության մահն է Թուրք իշխանության տարածումը Կովկասի վրա. մեր անկախության պայքարը և դժվարին սկզբնավորումն է ռուս իշխանության

մնալը Կովկասի վրա. մեր անկախության անմիջական հիմնարկումն է անգլիական գերիշխանությունը մեր կողմերուն վրա:

II. Անգլիա՞, թե՞ Ռուսաստան

Եվ այս է պատճառը, որ հայ լեզվի և գրչի տակ հաճախ կուգա վարանոտ հարցը՝ ռուսասե՞ր, թե՞ անգլոսեր: Որո՞ւն վրա պիտի հենվի հայությունը իր անկախությանը հասնելու համար, ռուսներո՞ւն, թե՞ անգլիացիներուն, և ո՞րն է ավելի ձեռնտու, ռո՞ւսը ըլլա Կովկաս, թե՞ անգլիացին:

Բավականին անիմաստ ու ակատեմիկ հարց մը: Որովհետև, ամենեն առաջ, բնավ մեր ընտրությենեն կախված բան չէ Կովկասը անգլիացիին կամ ռուսին ձեռքը դնելը. և ճիշդ այդ պատճառով ալ մեր կամքեն կախված բան չէ ռուսին կամ անգլիացիին վրա հենվիլը, քանի որ ուզենք-չուզենք պետք է հենվինք անոր վրա, ով որ իր դիտական ու տնտեսական մեքանիզմով եկեր է, նստեր է ու տեր է դարձեր մեր չրջապատին:

Երբ 1918-ին ռուսները քաշվեցան Կովկասեն ու եկան անգլիացիք, շատ բնական կերպով մեր նորածին հանրապետական կառավարությունը հենվեցավ, և պետք է հենվեր, Անգլիայի վրա, անոր պահանջն ու հաչիվները աչքի առաջ ունենար, իր ուզածը հարմարցներ անգլիական ձգտումներուն ու հրահանգներուն, և անգլիացիներու ձեռքեն ալ ստացավ Կարսն ու Նախիջևանը, ինչպես և այլ կարգի կարևոր նպաստներ: Ճիշդ մեզի պես և մեր բազդակից Վրաստանն ու Ատրպեյջանը:

Բայց ահա պոլշևիկ ռուսները Ռոստովի վրայով սկսան մոտենալ դեպի Բագու, անգլիացիք թողեցին ու հեռացան, ինչ պիտի ընեին կովկասյան փոքրիկ հանրապետությունները. մեկը մյուսի ետևեն իրենց պատվիրակությունները փութացուցին Մոսկվա՝ պոլշևիկներուն հետ հարաբերության մտնելու, անոնց հետ հարմարվելու, անոնց ձգտումները հասկնալու, և եթե հնար է, հենվելու անոնց վրա, ինչքան ալ որ այդ հանրապետություններեն և ոչ մեկը ո՛չ վստահություն ուներ պոլշևիկներու խոսքին, ո՛չ հավատք՝

անոնց տևականութեանն ու հաջողութեանը և ո՛չ ալ համակրանք՝ անոնց հուժ ու ավերիչ կոմունիզմին: Դուրս եկավ, որ պոլշևիկներու նպատակն էր պոլշևիկը, այսինքն՝ խումբ մը մարդոց բռնապետութիւնը, և ոչ թե ռուս ու մանր ժողովուրդներու հանգիստն ու բաղդավորութիւնը, ինչպես կհավատային այնքան-այնքան միամիտ լավատեսներ, երբ պոլշևիկները դեռ հեռուն էին:

Եվ անոնց պահանջը շատ էր հստակ, ճանչնա՛լ այդ նոր թխված պոլշևիկ տերերու լուծը, մնացածը քսված ներկ էր ու պարապ խոսքեր: Անոնք ալ հիշդ նույն «իմպերիալիստ» ու «պուրժուա» տիրապետողներն էին, ինչպես բոլոր մյուսները. միայն ավելի աղքատ ու անսանձ, ուրիշ ոչինչ: Եվ «կարմիր» բանակներուն Կովկասի մեջ առաջանալուն գուգընթաց՝ բոլոր փոքր հանրապետութիւնները դարձան խորհրդային, իսկ նախորդ կառավարութիւնները դարձան փախստական: Ճիշդ այնպես, ինչպես որ արդի խորհրդային կառավարութիւնները պետք է դառնան փախստական, հենց որ Ռուսաստանի մեջ պոլշևիզմի անկումով այդ մանր պետութիւններն ալ հարկադրվին հենվելու հակապոլշևիկ նոր Ռուսաստանին և իրենց կառավարութիւններն ալ ձևեն ըստ Ռուսաստանի նոր հագնելիք վերարկուին: Այդպես կպահանջե քաղաքական մոտան, որ քաղաքավարի խոսքով կկոչվի «հենվիլ» մեկուն վրա:

Ուժեղներու գալն ու երթալը, ուժեղներու մեկնած կամ քաշած ձեռքն է, որ կորոշե ավելի թուլլերու հենվիլն ու չհենվիլը: Ինչ օգուտ ավելորդ ու անգործական վեճերե, երբ չըլլա մոտդ այն թևը, որուն, ենթադրենք, հենվիլ կգերադասես: Օրվան քաղաքականութիւնը կառաջնորդվի օրվան իրականութենեն՝ հարմարվելով ու հենվելով անոր վրա, որուն վրա որ կարող ես, որը կեցած է քու մոտդ: Իսկ ընդհանուր գծերով, իբրև ընդհանուր ուղղութիւն, բնական է, պետք է հենվիս բոլոր ուժերուն վրա ու բոլոր պետութիւններուն, որոնք քու բաղդիդ ու ձգտումներուդ հառաջացմանը կրնան նպաստել: Մասնավորապես, մեզի նման, երկու հակադիր մեծ պետութիւններու ընդհարման գծին վրա ինկած փոքրիկ ժողովուրդ մը ո՛չ կարելիութիւն, ո՛չ հաշիվ, ո՛չ ալ իրավունք ունի բացառապես մեկուն վրա հենվելու: Ընդհակա-

ռակը, պարտական է հենվելու և օգտվելու երկուքեն ալ և երկուքի փոխադարձ հակամարտութիւնեն ալ՝ նայելով պարագաներուն:

Քաղաքականութիւնը չի ճանչնար բացառիկ սերեր ու ամբողջական անձնատուութիւններ. քաղաքականութիւնը հիմնված է ամենուն հետ փլիրտ ընելու և ամենուն հետ ալ գլուխ պահելու չափազանց հասարակ ու գռեհիկ փիլիսոփայութեան վրա. ինչ որ այնքա՜ն մեծ ու փոքր աղգերու օրենքն է, իհարկե, մենք չենք, որ պիտի փոխենք: Եվ եթե անպատճառ անհրաժեշտ է նշանաբան մը ունենալը, ատիկա մեզի համար անշուշտ ո՛չ ռուսասեր ըլլալն է, ո՛չ ալ անգլոսեր, այլ պարզապես Հայասեր: Ռուսն ու անգլիացին մեզի համար միջոցներ են միայն, ճամբաներ մեր ձգտումին հասնելու, ինչպես որ մենք ալ ու մեր ձգտումը գործիք մըն ենք ու զենք մը թե՛ ռուսին ձեռքը, թե՛ անգլիացիին իրենց սեփական քաղաքականութեան համար: Քաղաքականութեան մեջ ասոր կըսեն բարի դրացնութիւն ու բարեկամութիւն:

III. Հավանական ու երկար ճամբան

Այս վայրկյանիս Կովկասը ռուսներուն ձեռքն է, ինչպես և Հայաստանի ամբողջ մեծամասնութիւնը: Շատ քիչ է հավանական, որ անոնք բաց թողնեն Կովկասը իրենց ձեռքեն, մանավանդ երկարատև ու վերջնապես: Այս մեծ պատերազմի մեծ արհավիրքներեն ետքը մեծ հավանականութիւն չկա նորեն խոշոր եվրոպական պատերազմի մը. ամենքն ալ ծարավը ունին հանգստի, ամենքն ալ մինչև վերջին հնարավորութիւնը խուսափելու են մեծ ընդհարումներե. թեև փոքր ու մասնակի կռիվներ պակաս չեն ըլլալու ըստ երևույթին:

Մասնավորապես Անգլիան մեծ կարիք ունի ժամանակի ու խաղաղութեան իր նոր կուլ տված վերջին պատառները հանգիստ մարսել կարողանալու համար: Այդ պատճառով ալ անգլիացիներու կողմեն վճռական դիմադրութիւն ու հակառակութիւն սպասելի չէ ռուսներու «արդար» պահանջներուն դեմ. որով և տեղիք չի մնար նաև ռուսներու կողմեն չափազանց հանդուգն քայլերու,

եթե նույնիսկ վերջիններս ունենան ատոր համար հարկ եղած պատեհութիւնը, ուժն ու տրամադրութիւնը: Եվ այս ամենը մեզի կբերեն այն եղրակացութեան, որ մեր քաղաքական կյանքը. ինչպես երեկ ու այսօր կապված է եղեր ու է Ռուսաստանին, այնպես ալ վաղը և բավական ժամանակ, ամենեն խոշոր հավանականութեամբ, դեռ կապված է ըլլալու Ռուսաստանին:

Եվ կարծես թե մեր պատմութիւնը բռնելու է հետևյալ ուղին: Հայ ժողովուրդի ու հայ հողի ազատագրումը թուրքի լուծեն, ինչպես որ սկսված է դարե մը ի վեր, այդպես ալ պիտի շարունակվի ու ավարտի ռուսներու զենքին ու տիրապետութեան միջոցով, ռուսներու ձեռքով, ռուսներու դեպի հարավ ձգտումին իբրև մեկ հետևանքը: Մինչդեռ մեր անկախացման ու պետականացման մաքառումներուն ու ճիգերուն մասնավորապես նպաստելու են, ինչպես մինչև հիմա, այնպես ալ ասկե ետքը, անպիտական չահերը՝ միշտ պահելով ու քաշելով մեր հայրը միջազգային մակարդակի վրա, իբրև մեկ հետևանքը Անգլիայի դեպի հյուսիս ձգտումին: Մինչև որ այդ դեպի հարավ ու դեպի հյուսիս հրմշտուքեն ազատվիլ կարողանանք մեր վիճակակից հարևաններուն հետ միասին և դառնանք վերջապես մեր բացարձակ անկախ տերը, ինչքան որ ազգ մը կրնա իր բացարձակ անկախ տերը դառնալ արդի համամարդկային հետզհետե իրարու օղակվող իրականութեան մեջ:

Համենայն դեպս, ո՛ր պետութեան խողովակովն ալ որ անցնելու ըլլանք, որու խնամակալութեանն ալ բարիքներն ու չարիքները վայելելու ստիպված ըլլանք, գիտնա՛նք, որ սկսելու ենք փոքրեն ու վարեն և բարձրանալու ենք կամաց-կամաց ու մեր ջանքերով: Մեր անկախութիւնը թե՛ ըստ ներքին էութեան և թե՛ հողային ծավալով զարգանալու է հետզհետե, համառ ու երկար աշխատանքով, չա՛տ քրտինքով, չա՛տ չարչարանքով ու արյունով:

Դժվար ու ոլոր ճամբա է, այո՛, հետևանք աշխարհագրական ու ցեղագրական մեր դժբաղդ դիրքի: Բայց մխիթարվինք անով, որ ամենեն ավելի արժեք ունին այն բաները, որոնք ձեռք կբերվին մեծ ջանքերով և շարք մը սերունդներու միակամ ու միաւեննչ աշխատանքով, գոհերով: Թե՛ ձեռք բերվածը կղառնա անհամեմատ

ավելի թանկագին ու խորապես գնահատված ամենքին, և թե՛ ժողովուրդներն ու սերունդները կկրթվին հոգեպես ու պետականորեն այդ աշխատանքի, տառապանքի ու կռվի համբուն վրա: Ժողովուրդները ատով է, որ կազնվանան, կամքերը ատով կխորանան ու կղարբնվին, և ապագաները ատով կբարձրանան ու կկառուցվին: Հարատև ու կեդրոնացած ճիգը մեծութիւններ կծնի:

ՄԵՐ ՈՒԼԵԿԻՑՆԵՐԸ

Ա. ՎՐԱՍՏԱՆԻ ՈՒ ՄԵՐ ԿԱՊԸ

I. Աշխարհագրական ու պատմական տարբեր դիրքեր

Մեր կողքը, մեզի հետ, մեզի նման, նույն քաղաքական պայմաններու տակ ու նույն քաղաքական ձգտումներով և գրեթե նույն տնտեսական ու քաղաքակրթական վիճակով, կապրի վրացի ժողովուրդը:

Մեր ու վրացի ժողովուրդին մեջ կան քանի մը շեշտելի տարբերություններ, որոնք խոշոր դեր են խաղցած ու կխաղան մեր փոխադարձ հարաբերություններու մէջոցին:

Ամենեն առաջ իրենց աշխարհագրական դիրքը: Վրաստանը, հարավեն դիտված, բոլորովին ճամբեն դուրս, անկյուն մը քաշված, լեռնոտ երկիր մըն է, կռնակը տված կովկասյան շղթային, իսկ կուշտը՝ ծովուն: Իր հարավը հայությունն է, ոչ նվազ ապահով պատվար մը դարերու ընթացքին անդադար հարավեն եկող ապառնալիքին հանդեպ, կուզե Սասանյան մազդեզը[150] ըլլա, կուզե արաբ մահմետականությունը թե մահմետական Թուրանը: Մինչ մենք ինկած ենք եղեր միշտ մեծ ճամբուն վրա և միշտ գլխավոր հարվածը իջած է մեր կրծքին:

Եվ մենք ամեն անգամ դիմած ենք ընդհանուր պաշտպանության համար վրացի ազգին, իբրև հավատակից, ցեղակից ու վիճակակից ժողովուրդի՝ հասկցնել փորձելով, որ մեզմե ետքը հերթը իրենցն է, եթե մենք իյնանք, իրենք ալ չեն դիմանար:

Միշտ համաձայներ են, հաճախ խոստացեր օգնելու, բայց պետք եղած վայրկյանին չեն եկեր կամ ղրկեր են շատ չնչին ու միտանի օգնություն մը. այն շա՛տ բնական հասկանությամբ, թե հայերը թող հանեն չագանակը կրակեն, հարվածը մինչև վրացական անկյունը հազիվ թե հասնի, իրենք կկռվին, երբ թշնամին իրենց հասնի: Եվ թշնամին, մեզմե ետքը, իհարկե հասեր է միշտ և

անոնց, բայց չատ ավելի թուլցած բազուկով ու տկարացած թափով և ավելի չուտ ալ ետ է քաշվեր, քան մեր երկրեն:

Նույնն է անոնց վիճակը և Թուրքիայի վերաբերմամբ: Թուրանական հոսանքը չի կրցավ ոչնչացնել անոնց պետականութիւնը, մինչև ԺԹ-րդ դար ունեին իրենց անկախութիւնը. Թուրանականութիւնը չի թափանցեց, չի նստավ անոնց հողերուն ու հոգիին վրա: Վրաստանը չէ կրած, մասնավորապես, օսմանյան Թուրքերու լուծը և չէ ենթարկված այն անսանձ ու մոլեգնոտ գազանութիւններուն ու ոչնչացման, ինչպես Հայերս ենք եղած:

Եվ այս իրողութեան հետևանքն այն է, որ ոչ միայն անոնք չունին Թուրքիատելութիւնը, այլև մեծ վախ մը չունին Թուրքիայի կովկասյան ձգտումներու սպառնալիքեն, նույնիսկ կհավատան, որ Հիմա իսկ Թուրքիայի հետ կապվելով կրնան ազատվիլ ռուսներու ճանկեն: Եվ ատոր համար ալ մշտական հարաբերութեյան, բաց ու ծածուկ համաձայնութիւններու և առուտուրի մեջ էին Թուրքիայի հին ու նոր վարիչներուն հետ թե՛ պատերազմի նախօրյակին, թե՛ պատերազմի ելևէջներու միջոցին, թե՛ զինադադարի շրջանին:

Որովհետև, ինչպես որ հարավի հանդիպ մենք ենք ճամբու վրա և մեր գոյութեյան թշնամին կնկատենք Թուրքիան, անոնք ալ ճամբու վրա են Հյուսիսի հանդիպ, անմիջական դրացին ռուսութեյան, որ չարունակ վար կսահի. նույնիսկ կովկասյան սարերը չատ վստահելի պատնեշ չեն այդ չարժման դիմաց: Եվ եթե ավելցնենք, որ իրենց անկախութենեն զրկված են ռուսներու ձեռքով հազիվ դար մը առաջ, որ իրենց եկեղեցին բռնի միացված էր ռուսականին, իբրև նույնադավան, և որ ամբողջ ռուսական զինվորական ու վարչական ապարատը նստած էր ու է՛ Վրաստանի կրծքին՝ Թիֆլիս, հասկնալի կդառնա այն մասնավոր ատելութեյունը, որ կա անոնց մեջ ռուսական տիրապետութեյան դեմ: Մինչ մենք սահմանակից չե՛նք ռուսութեյան, մեզի համար տեսակ մը պատվար է Վրաստանը ու Ատրպէյջանը, մեր երկիրը չատ ավելի նվազ հետաքրքիր է ռուսներուն և կարևոր միայն հեռավոր ծրագիրներու տեսակետեն:

Երբ պոլշևիզմի ծնունդով քանդվեցան ռուսական բանակները և Կովկասը մնաց ինքն իր գլխուն, Վրաստանի առաջին գործը եղավ ջնջե՛լ ռուսերենը դպրոցներեն, կյանքեն, առուտուրեն ու պատերեն և անտանելի դարձնել ռուսներու գոյությունը իրենց հողերուն վրա: Մինչ Հայաստանի մեջ, մինչև պոլշևիկներու գալը, ունեինք ռուսներ թե՛ բանակին մեջ, թե՛ քաղաքացիական պաշտոնեության մեջ, իրենց նախկին գործերուն վրա, և մեր պարլամենտի օրակարգին մեջ լուրջ հարց մըն էր հայերենը պարտադիր դարձնելը:

Ասոնք չատ պարզ ու բնական արտահայտություններ են այն տարբեր վերաբերումին, ինչ որ կա հայուն ու վրացիին մեջ ռուսական վտանգին հանդեպ: Մեզի համար մեծ թշնամին թուրքն է, ռուսի հարցը երկրորդ տեղը. անոնց համար ռուսի սպառնալիքը առաջինն է, թուրքի վտանգը հազիվ կնշմարվի հեռվեն, ան ալ չատ մշուշոտ:

II. Տնտեսական ու դասակարգային տարբերություններ

Այս քաղաքական տարբեր գնահատումներուն կից՝ կան և ավելի ներքին տեսակի տարբերություններ: Վրացի ժողովուրդը կապրի չատ ամփոփ: Մեկ միլիոն ութ հարյուր հազարի չափ վրացի ազգաբնակությունը գրեթե ամբողջովին Վրաստանի մեջ կապրի, այնքան չնչին է իր տոկոսը Ռուսաստանի ու կովկասյան մյուս մասերուն մեջ: Այդ հավաք կյանքը և միայն մե՛կ պետության մը հետ շփում ունենալը բնականորեն առաջացուցած է միաճույլ հոգեբանություն, քան ինչ որ հայերս էինք երեք պետության տակ բաժնված և աշխարհիս բոլոր կողմերը ցրիվ՝ ամեն տեղ ունենալով տեղական չարն ու բարին, տեղական խնդիրները և տարբեր կրթություն ու հոգեբանություն:

Եվ երբ նույնիսկ Ռուսաստանի հայությունը իր մտավորական ու հեղափոխական ուժերը կսպառեր ամբողջովին «թուրքահայ» դատին վրա և իր «ռուսահայ» խնդիրներուն միայն ի միջի այլոց կմոտենար, վրացիք, ընդհակառակը, ունեին միայն ռուսա-

կան ցավը, և իրենց գլխավոր հոգն էր ժողովուրդի ներքին կազմակերպումն ու ազգային գիտակցության ուժեղացումը մենշևիկ-սոցիալիստ վերարկուի տակ: Վրացին վրացերեն կխոսի, կկարդա, կճանչնա իր հեղինակներն ու բանաստեղծները, հպարտ է իր անցյալովը, իր ազդեցությամբը, իր կուլտուրականությամբը, գուցե նույնիսկ քիչ մը ավելի պետք եղածեն: Եթե վրան ավելցնենք իր ազնվականությունը, որ դեռ կապրի, և կապրի բնականորեն. հին օրերու երազովը, հին ազատ օրերու, որոնց վրայեն դար մը հազիվ է անցեր, հասկնալի կդառնա մեզի այն ավելի խոր ազգային զգացումը, որ ունի վրացին, և այն անհամբերությունը, որով ան կձգտի իր անկախությանը, չա՛տ ավելի մեծ հապճեպով մը, քան հայը:

Մեր ու անոնց մեջ եղած տարբերություններեն մեկն ալ վրացի ազնվականության գոյությունն է ինքնի՛ն: Ազնվականությունը, մշտական հարաբերության մեջ ըլլալով տիրապետող ցեղի բարձր շրջաններուն հետ և կապված ընտանեկան կապերով ու կենակցությամբ, շատ բան կհարթվի «տանուց տանու», երկու բաժակ խմիչքի ընդմիջումին, ծխախոտի ախորժելի ու մտերիմ ոլորտի մը մեջ: Ազնվականությունը ընդհանուր լեզու ունի ո՛չ միայն ռուս, այլև կովկասյան մահմետական բեկերու ու մեծավորներու հետ, ուրկե շատ մեծ տարբերություն մը չունի արդեն իր նիստ ու կացով, իր ճաշակներով: Ատով շատ կդյուրանա մերձեցումն ու իրար հասկնալը նաև Ատրպէյջանի հետ ու Թուրքիայի: Մանավանդ որ ազնվական կյանքին հատուկ խոսելու, վարվելու ու շռայլելու հատկությունը, ինչպես և վրական ուրախ բնավորությունը և վերջապես պոլիտիկա բանեցնելու վարպետությունն ու նրբությունն ալ երկարատև ու դարավոր վարժությամբ միայն ձեռք կբերվի:

Այս բոլորի հակադրությունն է ազնվականութենե զուրկ հայը: Հայտնի իրողություն է հայու քաղաքական անճկունությունը, խոսելու ու ինքզինքը պահելու անշնորհքությունը, որ թուրքական կնիքի տակ կդառնա չողոքորթություն, քծնանք ու ստորնացում, իսկ ռուսական ազդեցության տակ՝ չոր ու կոպիտ և ուղիղ-գիծ: Հայը միշտ քանի մը ձայնանիշ ավելի բարձր կվերցնե

կամ ավելի ցածր. վրացիին հարաբերուելիությունը չունի այդ երաժըշտական թերուելիությունը:

Ասոր փոխարեն վրացին աղքատ է եղած միշտ առևտրական ու արդյունաբերական շնորհքե ու սերե: Եղած է դարերով ճամբաներեն հեռու ինկած փոքրիկ աշխարհ մը հողը մշակող գյուղացիուելյան և այդ հողին ու գյուղացիուելյան տերը եղող ազնվականներու. ան չէ ունեցած ո՛չ մեծ քաղաքներ, ո՛չ քաղաքական զարգացած կյանք և ո՛չ առևտրական արդյունաբերական դասակարգ: Եվ ինչ որ եղեր է մինչև ռուսներու գալը այդ ուղղուելյամբ Վրաստանի մեջ, ստեղծվեր է գլխավորապես հայերու ձեռքով, որոնք թուրանական դարերուն իրենց երկրի կործանումովը, Անիի նման առևտուրի կեդրոն քաղաքներու ավերումովը ցրվեր են ամեն կողմ, մաս մըն ալ ասպնջականուելյուն են գտեր իրենց դրացի Վրաստանին մեջ:

Թիֆլիս ու Գորի և ավելի երկրորդական քաղաքներու մեջ բազմաթիվ են եղեր հայերը և սիրված ու առանձնաշնորհված՝ իրենց բերած արվեստներուն և դուրսերեն հասցուցած թանկագին ապրանքներուն շնորհիվ: Հայու ու վրացիի մեջ եղած այդ տարբերուելյունը ավելի ևս ընդգծված է ռուսներու գալեն ետքը, քանի որ շատ ավելի լայնցած է երթևեկը, ապրանքներու շրջանառուելյունը և ավելցած ու զարգացած են նոր արդյունաբերական ճյուղեր ու ձեռնարկներ: Որով, երբ մեկ կողմեն վրացի ազնվականը սկսեր է քիչ-քիչ կորանցնել իր դիրքը, իր եկամուտը, սկսեր է աղքատանալ ու ծախել, որովհետև չէր կորցրած իր չռայլուելյունը և ծախսելու իր սերն ու վարժուելյունը, միևնույն ժամանակ Վրաստանի հայը սկսեր է հարստանալ, տեր է դարձել ազնվականներու կողմեն ծախված չենքերուն, կայքերուն ու հողերուն. և ստացեր է աչքի իյնող դեր, ձայն և ազդեցուելյուն Թիֆլիսի մեջ, և հիշդ այդ պատճառով ալ դարձեր է բնական կերպով վրացական վերին շերտի աչքին փուշը:

Եթե վրան ավելցնենք ռուսներու «բաժնե՛, որ տիրես»-ի սկզբունքով կրակին վրա լեցված յուղը լրագրուելյան միջոցով, վերջի տասնյակներու ընթացքին, պարզ կդառնա այն նեղսրտուելյունն ու անբարյացակամուելյունը, որ ունի վրացին հայուն

Հանդեպ: Մեր անկախութիւններու կարճ ընթացքին, բացի կարճատև քաղաքական-զինական ընդհարումե մը, որ ստիպված ենք եղեր ունենալու իրարու հետ[151], ունեցած ենք նաև չատ ավելի երկարատև ու սիսթեմատիկ, այսպես ըսված, քաղաքացիական պատերազմ մը, հալածանք մը, լուրջ ու կանոնավոր կերպով տարված, Հայ տարրի, Հայ սեփականութեան և Հայ ազդեցութեան դեմ Վրաստանի մեջ:

Մարդիկը չատ պարզ ու կտրուկ կերպով մեզի վռնտել են ուզած իրենց քաղաքներեն՝ «Գացե՛ք ձեր երկիրը, թողե՛ք մեզի մեր գույքերն ու մեր ինչքերը», իսկ Հայ գյուղացիութիւնը, ընդհակառակը, ուզած են պահել իրենց մոտ՝ աքսորելով Հայ դպրոցն ու Հայ լեզուն և Հայութիւնը նկատելով իբրև «Լուսավորչական վրացիներ»: Պարզ է, որ այս բոլորը չափազանց պիտի դառնացներ և առաջացներ Վրաստանի Հայութեան մեջ ուժեղ ցանկութիւն մը ռուսներու վերադարձին, զուտ տեղական-անձնական պատճառներով, որով և ավելի ևս ատելի դառնար վրացիին:

III. Մենք ու վրացիք Թուրքիայի հանդեպ

Այս բոլորի իրար օղակվող տպավորութեան տակ առաջին Հայացքով կկարծես, որ մեր ու անոնց մեջ լուրջ հակադրութիւններ ու հակառակութիւններ կան: Բարեբաղդաբար, չատ ավելի տեղական ու մասնակի են մեր ընդհարումները, չատ ավելի երկրորդական ու համեմատաբար դյուրին հարթվելիք մեր փոխադարձ դժգոհութիւնները և, ընդհակառակը, չա՛տ ավելի հիմնական ու անխուսափելի մեր փոխադարձ կապը:

Իրողութիւնն այն է, որ Հայութեան գոյութիւնը նույնքան անհրաժեշտ պետք մըն է վրացութեան համար, ինչքան վրացութեան գոյութիւնը Հայութեան համար: Այդպես ալ մեր անկախութիւններուն ստեղծումը ունի ներքին խոր առնչութիւն ու փոխադարձ ազդեցութիւն:

Ամբողջ Մերձավոր Ասիայի մեջ Հիմա մենք ու վրացիք ենք, որ մնացեր ենք իբրև քրիստոնյա ժողովուրդ, մնացածը մահմետա-

կանութիւն է: Կովկասը, Փոքր Ասիան, Հիւսիսային Պարսկաստանը և Միջին Ասիան բոլորը թուրանական զանազան ժողովուրդներ են, մենք ենք ու վրացիք տարբեր մյուսներեն և ցեղակից իրարու: Եվ մենք ու վրացիք միասին առած նորեն շատ քիչ ենք մեզի չլքնապատող թուրան-մահմետական ընդհանուր ճնշումին դեմ պաշտպանվիլ կարողանալու համար, որուն դեկավարն ու հրամանատարը կուզե դառնա Թուրքիան:

Եթե Հայութիւնը սրբվի իր վերջին ապավեն Սևանի բարձրավանդակեն, Վրաստանը կմնա բոլորովին մերկ ու մինակ այդ հոխորտացող ալիքներուն դեմ և անզոր թե՛ թվով, թե՛ ուժով, թե՛ քաղաքակրթութիւնամբ և թե՛ տնտեսութիւնամբ: Եվ դիմանալ չի կրնար, նույնիսկ եթե իր կյանքը իրեն բաշխեն թուրքերը. իսկ որ թուրքերը այլևս այդ տեսակ «ախմախութիւն» ընելու բնավ տրամադիր չեն, ահա՛ ապացույցը. ո՛չ միայն հայկական, այլ ընդհանուր քրիստոնեական ջարդերն ու հալածանքը և՛ Պոնտոսի մեջ, և՛ Զմյուռնիա, և՛ Կիլիկիա և ամեն տեղ: Համենայն դեպս անկախութեան մասին երազելը այդ թուրքական աշխարհակալութեան մեկ անկյունը կծկտած՝ կըլլա կատարյալ երեխայութիւն, ո՛չ միայն Թուրքիայի նման ոչնչացնելը սիրող ու հետադիմական պետութեան մը դիմաց, այլ ընդհանրապես ամեն քիչ թե շատ իր մեջը ուժ զգացող և նույն պայմաններուն մեջ գտնվող տիրապետութեան մը հանդեպ: Եթե Հայութիւնը ջնջվի, հերթը Վրաստանինն է անխուսափելի կերպով. Երևան, Դիլիջան ու Լոռվին գրավողը չի կրնար Թիֆլիսը հանգիստ թողնել, չի կրնար Բաթումեն ձեռք վերցնել, չի կրնար Բագու-Բաթում գիծը իր ձեռքը չառնել. բացարձակ անկարելիութիւն մըն է թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական և թե՛ խլել-տիրելու ախորժակի:

Եթե Վրաստանը անբարյացակամութիւններ ու դժգոհութիւններ ունի մեզի դեմ, շատ ավելի մեծ չափերով այդ դժգոհութիւնները և վախերը ունի իր ձախի Ասրպեյջանի և իր աջի Թուրքիայի դեմ: Այն շատ մեծ տարբերութեամբ, որ մեզի հետ ունեցած վեճի հիմքը էապես տնտեսական է և հարթելի, և ինքն է հարձակողը, մինչդեռ թուրք ու թաթարին դեմ հակառակն է, հարձակողն ու սպառնացողը անոնք են և վեճը հողային ու շատ

լուրջ. մեկ կողմը ամբողջ Ա.ճառիայի հարցն է, մյուս կողմը՝ սքանչելի ջրդի հողեր Զաքաթալայի շրջանին մեջ:

Այնպես որ՝ Վրաստանի ղեկավարները, շատ ավելի ազատ ու հարմար քան մենք, շատ բնական ու շատ խելացի կերպով կրնան մշտական հարաբերութեան մեջ ըլլալ Թուրքիայի հետ, բոլոր դռները բաց պահել ու «բարեկամ» ըլլալ՝ հնար եղածին չափ օգտվելու, հնար եղածին չափ ամեն վիճակե օգուտ քաղելու ցանկութեամբ: Բայց անոնք երբե՛ք չեն կրնար ցանկալ, որ թուրքերը տեր դառնան Հայաստանի, ուրիշ խոսքով՝ ամեն կողմեն խեղդեն Վրաստանը: Եվ կասկած չկա, որ ինչքան ալ չսիրեն ռուսները, երբ գա կտրուկ երկընտրանքը ու կանգնի իրենց դեմ կա՛մ թուրքերու լուծը, կա՛մ ռուսներու, հոն ալ ո՛չ մեկ վարանում չի մնար, ինչպես և մեզ մոտ: Որովհետև Թուրքիայի լուծ չկա ասկե ետքը. ատիկա կնշանակե Հայրենիքի ու ցեղի վերջնական ոչնչացում. այսինքն՝՝ ապրած ժողովուրդի մեկ մասը պետք է մնա ու դառնա թուրք, մյուս մասը պետք է ցրվի ու դառնա հրեա:

IV. Մենք ու վրացիք Ռուսաստանի հանդեպ

Ինչպես որ խորքին դիտած մեր ու Վրաստանի վիճակը նույնն է թուրքին հանդեպ, այդպես ալ նույնն է ըստ էութեան մեր երկուքի դիրքն ու բաղդը ռուսներուն դեմ: Մեր ու վրացիներու անկախացման ջանքերը, հույսերը և ցավերը անտարակույս երթան պիտի զույգ ու նույն ճամբով, ինչպես շատ բնական կերպով եղեր է մինչև հիմա: Եթե ռուսը որևէ աստիճանի ինքնուրույնութիւն ստիպվի զիջիլ մեզմե մեկուն, անկարելի է, որ նույնը չընե և մյուսին. արդեն զիջելու պատճառներեն մեկն ալ ըլլալու է կովկասյան բոլոր ժողովուրդներուն միաժամանակ ճգտումը: Եվ եթե նույնիսկ «խորամանկ» պոլիտիքայով որոշ ժամանակ մը մեկուն կամ մեկալին դիտմամբ չի տան նույն ազատութեյան չափը, ինչ որ արդեն զիջած են մյուսին, մեկուն զիջած ըլլալը արդեն ինքնին դրդում ու ապահովութիւն մըն է օր մը, ուշ կամ կանուխ, նույն տեղը հասնելու: Այնպես որ՝ կիսանկախ կամ քառորդ

անկախ Վրաստանի մը ճանաչումը քայլ մը առաջ ըսել է նաև Հայաստանի համար, եթե նույնիսկ ենթադրենք, որ այդ քայլը միասին չառինք:

Եվ ճիշդ ատոր համար է, որ Հայկական Հարցը, որ այսքան տարի է միջազգային սեղաններուն վրա կքաշքշվի, որոշ աստիճանի նաև վրական հարց է: Եվ մեր հեղափոխական ճիգերն ու այնքա՜ն զոհերը, սխալ ըրած չենք ըլլար, եթե ըսենք, որ աշխատած են նաև Վրաստանի ապագային համար, ընդհանրապես Կովկասի ազատութեյան համար, իհարկե, եթե հարցին նայինք չատ վերերեն և օրվան նեղ իրարանցումեն դուրս գալ կարողանանք: Եվ հիմա ալ, ենթադրելով, որ որոշ ինքնուրույնութիւն մը ճանաչվի Հայաստանի համար ռուսական իշխանութեյան կամ գերիշխանութեյան տակ, ատիկա արդեն գործնական քայլ մը կդառնա նուա Վրաստանի համար:

Թե՛ մենք և թե՛ վրացիք պետք է պինդ բռնենք այն ամեն մեկ պատառ ինքնավարութիւնը, որ փրցնել կարողանանք պատմական պայմաններուն ճանկեն: Եվ հենված այդ արդեն ձեռք բերվածի վրա և իրարու հետ միշտ զուգընթաց՝ ջանալու ենք փրցնելու մեր անկախութեյան երկրորդ կտորը. մինչև որ կամաց-կամաց իրարու հետ, իրար օգնելով, իրարու հենվելով և իրար հետևելով տիրանանք մեր լիակատար ազատութեյան:

Եթե ռուսին տեղը, հանկարծ պատմական դեպքերու շրջումով, նորից գան անգլիացիք, պատահելիքը նո՛ւյնն է, թեև անշուշտ ավելի արագ ու ավելի թեթև իր ընդհանուր առումովը: Բայց նույնն է ուղին ու եղանակը. մե՛նք պիտի ձեռք բերենք մեր լրի՛վ անկախութիւնը անգլիական իշխանութեյան ձեռքեն, հետզհետե, մաքառումով և կովկասյան ժողովուրդներու միահամուռ աշխատանքով:

Եթե ռուս-անգլիական խոշոր ընդհարումի մը հետևանքով մեր կարծածեն ավելի չուտ լրիվ ազատութիւն իյնա մեր ձեռքը, հոտ անգամ հավանորեն բաղդակից ենք ըլլալու Վրաստանին: Որովհետև չատ դժվար է ենթադրել դաշնագիր մը, որ անկախ ու ազատ Հայաստան մը պիտի պարտադրե Ռուսաստանին, ռուսներուն ձեռքը թողնե Բաթումը և այն համեմատորեն չատ փոքրիկ

Հողամասը, որ մնալու է Հայաստանի, կովկասյան չղթայի ու Սև ծովուն մեջտեղը: Եվ ընդհանրապես, անկախ Հայաստանը միայն մեկ մասն է Ռուսաստանի ու Անգլիայի միջև քաշվելիք պատին: Մեր անկախությամբ, ճի՛շդ է, Անգլիան կգոցե ռուսներու ճամբան դեպի Պարսկաստան ու Պարսից ծոցը: Այնպես որ՝ եթե դեպքերու խաղով, դուրսի ճնշումով և առանձին կերպով, գլուխ գա լրիվ անկախ Հայաստան մը, ատիկա կլլլա առավել կամ նվազ ժամանակավոր վիճակ մը, թերի կացություն մը, որ պիտի լրացվի ներքին ու արտաքին չանքերով, Վրաստանի ու Ատրպեյջանի անկախացումով:

Եթե մեր ու վրացիներու վրայեն անդին նետենք օրվան բերած պատահական ու երկրորդական խորթություննները, իր խորքին մեջ այնքան նո՛ւյն ու նմա՛ն է մեր ու անոնց դիրքը Մերձավոր Արևելքի վարող ձգտումներուն և հոսանքներուն խաղին մեջ, որ մենք ու անոնք անկարող ենք զատ ու տարբեր քաղաքականություններ ունենալու, որ մենք ու անոնք անկարող ենք զանազան ճամբաներ բռնելու, որովհետև չկան այդ զանազան ճամբաները, և որ մենք ու անոնք անկարող ենք իրարու հակողությանը չուրախանալու, մեր չանքերուն մեջ իրարու հետ չըլլալու ու իրար չօգնելու:

Այս բոլորը եթե մենք գիտակցությամբ չընենք, պիտի ընենք բնազդորեն, ինքնին, իբրև բնական որոշ տվյալներու բնական որոշ հետևանք:

Բ. ՍԵՐ ՈՒ ԱՏՐՊԵՅՋԱՆԻ ԿԱՊԸ

I. Հին ու նոր ուղիներ

Ատրպեյջանի մեջ է ինկած այն չափազանց կարևոր ճամբան, որ նախապատմական ժամանակներեն սկսած մինչև հիմա եղած է միակ դուռը սկյութական տափաստաններեն Մերձավոր Արևելք անցնելու համար, հին նշանավոր Ճորա պահակը: Այսինքն՝ այն ավազուտ հողի նեղ շերտը երկար տարածությամբ, որ

կովկասյան լեռնե՛րն ալ մոռցեր են վերցնելու իրենց փեշերուն վրա, ինչպես և Կասպից ծովը՝ իր ալիքներուն ծոցը:

Այդ ճամբով են խուժեր քաղաքակիրթ Ասիայի վրա վայրենի սկյութական ցեղերը, ալաններն, կիմերներ[152] և ուրիշներ. ատիկա է եղեր միջին դարերուն թաթարներու ու մոնգոլներու հաղորդակցության ուղին իրենց հյուսիսային ու հարավային մասերուն մեջ. այդ ճամբով է, որ ԺԸ դարու կեսերեն արևմտյան քաղաքակրթությունը ռուսներուն հետ նորեն ուղ կղնե մեր ասիական հողերը. և հիմա ալ այդ ճամբով է, որ կանցնի միակ երկաթուղային գիծը Կովկասը Ռուսաստանին կապող:

Ատրպեյջանի առաջին բացառիկ կարևորությունը այդ դուռն է. ինչքան ատեն որ դուռը որևէ աստիճանի դիտավորություններ ունենա Կովկասի, Պարսկաստանի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի սահմաններուն ու հարցերուն վրա, Ռուսաստանը այդ դռնեն ձեռք վերցնել չի կրնար: Հոտկե է, որ պիտի վազեն դիպի հարավ իր բանակներն ալ, իր ապրանքներն ալ, իր տիրապետությունն ալ, իր ընդարձակ ծրագիրներն ալ:

Ատրպեյջանի երկրորդ բացառիկ կարևորությունը իր նավթն է: Եթե Անգլիան ու Ամերիկան և ուրիշները աչխարհիս հեռավոր ծայրերեն անտարբեր կերպով առնել չեն կրնար Բագվի նավթին հոտը, ի՞նչ զարմանալու բան կա, որ Ռուսաստանը իր քիթին տակ ու իր ձեռքին մեջ ունեցած այդ չափազանց կարևոր հարստությունը ձեռքե հանել պիտի չուզենա:

Երրորդ, և ո՛չ նվազ, հրապույրը մըն է Ատրպեյջանի մեջ Կուրի ու Երասխի հովիտներուն արգավանդ հողը, մասնավորապես հարմար՝ բամպակի մշակության, և ընդհանրապես երկրագործության «կապիտալիստական» չահագործման համար:

Այսպեսով՝ Ատրպեյջան կնշանակե տնտեսական բացառիկ հնարավորություններով օժտված երկիր մը, չափազանց կարևոր աչխարհագրական դիրքով, ուր կապրի երկու միլիոնե ավելի մահմեդական խառնազգ բնակչություն մը, որ ո՛չ իր մտավոր պատրաստությամբ, ո՛չ իր սեփական տնտեսական կարողություններով հնար ունի այդ բոլորը օգտագործելու. երկիր մը, որ կովկասյան բոլոր մասերուն մեջ ամենեն ավելի կհետաքրքրե և՛ ռուսները, և՛

անգլիացին, և՛ թուրքերը, և որուն վրա տնկված են ամենուն աչքերը:

Իր ապագային վերաբերմամբ առջևը կա երեք կարելիություն:

1) Թուրքիան կարշավե Կովկաս, կոչնչացնե հայությունը, կվսեղդե Վրաստանը, կստեղծվի նորեն մեծ Թուրքիա մը, որուն մեկ ծայրագավառը կգառնա Ատրպէյճանը: Կազատվին անիծված կյավուրներուն տիրապետութենեն և կգառնան թուրք փաշաներու ու նահանգապետներու երջանիկ հպատակը:

2) Կուգա նորեն Անգլիան և իր տնտեսական ու քաղաքական գերիշխանությունը կովկասյան մասերուն վրա, և կվերստեղծվին տեղական հանրապետությունները, իբրև «անկախ» պետություններ, իհարկե անգլիական ձևի:

3) Ռուսը տեղեն չի չարժիր և Կովկասը կմնա իր տիրապետության տակ, ինչպես մինչև հիմա: Ատրպէյճանը կկազմե կովկասյան ժողովուրդներուն մեկ մասը, և այդ ժողովուրդներուն հետ միասին կնկրտի հիմնելու և ընդլայնելու իր տեղական, ազգային ինքնավարությունը՝ ձգտելով հասնիլ ավելի լրիվ անկախության մը:

Այս երեքեն առաջինը հին ճամբան է, հին հոգեբանություն, կրոնական ու ցեղական դարավոր ատելություններու վրա հիմնված ու սրմատացած հակում, որով և, բնականաբար, ավելի տարածված և ավելի համակիրներ ունեցող մահմետականության մեջ: Մանավանդ քառասուն տարիե ի վեր Թուրքիայի կողմեն այդ ուղղությամբ թափված ճիգերը, ուղարկված պրոպականտիստները, մզկիթներուն մեջ քարոզները, հիմա ալ պոլշևիկներու կարճատեսությամբ ստեղծված խառնափնթորությունը Կովկասի մեջ, ինչպես և քեմալականներու երես առնելը, ավելի ևս կուժեղցնեն այդ տրամադրությունը Ատրպէյճանի մեջ այս վայրկյանիս:

Վերջին երկուքը նոր ճամբաներ են, նոր ձգտումներ ու նոր հոգեբանություն, տրամագծորեն հակառակը նախորդին: Մնկդի՛ դնել ցեղային ու կրոնական հարցերը քաղաքականության մեջ և կապվիլ քու հայրենիքիդ մեջ քու քովդ ապրող ժողովուրդներուն

հետ՝ ձեռք բերելու համար քու ուրույն սեփական անկախութիւնդ:

Թեև շատ ավելի փոքրաթիվ, բայց կա Ատրպեյջանի ղեկավարութեան մեջ և այս երկրորդ տիպի հոգեբանութեան մարդիկ: Մասամբ եվրոպական կրթութեան հետևանք, մասամբ երկար կենակցութեան՝ քրիստոնյա տարրին հետ. մասամբ արդյունք իսկապես անկախ ապրելու ձգտումին, իր սեփական ինքնուրույն կյանքովը ապրելու պահանջին. և մասամբ ալ արդյունք այն խոր համոզումին, թե օսմանյան Թուրքիայեն լուրջ ու տևական ոչինչ դուրս գալ չի կրնար. նո՛ր կոտորածներ, կռիվներ ու տակնուվրայութիւն, որուն հաջորդ օրը գալու է նորեն կա՛մ ռուսը, կա՛մ անգլիացին և ետ է քշելու օսմանցիները իրենց անկյունը:

Այսպեսով՝ Ատրպեյջանը կրնա երթալ երկու բոլորովին իրար հակադիր ճամբաներով. հարցը դեռ վարանքի մեջ է. և հո՛ս ալ, ինչպես այնքա՜ն-այնքան ուրիշ բաներու մեջ, վերջնական որոշումը կայացնողը պիտի ըլլան ուժն ու հաջողութիւնը: Եթե Թուրքիան հաջողի Կովկասը գրավելու, Ատրպեյջանը ուզե-չուզե կապված է օսմանցիներու պոչին, և իր վիճակը մեզի համար այլևս հետաքրքիր չէ: Հակառակ պարագային ատրպեյջանցին ալ, ինչպես և Հայն ու վրացին, ինկած է ըլլալու նույն ռուսական կամ անգլիական իշխանութեան կամ գերիշխանութեան տակ, նույն ու նման տնտեսական ու վարչական պայմաններու մեջ, նույն ձգտումները իր հոգիին խորքը և նույն ճամբան իր առջևը, որով և բնականորեն փնտրելու է իր բաղդակից և ուղեկից ժողովուրդներու գործակցութիւնն ու օժանդակութիւնը, ճիշդ ինչպես և Հայն ու վրացին:

Եվ Ատրպեյջանը մեզմե ավելի է փնտրելու մեր կապն ու աջակցութիւնը, ըլլա՛ ռուսին դեմ, ըլլա՛ անգլիացիին: Ռուսը եթե կրնա ընել որոշ զիջումներ փոքրիկ ու քրիստոնյա Հայաստանի մը, Վրաստանի մը, առանց մեծ վախի, քանի որ ասոնք հենց իրենք են, որ կան և որևէ ցեղակից կամ կրոնակից կապեր ու թիկունք չունին դուրսը, նույն զիջումները շատ դժվար է իրեն համար ընել մահմետական-թուրանական ժողովուրդի մը, որ դյուրութեամբ կրնա դառնալ գործիքը դուրսի թուրքութեան ու մահմետակա-

նուիթյան: Իսկ մյուս կողմեն ընել որևէ պիջում Հայուն ու վրացիին առանց նույնը ընելու ատրբեյջանցիին՝ պետականորեն գրեթե անկարելի բան է: Գալով անգլիացիին՝ թեև առաջին իսկ վայրկյանեն տալու է անկախության բոլոր արտաքին ձևերն ու երևույթը, պարզ է սակայն, որ Բագվի ու Կուբի հովիտին նման առաջնակարգ հարստություններու բույնը ձգել չի կրնար տեղական կառավարության մը ձեռքը: Եվ Ատրպեյջանը չատ ավելի համառ ու ծանր մաքառումներու կարիք պիտի՛ ունենա իր օձիքը իսկապես ազատելու համար, քան տնտեսապես ավելի համեստ Վրաստանը և անհամեմատ ավելի համեստ Հայաստանը:

II. Հայաստանի ու Ատրպեյջանի մեջ եղած լարումը

Ինչքան ետ-ետ երթան Թուրքիայի սահմանները դեպի Արևմուտք, ըլլա՛ որևէ աստիճանի ինքնուրույն Հայաստանի մը կազմությամբը, ըլլա՛ այդ հողամասերու պարզ միացումովը ռուսական տիրապետության, այնքան ավելի կպարզվի մթնոլորտը Կովկասի մեջ, և այնքան հստակ կդառնա այն միակ ճամբան, որ անխուսափելի է երեք վիճակակից ժողովուրդներուն համար: Ինչ որ հիմա վարանք է ատրպեյջանցիի հոգիին մեջ, այն ժամանակ կդառնա արդեն պարզ ըմբռնում. պանթուրանիզմը կկորսնցնե իր հմայքը և ախորժակ չի մնար օսմանցիներու սրինգովը պարելու:

Ավելորդ է, իհարկե, լրջորեն խոսիլ մեր ու Ատրպեյջանի մեջ եղած աւտելության ու թշնամության մասին, ինչպես և մեր ու Ատրպեյջանի մեջ եղած քաղաքական ոխերու և հողային ծանր վեճերու մասին: Որովհետև աւտոնցմե ո՛չ մեկը տեղական պայմաններու պտուղը չէ: Աւտոնք բոլորը առավել կամ նվազ արվեստական արձագանգն են մեր ու Թուրքիայի մեջ եղած կռիվներուն ու հակառակության, արդյունքն են օսմանցիներու տիրապետական տենչերուն և պանթուրանական քարոզներուն ու գրգռումին: Այս հոգեկան չփոթ վիճակեն օգտվեցավ ցարական կառավարությունը և փորձեց իր հողին վրա ալ կռվեցնել Հայն ու Թուրքը՝ իր դեմ

ուղղված դժգոհությունները չեղելու ու իրարմով չեզոքացնելու հույսով:

Երբ Թուրքիա ետ նետվի, երբ Հայաստանը վերջնապես ազատվի Թուրքիայի հետ ունեցած դարավոր ու անիծված կապին ու կապանքին, կչորնան արդեն ինքնին մեր ու Ատրպեյջանի մեջ եղած անհիմն դժկամակության ու անբարյացակամության բոլոր արմատները: Մանր-մունր չահերու ընդհարում ու վեճեր և մանավանդ տիրող կառավարության արվեստական կերպով մեզի նորեն իրարու դեմ հանելու փորձերը, իհարկե, ապագային ալ անպակաս են ըլլալու: Բայց ճիշդ հոս է, որ պիտի երևա մեր ու մեր դրացիներու քաղաքական հասունությունը, որ մեր բռնելիք ընդհանուր ուղղությունն ու կապը կարողանանք բարձր պահել մանր ու անցողակի հարցերեն և մանավանդ չենթարկվիլ տիրողներու պրովոկասիոնին:

Ինչպես որ մեր ու Ատրպեյջանի մեջ եղած թշնամությունը արդյունք է Թուրքիայի սադրանքին և հոտկե առաջացած հոգեբանության, այդպես ալ մեր ու Ատրպեյջանի իրարմե ունեցած քաղաքական փոխադարձ անվստահությունն ու վախը հետևանք է Թուրքիայի հարձակողական ծրագիրներուն: Ատրպեյջանը մեզմե կվախնա, որ պինդ կապված ենք քրիստոնյա ռուսին և իր ռուսներու դեմ ունենալիք մաքառման միջոցին կրնանք զարնել թիկունքեն: Մենք ալ կվախնանք, որ Թուրքիայի հառաջխաղացման մը միջոցին կմնանք երկու կրակի մեջ Ատրպեյջանի կողմեն եղած հարձակումով մը: Արդ՝ հենց որ մեջտեղեն վերնա Թուրքիայի արշավանքին սպառնալիքը, այսինքն՝ հենց որ թուրքերը ետ շպրտվին Իկտիրեն, Կարսեն ու Էրզրումեն, կվերնա մնջտեղեն նաև այդ երկուստեք վախը: Ո՛չ Ատրպեյջանը կրնա ծրագրել ռուսներուն դեմ ինքնիրենը դուրս գալու, որ ետևի հայերեն վախ ունենա, ո՛չ մենք կունենանք մեր հողերուն վրա թուրքիայի առաջ սողալը, որ երկյուղ կրենք մեր թիկունքի կրակեն:

Մեր ու Ատրպեյջանի մեջ եղած հողային վեճերն ալ իրենց թե՛ բուն ծագումը, թե՛ նշանակությունն ու սրությունը ամբողջովին կպարտին Թուրքիայի հարձակողական ձգտումին: Եթե Ատրպեյջանը պնդեր է ու կպնդե, որ Ղարաբաղը, Զանգեզուրը,

Նախիջևանը և Շարուրը պետք է կցվին իր հողերուն, պնդեր է ու կպնդէ, որովհետև Թուրքիան ալ անկէ այդ պնդելը կպահանջէ: Պահանջողը Թուրքիան է, որպեսզի անընդհատ թուրքական գոտիով մը նախապատրաստուի ճամբան դէպի Աւրպեյեան և պատրաստվի այն պարանը, որ Հայութեյան վիզը պիտի փաթթվի խեղդելու համար: Այն վայրկյանին, որ Թուրքիայի գնդերը քաշվին Իկտիրեն ու Կարսեն, ինքնին ավելորդ, անկարելի ու ծիծաղելի կդառնա Շարուրի, Նախիջևանի ու Զանգեզուրի պահանջը, իսկ Ղարաբաղի խնդիրը կարգադրելը բնավ անկարելիութեյուն չէ, եթե իսկապես որ կարգադրելու ցանկութեյունը ըլլա երկու կողմեն:

III. Կովկասյան դաշնակցություն

Եթե Կովկասը մնալու է Ռուսաստանի իշխանութեյան տակ, ինչպես և ամենեն ավելի հավանականն է, հայ, վրացի ու ատրպեյջանցի ժողովուրդներու կապն ու գործակցութեյունը պարզապես կյանքի պայմաններեն ինքնին բխող իրողութեյուն մը պիտի դառնա, իբրև բնական ու անխուսափելի երևույթ մը:

Եվ այդ անհրաժեշտ երևույթը նոր չէ, որ սկիզբ պիտի առնե: Մոտ երկու տասնյակ տարի է արդեն, որ ծայր տված է անիկա, թեև մենք իրված օրվան մանր կռիվներուն ու հակասութեյուններուն մեջ՝ դեռ դժվարով կնշմարենք:

Դարու մը ռուսական տիրապետութեյունը, ընդհանուր ոգին, ընդհանուր դպրոցը, ընդհանուր խառն կենսակցութեյունը նույն օրենքին ու նույն հողին վրա, և երեքս ալ հավասարապես հպատակ նույն պետութեյան, ենթակա նույն ու նման ճնշումներու, դժգոհութեյուններու ու ձգտումներու, մեզի չատ են մոտեցուցած իրարու, հրած, բերած են իրարու, հակառակ ամեն տեսակի կեսարվեստական, կես-բնական հայ-թրքական, հայ-վրացական ու թուրք-վրացական վեճերու և ընդհարումներու:

Եվ տաս-տասնհինգ տարիե ի վեր այդ երեք ժողովուրդներուն վարիչները կարելի է ըսել մշտական և տևական ժողովի են նստած իրարու հետ իրենց փոխադարձ ազդեցութեյան շրջանակ-

նները որոշելու և իրարու հետ միասին գործակցաբար Կովկասի թե՛ տնտեսական, թե՛ վարչական և թե՛ քաղաքական բաղդը վարելու համար: Ռուսական առաջին հեղափոխութենեն ծնունդ առավ այդ խորհրդակցությունը այդ կովկասյան խորհրդակցությունը և հենց ռուսներու ղեկավարությամբ ու հարմարումով:

Պատմությունը պիտի ըսե օր մը, որ կովկասյան զեմստվոյական խորհրդակցությունները առաջին տարտամ քայլն էր Կովկասի ուրույնացման ու անջատման, որ ռուսները ստիպված էին առնելու, և մյուս կողմեն երեք կովկասյան ժողովուրդներու առաջին գործնական կապակցումը. ինչքան ալ որ բնավ Ռուսաստանեն անջատման նմանություն չունեին այդ ժողովները, և ընդհակառակը, կարծես երեք ժողովուրդներու անհաշտ շահերն էին իրարու բախված և ավելի կռիվ ու դժգոհություն թողուցին իրենց ետևեն, քան արդյունք:

Բայց ասոնք երևույթի կեղևն են, դուրսինը, այսօր ամենուս կողմեն տեսնվածն ու շոշափելին. իսկ ինչ որ երևույթի միջուկն է, ինչ որ պատմությունն է վավերացնելու՝ ատիկա կովկասյան երեք ժողովուրդներու գործակցության ծայրն է՝ մեկ կողմեն, և Ռուսաստանի քայլ մը տեղի տալը կովկասյան ժողովուրդներուն՝ մյուս կողմեն:

Այս խորհրդակցություններու շարունակությունն է երկրորդ ռուսական հեղափոխութենեն ետքը[153] կովկասյան կոմիսարությունը՝ կազմված երեք ազգերու ներկայացուցիչներեն. ասոր շարունակությունը՝ կովկասյան կարճատև անկախությունը երեք ազգերու գործակցությամբ. ասոր շարունակությունը՝ իրարմե բաժնված երեք հանրապետություններու անընդհատ բանակցությունն ու ճիգերը իրար հետ դաշնակցելու տնտեսական ու քաղաքական հողի վրա. ասոր շարունակությունը՝ երեք փախստական կառավարություններու կնքած համաձայնությունը արդեն օտար երկինքներու տակ նորեն ձգտելու համար մեր անկախությանը՝ միացած ուժերով. ասոր շարունակությունը՝ պոլշևիկ մկրտված երեք կովկասյան խորհրդային «անկախ» կառավարություններու ստեղծած Համակովկասյան Դաշնակցությու-

նը[154], իբրև վարիչը երեք Հանրապետություններուն համար ալ ընդհանուր եղող տնտեսական ու վարչական հարցերուն:

Անշուշտ, հարցը հոն չէ, թե գործնական ինչ արժեք ունի հին կառավարություններու փախստական անդամներուն ստորագրած թղթին կտորը, կամ թե իրական ինչ կարևորություն կներկայացնե այդ Համակովկասյան խորհրդային Դաշնակցությունը, և թե ինչ եւևի մտքերով ստեղծված է անիկա Մոսկվայի Հրամանով ու քաջալերությամբ: Հարցը հոն է, որ կովկասյան ժողովուրդներու բոլոր եկող ու գացող վարիչները ընդհանուր գործակցության մը անհրաժեշտությունը կզգան իրարու հետ և որոշ կովկասյան անջատ ուրույնություն մը կզգան ու կընդունին նույնիսկ իրենք ռուսները: Եվ այս գիծը շարունակվի պիտի անպայման, ինչ կառավարություն ալ որ գա Ռուսաստանի ղեկին պլուսը, և ինչ պայմաններ ալ որ ստեղծվին ռուսական Կովկասին մեջ: Ամեն պատմական երևույթ իր բնական ընթացքը ունի և իր աստիճանական զարգացումը:

Կովկասյան երեք ժողովուրդները, ձգտելով ամեն մեկը իր ուրույնացմանն ու անկախությանը, առանց նկատելու, իրենց այդ նույն ճիգերովը միևնույն ժամանակ կամաց-կամաց կքալեն դեպի վիճակ մը, դեպի ընդհանուր ավելի բարձր միություն մը, որուն անունն է կովկասյան դաշնակցություն, իսկ օր մը, ո՞վ գիտե, գուցե և կովկասյան հանրապետություն:

Այս գաղափարը հիմա կրնա մեզմե ու մեր դրացիներեն չատերուն մեջ տհաճության նման զգացում մը արթնցնել, չատերը գուցե թերահավատ ծամածռություն մը հանեն իրենց դեմքին, իսկ ռուսները՝ հեգնոտ ու արհամարհոտ ժպիտ մը: Ինչպես ամեն գաղափար, այնպես ալ Կովկասը կովկասցիներուն թողնելու գաղափարը ժամանակ կուզե, որ Հասունննա՛ու գիտակցական դառնա և՛ մեզի համար, որ կապրինք այդ հողերուն վրա, և՛ ռուսի համար, որ կտիրե այդ հողերուն վրա: Պատմության մեջ սովորական երևույթ է՝ այն իրականությունը, ինչ որ 50-60 տարի ետքը ինքնին հասկնալի ու «բնական» բան մը կնկատվի, իր նոր ձև առնելու սկսած օրերուն և՛ ծիծաղելի կհամարվի, և՛ անհավանական, և՛ անախորժ:

Ռուսները, հիմա ինչքան կուզեն հեգնեն ու ժպտին, օր մը քաշվին պիտի Կովկասեն ու մեր երկիրները թողնեն պիտի մեզի. այդ օրը գա՛ պիտի: Դեռ հասած չէ այդ օրը, դեռ հասուն չէ ո՛չ գաղափարը, ո՛չ իրողությունը. գուցե նույնիսկ վնաս է հիմա անոնց ետ քաշվիլը այս վայրկյանիս: Բայց ժամանակն ու ժամանակի ոգին կհասունցնեն և ա՛յդ պտուղը: Ռուսաստանի մեջ ալ անխուսափելի կերպով փոխվի պիտի պետական կազմը, և տիրապետական ըմբռնումը վերածվի պիտի դաշնակցական ձևի. մանավանդ որ բոլոր տիրված ազգերը հետզհետե ավելի բուռն կերպով պահանջելու են իրենց տարրական իրավունքը, իրենց ազգային ուրույնությունն ու անկախությունը, ինչ գնով ալ որ ըլլա:

Եվ ռուսներու աստիճանական նահանջով ստեղծվելու են սկիզբը հավանորեն տեղական-ազգային ներքին «անկախություններ» ուժեղ կեդրոնական-կովկասյան ռուս վարչության մը ձեռքին տակ: Քիչ-քիչ կովկասյան ինքնավարություն մը՝ երեք կիսանկախ ինքնավարություններու դաշնակցությամբ ռուսական վերին հսկողության տակ: Վերջապես կովկասյան կիսանկախ դաշնակցական պետություն մը, իբրև մշտական դաշնակիցը Ռուսաստանի, որուն հաջորդ քայլն է անկախ ու ազատ կովկասյան դաշնակցությունը:

Եթե կովկասյան երկիրները անցնին անգլիական ազդեցության շրջանակին տակ, նորեն հիմնական տարբերություն մը չի կրեր մեր երեք ժողովուրդներու գործակցությունը, ինչպես և այդ գործակցության ստանալիք պատմական զարգացումը: Գլխավոր զանազանությունը ռուսներեն՝ սկիզբն է, մեր ինքնավարություններու սկզբնավորումը: Անգլիան արդեն յուրացուցած է տեղական կիսանկախ պետություններու սիսթեմը, որով և անմիջապես ստիկա կովկասյան ժողովուրդներուն համար ալ կդառնա իրականություն, առանց ավելորդ մաքառումներու ու դժվարության. մինչդեռ ռուսները դեռ նոր պիտի հաշտվին այդ մտքին, դեռ նոր պիտի փորձեն ու յուրացնեն, ո՛վ գիտե թե ինչքա՜ն երկար վարանումներով ու տատանումներով:

Սակայն անգլիական սիսթեմն ալ հաշտ է այդ ինքնավարություններուն ու կիսանկախություններուն հետ մինչև մեկ որոշ

աստիճանի, ուրկե անոնց նորեն ամեն ինչ պետք է ձեռք բերվի կյանքի հնավանդ պենքերովը՝ դիմադրութեամբ, կամքով ու կռիւով: Եվ այդ պատճառով ալ կովկասեան կիսանկախ պետութիւններու իրարու սեղմվիլն ու իրար օգնելը նորեն պիտի դառնա անխուսափելի՝ լրիվ անկախութեան հասնելու մեր ընդհանուր ճիգերուն մեջ:

Այսպեսով՝ ռուսական իշխանութեան տակ մեր երեք ժողովուրդներու կապակցումը աւելի հարկադրական է, աւելի տարերային, և իր դիխաւոր առաջին նպատակը՝ ձեռք բերել ու ապահովել մեզմե ամեն մեկուն գէթ նախնական անկախութիւնը, միայն վերջերը հարցը կհասնի լրիվ ազատութեան: Անգլիական իշխանութեան տակ մեր երեք ժողովուրդներու կապակցումը չի ունենար այդ տարերային բնոյթը, այլ կըլլա աւելի գիտակից, աւելի նման կամաւոր դաշնակցութեան և աւելի բարձր թռիչք ունեցող նպատակի համար, այն է՝ ձեռք բերելու և ապահովելու երեք ժողովուրդներու լրիվ ու իսկական անկախութիւնը:

Կա աւելին: Այդ երեք ժողովուրդներու մեջ եղած սերտ կապն ու գործակցութիւնը տեղի է ունենալու, նոյնիսկ եթե արդին հասած ըլլանք երեքս ալ մեր իսկական ազատութեանը, կա՛մ միասին ու արագ անգլո-ռուս խոշոր ընդհարումի մը հետևանքով, կա՛մ առանձին-առանձին իրարմե տարբեր ժամանակով ու եղանակով: Որովհետև մեր զարգացման առաջին աստիճաններուն վրա և մեր լրիվ ազատութեան առաջին շրջանին, երբ դեռ ուժի չենք եկած ամբողջովին, կրնանք մնալ ամեն մեկս մեր պատյանին մեջ չեզոքացած, ան ալ իհարկե մեկ որոշ աստիճանի: Բայց քանի մեր թիվը աճի, մեր պետական օրգանիզմը ամրանա, մեր ուժերն ու թափը աւելնան տնտեսապես ու կուլտուրապես, այնքան պահանջ պիտի զգանք մեր խորշերեն ու ծոցերեն դուրս գալու դեպի լայն ու բաց ծովերը, այնքան պետքը պիտի զգանք մեծ նավի մը:

Վրաական, Հայկ. կամ ատրպեյջանյան անջատ չոգեմակույկ մը անշուշտ հերիք է Վանի ու Սևանի ջրերուն համար, ինչպես և Սև ու Կասպից ծովերուն պատառ մը եզերքին վրա: Բայց երբ արթննա տենչանքը բաց ծովերուն, պետք է կառուցվին շատ ավե-

լի խոշոր նավեր, խոշոր միջոցներով, խոշոր տարողութեամբ ու կարողութեամբ:

Առանձին-առանձին մեզմե ոչ մեկը չի կրնար այդ կառուցումը, բայց երկքս միասին, մեր թիվական, տնտեսական, տեքնիկական ու զինական միացյալ ուժերով, կրնա՛նք: Իհարկե, երկար գործ է ու դարերու պատմութեյուն՝ այդ նավուն կառուցումը, ինչպես ամեն մեծ ու կարևոր պատմական երևույթ, և որուն վրա աշխատելու են շատ ու շատ սերունդներ:

Մենք հիմա անոր կազմվածքին առաջին գերանները միայն կրնանք իրարու բերել. և այդ առաջին գերանները իրար կապելու փորձերը արդեն իսկ կկատարվին. ավելի բնագդորեն, քան դիտակցաբար, բայց կկատարվին:

ԿՅԱՆՔԻ ՊԱՀԱՆՋԸ

Ա. ՀՈՂԻ ԿԵԴՐՈՆԱՑՈՒՄ

Ուժերու կեդրոնացումը ռազմական արվեստի ամենեն հիմնական պահանջն է: Տրամադրելի ուժերու դեպի մեկ կետ մը ու մեկ նպատակ մը ուղղելը ամենեն մեծ գրավականն է հաջողութեյան նաև կյանքի առօրյա կռվին ու աշխատանքին մեջ:

Նույնն է օրենքը ազգերու քաղաքական ձգտումներու իրականացման ժամանակ: Շատ մեծ առավելութեյուն մը, ուրկե զուրկ է եղած Հայ ժողովուրդը մինչև հիմա պատմական պայմաններու բերումով:

Իրավ է, Հայ քաղաքական միտքն ու Հայ հեղափոխական աշխատանքը գլխավորապես և խոշոր չափերով ուղղված է եղեր Թուրքական Հայաստանի ազատագրման կողմը, դեպի արևելյան վիլայեթները. բայց և այնպես ուժերու, ջանքերու ու ձգտումներու որոշ գնահատելի չափ մը սպառվեր է միշտ մեր զարթոնքի առաջին օրերեն սկսած Կիլիկիայի վրա:

Ձգտումներու այդ ճյուղավորմանը քսաներորդ դարը ավել-

ցուց երրորդ, չատ կարևոր նոր ճյուղավորում մը: Ռուսական հեղափոխական ցնցումները, ազգերու ինքնորոշման սկզբունքի հետզհետե չեչուվիլը և «ծայրագավառներու» ազդային ինքնուրույնութեան պահանջները բերին անխուսափելի կերպով նաև ռուսական Հայաստանի այս կամ այն ձևով, այս կամ այն աստիճանի ինքնուրույնացման հարցը: Կովկասի բոլոր կուսակցութիւններու ծոցին մեջ, Դաշնակցութեան ծոցին մեջ մասնավորապես, սկսավ քիչ-քիչ մարմին ստանալ Ռուսաստանի Հայութեան քաղաքական վիճակով պբաղվելու, Ռուսահայաստանի խնդրին վրա ուժ թափելու պահանջը:

Մերկ իրականութիւնն ա՛յն է, որ մինչև Ֆրանսայի Կիլիկիայեն ձեռնթափ ըլլալը, մինչև Լոզանի մեջ եվրոպական պետութիւններու իրենց տված խոսքը, պատիվն ու պարտավորութիւնը ոտքի տակ տալը, հայ քաղաքական միտքն ու ձգտումը ճյուղավորված էր երեքի: Ջուտ քաղաքական-պատմական պատճառներուն իհարկե հյուսված էին նաև կուսակցական ու խմբական չահեր ու հաշիվներ այս մեղավոր աշխարհի օրենքովը: Լոզանի դաշնագիրը իր բոլոր հիասթափութիւններուն, իր բոլոր լքումներուն, իր նոր ցրվումներուն ու նոր տառապանքներուն հետ հայ ժողովուրդին համար բերավ գոնե մեկ հատիկ առավելութիւն. կեդրոնացուց հայ ժողովուրդի ուշադրութիւնն ու ակնկալութիւնները մեկ կետի վրա:

Այլևս վեճ չկա: Պատմական իրողութիւնները և պատմական անհրաժեշտութիւնները ամենեն ավելի ուշ ու դժվար ըմբռնողներուն համար անգամ այլևս պարզ է, որ մեր Հայրենիքի ապագան, մեր ժողովուրդի բաղդը և մեր ձգտումներու իրագործումը կախված են մեր Հայրենի հողի այն կտորեն, որուն վրա դեռ հայ ժողովուրդ կա նստած:

Հիմա ամենուն հույսը, և վերջին հույսը, կեդրոնացած է Սևանի ծովակին չուրջը, հո՛ն, ուր խմբվեր է Հայութեան վերջին պահեստի ուժը, և որ ունի նույնիսկ քաղաքական որոշ ինքնուրույնութիւն մը. այսինքն՝ «Կովկասյան» Հայաստանը, «Ռուսական» Հայաստանը, «Խորհրդային» Հայաստանը, ինչպես որ կանվանե մեզմե ամեն մեկը ըստ իր քաղաքական հասկացողութեան ու

ճաշակին: Սնր ձգտումներուն, մեր գոյութեան ու մեր ապագայի վերջին ու միակ հենարանը: Ապագա երազներու, ապագա իրականութիւններու, ապագա հայրենիքի ու ապագա ստեղծագործութեան ապրող «կորիզը», ինչպես կանվանենք ամենքս անխտիր:

Բ. ԹՎԻ ԿԵՂՐՈՆԱՑՈՒՄ

Բայց որպեսզի այդ կորիզը մնա կենսունակ, քիչ-քիչ դառնա առողջ ու ավելի դիմացկուն և կարողանա հետզհետե աճիլ, զորանալ և մայրը դառնալ ապագա զարգացման, անհրաժեշտ է, որ իր մեջը ամփոփի հայութեան բոլոր կենդանի ուժերը, անհրաժեշտ է, որ հավաքե, ժողվե, կեդրոնացնե իր մեջ հայութեան ամեն տեսակի կարողութիւնները:

Եվ այդ բացարձակ անհրաժեշտութեան մեջ ամենեն վերը, ամենեն կարևորը և ամենեն էականը բնականաբար իր թվական ուժի կեդրոնացումն է:

Եթե հայութիւնը ապրիլ կուզե, եթե իբրև ուրույն ժողովուրդ մը տևել կուզե, եթե իր Հայրենիքի վերջին ծվենին տեր մնալ կուզե, պետք է գործ դնե բոլոր հնարավոր միջոցներն ու ջանքերը հոն հավաքելու համար ամեն կողմ ցրվըտած իր մասերն ու կտորները, իսկ արդեն հոն եղող կամ հավաքված հատվածներուն համար ալ պետք է ամեն կերպ աշխատի առաջն առնելու անոնց վերստին ցրվելուն ու հեռանալուն:

Արդ՝ ի՞նչ պայմաններու տակ հայութիւնը կրնա կատարել իր գոյութեան համար անհրաժեշտ եղող այդ առաջին պահանջը. որո՞նք են այն պատճառները, որոնք կդժվարացնեն կամ կխանգարեն ցրված մասերու համախմբումը և, ընդհակառակը, կդրդեն կամ կնպաստեն խմբված տարրերու վերստին ցրվումին:

* * *

Առաջին պատճառը ռուս պետութեան քաղաքական հաշիվներն են ու ըմբռնումները:

Բացի թուրքերուն դեմ եղած պատերազմներու միջոցին թուլյատրված ներդաղթերեն, որոնք մասամբ անխուսափելի էին, մասամբ ձեռնտու էին՝ ռուսներուն նոր գրաված մասերը չենցնելու համար, մասամբ ալ կկատարվեին հայ գործարներու դրդումով ու ղեկավարությամբ, մնացած ժամանակը ռուս պետական մարդիկը հաշտ աչքով չեն նայած հայերու կեդրոնացմանը հայ սահմաններուն մեջ:

Իհարկե չեն ցանկար անոնք Կովկասը ձառնց Հայության. Հայերը պիտանի ապրանք են ու հարմար առիթ՝ նոր արշավանքներու միջոցին. այլև անհրաժեշտ են թուրքին, թաթարին ու վրացիին դեմ կռվեցնելու համար. վերջապես անհրաժեշտ են Կովկասի մեջ իբրև տնտեսական շատ կարևոր գործոն մը, քանի որ դեռ ռուսները իրենք անկարող են ամեն բան իրենց ձեռքը առնելու: Առանց Հայի չեն ցանկար. բայց չեն ցանկար և կեդրոնացած Հայությունն թե՝ արտաքին քաղաքական խաղերե զգուշանալով,- չէ՞ որ Հավիտենական Հայկական Հարց մը կա մեջտեղը,- և թե՝ ներքին քաղաքական պատճառով. ուժեղ, ընդունակ և խմբված Հպատակ տարրերը միշտ անհաճո են և գլխու-ցավանք տիրապետողներուն համար:

Այդ հոգեբանության արդյունք է ռուսներուն սարքած Վանի հուչակավոր կեղծ նահանջը վերջի պատերազմի միջոցին, որով քանդեցին թուրքահայության վերջին բույնը և ցրիվ տվին Կովկասի բոլոր անկյունները և ավելի անդին մինչև Ռոստով ու Խարկով: Եվ այդ հոգեբանության արդյունքն է, որ հիմա Խորհրդային Հայ Հանրապետությունը իր դռները պինդ փակեր է Թուրքիայեն վախստական անտուն ու անտեր Հայության երեսին. Հայ պոլշևիկը գործիք մըն է միայն, ինչպես միշտ. Հայու առջև Հայաստանի դռները փակողը Մոսկվան է:

Եվ իհարկե պատահականություն չէ Տրոցկիներու և Զիչերիններու[155] պատրաստակամությունը այդ հայերը Վոլգայի ափերը և Հյուսիսային բևեռ տեղափոխելու. առաջարկը ինքնին պարզ է, որ լուրջ չէր գործադրվելու տեսակետեն, բայց չափազանց լուրջ էր Հոգեբանության և ցանկություններու տեսակետեն:

Այսօրվան Զիչերինները, երեկվան Ստալըբինները[156] և վաղ-

վան դալիքները բոլորն ալ պատրաստ են «օգնելու» հայ ժողովուրդին և նպաստելու, որ անիկա փուվի ամբողջ Կովկասի երեսին և Անդրկասպյան երկիրները: Թո՛ղ նվաղեցնեն իրենց արժեքն ու թիվը իրենց հայրենի սահմաններուն մեջ և թող երթան խառնակելու ու նոսրացնելու վրացական ազգաբնակութ յան թիվը Վրաստանի մեջ և թաթարներու տոկոսային հարաբերութ յունը Ատրպեյջանի հողերուն վրա: Ինչքան իրարու խառնվին, այնքան դյուրին է իրարու թշնամացնելը, իրարու հետ կռվեցնելը և մեկով մյուսը սանձելը:

Եվ հենց այս վայրկյանիս ի՞նչ է պոլշևիկներու ըրածը Կովկասի մեջ. թև կուտան հայ պաշտոնյաներուն, հայ տնտեսական ձեռնարկութ յուններուն և հայ առևտրականին Վրաստանի մեջ. վրացիներուն քաղաքական ուժ ու դիրք կուտան Բագվի մեջ, իսկ թուրքերուն պաշտպանութ յուն ու հողեր կուտան Հայաստանի մեջ:

Իհարկե, այս բոլորը ազգերու «հավասարութ յան», «եղբայրութ յան» և «անխտրականութ յան» ուռուցիկ ու կեղծավոր վերարկուներուն մեջ փաթթած: Իրականին մեջ հին արվեստն է: Ժողովուրդները ատելի կդարձնեն իրարու, որ իրենք ավելի դյուրին կերպով տիրեն:

Եվ այսպես ալ ըլլալու է վաղը, ինչ ռուս կառավարութ յուն ալ որ հաջորդելու ըլլա պոլշևիկյան թագավորութ յան: Պակաս կըլլան քիչիկ մը կեղծավորութ յունը, պակաս կըլլան քիչիկ մը սուտ ու խոչոր բառերը, ինչպես և դերասանութ յունը, բայց ատիկա կըլլա նաև մեր ունենալիք բոլոր շահը. մնացածը կմնա նույնը: Թուլացնել ամեն մեկուն ուժը իր հողին վրա, խառնել բոլորը իրարու և կռվեցնել իրար հետ, ահա՛ հնավանդ ու փորձված դեղատոմսը:

Եվ ռուսները բնականաբար ուրիշ կերպ վարվելու ալ ո՛չ հնար ունին, ո՛չ հաշիվ: Անոնք չէ, որ պիտի մտածեն հայու ու վրացիի շահն ու բարիքը: Ատոր համար չէ, որ անոնք եկեր են Կովկաս: Ամեն ազգ կմտածե ի՛ր դյուրութ յունն ու ի՛ր օգուտը:

Մեր շահի ու վիճակի մասին կրնանք մտածել միայն մե՛նք:

* * *

Հայ ժողովուրդը իր հողեն կարվելուն նպաստող երկրորդ պատճառը ռուս պետութեան բռնած հողային քաղաքականութիւնն է, իբրև բնական հետևանք և գործադրութիւն փոքր ազգերու հանդեպ ունեցած իր ընդհանուր քաղաքականութեան: Ռուս կառավարութիւնը մեկ կողմեն մեր լավագույն հողերը կտրամադրե ռուս գաղթականներուն, հողային ավելի մեծ չափերով և պետական օժանդակութիւններով ու առանձնաշնորհումներով օժտված, կամ կպահե տրամադրելի՝ գալիք ռուս գաղթականութեան տալու համար. իսկ մյուս կողմեն ալ կնպաստե ընդարձակ հողերու կեդրոնացմանը թաթարներուն ձեռքը մեր սահմաններուն մեջ:

Ցարական բեժիմը կհենվեր «ազնվականութեան» իրավունքներուն վրա, պոլշևիկները կգործեն «պրոլետարական» դիմակի տակ, իսկ վաղվան կառավարութիւնը կախվելու է իր նոր հարմարցնելիք հողային օրենքներու առաձգական ծվիններեն: Ինչպես հայտնի է, օրենքները միայն այնքան կարժեն, ինչքան որ այդ օրենքները գործադրող կառավարութիւնը արժեցնել ցանկա և ինչ չափով ու ինչ ձևով որ արժեցնել ուզենա:

Իրողութիւնը այն է, որ Հայ գյուղացին չատ քիչ հող ունի, և անբավական, և վատ հողերը: Եվ երբ իր գյուղին ու արտին կից գտնվող հողերը կբաշխվին եկվոր ռուսներուն կամ կմնան նույնիսկ առանց օգտագործման զանազան բեկերու ձեռքը, Հայ ժողովուրդը կզաղթե մինչև անգամ Շիրակի դաշտին նման համեմատաբար հացառատ կեդրոններեն. ա՛լ ինչ ըսելու բան կմնա մյուս ավելի աղքատ ու ավելի բարձր տեղերու մասին, ուր հազիվ մեկեն յոթը բերք կստացվի «լավ» տարին:

Այսպես էր երեկ և այսպես է այսօր: Լրագիրները վերջերս կպատմեին, որ Զանգեզուրի ժողովուրդը սկսեր է պանդխտել դեպի Բագու և Անդրկասպյան երկիրները «քաղաքական ու տնտեսական» պատճառներով: Այսպես ալ ըլլալու է վաղը. կփոխվին ճնշումներու, կողմնապահութեան ու Հալածանքի արտաքին անունները, բայց կսկանը կմնա նույնը. Հայ ժողովուրդը

իր հողին վրա օր օրի կլսանայ անհող ու սակավահող, որով և չի կրնար մնալ իր հողին վրա:

* * *

Հայուն իր հողին կտրվելուն երրորդ պատճառը ռուս պետության ընդհանուր անհոգությունն է ու անկարողությունը՝ իր հեռավոր «ծայրագավառներու» տնտեսական հոգածության համար:

Ռուս պետությունը ո՛չ ժամանակ, ո՛չ հետաքրքրություն և ո՛չ ալ միջոց ունի իր լայնածավալ տիրապետության բոլոր անկյուններուն հոգը քաշելու, ոչ միայն հիմա իր արդի քայքայված տնտեսությամբ, պարապ քսակներով և անկար մարդիկներով, այլև իր «լավագույն օրերուն»: Ան միշտ աչքի առաջ է ունեցած այն կետերն ու մասերը, որոնք մասնավոր տնտեսական կարևորություն մը կներկայացնեն ռուս պետության համար, շահագործվելու նպատակով: Անոր համար ինչ արժեք կրնան ունենալ տիղական ժողովուրդներու կարիքներն ու ցավերը, ան այլ Հայաստանի նման ո՛չ մեկ մասնավոր հրապույր չունեցող լեռնոտ ու սահմանամերձ գավառներուն մեջ: Ռուսաստանի նկարքին նահանգներուն մեջ մտցված ընդհանուր բարեկարգություններուն մեկ մասը միայն, և ան ալ թերի ու կրճատ կերպով, մտած է Կովկաս: Եվ Կովկասի մեջ առնված այդ քանի մը կիսատ քայլերեն այլ Հայկական գավառներուն միշտ շատ քիչ բաժին է հասած: Ամեն լավ ձեռնարկի վերջին ալիքներուն վերջին փշրանքները միայն հասած են մեր անհետաքրքիր սարերը, ուր տնտեսությունը մնացած է իր հին խեղճ վիճակին մեջ, մինչ տնտեսական արտաքին պայմաններուն ճնշումը և ապրելու դժվարությունը չեչամած է օր օրի:

Ահա՛ այդ ճնշումն ու խեղճությունն է, որ միացած հողի պակասին դուրս կքշե հայ տարրը իր բնագավառեն դեպի կովկասյան տնտեսապես ավելի բաղդավոր մասերը, իր հացը հանելու հույսերով ու որոնումով:

* * *

Հայ տարրի ցրվելուն նպաստող չորրորդ պատճառն է հայ երկրի կուլտուրական հետամնացությունը, որ ամեն տեղ գույդ կերթա տնտեսական խեղճության ու լքվածության:

Մասամբ կյանքի հարմարություններն դրդված, մասամբ իրենց զավակներուն ավելի բարձր կրթություն մը տալու ձգտումով, նյութականապես քիչ-շատ ապահովություն ունեցող ընտանիքներեն շատերը «գավառեն» կանցնին Թիֆլիս կամ նույնիսկ ավելի հեռուները, մինչև Մոսկվա ու Պետերբուրգ: Նույն հետևանքին կբերե զանազան պետական կամ մասնավոր պաշտոններով, գործերով, հացի խնդրով Ռուսաստանի զանազան կողմերը ղրկվիլը, քանի որ իր հողին վրա ո՛չ այդ հաստատությունները կան, ո՛չ այդ գործերը, ո՛չ ալ այդ պաշտոններն ու ռոճիկները:

Ինչպես ցարերու ժամանակ, այնպես ալ պոլշևիկյան դրախտին մեջ «բարձր» մտավորականությունը կփախչի Հայաստանեն, որովհետև «կխեղդվի այդ գավառական մթնոլորտին մեջ». միջակ մտավորականությունը նմանապես, որովհետև կճգտի բարձր մտավորականություն դառնալու: Եվ այսպես ալ պիտի ըլլա վաղվան Հայաստանին մեջ, ինչքան ժամանակ որ Հայաստանը իրապես ըլլա մեկ «գավառը» մեծ Ռուսաստանի, ինչքան ժամանակ որ Թիֆլիսը ըլլա կովկասյան կեդրոնը մեծ ռուսական պետության, ինչքան ժամանակ որ Բաքուն ըլլա արդյունաբերական ու հարստագործական քաղաքը միևնույն պետության սահմաններուն մեջ:

* * *

Ուրիշ խոսքով՝ հայերը իրենց երկրեն քշող, ցրող ու գաղթեցնող չորս գլխավոր պատճառներն ալ կառաջանան նույն հիմնական պատճառեն, այսինքն՝՝ որ Հայաստանը կկազմե մեծ ռուսական պետության մը մեկ մասնիկը: Եվ ինչքան ժամանակ որ Հայաստանը իրականապես ծայրագավառ մը ըլլա Ռուսաստանի, այդ չորս պատճառներն ալ շարունակ գործեն պիտի և այս կամ

այն աստիճանի արգելք պիտի ըլլան հայ ժողովուրդի իր մայր հողի վրա խմբվելուն, մեր թվական կեդրոնացման:

Սա իրողութիւն մըն է, որ ամեն հայ պարտական է պարզ և հստակ ըմբռնելու: Դաժան իրականութեան հանդեպ աչք գոցելով, պոլշևիկները գեղեցկացնելով կամ վաղվան Ռուսաստանին վրա աղվոր ու աժան հույսեր դնելով՝ ոչինչ չենք շահիր:

Ռազմական խաղերը, ռուս պետական հաշիվներն ու ճգտումները, անոնց կառավարական ու կուսակցական նեղսրտութիւննեն ու վախերը միշտ ալ ըլլան պիտի, միշտ ալ նեղեն, սեղմեն ու ճնշեն պիտի մեզի, երբեմն սուր ու ակնհայտնի, երբեմն ծածուկ ու քողարկված, օր մը ավելի մեղմ ու հաշտ, օր մը ավելի անողոք ու դաժան՝ նայելով մայր Ռուսաստանի տափաստաններուն վրա փչող քաղաքական քամիներուն: Օր մը շատ, օր մը քիչ, բայց միշտ հարատև, ինչ ձևի ու ինչ գույնի ալ որ ըլլա կառավարութեան հագած գտակը, վայրագութեան շառլախ կարմիրեն սկսած մինչև մեռելատիպ ճերմակը:

Հայ ժողովուրդի տևական արտահոսութեան առաջն առնելու և, ընդհակառակը, ներհոսանքը նպաստավորելու միակ միջոցը, միակ իրական պայմանը Հայաստանի անկախացումն է և Կովկասի ազգայնացումը: Պետք է Թիֆլիսը դառնա վրական քաղաք, Բագուն՝ ատրպէյճանյան, որ հայերը ուզեն-չուզեն ստիպված ըլլան քաշվելու իրենց մնացած հայ հողին վրա:

Պետք է հայ երկրին մեջ հայ վարչութիւն մը, որ հոգա ու գործադրե բոլոր միջոցները հայ գյուղացիին տնտեսութիւնն ու ապրուստը գոնե այնչափ մը բարելավելու, որ խցվին հայութիւնը դուրս քամող ծակերը: Ոչ մեկ ուրիշ վարչութիւն, ով ալ կուզե ըլլա, այդ հոգը չի ունենար և չի կրնար առնել իր վրա. ամեն բանի մասին կմտածե, բայց հայ տարրը հայ հողեն չբաժնելու մասին չի կրնար մտածեր, որովհետև ատիկա զուտ հայ մտածմունք է, զուտ հայկական պահանջ և միայն հայու գոյութեանը համար կենսական ու հիմնական պայման:

Հետևաբար, ով որ իրոք համոզված է, թե ամենաառաջին պայմանն է ատիկա մեր ժողովուրդի ճգտումներուն իրականացմանը, և ով որ իր սրտին խորքը արդեն խաչ չէ քաշած ամեն հայի

ապագայի ու ամեն հայ ձգտումի վրա, բնական կերպով փարի պիտի անկախութեան դաղափարին. ուրիշ ելք չունի: Գոնե այնքան անկախութիւն մը, որ իրաւունք ունենանք մեր գաղթականութեան առջև բանալու մեր հայրենիքին դռները. գոնե այնքան անկախութիւն մը, որ կարող ըլլանք մեր ժողովուրդի հողային խնդիրը արդար ու բնական լուծման մը ենթարկելու, մեր աշխարհի տնտեսական բարձրացմանը համար մտածել և աշխատիլ կարողանալու, և այս բոլորի հետևանքով գործ, հաց և հրապուրը ստեղծելու նաև մեր մտավորականութեան համար՝ իր աշխարհին մեջ, իր հողին վրա:

Հայ ժողովուրդի թվական կեդրոնացումը հնարավոր է միայն անկախութեան ժամանակ և անկախութեան ձգտելով:

Գ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱՑՈՒՄ

Հայաստանի արդի «կորիզը» տնտեսապես ողորմելի վիճակի մը մեջ է, պրծիլ մտքնկան: Եթե այս աստիճան քայքայման ու թշուառութեան պատճառը վերջին տասնամեակի պատերազմական ու հեղափոխական տակնուվրայութիւնն է, համենայն դեպս մինչև պատերազմ ալ պիտենք, որ Կովկասի հայկական գավառներու տնտեսութիւնը երբեք ալ չէ եղած փայլուն, գոնե բավարար. այլ միշտ խեղճ ու աղքատ տնտեսական ընդհանուր վիճակ մը, և չարքաշ ու ծայրը ծայրին չհկող ապրուստ մը՝ իրրև ընդհանուր պատկեր:

Ինչո՞ւ համար: Չէ՞ որ մեր տարահարթերը առաջնակարգ նպաստաւոր պայմաններ ունին անասնապահութեան համար, կամենատնտեսութեան համար, մեղվաբուծութեան համար. չէ՞ որ մեր աշխարհի հացահատիկը կրնայ իրեն, եթե բոլոր տրամադրելի հողերը օգտագործվին ինչպես պետք է, և եթե ընդարձակ ու հարմար տարածութիւնները տրամադրելի դառնան, որոնք հիմա ինկած են խոպան ու անջրդի. չէ՞ որ մեր երկիրը գովված է իր այգիներով, բանջարանոցներով, ընտիր է իր գինին, իր ոգելից ըմպելիներու համբավը հասած է շատ հեռուներ, և հաջող են եղած իր պտուղները կոնսերվի վերածելու փորձերը. և չեն պակ-

սիր նաև կապիտալին սիրելի բույսերը՝ բամպակ, բրինձ և ծխախոտ: Չէ՞ որ այս բոլորի արտադրությունը հնարավոր է արդյունագործել անմիջապես հենց տեղն ու տեղը թե՛ տեղական պետքերու համար և թե՛ շրջակայքի արտահանության: Նույնն է հարցը և պղինձի, աղի ու քարածուխի վերաբերմամբ. մանավանդ որ գործարանային աշխատանքի համար մեր երկիրը բացառիկ կերպով նպաստավորված վայրերեն է «ճերմակ ածուխի» տեսակետեն: Եվ չէ՞ որ, վերջապես, այդ բոլոր ձեռնարկություններուն համար հարկ եղող դրամագլուխին ու մասնագիտը չէ, որ պակսեր է մեզի. Թիֆլիս, Բագու և ամբողջ Կովկասի մեջ արտադրական, արդյունաբերական ու ֆինանսական բոլոր գործերու ու հաստատություններու մեջ շատ խոշոր տոկոս մըն է կազմած միշտ հայ մասնագետն ու հայ արդյունաբերողը:

Այս ինչուին պատասխանող պատճառները նույնն են ու համապատասխան մեր ժողովուրդի թվական կնճռոնացմանը արգիլք եղող պայմաններուն:

* * *

Նախ՝ ժողովուրդը բավական հող չունի իր ապրուստին համար, որովհետև քաղաքական նկատումներով լավ և ընտիր հողերը կտրվին օտարներուն և պետք է տրվին օտարներուն, ինչքան ալ որ արտաքին երևույթները փոփոխվին: Որովհետև ընդարձակ սարահարթեր կծառայեն ու հատկացված են Կուրի հովիտներեն և ավելի հեռուներեն ամառները իր հոտերը վեր քշող քոչվորներու յայլախին, և զանազան պատճառներով տիրող տարրին ձեռնտու է, որ այդպես մնա: Որովհետև կարևոր և ընտիր տարածություններ կմնան անջրդի, քանի որ ռուս պետության խոշոր հաշիվներուն մեջ լրջորեն տեղ բռնել չի կրնար Արաքսյան պզտիկ դաշտերու ոռոգումով զբաղվիլը: Անիկա նույնիսկ պատրաստ է առանց վարանքի եղած դաշտերն ալ չորցնելու՝ Արաքսի ջուրերով Մուղանի[137] ընդարձակ անապատը ոռոգելու համար, որը արդեն բացառիկ արժեք ունի և բացառիկ շահավետ ձեռնարկ մըն է մեծ պետության մը համար:

* * *

Երկրորդ՝ ժողովուրդն ու երկիրը պետք եղած տնտեսական հոգածությունը չեն ստանար իրենց բազմադիմի կարիքներուն համար: Պետրոգրադն ու Մոսկվան կՀետաքրքրվին մեր պատառ մը «անպետք» հողով էապես միայն իրրև սահման, որուն բոլոր կարևորությունը ռազմական է միայն. ատոր համար ալ միլիառներ կծախսվին Կարսի մը համար, որու ամրություններուն կեան անգամ պաշտպանելու հերիք չէր Հայաստանի Հանրապետության ամբողջ ընդհանուր զորակոչի ենթարկված բանակը, և ուր ամբարված թնդանոթային ռումբերը տասնյակ մը տարի լիովին հերիք էին մեզի, պայմանով, որ չարունակ կռվի մեջ ըլլայինք:

Ատոր համար ալ մեր հողին վրա չինված երկաթուղային գծերը չեն չինված՝ տեղային պետքերն ու պայմանները աչքի առաջ ունենալով կամ տնտեսական վիճակի բարձրացմանը հարմարվելու կամ նպաստավորելու համար: Ասոնք չատ միամիտ ու ծիծաղելի դատողություններ են: Այդ գիծերը չինված են դեպի Թավրիզ ու դեպի Կարին արշավող բանակներու պետքերուն համար և ուրիշ ոչինչ. Թիֆլիսը Թավրիզին կապող երկաթուղային գիծը, որ Երևանի քիլիին տակեն կանցնի, Երևան չի մտներ: Հայ հողերն ու հայ պետքերը ո՛չ միայն Պետրոգրադի ու Մոսկվայի, այլ նույնիսկ Կովկասի կեդրոնական վարչության համար միշտ եղած են խորթ զավակ, չատ անգամ նաև չսիրված ու ատելի:

Այդ Թիֆլիս նստող ռուս կեդրոնական վարչությունը բազմակողմանի պատճառներով իր գլխավոր ուշադրությունը իր անմիջական շրջապատին վրա էր ուղղած, հիմա ալ հոն է ուղղած և միշտ ալ հոն պիտի ըլլա ուղղած. որովհետև բոլոր մյուս պատճառները մեկ կողմ թողած՝ մեծ Ռուսաստանի համար Կովկասի գլխավոր տնտեսական զարկերակը Կուբի և Ռիոնի[158] հովիտներովը կանցնի. և այդ առաջնակարգ կարևորության արտահայտիչն է Բագու-Թիֆլիս-Բաթում երկաթի գիծը, որը ծնունդ է ո՛չ մեծ ռազմական, այլ տնտեսական անհրաժեշտության:

Մեր երկիրը խորթ զավակ է եղած և չսիրված ու ատելի

Նույնիսկ տեղական պաշտոնեութեան համար, տեղական երկրորդական վարչութեան: Հեռուներեն եկող օտար պաշտոնյան, և հաճախ դիտմամբ ամեն տեսակի գույնզգույն ապգութիւններ ընտրված և այդ ապգութիւններու վատհոգի տարրերեն ու տականքեն, միշտ մեկ մտահոգութիւն ունի միայն, որու համար և եկեր է. հարստանալ: Հո՛ն, ուր հարստանալու, կաշառվելու, կողոպտելու նյութ կա և հնարավորութիւն, այդ եկվորներուն համար սիրելի կդառնան և՛ երկիրը, և՛ ժողովուրդը, և մարդիկը կընտնն, ինչ որ իրենց ձեռքեն կուգա և՛ տեղացիին հաշվին համար, և՛ իրենց գրպանին: Իսկ հո՛ն, ուր մեծ բան մը չկա խլելու, մեծ գործեր չկան, որ իրենք ալ «յուղոտվին», այդ օտարականները, որոնց ձեռքն է տեղային վարչութիւնը, կդառնան չար և իրենց սրտնեղութիւնը կհանեն դժբաղդ ժողովուրդեն:

Ասոր մեջն է նաև անոնց մեզի դեմ ունեցած ատելութեան ու արհամարհանքին գլխավոր պատճառներեն մեկը: Եվ ասիկա ընդհանուր երևույթ է ամեն տեղի համար, ուր տիրող ու տիրված կա, միայն Հայի ու ռուսի հարց չէ:

Եվ ահա՛ այս հոգեբանութեամբ օտար մարդը, այսպես դժգոհ ու հակառակ տրամադրված, ի՞նչ խնամք, ի՞նչ հոգածութեան կրնա ունենալ տեղական տնտեսութեան բարձրացմանը համար և կամ ի՞նչ մտածում ժողովուրդի ցավերուն, խեղճութեան ու կարիքներուն հանդեպ: Միծաղելի է նույնիսկ խոսիլը այդ մասին: Ցարեն, Դումաներեն, Դումաներու քուլիսներեն, Լենինեն, Ցեքաներեն ու Ջեքա-ներեն[159] սկսած մինչև Կովկասյան կեդրոնական վարչական խողովակները և մինչև նահանգային ու գավառակային տեղական մարմիններն ու պաշտոնյաները բոլորն ալ վերջ ի վերջո բան մը առնելու, բան մը տանելու, բան մը շահելու մասին կմտածեն, մեկը պետական տեսակետով, մյուսը անձնական:

Եվ եթե պետական ընդհանուր տրամադրութիւններուն կամ հաշիվներուն հետևելով կառնվին որոշ քայլեր տեղական տնտեսութեան այս կամ այն մասը բարելավելու ու կարկտելու նպատակով, այդ բոլորը կկատարվի անհոգի, անկյանք, անհետևողական և ավելի ձևական կերպով, ուրկե իհարկե լուրջ արդյունք

մը առաջանալ չի կրնար: Եվ օգտվողներն ալ սովորաբար կըլլան կա՛մ տեղական օտարները, կա՛մ Հայերուն մեջնն ալ Հանրային տեսակետով ամենեն անպիտան ու անհամակիր տարրը, որովհետև հոս ալ մեծ դեր կխաղան կաշառքն ու կապերը:

* * *

Դրամագլուխը արագ աճիլ սիրող բացիլներեն է, և ուր հնար ու միջոց կա արագ ու դյուրին բազմապատկվելու՝ հոն կդնե իր ուռեցքը: Հայաստանի նման ետ ինկած, ետ քաշված, աղքատ ու չի հոգացվող գավառական անկյուն մը ի՞նչ հրապույր կրնա ներկայացնել արդյունաբերողին և ի՞նչ դրդում առևտրականին ու միջնորդին:

Արհեստանոցները, գործարանները, մեծ ու պզտիկ առևտրական հաստատութիւնները, տեղանավորական տները ուզենչուզեն կվազեն դեպի վարչական ու տնտեսական կեդրոնները և ապրանքներու շարժման հանգույցը եղող կետերը. արդյունաբերութեյան որոշ տեսակներն ալ, որոնք իրենց բնութեյամբ չեն կրնար այդ կեդրոններուն չուրջը խմբվիլ, գոնե կջանան կարելի եղածին չափ մոտիկ մնալ դեպի այդ կեդրոնները երկարող երկաթգծին: Եվ հետևանքը այն կըլլա, որ հայ շնորհքը, հայ աշխատանքը, հայ մտածումը, հայ արհեստն ու արվեստը կհոսին դեպի Կուրի ու Ռիոնի հովիտները, կկեդրոնանան Թիֆլիս, Բագու և Բաթում, ընդհանրապես Վրաստան ու Ատրպեյջան, և կչորցնեն Արաքսի հովիտը: Անոնց հողին վրա կչատնան հայ ձեռնարկութեյունները, հոն տեղի հայերը կհարստանան, կտիրանան հողերու, կալվածներու, չենքերու, ձայն ու ազդեցութեյուն ձեռք կբերեն հոն հանրային գործերուն մեջ, որով և նախանձ ու խոր ատելութեյուն կառաջացնեն վրացիին ու ատրպեյջանցիին հոգիին մեջ հայուն հանդեպ: Այսպես է, որ մեր աշխատանքը, շնորհքը և մտավորական ուժերը կերթան չենցնելու և արդյունագործելու օտարներուն երկիրը, քաղաքները, կծառայեն մեր Հարևաններու տնտեսութեյան բարձրացմանը՝ զրկելով մեր մայր ժողովուրդը, խլելով մեր ժողո-

վուրդին ուժերը և այդ բոլորի փոխարեն աւելութիւն ու թշնամութիւն առաջացնելով մեր ժողովուրդի հասցեին:

Այդպես ալ հայ առևտրականը, փոխադրողն ու միջնորդը ոչ թե հայ բերքն է, որ կարտահանե և դուրսերեն բերած ապրանքն ալ Հայաստանի համար չէ. կծառայե ու կաշխատի Կովկասի համար, Ռուսաստանի համար, Պարսկաստանի համար: Եվ իր դիրքն ու հաջողութիւնն ու հարստութիւնը պարտական է ընդարձակ Ռուսաստանին և ռուսական մեծ ու միահեծան պետութեան, որով և իր հոգիովը կապված է ռուսին ու անոր տիրապետութեանը և բնականեն ու խորունկեն հակառակորդ է ազգայնութեան գաղափարին: Վրաստանի ու Ատրպէյջանի մեջ մնալ կարողանալու և շահիլ կարողանալու համար անհրաժեշտ է, որ ռուսը ըլլա հոն իր բանակներովն ու իր օրենքներովը:

Ինչ զարմանք, երբ վրացին ու թաթարը հայութիւնը իբրև հակառակորդ ու արգելք կնկատեն իրենց անկախութեանը՝ դատելով ամբողջ հայութիւնը իրենց մեջը և իրենց ուսին նստած հայերեն: Իսկ մանր վաճառականն ու խանութպանը իրենց հարպիկութիւնն ու գձձութիւնը կպատուցնեն Կովկասի սահմաններեն ալ անդին, հարավային Ռուսաստանի բոլոր կարևոր կեդրոնները և հարավային գծերու բոլոր կայանները՝ ամեն տեղ ահագին պրոպականտ մղելով հայու անվանը, իբրև խարդախ, «չարչի» ու կողոպտող ժողովուրդ: Ասիկա է մայր հայրենիքին տված անոնց միակ որդիական տուրքը:

Պատկերը կլրանա, եթե այս բոլորի վրա ավելցնենք իր անբավարար հողովը իր ապրուստը հոգալու անկարող գյուղացին, որ կերթա Բագու, Բաթում ու Սև ծովու ռուսական նավահանգիստները «մշակ» դառնալու, այսինքն՝ օրը օրին ապրող և սև աշխատավոր: Եվ տարիներու տաժանելի աշխատանքե ու կյանքե մը ետքը իրեն հետ իր գյուղը կբերե միայն սեռային հիվանդութիւններ, կեղտոտած ու այլանդակված վարք ու բարք և խառնափնթոր դատողութիւններ, իսկ դրամ՝ շատ չնչին:

Ուրիշ խոսքով՝ հայ աշխատող ժողովուրդի բոլոր դասերը երկրեն դուրս կհոսին՝ ուրիշ ժողովուրդներու և ուրիշ երկիրներ տանելով իրենց ուժն ու աշխատանքը, իրենց խելքն ու ստեղծա-

գործունէությունը, առանց որևէ օգուտի Հայ ժողովուրդի համար, Հայ Հողին ու Հայ տնտեսութեանը. ընդհակառակը, ամեն տեղ կա՛մ վարկաբեկելով Հայու անունը և արհամարհանք առաջացնելով, կա՛մ տնտեսական նախանձ ու ատելություն սերմանելով և քաղաքական թշնամություն՝ դեպի Հայ ժողովուրդը:

* * *

Մեր լրագրության մեջ երևցեր են միշտ հոս ու հոն առավել կամ նվազ չնչտով բարի խրատներ, քարոզներ, թե Հայ կապիտալը «պետք է» երթա Հայ գավառները, թե Հայ արդյունագործությունը «պետք է» աշխատի Հայ ժողովուրդի համար, և Հայ ուժերը «պետք է» ջանան Հայ տնտեսությունը բարձրացնելու: Այս սիրուն ու դժբաղդ «պետք է»-ները դեռ ասկե հետքն ալ երևի շատ պիտի կլլկնվին մեր գալիք գաղութային թերթերու այունակներուն մեջ, միշտ ալ առանց Համոզմունքի և առանց Հավատքի, համենայն դեպս առանց Հետևանքի: Որովհետև եթե մեր ինժիներները, գործավարներն ու գործատերերը, կալվածատերերն ու խանութպանները գուտ ու մաքուր կորուստ մըն են մայր Հողին ու ժողովուրդին Համար, Հաճախ չարիք մըն են և անգիտակից թշնամություն մը նույն այդ մայր ժողովուրդի Հասցեին. Համենայն դեպս պարտական ենք չնչտելու, որ այդ կորուստը, չարիքն ու թշնամությունը անոնք կգործեն անկախ իրենց կամքեն: Անոնք ուրիշ կերպ վարվիլ չեն կրնար. տնտեսությունը իր օրենքներն ունի. և սիրուն խրատները լուրջ բան մը փոխել չեն կրնար մեր անբնական պայմաններուն մեջ: Որպեսզի Հայ աշխատանքը Հայ տնտեսության և Հայ երկրին Համար աշխատի, «պետք է» փոխվի այդ անբնականության արմատը, «պետք է» փոխվին մեր ժողովուրդի Հիմնական վիճակը առաջացնող պայմանները:

Ինչքան ժամանակ, որ Կովկասը մեկ մասն է ռուսական տիրապետության, ինչքան ժամանակ, որ Թիֆլիսը կեդրոնն է կովկասյան ռուս վարչության, Բագուն՝ աշխատանքի գլխավոր կեդրոնը ռուս մեծ պետության ձեռքին տակ և Բաթումը՝ գլխավոր դուռը նույն մեծ պետության, և ինչքան ժամանակ որ մեր խեղճ «կորիզը» հոս ինկած ու այլքե ինկած և սրտե ինկած գավառական

խուլ անկյուն մըն է ընդարձակածավալ պետութեան փեշին մեկ ծայրիկը, վերի տնտեսական պայմաններեն ոչինչ փոխվիլ չի կրնար: Այսպես եղեր է շատ բնական կերպով և այսպես պիտի շարունակվի շատ բնական և անխուսափելի կերպով:

Այս պայմաններուն տակն անգամ, անշուշտ, կարելի է առնել թերատ ու արվեստական որոշ քայլեր, որոնք արհամարհելի չեն և պետք է առնվին. բայց ատոր համար անհրաժեշտ է գոնե հոգեբանական խորին փոփոխություն մը. սեփական հայրենիքի ուժեղ զգացում ու գիտակցություն և ուժեղ վճռականություն մը զոհաբերության այդ հայրենի անկյունին համա՛ր ու անկյունին մե՛ջ աշխատելու, որ ուրիշ բառերով ըսել է՝ անկախության ձգտում:

Որպեսզի հայ աշխատանքը կեդրոնանա Հայաստան, հայ աշխատավորները հավաքվին իր ծնող ժողովուրդին ծոցը, որպեսզի մեր բնական ուժերն ու հարստությունները մշակվին ու արդյունագործվին, առևտրականը սկսի իր մագոգի երթևեկը Հայաստանեն ներս ու դուրս, որպեսզի մեր հողին վրա գործարաններ ու աշխատանոցներ բացվին, քսենոփոնյան գյուղերը հողին տակեն վեր բարձրանան, քաղաքներ հասունանան, հողային աշխատանքի նախապատմական ձևերուն նոր դիտությունը օգնության հասնի, հողերը ավելի արդար բաժնվին ու ուռճվին և օգտագործվին, որպեսզի տնտեսական նոր պահանջներ ու նոր ճամբաներ բացվին հայ շնորհքին ու մտքի աշխատավորին առջևը, ամենեն առաջ «պետք է», որ Հայաստանը ըլլա անկախ: Գոնե այնքան անկախ, որ ինքը կարողանա տնօրինել իր հողային հարցերն ու տնտեսական կարիքները, և իր տնտեսական ու վարչական խնդիրներու լուծումը կախված չըլլա Պետրոգրադի ու Մոսկվայի հրահանգներեն և Թիֆլիսի հրամաններեն:

Առանց այս հիմնական «պետք է»-ին՝ բոլոր մյուս «պետք է»-ները դատապարտված են բարի ցանկություններու սահմանեն դուրս չի գալու: Եվ Հայաստանի «վերաշինությունը», որը հնարավոր է միայն հայ տնտեսական ուժերու և հաստատություններու հայ հողի վրա կեդրոնացումովը, պարզ ինքնախաբեություն մըն է և սին խոսք մը կդառնա առանց այդ անկախության:

Դ. ՄՏԱՎՈՐ ԿԵԴՐՈՆԱՑՈՒՄ

I. Մեր մտավոր ուժերու կորուստը

Մեր Հայրենիքի «կորիզը» խեղճ ու կրակ վիճակի մը մեջ է ու կապրի հիվանդ ու զուրկ կյանքով մը, ոչ միայն տնտեսապես, այլ ընդհանրապես և՛ կուլտուրական, և՛ հոգեկան հարստութիւններու տեսակետեն: Իր հողին ու տեղին կնպված մնացեր է նորեն գյուղացի դասը և տեղական մանր աշխատավորը, մինչդեռ ժողովուրդի մտավորականութիւնը, այսինքն" ավելի բարձր մտաւոր ու տնտեսական դիրքերու հասած մասը, որ միևնույն ժամանակ ժողովուրդի ղեկավար դասը կկազմե, ան իր ստվար մեծամասնութիւամբը հեռու կապրի մայրենի միջավայրեն, առավել կամ նվազ չափով կտրված իր ժողովուրդեն:

Ամենեն առաջ հացի խնդիրը. կրթութիւն ստացած մարդը կա՛մ պաշտոնյա է դառնալու, կա՛մ առևտրական-արդյունաբերական գործերու մեջ և կա՛մ ազատ արվեստի աշխատավոր. և ստիպված է երթալու հոն, ուր իր գիտութեյան ու պատրաստութեյանը հարմար գործեր կան ու հաստատութիւններ: Իսկ այդ հաստատութիւնները հոն են, ուր վարչական կեդրոնն է, պետական եռուն կյանք կա, տնտեսական կենդանի գործունեութիւն, և ուր ահագին բազմութիւն կապրի խռնված, և բազմութիւն մը, որ ավելի բարձր քաղաքակրթական կյանք ու բարդ պահանջներ ունի: Տնտեսապես հետնյալ և վարչապես պավառական միջավայրը չի կրնար ապրեցնել իր մտավորականութիւնը. ո՛չ հարկ եղած գործը կա, ո՛չ անհրաժեշտ հաստատութիւնները և ո՛չ ալ խմբված բազմութիւն. մանավանդ երբ այդ մտավորականութիւնը ո՛չ իր որակով, ո՛չ ալ քանակով արդյունքը չէ տեղական համեստ պետքերուն, այլ ծնունդն է մեծ պետութեյան մը մեծ չափերով պահանջներուն:

Հացի խնդրին զույգ կերթա վայելքի խնդիրը: Մեծ քաղաքակրթական կեդրոններու կյանքը տեսած և ապրած մարդու համար շատ պահանջներ կան, ուրկե այլևս հրաժարիլ չի կրնար:

Ապրուստի որոշ հարմարութիւններ, կենցաղի ձևեր, իր նմաններու շրջանակին մէջ ըլլալու ցանկութիւն և ընդհանրապես ընկերութեան մէջ ըլլալու, տեսնվելու, խոսելու, շփվելու պահանջ, ինչպես և թատերական, երաժշտական, գեղարվեստական և այդ կարգի զվարճութիւններու որոնում. ինչ որ մեկ խոսքով կանվանենք քաղաքի մթնոլորտ, մանավանդ մեծ քաղաքի: Մտավորական մարդուն համար այս բոլորեն գրկվիլը շատ է զգալի. և չափազանց մեծ պիտի ըլլա իր ժողովրդական սկզբունքներուն ուժը, որ կամովին հրաժարի այդ բոլորեն՝ գավառական անկյուն մը քաշվելու համար. և ատոնք ալ իհարկե միշտ պիտի կազմեն մատի վրա համրվող բացառութիւն մը:

Հացին ու վայելքին կավելնա սովորաբար կրթութեան խնդիրը, իր տղոցն ու աղջիկներուն ավելի «լուրջ» գիտական ու գեղարվեստական կրթութիւն մը տալու կա՛մ իրական, կա՛մ մոտայական պահանջը, որը իհարկե գոհացնել կարելի չէ Հայաստանի քաղաք կոչվող մեծ գյուղերուն մեջ, ուր ո՛չ բարձրագույն վարժարաններ կան, ո՛չ կոնսերվատուար, ո՛չ ալ մարդավարի ուսուցիչ մը կարելի է ճարել դաշնակի, ջութակի, նկարչութեան կամ երգի:

Եվ ինչքան ժամանակ որ մեր հայրենիքը չունի իր առանձին հայ կառավարութիւնը, վարչական հայ մեքանիզմը, իր քաղաքները, իր սեփական տնտեսութիւնը, իր պետական, դատական, կրթական հայ հաստատութիւնները, մեր մտավորականութեան համար չէ ճարվելու իր հայրենի հողին վրա իրեն անհրաժեշտ եղող գործը, իրեն անհրաժեշտ եղող կյանքն ու ընկերութիւնը: Եվ մեր պատրաստված, կրթված, ձեռնարկող, ընդունակ մարդիկը միշտ պետք է լքեն մայրենի հողը և պետք է երթան աշխատելու ու ծառայելու ուրիշ ժողովուրդներու և ուրիշ աշխարհներու օգտին:

Ինչքան, ինչքան մարդիկ տված ենք ու կուտանք տնտեսական, վարչական, զինվորական, գիտական ու գեղարվեստական բոլոր ճյուղերուն մեջ, աշխարհի բոլոր ասպարեզներուն վրա և՛ ռուսին, և՛ թուրքին, և՛ Պարսկաստանին, և՛ Կովկասին, և՛ ամերիկյան ու եվրոպական այլ երկիրներուն ու պետութիւններուն: Այս բոլորը զուտ կորուստ մըն է, անչափելի խոշոր կորուստ մը

այդ բոլոր չնորհքները ծնող մայր ժողովուրդին համար: Հայութիւնը այսպէսով չռայլորէն կվատնի թէ՛ իր ծնելական ուժերը, թէ՛ ստեղծագործական ու կուլտուրական ուժերը՝ փոխանակ այդ բոլորը խմբել կարողանալու իր ծոցին մէջ և իր կենսունակութեանն ու բարձրացմանը ծառայեցնելու, իր ինքնութեանն ու ինքնուրոյնութեանը:

* * *

Մտավորականութեան՝ մայր երկրին դուրս մղվելուն զուգ կերթա նաև հայ կուլտուրական ամեն տեսակի հիմնարկութիւններու մեր աչխարհին դուրս կյանքի գալը: Մեր լրագիրները կհրատարակվին Հայաստանեն դուրս, մեր տպարանները կբանին Հայաստանեն դուրս, մեր քիչ-շատ կարևոր կրթական հաստատութիւնները կգտնվին Հայաստանեն դուրս, Բարեգործական ընկերութիւնը[161] նստած էր Թիֆլիս, Հրատարակչականը[162] նմանապէս, Կուլտուրական ընկերութիւնը[163] Բագու էր, գրական շարժումը նույնպես կեդրոնացած էր այդ երկու քաղաքներուն մէջ, մանավանդ Թիֆլիս: Հոն են եղեր միշտ մեր թատրոնները, ներկայացումները, Տրամատիկ ընկերութիւնը[164], ինչպես և Հիվանդանոցները, կլուբները, ցուցահանդեսները:

Եվ այդ բոլորեն օգտվողը եղած է բնականաբար Թիֆլիսի ու Բագվի Հայը: Այդ բոլոր հաստատութիւններն ու ընկերութիւնները եղած են գաղութային պտուղ և պիտավորապես գաղութային պետքերու համար: Անշուշտ, այդ ընկերութիւններու և հիմնարկութիւններու աչխատանքին փչրանքները հասած են և «գավառ». քանի մը գիրք, քանի մը մարդ, քանի մը ներկայացում և քանի մը նյութական ու տնտեսական օժանդակութիւն. բայց ատ չի փոխեր մերկ իրականութենեն ոչինչ: Մեր կուլտուրական հաստատութիւններն ու երևույթները կտրված են բուն ժողովուրդեն, առավել կամ նվազ արհեստական են, կիսաօտար և ամեն տեղ ղժալի է կենդանի Հայ չունչին պակասը:

Միակ կուլտուրական խոշոր երևույթը, որ ամենեն ավելի խորը խրված է եղեր մեր Հայրենիքին ու մեր ժողովուրդին ծոցը, Հայ Հեղափոխական կազմակերպութիւնն է, մեր Հ. Հ. Դաշնակ-

ցուԹյունը, այսինքն՝ այն կազմակերպուԹյունը, որուն առաջին ու հիմնական նպատակն է եղեր միշտ, այս կամ այն ճամբով, ձգտիլ հայ ժողովուրդի ինքնուրույնացմանն ու անկախացմանը: Բայց մեր հեղափոխական կազմակերպուԹյուններն անգամ կկրեն իրենց վրա գաղուԹի կնիքը. և շատ հաճախ որոշումներ ու ծանրակշիռ վճիռներ են տրված հեռվեն, գաղուԹի մարդու հոգեբանուԹյամբ, օտար չրջապատի ազդեցուԹյան տակ և դրսեցի գաղափարներով. որովհետև վարիչ կեդրոնները և ղեկավարներեն շատերը անխուսափելի կերպով նստած են եղեր գաղուԹներու մեջ և ավելի դուրսով և օտարով են սնված եղեր, քան ներսով ու հարազատով:

Շարժումն ու զարգացումը մեր երկիրը պիտի մտներ գաղուԹներեն. ասիկա մեր իրականուԹյան ու պատմուԹյան ընԹացքն է: Եվ անտարակույս ավելի գերադասելի է, որ ունենանք գաղուԹային Թերի ու կիսաօտար քաղաքակրԹուԹյուն մը, քան Թե ոչինչ չունենանք: Բայց և այնպես չմոռնանք երբեք, որ գաղուԹային մտավորականուԹյունը և գաղուԹային կուլտուրական հաստատուԹյունները մեր բուն ժողովուրդին համար կորուստ են կրկնակի ձևով. մեկ կողմե մայր հողը կքամվի ու կզրկվի իր ուժերեն. և երկրորդ՝ այդ հողեն կտրված մարդիկն ու հաստատուԹյունները կդառնան կիսահայ, կիսախորԹ, անհյուԹ, անգործնական ու արվեստական:

Այսպես է եղեր մինչև հիմա և այսպես ալ պիտի ըլլա ասկե ետքը, մինչև որ ժողովուրդն ու մտավորականուԹյունը և կուլտուրական հիմնարկուԹյունները հյուսվին իրարու և տաքնան իրարմով միևնույն կյանքին մեջ, միևնույն հողին վրա. իսկ ատիկա հնար է միայն այն ժամանակ, երբ ունենանք մեր սեփական անկյունը, մեր պետուԹյունն ու անկախուԹյունը:

II. Հայ լեզվի թուլացումն ու խորթացումը

Ազգային չարժում, ազգային գոյուԹյուն, ազգային ինքնուԹյուն ըսելով՝ շատերը կկարծեն հարցը կվերաբերի միայն հայ լեզվի, հայ գրականուԹյան և հայ եկեղեցիի պաշտպանուԹյանը. և

կմտածենն, որ մեր եկեղեցին, լեզուն ու գիրքը եթե պահել կարողանանք՝ ասիկա է կարևորը: Վաճառականությունը, արդյունաբերծությունը, պաշտոնն ու աշխատանքը, պետական կազմը, վարչական մեքենան, զինվորական ծառայությունը, կրթությունը, նիստն ու կացը թող ըլյան ռուսական, ի՞նչ վնաս:

Դեռ ավելի լավ. մեծ ու ընդարձակ պետությունը անհամեմատ ավելի լայն հարմարություններ ու հնարավորություններ կուտա անձնական հաջողության, հառաջդիմության ու հարստության և շատ ավելի առատ ու բազմատեսակ աղբյուրներ ունի անհատական վայելքի: Իսկ ռուս պետությունը, ի՛ռք Աստծու, ոչինչ չունի ո՛չ մեր եկեղեցիին դեմ, ո՛չ մեր լեզվին, ո՛չ ալ գրքին. մնջեմեջ, իրավ է, եղած են արգելքներ ու հալածանք նաև այդ սուրբ երրորդության դեմ, բայց անցողակի բաներ են ատոնք, միապետական բռնակալության հետևանք. ռուսը իր ռուսին դեմ երբեմն շատ ավելի խիստ ճնշումներ է գործ դրած. ասկե ետքը Աստուծմով ամեն ինչ կփոխվի:

Այսպես դատողները գիտակից թե անգիտակից կերպով պլտիկցնելու կջանան ռուս պետության հարատև և համառ հալածանքը փոքր ազգությունները լեզվին, գրքին, եկեղեցիին ու կուլտուրական ամեն տեսակի հաստատություններուն դեմ և ապագայի հանդեպ ալ ինքզինքնին կօրորեն շատ վտանգավոր և բոլորովին անհիմն լավատեսությամբ մը: Արդի պոլշևիկյան իմբապետությունը էականին ու գործնականին մեջ բոլորովին նույն ճամբով կերթա նաև այս տեսակետեն հին միապետության հետ, եթե սիրուն ու սուտ բառերն ու արտաքին խաբուսիկ ձևերը մեկդի դնենք: Եվ վաղն ալ, միևնույնն է, գալիք հասարակապետությունը ուրիշ ճամբա չունի երթալու: Բայց վայրկյան մը ենթադրելով, որ այդ անմիջական ճնշումն ու հալածանքը տեղի չէ ունենալու գոնե ասկե ետքի «երջանիկ ապագային» մեջ, դեռ ատով ալ ապահոված չենք ըլլար սակայն վերի երրորդության ո՛չ գոյությունը և ո՛չ ալ մանավանդ զարգացումը:

Բաց թողնելով եկեղեցին, որ քանի կերթա կկորանցնե իր քաղաքական արժեքը և իր հին մղիչ ուժը, կանգ առնենք միայն լեզվի ու գրականության վրա, որոնք անշուշտ որ ազգային միաց-

ման և անկախացման տեսակետեն չափազանց կարևոր և հիմնական գործոններ են, թեև իհարկե ո՛չ միակը: Արդ՝ այդ երկուքն ալ, ինչպես ամեն օրգանական և ընկերային երևույթ, ապրիլու, մնալու և զարգանալ կարողանալու համար պետք ունին որոշ պայմաններու, որոշ սնունդի, որոշ խնամքի: Գարշապարներու տակ տրորելով կամ արմատախիլ փրցնելով չէ միայն, որ անոնք կփճանան: Կխանձին, կթոռմին ու կչորնան անոնք, եթե պակաս է ջուրը, եթե պակաս է օդը, եթե պակաս է լույսը, եթե պակաս է հողը:

Հայ լեզուն այս վայրկյանիս ենթակա է որոշ զարգացման մը, անտարակույս. ունինք արդեն ձև առած գրական լեզու մը, դեռ մեկի տեղ դժբաղդաբար երկուքը, որոնք օր օրի կհարստանան ու կկանոնավորվին: Ծիշդ է. բայց ով քիչ մը հայ է հոգիով և քիչ մըն ալ երևույթներուն խորքը նայիլ գիտե, պարզ է անոր համար, որ մեր արդի գրական ըսված լեզուն, այսինքն՝ դժբաղդաբար լեզուները, մեկը քիչ մը ավելի, մյուսը քիչ մը պակաս, բայց երկուքն ալ ջերմանոցի բույս են, և երկուքի մեջն ալ շատ կտիրե արվեստական տարրը: Արվեստական և՛ իրենց կերտվածքին մեջ, և՛ իրենց գործածութեյան:

Բայց որ ավելի կարևորն է՝ մեր մտավորականութեյան ստվար մեծամասնութեյունը, որ Հայրենիքեն դուրս գաղութներու մեջ կապրի և կմեծնա օտարներու կրթութեյան, գրականութեյան ու շունչին տակ, այդ լեզվով չի խոսիր և ընդհանրապես հայերեն չի խոսիր: Շատ-շատ երբեմն, և ան ալ քիչերը, առտնին ու հասարակ խոսակցութեյան մը միջոցին կգործածեն քառատուն լեզվի կարկատաններով աղճատված անճոռնի բաբելոնյան խառնուրդ մը, որուն «Հայերեն» կըսեն իրենք:

Եվ երբ դուրսը մեր մտավորականութեյունը կլքե կամ կաղճատե մեր գրական-արվեստական լեզուն, ներսը բուն ժողովուրդն ալ օր օրի և շատ արագ կերպով կսկսի խառնել իր լեզվին ուսերենը պետական հաստատութեյուններու, օրենքներու, դատարաններու, դպրոցներու, վարչական մեքենայի, առևտրական, թղթատարական և այլ տնտեսական ու գործնական կյանքի հզոր ճնշումին տակ:

Եվ ինչպես որ դարերու ընթացքին թուրքերու անմիջական ազդեցության տակ պոնված տեղերը հետզհետե մոռցեր ու լքեր էին իրենց հայերենը կամ կիսվակես հյուսեր էին թուրքերենով, հիմա ալ նույնը կկատարվի ռուսերենի հետ, միայն շատ ավելի արագ ընթացքով: Արդեն լեզուն են բառերը՝ արմատը օտար, հոլովն ու խոնարհումը հայ. արմատը հայ, մասնիկն ու բայական կերտոնները ռուս: Բոլոր պաշտոնական, օրինական և ընդհանրապես քաղաքակրթական նորամուտ իրերն՝ ու երևույթները իհարկե ռուսերեն. բայց և շատ ու շատ բառեր, ասույթներ ու ոճեր, որ ինքը ունի և շատ սիրուննը, հետզհետե կթողնե՝ յուրացնելով պետական տիրապետող լեզվի բառերն ու արտահայտության ձևերը: Եվ այս ձևով խոսվածքը ավելի պատվի է, որովհետև մեծավորներու լեզուն է ատիկա. գյուղացին իր շրջապատին մեջ իր դիրքը բարձրացնելու համար կջանա հնար եղածին չափ «ռուսավարի» խոսելու: Եթե ասոր վրա ավելցնենք, որ Կովկասի մեջ մինչև օրս ժողովուրդին բերանը լիքն է թաթար բառերով, ոճերով, երգերով ու կատակներով, իբրև հետևանք դարավոր տիրապետության, կստանանք այն լեզուն, որ հիմա կխոսվի և օր օրի խեղճանալու ու խառնակվելու վրա է: Եվ ուրիշ կերպ ալ չի կրնար ըլլալ, ինչքան ժամանակ որ այդ ժողովուրդը ստրուկ ու հպատակ է ուրիշ ժողովուրդներու:

Լեզուն ալ մաքրվելու, զտվելու, ազնվանալու և բարձրանալու համար պահանջ ունի ազատության: Լեզվի զարգացման, ուժին ու գեղեցկության հիմնական պայմանը առօրյա ու լրիվ գործածությունն է կյանքի բոլոր պայմաններուն ու հաստատություններուն մեջ. մինչև որ բոլոր վարչություններու, զինվորական ծառայության, կրթության, դատարանի, շուկայի և անխտիր բոլոր տնտեսական ու պետական հիմնարկություններուն մեջ հայերեն լեզուն, հայ մարդը և հայու հոգին նստած չըլլան, բժշկությունն չկա հայ լեզվի այդ հյուծախտին, ինչպես որ վերջ ու ծայր չկա հայ ժողովուրդի տառապանքին ու հալածանքին:

Երբ ունենանք մեր անկախությունը, կունենանք և մեր լեզվի իսկական, բնական ու կենդանի զարգացումը իր հողին վրա, իր արմատներեն, իր էության ու իր բնության խորքերեն:

Ժողովուրդի մը գրականության կյանքը միշտ սերտ կապված է անոր լեզվի կյանքին հետ: Մեր գրականությունը ունի նույն ցավը, ինչ որ մեր գրական երկու լեզուները. բուն հայ ժողովուրդի գրականությունը չէ, քանի որ բուն հայ հողին վրա մտավորականություն ու մտավորական կյանք գրեթե չկա:

Մեր ունեցածը գաղութային գրականություն է, աղճատված ու կիսովին օտարացած գաղութային մտավորականության մը ծնունդը. և իր վրա կկրե հավելվածական, երկրորդական, այնպե՛ս, «խաթեր համար» կատարված աշխատանքի մը կնիքը, ո՛չ անհրաժեշտաբար, ո՛չ կյանքի բացարձակ պահանջով, ո՛չ առօրյա պետքե մը ծնած. արդյունք գաղութային հոգեբանության և արտահայտություն գաղութային կյանքի: Ամենեն չատը՝ գաղութային զբաղումներե ազատ վայրկյաններուն հետաղարձ ակնարկ մը դեպի հայրենիքը, խղճի խայթի պես բան մը, հայրենիքին ու մայր ժողովուրդին ալ օգտակար ըլլալու գիտակից կամ անգիտակից ճիգ մը: Թիֆլիսը, որ մեր հայրենիքի դռանն է նստած, իհարկե, ամենեն ավելի նպաստավոր պայմաններու մեջ է եղած և համեմատաբար ավելի կկրե իր մեջը հայ չունչ և հայ իրականություն, բայց միայն համեմատաբար. իսկ մյուս գաղութները ինչքան հեռու մեր հողեն, ավելի օտար, արվեստական ու անհարազատ:

Մեր գիտական գրականությունը արդեն հայության, հայ լեզվի, հայ պատմության ու գրականության մասին քանի մը ուսումնասիրություններե շատ անդին չանցնիր: Կան մեկ-երկու առավել կամ նվազ պատահական թարգմանություններ արդեն շատոնց հինցած գիտական երկերու, այլև մատի վրա համրվող գիտական հետևողություններ կամ ամփոփումներ մեծ մասով դպրոցական գործածության համար և ընդհանրապես բավական խղճուկ ու հինցած բաներ: Բայց միևնույն ժամանակը գիտական բոլոր ճյուղերուն մեջ ունեցած ենք աչքի իյնող ուժեր, ոմանք նույնիսկ անուն հանած: Սակայն ատոնք բոլորն ալ աշխատած են

ու կաշխատին օտար գիտական ու կրթական հաստատութիւններու մէջ և կգրեն ու կխոսին օտարներու լեզուվը. այսինքն՝ մեր ժողովուրդին համեստ ուժերովը կերթան ուսուցչներու հարուստ ու ջրդի ածուները: Եվ ինչքան ժամանակ որ չունենանք մեր Հայ համալսարանները, մեր Հայ բարձրագոյն-մասնագիտական վարժարանները և տեքնիկ ու գիտական հարակից հաստատութիւնները և Հայ պաշտոնեութիւն՝ Հայերեն գիտական երկը պիտի ըլլա զարդ մը, բացառիկ բիբլո մը, հավելվածական-«ազգասիրական» երկրորդական խաղ մը: Մինչև չունենանք մեր անկախութիւնը, մենք չենք ունենալու մեր գիտական գրականութիւնը, այսինքն՝ Հայ մտածումի և Հայ ուսումնասիրութեան Հայերեն արտահայտութիւնը Հայ միջավայրի ու Հայ պետքերու համար:

Այնպես որ բնական կերպով գեղարվեստական գրականութիւնն է, որ ամենեն ավելի տեղ ու դիրք կգրավե մեր գրքերուն մէջ և ամենեն ավելի ալ չեշտ ու զարգացում է ստացած վերջին կես դարու ընթացքին: Բայց մեր գեղեցիկ գրականութիւնն ալ դեռ շատ կկաղա և շատ կտուժե մեր կյանքի ու մտավորականութեան անբնական վիճակեն:

Նախ՝ շատ քիչերն են, որ կգրեն ու կզբաղվին Հայ գրականութեամբ, մինչդեռ խիստ մեծ է թիվը մեր այն մտավորականներուն, որոնք իրենց հոգիին մէջ չարժում ու պետք կզգան արտահայտվելու, և տաղանդը չէ, որ կպակսի իրենց, բայց չեն գրեր ու չեն կրնար գրել, որովհետև տեր չեն Հայերեն լեզվին, շատ է չքոսի իրենց ունեցած պաշարը հոգիին բոլոր նրբութիւններն ու հուզումները, երազներն ու պատկերները արտահայտել կարողանալու համար: Ատոնցմե շատերը կփորձեն օտար լեզուներով գեղելու իրենց հոգին, բայց բան մը երկնելու կհաջողին շատ բացառիկ քիչերը, որովհետև կես-Հայ հոգիով և կես-Հայ լեզվով մարդը բնականորեն կիսատ է նաև իր յուրացուցած օտար լեզվին մէջ, և մանավանդ շատ ավելի դժվար է օտար հոգիին յուրացումը: Օրինակ՝ ռուսերեն լեզվով ստեղծագործել կարողանալու համար ռուս հոգիի արտահայտիչը պետք է դառնալ կարողանաս, թե չէ

քանի մը ընդհանուր նյութերե ու շեշտերն անդին անցնել չես կրնար և քեզի հասկցող չես ունենար:

Երկրորդ՝ հայերեն գրող հեղինակներն ալ ո՛չ իրենց կյանքով, ո՛չ գնահատանքով և ո՛չ նյութական պայմաններով թև առնելու չեն հաջողիր երբեք, չեն հաջողիր իրենց գրական աշխատանքներովը միայն ապրելու, ինչքան ալ տաղանդավոր ըլլան ու թափով, որովհետև շատ սահմանափակ է հայ երկերը կարդացողներուն թիվը: Մեր մտավորականության սակաւ մեծամասնությունը կա՛մ հայերեն չգիտե, կա՛մ ո՛չ ժամանակ ունի և ո՛չ տրամադրություն՝ այդ հայերեն «պարապ բաները» կարդալու. թեև օտար լեզուներով կկարդա սովորաբար անոնց գրականության ամենեն ավելի պարապ ու տափակ երկերը: Իսկ բուն ժողովուրդը իր լայն խաւերով, նույնիսկ մեր գաղութներուն մեջ, դեռ չէ ճաշակած ընթերցանության ո՛չ օգուտը, ո՛չ հաճույքը և ո՛չ մխիթարությունը:

Երրորդ՝ մեր հեղինակները մեծ մասով գաղութային հեղինակներ են և՛ ծագումով, և՛ կյանքով. և իրենց երկերն ալ կդառնան բնականաբար արտահայտությունն ու պատկերացումը գաղութային կյանքի, գաղութային տիպերու և հոգեբանության. և ես կխոսիմ միայն արժեքավորներու ու լավագույններու մասին: Իսկ մեր հեղինակներեն անոնք, որոնք իրենց ծագումովը կամ կյանքովը իրենց ներշնչումն ու ուժը կծծեն մեր ժողովուրդի ավելի խորը, ավելի հարազատ ու ավելի անխառն աղբյուրներեն, անոնք ալ իրենց բոլոր տաղանդին հակառակ կմնան առավել կամ պակաս միակողմանի, որովհետև մեր ժողովուրդի կյանքը ինքն է միակողմանի:

Մինչև ժողովուրդ մը իր լրիվ ու սպառ կյանքովը չապրի, մինչև կյանքը իր բոլոր անիվներովը չի բանի, մինչև գործունեության, ստեղծագործության, կազմակերպության բոլոր բազմազիմի տեսակները չաշխատցնեն ժողովուրդի մը միտքն ու մկանները, մինչև Հպարտության, վստահության ու ինքնապիտակցության դողը չվազե անոր ջիղերուն մեջեն, այդ ժողովուրդի բանաստեղծությունը չի կրնար առնել իր լրիվ թափը, իր լրիվ խորությունը, իր լրիվ թռիչքը:

Անհատի տաղանդը հեղինակին մեջ իհարկե շատ խոշոր դեր ունի և երբեմն կրնա կանխել նույնիսկ դեպքերն ու ժամանակը, բայց վերջ ի վերջո մեկ աշխատավոր մըն է միայն ժողովուրդի մը գրական շենքին կառուցման վրա. իսկ այդ գրական շենքը արդյունքն է սերունդներու խմբական ու տևական աշխատանքին, իրար հենվելով, իրարմե սովրելով և իրար լրացնելով ու կատարելագործելով: Ասոր համար ալ ինչքան որ հեղինակները նույն հողեն ծլին, նույն արմատին վրա, նույն սննդով ու նույն արևով, այնքան լրիվ, ինքնատիպ ու ուժեղ կըլլա շենքի ոճն ու ամբողջականությունը: Ամեն հեղինակ ճառագայթ մըն է ժողովուրդի հոգիեն. եթե այդ հոգին կեդրոնացած է նույն կյանքին, նույն նպատակներուն ու նույն աշխատանքին շուրջը, այդ հոգիին ճառագայթները կուգան ու կխառնան գրական ֆոքուսի մը մեջ՝ ստանալով ուժ մը, որ մետաղները կհալե: Մեզի տաղանդները չէ, որ կպակսին, մեզի կպակսի տաղանդներու խմբումը, մեզի կպակսի գրական միջավայրը և գրականության շրջանակը, մեզի կպակսի, ինչպես և կյանքին մեջ, հորիզոններու ընդհանրություն: Մեր տաղանդներուն ճառագայթները կցրվին տարբեր ու հեռավոր տարածություններու մեջ, մեր գրականությունը ֆոքուս չունի. մեր գրականության պակսողը կեդրոնացումն է:

Եվ այդ կեդրոնացումը հայ գրականությունը չէ ունենալու, մինչև որ մենք չունենանք մեր ժողովուրդի կեդրոնացումը, մեր տնտեսական կեդրոնացումը, այսինքն՝ մինչև որ չունենանք մեր անկախությունը: Այո՛, գեղարվեստն ալ իր բնական կյանքին և իր բնական զարգացմանը համար պետականություն կպահանջե, ամբողջականություն:

Ե. ԿԱՄՔԻ ԿԵԴՐՈՆԱԳՈՒՄ

I. Մեր կյանքի ու շրջապատի պահանջը

Թե՛ մեր թվական աճումի ու արժեքավորմանը համար, թե՛ մեր Հայրենիքի տնտեսական վերաշինութեան ու բարգավաճմանը համար և թե՛ մեր հոգեկան, մտավորական ու քաղաքակրթական բարձրացմանը համար, այսինքն՝ ազգովին ապրելու հնարավորութեան ունենալու համար, հայ ժողովուրդին անհրաժեշտ է պետական անկախութեան: Առանց այդ անկախութեան շուտով կգըվի դեռ իր հողին վրա մնացած վերջին մեկ միլիոն Հայութեան Կովկասի, Հյուսիսային Կովկասի և Անդրկասպյան երկիրներուն վրա, և մենք կդառնանք վերջնապես անհող ու անհայրենիք ժողովուրդ մը, հետզհետե կխավարի ազգային ինքնութեան պետքն ու անհրաժեշտութեանը հայ հոգիներուն մեջ և մեր գաղութային ցրիվ հատվածներն ու բեկորները պահելու ուժը, հույսը և իմաստը: Անկախութեանը հայուն համար կյանքի դրած բացարձակ պահանջն է և անկախութեան ձգտումը՝ մեր գոյութեան հիմքը, մեր լինել-չլինելու հարցը:

Անկախութեան հասնելու անհրաժեշտութեանը ոչ միայն մեր սեփական վիճակի ստիպողական պահանջն է, այլև միևնույն ժամանակ անխուսափելի հարկադրութեան է մեր միջավայրի, մեր շրջապատի ու ժամանակի, որոնց կոչին անկարելի է ականջ չդնելը:

Ինչպես տեսանք, կովկասյան մեր դրացի ժողովուրդները նույնպես կձգտին անդիմադրելի կերպով իրենց անկախութեան և մեզմե ավելի շեշտված կերպով և մեզմե ավելի փութկոտ, որով-հետև մեզմե ավելի կեդրոնացած են ու խիտ բնակչութեամբ և կրնան հենվիլ Թուրքիայի վրա: Բայց իրենց նպատակին հասնելու ամենագլխավոր պայմաններեն մեկը մեր բռնելիք դիրքն է. եթե իրենց հետ ու իրենց նման չի քալենք՝ կդառնանք չափազանց խոշոր արգելք մը անոնց համար:

Մենք ոչ միայն մեր, այլև անոնց կենսական շահերուն կհար-

վածենք մեր անշարժութիւնը, այսինքն՝ ավելի ճիշդ բառով՝ մեր հակառակութիւնը, որովհետև կամքերու ու կրքերու այդ բախումին մեջ անկարելի է անշարժ, «խոհեմ» ու անմասնակից մնալը:

Եվ շատ իրավացի և շատ բնական կերպով պիտի նկատվինք մեր դրացիներուն կողմե իբրև ռուսի կողմնակից և Թշնամի իրենց գոյութեան ու ձգտումներուն: Եվ անոնք իրենց նպատակին հասնիլ կարողանալու համար նախ պիտի ձգտին տրորելու ու անպետքացնելու իրենց մեջի, իրենց կողքի և իրենց թիկունքի Թշնամին: Եվ ամեն պարտութեան ու անհաջողութեան պատճառը մեզ պիտի համարեն և մեզմե պիտի հանեն իրենց վրեժն ու ատելութիւնը. ուժեղներու դեմ լեցված ոխն ու ատելութիւնը կթափվի միշտ փոքրերու ու անպաշտպաններու գլխուն, հին օրենք է: Պիտի ընեն, ինչ որ իրենց ձեռքեն գա, պետք է խեղդեն մեզի և՛ բարոյապես, և՛ տնտեսապես, և՛ ֆիզիքապես:

Եվ մենք, որ մեր իմաստուններու խորհուրդովը կռիվն խուսափելու, հանգիստ մնալու, հարստանալու և «բարգավաճելու» համար հրաժարիլ կուզենք մեր անկախութեան ձգտումեն, պիտի ստիպվինք չարունակ կռվելու, տուժելու և ցրվելու ճիշդ անոր համար, եթե տառապիլ, հալածվիլ ու պայքարիլ չուզենանք, պետք է ստիպվինք տառապելու, հալածվելու, փախչելու ու ջարդվելու ուսանեներու տիրապետութեանը գործիք ծառայելու համար. և հենց ռուսները իրենք պիտի սարքեն նորեն հայ-թաթարական ու հայ-վրացական կռվըշտուքն ու ջարդերը:

Եվ մեր այս ստորնութեան, չարչարանքին ու ծառայութեանը փոխարեն չենք ալ կրնար ակնկալել ռուսներեն անոնց հարգանքն ու բարեկամութիւնը: Քաղաքական կյանքի մեջ, ինչպես և անհատական կյանքի մեջ, հարգանքն ու բարեկամութիւնը ձեռք կբերվի, երբ արժեք մը ունիս և արժանապատվութիւն: Ռուսը մեզի իր հլու գործիքը դարձնելեն և մեզի չարունակ մեր դրացիներուն հետ կռվեցնելեն ետքը՝ հաշվեհարդարութեան վայրկյաններուն, միշտ պիտի պահե թաթարին ու վրացիին կողմը, որովհետև վիրն ու թաթարը հենց իրենց դիմադրութեամբն ու պահանջումներովը պիտի ներկայացնեն որոշ ուժ մը, որ ռուսը ստիպ-

ված է հաշվի առնելու իր որոշումները տալու ժամանակ: Իսկ իր սեփական կամքեն հրաժարած և իր պաշտպանութիւնը ամբողջապես ռուսի գենքին ու բաղդին կապած «բարեկամ», այսինքն՝ ողորմելի հայութեան վրա ի՞նչ կարիք ունի անիկա չատ գլուխ հոգնեցնելու:

Եվ մենք բնավ իրավունք ալ չունինք ռուսը մեղադրելու. անիկա իր հաշիվներն ունի: Մենք միայն կրնանք մեղադրել մեզի, որ չունինք մեր հաշիվները, կամ որ ունինք, միայն սխալ հաշիվներ և անձնատուութեան ու զինաթափութեան ապուշ ու հանցավոր քարոզներ:

Նույնիսկ անոնք, որ ամեն հանրային ձգտում ու գործունեութիւն կարհամարհեն և իրենց անձնական-ընտանեկան բարեկեցութենեն ու հարմարութենեն անդին չատ քիչ կմտածեն. և ատոր համար ալ պինդ կկախվին ռուսին փեշեն, Վրաստանի ու Ատրպէյջանի մեջ նորեն ազատ ու ապահով ղրամ վաստկիլ կարողանալու հույսով, ատոնք ալ վերջապես պիտի համոզվին խոժոռ իրականութեան առջև, որ այդ փեշը այլևս չէ տալու իրենց այն հին առավելութիւնները, որ հիմա ալ դեռ կերազեն: Անցածը շրջան մըն էր, անցավ. ասկե ետքը Կովկասը ամբողջովին նստած պիտի ըլլա ազգային ցնցումներու հրաբուխին բերանը. քանի մը տարին անգամ մը այդ քաղաքական գետնաշարժը ցնցե պիտի Կովկասի այս ու այն մասը՝ քանդելով շենքերը, հրկիզելով խանութները, կողոպտելով մթերանոցները, հափշտակելով «օտարներու», այդ «գիշատիչներու», «տզրուկներու» դիզած հարստութիւնը, «ազգայնացնելով» այդ «ցեցերու» ու «ներքին թշնամիներու» ինչքն ու ստացվածքը, բանտարկելով, սպանելով, վռնտելով ու ջարդելով: Եվ մեր թշվառ հայերը իրենց բոլոր գործերը, ծրագիրները և ունեցածը թողած իրենց ետևը՝ բռնեն պիտի իրենց երեխաներուն ու կանանց ձեռքեն քաղաքե քաղաք, անկյունե անկյուն փախչելու համար, գոնե իրենց գլուխը ազատելու:

Եվ ասիկա կրկնվի պիտի պարբերաբար անխուսափելի կերպով, որովհետև ամեն նոր եկող սերունդ ձգտի պիտի իրականացնելու ազգային երազը ամեն պատեհ առիթեն օգտվելով. որովհետև եթե մեր վսեմաշուք պարոնները այդքան դյուրութիւամբ

կրնան հրաժարիլ իրենց հայրենիքեն ալ, իրենց անկախութենեն ալ, դուցե և իրենց հայութենեն ալ, այդպես չեն մտածեր և այդպես չեն զգար մեր հարևաններն ու համչիրակները[165]. անոնք ամեն գնով հասնիլ կուզեն իրենց անկախությանը, և այդ ցնցումները վերջ չեն գտնելու, մինչև չհասնին իրենց նպատակին:

Պետք է հասկնանք, որ ժամանակները կքալեն: Մարդկութիյունը հիմա հասած է հոն, ուր ամեն ազգ իր տերը պիտի դառնա. եթե դառնալ չի կրցավ՝ պետք է ոչնչանա: Ազգային զգացումն ու ամբողջութիյան գիտակցութիյունը քանի կերթա կուժեղնա ժողովուրդներուն մեջ, և հետզհետե «Հպատակ» ըսված ազգութիյունը կդառնա անհանդուրժելի երևույթ մը թե՛ տիրողներուն համար, թե՛ տիրվածներուն:

Ով իր սրտին խորքը վերջնականապես չէ հրաժարած և՛ իր հայրենիքեն, և՛ իր ազգային գոյութենեն ու ինքնութենեն, և՛ հայութենեն, պետք է պարզ ու հստակ կերպով ըմբռնե, թե օգուտ չկա մեզի ուրիշներեն, հանգիստ ալ չկա մեզի ուրիշներեն: Եթե ազգովին ապրիլ, տևել ու զարգանալ կուզենք՝ միակ ելքը անկախութիյունն է. ուրիշ ճամբա չկա:

Արդյոք ուժերնիս պիտի բավե՞, հասնի՞նք պիտի մեր ձգտումին, ատիկա ցույց պիտի տա կյանքը և պատմութիյունը. բայց ատիկա է մեր բռնելիք միակ ու անխուսափելի ճամբան. և ատոր համար ալ մեր բոլոր շարժումներուն, մտածումներուն, ծրագիրներուն, ձեռնարկներուն, պրոպականտին ու քաղաքականութիյան հիմքն ու առանցքը է և պե՛տք է ըլլա ձգտիլը անկախութիյան:

II. Ամեն շեղում անիմաստ

Բոլոր ուժով և բոլոր միջոցներով ձգտիլ անկախութիյան չի նշանակեր, իհարկե, ռումբն ու հրացանը առնել և երթալ իսկույն ռուսներուն դեմը կռվի, ինչպես հասկնալ կկեղծեն մեր հակառակորդները: Մեր օրը օրին ընելիքը, մեր ամեն օրվան բռնելիք դիրքը, այսինքն՝ մեր օրվան քաղաքականութիյունը միայն մեր կամքեն կախված չէ, այլ մեր շրջապատի ու վայրկյանի իրական պայմաններեն, ուժերու դասավորութենեն, ռուսներու և մեր փոքր

դրացիներու բռնած դիրքեն և մեր ունեցած ֆիզիքական ու հոգեկան ուժերու չափեն: Գալու են ծանր վայրկյաններ, ուր խոնարհիլ ու լռել պիտի ստիպեն մեզի մեր տերերը, գալու են օրեր բողոքի ու պահանջի, կլավորական դիմադրութեյան կամ ներգործական չարժումներու, և՛ զենքի, և՛ արյան, մինչև որ կտոր-կտոր փրցնենք մեր իրավունքները և հասնինք մեր անկախութեյան:

Անշուշտ, ցանկալի է, շատ ցանկալի, որ ինչքան հնար է կարճ տևեն այդ մաքառումները, ինչքան հնար է ծայրահեղ ընդհարումներու չհասնինք, ինչքան հնար է զենք ու արյուն քիչ խաղա մեր ու ռուսներուն միջև: Ոչ անոր համար, որ «երախտագիտութեյան» զգացումը պիտի կասեցնե մեզի ռուսի բերած «բարիքներուն» հանդեպ: Կասկած չկա, որ ռուսներու Կովկաս գալը շատ մը բարիք բերավ հայուն, բայց ինչ որ երբեմն բարիք էր, հետզհետե կդառնա չարիք այս անցավոր ու փոփոխական աշխարհիս մեջ. այլևս ինչ բարիքի մասին կրնա խոսք ըլլալ, երբ մեր ազգային գոյութեյան և ինքնուրութեյան հիմքը կքանդեն: Մենք պետք է չանանք ռուսներուն հետ հնար եղածին չափ մեղմ ճամբաներով քալելու, կարելի եղածին չափ քիչ ճակատ-ճակատի գալու այն պարզ պատճառով, որ շատ են ուժեղ և մենք շատ տկար: Եվ երկրորդ՝ ինչպես ալ որ պատմութեյունը դառնա, անիկա միշտ մնալու է մեր խոշոր դրացին և ամենեն ավելի «եվրոպացի» դրացին, որը բազմադիմի ձևերով ազդելու է մեր ներքին ու արտաքին պայմաններուն վրա, մեր բաղդին վրա, մանավանդ որ իր էութեյան ու ստեղծագործութեյան որոշ գծերը մոտիկ ու սիրելի են մեզի:

Ինչքան չիտակ, բաց ու անկեղծ ըլլան մեր հարաբերութեյունները և մեր պահանջը և մեր դիմադրութեյունը ռուսներուն հանդեպ, այնքան օգուտ է մեզի: Ամեն տեսակի կարճաշապիկ պոլիտիկոսութեյուններ, կեղծ ու ստրկամիտ համակերպութեյուններ և «իբրև թե» հրաժարումներ մեր իրավունքներեն ու անկախութեյան ձգտումեն, ինչպես կառաջարկեն մեր նշանավոր ալաթուրքա քաղաքագետները, միայն արհամարհանք կառաջացնեն իսկական ռուս մարդու հոգիին մեջ և ավելի կդառնացնեն մեր փոխադարձ հարաբերութեյունները՝ դարձնելով մեզի անոնց աչքին նենգամիտ, դավադիր ու խարդախ: Միևնույն ժամանակ՝ կաղա-

վաղին մեր հարաբերությունները մեր անմիջական դրացիներուն հետ՝ ներկայացնելով մեզի երկերեսանի, անվստահելի ու պոչխաղցնող: Մինչդեռ մենք ո՛չ մեկ պատճառ չունինք մեր նպատակն ու ձգտումը կեղծելու ու ծածկելու. չէ՞ որ մեր մարդկային ամենատարրական իրավունքն է, որ կպահանջենք, և մեզի հետ է ամեն լավ մարդու ներքին խորին համակրանքը, նույնիսկ ռուսի, որու շահուն առայժմ դեռ հակառակ է ատիկա:

Եվ վերջապես ինչպե՞ս կծածկես և ինչպե՞ս կկեղծես ձգտում մը, որ ուզենք-չուզենք ըլլալու է մեր բոլոր քայլերուն ու չարժումներուն ղեկավարող զսպանակը: Եվ ո՞վ կհավատա ձեր հրաժարիմներուն, ձեր երկրպագուբյուններուն ու քծնանքին: Անոնք՝ այդ օտարները, այդ տիրողները, մեր պոլիտիկաններեն չատ ավելի խորը կտեսնեն. և գիտեն, որ զարթնած և ընդունակ ժողովուրդ մը իր կամքովը հրաժարիլ չի կրնար ո՛չ իր իրավունքներեն, ո՛չ իր անկախութենեն, և որ «փոքրիկները» կխոնարհին միայն անկարելիության առաջ և ակռաները խածած:

Եվ մեր իմաստուններուն մեղայական հրաժարիմները, համակերպության ցուցադրումները կամ սուտ քարոզները ոչ թե օտարները կխաբեն ու կքնացնեն, այլ կթմրեցնեն միայն մեր մեջի խախուտ հոգիները, իրենց պարտավորութենեն փախչելու համար պատրվակ փնտրողները, ինչպես և կչվարեցնեն մեր աղճատված ու խաթարված գաղութային հոգեբանությունը, օտար ազդեցություններու տակ մեծցող մեր երիտասարդությունը. այսինքն՝ կջլատեն միայն մեր սեփական ուժերը: Եվ այդ տեսակետեն է, որ մեր պոլշևիկներն ու ռամկավարները սիրելի են Մոսկվայի վարիչներուն, իբրև ազգային ուժի, կամքի ու կերպարանքի քայքայիչ տարր, իբրև կովկասյան ժողովուրդներու ձգտումներուն մեջը բաժանում մտցնող կարևոր տարր: Սիրելի և արհամարհված միևնույն ժամանակ:

Կրնա ըլլալ, մինչև անգամ հավանական է, որ ինչպես մեր հարևանները, այնպես ալ մենք դեռ բավական ատեն չունենանք մեր անկախությունը: Կրնա ըլլալ, որ դեռ առավել կամ նվազ երկար ժամանակ մը կովկասյան երկիրները և անկե ալ անդին գտնվին ուղղակի ռուսի տիրապետության և հրամանին տակը:

Կրնա ըլլալ, որ նույնիսկ որոշ ժամանակի մը համար ձեռնտու ըլլա մեզի իրերու այդ դրությունը, իբրև չարիքները փոքրագույնը. կրնա ըլլալ և հավանական է: Բայց նույնիսկ այդ մեզի ձեռնտու եղած միջոցին մեր ժողովուրդը պետք չունի հրաժարվելու իր անկախության գաղափարեն ու պահանջեն, ոչ իսկ «ժամանակավոր» կերպով: Եվ հանուն ի՞նչ բանի:

«Խոհեմ ըլլանք, եղբա՛յր, մտնենք ռուսին աչքը, պինդ բռնենք իր փեչեն, որ ռուսը մնա Կովկաս, գոնե առայժմ. թե չէ, ա՛յ, թուրքը կեցած է մեր դռանը»,- այս է հիմնական մտածմունքը. այսինքն" դարավոր մղձավանջը թուրքը:

Աղե՛կ, բայց այսպես մտածողները կմոռնան շատ կարևոր կետ մը, որ մեր ռուսին աչքը մտնելը կամ չմտնելը, ինչպես և մեր ուզեմ-չուզեմը չափազանց չնչին խնդիր մըն է ռուսին համար, մանավանդ արդի պարագաներուն մեջ, և ո՛չ մեկ լուրջ ազդեցություն չի կրնար ունենալ կատարվելիք դեպքերու ընթացքին վրա: Տղայական քաղաքագիտություն մըն է կարծիքը, թե մեր հրաժարիմները, «հավատարմությունը» և «բարեկամությունը» կրնան լուրջ դեր մը խաղալ, որ ռուսները Կովկաս դան կամ Կովկաս մնան կամ Թուրքիայի դեմ պատերազմ հրատարակեն կամ վտանգի պահուն պինդ կենան ու պաշտպանեն մեզի:

Ո՛չ: Պոլշևիկները եկան Կովկաս ո՛չ միայն հայերու, այլև Ատրպեյջանի ու Վրաստանի ցանկության ու ջանքերուն հակառակ. անոնք հիմա ալ փառավոր նստած են Կովկասի մեջ, առանց մեր քեֆը հարցնելու, թեև իհարկե ամեն առիթով կշահագործեն մեր ժողովուրդներուն անունը: Եվ եթե վաղը արևմտյան ճակատի բարդությունները կամ ռուսական ներքին պայմանները ստիպեն ետ քաշվելու Կովկասեն «առժամապես», անոնք կելլեն ու կերթան նորեն, առանց մեր քեֆը հարցնելու և առանց որևէ կարևորություն տալու մեր բոլոր հրաժարիմներուն ու անձնուրացության: Անոնք օր մը անգամ ավելի չեն մնար մեր սահմաններուն վրա իրենց «աչքը մտած» հայերուն կոտորածն ու ցրվումը արգիլելու և մեր աշխարհի ավերման առաջը առնելու համար, ինչքան ալ որ պինդ կախված ըլլան մեր պարոն ռամկավարները անոնց փեչեն և եթե նույնիսկ ուրացած ըլլան իրենց և՛ հավատքը, և՛ ազգը, ո՛չ

միայն անկախութիւնը: Իսկ, ընդհակառակը, եթե ռուսներու ուժին ու հաշվին մեջը կա Թուրքիայի հետ ընդհարում մը, անոնք առաջ կերթան, կզարնեն ու կդրավեն նոր մասեր Թուրքիայի հայկական հողերեն և կընեն այդ բոլորը առանց մեր կողմեն մասնավոր ջանքի, դրդումի կամ իրարանցումի. թեև իհարկե, եթե պետք եղավ, կշահագործեն և՛ մեր անունը, և՛ մեզի: Իսկ մեր մասնակցութեան համար, հոժար ու կամավոր թե ակամա ու բռնի, միևնույն է, անոնք չնորհակալութեան հայտնելու չեն մեզի ո՛չ կռիվներու միջոցին և ո՛չ ալ մանավանդ վերջը: Ընդհակառակը, մեր աշխատանքին ու զոհաբերութեան բերած բաժինը պետք է ուրանան, պետք է լռեն, դեպքերը դիտմամբ պետք է աղավաղեն, որպեսզի հայկական հարցի հեռավոր սովերն անգամ չերեւա այդ նոր գրավված հողերուն վրա, եթե հնար է:

Այնպես որ մեր անկախութենեն «գոնե առայժմ» հրաժարելու քարոզները, ձեռնթափ ըլլալու հայտարարութիւնները, հպատակութեան ցույցերը, համակերպութեան ու հավատարմութեան շողոքորթութիւնները, առնվազն, ոչ մեկ բանի չեն ծառայեր, եթե ռուս-թրքական ընդհարում մը տեղի չունենա կամ եթե տեղի ունենա ռուսական հաջողութեամբ: Իսկ եթե տեղի ունենա այդ ընդհարումը և դառնա թուրքերու օգտին և վերջանա ռուսներու նահանջով, մեր իմաստուն քաղաքականութիւնը մեզի ո՛չ միայն բարիք մը չի բերեր, այլ կբերե հավելվածական խոշոր չարիք մը՝ թուրքերու գազանութեանը նոր պատրվակ ու նոր անունդ մատակարարելով[166]*:*

III. Ամեն վարանում վնասակար

Ռուսներու հանդեպ մեր անկախութեան պահանջեն ձեռք վերցնելու ձևեր առնելը ռուս-թրքական ընդհարումներու տեսակետեն առնվազն ոչ մեկ օգուտ չի բերեր մեզի. իսկ բոլոր մյուս տեսակետներեն զուտ վնաս է ու անկարելիութիւն:

Ամենեն առաջ՝ հայութեան անունով կատարված և անկախութենե հրաժարված ըլլալու կամավոր հայտարարութիւն մը

կնշանակե մինչև հիմա եղած ու անցած դեպքերուն վրայինն սպունգ քսել և ազատել եվրոպական ժողովուրդներն ու կառավարութիւնները իրենց հանձնառութիւններեն ու խոստումներեն:

Իհարկե, շատ գոհ կմնան թուրքերն ու ռուսները մեր այդ թեթևամիտ սիրալիրութեան համար. որովհետև անոնք մեզմե շատ ավելի աղեկ կհասկնան, թե ինչքան կուզեն վերացական ու անիրական ըլլան մեր ձեռք բերած այդ համակրանքն ու իրավունքները այսօր, ատոնք բարոյական մեծ ուժ մըն են սակայն և ծանր պիտի կշռեն վաղը մեր պահանջներու նժարին վրա:

Այնքան-այնքան կռվողներու և նահատակներու կյանքի ու արյան գնովը ստացված այդ մուրհակները մենք իրավունք չունինք պատռելու, անոնք միայն մեր այս սերունդի սեփականութիւնը չեն:

Երկրորդ՝ մենք չենք կրնար դադրիլ մեր անկախութեան պահանջեն, ոչ իսկ առ երեսս կամ ժամանակավոր կերպով, որովհետև միայն այդ հողին վրա կարող ենք համաձայնութեան լծուլ գոնել մեր կովկասյան երկրացիներուն հետ, միայն այդ հողին վրա կարող ենք ընդհանուր գործակցութիւն և զուգակից աշխատանք կատարել՝ հասնելու համար մեր ձգտումին. համենայն դեպս այդ հողին վրա է միայն, որ կրնանք նվազեցնել, գուցե և առաջն առնել մեզի իրարու հետ կռվեցնելու պրովոկասիոններուն ու ջանքերուն: Կովկասի մեջ քիչ-շատ տանելի կյանք մը ստեղծելու համար անհրաժեշտ է, որ երեք ազգութիւններս կամաց-կամաց վարժվինք իրարու կենսական պահանջները ճանչնալու, հարգելու և ձգտելու ընդհանուր համաձայնութեան մը: Եվ վայն եկեր է մեր ազգութեան, եթե իրավ որ ռուսներու տիրապետութեան փեշերուն տակը միայն հնարավոր պիտի ըլլա թոքախտավոր գոյութիւն մը մեր ժողովուրդին, ինչպես կկրկնեն մեր հուսահատները:

Երրորդ՝ մենք հրաժարիլ չենք կրնար մեր անկախութենեն, ինչքան ալ ուժեղ ու հաղթական ըլլա Ռուսաստանը: Ընդհակառակը, անոր ուժն ու մեծութիւնը կրկնակի պահանջ կդնե մեր վրա կրկնակի թափով ձգտելու: Խոշոր տիրապետութեան մը քայքայիչ ու ճուլող ու ցրվող ուժին դեմ մեր ազգային ինքնութիւնը կերպ մը պահել կարողանալու համար մեր ժողովուրդեն, մեր

մտավորականութենեն և տնտեսական բոլոր դասերեն պիտի պահանջվի արտակարգ ջանքեր՝ կիսահեղափոխական, կիսարվեստական ծուռ ու չիտակ բոլոր միջոցներով հասնելու թվական, տնտեսական ու մտավորական կեդրոնացման մը՝ մեր հողին վրա: Իսկ ասիկա հնարավոր է միայն այն ժամանակ, երբ ուժեղ ազգային դիտակցություն և ուժեղ ազգային կամք կա մեջտեղը, որ ուրիշ բառերով ըսել է անկախության լարված ձգտում: Որովհետև այդ բոլոր կեդրոնացումները իմաստ ունին միայն իր ազատությանը ձգտող ժողովուրդի մը համար. և իր հանգիստը և ուրիշին փնչերը փնտրող ժողովուրդ մը երբեք հանձն չի առներ այդ կարգի «խելառություններ» ու անձնազոհություններ:

Ասո՛ր համար է, որ անկախության ձգտումը միակ իրական ու հատու գենքն է ժողովուրդի մը ինքնապաշտպանության համար ուրիշներու լծին տակ: Եվ ձեռնթափության ու համակերպության քարոզները, նույնիսկ իբրև թե «երեսանց» կամ «առժամապես» հանձնարարվածները, կտանին չիփ-չիտակ մեկ հետևանքի մը. կչփոթեն ու կաղոտեն ազգային զգացումը և հրապարակ կկանչեն անտարբերությունը, եսապաշտությունը և թուլամորթությունը, այսինքն՝ կմարեն ժողովուրդի մը դիմադրության ու ինքնապաշտպանության ուժը:

Եվ չորրորդ՝ ի՞նչ ըսել է «առժամապես»: Առժամյա կերպով կարելի է չարժումներ չընել, կարելի է կանգ առնել, կարելի է ետ-ետ քաշվիլ ու նահանջել, կարելի է չրթունքները խածնել ու լռել, կարելի է «գետնին տակը» մտնել, այս բոլորը բնականոն ընթացքն է ամեն մաքառման ու ամեն պատերազմի, մանավանդ ամեն երկարատև պայքարներու ու պատերազմներու: Բայց ասիկա ըսել չէ, թե ձեռնթափ են եղած պատերազմելե կամ հրաժարված են դիմադրութենե. խրամատներուն մեջ ամիսներով անգործ նստած զինվորը պատերազմի վրա է, տարիներով կյանքի նշույլ ցույց չի տվող հեղափոխական կազմակերպությունը կռվի վրա է: Եվ այդպես ալ գիտեն և այդպես ալ կզգան ամենքը, և ատոր համար ալ կհալածեն:

Առժամապես մեր անկախութենեն հրաժարիլ հանձնարարող պարոնները կմոռնան նաև մեկ ուրիշ կարևոր բան. կմոռնան, որ

Հանրային զգացումները, ազգային ձգտումները, մտավորականության մը ղեկավար ըմբռնումները և ընդհանրապես ժողովուրդներու հոգին մոմ չէ, որ ուզած ժամանակդ հանգցնես, ուզած ժամանակդ վառես, երբ այն նշանավոր վայրկյանը հասած ըլլա: Անգամ մը մարելեն ետքը նորեն վառելը շատ է հարցական. ինչպես և շատ է դժվար հանգցնելը, երբ անգամ մը վառված է: Կմարի այսինչ կամ այնինչ մարդու հոգին, ուր խեղճ ու քիչ է եղած վառելանյութը, բայց կվառին ու կբռնկին մյուսները, թարմերը, նորերը և հարուստները վառելանյութով:

Եվ ատոր համար է, որ կյանքը կերթա դեպի աջ իր ճամբով, իսկ զինաթափության, համակերպության և հրաժարման քարոզները՝ դեպի ձախ իրենց գալարուն և «իմաստուն» ուղիներով: Եվ մեկը մյուսի հետ գործ չունի, որովհետև ժամանակներուն պահանջը և ժողովուրդներու մարդավայել ու ազգավայել ապրելու բնազդը շատ ավելի զորեղ է ու իմաստուն, քան բոլոր կաղկիկ սիլլոկիզմներն[167] ու միշտ մեկ կողմը ծակ «տրամաբանությունը»:

Կա վերջապես ուրիշ կարևոր հոգեբանական կետ մը, որ նմանապես իրավունք չունինք մոռացության տալու, նույնիսկ ժամանակավորապես: Եթե մեր ժողովուրդի ու մեր մտավորականության հոգին մեջեն հաջողինք մարելու կամ քնացնելու անկախության պահանջն ու ձգտումը, տեղը կմնա սոսկալի դատարկություն մը: Մենք, որ ո՛չ պետություն, ո՛չ բանակ, ո՛չ կեդրոնացում ունինք, որ ցրված ենք կամ հպատակ և կապրինք ուժեղ օտար ազդեցություններու ու ճնշումներու տակ, մեզի անհրաժեշտ է զորեղ ընդհանուր կապ մը, ուժեղ ընդհանուր զգացում մը, զորավոր հենարան մը՝ մեր միությունն ու ամբողջությունը և մեր ազգային կենսունակությունը պահել կարենալու համար:

Ժամանակ մը, երկար դարերու ընթացքին և մահմետական լծի տակ, մեր եկեղեցին է խաղցած այդ կարևոր պահպանողական ու պաշտպանողական դերը. հիմա այլևս եկեղեցին անգոր է նույն դերը խաղալու. փոխված են և՛ ժամանակները, և՛ պայմանները, և՛ ըմբռնումները: Հիմա այդ հին կրոնին տեղը բռներ է նոր կրոն մը, հին եկեղեցին փոխարինված է նոր եկեղեցիով մը: Այդ նոր դավանանքն է ժամանակակից մարդկության ամենեն բարձր, ամե-

նեն արդար և ամենեն ազնիվ ըմբռնումը՝ ազգերու հավասարութեան, ազգերու ինքնորոշման և ազգերու անկախութեան դավանանքը: Եվ մեր նոր դավանանքին տաճարը մեր Հայրենի Հողն է, մեր Հայրենիքը, որու լրիվ ու ազատ տիրացմանը պետք է ձգտինք, ու կձգտինք:

Հավատքը միշտ ալ նղեր է և է ժողովուրդները միացնողը, ժողովուրդները վառողն ու ժողովուրդները չարժողը, որովհետև հավատք կնշանակե համոզում, կնշանակե ոգևորութիւն, կնշանակե ինքնավստահութիւն: Եվ մենք ունինք այդ հավատքը. հավատքը՝ մեր ապագային, մեր քաղաքակրթական դերին, մեր Հայրենիքի բարձրացման ու մեր անկախութեան: Ով չունի մեզմե այդ հավատքը՝ դատապարտված է կորուստի, իբրև Հայ ժողովուրդի անդամ:

Ժողովուրդները, որոնք փարած են գաղափարի մը, որոնք որոշ ու հստակ ձգտում մը ունին, որոնք երազով մը կապրին, այդ գաղափարին ու այդ ձգտումին համար այնքան-այնքան կտառապին ու անչափ զոհեր կուտան, բոցով ու մուրճով ծեծված երկաթի մը պես, կստանան բացառիկ ուժ մը. որը մեղի նման ժողովուրդներու համար ամենեն կարևոր պայմանն է դիմացկունութեան, ինչպես և հաջողութեան: Որովհետև մեր միայն նյութական միջոցները շատ տկար են՝ դիմադրել կարողանալու համար մեր շրջապատի քաղաքական, պինական, տնտեսական, մտավոր ու կուլտուրական անհամեմատ ավելի ուժեղ ճնշումներուն: Միայն ոգին, միայն գաղափարը, միայն կամքն ու համոզումը կրնան ճակատ տալ այսքան ուժեղ հակառակ հոսանքներուն: Միայն կտրուկ, անվերապահ, համառ ու անձնազոհ ձգտումը, ինչ կըլլա՝ թող ըլլա, կա՛մ մեռնելու, կա՛մ հաջողելու:

Եվ ասոր մեջն է այն մեծ հրապույրը, այն դերը և այն մեծ ուժը, որ ունին մեր անկախութեան ու մեր ինքնութեան համար ապրող ու մեռնող մարդիկը մեր ժողովուրդին հանդեպ: Եվ ասոր մեջն է հայ պոլշևիկներու և հայ ռամկավարներու անուղղելի, անսրբագրելի ու անճար խեղճութիւնը հայ ժողովուրդի սրտին, հայ ժողովուրդի հոգիին խոսելու: Մարդիկը հանել կուզեն հայուն սրտեն հավատքը, վստահութիւնը, գաղափարը և ցած են դրեր

իրենց ամենեն սուր զենքը՝ անկախութեան ձգտումը, ալ ի՞նչպես կուզեն, որ հաջողութիւն ունենան. ինչո՞վ կուզեն տաքցնել ու կենդանացնել հայութիւնը, «կոմունիզմո՞վ», «անարշիզմո՞վ»[168], «սերվիլիզմո՞վ»[169]: Եվ ի՞նչ է իրենց ուզածը, ալ ի՞նչ գործ ունին հայ ժողովուրդին հետ, քանի որ այդպես անտարբեր կերպով կնետեն մեր անկախութեան գաղափարը անպետք ու երկրորդական իրի մը պես: Կըսեն՝ «հայ ժողովուրդի պահպանումը»:

Հայ ժողովուրդի ինչի՞ն պահպանումը, մեր խոշոր աչքերուն ու խոշոր քիթերո՞ւն պահպանումը: Չէ՞ որ մեր թիվն ալ, մեր աշխատանքն ալ, մեր հարստութիւնն ալ, մեր ընդունակութիւններն ալ հազար ծակերով ու առուներով կվազեն ու կկորչին, կերթան, կչրեն ուրիշներուն արտերը, իսկ մեր արտը կչոլնա: Հայ ժողովուրդը պահելու մասին մտածողը պետք է մտածե հայու թվական, տնտեսական ու մտավորական ուժերու կեդրոնացման մասին, պետք է մտածե հայու ազգային զգացման ու գիտակցութեան ուժեղացման մասին. իսկ ասոնք հնարավոր են միայն այն ժամանակ, երբ կապրի հայ հոգիին մեջ իր անկախութեան համոզումը, և երբ մեր բոլոր գործերուն ղեկավարը կդառնա հայ ժողովուրդի անշեղ կամքը իր անկախութեանը հասնելու:

ՎԵՐՋԱԲԱՆ

Մինչև հիմա ըսվածներեն ետքը՝ կրնանք կանգ առնել հետևյալ հիմնական եզրակացություններուն վրա:

1. Մեր արդի վիճակը, մեր այս ցնցումները, մեր կրած ծանր հարվածները, մեր ձախողումները, մեր հույսերն ու բեկումները, մեր ամբողջ նշանավոր «Հայկական Հարցը» ո՛չ դժբաղդ պատահականություն մըն է, ո՛չ ժամանակավոր դեպքերու բերում, ո՛չ հեղափոխական «անմտություններու» ու «անխոհեմություններու» արդյունք, ո՛չ ալ երեկվան ու քանի մը տասնյակ տարիներու մեջ ծնունդ առած իրողություն: Շատ խորն են աւտոր արմատները և տասնյակ մը դարերու պատմություն ունին իրենց ետևը:

Թուրանական ցեղերը եկան ու տիրեցին մեր Հայրենիքին, նստեցան նոր շերտով մը Հայ շերտին վրա՝ ուտելով ու կրծելով մեր շերտը և կրոնափոխ ընելով, բայց չի հաջողեցան հատցնելու Հայությունը և վերջնապես ձուլելու իրենց հետ: Շնորհիվ իր արևմտյան կրոնին ու հոգիին Հայը դիմացավ ամբողջ հազար տարի, իբրև անմարս օտար մարմին մը այդ եկող ու գացող թուրանմահմետական ցեղերու ու պետություններու օրգանիզմին մեջ: Ո՛չ միացանք, ո՛չ փճացանք: Ուրեմն օր մը անպատճառ պիտի գար պատվելու ու առանձնանալու անհրաժեշտությունը այդ խեղդող գրկախառնութենեն: Եվ եկավ ահա՛ այդ օրը, երբ մեր ոգիին հարազատ քրիստոնյա Արևմուտքը իր ոտքը դրավ մեր աշխարհը: Այն Արևմուտքը, որ այնքան-այնքան կանչեր էին մեր նախնիքը երկար ու դաժան դարերու ընթացքին և այնքան-այնքան սպասեր էին իզուր: Դարերու ու խորը սերունդներու ձգտումն ու տենչանքն է, որ հիմա կոպտրի մարմին առնելու համար. միայն իմ ու քու և միայն այսօրվան քմայք մը չէ՛ ասիկա:

2. Եվրոպայի ու Ասիայի երեք անգամ հազարամյա մենամարտին մեջ հիմա՝ երեք հարյուր տարիե ի վեր, սկսած է Արևմուտքի բարձրացումը, Արևմուտքի առաջ արշավելը և Արևելքի նահանջը, արևելյան պետություններու խոնարհումն ու հպատա-

կիլը: Ժե դարու կեսերեն այդ շարժումը առած է արդեն մանավոր թափ ու արագություն, իր ուժին հասած և ուռած ալիքի մը պես:

Այդ ալիքն է, որ ամեն կողմե այժմ կողողե Մերճավոր Արևելքը: Եվ այդ հողամասերուն մեջ եկած է վախճանը թուրանական-մահմետական տիրապետության: Եվրոպան է, որ ներս կխուժե. և ո՛չ մեկ բան այլևս առջևը առնել չի կրնար արևմտական այդ արշավին: Պանթուրանական ու պանիսլամական հրազանքները խորտակված պետության մը վերջին հուսահատ ինքնապաշտպանություններն են: Թուրքիայի կայսրությունը, այդ ասիական ձրիակեր բռնակալությունը, անցած ու ավարտած բնմախաղ մըն է. Լենկթիմուրյան իտեալները չե՛ն վերադառնար. ամեն շարժում իր դարը ունի: Թուրքերու մոլեգին ջանքը Թուրքիան օտարներեն մաքրելու, Հույներու ու Հայերու խելագար ջարդերը, խելագար վախը արևմտյան ժողովուրդներու ներկայությենեն ու ազդեցությենեն՝ ամենե՛ն լավ նշանն է Թուրքիայի անկարության ու անճարակության: Այդ ձեռքերով ու այդ խելքերով չէ, որ պիտի ներկայանան մեր ժամանակի ոգիին:

Արևմտականության այս հաղթանակի դարերուն Թուրքիան ո՛չ միայն անկարող է նոր ասիական տիրապետություն մը հիմնելու, անիկա անկարող է նաև պահելու իր իշխանության տակ ա՛յն Հողամասերը, որոնք զուտ թուրքաբնակ չեն: Փոքր Ասիայի ափերը, Կիլիկիան, Բարձր Միջագետքը և Հայաստանը, որ եվրոպական մրցակցության ու խառնակության պատճառով դեռ առայժմ մնացեր են իր ձեռքը, պատմական անխուսափելի անհրաժեշտությամբ դուրս են գալու իր ձեռքեն:

Եվ Թուրքիան, եթե ապրիլ կուզե, ապրի պիտի միայն իր Անգորայի բարձունքներուն վրան ու չուրջը, իբրև փոքրիկ պետություն մը, ան ալ՝ եթե չուտով բռնել կարողանա աշխատանքի ու քաղաքակրթության ճամբան: Բոլոր մնացած «Հաջողությունները» քամիներու բերած ժամանակավոր խաղ են կամ սնոտի պոռոտախոսություն:

3. Խոսելով մասնավորապես մեզի վերաբերող վիլայեթներու մասին՝ Թուրքերը ինչքան ալ որ Հոխորտան, կարճատես ըլլան ու

գաղթականներ նելու թխմեն, միևնույնն է, ոչինչ շահիլ չեն կրնար: Մինչև Եփրատ ու Տրապիզոն, գո՛նե մինչև Եփրատ ու Տրապիզոն, այդ հողամասերը չեն մնալու թուրքերու իշխանության տակ: Վան, Մուշ, Ալաշկերտ, Կարս ու Էրզրում միանան պիտի, և շուտո՛վ, արդի Երևանյան մասերուն, ըլլա հայու անունով, ըլլա ռուսական իբրև նահանգ. միանան պիտի անպայման:

Թուրքերու սարքած բոլոր կարճամիտ ջարդերն ու վրիժառու վայրագությունները, ինչպես և իրենց հիմակվան կույր համառությունը, որով կընդդիմանան այդ մասերու անկախացմանը, մեզի չափ վնաս է և իրե՛նց: Հայու գլխուն հանցուցած ամեն զարկը թուրքը միաժամանակ իր գլխուն է որ կիջեցնե, մեր առջևը հանած ամեն դժվարությունն ինքն իր առջևը կբարդե: Կովկասին տիրելու ցնորքներով հափշտակված՝ ինքն իր ձեռքովը կքանդե այն միակ պատվարը, որ պատմությունը քաշեր է հյուսիսեն Թուրքիայի վրան խուժող Արևմուտքին առջևը: Հայ տարրը սպառել ու Հայաստանը դատարկել կնշանակե ռուսի հաշվին աշխատիլ, իշխան Լոբանովներու[170] և կեղծավոր Զիչերիններու փայփայած երազը իրագործել, որպեսզի հայկական բերդը բնակեցնեն, ըլլա ճերմակ թե կարմիր, կոզաքներով. ինչ կարևորություն ունի դույնը. չէ՞ որ «ապուշները խաբելու համար» են հնարված այդ բոլոր գույները:

4. Ալ անցած են թուրանական դարերը և փակվելու վրա է պատմության այդ էջը: Եվ Մերձավոր Արևելքի համար բացված է նոր երես. մտած ենք անգլո-ռուս հակամարտության դարերը: Մենք կապրինք հիմա փոխանցման չրջանին սկիզբը. դեռ կմտածենք հին խելքերով. հինը չմոռցած ու նորը դեռ չըմբռնած սերունդի մը չվար ու համառ վիճակն է, որ կտիրե հիմա և՛ մեր դրացիներուն, և՛ մեզի:

Մեզմե դեռ շատ շատերը սովոր են նայելու մեր հարցին վրա իբրև անջատ, առավել կամ նվազ պատահական ու առանձնակի երևույթի մը. և ճիշդ ատոր համար ալ մեր հարցին լուծումը կսպասեն առավել կամ նվազ արվեստական ձևով մը, անջատ բարյացակամությամբ, կարծես, տեսակ մը բարեգործությամբ: Մինչդեռ այլևս ներելի չէ մեզի անգիտանալը, որ մեր հարցը շատ

ավելի բարդ հյուսվածքի մը մեկ մասնավոր ու բնորոշ հատվածն է, և մեր վիճակը լավ ըմբռնելու համար պետք է որոշ կերպով գիտնանք, թե ի՞նչ ուղղութեամբ կվազեն այդ հյուսվածքին թելերը:

Ամենեն առաջ՝ մեր հա՛րցը, ինչպես որ կա և ինչպես որ ըլլալու է ասկե ետքը, իր խառնակ ու խճճված դրութեամբ արդյունքն է անգլո-ռուս ընդհարումին: Առանց Անգլիայի ներկայութեանը մեր սահմաններուն վրա այսօր խնդիրը կըլլար անհամեմատ ավելի պարզ ու հասարակ: Հայաստանը թուրքի տիրապետութենեն կանցներ ռուսի տիրապետութեանը և մեր անկախութեան հույսերը կդառնային շա՛տ ավելի հեռավոր. քանի որ առանց անգլիական խթանի ռուսը շատ ավելի դանդաղ պիտի ենթարկեր փոփոխութեան իր պետական սիսթեմը տիրված ազգերու հանդեպ, մասնավորապես Մերձավոր Արևելքի մյուս կիսանկախ ժողովուրդներու շարքին: Այդ երկու մեծ պետութիւններու ընդհարումն է, որ մեր հարցը կդարձնե առկախ և ամեն աստիճանի հնարավորութիւններով լեցուն: Մեկ կողմեն դուռ բանալով ավելի հանդուգն կարելիութիւններու, մյուս կողմեն գրկելով մեզի ավելի իրական, ավելի անմիջական հնարավորութիւններեն: Եվ այս ընդհարման մեջ, ընդհանուր առումով և շատ բնական կերպով, ռուսը ավելի հակառակորդ տարր է մեզի և անգլիացին ավելի բարեկամ. քանի որ մեկուն շահերը և փովելու ցանկութիւնը մեր անկախութեան խափանումը կպահանջե կամ գոնե սեղմումն ու կրճատումը և հետաձգումը, ինչքան որ հնար է. մինչ մյուսին շահերն ու ազդեցութեան տարածումը կհենվին փոքր անկախութիւններու ստեղծումին վրա և մասնավոր կերպով նպաստավոր են քրիստոնյա ու արևմտական Հայաստանի մը անկախացումին:

5. Մեզի հետ նույն բանվածքը կկազմեն և նույն անգլո-ռուս ընդհարման գոտիին զանազան հատվածներն են Թուրքիան, Վրաստանը, Ատրպեյջանը և Կասպիականի տակով Պարսկաստանն ու Ավղանիստանը, այլև Թուրքեստանի ժողովուրդները: Այդ բոլոր երկիրներու քաղաքական դիրքն ու վիճակը, իր խոշոր գծերով, ավելի կամ պակաս նման է մերինին: Անշուշտ, Վրաս-

տանն ու Ատրպեյջանը մասնաւոր կերպով, որովհետև կապված ենք իրարու աշխարհագրական, տնտեսական ու ռուսական շատ ավելի սերտ կապերով:

Այս բոլոր ժողովուրդները պետք է վերջապես իրար հասկնան, իրար օժանդակեն ու իրարու կոթնին, եթե կցանկան, որ ասկե ետքը իրենք ալ ունենան իրենց ազատ անկյունը, իրենց կյանքի բաժինը հարավի արևին տակ: Իրար խեղդելով չէ, որ պիտի կարողանանք ապրիլ, այլ իրարու հենվելով: Նոր պայմանները բերելու են նոր կապակցութիւններ, նոր շահակցութիւններ ու նոր քաղաքականութիւն՝ մեկդի դնելով հետզհետե արդեն հինցած ու անպիտանացած կրոնական հակակրութիւնները, հին ու կամաց-կամաց իր իմաստը կորսնցնող թշնամութիւններն ու անբարյացակամութիւնը: Բայց դեռ ժամանակ է հարկավոր. և պետք է հանդիստ, որ ջրերը պարզվին, որ կրքերը պառկին, որ աչքերը բացվին:

Այսպեսով է, որ հայ, վրացի ու ատրպեյջան չափազանց նման պայմաններեն ծնունդ է առնելու չափազանց մոտիկ գործակցության մը անհրաժեշտութիւնը: Այսպեսով է, որ ամբողջ անգլո-ռուս դատի բոլոր ժողովուրդներուն համար ծագելու է կարիքը իրար հասկնալու, իրար մոտենալու և մշակելու հաշտ ու ընդհանուր քաղաքականութիւն մը:

Եվ մասնավորապես տրամաբանորեն փոխվի պիտի մեր հարաբերութիւնը Թուրքիայի հետ, հենց որ քաշվին անոնք մեր հայրենիքեն և հենց որ հիմք մը դրվի մեր անկախության: Բուլղարներու ու թուրքերու շահակցութիւնն ու գործակցութիւնը բուլգարական ջարդերեն հապիվ երեսուն տարի ետքը շատ փոքրիկ բան մըն է՝ համեմատած այն քաղաքական, տնտեսական ու կուլտուրական բազմադիմի ստիպումին հանդեպ, որ այս վայրկյանիս իրար ջարդող ու իրար ատող մեր երկու թշնամի ժողովուրդները մոտեցնելու ու կապելու է իրար:

6. Ժամանակի ոգին կքալե, տարվե տարի ավելի հաղթական, տարվե տարի ավելի տիրական ու պահանջկոտ: «Բոլո՛ր ազգերը իրար հավասար, փո՛քր ազգերուն ազատ ապրելու ապահովութիւն»: Քաղաքակիրթ մարդկության անվայել սև ամոթ մը

ու նախատինք մը պիտի դառնա չուտով ագգերու ճորտացումն ու ստրկացումը ավելի ուժեղներու կամքին ու մտրակին տակը. ինչպես որ ամոթ մը ու նախատինք մը հռչակվեցավ մեզմե հագիվ դար մը առաջ անհատներու ստրկությունն ու ճորտությունը անհատներու կամքին ու մտրակին տակը:

Եվ խթանված ժամանակի ոգիեն, ոգևորված մարդկության բարձր համակրանքեն՝ բոլո՛ր տիրված ժողովուրդները տարվե տարի ավելի բուռն ու ավելի անդիմադրելի կերպով ձգտելու են իրենց անկախությանը՝ իրար սիրտ տալով, իրար հենվելով, իրար ընդօրինակելով: Եվ այս հոսանքին, ներքին ու արտաքին այս ճնշումին տակ ոչ մեկ պետություն, ինչքան կուզե խոշոր ըլլա, դիմադրել չի կրնար ընդերկար. ինքն ալ կվարակվի. և հետզհետե բռնած սանձերը պետք է թուլցնե, մինչև որ ժամանակը կամ ապստամբությունը այդ սանձերը վերջնականապես փրցնե:

Գալով մեր անկախության բռնելիք ճամբուն՝ անիկա պիտի կարճանա կամ ավելի երկարանա՝ նայելով անգլո-ռուս ընդհարման առնելիք ընթացքին: Բուռն ընդհարում մը այդ երկուքին մեջ, անշուշտ, կարագացնե մեր ձգտումին իրականացումը, թեև կապված է լուրջ վտանգներու և նոր տառապանքներու հետ: Անգլիայի հաղթանակը այդ ընդհարման մեջ մեր անկախացումն է. երկու կողմերու ուժերուն վերջ ի վերջո իրար հավասարակշռելը մեր անկախացումն է. նույնիսկ ռուսական հաղթանակը որոշ անկախացում կբերե մեզի, որովհետև այդ տեսակ մեծ ու հավանորեն երկարատև պատերազմի մը միջոցին Ռուսաստանը ստիպված է ավելի շուտ յուրացնելու անգլիական դաշնակցային ձևը իր հպատակ ժողովուրդներուն հանդեպ: Իսկ եթե մեզմ ընթացք առնե անոնց ընդհարումը՝ իրար զիջելով, ազդեցության շրջանակներով, զանազան տեսակի իրար մեջ «բաժանումներով», «կիսումներով» ու համաձայնություններով, մեր անկախացումն ալ կստանա ավելի ծանր տեմպ ու դանդաղ զարգացում, ավելի շատ հենված մեր անձնական ճիգերուն վրա՝ իբրև գլխավոր օժանդակ ունենալով կովկասյան մեր հարևանները և ժամանակի ոգին:

7. Եվ ինչպես մեր ժողովուրդի արդի կյանքն ու վիճակը, այնպես ալ մեր անկախության ելևէջներն ու հառաջիկա քայլերը

շատ սեղմ կերպով կապված են Ռուսաստանի բաղդին ու վիճակին, որովհետև գործնականապես անոր ձեռքին տակն է հիմա Հայութիւնը: Եվ եթե մեր Հանրապետական կառավարութեան տապալումեն ի վեր մեր հարցը իննկած է տարօրինակ անելի մը մեջ ու տեղեն չի շարժիր և ծանր մթնոլորտ մը կտիրե մեր գոյութեան ու ապագային չուրջը, պատճառն այն է, որ մեզի իր ձեռքերուն մեջը պահողը Ռուսաստանը ի՛նքը իննկած է անելի մը մեջ և տեղեն չի շարժիր ու ծանր մթնոլորտ մը կտիրե իր էութեան ու ապագային չուրջը: Խեղդիչ ու մահացնող մթնոլորտ մը, որուն անունն է պոլշևիզմ: Եվ մինչև որ Ռուսաստանի պատուհաններն ու դռները չի բացվին, մինչև որ այդ օդը չի մաքրվի, և մինչև որ այդ քայքայիչ ածխահարումը չանցնի Ռուսաստանի վրայեն, ոչ մեկ լուծում սպասելի չէ և մեր հարցին համար:

Առանց Ռուսաստանի մեր հարցը լուծվիլ չի կրնար. առանց Ռուսաստանի դինական միջամտութեան, կամ այդ միջամտութեան վախին, Թուրքիայի հետ մեր անջատումը ավարտիլ չի կրնար, Թուրքիայի հետ մեր հաշիվներու վերջնական հարդարումը գալ չի կրնար. և ոչինչ չի վճռվիր, մինչև որ Եվրոպայի ու Ռուսաստանի միջև հասկացողութեան լեզու մը չի գտնվի:

Այս գլխիվայր պայմաններու մեկ անգլուխ ծնունդն էր նաև մեր «օճախի» գաղափարը, որը իսկապես կնչանակե խոսքը կտուրը նետել, դուռը բաց պահել ու սպասել: Որովհետև Ալլիենները գիտեն, որ առանց Ռուսաստանի իրանք այդ հարցին տակեն դուրս գալու անկարող են: Եվ միայն մենք չենք այդ վիճակին մեջ. ուրիշ շատ հարցեր, թեև քիչ մը ավելի վարպետ կերպով քողարկված, կսպասեն պոլշևիկներու նշանավոր «փորձի» ավարտին:

8. Եվ նայելով, թե ինչ ձևով, ինչ մնացորդ ուժերով, ինչ կազմով ու միջոցներով նորեն ասպարեզ պիտի մտնե Ռուսաստանը և Եվրոպայի հետ հարաբերութեան, ատոր համեմատ ալ պիտի որոշվի մեր անկախութեան բռնելիք ուղին:

Եվ խոշոր բաժանումներով երեք հնարավորութիւն կա մեր առջևը:

Առաջին՝ Հայաստանը ու ամբողջ հայ ժողովուրդը կմնա ռուսական իշխանութեան տակ, գուցե ստվերային ինքնուրույնու-

թյամբ մը: Համենայն դեպս մեր անկախության աստիճանական զարգացումը կղառնա շատ ավելի դժվար ու դանդաղ և սերտորեն կապված կովկասյան մյուս ժողովուրդներուն: Այսինքն՝ ուժեղ Ռուսաստան մը կովկասյան մասերուն մեջ:

Երկրորդ՝ մեր հայրենիքը կազմող հողամասերեն կառանձնացվի կիսանկախ Հայ պետություն մը՝ կապված ու կախված կա՛մ Ռուսաստանեն, կա՛մ Անգլիայեն: Ըսել է՝ այս կամ այն աստիճանի զգալի է Անգլիայի ճնշումը Ռուսաստանի վրա Մերձավոր Արևելքի գործերուն մեջ:

Երրորդ՝ կստեղծվի ազատ ու անկախ, գուցե և «չեզոքացված» Հայ պետություն մը, իբրև սրդյունք անգլո-ռուս զինական ընդհարման: Նայելով պարագաներուն՝ հոս ալ կրնան մեզի ընկերանալ նաև Վրաստանն ու Ատրպեյջանը:

Թե այս ճամբաներեն ո՞րն ենք բռնելու, մեր կամքեն ու ընտրութենեն կախված բան չէ, այնքան չնչին դեր ունին հոս մեր ուժն ու ցանկությունը: Ատիկա կախված է մեր երկու մեծ դրացիներու կամքեն ու կարողութենեն, քիչ մըն ալ պատմական դեպքերու ընդհանուր դասավորումեն: Բայց այդ ճամբաներեն որուն վրայեն ալ որ հարկադրվինք քալելու՝ շա՛տ մեծ բան է կախված մեր կամքեն, մեր վարքեն ու մեր ուժեն՝ թե ի՛նչպես կքալենք: Հոտ է, որ պիտի երևա մեր քաղաքական հասունությունը, մեր ճկունությունն ու ընդունակությունները, ինչպես և մեր ցեղային թափն ու վճռականությունը:

9. Անտարակույս, ամեն հայու տենչանքն է, որ շուտով ու անմիջապես անցնինք երրորդ հնարավորության, կամ գոնե երկրորդին, և մեր աչքերովը տեսնենք մեր վերջնական ազատությունը, մանավանդ այսքա՜ն-այսքան տառապանքներե ու զոհաբերություններեն ետքը: Մասնավորապես անոնք, որոնք բաղդ ունեցան Հայաստանի Հանրապետության երկու-երեք կարճ տարիներու ընթացքին հայրենի հողին վրա ծծելու մեր սարերու ազատ ու անկախ օդը, շատ դժվարով պիտի կամակերպին չնչելու նորեն իր հպատակության անառողջ օդը:

Բայց պատմությունը, բնության նման, որուն մեկ կտորն է արդեն ինքը, հաշվի առնել չգիտե մեր ցավերն ու տենչանքները:

Շատ սերունդներ եկեր են ու անցեր մեզմե առաջ այդ ցավերով ու տենչանքներով: Եվ հիմա ալ մեր այնքա՜ն-այնքան հարազատներն ու ընկերները իրենց երիտասարդությունն ու ամբողջ կյանքը զոհ բերին հայու ազատությունը տեսնելու տենչին և վառվեցան ու անցան առանց այդ օրը տեսնել և վայելել կարողանալու: Մեր պարտքն է մաքառիլը, մեր մխիթարությունը՝ աշխատիլը. պտուղը կքաղեն ապագա սերունդները:

Պատմությունը թշնամի է դուշակություններու և շատ կսիրե ծաղրել բոլոր նախագուշակություններն ու ենթադրությունները: Բայց և այնպես մարդկային անհանգիստ հոգին միշտ ավելի առաջ կվազե չրջապատող դեպքերեն և անդիմադրելի կերպով կձգտի գիտնալու վաղվան գալիքը: Եվ որոշ աստիճանի նույնիսկ գործնական անհրաժեշտություն մըն է ատիկա, այդ վաղվան նախատեսությունը, մոտավոր ապագայի ըմբռնումը և անոր դեմը ելնելու նախապատրաստությունը:

Եվ ահա՛ հիմա ալ, ուզենք թե չուզենք, պարտական ենք ըսելու, որ դեպքերու ընթացքեն և ուժերու փոխհարաբերութենեն դատելով՝ այնպես կթվի, որ մեր անկախությունը բռնելու է վերի երեք ուղիներեն առաջինը: Ցանկա՛նք ու մաղթե՛նք, որ սխալ ըլլա մեր հաշիվը և սուտ դուրս գա մեր ենթադրությունը. բայց լա՛վ է, որ պատրաստվինք: Ավելորդ լավատեսությունը մեզի շատ է անպատրաստ գտած պետք եղած վայրկյանին, չվարուիմ է բերած և հուսալքում: Իսկ մեր ակնկալության հակառակ հանկարծ մեր անկախության արագացումն ու դյուրացումը, ուրախութենեն ու ոգևորութենեն զատ, մեզի ոչ մեկ վնաս բերել չի կրնար:

Հավանորեն դեռ բավական ճամբա ունինք քալելու և բավականին քարքարոտ ճամբա. դեռ շատ հոգնություն, տաժանք ու զոհաբերություն ունինք կրելու այդ ճամբուն վրա: Քալե՛նք:

Տասնիններորդ դարը բերավ մեզի մեր ազգային գիտակցության զարթոնքը, բերավ Հայ քաղաքակրթության, Հայ ոգիին ու Հայ կամքին վերածնունդը: Քսաներորդ դարը պիտի բերե մեզի մեր կուլտուրական ու պետական անկախությունը:

ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ ՄԵՋ

Ընդգծում մը իրականության

Ա. ՄԱՐԴՈՑ ԲՆԱԿԱՆ ՈՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդս ընկերային կենդանի է: Բայց միայն մարդը չէ, որ կսիրե խմբական կենակցութիւնը, ընկերական կյանքը: Բնութեան մեջ խիստ տարածված երեւոյթ մըն է իրարմեն ծագող և իրարու նման էակներու իրարու կից, իրարու հետ ապրիլը:

Բուսական կյանքին մեջ հիմնական պատճառը ծագումն է, առաջացումը. բույսի սերմը իր մոտը կիյնա, նույն արմատը շատ ընձյուղներ կուտա: Կենդանական կյանքին մեջ այդ հիմնական պատճառին կավելնա երկրորդ մը. ավելի ճիշդ է, եթե ըսենք, կշեշտվի՝ երկրորդ պատճառը, որովհետև աւիկա բուսականին մեջ ալ կա որոշ չափով: Խմբովին կյանքը կենդանական որոշ տեսակներու և որոշ պայմաններու տակ մեծ առավելութիւններ կուտա գոյութեյան կռվին մեջ թե՛ ինքնապաշտպանութեյան համար և թե՛ հարձակողականի. որով կենդանական նույն ճյուղին պատկանող և հավաքաբար ապրող տեսակները ավելի կդիմանան և ավելի կզարգանան և իրենց հետ ալ ավելի կամրացնեն և ավելի կուժովցնեն հավաքաբար գործելու ու միասին ապրելու կարիքն ու բնազդը:

Կենդանիներու այդ խմբումը մասամբ պատահական է, ժամանակավոր, տեսակ մը մեքենական, գլխավորապես դրդված անոթութենեն, ինչպես, օրինակ, մորեխի, մուկերու, գայլերու հավաքական արշավանքը: Երբեմն ժամանակավոր է, բայց պարբերական և որոշ կանոնավորութեյամբ, իհարկե միշտ իբրև հետևանք բնական պայմաններու. օրինակ՝ կռունկներու և ընդհանրապես չվող թռչուններու քոչը, ձկներու վտառներու գաղթը, միջատներու և մեծ կենդանիներուն խմբումները սեռական շրջանին: Երբեմն ալ ավելի հաստատ է ու տևական, գլխավորապես ինքնապաշտպանութեյան դրդումով, մասնավորապես բուսակեր-

նները, որ պաշտպանվիլ կուզեն գագաններեն՝ մսակերներեն. այսպես՝ ոչխարներու հոտերը, մեծ եղջյուրավորներու նախիրները, ձիերու երամակները, կապիկներու խմբերը, մարդկային նախնական հորդաները, ճնճղուկներուն հույլերը, միջատներեն չատերը:

Այս երեք տեսակի խմբումներուն մեջն ալ կենդանիները կպարծեն իրար հետ, իրարու կից և իրենց ներկայութիյամբն ու չատութիյամբը սիրտ տալով, պյուրացնելով ու նպաստելով իրարու գործին. բայց ամեն մեկուն գործունեութիյունը կկատարվի անջատաբար, ամեն մեկը կաշխատի իր համար, իր գլխուն, իր հաշվին: Եվ ամեն մեկուն կատարածն ալ միևնույնն է. չկա որևէ աշխատանքի ու գործի կազմակերպութիյուն, որևէ տարբերութիյուն դիրքի ու փոխադարձ հարաբերութիյան, բացի բնութիյան դրած մեծ տարբերութիյուններեն էգի ու արուի, ուժեղի ու տկարի, փորձառուի ու անվարժի:

Եվ ինչքան պատահական ու ժամանակավոր է անոնց կենակցութիյունը. այնքան ավելի մեծ է բնականաբար ամեն անհատի անկախութիյունն ու ազատութիյունը մյուսներեն, և այնքան ավելի չնչուված է ամեն մեկուն վիճակի ու ըրածի նույնութիյունն ու նմանութիյունը մյուսներուն:

Բայց խմբական կյանքի նույնիսկ այս ստորին աստիճաններուն վրա ժխտել չենք կրնար ամբողջովին նաև ընկերային տարբերութիյուններու գոյութիյունը. այսինքն՝ տարբերութիյուններ, որոնք հետևանք են թեև բնական անհավասարութիյան, բայց առաջացած են և կրնան առաջանալ մի՛միայն իբրև արդյունք խմբական կենակցութիյան, ընկերովի ապրելու: Այսպես, օրինակ, հավախումբի մը մեջ մեկ կամ երկու աքլորի բռնած դիրքը շատ չնչուված կերպով տարբեր է և՛ հավերու, և՛ մյուս աքլորներու դիրքեն. ո՛չ միայն իբրև արու և իբրև ուժեղ տարբեր է ան մյուսներեն, այլև մյուսներուն գլխուն տեսակ մը ոստիկան է և շատ քմահաճ տեսակի հրամայող, պահանջող ու պատժող. սա արդեն ընկերական տարբերութիյուն է, իշխողի ու հպատակի հարաբերութիյուն, անշուշտ իբրև հետևանք այդ աքլորի բնական առավելութիյուններուն, բայց արդյունք խմբական-տևական կենակցութիյան: Այդպես ալ հոտերու, նախիրներու ու երամակներու մեջ

որոշ զգայի է ղեկավար խոյի մը, ցուլի մը, գոմեշի մը ու գամբիկի մը առաջնութիւնն ու բացառիկ դերը: Զվող թռչունները նոյնպես ունին իրենց պարագլուխը, նշան տվողն ու հրամայողը, առաջնորդը՝ հենված իր ուժին ու փորձառութեան, և որուն հլու կհետևի երամը:

* * *

Այս խմբական երամակային կենակցութեան զուգ կերթա կենդանական կեանքի բոլոր աստիճաններուն վրա ուրիշ տեսակի կենակցութիւն մը՝ սիրու կենակցութիւնը, ընտանեկան կենակցութիւնը: Այսինքն՝ երբ արու մը և էգ մը կապրին միասին, իբրև տևական զուգ: Այդ կենակցութեան պատճառը սերունդի առաջացման համար հարկ եղած խնամքն է, հոգն ու նախապատրաստութիւնը:

Այսպես՝ թռչնակին համար պետք է բույն շինվի, պետք է ձվիկը տաք պահվի, աշխարհք գալեն ետքն ալ երկար ժամանակ պետք է կերակրվի, պաշտպանվի, խնամվի, մինչև որ մկանները ուժի գան ու թևերը փետրավորվին, որպեսզի ձագուկը թռչիլ ու գլուխը պահել կարողանա. իսկ թռչիլը շատ դժվար արհեստ է, պետք է սորվեցնել ու վարժեցնել: Ինչքան բարդ է ու երկարատև այդ պահանջված խնամքն ու կրթութիւնը, այնքան տևական է ու ամուր նաև ծնողներուն կապը:

Մանավոր ուշադրութեան արժանի բան է բույն շինելը, իբրև ծնող զույգը իրարու կապող նոր տարր. միասին շինված բույնը, այդ ընդհանուր սեփականութիւնը, միասին երթալը, հաջորդ տարին միասին նույն բույնը դառնալը շա՛տ ավելի ամուր ու երկարատև կզարձնե զույգի կապը. կառնկներու, ծիծեռնակի ու աղավնիի ծնողական անձնվիրութիւնն ու ամուսնական սերը անցած է առածի կարգը: Առավել կամ նվազ չեշտված, առավել կամ նվազ աստիճանի հավատարմութեամբ ու երկարատև, բայց կենդանական բոլոր տեսակներուն ու դասերուն մեջն ալ կա միասին որջ շինելու, միասին որսալու ու միասին ապրելու երևույթը, գոնե սեռական հուզման ու ձագերը խնամելու շրջանին, սկսած օճերեն,

խլուրդներուն մինչև եղջերուներու տեսակները, առյուծները, բարձր կարգի կապիկները և նախնական մարդը:

Մարդը, կամ ավելի ճիշդ՝ ըսե՛նք մարդու մեկ որոշ տեսակը, որոշ պայմաններու մեջ կարևոր քայլ մը ավելի առաջ կանցնի: Ան ո՛չ միայն թռչուններուն պես կառաջացնե տարիներու կապով իրարու զոդված մշտական զույգեր, որոնք տարվե տարի կծնին ու կխնամեն նոր սերունդներ, այլև այդ սերունդները իրենց հասուննալեն ետքն ալ կմնան իրենց ծնողներուն թևին տակը և կապրին ու կաշխատին միասին իրարմով և իրարու համար, իբրև սերտ ամբողջություն մը: Սերունդներու չի ցրվելուն և միասին ապրելուն պատճառը միշտ նույնն է. մարդու պզտիկներուն՝ շատ երկար ժամանակ անպաշտպան մնալը և երկար տարիներ հոգածության ու կրթության պահանջելը, մինչև որ կարող ըլլան իրենք իրենց պլուխը պահպանել: Իսկ այդ տարիքին ալ երբ կհասնին, արդեն այն աստիճան վարժված ու կապված են իրենց ծնողներուն ու եղբայր-քույրերուն՝ սովորության, ապրուստի ու զգացումի բարդ կապերով, որ հետզհետե բաժանումը անտեղի ու բացառիկ բան մը կդառնա. ասոր վրա կգումարվի բնականաբար ընդհանուր ուժերով կատարված աշխատանքի, հարձակումներու ու պաշտպանության ընձեռած շա՛տ մը առավելությունները: Այնպես որ հետզհետե գոյության կռվին մեջ մարդկային այն տեսակները ավելի կդիմանան ու կմնան, կաճին ու կտիրեն, որոնք իրենց սերունդներուն չեն զատվիր ու կկազմեն արյունով, զգացումներով ու շահերով իրարու հյուսված սերտ ամբողջություն մը:

Այս նոր տեսակի ամբողջության մեջ, որ բնությունը ստեղծեր է, հենց սկիզբեն միության պատկանող անհատները կտարբերին իրարմե ո՛չ միայն ուժի, սեռի ու կազմության բնական այլազանություններով, այլև ընկերական տարբերություններով: Ընտանիք կնշանակե մեծ ու պզտիկ, ծնող ու զավակ, կին ու հարս, իրարմե բոլորովին տարբեր դիրքով, վիճակով ու աշխատանքով, տարբեր իրավունքներով, ձայնով ու ազդեցությամբ, մեկը մյուսին ղեկավարության ու հեղինակության ենթակա:

Ընկերային անհավասարությունը, որ երամակային խախուտ

կենակցության մեջն անգամ իսկույն ծայր կուտա, իբրև բնական հետևանք բնական տարբերություններու, հո՛ս, ընտանիքի կազմության միջոցին կդառնա անխուսափելի հիմնական պայմաններեն մեկը: Եվ ինչքան ընտանեկան կյանքը բարդանա ու կատարելագործվի, այնքան ավելի կշեշավի ու աչքի կզարնե անհատներու մեջ եղած այդ ընկերական անհավասարությունը:

Իսկ ընտանիքը ինքը ընկերային մարմնին առաջին նախնական ձևն է միայն: Աճելով ու շատնալով ան կդառնա ցեղ. ճյուղավորվելով ու իրարմե զատվելով՝ ցեղեր. և այդ ցեղերը նորեն իրարու կապվելով կառաջանան ժողովուրդներ: Եվ առաջացման այդ երկարատև գործողության միջոցին նոր զարգացումն ու նոր բարդացումը իրենց հետ նոր ընկերային անհավասարություններ կբերեն, ընկերական նոր տարբերություններ կյանքի, վիճակի, հոգևբանության իրավական հարաբերություններու:

Ուրիշ խոսքով՝ ընկերային տարբերություն ըսվածը մեկ բնական պտուղն է մարդկային կենակցության, այսինքն՝ քաղաքակրթության, և ինչքա՜ն քաղաքակրթությունը բարձր, այնքան շա՛տ և այնքան խո՛րն են նաև տարբերություններն ու անհավասարությունը: Հավասարությունը ընկերական կյանքին մեջ, ան ալ շա՛տ պայմանական հասկացողությամբ մը, կրնա գոյություն ունենալ կենդանական կենակցության ամենեն նախնական աստիճաններուն վրա: Ան ալ որովհետև ընկերական տարբերությունները իրենց նախնական վիճակին մեջ չենք կրնար հստակ որոշել և կխցկենք բնական տարբերություններուն տոպրակը:

Թե չէ՝ խնդրին եթե սկզբունքով մոտենանք, պիտի ըսենք՝ հենց որ երկու էակ կուգան իրարու և միասին կենակցելու, այդ վայրկյանեն անոնց մեջ կա արդեն ընկերական տարբերություններ: Հավասարություն չկա բնության մեջ. հավասարությունը բնության հատկությունը չէ. ատիկա մարդու ստեղծած գաղափարն է, վերացական, մաթեմատիկական գաղափար մը: Կյանքի ու բնության մեջ տիրող և հաճախ դաժան ու ծայրահեղ մերկությամբ արտահայտվող անհավասարության դեմ մարդկային հոգիեն ծնած բողոքն է ատիկա: Իսկ ծայրահեղությունները ծայրահեղություն կծնին:

Բ. ԴԻՐՔԻ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընկերային կյանքի անհավասարութիւններուն մէջ ամենեն նախնականը և ամենեն հիմնականը դիրքի անհավասարութիւնն է: Համայնքի մը բոլոր անդամները իրարու հանդէպ նույն հարաբերութիւնը չունին, ո՛չ նույն ազդեցութիւնը հանրային գործերուն վրա, ո՛չ ալ նույն իրավունքները. մեկուն թուլլատրելի են շատ բաներ, որ մյուսին արգիլված են խստորեն. մեկուն կամքն ու որոշումը գերակշիռ է մյուսեն. մեկը ենթարկված է, մյուսը կ'հրամայե:

Այս դիրքի անհավասարութեան առաջին աղբյուրը բնութիւնն է անշուշտ. մեկը ավելի ուժեղ է ու կամքի տեր, ճարպիկ ու խելոք. կամ գրավիչ ու լեզվանի. և կազդե մյուսներուն վրա, կքաշե իր ետևին, կենթարկե իր կամքին: Բավական է քիչ ատեն ուշադրութեամբ դիտես երեխաներուն խաղը, որոնք պատահաբար իրարու են եկած. կես ժամ չանցած արդեն մեկը կամ մյուսը դարձած է ղեկավար, երբեմն և երկուքը: Անոնք են, որ կընտրեն խաղցվելիք խաղի տեսակը, խաղի ձևերը, պայմանները, տեղերը. անոնք են, որ կդատեն ու կվճռեն ծագած վեճերը: Մնացածները, ոմանք սիրով ու հոժար, երբեմն ոգևորութեամբ, ոմանք մեքենաբար ու հոսանքեն տարվելով, անոնց պարզ հպատակներն են: Եվ եթե այդ խումբը ավելի հաճախ գա իրարու հետ խաղալու՝ այդ մեկ կամ երկու պարագլուխները կդառնան խումբի մշտական ղեկավարն ու հոգին. առանց անոնց խաղը կարծես չի կազմակերպվիր, չի քալեր, թափ չունենար:

Բոլորովին նույնն է և կյանքի խաղին մեջ: Իմբռվին կատարվող որսը, որևէ ուրիշ աշխատանք, կռիվ, ինքնապաշտպանութիւն, զվարճութիւն, վայելք ու քեֆ բնական կերպով և բնական ընտրութեամբ ավելի օժտվածները կդարձնեն ղեկավար, կարգադրող, պարագլուխ, սեղանապետ. և որովհետև այդ երևույթները կրկնվող տեսակի են և ընկերային խումբը շատ դանդաղ կփոփոխվի, այդ անհատները իրենց բնական առավելութեան-

ներուն պատճառովը կդառնան մշտական դեկավար և կտիրանան իրավունքներու, որոնցմէ զուրկ են մյուսները:

Այս զուտ բնական պատճառներուն կից կգործեն զույգ մը ուրիշ պատճառներ, որոնք միաժամանակ և՛ բնական են, և՛ ընկերային: Նախ՝ սեռերու տարբերութիւնը. կռիվն ու որսը կմնա գլխավորապես այր մարդու վրա, իբրև ավելի ուժեղի և որ չէ կապված երեխաներով. ուրեմն այր մարդու վրա կմնա նաև ընդհանուրի հրամանատարութիւնը այդ արշավներու միջոցին և ընդհանրապես բոլոր գործերու դեկավարութիւնը միշտ՝ դարձնելով կինը ավելի ստորադաս և հպատակ. արդեն կնոջ սեռական ու հոգեկան բնութեան մեջն ալ կա հպատակումն ու ենթարկվիլը արուին:

Ընկերական տարբեր դիրքեր առաջացնող միաժամանակ բնական և ընկերական երկրորդ պատճառն է սերունդներու մեջ եղած տարբերութիւնը: Նորածինը, մանուկն ու տղան երկար-երկար տարիներ պաշտպանյալ մըն է, անզոր մը, մեծերու հրամանին, սիրուն ու հովանիին տակ. այս կերպով աճող ու կրթվող հոգին մշտապես կպահե իր վրա կնիքը ծնողներու իշխանութեան, պատվին ու հարգանքին: Դարերով մշակված զգացում մըն է ատիկա, որուն վրա կհենվի ո՛չ միայն նախնական ընտանիքներուն մեջ ծնողներու, մեծերու, ծերերու, պետերու մասնավոր իրավունքն ու դիրքը, այլև այդ մեծերու ու հիներու հեղինակութեան ու հարգանքին վրա է հիմնված շատ խոշոր չափով մը պետականութիւնը ընդհանրապես, նույնիսկ շատ բարձր զարգացման հասած ընկերային կարգերու տակ:

Չինաստանի պետականութիւնը իր անօրինակ երկարակեցութիւնը այդ պահպանողական սկզբունքի ու զգացմունքի ուժեղ ազդեցութեանը կպարտի: Եվ բոլոր ժողովուրդներու կյանքին մեջ մեծ դեր է խաղցած ու կխաղա զանազան ձևերով ու աստիճաններով մեծերու հարգանքը, ալևորի պատիվը, անոր հայտնած կարծիքը, անոր ձայնին կշիռը:

Դիրքի տարբերութիւններ առաջացնող պատճառներուն մեջ կա և ուրիշ զույգ մը, որ արդեն զուտ ընկերային է, թեև իհարկե

միշտ հենած բնական ընդունակության ու կարողության: Այդ զույգն է հարստությունը և կրթությունը:

Հարստությունը կախարդական վերարկու մըն է, հագածիդ պես բոլոր դռները առջևդ կբացվին ու բոլոր համբաները կհարթվին, որովհետև ամենքը աշխարհիս երեսին փոխ ու պարտք տվող կփնտրեն, ամենեն զորավորները ամենեն ավելի: «Ոսկիով բեռնված էշը կանցնի ամեն պարիսպեն», ինչպես ըսեր է Ալեքսանդր Մեծի խորամանկ հայրը[1]: Եվ ոսկիով կրնաս քալեցնել ո՛չ միայն էշերը և աշխարհիս զորավորները, այլև քու սեփական խոսքդ ու կամքդ. ատոր համար է, որ կարևոր հանրային որոշումներ տալե առաջ մարդիկ հաճախ կնային հարուստներու չրթունքին:

Գալով մարդուն, որ իր պիտուն ու մատներուն մեջ կրթություն, ուսում, կարողություն ու վարժություն է դիզեր, չատ նման է իր վիճակովը հարուստ մարդու դրության: Որոշ արհեստ մը, արվեստ մը, գիտարվեստ մը, որոշ գիտություն մը, վկայություն մը ձեռքդ ունենալը հարստություն ունենալ ըսել է: Հարստությո՛ւն մը, որ ընդհանրապես խոշոր վաշխառու տոկոսներ չի բերեր, սակայն միշտ կարելի է շահագործել. և հենվելով այդ ներքին հարըստության վրա ստանալ որոշ դիրք, երբեմն շա՛տ բարձր, և՛ ազդեցություն, և՛ խոսքի կշիռ, որովհետև այս տեսակի ակնեղենն ալ չատ փնտրված ապրանք է, և որոշ տեսակները չափազանց հազվագյուտ. իսկ տնտեսագիտության օրենքով՝ ինչքան փնտրված ու հազվագյուտ, այնքան ավելի թանկագին, ճիշդ նյութեղեն հարստության նման:

Դիրքի անհավասարություն ստեղծող չորրորդ աղբյուրը ծագումն է: Ընկերության մը մեջ մարդիկ, բոլորովին անկախ իրենց անձնական առավելություններեն ու պակասություններեն, նորեն կտարբերին իրարմե իրենց դիրքովը, որովհետև կպատկանին ընտանիքներու, որոնք տարբեր աստիճանի հարստության, պատվի ու իրավունքներու տեր են:

Ինչքան ցած է քաղաքակրթությունը և ինչքան անսանձ ուժեղի տիրապետությունը, այնքան ալ խիստ են ընտանիքներու մեջ եղած դիրքի ու իրավական տարբերությունները: Այն աստի-

ճան խիստ, որ այս կամ այն ընտանիքին պատկանիլը կդառնա մա՛յրը բոլոր մյուս ընկերային անհավասարութիւններուն:

Թարմ ու կուվասեր ցեղ մը կուգա ուրիշ ժողովուրդի մը վրա: Կհաղթե, դիմադրողները կոչնչացնե, իսկ մնացածները կառնե իր իշխանութեյան տակ: Այսինքն՝ բոլոր իրավունքները կանցնին տիրող ցեղին, ինչպես և պարտված ցեղերու ամբողջ հողերն ու ստացվածքը: Հաղթվածները կդառնան ստորին կարգի ընտանիքներու ստվար տեսակ մը՝ համեմատաբար շատ ավելի փոքրաթիվ տիրող ընտանիքներուն հանդեպ:

Այս ստորնութեյունն ալ իր տեսակները և աստիճանները ունի. կան ստրուկնե՛ր, որոնք հատ-հատ կամ ընտանիքով կբաժնվին տիրողներուն մեջ, կգնվին ու կվաճառվին ու կգործածվին բոլորովին անբան անասուններու նման. կան ճորտե՛ր, որոնք, պինդ նստած իրենց հողին վրա, անվերջ կմշակեն այդ հողը իրենց տերերուն համար և այդ հողին հետ ալ կանցնին ձեռքե ձեռք. կան և քիչիկ մը ավելի մարդավարի ձևերը, երբ բազմաթիվ պարտավորութեյուններու ու տուրքերու փոխարեն կձգվի իրենց հողի կտոր մը, որ իրենց ուտելիք հացը հանեն, առանց իհարկե որևէ կերպով խառնվիլ կարողանալու «մեծերու» գործին:

Քաղաքակրթութեյան բարձրացման հետ ընտանիքներու մեջ եղած դիրքի ու իրավունքի այս սուր տարբերութեյունները կամաց-կամաց կտաշվին ու կհղկվին. իսկ նոր ժամանակներու ճնշումին տակ, գոնե հանրապետական երկիրներուն մեջ, ընտանիքներու այդ իրավական առանձնաշնորհները բոլորովին կջնջվին:

Բայց նույնիսկ ամենատեմոկրատիկ կարգերու տակ այս կամ այն ընտանիքին պատկանիլն ունի և ունենալու է ազդեցութեյան բաժինը անհատներու բռնած դիրքին վրա: Որովհետև բացի իրավական խոշոր տարբերութեյուններե, որոնք գործնականին մեջ դեռ շատ կան, բացի տնտեսական տարբերութեյուններե, որոնք հսկայական չափերու կհասնին հաճախ և որոնք ինչքան ալ որ սանձվին, միշտ ալ գոյութեյուն պիտի ունենան որոշ չափով, կան նաև զուտ հոգեկան տեսակի տարբերութեյուններ, որոնք նմանապես մնալու են միշտ, որովհետև շատ են բնական ու մարդկային:

Ընտանիքի մը մեջ սերունդե սերունդ նույն ուղղութեյամբ

տարված դաստիարակութիւնը, որոշ ոգին ու կենցաղի գունավորումը. ճաշակի որոշ կծով նրբացումը և հնութեան համայքը, ասոնք բոլորը իրենց տեսակի գեղեցկութիւններ են և առավելութիւններ, որ ժխտել չենք կրնար. ինչպես որ չենք կրնար ժխտել մինոսյան՝ գինիի, ամանի մը, պարսկական հին գորգի մը, չինական հախճապակիի մը կամ ճափոնական միջնադարյան գգեստի մը յուրահատուկ գրավչութիւնն ու գեղեցկութիւնը, և որոնք բոլորովին մասնավոր դիրք կգրավեն մեր առօրյա սովորական իրերուն, զարդերուն ու կահերուն մեջ:

Ասկե զատ պետք չէ մոռնանք, որ նշանավոր գորավարի մը, քաղաքագետի մը, երաժշտի մը, գիտնականի մը, մեծ գյուտ ընողի մը, մեծ բարերարի մը, հեղափոխականի մը ընտանիքին պատկանիլը որոշ դյուրութիւններ, որոշ գիջումներ, որոշ առավելութիւններ, որոշ հարգանք ու հրապույր կընծայե անհատին: Մարդս իր ծնողներեն անոնց թողած նյութական կարողութեան հետ կժառանգե նաև անոնց բարոյական հարստութիւնը, անոնց վարքն ու պատիվը, անոնց անունն ու համայքը:

Այսպեսով՝ նախ մարդոց բնական տարբերութիւնները, այսինքն՝ կորով, խելք, տաղանդ, կամքի ուժ, ճարպիկութիւն, գեղեցկութիւն, առողջութիւն. երկրորդ՝ մարդոց սեռական ու սերնդական տարբերութիւնները՝ արյր, թե՛ կին, ծե՛ր, թե՛ երիտասարդ, հի՛ն, թե՛ նոր սերունդ. երրորդ՝ մարդոց նյութական ու կրթական տարբեր աստիճանի ու տեսակի հարստութեան տեր ըլլալը. և վերջապես ընտանիքներու տարբեր համայքն ու ժառանգական արժեքը, կա՛ն ու գոյութիւն ունին մի՛շտ. և իրենց գոյութեամբը կառաջացնեն դիրքի այն բազմազան տարբերութիւնները, որ մենք կտեսնենք կյանքի մեջ, հանրային գործունեութեան մեջ, ժողովուրդի ու պետութեան ղեկավարութեանը մեջ:

Դիտելու ու դատելու ընդունակութիւն մըն է անհրաժեշտ՝ երևակայելու համար, որ խաղի նպատակով հավաքված 15 երեխաներեն ամեն մեկը նույն ձայնը, նույն ազդեցութիւնը և նույն կարևորութիւնը ունենա խաղին ու բոլորին համար, և որ չգտնվի անոնց մեջ ղեկավար ու հետևող, հրամայող ու հպատակող. ետևեն քաշող ու ետևեն գնացող, այլ ամենքը հավասար: Եվ այս

տեսակ բան մը երևակայողը ի՞նչպես կրնա հավատալ, որ այդ 15 երեխաներուն մեջ խաղ պիտի գոյանա: Կգոյանա միայն կռիվ:

Ամեն մեկը իր դիրքովը ամենուն հավասար՝ կենշանակե անկազմակերպություն, վայրենություն, հոտային կյանք, ան ալ խիստ ցած տեսակի. կենշանակե քայքայումը ընկերային միության: Միությունն գոյացնելու համար, իրարու հետ աշխատելու, իրարու հետ ապրելու, իրարմով զվարճանալու և ամբողջություն մը կազմելու համար, խաղ մը առաջացնելու համար անհրաժեշտ է պարագլուխ և հպատակ, անհրաժեշտ է կարգապահություն, անհրաժեշտ է հրամայող ու կատարող, ստորադասություն, մեծ ու պզտիկ, այսինքն՝ պետություն: Առանց պետի, առանց սպայակույտի ամենալավ բանակները կվերածվին խուժանի, կղառնան ոչխարներու կամ գայլերու ոհմակ:

Գ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վայրենի մարդը, երամակային մարդը և նախնական ընտանիքի մը անդամները շատ ավելի նման են իրար և շատ ավելի «հավասար» են իրար ոչ միայն իրենց դիրքովը, այլև իրենց կատարած աշխատանքովը, ճիշդ մյուս կենդանիներուն նման: Ամեն մեկը կկատարե ամենուն կատարած գործը, գրեթե միևնույն ձևով և նույն միջոցներով, քանի որ պահանջները դեռ շատ են նախնական և աշխատանքի գաղափարը ուտելիք փնտրելեն և կռվզտելեն շատ անդին չանցնիր:

Բայց նույնիսկ այս ցած աստիճանին վրա «աշխատանքի հավասարություն» ըսվածը պայմանական բառ մըն է միայն հետագա ընկերային վիճակեն իր ունեցած մեծ տարբերությունը ընդգծելու համար: Թե չէ՝ արուի ու էգի, անվարժի ու փորձվածի, ծույլի ու աշխուժի, զորեղի և տկարի կատարած որսն ու գործը ո՛չ իրենց թափած ճիգերովը, ո՛չ ձեռք բերած արդյունքովը, ո՛չ ալ ատոնց հետևանքը եղող վայելքը երբե՛ք հավասար չեն և երբեք ալ հավասար չեն կրնար ըլլալ: Նույնիսկ բաղդն ու պատահականությունը հոս ալ իրենց բաժին դերը կխաղան:

Ընտանիքի ու ցեղի աստիճանական վարպացմանը զուգընթաց առաջ կուգա ավելի չեչտված տեսակի աշխատանքի անհավասարություն մը: Եթե ընտանիքն ու ցեղը մեծցած է իր բնական աճումով ու ճյուղավորումով, ինչքան համայնքին թիվը մեծնա և գործերն ու կարիքները չատնան, հետզհետե ցեղի պլուխը, ինչպես և ընտանիքներուն մեծերը, հրամանատարները, ղեկավարները, մասամբ հարկադրված կյանքի պահանջեն, մասամբ անձնական ախորժե, իրենց բոլոր աշխատանքն ու մտածումը կհատկացնեն միայն ղեկավարության գործին, հրահանգելու, խորհուրդ տալու, ստուգելու, կառավարելու, նախատեսելու՝ ծագած վեճերը հարթելու և կատարվելիք աշխատանքներուն ուղղություն տալու: Որով մնացած բոլոր «սև» ու «ծանր» աշխատանքը կմնա ընտանիքի մյուս անդամներուն վրա:

Եթե ընտանիքն ու ցեղը մեծցած է տիրապետությամբ, բռնի ձուլումով, ավելի ևս խիստ կչեչտվի տիրող ու հպատակ մասերու կատարած աշխատանքին անհավասարությունը: Տիրող մասը իր ձեռքը կպահե զենքն ու հակողությունը՝ աշխատանքի ամբողջ ծանրությունը նետելով տիրվածներուն վիզը:

Ուրիշ խոսքով՝ ընկերային կազմին մեջ աշխատանքի անհավասարությունը ուժեղցնող ամենեն առաջին և ամենեն գլխավոր պատճառը ամեն հանրային գործի մեջ առաջ եկող դիրքի անհավասարությունն է. որով այն բոլոր պատճառները, որոնք կնպաստեն դիրքի տարբերություններ առաջանալուն, միաժամանակ կնպաստեն նաև աշխատանքներու մեջ եղած անհավասարության խորացումին ու խստացումին:

* * *

Դիրքի տարբերություններուն կավելնա չուտով երկրորդ պատճառ մը: Ինչ չափով որ կբարձրանա քաղաքակրթությունը, նույն չափով կպարգանա և աշխատանքը ինքը, աշխատանքի ձևերը, աշխատանքի տեսակետները, աշխատանքի նյութերը, աշխատանքի զենքերը. որով և կամաց-կամաց անկարելի կդառնա, որ միևնույն մարդը ամեն գործ կարողանա տեսնել և որ ամենքը միևնույն գործերը տեսնեն: Աշխատանքի վարպացմանը զուգ

կերթա աշխատանքի բաժանումը, աշխատանքի մասնագիտացումը. ամեն մեկուն՝ իր գործը, իր արհեստը, իր ընելիքը:

Եվ աշխատանքները հետզհետե իրարմե այնքան կտարբերին ու կզանազանվին իրենց գործունեության միջոցներովը, եղանակովը, կատարումովը, նպատակովը, իրենց հոգիովն ու մարմնովը, որ ուղղակի ծիծաղելի կդառնա հավասարության մասին խոսիլը: Հավասարությունը մաթեմատիկական հասկացողություն մըն է, իսկ մաթեմատիկան կրնա միայն նման իրերը իրարու հետ համեմատել. արդ՝ ինչո՞վ են իրար նման և ինչպե՞ս չափենք ու համեմատենք ժամագործի մը, հողագործի մը, գործավորական բանվորի մը, տավարածի մը, դերասանի մը, հաշվապահի մը, պինեպանի մը, գիտնականի մը, ջուլհակահարի մը ու սեղանավորի մը աշխատանքը. և ի՞նչը չափենք, մկաններո՞ւն վատնած ուժը, ջղայի՞ն սպառումը. ինչո՞վ չափենք. ժամերու ու կտորներու ողորմելի հաշիվովը հեռու չենք երթար:

Եվ այս բոլոր չափերեն վեր կա ուրիշ կետ մը, որ դժբաղդաբար շատ հաճախ կմոռցվի: Աշխատանքի զգացական կողմը, այ՛ն, ինչ որ սովորաբար կանվանենք հակում, կոչում, սեր, ոգևորություն որոշ գործի մը համար, անհատական չնորհք ու հարմարություն այս ու այն աշխատանքին համար:

Սիրով կատարված գործ մը, սիրված աշխատանք մը աշխատանք ըլլալե ավելի հաճույք մըն է, ժամանց մը, զվարճություն մը, կյանքի ուրախություն մը, գուցե կյանքի ամենեն խոր ու տևական ուրախությունը: Եվ անոր պատճառած սպառումն ու հոգնությունն անգամ բավականություն մըն է: Մինչ չսիրված և ակամա կատարվող աշխատությունները, ինչքան ալ թեթև ըլլան, դյուրին ու մեքենական, սաստիկ կհոգնեցնեն, կձանձրացնեն, կտանջեն և աշխատանք ըլլալե ավելի տառապանք են: Այնպես որ աշխատանքներու հավասարությունը, «ծանր» ու «թեթև», «սև» ու «սպիտակը» փնտրելու ժամանակ այս չափազանց կարևոր զգացական կողմը աշխատանքի երբեք պետք չէ ուշադրութենեն բաց թողնենք, եթե թյուր ու չապլոնական եզրակացություններու հասնիլ չենք ուզեր: Իր հողը, իր այգին, իր կովերը սիրող գյուղական աշխատավորի մը համար նույնիսկ ամենեն

«ծանր» ու ամենեն «սև» կոչվող գյուղական աշխատանքը և՛ հաճելի է, և՛ ցանկալի: Եվ ընդհակառակը, չափազանց սև, տգեղ ու ծանր և անբարոյական աշխատանք մըն է երես ու կես չարադրություն գրելը, երբ գրելիքիդ մասին ինքդ ալ մեծ բան մը չգիտես, ու կփորփրես գլուխդ, թե ինչ գրես, բայց պետք է գրես, գրաշարը դուրսը կսպասե քու նչանավոր հրապարակախոսութիյանդ:

Աշխատանքի մը ծանրութիյունն ու սևութիյունը իր հարկադրված ըլլալուն մեջն է, ներքին հոգեբանական անբնականութիյանը մեջն է, ո՛չ թե իր նյութին ու ձևին: Ինքնին սև ու սպիտակ գոյութիյուն չունի աշխատութիյան մեջ. ինչ որ մեկուն համար չատ թեթև է, մյուսի համար ծանր է արդեն, իսկ երրորդին անտանելի՝ նայելով, թե ինչ աստիճան կհամապատասխանե աշխատողի ուժերուն, հակումներուն, սերերուն, ծրագիրներուն և նախապաշարումներուն: Մեկը տասը վայրկյան կաշխատի և ձանձրացած է արդեն, իրեն համար հետաքրքիր չէ այդ աշխատանքը, ի՛րը չէ աշխատանքը, ի՛րը չէ աշխատանքին արդյունքը, ի՛նքը չէ, որ կվարե աշխատանքը. ինքը կաշխատի պատառ մը հացի համար: Մյուսը, որ տերն է իր աշխատանքին, ձեր ուզածմյա բոլոր պահանջներուն հակառակ, կաշխատի տասը ժամ և ավելի և կընդհատե ակամա, որովհետև կաշխատի ի՛ր գործին համար, ի՛ր նպատակներուն ու ծրագիրներուն համար, ի՛ր հառաջդիմութիյանը համար, իր կարողութիյունները գործադրելու պետքին ու հաճույքին համար, «գործի սիրուն համար», ինչպես որ կըսենք:

Եվ ինչքան որ մարդկային քաղաքակրթութիյունը կզարգանա, այնքան ավելի չեշտ ու կարևորութիյուն կստանա աշխատանքի այս անհատական կողմը, աշխատանքի, այսպես ըսեմ, զգացական, հոգեբանական արժեքը: Ինչպես որ տնտեսագիտութիյան մեջ առարկայի մը իսկական արժեքը ո՛չ թե անոր ստացմանը համար սպառված նյութերու ու աշխատանքի գումարն է, ինչպես որ դեռ չատերը կկրկնեն, այլ այդ առարկայի ի՞նչ աստիճան ցանկալի ու փնտրված ըլլալն է հաճախորդներու կողմեն այդ միջոցին, այսինքն՝ հոգեբանական վիճակ մը, չափազանց քմահաճ, չափազանց երերուն, և որ կառաջանա չատ բարդ և այլազան պատճառ-

ներն, որոնք հաճախ կխուսափին ամեն քննութենն: Այդպես ալ աշխատանքի մը արժեքը, կշիռը, ծանր ու թեթեւը աշխատավորի հոգեբանութեյանը մեջն է, որ մեր կոպիտ ու նախապատմական չափերովը չենք կրնար չափել, իսկ իր նուրբ ու խորին կողմերովը երբե՛ք չենք կրնար չափել:

Այնպես որ քաղաքակրթութեյան ու աշխատանքներու զարգացման ու բարդացման հետ աշխատանքի հավասարութեյուն ըմբռնածը կկորսնցնեն ամեն իմաստ, որովհետեւ անհեթեթ իրողութեյուն մըն է անչափելի բաներու հավասարութեյան կամ անհավասարութեյան մասին խոսիլը:

Եվ վերջապես ինչո՞ւ համար է այդ սին երազը, որ ամեն մեկը անպատճառ հավասար աշխատի:

Ես եմ ու աշխատիլ չեմ ուզեր, թողե՛ք, որ կորչիմ, ձեզի՞ ինչ, ընկերութեյա՞ն ինչ: Պարզ է ամենուս համար, երբ կպահանջենք, որ ոչ ոք ուրիշի աշխատանք չյուրացնե. հոս և՛ իմաստ կա, և՛ մարդկային արդարութեյուն, և՛ ընկերաբանական անհրաժեշտութեյուն: Բայց ես չեմ կրնար հասկնալ իտեալի մը ո՛չ կարևորութեյունը, ո՛չ արդարութեյունը և ո՛չ ալ գեղեցկութեյունը, երբ ինծի հարկադրել կուզեն, որ ես աշխատիմ կա՛մ ավելի շատ, քան ես կրնամ ու կուզեմ, կա՛մ ավելի պակաս, քան ես կջանամ ու կտենչամ. որովհետեւ միայն այս բռնութեյամբ կարելի է ստեղծել աշխատանքի ենթադրական ու երանելի հավասարութեյունը:

Հավասարութեյան երազը ամեն բանի մեջ, բայց աշխատանքի մեջ մա՛նավանդ, ներքին հոգեկան խորը բռնակալութեյան մը ծնունդն է և կձգտի հոգեկան լիակատար ստրկացման: Օրական կտոր մը «սև» հացի փոխարեն կուզեն խեղդել բոլոր կամքերը, բոլոր հակումները, բոլոր անհատականութեյունները և ամեն գործ ու կյանք կեդրոնացնել վերին, միակ, ամենազոր ու ամենատխմար կամքի մը ձեռքը: Կուզեն ոչնչացնել հոգիներու ազատ շարժումը և կյանքի բնական խաղը. ինչ որ անկարելիութեյուն է ըստ էութեյան:

Դ. ՍՏԱՑՎԱԾՔԻ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամենանախնական քարե գործիքի մը հնարված օրեն, մարդոց ձեռքին տակ քանի անասուն հավաքված օրեն, հողի անորոշ տարածություն մը մարդկային ընտանիքի մը կողմե գրավված ու տարրական մշակության ենթարկված օրեն մինչև մեր արդի «բարձր» քաղաքակրթության դարը ստացվածք ըսված բանը գոյացած ու կուտակված է անհատներու ձեռքին մեջ երկու ճամբով. կա՛մ իր սեփական աշխատանքովն ու արտադրությամբը, կա՛մ գողնալով ու հափշտակելով, ըլլա այդ հափշտակությունը բռնի, զենքի ու բռունցքի ուժով. ըլլա զանազան իրավական ու անիրավ անուններու տակ ուրիշներու աշխատանքը յուրացնելով:

Այս երկրորդ ճամբան, այսինքն՝ գողության ու հափշտակության միջոցով հարստություններ դիզելու իրողությունը այն աստիճան սովորական երևույթ է պատմության մեջ, մանավանդ խոշոր հարստություններ գոյացնելու միջոցին, որ շատ շատերու հոգեբանության մեջ ստացվածք ու սեփականություն բառերը դարձեր են հոմանիշը հափշտակության, գողության, չհագործության բառերուն: Եվ այդ մարդիկը ընկերային կյանքի ծանր հիվանդությունը արմատապես բժշկելու համար կպահանջեն վերացումը ամեն սեփականության, իբրև միակ միջոցը, որ կրնա առաջն առնել ամեն ստացվածքի անհավասարության և ամեն չահագործման: Կուգա համայնատիրության գաղափարը իր զանազան ձևերուն տակ:

Դժբաղդաբար հիվանդության ու անարդարության դեմ մղված այս խիստ բնական կռվի միջոցին կմոռցվի սեփականություն ստեղծող առաջին ճամբան, այսինքն՝՝ մարդուս իր սեփական արդար ու բնական աշխատանքին արդյունքը եղող սեփականությունն ու ստացվածքը: Եվ հոտկե ալ կառաջանա համայնատիրական պահանջի ամբողջ անարդար, անբնական, քաշքշուկ ու բռնակալ էությունը:

Նախ՝ բռունցքն ու չահագործումը չե՛ն ստացվածքի անհավասարության պատճառը. այլ երկուքը ուժեղցնող ու ծայրահեղության հասցնող պայմաններն են միայն: Ստացվածքի անհավա-

սարութեան հիմնական պատճառը աշխատանքի էութեանը մեջ է: Աշխատանքները տարբեր են իրարմէ ինչպես իրենց ուրիշ բազմաթիւ հատկութիւններով, այնպես ալ հարստութիւն դիզելու հատկութեամբ. ամեն գործ ու պաշտօն, ամեն արհեստ ու արուեստ հավասար հասույթ չի բերեր ու չի կրնար բերել. և նույն գործը ամեն մարդու ձեռքին մեջ հավասար արդյունաբեր չէ: Գործեր, ձեռնարկներ ու աշխատանքներ կան, որոնք մասնավոր կերպով նպաստավոր են ստացվածքի դիզվելուն. մարդիկ, ընդունակութիւններ, հավելվածական աշխատասիրութիւն, խնայողութիւն և անհատական գծեր ու ճիգեր կան, որոնք մասնավորապես կնպաստեն և՛ արդյունաբերութեան աճումին, և՛ հարստութիւններու կուտակումին: Որով բոլորովին մեկ կողմ թողած հավիշտակելու ու շահագործելու խնդիրը, և այդ տեսակետեն իտեալական պայմաններու մեջն անգամ կարելի չէ, որ ամենքը իրար հավասար արտադրեն և իրար հավասար դառնան իրենց ստացվածքով:

Արդ՝ հանուն ի՞նչ սկզբունքի և ի՞նչ արդարութեան պիտի խլենք ջանասեր և ընդունակ աշխատավորին ձեռքեն իր աշխատանքին արդյունքը ու պիտի տանք նվազ աշխատողին կամ չաշխատողին. այս տեսակետեն դիտած համայնատիրութիւնը կամ ստացվածքի հավասարութիւն, ինչ ձևի տակ ալ կուզե ըլլա, կնշանակե ծուլերու ու գեշ աշխատողներու թագավորութիւն:

* * *

Երկրորդ՝ եթե համայնատիրութիւնը առնենք իր իսկական, զուտ ու լրիվ իմաստովը, այսինքն՝՝ որ մասնավոր սեփականութիւն ըսված բանը բնավ գոյութիւն չունենա, կհասնին վիճակի մը, որուն անուն մը գտնելն անգամ դժվար է: Երբ փողոցեն անցնող ամեն մեկը կրնա գլխուդ վրայեն առնել գլխարկդ, իր գլուխը անցընել ու հեռանալ. երբ նախասենյակեն ով ուզե, կվերցնե իր հավնած վերարկուն ու կրկնակոշիկը ու կերթա, կամ կես գիշերին կբանա սենյակիդ դուռը և կմտնե մաքուր անկողինդ հանգստա-

նալու. չէ՞ որ այդ բոլորը ամենուն է և մարդը իրավունք ունի հանդատանալու: Եթե կրնաս՝ դուն ալ գնա միևնույնը ըրե:

Անշո՛ւշտ, ընթերցողս պիտի կարծե, որ միայն երևակայական կարելիություններ են ասոնք, որ ես կթվեմ: Ո՛չ. ապրված հիշողություններ են, ան ալ մեր Հայրենի հողին վրա, Երևանի մեջ, երբ Հայաստանին արդեն ամիսներե իվեր տեր դարձած պոլշևիկները հանուն արդարության և համայնատիրության կմտնեին պատահած բնակարանը, ցորեկ կամ գիշեր, և իրենց սիրտը հավնած իրը, ճերմակեղենը, հագուստը, լուսանկարչական գործիքը, երեխայի խաղալիքը, պանիրը, յուղը, թուղթը, մատիտը կվերցնեին ու կերթային. և խեղճ տանտիկինը իրենց ուտելիքը և երեխային սիրած մեկ «ստացվածքը» ազատելու համար ստիպված էր թաքցնելու երևակայելի ու աներևակայելի անկյուններ: Պետք էր միայն ունենալ պոլշևիկյան որոշ դիրք կամ ուսիդ հրացան կամ քիչիկ մը ավելի աներեսություն հոգիիդ խորքը, և ահա՛ ինչ որ ուզենաս՝ քուկդ է այդ երջանիկ համայնատիրության մեջ: Ուրիշ խոսքով՝ համայնատիրությունը իր «մաքուր ու լրիվ» ձևին տակ կնշանակե լիակատար սանձարձակություն և կպահանջե վայրենի ու նախապատմական մարդուն հատուկ կենցաղ ու հոգեբանություն:

Այս է պատճառը, որ համայնատիրության իտեալին քիչ-չատ լրջորեն մոտենալ ուզողը հարկադրված է ձեռք վերցնելու սկզբունքի այդ «մաքուր ու լրիվ» ձևին և գիջելու մասնավոր սեփականության որոշ չափ մը անհատներուն:

Եվ այդ որոշ չափի գիջումովն ալ ինքն ու իր վարդապետությունը կկորվին կատարյալ չափի անորոշության գիրկը:

Ինչ գիջենք և ինչ չափով, ինչ սկզբունքի վրա հենված. ընդհանուր անհրաժեշտությա՞ն, առօրյա գործածությա՛ն, անձնական կարիքի՞. բայց ո՞ր իրն է, ո՞ր ստացվածքը, որ այս խախուտ վերնագիրներուն տակը չմտնե. և ինչպե՞ս որոշենք ամեն մեկուն կարիքը, առօրյա անհրաժեշտ գործածությունը. պետք է ցուցակներ չինվին ո՛չ միայն ամեն դասակարգի, ամեն արհեստի, գյուղի ու քաղաքի, այլ հաճախ ամեն անհատի համար. և քանի՞ օրվան համար արժեք կրնա ունենալ այդ ցուցակը, չէ՞ որ

շարունակ կծնին, կմեռնին, կամուսնանան, կփոխվին գործերը, ծրագիրները, պայմանները, կրթութիւնն ու պահանջները:

Եվ ահա՛ համայնատիրական սկզբունքը այս թաց ու անկայուն հողը բավական կոխկռտելեն ետքը ձեռքը հուսահատ թափ կուտա ու կվճռե, որ ամեն ինչ ալ թողնե մասնավոր սեփականութեան, եթե անձնական գործածութեան համար է, անձնական սպառումի ու վայելքի: Որով և տոտիկ-տոտիկ կհասնինք միմիայն արտադրական գործիքներու համայնացումի նշանավոր սկզբունքին, ուրիշ խոսքով՝ արդեն կես ճամբան ետ ենք դարձած համայնատիրութեան գաղափարեն:

Իսկ ինչ կվերաբերի մի՛միայն արտադրական գործիքներու մասնավոր սեփականութեան արգելքին՝ այդ ձևակերպումն ալ բավական խոշոր ծակեր ունի իր վրա: Նախ՝ արտադրութեան գործիքներեն ամենեն կարևորը, ամենեն էականն ու հիմնականը ամենազուտ տեսակի մասնավոր սեփականութիւն է անդառնալի կերպով, այսինքն" մարդու ուղեղն ու ձեռքերը: Ամենակարմիր բռնակալութեան և ամենասև ստրկութեան միջոցով անգամ այդ երկու գործիքներու գործիքը մասնավոր սեփականութենեն խլել չենք կրնար. արժե՞ խոսիլ մնացածի համայնացման մասին:

Երկրորդ՝ թղթի վրա գուցե դյուրին է արտադրական գործիքը անձնական գործածութեան իրերեն զատելը, բայց կյանքը, որ շատ խառնակիչ բնավորութիւն ունի, այդ տեսակ նուրբ բաժանումներու բնավ ականջ չի կախեր: Ինչ որ մեկուն համար արտադրութեան գործիք մըն է միայն, մյուսներուն համար պարզ կյանքի և գործածութեան առարկա է, օրինակ՝ տո՛ւնը, ախո՛ռը, հագո՛ւստը, գի՛րքը, ամե՛ն բան, երբ վարձու կուտաս: Եվ միևնույն մարդուն համար ինչ որ առտուն արտադրական գործիք մըն է, ճաշի ատեն կամ ճաշեն ետքը կդառնա անձնական պետքի, վայելքի ու զվարճութեան առարկա. օրինակ՝ ձին, կովը, կառքը, բանջարանոցը, այգին և ամեն բան, որու միջոցով կարելի է քանի մը տեսակ արդյունք ստանալ կամ ստացված մեկ տեսակի արդյունքը հավասարապես թե՛ կարելի է ծախել, թե՛ վայելել:

Ասով ալ կհասնինք հոն, ուր թաղված է շունը: Դուն կրնաս ունենալ քու սեփական տունդ, բայց վարձու տալու իրավունք

չունիս. հող ալ կրնաս ունենալ, բայց ինքդ պիտի մշակես և քեզի համար, քու ընտանիքիդ անձնական սպառումին համար. չերամ ալ կրնաս պահել, կովեր ալ. կրնաս չինել և արտադրել, ինչ որ ուզենաս և ինչով որ ուզենաս, միայն քեզի համար, քու սեփական գործածութեանդ համար. իրավունք չունիս ծախելու: Իհարկե մանր-մունր փոխանակութիւններ, ինչպես և ձեռքի տակե վաճառքը արգիլելու հնար չկա, և խիստ հետևելու ալ իմաստ չկա: Կարևորը խոշոր արտադրութիւնն է և խոշոր վաճառքը, որ կուղեն խլեն մասնավորներու ձեռքեն ու քմայքեն:

* * *

Եվ այսպեսով կամաց-կամաց սեփականութեան դեմ մղված կռիվը և համայնատիրութեան պահանջը կվերածվի իր համեստ, բայց գործնական ձևին. այսինքն՝ կղառնա հարստութեան սանձ մը դնելու ձգտում, և ապրանքներու ամբողջ արդյունաբերութիւնն ու փոխանակութիւնը պետական խիստ հսկողութեան և վերին ղեկավարութեան տակ առնելու չանք: Չափազանց կարևոր ու չափազանց հետաքրքիր աստիճան մը մարդկային տնտեսութեան, որուն առաջին փորձերը արդեն շատոնց սկսված են հառաջադեմ պետութիւններու մեջ, և որ անշուշտ դեռ շատ քայլեր ունի առնելու նույն ուղղութեամբ, քանի միջազգային չփումը զարգանա, քանի տնտեսութիւնը ինքը բարձրանա և քանի պետութիւնները հետզհետե ավելի խորը տեմոկրատիկ դառնան:

Բայց նույնիսկ այս նեղ սահմաններուն մեջ կյանքը ստիպեր է և ստիպելու է, որ չարժվինք մեծ զգուշութեամբ, որովհետև սեփականութեան բնազդը չա՛տ է խոր ու բնական ո՛չ միայն վայելելու ժամանակ, այլև աշխատելու: Անհատական կարողութիւններու և ծրագիրներու լայն ու ազատ գործադրումը չափազանց խոշոր դերդիչ է աշխատանքի և շատ կարևոր պայման հառաջդիմութեան:

Մանավանդ որ ցանկացված տնտեսական նպատակին հասնելու համար բնավ կարիք չկա անհատական ձեռներեցութիւնը խեղդելու, անհատական ձեռնարկութիւնները մեռցնելու: Ընդհակառակը, կյանքը միակողմանիութիւններու հակառակ է եղած

միշտ. ան կսիրե իր ճամբաներով վազ տալ: Կա՛ն ձեռնարկներ, որ պետականացում կպահանջեն. կա՛ն գործեր, որ ավելի տեղական համայնական բնույթ ունին, բայց կա՛ն և գործեր, և գործերու ամբողջ մեծագույն մասը, որ մասնավոր խումբերու, մասնավոր ընկերութիւններու և մասնավոր անհատներու ջանքերովն ու վարչութեամբը ավելի բնական պտուղ և արդիւնք կուտան, ինչպես, օրինակ, գյուղական ամեն աշխատանք. այդպես ալ մասնավորապես նորութիւնները, հին ձևերե չեղումը, գյուղերը, համարձակ փորձերը անհատական ոգևորութենեն ու համառ ջանքերե է, որ կծնին, պետական ու հանրային մեքենան միշտ ավելի դանդաղաշարժ է, ավելի անսիրտ կաշխատի, առանց հավիշտակութեան և հակում ունի դեպի բուտինը[3]*: Եթե գործ մը ավելի պետական բնույթ ունի, ո՞վ կրնա արգիլել պետութիւնը, որ իր ձեռքը չառնե. և ո՞ր անհատական մրցակցութիւնը կրնա դիմանալ պետութեան ահագին ուժին ու առավելութիւններուն դեմ. իսկ եթե կմնա ու կհաջողի, կնշանակե պետքի մը կհամապատասխանե և պե՛տք է որ մնա:*

Այսպեսով՝ ո՛չ հավասարում ստացվածքի, ո՛չ համայնատիրութիւն: Ինչ ձևի տակ կուզե ըլլա, այդ երկուքն ալ բնակսիոն չարժուած են, հետադիմական, հակառակ մարդկային բնութեան, անհաշտ մարդկային աշխատանքին և հակադիր մարդկային քաղաքակրթութեան զարգացման ընթացքին:

Եվ դեռ միշտ բաց կմնա մարդկային հասարակութեան հին ցավը. մեկ կողմեն խլելը, գողնալն ու հավիշտակութիւնը ուրիշներու ստացվածքին. մյուս կողմեն չարաչար շահագործումն ու յուրացումը ուրիշներու աշխատանքին. ընկերային ծանր հիվանդութիւն մը, որուն դեմ այնքա՜ն մաքառեր են մարդկութեան ամենեն ազնիվ ներկայացուցիչները խոսքով ու գործով, և որուն դեմ ասկե ետքն ալ բնականաբար, և ավելի մեծ չափերով, գուցե և ավելի մեծ հետևանքներով, պիտի շարունակվին կռիվն ու մաքառումը:

Միայն, ընդունի՛նք, որ բժշկելու շա՛տ կարճատես և շա՛տ տգետ եղանակ մըն է, երբ մարմնի սաստիկ բարձրացած ջերմութեան դեմ մաքառած ըլլալու նպատակով՝ կտառաջարկենք, որ

բոլորովին հանգչնեն մարմնին ջերմութիւնը: Եթե ջերմը հիվանդութիւն է, անջերմութիւնը կկոչվի մահ:

Սեփականութիւն բառը մեկ ուրիշ ձևն է ազատութիւն բառին: Սեփական տերը ըլլալ իր գործին, իր ծրագրին, իր աշխատելու եղանակին, իր տանն ու հողին, իր սեփական բույնին և իր կյանքը տնօրինելու ու վարելու եղանակին, կնշանակե ազատ ըլլալ: Մարդկային հոգին և մեր ժամանակներու ոգին դեպի այդ ազատութիւնը կձգտին. և ինչքան ընկերային կյանքն ու քաղաքակրթութիւնը կզարգանա, այնքան ավելի ուժեղ չափերով և ուժգին թափով:

Այդ բարիքը առաջ քիչերը ունեին, չա՛տ քիչերը: Հիմա քանի կերթա կղառնա պահանջն ու իրավունքը շատերուն, հետզհետե չա՛տ շատերուն, մինչև որ օր մը գուցե և ամենուն: Մենք դեպի մանրացումը կերթանք սեփականութեյան: Եվ արդեն չա՛տ որոշ զգալի է օդին մեջ նոր նշանաբանը՝ «Մանր ու մասնավոր սեփականութիւն ամենուն»: Եվ ատիկա է կապիտալիզմի իսկական թշնամին ու ախոյանը. և ատիկա է, որ սանձ պիտի դնե կատաղած գազանին. և ո՛չ թե համայնացման անունին տակ կեդրոնացումն ու կուտակումը ամեն ինչի քանի մը մարդու ձեռքին մեջ. վիճակ մը, ուր կապիտալիզմը միշտ ալ զգացեր է և զգալու է ինքզինքը, ինչպես ձուկը ջրին մեջ: Պոլշևիզմն ու իր համայնատիրութիւնը կապիտալիզմի ամենաբռնակալ և ամենաստրկային ձևն է:

Ե. ԿԵՆՑԱՂԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդուս ապրուստը, հագուստ-կապուստը, կերած-խմածը, նիստ ու կացը, վարքն ու բարքը, ձևերն ու վարմունքը՝ տունն ու տեղը, քաղաքավարութիւնն ու սովորութիւնները, ստացած կրթութիւնը, զվարճանալու միջոցներն ու եղանակը, իր ամբողջ վարած կյանքը, ուրիշ խոսքով՝ այն ամենը, ինչ որ մեկ բառի մեջ ամփոփած կանվանենք մարդուս կենցաղը, մեծ չափերով կա-

խուսն ունի ընկերության մեջ իր ունեցած դիրքեն, աշխատանքեն ու ստացվածքեն:

Հին ըեժիմի տակ դիրքն էր, որ մասնավոր կերպով կընդգծեր ու կորոշեր այդ տարբերությունները. տիրոդի ու տիրվածի, ազնվականի ու ռամիկի, իրավատերի ու իրավազուրկի վարած կյանքն ու կենցաղը հիմնովին տարբեր էին իրարմե: Տեմոկրատիկ կարգերու տակ կամաց-կամաց ծանրության կեդրոնը դիրքեն կանցնի աշխատանքին, թեեւ անշուշտ մարդուս ունեցած դերն ու դիրքը պետական ու համայնական ղեկավարության մեջ ո՛չ այսօր, ո՛չ ալ երբեք չի դադրիր կարեւոր տարր մը ըլլալե՝ կենցաղական տարբերությունները առաջացնող:

Ամեն աշխատանք ունի իր դործադրության հատուկ եղանակները, միջոցները, սովորություններ, տեղը, ժամանակը, մանր ու խոշոր պարտավորություններ, պահանջներ ու առանձնահատկություններ, որոնց պետք է համակերպի աշխատավորը և որոնց կանոնավոր ու տևական կրկնությունը յուրահատուկ դրոշմ մը կդնե աշխատավորին վրա: Ուրիշ է դյուղի ու հողի կյանքը, ուրիշ է քաղաքի ու շուկայի ազդեցությունը, ուրիշ է ձեռքով աշխատողի կենցաղը, ուրիշ է մտքի աշխատավորի ապրուստը, ուրիշ է հոգևորականինը, և ասոնց մեջն ալ ամեն մեկ արվեստ ու գործ ունի իր ուրույնությունը, իր տարբեր նիստ ու կացը: Հաճախ այն աստիճան հստակ են աշխատանքի մը և անոր կապված կենցաղին հետքերը մարդուն վրա, որ առանց դժվարության իսկույն կորոշենք մեկուն ջուլհակ, դյուղացի, «սարեցի», վարժապետ կամ խանութպան ըլլալը և երբեմն շատ կզարմանանք, երբ կիմանանք, որ այս կամ այն անձը կոչկակար, գրագիր կամ առևտրական ներկայացուցիչ չէ եղեր, ինչպես որ մեզի «կթվեր»:

Նույնքան ակներև է նաև ստացվածքի ազդեցությունը մարդոց կենցաղին վրա: Նույն կերպով չեն ապրիր նույն դիրքի ու նույն աշխատանքի մարդոց աղքատն ու հարուստը: Կարիքը, հազիվ ծայրը ծայրին բերելը, հաշվով ապրիլը, բավարար կյանքը և լայն ապրուստը ինչպես մարդուս բնավորության, այնպես ալ իր վարած ամբողջ կյանքին վրա կդնե իրեն հատուկ կնիքը:

Այն աստիճան աչքի զարնող է այս երեք ազդակներու խոշոր

դիրը մարդկային կենցաղին վրա, որ չատերուն դատողութիւնը դեպի միակողմանիութիւն կառաջնորդէ: Եվ կմտածեն, որ ատոնք են կենցաղական տարբերութիւններու միա՛կ պատճառը: Եվ եթե մարդկային ընկերութեան մէջեն վերնան դիրքի, ստացվածքի և մանավանդ աշխատանքի տարբերութիւնները և բոլոր մարդիկը բերվին ընդհանուր հայտարարի, երբ բոլորի դիրքը հավասարվի, երբ բոլոր «սև» աշխատանքը բաժնվի ամենուն վրեն, և թագավորն համայնատիրութիւնը, կամ ստացվածքը կշիռ-կշիռ ամենուն հավասար բաժնվի, այլևս մարդկային կենցաղին մէջ չի մնար որևէ վիճակի ու աստիճանին տարբերութիւն, բոլորի ապրուստն ու կյանքը վարելու կերպը կնույնանա:

Դժբաղդաբար թե բարեբաղդաբար այս բոլորը հեռված է եթե-ի մը վրա և չա՛տ ձախորդ, չա՛տ անկարելի եթե-ի մը: Բայց այդ մոգական եթե-ն այնքան երկար ժամանակ գամված է մնացեր մեր ուղեղներուն մէջ, որ մենք կամաց-կամաց կարծես սկսեր ենք մոռնալ անոր եթե մը ըլլալը. և դարձեր է մեզի համար ավելի իրական, ավելի դրական բան մը, որ մեր բիբին վրա բուսած ճերմակ փառի մը նման կխանգարե մեզի իրականութիւնը ավելի նուրբ ու ավելի հստակ տեսնելու:

Մարդս ընկերային օրգանիզմին մեկ անդամը ըլլալեն առաջ և ըլլալեն հետը նաև անհատ մըն է: Ունի իր անհատական կազմը, բնավորութիւնը, առանձնահատկութիւնները, իր ներքին կյանքը, իր ներքին գույնը, իր որոշ շեշտը, որոնք իր էութենեն ու իր ծագումեն կբխին: Այդ հոգեկան-անհատական ճառագայթումը, որ մեր խոլքերուն կցայտե, որոշ լուսավորում և որոշ գունավորում կուտա մեր անմիջական շրջապատին, այն ամենուն, ինչի որ կմտածենանք, ինչի որ կշփվինք, ինչի որ ձեռք կուտանք: Մեր այդ ներքինը կապդ նաև ու գույն կուտա մեր ունեցած դիրքին, մեր աշխատանքին ու մեր տնտեսական վիճակին. ինչպես և ինքը կապդվի այդ բոլորեն և մեր ամբողջ շրջապատեն: Նո՛ւյն դասին, նո՛ւյն բարեկեցութեան և նո՛ւյն պաղուամի մարդիկը իհա՛րկե որ ունին որոշ նմանութիւններ իրարու. բայց և ինչքա՜ն-ինչքան տարբերութիւններ:

Հարևանցի, թեթև ու հեռվեն նայողը միշտ նմանութիւն-

ները կնկատե. տարբերությունները նկատելու համար ավելի մոտեն ու ավելի երկար պիտի դիտես: Հազիվ ակնարկ մը նետած երկու եղբոր երեսին՝ իսկույն կբացականչենք՝ «Վա՜յ, ինչքան նման են իրար», մինչ այդ երկու եղբայրներու մայրն ու քույրը, որոնք ամեն օր կտեսնեն անոնց երեսը, զարմացած կնային մեզի, թե ինչ նմանություն կարելի է գտնել այդ երկուքին մեջ: Աչխարհիս բոլոր հոտերուն բոլոր ոչխարները մեզի համար միշտ նույն են ու նման, մինչդեռ անոնց հովիվը հատիկ-հատիկ կճանչնա անոնցմե ամեն մեկը, ինչպես մենք մեր դպրոցական հարյուրավոր ընկերները:

Ո՛չ միայն ամեն մարդ ունի իր ուրույն ու ինքնահատուկ կենցաղը, ուրույն գունավորումը իր վարած կյանքին, այլև ամեն ընտանի՛ք ունի իր սեփական նիստ ու կացը, սովորությունները, իր ապրուստի, զվարճության ու կրթության որոշ եղանակը: Եվ վերջապես ամեն ժողովո՛ւրդ, ամեն ա՛զգ, իբրև բնական օրգանական ավելի բարձր տեսակի անհատականություն մը, ան ալ ունի իր ուրույն ու ինքնատիպ ազգային գունավորումը ապրուստի, աշխատանքի, բարք ու կենցաղի: Եվ ամեն անհատ իր կենցաղին մեջ իր անհատական ուրույնություններուն կից ունի և իր ընտանիքին ու ժողովուրդին հատուկ եղող ընտանեկան ու ազգային ուրույնությունները:

Եվ, ի վերջո, ժամանակները, դարերը, մարդկային քաղաքակրթության հասած ընդհանուր վիճակը ունին իրենց որոշ վարվելու, հարաբերվելու, շարժվելու, հագվելու ու ապրելու պահանջները, մոտանները, հարկադրանքները, քաղաքավարություններն ու պատշաճություննները:

Եվ այսպեսով ամեն մեկ անհատի կենցաղին վրա ազդեցության իրենց բաժինը ունին և՛ ժամանակներու ոգին, և՛ ազգային հոգին, և՛ ընտանեկան կյանքը. և՛ իր աշխատանքը, և՛ բարեկեցության վիճակը, և՛ վերջապես իր անհատական-առանձնական էության հատուկ գծերը: Եվ որովհետև այս բոլոր կետերն ալ մարդկային քաղաքակրթության զարգացման հետ հետզհետե ավելի ու ավելի կբարդվին ու կբազմազանվին, մարդուս կենցաղն ալ բնականաբար քանի կերթա այլազան ու բազմագույն կդառնա:

Մարդիկ իրենց կենցաղովն ու ապրուստովը անհամեմատ ավելի նման են իրար քաղաքակրթության ստորին աստիճաններուն վրա: Ջնտիլ մարդկային բարձր զարգացման և միևնույն ժամանակ ամենքը նույն ու նման կենցաղով ապրեցնելու և արվեստի նույն ու նման վիճակով երջանկացնելու երազը սնուցանել, կնշանակի միաժամանակ և՛ առաջ վազել, և՛ ետ:

Այս տեսակի վարդապետական ամեն ինչ տափակցնող արդուկով կարելի է միայն պառկեցնել, ծալլել, կոտրել, խոնարհեցնել, բայց ոչինչ կարելի չէ ստեղծել ու բարձրացնել: Բարձրացումը, ծլումը, աճումը կյանքի պարգևն է և ո՛չ արդուկի: Իսկ կյանք կնշանակե այլազանություն, տարբեր պայմաններ, տարբեր վիճակներ, տարբեր դիրք ու գործ, տարբեր կենցաղ ու տարբեր ապրուստ:

Զ. ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդկային ընկերական տարբերությունները, այսինքն՝ դիրքի անհավասարությունը, աշխատանքի անհավասարությունը, ստացվածքի անհավասարությունը և կենցաղի այլազանությունները, բոլորն ալ իրենց սկիզբը կառնեն մարդոց բնական տարբերություններեն և հենված են միշտ մարդկանց բնական տարբերություններուն վրա, ինչպես մինչև հիմա ջանացի ընդգծել:

Բայց հետզհետե ինչքան այդ ընկերային անհավասարությունները կուժեղնան ու կզարգանան, իրենք ալ իրենց կողմեն նոր ազդակներ կպատրաստեն ավելի ևս մեծցնելու, խորացնելու և նրբացնելու մարդը մարդեն տարբերող բնական անհավասարությունները: Անոնք կազդեն մարդուս կամքին ու բնավորությանը, կազդեն ճաշակին ու զգացումին, կազդեն մտածելու եղանակին, մտածելու նյութին և մտավոր հորիզոնին վրա. ինչպես և կազդեն այդ հոգեկան կյանքի արտահայտությունը եղող լեզվին, չեչտին, շարժուձևերուն, կեցվածքին, քալվածքին, դեմքի արտահայտությանը, նույնիսկ մարմնի ձևավորմանը վրա:

Դիրքը, իրավունքը, անկախությունը, ազատությունը, ինքն

իր տերը ըլլալը, ինքը վարիչ ըլլալը ու ղեկավար դեր ու ազդեցութիւն ունենալը համայնական ու պետական կեանքին վրա կուտան մարդուս մտածմունքին, զգացմունքին, ու վարմունքին ո՛չ, չե՛շտ, համարձակութի՛ւն, հպարտութի՛ւն, վստահութի՛ւն: Գլուխը բարձր, մեջքը ուղիղ, նայվածքը շիտակ: Եվ ասոնց հակառակը ստրուկի, հպատակի, ենթակայի, խեղճի ու կախումն ունեցողի հատկանիշ գծերն են: Մարդուս դիրքը փոխվելուն պես կփոխվի նաև մտածելու եղանակը, և՛ զգալու եղանակը, և՛ խոսվածքը, և՛ կեցվածքը, և՛ քալվածքը:

Ինչքան կուզես հարուստ եղիր կամ խելացի ու գործիդ մեջը ընդունակ ու հաջող, եթե չունիս անկախութիւն, եթե չունիս ազատ ձայն ու մասնակցութիւն գործերուդ ղեկավարութեանը մեջ, եթե ենթակա ես ու հպատակ ուրիշ դասակարգերու, ուրիշ ժողովուրդներու, ուրիշ տերերու քմայքին ու կարգադրութիւններուն, դուն չե՛ս ունենար երբեք շարժվելու, վարվելու, աշխատելու այն հոգեկան թեթևութիւնն ու թռիչքը, ինչ որ հատուկ է ինքն իր տերը եղող ժողովուրդներուն, դասակարգերուն ու անհատներուն: Տիրվածի հոգին ճմռտված է, ամոթահար և ծանր քար մը կապված է իր թևերուն, և ինչքան բարձր զգաս ու գնահատես քո՛ւ և քու ժողովուրդի՛դ արժեքը, այնքան ավելի ծանր կճնշե այդ քարը քու խոյանքիդ վրա: Այս ճշմարտութիւնը երբեք պետք չէ՛ մոռնան տիրված ու հպատակ ժողովուրդները: Եվ ընդհակառա՛կը. ինչքան կուզե խեղճ ու կրակ ըլլա Հայաստանը, քանի մը տասնյակ քառակուսի մղոնի վրա, ժողովուրդը ծվենններու մեջ, զորքդ բոպիկ ու անվարտիք, և ինքդ հազիվ կերպ մը հագված ու սնված, բայց երբ դո՛ւն ես քու տերդ, երբ քու ճեռքերուդ մեջն է քու ժողովուրդիդ կյանքին ու աշխատանքին ղեկավարութիւնը, իսկույն կզգաս քեզի ամենեն բարձր դիրքի վրա, հավասար մյուս ժողովուրդներուն, և իսկույն զգալի կդառնա ազատ ու անկախ մարդու շեշտն ու թրթիռը նույնիսկ քու համեստ ու խոնարհ խոսքերուդ տակը:

Հոգեբանութիւնն է, որ կփոխվի:

Ավելի սովորական ու պարզ է աշխատանքի կատարած ազդեցութիւնը: Ամեն աշխատանք որոշ դիտողութեան ու մարզանքի

դաշտ ունի իր առջևը, ուր ստիպված է աշխատավորը շարունակ դառնալու. և երբ տարիներու ընթացքին նույն աշխատանքը կկրկնվի՝ բնականաբար կզարգանա որոշ կողմը մտավոր աշխարհի. իր դատելու եղանակը որոշ գույն և ուղղություն կստանա, ինչպես և իր ճաշակը և հակումները: Աշխատանքներ կան, որ շատ նեղ շրջանակի մը մեջ կդառնան, աշխատանքներ կան, որ աշխարհքի չուրջը կդառնան և աշխարհներ կդարձնեն:

Այլև կարևորություն ունի աշխատության տևողությունը, աշխատավորեն պահանջած ուժն ու ժամանակը: Կծծե՞, կսպառնի՞, արյունարբու գազանի մը պես, մարդուս բոլոր հյութերը, բոլոր ջիղերը, թե՞ կմնա դեռ ուժ, հետաքրքրություն, ձգտում ու ժամանակ ուրիշ բաներով ալ Հոգին գբաղեցնելու: Աշխատանքեն դուրս կմնա՞ եռանդ և՛ ապրելու, և՛ վայելելու, և՛ իր չուրջը նայելու. որովհետև ատոր մեջն է և ատոր վրա է հենված մարդուս հորիզոնին լայնացումը, մարդավարի ու մարդուն վայել կյանքը:

Միակերպ, պարզ ու մեքենական աշխատանքներ կան, որ կօրորեն, կքնացնեն, կթմրեցնեն միտքը, Հոգին, և Հոգիին թռիչքը. աշխատանքներ կան, որ կղրդեն, կզրգռեն, կսրեն ղիտողությունը, դատողությունը, վճռականությունը, ձեռներեցությունը: Ուրիշ խոսքով՝ աշխատանքը կազդե մարդուս Հոգեբանությանը իր տեսակովը, իր եղանակովը, իր տևողությամբը, իր տեղովը, իր առաջացուցած խմբումովը կամ մենացումովը, իր բոլո՛ր կողմերովը:

Հարստությունն ու չքավորությունը իրենց զանազան աստիճանավորություններով նմանապես կարևոր բաժին մը ունին Հոգիներու բացումին ու կծկումին, լարումին ու խաթարումին, չորացումին ու չարացումին վրա: Եվ տարբեր-տարբեր դերեր ունի Հարստության որակը, քանակը. Հո՞ղ է ու կալված գավառական անկյուն մը ինկած, շարժուն ու ազատ դրա՞մ, գործարա՞ն մը, արդյունաբերական ձեռնա՞րկ, նավե՞ր ու ապրանք Հեռավոր ծովերուն երեսը, թե՞ խանութ մը տեղական շուկայեն ու շրջապատեն սնվող: Եվ վերջապես տնտեսական որոշ կայուն աստիճան մը անհրաժեշտ է անկախության Համար, բնավորության Համար, ձեռներեցության, փորձի ու Հանդգնության Համար, և՛ կրթության Համար, և՛ ճաշակի:

Կենցաղը նույնպես իր միջավայրի անմիջական ու հարատած տպավորութիւններովը, իր ընձեռած կրթութեամբը, իր ընտանեկան խոր ազդեցութեամբը, իր ազգային երանգովը մեծ չափերով կմասնակցի հոգիներու կազմութեան ու գունավորման գործին՝ ունակութիւններու, բնավորութիւններու, զգացումներու ու հակումներու ծաղկումին ու թոչնումին:

Այսպեսով է, որ ընկերային կյանքը, մարդկային սերտ կեանակցութիւնը, իրար ընդօրինակելն ու իրարմէ սորվիլը ո՛չ թէ կնպաստեն մարդոց իրար նմանվելուն, այլ ընդհակառակը, քանի կերթա կտարբերի ամեն մեկուն հոգիին զանձարանը, ամեն մեկու կարողութիւններուն և ունակութիւններուն հյուսվածքը:

Ընկերային օրգանիզմի ու քաղաքակրթութեան բարձրացումը ո՛չ թէ դեպի հոգեբանական նմանութիւն ու հավասարութիւն կտանի մեզի, այլ դեպի բնական տարբերութիւններու հարստացումը, չեչտումն ու բարդացումը:

Եվ մարդկութիւն ըսվածը, ըլլա՝ այսօր թե վաղը, ո՛չ թէ իրարու նման ու հավասար, ողորմ ու կլորիկ հոգիներու կանոնավոր չարան մըն է, երկար տեր-ողորմյայի մը պես, որ միակերպ կդառնա ձանձրացած աստվածութեան մը մատներուն տակ: Մարդկութիւնը, ըլլա՝ այսօր թե վաղը, խրոխտ ու կենդանի անտառ մըն է, անթիվ գույներով, անհուն ձևերով, հազար հոտերով, անվերջ հյութերով, ուր կաճի, կապրի ու կղողղա ամեն մեկը իր կյանքով, ամեն մեկը ի՛ր համար, և ամենքը իրարու համար, հուռթի բնութեան արարիչ ձեռքին տակ:

ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Այսինքն ժողովրդավար երկիրներու
հանրային ղեկավարությունը

Մեր աչքերուն առջևը, մեր չուրջը ու մեր միջոցով կատարվելու վրա է պատմական խոշոր փոփոխություն մը: Մարդկային ընկերային կյանքը իր զարգացման հարատև աշխատանքին մեջ հասած է քաղաքակրթության նոր աստիճանի մը, որ սկիզբ առնելով ավելի հառաջադէմ արևմտյան ժողովուրդներեն, հետզհետե սկսած է տարածվիլ ամեն կողմ և շատ չանցած պիտի դառնա բոլոր ժողովուրդներուն տիրող ընդհանուր վիճակ մը: Ընկերային կյանքի բոլոր կողմերուն ու երևույթներուն վրա խորապես ազդող և ընդհանրացող այդ վիճակին անունն է ժողովրդացում:

Ժողովուրդներու պատմական զարգացման այս նոր աստիճանը իր հետը կբերե բնականաբար իրեն հատուկ ընկերային նոր դրություններ, որոնք թեև ամենքս կտեսնենք ու ամենքս գիտենք, բայց դեռ չա՛տ չատերը մեր մեջնեն, հին գաղափարներու և կարգերու ազդեցության տակ, հարկ եղած չափով չեն գիտակցիր, պետք եղած հստակությամբ չեն ըմբռներ կամ թերի ու սխալ կգնահատեն:

Այսպես՝ պարզ է ամենուս համար, որ «ուսումը», դպրոցական կրթությունն ստացած ըլլալը չափազանց կարևոր ու գնահատելի բան մըն է ժամանակակից մարդուն համար. սակայն դեռ շատ չատերու մտքին մեջ ատիկա կնկատվի իբրև անձնական հարստություն, հաջողություն ու արդյունաբեր պաշտոններ ձեռք բերելու միջոց մը միայն. և համեմատաբար շատ քիչերն են, որ նույն հստակությամբ կտեսնեն, թե այդ կրթությունն ստանալը և ինչ տեսակի կրթություն ստանալը, միայն անհատներու հացին, գրպանին ու դիրքին վրա չէ, որ կազդե, այլև ամբողջ ժողովուրդի մը ամբողջ կյանքին վրա, ամբողջ ժողովուրդի մը հանրային գործունեության վրա և այդ հանրային աշխատանքին բռնած ու բռնելիք ընթացքին և ուղղության վրա. թե՛ այդ ուսումը և թե՛ այդ ուսումը ստացողները ճակատագրական դեր կխաղան հիմա բոլոր ժողովուրդներու կյանքին մեջ, թե՛ չար և թե՛ բարի իմաստով:

Դեռ ինչքա՜ն-ինչքան մարդիկ կան, մանավանդ «գործի-մարդիկ», որ լրագրի մը ընթերցումեն ետքը կամ քաղաքական անախորժ խոսակցության մը տաք տպավորության ներքև՝ կըսցականչեն վրդովված. «Եղբա՛յր, աս ի՜նչ խայտառակ կացություն է. բոլոր պարլամենտները, բոլոր հանրային գործերը մնացեր են լրագիր մրոտողներու, խեղճ ու կրակ վարժապետներու, անգործ բժիշկներու և փաստաբաններու ձեռքը, որոնք ո՛չ գործերին բան կհասկնան, ո՛չ դրամ է անցեր իրենց ձեռքեն, և ո՛չ ալ դրամն ու գործերը վարել գիտեն. ինկեր ենք երեխաներուն ձեռքը»: Եվ կերևակայեն, որ այս «խայտառակ կացությունը» անցողակի, պատահական հիվանդոտ երևույթ մըն է. և որ կամաց-կամաց ջրերը պիտի պարզվին և պիտի գան երանելի օրերը, երբ բոլոր պարլամենտներն ու հանրային գործերու ղեկավարությունը պիտի անցնի գործի մարդոց ձեռքը. այսինքն՝ վաճառականի, պորսայի խաղերը շահագործողի, միջնորդի, կապալառուի ու արդյունաբերողներու ձեռքը. թեև ուրիշները շատ չբարկացնելու համար հաճախ ետևեն կավելցնեն նաև «և այլն»:

Ո՛չ. այդ ուղղությամբ չէ, որ կերթա ժողովուրդներու կյանքին ու պետության ղեկավարությունը. և ուսում առածներու արդի խաղցած կարևոր դերը ո՛չ պատահական է, ո՛չ անցողակի, այլ պատմական որոշ աստիճանի մը որոշ հետևանք: Հին ըժիմին այլևս չի վերադառնար կյանքը: Եվ ով որ կուզե իր ազդեցության բաժինը ունենալ հանրային կյանքի ու պետության ղեկավարությանը վրա, միայն մեկ ճանապարհ ունի. մտնել մտավորականության շարքը:

Նույնն է վիճակը նաև կուսակցություն և կուսակցականություն ըսված երևույթին հանդեպ: Ամենքը կտեսնեն քաղաքական կուսակցություններու օրե օր աճող ուժն ու կարևորությունը, բայց դեռ շատ շատերն են, որ թյուր ու թերի կգնահատեն անոնց արժեքը: Դեռ շատ շատերուն համար չարի՛ք մըն է ատիկա, դժբաղդություն մը: Դեռ ինչքա՜ն-ինչքան մարդիկ, և հաճախ շատ ազնիվ ու չնորհքով մարդիկ, «Ես անկուսակցական եմ» կըսցականչեն շարժումով մը, որ շատ կնմանի աղտոտ բանի մը քովեն անցնող մարդու մը փեչերը հավաքելուն: Մինչդեռ պատմական

դրուքյուններուն ընթացքը և ժողովուրդներու ծոցին մեջ կատարվող վոփոխութքյունը եթե քիչ մը ավելի խորը դիտելու ըլլային, խորին ամոթ մը պիտի զգային այդ տեսակի խոստովանութքյուն մը ընելե, որովհետև «Ես անկուսակցական եմ» ըսելը քաղաքական կուսակցութքյուններու արդի կռվին մեջ, միևնույն է, թե պատերազմի դաշտեն դասալիք եղող զինվոր մը հպարտ ու արհամարհոտ կեցվածք մը առնե ու բացականչե «Գիտե՞ք, ես փախստական եմ»:

Կռվելու ու պայքարելու պարտական են ամենքը, որովհետև այդ կուսակցական մաքառումը ընդհանուրի բարիքին համար է, պատմութքյան բերած պահանջին համար է, մեր եկող սերունդներուն համար է, քաղաքակրթութքյան համար է:

Կռվե՛, որ դիրքեն որ կամենաս, ո՛ր դիրքը որ քու հոգիիդ ավելի կհամապատասխանի, բայց կռվելու պարտակա՛ն ես:

Պատմական իրողութքյունն այն է, որ ժողովուրդներու պետական ու հանրային կյանքի ամբողջ տնօրինութքյունը անցած է կամ անցնելու վրա է քաղաքական կուսակցութքյուններու ձեռքը, իսկ քաղաքական կուսակցութքյուններուն ղեկավարութքյունը կեդրոնացած է մտավորականութքյան ձեռքը. որով ամբողջ ներքին ու արտաքին հանրային կյանքն ու պետականութքյունը ղեկավարողը կղառնա ժողովուրդի մը մտավորականութքյունը:

Այս երևույթի պարզ ու հստակ գիտակցութքյունը, ատոր ինչո՞ւն և ինչպե՞ս առաջացած ըլլալը որոշակի ըմբռնելը չա՛տ մեծ կարևորութքյուն ունի թե՛ ղեկավար դարձած մտավորականութքյան համար և թե՛ ժողովուրդին, որ գործին տերն է և իրավատերը:

Մտավորականութքյան համար անհրաժեշտ է այդ խոր գիտակցութքյունը, թե իր ձեռքերուն մեջն է ամբողջ ժողովուրդի մը ներկան ու ապագան, ամբողջ ժողովուրդի մը բաղդը, որպեսզի ավելի ուժեղ զարգանա անոր հոգիին մեջ պատասխանատվութքյան ու պարտաճանաչութքյան զգացումը, ավելի ջերմ ու ամուր դառնա իր ու ժողովուրդի մեջ եղած կապը, և ավելի գիտակցորեն նվիրվի իր կոչումին ու աշխատանքին:

Այդ իրականութքյան պարզ ու հստակ գիտակցութքյունը անհրաժեշտ է և՛ ժողովուրդին համար, որպեսզի հետաքրքրվի, հանչ-

նա և օտարի մը պես չնայի իր մտավորականութեան վրա, և իբրև իրավատեր ավելի կրկտող ու պահանջող դառնա և հարկադրե, որ իր գործը ստանձնողները մոտիկ ծանոթ ըլլան իր պետքերուն, ցաւերուն, ձգտումներուն, և մշտական հսկողութեան տակ պահե իր այդ փաստաբաններն ու վարիչները:

Ժողովուրդներու ղեկավարութիւնը միշտ ալ գտնված է փոքրամասնութեան մը ձեռքը, բայց խոր ու հիմնական տարբերութիւններ կան հին ու նոր ղեկավարներու դիրքին մեջ, անոնց ղեկավարութեան եղանակին ու ոգիին մեջ, այդ ղեկավարներու ու ժողովուրդի փոխադարձ հարաբերութեանը մեջ:

Այս ուսումնասիրութիւնս փոքրիկ փորձ մըն է, որ գծել կուզե ղեկավարութեան ու ղեկավար դասակարգերու առաջացումը, հինեն նորին անցումը և ընդգծել կուզե նոր ղեկավարութեան մեջ քաղաքական կուսակցութիւններու և մտավորականութեան ունեցած բացառիկ դերը և անոնց էութիւնը:

Ա. ԱԶՆՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդկային ընկերային կյանքի ու կազմի զարգացումը որոշ ու կանոնավոր ընթացք ունի, ինչպես բնութեան մեջ առաջացող բոլոր մյուս երևույթները: Եթե մեկզի դնենք ժողովուրդի մը տեղական ու մասնակի քիչ մը այլազան շեղումները, որոնք նույն պատմական երևույթներու զանազան տարբերակները կատեղծեն, իսկույն կարելի է նկատել, որ ամբողջ մարդկային պատմութեան մեջ քիչ-շատ դեր խաղցող, քիչ-շատ պատմութիւն ունեցող ժողովուրդները բոլորն ալ անցած են քաղաքակրթական որոշ աստիճաններե: Եվ որ քաղաքակրթութիւնը ինքը կանոնավոր ու աստիճանական բարձրացում մը ունի: Կարելի է հստակ կերպով որոշել հինգ հիմնական աստիճաններ մինչև մեր արդի քաղաքակրթական վիճակին հասնիլը, եթե մեկ աստիճանեն մյուսը տանող փոխանցիկ դրութիւնները ետ քշենք մեր ուշադրութենեն:

Պատմութեան ու մեր անմիջական դիտողութեան լույսին տակ իյնող առաջին քաղաքակրթական աստիճանը ցեղական

դրութիւնն է, այսինքն՝ արյունակից ընտանիքներու խումբ մը՝ բոլորն ալ կապված իրարու իբրև ամբողջութիւն մը ընդհանուր կենակցութեամբ և ընդհանուր ղեկավարութեամբ: Հիմնական աշխատանքն է անասնապահութիւնը, իբրև հետևանք որսորդութեան և կից որսորդութեան: Անասնապահութիւնը մեկ կողմեն կատիպ ցեղը չատ չբաժնելու որովհետև անասուններու խնամքն ու պաշտպանութիւնը հավաքական ուժ կպահանջե, իսկ մյուս կողմեն ալ որոշ չափեն անդին չի նպաստեր ցեղի մը թվի չատ մեծնալուն, քանի որ համեմատաբար փոքր մակերևույթի մը վրա, ուր գործնականապես հնար ըլլա իրար օգնելն ու պաշտպանելը, որոշ չափով անասուն միայն կրնա արածիլ: Երբ տարածութիւնը հերիք չէ, ցեղի մեկ մասը ստիպված է ավելի հեռուները երթալու, առանձնանալու, անջատվելու, որով և կառաջանան նոր ցեղեր, իրարմե անկախ, անապատներու ընդարձակութեան ու սարահարթերու արոտներուն վրա սփռված:

Այս թափառական, անասնապահ ու արյունակից ընտանիքներու բնական առաջնորդն է ցեղի ավագ ընտանիքին մեծը. ան է խորհրդատուն, կարգադրողը, վեճերի հարթողը, կռիվներն ու ինքնապաշտպանութիւնը ղեկավարողը, ինչպես և. կրոնական արարողութիւններու կատարողը և բարոյական հեղինակութիւնը: Ան իհարկե կխորհրդակցի, մանավանդ կարևոր պարագաներու ժամանակ, քույր ու դուստր ընտանիքներու մեծերուն հետ:

Ուրեմն պատմական ժողովուրդներու այս առաջին աստիճանին վրա հիմնական միութիւնը ցեղն է, հիմնական աշխատանքը՝ անասնապահութիւնը, կյանքը՝ թափառական և նույն ժողովուրդի զանազան ցեղերը՝ իրարմե անջատ ու ցրիվ, իսկ ցեղի ամբողջ ներքին ու արտաքին ղեկավարութիւնը կեդրոնացած է ցեղապետին ձեռքը:

* * *

Պատմական ժողովուրդներու կյանքին մեջ կուգա զարգացման երկրորդ աստիճանը, երբ կամաց-կամաց անասնապահութեան կսկսի միանալ հողի մշակումը, նախ իբրև երկրորդական, կողմնակի, օժանդակ զբաղում մը, մինչև որ ժամանակներուն

հետ, երբ տեղն ու պայմանները նպաստեն, աշխատանքի հիմը կդառնա երկրագործությունը անասնապահությանն կից կամ առանց անասնապահության:

Երկրագործը կապված է հողին, միշտ նույն տեղը և պետք է խնամեն ու պահպանեն ավելի ընդարձակ ու փռված տարածություններ: Փոքր ցեղերու կարողութենեն վեր է ասիկա. ատոր համար ալ քույր ու դուստր ցեղերը այլևս չեն հետանար, կմնան խմբված և առաջ կուգա հարյուրավոր ընտանիքներու կապմված և ճյուղավորված ցեղային դրութիւն մը:

Մեծնալու այս ներքին պատճառին կմիանա նաև արտաքին ծավալումը: Մեծնալը, ուժ զգալը դրդիչ մըն է տարածվելու, ուրիշ ցեղերու կողմն արդեն մշակութեյան ենթարկված հարևան հողերն ալ գրավելու՝ անոնց տերերը մասամբ ոչնչացնելով, մասամբ վերածնելով ծառայի, ստրուկի ու հպատակի վիճակին: Թվի մեծացումը և նոր տարրերու խառնուրդը կամաց-կամաց կակի շնչառել և ուժեղցնել ցեղի ընտանիքներուն մեջ միշտ ալ տեղի ունեցող դիրքի, ստացվածքի և ազդեցութեյան տարբերութեյունները, և բնականաբար ցեղապետի և անոր անմիջական կից ընտանիքներուն վերաբերումն ու կենցաղը մասնավորապես կակի բացառիկ դառնալ:

Այս բնական շերտավորումը սակայն ավելի կարագանա, կխորանա ու կխստանա սովորաբար նոր տիրապետողներու միջամտութեյամբ: Բանն այն է, որ այս կերպով մեծցած ու հարստացած նստակյաց ամբողջութեյունը շուտով ինքը կդառնա շատ դրավիչ որս մը, որ շրջակա լեռներեն ու անապատներեն իր վրա կհրավիրե թափառական ցեղերու ախորժակը. որոնք թեև ընդհանրապես շատ ավելի սակավաթիվ, բայց անհամեմատ ավելի կռվասեր ու կռվի վարժ են, քան երկրագործը: Վերջինս, իր ժամանակի ու գործունեութեյան մեծագույն մասը նվիրելով աշխատութեյան, ձեռք կբերե աշխատանքի սերը, հանգիստ կփնտրե, խաղաղութեյուն և կվախնա իր ցանքսի, իր շենքերու, իր քաղաքներու ու դիզած հարստութեյուններու փճացումեն, ճիշդ այն բաները, որոնք այնպես գրավիչ են շրջակա թափառականներուն համար:

Եվ պատմութեյան մեջ շատ սովորական երևույթ է խաշնա-

րած ցեղերու հարձակումը երկրագործական կեդրոններու վրա, հափշտակելն ու նստիլը: Այս տիրողները կյուրացնեն ամբողջ հարստութիւնները, կբաժնեն իրենց ընտանիքներուն մէջ բոլոր հողերը և հողին հետն ալ անոր վրա նստած հին ժողովուրդը, որ այսպեսով կդառնա հողե ու իրավունքէ զուրկ ճորտ մը, մշտապես կապված այդ հողին ու կմշակե այդ հողը իր տերերուն համար: Կպատահի անշուշտ քիչ մը ավելի ազատ վիճակ տիրվածներուն համար, որոնց ձեռքը կթողնվի հողի կտոր մը, թեև իհարկե միշտ ծանրաբեռնված ամեն տեսակի հարկերով, տուրքերով ու պարտադիր աշխատանքներով:

Որով և կառաջանան պատմական զարգացման այս երկրորդ հիմնական աստիճանին վրա ընկերային երկու հակադիր չերտեր: Հպատակ կամ ճորտ ընտանիքներու մեծամասնութիւն մը, որուն վրա բեռցված է գրեթե ամբողջ տնտեսական աշխատանքը, բայց այդ աշխատանքի արդիւնքին մեկ խղճուկ մասը միայն կձգվի իրեն, և որ ամեն բանի մեջ ձայնե ու ազդեցութենե զուրկ՝ կախված է իր տերերու քմայքեն ու կամքեն: Իսկ այդ ստվար մեծամասնութեյան գլխուն տիրող ու վարող ընտանիքներու փոքրամասնութիւն մը, որոնք հարձակվող ու հաղթող ցեղը կներկայացնեն և ընդհանրապես կապված են իրարու ազգակցական կապերով և որոնք հիմա կապրին նախորդներու աշխատանքովը, զենքը միշտ պահած իրենց ձեռքը և իրենց սիրած զբաղումը կռիվն է ու որսը: Ծագումն ու արյունը այս պայմաններուն տակ կատանան մասնավոր կարևորութիւն, քանի որ տիրող ընտանիքներու բոլոր առավելութիւնները, բոլոր առանձնաշնորհումները հիմնված են այդ ընտանեկան ժառանգական կապերուն ու իրավունքներուն վրա, որով և ամենքը մեծ ուշադրութեյամբ կհետևին ծագումին և ամեն կերպ կընդգծեն նույնիսկ արտաքին նշաններով ու դրոշմներով: Ինքզինքին ալ կանվանեն ազնիվներ, ազնվական. ազն ազգ ըսել է, տոհմ, ազնվական կնշանակե տոհմիկ, հին ու հայտնի ընտանիքե. հակառակ բոլոր մյուս տիրված բազմութեյան, որ անտոհմիկ են, ցած ու արհամարհված սերունդե, և որոնք իրենց ծննդական հաշիվները պահելու ո՛չ ժամանակ ունին,

ո՛չ ալ դրդում և հետզհետե կձուլվին ընդհանուր գանգվածի մը մեջ, որ կկոչվի ռամիկ ժողովուրդ:

Այս երկու շերտերը միասին կկազմեն իրար պայմանավորող ամբողջութիւն մը, որուն վերին ընդհանուր դեկավարութիւնը կմնա հին հաղթող ցեղապետին և անոր ժառանգորդներուն ձեռքը, որոնք այդ կռիվներու միջոցին և այս նոր պայմաններու տակ ավելի ևս կզորացնեն ու կառանձնացնեն իրենց ընտանիքի մասնավոր դիրքը մյուս ազգակից ազնվական ընտանիքներուն մեջ:

Այսպեսով ընկերային կյանքի ու կազմի զարգացման այս երկրորդ աստիճանին վրա, որ կրնանք անվանել իշխական դրութիւն, ամբողջութեան կառուցվածքը տեսակ մը երկհարկանի է. ազնվականները ռամիկներու գլխուն, իշխանական տունը ազնվականներու գլխուն: Իր հողերուն վրա և իր ռամիկներուն հետ ունեցած հարաբերութեան մեջ ազնվականը բացարձակ տեր է ու տնօրեն, իսկ ընդհանրութեան վերաբերող բոլոր ներքին ու արտաքին գործերու դեկավարութիւնը կվարե իշխանը. թեև ընդհանրապես ազնվական ընտանիքներու օժանդակութեամբն ու խորհրդակցութեամբը:

* * *

Ընկերային ավելի բարդ երրորդ աստիճան մը կառաջանա, երբ հետզհետե ազնվական ընտանիքներու ներքին աճումով ու մեծացումով ատոնցմե ամեն մեկը արդեն ինքը կդառնա իշխանութիւն մը իրմեն սերված և իր ստորադաս ազնվական ընտանիքներով ու բազմացած ռամիկներով. որով նախորդ իշխանը կդառնա իշխաններու իշխան, արքա, իսկ ամբողջութիւնը կստանա եռհարկանի կերպարանք:

Ընկերային օրգանիզմի այս նոր բարդացումին ու տարածումին մասնավոր կերպով կնպաստեն անոր վարած պատերազմները, նոր տիրապետութիւնները և հպատակեցումը ուրիշ ու արտաքին իշխաններու: Ինչպես և ստեղծումը նոր իշխաններու և իշխանութիւններու արքային կամքովը, իբրև շնորհ, իբրև վարձատրութիւն իր այս կամ այն պաշտոնյային ու հպատակին՝ անոր

ցույց տված հավատարմության, քաջության կամ մասնավոր ծառայության մը փոխարեն:

Այս ամենուն հետևանքով ավելի ևս կշեշտվի իշխաններու իշխանի մասնավոր դիրքն ու բացառիկ իրավունքը այդ ամբողջ տարածության ու տիրապետության վրա: Եվ հետզհետե բոլոր հողերը ու բոլոր ժողովուրդը կնկատվին իրենց ամբողջությամբ իբրև արքայի սեփականությունը, որը ան ժամանակներու ընթացքին որոշ պարտականություններու և իր դերիշխանության մշտական հանաչմանը փոխարեն տված է, նվիրած է, զիջած է մաս մաս իր ստորադաս իշխաններուն, որոնք նույն ըմբռնումով և նույն ձևով բաժնած են իրենց ստորադաս կամ իրենց ազգակից ընտանիքներուն: Արքայի կողմեն այս կերպով նվիրված հողերը կկոչվին ավատ, և այդ պատճառով ամբողջ այս զարգացման երրորդ աստիճանը՝ ավատական դրություն:

Հոս ալ գրեթե բոլոր տնտեսական աշխատանքը բարձած է ռամիկներու վրա. ռամիկները իրենց նստած հողին հետ սեփականություն են մանր ազնվականության և կախված են անոնց կամայականութենեն ու ղեկավարութենեն: Այդ մանր ազնվականները ենթակա են իրենց ազգապետ իշխանին, որ իր հողերու տարածությանը վրա բացարձակ տեր է և կներկայացնե գրեթե անկախ, ուրույն իշխանություն մը, բայց արքային պարտական է որոշ տուրք, որոշ ծառայություն, որոշ հնազանդություն և որոշ թիվով զորք, երբ որ պահանջվի: Իր իշխանության սահմաններուն մեջ բոլոր գործերու ղեկավարությունը իր ձեռքն է՝ բնականաբար ազգակից ու ավելի երկրորդական ընտանիքներու խորհրդակցությամբ ու գործակցությամբ: Մինչ ընդհանուր պետական ներքին ու արտաքին ղեկավարությունը կպատկանի արքային, նորեն իհարկե իշխաններու, այսինքն՝ ավելի բարձր ազնվականության օժանդակությամբ ու գործակցությամբ:

Բ. ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետական կազմի զարգացմանը զուգընթաց կերթա նաև կրոնքի ու պաշտամունքի կազմակերպումը:

Ամեն ցեղի մեջ կա և կմնա նախահայրերուն և անոնց գործերուն առավել կամ նվազ աղոտ հիշողութիւնը: Այդ հերոսներն ու ավանդութիւնները քանի կհեռանան, այնքան ավելի կզարդարվին, կազնվանան ու կսրբանան: Առաջ բացառիկ քաջեր են անոնք ու նշանավոր հերոսներ, կամաց-կամաց կդառնան դյուցազներ, մինչև որ բոլորովին աստվածանան: Եվ ամեն ցեղ որոշ օրեր, որոշ տոներ, որոշ պաշտամունք ու ծեսեր ունի իր նախահայրերուն համար, և այդ ամենը կատարողը բնականաբար նույն ընտանիքի ապրող ներկայացուցիչն է, այսինքն՝ ցեղապետը: Եվ այս ծեսերն ու պաշտամունքը, ինչպես բոլոր մյուս պետական ու հանրային գործերն ու արարողութիւնը, շատ պարզ է թափառական ցեղերուն մեջ:

Պատմական զարգացման երկրորդ աստիճանին վրա, երբ իշխանութիւնները կկազմակերպվին ու կզորանան, կամաց-կամաց կսկսի բաժանումը պետական ու կրոնական վարչութեան: Թեև իշխանները գրեթե միշտ իրենց վրա կպահեն նաև կրոնապետի տիտղոսը, սակայն իրական գործողութիւնն ու ղեկավարութիւնը դուրս կուգա իրենց ձեռքեն: Եվ այն պարզ պատճառով, որ պաշտամունքն ու արարողութիւնը ինքը կսկսի բարդանալ ու դառնալ մասնագիտութիւն. նստակյաց կյանքին հետ կուգան և սրբատեղիները, տաճարները իրենց պաշտոնյաներով, աղոթքներով ու երգերով և ժամերգութեան բոլոր մանրամասնութիւններով: Եվ իշխող տունը այլևս ո՛չ հակում ունի, ո՛չ ժամանակ, ո՛չ դյուրութիւն այդ հարցերով զբաղվելու: Տիրելու ու վայելելու իր մեծ հոգերուն մեջ ան սիրով կհանձնե այդ բոլոր «հոգևոր» բաները իր ընտանիքի մեկ կողմնակի գծին:

Այս ճամբով կերթա անջատումը սովորաբար, եթե իշխանութեան առաջացումն ու զարգացումը կատարված է ներքին աճելութեամբ, և տիրապետութիւնը խաղցած չէ գլխավոր դերը: Որովհետև հափշտակութեան ու տիրապետութեան ժամանակ հաճախ կպատահի, որ հաղթող ցեղը կենթարկվի տիրված երկրագործ ժողովուրդի ավելի բարձր քաղաքակրթութեանը և ավելի բարձր կրոնին: Այս պարագային, թեև իշխանը միշտ իր վրա կպահե կրոնապետի տիտղոսը, բայց կրոնական գործերու և

ըմբռնումներու դեկավարությունը կմնա սովորաբար տիրված ժողովուրդի կրոնական հին կազմակերպության ձեռքը: Իսկ այդ կազմակերպությունը կա՛մ հին մայր ընտանիքն է, կա՛մ հին ազնվական ընտանիքներեն մեկը: Հոս անշուշտ դեր կխաղա տիրվածներուն կողմեն մասնավոր սեր ու հարգանք մը այն ընտանիքին հանդեպ, որ ժողովուրդի հին ազատ օրերը կհիշեցնե, այլև խուլ դիմադրության նման բան մը իրենց նոր տերերուն դեմ կրոնական ծածկույթի տակ:

Այսպեսով՝ որ ճամբով ալ որ հառաջանա՝ քրմական, քահանայական, բրահմանական դասը իր սկզբնական վիճակով ու ծագումով ազնվական ընտանիք մըն է, ազնվականության մեկ կտորը, ժառանգական ու հողատիրական բոլոր իրավունքներով: Եվ ընդհանրապես բոլոր գլխավոր դերերն ու պաշտոնները, կրոնական կամ ո՛չ, հակումն ունին ժառանգական դառնալու ազնվական ընտանիքներուն մեջ: Հիշենք մեր Մամիկոնյաններուն[1] սպարապետությունը, Բագրատունիներու[2] թագադիր ասպետությունը և ուրիշներ:

* * *

Սակայն հետզհետե ազնվականությունն ու հոգևորականությունը իրար կապող ու նույնացնող գծերը կսկսին խախտիլ: Սրբատեղիներու առաջացումը, փառահեղ տաճարներու կառուցումը իր վրա կկեդրոնացնեն Հարստությունը, խոշոր նվերներ կըլլան տաճարին, և կամաց-կամաց ստացվածքներուն, կալվածներուն և հողերուն տերը կդառնա հաստատությունը: Մինչ նույն միջոցին հոգևորական դասին մեջ կսկսի նոր հոսանք մը, և մասնավորապես միաստվածության կրոններուն մեջ, որ արհամարհանքով կնայի երկրավոր հարստություններուն վրա, կյանքի վայելքներուն ու ամուսնության վրա, մասամբ ավելի խոր հոգեկան ըմբռնումներու հետևանքով, մասամբ ալ քաղաքական ընդհարումներու ու տակնուվրայություններու պատճառած հոգնության ու հիասթափության հետևանքով: Հոգևորականի մը կուսակրոն ու աղքատ ըլլալը կդառնա իր առավելություններեն ու համայքներեն մեկը: Հոգ չէ, թե իր այդ աղքատությունը չատ

անգամ ավելի անվանական է, քան իրական, քանի որ Հարուստ կրոնական հաստատութիւններու ու վանքերու սովորական բնակիչներն ու հյուրերն են անոնք:

Եվ այս փոփոխվող հասկացողութիւններուն ու պայմաններուն մեջ ժառանգականութիւնը քիչ-քիչ կկորսնցնե այլևս իր իմաստը. մանավանդ որ տաճարներու, հաստատութիւններու, վանքերու, ծեսերու ու արարողութիւններու աստիճանական բարդացումովն ու տարածումովը մեծ թվով և ամեն կողմ ցրված պաշտոնյաներ ունենալու պետքը կդառնա անհրաժեշտ: Եվ հետզհետե Հոգևորական կարգի դռները լայն կբացվին հավատքի դրդումին, կոչումին, արժանիքին և ամեն կարգի ծուռ ու շիտակ հաշիվներու առջև:

Եվ կամաց-կամաց կառաջանա նոր դասակարգ մը, որ կզբաղվի կրոնքի ու պաշտամունքի գործերով, ուր ծագումն ու անձնական ժառանգութիւնը այլևս կարևորութիւն չունի, բայց կմնա հողի ու դիզված խոշոր հարստութիւններու ժառանգականութիւնը իրավական անձի մը անունով, ինչպես է սուրբը, վանքը, տաճարը:

Դասակարգ մը, որ չափազանց մեծ ուժ ունի իր ձեռքը նախ իր հողերուն ու կալվածներուն պատճառովը, քանի որ այդ իրավական անձը իր տեսակի իշխան մըն է ու իշխանութիւն մը՝ հետզհետե առաջացող ավատական դրութեան մեջ. երկրորդ՝ իր հինեն եկող դիրքին ու համբաւին հետևանքովը. և երրորդ՝ իր միջնորդի դերովը. միջնորդ Աստծու ու ժողովուրդին միջև, Աստծու ու տիրողին միջև, ժողովուրդի ու տիրողին միջև շատ պարագաներու մեջ, երբ այդ երկուքի շահերը շատ խիստ կերպով իրարու կբախին:

Եթե այս բոլորին ավելցնեմ նաև այն մտավոր ու կրթական առավելութիւնները, որ ունի բարձր հոգևորականութիւնը, շնորհիվ իր մասնավոր դիրքին և աշխարհիկ հոգերե ազատ կյանքին, ավելի ևս պարզ կդառնա իր ազդեցութիւնը Հանրային կյանքի բոլոր կողմերուն վրա: Գիր, դպրութիւն, աստվածաբանութիւն, փիլիսոփայութիւն, պատմութիւն, գիտութիւններուն տարերքը, ինչպես և գրականութեան, երաժշտութեան ու նկարչութեան որոշ

տեսակները կեղրոնացած են մեհյաններուն ու վանքերուն չուրջը. այլև պետութիւններու մեջ դիվանագիտական հարաբերութիւնները, որոնք կսիրեն միշտ աստվածներու խորհուրդովը առաջնորդվիլ, հաճախ հոգևորական դրագետներու ձեռքով կկատարվին. իսկ երկրին ներսը դատական, իրավական, ամուսնական բազմաթիվ հարցերու ու խնդիրներու մեջ մեծ է հոգևոր մարդու ձայնն ու խորհուրդը ու ազդեցութիւնը:

Այսպեսով՝ ազնվական դասակարգի առաջացման ու կազմակերպմանը զուգընթաց կկազմակերպվի և կուժեղնա նաև հոգևորական դասակարգ մը: Երկու դասակարգ՝ բոլորովին ջոկ ու տարբեր ռամիկ ժողովուրդեն և որոնց ձեռքերուն մեջն է ժողովուրդի հոգևոր, հանրային ու պետական ներքին ու արտաքին բոլոր գործերուն ղեկավարութիւնը:

Մնկը էապես կզբաղվի պետական-վարչական ղեկավարութեամբ, մյուսը՝ հավատքի, դավանանքի ու պաշտամունքի ղեկավարութեամբ. բայց գործնականին մեջ շատ հաճախ կմտնեն իրար սահմաններեն ներս թե՛ անհատաբար և թե՛ իբրև դասակարգ: Շատ հաճախ և շատ մանրակրկիտ կերպով կվիճին իրար հետ իրենցմե ամեն մեկուն ունեցած իշխանութեան, կարևորութեան և առաջնութեան մասին: Հոգևորականութիւնը բոլոր ժամանակներու և բոլոր ժողովուրդներու մեջ հենց որ կազմակերպվեր է և զգացեր է իր ուժը, իսկույն դրեր է պահանջը իր գերագույն ու բարձրագույն դասակարգը ըլլալուն. որովհետև «աստվածային իրավունքը ավելի բարձր է, և աշխարհային իշխանութիւնը իր ծագումը կառնե աստվածայինեն»:

Բրահմաններուն[3] դարավոր վեճը զինվորական դասին հետ և այդ սկզբունքին ընդգծումը կանցնի ամբողջ հնդկական գրականութեան մեջեն, մեկ ծայրեն մյուսը: Նույնն է նաև քրիստոնեական կյանքի ու գրականութեան մեջ: Հիշենք մեր կաթողիկոսներու և վերջին Արշակունիներու[4] վեճերն ու մաքառումները, ինչպես և պապերու ու կայսրներու միջնադարյան երկար ու համառ իրավաբանական մենամարտը:

Վեճն ու կռիվը իր ճամբով, կապն ու դաշինքը իր ճամբով: Իրար մեջ կռված են իրենց գերիշխանութեան ու գերադասութեան

Համար, բայց ժողովուրդի հանդեպ եղած են այդ երկուքը միշտ կողք կողքի, իրարու հենած, իրար պաշտպանելով ու իրար փաստաբանելով: Որովհետև իրենց դիրքն ու շահը գրեթե միշտ ալ նույնն է եղած ընչազուրկ և իրավազուրկ ժողովուրդի հանդեպ, որու աշխատանքին վայելողը և որու բոլոր գործերուն դեկավարողը եղած են այդ երկու դասակարգերը ձիգ ու երկար դարերով՝ ազնվականությունը և հոգևորականությունը:

Գ. ԴՐԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

Պատմական զարգացման երրորդ աստիճանին վրա ընկերական կազմի առած ձևը, այսինքն՝ ավատական դրությունը, իրար դեմ կունե երկու մրցակից ուժեր. մեկ կողմեն արքան, մյուս կողմեն անոր ենթակա իշխանությունները:

Կռիվն ու ընդհարումը անխուսափելի է այդ երկուքին մեջ, որ և կսկսվի ավատական դրության ծնած օրեն: Ավատական գոյավիճակի էությունը մեջն է այդ պայքարը: Արքաները միշտ ձգտելու են իրական արքա դառնալու, լրիվ ու բացարձակ: Իշխանները ձգտելու են միշտ իրական իշխան դառնալու, լրիվ ու անկախ:

Եվ այդ կռիվը տևած է երկար դարեր առանց որևէ վճռական արդյունք տված ըլլալու՝ երբեմն թեթև սահմանափակումներ մտցնելով արքայի իրավունքներուն մեջ, երբեմն, ընդհակառակը, իշխաններու սանձերը ավելի պիրկ տալով: Այս իրար քաշքշուկին և ետ ու առաջ հրմշտուկին մեջ ապրած է Եվրոպան ամբողջ միջին դարերը, իսկ Ասիան մինչև ԺԹ-րդ դարու կեսերը, իսկ տեղ-տեղ դեռ մինչև այսօր, ուր որ եվրոպացին իր ոտքը ամուր չէ դրեր, ինչպես, օրինակ, Պարսկաստան:

Իսկ ուր քաղաքակրթական նոր պայմաններու ազդեցության տակ երկու կողմերեն մեկը հաջողած է հաղթանակելու, ժողովուրդի ընկերային կազմը թևակոխած է պատմական զարգացման չորրորդ աստիճան մը. կա՛մ դարձած է հասարակապե-

տուրքյուն ավելի բացառիկ պայմաններու մեջ, կա՛մ ընդհանրապես դարձած է բացարձակ միապետուրքյուն:

Եթե հաղթողները իշխաններն են և պետուրքյունը ընդարձակ է, հետևանքը կըլլա ամբողջուրքյան քայքայումը, այսինքն՝ պատմական նահանջ: Միայն ծավալով ու թվով ամփոփ ու փոքր ամբողջուրքյուններու մեջն է, ինչպես հին Հունա-Հռոմեական քաղաքներն էին կամ միջնադարյան իտալական քաղաքները, ուր թեև արքան կվերացվի մեջտեղեն, բայց ամբողջուրքյունը չի վերածվիր քանի մը կտորներու. ամբողջուրքյունը կպահվի և ամբողջուրքյան ղեկավարուրքյունը կանցնի իշխաններեն կամ ազնվականներեն կազմված հավաքական մարմնի մը ձեռքը, ինչպես, օրինակ, Հռոմի սենատը, և պետուրքյան ձևը կդառնա հասարակապետուրքյուն:

Միայն թե հասարակապետուրքյունը պետք չէ չփոթել հանրապետուրքյան հետ. հասարակապետուրքյունը միայն մե՛կ դասակարգի մը հանրապետուրքյունն է: Հասարակապետուրքյան ժամանակ պետական ու հանրային ամբողջ ղեկավարուրքյունը կմնա ազնվականներու ձեռքը, ինչպես որ էր նախորդ աստիճանի վրա: Նոր ձևը իհարկե քիչ-քիչ կբերե նոր փոփոխուրքյուններ նաև ժողովուրդին համար. օրինակը վարակիչ է, դուռը կբացվի բողոքի ու պահանջի և ղիջումներու, որոնք ոլորուն ճամբով մը սովորաբար նորեն կտանին դեպի ընդարձակ միապետուրքյուն. կամ կհասցնեն հաջորդ՝ հինգերորդ աստիճանին, այսինքն՝ հանրապետուրքյան: Բայց այս ավելի բացառիկ ու ավելի չեղակի գծին հետևիլը մեր աշխատուրքյան սահմանեն դուրս է. դառնանք ավելի սովորական և մեզի ավելի մոտիկ ձևին:

Այսինքն՝ երբ այդ ավատական մենամարտին մեջեն հաղթական դուրս եկողը արքան է՝ հետզհետե խլելով իր իշխաններուն ձեռքեն անոնց ունեցած ազատուրքյունն ու անկախուրքյունը իրենց սահմաններուն մեջ: Եվ որպեսզի անոնց ուժը կոտրել կարողանա, ամենեն առաջ անհրաժեշտ է, որ իր զորքը և ուժը իշխաններու մասնակցուրքենեն կախում չունենա. ինչպես որ է ավատական դրուրքյան ժամանակ: Արքան կսկսի պահել վարձու բանակ. ազնվական զինվորականուրքյան կամաց-կամաց կփոխա-

ըինե վարձված զինվորութիւնը, եվրոպական soldat բառը վարձական ըսել է: Երկրորդ՝ պետութեան հողերը այլևս ավատ չի տար, և տվածները ամեն առիթեն օգտվելով և ամեն սուրբ ու անսուրբ միջոցներով ու նենգութով կջանա ետ ստանալ, որոնք և կդառնան արքունի հողեր, այսինքն՝ արքայի անձնական իրավասութեյան տակ: Երրորդ՝ մնացած իշխաններն ալ կհարկադրե զենքի ուժով, որ մասնավոր զորք չունենան իրար և ուրիշներու հետ քաղաքական կապերու մեջ չմտնեն և հպատակին արքունի հրամաններուն, ընդհանուր պետական կարգադրութիւններուն և օրենքներուն:

Ուրիշ խոսքով՝ բոլորն ալ կվերածվին պարզ հողատեր ազնվական ընտանիքներու, իրենց հին ու մեծ տնտեսական առավելութիւնները պահած, բայց զրկված քաղաքական ուժե ու անկախութենե: Արտաքին պատիվը, դիրքը, հմայքը կպահվի և դեռ արվեստական կերպով ավելի ևս կշեշտվի: Միապետը կջանա հավաքել ամենքը իր պալատն ու իր շուրջը՝ խոշոր-խոշոր տիտղոսներ և շռայլ ու փայլուն պաշտոններ տալով անոնց, պաշտոննե՛ր, որոնք սակայն իրական ու վարչական մեծ կարևորութիւն չունին:

Հին զենքի ու կռվի իշխանները կդառնան լայն ու դուխդուխ հագուստներու, ժանյակներու ու փետուրներու մեջ կորած, պալատական կոտրտուքներու ու հաճոյախոսութիւններու տակ պզտիկցած դրանիկներ. այսինքն" իր տեսակի խաղալիք մը, զարդ մը, միակ ու միահեծան տեր ու վարիչ դարձող միապետին շուրջը:

Բոլոր զենքերու ճակատագիրն է ատիկա. ժամանակներու հետ կվերածվին զարդի, մինչև որ դառնան երեխաներուն խաղալիքը: Աղեղն ու նետը, նիզակին հետ միասին, հասած են այդ վերջին աստիճանին, սուրը հիմա զարդ մըն է միայն սպաներու և համալսարանական տիտղոսավորներու մեջքին, վաղը կմնա միայն մեր մանչուկներուն ձեռքը: Նույնիսկ մեր այսօրվան հրացաններն ու «սարսափելի» թնդանոթները չեն խուսափելու այդ վիճակին, և նոր հնարվելիք ավելի ևս «սարսափելի» զենքերու առջևեն փախստական, երթան պիտի տղաքներուն ուսը կամ հանդեսներուն մասնավոր շուք տալու իրենց ծխոտ ադմուկովը:

Ազնվականութիւնն ալ, որ եղած էր երկար դարերու ընթացքին «սարսափելի» զենք մը ժողովուրդը ճորտացնելու, աշխատցնելու և անոնց աշխատանքը յուրացնելու, չէր կրնար խուսափիլ զենքերու այդ ընդհանուր բաղդեն:

* * *

Ազնվականութեան ձեռքեն իշխանութիւնն ու ազդեցութիւնը կորզելով՝ միապետները աստիճանաբար կստեղծեն նոր դրութիւն մը, որ կրնանք կեդրոնացման դրութիւն անվանել, քանի որ ներքին ու արտաքին ամեն վարչութիւն, ամեն ղեկավարութիւն ասկե ետքը կեդրոնեն է, որ կստանա իր դրդումն ու գործադրութիւնը:

Կեդրոնացման այդ բարդ մեքենան թե՛ հետզհետե կազմել ու բանեցնել կարողանալու համար, ինչպես և ազնվականութիւնը չեզոքացնել ու փոխարինել կարողանալու համար միապետը անհրաժեշտ պետք ուներ նոր օդնականներու, նոր մարդոց, նոր վարիչ տարրի մը, առանց անոնց և առանց անոնց ընձեռած միջոցներուն անկարելի է միապետութեան հաղթանակը:

Այդ նոր տարրն է դրամատիրութիւնը:

Մարդկային քաղաքակրթութիւնը դեռ հազիվ դուրս եկած ցեղական վիճակեն, բայց մանավանդ ավատական կարգերու տիրապետութեան միջոցին, պալատական, իշխանական ազնվական ու քրմական-եկեղեցական կյանքի զարգացմանը զուգընթաց հետզհետե կչնչովի ու կմեծնա նաև վայելքի պահանջը. ավելի ճոխ ու նուրբ հագուստներու, զարդերու, զենքերու, անոթներու, բազմատեսակ ապրանքներու պահանջը՝ թե՛ բնական, թե՛ արվեստական, որոնք ամեն տեղ չկան. պետք էր բերել երկրի զանազան մասերեն, հարևան երկիրներեն, երբեմն հեռավոր և շատ հեռավոր աշխարհներեն:

Այդ աշխատանքով զբաղվող մարդիկ իրենց ծագումով ու վիճակով սկիզբները մասնավոր տարբերութիւն մը չունին ընդհանուր ժողովուրդ անվան տակ ամփոփված մյուս տեսակի աշխատավորներեն, արհեստավորներեն ու խանութպաններեն: Բայց

կամաց-կամաց կփոխվի իրենց դիրքը: Սկիզբները անոնք սիրված ու փնտրված մարդիկ են իրենց բերած ապրանքներուն պատճառով, մանավանդ հեռավոր, նուրբ ու հազվագյուտ ապրանքներուն, ինչպես են համեմները, նուրբ կերպասները, ներկ, փղոսկր, մետաքս, ակնեղեններ, մարգարիտ, ընդելուզված ղենքեր: Եվ պահանջը քանի կերթա կմեծնա, որով կմեծնա և ապրանքներուն արժեքը և փոխադրողի ստացած շահը: Վաճառականներուն ձեռքը կկեդրոնանա ահագին հարստութիւն, թանկագին քարեր, արծաթ ու ոսկի: Հիմա անոնք կդառնան ավելի ևս փնտրված մարդիկ իրենց ունեցած հարստութեան պատճառով:

Տեղեն քիչ շարժվող, ընդարձակ հողերու տեր, բայց սակավ եկամուտ ունեցող ազնվականը, երբ նոր ապրանքներու գալովը և պալատական սովորութիւններու տարածվելովը կսկսի չռայլութեան և կբացվի իր կարողութենեն վեր ահագին ծախքերու դուռը, կբացվի նաև պարտք վերցնելու անհրաժեշտութիւնը. պարտք տվողը վաճառականն է, որ այդ ճամբով կդառնա դրամի առուտուրով զբաղվող մարդ և ազնվականութեան տեղանավորը, թագավորն ալ մեջը հաշված: Եվ մա՛նավանդ թագավորը. որովհետև ամենեն ավելի դրամ ծախսողն ու դրամի պետք ունեցողը ան է, թե՛ իր անձնական կարիքներուն համար, թե՛ վարձու բանակի, թե՛ դիվանագիտական մուրհ ու ծածուկ հաշիվներու և թե՛ կեդրոնացման հետևանքը եղող ահագին պաշտոնեութիւնը կերակրելու համար: Պետք է դրամ հայթայթել, պետք է դրամ ստեղծել, պետք է հնարել նոր ձեռնարկութիւններ, բանալ արդյունաբերական նոր ճյուղեր, պետք է կանոնավորել, կատարելագործել ու ամուր լարել ժողովուրդը քամելու հարկահանութեան մեքենան:

Տնտեսական ու դրամական այդ բոլոր ջանքերուն ու փորձերուն վարչութիւնը, ուրեմն և ամբողջ պետութեան տնտեսական ղեկավարութիւնը բնական կերպով կանցնի դրամի տեր եղող այդ նոր մարդոց ձեռքը: Միապետը իր բոլոր կարևոր քայլերը առնելու ժամանակ պետք է լսե ու հետևի անոնց խորհուրդին:

Եվ ինչպես որ միապետութիւնը ուժեղնալու ու դիմանալու համար հենվեր է և պետք է հենվի դրամատերներուն վրա, այն-

պես ալ ինքը դրամատիրութիւնը ուժեղնալու ու բարձրանալու համար հենուեր է միապետութեան վրա, որ ամեն տեսակի դիւրութիւններ, արտոնութիւններ ու բացառիկ առաւելութիւններ տուած է անոնց՝ իրենց ձեռնարկին հաջողութիւնն ապահովելու համար: Միապետութիւնն ու դրամատիրութիւնը բարձրացեր են իրարմով և արդեն հոգեբանութեամբ ալ շատ են նման իրարու. երկուքի ձգտումն ալ անսանձ է ու անսահման. երկուքի սիսթեմն ալ բոլոր գործի հաւաքումը մի կ ձեռքի մեջ. երկուքի իտեալն ալ խուսափում ամեն պատասխանատուութենեն ու ամեն հակակշիռ. և երկուքի առանցքն ալ դրամը:

Հետզհետե պետական բոլոր ներքին ու արտաքին քաղաքականութիւնը դրամի շուրջը կդառնա, և անվերջ պատերազմներն ալ գաղութներու, շուկաներու և առևտրական հաշիվներու շուրջը:

Ուրեմն, պատմական զարգացման չորրորդ աստիճանը կկազմե միապետական դրութիւնը, այսինքն՝ ազնվականութեան աստիճանական ոչնչացումը, համեմատ իրենց դերի ու արժեքի կորուստը, կառավարութեան խիստ կեդրոնացումը մեկ անձի մը ձեռքին մեջ, հողային տնտեսութեան որոշ ընկրկումը արդիւնագործութեան առջև և դրամի բացարձակ տիրապետութիւնը ընկերային բոլոր երևոյթներուն մեջ. և այս բոլորի հետևանքով դրամատեր դասակարգի ստացած բացառիկ դիրքն ու կարևորութիւնը հանրային ու պետական բոլոր գործերու ղեկավարութեան մեջ:

Դ. ՀԻՆ ՎԻճԱԿ

Հիմա եթե ակնարկ մը նետենք այն ճամբուն վրա, որով անցեր է ժողովուրդներու ղեկավարութեան գործը, կտեսնենք, որ պատմական զարգացման ամեն մեկ աստիճանին վրա ինչքան քաղաքակրթութիւնը կբարձրանա, և ինչքան ինքը զարգացումը աստիճանե աստիճան կմագլցի, նույն աստիճանավորութեամբ ալ ժողովուրդներու կյանքին ղեկավարութիւնը ավելի ու ավելի լայն չափերով կկեդրոնանա անհատի մը ձեռքին մեջ, այսինքն՝ ցեղա-

պետի, իշխանի, արքայի ու բացարձակ միապետի: Եվ որովհետև այդ կեդրոնացումը արդյունք է զենքի ու բռունցքի, հետզհետե ավելի ու ավելի մերկ և առանց ավելորդ սքողումներու ամբողջ ժողովուրդի ղեկավարության գործին հիմքն ալ կդառնա հավիրշտակությունն ու բռնակալությունը: Հաղթանակն է, որ կորոշե, թե ով է տեր այս կամ այն ժողովուրդի, և զենքի ուժով է, որ կպահպանվի այդ ձեռք բերված դիրքին ժառանգությունը:

Եվ ազնվական դասակարգ ըսվածն ալ ամբողջապես տիրողներու, հափշտակողներու կամ անոնց չարքը մտնողներու ընտանիքներն են, որոնք զանազան աստիճաններով ու չափերով կմասնակցին իշխաններու ու արքաներու իրավունքներուն, վայելքին ու ղեկավարության գործին. սկիզբները ավելի աղատ ու ինքնագլուխ, իսկ ընկերային կյանքի ու կազմի զարգացմանը զուգընթաց հետզհետե ավելի ու ավելի ենթակա, իբրև օգնական, խորհրդական, զորավար կամ պաշտոնյա իր իշխանին ու արքային:

Ազնվականության կողքին կեցած են եղեր միշտ «երկնավոր թագավորի» ծառայությունն ու պաշտամունքը վարող մարդիկը, որոնց ձեռքին մեջն է եղեր միաժամանակ ժողովուրդի հավատալիքներուն և ըմբռնումներուն թելին կծիկը, ինչպես և բարոյական և ընկերային հասկացողություններու բանալին: Այս պատճառներով անոնք են եղեր միշտ ժողովուրդներու հոգևոր ղեկավարները. և երկրավոր թագավորները միշտ հարկադրված են եղեր զգուշ ու հարգանքով մոտենալու այդ մարդոց, անոնց կարծիքը լսելու, անոնց վրա հենվելու՝ իրենց դեմը ավելորդ դժվարություններ չհարուցանելու համար: Այլև գործածեր են պետական մեքենային մեջ, հաճախ տվեր են շատ կարևոր դիրքեր, բայց միշտ իրենց աչքն ու ձեռքը անոնց վրա են պահեր:

Եվ ժողովուրդներու կյանքին մեջ երկար-երկար ժամանակ այս երկու դասակարգերն են, որ հստակ կերպով կզատվին ռամիկ ժողովուրդեն և իրենց մասնակցության բաժինը կբերեն հանրային ու պետական ղեկավարության գործին: Սակայն երբ խոշոր գետերու և բաց ծովերու մասնավոր նպաստավորումովը կսկսի զարգանալ ապրանքներու տեղափոխությունը, ապրանքներու ուժե-

ղացած արտադրությունը արտահանության համար և դրամական շրջանառության, ժողովուրդներու ընդհանուր «գործ» ֆոնին վրա հետզհետե կսկսի որոշվիլ նոր դասակարգի մը կերպարանքը: Խոշոր վաճառականներու, խոշոր արդյունաբերողներու, սեղանավորներու բավական ստվար խումբ մը, որ իր գործին ու ապրուստին հիմնական կեդրոնը քաղաքը ըլլալուն համար կստանա քաղքենի, պուրժուա անճիշդ անունը: Անճի՛շդ, որովհետև քաղաքի մեջ կապրի բազմատեսակ և անհամեմատ ավելի մեծ թիվով ուրիշ ժողովուրդ մը՝ հազար պատդումներով, որ դրամատեր չէ: Իսկ այդ քաղքենի ու դրամատեր բառերու իրար չփոթումը հաճախ տեղի կուտա սնոտի վեճերու:

Եվ ինչ չափով որ պետական կյանքին մեջ կշնչտվի դրամի ու դրամական տնտեսության դերը, այն չափով ալ կարևոր կդառնա նաև դրամի տիրող ազդեցությունը հանրային գործերու ղեկավարության մեջ: Բայց այս դասակարգն ալ, ազնվականության և հոգևորականության նման, ինքը չէ տերը, հրամայողը, իր կամքը չէ՛, որ կվարե: Ինքը խորհրդական մըն է, պաշտոնյա մը, մինիստր, կապալառու, գործավար, ինչքան ալ մեծ ըլլա իր խաղցած դերը:

Այսպեսով՝ արդյունագործությունը զարգացած, կամ գոնե ծայր տված, երկիրներուն մեջ ժողովուրդի ղեկավարությունը երկուքեն կանցնի երեք դասակարգի ձեռքը: Եվ այդ երեք դասակարգերն ալ կծառայեն զանազան հարաբերություններով ու դիրքերով, բայց վերջապես կծառայեն մեկ հատիկ տիրող մը, որ ուժի, բռնության ու ժառանգության իրավունքով նստած է ամենու գլխին, իբրև բարձրագույն տեր ու կամք:

Գալով մնացած ժողովուրդին՝ ինչքան ալ որ դիրքի, աշխատանքի ու ստացվածքի ներքին տարբերություններ ու բաժանումներ ունենան անոնք, ո՛չ ձայն ունին, ո՛չ ազդեցություն հանրային ու մանավանդ պետական գործերու ղեկավարության մեջ: Եվ ընդհանուր առումով հողազուրկ, փողազուրկ և իրավազուրկ: Ժողովուրդի այդ լայն ու ռամիկ խավերուն վրա երեք տիրող դասակարգերը կնային մոտավորապես այնպես, ինչպես հովիվ մը իր ոչխարներուն, կովերուն, ձիերուն ու էշերուն վրա:

Արդեն հնագույն դարերեն տիրողներու սիրած համեմատու-

թյունն է «հոտն ու հովիվը»: Ժողովուրդը հոտ մըն է խուզվելու ու բուրդ տալու համար կթվելու ու կաթ տալու համար, բեռցվելու ու բեռ տանելու համար և, վերջապես, պինվելու ու իր տերերու հաշվին կուվելու համար: Մեկ խոսքով՝ անոնք ստեղծված են այս երեք արտոնյալ դասակարգերու համար աշխատելու. այսպես է կարգը աշխարհքի. այսպե՛ս է ստեղծեր Աստված. մեկը տիրող, մյուսը տիրված, մեկը հովիվ, մյուսը տավար:

Մեծ տարբերություն մը չունի նույնիսկ «երկնավոր թագավորին» պաշտոնյաներուն վերաբերումն ու աշխարհայացքը: Գործնականին մեջ բնավ տարբերություն չունի. վանքն ու եկեղեցականը նույնքան ու նույն ձևով շահագործեր ու կեղեքեր են գյուղացիներն ու քաղաքացիները: Ինչպես որևէ իշխան ու ազնվական: Իսկ տեսականին մեջն ալ գործը դյուրացուցեր են հանդերձյալ կյանքի փոխարինություններով ու ձրի խոստումներով: «Երկնքի արքայությունը խեղճերու, հալածվածներու ու զրկվածներու համար է», «Շատ ավելի չուտով պարանը կմտնե ասեղին ծակեն, քան հարուստը արքայություն», «Հոն բոլորը իրար հավասար պիտի ըլլան ու հավասարապես բոլորը պիտի նստին Հայր Աբրահամին գիրկը», բայց ատոր համար պետք է, որ հիմա բոլորը կատարեն չատ կարևոր հրաման մը՝ «Ծառանե՛ր, հնազանդ եղեք ձեր մարմնավոր տերերուն» և «Կայսեր վերաբերող բաները կայսեր տվեք» և «Աստծուն վերաբերող բաները Աստծուն»: Կրոնավորությունը միշտ ալ եղեր է տիրողներու ու հափշտակողներու լավագույն գաղափարախոսը, լավագույն պրոպականտիստն ու պաշտպանը:

Տիրողները, իհարկե, որոշ պզտիկ տարբերություններ ղրեր են իրենց հոտի զանազան անասուններուն մեջ: Այսպես, օրինակ, քաղաքացի ժողովուրդը միշտ ավելի բարձր է, քան «էշ» գյուղացին: Այս հաշվով քաղաքացին «ձի» է, որ ունի նույնիսկ իր նժույգներն ու երիվարները. բայց ինչ-ալ որ ըլլա, նորեն հնծնելու համար է:

Այս է կառավարության ու պետական ներքին ու արտաքին դեկավարության այն սիսթեմը, որ ընդհանուր առումով տիրեր է բացարձակ մինչև մեր վերջին դարը, և որ ընդհանուր անունով մը

կանվանենք հին վիճակ: Այսինքն՝ ընկերային կյանքի ու վարչութեյան չենք մը, որուն հիմքն է ժողովուրդը, լայն ու ընդարձակ հիմք մը, անվերջ աշխատող, անվերջ աղքատ ու անվերջ զրկված. այդ թշվառ հոտի աշխատանքին ու զրկանքներուն վրա կառուցված է կյանքն ու ապրուստը երեք բացառիկ և ղեկավար դասակարգերու. իսկ ատոնց գլուխներուն և ուսերուն վրա առանձին զմբեթաւոր բաժին մը, ուր նստած է ա՛ն, մե՛ծը, պե՛տը, տե՛րը՝ շրջապատված իր անթիվ ծառաներով, դրանիկներով, և որու ունքերուն ու մատին չարժումներովը կկառավարվի ամբողջ այդ շենքը:

Վիճա՛կ մըն է այս, ուր աշխատանքն ու վայելքը, ինչպես և աշխատանքն ու իրավունքը իրարու խոտոր կհամեմատին: Ինչքան շատ է աշխատանքը, այնքան ցած է մարդուն դիրքը, ինչքան բարձր է մարդուն դիրքը, այնքան չնչին է աշխատանքը: Եվ ճիշդ ատոր համար է, որ աշխատանքը արհամարհված է եղեր, իբրև ստորին բան մը: Չէ՞ որ ան ամենեն սարսափելի անեծքն է Սուրբ գրքին մեջ, երբ ատվածային շրթունքները, հազիվ ավարտած այս անպետք աշխարհքիս ստեղծագործութեյունը, նետեր են աշխարհքի վայելքներուն համը առնել ուզող միամիտ Ադամի երեսին, իբրև դերագույն պատիժ՝ «Երեսիդ քրտինքովը ուտես քու հացը»:

Թե՛ աշխատանքի իր քիչ մը տարբեր ըմբռնումով, թե՛ ընդհանրապես իր ավելի լայն մտավոր հորիզոնով և թե՛ իր դասակարգային կերպարանքով բոլորովին ուրույն դիրք մը կբռնե տիրողներու ու արտոնյալներու դասին մեջ դրամատիրութեյունը, որով և կղառնա հինեն նորին փոխանցող կամրջակը:

Դրամատիրութեյունը բա՛ց դասակարգ մըն է, ո՛չ ժառանգական իրավունքներ ունի, ո՛չ կարգի ու օծումի կաշկանդումները. ամեն մարդ կրնա դառնալ դրամատեր, եթե չնորհքը, բնազդը և պայմաններն ունի: Բաց է ճամբան, թեև դժվար ճամբա է և քիչերուն կհաջողի, բայց բաց է ճամբան:

Իսկ այս կետը մե՛ծ կարևորութեյուն ունի, քանի որ առաջին անգամ ճեղք մը կբացվի ժողովուրդի մարդուն համար դեպի պետութեյան ղեկավարութեյունը: Ինչ որ Հոգևորական դասակարգին

մեջ ժամանակը և կյանքը կատարեր են կամաց-կամայ, և ինչ որ քաղաքական ղեկավարության մեջ ամենախիստ կերպով արգիլեր էին ազնվականներն ու իշխողները, հիմա աննկատելի կերպով այդ արգելքն էր, որ կվերնար, թեև շատ նեղ անցքով մը և շատ դժվար անցքով մը: Ճեղք մը միայն հաստ պարիսպին վրա. և այդ ճեղքովն է, որ դրոհ կուտա և ներս կխուժե ընկերային կարգերու նոր վիճակը և կտապալե այդ հին, անդրդվելի համարվող չենքին մամուռ կապած ու չեչոտած քարերը:

Ե. ՆՈՐ ՎԻՃԱԿ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հին ու նոր ազգերու պատմության մեջ հաճախ է պատահած, որ միապետական վերին իշխանությունը մեկ մարդու մը ձեռքը չէ, այլ երկու թագավորներ կամ կայսրներ են, որ միասին ու միաժամանակ կկառավարեն. կպատահի և երեք հոգի, հինգ հոգի՝ կազմելով եռապետություն, հնգապետություն: Երբեմն ամբողջ խումբ մըն է, որ պատմական դեպքերու դասավորությամբ կղառնա պետության մը տերը ու կկազմե խմբապետություն մը: Վերջապես նվազ սովորական չէ հին, միջին ու նոր դարերու ընթացքին, երբ հողատեր կամ դրամատեր ազնվականությունը, միապետը մեջտեղեն վերացնելով, իր ձեռքը կձգե պետության ղեկավարությունը, իբրև դասակարգ, և կհիմնե ազնվապետական հասարակապետություն մը կամ դրամատիրական հասարակապետություն մը. ինչպես հին փյունիկյան քաղաքներեն շատերը, հունական քաղաքներեն շատերը, Հռոմը, միջին դարերու մեջ Լոմպարդյան քաղաքները[5], Վենետիկը, գերմանական Հանզայի քաղաքները[6]:

Բայց պետական այս բոլոր ձևերը, ինչքան ալ արտաքին տարբերություններ ունենան իրարմե, ներքուստ և ըստ էության նույն չորրորդ քաղաքակրթության աստիճանի զանազան տարբերակները կներկայացնեն: Այս բոլորին մեջ ալ ժողովուրդի մը մեկ փոքրիկ մասը, խումբ մը կամ դասակարգ մը բռնի իր ձեռքն է ձգած իշխանությունը և նստած է ստվար մեծամասնության

պլխին, ինչ որ հին վիճակի հատկանիշ գիծն է: Տարբերությունը հոն է, որ պիրամիտին գլուխը մեկի փոխարեն նաւած են երեք, հինգ, տասը կամ քսան հոգի, կամ չա՛տ-չատ կտրուած է կտոր մը պիրամիտին գլուխը. բայց ամբողջ մնացած շենքը կպահէ իր հին երկհարկանի վիճակը. վարի լայն շերտը՝ տիրուած, իրաւազուրկ և ընչազուրկ «հասարակ» ժողովուրդը. վերի հարկը՝ անոնց գլխուն վրա՝ նուն երկու կամ երեք «արտոնեալ» դասակարգերը՝ ամեն իրաւունք և ամեն հրաման հալաքած իրենց ձեռքը:

Մինչև մեր օրերը ժողովուրդները չա՛տ քիչ անգամ միայն կրցած են բարձրանալ պետական զարգացման ավելի բարձր աստիճանի մը: Առաւել կամ նվազ կարճատև ու պատահական բացառութիւններուն մեջ ամենեն խոշոր ու կարևոր օրինակը Աթենքն է իր կառավարութեան տեմոկրատիկ շրջանին, երբ գրեթէ կծածկէ մեր արդի ժողովրդապետական ըմբռնումը: Գրե՛թե. որովհետև Աթենքի մեջ ալ կան լայն դասեր, ինչպես ստրուկները, որ ո՛չ ազատ են և ո՛չ մասնակից կառավարութեան, երկրորդ՝ Աթենքը մեծ ժողովուրդի մը մեկ մասն է միայն, փոքրիկ հատված մը փոքր ծավալով, որ մեր արդի ամբողջ ժողովուրդը գրկող ընդարձակ հանրապետութիւններուն զույգ գալ չի կրնար:

Ամբողջ ժողովուրդներու իրենց ամբողջութեամբը պետ ու տեր հռչակվիլը և այդ սկզբունքին վրա տեսականորեն ու համայնորեն ընդարձակ ու բազմատեսակ պետութիւններու հիմնվիլը պատուղն է վերջին երեք դարերու ընթացքին մարդկային մտքի լարված աշխատանքին և անոր համառ ու հարատև ջանքերուն, պայքարին ու պատերազմներուն:

* * *

Մտքի այդ լարման մեծապես նպաստեց նոր ծովերու, նոր աշխարհներու, նոր էակներու և նոր երևույթներու գյուտը. աշխարհքը մեկ անգամեն երկու-երեք անգամ ավելի մեծցավ. հին մտածումներեն և դավանանքներեն շատերը դուրս եկան բացարձակ սխալ. և այս բոլորը հետաքրքրություն, հարցասիրություն և քննադատություն բերին իրենց հետևեն: Պապականության միա-

Հեծան, անսանձ ու անպարկեշտ վարքն ու բարքը արդեն առաջ էր բերած խորը հոգիներու մեջ բողոք, քննադատություն և նոր ճամբաներու որոնումը կրոնական-փիլիսոփայական հողի վրա: Հին Հունա-Հռոմեական մտքի ու գեղարվեստի վերածնունդը մղում տվավ գիտություններու և արվեստներու նոր զարգացման, ուր միջնադարյան հեղինակության պաշտամունքին սկսավ հաջորդել սեփական զգացումը, սեփական մտածումը, սեփական դիտողությունը:

Միևնույն ժամանակ միապետության ուժեղացումովը, դրամական տնտեսության բարձրացումովը և աշխարհիկ գիտություններու զարգացումովը ավելի ու ավելի սկսավ չեշտվիլ երկու հնագույն դասակարգերու կարևորության հմայքին կորուստը: Ազնվականությունը օր օրի կնահանջեր առաջավոր դիրքերեն թե՛ գինվորական, թե՛ տնտեսական, թե՛ վարչական և թե՛ մտավոր հողի վրա: Հոգևորականության տգիտությունը, չվայտությունը, դրամասիրությունը և հոգեկան խեղճությունը առօրյա ծաղրի ու հեգնության նյութն էր ինչպես գրականության մեջ, այնպես ալ ժողովուրդին բերանը: Եվ ինչ աստիճանով որ իրենց հարգն ու վարկը, դերն ու դիրքը կկորսնցնեին այդ երկու առանձնաշնորհված դասակարգերը, այնքան ավելի անիմաստ, անարդար ու անբնական կդառնար անոնց ունեցած բացառիկ իրավունքը և բացառիկ վայելքը:

Եվ այսպես զանազան կողմերե խթանված միտքը սկսավ հարցերու և երևույթներու ավելի խորքը մտնել, սկսավ փնտրել ընկերական ու պետական կազմին մեջ զգացվող խորունկ հիվանդության պատճառը. մանավանդ որ իր զագաթնակետին հասած բացարձակ միապետությունը արդեն ի ցույց էր դրած իր անհանդուրժելի ծայրահեղությունները և իր անբուժելի անկարողությունը, որով և կդրդեր բոլոր մտածող գլուխները ցավին դարման մը խորհելու:

Ինչո՞ւ մեկը պիտի նստեր բոլորի գլխուն, ան ալ թույլ ու անպետք մեկը, ինչո՞ւ մեկ-երկու դասակարգ միայն պիտի վարեին ու պիտի վայելեին, ան ալ ամենեն ավելի վարկաբեկված և իրենց գոյության իմաստը կորուսած դասակարգեր: Ո՞րն է «բնական»

վիճակը, «արդար» վիճակը, ինչպես որ «Աստված ստեղծեր էր», և ինչպես որ Հիմա պետք է ըլլար, «եթե մարդկային տգիտութիւնն ու բռնակալութիւնը խանգարած չըլլային ընկերային կարգերը»:

Եվ հարցերու այդ ճնշումին ու մտքի կծտարած ճիգերուն մէջեն ահա՛ կամաց-կամաց կծագի նո՛ր ըմբռնումը, նո՛ր նշանաբանը: Բոլոր մարդիկ եղբայր են իրարու. բոլորն ալ ծնված են ազատ և բոլորն հավասար են աստվածային ու ընկերային օրենքներուն առաջ. պետք չէ՛ ըլլա իրավատեր և իրավազուրկ. անձեռնմխելի են մարդու անձն ու ստացվածքը. և ո՛չ մեկը իրավունք չունի մյուսներու գլխուն բռնանալու:

Եվ այս «եղբայրութեան, ազատութեան և հավասարութեան» դավանանքեն ինքնին կբխի նոր պետական սկզբունքը: Եթե ոչ մեկը բռնանալու իրավունք չունի, եթե չպիտի ըլլա տիրող ու տիրված և ամենքը հավասար են օրենքի առաջ, կնշանակե երկրի մը տերը այդ երկրին վրա ապրողներու հավաքական կամքն է և բոլոր հանրային գործերու վարիչը ամենքը, այսինքն՝ ժողովուրդը, և ո՛չ թե այս կամ այն մասը կամ դասակարգը, ինչքան կուզե այդ մասը մեծ կամ փոքր ըլլա, ինչքան կուզե իր դերն ու դիրքը կարևոր կամ անկարևոր համարվի:

Ժողովուրդի մը տերը ինքը ժողովուրդն է իր ամբողջութեամբ, ահա՛ նոր իտեալի նոր ուղն ու ծուծը: Ինչպես որ հին վիճակի հիմնական սկզբունքն էր, թե ժողովուրդը հոտ մըն է հպատակ և իր գլխուն պետք է ունենա տեր մը «Աստծու կամքով»: Հին վիճակի պետական ձևերն էին միապետութիւնը, խմբապետութիւնը կամ դասապետութիւնը, նորի իտեալն է ժողովրդապետութիւնը:

Սկիզբը գաղափար մըն էր միայն այս նոր ձևը մեկ-երկու «գրոտող» մարդկանց «ծանր» գրքերուն մեկ անկյունը. քիչ-քիչ սկսավ երևալ ավելի թեթև գրքույկներու մեջ և չրթունքներու վրա, դարձավ համոզում ու քարոզ և հետզհետե խորացավ, ծավալեցավ և արմատ բռնեց ավելի ու ավելի լայն խավերու մեջ ԺԸ-րդ դարու ընթացքին: Եվ այդ գաղափարներով սնված նոր սերունդը եկավ խոսքին մարմին տալու. քարոզը դարձավ բողոք

ու խլրտում. և այդ բողոքեն և խլրտումեն ծնան հեղափոխությունները:

Բնականաբար նոր իրավակարգը իրականություն դարձավ ամենեն առաջ արևմուտքի ամենեն առաջադեմ ժողովուրդներուն մեջ՝ Անգլիա, Ամերիկայի Միացյալ Նահանգները և Ֆրանսա: Այդ երկիրներեն չարժումը տարածվեցավ ամեն ուղղությամբ, ԺԹ-րդ դարու ընթացքին նվաճեց գրեթե ամբողջ Եվրոպան ու Ամերիկան, իսկ մեր Ի-րդ դարուն մեջ ան ուղղած է արդեն իր հաղթական քայլերը դեպի Ասիա ու Աֆրիկա: Եվ դուրս է ամեն կասկածե, որ շատ չանցած դառնալու է ամբողջ աշխարհիս երեսին ամեն տեղ ընդունված ու գործադրված միակ պետական հիմքը, գոնե սկզբունքով:

Անշո՛ւշտ, իր առաջխաղացումը առանց դիմադրության չէ եղած և դեռ հիմա ալ առանց դիմադրության չէ: Մեջեմեջ հին տիրող դասերը կամ հին հոգեբանությունը, օգտվելով պատերազմներու բերած տակնուվրայութենեն կամ ժողովուրդներու ներքին հակամարտ տնտեսական շահերեն, ոտքի կելլեն նորեն իրենց միապետությունը կամ խմբապետությունը, իրենց «դասակարգային տիկտատուրան» կամ «զինվորական հեղափոխությունները» փաթթելու ժողովուրդներու վզին: Բայց այդ ամեն տեսակի ու ամեն գույնի ֆաշիզմները, պոլշևիզմները, սոլդատիզմները, այդ բոլոր հետադիմական բռնակալությունները հիվանդոտ ցնցումներ են միայն մեռնող հին կարգերու և հին հոգեբանության:

Մարդկությունը նորեն իր միջնադարյան պետական ձևին իջեցնելու և ժողովուրդներու կրծքին չոքելու այդ ջանքերը արդեն շատ են ուշացած և ապարդյուն, բայց և անխուսափելի. ամեն մահ իր ցնցումները ունի, հին վիճակի մահվան ցնցումներն են ատոնք:

Մարդկությունը, համենայն դեպս իր կարևոր ու առաջավոր մասը, արդեն վաղուց ու կտրապես անցած է իր պետական զարգացման չորրորդ աստիճանեն դեպի հինգերորդը, դեպի ժողովրդապետություն: Սկիզբները շատ ժամանակավոր ու փոխանցիկ գիծով ձևով մը իբրև «սահմանավոր միապետություն», որը

սակայն ամեն տեղ, ուշ կամ կանուխ, վերածվելու վրա է պարզ ու շիտակ Հանրապետութեան:

Չ. ՄՏԱՎՈՐ ԴԱՍԻ ՍՏԱՑԱԾ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես որ բացարձակ միապետութիւնը դրամատիրական դերիշխանութիւն առաջ կբերե, այնպես ալ ժողովրդապետութիւնը անխուսափելի կերպով կառնի դեպի մտավորական ղեկավարութիւնը:

Ամեն ժողովուրդի մէջ իր Հնագոյն օրերեն սկսած կան անհատներ, որոնք մասնավոր կերպով օժտված են եղեր Հոգեկան այս կամ այն կարողութեամբ, չնչուած Հակումներով մտքի այս կամ այն բաժնին վրա և աչքի են ինկեր ժողովուրդին մէջ, օգուտ են տուեր կամ ուրախութիւն, որու Հետևանքով մասնավոր դիրք, Հարգանք և ազդեցութիւն են վայելեր թե՛ ընդՀանրութեան և թե՛ մեծավորներու առջև: Այս տեսակի մարդիկ են եղած Հմայողները, գուշակողները, իմաստուններն, գիր գիտցողները, երգասանները, որոնք զարգացման քիչ մը ավելի բարձր աստիճանին վրա ավելի ևս ընդգծվելով և որոշվելով կդառնան բժիշկ, իրավագիտ, փիլիսոփա, բանաստեղծ, բանասեր, պատմիչ, ուրիշ խոսքով՝ «մտածող» մարդիկ. բոլորն ալ գիտեն գիր ու գրականութիւն և կսիրեն գրքերը՝ մտածումի այդ չտեսմարանները:

Ասոնք կըլլան անխտիր բոլոր դասակարգերեն՝ ամենաբարձր դիրքերեն սկսած մինչև ամենեն խոնարհները. բայց իրենց վայելած Համբավովը, իրենց բացառիկ զբաղումովը, նույնիսկ ապրուստի եղանակովը բոլորն ալ քիչ-շատ կանջատվին իրենց դասակարգեն ու կգրավեն ուրույն դիրք մը: Մյուս կողմեն ալ տարբեր դասակարգերե եղողները, իրենց որոշ ընդՀանուր գծերովն ու ընդՀանուր Հետաքրքրութիւններովը, ճաշակ, Հասկացողութիւն ու գնահատութիւն ունին իրարու Համար, ընդՀանուր կապ մը: Բայց դեռ այնքան քիչ են, ցրիվ, և եղած կապը այնքան թույլ, որ առանձին դասակարգի մը մասին խոսիլը դժվար է:

Սակայն քաղաքակրթական նորանոր քայլերը արագ կերպով

կբարձրացնեն այս տեսակի մարդոց թիվը. մասնավորապես միապետութեան ու դրամատիրութեան առաջացումը չատ է նպաստավոր մտքի աշխատանքով ապրող մարդիկներու բազմանալուն: Միապետութիւնը, ազնվականութեան ձեռքեն խլելով վարչական, դատական հանրային ու զինվորական իրավունքները, ստիպված է ինքը կեդրոնեն այդ բոլորը կազմակերպելու ու ղեկավարելու, որով պետք կառաջանա ամեն աստիճանի վարող, կազմակերպող, օրենսգէտ և տնտեսագէտ մարդոց, որոնք պետք է բոլորն ալ որոշ պատրաստութեան ու գիտութեան տեր ըլլան: Եվ մանավանդ դրամատերը թե՛ իր մասնավոր և թե՛ պետական նոր ձեռնարկութիւնները, հաստատութիւնները, գործարանները և գործիքները հնարելու, շինելու, հսկելու, վարելու և հաշիվները պահելու համար անհրաժեշտ պետք ունի այդ կարգի իրեն ստորադաս աշխատավորներու, որոնք դրամ ու ազդեցութիւն չունին, բայց կարողութիւնը ունին: Մյուս կողմեն թե՛ դրամատեր և թե՛ այս տեսակի նոր մտավորական դասի շատացումն ու կեդրոնացումը քանի մը քաղաքներու մէջ կառաջացնե քաղաքային կյանքի զարգացումը, որ իր հետևեն կբաշե բժիշկներու, դերասաններու, թատրոններու, դպրոցներու, գրքերու, հրատարակիչներու և գրողներու բազմութիւն մը, քանի որ այդ նոր մարդիկը նոր պահանջներ ունին և նոր պահանջները կբերեն նաև հին տիրող դասակարգերուն:

Ուրիշ խոսքով՝ մտավորականութիւնը դրամատիրութեան նեցուկն է ու հենարանը, դրամատիրութիւնը միշտ ալ կրճներ է ու պիտի կրճնի մասնագետներու ու գործակատարներու և հաշվապետներու գլուխերուն և աշխատանքին վրա և պիտի վայելե մտավորականներու հնարած ու գործադրած կյանքի հարմարութիւններն ու զվարճութիւնները: Եվ այս մեծցած պահանջներուն բավարարելու համար հետզհետե կչատնան համալսարաններուն թիվը, համալսարաններուն բաժինները, մասնավորապես գիտական բաժինները և մասնագիտական բարձրագույն վարժարանները, և այդ բոլորին իբրև նախապատրաստութիւն, միջնակարգ վարժարաններուն մեջ ավանդվող առարկաներուն թիվը, մասնավորապես գիտական ճյուղերը:

Եվ այսպեսով ուսում առած և մտքով աշխատող մարդոց

առաջ հետզհետե կբացվին նոր-նոր ճամբաներ ու դիրքեր, որոնք մասնավորապես հրապուրիչ են ժողովուրդի այն շերտերուն համար, որոնք զուրկ են եղած միչտ դիրքե, դրամե ու վայելքե, բայց չարունակ իրենց աչքին առջևը ունին ուրիչներուն վայելքը, օրինակն ու դրացնուքյունը. քաղաքի բնակիչն է գլխավորապես, որ ամեն տեսակ զրկանքներու ու խնայողուքյուններու գնով կջանա իր զավակներուն մտավոր կրթուքյուն տալու, համալսարան դնելու, պետական պաչտոնյա դարձնելու կամ սեղանավորի մը, արդյունաբերողի մը «գրասենյակը» տեղավորելու և վերջապես բժիչկ, իրավաբան ու մասնագետ դարձնելու. իսկ կրթուքյուն տեսած մարդոց բնական հակումեն ալ կծնին պրոֆեսորները, բանաստեղծները, արվեստագետները և ասոնց կարգի հոգեկան աչխատավորներ:

Մեկ կողմեն ավելի ու ավելի կչատնա մտքի աչխատանքով ապրող և մտավոր կրթուքյուն ստացած մարդոց թիվը, մյուս կողմեն ալ ավելի ու ավելի լուրջ ու խոր կդառնա անոնցմե պահանջված գիտուքյունն ու պատրաստուքյունը: Եվ մասնավոր թարմուքյուն մը կուգա նորեն ցածի խավերեն, որովհետև առանց դասակարգային ու դրամատիրական առավելուքյուններու և թևեն բռնողներ ունենալու՝ հաչողիլ ու առաջանալ կարողանալու համար պետք է ունենան անոնք ուժեղ մտավոր ընդունակուքյուններ, համառ ու լարված աչխատանքի և կամքի ուժ: Նոր դիրքեր գրավելու համար թափված աչխատանքը միչտ ավելի կորով ունի իր մեջը և ստեղծագործական թափ:

* * *

Բնական է, որ այս բոլորի հետևանքով թե՛ պետական և թե՛ հանրային ու անհատական գործերու ղեկավարուքյան մեջ կամաց-կամաց կմեծնա ուսում առած մարդոց դերն ու ազդեցուքյունը: Բայց և այնպես հին ըժիմի կարգերուն տակ անոնք դեռ չեն ներկայացներ ուրույն ու անկախ դասակարգ մը, այլ կնկատվին դրամատիրուքյան մեկ հավելվածը, մեկ ստորաբաժինը, դրամի բերած նոր գործերու, նոր գործիքներու ու նոր գոր-

ծավորներու մեկ տեսակը: Եվ հին երկու առանձնաշնորհված դասակարգերը այս բոլոր տեսակի նոր մարդիկը իրար խառնելով կանվանեն «երրորդ դասակարգ», քանի որ այլևս հնար չկա այս երկաթե ճվեր ածող նորելուկ հավերը «ժողովուրդ» հասկացողութեան տակ սղմեցնելու:

Եվ իրապես ալ մտավորականութիւնը, գոնե իր արդի ստացած վիճակովն ու կարևորութեամբը, կծնի դրամատիրութեան կողեն, ինչպես Եվան Ադամի կողեն, ինչպես հոգևորականութիւնը ազնվականութեան կողեն: Եվ ընդհանրապես ազնվականութեան ու հոգևորականութեան մեջ եղած կապը շատ մեծ նմանութիւններ ունի դրամատիրութեան ու մտավորականութեան մեջ եղած կապին: Իսկ դրամատերի ու մտավորականի մեջ եղած կապը ինքնին շատ է բազմակողմանի. երկուքն ալ առաջ են եկած ժողովուրդի լայն խավերեն, առաջ են եկած անհատական աշխատանքով և այդ աշխատանքը էապես մտքի աշխատանք է և նպատակը դրամի տեր դառնալը կամ գոնե դրամի միջոցով անկախ դառնալը: Երկուքն ալ ավելի լայն հորիզոններու և ավելի նոր որոնումներու մարդիկ են հին դասակարգերու պահպանողականութեան հանդեպ: Ձգտող, ձեռնարկող, նկրտող մարդիկ, եղածեն դժգոհ և իրենց մասին բարձր գաղափար ունեցող: Կյանքով ու ապրուստով ալ իրարու շատ ավելի մոտիկ, քանի որ դասակարգային անջրպետներ չկան իրենց մեջը, հաճախ ազգական են իրարու և գրեթե միշտ գործակից, թեև իրենց հոգեկան խմորի ու հակումներու մեջ ահագին տարբերութիւններ կան անշուշտ:

Իսկ նոր վիճակի հաստատումով, որուն հոգևոր ծնողքն ու վարիչը եղած է արդեն ինքը, մտավորականութիւնը կստանա բացառիկ դիրք ու բացառիկ կարևորութիւն: Նոր վիճակ ըսել է ժողովուրդի վեհապետութիւն, այսինքն՝ ամբողջ ժողովուրդի կամքը: Բայց շատ բացառիկ դեպքերու ժամանակ միայն հնարավոր է բոլոր կամքերու անմիջական ստացումը: Գործնական կյանքի առօրյա պետքերու հարկադրանքով միլիոնավորներու անմիջական մասնակցութիւնը անհրաժեշտորեն կվերածվի միջնորդական մասնակցութեան մը: Բոլորի կամքովը ընտրված փոքրիկ խումբ մը կուգա վարելու հանրային ու պետական բոլոր

գործերը ու քվեարկելու բոլոր օրենքները, իբրև թարգմանը ժողովուրդի կամքին, իբրև ներկայացուցիչը ամբողջության, իբրև գործակատարը, իբրև փաստաբանը, իբրև փոխանորդը ժողովուրդին: Ժողովուրդի բոլոր չերտերը, դասերն ու դասակարգերը իրենց չահերն ու տեսակետները արժեցնելու համար բնականաբար կչանան ընտրելու այնպիսի անձ մը, որ տեղյակ ըլլա ընկերական ու պետական խնդիրներուն, բերնին մեջ լեզու ունենա, կարողանա ձևակերպել ու պաշտպանել իր ընտրողներու պետքերն ու պահանջները, որ կարող ըլլա ուղղություն տալ, պարզել ու լուսաբանել նույնիսկ իր ընտրողներու միտքն ու կամքը: Ուրիշ խոսքով՝ իրենց մտքի, խոսքի կամ համոզումի ուժովը աչքի իյնող, վարչական ու կազմակերպչական չնորհք ունեցող, կրթություն ու պատրաստություն ստացած մարդոց ձեռքն է, որ կանցնի պետության ղեկավարությունը, բոլոր չերտերուն ու դասակարգերուն մեջեն կմաղվին ու առաջ կուգան մտավորական մարդիկը, կընտրվի մտավորականությունը, ստվար մեծամասնությամբ:

Մյուս կողմեն՝ նոր վիճակը կբերե ընտրական սիսթեմ նաև հանրային ու տեղական ամեն տեսակի գործերու մեջ. համայնական բոլոր հարցերու վճիռը կանցնի ժողովներու ձեռքը, ուր միևնույն պատճառներով ասպարեզը կմնա մտավորականության: Նոր վիճակը կբերե պարտադիր ուսում, ուր ղեկավարությունը ամբողջովին մտավորական մարդու ձեռքն է: Նոր վիճակը կբերե պարտադիր պինվորություն, որու ղեկավարությունը կանցնի գիտական լուրջ նախապատրաստություն ունեցող սպայության մը ձեռքը: Նոր վիճակը կբերե հասարակաց կարծիք, լրագրություն, մամուլ, գիրք, ուր ղեկավարությունը իր ամբողջությամբ մտավորական մարդու ձեռքն է: Նոր վիճակը կբերե գիտություններու, արվեստներու և՛ բարձրացում ու զարգացում, և՛ տարածում ու ժողովրդականացում, և նորեն գործը մտավորականության ձեռքն է:

Մտավորականության ձեռքն է նոր գյուտերու, նոր ձգտումներու և նոր իտեալներու բանալին, ինչպես և հին ձգտումներու և իտեալներու բռնելիք ընթացքը. այնպես ալ բոլոր դասերու և դասակարգերու տարբեր-տարբեր չահերուն, հաչիվներուն ու տեսակետներուն ուսումնասիրությունը, ձևակերպումը և պահանջնե-

րուն մշակումը: Մեկ խոսքով՝ ժողովրդապետական կարգերու տակ ժողովուրդի մը բոլոր շերտերուն ու խավերուն իմբական, Հանրային ու պետական բոլոր գործերուն և ըմբռնումներուն մշակողն ու ղեկավարողը կղառնա մտավորականութիւնը:

Է. ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԻԲՐԵՎ ԴԱՍԱԿԱՐԳ

Երբ պետական Հարաբերութիւններուն մէջեն կջնջվին տիրող դասակարգի մասնավոր իրավունքները տիրված դասակարգերու գլխուն, այսինքն՝ երբ կվերնան մարդոց մէջեն օրենքի առաջ ունեցած իրավական տարբերութիւնները, դասակարգ գաղափարը ինքը կկորսնցնե իր սրութենեն ու կարևորութենեն շատ բան: Հին ըմբռնումով դասակարգը ամենեն առաջ և գլխավորապես ժողովուրդի ու տիրողներու մէջ եղած անջրպետն էր, խրամատը, և ճիշդ ատոր Համար ալ ամեն բանի մէջ ամենուն ուշադրութեան կեդրոնը: Երբ դասակարգ գաղափարը կդադրի մարդկային այդ ամենաբռնի տարբերութիւններու արտահայտիչը ըլլալե, կդառնա բնականաբար մնացած զանազանութիւններու իբրև արտահայտիչ, որոնց մէջ ամենեն կարևորն ու ամենեն հիմնականը աշխատանքն է, իբրև մայրը ստացվածքի, ինչպես և կենցաղական ու հոգեկան խոշոր տարբերութիւններու առաջացման:

Ըստ աշխատութեան մարդկային Հասարակութիւնները կարելի է բաժնել հինգ հիմնական դասակարգերու:

Առաջինը՝ բուսաբուծութեամբ ու կենդանաբուծութեամբ զբաղվող մարդիկ, որոնք ստվար մեծամասնութեամբ գյուղի կյանքով ապրելնուն Համար սովորական բառով մը կանվանենք գյուղացի, թեև բոլորովին ճիշդ չէ, քանի որ գյուղերու մէջ. թեև քիչ, բայց կան նաև ուրիշ աշխատանքներով ապրող մարդիկ, իսկ փոքր քաղաքներու մէջ բավական խոշոր է «գյուղական» աշխատանքով ապրող մարդոց թիվը:

Երկրորդ դասակարգը կկազմեն բան մը չինող, կառուցող, արտադրող, վերամշակող և այդ կարգի զբաղումներով ապրող մարդիկ, այսինքն՝ արհեստավորները, գործավորները, բանվորնե-

ըը, կուզե իր խանութին անկյունը ըլլա, կուզե մեծ ու պզտիկ արհեստանոցներու մեջ, կուզե հսկայական գործարաններու հարկին տակ, կուզե իր տան ու բնակարանին մեջ կամ բոլորովին բացը:

Երրորդ դասակարգը կկազմեն մարդիկ, որոնք տնտեսական կյանքին մեջ անձամբ ո՛չ մշակող են, ո՛չ չինող, այլ միջնորդ են, կազմակերպող, ապրանքներու և ձեռնարկութիւններու առաջացման ու շարժումին ընթացք և ուղղութիւն տվող, ինչպես վաճառականը, սեղանավորը, գործարանատերը, նավատերը, որոնց ձեռքին մեջն ալ կկենդրոնանա գլխավորապես խոշոր դրամագլուխը:

Չորրորդ դասակարգը կկազմեն անոնք, որոնք վերի երեք տեսակի աշխատութիւններու ընթացքին գործակատար են, վարիչ ու հսկիչ, դրող ու հաշվապահ, առանց գործին տերը ըլլալու, կամ միևնույն դերը կկատարեն պետական-վարչական մեքենային մեջ, այսինքն՝ ամեն տեսակի ու աստիճանի պաշտոնյաներն ու ծառայողները:

Հինգերորդ դասակարգը կներկայացնեն այն մարդիկը, որոնց գլխաւորը գիտութիւնները են ու արվեստները, թե՛ ուսումնասիրութիւնը և թե՛ գործադրութիւնը, միայն ո՛չ իբրև մշտական մեկ անիվը որևէ արդիւնաբերական կամ վարչական մեքենայի. և ճիշդ ատոր համար ալ կկոչվին ազա՛տ արվեստի, ազա՛տ պարապմունքի մարդիկ՝ բժիշկ, փաստաբան, լրագրող, գրագետ, նկարիչ, երգիչ, ձեռնածու, փիլիսոփա, դերասան և այլն:

Այս բաժանումները, ինչպես գիտութեան մեջ ամեն բաժանում, ճիշդ են միայն իրենց ընդհանրութեամբն առած. կյանքի ու իրականութեան մեջ անոնք կհյուսվին ու կխառնվին իրար՝ ծաղրելով ամեն դասակարգում: Գյուղացիի աշխատանքին մեջ չա՛տ կա արհեստավորի գործ, արհեստավորը չատ հաճախ նաև վաճառական է, արհեստանոցի ու գործարանի տերը չատ անգամ ինքն ալ արտադրական աշխատանքին անձամբ մասնակցող բանվոր մըն է, սեղանավորը կամ նավատերը միևնույն ժամանակ պետական պաշտոնյա է, լրագրողն ու երաժիշտը կա՛մ ուսուցիչ է, կա՛մ վարձված պաշտոնյա: Ասկե զատ այս կարգի ընդհանուր բաժանումները գիտական արժեք ունին միայն, կնպաստեն ամ-

բողջ նյութը ընդգրկելու և երևույթները հստակ տեսնելու, բայց գործնական արժեք չունին, որովհետև նույն դասակարգի տակ առնված բազմաթիվ խմբեր ահագին տարբերություններ ունին իրարմե իրենց աշխատանքով, դիրքով, կենցաղով, շահերովն ու պահանջներովը:

Ավելի արժեք կստանա գործնական, երբ դասակարգ բառը կառնենք ավելի նեղ իմաստով, իբրև իրենց աշխատանքի ու ապրուստի եղանակովը ավելի սերտ նմանութիւն ունեցող շահակից ու վիճակակից մարդոց իբրև ընդհանուր անուն. այսպես, օրինակ, երկրագործ, անասնապահ, արհեստավոր, բանվոր, վաճառական կամ արդյունագործող: Բայց շատ ավելի հստակ ու շատ ավելի գործնական կդառնա դասակարգ գաղափարը, երբ ավելի ևս նեղ իմաստով կառնենք բառը, իբրև նույն նյութի վրա, նույն ճևով և նույն պայմաններու մեջ աշխատող ու ապրող մարդոց ընդհանուր անուն. օրինակ՝ խանութպան-կոշկակարները, նախակրթարանի ուսուցիչները, երկաթուղային պաշտոնյաները, ածխահանքի բանվորները: Բայց նույնիսկ հոս պետք չէ ենթադրենք, որ նույն դասակարգի տակ խմբված մարդոց կատարած գործը, ապրած կյանքը, տնտեսական վիճակը, շահերն ու պետքերը նույն են բոլորի համար. հոտ ալ ահագին զանազանութիւններ կան իրար մեջ և հակադիր շահեր ու պահանջներ: Այնպես որ, եթե դասակարգ բառը առնենք եռակի ու քառակի ավելի նեղ իմաստով, այնքան ավելի ճշմարիտ արտահայտութիւնը կդառնա գործով ու վիճակով իրարու նման ապրող մարդոց, իբրև անհամեմատ ավելի ճիշդ ու իրական բան մը:

Հոսկե պարզ է, որ դասակարգ գաղափարը հիմա մեզի համար որոշ ու հաստատ ըմբռնում մը չէ, քանի որ կգործածվի այս բոլոր աստիճաններու տարբերութիւնները միանգամայն արտահայտելու համար. ճիշդ այնպես, ինչպես որ հին վիճակի ժամանակ անիկա որոշ ու հստակ գաղափար մը չէր «ժողովուրդ» հասկացողութեան ներքին բաժանումներուն վերաբերմամբ: Հիմա մեզմե ամեն մեկը, նայելով տեղին ու պարագային, կգործածե այդ բառը շատ տարբեր ու շատ նեղ ու լայն իմաստներով: «Աշխատավորական» դասակարգեն սկսած, որուն մեջ մարդ չկա, որ չմտնե,

«գյուղական» ու «արհեստավորական» շատ լայն դասակարգեր-ման վրայով, մինչև «ունևոր» ու «չունևոր» դասակարգերը, մինչև «առևտրական նավերու նավաստիներուն» դասակարգը, մինչև «քաղաքային տերտերներու» դասակարգը, մինչև «որմնադիրներու» դասակարգը: Եվ կամ, ընդհակառակը, բոլորովին արվեստական ու բռնազբոսիկ բաժանումը «պրոլետարական» ու «կապիտալիստական» դասակարգերու, ուր բոլոր սահմանավորումներեն ու որոշումներեն ետքն ալ նորեն կմնան տարտամ ու անորոշ, ինչպես դասակարգ գաղափարը ինքը, այնպես ալ այդ նշանավոր «կապիտալիստն» ու «պրոլետարը», որովհետև հենց որ կառնես կյանքեն կենդանի օրինակ մը՝ մեկ ոտքովը պրոլետար դուրս կուգա, մյուս ոտքովը՝ կապիտալիստ:

Իրողութիւնն այն է, որ մարդիկ կտարբերին իրարմե աշխատանքի, դիրքի, ստացվածքի ու ապրուստի մեծ ու փոքր բազմաթիվ կողմերով, և մե՛կ սկզբունքի մը վրա վերջապես այս կամ այն կողմը հատվածելը անկարելի է. և նման աշխատանք ու վիճակ ունեցող մարդիկ միայն մոտավոր կերպով և առավել կամ նվազ անորոշ սահմաններով կներկայանան մեզի իբրև առանձին դասակարգ մը:

* * *

Ահա՛ միայն այդ չափով և միայն այդ իմաստով ընդհանուր դասակարգ մը կկազմե նաև «մտավորականութիւն» ըսվածը: Առանձին դասակարգ մըն է, քանի որ բոլորի ալ աշխատանքը հենված է որոշ գրենական նախապատրաստութեյան մը վրա, և բոլորի կենցաղին ու հոգեկան աշխարհին մեջ կա որոշ-անորոշ նմանութիւններ և առանձնահատուկ գծեր՝ տարբեր այդ մտավոր պատրաստութիւնը չունեցող ուրիշ խմբակցութիւններեն: Եվ մասնավորապես երկու ինքնահատուկ գծերով կշեշտվի իր տարբերութիւնը մյուս դասակարգերեն:

Առաջինը այն, որ հիմնված չէ տնտեսական աշխատանքի որոշ ձևի մը վրա և չի կազմեր վերը հիշված հինգ հիմնական բաժանումներու կողքին վեցերորդ նոր բաժին մը, այլ կազմված է այդ հինգ տեսակի աշխատավորներու ուսյալ մասերեն, մեկեն քիչ

մը ավելի, մյուսեն քիչ մը պակաս, բայց կազմված է բոլորեն: Սա դասակարգ մըն է ո՛չ թե մյուս դասակարգերու կողքին, այլ մյուս դասակարգերուն մեջը: Եվ այդ կողմեն նման է «Հարուստ» ըսված դասակարգին, որ նույնպես աշխատանքի առանձին ձևի մը վրա չէ հիմնված. մտավորական ըսվածներն ալ մտքով հարուստներն են գրպանով հարուստներուն դիմացը: Եթե ժողովուրդ ըսվածը պատկերացնենք իբրև շրջանակ մը, հինգ դասակարգերը կներկայացնեն այդ շրջանակի զանազան հատվածները՝ բաժնված իրարմե կեդրոնեն դեպի շրջագիծը քաշված գծերով. մտավորականությունը այդ տեսակ հատված մը չէ, այլ նույն շրջագծին մեջը և նույն կեդրոնեն քաշված փոքրիկ շրջանակ մը, որուն մեջը կմտնեն անպատճառ բոլոր հատվածներեն ալ մեյ-մեկ կտոր, շատ կամ քիչ: Որով և այս դասակարգը իր ամբողջությամբն առած համայնական, համազգային, համաժողովրդական կնիք մը ունի իր վրա, կապ ունի ու կպատկանի բոլոր դասակարգերուն, կծագի բոլորեն, և կդառնա ներկայացուցիչն ու արտահայտիչը բոլոր հատվածներուն, բոլոր դասակարգերուն, բոլոր դասերուն ու խմբակցություններուն:

Մտավորական դասակարգի երկրորդ առանձնահատուկ կողմն ալ այն է, որ նոր վիճակի տակ, ինչպես տեսանք, ժողովուրդի մը հանրային ու պետական գործերուն ղեկավարությունը գրեթե բացառապես կեդրոնացած է մտավոր դասին պատկանողներուն ձեռքը: Հին վիճակի տակ առանձնաշնորհյալ դասակարգերու ձեռքովը կատարվող վարչական ու պետական ղեկավարությունը հիմա փոխանցված է մտավորականության: Միայն շա՛տ մեծ ու շա՛տ կարևոր տարբերությամբ մը, որ հին ղեկավարները իրենց դիրքն ու իրավունքները կստանային մե՛կ անձե կամ մե՛կ խմբակե մը կամ մե՛կ տիրող դասակարգե մը և կկատարեին անոնց կամքն ու հրամանը, մինչդեռ արդի ղեկավարությունը իր դիրքն ու իրավունքները կստանա ամբողջ ժողովուրդեն, կաշխատի ամբողջ ժողովուրդի համար և ամբողջ ժողովուրդի անունով:

Հիմա գործին տերը, երկրին տերը, իրավատերը և վեհապետը ժողովուրդն է՝ առած իր ամբողջությամբը: Միայն թե ժողովուրդի այդ վեհապետությունը շատ է նման Անգլիայի թա-

գավորի վեհապետությանը, ամեն ինչ կկատարվի «Հանուն նորին մեծության», ամենքը կխոնարհին իր պատկերին ու իր վերին իրավունքներուն առջևը, բայց և այնպես Անգլիայի պետական գործերու վարիչը թագավորի կամքը չէ. բացառիկ պայմաններու մեջ միայն թագավորը կմիջամտե անձամբ, ճի՛շդ ինչպես և ժողովուրդը՝ ընտրություններու ու հանրահարցի ձևին տակ: Իրավ է, թագավորն է, որ «կնշանակե» վարչապետը, ուրիմն ամբողջ գործադիր մարմինը, բայց ան չի կրնար իր ուզածը նշանակել, պետք է նշանակե պարլամենտի մեծամասնությունը ունեցող կուսակցութենեն: Այդպես է և ժողովուրդը, իբրև թե ինքն է, որ կընտրե ու կնշանակե իր պարլամենտը, այսինքն՝ իր փոխանորդն ու գործակատարը, բայց իրապես մտավորականություն է, որ կղեկավարե և՛ ընտրությունները, և՛ կառավարությունը իր կազմած ու կազմակերպած կուսակցություններուն խողովակովը, իր վրան քարոզովն ու պրոպականտովը:

Այսինքն՝ ժողովուրդն է վեհապետը, և ժողովուրդի «ազատ կամքն» է տերը իրավաբանորեն. բայց գործնականապես այդ «ազատ կամքը» կառաջնորդվի ու կենթարկվի մտավոր դասակարգի ղեկավարությանը, և բնականաբար ընտրություններն ալ կկեդրոնանան այդ դասակարգին պատկանող անհատներուն վրա: Եվ ժողովուրդը ուրիշ կերպ վարվելու հնար չունի: Մարդս ինչքան կուզե ազատ ըլլա՝ իր բժիշկը պետք է ընտրե բժիշկներու դասակարգեն, իսկ իր տունը շինել տալու համար իր ճարտարապետը պետք է նշանակե ճարտարապետներու դասակարգեն. հակառակ վարվիլը վնաս է ի՛ր չահին: Եվ եթե պատահի, որ հակառակ վարվի. կտուժե: Ժողովուրդները ահագին ծախքեր կընեն, կպահեն ամեն տեսակի բարձրագույն ու մասնագիտական վարժարաններ, համալսարաններ և հարակից կրթական հաստատություններ, որ ատոնց մեջ պատրաստված դաս մը մարդիկը գործածե իր պետքերուն համար ու իր պահանջներուն. իսկ այդ պահանջներուն ու պետքերուն մեջն է նաև, և ամենեն կարևորը, իր հոգևոր, իր հանրային, իր պետական ու քաղաքական ղեկավարությունը:

Բայց ժողովուրդներու հանրային ու մանավանդ պետական կյանքին ղեկավարության հետ կապված է մեծ դիրք, մեծ պատիվ,

մեծ հաճույքներ ու ազդեցություն, այլև նյութական խոշոր առավելություններ. և հավասարության չափազանց սիրահար հոգիներու համար սխալ ու անարդար կթվի, որ այդ բոլոր բարոյական ու նյութական առավելությունները միայն մեկ որոշ դասակարգ մը պիտի վայելե: Եվ աւտոր համար կմտածե ու կհուսա, որ անցողական վիճակ մըն է ասիկա, որ հետզհետե պարտադիր դարձնելով դպրոցական միջնակարգ կրթությունը՝ օր մը ամբողջ ժողովուրդը կդառնա մտավորական և ամենքը կըլլան ընտրելի, ինչպես որ արդեն ամենքը դարձած են ընտրող, չէ՞ որ ժամանակ մը ընտրող ըլլալու իրավունքն ալ կզլացվեր ժողովուրդին:

Անշուշտ հետզհետե միջնակարգ կրթության ընդհանուր ու պարտադիր դառնալը պիտի բարձրացնե ժողովուրդի մտավոր զարգացումը. բայց այդ ավելի զարգացած ժողովուրդն ալ պիտի ունենա միշտ իր մեջն ու իր վրան իր նոր ու ավելի բարձր մտավորականությունը, իր ավելի բացառիկ ընտրյալները: Եվ երկրորդ՝ ի՞նչ կարիք կա կռիվ հայտարարելու հատկապես այդ ընտիրներուն վայելած առավելություններուն դեմ. առավելությունները կբերեն իրենց հետ ամեն տեսակի բնական և ընկերական գերադասությունները, ինչպես տաղանդը, առողջությունը, գեղեցկությունը, խելքը, հարստությունը, պաշտոնը, կապերը, փորձառությունը, ինչո՞ւ բացառություն պիտի կազմե մտավոր որոշ պատրաստություն ստացած ըլլալը:

Եվ ինչքան ժողովուրդի մը քաղաքակրթության մակերեսը բարձրանա, ան ինչքան զարգանա ու կրթվի, այնքան ավելի գիտակցորեն կմոտենա իր ներկայացուցիչներու ընտրությանը և այնքան ավելի խստապահանջ կերպով ավելի մեծ պատրաստություն, ավելի մեծ կարողություն և ավելի ալ բնական շնորհք ու տաղանդ պահանջելով անոնցմե. որով ընտրելիներու շրջանակը ո՛չ թե կլայնանա, այլ կնեղնա. ապագան պետական տաղանդներունն է, իսկական պետական գործիչներուն, հատուկ պատրաստությամբ ու հատուկ փորձառությամբ բացառիկ ղեկավար մարդոց:

Ժողովուրդները վարելու ու կառավարելու գործը միշտ ալ պիտի գտնվի փոքրամասնության մը ձեռքը, բայց հետզհետե

ավելի ու ավելի մասնագիտորեն տաղանդավոր փոքրամասնութեան մը ձեռքը, և ասիկա կպահանջէ ժողովուրդին չահը: Հիվանդդ ինչքան փորձված ու տաղանդավոր բժիշկի մը հանձնես, այնքան աւելի կօգտուիս. զավկիդ կրթութիւնը ինչքան որ փորձառու մասնագետ ու տաղանդավոր ուսուցչական մարմնի մը հանձնես, այնքան մեծ կըլլա քու չահդ. և հիմարութիւն կդառնա ցանկալը, որ մեզմէ ամեն մեկը և՛ բժիշկ ըլլա, և՛ վարժապետ «Հանուն Հավասարութեան»:

Այսպեսով՝ եթե ակնարկ մը նետենք մարդկային զարգացման ստորին աստիճաններեն դեպի այն կետը, ուր կեցած ենք մենք և դեռ քիչ մըն ալ աւելի առաջին, կտեսնենք, որ ժողովուրդներու ղեկավարութեան գործը ինքն ալ ունի որոշ զարգացման ընթացք մը: Ամենեն ցածր աստիճաններուն վրա Հանրային գործերու ղեկավարը ուժն է, բռունցքը, բռնութիւնը, տիրապետողը: Հետզհետե այդ բռունցքը որոշ չափով կսանձվի Հոգևորականութեան ու կրոնքի միջոցով, Աստծու անունով, այսինքն՝ բարոյական ըմբռնումներով, բայց միևայն կսանձվի և միևայն որոշ աստիճանի, և պակաս չեն սանձակոծները: Ավելի ամուր սանձ մը կդնեն տիրողներու բերնին ժողովուրդեն առաջացած նոր դասակարգը, դրամի, առուտուրի ու արդյունաբերութեան մարդը. կդնեն տիրողներու բերնին ոսկի սանձ մը, և թեև հին երիվարը կխրխնջա իր հին ձևով, ոտքերը կտովին գետին ու կցնցե բաշերը ազատ ու հպարտ, բայց կռնակը հեծնող մը ունի արդեն, որ աննշան շարժումներով ուղղութիւն կուտա անոր խելառ վազքին: Եվ կամաց-կամաց իրական ղեկավարութիւնը բռունցքի ու զենքի ուժեն կթեքի դեպի գրպանի ուժը:

Դրամին բացած ճեղքովը աննկատելի կերպով ներս կսպրդի մտքի մարդը. սկիզբը շատ համեստ օժանդակ մը միայն, բայց օրե օր ավելի համարձակ ու գիտակից մինչև այն օրը, երբ հին վիճակի խորտակումով մեջտեղեն կվերնա բռունցքի ժառանգական իրավունքը, և ասպարեզը կմնա դրամին ու մտքին: Դրամը կդառնա բացարձակ տերը տնտեսական աշխարհին, որ ըսել է՝ այս կամ այն աստիճանի կյանքի երևույթներուն, մասնավորապես կջանա իր հրամանին ու ազդեցութեանը տակ պահե պետական մեքենան թե՛

անձնական մասնակցությամբ և թե՛ կողմնակի քուլիսային ճամբաներով. մինչ ժողովուրդի հոգիին, հանրային կյանքին ու պետական ղեկավարության գլխավոր դերը կանցնի մտքի մարդուն:

Ահա՛ այդ վիճակի մեջ ենք այսօր. և կռիվը կմղվի, թեև քիչիկ մը քողարկված երևույթներու տակ, դրամի ու մտքի մարդուն միջև: Դրամի մարդը կձգտի իրեն հպատակեցնելու այդ նորելուկ ու անախորժ ախոյանը և դառնալու միահեծան տերը ժողովուրդներուն ու աշխարհքին. և մտավորականության մեջ քիչերը չեն, որ կխոնարհին, կխնկարկեն ու կծառայեն դրամի շահերուն: Բայց մարդկային հպարտ միտքը, անգամ մը ուժի ու իշխանության հասած, այլևս լսել իսկ չուզեր որևէ ծառայության ու հպատակության մասին: Մտավորականությունը իր ամբողջությամբն առած, գտնե իր ամենեն արժեքավոր ու կարևոր հատվածներով, կճգնի հետզհետե ավելի ու ավելի իր հսկողությանը ենթարկելու և տարածելու իր «ղեկավարությունը» նաև և մանավանդ այդ ըմբոստ դրամի գլխուն: Եվ եթե սոցիալիզմի ու կապիտալիզմի վրայեն հանելու ըլլանք հռետորական խայտաճամուկ պատմուճանները, տակը կմնան մերկ իրարու դեմ կեցած մտքի մարդն ու դրամի մարդը, որ կգտեմարտին գերիշխանության համար:

Ը. ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

Բայց ինչպե՞ս որոշենք մեկու մը մտավորական դասին պատկանիլը կամ ոչ, ո՞րն է իր հատկանիշը, ո՞վ է մտավորական:

Կզգանք, որ հարցը կապված է կրթության հետ, բայց այդ ընդհանուր բառին պետք է մոտենալ մեծ զգուշությամբ: Նախ՝ մտավորականը փնտրելու ժամանակ պետք է կրթության գաղափարեն դուրս հանվի բարեկրթությունը, ուրեմն և բարոյականությունը: Ո՛չ անոր համար, անշուշտ, որ այդ խիստ թանկագին ու հիմնական հատկությունները կապ չունին մտավորական մարդուն հետ. ընդհակառակը, այդ հատկություններն շատ սերտ առնչություն ունին և ընդհանրապես զույգ կերթան մտավորա-

կան մարդու գարգացմանը. մենք նույնիսկ կարհամարհենք մտավորականը, եթե գուրկ է ընկերական առաջնակարգ կարևորություն ունեցող այդ հատկություններեն մեկեն կամ մյուսեն: Բայց և այնպես ատոնք չեն, որ կընորոշեն մտավորական մարդը. մտավորականության մեջ շատ բնական կհամարենք բարձր բարոյականի տեր, կիրթ, ուժեղ կամքի ու նրբազգաց դեմքերը. սակայն նույն մտավորական դասին մեջ պակաս չեն ընկերական վատթար հակումներով, արատներով և կամքն գուրկ կամ անգգա էակներ, որոնց վրա այդ արատն ու թերին կրկնակի կերպով զգալի կդառնա մեզի: Եվ վերջապես այդ առավելություններն ու թերությունները նույն չափով ընդհանուր են նաև մտավորական չհամարվող մարդուն:

Այսպիսով հարցը կկեդրոնանա մտքի կրթության վրա, ինչպես որ արդեն մտավորական բառն ալ ինքն իր մեջ կամփոփե ու կընդգծե: Բայց հոս ալ պետք է հանվին մեջտեղեն շատ մը մտավոր հատկություններ, և մտավոր հատկություններուն ամենեն ազնիվներն ու ամենեն կարևորները՝ խելացությունը, սրամտությունը, դատողության ուժը, կյանքի փորձառությունը, մեկ խոսքով՝ բոլոր բնատուր և ինքնատուր մտավոր կարողությունները: Անշուշտ, նորեն ո՛չ այն պատճառով, որ այդ բոլոր ձիրքերն ու ստացվածները կապ չունին մտավորականության հետ, քանի որ, ընդհակառակը, մտավորականի մը մտածումին ու գործին ամբողջ արժանիքը այդ հատկություններու վրա է հիմնված, և անպիտան ու անպետք է այն մտավորականը, որ գուրկ է այդ հոգևկան կարողություններեն: Բայց և այնպես այդ հատկությունները չեն, որ մարդու մը մտավորական դասակարգին պատկանիլն ու չպատկանիլը կհատկորոշեն. մեկ կողմեն շատ խելացի ու սրամիտ անհատներ կան և չափազանց մեծ փորձառության ու խորատեսության տեր կորովամիտ մարդիկ պարզ ու անուս վաճառականի մը, գյուղացիի մը կամ բանվորի մը կեղևին տակը. և մյուս կողմեն ալ բնավ պակաս չեն, դժբա՛ղդաբար, ցանցառ ու նեղմիտ, տափակ ու կարճատես մտքի տեր մարդիկ մտավորական դասակարգի շրջագծին մեջ:

Ասով հարցը կուգա ու կանգ կառնե գիր ու գիրք տեսած

ըլլալուն կամ չըլլալուն վրա. և իսկույն կսկսի սահմանագծի վեճը: Ինչ աստիճանի և ինչ տեսակի ուսյալ ըլլալն է, որ մտավորական կդարձնե: Շատ լայնասիրտ ու բարեհոգի մարդիկ կան, որոնք սիրով պատրաստ են այդ «ձրի» վկայականը տալու ամեն մարդու, որ նամակ մը գրել ու լրագիր մը կարդալ կրնա և որուն ձեռքեն կանցնի երբեմն մոլորված գիրք մը: Բայց կան և չափազանց խստապահանջները, որոնք այդ «պատվի» տիտղոսը տալ կուզեն միայն բացառիկ բարձր կրթուլթյան տեր մարդոց, որոնք իրենց ամբողջ կյանքը գրքեր կարդալով և գրքեր չարադրելով կանցընեն: Կան մարդիկ ալ, որոնք, վերջին տասնամյակներու նորույթին ենթարկված, հարցի տնտեսական կողմը միայն աչքի առաջ ունին և մտավորական ըսելով հասկնալ կուզեն այն մարդիկը, որոնք իրենց հացը կհանեն գրքերու միջոցով ստացված կրթուլթյամբ ու գրական աշխատանքով:

Պարզ է, որ ասոնք բոլորն ալ ծայրահեղուլթյուններ են ու միակողմանի: Առաջին խումբին եթե լսենք, պարտադիր ուսումը ընդունած երկիրներուն մեջ ամբողջ ժողովուրդը արդեն դարձած է մտավորական, որով և ժողովուրդի ու մտավորականի մեջ տարբերուլթյուն գոյուլթյուն չունի: Մինչդեռ մերկ իրողուլթյունն այն է, որ ինչքան բարձր է ժողովուրդի մը քաղաքակրթական վիճակը, այնքան ավելի չեչտված է մտավորականուլթյան ունեցած տարբերուլթյունը իր ժողովուրդեն, այն պարզ պատճառով, որ անհամեմատ բարդ ու երկարատև պատրաստուլթյուն կպահանջվի, անհամեմատ ավելի խոր ու հիմնական ուսում՝ մտավորական դառնալու համար: Քանի մը գրքուլկ ու քիչիկ մըն ալ ռուսերեն հերիք է գուցե Հայաստանի մեջ մտավորականուլթյան սահմանները սավառնելու համար, ինչպես և Ղուրանի հարևանցի ընթերցում մը կամ քիչիկ մը թուրքերեն գրուլթյունը Թուրքիայի մեջ մտավորական համարվելու համար. բայց այդ աղքատիկ պաշարով զուրկ է մարդս ամեն մտավորական դիրքե ու կարևորուլթենե ավելի բարձր քաղաքակրթուլթյան տիրացած արևմտյան երկիրներուն մեջ:

Երկրորդ խումբին եթե լսելու ըլլանք, մտավորական դասը այնքան կփոքրանա, որ բնավ հերիք գալ չի կրնար իր վրա դրված

Հանրային ու պետական գործը վարելու և կղառնա միայն, չա՛տ-չատ, հոգեկան ղեկավարը: Իսկ եթե լսենք երրորդ՝ տնտեսական խումբի վճռին, մեկ կողմեն դուրս պիտի վռնտենք մտավորականության մեջեն այն բոլոր մարդիկը, որոնք թեև չատ կկարդան, չատ ուսյալ են ու պատրաստված, բայց իրենց հացը ուրիշ ճամբով կհանեն, իսկ մյուս կողմեն ալ դռները լայն պիտի բանանք դեպի մտավորականության միջնաբերդը այն անթիվ դրագիրներուն, արտագրիչներուն, տուրիստներու թարգմաններուն, զանազան տեսակի պետական պաշտոնյաներուն ու մամուլի աշխատավորներուն, որոնք իրենց հացը կհանեն գրել-կարդալեն կամ գեչ-աղեկ օտար լեզու մը գիտնալեն:

Ճշմարտությունը այն է, որ մտավորականությունը ջուրին մեջ նետված քարի մը կնմանի. կառաջացնե համակեդրոն ալիքներ, որոնք որքան քարի զարկած տեղին մոտիկ ըլլան, ա՛յնքան փոքր շրջանակ կներկայացնեն և այնքան բարձր ալիքներ. ինչքան հեռանան ալիքները, այնքան ավելի ցած են իրենք և այնքան լայն է շրջանակը. և երբեք ալ չես կրնար որոշել, թե ո՞ւր տեղ է, որ ալիքը կընդհատվի: Այնպես որ պետք է բավականանք համեստ ու միջին որոշումով մը: Մտավորական կանվանենք այն տեսակ մարդիկը, որոնք երկար տարիներով գրի ու գրքի հետ են գործ ունեցեր իրենց մտավոր զարգացումը կատարելագործելու ու բարձրացնելու համար, որոնք իրենց ամբողջ կյանքին մեջ գրիչն ու գիրքը ձեռքե բաց չեն թողներ, և այս ճամբով ձեռք բերված կրթությունն է, որ դարձած է գլխավոր զենքը իրենց ապրուստին, իրենց դիրքին ու ազդեցության:

Այս բոլորեն ետքը ակներև է, որ մտավորականություն ըսվածը միապաղաղ և համարժեք զանգված մը չէ, այլ բազմաթիվ ու բազմատեսակ աստիճանավորություն մը ուսմունքի տիրացած մարդոց: Աւօրյա խոսակցությունը և կյանքի գործնական պահանջը այդ բոլոր շերտերն ու խավերը կբաժնե երկու մասի. համալսարաններն ու բարձրագույն մասնագիտական հաստատությունները ավարտողները կանվանե բարձր մտավորականություն, մինչ միջնակարգ վարժարաններեն ավարտականները կամ իրենց աշխատանքովը այդ աստիճանին հասնողները կորակե իբրև ավելի

ցածի չերտ մտավորականութեան: Բայց ասիկա կոպիտ բաժանում մըն է, հենված է միայն վկայականի վրա, և շատ պայմանական է իր ներքին արժեքը. ինչքա՜ն-ինչքան համալսարանականներ կան, որ ո՛չ իրենց պատրաստութեամբ, ո՛չ իրենց ընդհանուր զարգացումով, ո՛չ ալ կյանքն ու երևույթները ըմբռնելու իրենց կարողութեամբ համեմատվիլ չեն կրնար միջնակարգ վկայական մը հազիվ ձեռք բերած կամ բնավ ձեռք չբերած մարդոց հետ, որոնք բնականեն լայն միտք ունին, բաց աչք և հանրային զգացում: Շատ ավելի կարևոր է այդ ներքին իրական արժանիքին վրա հենված բնական բաժանում մը:

Կարդացած, կարդացածին վրա մտածած, մաղած, մարսած, յուրացուցած, հյուսած իր անձնական դիտողութիւններուն, փորձերուն, ապրումներուն ու ըմբռնումներուն և այսպեսով կազմած մտավոր ամբողջութիւն մը, սեփական աշխարհայացք մը, ահա՛ ամենեն ավելի կարևորը, ամենեն ավելի արժեքավորն ու հիմնականը թե՛ անհատի համար, թե՛ գիտութեան ու արվեստի և թե՛ հանրային ղեկավարութեան: Ասոնք ինքնուրույն մտքերն են. ասո՛նց խոսքը, ասոնց դատողութիւններն ու գործերն են, որ կշիռ ունին. ասո՛նք են, որ հրապարակ կնետեն և՛ նոր գաղափարները, և՛ նոր նշանաբաններ. ասո՛նք են, որ կստեղծեն ու կվարեն և կկազմեն իսկական բարձր մտավորականութիւնը: Մտավորականութեան մնացած ավելի ստվար մասը առավել կամ նվազ հարազատ կերպով, առավել կամ նվազ համոզումով կկրկնե, կծամծմե, կվերամշակե, կքարոզե ու կտարածե անոնց մտքերը գրով, խոսքով ու գործով: Այս աշխատանքն ալ ունի բնականաբար իր աստիճանավորութիւնը՝ ինքնուրույնութեան մոտեցող ազատ վերամշակումեն սկսած մինչև տափակ ու տառացի թուրթակութիւնը: Ուրիշ խոսքով՝ ինքնուրույն ու զորեղ մտքերն են, որ կներկայացնեն մտավորականութեան մտավորականութիւնը, ղեկավարողներուն ղեկավարումը:

* * *

Գալով այդ ղեկավարութեան՝ երկու որոշ կողմ ունի անիկա՝ ժողովուրդի մը հոգիին ղեկավարութիւնը և ժողովուրդի մը

կյանքին ղեկավարությունը, թեև անշուշտ այդ երկուքն ալ շատ սերտ կապ ու հարակցություն ունին իրարու հետ: Հանրության մը մեկ մասի հավատքին, մտքին, զգացումներուն ու ձգտումներուն վրա ազդեցություն ունենալը գոնե որոշ չափով մը նաև անոր վարած կյանքին, ըրածին ու թողածին վրա ազդել ըսել է: Ինչպես և, ընդհակառակը, ժողովուրդի մը տնտեսական վիճակը, վարչության եղանակը, հանրային աշխատանքը և կառավարությունը քու ազդեցությանդ տակ ունենալը անպայման կերպով կազդե նաև ժողովուրդի մտածումներուն, զգացումներուն, բնավորությանը, հակումներուն ու իտեալներուն վրա:

Բայց և այնպես այդ երկուքը տարբեր բաներ են, հոգիներուն տիրել դեռ չի նշանակեր այդ հոգիներու վարած կյանքին տիրել. ատիկա դեռ հաջորդ՝ երկրորդ աստիճան մըն է: Մտքերն ու զգացումները միշտ ավելի շուտ և ավելի դյուրին կշարժվին, քան դանդաղաշարժ ու լայնանիստ իրականությունը. նորությունները, հափշտակությունները և հեղափոխությունները նախ հոգիներու մեջ կկատարվին և հոնկե է, որ կանցնին իրականացման ու կյանքին: Այդպես ալ կյանքին ու իրականության տիրել դեռ չի նշանակեր հոգիներուն տիրել, և բարեբա՛ղդաբար, որովհետև ատոր վրա է հիմնված ընկերական վիճակի զարգացումն ու հառաջդիմությունը: Կյանքը ղեկավարողը միշտ ձգտում ունի իր կամքին ու իր անգամ մը ստեղծած կաղապարին ենթարկելու հոգիները. տիրող կառավարությունները, նույնիսկ ամենեն լավերը, այս կամ այն աստիճանի բռնակալ են միշտ, հրամայող, պահանջող և իրենց որոշումներուն դեմ ամեն ըմբոստացում կնկատեն իբրև դավաճանություն:

Կառավարության էության մեջն է ասիկա, որ մասամբ կբխի կարգապահության անհրաժեշտութենեն, մասամբ ալ իշխանության ձեռքե հանելու վախեն: Եվ ճիշդ ատոր համար է, որ մտավորականության այն մասը, որ կյանքի ղեկավարության վրա ազդեցություն չունի, այսինքն՝ կառավարության ընդդիմադիր տարրերը, սովորաբար կդառնան ժողովուրդի տենչերուն ու զգացումներուն ղեկավարը, կսկսին ազդել ժողովուրդի հոգիին վրա, նույնիսկ եթե իրենց վարդապետական գծերովը մասնավոր

հրապույր մը չունին ժողովուրդին համար: Ազդելուն հիմնական պատճառը տիրողներուն դեմ եղած դժգոհությունն է և սանձերն ու շղթաները փրցնելու բնազդական պահանջը:

Կյանքի ղեկավարությունը իր ձեռքը ունեցողը տեր մըն է, հրամայող մը, պահանջող մը, հարկահան մը, ոստիկան մը, պինդ-բռւրող մը, օրենսդիր մը, ինչքան ալ կուզե մեղմ ըլլա և զերծ կամայականություններե: Մտքի ղեկավարությունը իր ձեռքը ունեցողը բողոքող մըն է, քննադատող մը, «ճնշվածներու ու հարստահարվածներու» անունով պահանջող մը ամեն կարելի ու անկարելի բաներու և աղվոր-աղվոր բաներու առաստաձեռն խոստացող մը: Մեկը կապողն է, մյուսը՝ արձակողը, մեկը առնող-տանողն է, մյուսը՝ տալու խոստումներ տվողը, մեկը «գորշ» իրականությունն է, մյուսը՝ «պայծառ» ապագան:

Այսպեսով է, որ ժողովուրդներու հոգիին ու կյանքին ղեկավարությունները մեկ կողմեն սերտ կապված են իրարու և իրար կազդեն, մյուս կողմեն հակադիր են իրարու ու իրար դեմ կկռվին: Ամեն հոգիի տիրապետություն վերջ ի վերջո կձգտի նաև կյանքի վրա տիրապետող դառնալու. ամեն կյանքի տիրապետող կձգտի նաև հոգիները պահե իր իշխանության տակ: Հոգիներու տիրապետողը իշխանության գլուխը անցնելուն պես արդեն սպառնալիքի տակ է հոգիներուն վրա իր ազդեցությունը կորանցնելու. և նույնիսկ ամենեն առելի կառավարությունները կյանքի ղեկավարությունը կորանցնելուն պես հույսեր ունին հոգիներու վրա ազդեցություն ձեռք բերելու՝ ընդդիմադիր դառնալով նոր կառավարության:

Հոգիներուն տիրապետելու ու ղեկավարելու զենքը իր սեփական հոգին կենդանի արտահայտել կարողանալն է, իր մտքերուն մշակումն է, իր զգացումներուն ու ձգտումներուն զեղումն է, ըլլա՛ գրով, խոսքով, արվեստով, ըլլա՛ իբրև գեղարվեստ ու դիտություն, ըլլա՛ իբրև քարոզ կամ ուսուցում. այլև կենդանի օրինակը, մա՛նավանդ անձնվիրությունն ու անձնազոհությունը իր գաղափարին ու համոզումին համար: Կյանքին տիրելու ու ղեկավարելու զենքը ամենեն առաջ պետական կարևոր պաշտոն-

նները և ամբողջ կառավարական մեքենան իր տրամադրության կամ իր հրամաններուն տակ ունենալն է:

Այս երկու տեսակի ղեկավարության մեջ աշխատող ամեն մեկ մտավորական անհատ իր կոչման, իր աշխատանքին, իր դիրքին ու իր շահուն դրդումովը անխուսափելի կերպով հարկադրված է մտածելու ընկերական ու հանրային հիմնական հարցերուն ու խնդիրներուն շուրջ, ստիպված է մտածելու ժողովուրդի տնտեսական ու կուլտուրական զարգացման հետ առնչություն ունեցող երևույթներուն ու պատճառներուն վրա, ստիպված է մտածելու պետական մեքենայի ամբողջն ու մասերը ավելի հարմար, ավելի գործնական ու ավելի պիտանի դարձնելու միջոցներուն վրա: Եվ ամեն մեկը կդատե բնականաբար իր զարգացման, իր բնավորության, իր կրթության, իր շահերուն ու իր համոզումներուն համաձայն. և կձգտի իր ըմբռնումներու ու իր տեսակետներու հաղթանակին. կտենչա ու կջանա իր հասկցած ձևովը ղեկավարելու պետական նավը՝ իրմեն տարբեր եղողներուն մտածումներն ու ջանքերը համարելով ծուռ ու սխալ ու վնասակար, կամ որևէ պատճառով անցանկալի: Զգտումներու, երազանքներու, շահերու, ճիգերու ու համոզումներու այս ընդհարումին մեջ իրարու նման մտածողները, նույն կարծիքը կամ շահերը ունեցողները կփնտրեն իրար, կհենվին իրարու, կուգան իրար օգնելու: Եվ հետզհետե մեկդի դնելով երկրորդական տարբերությունները՝ հիմնական ու առաջնակարգ համաբված կետերուն շուրջը կմիանան իրարու՝ ընդհանուր ճակատով դուրս գալու համար հակառակորդներուն դեմ: Եվ այսպեսով կառաջանան հանրային մտքի ու հանրային կյանքի ղեկավարության մեջ քանի մը որոշ ուղղություններ: Այսինքն՝ ժողովուրդի մը մտավորականությունը կբաժնվի քանի մը գլխավոր հոսանքներու և կբաժնվի ըստ իր համոզումներուն. հանրային կյանքը վարելու, ժողովուրդի կարիքներն ու ժամանակի պահանջները լրացնելու և ընդհանրապես մարդկային ընկերական կյանքը բարձրացնելու մասին իր ունեցած սկզբունքներովը:

* * *

Եվ մտավոր հոսանքները որոշող, ժողովուրդի մը հոգեկան, հանրային ու քաղաքական կյանքի զարգացմանը վրա ճակատագրական ազդեցություն ունեցող այդ համոզումները կբխին երեք տեսակի աղբյուրե:

Ամենեն առաջ բուն ինքը ժողովուրդեն, այն ժողովուրդեն, որուն մեկ մասն է և ինքը մտավորականությունը: Սեփական ժողովուրդի պահանջներեն, տվյալ պայմաններեն, չարիքներեն ու կարիքներեն. կա՛մ ամբողջ ժողովուրդի, կա՛մ անոր այս ու այն հատվածի, դասակարգի ու խմբի պետքերեն: Մեկ խոսքով՝ ի՛ր ժողովուրդի իրական, անմիջական ցավերեն ու ձգտումներեն:

Երկրորդ աղբյուրը մյուս ժողովուրդներն են, մանավանդ անոնք, որոնց հետ մասնավոր կերպով քաղաքական ու հոգեկան չփման մեջ է իր ժողովուրդի մտավորականությունը: Ուրիշ ազգերու տնտեսական ու պետական պահանջները, ձգտումները և քաղաքակրթական ջանքերը, ուրիշ ժողովուրդներու մտավորականության մշակած սկզբունքներն ու համոզումները: Այսինքն՝ ընդօրինակված ու փոխ առնված մտքեր, տեսություններ ու տենչեր, որոնք իրենց հերթին հենված ու ձևված են ուրիշ ժողովուրդներու իրականության, պետքերուն ու ցավերուն վրա:

Երրորդ աղբյուրը ավելի հեռավոր է և ավելի ալ վերացական. այսինքն՝ ժամանակակից գիտական ու փիլիսոփայական մտքի առավել կամ նվազ հավանական դատած ենթադրությունները ժողովուրդներու զարգացման բռնելիք ապագա ընթացքի մասին. այն բոլոր տեսություններն ու գուշակությունները և մատնանշված միջոցները, որոնցմով մարդկությունը օր մը պիտի կարողանա հասնիլ ավելի արդար, ավելի բաղդավոր ու ավելի մարդավայել կացութեան մը:

Ընկերային համոզումները ծնող ու մտավորական հոսանքները սննդող այս երեք աղբյուրներեն ամենեն ավելի կարևորն ու հիմնականը է անտարակույս առաջինը. այն պարզ պատճառով, որ ժողովուրդի մը կյանքին ու վիճակին որոշ ուղղություն մը տալու միջոցին անհրաժեշտ է, որ այդ ժողովուրդի իրական պայմաններն ու պահանջները թելադրեն մեզի մեր փոփոխելիքն ու կատա-

բեվիքը: Նավ մը վարել ուզողը իր նավին ուժը, կազմը, բեռը, իր մարդոց հոգեկան վիճակն ու չնորհքը պետք է ունենա ամենեն առաջ իր աչքերուն դեմը, այլև այն ծովերն ու հովերը, որոնց միջովը կճամբորդի, և այդ ծովուն ու հովուն անմիջական դրութիյունը և պետք է հարմարվի այդ բոլորին. այլ կերպ վարվող նավապետը կա՛մ հիմար է, կա՛մ ոճրագործ:

Ուրիշ ժողովուրդներու, մանավանդ ավելի առաջադեմ և ավելի բարձր վիճակի հասած ժողովուրդներու ձգտումներն ու օրինակը կուգա միայն երկրորդ հերթին, իբրև դրդում, իբրև ուսուցում: Ուրիշներու օրինակը ազդելու է միշտ ամեն մտավորականութիյան կյանքին ու հոգիին վրա և՛ հարևանցի, և՛ ոչ-հարևանցի: Անխուսափելի է ատիկա. ուրիշներու ըրածը կամ ընելու փորձածը միշտ դրդիչ մըն է մեզմե ամեն մեկուն համար, մենք ալ նույնը ընելու, մենք ալ նույն տեղը հասնելու: Բոլոր հարցը հոն է, որ զատել գիտնաս ընդօրինակածիդ օգտակարը վնասակարեն, կարելին ու կարևորը անկարելիեն ու ձևականեն, և մանավանդ հարմարցնել գիտնաս օրինակածդ քու իրական պետքերուդ, պայմաններուդ և ուժերուդ:

Գալով տեսական ու տեսլական անրջանքներու աղբյուրին՝ ատիկա չատ փրփրուն, չատ գրավիչ և չատ ալ գինովցնող խմիչք մըն է, որ միշտ պիտի փնտրվի, ինչքան ժամանակ որ ցավ ու տառապանք, բողոք ու դժգոհութիյուն կա մարդկային հոգիին խորքը և ընկերական կենակցութիյան մեջ: Միայն թե այդ աղբյուրեն խմելու տեղը բանաստեղծութիյունն է, փիլիսոփայութիյունը և կրոնները: Այդ խմիչքը կդառնա թույն, երբ մտավորականութիյուն մը իր բաժակը ատով լեցուցած կիջնե հրապարակ՝ ժողովուրդներու ցավերն ու տառապանքը ատով մեջտեղեն վերացնելու:

Այդ խմիչքը զորավոր գինի է ու հաչիչ և գուցե չատ պիտանի պատրանքներ տալու համար, մոռացում տալու համար, մխիթարելու համար, չա՛տ զգուշ ու չա՛տ չափավոր գործածութիյամբ. բայց խելագար մըն է այն մարդը, որ իր զավկին օղի ու ապսենտ կուտա կաթի փոխարեն: Երբ գինովնալը և ժողովուրդ մը գինովցնելը կդառնա սկզբունք, ալ կլռեն խելքն ու զգացումը, և կդադրի մարդը մարդ ըլլալե, կդառնա հարբած մը, կդառնա

գազան մը, որ կավրե, կայրե ու կոչնչացնե ամեն ինչ, ինչ որ դեմը գա, Հանուն իր սրբութեան, Հանուն իր սկզբունքին, Հանուն իր խմիչքին: Եվ ինչքան որ սարսափելի է իր գործած չարիքը հարբած վայրկյանին, նույնքան և ավելի սարսափելի է սթափումը հաջորդ առտուն, երբ ապուշ դեմքով ու դատարկ հոգիով կնայի իր կատարած չարիքին, իզուր ու ավելորդ չարիքին: Եվ այդ չարիքներուն ու ավերներուն մեջ ամենեն մեծը կըլլա գուցե ա՛ն, որ սպաննած կըլլա Հոգիներուն մեջ երազներու հավատքը, իտեալներու ճգտումը և թռիչքներու սերը բավական երկար ժամանակով:

Մարդկային ընկերութեան ապագա հեռավոր երջանկութեան երազները պե՛տք է որ ըլլան մտավորականութեան մը Հոգիներուն խորքը, անոր անրջանքներուն մեջ և անոր ներքին դրդումներուն, բայց պե՛տք չէ, պե՛տք չէ երբեք, որ անոնք դառնան հիմքը ժողովուրդի մը անմիջական ղեկավարութեան և վերածվին դժբաղդ ժողովուրդի մը գլխուն խաղցված դաժան փորձերու: Հետևանքը կըլլա միշտ ու անխուսափելի կերպով ֆիզիքական և հոգեկան ուժերու ահագին փճացում, և ժողովուրդը կերթա ետ-ետ, փոխանակ առաջ երթալու:

Թ. ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԵՔԵՆԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ամեն մտավորական Հոսանք ունի իր ծրագիրը, իր ուղղութիւնը, իր գործելակերպը և այդ ճամբով կուզե վարե ժողովուրդը, և՛ անոր Հոգին, և՛ անոր կյանքը:

Բայց ժողովուրդի Հոգին վարել կարողանալու Համար նախ պետք է քու Համոզումիդ բերես, պետք է հավատք ներշնչես, թե քու ըսածդ է իրեն ամենեն ավելի պիտանին և իր շահին ու ճգտումներուն Համապատասխանը, պետք է քու դավանանքիդ դարձնես: Իսկ Համոզելու, Հասկցնելու, քու կողմդ քաշելու և քեզի կապելու Համար պետք է մշտական գրավոր ու բանավոր շփում,

հաղորդակցում, խմբակցում, ժողովներ, վիճել, խոսիլ, բացատրել և այս ամենուն համար որոշ կանոնավորություն ու կազմակերպություն. պատահական ու ընդհատ հանդիպումներեն լուրջ արդյունք մը չես ստանար, տևական ու մշտական կապ է հարկավոր:

Այդ կազմակերպումը, կապակցումը, համոզելն ու քու կողմդ քաշելը անհրաժեշտ է նաև ժողովուրդի կյանքը ղեկավարելու համար: Քու բոլոր քարոզածներդ՝ քու դավանանքդ և քու ձգտած բոլոր բարիքները իրականություն դարձնելու համար անհրաժեշտ է, որ քո՛ւ մտավոր հոսանքդ անցնի պետության գլուխը, որ քո՛ւ համոզմունքիդ եղող մարդիկը իրենց ձեռքն առնեն կառավարության ղեկը. այսինքն՝ երկրի օրենսդիր և անկե բխող գործադիր մարմիններուն մեջ այնքան մեծնա ու զորանա ձեր մասնակցությունը, որ հնար ունենաք ձե՛ր կամքը, ձե՛ր պահանջը, ձեր ձայնը առաջ քշելու: Իսկ օրենսդիր մարմնին մեջ մտնել կարողանալու համար պետք է քո՛ւ վրադ, քու խմբի՛դ վրա, քու համոզումներուդ վրա կեդրոնացնել կարողանաս ընտրողներուն ձայները. պետք է, որ անոնք ուզենան քու հոսանքիդ հաղթանակը, քու ծրագիրներուդ իրականացումը, պետք է հավատք ունենան քու խոսքերուդ ու գործիդ իրական արժեք մը ներկայացնելուն և վստահին քու ուժիդ:

Եվ այս ամենուն համար պետք է նորեն ահագին աշխատանք. պետք է մտնել բոլոր մեծ ու փոքր խմբակցումներուն ու խմորումներուն մեջ, պետք է խոսիլ, չփվիլ, կապվիլ. պետք է ստեղծել զգացումներու և ընդհանուր շահերու տակ մթնոլորտ, պետք է ներշնչել սեր, հարգանք ու պատկառանք. պետք է ոգևորել, պետք է սիրտ տալ ու վստահություն, և գիտակցությունը միացած խմբական գործունեության. պետք է որ ըմբռնեն ամենքը միացած ու կազմակերպված կռվի՝ ու չանքերու ուժն ու կարևորությունը. պետք է ստեղծել ամուր ու միակամ ամբողջություն մը, մե՛կ մարդու պես խոսելու ու շարժվելու, և՛ ենթարկվելու, և՛ հպատակվելու իրենց ազատ ընտրությամբը, իրենց ազատ կամքովը: Իսկ առաջին լուրջ հաջողություններուն հետ, երբ քո՛ւ հոսանքիդ մարդիկը դիրքեր կգրավեն պետության օրենսդիր ու գործադիր մարմիններուն մեջ, ավելի ևս կշեշտվի ու կմեծնա այդ

ընտրողներու ու ընտրվողներու մչտական չփման պահանջը. պետք է անցնիլ ամենեն կարևորին՝ գործնական քայլերուն. պետք է զատել հնարավորն ու անմիջականը, պետք է չափել ուժերը, սեղմել պահանջները իրականութեան գծած սահմաններուն մեջ, պետք է հաշիվ տալ առնված քայլերու մասին, պետք է որոշել հաջորդ քայլերը. պետք է ստանալ ընդհանուրի համաձայնութիւնը, ընդհանուրի համակրութիւնը, որովհետև պարլամենտներուն մեջ արտասանված ճառերը միայն ա՛յն չափով ուժ ու կարևորութիւն ունին, ինչ չափով որ կներկայացնեն ճառողին հետևը կեցած ընտրողներու ընդհանուր կամքն ու ընդհանուր պահանջը:

Այսպեսով հետզհետե ժողովուրդի մը ծոցին մեջ կառաջանան քանի մը հատվածներ. գրեթե բոլոր դասակարգերեն ալ անհատներ կան ու կգտնվին ամեն մեկ հատվածին մեջ, բայց միշտ մեկ-երկու որոշ դասակարգեր իրենց շահերու բերումովը կկազմեն անոր հիմնական ու էական մասը: Ամեն մեկ հատված կազմված է ու կապրի որոշ մտավորական հոսանքի մը ղեկավարութեան տակ և կներկայացնե կուռ ու ամբողջական միութիւն մը, ապրող ընկերական մարմին մը: Իր տեսակի ավելի փոքր պետութիւն մը ավելի մեծ պետութեան մեջ, իր ներքին բաժանումներովն ու ենթաբաժանումներովը, իր վարչական մարմիններովը, իր կեդրոնական կառավարութեամբը և իր բարձրագոյն օրենսդիր ժողովներովը. ունի իր սահմանադրութիւնը, իր պարտադիր օրենքները, մինչև անգամ հարկ ու տուրք կհավաքե, կզատե, կպատժե և ունի խիստ կարգապահութիւն, երբեմն ունի նույնիսկ զինվորական վարչութիւն ու բանակ: Ահա՛ ինչ որ մենք կհասկնանք հիմա կուսակցութիւն ըսելով տեմոկրատիկ կարգեր ունեցող պետութեան մը մեջ:

Կուսակցութիւնները եղեր են միշտ նաև պետական նախորդ ձևերու տակ, բայց հոն խմբակցումը կկատարվի սովորաբար անհատի մը կամ ընտանիքի մը շուրջը. կամ գաղտնի ու դավադրական բնույթ ունի. համենայն դեպս չկա ընտրական սկզբունքի ընդհանուր ու պարտադիր գործածութիւնը, որ միայն ժողովրդական կարգերու տակ կրնա գործադրվիլ լայնորեն: Երկրորդ՝

ժողովուրդ ու պետություն գաղափարներու հետզհետե ավելի ու ավելի նույնանալովը պետության մը աշխատանքներուն մասնակցող արդի բոլոր կուսակցությունները համազգային ու համաժողովրդական շեշտ մը ունին իրենց վրա, չեն կրնար աչքե բաց թողնել համապետական շահերն ու պետքերը, ինչքան ալ որ ժողովուրդի մը այս կամ այն դասակարգի մասնավոր շահերուն ծառայել ուզենան: Հին վիճակի ատեն եղած կուսակցություններուն մեջ այդ մտահոգությունը ավելի երկրորդական էր ու տկար: Եվ վերջապես հին վիճակներուն տակ ապրող կուսակցություններուն մեջ մասնավոր կերպով շեշտված են եղեր՝ շահերը, իսկ սկզբունքները՝ միշտ ավելի պղտոր և միշտ ենթակա ու ենթարկված շահերուն: Հիմա մտավորական դասի անմիջական ղեկավարության հետևանքով՝ սկզբունքները շատ ավելի որոշ ու մշակված են միշտ, կախված են այդ սկզբունքները շենքի ճակատին վրա. և մասնավոր ջանք է գործ դրված շահերը հյուսելու ու հարմարցնելու այդ սկզբունքներուն: Ուրիշ խոսքով՝ առաջնությունը շահեն փոխանցված է գաղափարին, գո՛նե տեսականորեն:

Անշո՛ւշտ դեռ մարդկային հոգին շատ է վարժված հին ճամբաներուն և ընդհանուր առումով սկզբունքները կգործածե, ա՛յնպես, իբրև ցուցանակ մը միայն, որուն ետևը շահերն են կծկտած, բայց և այնպես պարտական ենք ընդունելու, որ հառաջդիմություն մըն է անտարակույս, երբ մարդիկ ու խմբակցություններ գո՛նե «ձևի համար», գո՛նե տեսականորեն հարկ կզգան շահը ենթարկված ցույց տալու գաղափարին: Այսօր դեռ չենք կրնար իրապես մեր շահերը ենթարկել մեր սկզբունքներուն, նույնիսկ մտավորականները, նույնիսկ ղեկավարները, ատիկա բացառիկներու արժեքը կներկայանա այսօր: Բայց կասկած չկա, որ հետզհետե պիտի չատնան այդ բացառիկները և հենց հիմա ալ այնքան արհամարհելի փոքրամասնություն մը չեն. իսկ վաղը մեծամասնությունը պիտի դառնա իր շահերը իր սկզբունքներուն ենթարկած, որ ըսել է հսկա քայլ մը դեպի առաջ մարդու մարդկայնացման ճամբուն վրա:

* * *

Կուսակցութիւնը մեր արդի տեմոկրատիկ քաղաքական կազմակերպութեան մէջ դարձած է փոքրիկ պետութիւն մը, պետութեան մը հիմքը: Մեծ պետութիւնը, այսինքն՝ ամբողջ ժողովուրդի մը պետութիւնը, իսկապես ոչ այլ ինչ է հիմա, եթե ոչ այդ կուսակցական ավելի փոքրիկ պետութիւններու դաշնակցութիւնը, ինչպես որ ինքը ժողովուրդի մը պետութիւնն ալ կամաց-կամաց դառնալու վրա է իր հերթին համամարդկային պետական դաշնակցութեան մը հիմնական միավորը: Ժողովուրդի մը ներսը կուսակցութիւնն է քաղաքական կամք ու քաղաքական ձայն ունեցող հիմնական միութիւնը: Կուսակցութիւններն են, որ կվիճին ու կկռվին իրար հետ, կխլեն իրար ձեռքե երկրին կառավարութիւնը կամ կհաշտվին, կգործակցին և իրարու հյուսված աշխատակցութեամբ մը կվարեն ժողովուրդին տնտեսական, վարչական, գինական ու քաղաքական կյանքը. ժողովուրդի մը բաղդին ու վիճակին ամբողջ տնօրինութիւնը այլևս կախված է կուսակցութիւններեն:

Եվ ինչքան տեմոկրատիկ կարգերը կզարգանան, այնքան ավելի կչեշտվի կուսակցութիւններու այդ միահեծան դիրքն ու իրավունքը: Ավելի նախնական ձևերուն մեջ ընտրութիւններու ժամանակ անձե՛րը կքվեարկվեին, և քիչ-շատ արժեք ուներ քվեարկվողի անձնական կարևորութիւնը, հարստութիւնը, դիրքը, անհատը: Ավելի զարգացած ու կազմակերպված հասարակութիւններու մեջ, ինչքան ալ որ անհատը անձնական առավելութիւններ ունենա, ընտրվիլ չի կրնար առանց իր ետևը կուսակցության մը կամքն ու ձայները ունենալու: Եվ հիմա արդեն հետզհետե մարդի՛կը չէ, որ կքվեարկվին, այլ կուսակցական ցուցակները, ընտրողը կընտրե ո՛չ թե անձերը, այլ իր ձայնը կուտա այսինչ կամ այնինչ կուսակցության կազմած ամբողջ ցուցակին, այսինքն՝ իր ձայնն ու վստահութիւնը կհանձնե կուսակցության:

Այսպեսով՝ ժողովուրդի մը մեջ քանի կուսակցութիւն որ կա, կնշանակե այնքան կա՛մք կա, այնքան քաղաքական-իրավական անձ կա, մեկը տկար, մյուսը ուժեղ, մեկը հսկա, մյուսը թզուկ, ինչպես բնութեան ու կյանքի մեջ ամեն երևույթ. և այդ

հակառակ ու թզուկներու կուլիվն է պետական ու հանրային կյանքը, ընտրական պայքար, պարլամենտ ու կառավարություն ըսվածը:

Քննադատե՛նք, ինչքան որ կուզեք, կուսակցություններու թերին ու իր անախորժ ու վնասակար կողմերը: Ի՞նչն է մեր այս թերի կյանքին մեջ անթերի, և քնության մեջ ո՞ր երևույթն է, որ երկսայրի չըլլա: Բոլոր կյանքերուն կյանքը, այսինքն՝ արևը, ան ալ չար մըն է ու չարիք մը, ան ալ կայրե ու կխանձե: Չար թե բարի, բայց մեր արդի ընկերական կյանքի ամենախոշոր ու ամենահիմնական երևույթներեն մեկն է կուսակցությունը, որ մեջտեղեն վերցնել չես կրնար ո՛չ հայհոյանքով, ո՛չ կեղծ արհամարհանքով, ո՛չ ալ իրականության հանդեպ աչքերդ գոցելով:

Իսկ մերկ իրականությունը այն է, որ ով կուզե պետական կյանքին մասնակցի, պետք է մտած ըլլա քաղաքական կուսակցության մը մեջ: Կա՛մ առնվազն պետք է մտնե կուսակցության մը փեշերուն տակը, իբրև «համակրող», ինչպես սովորաբար կանվանենք, այսինքն՝ պիտի դառնա կուսակցության մը գործիքը առանց կուսակցության մեջ ազդեցություն ու ձայն ունենալու. բնականաբար կպահպանվին անոր «ազատության» կամ «չեզոքության» արտաքին բոլոր երևույթն ու քաղաքավարությունը կամ քաղաքականությունը, ինչպես որ կուզեք:

Կուսակցությենե դուրս և կուսակցություններու հակառակ, անհատը ո՛չ միայն պետական կյանքին մասնակցիլ չի կրնար գործոն կերպով, այլ նույնիսկ հեռվեն ալ լրջորեն ազդեցություն ունենալ չի կրնար, որովհետև իսկույն կխեղդեն անոր ձայնը կա՛մ մեռելային լռությամբ ու չլսելու տալով, կա՛մ ամեն կողմեն վրա հարձակվելով, ծաղրելով, հեգնելով, քննադատելով ու զզվեցնելով: Որովհետև կուսակցական կուռ կազմակերպություն մը սարսափելի ուժ է, մտած ամեն գյուղ, ամեն քաղաք, ամեն տուն ու պաշտոնատուն, ամեն հավաքույթներու ու հանրային ժողովներու մեջ իր անհատներով, իր մարմիններով, իր լայն մամուլով ու պրոպականդով: Ամեն տեղ եղող, ամեն տեղ հասնող, ամեն ինչի հետևող այդքան աչքերուն, ականջներուն ու լեզուներուն դեմ մաքառելու համար ատոր նման ու համապատասխան մեքենա մըն

ալ դուն պիտի ունենաս քու տրամադրությանդ տակ, այսինքն՝ պետք է պատկանիս կուսակցության մը, պետք է «կազմակերպվիս»:

Հիմա կուսակցութենե լիովին դուրս մնալ կրնա միայն ա՛յն մտավորականը, որ Հանրային ու պետական կյանքի մասնակցութենեն բոլորովին կհրաժարի ու կնվիրվի իր մասնավոր աշխատանքին, իր մասնավոր ընտանիքին կամ իր մասնավոր չահերուն: «Ինչո՞ւս պետք. թող ուրիշները կռվին ու աղմկեն, թող ուրիշները տիրեն ու վարեն, ինչ ուղղությամբ որ կուզեն. իմ ի՞նչ գործս է»: Ահա՛ անոնց վարմունքին ու փիլիսոփայության թարգմանությունը, անոնց հինրեժիմյան հոգեբանությունը, միշտ իշխված, տիրված ու քշված ըլլալու սովոր անոնց մտայնությունը:

Տարբեր է հարցը, երբ եղած կուսակցություններեն ոչ մեկը քու հոգիդ ու ձգտումներդ լիովին չեն բավարարեր. կրնաս եղած կուսակցություններեն ոչ մեկուն չպատկանիլ. բայց այն ատեն պետք է բարձրացնես քու սեփական դրոշակդ, պետք է հրապարակ դնես քու հասկցածդ, քու ուզածդ, այսինքն՝ պետք է հիմնես քու կուսակցությունդ, դիցուք միայն քանի մը հետևորդներով, դիցուք և միս-մինակ: Մտավորական մը պարտական է միշտ մասնակցիլ Հանրային ղեկավարության գործին ու մտածումին. հակառակ պարագային կդառնա դասալիք մը մտավորականի իր կոչումեն ու պարտավորութենեն:

Ո՛վ չի մասնակցիր իր ժողովուրդի Հանրային ու պետական գործերու կազմակերպումին, օրենքներու մշակումին, չահերու ճշդումին ու իր սկզբունքներու հաղթանակին համար մղվող կռվին, ո՛վ իր ուժերուն, իր դիրքին, իր հասկացողության ու կարողության չափով չի ձգտիր ազդելու պետական մեքենայի աշխատանքին վրա, այդ տեսակ մարդը կամավոր «իրավազուրկ» մըն է. հին ըժիմի հին «հպատակն» է: Կուսակցության մը մեջ չմտնել կամ գեթ կուսակցության մը գործունեությանը չկապվիլ ու չի նպաստել՝ կնշանակե հրաժարիլ այսքան հեղափոխություններու ու մաքառումներու գնով վերջապես ձեռք բերված ինքն իր տերը ըլլալու իրավունքե:

Ժ. ՄԻՆՉԵՎ ՀԻՄԱ ԵՂԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կուսակցությունների առաջացումը, ինչպես և անոնց խաղացած դերն ու ունեցած կարևորությունը պատմական այս կամ այն շրջանին մեջ բնա՛վ պատահականության ու կամայականության արդյունք չէ. այլ ծնունդ քաղաքական, քաղաքացիական ու տնտեսական իրական պայմաններու:

Հին վիճակեն նոր վիճակին անցնելու միջոցին ամեն երկրի մեջ բնականորեն երկու խմբակցություն կա և՛ պատրաստ, և՛ կարող: Նախ՝ հին վիճակի ժամանակ տեր ու տիրող եղող մարդիկը, ազնվական դասակարգին պատկանողները, որոնք և խոշոր հողատերեր են միաժամանակ, հիմա ալ կմիանան ու ձգտին իշխանությունը նորեն իրենց ձեռքը պահելու նաև նոր կարգերու տակ. այս անգամ ո՛չ իբրև տիրող դասակարգ, այլ իբրև տիրող կուսակցություն ժողովուրդի: Ասոնք իրենց ձեռքը ունին կապեր, ազդեցություն իրենց հողերուն վրա նստած գյուղացիության հանդեպ և որոշ աստիճանի նաև իրենց կրած անուններուն համբ. այսինքն՝ շատ կտրուկ պենքեր, որոնց կավելնա հիմա պիտակից կազմակերպումը ըստ նոր պահանջներու և հանուն որոշ սկզբունքներու: Իսկ այդ սկզբունքներուն առաջինն է այդ մարդոց համար՝ հնար եղածին չափ քիչ շեղիլ հինեն, պինդ կանգ առնել արդեն առնված քայլին վրա և այլևս տեղեն չերերալ ու տեղի չտալ, որովհետև ամեն նոր փոփոխություն նոր սպառնալիք մըն է իրենց դեմ միշտ ունեցած առավելության: Ատոր համար ալ ամեն քիչ-շատ լուրջ ու հանդուգն փոփոխություն կնկատվի ու կհռչակվի անոնց կողմեն իբրև խախտում հանրային հանգստի ու խոչընդոտ բնական զարգացման, իսկ անխուսափելի դարձած պահանջներն ալ կըմբռնվին ու կընդունվին շատ զգուշ, շատ դանդաղ, երկար քաշքշուկներե ու դիմադրութենե ետքը և հնար եղածին չափ մանր-մունր աստիճանավորությամբ: Այսպեսով կառաջանա պահպանողական կուսակցությունը:

Երկրորդ տեղը կբռնեն այն մարդիկը, որոնք հին վիճակի ժամանակ թեև իրավազուրկ, բայց գործնականորեն մեծ դեր ունեին ու ազդեցություն և կղարձնեին վարչական մեքենային կարևոր անիվները, մասնավորապես տնտեսականը. այսինքն՝ դրամատեր դասակարգը, որ հիմա ալ միշտ իր թևին տակ ունենալով հատկապես մտավոր պատրաստություն ունեցող մարդոց օժանդակությունը, կկազմակերպվի ու կներկայանա իբրև երկրորդ կուսակցություն: Ասոնք իրենց ձեռքը ունին երկրի արդյունաբերությունը և արտաքին առուտուրը, ուրեմն ներքին ու արտաքին քաղաքականության ջիղը. իրենց էությամբ ձեռնարկող են, ձեռներեց, նոր փորձերու ու նոր ճիգերու վրա է հենված իրենց ավելի հարստացումը և իրենց դիրքերու ամրացումը. ատոր համար ալ փոփոխություններէ, նորություններէ ու սրբագրություններէ վախ չունին: Ընդհակառակը. միայն թե այդ բոլորը ուղղված ըլլան առևտրական, արդյունաբերական ու դրամական ձեռնարկություններուն նո՛ր ուժ տալու և նոր հեռանկարներ բանալու իրենց ունեցած ազդեցությանն ու տիրապետությանը: Ասոնք են, որ կկազմեն հառաջդիմական-ազատական կուսակցությունը:

Ժողովուրդի մյուս դասերն ու շերտերը նոր վիճակի հաստատման առաջին շրջաններուն դեռ շատ են անփորձ, շատ աղքատ, շատ տգետ ու անկազմակերպ, դեռ շատ են վարժ հին ձևերուն և շատ ալ բնական կհամարեն, որ այս նոր վիճակի մեջ ալ առաջնությունն ու ղեկավարությունը գտնվի այդ երկու հինեն եկող դասակարգերու ձեռքը: Եվ այս բոլոր պատճառներով չեն ալ կրնար մտածել պետական գործերուն մեջ իրենց սեփական-անմիջական մասնակցության մասին: Իրենց վիճակի թեթևացումը և իրենց շահերու պաշտպանությունը կակնկալեն ազատական կուսակցության ղեկավարներեն, քանի որ անոնք են եղած նորության, շարժման ու փոփոխության հիմնական դերակատարն ու ներկայացուցիչը: Ուրիշ խոսքով՝ հին վիճակի երկու ղեկավար դասակարգերն են, որ նոր վիճակի տակ շատ բնական կերպով կղառնան առաջին երկու ղեկավար կուսակցությունները: Եվ կկառավարեն երկիրը գրեթե կանոնավոր հաջորդականությամբ,

նեթն ուժերը հավասար են, ինչպես որ էր, օրինակ, Անգլիայի մեջ: Կա՛մ կկառավարեն միասին ազնվականներու գերիշխանության տակ, նեթն դրամատիրությունը իր ուժովը դեռ ազնվականության չէ հավասարած, ինչպես որ էր, օրինակ, Գերմանիայի մեջ:

Բայց նոր կարգերու օրով, ընտրական սիսթեմի կիրառության տակ, հառաջդիմական կուսակցության մղած պայքարին իբրև արձագանգ, տնտեսական բարձրացման իբրև արդյունք և կրթության ու գիտության հետզհետե ժողովրդականացման իբրև պտուղ, կամաց-կամաց ծնունդ կառնե նոր կուսակցություն մը, զուտ «ժողովրդական» կուսակցություն մը, հին վիճակի ժամանակ ամեն դեկավարութենե ու քաղաքական ազդեցութենե դուրս մնացած ժողովրդական լայն խավերուն ծոցեն: Եվ ծնունդ կառնե երկու ուղղությամբ: Մեկ կողմեն, այսպես ըսե՛նք, վերեն, դրամատիրության թևին տակեն քիչ-քիչ դուրս կուգա մտավորականության մեկ մասը, որ չա՛տ ավելի խոշոր փոփոխություններ կպահանջի, չա՛տ ավելի մեծ ու հիմնական ներմուծումներ հօգուտ ժողովրդական լայն շերտերուն, քան այն, ինչ որ հառաջդիմական կուսակցությունը կրնար ընդունիլ ու համաձայնիլ իր դասակարգային դրամատիրական տեսակետեն: Եվ հիմնական տարակարծությունը տնտեսական հողի վրա է, քանի որ իրավական հավասարության սկզբունքի ընդունվելեն ետքը ժողովուրդի մը մասերը իրարմե բաժնող ամենեն մեծ ու ծանր, ամենեն շոշափելի ու ճնշող տարբերությունը մնացած էր տնտեսականը: Ուրիշ խոսքով՝ մտավորականության մեջ կառաջանա նոր ու ավելի ձախ հոսանք մը, որ իր գաղափարներուն և իր ձգտումներուն նպատակը կդարձնե ժողովուրդի մը ընկճված, զրկված ու ճնշարկված մասերը. հին վիճակի չակերտավոր «ժողովուրդը»:

Ճիշդ նույն միջոցին և նույն դրամատիրական ու տեմոկրատիկ կարգերու հաղթանակովը նոր թաւի կստանան արդյունագործությունը, տնտեսական խոշոր ու հանդուգն ձեռնարկությունները, արտասովոր չափերու կհասնի ապրանքներուն երթևեկը և կձևավորվի համաշխարհային տնտեսություն մը, և այս բոլորի հետևանքով կառաջանան գործավորական մեծ խմբումներ հանքային կեդրոններու, գործարանական քաղաքներու, մեծ նա-

վահանգիստներու, նավարաններու և շարժման հանգույց ներկայացնող վայրերու մեջ: Խմբական կյանքի առաջացուցած մտավոր շփումը, ընդհանուր ցավերն ու խմբական դժգոհությունը, ունևորներու վարած շռայլ ու զեխ կյանքին ամենօրյա ականատես հակադրությունը սոնց ևս ու թշվառ կյանքին և սոնց մշտական անկայուն ու անապահով վիճակը կզարձնեն այդ ամբողջ դասակարգը պատրաստ ու դյուրավառ նյութ բողոքի, պահանջի ու նոր խմորումներու: Եվ այս պատճառով ալ «բո՛ւն» ժողովուրդի բարձրացման համար մտածող մտավորական վերին նոր հոսանքը, որ իր գաղափարներու ձևավորման ու գործադրության համար հենարան մը կփնտրեր, իր ուշադրությունը ամենեն առաջ կզարձնե այդ նոր բազմացած ու արդին խլրտելու պատրաստ դասակարգին վրա և կձգտի իր ձեռքն առնելու, սոսոր համար ալ իր ծրագիրներն ու պահանջները կհարմարցնե անոնց պետքերուն և իր գաղափարներն ու բացատրությունները կձևե անոնց վիճակին վրա և անոնց անունով ալ կբարձրացնե նոր կուսակցության դրոշակը: Թեև սոսկե նետն ալ դեռ միշտ կխոսի ամբո՛ղջ ժողովուրդի, նույնիսկ ամբողջ մարդկության անունով, բայց սոիկա հարցի տեսական ու ձևական մասն է: Ամեն տեսակի դրոշակ բարձրացնողներն ալ միշտ խոսեր են ամբողջ ժողովուրդի ու մարդկության անունով, նույնիսկ ամենեն մռայլ բռնակալներն ու նեղմիտ մոլեռանդները: Ինչպես մարդ անհատի, այնպես ալ կուսակցության մը էությունը դատելու համար պետք է նայիլ ո՛չ թե իրենց ըսածին, իրենց ծրագրին ու փիլիսոփայությանը, այլ իրենց գործին, իրենց ըրածին:

Ահա՛ այսպեսով, բանվոր դասակարգին վրա հենված, բանվորությունը կազմակերպելով, բանվորներու շահերը պաշտպանելով առաջ կուգա բուն ժողովրդական առաջին կուսակցությունը՝ սոցիալիստ կուսակցությունը, սոցիալ-տեմոկրատ կուսակցությունը, աշխատավորական կուսակցությունը, «պրոլետար» կուսակցությունը. անուններըը, ինչպես և արտաքին ձևերը տեղ տեղ քիչ մը իրարմե կտարբերին, բայց էությունը միշտ նույն է: Ժթ-րդ դարու կեսերեն նոր կուսակցությունը կսկսի ձև առնել, իր դերը փորձել ու խաղալ:

Հո՛ն, ուր հին վիճակի հիմքերը վերջնապես չեն քայքայված, ուր կա դեռ ազնվականութիւն և ընդարձակ հողերու տեր դասակարգ մը, կապրին դեռ քով քովի երեք հիմնական կուսակցութիւնները՝ պահպանողական, ազատական ու սոցիալիստ: Հո՛ն, ուր արդեն հանրապետութիւն է, և մեծ հողատիրութիւնը քայքայված, ինչպես, օրինակ, Ֆրանսա, դեմ դէմի կմնան երկու հիմնական կուսակցութիւնները՝ դրամատիրական-հանրապետականները և սոցիալիստ-հանրապետականները՝ առաջինները բնականաբար ներկայացնելով ավելի պահպանողական տարրը երկրի, իսկ սոցիալիստները ավելի հառաջդիմական, այսինքն՝ կարևոր փոփոխութիւններ ու խոշոր նորութիւններ պահանջող: Եվ ինչպես որ նոր վիճակին սկիզբը ծանրութեան կեդրոնը պահպանողական կուսակցութիւններն էին, ուրկե սակայն եվրոպական երկիրներու մեջ, ընդհանուր առումով, հետզհետե անցավ ազատական կուսակցութիւններուն ժԹ-րդ դարու երկրորդ կեսին, այնպես ալ հիմա քսաներորդ դարուն հետ նույն դեպի ձախ ընդհանուր շարժումը կշարունակվի և պետական կյանքի ծանրութեան կեդրոնը քիչ-քիչ կթեքվի ազատական կուսակցութիւններեն դեպի սոցիալիստները:

ԺԱ. ՎԱՂՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այսպես էր մինչև այսօր. իսկ վա՞ղը:

Մասնավոր խորատեսութեան մը կարիքը չկա հաստատելու համար, որ ասկե ետքն ալ զարգացումը շարունակվելու է մինչև հիմա եղածին նույն ու նման ուղղութեամբ: Հիմա եվրոպական բոլոր գլխավոր երկիրներուն մեջ կա՛մ հաստատված է, կա՛մ հաստատվելու վրա է սոցիալիստական կառավարութիւններ. առաջին «ժողովրդական» կուսակցութեան հաղթանակը ուրեմն արդեն իրողութիւն մըն է: Իսկ այդ արդեն հաղթանակող բանվորական կուսակցութեան քովիկը և շատ տեղ անոր փեչերուն տակը կամաց-կամաց ձև ու կերպարանք ստանալու վրա է «ժողովրդական» երկրորդ մեծ ու հիմնական կուսակցութիւնը:

Օրենք է կուսակցական ու ղեկավարական կյանքի, որ նոր ուժի ու գոյության եկող կուսակցությունը բավական ժամանակ կրթվի իրեն նախորդող կուսակցության թևին տակ, վայելե անոր պաշտպանությունը, կարծես անոր խորթ որդին, անհարապատ զավակը: Եվ հոս ալ պակաս չէ վարժապետի ու աշակերտի մեջ եղած հավիտենական վեճը, մեկի ջանքը միշտ իրենց հպատակ պահելու, իր ըսածները միայն կրկնել տալու, իր պոչին կապելու, և մյուսի կես հարգալից և կես դժկամ ընդդիմությունը. մինչև որ աշակերտին պեխերը բուսնին ինչպես հարկն է, և այդ «ներքին» վեճը դառնա շահերու և ըմբռնումներու բացահայտ ընդհարում: Այս վայրկյանիս իր աշակերտական շրջանը կանցընե ապագային մեծ կուսակցությունը, ժողովրդական երկրորդ մեծ հատվածի ներկայացուցիչը, չա՛տ ավելի խոշոր իր թվովը և չա՛տ ավելի կարևոր իր կատարած աշխատանքովը, քանի որ կյանքի առաջին պետքերն է, որ կարտադրե, այսինքն՝ գյուղացիությունը:

Իզուր են, իհարկե, սոցիալիստներու բոլոր վարդապետական ջանքերը «բանվորագյուղացիական» կուսակցություն մը դառնալու, ժողովրդական այդ երկու մեծ հատվածներու շահերը միաժամանակ ներկայացնելու և պաշտպանելու: Շատ ավելի մեծ անկարելիություն մըն է այսիկա, քան իր ժամանակին դրամատեր-ազատական կուսակցության ճիգերը, երբ «խեղճ» բանվորության կարիքներուն ու շահերուն պաշտպանը դառնալ կուզեր: Այդ կարգի հակաբնական խառն դերերու կճգտին միշտ տիրող կուսակցությունները նոր եկվորներու ճամբան փակելու հույսով: Եվ կամ իրենց դիրքեն և ուժեն ինկած կուսակցությունները. որովհետև երբ կուսակցությունը կսկսի տկարանալ, քայքայվիլ և կառավարական սանձերը ձեռքեն կորսնցնել, այն ժամանակ հնարավոր է ամեն տեսակի կապակցում, միացում ու ձուլում, դերերու ամեն տեսակի փոխանակում և սկզբունքներու ամեն աստիճանի ուրացում ու աղճատում՝ իրենց փուլ եկող ամրոցները քիչ մը ավելի երկար պաշտպանել կարողանալու համար, ժամանա՛կ մըն ալ, քի՛չ մըն ալ, քիչի՛կ մըն ալ. այսպես է խեղդվող կուսակցության հոգեբանությունը: Բայց իրենց ուժին մեջ եղող, դեռ իրենց ուժի գագաթնակետին ալ բնավ չհասած կուսակցություններ, ինչպես է

սոցիալիզմը, և դնու նոր կյանքի ու կազմակերպության ձգտող կուսակցություններ, ինչպես է դյուղացիականը, միայն կուվ կրնան ունենալ իրարու հետ. անոա՛նձ ու անհա՛շտ կուվ գերիշխանության համար, ինչպես օրենքն է բնության և ընկերական կյանքի: Մանավանդ որ այդ երկու կուսակցություններու հենարանը կազմող բանվորն ու դյուղացին իրենց շահերովն ու ձգտումներովը հակամարտ են իրարու ամեն բանի մեջ: Եվ ինչքան դյուղացիությունը իր հողին տերը դառնա, ինչքան մշակության ու անասնաբուծության եղանակները կատարելագործվին, ինչքան դյուղացին գիտակցության գա ու կազմակերպվի, և ինչքան որ դյուղացիական հակումներով մտավորականությունը ազատվի սոցիալիստական բարբուրներեն ու ֆորմյուլներեն և իրերն ու երևույթները անվանե իրենց իսկական անուններովը, այնքան ավելի ցայտուն և այնքան ավելի անհաշտ կդառնան բանվորության ու դյուղացիության մեջ եղած շահերու ու հոգիի հակամարտությունը:

Բանվորական աշխատանքը և կյանքը կապված է խոշոր կապիտալին. և սկզբունքի տեսակետեն էական կարևորություն մը չունի, թե այդ երկուքը, այսինքն՝ աշխատանքն ու կապիտալը, միևնույն անձը կներկայացնեն, ինչպես որ կտեսնչա սոցիալիզմը, թե ըլլան երկու անձ իրարու տեր ու ծառա՝ իրարու հետ կռվզտուքի մեջ, ինչպես որ կցանկա պահել տիրող կապիտալիստը: Ով ալ որ ըլլա գործին տերն ու վարողը, և ինչքան ալ արմատական բարեփոխություններ, «արդարություններ» ու թեթևացումներ մտցվին գործի կազմակերպության մեջ, կա՛ հիմնական կետ մը, որ փոխել չեն կրնար: Խոշոր կապիտալներով գործող խոշոր արդյունագործությունը կպահանջե բանվորական համախմբում, խիստ գործակցություն և խիստ աշխատանքի բաժանում: Գործարանն ու գործարանական աշխատանքը հսկա մեքենա մըն է, ուր ամեն մեկ բանվոր պզտիկ պտուտակ մըն է միայն, փոքր անիվ մը, անիվի մը մեկ ատամը. և ինչքան որ բանվորը պարփակվի ու կատարելագործվի այդ իր մասին ու մասնիկին մեջ, այնքան օգուտ է ընդհանուր ձեռնարկության, բանվորի աշխատանքը հարկադրաբար չա՛ս է կնդրոնացած մե՛կ կետի մը վրա, մե՛կ

կողմի մը վրա, և ինչքան զարգանա քաղաքակրթությունը, գիտությունը և գործարանական արդյունաբերությունը, ըլլա՛ կապիտալիստական թե սոցիալիստական, այնքան ավելի կատարելագործություն և այնքան ավելի մեծ մասնագիտական աշխատանք կպահանջվի իրմեն: Մինչդեռ բույսերու ու կենդանիներու, այսինքն՝ ապրող էակներու աճեցումովը ու մշակումովը պրաղվող աշխատանքները, ընդհակառակը, քաղաքակրթության ու գիտության զարգացման հետ հետզհետե դուրս կուգան իրենց հին ու րուտին դարձած միակերպ կրկնութենեն ու կպահանջեն իրենց աշխատավորեն ավելի ու ավելի լայն գիտողություն ու բազմակողմանի մտքի լարում ու հասկացողություն: Եվ ամենեն ավելի կհաջողի ան, ով կենդանաբանության, բուսաբանության, բնախոսության, բնագիտության, բնալուծության[8], երկրաբանության, հողի, օդի ու կլիմայի բավարար ու բազմակողմանի ծանոթություններ ունի: Եվ ընդհանուր ծանոթություններն ալ հերիք չէ, այլ պետք է անձնական դիտողություն, փորձ ու ձեռներեցություն իր գիտցածն ու մտածածը իր տեղին, իր հողին, իր պետքին, իր տեղական պայմաններուն հարմարցնելու: Եվ այս ամենուն հետևանքովը գյուղական աշխատավորը, քանի երկրի մը քաղաքակրթությունը զարգանա, այնքան ավելի կմղվի դեպի մտքի լարումը, դեպի անձնական ջանքն ու փորձը, այսինքն՝ ճի՛շդ հակառակը բանվորին և ճի՛շդ հակառակը մինչև հիմա իր ունեցած վիճակին, քանի որ մինչև հիմա գյուղացին ճորտ մըն է եղած, սև աշխատավոր մը, բանվոր մը հողատեր ազնվականի ու կապալառուի ձեռքին տակ, որ կապիտալիստ ըսել է:

Եվ հենց երկրորդ մեծ տարբերությունն ալ ատ է բանվորի ու գյուղացիի: Ինչքան գիտություն, քաղաքական ազատ կարգեր ու ժողովրդապետություն հաստատվի, այնքան գյուղացին տերը կդառնա իր հողին, իր աշխատանքին և այնքան ավելի սիրով ու գիտակցությամբ կկապվի իր հողին, իր բունին, իր գործին ու իր ծրագիրներուն. ի՛նքն է ստեղծողը, ի՛նքն է մտածողը, ի՛նքն է վարողը, ի՛նքն է գործադրողը, իրե՛ն համար, անմիջապես ի՛ր հաշվին: Զգտումներու և շարժումներու այս անձնականությունն ու ազատությունը սեր կծնի, վայելք, թաւթ ու ոգևորություն. և

այս ամենուն իբրև հետևանք խորին կապ դեպի այն ամեն իրերը, տեղերը, գործերը, փորձերը, որոնք իր ինքնության, իր սեփականության կնիքը կկրեն: Հողին ու գյուղական աշխատանքին լծված մարդը միշտ է եղած սեփականության սիրահար, բայց ինչ չափով որ անիկա իսկապես տերը դառնա և՛ իր հողին ու աշխատանքին, և՛ իր ազատ շարժմանը, այնչափ ալ ավելի խորը և ավելի գիտակցորեն կշեշտվի իր մեջ սեփականության գնահատումն ու զգացումը:

Այս բոլորի հակադրությունն է բանվորի աշխատության եղանակը. բանվորը ի՛ր սեփականությունը չունի և չի կրնար ունենալ, ատոր համար ալ կձգտի ունենալ իրե՛նց սեփականությունը, այսինքն՝ այս կամ այն աստիճանի համայնական տիրություն. բայց այդ իրե՛նց սեփականությունը հիմնովին տարբեր բան մըն է ի՛ր սեփականութենեն, որովհետև այլևս ի՛նքը չէ տերը գործի, ան ալ ամբողջ գործի, ինքը չէ ծրագրողը, հետաքրքրվողը, վարողը: Ուրիշներու մտածած, ուրիշներու կարգադրած և, գոնե մինչև հիմա, ուրիշներու օգտին կատարվող հսկայական ձեռնարկության մը մեջ մեկ միավոր մըն է ինքը, իրեն նման հարյուրավոր ու հազարավոր միավորներու հետ, որոնց ո՛չ կամքը կբանի, ո՛չ ալ միտքը, ո՛չ ալ սիրտը այդ գործին վրա, այլ միայն ձեռքերը: Անձնական սեփականությունը անոր համար ատելի բան մըն է, որովհետև երբ այդ բառը կլսե՝ իսկույն իր աշխատանքը շահագործող «տերերու» ու «պարոններու» մասին կմտածե: Իր աշխատության եղանակը կապված է անխզելի կերպով հավաքականության հետ, առանց այդ հավաքականության ո՛չ կրնա արտադրել, ո՛չ իր ապրուստը հանել, ո՛չ ալ կյանքն ու ստեղծագործությունը ըմբռնել: Իր ամբողջ հոգիին վրա հավաքականության դրոշմը կա, գյուղացիի հոգիին վրա՝ անհատականության դրոշմը: Բանվորի այսօրվան համայնատիրական երազներուն դեմ վաղը բարձրացնե պիտի գյուղացին իր անհատականության պաշտամունքը և սեփականության իտեալը:

Կա և երրորդ տարբերություն մը բանվորի ու գյուղացիին մեջ, սերտորեն հյուսված նախորդ երկու տարբերություններուն: Ինչքան կուլտուրական վիճակը ցած է, գիտությունը՝ խեղճ և

քաղաքական ազատությունները՝ նեղ, այնքան բանվորական աշխատանքը ինքն ալ ցրիվ է ու մանր խանութային արհեստանոցի ու տնայնագործության ձևերուն տակ: Ինչքան գիտությունները, քաղաքակրթությունը, հասարակական ավելի բարձր կարգերը և ազատությունները կշատնան, այդ չափով ալ ու անոր գուգահեռ կմեծնան ու կխոշորնան արդյունագործական ձեռնարկությունները և՛ որակով, և՛ քանակով, և՛ կազմակերպությամբ, կհաստին հետզհետե համաշխարհային հսկայական չափերու ու կեդրոնացման: Մինչ ասոր ճիշդ հակառակը՝ գյուղական աշխատանքը, բույսերու, անասուններու և հողերու շահագործումը, իր ստորին վիճակներուն մեջն է կեդրոնացած ու խոշոր երբ ամբողջ ընդարձակ գավառներ, անտառներ, որսեր ու հոտեր կպատկանին այսինչ իշխանին կամ այնինչ կապիտալիստին: Եվ ընդհակառակը. քանի ազատ կարգեր, ազատ կենցաղ ու ազատ մտքեր կուգան՝ այնքան ավելի ու ավելի կմանրանա ու կցրվի գյուղական կապիտալն ու գյուղական աշխատանքը: Արդյունագործությունն ու բանվորությունը դեպի ձուլումը կերթա, դեպի խոշորացումը. ամեն բանի կեդրոնացումը մե՛կ կետի մը, մե՛կ կազմակերպության մը, մե՛կ մարմնի մը ձեռքը. գյուղի աշխատանքն ու գյուղացիությունը դեպի ցրվումը կերթա, հետզհետե անջատումը, առանձնացումը, մանրացումը. մեկը կեդրոնաձիգ է, մյուսը՝ կեդրոնախույս:

Իրենց աշխատանքով, իրենց շահերովն ու իտեալներովը Համայնացման ու կեդրոնացման ձգտողները բնականորեն քաղաքական կյանքին մեջն ալ կձգտին մեկ, ընդհանուր ու համամարդկային միակերպ պետության մը: Եվ քանի որ «առայժմ» ատիկա դեռ հնարավոր չէ, «առայժմ» կձգտին մեծ ու խոշոր միացած ու ձույլ պետություններու սիսթեմին, մեծ կայսրություններու: Ջէ՞ որ այդ հարցին հետ շատ սերտ կապ ունի բանվորության բարեկեցությունը. գործարանը ինչքան ընդարձակ աշխարհներու համար աշխատի, այնքան ձեռնտու է և՛ կապիտալիստին, և՛ իր բանվորին: Ատոր համար ալ ընդարձակ և հաստատ ու կանոնավոր շուկաներ ապահովելը պահանջ է ինչքան ազատական-դրամատիրական կուսակցության համար, այնքան ալ

սոցիալիստական-բանվորական կուսակցության. և ինչքան այդ «չուկաներու ապահովությունը» ամուր ըլլա ու հարկադրական, այնքան ավելի աղեկ: Իսկ այդ «չուկաներու ապահովություն» ըսածը ոչ այլ ինչ է, եթե ոչ ավելի փոքր, ավելի տկար ու ավելի ետ մնացած ժողովուրդներու կրծքին վրա նստիլը, այդ ժողովուրդները հարկատվության ու հպատակության մեջ պահելը, նախ՝ ուղղակի քաղաքականապես, լիորեն, իսկ եթե ատիկա անկարելի եղավ, գոնե տնտեսապես: Ասոր համար է, որ սոցիալիզմը իր էությամբ բարեկամ չէ մանր ազգերու, մանր գոյության ու մանր անկախություններու, անիկա «մեծ» ցեղերու ու «մեծ» ժողովուրդներու կողմնակիցն է, հակառակ իրենց տեսաբաններու գրական չեմ ու չում-ին: Քանի լրիվ տիրապետության դեռ չեն հասած, երկրորդական հարց է ասիկա իրենց համար, և կջանան քաղաքավարությամբ վրայեն ցատկեն՝ ուրիշներու ոտքին չկոխելու համար. բայց կառավարության մեջ ամրանան թե չէ, ուրիշ ելք չունին, պիտի երթան կապիտալիզմի զացած ճամբովը, որուն հետ նույն արյունն են իրենք և նույն մսե:

Մինչ գյուղացի մարդու հոգեբանությունը պինդ կապված է սեփականության զգացումին, անհատականության, անձնական ղեկավարության, ազատության ու իր հողին, բնականեն ավելի հակամետ է մանր ու անկախ ազգություններու գաղափարի ըմբռնումին և իր տնտեսական շահերովն ալ պատճառ մը չունի ուրիշներու հպատակեցման, եթե հողի ու տեղի նեղություն չունի: Համենայն դեպս գյուղական մշտական խնամք պահանջող, ուշ արդյունք բերող և շատ դանդաղ աճող տնտեսությունը ամենեն խորին հակառակորդն է պատերազմներու և ամենեն ջերմ ու բնական պաշտպանը հանգստի ու խաղաղության: Անձնական սեփականությունը նմանապես մեծ սանձ մըն է կռիվներե ու բուռն ցնցումներն խույս տալու, խաղաղասեր դառնալու, ուրեմն ուրիշներու պահանջն ու իրավունքները հարգելու: Իհարկե, եթե այդ սեփականությունը իր աշխատանքին պտուղն է, իր աշխատանքովը ստեղծված ու պահպանվող: Թե չէ հափշտակությամբ ղիզած հարստությունները նոր ու նոր հափշտակություններու սերը կծնին միայն. և հափշտակելը ինքը այդ մարդոց

մասնագիտական աշխատանքը կդառնա, գիշեր-ցերեկ կտքնին հաւիչտակելու համար: Ինչքան գյուղացին իր հողին տերը դառնա, իր ազատութեան, իր աշխատանքին ու իր ստեղծագործութեան անմիջական տերը, այնքան ավելի կդառնա տրամադիր «արդար» ըլլալու նաև ուրիշներու հանդեպ, որովհետև արդարութիւնն ըսվածն ալ մարդուս շահեն կծնի, միայն շատ ավելի լուսաւոր ու բարձր ըմբռնված շահեն:

Ուրիշ խոսքով՝ բանվորական-սոցիալիստական կուսակցութիւնը, ինչքան կուզե պոլշևիկ ըլլա կամ ինչքան կուզե չափավոր, իր էութեամբը միշտ «իմպերիալիստ» է, այսինքն՝ խոշոր ու բռնի կազմակերպված պետական միութիւններու կողմնակից, և ինչքան որ հարցը միայն իր կամքեն ու շահեն կախված ըլլա, այնքան ավելի: Եվ ընդհակառակը, գյուղացիական կուսակցութիւնը ինչքան հասուննա և ինչքան վարչութեան տերը դառնա, այնքան ավելի հակվելու է ազատ կազմված պետական մանր միութիւններուն կողմը և այդ մանր միութիւններու ազատ դաշնակցութեան կողմը: Այսինքն՝ աշխատանքի, պետական կազմի և մարդկութեան իտեալին մեջ սոցիալիզմը կեցած է, և կենալու է հետզհետե ավելի չեչտված կերպով, ձուլման, կեդրոնացման, համայնացման, նմանեցման ու հավասարեցման սկզբունքներուն վրա, մարդկային ազատութիւնը կապող-կաշկանդող սկզբունքներուն վրա, մարդուս հոգիին պահպանողական էութեանը վրա: Իսկ բույսերու ու կենդանիներու հետ ապրողն ու աշխատողը թե՛ իր գործով, թե՛ իր քաղաքական ձգտումներով և թե՛ իր համամարդկային իտեալներով հենված է բազմազանութեան, անհատականութեան, մանրացման, անկախութեան ու ազատութեան սկզբունքներուն վրա, մարդկային գործունեութիւնը արձակող ու անկաշկանդ թողնող սկզբունքներուն վրա, մարդու հոգիին հառաջդիմական էութեանը վրա: Իրերու այս կերպի պատկերացումը գուցե տարօրինակ ու գլխիվայր հասկացողութիւն թվի շատերուն համար, որոնք մեծցած ու սնված են սոցիալիստական գրականութեան վրա և կդատեն ու կխոսին սոցիալիստական քերականութեամբ ու բառարանով: Սակայն տարօրինակ կթվի թե ոչ, ատով ոչինչ չի փոխվիր ո՛չ իրականութենեն, ո՛չ իրողութենեն:

ժողովուրդներու ապագա, և ո՛չ չատ հեռավոր ապագա, պարլամենտներուն մեջ բանվորական ու գյուղացիական այդ զույգն են ներկայացնելու հիմնական կուսակցությունները: Երկուքն ալ նոր ծնված նոր բեժիմեն, երկուքն ալ մեծ, երկուքն ալ հենված ժողովրդական խոշոր հատվածներու, երկուքն ալ կարևոր, որովհետև կներկայացնեն մարդկային հոգիի, մարդկային ընկերական կյանքի և մարդկային աշխատանքի երկու կենսական ու հակադիր կողմերը: Եվ այդ երկուքի՝ մտավորականությունն ալ ղեկավարելու են իրենց բաժին ինկած ժողովրդական հատվածի հոգին ու կյանքը շարունակ, իսկ ամբողջ պետության ընդհանուր կառավարությունը՝ երբեմն մեկը, երբեմն մյուսը, փոխնիփոխը: Իսկ մինչև հիմա տեր եղող պահպանողական-ազնվականներն ու ազատական-դրամատերերը կամաց-կամաց անցնելու են երկրորդական ու երրորդական դիրքերը:

«Իսկ ե՞տքը»,- կհարցնեն մարդկային անհագ միտքը ապագայի թանձր վարագույրին ծայրիկը քիչ մը բարձրացնելու ջանքով: Ետքը իհարկե աշխարհքիս վերջը չէ, ոչ ալ նոր ու նոր կուսակցություններու կազմության վերջը:

Կուսակցություն ըսվածը ծնունդն է ու արտահայտությունը ինչքի, վիճակի ու վայելքի մեջ եղած ընկերային տարբերությունները ուն պատմական որոշ վայրկյանի մը: Անհավասարությո՛ւնն է, և մասնավորապես ամենեն չոչափելին ու զգալին, տնտեսակա՛ն անհավասարությունը, որ ստեղծեր է և ստեղծելու է բոլոր կուսակցությունները ինչպես մինչև հիմա, այնպես ալ ասկե ետքը մինչև «ի կատարած աշխարհի»: Անհավասարությունը մարդկային հոգիին, մարդկային անհատական կյանքին և ընկերական կազմին հյուսված անխզելի ու անսրբագրելի երևույթ մըն է, որուն դեմ մարդկային միտքը և մանավանդ մարդկային սիրտը պիտի մաքառի միշտ. շարունակ պիտի փոխե անոր ձևերը, դիրքերը, հարաբերությունները ու չափերը անհավասարությունը վերջնապես մեջտեղեն վերցնելու հույսով. և ատոր համեմատ ալ պիտի կազմե իր կուսակցությունները, բայց և երբեք չի պիտի հաջողի այդ անհավասարությունը կյանքեն վտարելու, որովհետև ատիկա օրգանական կյանքին մեջ անկարելի պահանջ մըն է և

օրգանական կյանքի զարգացման ընդդեմ ու հակադիր պահանջ մըն է: Եվ ատոր մեջն է արդեն երևույթի ամբողջ տրամատիզմը. մեկ կողմեն՝ մարդկային հոգիին «կուլտուրական» պահանջը ամեն անձի ու ամեն էակի հանդեպ արդար, բարի ու հավասար ըլլալու, և մյուս կողմեն՝ բնության բիրտ «անարտությունը» մարդկային շնորհները, ուժերը և կարողությունները անհավասար բաժնելու և շարունակ նոր չեղումներ, նոր տարբերություններ և նոր անհավասարություններ ստեղծելու:

Բայց վարագույրի ետևի այս փիլիսոփայությունը թողնելով վարագույրին ետևը՝ ընդգծենք միայն, ինչ որ մեզի համար գործնական ու անմիջական արժեք ունի: Պատմությունը մինչև հիմա տված է մեզի, նախ, զույգ մը հիմնական կուսակցություն՝ իր նյութին առնելով արդեն պատրաստի հին տիրապետող դասակարգերեն. հիմա ալ անիկա պատրաստելու վրա է իր երկրորդ կուսակցական զույգը՝ արդեն իր նյութը առնելով բուն ժողովուրդեն, ժողովրդական լայն խավերեն, հին չակերտավոր «ժողովուրդի» երկու կարևոր հատվածներեն: Մեկ հատվածը, որու աշխատանքի ու ստեղծագործության առարկան անկյանք ու արվեստական մարմիններն են, և մյուս հատվածը, որու աշխատանքի ու գործակության ենթական գործարանավոր ու ապրող գոյություններն են:

ԺԲ. ԵՐԿԲՈՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչ դեր որ կխաղա ժողովուրդի մը մտավորականությունը իր ամբողջությամբն առած իր ժողովուրդին հանդեպ, այն նույն դերը կխաղա մտավորականության մը ամեն մեկ հոսանքը իր կուսակցության հանդեպ: Ամեն կուսակցություն բաղկացած է երկու տարրե. մեկ կողմեն հանրային գործերու ղեկավարության որոշ հոսանք մը ներկայացնող մտավորականության հատված մը, մյուս կողմեն ժողովուրդի մը այս կամ այն մասը, որ իր շահերով, ըմբռնումներով ու ձգտումներով հարմար կուգա մտավոր այդ ուղղության: Մտավորականությունը կբերե տեսությունը, կպար-

ղե գաղափարները, կընդգծե նպատակը, կմշակե ճամբաներն ու միջոցները, կջանա ժողովուրդ շահիլ և լուսաբանել, համոզել, գիտակցութեան բերել ի՛ր ժողովուրդը, սիսթեմի ենթարկել անոր պահանջներն ու շարժումները, բոլոր ցրիվ մասերը կապել իրար ու կազմակերպել: Մտաւորականութիւնը թթիմորն է կուսակցական կազմակերպութեան, ազդող ու ներգործող տարրը: Մինչ ժողովուրդը հիմնական մարմինն է, իսկական խմորը. ժողովուրդը կներկայացնէ կուսակցութեան մարմինը, ուժը և տերը, որու համար որ այս բոլորը կկատարվի, որու միացած ջանքերովն ու գործակցութեամբը այս բոլորը կրնա կատարվիլ, և որու կազմակերպված միութեամբը միայն կուսակցութիւն մը կրնա պաշտպանվիլ, զիմադրել ու դրոհ տալ, և որու իրական ցաւերը, պետքերն ու պահանջները կդառնան ամբողջ կուսակցութեան դրական աշխատանքին իսկական առանցքը:

Արդ՝ երբ այս երկու տարրերը կգտնեն իրար, կհյուսվին իրար ու կմակարդվին միաձուլ ամբողջութեան մը մեջ, կառաջանա աւտղջ ու կենսաւնակ կուսակցութիւն մը, որ իր լուրջ դերը ունի խաղալու ժողովուրդի կյանքին մեջ առավել կամ նվազ երկարատև շրջանի մը համար: Բոլոր հիմնական կուսակցութիւնները այս տեսակի աւտղջ կուսակցութիւններ են՝ կազմակերպված ժողովուրդի մը մեկ որոշ ու կայուն հատվածեն:

Բայց բացի իր պէսպէս հիմնական կուսակցութիւններեն տեմոկրատիկ կազմ ունեցող ժողովուրդի մը պատմական ամեն մեկ շրջանը ունի նաև իր ավելի կամ նվազ երկրորդական կուսակցութիւնները: Երկրորդական իրենց խաղցած դերովը և իրենց ազդեցութեամբը հանրային կյանքին վրա. և այդ երկրորդականութեան պատճառը միշտ նույն է. փոքրիկ է իր բանակը, տկար է իր կազմակերպութիւնը, չահերով ու գաղափարներով տեսականորեն կապված հաստատ ամբողջութիւն մը չէ իր մարմինը, ուրիշ խոսքով՝ ժողովուրդի մեջ հող չունի, հիմք չունի հարկ եղածին չափ:

Այդ երկրորդական կուսակցութիւնները կարելի է խմբել երեքի՝ հատնող կուսակցութիւններ, միջանկյալ կուսակցութիւններ և մանուկ կուսակցութիւններ՝ աջեն դեպի ձախ երթալով:

Ամեն հիմնական կուսակցություն վաղ թե ուշ պիտի ծերանա, ետ պիտի մնա, պիտի տկարանա ու պիտի հալի կյանքի նո՛ր առաջացուցած պահանջներուն դեմ, նո՛ր բացվող մտավոր հորիզոններուն հանդեպ և կամաց-կամաց տեղի պիտի տա՝ իր գրաված դիրքերը մեկիկ-մեկիկ հանձնելով ժողովրդական ու մտավորական նոր կազմակերպված հատվածներու, թա՛րմ ուժերով ու նո՛ր խոսքով առաջ շարժվող նոր կուսակցություններու և ինքը պիտի դառնա հետզհետե երկրորդական կուսակցություն մը՝ մասամբ ծերունական համառությամբ մը կառչած հինին ու անցյալին, մասամբ ներողամիտ ու փորձառու հեգնությամբ մը նայելով նորելուկներու հանած իրարանցումին: Ինչպես շատ երկարատև մանկություններ, այնպես ալ չափազանց երկար քաշքշվող ծերություններ կան պատմության բերած պայմաններուն մեջ, որուն ընթացքին հատնող ու մարող երկրորդական կուսակցություն մըն է անիկա:

Այս բնական մահվան կողքին երկրորդական կուսակցություններ ծնող երկրորդ պատճառը հերձվածն է, պառակտումը: Ամեն մտավոր հոսանք և ամեն կուսակցություն ինչքան ալ ինքն իր մեջ որոշ ըլլա ու հաստատ և սերտ ու կուռ ամբողջություն մը ներկայացնե, նորեն միշտ իր մեջը ունի անխուսափելի կերպով իր աջ ու ձախ թևերը: Ասիկա սովորաբար տարիքի հետ կապված հարց է: Մեկ կողմը անփորձ, բայց եռուն ու եռանդուն երիտասարդությունը՝ իր միշտ խիզախ ու առաջ նետվող հոգեբանությամբ, սիրահար նորություններու, նորոգումներու, նոր կերտումներու: Մյուս կողմը ավելի հասուն տարիքը, ավելի հանգիստ ու ավելի դանդաղ արյունը, ավելի ալևորած գլուխներ, որոնք շատ ավելի խորը և հեռուն կտեսնեն թե՛ իբրև մարդ-անհատ, թե՛ իբրև պետական մարդ և բնական հակում ունին խուսափելու՝ ամեն ավելորդ շարժումե, ուժերու ավելորդ սպառումե, ամեն ցնցումե ու չեղումե. ու միշտ կգերադասեն հին ճամբաները, որով շատ են գացեր-եկեր:

Արդ՝ կպատահի, և մանավանդ պատմական սուր ու վճռական վայրկյաններուն, որ կուսակցության մը այդ երկու թևերը այն աստիճան տարբեր չափերով կթափահարեն, որ թռչունը

տեղեն չարժվիլ կարողանալու համար ստիպված է իր չափազանց դեպի դուրս երկարած փետուրներեն մաս մը փետտելու, կամ որ միևնույնն է՝ փետուրները իրենք կփրթին: Ահա՛ այդ փրթած մասը շատ անգամ կկազմե ինքը ուրույն կուսակցություն մը ու իր գաղափարները կպաշտպանե՝ վիճելով ու կռվզտելով միշտ իր մայր կուսակցության հետ: Այս կարգի երկրորդական կազմակերպություններն ու հոսանքները սովորաբար վաղանցիկ կըլլան, շա՛տ են կապված վայրկյանին ու անձնական հաշիվներու, որով և շուտով ալ կմարին իրենց հրահրող կրքերուն հետ: Երբեմն սակայն հարցը շատ ավելի լուրջ կդառնա ու քանի մը փետուրով չի վերջանար, այլ ամբողջ կուսակցությունը կփեռեկտի երկուքի:

Նոր ըլլա այդ հերճվածը թե թեթև, տևական թե ժամանակավոր. միշտ ծնունդ կուտա այսպեսով երկրորդական կուսակցության մը: Եթե պառակտված մայր կուսակցությունը աջն է կամ կեդրոնը՝ նոր ծնված երկրորդական կուսակցությունը կըլառնա միջանկյալ կուսակցություն մը, «երեքյալ ու տատանյալ» կուսակցություն մը, մեկ ոտքովը հինին վրա, մյուս ոտքն ու ձեռքերը մեկնելով դեպի ավելի հառաջադեմ կուսակցությունը, երբեմն մեկ, երբեմն մյուս կողմը հակվելով՝ նայելով հարցերուն և օրվա տրամադրություններուն:

Իսկ եթե ձախի հիմնական կուսակցությունն է, որ կպատռվի՝ ծնունդ տալով ավելի ձախ երկրորդական կուսակցության մը, կառաջանա մանուկ կուսակցություն մը, սավառնող կուսակցություն մը, որուն ոտքերը կտրված են գետնեն ու իրական հողեն, այերային[9] կուսակցություն մը: Եվ եթե պատահի, որ պատմական-հեղափոխական դեպքերու խաղը անոնց ձեռքը դնե պահ մը պետության ղեկը, կդառնա «Վա՛յ քեզ քաղաք, որ թագավորդ մանուկ է»: Այս մանուկ կուսակցություններեն է, որ ժամանակի ընթացքին կրնան հառաջանալ նոր իրական կուսակցություններ. բայց ինչպես անհատական ընտանիքներու, այնպես ալ կուսակցություններու ընտանիքին մեջ չափազանց խոշոր է մանուկներու մահացության տոկոսը. և կուսակցական մանուկներն ալ ունին իրենց շատ վտանգավոր սուր ու տարափոխիկ հիվանդություններու շրջանը, որուն միայն շատ աւտղջ կազմ-

վածքները կդիմանան: Իսկ բոլոր անոնք, որոնք ժողովուրդի ներքին իրական պայմաններուն հետ քիչ առնչութիւն ունին, որոնք դուրսեն ներմուծված ընդօրինակութիւններ են, կապկումներ ուրիշ ժողովուրդներու կամ կյանքեն կտրված, վերացական գիտական գաղափարներով հաւիշտակված մտաւոր հոսանքներ, ատոնք բոլորը իրական կյանքի ցուրտ քամիներուն տակ կթափին գետին, աշնան տերևներու պես, որովհետև կրառնան կուսակցութիւն մը առանց ժողովուրդի, այսինքն՝ հիմանդ ու արվեստական երևույթ մը: Եվ ատոր համար ալ իրենց աղմկոտութիւնը հանրային կյանքին վրա չափազանց չնչին է, թեև չափազանց մեծ է հրապարակի վրա իրենց բարձրացուցած աղմուկն ու փոշին:

* * *

Ընդհանրապես օրենք է, ինչքան արվեստական ու երեխայական է կուսակցութիւնը, այնքան ավելի մեծ է իր հանած պոռչտուքն ու իրարանցումը. և շատ հասկնալի պատճառով. գործ տեսնող մարդը շատ խոսիլ չի սիրեր, խոսելու ասպարեզը կմնա գործ չտեսնողներուն: Եվ պետք չէ մոռնալ, որ այդ մանուկ կուսակցութիւնները կազմողները բոլորն ալ եռանդուն, երիտասարդ ուժեր են, բոլորն ալ այս կամ այն աստիճանի մտաւոր պատրաստութեամբ լեզվի ու գրչի տեր, զուրկ իրական կյանքին ազդելու այլ հնարավորութիւններեն ու չինարար աշխատանքե. որով իրենց բանն ու գործը կդառնա գրելն ու քննադատելը:

Ատ կդառնա նաև անհրաժեշտութիւն մը իրենց գոյութեան համար իբրև կուսակցութիւն, հաճախ նաև իբրև անհատ, որովհետև առանց այդ աղմուկի ոչ ոք պետք չէ հիշեր անոնց գոյութիւնը: Աղմուկը անոնց գլխավոր զենքն է: Լեզվի ուժով, պոռալով կգրավեն ուշադրութիւնը ուրիշներու:

Գոնե լռեցնելու համար շատ անգամ հաշվի կառնվի և անոնց ձայնը. հոս ու հոն փոքրիկ զիջումներ կըլլան. կգործածվին իբրև չեփոր ու մունետիկ. և ահա՛ կապրի երբեմն բավական երկար ու քարչ կուտա այդ միշտ-մանուկ երկրորդական ու երրորդական կուսակցութիւնը իր արվեստական գոյութիւնը:

Այսպեսով՝ ամեն ժողովուրդ և ամեն պատմական շրջան ունի իր երկու կամ երեք հիմնական կուսակցությունները և ատոնց փեշերուն վրա մեկ-երկու հատ ալ ավելի կամ նվազ կարևորությամբ երկրորդական կուսակցություններ:

Կուսակցական փունջի այս զանազանությունը իր ընդհանուր առումով բարիք մըն է հանրային կյանքին համար, քանի որ ատոնք բոլորն ալ իրար կը ննջաղատեն և կծառայեն հարցերու բազմակողմանի լուսաբանության: Միևնույն ժամանակ բոլորը միասին կղառնան տիրող կուսակցության ընդդիմադիր ուժ, շարունակ անոր փեշերեն կքաշքշեն ու չեն թողներ, որ միակողմանիության ու միահեծանության հասնի անոնց տիրապետությունը: Անոնք մշտական չորս բացված աչքեր են տիրող կուսակցության ու կառավարության ամբողջ գործունեության ու ամեն մեկ քայլին վրա: Տեսակ մը մշտական հսկողություն և՛ պետության վրա, և՛ իրար վրա:

Անշուշտ, հարցը ունի և իր անախորժ երեսը. կուսակցություններու շատությունը ավելորդ բնո մըն է, որ կծանրացնե ու կդժվարացնե պետական անիվներու դառնալը: Շատ ավելորդ աղմուկ ու տակնուվրայություն կբերե հարցերը վճռելու ժամանակ և շատ տարակուսանք, ձգձգում ու երկմտում քայլերը առնելու ժամանակ: Այլև «պլոք»-ներու միջոցով հաճախ կառաջացնեն անբնական ու անդիմագիծ կառավարություններ, ուր շատ անգամ ուրքի տակ կտրվին և՛ «ուղղությունը», և՛ պետականի շահերը, և՛ «ժողովուրդի օգուտը»՝ չսիրված հակառակորդ ուժեղ կուսակցության ձեռքեն իշխանությունը խլելու համար «ինչ գնով կուզե ըլլա»:

Ինչքան առողջ ու կորովի է ժողովուրդի մը քաղաքական ու տնտեսական որոշ շրջանը, այնքան քիչ կըլլա կուսակցություններու թիվը: Եվ ժողովուրդի մը կյանքին խառնակ, տկար ու հիվանդ շրջաններուն է, որ մասնավոր կերպով պարարտ հող կգտնեն երկրորդական կուսակցությունները բուսնելու համար:

Ինչքան ալ անպատեհություններու և հիվանդոտ երևույթներու հետ կապված ըլլա խումբ մը մեծ ու փոքր կուսակցություններու գոյությունը, ատիկա է միակ հնարավոր ու միակ բնական

ձևը ժողովրդապետական կառավարության մը մեջ: Եվ բոլոր անոնք, որոնք սուտ ու իրավ պատրվակներով ու խմաստակություններով վերացնել կուզեն ժողովուրդի մը ծոցեն կուսակցություններու ազատ խաղը, սիրուն բառերու ետևը թաքնված՝ կձգտին միայն մե՛կ նպատակի մը՝ միահեծան ու անպատասխանատու տիրապետության, այսինքն՝ հին բեժիմի վերահաստատման իր բոլոր սանձարձակությամբ, կամայականությամբ, ստրկությամբ, տգիտությամբ ու բռնակալությամբ: Անոնք սպանել կուզեն այնքա՛ն-այնքան ջանքերու, արյան ու հեղափոխություններու գնով ձեռք բերված ժողովրդապետությունը, ժողովուրդներու ազատությունը, այսինքն՝ մեր ժամանակներու ու մեր քաղաքակրթության ամենեն թանկագին ու ապագա զարգացումներու համար ամենեն կարևոր ձեռքբերումը:

Մարդկության դեռ նոր ձեռք բերած այս իրավակարգին մեջ հիմքը կուսակցությունն է և կուսակցություններու ազատ խաղը, քանի որ կուսակցությունն է ժողովրդական կազմակերպված հիմնական միությունը, որ որոշ ու հստակ կա՛մք մը ունի: Կուսակցություններու հստակացումն ու զորացումը կամքերու որոշվիլը և ամրանալը ըսել է, ժողովուրդի մը զանազան հատվածներուն կամեցողության բյուրեղացումը, թե՝ այս կուզե՛մ և այս չե՛մ ուզեր: Կուսակցությունը և կուսակցություններու ազատ մրցումը ամենեն խոշոր և ամենեն կարևոր միջոցն է ժողովուրդը գիտակցության բերելու, մտավոր հասունության նպաստելու, որ ան հասնի իր վիճակի ու իր շրջապատի հստակ ըմբռնումին, որ ան տեսնե ու զգա իր դերն ու իր ուժը և ձգտի իր կամքն ու պահանջը գործադրել տալու, և ինչքան ժողովուրդները զորանան ու բարձրանան, ինչքան կրթվին ու քաղաքակրթվին, այնքան ավելի պետք է չեշտվի ու ընդգծվի կուսակցություններու դեմքը և կուսակցություններու դերը, որովհետև վերջիվերջո կուսակցություն կնշանակե կարգ ու կանոն, սիստեմ, բնական բաժանում ժողովուրդ կոչվող քաոսին մեջ:

Ինչքան ժամանակ որ «ժողովուրդը» հպատակ մըն էր միայն ու տիրված մը առանց ձայնի ու իրավունքի, ան կրնար մնալ քաոսային դրության մեջ: Եվ իր տիրապետողները ամեն

կերպ աշխատած են, որ ան մնա այդ քաոսային անկազմակերպ դրութեան մեջ: Բայց այն օրեն, երբ ինքն է դարձած տերը, անհրաժեշտ է, որ ան կազմակերպվի ու ենթարկվի առողջ բաժանումներու իր շահերուն, զգացումներուն ու համոզումներուն համեմատ:

ՀՈԳԵԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՆՉԵՎ ՄԱՐԴ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԿՅԱՆՔ ՈՒ ՀՈԳԻ

Ա. ԿՅԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԸ

Ի. ԵՐԵՔ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հնագույն դարերուն մարդկային դիտողութիւնը խմբեր է երեք հիմնական տեսակներու բնութեան բոլոր ստեղծագործութիւնները. բաժներ է բնութիւնը երեք թագաւորութեան՝ հանք, բոյս ու կենդանի:

Հանք. այսինքն՝ գետնեն հանուած նիւթի կամ նիւթերու զանգուած մը, որ երբ ալ առնենք, միշտ նոյն է ու անփոփոխ, եթէ շուրջի իրմեն դուրս եղող ուժերու ազդեցութեան չենթարկուի. որ ո՛չ արտաքին որոշ ձեւ ունի սովորաբար, ո՛չ ալ ներքին բնական մասեր, որուն մասն ու ամբողջը նոյն են ըստ էութեան և ուր չկայ սկիզբ ու վախճան ըստ գոյութեան:

Երկաթի կտոր մը կրնայ ջուրի կամ օդի ազդեցութեան տակ ժանգոտիլ, հրաբխային ժայթքումէ մը կրնայ լաւայի ժայռ մը սկիզբ առնել և ալիքներու անվերջ բախումեն դարաւոր ապառաժ մը փչրուիլ ու աւազանալ, Հողի չերտ մը լուծուիլ ու անհայտանալ, այս բոլորը արտաքին ուժերու ընթած փոփոխութիւնն է, ասոնցմե ո՛չ մեկը քարի, երկաթի, Հողի ու աղի սեփական գործը չէ, իրեն հատուկ կազմին ու էութեան ծնունդը չէ:

Բոյս. այսինքն՝ իրեն հատուկ որոշ մասերով և մասերու որոշ դասաւորութեամբ մարմին մը, որ այլևս նյութերու պատահական զանգուած մը չէ, որ Հանքերու ունեցած քիմիական ու ֆիզիքական հատկութիւններեն զատ ունի նաև նոր հիմնական կարողութիւն մը, որ աճիլ կանուանենք: Բոյսը շրջապատող միջավայրեն հանքեր ու հյութեր կառնի իր մարմնին մեջը, կենթարկէ քիմիական վերլուծման, նոր կապակցութիւններու և

կղարձնե իր գոյության մեկ անհրաժեշտ մասնիկը. կըսենք՝ կանանի, որով և կմեծնա ծաւալով:

Եվ սնանելու այս աշխատանքը ավելի լավ կատարել կարողանալու համար հետզհետե ինքն իր մեջ կառաջացնե հատուկ գործարաններ: Բույսի մը մարմինը կազմված է զանազան տեսակի հատուկ պաշտոններով աշխատող մասերե՝ գործարաններեն: Եվ այդ պատճառով ալ բույսը կկոչվի գործարանաւոր մարմին. հանքերը անգործարան մարմիններ են:

Բույսը ո՛չ միայն ինքն իր մեջը կաճի, այլև կաճի իրմեն դուրս՝ ծնունդ տալով իր նման, բայց իրմեն զատված գոյություններու. նոր սերունդներ կառաջացնե: Ամեն բույս միայն իր նման մայր բույսե մը կրնա առաջանալ, ատոր համար ալ սկիզբ մը ունի: Իր սկիզբի ատենը ինքը շատ փոքր է ծաւալով, բայց շատ ուժեղ աճելական կարողությամբ, որու օգնությամբ հետզհետե կփոփոխե իր ձևն ու կազմը որոշ կարգով ու եղանակով. մինչև որ կհասնի իր լրիվ աճման, իր կարգին կառաջացնե բազմաթիվ սերունդներ, հետզհետե կպակսին իր աճելական կարողությունները, ետքը բոլորովին կդադրին և բույսը կչորնա, կմեռնի:

Բույսի մը այս կերպով սկիզբ առնելը, սննդառությամբ մեծնալն ու զարգանալը, իր նման սերունդներ առաջացնելն ու մեռնիլը մեկ բառով կանվաններնք կյանք: Բույսը կյանք ունի, ապրող մարմին է. հանքային մարմինները անկյանք են: Ուրեմն, կյանք ունին ու կապրին միայն գործարանավոր մարմինները:

Կենդանի. այսինքն՝ շարժուն, կենդանություն ունեցող մարմին. ան ալ ունի հանքերու քիմիական ու ֆիզիքական հատկությունները. ունի նաև բույսերու աճելական կարողությունները. ունի ծնունդ, ունի զանազան գործարաններ, որոնցմով կսնանի, կմեծնա, սերունդներ կծնի ու կմեռնի: Ուրիշ խոսքով՝ կենդանիները ալ գործարանավոր մարմիններ են և կյանք ունին: Ամեն կենդանի նախ և առաջ բույս մըն է:

Բույսեն կտարբերի անով, որ բացի բուսական գործարաններեն, ունի նաև կենդանական գործարաններ, որով կշարժի, կզգա, կմտածե: Կենդանիները կյանք ունենալե զատ ունին նաև զգայություններ, տեղեկություններ արտաքին աշխարհեն և այդ

տեղեկութիւններուն համեմատ կշռադժվին, այսինքն՝ իրենց տեղն ու դիրքը կփոխեն ներքին մղումով:

Ամեն տեսակի զգայութիւնները, պատկերացումները, մտածումները, ցանկութիւնները, զգացումները և շարժումները կկազմեն կենդանիներու կենդանական կարողութիւնները: Իսկ կենդանական կարողութիւններուն ընդհանուր գումարը կանվանենք հոգի: Կենդանիները ո՛չ միայն կյանք ունին, այլև հոգի:

II. ԺԹ ԴԱՐՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Այս երեք թագավորութիւններու իրարմե ունեցած տարբերութիւնները այնքան խորն են ու աչքի ցարնող, որ մարդկային մտքին համար միշտ ալ նկատվեր են էապես իրարմե անջատ ու իրարմե անկախ բաներ, սկիզբեն ի վեր իրարմե անջատ գոյացած և մշտնջենապես իրարմե տարբեր մնացող. մեկեն մյուսին անցումը անկարելի:

Եվ ճիշդ այդպես ալ յուրաքանչյուր թագավորութեան մեջ ամեն մեկուն հանքային, բուսական կամ կենդանական հազարավոր զանազան տեսակները մարդկային միտքը ըմբռներ է միշտ իբրև իրարմե անջատ գոյացութիւններ, որոնք այդպես տարբեր ու հաստատ կերպարանքով ստեղծված են սրարչի մը հրամանովը և մշտապես այդպես ալ կշարունակեն ու իրենց նման նոր-նոր սերունդներ կուտան առանց երբեք կարևոր փոփոխութեան մը ենթարկվելու:

Թեև գործնական կյանքին մեջ դիտված էր, որ մեջեմեջ զարմանալի խառնուրդներ կարելի է առաջացնել ու նոր ձևեր, ցեղեր ու տեսակներ ստանալ թե՛ բուսական և թե՛ կենդանական աշխարհին մեջ, բայց այս ամենը կնկատվեր «բնութեյան խաղ», երկրորդական ու անկարևոր «պատահականութեյուն», որ հիմնական ըմբռնումը փոխել չէր կրնար:

Դարավոր հիմնական ըմբռնումն էր, թե ամեն բույս ու կենդանի, ամեն ցեղ ու տեսակ այդպես գոյացած է աշխարհիս ստեղծման օրեն, ինչպես որ կա, և այդպես տևելու է անփոփոխ,

ինչպես որ կա, մինչև այդ ցեղի կամ տեսակի որևէ պատճառով մը սպառիլը:

Այս ըմբռնումը փոխվեցավ միայն վերջին մոտավորապես հարյուր տարիներու ընթացքին:

Ժ-Թ դարը բնական գիտություններու արտակարգ զարգացման դարն է: Այդ զարգացումը եղավ արդյունք քանի մը դարերու կրոնական մաքառման, նոր աշխարհներու գյուտին, նոր հեռավոր ուղևորություններու ու հարաբերություններու, տնտեսական նոր հարստություններու կուտակման և նոր դասակարգի մը առաջացման՝ քաղքենի դասակարգը: Այս նոր դասակարգի պահանջներուն և ըմբռնումներուն բերածն է կառավարություններու հանրապետական ձևը, օրենքներու մշակման մեջ պետության մը բոլոր անդամներուն իրավական մասնակցությունը, աշխարհիկ կրթության, աշխարհիկ համալսարաններուն և աշխարհիկ գիտություններուն մղում ստանալը և մարդկային մտքի ճիգերուն մեջ անհատական փորձի ու անհատական դիտողության գերակշիռ դառնալը:

Գիտություններու այս ընդհանուր չարժման ու հետաքրքրություններուն մեջ մասնավոր կերպով թև առին բնության երևույթները ուսումնասիրող գիտությունները, որովհետև անմիջական փորձեն ու անհատական դիտողութենեն ամենեն շատ ու ամենեն շուտ անոնք օգտվեցան բնականաբար: Դիզվեցան արագ կերպով նոր դիտողություններ, գյուտեր ու սեռություններ հայտնի բնական գիտություններու գրեթե բոլոր ճյուղերուն մեջ: Ամեն մեկուն առած մեկ նոր քայլը նոր լույս բերավ նաև մյուս ճյուղերուն և նոր դրդում: Եվ շուտով սկսան նորիլ, սրբագրվիլ, հինցած տեսակետներե ազատվիլ, նոր ձևով խմբագրվիլ և աշխատանքի փորձնական ու դիտողական նոր եղանակներ մշակվիլ:

Շարժումը անցավ անշուշտ ոչ-բնական գիտություններուն, ընկերական, տնտեսական ու պատմական գիտություններուն: Բնական գիտություններու մշակած մտածելու եղանակը, ուսումնասիրության կերպերը և փորձնական մեթոտները պարտադրվեցան նաև ատոնց, և առաջացավ ընդհանուր գիտական բարձրացում մը, ընդհանուր գիտական խոյանք մը և ահագին աշխատանք

բնական գիտություններու մտածման ճամբաներով: Որով բնական գիտությունները իրենց կնիքը դրին ժամանակակից բոլոր գիտություններու մշակմանն ու զարգացմանը վրայ: Ժթ դարը դարձավ գիտություններու դար և մասնավորապես բնական գիտություններու տիրապետության վրա:

III. ԿՅԱՆՔԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՆՈՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բնական գիտություններուն մեջ մասնավորապես նպաստավորվեցան բույսերն ու կենդանիները և ընդհանրապես կյանքի երևույթները ուսումնասիրող գիտությունները: Կատարելագործված մանրադիտակը, որ մինչև 2000 անգամ կմեծցնե իր տակը դրված առարկան, նոր աշխարհներ բացավ բնագետի հիացած աչքերուն առջևը: Կաթիլ մը ջուրը, պուտ մը արյունը կյանքով ու արարածներով լեցուն օվկիանոս մը դարձավ, ուր հասարակ աչքի համար անտեսանելի մանր էակներ կծնին, կապրին, կվարեն կյանքի կռիվը, սերունդներ կուտան ու կանցնին: Մանրադիտակի միջոցով հնարավոր դարձավ միաբջիջ ու նախնական արարածներու ճանաչումը, հնարավոր դարձավ ավելի բարձր արարածներու բաղադրիչ գործարաններուն և անոնց հյուսվածքներու նուրբ ու խորին ուսումնասիրումը: Եվ բացի բուսաբանության ու կենդանաբանության հիմնական սրբագրություններեն ու վերամշակումեն՝ առաջացան նաև նոր բնական գիտություններ:

Հնարավոր դարձավ ուսումնասիրելը, թե ինչպես բուսական կամ կենդանական սաղմեն հետզհետե որոշ ձևափոխություններով կառաջանան այս կամ այն բույսն ու կենդանին: Պարզվեցավ, որ ամեն մեկ արարած միաբջիջ գոյություն մըն է իբրև սաղմ, և այդ միակ բջիջեն է, որ կծնին ու կբազմանան միլիոնավոր բջիջներ, որոնք և կկազմեն կենդանիին զանազան գործարանները. և որ կան հիմնական ձևեր և որոշ հաջորդականություն այդ սաղմնային զարգացման ընթացքին. ու հիմք դրվեցավ նոր գիտության մը՝ սաղմնաբանության:

Այդպես ալ բնախոսությունը, որ կյանքի առաջացուցած գործարաններու գործունեության ուսումնասիրությունն է. անոնց ինչո՞ւ և ի՞նչպես առաջանալը և անոնց աշխատության ձևերն ու օրենքները: Ուրեմն բնախոսությունը, երբ բուսական կամ կենդանական գործարանի մը գործունեությունը կուսումնասիրե՝ կյանքը ուսումնասիրած կըլլա: Այսինքն՝ հետզհետե ավելի ու ավելի խոր ու լայն չափերով կսկսի յուրացնել հին հոգեբանության կատարել ուզած աշխատանքը:

Այդպես ալ բուսաբանական ու կենդանաբանական սանդուղի տարբեր աստիճաններուն վրա գտնվող մոտավոր և հեռավոր արարածներու համապատասխան գործարանները իրարու հետ համեմատելով՝ հայտնվեցավ անոնց ներքին խոր ու զարմանալի նմանություններն ու նույնությունները: Սկսան փնտրել ու բացատրել նույն գործարանի զանազան տեսակներու ու ցեղերու մարմնին մեջ տարբեր-տարբեր ձևեր ու գործածություն ստանալուն պատճառները. և առաջացավ համեմատական անդամագիտությունը, որ տեսակներու իրարմե անջատ ստեղծագործության և մշտապես անփոփոխ մնալու հին ըմբռնումը հիմնապես քայքայեց ու տեղը դրավ բոլոր գործարանական մարմիններու, բոլոր հյուսկեններու և բոլոր գործարաններու հետզհետե իրարմե առաջացած ըլլալու նոր ըմբռնումը:

Համեմատական անդամագիտության և սաղմնաբանության հանած եզրակացություններուն հենակ ու ապացույց դարձավ ուրիշ նոր բնական գիտություն մը՝ բրածոբանությունը, որ կուսումնասիրե աշխարհի երեսին հողային շերտերու կազմությունը և այդ շերտերուն համեմատական հնությունը: Այդ շերտերուն մեջ քարացած բույսերու ու կենդանիներու ոսկորները, պատյանները, փետուրները և այլ մասերը կամ անոնց թողած հետքերն ու դրոշմը ուսումնասիրելով՝ հասավ այն եզրակացության, որ մարդկային ոսկորներ ու մարդկային քաղաքակրթության հետքեր կան միայն չորրորդ՝ ամենավերջին դարաշերտերուն մեջ: Ամենաբարձր տեսակի կաթնասունները տիրապետող են երրորդ դարաշերտերուն մեջ: Ատոնցմե առաջ գտնվող երկրորդ դարաշերտերու կազմվելու միջոցին ապրած են միայն ձվածին ողնավոր

կենդանիներ, այսինքն՝ երկակենցաղներ, սողուններ ու թռչուններ: Իսկ ամենահին առաջին դարաշերտերուն մէջ, որ և իր շերտին հաստութեամբը անհամեմատ ավելի երկար հազարամեակներ կգրկէ, կան միայն անողն կենդանիներու հետքեր ու մնացորդներ. և հոն ալ որքան խորը փորենք՝ այնքան նախնական ձևերն ու տեսակները կգտնենք: Շերտերու որոշ խորութենե մը անդին այլևս ոչ մի հետք ո՛չ բույսի, ո՛չ կենդանիներու: Այս նույն աստիճանական էջքը նաև բույսերու վերաբերմամբ, այսինքն՝ իրենց կազմութեամբ ամենեն նախնական բույսերը՝ սունկերը, ծիղերը, մամուռները, ամենեն խորքի հնագույն շերտերուն մեջն են. միջին շերտերուն մեջ կավելնան ավելի բարձր տեսակի անծաղիկ բույսերը և ամենեն ետքը երևան կուգան ամենեն վերը ծաղկավոր բույսերը:

Ահա՛ այս բոլոր պիտողութիւններու, իրողութիւններու և համեմատութիւններու համադրումովը հիմնավորվեցավ և դարձավ ժամանակակից կենսագիտութիւններու առանցքը այն խոր ըմբռնումը, այն վերին աստիճանի մտքի լայնացում ու բարձրացում տվող ըմբռնումը, թե կյանքը ամբողջ, կյանքի բոլոր ձևերը, բուսական ու կենդանական բոլոր երևույթները առաջացած են իրարմե միլիոնավոր դարերու ընթացքին, դանդաղ ու հարատև զարգացումով, ամենապարզ ու նախնական ձևերեն կամաց-կամաց ավելի բարդ գործարաններն ու գործողութիւնները, մինչև բարձրագույն կենդանածին էակները, մինչև մարդը: Եվ որ այս բոլորը մեկ մեծ ամբողջութիւն մըն է, մեծ միութիւն մը, մեծ նույնութիւն մը:

IV. ԲՈՒՅՍԵՐՈՒ ԱՐԴԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Այս նոր տեսակետներով ալ նոր դասակարգում ստացան բուսական ու կենդանական տեսակներն ու անոնց թողած ենթաբաժանումները:

Գործարանավոր մարմիններու առաջին սկզբնական աստիճանը կներկայացնեն միաբջիջ բույսերն ու միաբջիջ կենդանիները:

Երկրորդ մեծ բաժանումը կկազմեն բազմաբջիջ անծաղիկ բույսերը և բազմաբջիջ անողն կենդանիները: Բայց երկուքն ալ ունին իրենց նախնական, միջնակ և բարձրագույն աստիճանները:

Երրորդ ու ամենեն գարգացած տեսակները կներկայացնեն ծաղկևոր բույսերը և ողնաւոր կենդանիները: Երկուքն ալ երկու մեծ ենթաբաժանումով. բույսերը՝ մերկաձու և ծածկաձու, կենդանիները՝ ձվածին ու կենդանածին:

Այսպեսով կստացվի յուրաքանչյուր գործարանավոր թագավորության համար երեք հիմնական բաժանում վեց գլխավոր աստիճաններով:

Բուսականության այդ վեց աստիճաններն են.

1. Միաբջիջ բույսեր, որոնք կազմված են միայն մեկ տարրական միութենե մը, որ իր ամբողջով կամ իր զանազան մասերու ավելի կամ նվազ աշխատանքի բաժանումով մը կկատարե իր սննդառությունն ու սերնդագործությունը:

2. Անծաղիկ բույսերու ամենեն վարի վիճակը կներկայացնեն ծիղավոր՝ թալոֆիտ բույսերը[1], որու երկու գլխավոր ճյուղերն են սունկերն ու լոռները՝ ալկ: Սունկը այժմ գոյություն ունեցող բազմաբջիջ բույսերու ամենեն նախնական ձևն է. սննդառական գործարանը կներկայացնեն սունկին բունը և գետնին ցանցը կազմող թելիկները, իսկ սունկին գլխարկը կծառայե նաև սերունդ առաջայնելուն: Լոռները աշխատանքի նոր բաժանում մըն ալ կբերեն. սննդառության սահմանված մասերուն կից կառաջանան հաճախ բռնելու հատկացված կալուկներ: Բայց թե՛ սունկերու և թե՛ լոռերու բջիջները դեռ վերջնապես մեկ-երկու տեսակի զանազանված չեն, քանի որ սերնդելու հատկացվող բջիջները առանձին տեսակի բջիջներ չեն. ատոնք նույն սննդառական բջիջներուն մեկ մասն են, որ երբ ժամանակը կուգա, կկատարեն սերնդական գործարանի դերը, այսինքն՝ կարտադրեն հատուկ բջիջներ, որ բեղմնիկ[2] սպոր կանվանենք:

3. Զարգացման հաջորդ աստիճանը և անծաղիկ բույսերու միջնակ վիճակը կներկայացնեն մամուռները, ուր աշխատանքի բաժանումը կատարված է ավելի հստակ ու տևական: Մամուռը ունի իր հաստատ հենարանը՝ իր ցողունը. ունի իր մշտական

Հատուկ անդամական մասերը, որոնք ցողունի կողմնական աճումներն են, այսինքն՝ տերևիկները. և վերջապես իր թելիկները, որոնցմով բույսը կամրանա հողին և հոնկե կծծե իրեն անհրաժեշտ եղող ջուրն ու հանքային տարրերը: Կաճի բեղմնիկներով. ուրեմն սերնդելու տեսակետեն ան ալ դեռ չունի մնայուն աշխատանքի բաժանում:

4. Անծաղիկ բույսերու բարձրագույն տեսակները կկազմեն անոթավոր անծաղիկները, որոնց մեջ՝ ամենեն սովորականը պտերն է՝ փուժիր: Ասոնք ունին արդեն ուրույն արմատ, որը մեկ կողմեն հաստատուն հենարան է բույսին և մյուս կողմեն ալ անվերջ ճյուղավորվելով ու տարածվելով հողին մեջ կծծե պիտանի հյութերը. և ունի հատուկ անոթներ՝ խողովակներ՝ ծծված հյութերը բույսի ամեն կողմերը հասցնելու համար: Սերունդ կուտան բեղմնիկներով, որոնք կզարգանան տերևներուն տակի երեսին վրա առաջացող այտուցքներուն մեջ:

5. Բույսերու հաջորդ աստիճանը սերունդ տալու համար ունի արդեն հատուկ ու բարդ գործարան մը, որ ծաղիկ կանվանենք: Ծաղկևորներու ավելի նախնական տեսակներուն մեջ ծաղիկին ձվիկը բաց է վերին ծայրեն, որով և անմիջապես իր ծայրին վրա կստանա բեղմնավորող փոշին: Այս մերկաճու ծաղկևորներուն կպատկանին մշտատերև ու խիժավոր ծառերը, ինչպես են եղևնին, մայրին, չամը, չոճին[3], նոճին:

6. Ծաղկավոր բույսերու ավելի վերին տեսակները, այսինքն՝ բուսականութեյան ամենաբարձր զարգացման հասած աստիճանը ծածկաճու բույսերն են, որոնց ծաղկին խորքի ձվիկը ամբողջովին թաղված է ձվարանի մը մեջ և բեղմնավորող փոշին ստանալու համար ունի առանձին խողովակ մը, որուն վերին ծայրը մասնավոր կերպով հարմարված է այդ նպատակին:

Այս աստիճանական զարգացումեն կտեսնենք, որ ինչպես ամեն մեկ անհատ բույս, այնպես ալ բույսերուն տեսակները իրենց բազմադարյան գոյութեյան ընթացքին կառաջանան մեկ բջիջե մը: Եվ բազմաբջիջ վիճակին մեջ սկիզբը բոլոր բջիջները նույն դերը ունին գրեթե. իրենց ձևերովն ու դերերովը զանազանված չեն իրարմե կարուկ կերպով. բոլոր բջիջները կրնան կատարել և՛

սննդելու, և՝ սերնդելու աշխատանքը. կամաց-կամաց սննդառության բջիջներուն մեկ որոշ մասը միայն ժամանակավոր կերպով կկատարէ բեղմնիկներու արտադրութիւնը. մինչև որ վերջապես կզատվին իրարմէ սննդող ու սերնդող մասերը: Եվ ասոնցմէ յուրաքանչյուրն ալ միաժամանակ ինքն իր մեջ կունենա աշխատանքի բաժանում. սննդող մասերը հետզհետե ավելի բացարձակ կերպով կբաժնվին արմատ, բուն ու տերևի. սերնդող մասերն ալ կտանին արու և էգ նուրբ ու բարդ կազմութիւններու, որոնց ընդհանուր գումարն է ծաղիկը:

V. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՐԴԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Բուսականութեյան վեց հիմնական աստիճաններուն զուգահեռ գացող կենդանականութեյան վեց դլխավոր աստիճանները են.

1. Միաբջիջ կենդանիները, որոնք կներկայացնեն կենդանական միայն մեկ տարրական միութեյուն մը, որուն զանազան մասերը ավելի կամ պակաս չեչոված կերպով ունին աշխատանքի բաժանում: Նույն միութեյան որոշ մասերը գլխավորապես սննդառութեյան կծառայեն կամ սերնդելու, ուրիշ մասեր՝ լուսազդութեյան, ջերմազդութեյան, հպազդութեյան, շարժումի. բայց ընդհանուր առումով գրեթե բոլոր մասերը, դիցուք և զանազան աստիճաններով և ոչ հավասար հաղողութեյամբ, կմասնակցին կենդանական կյանքին պահանջած այդ բոլոր աշխատանքներուն:

2. Կենդանական թագավորութեյան երկրորդ աստիճանը կկազմեն բազմաբջիջ կենդանիներուն ամենեն նախնական տեսակները, որոնք իրենց տեսքովն ու կյանքովը շատ կնմանին բուսերուն և ատոր համար ալ հաճախ բուսանման կենդանիներ կկոչվին: Ասոնք ըստ էութեյան կներկայացնեն մեկ կամ շատ անդքերով տոպրակ մը, որուն ներքին երեսը բուսական աշխատանքներու կծառայե, այսինքն՝՝ սնունդին ու սերունդին, իսկ արտաքին երեսը՝ կենդանական աշխատանքի՝ ազդվելու և շարժումի: Այս աստիճանին կպատկանին կենդանաբանութեյան երկու ճյուղերը՝ սպունգազգիներն ու խոռոչազգիները:

3. Բազմաբջիջ կենդանիներու ավելի բարձր աստիճան մը կկազմեն միջնակ անողն կենդանիները, որոնք մեկ տոպրակէ մը չեն կազմված, այլ իրարու կցված քանի մը տոպրակներէ, և միևնույնն է՝ այդ հատվածականությունը պահած ըլլան հստակ կերպով թե արտաքուստ կորանցուցած կամ աղարտած: Գլուխ դեռ չկա կամ հստակ կերպով դեռ չէ զատված իրանեն: Զարգացման այս աստիճանին կպատկանին կենդանապանության նորեն երկու ճյուղ՝ փշամորթները և որդազգինները:

4. Անողն կենդանիներու բարձրագույն երկու ճյուղերը կկազմեն Հողտոնինները: Հողտոնիներու բերած մեծ նորությունը քանի մը տեղերէ ծալվող ոտքերն են՝ հատուկ չարժման գործիքները ցամաքի վրա. մարմնին բուսած այդ աճմունքները բազմատեսակ ուրիշ դերեր ալ կկատարեն սակայն: Զգայարանքներու կարևորությունը խիստ կչեչտվի: Գլուխ, մարմին և վերջավորություններ կորոշվին իրարմե: Հողտոնիներու ճյուղը կկազմեն խեցգետմորթները, միջատները և սարդազգինները:

5. Ոսկրավոր կենդանիներուն հետ կհասնինք զարգացման ավելի բարձր աստիճանի մը, հիմնական նորությունը կմախքն է՝ գանգը, ողնաշարն ու վերջավորություններուն ոսկորները. և կմախքին զուգընթաց զգայարաններու, մկաններու և ջիղերու նոր կատարելագործում: Բայց կենդանին դեռ կաճի ձու ածելով, ինչպես որ էին նախորդ բոլոր կենդանիները: Զարգացման այս աստիճանին կպատկանին կենդանական չորս ենթաճյուղեր՝ ձուկեր, երկակենցաղներ, սողուններն ու թռչունները:

6. Կենդանական զարգացման ամենավերին աստիճանը կներկայացնեն այն ողնավորները, որոնք իրենց սաղմնային զարգացումը կկատարեն մայրենի մարմնին մեջ և աչխարհ կուգան իրենց էական կազմովը պատրաստ. և ծնունդեն ետքն ալ ավելի կամ նվազ երկար ժամանակ կսնանին մայրենի կաթով և ատոր համար ալ կկոչվին կաթնասուններ: Իր կենդանաբանական դիրքով կաթնասուն ողնավոր մըն է նաև մարդը, ամենեն զարգացած, ամենեն բարձր կաթնասունը:

Այս դասակարգումեն պարզ է, որ ինչպես ամեն կենդանի անհատ, ինչքան ալ բարդ ըլլա ու հսկայական, միշտ միաբջիջ ձվե

մը կառաջանա, այդպես ալ ամբողջ կենդանական թագավորութիւնը ինքը՝ այս բազմաճյուղ հսկա ծառը, առաջացած է դարերու ընթացքին միաբջիջ էութիւններե:

Սկիզբը նույն ու նման դեր ունեցող բջիջները հետզհետե տարբեր վիճակներու մեջ ավելի կամ պակաս տարբեր ուղղութիյամբ կաշխատին. և աշխատանքի հետզհետե չհշտված բաժանումեն ավելի ու ավելի իրարմե կտարբերին ու կդառնան տարբեր գործարաններ ու տարբեր հյուսկեններ: Տարբերութիյուններ, որ սերունդե սերունդ ու տեսակե տեսակ հետզհետե կշեշտվին, կխորանան ու նոր կարողութիյուններ ձեռք կբերեն, բոլորովին նոր հնարավորութիյուններ:

Ուրիշ խոսքով՝ ամբողջ գործարանական կյանքը շարունակ փոփոխման մեջ է, ձևերու ու կարողութիյուններու մշտական ստեղծում ու կատարելագործում, որոնք հետզհետե ավելի բարդ ու ավելի բարձր տեսակի կազմութիյուններ ու էակներ առաջ կբերեն:

Գործարանավոր մարմիններու այս աստիճանաբար իրարմե առաջացումն ու կատարելագործվիլն է, որ կանվանենք բնաշրջում:

Եվ այս անդուլ ու անդադար բնաշրջումը կատարված է ու գործած է միլիոնավոր դարերու ընթացքին: Ամենեն երկար ժամանակը ամենեն նախնական վիճակներու առաջացումը կբռնե: Քանի կբարձրանա վարգացումը՝ մեկ վիճակեն մյուսը, մեկ տարբերակեն մյուսին անցումը կկատարվի համեմատաբար ավելի նվազ հազարամյակներու ու հարյուրամյակներու ընթացքին:

Թվական համեմատական կռվան մը միայն տված ըլլալու համար կրնանք միտք պահել իբրև հիմք հետևյալ թիվերը, որոնք հենված են երկրի չերտային հաշիվներու և ավելի կամ պակաս գիտական ենթադրութիյուններու վրա:

500 միլիոն տարի մեզմե առաջ երևցած է կյանքը աշխարհիս վրա:

50 միլիոն տարի մեզմե առաջ երևցած են ողնավոր կենդանիները:

5 միլիոն տարի մեզմէ առաջ երևցած են բռնող կաթնասունները:

50 հազար տարի մեզմէ առաջ կերևան մարդկային քաղաքակրթության առաջին հետքերը:

5 հազար տարի մեզմէ առաջ կսկսին մարդկության պատմական դարերը, երբ մարդը գիրը կհնարե և գրավոր հիշատակարան մը կթողնե իր ետևեն:

Բ. ԲՆԱԾՐՋՄԱՆ ԵՐԵՔ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Ի. ՀԱՐՄԱՐՈՒՄ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ

Կյանք ըսվածը ուրևմն հենված է մշտական փոփոխության վրա. ապրիլ մշտապես փոփոխվիլ ըսել է. կուզե ըլլա մեկ անհատի մը կյանքը իր սաղմնավորման վայրկյանեն մինչև իր մահը, կուզե ըլլա որևէ տեսակի մը սերունդե սերունդ հազարդարյան կյանքը կամ բոլոր տեսակներու գիրկընդխառն համայնակյանքը:

Արդ՝ կատարված փոփոխությունը կանվանենք զարգացում, եթե առաջ եկող նոր ձևերը, ձեռք բերված նոր կարողությունները ավելի բարդ տեսակի են, քան իրենցմե առաջ եղած ձևերն ու կարողությունները, եթե նոր հավելյալ կարողություն մը կբերեն իրենց հետ, որ առաջ չկար կամ այդ կատարելությամբ չկար: Ապրող էակի կրած փոփոխությունը կանվանենք հետադիմում, երբ հյուսկենը, գործարանը կամ կարողությունը իր ունեցած ուժեն ու նրբութենեն բան մը կտուժե:

Բուսական ու կենդանական արարածներուն մեջ կան տեսակներ, որոնք հետզհետե հետադիմեր են, տկարացեր, նույնիսկ ոչնչացեր: Եվ գործարանական էակներուն բոլոր տեսակներուն մեջ կան գործարաններ կամ գործարանային մասեր, որոնք երբեմն մեծ դեր ու զարգացում են ունեցեր, սակայն հետզհետե իրենց այդ կարողությունը պակսեցուցեր են, կորսնցուցեր են: Այս բոլորը շատ սովորական ու բնական երևույթ է: Բայց երբ կյանքի ամ-

բողջուլթյունը աչքի առաջ ունենանք՝ թե՛ հյուսակենները, թե՛ գործարանները, թե՛ բուսական ու կենդանական տեսակները ընդհանուր առումով հետզհետե զարգացեր են ու կատարելագործվեր: Կյանքը իր ընդհանուր ընթացքովը ո՛չ միայն մշտական փոփոխուլթյուն մըն է, այլ մշտական բարեփոխում մը, մշտական հառաջդիմուլթյուն մը:

Սակայն ո՞րն է այս մշտնջենական փոփոխուլթյան ու հառաջդիմուլթյան դրդիչը: Դրդիչը մեկ է. բույսն ու կենդանին կփոփոխվին իրենց գոյուլթյունը պահել կարողանալու համար, իրենց գոյուլթյունը ավելի լավ պահել կարողանալու համար: Գործարանավոր մարմիններու կրած բոլոր փոփոխուլթյուններուն պատճառը կյանքի պահպանումն է, կյանքի ավելի հաջող, ավելի նպաստավոր կերպով պահպանումը: Գործարանի մը կրած ամեն մեկ փոփոխուլթյուն մեկ ձգտում մը միայն ունի՝ իր կատարելիք գործը ավելի դյուրին ու ավելի լավ կերպով կատարել, և եթե հնար է, իր մինչև հիմա ընել չկրցածը կատարել:

Իսկ կյանքի պահպանումը կախված է շրջապատեն ու շուրջի պայմաններեն: Ամեն էակ իր շրջապատեն կստանա ամեն բարիք, շուրջի հողեն ու ջուրեն, արևի լույսեն ու ջերմուլթենեն, իրեն սնունդ ծառայող նյուլթերեն ու արարածներեն: Ամեն էակ իր շրջապատեն կստանա ամեն չարիք. իրեն պես մյուս կյանքերն ալ ուտել կուզեն, ինքը կրնա ուտել, բայց և կրնա ուտվիլ: Ամեն էակ հավիտենական որոնումի մեջ է իր ավելի հարմար անունդին, ինչպես և տաքի, լույսի ու պաշտպանուլթյան ավելի նպաստավոր պայմաններուն իր միջավայրին մեջ: Ամեն էակ մշտական որոնումի մեջ է իր սերունդներու պաշտպանուլթյան ու բարգավաճման համար ավելի ձեռնտու միջոցներու, տեղի և սնունդի միշտ իր շրջապատող իրական պայմաններուն մեջ և իրապես գոյուլթյուն ունեցող վտանգներուն դեմ: Իր և իր սերունդի գոյուլթյունն ու զարգացումը կախված է իր շրջապատը լավ օգտագործելու և իր շրջապատեն լավ պաշտպանվելու հնարավորուլթյան չափեն:

Այսինքն՝ կյանքի պահպանումը կպահանջե անդադար հարմարվիլ շրջապատի պայմաններուն, տեղի, կլիմայի ու միջավայրի առանձնահատկուլթյուններուն և իրմեն ավելի ուժեղներու սար-

սափեղի սպառնալիքին: Երբեմն պետք է հարձակվիլ, երբեմն փախչիլ, պատյանով փակվիլ, փուշերով հագվիլ. կամ պետք է արագ ոտքեր ունենալ, կամ թևերով եյլել օդերը, պետք է խելք ու խորամանկություն բանեցնել: Ասոնք բոլորը զենքեր են, որ ձեռք կբերե կենդանական տեսակը շարունակ իր շրջապատող իրականության հետ մաքառելով իր կյանքի պաշտպանությանը համար:

Այսպես ալ իր չափը, ձևը, գույները, ներքին կազմն ու ունակությունները պետք է հարմարցնե կենդանական կամ բուսական տեսակը միջավայրի հարկադրանքին, որ դիմանալ ու հաջողիլ կարողանա: Տերևներուն վրա եթե ապրող որդ մըն ես, լավ է ըլլաս կանաչ որդ մը, հողերուն վրա եթե կապրիս՝ հողագույն: Թիթեռնիկ մըն ես ծաղկե ծաղիկ՝ ծաղիկի մը թերթին պետք է նմանիս քու թևերդ, որ օդային թշնամիներեդ դժվար նկատվիս: Եթե ջուրեն պետք է առնես քու այրումիդ համար անհրաժեշտ թթվածինը՝ ջրի արագ ել ու մուտքին նպաստող անցքեր ու խրիկներ պետք է չինես բերնիդ տակը: Եթե ջուրեն դուրս գալ կուզես, որ ցամաքը բնակիս, կրծքիդ տակը հյուսես պիտի օդի ճյուղավոր տոպրակներ, որ օդեն առնես թթվածինդ: Քանի հողերուն ու քարերուն մեջ կսողաս՝ ողորկ ու սահուն շապիկ մըն է վրայինդ. բայց երբ գետնեն կտրվիլ կփորձես, որ թռչնանաս, ամբողջ մարմինդ ծածկես պիտի փետուրներով. և փետուր ըսածդ ալ մեջը պարապ ճյուղերու ցանց մըն է օդի համար: Եթե խոտ ուտող չորքոտանի մըն ես, խոտը ծամելու և որոճալու հարմար աղորիք պետք է ձեռք բերես, այլև բարդ ստամոքս մը ու ահագին աղիքներ. եթե որսորդ ես ու միս կուտես՝ չարժուն պետք է ըլլաս, ճկուն մարմին ունենաս, այլև ժանիք ու մագիլ և կարճ աղիքներ:

Եվ այսպես բուսական ու կենդանական տեսակներու բոլոր ստացած ձևերը, գույները, դիրքերը, գործարանները, պատյաններն ու ոսկորները, գեղձերն ու զգայարանքները բոլորը կառաջանան, կփոխվին ու կկատարելագործվին երկար-երկար դարերու ու անհամար սերունդներու համառ աշխատանքով մե՛կ հիմնական պատճառե մը դրդված. ավելի լավ օգտվիլ շրջապատի հնարավորություններեն, ավելի լավ պաշտպանվիլ շրջապատի վտանգներեն, ուրիշ խոսքով՝ ավելի լավ հարմարվիլ միջավայրին:

Ով որ ավելի լավ հարմարի իր միջավայրին՝ ավելի մեծ հնարավորություն ու միջոց ունի աճելու և զորանալու, ան է, որ հաջող սերունդներ կուտա ու կհառաջդիմե: Ով որ գեչ կհարմարի իր միջավայրին կամ ավելի թիերի ու ավելի նվազ կհարմարի՝ կտուժե, կփճանա, չի դիմանար ընդհանուր պայքարին մեջ, աճելութիւնը կիյնա, սերունդները կպակսին ու կհատնին:

II. ԺԱՌԱՆԳՈՒՄ

Կյանքին նորութիւնները բերողը, սրբագրողն ու կատարելագործողը հարմարումն է շրջապատին: Բայց ամեն մեկ նորութիւն կատացվի շատ կամաց-կամաց, շատ կտոր-կտոր, շատ կաթիլ-կաթիլ. և երկար, համառ ու միակերպ աշխատանքով միևնույն ուղղութեամբ, միատեսակ կրկնութեամբ: Եվ մեկ անհատի մը ճիգերը շատ չնչին են և հաճախ աննշմար փոփոխութիւն մը միայն կրնան առաջ բերել. և ան ալ, եթե չկրկնվին հաջորդ սերունդներուն կողմե ու չմշակվին՝ կկորչին նորեն, չեն մնար:

Ինչքան որ անհատ մը նույն ուղղութեամբ ջանքեր ընե՝ այնքան ավելի դյուրին կերպով նույնը ընելու տրամադրութիւն կստանա: Այդպես ալ իրար հաջորդող սերունդները ինչքան որ նույն ջանքերը կրկնելու ըլլան՝ այնքան ավելի նույն բանը ընելու դյուրութիւն ու հակում կստանան: Անհատական աշխատանքը կդառնա սերնդական աշխատանք, անհատական կատարելագործումը՝ սերունդներու կատարելագործում և շատ ավելի խոր չափերով: Եվ ինչքան երկար դարեր և ինչքան բազմաթիվ սերունդներ աշխատին նույն ուղղութեամբ՝ այնքան խոր ու այնքան մեծ կըլլա ձեռք բերված նորութիւնը և այնքան մնայուն ու ամուր:

Ասիկա կնշանակե՝ ամեն ճիգ ու ամեն փոփոխութիւն կրկնվելով կդառնա սովորութիւն, հակում ու վերջապես «բնութիւն» տեսակին համար: Սերունդները իրենց ծնողներեն իրենց մարմնին հետ կստանան այդ հակումը և իրենք ալ կրկնելով ու կրկնելով ավելի կխորացնեն, ավելի կամրացնեն, կդարձնեն

սերնդական ունակութիւն մը, որ սաղմի միջոցով կփոխանցվի միշտ եկող սերունդներուն, այսինքն՝ կժառանգվի:

Միջավայրին հարմարվիլը կյանքի հառաջդիմական սկզբունքն է. նորութիւնները, նոր տարբերակները, նոր հավելումները, նոր ուղղութիւնները, նոր կարողութիւնները առաջացնողը ան է: Ժառանգելը, ժառանգականութիւնը կյանքի պահպանողական սկզբունքն է. անգամ մը ձեռք բերվածը կպահե պինդ ու կփոխանցե հաջորդ սերունդներուն: Առանց հարմարումի կատարելագործում ու զարգացում չկա. բայց առանց անգամ մը ձեռք բերվածը պահել ու սերունդներուն փոխանցել կարողանալու նորեն հնարավոր չէ ո՛չ մեկ զարգացում. կդառնա չարունակ ձեռք բերել ու չարունակ կորսնցնել, այսինքն՝ հավիտենապես կեցած տեղը վազել:

Այդ երկու հակադիր ձգտումներու համերաշխ ու մշտական գործակցութիւնն է, որ զարգացումն ու կատարելագործումը կապահովե: Մեկը նոցածը փոխել կրնա, մյուսը նոցածը պահել կրնա, այդ նոցածի մեջն է սակայն նաև նոր ձեռք բերվածը: Փոխելով ու պահելով, պահելով ու փոխելով է, որ կիրականանան բոլոր առաջացումները:

Հարմարում ու ժառանգում՝ այս երկուքն են կենսաբանական զարգացման երկու հիմնական գործոնները:

III. ԲՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Բայց կա դեռ վերջին հարց մը պատասխանելու:

Այդ ի՞նչպես կըլլա, որ բույսն ու կենդանին, նախնական թե բարձրագույն, կըմբռնեն, թե ո՛ր ճևը և ո՛ր հատկութիւնը պետք է փոփոխութեան ենթարկեն իրենց գոյութիւնը ավելի լավ կերպով ապահովել կարողանալու համար, և ի՞նչ չափով և ի՞նչ ճամբով:

Որդնազգի մը ի՞նչպես կհասկնա, թե պետք է իր վերնամաշկը կանաչ կամ դեղին դարձնե և ի՞նչ միջոցով: Սողունը ի՞նչպես կուզա թռչուն դառնալու զարմանալի գաղափարին ու ձգտումին.

և ինչպես կգտնե իր այդ ձգտումը սերունդե սերունդ իրականացնելու հնարքը:

Կյանքի ընդհանուր հառաջդիմության մեջ բույսերու ու կենդանիներու կրած աստիճանական փոփոխությունները, հիմնական թե երկրորդական, այն աստիճան խելացի են, այն աստիճան նպատակահարմար ու հեռատես, այն աստիճան համապատասխան իրական պահանջին և այն աստիճան ճիշդ ու խոր, որ մարդկային միտքը երկար դիտողություններե, համեմատություններե ու որոնումներե ետքը միայն հասու կըլլա այդ բոլորի ինչուին ու ինչպեսին: Ինչ ճամբով է, որ ամենեն նախնական արարածները սակայն ունին այդ վերին աստիճանի խելացի ու բարդ վարմունքներու բանալին. գիտե՛ն միշտ, թե ինչ պետք է փոխեն և ինչ չափով, գիտե՛ն, թե ինչպես պետք է փոխեն և ինչ տեսակի դեռ. չեղած բաներ պետք է նոր հնարեն: Ո՞ւրտեղեն է անոնց մեջ հասկնալու, ընտրելու և գործադրելու այդ անսահմանի ու անսահման արարչական կարողությունը:

Այդ ամենագետ ու ամենատես արարչական կարողության անունը բնական ընտրություն է:

Ո՛չ մեկ խելք, ո՛չ մեկ խորաթափանց ըմբռնում, ո՛չ մեկ առաջվընե դրված նպատակ և ո՛չ մեկ հրաշագործություն չկա մեջտեղը: Կգործե կույր, անհաշիվ ու անհուն կարելիություններով լեցուն պատահմունքը:

Այդ բարեփոխություններեն, լրացումներեն, նորոգումներեն ոչ մեկը չըլլար միայն մեկ ուղղությամբ, այլ բազմաթիվ ուղղություններով: Ամեն ուղղությամբ կատարված հաղարավոր ու բազմազան ճիգերեն, փորձերեն ու պատահականություններեն հետզհետե կզատվին, կկրկնվին, կդիմանան ու կամրանան տվյալ պայմաններուն մեջ ամենեն ավելի հարմարները, ամենեն ավելի նպաստավորները կենդանիի պետքերուն համար:

Այն մյուս բազմատեսակ ճիգերն ու խարխափումները, որոնք կենդանիի պետքերուն չեն նպաստեր, չեն կրկնվիր, իզուր կանցնին, կմոռցվին: Եթե կրկնվին՝ բույսն ու կենդանին անպատ կամ նվազ նպաստավոր պայմաններու մեջ դրած կըլլան և անոր տկարացմանը կառաջնորդեն:

Գոյության մեծ կռվին մեջ այն փոփոխությունները ուժ կստանան, որոնք ուժ կուտան ու կնպաստեն կյանքին: Եվ ինչքան չատ նպաստեն իրենց բույսին ու կենդանիին, այնքան ալ ավելի իրենք կուժեղնան. և ինչքան ուժեղնան, այնքան ավելի բացարձակ կհաղթանակեն և ինչքան հաղթանակեն, այնքան ավելի կնպաստեն իրենց բույսին ու կենդանիին պահանջին: Այսինքն՝ պատահականություններու անսահման խաղին մեջ գործարանավոր մարմինին առավելություն մը բերող փոփոխություններն են, որ կարժեքավորվին ու կտևեն: Տվյալ պայմաններուն մեջ ավելորդ, անպետք կամ վնասակար եղող փոփոխությունները իրենց վնասած գործարանին հետ իրենք ալ կվնասվին, կթուլնան և ուժի չեն գար:

Բնական ընտրություն մըն է, որ կկատարվի անթիվ ու անհամար հնարավորություններու միջև: Կյանքի զարգացման չօժանդակող ձևերն ու հատկությունները կթափին գոյության կռվի մաղին ծակերեն. և հնարավորություններու այդ հավիտենական մրցումին մեջ կյանքի զարգացմանը ամենեն ավելի նպաստավոր եղող տարբերակները, նորույթները և կարողությունները ամենեն ավելի կհարատևեն: Ինչքան մեծ ըլլա իրենց բերած նպաստը անձի ու տեսակի հառաջդիմությանը, այնքան ալ իրենք կկրկնվին, կմշակվին ու կդառնան կարևոր ժառանգական կարողություն: Եվ հետևանքը կըլլա այն ապշեցնող կամ սքանչացնող երևույթը, որ գործարանական բոլոր մնայուն ձևերն ու կարողությունները խիստ նպատակահարմար կըլլան, չափազանց խելացի կերպով ընտրված և հրաշալիորեն խոր ու հեռատես իրենց հետևանքներով:

Բնական ընտրության այս ընդհանուր դեկավարության տակն է, որ հարմարումի ու ժառանգումի կրկնակ ու հակադիր բնական օրենքներու հավիտենական գործակցությամբ կկատարվի կյանքի ձևերուն աստիճանական ու մշտնջենական բնաշրջումը:

Գ. ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱՇՐՋԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ի. ԿՅԱՆՔԻ ՈՒ ՀՈԳԻԻ ԿԱՊԸ

Ինչքան ատեն որ ապրող էակի կյանքի աճումին համար անհրաժեշտ եղող սնունդը անգործարան մարմիններ են, այսինքն՝ օդի թթվածինը, ջրջապատի ջուրը և անոր մեջ լուծված հանքային տարրերը, այնքան ատեն ապրող էակը կրնա գտնել այդ բոլորը իր անմիջական միջավայրին վրա: Ան պետք ունի միայն յուրացնելու և ատով աճելու ինքն իր մեջ և իրմեն դուրս. ըսել է՝ այս պայմաններուն մեջ կզարգանան միայն սնունդ առնելու և սերնդելու կարողությունները, ապրող էակը կըլլա բույս մը: Սկիզբը միաբջիջ գոյություններ, որոնցմե հետզհետե կզարգանան բազմաբջիջ էություններ, կառաջացնեն կամաց-կամաց արմատներ գետնեն ջուր ու հանքային տարրեր ծծելու, կառաջացնեն տերևներ արևու լույսին տակ քլորոֆիլ պատրաստելու և օդեն թթվածինը առնելու, որոնցմով և կկատարվի իրենց բուսական աճեցումը: Միևնույն ատեն կսկսին բեղմնիկները առաջացնող բջիջային խմբեր առանձնանալու, որոնք իրենց վրա կառնեն սերնդական աճեցումը և որոնք հետզհետե կատարելագործվելով կդառնան ծաղիկներ: Այս ամեն աշխատանքներուն մեջ բուսականեն տարբեր ուրիշ նոր կարողություններ մշակելու պետքն ու դրդիչը չկա:

Բայց գոյության պայմանները բոլորովին կփոխվին, երբ ապրող բջիջը փոխանակ ինքն իր սնունդը պատրաստելու անգործարան մարմիններե՝ քիչ-քիչ կսորվի և ավելի դյուրին ու ձեռնտու կգտնե ուրիշ ապրող էակներու պատրաստած ու ամբարած սնունդը յուրացնելը, երբ փոխանակ անկյանք նյութեր ծծելով բավականանալու՝ կսկսի ուրիշ գործարանավոր էակներու մարմինը ուտել, այսինքն" երբ կսկսի ուրիշներու աշխատանքը շահագործել և հափշտակել անոնց չինածն ու դիզածը:

Հիմա այլևս բուսակեր բջիջին ընելիքը պարզ ծծել մը չէ, ինչ որ կկատարեր ան մինչև հիմա իր մարմնին բոլոր կողմերովը շրջապատող հեղուկեն: Հիմա իր յուրացնել ուզածը իրեն պես որոշ

թանձրութիւն, որոշ կազմութիւն ունեցող էակ մըն է, անհամեմատ ավելի դիմացկուն ու դիմադրուն, որուն դիմադրութիւնը կոտրել պիտի կարողանաս, քու մարմնովդ չրջապատել պիտի կարողանաս, որ հաջողիս քու մեջդ առնելու և քու մարմնիդ ձուլելու:

Ուրիշին մարմինը յուրացնել ուզող բջիջը տեղեն երբրա պիտի, ուրիշին վրա սահի պիտի, անոր այս կամ այն աստիճան կրավորական կամ ներգործական դիմադրութիւնը հաղթե պիտի, որ տիրանալ ու մարսել կարողանա: Ուրիշ խոսքով՝ միայն բուսական կարողութիւնները այլևս հերիք չեն. բջիջը ներքին ճիգերով տեղեն չարժվելու կարողութիւնը պետք է ձեռք բերե, պետք է կենդանանա և հետզհետե պետք է մշակե բոլոր մյուս կենդանական կարողութիւնները, որոնք չարժուձևները կատարելագործելու կծառայեն: Կենդանական կարողութիւններու գումարը անվանեցինք հոգի. ուրեմն հոգի ըսածնիս առաջ է եկած ապրող էակի նոր ու ավելի կատարելագործված անունդը ապահովելու համար, առաջ է եկած ապրող էակի որսորդութիւնը հնարավոր դարձնելու համար, առաջ է եկած ապրող էակի աճելութիւնը ավելի նպաստավոր կերպով ապահովելու համար:

Հոգին նոր զենք մըն է կյանքին ձեռքը: Կյանքը չէ հոգիին համար, ինչպես որ դարերով ու դարերով մարդը հավտացեր է, այլ հոգին է ստեղծված կյանքի պետքերուն ծառայելու համար: Հոգին զենք մըն է կռվի և գործիք մը աշխատանքի, որ հետզհետե սրվելով ու կատարելագործվելով դարձեր է ամենեն նուրբ, ամենեն բարձր ձեռքերումը, ինչ որ կյանքը կրցեր է ստեղծագործել մինչև հիմա:

Զենք մը ու գործիք մը կյանքի՝ն ձեռքը: Սակայն քանի կկատարելագործվի, քանի կսրվի ու կնրբանա այդ գործիքը, այնքան ավելի մեծ չափերով ինքն ալ ազդել կսկսի կյանքին վրա, կյանքի ձևերուն ու կարողութիւններուն վրա, կյանքի ընթացքին վրա, նույնիսկ որոշ չափով կյանքը առաջացնող ու կյանքը չրջապատող դուրսի աշխարհին վրա, այսինքն՝՝ ամեն կյանքի ու ամեն հոգիի մայրը եղող բնության վրա:

II. ՀՈԳԵԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ինչպես կյանքի բոլոր ստեղծագործութիւնները, հոգեկան կարողութիւնները ալ մեկ չունչով ծնած, միակտուր ու միակերպ բաներ չեն և ոչ ալ նույնն են տարբեր-տարբեր աստիճաններուն վրա գտնվող էակներուն համար, այլ կյանքի բոլոր երևույթներուն նման՝ կամաց-կամաց առաջացած և տկար ու տարրական վիճակներեն աստիճանաբար ավելի բարձրերը հասած կարողութիւններ, համաձայն բնաշրջման ընդհանուր օրենքներուն: Բարձրագույն ողնավորներու ուղեղային ամբողջ խիստ բարդ կազմակերպութիւնը և այդ բարդ մեքենայի ամեն մեկ մասին նուրբ ու հրաշալի գործունեութիւնը, ինչպես և մարդկային մտածումի, զգացումներու ու լեզվի սքանչելի նրբութիւնները, անխտիր բոլորն ալ առաջացած են նույն հարմարումի և նույն ժառանգումի օրենքներով նույն բնական ընտրութեան մտրակին տակ:

Բայց, դժբաղդաբար, մարդկութեան ստվար մեծ մասը հոգի ըսելով կպատկերացնե միայն իր մարդկային հոգին, այսինքն՝ հոգիի ամենեն բարդ ու ամենեն բարձր վիճակը. իսկ կենդանիներու զգայութիւնները, զգացումները, մտածումներն ու պատկերացումները դեռ կչարունակե իբրև հոգի չընդունել, այլ ա՛յնպես մարդկային հոգիեն հիմնապես տարբեր «մեքենական», «արվեստական», «բնազդական» կամ ինքն ալ չգիտե ինչ-ական տարօրինակ բան մը: Իր մարդկային արժանապատվութիւնը վիրավորված կզգա, երբ իր ու «անասուններու» հոգիին մեջ որևէ կապ ու հարակցութիւն կդրվի:

Այս կարգի նախապաշարումով հարցին մոտենալը կխափարե հոգեկան կարողութիւններու ճշմարիտ ըմբռնումը և հոգեբանութեան ուսումնասիրութիւնը սխալ ու կողմնակի ճամբաներու վրա կհրե: Հոգեբանական աշխատանքներով զբաղվիլ ուզող մարդու համար և մասնավորապես այդ աշխատանքին նոր մոտենալ ուզողի մը համար անհրաժեշտ է, որ ճանչնա հոգեկան կարողութիւնները իրենց զարգացման տարբեր վիճակներուն մեջ և մանավանդ իրենց ամենեն նախնական, տարրական վիճակներուն

մեջ և անկե հտքը միայն մոտենա Հոգեկան ավելի բարձր ու անհամեմատ ավելի բաղադիր երևույթներուն:

Այս համբով Հոգեկան բարձրագույն ձևերու ըմբռնումը թե՛ կղյուրանա, թե՛ կխորանա. այս համբով ձեռք կբերվի Հոգեկան երևույթներու առաջացման ներքին պատճառականությունը, եղելությունները ինչուն և Հոգեկան օրենքներու դիտական բացատրությունը:

Այս պատճառով ալ զարմանալի է, որ այս եղանակով Հոգիի ուսմանը մոտեցող և դիտական արժեքով ամբողջական Հոգեբանություն մը չկա դեռ եվրոպական Հրապարակի վրա, մինչդեռ այդ աշխատանքին համար անհրաժեշտ եղող նյութեր ցրված լեցուն են կենդանաբանական, կենսաբանական և բնախոսական երկերուն մեջ: Ցարդ Հոգեբանական երկերն ու դասագրքերը տարբեր ճամբաներով կմոտենան նյութի մշակմանը:

Մեկ մեծ մասը կերթա հին, բարի ճամբով, կզբաղի միայն «դիտակցության Հոգեբանությամբ», այսինքն՝ կվերլուծե, ինչ որ մարդա անմիջական դիտողությամբ իր Հոգիին մեջ կտեսնե. իր Հոգեկան ինքնաքննության սահմանեն դուրս եղող ամեն խնդրի, նույնիսկ մարդու ուղեղի ուսումնասիրության լրջորեն կարևորություն չի տար:

Ճիշդ հակառակն է ուսումնասիրության երկրորդ ճամբան, ժամանակակից «բնախոսական Հոգեբանությունը», որ կջանա հենվիլ Հոգեբանական առարկայական փորձերու և դուրսի դիտողություններու վրա և իր հիմքը կնկատե մարդկային ուղեղներու կազմն ու գործունեությունը թափանցելը: Իր աշխատության ընթացքին հաճախ կանգ կառնե զարգացման պանազան աստիճաններուն վրա թե՛ սաղմնաբանական, թե՛ անդամագիտական և թե՛ բնախոսական տեսակետներեն, բայց այս աշխատանքը չի տարվիր սիսթեմաթիկ կերպով, այլ ետ ու առաջ, ըստ պահանջել հարկին, միջանկյալ կամ լրացուցիչ կերպով մը. որով չի տար Հոգեկան երևույթներու Հաջորդական ու ամբողջական պատկերացումը և ինքն ալ չառաջնորդվիր Հոգեկան երևույթներու աստիճանականությունը ներկայացնելու սկզբունքեն:

Կան դրքեր ալ, ուր կուսումնասիրվի «կենդանիներու Հո-

գեբանութիւնը», «հավաքականութիւններու հոգեբանութիւնը», «ընկերական կյանքի հոգեբանութիւնը» կամ հոգեբանութեան այս կամ այն մասը կամ որոշ հարց մը, որոշ տեսակետ մը. սոսկ բոլորը բազմատեսակ մասնակի ու առանձնակի ուսումնասիրութիւններ են և շատ արժեքավոր ու թանկագին դիտողութիւններ ու եզրակացութիւններ կրնան բերել ու կբերեն հոգեբանական գիտութեան, նույնիսկ երբ միակողմանիութիւններ ու գնահատանքի չափազանցութիւններ կրեն իրենց վրա շատ անգամ: Բայց սոսկ բոլորը զանազան կողմերն են միայն հոգեբանութեան կամ ավելի բարդ ընկերաբանական կողմերը հոգեբանութեան և հետագա ընթերցումներու առարկա:

Իսկ ամենեն առաջ պետք եղածը ամեն տեսակի հակաճառութիւններե, քննադատութիւններե ու մասնագիտական ծանրաբեռնումե ազատ, պարզ ու դյուրամատչելի, գիտական ու ամբողջական ուսումնասիրութիւնն է հոգեկան կարողութիւններու: Կյանքը դրավ առնա բնաշրջական ոգիով այդ տեսակ երկի մը անհրաժեշտութիւնը՝ թարմ հոգիներուն հոգեբանական հստակ ըմբռնում մը և կենդանի հետաքրքրութիւն ներշնչել կարողանալու համար: Երբ փնտրածս գտնել չկրցա, հարկը ստիպեց, որ ես ինքս փորձեմ հոգեբանական արդի գիտութեան այդ տեսակի ամփոփ ու ամբողջական ժողովրդականացում մը:

III. ՀՈԳԵԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Հետևելով գործարանական կյանքի երեք հիմնական աստիճաններուն և անոնց ներքին բնական բաժանումներուն՝ հոգեկան գործարաններու և հոգեկան կարողութիւններու աստիճանական բարձրացումն ալ բնական կերպով կբաժնվի վեց աստիճաններու:

Առաջին աստիճանը միաբջիջ կենդանիներու հոգեկան վիճակն է, երբ դեռ ջղային դրութիւն գոյութիւն չունի, ոչ ալ մկաններ. թեև անշուշտ այդ երկուքի ալ առաջացման նախնական

քայլերը մատնանիշ կըլլան արդէն: Հոգին իր այս աստիճանին վրա կներկայանա իբրև կենդանական դրդտականութիւն:

Բազմաբջիջ կենդանական կեանքին զուգընթաց հետզհետե կզգայանան զգայարանները, մկանները և ջղային թելերը իրենց կեդրոններով: Մինչև ողնաւոր կենդանիները հոգեկան գործունեութիւնը ըստ իր էութեան անդրադարձութիւն է՝ ռեֆլեքս, թեև իմացականութեան մը տարրերը բնականաբար սկիզբ կառնեն արդէն, մանաւանդ բարձրագոյն միջատներուն մէջ:

Բայց այս անդրադարձութիւնը ինքը ունի իր զարգացման որոշ երեք աստիճանները. որոնք կհամապատասխանեն անողն կենդանիներու երեք զլխաւոր ենթաբաժանումներուն:

Հոգեկան զարգացման երկրորդ աստիճանը կկազմե նախնական անողն կենդանիներուն ունեցած նախնական, տեղական անդրադարձութիւնը:

Հոգեկան զարգացման երրորդ աստիճանը կկազմե միջնակ անողն կենդանիներու ունեցած հատուածային անդրադարձութիւնը. յուրաքանչիւր հատուածի անդրադարձութիւնը կհամապատասխանե նախորդ աստիճանի տեղական, նախնական անդրադարձութեան. իսկ հատուածներու կապակցութեամբ առաջացած կեդրոնական անդրադարձութիւնը բուն նորութիւնն է, ինչպես և մարմնին վրա պլուխ մասի մը առաջացումը:

Հոգեկան զարգացման չորրորդ աստիճանը կկազմե բարձրագոյն անողն կենդանիներու ունեցած պատկերատու անդրադարձութիւնը: Զգայարանքներու զարգացումով արտաքին աշխարհեն ստացված պատկերներու կապակցութիւններուն միջով կատարված և չատ աւելի բարձր կեդրոնացումով անդրադարձութիւն մը, որ արագ ճամբա կհարթե իմացականութեան:

Հոգեկան զարգացման հաջորդ՝ հինգերորդ աստիճանը կներկայացնե ողնաւոր կենդանիներու ջղային ու մկանային դրութիւնը, որ արդիւնք է ոսկորներու երևան գալուն: Մկանները կզարգանան փակած ոսկորներուն. ուղեղային նոր աճմունքներ կառաջանան ոսկորներու ծոցին մէջ, իբրև ողնուղեղ ու գանգուղեղ: Այս աստիճանի վրա գտնվող Հոգեկան կարողութիւններու հիմնական գիծը մտածելով, ընտրելով գործելն է, որով կենդա-

նական հոգին հետզհետե անդրադարձումներ կանցնի դեպի իմացականություն:

Հոգեկան զարգացման վեցերորդ ու վերջին աստիճանը կկազմե հատկապես մարդկային հոգին. որուն ունեցած խորունկ տարբերությունը կենդանական իմացականութենեն լեզուն է. և լեզվի զարգացման զուգընթաց ավելի վերացական մտածումով ավելի գիտական հոգեկան աշխատանք մը, որ կանվանենք բանականություն՝ բառերու խաղացած բացառիկ դերը աչքի առաջ ունենալով. կենդանիները ան-բան, ան-ասուն են, մարդը՝ բանական արարած:

Հոգեկան կարողություններու այս աստիճանական զարգացումն է, որ պիտի գծե հոգեբանությունը՝ յուրաքանչյուր աստիճանի վրա ձեռք բերված նոր գործարաններն ու նոր կարողությունները ուսումնասիրելով և այդ նորություններու առաջացման ինչուն ու ինչպեսը բացատրել ջանալով:

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՎԱԾ

ԳՐԳՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ԿՅԱՆՔԸ ԿՐՈՂ ՆՅՈՒԹԸ

Ի. ԿՅԱՆՔԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՐԿՐԻՍ ԵՐԵՍԻՆ

Գիտենք, որ կյանքը գոյութիւն ունի մեր այս երկրագնդիս վրա. ունի՞ գոյութիւն նաև ուրիշ երկրագունդերու վրա:

Լույսի վերլուծման եղանակով գիտութիւնը եկած է այն եզրակացութեան, որ մյուս երկնային մարմիններն ալ նույն քիմիական կազմը ունին, ինչ որ մեր երկիրը. որով բնական է ենթադրել, որ մյուս մոլորակներեն ոմանց վրա կյանք կա: «Ոմանց» վրա միայն, որովհետև կյանք չի կրնար առաջանալ ցրտութեան որոշ աստիճանե մը վար և ջերմութեան որոշ աստիճանե մը վեր. գոնե մեր աշխարհի վրա գտնվող ամեն տեսակի բույսերն ու կենդանիները իսկույն կմեռնին, երբ լավ մը եռացող ջուրին մեջ նետելու ըլլանք. նույնպես վերոյեն քանի մը տասնյակ վար կյանքը կդադրի: Կյանք ըլլալ չի կրնար բնականաբար արև-աստղերուն վրա, որոնք դեռ հալած ու վառ վիճակի մեջ են. կյանք չի կրնար ըլլալ նաև բոլորովին պաղած և արևներեն շատ փչ կերպով տաքցող մոլորակներուն և անոնց արբանյակներուն վրա: Իր վրան կյանք առաջացնել կարողանալու համար երկնային մարմինը տաքութեյան որոշ սահմաններուն մեջ պետք է գտնվի, ինչպես մեր երկիրը:

Մեր երկիրը, ըստ տիեզերագրութեյան, մեկ կտորն է մեր մայր արևին, ուրկե փրթեր ու առանձնացեր է մեզմե միլիոնավոր դարեր առաջ, բայց մնացեր է միշտ անոր ձգողութեյան սահմաններուն մեջ: Արևեն զատվելեն ետքն ալ շարունակած է արևի կտոր մը ըլլալ հալած ու վառ դրութեյան մեջ, բայց արագ կերպով

սկսած է կորսնցնել իր տաքութիւնը համեմատաբար փոքր կտոր մը ըլլալուն պատճառով:

Տիեզերական անհուն տարածութիւններու անհուն պաղութեան մէջ ամենաահագին արեւներն անգամ հետզհետե պաղելու վրա են, բայց ինչքան մեծ է արեւի մը զանգվածը, այնքան մեծ է իր ջերմութեան ուժն ու քանակը. ինչքան փոքր ըլլա վառվող մարմինը, այնքան չուտ կհասնի իր ջերմութեան աստիճանական ու վերջնական կորուստը: Եվ բնականաբար ամենեն չուտ պաղողը մարմիններու արտաքին մակերևոյթը կըլլա, քանի որ ան է անմիջական չփման մէջ իր շրջապատի համատարած սառնութեան. որով ներքին դեռ հալ ու կրակ վիճակի մէջ եղող կեդրոնին վրա կկազմվի բարակ փառ մը դեռ շատ տաք, բայց ոչ հալ ու վառ վիճակի մէջ: Ինչքան որ հաջորդող դարերու ընթացքին երկիրս ավելի կորսնցնե իր տաքութենեն, այնքան ավելի կհաստնա իր երեսի պաղած չերտը և անոր պաղութիւնն ալ քանի կերթա կմեծնա:

Ահա՛ այս դրութեան մէջ կգտնվի մեր բնակած աշխարհքը՝ իր պաղած կեղևը հետզհետե ավելի հաստացնելով: Որ մեր աշխարհքը ամբողջովին կրակ է եղած առաջ և հիմա ալ իր կեդրոնին մէջ դեռ կրակ է ու հալած՝ դուրս է ամեն կասկածե: Ինչ են գետնաշարժները, հրաբուխները, տաք ջերմուկներուն ժայթքումները և հալած ու վառվող լավան:

Երբ երկրին երեսը հետզհետե կսկսի պաղիլ և արդեն բավական հաստ կեղև մը կգոյանա իր բնական ու պատահական խորդուբորդներով՝ երկրիս չուրջը գոլորշի վիճակի մէջ գտնվող այն մարմինը, որ մեկ թթվածինի ու երկու ջրածինի կապակցում մըն է, ինքն ալ կսկսի սառիլ և իբրև անձրև կթափի երկրի կեղևին վրա, ուր հեղուկներու օրենքովը կվազե, կհոսի ու կլեցնե կեղևին փոսերը: Կեղևի որոշ սառնութեան մը հասնելեն ետքը կառաջանա ուրեմն ծով ու ցամաք:

Իզուր չէ, որ հնագույն ազգերն անգամ մտածեր են, թե առաջին օրը արարիչը լույսը զատեց խավարեն և երկրորդ օրը ստեղծեց ջուրն ու ցամաքը: Եվ անկե ետքն էր, որ ըսավ՝ «եկո՛ւր այս ջուրերն ու ցամաքները լեցնեմ բույսերով ու կենդանիներով»:

Սկիզբը դեռ կեղևը այնքան տաք էր, որ ջուր դարձած գոլորշիները կեռային. կամաց-կամաց հալարավոր տարիներու ընթացքին եռքը կդադրի, բայց ծովերն ու օվկիանոսները դեռ տաք են սաստիկ, ինչպես և ցամաքի լերկ ժայռերը: Քանի դեռ կեռային ջուրերը և կրակի պես էին ժայռերը, ո՛չ մեկ կյանք սկիզբ առնել չէր կրնար: Սակայն քիչ մը ավելի ուշ այդ տաք ու գաղջ ջրերուն մեջն է, որ կգոյանա կյանքը աշխարհիս երեսին: Եվ կգոյանա ջրերուն մեջ, որովհետև կյանքը կրող, կյանքը բերող նյութը՝ կենսանյութը՝ պրոտոպլազման, իր կազմովը երեք քառորդը ջուր է, ինչպես ընդհանրապես անկե ետքը այդ նախնական կենսանյութեն առաջացած բոլոր բույսերուն ու կենդանիներուն մարմինները իրենց կազմութեան երեք քառորդը ջուր են:

II. ԿԵՆՍԱՆՅՈՒԹԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Մեզմե հինգ միլիոն դարեր առաջ երկրիս գաղջ ջրերուն մեջ ծագում առած նախանյութը ի՞նչ է եղած՝ հաստատ կերպով ըսել չենք կրնար. բայց անշուշտ շատ մոտ ու նման բան մը պիտի ըլլար, ինչ որ է մեր արդի պրոտոպլազման, մեր արդի կյանք ունեցող մարմիններեն ամենեն տարրականը, ամենեն պարզը, արդի պարզագույն վիճակը կյանք ունեցող նյութին:

Կենսանյութը՝ պրոտոպլազման, հավկիթի ճերմակուցին նմանող գույնով ու թանձրութեամբ փոքրիկ զանգված մըն է կիսահեղուկ. իր մեծութեյունը մանրադիտական է, երբեմն հասարակ աչքով հազիվ նկատելի, բացառաբար միայն ավելի մեծ, գնդասեղի գլխու չափ:

Իր քիմիական կազմովն ալ շատ նման է հավկիթի ճերմակուցին և այդ պատճառով ալ իր քիմիական կազմութեյունը կկոչվի ճերմկուցային՝ ալպումինոիտ: Իր քիմիական բաղադրութեյան մեջ հիմնականը չորս տարր է՝ ջրածին, թթվածին, ազոտ և ածուխ: Հաճախ ասոնց միացած կըլլա ծծումբ, ֆոսֆոր, քլոր, այլև զանազան մետաղային նյութեր՝ սոտիում, քալցիում, մակնեզի և երկաթ:

Այս տարրերով բաղադրված մոլեքյուլներ են, որ կկազմեն ալպումինոիտ մարմինները. և այս մոլեքյուլներուն բաղադրիչ մասերուն իրար ձգողութիւնը, իրարու հետ ունեցած կապը շատ թոյլ է, ուրկե և կառաջանա քիմիական անհաստատութիւն մը. այսինքն՝ ճերմկուցային այդ մարմինները շատ են ենթակա քիմիական փոփոխութիւններու, շատ դիւրութեամբ եղած քիմիական կապակցութիւնները կքակվին՝ ուրիշ նորեկ տարրերու հետ նոր կապակցութիւններ, նոր մոլեքյուլներ կազմելու համար, դիւրութեամբ կառնեն իրենց կազմին մէջ նոր տարրեր, դիւրութեամբ կյուրացնեն նոր նյութեր: Ասոր համար է, որ պրոտոպլազման քանի դեռ կապրի, մշտափոփոխ հարաբերութեան մը մէջ է իր շրջապատի մարմիններուն հետ. և արդեն կյանք ըսվածը այդ մշտական առուտուրն է իր ու իր շրջապատի քիմիականութեան: Երբ պրոտոպլազման կմեռնի, երբ կյանքը կդադրի, կդադրի նաև այդ քիմիական դիւրափոխութիւնը, տեղը կբռնեն քիմիական ավելի հաստատուն կապակցութիւններու տեսակներ:

Կենսանյութը ապրած ժամանակ ավելի միապաղաղ ու միատարր երևույթ ունի, կարծես մասն ու ամբողջը բոլորը իրար նման: Բայց երբ զանազան քիմիական ազդակներով կմեռցնենք ու կգունավորենք կենսանյութը, իր դիակին վրա միայն կերևա. որ այդպես պարզ ու միակերպ չէր կազմը: Գոնե երկու տարբեր մասեր պարզ կզանազանվին. ավելի թանձր թելեր ներկայացնող կայուն ցանց մը և այդ ցանցի թելերուն մէջ ավելի հեղուկ և ավելի դիւրաշարժ մաս մը: Ասկե ավելին ցույց տալ չեն կրցած մեր մանրադետներն ու մեր դիտելու եղանակները:

Բայց այս պատկերը արդեն կըսե, որ պարզ մարմին մը չէ մեր առջևը գտնվող կյանքի ամենապարզ նյութը. ան գոնե երկու տեսակի կազմութիւն ունի, որոնց հետ անշուշտ կապված է աշխատանքի որոշ բաժանում մը: Թելային ցանց մասերը ավելի ամբողջութիւնը պահպանող, ավելի դիմադրող և ավելի պահպանողական մաս մըն է կենսանյութին մէջ և այդ պատճառով ալ գուցե սերնդական աշխատանքի միջոցին ավելի կարևոր: Մինչդեռ ավելի հեղուկ մասերը, որոնք ցանցին աչքերը կլեցնեն, ավելի

սննդառության, մարսողության և սնունդի որոնումին հատկացված կերևան:

Ուրիշ խոսքով՝ նույնիսկ մեր ամենապարզ համարած պրոտոպլազման որոշ աշխատանքի բաժանումով արդեն զործարանավոր մարմին մըն է և արդեն որոշ կատարելագործում և զարգացում ունի: Եվ անշուշտ իրմեն առաջ եղած են իրմեն ավելի պարզ ու նախնական պրոտոպլազմայի տեսակներ, որոնց ծնունդն ու զարգացումն է ինքը: Ասոնք կա՛մ եղած են սկիզբը, ժամանակ մը, և հիմա այլևս չկան, կա՛մ գիտության ունեցած արդի միջոցներով դեռ նկատել ու գտնել չենք կրցած:

Այս կա՛մ-երուն հետ կապված է կյանքի առաջացման հարցերեն մեկը: Կյանքի ծագումը մե՞կ անգամ մը եղած ու անցած է երկրի կենսագրության մեկ որոշ շրջանին, ջրերու գաղջության մեկ որոշ աստիճանին կամ մեզի անհայտ այս ու այն որոշ պայմաններու նպաստավորման միջոցին, թե՞ ամենանախնական կենսանյութը սկիզբ է առած քանի մը անգամներ, գուցե հաճախ և կամ գուցե ան կստեղծվի ամեն օր մեր շուրջը անկյանք մարմիններեն: Հարց մը, որ տարբեր կերպով կպատասխանվի գիտնականներեն և որ դեռ բաց կմնա: Այսքանը հաստատ է, որ ո՛չ ազատ բնության մեջ, ո՛չ ալ փորձի սրվակին մեջ գիտությունը դեռ ոչ մեկ դեպք ու դիտողություն չունի, որ անկյանք մարմիններե կյանք ունեցող մարմին մը առաջանա առանց կյանք ունեցող մարմնի մը աշխատանքին. հիմա մեզի համար պրոտոպլազման պատրաստողը միայն ինքը պրոտոպլազման է:

Եվ սա է արդեն կենսանյութի և հատկապես բուսական կենսանյութի առաջին գործը. շրջապատի ջուրեն, օդեն ու հողեն կառնե նյութեր իր մեջը և կմիացնե իր էության. կյանք չունեցող նյութերը կվերածե կյանք ունեցող նյութի և որուն անմիջական հետևանքն է աճումը, այսինքն՝՝ պրոտոպլազմայի զանգվածին շատացումը: Ասով է, որ կյանքի նյութը, ուրեմն և կյանքը կհարատևե:

Բայց պրոտոպլազմայի զանգվածին ինքն իր մեջ շատացումը սահման մը ունի: Աճելու համար դուրսեն շարունակ նյութեր պիտի ստանա և պիտի ստանա իր արտաքին մակերեսովը, որ

անմիջական չփման մեջ է արտաքին աշխարհին հետ: Բայց հայտնի է, որ զանգված մը երբ մեծնա, իր մակերեսը թվաբանական հառաջատվութիւնեմբ առաջ կերթա, մինչդեռ իր ծավայը կմեծնա երկրաչափական հառաջատվութիւնեմբ. այսինքն՝ երբ ծավալը չորս անգամ ինքն իր վրա կբազմապատկվի, զանգվածին մակերեսը միայն չորսով կբազմապատկվի: Իսկ ասիկա կնշանակե՝ ինչքան կենսանյութին ծավալը աճի, այնքան համեմատաբար կփոքրանա դուրսի աշխարհին հետ չփման մեջ եղող իր մակերեսը, որ անմիջապես սննդառութիւնը կկատարե: Հետևապես ինչքան մեծնա զանգվածը ինքն իր մեջ, այնքան ավելի գէշ պայմաններ կստեղծվին սննդառութեան համար. ինչքան ծավալը փոքր՝ այնքան նպաստավորված է կենսանյութը սննդառութեան տեսակետեն: Անշուշտ ասոր համար է, որ բոլոր ազատ ապրող կենսանյութերը՝ բոլոր միաբջիջ արարածները, շատ փոքրիկ են ընդհանրապես և մեծ մասը չափազանց փոքրիկ նույնիսկ մանրադիտակին տակ:

Ուրեմն ինչպե՞ս պետք է լուծվի այս խրթին հարցը, որ մեկ կողմեն կենսանյութը աճի, բայց մյուս կողմեն ծավալը փոքր մնա: Այս դժվար հակասութիւնը կվերցնե մեջտեղեն կենսանյութը ինքն իրմեն դուրս աճելով, մեջտեղեն կիսվելով, իրմեն իր նման երկրորդ անհատ մը անջատելով:

Եվ այս կիսումը կկատարվի շատ պարզ կերպով ու շատ բնական: Ինչպես ամեն թանձր հեղուկ, կենսանյութին ալ ջրերուն մեջ փոքրիկ կաթիլ մըն է, հանգիստ ժամանակ գնդաձև, իր ներքին ճգողական ուժին պատճառով: Այդ գունդը որոշ մեծութեան մը հասնելեն ետքը իր մեկ տրամագծին շուրջը թեթև խորութիւն մը կառաջացնե օղաձև, անշուշտ նորեն իր մակերեսը քիչ մը ավելի մեծցուցած ըլլալու ճիգով: Այդ օղաձև փոսը ավելի ու ավելի խորանալով մեկ գունդը կվերածե երկու փոքր գունդերու, որոնք կեդրոնական մասով մը միայն դեռ կապված են իրարու. մինչև որ այդ միացնող վերջին կապն ալ կկտրվի և մենք կունենանք մեկի տեղ երկու կաթիլ: Կրսենք կենսանյութը բազմացավ. իրմեն իրեն նման կենսանյութ մը ծնավ: Սննդառական աշխատանքը վերածվեցավ սերնդատու աշխատանքի:

III. ԲՋԻՋ

Կենսանյութը իր զարգացման այս վիճակով չէ սակայն, որ կներկայանա մեր արդի մեկ միութենն մը կազմված բույսերուն ու կենդանիներուն մեջ: Կենսանյութի վերը նկարագրված վիճակը չէ այն հիմնական կենսական միավորը, որու բազմապատկումով, իրարու կցումով ու իրարմե զանազանվելով հետզհետե հառաջացած են բուսական ու կենդանական բոլոր հյուսվածները, գործարանները և տեսակները: Կյանք ունեցող աշխարհին հիմք ծառայող նախնական բնախոսական միավորը կենսանյութի շատ ավելի զարգացած ու բարդացած մեկ վիճակն է, որ բջիջ կանվանենք:

Ամենաէական տարբերությունը, որ ունի բջիջը պարզ կենսանյութեն, կորիզի հավելումն է: Կենսանյութին մեջ կառաջանա ավելի մութ գույնով և ավելի թանձր կազմով փոքրիկ մանիկ մը, որ կնմանցնենք պտուղներու կորիզին: Կենսանյութին այս կորիզը իր կողմեն միատարր կազմություն մը չէ. ան ալ իր մայր կենսանյութին պես կազմված է թելերե և ավելի հեղուկ հյութե, որ կորիզին թելերուն ցանցերը կլեցնե: Իր քիմիական կազմովն ալ կորիզին բաղադրիչ նյութերը նույն ալպումինոիտներու տեսակներուն կպատկանին: Այսինքն՝ իր էությամբն ու կազմովը նույն կենսանյութի մեկ ավելի խտացած ու առանձնացած վիճակն է և շատ նուրբ մաշկով մըն ալ սովորական ժամանակ զատված է իր մայր կենսանյութի զանգվածեն: Եվ ինչպես որ կենսանյութը իր կորիզն ունի, այդպես ալ կորիզը իր մեկ կամ ավելի կորիզները ունի իր մեջ սովորական ժամանակ, որոնց ներքին կազմը տեսնել չենք կրնար դեռ մեր արդի մանրադիտակներուն ուժովը:

Կորիզեն զատ բջիջի ունեցած մեկ սովորական տարբերությունն է նաև բջիջի արտաքին մաշկը. թեև կան միաբջիջ կենդանիներ, ինչպես, օրինակ, կենդանական արյան լոյկոսիտները, ինչպես ուղեղային բջիջները, որոնք չունին այդ ավելի կամ նվազ առաձգական, ավելի կամ նվազ հաստ ու դիմացկուն արտաքին մաշկը. բայց և այնպես բջիջի մեկ առանձնահատուկ մասն է այդ

արտաքին մորթը, որ բջիջի ներքին էությունը կզատե դուրսի աշխարհեն, կպահե ու կպաշտպանե:

Կորիզեն ու մաչկեն ետքը պետք է հիշել նաև կենսանյութին մեջ առաջացող փոքրիկ պարապուրթյունները, ուր կենսանյութը կհավաքե ըստ երևույթին իր մեջի ավելորդ կազային ու անպետք նյութերը մարմնեն դուրս վանելու համար:

Ասոնք արդեն խոշոր տարբերություններ են ու նորություններ, որոնք իրենց հետ կբերեն աշխատանքի նոր բաժանում: Մասնավորապես շատ մեծ է կորիզին դերը. տեսակ մը ան է դարձած աճելության ղեկավար գործարանը. երբ բջիջ մը կեսեն կտրենք՝ կորիզը պարունակող մասը կշարունակե իր կյանքն ու աճումը առաջվան պես, մինչդեռ կորիզեն զրկված մասը արագ կհյուծի ու կմեռնի:

Կորիզի աճելության վրա ունեցած մեծ ազդեցությունը ավելի ևս կշեշտվի. երբ բջիջը նոր սերունդ պիտի տա, երբ ինքն իրմեն դուրս պիտի աճի: Կորիզը այս աշխատանքի միջոցին այնքան մեծ ու խորհրդավոր փոփոխություններ կկրե, այնքան հիմնական դեր կխաղա, որ կարծես իր վրա փոխանցված ու կեդրոնացած ըլլա նոր սերունդներ առաջացնելու գործը, այսինքն՝ իր կազմով, իր զարգացման աստիճանով և իր կարողություններով օժտված նոր էակներ աշխարհ բերելու աշխատանքը: Կորիզը կարծես ըլլա ժառանգականությունը պահող ու ավանդող հատուկ գործարանը: Նախորդ ավելի պարզ կենսանյութի ցանցային մասերուն կատարած աշխատանքին ավելի կեդրոնացումը, կատարելագործումը և առանձնացումն է ասիկա. արդեն ինքը կորիզն ալ հավանորեն այդ ցանցային մասերուն մեկ կտորն է ավելի խտացած:

IV. ԲՋԻՋԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Բջիջին բաժանումը կկատարվի երկու եղանակով. ավելի պարզ ու ավելի բարդ տեսակի սերնդական բաժանում:

Ավելի պարզը մեջտեղեն կիավիլն է, միայն այնպես, որ կորիզն ալ միևնույն ժամանակ և հավասար կերպով միասին

կկլոսվի. որով մեկ կորիզավոր բջիջեն կառաջանան երկու բջիջ՝ ամեն մեկը իր կորիզով:

Ավելի տարածվածը սակայն և ավելի կատարելագործվածը երկրորդ եղանակն է, շատ ավելի բարդ ու հրաշալի, որու միջոցին բջիջի կրած փոփոխութիւններուն գլխավոր վիճակները հետևյալներն են:

Նախ կորիզին կից երևան կուգան երկու փոքրիկ գնդիկներ՝ «ուղղիչ կետեր», որոնք սովորական ժամանակ կա՛մ չկան, կա՛մ չեն նկատվիր: Կորիզը կենսանյութին բաժնող նուրբ մաշկը կանհայտանա. և երկու ուղղիչ կետերը իրարու հակառակ ուղղութեամբ կուղղվին դեպի բջիջին երկու բևեռները. և կենսանյութը այդ կետերեն ճառագայթաձև գծեր կտանա դեպի բջիջին հասարակածը: Միևնույն ատեն կորիզին ցանցային մասը կվերածվի մեկ հատիկ ծալծլված ու գալարված օղակի մը. չուտով այդ օղակն ալ կկտրվի քանի մը համաչափ մասերու և յուրաքանչյուր մասը կներկայացնե սուր անկյունով եռանկյունի մը եվրոպական V տառին նմանութեամբը. այդ V-երը կուգան, կբոլորին կեդրոնին չուրջը. V-երուն սուր ծայրերը ուղղված են դեպի կեդրոնը և բոլոր V-երուն մարմինները պառկած են նույն մակերևույթին վրա հորիզոնական դիրքով:

Հաջորդ աստիճանին վրա V-երը կազմող թելերը իրենք իրենց մեջ կկտրտվին ու կվերածվին V-աձև դասավորված գնդիկներու, համրիչի իրարու կպած հատիկներուն նման: Հաջորդ աստիճանը ամենեն խորհրդավորն է. ամեն գնդիկ հորիզոնական հատումով կկլոսվի և կիսվածները համաչափ կերպով իրարմե կհեռանան, որով յուրաքանչյուր V շարքը կդառնա երկու շարք V: Կամաց-կամաց հյուսիսային կողմի V-երը կուղղվին դեպի հյուսիսային ուղղիչ կետը սուր անկյուննին դեպի վեր բռնած. իսկ հարավային V-երը նույն կանոնավորութեամբ կուղղվին դեպի հարավային ուղղիչ կետը՝ սուր անկյուննին դեպի վար բռնած:

Երբ կհասնին ուղղիչ կետերուն, կդասավորվին անոնց չուրջը ճիշդ նույն դիրքով, ինչպես որ էին հասարակածին վրա դեռ չբաժնված: Շուտով V-երուն բաղադրիչ գնդիկները նորեն իրարու կմիանան, կկազմեն թելեր, թելերն ալ իրարու կցվելով

կառաջացնեն նորեն ծալծլված ու գալարված օղակ մը, որ հետզհետե ինքն իր վրա խճճվելով՝ կդառնա ցանց, ճիշդ ինչպես որ էր մայր կորիզին մեջ բաժանման դործողութիւնը սկսելեն առաջ: Հետևանքը կըլլա մեկ կեդրոնական կորիզի մը փոխարեն երկու բևեռային կորիզներ: Այս միջոցին հասարակածի վրա կենսանյութը չրջանաձև կսկսի խորութիւն մը կազմել, որ հետզհետե դեպի կեդրոնը խորանալով վերջապես կենսանյութի ամբողջ զանգվածը կբաժնե երկու հավասար մասի. որով և մայր բջիջը վերածված կըլլա երկու քույր բջիջներու:

Այս բարդ փոփոխութիւններուն մանրամասնութիւնները եթե դեռ լավ հասկանալի չեն մեզի, թե ինչ բանի կծառայեն, ամեն պարագայի ընդհանուրին մեջ բան մը շատ որոշ ըմբռնելի է. բջիջը կրնաս հնար եղածին չափ իտեալական հավասարութիւամբ երկուքի բաժնվիլ, որ ոչ մեկ կողմը ոչ մեկ բանե զուրկ չմնա: Պարզ է, որ բջիջի ձեռք բերած կազմին ու կարողութիւններուն պահպանման ու փոխանցման ժառանգական օրենքն է, որ կգործե:

V. ՍԵՐԱՏՈՒՄ ՈՒ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Մեկ բջիջե մը ավելի չեղող էակներու բազմանալու եղանակը, ըլլա պարզ թե բարդ ձևով, վերջ ի վերջո կիսումն է: Եվ որովհետև այս կիսումն ու կիսվածներուն կիսումը անվերջ ու անընդհատ կրնա չարունակվիլ և էակներու բազմապատկումը սահման չունի տեսականորեն, ըսել է բջիջե մը ավելի չեղող էակները մահ չեն ճանչնար, քանի որ ամբողջ բջիջը առանց որևէ մնացորդի կվերածվի երկու բջիջի. և այս երկու կեսերը համարժեք են իրարու իրենց ուժովն ու ունակութիւններովը, ծեր ու երիտասարդ չկա. երիտասարդացում կա. կիսումը ոչ թե մայր ու աղջիկ կառաջացնե, այլ երկու քույր. Հին սերունդը նոր սերունդ մը չարտադրեր իրմեն զատ, հին սերունդը կվերածվի երկու նոր սերունդի:

Մահը կսկսի բազմաբջիջ էակներու առաջացումով, երբ որոշ

տեսակի հատուկ բջիջներու կհանձնվի անմահութեան գործը, այսինքն՝ կլսվելով ու կլսվելով նոր սերունդները առաջացնելու և բազմաբջիջի ձեռք բերած հատկութիւններն ու առավելութիւնները հաջորդ սերունդներուն փոխանցելու աշխատանքը: Իսկ բազմաբջիջի մնացած բոլոր տեսակի բջիջները, որոնք ուրիշ նպատակներու կծառայեն, կապրին ավելի կամ պակաս երկար շրջան մը, բայց հետզհետե կուժասին, հյուսկենները կկորսնցնեն իրենց նախկին կորովը և վերջապես օր մըն ալ անկարող կըլլան իրենց սովորական պաշտոնը կատարելու: Եվ ինչքան գործարանական կյանքը զարգացած է, բարձր ու բարդ, ինչքան գործարաններուն դերն ու կազմը իրարմե խիստ զանազանված են, այնքան ամեն գործարան խիստ կախում ունի մյուս գործարաններու կատարած աշխատանքեն. որով անոնցմե մեկուն անպիտանացումը շատ ավելի մեծ չափերով և շատ ավելի շուտ առաջ կբերի մյուսներուն վտանգվիլը և անկարելի կդարձնե ամբողջութեան համայնական կյանքը:

Մահվան անխուսափելիութիւնը կառաջանա աշխատանքի բաժանման հետևանքով, բնական մահը արդյունքն է բազմաբջիջ համակեցութեան, մահը ծնունդ է զարգացման:

Միաբջիջ էութիւնը մահ չգիտեր: Բայց ասիկա ալ ճիշդ է միայն նպաստավորված էակներու համար: Գործնականին մեջ անհամար միաբջիջ կյանքեր կեր ու անունդ կդառնան ուրիշ կենդանիներու: Այդպես ալ կյանքի ձախորդ պայմաններուն մեջ ինկած էակը գնչ կսնանի, զուրկ կմնա լույսե ու ջերմութենն, կթունավորվի, կճզմվի ու կոչնչանա:

Եվ վերջապես, կպատահի, որ կենդանին կապրի ու կշարունակե բազմանալ, միայն թե կամաց-կամաց նոր սերունդները կդառնան նվազ կենսունակ և նվազ պատրաստված կյանքի կռվին համար. որովհետև եթե պիտանի հատկութիւնները սերունդե սերունդ կրկնվելով կզարգանան ու կուժեղցնեն կենդանին ու կենդանական տեսակը, այդպես ալ կենդանական շարքի մը ունեցած որևէ թերի, գնչ, աննպաստ կողմը կամ միակողմանիութիւն մը սերունդե սերունդ կրկնվելով այնքան կրնա ուժեղնալ, որ անհարմար ու վնասակար կդառնա կյանքի կռվին համար, կտկա-

րացնե աճելութիւնը ու կխանգարե բազմացումը. կենդանին կսերատի:

Սերատելու վտանգը երևի այնքան զգալի չափերով սկսած է գործել մասնավորապես միաբջիջ կենդանիներու ամենեն բարձր տեսակներուն մեջ, որ անոնցմե ոմանք, ինֆուզորիներու ցեղեն, ձեռք են բերած նոր միջոց մը այդ տկարացումին ու սերատումին առջևն առնելու համար. և այդ միջոցի անունն է ամուսնութիւն:

Ինֆուզորիներու այդ տեսակները կբազմանան նորեն սովորական կիսումի եղանակով. միայն թե քանի մը սերունդներ մեկ գծով առաջանալեն ետքը բջիջը կկսվելե առաջ կերթա իր նման ուրիշ բջիջի մը քովը, երկու նույնացեղ բջիջները կսեղմվին իրար, մեջտեղի թաղանթները կվերնան և երկու էակներուն պրոտոպլազմաները կխառնվին իրարու: Միևնույն ժամանակ երկու բջիջներու կորիզներն ալ կկիսվին և մեկուն երկու կեսերը կերթան կձուլվին մյուսի կեսերուն. կառաջանան երկու խառնուրդ կորիզներ. ուրկե ետքը երկուքին համար ընդհանուր զարձած պրոտոպլազման ինքն ալ կկիսվի, ու կբաժնվին ամեն մեկ կեսը հետը կորիզ մը առած: Ուրեմն, կառաջանա նորեն երկու բջիջ, բայց արդեն բոլորովին ուրիշ արժեքի բջիջներ են ասոնք. երկու տարբեր անհատներու, երկու տարբեր կենդանական գծերու ունակութիւններուն, հակումներուն և կարողութիւններուն խառնուրդը եղող ժառանգութիւն մը կկրեն իրենց մեջը: Եվ անկե ետքը քանի մը սերունդ կբազմանան անոնք սովորական կիսումով, մինչև տեղի ունենա նոր ամուսնութիւն այդ գծին վրա:

Երկու էակներու, նույն տեսակի երկու գծերու ժառանգութիւնները իրար խառնելե ետքը նոր սերունդներ առաջացնելը կդառնա նոր միջոց մը կատարելագործութեան, որ բազմաբջիջ կենդանիներուն մեջ հետզհետե ընդհանրանալով՝ կտանի սեռերու անջատման և նոր սերունդը այլևս միշտ կառաջանա երկու սեռերու խառնուրդեն:

Խառնուրդը կուժեղացնե տկարացած կարողութիւնները, չափազանցութիւնները կմեղմե, թերիները իրարմով կլրացնե, կսրբագրե և արդյունքը կըլլա ընդհանուր թարմացում, զարթոնք ու նորաստեղծում: Թարմացում ու զարթոնք բջիջներու, հյուս-

կիններու, գործարաններու, կենդանական տեսակներու և ժողովուրդներու:

Երկու ժողովուրդի իրար խառնվելեն կծնին նոր ժողովուրդներ. և կրկնակի խառնուրդներու արդյունք են ընդհանրապես ընդունակ ու մեծ ժողովուրդները:

Բ. ՄԻԱԲՋԻՋ ԱՐԱՐԱԾՆԵՐ

Ի. ՍԱՆՐԷՆԵՐ

Բնությունը լեցուն է միաբջիջ արարածներով, բույս թե կենդանի, որոնք մեծ դեր կխաղան մարդու կյանքին մեջ թե՛ օգտակար, թե՛ վնասակար:

Միաբջիջ մանրադիտական բուսական արարածներու միլիոններ են, ինչ որ մենք թթխմոր կանվանենք, որով կամովին կվարակենք մեր ալյուրին չաղախը հացի խմոր ստանալու համար: Ամեն խմորում միաբջիջ բույսի մը ահեցումն է իրեն հատուկ հարմար պայմաններու և միջավայրի մեջ:

Միաբջիջ բույսերու դաղութներ են մակարդ անվանածնիս, որ կնետենք կաթին մեջ ահեցնելու և բազմացնելու համար. ատոնք քանի մը ժամվան մեջ կբազմանան անհամար՝ կաթին որոշ մասերը յուրացնելով և փոխադարձաբար իրենցմե որոշ նյութեր արտադրելով. արդյունքը կըլլա մածուն: Զանազան միաբջիջ ահեցումներ են նաև բազմատեսակ պանիրները: Գարեջուրն ալ արդյունք է որոշ մանրէներու աշխատանքին:

Եթե մեզի համար բարեկամ ու օգտակար էություններ են մակարդող ու խմորող այս միաբջիջ բույսերը, անդին ունինք մեզի համար սարսափելի թշնամի միաբջիջ մանր բուսական գոյություններ, որոնք մեր վարակիչ հիվանդությունները կներկայացնեն, որոնք եթե անգամ մը մեր արյան մեջ մտնեն, սոսկալի արագությամբ կբազմանան, կարճ ժամանակվան մեջ միլիարտներու կհասնին՝ մեր արյան կարևոր տարրերը ուտելով և իրենցմե

սաստիկ ուժեղ թույներ արտադրելով, որ և արագ մահ կպատճառեն մեր մարմնին. այսպես թիֆը, խոլերան, ժանտախտը:

Կան ալ, որ մասնավորապես վտանգավոր են մեր մանուկներուն համար, ինչպես, օրինակ, ծաղիկ հիվանդության մանրէները, կեղծ-մաշկի ու կարմրուկի մանրէները: Կան և տեսակներ, որոնք անմիջական մահվան սպառնալիք չունին, բայց տևականորեն կմնան մեր արյան մեջ և կամաց-կամաց կուտեն ու կմաշեն մեր գործարաններուն հյուսվածները, ինչպես թոքախտն է, սիֆիլիսը և ոսկրներու ծյուրումը:

Կան հիվանդություններու մանրէներ ալ, որոնց վարժված է արդեն մեր կազմը և որոնց մեջեմիջ կատարած արշավներուն կենթարկվինք համեմատաբար նվազ վնասով, ինչպես հարբուխը, անժինը և նման «թեթև» ու «սովորական» վարակիչ հիվանդությունները:

II. ԿԵՂԾՈՏՆԻՆԵՐ

Միաբջիջ կենդանիներ նույնպես շատ կան բնության մեջ: Միաբջիջ կենդանիներու ճյուղը կենդանաբանությունը կբաժնե երեք ենթաճյուղի՝ կեղծոտնի կենդանիներ, ինֆուզորիներ և բեղմնիկներով աճող կենդանիներ:

Ասոնցմե վերջին ենթաճյուղը, անծաղիկ բույսերու նման, բեղմնիկներ կարտադրեն բազմանալու համար. գրեթե բոլորն ալ մակաբույծներ են, կապրին ուրիշ կենդանիներու գործարաններուն մեջ և կսնանին իրենց հյուրընկալի հաշվին. զուրկ են ամենքն ալ շարժումե. այսինքն՝ իրենց կարողություններր տուժած, հետադիմած կենդանիներ են, որով և հոգեբանական զարգացումը ըմբռնելու տեսակետեն հետաքրքրություն չեն ներկայացներ:

Առաջին ենթաճյուղի բոլոր տեսակներուն ընդհանուր եղող հատկությունն այն է, որ կեղծոտիկներ կարճակեն իրենց մարմնեն, այսինքն՝ իրենց կենսանյութին զանազան մասերը այս ու

այն կողմ դուրս կկրկարեն ու ներս կքաշեն, որով տեղ ու դիրք կփոխեն և իրենց անունդը կբռնեն:

Կեղծոտնիներու առաջին դասը կկազմեն մերկ տեսակները, ասոնց մեջ ալ ամենեն նախնականը մոներներն են՝ բոլորովին մերկ ու անկորիզ կենսանյութի մանրիկ զանգվածներ, որոնք կապրին ծովային որոշ կենդանիներու մարմնին վրա և կներկայացնեն արդի մեզի ծանոթ կենդանական աշխարհի ամենեն պարզ ձևը:

Երկրորդ տեսակը մերկ կեղծոտնիներու ամիոպան է և ամիոպակերպ միաբջիջները. նախորդին ունեցած ամենամեծ տարբերությունն այն է, որ կենսանյութը կորիզ ունի արդեն և ավելի ալ չարժուն են. իրենց զանգվածը կհոսի մերթ այս ուղղությամբ, մերթ այն և կեղծոտիկները կերկարին ու կկծկվին անունդի որոնումով: Ամիոպան կապրի ճահիճներու մեջ, որոնք գործարանավոր մարմիններ կպարունակեն առատ: Ճահիճներեն ալ անցած կըլլան մարդկային աղիքները, երբ մարդ բռնված է տիարե[4] կոչվող հիվանդությամբ. տիարեն ամիոպայի ներկայությունն է:

Եթե ամիոպան մեզի համար դեչ հիվանդություն մըն է, ճիշդ անոր զարգացման աստիճանին մեջ գտնվող և անոր նմանող լոյկոսիտները, որոնք մեր արյան ճերմակ գնդիկները կներկայացնեն, մեր մարմնին մեջ ճշմարիտ ոստիկանի պաշտոնը կկատարեն. երբ վարակիչ հիվանդության մը մանրէները կերևան մեր մարմնի որևէ մեկ կետին վրա, իսկույն անոնց վրա կխուժեն այդ ճերմակ գնդիկները, կշրջապատեն թշնամին իրենց կենսանյութով ու կջանան մարսել, եթե իրենք չի փճանան. այդ կյանքի ու մահվան կռվին մեջ նահատակված մեր քաջարի պահակներու դիակներն են ու թշնամի մանրէներու քայքայված մասերը, որ թարախ կանվանենք:

Վարակիչ մանրէներու սաստիկ արագ աճումն է, որ կդժվարացնե և չատ անգամ ապարդյուն կդարձնե լոյկոսիտներու աշխատանքը: Հաճախ ալ մեր արյան այդ ճերմակ գնդիկները դեռ անվարժ կըլլան նորեկ թշնամիին և անոր արտադրած թույնին մեծ դիմադրություն մը ցույց տալու չեն հաջողիր: Ասոր համար է արվեստական վարակումը, որ կգործադրե բժշկությունը. այսինքն՝

նոր հիվանդության մանրէներուն թույնը կներարկենք առողջ մարդու արյան մեջ մեր լոկոսիտները այդ փոքր քանակով թույնին վարժեցնելու համար. թշնամիին թույնը ճանչցած ու մարսած ճերմակ գնդիկները անհամեմատ հաջող դիմադրություն մը ցույց կուտան այդ հիվանդության իրական հարձակման միջոցին. արդեն մարզված կըլլան. որ ըսել է՝ արվեստական վարակումով իրական վարակման մը վտանգավորության դեմը կառնենք:

Կեղծոտնիներուն երկրորդ դասը կներկայացնեն փորամինիֆերները, որ խիթին[5] կոչվող և սելյուլոզի[6] նմանող նյութ մը կարտադրեն իրենցմեն ու ատով կպատեն ինքզինքնին. այսինքն՝ կշինեն իրենց համար մեկ կամ քանի մը բաժանմունքներով և զանազան ձևերով պատյաններ, երկարավուն, կլոր կամ ճառագայթաձև: Այս խիթինե պատյանները շատ քալք[7] կպարունակեն. այդ ամուր պաշտպանողական կեղևին ետևեն կենդանին դուրս գալ չի կրնար. միայն կեղևի բազմաթիվ կամ սակավաթիվ ծակերեն կամ միակ անցքեն դուրս կերկարե իր կեղծոտիկները հաջող որսի մը սպասումով:

Պատենավոր կեղծոտնիներու մեկ ուրիշ դասը կկազմեն ճառագայթու-ները, որոնք սիլիզ[8] պարունակող կլորաձև պատյանովը փաթթված են և որոնց վրա սուր փուշեր կըլլան սովորաբար: Եվ դարերու ընթացքին այս զանազան տեսակի պատյաններեն քալքի ու սիլիզի ահագին կույտեր կգոյանան ծովերուն խոր հատակը:

III. ԻՆՖՈՒԶՈՐԻՆԵՐ

Միաբջիջ կենդանիներու երկրորդ մեծ ենթաճյուղը ինֆուզորիներն են. իրենց կազմությամբ շատ ավելի բարդ ու ներքին աշխատանքի բաժանումն ալ՝ շատ ավելի չեշտված: Անոնց բազմաթիվ տեսակները կգտնվին գործարանական նյութեր շատ պարունակող ջրերու մեջ: Բոլորն ալ փաթթված են հաստ թաղանթով մը, որ կեղծոտիկներ արձակելը կարգիլե: Շարժումն ու տեղափոխումը կկատարվի թարթիչներու նման, թաղանթի զանազան մասերուն վրա բուսած կենսանյութի երկարացումներով. անոնց

միևնույն ուղղությամբ կատարած տատանումները առաջ կմղեն կենդանին և որան ալ կքշեն դեպի «բերնին» փոսը: Ուրիշ տեսակներ, փոխանակ բազմաթիվ մանր թարթիչներու, կունենան չատ ավելի երկար ու չատ ավելի ուժեղ մտրակ մը կամ քանի մը մտրակներ, որոնց ալեճև գալարումները չարժում կուտան կենդանիին և կնպաստեն նույնպես որսը բռնելուն:

Առաջին տեսակները թարթիչավոր՝ կկոչվին, իսկ վերջիններըը՝ մտրակավոր:

Բոլորն ալ իրենց թաղանդին վրա երկու անցք ունին. մեկ անցքեն դուրսի ջուրը իր մեջի անունդով կմտնե ներս թարթիչներու ու մտրակներու օժանդակությամբ. ներսը կենսանյութը կյուրացնե պետքի մասերը: Իսկ անպետ ջուրն ու կազային ու կարծր մասերը կհավաքվին կենսանյութին մեջ եղած զանազան պարապ տարածություններըը: Կենդանիի դեպի առաջ չարժումներու ատեն այդ պարապությունները իրենց մեջը հավաքված անպետքություններով հետզհետե կենսանյութին մեջ ետ-ետ կմնան, մինչև որ ետևը գտնվող երկրորդ անցքովը մարմնեն հեռանան:

Իսկ ինքը կենսանյութն ալ որոշված է երկու տեսակի. արտաքին թաղանդին անմիջապես կցվող ավելի դուրսի բաժին մը, որ ապակիի պես փայլուն է. և կենսանյութի բուն ներքին զանգվածը, որ կուտավոր, կետկետավոր կազմությունը մը ունի. և բջիջին կորիզն ալ կգտնվի այս վերջին մասին մեջ: Կետկետավոր մասը ուրեմն աճելության համար կաչխատի՝ սննդառության. մինչ արտաքին աշխարհի հետ սերտ շփման մեջ եղող ապակենման մասը կծառայե արտաքին ազդեցություններու տակ փոփոխություններ կրելու և այդ ազդեցություններու դիմադրելու չարժումներ ու տեղափոխություն կատարելու:

Այսինքն՝ միաբջիջ ինֆուզորիին կենսանյութը իր բուն ներքին կետկետավոր զանգվածով բուսական կարողություններու գործադրությանը հատկացված է, մինչ իր զանգվածի արտաքին բաժնովը կենդանական կարողությունները կգործադրե:

Գ. ՄԻԱԲՋԻՋ ԱՐԱՐԱԾՆԵՐՈՒ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

I. ՏԱՐԱԾՈՒՄ ՈՒ ԿԾԿՈՒՄ

Այժմ քիչ մը ավելի մոտիկեն դիտենք, թե որո՞նք են միաբջիջ կենդանիներուն հոգեկան կարողությունները:

Մանրադիտակի տակ մեր տեսնել կրցածը միաբջիջ կենդանիին կատարած շարժումներն են:

Թաղանդ չունեցող բջիջներու կենսանյութը, ըլլա մերկ թե պատենավոր, կհոսեցնե իր զանգվածին երբեմն այս ու երբեմն այն մասերը զանազան ուղղությամբ, կտարածե, կփուռ, թելեր կշինե, որոնք կրնան իրարու ալ հանդիպիլ ու միանալ, և ետքը նորեն ետ կքաշե այդ բոլորը և կրնա կծկվիլ ու ամփոփվիլ:

Թաղանդով մը փաթթված կենսանյութը, որ ավելի բարձր զարգացման աստիճանը կներկայացնե, ունի մնայուն թելիկներ ու թելեր իր մարմնեն արձակած, իբրև թարթիչ կամ մտրակ, որոնք նմանապես կերկարին ու կկծկվին. նախորդ շարժումին մեկ ավելի մասնագիտացած ձևն է ասիկա և ապագա մկանային թելերուն նախապատրաստությունը:

Ուրեմն կենսանյութի շարժունակության ամենեն նախնական եղանակը կներկայացնե իր զանգվածը ամբողջովին կամ անոր մեկ մասը այս ու այն ուղղությամբ հոսեցնելը, որ ամիոպային շարժում կկոչվի:

Բայց այս հոսումը ընդհանուր է ամեն հեղուկի: Այդ միևնույն շարժումները մենք կրնանք կատարել ամեն քիչ թե շատ թանձր հեղուկի մը կաթիլին վրա: Հոսիլը հեղուկ մարմիններու հատկորոշ կարողությունն է. ատիկա իրենց բնական վիճակին մեկ բնական հատկությունն է:

Ամեն տեսակ նյութերու ամենափոքրիկ մասնիկները՝ մոլեքյուլները, իրարու հանդեպ որոշ ձգողական ուժ ունին, որոշ ձգողական աստիճանով կապված են իրար ու կներգործեն իրար վրա. և այդ ձգողության աստիճանին համեմատ ալ կորոշենք արդեն

մարմիններու երեք դիխաւոր ֆիզիքական վիճակները՝ ամուր, հեղուկ ու կազային:

Ամուր մարմնի մը մոլեքյուլները շատ ուժով կքաշեն իրար ու շատ ավելի խիտ սեղմված են իրարու. կազային մարմիններուն բաղադրիչ մասնիկները շատ նոսր են ու շատ տկար ձգողութեամբ: Առաջիններուն վրա ուժ պետք է դործ դնենք իրարու ձգողութենե բաժնելու համար մոլեքյուլները, երկրորդին վրա մեծ ուժ պետք է դնենք իրարու ձգողության մեջ պահելու համար մոլեքյուլները:

Այս երկուքի միջին վիճակը կներկայացնե հեղուկը, որուն մոլեքյուլները ավելի դյուրին կերպով կարելի է հեռացնել իրարմե և իրարու ձգողութենեն ազատված մասնիկներն ալ ավելի դյուրին կերպով ենթարկել նորեն այդ ներքին ձգողության:

Մարմիններու տարածվելուն ու ամփոփվելուն մեծ դյուրութիյուն տվող Հատկութիյուն մըն ալ առաձգականութիյունն է, որ մասնավորապես կապ ունի փաթուկ մարմիններու ներքին խոռոչավոր, թելավոր ու ցանցային կազմութեան հետ. որով երբ մարմինը երկու կողմեն քաշելու ըլլանք, խոռոչին ու ցանցին պատերը կմոտենան իրարու և մարմինը ավելի կամ պակաս չափով կրնա երկարիլ, և երբ քաշելը դադրեցնենք՝ մարմինը կձգտի իր նախկին բնական վիճակը ստանալու: Արդ՝ կենսանյութին ալ, ինչպես տեսանք, ներքին թելային ու ցանցային կազմութիյուն ունի, որ անոր մարմնին միաժամանակ և՛ ավելի դիմացկունութիյուն կուտա, դժվար կպատռվի, և՛ ավելի ճկունութիյուն անոր ավելի խիտ մասերուն:

Կենսանյութը, ըլլալով հեղուկ ու ցանցային երկու իրար դրկող մասերե կազմված, կրկնակի կերպով դյուրութիյուն ունի ուրեմն կծկվելու ու բացվելու, հոսելու ու ամփոփվելու, ինչպես անխտիր բոլոր հեղուկ ու առաձգական մարմինները: Միակ նորութիյունը հոն է, մանրադիտակին տակ, որ այդ շարժումները առաջացնողը մենք չենք. մեր ձեռքերը չեն կենսանյութը հոսեցնողը, տարածողը, երկնցնողն ու ամփոփողը, այլ կենսանյութի զանգվածը ինքն է, որ այդ բոլոր շարժումներն ու հոսումները կկատարե:

Բայց արդյոք ի՞նքն է, որ կկատարե իր մեջեն, թե մեր ձեռքերուն պես ուրիշ ձեռքեր կան, որ դուրսեն կներգործեն, կքաշեն, կքշեն, թեև մենք չենք տեսներ:

II. ԱԶԴԱԿՆԵՐ

Եթե մենք չճանչնայինք մագնիսական ըսված ուժը, պիտի կարծեինք, որ երկաթի փոշին ինքն է, որ կվազե իր ներքին մղումով դեպի մագնիսին գլուխը. եթե հյուսիսային բևեռի մագնիսը իրեն քաշող հատկությունը չգիտնայինք, պիտի կարծեինք, որ մագնիսին սլաքը ինքն իր քմայքովը կդառնա դեպի հյուսիս: Քանի Նյուտոնը ապացուցած չէր ամեն զանգվածի ներքին ձգողական ուժը դեպի իր կեդրոնը, ոչ մեկուն մտքեն չէր անցներ, որ երկրիս ձգողական ուժն է, որ խնձորը ծառեն վար կքաշե, և ամենքը համոզված էին, որ խնձորը ինքն է, որ ծառեն վար կիյնա. մինչև հիմա ալ այդպես կըսենք՝ մեր լեզվին մեջ քարացած պահելով երևույթներու մասին մեր ունեցած հին ու սխալ հասկացողությունը: Այդպես ալ արևն է, որ առտուն կծագի, կբարձրանա երկնքին երեսը ամբողջ օրը քալելեն հոգնած, դադրած, իրիկունը մարը կմտնե. մենք ասիկա ամեն օր կտեսնենք և այդպես ալ կըսենք, թեև գրքերեն գիտենք, որ արևը տեղեն շարժած չունի, մենք ենք, որ անդադար կդառնանք թե՛ մեր առանցքին շուրջը և թե՛ արևին շուրջը:

Բան մը տեսնելը հերիք չէ ճշմարտությունը ըմբռնելու համար. ճշմարտությունը տեսնելը շատ ավելի դժվար բան մըն է. և կարելի է միայն պատճառներու և ազդեցություններու ավելի խորունկ դիտողությամբ, այսինքն՝ գիտական հետազոտությամբ:

Իրողությունն այն է, որ բնության մեջ մեր ձեռքերեն զատ ուրիշ բազմատեսակ և շատ ավելի սովորական ձեռքեր կան, որ կենսանյութին հոսում ու շարժում կուտան:

Եվ ամենեն առաջ այդ միևնույն արևը, որ մեր ամբողջ աշխարհի և մասնավորապես մեր բոլոր բույսերուն ու կենդանիներուն մայրն է ու ապրեցնողը, որովհետև ահագին ազդեցություն ունի անոնց աճելության, առողջության ու կենդանության վրա:

Արևուն ջերմությունը նախ ուղղակի ֆիզիքապես կազդե, կտրամադրե փռվելու, երկարելու, մեր ձեռքերուն պես, կքաշե ամեն կողմե, կլայնցնե: Կազդե և քիմիապես. քիմիական բոլոր փոփոխությունները տաքության որոշ աստիճան կպահանջեն.

քիմիական աշխատանոցի մը ամենեն առաջին գործիքը կրակն է, տաքութիւնը: Իսկ սննդառութիւն և աճում ըսուածն ալ քիմիական փոփոխութիւններ են հարատև. տաքութիւնը կդադրացնե կամ հնարավոր կդարձնե կենսանյութի այդ ներքին քիմիական աշխատանքը. բույսերը ձմեռը չեն աճիր ու սերմերը հողին տակ կսպասեն գարնան արևին: Արևուն ճառագայթներն են մոլեքյուլային այդ ներքին փոփոխութիւններն ու շարժումները երբեմն կատարողը, երբեմն ղեկավարողը:

Ջերմութեան հետ նաև արևին լույսը: Բույսերը իրենց քլորոֆիլը կպատրաստեն արևու լույսին ազդեցութեան տակ: Գիտենք նաև, կամ ավելի ճիշդը՝ դեռ չգիտենք, թե արևի տարբեր գույնի ճառագայթները և ատոնց համադրումը եղող ճերմակ լույսը ի՞նչ աստիճան մեծ ազդեցութիւն ունի մեր բոլոր թե՛ բուսական և թե՛ կենդանական կարողութիւններուն վրա. շատ ծանր հիվանդութիւններ ու ջղային տկարութիւններ լույսով կբժշկվին. որոշ լույսեր սպաննիչ են մանրէներու համար, որ ըսել է՝ կյանքի համար. որոշ տեսակները և աստիճանները լույսի, ընդհակառակը, կյանքի պահանջ է և անհրաժեշտութիւն. ընդհանուր առումով կյանքը սիրահար է լույսի, կյանքը պտուղն է լույսի չոչափումին:

Ուրիշ խոսքով՝ լույսի գույներն ու աստիճաններն ալ ապրող մարմիններու մեջ քիմիապես ու ֆիզիքապես շարժումներ առաջացնող ազդակներ են, անոնք ալ քաշող ու քշող ձեռքեր են: Արևածաղիկը իր դեմքը միշտ արևուն կդարձնե, այսինքն՝ արևուն լույսը իրեն կդարձնե արևածաղկին երեսը անոր ցողունին թեքելերը պրկելով. այդպես ալ բոլոր տերևները, բոլոր ցողունները, բոլոր ծիլերը դեպի վեր կձգտին, դեպի արևուն լույսը. այսինքն՝ արևուն լույսը ամբողջ բուսականութիւնը իրեն կքաշե: Բույսերուն նման բոլոր կենդանիներն ալ կփնտրեն արևուն լույսն ու ջերմութիւնը. լույսը ուրախութիւն ու կենդանութիւն, այսինքն՝ շարժում կբերե կենդանական աշխարհին. մութին հետ անշարժութիւն կուգա՝ քունը, և անախորժութիւն մը՝ վախը: Լույսն ալ կփոփոխե, կտեղափոխե, կմոտեցնե ու կդարձնե ապրող կենսանյութը:

Ջերմութենեն ու լույսեն ետքը կենսանյութին մեջ շարժում առաջացնող ազդակ մըն է նաև էլեքտրականութիւնը. էլեքտրա-

կան հոսանքը երբ կանցնի ջուրին մեջնեն, մանրադիտակին տակ իրարանցում կիյնա, ճիշդ ինչպես որ գրգռված վիճակի մը մեջ կղնեն բարձր կենդանիներուն ջղային ու մկանային դյուրությունները:

Ֆիզիքական այս երեք ուժերը անտարակույս խիստ կարևոր ազդակներ են կենսանյութին շարժումներ տվող: Վրան պետք է ավելցնել նաև ֆիզիքայի մեքենական կոչվող ուժերը կենսանյութին սեփական ծանրությունը ամբողջի ու մասերու. ծանրությունն ու ճնշումը անոր վրայի ջուրին, ինչպես և ուրիշ պատահական մարմիններու ճնշումը, ձգողությունը երկրի, ինչպես և ջուրին մեջի մեծ ու փոքր կարծր մարմիններու գործած ձգողական ազդեցությունը և իր ներքին մասերու մոլեքյուլային ձգողական տարբերությունները: Ասոնք բոլորը ազդակներ են նույնպես ֆիզիքական, որոնք կքաշեն կամ կհրեն կամ թեք մակերևույթի մը կառաջացնեն ուժերու, ուրկե վար կսահի, ուրկե վար կհոսի անխուսափելի կերպով կենսանյութի զանգվածը:

Կան անշուշտ ֆիզիքական ուրիշ ուժեր ալ, որոնք շարժման ազդակներ են կենսանյութին համար, որոնք դեռ հայտնի չեն մեր արդի գիտության և կամ որոնց ազդեցությունը դեռ բավականաչափ ուսումնասիրված չէ:

Վերջապես շարժիչ ձեռք մըն է նաև կենսանյութի և կենսանյութին մոտ գտնվող ուրիշ նյութերու կամ մարմիններու տարբեր քիմիականությունը ինքնին: Քիմիական տարբեր կապակցություններու ու բաղադրություններու ներկայությունն ու շոշափումը կրնա աղբյուր դառնալ շարժման կենսանյութին մեջ. քանի որ ծնունդ կուտան քիմիական փոխադարձ ազդեցության և հակազդեցության, այսինքն՝՝ կառաջացնեն ներքին մոլեքյուլային քայքայումներ ու նոր կապակցություններ, որ ըսել է՝ շարժում թե՛ ներքին, թե՛ արտաքին. ատոմները իրար կձգտին կամ իրար կվանեն, արդյունքը կըլլա եռք մը, վազք մը, հոսում կա՛մ զանգվածին մեջ, կա՛մ դեպի մյուս զանգվածը:

Այսպեսով՝ ֆիզիքական ու քիմիական են այն ազդակները, որոնք կենսանյութի շարժումները կառաջացնեն:

III. ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՈՒ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Կենսանյութի ամենանախնական վիճակներուն մեջ, երբ ո՛չ միայն կորիզը գոյութիւն չուներ, այլ հավանորեն ներքին թելային ցանցի մը առաջացումն ալ դեռ չէր կատարված կենսանյութի հեղուկ մասեն, քիմիական ու ֆիզիքական ազդակները սկսած են իրենց ներգործութիւնը կյանք ունեցող նյութին վրա, սկսած են հոսեցնել, տարածել ու տեղափոխել:

Ներքին ցանցին առաջացումը և կայունացումը բնականաբար ավելի ևս նպաստած է կենսանյութի շարժունակութեանը՝ մեկ կողմեն ավելցնելով անոր առաձգականութիւնը, մյուս կողմեն պահելով իր վրա որոշ ուղղութիւններով երկարելու ու կարճնալու, տարածվելու ու գալարվելու ձեռք բերված դյուրութիւնը:

Պահել իր վրա որոշ ուղղութեամբ շարժում մը կատարելու դյուրութիւնը արդեն տարբեր բան մըն է, քան պարզապես որոշ ազդակներու ճնշումին տակ շարժելի ըլլալը: Ասիկա արդեն ոչ թե պարզ հատկութիւն մըն է, այլ դարձած է հակում: Ո՛չ միայն դուրսի ուժերու ազդեցութիւն, այլև իր ստացած որոշ ծալքին, իր ներքին որոշ կրթութեան ազդեցութիւնը:

Այս տեսակի շարժումը արդեն արդյունք է ո՛չ միայն արտաքին ուժերու կրավորական ենթարկումին, այլև իր կազմի ու մարզանքի հարկադրանքին: Կրավորական հոսումին ու տարածումին կսկսի միանալ ներգործական տարր մը, ներսեն եկող դրդում մը:

Թուղթ մը, որ քանի մը անգամ որոշ ուղղութեամբ գալարես, հակում կստանա նույն ուղղութեամբ. անիկա արդեն ինքնիրենն ալ կոլորվի իր վարժութեան մղումովը, իր անգամ մը ստացած ոլորումին դրդումովը: Ասիկա արդեն սովորական ու պարզ շարժելիութիւնը չէ. վրան ավելցած է ներքին կազմին ու մարզանքին բերած ներգործականութիւնը:

Կենսանյութի մեջի ավելի կայուն մասերուն այս ներգործական մասնակցութիւնը կսկսի մանավանդ ավելի հաճախ ու ավելի մեծ չափերով կրկնվիլ, երբ կենսանյութը հետզհետե կանցնի պատրաստ սնունդի, երբ իր գլխավոր ուտելիքը լուծված հանքեր

ու անգործարան նյութեր ըլլալու փոխարեն կըլլան գործարանավոր մարմիններ, այսինքն՝ երբ կենսանյութը կսորվի պինդ մարմիններ ներս առնելու ու մարսելու:

Սկիզբը սնունդ դարձող պինդ մարմինները՝ բուսական ու կենդանական, ինչպես և պատահական բազմատեսակ պինդ անկյանք մարմիններ, ներս կմտնեն կենսանյութին գիրկը բոլորովին կրավորական եղանակով, այսինքն՝ որևէ արտաքին պատճառով կուգան, կքսվին կենսանյութին. և ինչքան ամուր քսվին՝ այնքան ավելի մեջը կխրին մերկ կենսանյութին. և ինչքան լիովին մեջը խրին՝ այնքան արագ ու լիովին կյուրացվին, կմարսվին:

Բայց ամեն ներս խրուած կենսանյութին գիրկը կենսանյութով շրջապատվիլ ըսել է: Ինչքան հաճախ և ինչքան խոր մարմինները ներս խրվին, կենսանյութը այնքան հաճախ ու լիակատար կերպով կատարած կըլլա այդ շրջապատող շարժումը, որ դարավոր կրկնութեյամբ կդառնա, ոլորվող թուղթին նման, ներքին հակում մը կենսանյութի կայուն մասերուն մեջ:

Եվ կենսանյութին շոշափվող առարկաները գրկելու, բռնելու այդ հակումը ինչքան սերունդէ սերունդ կրկնվի ու կրկնվի՝ այնքան կուժեղնա ի՛նքը այդ հակումը և այնքան ալ նպաստած կըլլա կենսանյութի աճելիութեյանը լավագույն ու առատ սննդառութեյամբ: Իսկ լավագույն սննդառութեյամբ օժտված կենսանյութը ուժեղ ու բազմաթիվ սերունդներ կառաջացնե, որոնք իրենց հետ կբերեն արդեն այդ գրկող ու գալարվող շարժումը վարժ ու գեղեցիկ կերպով կատարելու ունակութեյունը:

Ունակութեյուն մը, որ սերունդէ սերունդ և հազարամյակն հազարամյակ կատարելագործվելով ու ճկունանալով կդառնա կենդանիներու ամենեն կարևոր ու ամենեն աչքի իյնող առանձնահատկութեյունը: Կենդանութեյունը ներքին հակումով, ներքին մղումով շարժվիլ կարողանալուն մեջն է:

IV. ԱՅԴ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒՆ ՍԱՐԴԿԱՅՆԱՑՈՒՄԸ

Այն բոլոր պարագաներուն, ուր արտաքին ազդակը կնկատենք բուն շարժումը կատարողը, քաշողը, մղողը և կենսանյութի

չարժումը կրավորական կպատկերացնենք, մեզի համար եղելությունը շատ է պարզ, ամեն ինչ ֆիզիքայի սահմաններուն մեջն է և նոր հոգեբանական հարցեր մեջտեղ չեն գար:

Բայց երբ կընդունինք, որ կենսանյութը ինքն ալ իր կողմեն այս կամ այն աստիճանի կնպաստե կատարվող չարժումին, իր զանգվածի հոսումին, կեղծոտիկներու երկարումին, թարթիչներու կծկումին կամ իր մտրակի գալարումին, արդեն ակամա մեջտեղ կուգան նոր հարցեր:

Կտեսնենք, որ այդ չարժումները մեր մարդկային չարժումներուն շատ կնմանին և հոտկե ալ կեզրակացնենք, որ այդ կաթիլ մը կենսանյութին մեջն ալ կկատարվի այն ամենը, ինչ որ մեր մեջը կդիտենք: Մեր մեջը միշտ կենդանական չարժումը կապված կտեսնենք, կամ գոնե այդպես կկարծենք, որևէ որոշումի մը, մտածումի մը և չենք կրնար պատկերացնել մեզի ներգործական չարժում մը, որ հետևանք չըլլա որևէ աստիճանի ներքին հասկացողության:

Մեր գլխուն մեջ ամուր նստած է մեր ամենօրյա անձնական փորձառութենեն հանած այն դատողությունը, թե՝ չարժում մը կատարեց, ուրեմն բան մը հասկցավ, բան մը ցանկացավ: Շարժվեցավ թշնամիեն փախչելու համար, առաջ գնաց իր սնունդը բռնելու համար, թեքվեցավ աստղին ժայռի ստվերեն դուրս գալու համար դեպի արևին լույսը, դեպի ջերմություն: Ուրեմն կցանկա ու կփնտրե լույսն ու ջերմությունը, հասկացողություն մը ունի ճնշումի, շոշափումի, կզգա ուտելու պահանջ, կզգա անոթություն և կհասկնա համով պատառի մը մոտիկությունը. ուրեմն մոտավորապես ունի այն բոլոր կարողությունները, ինչ որ ունի մեր հոգին, բարձր ողնավոր կենդանիներու հոգին:

Այս չփոթեցնող համեմատության չափազանց կնպաստե նաև մեր գործածած լեզուն. մարդկային լեզվի հիմնական հատկություններեն մեկն է անկյանք աշխարհքը մարդկայնացնելը. լեռը գլուխ ունի, ոտք ունի, մեջք ունի, ժայռը քիթ ունի, երկինքը աչքեր ունի, ջուրը կվազե, կցատքե, կմռնչե, կկատղի. ճամբան կերթա մինչև գյուղ. ալիքները կկռվին, լճակը կքնանա, փոչին կնստի, մուխը կկոխե:

Այսպես ալ մեզմե շատ վար եղող էակներու վիճակն ու չար-

ժուռմը արտահայտելու առեն գիտակից թե անգիտակից կերպով մեր անձնական հոգեկան վիճակները և մեր կատարած շարժումները պատկերող բառեր կգործածենք: Մանրադիտակի վրա ծռած կըսենք. «Ամիոպան որսի ելավ». «Լոյքոսիտը թիփի մանրէին վրա քալեց». «Այսինչ ինֆուզորին արագ սկսավ թիավարել ու փախչիլ». «Այնինչ բատիոլարը զգաց արևին շոյանքը»:

Անշուշտ մեր միաբջիջներեն ո՛չ մեկը ո՛չ թշնամին կճանչենա, ո՛չ որսի կելլե, ո՛չ իսկ իր անոթութիւնը կհասկնա, ո՛չ լոյսը կփնտրե, ո՛չ ջերմութեան շոյանքը: Ասոնք բոլորը բարձր կենդանական կարողութիւններ են ու մտածումներ. երկհարկանի ու եռահարկ բարդ ու զարգացած ու մասնագիտացած ուղեղներ են պետք այս տեսակ բաներ զգալու և հասկնալու համար:

Իսկ խեղճ ինֆուզորին ու բատիոլարը դեռ մեկ հատիկ բջիջ մըն է, որ ամեն ինչ է՝ և՛ ուղեղ, և՛ մկան, և՛ ստամոքս, և՛ ճվարան, և՛ երիկամ: Հոգեբանական այդ նուրբ ու բարձր վերագրումները ան չի գիտեր. ինչպես որ փոշին նստիլ չի գիտեր, մուրթը կոխել չի գիտեր, ոչ ալ ճամբան՝ քալել: Ասոնք խոսքի ձևեր են միայն, համեմատութիւններով պատկերազարդված արտահայտութիւն. մարդկային լեզուն չափազանց «մարդկային» գործիք մըն է, ինչի որ դպչի՝ կմարդկայնացնե, կբարձրացնե, իմաստ կուտա ու հոգի:

V. ԳՐԳՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդկային նմանեցումեն և մարդկային լեզվեն դատ և արդեն ատոնց ալ հիմքին մեջը կա ավելի խորունկ պատճառ մը, որ այդ միաբջիջ արարածներու կարողութիւններուն վրա այս աստիճանի բարձր հավելումներ ընել կուտա դիտող մարդուն:

Այդ ավելի խորունկ պատճառը զարմանքն է ու հիացումը. այդ միաբջիջներուն շարժումներն ու «գործերը» շատ են «խելացի» ու պահանջին հարմար: Կենդանին մեկուն կմոտենա, մյուսեն կփախչի, մեկը կբռնե, մյուսին անտարբեր. կարծես կդատե ու կընտրե ու շատ ճիշդ կերպով: Կարծես հասկացողութիւն և ընտրութիւն ունի: Եվ հարցն ալ արդեն ճիշդ հոտ է. որովհետև գի-

տակցություն կամ հասկացողություն չունի, բայց ընտրությունը անչուշտ ունի:

Արտաքին ազդակներեն, իրերեն ու վիճակներեն ոմանք օգտակար են ու նպաստավոր էակի կյանքին ու զարգացումին, ոմանք, ընդհակառակը, վտանգավոր են կամ ուղղակի վնասակար: Արդ՝ կենսանյութը հետզհետե ձեռք կբերե նպաստավոր նյութերն ու վիճակները սիրելու, փնտրելու ու տևականացնելու հատկությունը և, ընդհակառակը, աննպաստ ու չարիք պատճառող իրերեն ու երևույթներեն հնար եղածին չափ խուսափելու հակումը:

Եվ այս հատկություններն ու հակումները կենդանին ձեռք կբերե ճիշդ նույն ճամբով ու ձևով, ինչ ճամբով որ ձեռք են բերվեր բոլոր զարգացումները, բոլոր ձևերն ու կարողությունները բուսական ու կենդանական աշխարհին մեջ: Կենսանյութին այն տեսակները, որոնք չեն կրցած օգտվիլ իրենց շրջապատեն ճիշդ կերպով, որոնք չեն սորված օգտակար պայմանները սիրելը, փնտրելը ու տևականացնելը, փճացած են ու տեղի են տված իրենց ավելի «խելացի» տեսակներուն, այսինքն՝ շրջապատող իրականութենեն ավելի ճիշդ կերպով օգտվողներուն:

Կրցած են դիմանալ ու զարգանալ սերունդե սերունդ կենսանյութային գոյություններու միայն այն տեսակները, որոնք իրենց մեջ զարգացուցած են օգտակար ազդակները փնտրելու և վնասակար ազդակներեն փախչելու ճիշդ կարողությունները. և ճիշդ ասոր համար ալ իրենց վարմունքն ու վերաբերումը շրջապատի հանդեպ կդառնա զարմանալի կերպով խելացի:

Այս խելացիությունը ունին բոլոր դիմացող կենսանյութերը, բուսականներն ալ: Նույնիսկ զարգացման խիստ բարձր ու բարդ վիճակի հասած բույսերուն մեջ սովորական երևույթ է ճյուղերուն դեպի լույսը հակիլը, արմատներուն ձեռնտու ուղղությամբ երկարիլը, տերևներուն դեպի լույսը դառնալը, ծաղիկներու դիչերը գոցվիլը, որոշ տերևներուն կծկվիլը վրան նստած միջատը բռնելու համար:

Միաբջիջ կենդանիներու շարժումներուն իմացականություն ու կամեցում վերագրողը նույնը պետք է վերագրե նաև բուսա-

կանուխէյան այս բոլոր խելացի շարժումներուն. և որ կղառնա նմանապես անիրական ու անպիտական վերագրում մը:

Միաբջիջ կյանքերու հոգեկան կարողութիւնը անոնց կատարած շարժումն է միայն, շարժվիլ կարողանալը. կա՛մ բոլորովին կրավորական, կա՛մ կիսովին ներգործական, գուցե շատ քիչ չափերով՝ գլխավորապես ներգործական: Զարգացման այս աստիճանին վրա կենդանական շարժումը նույնիսկ դժվար է զուտ ներգործական պատկերացնելը: Միաբջիջներուն այս շարժումները հետևանք են արտաքին քիմիական ու ֆիզիքական ազդակներու, այլև կենսանյութի ստացած որոշ ծալքին ու հակումին: Ավելի բարձր հոգեբանական տարրեր մեջ բերելը, ինչպես որ են զգայութիւնները, զգացումները, մտածումներն ու հասկացողութիւնը, բոլորովին անժամանակ ու անիրական է զարգացման այս աստիճանին վրա:

Միաբջիջ կենդանիներու հոգին շարժում մը ունի միայն իբրև պատասխան արտաքին որոշ ազդակներու և ներքին որոշ ձեռք բերված հակումներու. և այս է, որ կանվանենք գրգռականութիւն:

Բայց անտարակույս այս գրգռականութիւնն է մայրը կամ նախամայրը ապագա անհամեմատ ավելի զարգացած ու բարդացած հոգեկան կարողութիւններու: Այս նախնական գրգռականութենեն է, որ ծնունդ կառնեն, կաճին ու կկատարելագործվին զարավոր ինքնազարգացումով հոգիին բոլոր ապագա ծալքերը, հոգիին բոլոր նուրբ ու բարձրագույն երևույթները: Բոլոր զգայութիւնները իրենց զգայարանքներով, մտածումներն ու զգացումները իրենց ջղային բարդ դրութեամբ կուգան հաջորդ աստիճաններուն վրա՝ անշուշտ սկսելով իրենց շատ աղուտ ու պղտոր վիճակներեն դեպի անոնց աստիճանական հստակացումը, մինչև մարդկային հպարտ գիտակցութիւնը, որ իր հասած բարձրութենեն հիմա արհամարհանքով վար կնայի և չուզեր հաշտվիլ իր այդ «շատ խղճուկ» համարած ծագումին:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ՆԱԽՆԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Ա. ԿՅԱՆՔԸ ԿՐՈՂ ՆՅՈՒԹԸ

Ի. ԲԱԶՄԱԲՋԻՋ ԿՅԱՆՔԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Միաբջիջ կենդանիի կիսվելեն և երկու անհատի վերածվելեն ետքը, երբ երկու անհատները իրարմե չեն հեռանար և իրարու փակած կմնան, հիմք կդնեն նոր տեսակի գոյութեան մը, հիմք կդնեն բազմաբջիջ կեանքին:

Իրարու կպած մնալը հիմնական պայմանն է բազմաբջիջ կեանքի առաջացման. որովհետև իրարու կպած վիճակի մեջ միայն իրենց թաղանթներուն միջով բջիջները կրնան իրար անունդ փոխանցել, այսինքն՝ իրարու օգնել, իրարու համար աշխատիլ և իրարու գործակցիլ:

Առանց ապրող մարմիններու այդ մշտական հաղորդակցութեան, առանց այդ տևական աշխատակցութեան չկա և նոր զարգացումներու հիմնական պայմանը. միաբջիջներուն այն տեսակները, որոնք պատյան կարտադրեն և պատյաններով հաճախ իրարու կցված կմնան և ծովերուն տակը հսկայական կույտեր ու ժայռեր կրնան կազմել, չեն դադրիր միաբջիջ արարածները ըլլալե. անոնց ապրող մարմինները իրարու հետ անմիջական շփման մեջ չեն եղած, իրարու հետ սննդական կապ ու առուտուր չեն ունեցած:

Եվ այս սննդառական փոխադարձ օժանդակութիւնն է անշուշտ հիմնական պատճառը բջիջներու կցված մնալուն. սկիզբը պատահական բան մըն է եղեր իրարմե չբաժնվիլը. բայց այդ կից

մնալը կյանքի կռվին մեջ առավելություն մըն է բերեր, որ հետզհետե դարձեր է նպաստավոր նոր ձեռքբերում մը, մինչև որ վերածվեր է սերունդե սերունդ ժառանգվող մնայուն և կարևոր հատկության մը:

Եվ սկիզբը իրարու կից մնացած բջիջները բոլորովին իրարու նման են իրենց կազմով, դերով ու դիրքով. կապրին ու կընեն միևնույն բանը. բոլորն ալ նույն ձևով դուրսի աշխարհեն սնունդ կծծեն, կաճին, կկիսվին ու կբազմանան:

Եվ որովհետև իրարու կցված բջիջներեն յուրաքանչյուրը կկիսվի և կեսերը նորեն կցված կմնան իրարու, հետևանքը կըլլա, որ հետզհետե իրարու միացած, իրարու հետ հաղորդակցող, իրարու հյութ հասցնող և իրարմե հյութեր ստացող բջիջներուն թիվը արագ կմեծնա, կենակցող ու գործակցող զանգվածը կխոշորնա:

Ինչքան կուտակումը կխոշորնա՝ բնական կերպով բոլոր բջիջները նույն դիրքն ու վիճակը ունենալ չեն կրնար այլևս դեպի արտաքին աշխարհը, նույն ձևով ու չափով օգտվիլ չեն կրնար արտաքին աշխարհեն և նույն ձևով ու չափով չեն ենթարկվիր արտաքին աշխարհի բազմաթիվ ազդակներուն. արդյունքը կըլլա միացած բջիջներու անհավասարություն. ամենքը նույն ձևով ու չափով միևնույն բանը ընելու կարող չեն. հիմքը կդրվի կարողություններու և աշխատանքի տարբերության: Երկրորդ հիմնական պայմանն է ասիկա ավելի բարձր տեսակի կյանքերու առաջացման:

Նույն ամբողջության տարբեր մասերուն տարբեր գործեր կատարելը, տարբեր ձևեր առնելը, տարբեր գործարաններ առաջացնելը, այսինքն՝ աշխատանքի բաժանումը, չնայելով բաժանում մը ըլլալուն և ճիշդ բաժանում մը ըլլալուն համար, չափազանց կչեշտե իրարու կպած բջիջային զանգվածին ամբողջականությունը: Ինչքան խորանա տարբեր մասերու տարբեր աշխատանքը, այնքան ավելի կմեծնա նաև յուրաքանչյուրի կատարած աշխատանքին միակողմանիությունը և յուրաքանչյուրի դույության մյուս տեսակի աշխատավորներեն կախումն ունենալը: Ամբողջության կյանքն ու ապրուստը, զարգացումն ու պաշտպանությունը հնարավոր կդառնա միայն բոլորի համագործակցությամբ ամեն

մեկը իր տեսակի աշխատանքով իրեն հատուկ ձևով և ուղղությամբ:

Բջիջային կյանքին վրա կավելնա համաբջիջային կյանք մը, բջիջային գոյության վրա՝ համաբջիջային գոյություն մը: Աշխատանքի բաժանումն է իսկապես, որ միաբջիջներուն կենակցությունը կվերածե բազմաբջիջ նոր գոյության մը: Պարզ գործակցություն մը չէ այլևս, այլ նոր զուգորդություն մը, նոր անխզելի հյուսք մը տարբեր գործերու և տարբեր կարողություններու:

Այս նոր ավելի բարձր համայնակյանքը պետք է գտնե նաև իր համայնական կարողությունները պահելու և ժառանգությամբ փոխանցելու միջոցը: Մինչև հիմա նկարագրված միաբջիջի կիսումը այլևս հերիք չէ: Միաբջիջներուն կիսումը կապահովեր միաբջիջներուն տևականությունը, միաբջիջ անմահությունը: Ան հիմա ալ կգործե բազմաբջիջ գոյության մեջն ալ: Յուրաքանչյուր գործարանի բջիջ գոնե իր կյանքի որոշ շրջանին, եթե ոչ միշտ, կկիսվի ու կբազմանա. բայց կարտադրե բնականաբար իր նմանը, այսինքն՝ նույն գործարանին պատկանող բջիջ մը իր հյուսկենին հատուկ կարողություններու փոխանցումով: Ոչ մեկ գործարանի բջիջ չի կրնար կիսումով իր չունեցած կարողությունները, իր դաշնակիցգործարաններու և հյուսկեններու հատկությունները փոխանցել իր սերունդին:

Բազմաբջիջ գոյության մեջ որքան աշխատանքի բաժանումը չեչովի, այնքան հարկադրաբար պահանջ կուգա այդ տեղական գործարանական սերնդագործումեն անկախ ունենալու նաև իր համայնական սերնդագործությունը, իր համայնական անմահության բջիջները, որոնք փոխանցել ու հանձնել կարողանան նոր սերունդներուն համայնական գործակցությամբ ձեռք բերված բոլոր ձևերը, դասավորությունները, կարողությունները և մասնագիտական աշխատանքները:

Այդ համայնական ժառանգությունները փոխանցող հատուկ բջիջները պատրաստելու համար կառաջանա ու կկատարելագործվի մասնավոր գործարան մը, որ ձվարան կանվանենք: Նախնական բազմաբջիջ կենդանիներեն սկսած ձվարանը գոյություն

ունի կենդանական մարմնին մեջ, և մեծ տեղ ու ծավալ ունի հոն, քանի որ այդքան մեծ դեր ու կարևորություն ունի:

Թե ինչ ձևով ու եղանակով ճվարանը պատրաստել կհաջողի այդ ժառանգության բջիջները, որոնք կենդանիի կամ բույսի բոլոր գործարաններուն բոլոր ձևերն ու կարողությունները, նույնիսկ հաճախ «չնչին» մանրամասնությունները իրենց մեջ խտացնել կկարողանան, շատ հետաքրքիր և շատ կարևոր հարց մըն է, որուն պատասխանը կենսագիտությունը համառ կերպով կփնտրե, որուն լուծումը սակայն դեռ գտած չէ:

Եթե ճվարան կոչվող քիմիական աշխատանոցին ըրածը դեռ շատ մութ է ու չբացատրված, բարեբաղդաբար անոր աշխատանքին արդյունքը եղող ճվիկի ապագա զարգացումը և հետզհետե բազմաբջիջ էակ մը դառնալը բավականաչափ ուսումնասիրված է արդեն մանրադետներու տակ և օրե օր իր գաղտնիքները բանալու վրա է:

Եվ բազմաբջիջ կյանքի առաջացման ու զարգացման հիմնական օրենքները ըմբռնելու համար պետք է սկսվի աշխատանքը այդ սերնդական բջիջներու ուսումնասիրութենեն:

II. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՍԱՂՄԸ

Կենդանական աշխարհին մեջ քիչ պատահող բան մըն է, որ ճվիկը միայն ինքնիրենը կիսվելով և աճելով նոր սերունդ տալ կարողանա, այսինքն՝ իր տեսակին պատկանող նոր անհատ մը. նախնական աստիճանի կենդանիներու քանի մը տեսակներուն մեջ միայն գոյություն ունի այդ երևույթը:

Կենդանական աշխարհին մեջ տիրապետողն այն է, ինչպես և բուսական աշխարհին մեջ, որ սերնդական բջիջը նախ կմիանա ու կճուլվի իր տեսակին պատկանող ուրիշ սերնդական բջիջի մը հետ. այսինքն՝ նախ կկազմվի ամուսնական բջիջ մը, որ անկե ետքը կիսվելով ու բազմապատկվելով կառաջացնե իր տեսակին պատկանող նոր անհատը:

Սակայն իրարու միացողները երկու ճվիկ չեն. մեկը միայն

ձվիկ մըն է, իսկ մյուսը՝ տարբեր ձևով ու կազմով սերնդական հատուկ բջիջ մը, որ սերմնիկ կանվանենք: Եվ այդ երկու տարբեր տեսակի սերնդական բջիջները կպատրաստվին երկու տարբեր սերնդական գործարաններու մեջ. ձվարան կըսենք ձվիկ արտադրող գործարանին, սերմնարան կըսենք սերմ արտադրողին:

Քիչ պատահող երևույթ է նմանապես, որ նույն անհատը իր մեջ ունենա այդ երկու սերնդական գործարանները ալ միաժամանակ. ստորին աստիճանի զարգացման վրա միայն պատահող քանի մը կենդանական տեսակներու հատուկ վիճակ մըն է ատիկա: Եվ այդ պարագային ալ ընդհանրապես երկու գործարանները՝իրարմե զատ են և զատ անցքեր ունին դեպի արտաքին աշխարհը. արտաքին աշխարհի մեջ կկատարվի ձվիկի ու սերմնիկի հանդիպումն ու ձուլումը. այսինքն՝՝ լայն հնարավորություն կա ուրիշ անհատներու սերնդական բջիջներուն հետ հանդիպելու և ձուլվելու: Ճիշդ ծաղկևոր բույսերուն նման, որոնց ծաղիկներուն վրա թեև այդ երկու տեսակի սերնդական գործարանները կան՝ ձվարանն ու փոշանոթը, բայց հովերու և միջատներու միջոցով նույն բուսական տեսակի տարբեր անհատներուն փոշանոթին արտադրութիւնները կրնան հասնիլ տարբեր անհատներու ձվիկներուն:

Սեռերու բաժանումը բացառություն մըն է բուսական աշխարհին մեջ. այսինքն՝ երբ տեսակի մը անհատներուն մեկ մասը միայն առաջին տեսակի սեռական գործարան կունենա, իսկ մյուս մասն ալ միայն երկրորդ տեսակի սեռական գործարանը, ինչպես, օրինակ, արմավենիներն են: Ճիշդ հակառակն է կենդանիներուն համար, ուր հիմնական երևույթը սեռերու բաժանումն է: Կենդանական տեսակի մը ձվարան ունեցող և ձվիկ արտադրող անհատները էգ կկոչենք, իսկ սերմնիկ արտադրող գեղձեր ունեցող անհատները կանվանենք արու:

Ձվիկը միշտ ավելի խոշոր բջիջ մըն է, որուն կորիզը առատորեն շրջապատված է պրոտոպլազմայով և գնդաձև: Սերմնիկը, ընդհակառակը, շատ փոքրիկ բջիջ մըն է, որ գրեթե միայն բջիջին կորիզը կկազմե, իսկ պրոտոպլազմիկ մասը պոչի մը պես երկարած է և շատ ժիր շարժունակությամբ, այսինքն՝ մտրակավոր միաբջիջ մըն է: Ձվիկի ու սերմնիկի հանդիպման միջոցին ձվիկը սպասող և

ընդունող տարրն է, մինչ սերմնիկը՝ որոնող ու հարձակվող տարրը: Եվ երբ կհանդիպի ձվիկին՝ կզարնվի ու կխրվի իր հիմնական մասովը ձվիկի պրոտոպլազմային մեջ, որով կունենանք նույն բջիջին մեջ երկու կորիզ երկու տարբեր անհատներե:

Այդ երկու կորիզները բարդ կիսման ձևերով կվերածվին թելերու, կկտրտվին, կուգան կխառնվին իրարու, մեկ ընդհանուր խճճված թել մը կկազմեն, մինչև որ վերջապես կվերածվին մեկ ընդհանուր կորիզի մը նույն ընդհանուր պրոտոպլազմային մեջ: Երկու հակասեռ բջիջներու ձուլումով ստացված այս նոր ու պատրաստ սերնդական բջիջն է, որ կանվանենք սաղմ: Ձվիկի սաղմ դառնալը կանվանենք բեղմնավորվիլ. սաղմը բեղմնավորված ձվիկն է: Եվ երկու անհատներու ժառանգական գծերը, հատկութիյուններն ու հակումները կկրե իր մեջը:

Սաղմը կենդանական ամենախոշոր բջիջներեն է, ողնավոր կենդանիներուն սաղմը մեկ քանի միլլիմետրի կհասնի իր տրամագիծով, առանց հաշվելու իրեն կցված պաշարը, որ պիտի գործածվի ապագա էակի կազմավորման միջոցին իբրև անհրաժեշտ ուտելիք, իբրև անհրաժեշտ ատաղձ, որով պրոտոպլազմա պիտի պատրաստվի և բջիջներ պիտի կառուցվին: Եվ այս սաղմին կցված պաշարը ահագին չափերու կրնա հասնիլ:

Այսպես, օրինակ, եթե առնենք մեր հավերուն սովորական հավկիթը՝ նախ կարծր ու բարակ գույգ կեղևներն են պաշտպանութիյան համար. անկե ետքը ճերմըկուցի ու դեղնուցի ահագին դեզերը, որոնք և կներկայացնեն սնունդի ու կառուցման անհրաժեշտ եղող պաշարը. իսկ բուն սաղմը ինքը հավկիթին մեջ դեղնուցի մեկ կողին վրա քիչ մը ավելի մուգ գույնի կլորակ կետ մըն է միայն, խոշոր ու միակ բջիջ մը, բեղմնավորված բջիջ մը:

Այդ բեղմնավորված սերնդական բջիջը բավական երկար ժամանակ, երկար ամիսներ ու ավելի կրնա մնալ այդպես պատրաստ ու անգործ, տեսակ մը քուն վիճակի մեջ, քանի դեռ չունի իր զարգացման համար անհրաժեշտ եղող պայմանները, որոնցմե ամենեն կարևորը տաքութիյան տևական ու որոշ աստիճան մըն է: Երբ հարմար պայմանները ներկայանան՝ սաղմը կսկսի գործել,

այսինքն՝ կսկսի աճիլ. աճիլ ըսել է սնունդ առանալ, սնունդը վերածել պրոտոպլազմայի և կիավիլ ու բազմապատկվիլ:

Եվ կենդանիներու սաղմին այդ բազմացումն ու աստիճանական ձևեր առնելն ու ձևեր փոխելը կկատարվի որոշ կանոնավորությամբ և որոշ հաջորդականությամբ: Զարգացման առաջին աստիճանները ընդհանուր են բոլոր բազմաբջիջ կենդանիներուն համար: Նույն ֆիզիքական օրենքները, որոնք գործած են աղատ կյանքին մեջ իրարմե չգատվող միաբջիջներեն բազմաբջիջներ առաջացնելուատեն, նույն ֆիզիքական օրենքներն ալ կգործեն հիմա հավկիթին մեջ, քանի որ ան ալ միաբջիջ մըն է, որ բազմաբջիջ կդառնա: Բոլոր կենդանիներն ալ իրենց սաղմնային զարգացման ընթացքին պետք է անցնին անպատճառ այդ նախնական հիմնական ընդհանուր ձևաոուրյուններեն. ճիշդ այնպես, ինչպես որ բոլոր հաջորդ՝ ավելի բարձր աստիճանի կենդանիներուն նախահայրերը իրենց բազմադարյան դանդաղ զարգացման ընթացքին ֆիզիքական օրենքներու նույն ճնշումին տակ անցած են այդ ընդհանուր հիմնական ձևափոխություններեն:

Ֆիզիքական օրենքներու հարկադրանքին կմիանա նաև դարավոր կրկնությամբ արմատացած ժառանգական հարկադրանքը: Կենդանական յուրաքանչյուր տեսակի դարավոր ու սերունդե սերունդ նույն ձևով կատարված ձևաոուրյուններն ու ձևափոխությունները կամրանան, կքարանան և անդիմադրելի ժառանգական հակումներ կդառնան, որոնց համեմատ կկատարվի ո՛չ միայն առաջին և բոլորին համար ընդհանուր եղող սաղմնային աստիճանները, այլև հաջորդ բոլոր աստիճանները յուրաքանչյուր ճյուղի ու տեսակի համար իրեն հատուկ ձևով, ճիշդ այն ձևով ու հաջորդականությամբ, որով կատարված է յուրաքանչյուր ճյուղի ու տեսակի զարգացումը ու առաջացումը իրարմե հազարամյակներու ընթացքին:

Այս վերջին ճյուղային ու տեսակային ձևափոխություններուն մեկ մասը կկատարե կենդանին իր աչխարհ գալեն ետքը, ուղղակի մեր աչքերուն տակը իր ապրելու ընթացքին. օրինակի համար՝ գորտին չերեփուկը, որ ձկան ու երկակենցաղի միջին վիճակ մըն է մինչև պոչին անհայտացումը և կենդանիին վերջ-

նական զարգացումը. ուրիշ շատ աչքի զարնող օրինակ մըն է չերամի որդը և ընդհանրապես թիթեռնիկները, թե ինչպես սողացողը թռչող կդառնա: Ընդհանրապես շատ են այս կարգի մեթամորֆոզները՝ այլափոխութիւնները, որ զանազան աստիճաններու պատկանող կենդանիներ կկրեն իրենց կեանքի ընթացքին, իբրև լրացում սաղմնային զարգացման, հասնելու համար իրենց տեսակի հասուն վիճակին:

Սաղմնաբանութիւնը այս պատճառով հնարաւորութիւն կուտա մեզի ուսումնասիրելու, թե ինչ հիմնական աստիճաններով միաբջիջ կենդանիներեն հետզհետե առաջացեր են նախնական և հաջորդ բազմաբջիջ կենդանիները: Սաղմը ինչպես որ իր հետ կբերե ճյուղի մը ու տեսակի մը բոլոր ձևերն ու կարողութիւնները վերարտադրելու հնարաւորութիւնը, այնպես ալ իր հետ կբերե ճյուղին ու տեսակին մինչև զարգացման այդ աստիճանը հասած ըլլալու պատմութիւնը: Ինդիրը այդ պատմութիւնը կարդալ կարողանալն է. իր տեսակի սեպագրութիւն մը, որ գիտութիւնը կամաց-կամաց սկսած է վերծանել:

III. ՍԱՂՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Սաղմը իր թմիր վիճակեն երբ ապրուն վիճակի կանցնի՝ կսկսի կիսվիլ և երկու կեսերը կմնան կցված իրարու: Երկու իրարու փակած բջիջները շարունակելով իրենց կիսումը՝ կդառնան չորս բջիջե կազմված միութիւն մը, որը նոր բազմացումով կդառնա ութը, ետքը տասնվեց, ետքը երեսուներկու և շարունակաբար ու կկազմե արդեն խոշորկեկ գնդիկ մը՝ լեցուն իրարու սեղմված բազմաթիվ բջիջներով: Սաղմի բազմաբջիջ գոյութեան այս առաջին հիմնական վիճակը կանվանենք լեցուն գունդ:

Սակայն շուտով հաջորդ բազմացումներու և մեծացման ժամանակ փոքրիկ պարապութիւն մը կգոյանա լեցուն գունդին կեդրոնը. հետզհետե ներսի բջիջները դեպի գունդին մակերեսը կսեղմվին, դուրսի աշխարհին հետ հաղորդակցութեան մտնելու կճգնին՝

անշուշտ ավելի առատ անհատականության հնարավորություն ունենալու համար: Լեցուն գունդեն կառաջանա ավելի մեծ գունդ մը, որուն մեջը պարապ է. բջիջները կկազմեն միայն մեկ շարք մը, որ գունդին մակերևույթը կներկայացնե, խաղի գնդակի մը նման, որուն ռետինը միայն արտաքին բարակ շերտ մըն է և մեջը պարապ: Այդ բջիջե գնդակին մեջը պարապ է բջիջային տեսակետեն, հոն բջիջ չկա, թե չէ լեցուն է ան հեղուկով՝ մասամբ արտաքին շրջապատեն ծծված, մասամբ բջիջներու արտադրություն: Սաղմնային զարգացման այս վիճակը կանվանենք միաշերտ գունդ:

Որոշ մեծության մը հասնելեն ետքը այդ միաշերտ գունդը, փոխանակ ավելի ուռչելու դեպի դուրս, իր բջիջներու շարունակվող բազմացումին հետևանքովը, գնդակի վարի կողմեն կսկսի թեթև մը դեպի ներս խրվիլ գուցե պարզ իր ծանրության ճնշումովը, գուցե և արտաքին ճնշման մասնակցությամբ, գուցե նաև չափազանց բարակ ու չափազանց ուռած մարմնի մը ինքնապաշտպանության անպատեհություններեն խուսափումի ճիգերով: Կստացվի ձև մը, որ նման է խաղի գնդակին, երբ մեկ կետ մը մատով ռետինը ներս հրենք: Այդ ներս հրված փոսացումը հետզհետե կխորանա ու կխորանա, մինչև որ բջիջներուն ներս խրվող շարքը կերթա կհասնի վարի շարքին. կստանանք երկու բջիջային շերտերե կազմված թասի նման բան մը: Թասին եզերքը հետզհետե կսկսի նեղնալ զույգ շերտերու շարունակվող բազմացումովը, մինչև որ կառաջանա երկու բջիջաշարքե կազմված գունդ մը, որուն մեջը նորեն պարապ է և որ կհաղորդակցի արտաքին աշխարհին հետ բաց մնացած փոքր բերնով մը: Եվ այս անգամ արդեն այս «բերան» բառը պարզ նմանություն մը չէ, այլ ատիկա իսկապես կենդանիին բերանն է՝ սնունդը ստանալու անցքը: Սաղմնային զարգացման այս վիճակը կանվանենք երկշերտ գունդ:

Մինչև հիմա բոլոր բջիջները բոլորովին իրարու հավասար էին իրենց ձևովն ու դերովը. այս երկու շերտերուն կազմվելովը կսկսի զանազանում մը՝ յուրաքանչյուր շերտին բջիջը հարմարվելով իր դիրքին ու կատարելով այդ դիրքի պարտադրած աշխատանքը: Դուրսի շերտին բջիջները անմիջական հարաբերության

մեջ կգտնվին արտաքին ազդակներուն հետ, քիչ-քիչ կառաջացնեն ինքնապաշտպանման գործարաններ և արտաքին ազդեցութիւնները կրող գործարաններ, այսինքն՝՝ պատյան, կաշի, զգայարան և ջղային բջիջներ: Ներսի շերտին բջիջները, որոնք կտրված են արտաքին աշխարհի անմիջական ազդեցութիւններեն, հետզհետե իրենց աշխատութիւնը կկեդրոնացնեն սննդառութեան վրա. բերնեն ներս մտնող ջրերուն մեջեն կքաշեն իրենց իրրև սնունդ ծառայել կրցող նյութերը ու կմարսեն: Ներսի շերտը կդառնա մայրը այն բոլոր գործարաններուն, որոնք կենդանիի աճելութիւնը կպայմանավորեն և որոնք ապագա զարգացումներով պիտի դառնան ստամոքս, աղիքային դրութիւն, երակներ, խրիկներ և զանազան հյութեր ու սեռական բջիջներ արտադրող գեղձեր:

Սաղմնային այս երկու հիմնական շերտերը կանվանենք արտաշերտ ու ներքնաշերտ, որոնք սկիզբը կպած են իրարու, մեկ պատ մը կկազմեն: Այդ պատը ավելի կհաստանա, երբ ներքնաշերտեն բջիջներու նոր աճում մը կխոնվի այդ երկու շերտերուն մեջտեղը՝ կազմելով բջիջային տեսակ մը երրորդ շերտ, որ միջնաշերտ կանվանենք և ուրկե զարգացման հաջորդ աստիճաններուն վրա կառաջանան արյան ու ավիշի բջիջները, ոսկորներն ու մկանները ընդհանուր առումով:

Եվ այս բոլոր ապագա գործարաններու առաջացման ճամբան և սկզբունքը նույնն է: Նախ բոլորովին նույն կարողութիւններն ունեցող բջիջային խումբերը երկար ժամանակ տարբեր պայմաններու ենթարկվելով և տարբեր պահանջներու հարմարվելով՝ կսկսին իրարմե զանազանվիլ ձևով ալ, գործով ալ. և դարավոր կրկնութիւնեմբ, աստիճանական կատարելագործութիւնեմբ և ժառանգական ամրացումով կդառնան իրարմե բոլորովին տարբեր կազմով, ղերով ու կարողութիւններով հյուսվածքներ. և մեկ կամ քանի մը այդ տեսակի հյուսվածքներու կապակցութիւնեմբ կազմված բոլորովին տարբեր ու բարդ գործարաններ:

Բ. ՆԱԽՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԲՋԻՋՆԵՐՈՒՆ ԳԼԽԱՎՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ի. ՆԱԽՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԲՋԻՋՆԵՐՈՒՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ամենեն նախնական բազմաբջիջ կենդանիները, որ հիմա կապրին, ինչքան ալ նախնական ըլլան իրենց կազմովը հաջորդ կենդանիներուն հետ համեմատած, նորեն զարգացման որոշ բարձրութիւն մը ունին. բոլորն ալ իրենց հասուն վիճակին մեջ հասած են երկշերտ գունդի վիճակին: Իր հասուն վիճակին մեջ լեցուն կամ պարապ գունդի աստիճանին վրա մնացող կենդանի գոյութիւն չունի հիմա. ամեն նախնական կենդանական անհատ միաբջիջեն բազմաբջիջ դառնալու ատեն կանցնի միշտ այդ նախորդ աստիճաններեն, բայց այդ աստիճաններուն վրա կանգ չառներ:

Տարակույս չկա, որ այս համեմատաբար ավելի բարձր աստիճանի կենդանիները սերած են ավելի նվազ բարձր աստիճանի գոյութիւն ունեցած կենդանիներե և անոնց կատարելագործումն են: Այդ ավելի ստոր տեսակի եղած բազմաբջիջներուն սերունդները չեն դիմացած հազարավոր դարերու գոյութիւն կռվին մեջ՝ ավելի նվազ նպաստավորված ըլլալով, քան իրենց հաջորդող տեսակները: Եվ իրենցմե ալ որևէ հետք չէ մնացած երկրի շերտերուն մեջ, անշուշտ անոնց մերկ ըլլալուն պատճառով. ողջ թե մեռած՝ սնունդ են դարձած իրենցմե իսկ ծագում առած և ավելի նպաստավորված կենդանական տեսակներուն կամ քայքայված են:

Մինչև երկշերտ գունդի վիճակին հասնողներն ալ բնականաբար այդ հեռավոր անցյալներուն մեջ միայն մեր արդի եղած տեսակները ըլլալու չէին. անշուշտ կային նաև ուրիշ տեսակներ ալ եղածներուն նման կամ եղածներեն տարբեր, որոնց մեծ մասեն նմանապես հետք մը, հիշատակ մը չէ մնացեր երկրի շերտերուն մեջ նորեն նույն մերկ ըլլալուն պատճառով:

Մերկ չեղող տեսակներեն հոդային ամենեն խորին խավե-

րուն մէջ մնացած են բազմաթիւ պատյաններ, խեցիներ, որոնք արդի իրենց ցեղակիցներու պատյաններէն հիմնական տարբերութիւն մը չունին, թեև ավելի երկրորդական կետերու մէջ հաճախ շատ հետաքրքիր անցողիկ տարբերակներ կներկայացնեն եղած տեսակներուն:

Ինչպես միաբջիջները, այնպես ալ այս նախնական բազմաբջիջները կապրեին միայն ջուրերուն մէջ. ջուրեն դուրս կյանքը դեռ չէր դիմանար տաք ու լերկ ժայռերուն վրա, կիղիչ արևին տակ. բույսերն ալ դեռ իրենց նախնական աստիճաններուն վրա էին և նորեն ջրերուն մէջ, շատ-շատ ջրերուն եզերքը անմիջական:

Ուրեմն նախնական բազմաբջիջ անվանածնիս երկչերտ գունդի աստիճանին միայն հասած արարածներ են: Բջիջային երկու չերտե կազմված տոպրակ մը ըստ էութեան. տոպրակը ունի մեկ բերան մը. բայց այդ բերնեն զատ երբեմն կրնա ունենալ նաև քանի մը ավելի փոքր անցքեր ջրերուն մուտքն ու հոսանքը դյուրացնելու համար:

Նախնական բազմաբջիջներուն մեծ մասը պատենավոր են: Պատյանը աղվոր պաշտպանութիւն է և ատոր համար ալ կենդանին կքաշե ինքն իր վրա, բայց ատով իսկ կավելցնե իր ծանրութիւնը և ջուրերուն մէջ ազատ մնալ չի կրնար. կա՛մ հատակը պիտի իջնեն հարկադրաբար, կա՛մ փակչին ցցված ժայռերուն:

Գետնին ու ժայռերուն ամրացած կենդանին, որ կապրի ջուրերուն մէջ, կրնա աճիլ, կրնա գործել, կրնա զարգանալ իր մարմնի բոլոր կողմերովն ալ, բացի գետնին կամ ժայռին փակած մասեն: Իր մարմնին այս կամ այն կողմը հատուկ նպաստավորված չէ, ինչպես և հատուկ խանգարիչ արգելք մը չունի գարգացման. հետևանքը կըլլա, որ կենդանին ընդհանուր առումով կաճի իր ուղղահայաց առանցքին շուրջը ամեն կողմեն հավասարապես, այսինքն՝ կստանա բաժակի, ծաղկի, ամանի նման ձևեր և կդառնա ծառ ու ծառի ճյուղեր՝ սերունդ առ սերունդ պատյաններով իրարու փակած մնալով: Այսինքն՝ իր աճելիութեան մէջ տիրողը բուսականութեան մեջն ալ տիրող ձևեր են, ուր նույնպես ամեն կողմի անարգել հավասարութեամբ և նույն դեպի լույսի տենչանքով բույս անհատը կզարգանա ուղղահայաց առանցքի մը շուրջը

ամեն ուղղութեամբ և՛ ամբողջը, և՛ մասերը՝ ճյուղ ու ոստեր, ծաղիկ ու պտուղ: Տեսքի ու կյանքի այս ընդհանրութիւնն է պատճառը, որ նախնական բազմաբջիջները կարելի է անվանել բույս-կենդանիներ:

Պատյանն ու քարերուն վրա ամրանալը կզրկեն կենդանին տեղափոխվելու կարողութենեն: Անոնցմե մեկ մասը միայն իր սաղմնային զարգացման ընթացքին, երբ դեռ ամրացած չէ տեղ մը, թեթև ու տկար տեղափոխութիւն մը ունի: Իսկ հասուն վիճակի մնջ տեղափոխութեան ատակ մնացողները այն նախնական բազմաբջիջներն են, որոնք պատյան չեն արտադրեր իրենց չուրջը և իրենց ավելի չարժունակ ըլլալուն պատճառով ալ կենդանական իրենց ճյուղին ամենեն զարգացած ու բարձր տեսակները կներկայացնեն:

Բազմաբջիջ նախնական կենդանիները կենդանաբանութիւնը կբաժնե երկու ճյուղի՝ սպունգազգիներ և խոռոչընդներ:

Սպունգազգիները իրենց չերտային զարգացման տեսակետեն բան մը ավելի են, որովհետև ունին իրենց երկու չերտերուն մեջ միջնաշերտ մը, որ չաղախված է մյուս երկու չերտերուն հետ և միակ պատ մը կկազմե: Խոռոչընդերները չունին այդ միջնաշերտը, բջիջային միայն երկու չերտե կազմված պատ մըն է իրենց մարմինը. բայց իրենց մյուս կազմութեամբը շատ ավելի բարդ են ու զարգացած:

Ուրեմն արդի գոյութիւն ունեցող նախնական բազմաբջիջ կենդանիներու ամենեն վարի ճյուղը կներկայացնեն սպունգազգիները:

II. ՍՊՈՒՆԳԱԶԳԻ

Սպունգազգիները կապրին միշտ ծովերու մեջ ու ժայռերուն փակած. իրենց միջնաշերտին բջիջները կա՛մ կիր կարտադրեն, կա՛մ սիլիզ, որ ամրութիւն կուտա սպունգազգիներու անհատին և անոնց համախմբումներուն:

Ավելի պարզ է կիր արտադրող տեսակներուն կազմը. և ամենեն տիպիկն է օլինթուս[10] ըսվածը: Երկու-երեք սանտիմետր

մեծութեամբ տանձաձև տոպրակ մըն է, որ իր վարի մասով՝ տանձին կոթովը՝ փակած է գետնին: Վերի մասը լայն անցք մըն է՝ բերանը. ստամոքսը կողմնակի բազմաթիվ ու կանոնավոր փոքր անցքերով կհաղորդակցի դուրսի հետ. այդ անցքերով շարունակ թարմ ջուր ներս կուգա, մինչ գործածված ջուրը բերնեն կելլե դուրս:

Իր մարմնին պատը կազմված է երեք խավե, համապատասխան սաղմնային երեք շերտերուն: Միջնաշերտը քիչ մը ավելի հաստ է և կազմված է աստղաձև բջիջներե, որոնք թաղված են ժելատինային նյութի մը մեջ և կարտադրեն կրային ասեղներ, որոնք և կենդանիի մարմնին կարծրութիւն կուտան: Իսկ ներքնաշերտը մեկ շարք մը բջիջներ են, որ տոպրակին ամբողջ ներքին երեսը կըռնեն և բաժակաձև բջիջներ են. բաժակին երկու երրորդը բջիջի պրոտոպլազման է, որ իր կեդրոնեն դեպի դուրս կերկարե խիստ շարժուն թարթիչ մը: Այդ թարթիչներու միահամուռ տատանումն է, որ ջուրի կանոնավոր հոսանք մը կառաջացնե կողմնակի անցքերեն ներս և բերնեն դուրս: Իսկ բաժակի պրոտոպլազման այդ ջուրեն կառնե իրեն պետք եղած սնունդը:

Յուրաքանչյուր կողմնական անցք մեկ բջիջի մը մարմնին մեջեն անցած է, այսինքն՝ մեկ բջիջ մը իր մարմնով կներկայացնե անցքին պատերը և կծկումով մը կրնա փոքրացնել ջրին անցքը, երբեմն և բոլորովին խցկել:

Արտաշերտի մյուս տափակ բջիջներն ալ շատ կծկային են և սեղմվելով կրնան փոքրացնել ամբողջ տոպրակին ներքին պարունակութիւնը, կրնան և ամբողջ ջուրը մեջեն դուրս քամել:

Այս պարզ ու անհատական կերպարանքը ունի օլինթուսը մինչև երկու-երեք սանտիմետրի հասնիլը. անկե ետքը տոպրակը կսկսի ծալքեր տալ, քովընտի ճճեցումներ առաջացնել և մեկ անհատը հետզհետե կդառնա բազմաթիվ անհատներու խումբ մը, որոնք երկար ու կարճ ջրանցքներով իրարու կհաղորդակցին: Երբեմն կմնա միայն հին միակ բերանը, երբեմն, երբ շատ կմեծնա զանգվածը, կբացվին նաև նոր բերաններ. այսինքն՝ կդոյանա ամենաանկանոն կերպով իրարու կցված օլինթուսներու գաղութ

մը, որոնց միջնաշերտերուն արտադրած կիրովը ծովերուն հատակը դեղեր կկազմվին:

Կրի վոխարեն սիլիզ արտադրող սպունգազգիները իրենց կազմութիյամբ քիչ մը ավելի բարդ են. ջրի կողմնական անցքերը դարձած են կողովներ, որոնք քանի մը անցքերով դուրսի հետ կհարաբերին և կազմված են թարթիչավոր բջիջներե, որոնք դեպի ներս հոսանք կուտան ջուրին: Սակայն այս բոլոր բարդութիյուններուն մեջ արտաշերտն ու ներքնաշերտն է, որուն բջիջները զանազան ուղղութիյամբ կմասնագիտանան ու կհաստացնեն միջնաշերտը:

Ժելատինային զանգվածին մեջ արդեն կզանազանվին քանի մը տեսակի բջիջներ:

Աստղաձև բջիջներ, որոնք արտաշերտային ծագում ունին և նեղ անցքերով դեպի դուրս լորձունք կարտադրեն:

Ասեղ արտադրող բջիջները, որոնք կենդանիի մարմնին դիմադրականութիյուն տվող կմախքը կներկայացնեն:

Մկանային բջիջներ, որոնք օղակաձև դասավորված են ջրանցքներուն չուրջը կամ արդեն մկանային թելեր կներկայացնեն, որոնք իրենց կծկումներով ջրերուն ելն ու մուտը կղեկավարեն:

Ներքին ղայիին բջիջներ, որոնք մեկ կողմեն հարաբերութիյան մեջ են արտաշերտի զգայունակ բջիջներուն հետ, մյուս կողմեն ալ հաղորդակցութիյան մեջ են մկանային բջիջներուն հետ, այսինքն" տպավորութիյուններու փոխադրութիյան բջիջներ:

Եվ վերջապես սեռական բջիջներ:

III. ՊՈԼԻՊՆԵՐ

Նախնական կենդանիներու երկրորդ ճյուղը կկազմեն խոռոչընդերները, որոնց զանազան տեսակները կա՛մ գետնին ամրացած կենդանիներ են, որոնք պտկումներով կճյուղավորվին և ամբողջ գաղութներ կկազմեն. հաճախ կարտադրեն կիր իբրև պատյան և կներկայացնեն ծովերու հատակեն վեր ճյուղավորվող

քորալները, քորալի ժայռերը: Եվ կա՛մ առանց արտաքին պատյանի, իրարմե պոկած և իրարու փակած խմբումներ են ժայռերեն կախված: Կա՛մ կապրին անհատ կյանքով ծովուն հատակը կամ բույսերու վրա և ունին տեղափոխվելու կարողություն: Կա՛մ վերջապես ազատ ջուրերուն մեջ ապրող և ազատ շարժվող կենդանիներ են:

Գետնին փակած կամ գետնի երեսին վրա տեղափոխվող անպատյան տեսակները կկոչվին պոլիպ, իսկ ծովերուն մեջ ազատ շարժվող տեսակները կկոչվին մետուզ:

Այս երկու տեսակները, հակառակ իրենց վարած կյանքի տարբերության և առանց համեմատ ալ իրենց կազմի կրած տարբերություններուն, ոչ միայն ըստ էության միևնույն կազմությունը ունին, այլև այդ երկուքը իրարմե կծնին: Մետուզներուն ամբողջ մեծագույն մասը պոլիպի մը գաղութեն փրթած և առանձնացած պոլիպ մըն է, որ որոշ փոփոխություններու և հարմարումներու ենթարկվելով կվերածվի մետուզի: Մետուզներու քիչ տեսակներ կան, որ անմիջապես մետուզներե առաջանան, մետուզներու արտաղրած ձվիկներու և սերմնիկներու միացումեն: Եվ պտկումով բազմացող և իր մորմեն չբաժնվող, խումբերով ու ճյուղերով ապրող ու ջրերուն մեջ ծածանվող մետուզներ ալ կան՝ սիֆոնոֆորները:

Ավելի նախնականը պոլիպներն են:

Ամեն տեսակի պոլիպներուն հիմնական կազմը փոքրիկ պարկ մըն է մեկ-երկու սանտիմետր երկարությամբ, որուն վերի կողմեն բերանն է, և բերնին շուրջը բուսած են չորս, երբեմն վեց կամ ութը բազուկներ՝ մարմնեն շատ ավելի երկար, շատ զգայուն ու շարժուն, որ և որսորդություն կընեն և բռնած սնունդը բերնեն ներս կվարեն: Տոպրակին հատակի մասը կա՛մ վերջնապես ամբացած է գետնին, կա՛մ փակած-բռնած է գետինը և երբ տեղը փոխել ուզե՝ կթեքվի մեկ կողին վրա, իր բազուկներովը կամբանա գետնին և հատակը վեր բարձրացնելով տեսակ մը գլուխկոնծի կուտա, ուրիշ տեղ մը կիջնե ու կփակցնե հատակը գետնին և բերանն ու բազկուկները նորեն կուղղե վեր:

Պոլիպի մը մարմնին պատը, ըլլա տոպրակին, ըլլա բազկուկ-

ներուն, կազմված է երկու շարք բջիջե՝ ներքնաշերտն ու արտաշերտը, որոնք իրարու կկցվին այդ բջիջներու արտադրած բարակ շաղախով մը. այս պատճառով ասոնց ալ մարմինը միայն մեկ խոռոչ մը ունի՝ ստամոքսի խոռոչը, որուն բջիջները ամիոպային շարժումներով կբունեն ու կմարսեն խոռոչին մեջ գտնվող սնունդը: Իսկ արտաշերտին բջիջները, որոնք պարկին ու բազկուկներուն արտաքին երեսը կներկայացնեն, կծառային թե՛ սննդառության և թե՛ արտաքին աշխարհի հետ հարաբերվելուն:

Ուրեմն դուրսի ու ներսի շերտերուն մեջ աշխատանքի բաժանում կա, նույնիսկ հատուկ տեսակի դուրսի ազդակներեն լուրեր տվող բջիջներ ալ առաջացած են. բայց և այնպես աշխատանքի այս բաժանումը այնքան կտրուկ չէ, որ արտաշերտի բջիջները ներքնաշերտի սննդառական գործին չխառնվին: Եթե պոլիպին տոպրակը ձեռնոցի մատի մը պես դարձնելու ըլլանք՝ պոլիպի կյանքը իր ընթացքով կերթա. եթե պոլիպի մը մարմինը լայնքին կամ երկայնքին երկուքի բաժնելու ըլլանք՝ կյանքը կշարունակվի. կենդանին կջանա պակսած մասերը վերակազմելով իր հիմնական վիճակին վերադառնալու. իսկ եթե այնքան խոր կտրած ըլլանք, որ այլևս չկրնա ինքզինքը վերակազմել, բայց և այնպես կապրի, որովհետև արտաշերտին ու ներքնաշերտին բջիջներուն մեծագույն մասը դեռ նույն կարողություններն ունին. կարծես տեսակ մը որոշ դասավորություններ իրարու միացած միաբջիջներու գաղութներ ըլլան: Բայց այս բոլորի հակառակ զանազանվիլը սկսած է արդեն և շատ զգալի չափերով նախ երկու շերտերու բջիջներուն միջև, երկրորդ ալ՝ արտաշերտի բջիջներուն զանազան անհատներուն միջև:

Ներքնաշերտի բջիջները շատ ավելի խոշոր են և շատ ավելի մեծ կորիզով. և ամեն մեկը դեպի ստամոքսի խոռոչը երկարած բարակ մտրակ մը ունի շարժուն և քիչ մըն ալ իր բաց երեսը փոփոխության է ենթարկված, մաշկի նման թեթև բան մըն է առած վրան: Մինչ արտաշերտի բջիջները անհամեմատ ավելի փոքր են, 10-15 անգամ ավելի փոքր, և դուրսի երեսները ավելի թանձրացած են պաշտպանության համար: Եվ այս շարքի բջիջները նույն արժեքի չեն: Թեև մեծագույն մասը դեռ մեծ զանազանություն մը

ցույց չեն տար և միակերպ կկատարեն բջիջի մը բոլոր պարտավորութիւնները, բայց ատոնց քովը որոշ բջիջներ կան, որոնք կա՛մ իրենց ամբողջ կազմովը, կա՛մ իրենց կազմին մեկ մասովը հատկապես հարմարած են այս ու այն արտաշերտային մասնաւոր աշխատանքին և ատոր համեմատ ալ ձևափոխված են:

Այսպես արդեն առաջացած են.

Գեղձային բջիջներ, որոնք արտաքուստ բոլորովին նման են իրենց հարևան բջիջներուն, բայց իրենց մեջը հյութ մը կպատրաստեն և կարտազրեն դուրս:

Կես-մկանային բջիջներ, որոնց արտաքին երեսը բոլորովին նման է մյուս սովորական բջիջներուն, բայց իրենց խորքի մասը, երկու շերտերը իրարու կապող շաղախին վրա, հետզհետե վերածված է թելային կազմի՝ հարմարվելով շարժողական ծառայութեան:

Որոշ բջիջներ արդեն ամբողջովին դարձած են մկանային թել և քաշված են ներս արտաշերտի մյուս բջիջներուն ետևը, փակած շաղախ մասին և իրենց կծկումով կծառայեն միայն շարժումներու:

Ուրիշ բջիջներ իրենց խորքի մասը նույնպես վերածած են թելի մը ու թելիկներու, բայց ոչ կծկային. իրենք չարժուում չեն կատարեր, բայց կերթան կվերջանան մկանային թելի մը վրա և կարճ թել մըն ալ իրենց դուրսի երեսեն երկարած են դեպի արտաքին աշխարհը. այդ ծայրով կենթարկվին արտաքին աշխարհի ազդակներուն և իրենց ստացած գրգիռը կփոխանցեն մկանային թելին, որ կկծկվի ու շարժումը կկատարե:

Այս տպավորութիւններու փոխանցումին ծառայող բջիջներուն մեկ մասը նմանապես բոլորովին քաշված են ետ, արտաշերտին ետևը, իրենք արտաքին աշխարհի հետ անմիջական հարաբերութիւն չունին. իրենց առջևի մեկ երկարացումովը շոշափման մեջ են արտաշերտային բջիջի մը հետ, իսկ իրենցմե երկարող թելերով շոշափման մեջ են մկանային թելերու հետ:

IV. ՄԵՏՈՒԶՆԵՐ

Մետուզները ընդհանրապես թասակի ձև ունին. վերի ժելատինե մասը կանվանենք հովանոցակ. այդ ժելատինե զանգվածին վրայի ու տակի երեսը պատած է չերտ մը արտաշերտի բջիջներով. հովանոցակին ճիշդ մեջտեղն է ստամոքսը, որուն բերանը կբացվի դեպի վար՝ երբեմն երկարելով թասակի տակի երեսեն ալ վար: Թասակի շուրջի եզերքեն թաղանդ մը կկախվի, որ քող կանվանենք, այլև կերկարին սովորաբար չորս բազուկներ, երբեմն և ավելի: Ստամոքսեն ստամոքսային խողովակներ կերկարին բազուկներուն մեջը. ստամոքսեն ստամոքսային այդ ճառագայթումները թասակի եզերքին վրա շրջանաձև ստամոքսային խողովակով մը կմիանան իրարու:

Հովանոցակի ժելատինին մեջը մկանային բջիջներ կան դեռ ամիոպային վիճակով կամ արդեն թելացած: Հովանոցակի հանկարծական ընդհանուր կծկումներովն է, որ կկատարե կենդանին իր տեղը փոխելու չարժումները. այդ կծկումները կկատարվին կիսամկան կամ լրիվ մկան բջիջներու ընդհանուր աշխատանքով. այդ մկանային բջիջները մասնավորապես շատ են հովանոցակի տակի երեսին վրա:

Շարժուն ու տեղափոխոխ կյանքը բնականաբար կնպաստե նաև ջղային բջիջներու չատացմանն ու զարգացմանը: Ջղային բջիջներու լրիվ երկու օղակ կազմված է թասակի եզերքին, որոնք իրենց երկարած թելերով հարաբերության մեջ են մեկ կողմեն մկան-բջիջներուն հետ, մյուս կողմեն ալ արտաքին գրգիռները բռնելուն հարմարված բջիջներուն հետ: Կան տեսակներ ալ, ուր այդ միջնորդ ու փոխանցող բջիջները, փոխանակ շրջանակ մը կազմելու, կկազմեն վեց կամ ութը իրարմե անջատ խմբումներ հովանոցակի եզերքին վրա:

Իսկ արտաքին գրգիռները բռնող բջիջները արդեն սկսած են մասնագիտանալ, խմբվիլ ու կազմել առանձին զգայարաններ: Այդ առանձնացած զգայարանները թասակի եզերքին վրա ազատ կախված մարմնիկներ են: Երբեմն կապույտ ու կարմիր գույնի նյութեր պարունակող բջիջներ են լույսի ազդեցության հարմա-

րած. երբեմն նույնիսկ աչքի բյուրեղ-հյութը առաջացուցած են իրենց մեջ: Կամ կախվածները փոքրիկ ամանիկներ են, որոնց մեջ բջիջները կամար կկապեն և անոնց մեջտեղը ազատ ինկած են քանի մը կրային հատիկներ. հավանորեն հավասարակշռութեան զգայարան են. նայելով, թե կենդանիի ստացած դիրքին հետևանքովը կրի հատիկները կամարի ո՞ր կողմի բջիջներուն կդպչին՝ ատոր համեմատ ալ կենդանին իր դիրքը կշտկե: Աչքը և հավասարակշռութեյան այդ զգայարանքը միաժամանակ չեն պատահիր միևնույն տեսակին վրա. կա՛մ մեկը, կա՛մ մյուսը՝ նայելով տեսակին:

Մետուզներու ակալեֆ կոչվող ավելի բարձր մեկ տեսակը նաև զգայարանական տեսակետեն քիչ մը ավելի բարձր է: Ստամոքսային ճառագայթաձև խողովակներուն ծայրը թեթև մը դուրս կերկարի թասակի եզերքեն, այսինքն՝ կբռնե բազուկներուն տեղը, բայց անշարժ է. և այդ կարճուկ բազուկներուն ծայրը զգայարանքն է, որուն բջիջները գունանյութ ունին և նախնական աչք մը կներկայացնեն: Թասակեն դուրս երկարած այս մասը իր արմատին մոտիկ թաղանդի ծալք մը ունի. երբ կենդանին կծռի՝ թաղանդը կդպչի դուրս ցցված մասին վրա գտնվող մաշկերուն, որով և կղեկավարվի կենդանիին հավասարակշռութեյունը: Իսկ այդ կախված թաղանդին վրա, թասակին միացած տեղը փոսիկ մը կա, որ հոտառութեյան հետ կկապեն և կանվանեն հոտառական փոսիկ:

Սեռական բջիջները ներքնաշերտեն դաղթած բջիջներ են, որ կուգան, կհավաքվին առանձին զանգված մը կազմելով հովանոցակին տակը, ուրկե, երբ կհասունանան, կթափին ջուրը:

Թե՛ պոլիպներու և թե՛ մետուզներու շատ քիչ տեսակներուն հատուկ եղող, բայց շատ հետաքրքիր մասնավոր տեսակի բջիջի մըն ալ կհանդիպինք, որ կենդանիի ինքնապաշտպանութեյան կծառայե, իբրև զենք: Կճան[11] բջիջներ կկոչվին ասոնք. արտաշերտի մյուս բջիջներեն ավելի խոշոր, իրենց դուրսի երեսին վրա ունին ցցված փուշ մը. փուշին տակը՝ բջիջի մարմնին մեջ, կծիկի պես փաթթված երկար թել մը՝ մեջը պարապ: Երբ արտաքին մարմին մը կդպչի փուշին, բջիջը կծկում մը կունենա և բացվող զսպանակի

մը պես դուրս կերկարե իր գալարված ու կծկված թելը և անոր միջովը դուրս կչպրտվի այրող հեղուկ մը, որ մահացու է փոքրիկ արարածներու համար: Փոքրիկ պոլիպներուն այդ այրող նյութին ազդեցությունը չատ զգալի չէ մարդուն համար, բայց մեծ մետուզներու և սիֆոնոֆորներու կճաններուն խայթը ուժեղ այրուցք ու ցավ կպատճառե նաև մարդուն:

Ինչպես գաղութ պոլիպները, այնպես էլ սիֆոնոֆորները, որոնք մետուզներու խմբումներ են, սովորաբար իրենց փունջին բաղադիր մասերուն մեջ կատանան աշխատանքի բաժանում մը. փունջի անդամներեն մեկը ստամոքսի դերը կկատարե գլխավորապես, մյուսը ավելի դիմադրական անդամ մըն է, երրորդը կդառնա սեռական աշխատանոց, երբեմն ավելի չատ տեսակի աշխատանքներու բաժանումով, երբեմն միայն երկու-երեք տեսակի, որով և կառաջանա սիֆոնոֆորի կամ փունջ-պոլիպներուն արտաքին ճյուղանման տեսքը, արտասովոր բույսի մը նման իր տերևներով, ծաղիկով ու պտուղներով:

Գ. ԱՐՏԱՇԵՐՏԻ ԲՋԻՋՆԵՐՈՒՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

I. ՇԱՐԺՈՒՆԱԿ ԵՎ ԱԶԴՈՒՆԱԿ ԲՋԻՋՆԵՐ

Նախնական բազմաբջիջներու մարմնին մեջ առաջացած զանազան տեսակի բջիջները աչքի առաջ ունենալով՝ կրնանք գծել կենդանական արտաքին շերտի բջիջներուն իրարմե աստիճանական զանազանումը և մասնագիտացումը:

Արտաշերտի բոլոր բջիջները նախ երեսն են, այսինքն՝ մեկ շարք մըն է և բոլոր բջիջներն ալ նույն են կազմով և միևնույն խառն դերը կկատարեն, որ է սննդառություն, որոշ հյութերու արտադրում, արտաքին ազդակներու ենթարկվիլ և որոշ շարժումներ կատարել:

Բայց չուտով ատոնց մեջեն որոշ բջիջներ ավելի կատարելա-

գործուէյուն մը ձեռք կբերեն անով, որ իրենց արտաքին մասը, մնալով նույնը իրենց դրացիներուն նման, իրենց խորքի մասը, այսինքն՝ ետևի ներքնաշերտին կամ երկու շերտերը միացնող շաղախին հարած մասը կդառնա ավելի շեշտված կերպով կծկային. ճիշդ այնպես, ինչպես որ միաբջիջներուն որոշ զարգացած տեսակներուն մեջ կծկայնուէյունը կշեշտվի անոնց այս ու այն մասերուն վրա:

Ուրեմն արտաշերտի բջիջներուն մեջ կառաջանան անհատները, որոնց հիմքի մասը քիչ-քիչ կդառնա թելային և կծառայե միայն կծկումի՝ բջիջի առջևի մասին թողնելով մյուս պարտավորուէյունները:

Այս վիճակին հաջորդող զարգացումը կըլլա այն, որ բջիջի խորքի մկանային մասը հետզհետե մեծնալով՝ բջիջի մեկ փոքրիկ մասը միայն կդառնա արտաքին աշխարհի հետ հարաբերող: Եվ այդ մասի փոքրացման հետևանքով դրացի բջիջները կմոտենան իրարու, մինչև որ մկանային բջիջի առաջին մասը այնքան կփոքրանա, որ բոլորովին կկտրվի արտաքին աշխարհի հետ կապ ունենալե, և դրացի բջիջները կկցվին իրարու. մկանային բջիջը կմնա արտաշերտի բջիջներուն ետևը, խորքը ու կդառնա ամբողջապես մկանային թելերե կազմված մկան-բջիջ մը, կպած միջչերտային շաղախին, որ կծառայե մկանի կատարելիք կծկումներուն իբրև հենարան:

Երբ այս տեսակ մկանային թելեր դարձած բջիջները իրարու կկցվին իրար աշխատակցելով լայնքով կամ երկայնքով, կստանանք մկանային հյուսք մը ավելի ուժեղ ընդհանուր շարժումներու համար. առաջացած է մկանային հյուսկեն:

Այս հյուսկենին մեջ բջիջները տուժած են իրենց մյուս կարողուէյունները և կկատարեն միայն մեկ աշխատանք մը՝ կծկվիլ ու բացվիլ: Մնունդը պատրաստ կստանան գլխավորապես ներքնաշերտի աշխատավորներեն: Նստած են մարմնին մեջ, ղուրսի աշխարհի հետ անմիջական հարաբերուէյենե կտրված և դարձած են հատկապես ու միայն շարժումի գործիք մը:

Բայց այդ շարժումները պէտք է կատարվին արտաքին ազդակներու պահանջին համեմատ. այդ արտաքին ազդեցուէյուն-

ներուն ենթարկվողը, այդ ազդեցութիւնները ստացողը կըլլան արտաշերտի արտաքին երեսին վրա մնացած բջիջները, որոնք հետզհետե կկատարելագործվին ու կնրբանան այդ ուղղութեամբ՝ դառնալով հատկապես ազդունակ բջիջներ:

Ազդեցութիւններու ենթարկվիլ, ազդեցութիւնները բռնել կնշանակե որոշ քիմիական կամ ֆիզիքական փոփոխութիւն մը կրել իր պրոտոպլազմային մեջ. այս փոփոխութիւնը, այս ներքին ցնցումը, այս ներքին ալիքը պետք է հասնի մկան-բջիջներուն, որ տեղի ունենա անոնց կծկումը:

Այդ ներքին ցնցումի բջիջե բջիջ փոխանցումը կկատարվի հպումով. ազդունակ ու չարժունակ բջիջները սկիզբը իրենց մեկ կողմովը իրարու դպած կըլլան. իսկ երբ մկան-բջիջը հետզհետե մարմնին խորքը քաշվելով միջներտային շաղախին կամրանա, եզերքին վրա մնացած ազդունակ բջիջը կպահե իր հպումը մկան-բջիջին հետ, իր մարմնին մեկ երկարացումը բարակ չերտով մը, և վերջապես բարակ թելի մը պես, միշտ անոր կպած պահելով, ինչքան ալ վերջինս եզերքեն հեռանալու ըլլա:

Այսպեսով կստացվի կենդանական չարժում մը կատարելու համար առաջին հիմնական աշխատանքի բաժանումը. կենդանին ունի նախ ազդունակ բջիջ մը, որուն դերն է արտաքին տպավորութիւնները բռնել ու հաղորդել չարժունակ բջիջի մը, և երկրորդ՝ այդ չարժունակ բջիջը, որուն դերն է իրեն հասած տպավորութեան մղումով կատարել կծկում մը:

Եվ այլևս այս երկու տեսակի կենդանական տարրերու մշտական ու կանոնավոր գործակցութեամբն է, որ կկատարվին կենդանական չարժումները:

II. ԵԶԵՐԱՅԻՆ ՈՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱԶԴՈՒՆԱԿ ԲՋԻՋՆԵՐ

Բայց զարգացումը կանգ չառներ կենդանական աշխատանքի բաժանման այս առաջին հիմնական աստիճանին վրա: Շուտով ատոր կմիանա ազդունակ բջիջներուն վրա կատարվող նոր աշխատանքի բաժանում մը:

Վերը նկարագրված ձևով եզերքին վրա նստած ազդունակ բջիջ մը կրնա շարժման մեջ դնել մեկ մկան-բջիջ մը, որուն հետ որ իր թելովը հպում ունի: Բայց կենդանիի զարգացման և կատարվելիք շարժումներու ուժեղացման հետ անհրաժեշտ կդառնա, որ մեկ կետե մը եկած գրգիռեն մեկե ավելի մկան-բջիջներ միաժամանակ կծկվին, և հետզհետե ավելի ու ավելի մեծ խումբերով շարժունակ բջիջներ միասին կծկվին: Ասոր համար անհրաժեշտ է, որ ազդունակ բջիջը իր թելեն ճյուղիկ մը հասցնե նաև երկրորդ մկան-բջիջին, երրորդին, չորրորդին. այսինքն՝ եզերային բջիջեն ներս երկարող թելը ճյուղավորվի ու վերածվի պրոտոպլազմիկ մազերու ու մազիկներու, որոնցմե ամեն մեկը հպում ունենա մկան-բջիջի մը հետ, ինչ որ իրոք հետզհետե տեղի կունենա:

Ինչքան ատեն որ ազդունակ բջիջը իր ստացած գրգիռը կհասցնե խումբ մը գրեթե միշտ միասին գործող շարժունակ բջիջներու, այս միջոցը կբավե. բայց երբ հետզհետե շարժումներու բարդացումով հարկ կըլլա, որ գրգիռը նույն կետեն քանի մը շարժունակ խումբերու միասին հասնի կամ անմիջապես իրարու ետևե, մեկ բջիջի մը թելին ճյուղավորումը շատ կբարդանա. մանավանդ երբ այդ շարժունակ բջիջային խումբերը մարմնի տարբեր մասերուն մեջ են նստած՝ մեկ բջիջի մը թելեն պահանջված այդ բոլոր խումբերուն հասնիլն ու ամենուն հասնիլը կդառնա ուժերու մեծ սպառում. պետք է աչքի առաջ ունենանք, որ արտաշերտի ամեն մեկ ազդունակ բջիջ շատ մը խումբերուն ալ հասնելու և ամենուն ալ իր գրգիռը փոխանցելու ճիգը պիտի ընե:

Կյանքը գտած է ավելի տնտեսական և ավելի պարզ ճամբան աշխատանքի երկրորդ բաժանումով մը: Եզերային ազդունակ բջիջները իրենց կրած փոփոխությունը այլևս իրենք չեն, որ կտանին մինչև մկանային բջիջները. իրենք կտանին իրենց գրգիռը երկրորդ տեսակի ազդունակ բջիջներու, որոնք թեև ծնունդն են եզերային ազդունակ բջիջներու, բայց այլևս կարիք չունին եզերքին վրա մնալու և մկան-բջիջներուն պես կանցնին արտաշերտին ետևը, մարմնին ներսը. եզերային բջիջներու թելերուն մազային-ները կուգան, կհպին ու կվերջանան այս ներս քաշված ազդունակ բջիջներու մազերուն ու մազիկներուն վրա: Այսպեսով բազմաթիվ

եզերային բջիջներեն ստացված գրգիռները այս ներքին ազդունակ բջիջները իրենց երկար թելով և այդ թելին հյուղավորումովը կփոխանցեն որոշ մկանային խումբերու բջիջներուն, որոնց հետ հպման մեջ են:

Հետևանքը կըլլա աշխատանքի կիսում և երկու տեսակի ազդունակ բջիջներու զանազանումը՝ եզերային ազդունակ բջիջներ և կեդրոնական ազդունակ բջիջներ: Առաջինները արտաքին ազդեցութիւններեն փոփոխութեան մը կենթարկվին և այդ ազդեցութիւնը կհաղորդեն կեդրոնական ազդունակներուն, ատկե անդին դեր չունին. կեդրոնական ազդունակները այդ բազմաթիվ եզերայիններեն ստացված տպավորութիւններուն ուղղութիւն կուտան դեպի որոշ մկանային խումբեր ու շարժումը կպարտադրեն:

Առաջին աշխատանքի բաժանումով կենդանական շարժումը գլուխ բերելու համար կաշխատին երկու տեսակի բջիջներ՝ ազդունակ ու շարժունակ բջիջներ:

Հիմա այս երկրորդ աշխատանքի բաժանումով շարժում մը կատարելու համար կգործակցին երեք տեսակի բջիջներ՝ եզերային ազդունակ, կեդրոնական ազդունակ և շարժունակ բջիջներ:

Այս համբով եզերային մեկ կետե մը ստացված գրգիռը անհամեմատ ավելի մկան-բջիջներու հասնիլ կրնա, առանց ատոր համար անհրաժեշտ ըլլալու, որ ամեն եզերային բջիջ չափազանց երկար թելեր ղրկե. տնտեսված ուժերը կգործադրվին գրգիռները ստանալու կատարելագործումին ու նրբացումին վրա:

III. ԶԳԱՅԱԿԱՆ ԵՎ ՇԱՐԺԻՉ

Երեք բջիջներով շարժումը անշուշտ կատարելագործութիւն մըն է երկու-բջիջ շարժումին հետ համեմատած, բայց դեռ շատ սահմանափակ գործիք մըն է. քանի մը որոշ եզերային խումբեր կկապե քանի մը որոշ մկանային խումբերու:

Մինչդեռ հետզհետե կյանքը կպահանջե, որ այդ որոշ քանի մը մկանային խումբերը գործել կարողանան ոչ միայն որոշ և ընդհանրապես իրարու մոտիկ սահմանափակ կետերե եկող

գրգիռներով, այլև տարբեր ու իրարմե հեռու շատ մը եզերային կետերե և վերջապես գրեթե բոլոր եզերային կետերե եկող ազդեցութիւններով: Հետզհետե կ՚անքը կպահանջե, որ որոշ կետե մը եկող դրդումը ոչ միայն որոշ և սովորաբար իրարու գործակից քանի մը մկանային խումբեր շարժման մեջ դնել կարողանա, այլև իրարմե զատված և տարբեր շարժումներու հատկացված մկանային խումբեր գործի մղել կարողանա. և վերջապես նույնիսկ պետք եղած բացառիկ պարագաներուն բոլոր մկանային խումբերուն հասնիլ ու շարժել կարողանա: Այսինքն՝ կատարելագործումը կպահանջե որ վերջ ի վերջո եզերային բոլոր բջիջներեն կեդրոնը հասնող գրգիռները երթալ կարողանան բոլոր մկանային բջիջներուն:

Ասիկա անկարելիութիւն մըն է, ինչքան ատեն որ կեդրոնական ազդունակ բջիջները կապված են միայն որոշ խումբ մը մկաններու, պետք է կապված ըլլան բոլոր մկաններուն. այս հսկայական աշխատանքը թեթևցնելու և ավելի տնտեսորեն ավելի բազմազան կապակցութիւններու հասնելու համար կկատարվի երրորդ աշխատանքի բաժանում մը:

Կեդրոնական ազդունակ բջիջներեն կծնի կեդրոնական նոր սերունդ մը բջիջներու, որոնք եզերային բջիջներուն հետ անմիջական կապ չունին և մտած են իրենց ծնող ազդունակ կեդրոնական բջիջներուն և մկաններուն միջև: Ծնող ազդունակ կեդրոնական բջիջները ուրեմն այլևս կապ չունին մկանային բջիջներուն հետ: Կստացվի երկու տեսակի կեդրոնական բջիջներ. մեկ տեսակը, որ կապված է բազմաթիվ եզերային բջիջներու և կապված չէ անմիջապես որևէ մկանային բջիջի. երկրորդ տեսակը, որ անմիջական որևէ կապ չունի եզերային բջիջներու հետ և կապված է հպումով մկաններուն: Առաջին տեսակը կանվանենք զգայական կեդրոնական բջիջ, երկրորդ տեսակը կանվանենք շարժիչ կեդրոնական բջիջ:

Եզերային բջիջե մը գրգիռը անոր թելովն ու մազայիններովը կփոխանցվի զգայական կեդրոնական բջիջներուն. ասոնց մազայիններու միջոցով գրգիռը կանցնի կեդրոնական բջիջներու թելերովն ու մազայիններովը գրգիռը կհասնի մկանային բջիջներուն:

Առաջին աշխատանքի բաժանումով կենդանական չարժում մը կատարվելու համար պետք է գործակցեին երկու տեսակի բջիջ՝ ազդունակ բջիջ մը և չարժունակ բջիջ մը:

Երկրորդ աշխատանքի բաժանումով կենդանական չարժումը կկատարվի երեք տեսակի բջիջներու աշխատակցությամբ՝ եզերային ազդունակ, կեդրոնական ազդունակ և չարժունակ բջիջներ:

Երրորդ աշխատանքի բաժանումով կենդանական չարժումը պլուխ գալու համար գրգիռին հոսանքը պետք է անցնի չորս տեսակի բջիջներով՝ եզերային բջիջ, կեդրոնական զգայական բջիջ, կեդրոնական չարժիչ բջիջ և մկանային բջիջ:

Արդի գոյություն ունեցող կենդանական թագավորության մեջ չատ քիչ դեպքեր կան, ուր եզերային բջիջեն եկած գրգիռը միայն մեկ կեդրոնական բջիջի մը մեջով հասնի մկանին. երեք-բջիջ դրությունը անկատար կամ տկար վիճակ մըն է, անցողիկ վիճակ մը: Կենդանական աշխարհին մեջ տիրապետողը չորս բջիջի սիսթեմն է, ուր եզերային գրգիռը մկանին հասնելու համար պետք է անցնի երկու տեսակի կեդրոնական բջիջներու մեջով՝ զգայական ու չարժիչ բջիջներով:

IV. ՋՂԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս բոլոր պարագաներուն մեջ բուն չարժումը կատարողը միչտ վերջին տեսակի մկան-բջիջներն են: Մնացած երեք տեսակի արտաչերտային բջիջներուն դերը արտաքին ազդեցություններուն ենթարկվիլն է և իրենց կրած փոփոխությունը իրար հաղորդելն է մինչև մկանը:

Արտաքին ազդեցություններուն ենթարկվող և իրենց կրած փոփոխությունը մինչև մկանը հասցնող այս երեք տեսակի բջիջները ընդհանուր անունով մը կանվանենք ջղային բջիջ կամ նոյրոն[12]: Եզերային բջիջները, կեդրոնական զգայական բջիջները և կեդրոնական չարժիչ բջիջները ջղային բջիջներ են. ջղային բջիջներուն երեք հիմնական տեսակներն են:

Ջղային բջիջներուն այս երեք տեսակները, ինչպես և անոնց ապագա ենթաբաժանումները թեև ունին իրարմե աչքի լյնող արտաքին ձևի տարբերություններ, բայց ըստ էության նման են իրար:

Յուրաքանչյուր ջղային բջիջ բաղկացած է երեք որոշ մասերե: Նախ՝ բջիջին հիմնական մարմինը, որ քիչ մը մեծ կամ քիչ մը փոքր պրոտոպլազմայի զանգվածիկ մըն է, որուն մեջ կգտնվի նաև բջիջին կորիզը: Երկրորդ մասը բջիջեն հեռացող թել մըն է պրոտոպլազմիկ և ավելի կամ նվազ երկար, որ իր ճյուղավորումներով և անոնց մազայիններով հպումի կմտնե ուրիշ բջիջներու մազայիններուն հետ. այս բացառիկ երկար թելը կանվանենք բջիջին առանցք-թելը: Այս առանցք-թելեն զատ բջիջի մարմնեն ամեն ուղղությամբ կերկարին ավելի կարճ ճյուղեր ու ճյուղիկներ, որոնք նմանապես կվերջանան մազայիններով և հպումի մեջ են ուրիշ բջիջներու մազայիններուն հետ. բջիջի մը այս ամեն ուղղությամբ ղրկած ճառագայթներն ու ճյուղավորումները կկազմեն բջիջին երրորդ մասը:

Առանցք-թելը գրգիռները բջիջեն դուրս տանողն է, իր գործունեությունը կեդրոնախույս է և ընդհանրապես դեպի ավելի հեռուները. բջիջեն ճառագայթող մյուս բոլոր ճյուղերն ու թելերը այդ բացառիկությունը չունին. գրգիռներ կբերեն, գրգիռներ կտանին և՛ դեպի ներս, և՛ դեպի դուրս: Անշուշտ որ անոնց մեկ մասը ավելի կեդրոնաձիգ կգործե, մյուս մասը՝ ավելի կեդրոնախույս իր դիրքին ու դերին բերումովը, բայց հստակ բաժանում մը դնել ու տեսնել չենք կրնար: Առանցք-թելը արդեն առանձնացած, մյուսներեն տարբերված և ավելի կատարելագործված բջիջային թել մըն է:

Եզերային ջղային բջիջներու խմբումները կանվանենք զգայարանք: Սկիզբները բոլոր եզերային ջղային բջիջները հավասար ազդունակ են բոլոր տեսակի արտաքին ազդեցություններու հանդեպ և անշուշտ շատ տկար, խառնակ ու անորոշ աստիճանով մը: Բայց կամաց-կամաց եզերային ջղային բջիջներու որոշ խմբեր մասնավորապես կհարմարվին այս կամ այն տեսակի որոշ գրգիռներ բռնելու, որոշ տեսակի արտաքին ազդեցություններու մասնա-

վոր կերպով ենթարկվելու: Այսինքն՝ հոս ալ կմտնե աշխատանքի բաժանում մը և կառաջանան տարբեր տեսակի զգայարանքներ. մեկ խումբը հպումներե կգրգռվի. հպումի հատուկ տեսակ մըն է հավասարակշռության զգայարանքը, մետուզներու վրա կտեսնենք արդեն առանձնացած աչքեր, այսինքն" հատկապես լույսեն գրգռվելու հարմարած ջղային բջիջներու խումբեր. հոս ու հոն կպատահինք նույնիսկ լսողական կամ հոտառական փոսիկներ, այսինքն՝ եզերային բջիջներու որոշ խմբեր, որոնք փոս մը կձևացնեն և նախնական ականջ մը կենթադրվին կամ հոտառության զգայարան: Ուրիշ խոսքով՝ կենդանական ամենեն վարի ճյուղերուն վրա ունինք արդեն ապագա զգայարաններուն բոլոր հիմնական նմուշները:

Կեդրոնական ջղային բջիջներու խմբումները կենդանիի մարմնին մեջ կանվանենք կանկլիոն: Ընդհանուր առումով այդ կեդրոնական խմբումներուն մեջ մեկ մասը զգայական բջիջներ են, մյուս մասը՝ շարժիչ բջիջներ. սովորաբար յուրաքանչյուր կանկլիոնի կեսը զգայական է, կեսը՝ շարժիչ:

Իսկ զգայարանքներեն դեպի կանկլիոնները, ինչպես և կանկլիոններեն դեպի մկանները գացող առանցք-թելերուն ավելի կամ պակաս հաստ տրցակները կանվանենք ջիղ:

Զգայարանքները, կանկլիոնները և ջիղերը միասին առած կկազմեն կենդանիներուն ջղային դրութիւնը, որ պոլիպներեն ու մետուզներեն սկսած արդեն ձև կառնե ամեն անգամ, երբ կչատնան կենդանիի հավաքական ճիգեր պահանջող շարժումներն ու տեղափոխությունը:

V. ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Միաբջիջի մը ունեցած հոգեկան կարողությունը անվաննեցինք գրգռականություն, այսինքն" արտաքին դրդումներու ազդեցության տակ կենդանիի շարժում մը կատարելը:

Բազմաբջիջ կենդանիներն ալ ունին այդ անհատական գրգռականությունը, քանի որ իրենք ալ ապրող միաբջիջներու

չարք մը, ապրող միաբջիջներու կուտակում մը կներկայացնեն. և այդ բջիջներեն ամեն մեկը կպահե որոշ աստիճանի իր անհատական գոյությունը ինչպես իր բուսական աճումի, այնպես ալ իր կենդանական կարողություններուն տեսակետեն:

Ամեն բջիջ առանձին առած կրնա գրգռվիլ ու շարժում մը կատարել. այսպես, օրինակ, սպունգազգիներուն ներքնաշերտին ամեն մեկ անհատ բջիջը, որ իրեն համար սնունդ կքաշե իր թարթիչին շարժումներովը և մոտեցած սնունդը կբռնե ու կյուրացնե իր մարմնի ամիոպային շարժումներովը:

Այս տեսակի շատ աչքի իյնող անհատական գրգռականություն մըն է կճան բջիջի կատարած աշխատանքը, ինչքան ալ տարօրինակ և բարդ ըլլա իր կատարածը. որովհետև մեկ բջիջի մը անկախ աշխատանքին արդյունքն է: Բազմաբջիջի մարմնին մեջ նստած կճան բջիջը կհամապատասխանե բարդ կազմություն ստացած միաբջիջ ինֆուզորիի մը վիճակին: Դուրսեն գրգիռը ստացողը իր փշիկն է, դուրս ցատկողը իր գալարուկն է և դուրս նետածն ալ իր պատրաստած հյութն է: Իր հարևան սովորական բջիջներու գրգռականութենեն ունեցած անոր տարբերությունն այն է, որ շատ բացառիկ կերպով իր կատարած աշխատանքը օգտակար է հանրության և շատ արտակարգ ու ինքնահնար միջոցով մը կծառայե հանրության. բացառիկ տաղանդ մըն է, նոր գինքի մը հնարիչն ու գործադրողը, եթե ուզենանք մեր մարդկային նմանություններով խոսիլ:

Պայմանները սակայն կփոխվին, երբ այդ գրգռականությունը գլուխ բերելու համար գործին կմասնակցին քանի մը տեսակի բջիջներ, որոնցմե ամեն մեկը աշխատանքին մեկ որոշ մասը միայն կրնա կատարել և այնքան զանազանված է արդեն որոշ ուղղությամբ, որ գրգռականության մյուս կողմերը ինքը կատարել չի կրնար: Հիմա արդեն կենդանական գործունեությունը կներկայանա իբրև բջիջային շղթայի մը ընդհանուր աշխատանքին արդյունքը: Գրգռականության այդ շղթան կճևանա չորս օղակե, այսինքն՝ բազմաբջիջ կենդանին միաբջիջի մը ցուցադրած գրգռականությունը գլուխ բերելու համար գործի պիտի դնե չորս տեսակի բջիջ: Կենդանական չորս տեսակի բջիջներու գործակցու-

թյամբ կատարվող այս չատ ավելի բարդ և ուժեղ աշխատանքը այլևս չենք անվաներ դրգռականություն. կուտանք նոր անուն մը՝ անդրադարձություն, ըեֆլեքս:

Ուրեմն կենդանական անդրադարձություն ըսելով կհասկնանք. 1) Արտաքին ազդակներու բերած փոփոխություն մը եզերային բջիջներուն մեջ, 2) եզերային բջիջներու առանցք-թելերովը այդ փոփոխությունը, այդ ցնցումը կհասնի կեդրոնական կանկլիոն մը կամ կանկլիոններ, 3) կեդրոնական կանկլիոնին զգայական և չարժիչ բջիջներուն միջով դրգիռը կփոխանցվի մկաններուն և 4) Մկանային բջիջները կկծկվին, այսինքն՝ տեղի կունենա չարժում մը:

Ինչպես պարզ դրգռականությունը, այնպես ալ անոր այս չղթայավոր բարդ ձևը կկատարվի կենսանյութի ունեցած որոշ ֆիզիքական ու քիմիական հատկություններու հետևանքով, բնական անհրաժեշտությամբ և բնական միակերպությամբ: Նույն չափով և նույն ձևով ներգործող ազդակները, երբ եզերային նույն մասերը կգրգռեն, գրգիռը բնական կերպով միևնույն չղթայական կապակցությամբ կհասնի միևնույն մկաններուն, որոնք և կկատարեն միևնույն չափի ու ձևի չարժումներ: Միևնույն ձևով ու միևնույն ճամբով կատարված բազմաթիվ կրկնությունները ավելի ևս կնպաստեն անդրադարձ չարժումներու միատեսակ ու միաձև դառնալուն:

Միաբջիջ կենդանին բազմաբջիջի վերածվելով՝ իր բոլոր կարողություններն ալ միաբջիջ աշխատանքեն կանցնին բազմաբջիջ գործակցության. և հետզհետե տեղի ունեցող աշխատանքի բաժանումն ալ կառաջացնե իրարու կապված և իրար լրացնող չղթայավոր գործակցություն:

Միևնույնը կկատարվի և իր հոգեկան կարողություններուն հետ. միաբջիջի դրգռականությունը կվերածվի բազմաբջիջի անդրադարձության:

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Ա. ՄԻՋՆԱԿ ԱՆՈՂՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ ԿԱԶՄԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի. ՄԱՐՄՆԻ ԽՈՌՈՉ

Նախնական բազմաբջիջ կենդանիներուն մարմինը ըստ էութեան պարկ մըն է. պարկը միայն մեկ պատ մը ունի ամեն կողմեն. և պարկին այդ պատը կազմված է բջիջային երկու շարքե՝ ներքնաշերտն ու արտաշերտը. այդ երկու շերտերուն միջև առաջացած է հաճախ միջնաշերտ մը, իբրև զոդող, իբրև հենակ, իբրև դիմադրության ուժեղացում. և բոլորը միասին միշտ իբրև մեկ պատ մը:

Արդ՝ հաջորդ զարգացման ընթացքին այդ միակ պատը իր ամբողջ երկարությամբ կճեղքվի երկու թերթի. ներքնաշերտը կբաժնվի արտաշերտեն՝ ամեն մեկը միջնաշերտի մաշկ մը հետը առած, որով երկու հիմնական շերտերուն մեջ կգոյանա ավելի կամ պակաս ընդարձակ պարապություն մը ամեն կողմեն գոց և դուրսի հետ հարաբերություն չունեցող. և ընդհանրապես շրջապատված ամեն կողմեն միջնաշերտային կազմությամբ: Այս ներքին գոց տարածությունն է, որ կանվանենք մարմնի խոռոչ:

Մարմնի խոռոչի առաջացումով մարսողական գործարանը, որ մինչև հիմա կենդանական միակ պատի ներքին երեսը կկազմեր, կդառնա առանձնացած պարկ մը կամ խողովակ մը՝ կախված մարմնի խոռոչին մեջ և իր բերնովը դուրսի հետ հաղորդակցող և ընդհանրապես նաև իր հակադիր ծայրովը դուրսի հետ կապված, որ կանվանենք սրբան[13]:

Այդ խոռոչին մեջ կծծվին մարսողական գործարանին միջոցով դուրսի միջավայրեն ներս առնված աննդատու հյութերը, որոնք կա՛մ ազատ կլողան այդ տարածութեյան մեջ, կա՛մ հետզհետե կմղվին հատուկ առաջացած խողովակներու մեջ ու կերթան անուղղը հասցնելու զանազան գործարաններու. և հոն գործածված ու անպիտանացած մասերը կբերեն նորեն մարմնի խոռոչը: Գործարաններեն կհեռացվին այդ անպիտանացած մասերը, բայց կհավաքվին խոռոչին մեջ մասամբ խառնված մաքուր աննդական հյութերուն, մասամբ ավելի մեկուսի և պետք է անպատճառ հեռացվին խոռոչեն, որ կենդանին չվնասվի: Այս պատճառով ալ խոռոչի առաջացման հետ կառաջանան նաև հատուկ արտաթորական գործարաններ, որ երիկամունք կանվանենք և որոնց ղերն է խոռոչին մեջ կուտակված և գործածութեյամբ վնասակար կամ ավելորդ դարձած մասերը ծծել և իրենց հատուկ անցքերովը մարմնեն դուրս հանել:

Այդ խոռոչին մեջ կախված կըլլան նույնպես սերմնիկ ու ձվիկ հասունցնող սեռական գործարանները, որոնք իրենց պատրաստած սեռական բջիջները կթափեն կենդանական խոռոչը, ուրկե առանձին անցքերով կամ ընդհանրապես արտաթորական անցքերուն միացած կարտահանվին:

Մարմնի խոռոչին մեջ կախված կըլլան նաև ջղային կանկլիոնները և այդ կանկլիոններեն դեպի զգայարաններն ու դեպի մկանները գացող ջիղերը: Իսկ մկանները կա՛մ կպած կըլլան կենդանական արտաքին պատի ներքին երեսներուն, կա՛մ փաթթված կըլլան խոռոչին մեջ կախված անոթներու ու տոպրակներու պատերուն:

Այսպեսով կազմութեյան մեծ տարբերութեյուններ ու բարդացումներ տեղի կունենան մարմնի խոռոչի առաջացման հետևանքով, որոնք միևնույն ժամանակ բնախոսական մեծ կատարելագործութեյուններ կներկայացնեն, որ միջնակ անողն կենդանիները կանջատեն նախնական անողն կենդանիներեն:

Բայց ինչքան ալ այս փոփոխութիւնները կենդանիի զարգացման տեսակետեն կարևոր ըլլան՝ հին վիճակի նոր կառարեալագործութիւնները կներկայացնեն. կենդանական աստիճանական բարձրացման համար նոր սկզբունք մը չեն բերեր: Առաջ մեկ տոպրակ մըն էր մեկ պատով, հիմա դարձան քանի մը ներքին տոպրակիկներ նույն տոպրակին մեջ: Տոպրակը ներքին խոր զարգացումներ ստացավ, բայց միևնույն հիմնական տոպրակն է:

Հարցը սակայն բոլորովին կփոխվի և իսկապես մեծ նորութիւն մը կուգա մեջ, երբ այդ ներքին բարդ կազմութիւնամբ տոպրակը իրմեն կծլի իր վրա հավելված մը, որ հետզհետե զարգանալով կդառնա իր ծնող մորը պես խոռոչավոր տոպրակ մը միևնույն ներքին բարդ կազմութիւնամբ. կստացվի իրարմե ծնած և սերտորեն իրարու կպած երկու տոպրակ. վերջը երեք, չորս և ավելի նույնատեսակ տոպրակներ իրենց ներքին գործարաններով իրարու հաղորդակից, իրար շարունակութիւն, իրարու օգնող և իրարմե օգտվող, և որոնք դուրսի աշխարհքեն առատ սնունդ ստանալու համար միևնույն բերանը ունին՝ առաջին մայր տոպրակին բերանը: Առաջացած է ավելի բարդ ու ավելի բարձր տեսակի ամբողջութիւն մը:

Միաբջիջներու իրարու կցումով առաջ էր եկած բազմաբջիջ կենդանին՝ կենդանական հիմնական տոպրակը: Կենդանական հիմնական այդ տոպրակներու իրարու կցումով կառաջանա ահա կենդանական ավելի բա՛րդ նոր աստիճան մը: Այս նոր ամբողջութեան բաղադրիչ յուրաքանչյուր հիմնական տոպրակը կանվանենք հատված և քանի մը կենդանական տոպրակներու միացումով կազմված կենդանին՝ հատվածական կենդանի:

Երկչերտ բազմաբջիջներու իրարու կպած ապրելու երևույթը նախնական բազմաբջիջներուն մեջն ալ կա. սիֆոնոֆորները ըստ էութեան խմբական կյանքով ապրող և իրարու կպած պոլիպներու փունջ մըն է: Բայց փունջը կազմող խումբին ամեն մեկ անդամը տարբեր դեր մըն է առած իր վրա, որով նույնակազմ հատվածներու կրկնութիւն չէ առաջացած. և երկրորդ՝ սիֆոնոֆորները

պատահականութեան բերած բազմատեսակ խաղերեն մեկն են բնութեան, որը կենդանական տեսակներու չարքի մը մեջ տևող ու ամրացող գիծ մը չէ դարձած և նոր կենդանական զարգացումներու ու բարձրացման չէ առաջնորդած:

Եվ այսպես ըլլալուն գլխավոր պատճառը այդ կենդանիներու ազատ տարուբերվող ապրելակերպն է ազատ չուրերուն մեջ, ուր կենդանականութեան դրդումը շատ թուլլ է. սիֆոնոֆորները իրենց կյանքով ու էութեամբ բույսերու շատ նմանող գոյութիւններ են: Մինչ Հատվածականութիւնը հատկապես կենդանականութեան կապված, կենդանականութենեն ծնող և կենդանականութեան զարգացմանը նպաստող երևույթ մըն է:

Առաջացած է ավելի դիմադրական չարժումներ կատարել կարողանալու պետքեն և առաջացած է ջրերուն հատակը տիղմերուն ու այլ թացութիւններուն մեջ չարժվելու պետքեն և դժվարութենեն, ուր մեծ է չուրեն անհամեմատ կարծր մարմիններու դիմադրութիւնը, խորդուբորդութիւնը և այլ արգելքներ: Բնական ընտրութիւնը այս դժվարութիւններուն հաղթելու և հատակին վրա տանելի դյուրութեամբ չարժվելու հնարավորութիւն տալու համար չարժվիլ ուզող էակներուն ճիպերը միացուցեր է նույնանման էակներու իրարու կցված մնալը նպաստավորելով:

Երբ բազմաբջիջ կենդանին բույսի մը պես ամրացած չէ կետի մը, առանց ջրերուն մեջ բարձրանալ ու լողալ կարենալու, կմնա ուրեմն գետնին երեսը և հոն պիտի փնտրե քարերուն ու տիղմերուն մեջ իր սնունդը՝ ապրող ու մեռած մարմիններ. ասիկա կնշանակե, որ պիտի քաչքչվի երկրին երեսը, պետք է չարժվի ու տեղը փոխե գետնին հենվելով, գետնին քսվելով: Շարժման այս նոր ձևը բնական կերպով կառաջացնե մարմնի որոշ ուղղութեամբ չարժվելու անհրաժեշտութիւնը. նախ որ հենվելու և քսվելու ատեն մարմնի որոշ մասերը ավելի կգործեն. և որքան միևնույն մասերը գործեն, այնքան կդյուրանա ու կարագանա տեղափոխութիւնը. մյուս կողմեն ալ կենդանին կշարժվի ուտելու համար, հետևաբար բերանն է, որ պետք է մոտեցնե որսին ու սնունդին. ան բերնով է, որ կփնտրե, բերնով կբռնե ու ներս կառնե, ուրեմն

բերանը և բերնին շրջապատող մասերն են, որ միշտ առաջ կերկարին, դեպի առաջ կշարժվին. մարմնին մնացած մասը բերնին ետևեն պետք է երկարի, բերնին ետևեն պետք է երթա: Այսինքն՝ կենդանին սկսած է սողալ ջրերուն հատակին վրա ու հողերուն մեջ. և սողալ կնշանակե մարմնի բերնին մասը առաջ երկարել և մարմնին մնացած մասը բերնին ետևեն քաշել:

Այս պայմաններուն մեջ, երբ մայր հատվածը իրմեն նոր հատվածներ կծնի առանց իր մարմնեն անջատելու, այդ նոր հատվածները այլևս չեն կրնար ամեն ուղղությամբ դասավորվիլ առանց կենդանիին շարժումները խանգարելու, պետք է դասավորվին անպայման միայն մեկ ուղղությամբ, պետք է փակչին մայր հատվածին ետևը և պետք է մեկ գիծ մը կազմեն բոլոր հատվածները իրարու հետ: Ազատ ջուրերուն մեջ տարուբերվող նախնական կենդանին ամեն ուղղությամբ կրնա իր վրա հավելումներ աճեցնել, մինչ սողալեն անհրաժեշտորեն կառաջանա հատվածներու մեկ շարքով դասավորումը և որ կդառնա հիմքը որդերեն սկսած կենդանական կազմին, քանի որ քալելն ու թռչիլը սողալեն կառաջանան, և արդեն բոլոր հաջորդ դիմացած ու գոյություն ունեցող կենդանական ճյուղերն ալ որդերեն կառնեն իրենց ծագումը և հատվածական որդի կազմվածքին կատարելագործությունները կներկայացնեն:

Եվ այդ մեկ գծի վրա կառարվող հատվածականությունը կգոյանա հետևյալ կարգով: Միահատված մայր կենդանին իր շարժման հակառակ ծայրին վրա կպտկի ու իր վրա կառաջացնե հավելված մը, որ հետզհետե զարգանալով կդառնա առաջին հատվածին համարժեք երկրորդ հատված մը: Այդ երկու հատվածներու միացման տեղին վրա կսկսի նոր աճմունք մը, որ հետզհետե զարգանալով կդառնա նոր հատված մը իր բոլոր գործարաններով, որ հարաբերության մեջ է թե՛ իրմեն առաջ և թե՛ իրմեն ետքը եղող հատվածի համապատասխան գործարաններուն հետ: Այս նոր հատվածի և առաջին հատվածի միացման կետեն սկիզբ կառնե հաջորդ հատվածը՝ տեսակ մը ետ քշելով իր ետևը մնացած նախորդ հատվածները: Եվ այս կերպով կառաջանան բոլոր հատվածները միշտ առաջին հատվածի և ամենեն

ետքը ծնած Հատվածի միացման տեղեն, որով ամենեն առաջ գոյացած երկրորդ Հատվածը հետզհետե կդառնա երրորդ, չորրորդ, հինգերորդ և վերջին:

Այս Հատվածականութիւնը սկիզբները կա ու կերևա նաև արտաքուստ. Հատվածները իրարմե զատված կըլլան փոսացումով մը, յուրաքանչյուր Հատվածի բովանդակութիւնը անջատված կըլլա մյուս Հատվածներու գործարաններեն ավելի կամ պակաս խոր գացող ներքին պատվարով մը կամ փատով մը: Բայց շատ անգամ ալ նույնիսկ միջնակ անողն կենդանիներուն վրա կկորսվին այդ արտաքին կարերն ու փոսերը, պատվարներն ու փառերը և ամեն Հատվածական արտաքին նշան, որով կենդանին կառնե նորեն մեկ տոպրակի մը ձևը, միայն շատ ավելի մեծ ու երկարավուն տոպրակ մը:

III. ԲԱԶՄԱԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Թե՛ միջնակ անողն կենդանիներու մեկ մասին, թե՛ Հաջորդ՝ ավելի բարձր անողն կենդանիներեն մեկ քանի տեսակներուն և թե՛ մանավանդ ողնավոր կենդանիներու մարմնին վրա Հատվածներեն մեկ-երկուքը կամ շատերը այնպես կմիանան իրարու և ընդհանրապես նոր պայմաններուն ու պահանջներուն Հարմարվելով այնքան խոր փոփոխութիւններ կկրեն իրենց արտաքին կերպարանքին վրա, որ Հատվածականութիւնը բոլորովին կաքողվի, կջնջվի: Բայց Հատվածականութեյան դրած կնիքը ընդմիշտ կապրի ու կմնա ներքին գործարաններու կազմութեյան վրա:

Բոլոր կենդանիներու ներքին գործարաններուն մեկ մասը իրենց այդ շատ ավելի զարգացած վիճակներուն մեջն ալ պահած են ուղղակի իրենց Հատվածական կազմը. այդ ավելի բարձր զարգացած վիճակը պարզապես արդյունք է Հատվածական նույնիմաստ ավելի պարզ գործարաններու միացման և շատ Հստակ կերպով ալ տեսանելի. այսպես է ոսկրավոր կենդանիներուն ողնաշարը. ողերեն ճառագայթող կողերուն ոսկորները և ատոնց կպած

մկաններըը, ինչպես և սիմպատիկ կանկլիոններուն[14] շարքը իրենց ջիղերով և ողնուղեղը իր արձակած ջիղերով:

Բայց երբեմն ալ գործարանին հատվածական մասերը այդպես հստակ ու կանոնավոր կերպով իրարմե անջատ չեն մնացած. եկած են իրարու մոտ, սեղմված են իրար և յուրահատուկ ձևեր առած, որոնց հասուն վիճակը միայն երթե աչքի առաջ ունենանք՝ դժվար է հատվածականության հետքեր գտնելը. բայց երբ անոնց առաջացումը կդիտենք իրենց սաղմնային զարգացման ընթացքին, իսկույն անվիճելի կդառնա նաև անոնց հատվածական ծագումը, ինչպես, օրինակ, երիկամունքներն են, արյան անոթները, սերմնարանն ու ձվարանը, այդպես ալ գանգին կազմը և իր պարունակած ջղային դրությունը:

Մինչնակ անողն կենդանիներեն սկսած բոլոր կենդանիներու գործարանական կազմին վրա, որ ըսել է՝ կենդանիի ամբողջ կազմին վրա դրած է հատվածականության կնիքը. բոլոր գործարանները արդյունք են բազմակրկնության:

IV. ԵՐԿԴԻՈՒԹՅՈՒՆ

Սողացող ապրելակերպը բացի միաշար հատվածականութենեն և գործարաններու բազմակրկնութենե կառաջացնե նաև կենդանական մարմնին որոշ ու մնայուն կողմեր ունենալը:

Սողալու ատեն շարժումի դյուրացում, ուժեղացում և արագացում կստացվի, երբ միշտ մարմնին միևնույն մասերը կծառայեն գետնին հենվելուն, գետնին քսվելուն. կենդանին կսողա միշտ իր մարմնի նույն մասին վրա, իր մարմնի նույն երեսին վրա. ասոր հետևանքը կըլլա այդ երեսի մկաններուն զարգացումը, խտացումը և որոշ դասավորումը. այդպես ալ շարժման նպաստող կողմնական այտուցքներու և մազերու առաջացումը և շոշափական բջիջներու ավելի հաճախական գործածությունը: Մինչդեռ կենդանիին դեպի վեր նայող երեսը այդ աշխատանքներուն անհամեմատ ավելի նվազ չափով կմասնակցի և ավելի անմիջական շփումը կկրե օդին, լույսին ու արևի ջերմության:

Սողալու ատեն գետնին քսվող կողմը կենդանիին կանվանենք փոր, իսկ ատոր հակառակ կողմը՝ կռնակ. որով կենդանին կստանա փորի ու կռնակի երեսներ. կըսենք նաև տակի ու վրայի երեսներ:

Երբ խողովակաձև մարմին մը միշտ միևնույն երեսին վրա կսողա և միշտ իր մարմնի միևնույն մասը կդարձնե երկնքին, արդեն ատով իսկ կառաջանան երկու կողմնակի երեսներ, երկու կողեր. և այդ երկու կողմնական երեսները բոլորովին նույն ու նման պայմաններու մեջ են և բոլորովին նույն ազատութեամբ և նույն հավասարութեամբ կրնան գործել և ընդհանուր առումով կզարգանան համաչափ: Եվ քանի որ նույն պայմաններուն տակ նույն աշխատանքները կկատարեն՝ կառաջացնեն նաև միևնույն դերի ու ձևի գործարաններ. և ասոր հետևանքը կըլլա սողացող կենդանիին և սողացող կենդանիներեն իրենց ծագումը առնող կենդանիներուն երկդիութիւնը: Այսինքն՝ եթե կենդանիին մարմնին երկայնքովը կռնակի ճիշդ մեջտեղի գծով հատում մը անցընելու ըլլանք՝ մարմինը կբաժնվի երկու հավասար, երկու իրարու նման կեսերու: Երկու կեսերն ալ կունենան փորի երես իրար համապատասխան կազմով, երկու կեսերն ալ կունենան կռնակի երես իրար համապատասխան կազմով, և կունենան մեյ-մեկ կողմնակի երես իրար նման զարգացումով:

Որդերեն սկսած կենդանական մարմինը երկու-կիսանի է, երկու-կողմանի է, երկդի է. ամբողջ կենդանին կազմված է ըստ իր երկարութեան երկու իրար համապատասխանող աջ ու ձախ կեսերե:

Բ. ՄԻՋՆԱԿ ԱՆՈՂՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

I. ՓՇԱՄՈՐԹԵՐ

Միջնակ անողն կենդանիները նմանապես երկու գլխավոր ճյուղ կներկայացնեն կենդանական թագավորութեյան մեջ՝ փշամորթերն ու որդերը: Ասոնցմե դուրս կան մեկ-երկու կենդանական

սեսակներ ու դասեր, որ ո՛չ փշամորթերուն կարելի է կցել, ո՛չ ալ որդերուն. և որոնք սակայն զարգացման մոտավորապես նույն աստիճաններուն վրա կգտնվին և առանձին ճյուղեր կազմելու համար ալ ո՛չ այնքան շատ են, ո՛չ այնքան կարևոր: Կենդանաբանները կկցեն երբեմն փշամորթերուն իբրև հավելված, երբեմն բոլորովին կնկատեն անկախ, երբեմն կխառնեն որդերուն: Այս երկրորդական դասերը մենք կրնանք բոլորովին մեկդի դնել, քանի որ մասնավորապես ջղային դրուքյան զարգացման տեսակետեն շատ հետամնաց են ընդհանրապես, կարևոր ինքնահատուկ բան մը չունին և որևէ նորություն մը չեն բերեր:

Փշամորթերուն նախահայրերը իրենց ծագումով որդեր են եղած գետնին երեսը սողացող. բայց սողացող կյանքի մեջ որոշ զարգացման մը հասնելեն ետքը որևէ բնական պատճառով կրցած են կտրվիլ գետնեն և սողացողեն դարձած են նորեն լողացող կամ գետնին վրա մեկ կետի մը կառչելով երկարած են ջրերուն մեջ բուսակերպ կենդանիներուն նման: Եվ այդ ջրերուն մեջ երերացող կամ լողացող կյանքի հին ձևերուն վերադարձը խզած է անոնց հատվածներուն միագիծ զարգացումը. հատվածները իրարու ետևե միագիծ շարվելու հարկադրանքեն ազատված՝ դասավորվեր են կենդանիին չուրջը ամեն կողմերեն ճառագայթաձև:

Փշամորթերը բոլորն ալ ճառագայթավոր կազմություն ունին. և ընդհանրապես կազմված են նույն կեդրոնական կետեն ամեն ուղղությամբ մեկնող և իրարմե հավասար հեռավորություն ունեցող հինգ ճառագայթներե: Պոլիպներուն բազուկները սովորաբար չորս էին կամ վեց կամ անոնց երկուքով բազմապատիկները, ուրեմն միշտ զույգ: Փշամորթերու այս հինգ ճառագայթները կհամարվին իրենց որդազգի ծագումին հետևանքը. փշամորթերուն նախահայրերը հինգհատվածյան որդազգիներ եղած կենթադրվին, որոնք իրենց հինգհատվածյան գոյությունը շարունակեր են նոր պայմաններու հզդեցության տակ հատվածներու բազմակողմ դասավորությամբ:

Փշամորթերը խոռոչավոր կենդանիներ են. արտաշերտը ղարձած է կենդանիին արտաքին պատը, որը կենդանիին մեծցող զանգվածը ավելի դիմացկուն կերպով պահել ու պահպանել

կարողանալու համար արտադրած է կրային չերտիկներ, որոնք անշարժ կամ շարժուն կերպով կկազմեն ամուր պատյան մը արտաչերտի բջիջներուն ներքին երեսին վրա:

Այս պատյանին տակը կենդանիին մարմնին խոռոչն է և որուն մեջը կախված է լայնկեկ տոպրակի մը պես մարսողական գործարանը, որ կհաղորդակցի արտաքին աշխարհին հետ երկու անցքով. վարի լայն անցքը, որ ջուր ու սնունդ ներս առնելու կծառայե, բերանն է. վերի կողմը շատ ավելի փոքր անցք մը սրբանն է: Մարսողական գործարանը սաղմնային ներքնաչերտը կներկայացնե, ուրկե առաջացած է նաև միջնաչերտային բջիջներու շերտ մը, որոնց աճումով կազմված է անոթային դրուքթյուն մը, որ շրջանառության կծառայե. այդ անոթներուն մեջ շրջան կընե հեղուկ մը, որ մասամբ մարսողական գործարանեն ստացված սնունդն է և մասամբ ալ դուրսեն ծծված աղի ջուրը, որովհետև այդ անոթային դրուքթյունը հատուկ «քամիչ»-ներով կապ ունի դուրսի ջրերուն հետ. անոթները լեցնող այդ հեղուկին մեջ կլողան նաև միջնաչերտեն ծագում առնող և ամիոպային շարժումներ ունեցող ազատ բջիջներ: Այս անոթները կներկայացնեն առաջին առանձնացած երակային դրուքթյունը և իր հեղուկն ալ՝ առաջին առանձնացած արյունը, կամ ավելի լավ է՝ ըսենք ճերմակ ավիշը՝ լիմֆը:

Այսպեսով մարսողությունն ու շրջանառությունը զատված են իրարմե. նախնական անողն կենդանիներուն քով, օրինակ՝ մետուզները, դեռ միացած էին: Ստամոքսի պարկին ու շրջանառական անոթներուն հետ մարմնի խոռոչին մեջ կախված են նաև սերմնիկներ կամ ձվիկներ արտադրող գեղձերը:

Ներքին գործարանները խողովակաձև բաժանումներով կերկարին նաև ճառագայթներուն մեջ: Ճառագայթները նմանապես ծածկված են կիրե սալիկներով կանոնավոր շարքով, մանավանդ վարի կողմը: Ճառագայթի մեջտեղի առանցքին երկայնքովը, առանցքի երկու կողմեն յուրաքանչյուր սալի վրա անցք մը կա, ուրկե դուրս կկախվի անոթային դրուքթյան մեկ կտորը. այդ կախված կտորներուն վրա անոթային դրուքթյունը քիչ մը լայնցած է փամփշտաձև. երբ այդ փամփշտիկները կկծկվին՝ անոթներեն

հեղուկը կլցվի դեպի վար կախված կտորները, որոնք դուրս կցցվին անցքերեն. երբ փամփչտիկները իրենց կծկումը թուլցնեն՝ իրենց մեջը կքաշեն անոթային հեղուկը, որով կախված կտորները կթուլնան ու ետ կքաշվին: Այս դուրս երկարող ու ետ քաշվող մասերն են, որ շարժուկներ կկոչվին. ամեն շարժուկ ծծակով մը կվերջանա, որ տեղի մը վրա ամրանալու կծառայե: Իսկ շարժուկը ինքը քանի մը գործածութիւն ունի. նախ՝ շարժումի գործիք մըն է թիավարելու համար, բռնելու կամ ամրանալու համար, սնունդը ճառագայթին առանցքին փոսովը դեպի բերանը քշելու համար. կծառայե նաև իբրև շնչառական գործարան անոթներուն արյունը մաքրելու, ինչպես նաև իբրև չոչափումի զգայարան:

Անոթային փամփչտիկները կծկող ու բացող մկաններն են փշամորթերու գլխավոր մկանային գործարանները. այլև ճառագայթներուն վրա սալիկները իրարու միացնող մկանները, երբ անոնք շարժական են. ասոնք իրենց միաժամանակ ու կանոնավոր կծկումներով կրնան բանալ ու գոցել ամբողջ ճառագայթը դանդաղ շարժումով մը, որը կենդանին կգործադրե բան մը գրկելու համար կամ իր տեղափոխութեյանը նպաստելու համար: Կարևոր մկանային գործիք մըն է նաև բերնին մեջ գետեղված ծամիչը, որ իր բաղադրիչ քանի մը պինդ մասերը իրար սեղմելով կպատռե ու կփշրե բուսական ու կենդանական մարմինները ստամոքսը մտցնելեն առաջ:

Թե՛ ծամիչի, թե՛ սալիկներու և թե՛ փամփչտիկներու կծկումները կպահանջեն որոշ կանոնավորութեյուն, որոշ հաջորդականութեյուն. այդ համադիր աշխատանքը գլուխ բերելուն կծառայե կենդանիին ջղային մանյակը. այսինքն՝ ջղային բջիջներու օղակաձև հյուսք մը բերնին մոտը կերակրափողին շուրջը. այդ ջղային մանյակեն կզատվին ջղային երկարացումներ յուրաքանչյուր ճառագայթի համար. և կերթան մինչև ճառագայթին վերջին ծայրը մեջտեղի առանցքին ուղղութեյամբը՝ ճանապարհին յուրաքանչյուր շարժուկի համար մազային ջղային թելիկ մը ճյուղավորելով:

Զգայարանական տեսակետեն ալ դեռ մեծ տարբերութեյուն մը չկա նախորդ աստիճանի ավելի զարգացած տեսակներեն,

օրինակ՝ մետուզներեն, հոս ալ ճառագայթներուն վերջին ծայրը կան տեսողական կետեր. և Հպումի զգայութիւնը անշուշտ մասնավորապես չեչուած պիտի ըլլա բերնին չուրջն ու չարժուկներուն վրա:

II. ՈՐԴԵՐ

Միաբջիջներեն առանձին-առանձին հյուղերով առաջացած են սպունգազգիները, խոռոչընդերները և որդերը: Որդերուն նախահայր կհամարվին ռոթիֆերները, որոնց մարմնին էական մասը դեռ մեկ հատվածե մը կազմված է. մնացած հատվածները, պոչի նման, երկրորդական հավելված մը կներկայացնեն և կոթի դերը կկատարեն. իրենց վերջին ծայրի արտադրած թանձր հեղուկի մը միջոցով կրնան ամեն տեղ ամրանալ ժամանակավորապես:

Ռոթիֆերները մանրադիտական կենդանիներ են, բազմաբջիջներուն մեջ ամենեն փոքր արարածները, ինֆուզորիներուն չափով, ամենեն խոշորները հազիվ նկատելի են հասարակ աչքով: Արտաքուստ դյուրին է չփոթելը ինֆուզորիներուն հետ, մանավանդ իրենց ապրելու եղանակովն ու ձևերովը շատ են նման անոնց: Ասոնցմե են առաջացած ահա՛ որդերը իրենց ետևի հատվածները հետզհետե կատարելագործելով, անոնց դերը բարձրացնելով և դառնալով կանոնավոր բազմահատված:

Այդ հատվածներուն թիվը սովորաբար մեկ-երկու տասնյակ է, որ կրնա մինչև մեկ-երկու հարյուրյակի հասնիլ որոշ որդային տեսակներու մեջ:

Որդերուն հյուղը ինքը կբաժնվի երկու ենթահյուղերու՝ օղավոր որդեր և տափակ որդեր:

Տափակ որդերուն ենթահյուղին պատկանողները ետ նահանջած կենդանիներ են բոլորն ալ և մեծագույն մասով ուրիշ կենդանիներու մեջ ապրող մակաբույծներ: Կորսնցուցած են իրենց արտաքին օղային կերպարանքը և արտաքուստ դարձած են միապաղաղ և մարմինը տափակած է: Մարմնին խոռոչը լեցված է դիմադրական հյուսկենով մը: Մարսողական դրուքյունը մեկ

անցք ունի, սրբան չկա. ո՛չ շնչառական, ո՛չ ալ շրջանառական հատուկ գործարաններ. կրկնասեռ են, այսինքն՝ կենդանին ինքը կարտադրե սեռային երկու տարրերն ալ: Շարժումներու նվազումին հետևանքով հետաղիմած է նաև մկանային ու ջղային կազմությունը, որով մեր ուսումնասիրության համար անկարևոր են:

Կարևորություն ներկայացնողը կենդանական բարձրացման տեսակետեն օղավոր որդերն են, և օղավոր որդերուն մեջն ալ իր կազմով ամենեն հստակը, ամենեն հիմնականը և ամենեն տիպարը մազոտնիներն են, որոնք կկազմեն օղավոր որդերու առաջին դասը. այսպես կկոչվին իրենց կողերուն բուսած մետաքսային մազիկներուն պատճառով, որոնք իբրև հենակ կնպաստեն կենդանիի տեղափոխման շարժումներուն, այլև զգայության:

Օղավոր որդերու հաջորդ երկու դասերը մազոտնիներեն առաջացած կողմնական ոստեր են: Մեկ դասին մեջ հիմնական տարբերությունը արտաքին հատվածականության չքանալն է. կենդանին նորեն վերածված է միապաղաղ մարմնի մը, բայց կպահե իր ազատ կենդանական խոռոչը, մազիկներն ալ կրնա պահել: Մյուս դասը կպահե վրան արտաքին հատվածականությունը, բայց կկորսնցնե մազիկները. ատոր փոխարեն իր մարմնին երկու ծայրը կառաջանան ծծակներ, որոնց վրա ամրանալով կկատարե իր տեղափոխությունը. բերնի ծծակը կծառայե նաև սննդառության, այսինքն՝ ուրիշ կենդանիներու արյունը ծծելուն: Ջղային տեսակետեն ալ այս վերջին երկու դասերը մազոտնիներուն տարբերակները կներկայացնեն:

Օղավոր որդերու մարմնին պատը կազմված է ութերեն ներս՝ 1) շարք մը արտաշերտի բջիջներե, 2) անոր արտադրած դիմադրական շերտե մը, 3) լայնքի մկաններու գոտեձև բարակ շերտե մը և 4) մարմնի երկայնքովը ձգված մկանային չորս հատ կապուկներե, երկուքը թիկունքի և երկուքը փորին կողմը:

Մարմնի երկու կողմեն առաջին երեք շերտերեն կազմված մաշկը երկու-երկու ցայտ կկազմե՝ թիկունքի ու փորի մասերուն ցայտերը, որոնց վրա են բուսած մետաքսային մազերը. ատկե զատ այտուցքին մեջ սովորաբար կառաջանա նուչնանյութի ասեղ մը՝

մաշկի այդ այտուցքին կայունութիւն և դիմադրական ուժ տալու համար:

Մարսողական խողովակը բերնեն կերկարի մինչև սրբանը ուղիղ գծով մը, առանց գալարումներու, միայն քիչ մը ավելի կլայննա յուրաքանչյուր հատվածի մեջ, ավելի բարակելով հատվածե հատված անցնելու ատեն. երբեմն այդ լայնացումը կրնա խորանալ ու կողմնակի գրպաններ կազմել: Բերնին առջևի մասը կրնա երբեմն իբրև կնճիթ առաջ երկարիլ, երբեմն ծամիչներ կունենա բերանը:

Երկու տեսակի հեղուկ ունի արդեն իր մարմնին մեջ: Ճերմակ հեղուկ մը, որով լեցված է մարմնին խոռոչը և ուր կլողան ամիոպային շարժումներ ունեցող բջիջներ. ասիկա է լիմֆը՝ ավիշը, որ այս ու այն կողմ կքշվի մարմնին մեջ կենդանիի շարժումներուն ատեն: Երկրորդ հեղուկը արյունն է գունավոր, կա՛մ կարմիր իր պլազմային մեջ լուծված հեմոկլոպինի պատճառով, կա՛մ կանաչ, կա՛մ պղնձագույն համապատասխան գույնով նյութի մը պլազմային մեջ լուծված ըլլալուն պատճառով: Արյունը շրջան կընե խոռոչին մեջ գտնվող և ինքն իր մեջ լրիվ գոց անոթային դրուքյան մը միջով:

Արյան գլխավոր անոթը շրջան կընե մարմնին երկայնքովը մարսողական խողովակի թիկունքի կողմեն մինչև կենդանիին վերջին ծայրը և մարսողական խողովակին տակեն կվերադառնա իր մեկնած կետը. յուրաքանչյուր հատվածի մեջ գտեեձև ճյուղավորումով մը երկու գլխավոր անոթները կհաղորդակցին իրարու. արյունը կվազե կռնակն ի վար և փորի կողմեն կվերադառնա: Հիմնական ձևը այս է, որ ուրիշ բարդացումներ կամ պարզացումներ կրնա կրել. նույնիսկ բոլորովին կբացակային արյան անոթները որոշ տեսակներու մեջ:

Երբեմն բոլոր անոթները շրջապատված են մկաններով ու կկծկվին, երբեմն որոշ մասեր միայն ունին այդ մկանային թելերը. այսպես, օրինակ, յուրաքանչյուր օղի գտեեձև անոթներուն փորի կողմին մասերը, այս պարագային անոթները այդ մասերուն վրա քիչ մը ուռած կըլլան՝ սիրտերու շարք մը կազմելով:

Յուրաքանչյուր հատված ունի երկու երիկամ աջեն ու ձա-

խեն, որոնց անցքերը փորի կողմեն են երկու կողմնակի շարքով: Սեռերը ընդհանրապես բաժնված են. սերմնիկներն ու ձվիկները պատրաստող գեղձերը կգտնվին կենդանական պատին ներքին երեսին վրա, տարբեր տեսակներու համար տարբեր կետերու վրա: Սեռային հասունցած բջիջը կիյնա մարմնի խոռոչը, ուրկե շարժուն թարթիչներ ունեցող խողովակներու միջոցով կարտահանվի մարմնեն երիկամներու անցքով: Ձվիկի բեղմնավորումը կկատարվի դուրսի ազատ ջուրերուն մեջ:

Որդերը, ինչպես մինչև հիմա հիշված կենդանական մյուս ճյուղերը, կրնան աճիլ նաև անսեռ ճամբով. չէ՞ որ հատված առաջացնելը պտկումով իր վրան իր նմանը ծնիլ ըսել է. երբ իրմեն պտկած հատվածը իրեն կպած չպահե, իրմեն զատե, իրմեն նետե, ծնունդ տված կըլլա նոր անկախ էակի մը, որ իրմեն նոր հատվածներ ծլելով ինքզինքը կլրացնե: Կրնա պատահիլ, որ քանի մը հատվածներ միասին կտրվին. կտրված երկու մասերը ինքզինքնին կլրացնեն նոր հատվածներու պտկումով և մեկ անհատը կդառնա երկու:

Այսինքն՝ բուսական ու կենդանական աճեցման հին անսեռ ձևը պտկումով ու ճյուղավորումով կչարունակվի մինչև որդերը, սեռական զարգացման զուգընթաց: Բոլոր գործարանները միշտ ալ, նաև ասկե ետքը, կզարգանան ու կաճին պտկումով ու ճյուղավորումով. բոլոր գործարաններեն միաժամանակ կատարված պտկումներով ու ճյուղավորումներով կկազմվին հատվածները: Բնախոսական նոր ձեռքբերումները հին միջոցները չեն ոչնչացներ, մանավանդ անմիջապես. հինն ու նորը երկար ժամանակ կապրին ու կգործեն քով քովի՝ առաջացնելով գրեթե միևնույն բանը. հաճախ նույն նպատակին հասնելու այդ բազմաձևությունը կմնա ընդմիշտ:

III. ՕՂԱՎՈՐ ՈՐԴԵՐՈՒ ՋՂԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Օղավոր որդերու ջղային կեդրոնները, ինչպես բոլոր մյուս գործարանները, հատվածականության հետևանքով կդառնան բազմակրկին:

Յուրաքանչյուր հատվածի մեջ կառաջանա երկու կանկլիոն մարսողական ու շրջանառական խողովակներուն տակը, այսինքն՝ փորային դիրքով: Նույն հատվածի այդ երկու կանկլիոնները լայնքի ջիղով մը միացած են իրարու: Յուրաքանչյուր կանկլիոն երկայնքի ջիղերով կմիանան իրենց կողմի իրենցմե առաջ և իրենցմե ետքը եղած հատվածներու կանկլիոններուն, որով կստացվի ջղային կանոնավոր կազմություն մը ելարանի ձևով: Ամեն մեկ կանկլիոնեն մեկնող կողմնակի ավելի փոքր ջիղեր իրենց հյուղիկներովն ու թելերովը կշղավորեն իրենց հատվածի ներքին գործարանները և լայնքի ու երկայնքի արտաքին մկանները: Միայն առաջին հատվածի կանկլիոնական զույգը կերակրափողի վրայի կողմն է և երկու ջղային թելով կապված է երկրորդ հատվածի կանկլիոններուն, որով գրկած կըլլա կերակրափողը. բերնի բացառիկ դերին ու դիրքին արդյունքը:

Օղավոր որդերու ջղային դրություն ելարանական այս կազմը հիմքն է ասկե ետքը գալիք ջղային դրություններուն: Բայց իր այս պարզության մեջ չի մնար միշտ. ինչպես որ մարմնի հատվածները կրնան միանալ իրարու, այնպես էլ կանկլիոններու շղթային հատիկները զանազան ձևերով կմիանան իրարու, որով ելարանական պատկերը կաղճատի կամ բոլորովին կփոխվի:

Փոփոխության մեկ ձևը նույն հատվածի երկու կանկլիոններուն իրար մոտենալով իրարու կցվիլն է, որով կվերանա միացնող ջիղը և մենք կունենանք մեկ կանկլիոն մը յուրաքանչյուր հատվածի համար: Երբեմն արտաքուստ նկատելի կըլլա միացումը, երբեմն ոչ: Այսպեսով երկու զուգահեռ շղթան կվերածվի մեկ կեդրոնական շղթայի մը. ջղային երկար թել մը վերեն վար, որուն վրա շարված են կանկլիոնները ամեն հատվածի համար հատ մը: Այդ միակ կանկլիոնի երկու կողմերեն մեկնող կողմնակի թելերը կշղավորեն հատվածին ներքին ու արտաքին մկանները:

Երբեմն, ընդհակառակը, հատվածի մը երկու կանկլիոնները, փոխանակ միանալու, կրնան բաժնվիլ երկուքի ավելի կամ նվազ չեչուած կերպով, որով ամեն հատված կունենա երկու զույգ կանկլիոն՝ չորս հատ:

Միացումներ տեղի կունենան նաև ըստ երկարության, երբ

երկու հատվածներու կանկլիոնները իրարու միացնող ջղային թելերը հետզհետե կարճելով ու կարճելով երկու հատվածներուն կանկլիոնները կմոտենան ու կկցվին իրարու: Երբեմն արտաքուստ նկատելի կմնա կցումը: Երբեմն ալ երկու, երեք կամ ավելի հատվածներու կանկլիոններ կմիանան ու մեկ ընդհանուր զանգված մը կկազմեն. իրենցմե ծագում առնող քանի մը ջիղերը միայն կմատնեն միացած ըլլալը:

Բայց արտաքուստ նկատելի ըլլան թե չըլլան, ներքուստ այդ միացումները կպահեն միշտ իրենց նախկին դիրքերը իրարու հանդեպ և իրենց համապատասխան դերերը: Ամեն կանկլիոն, եթե երկու կողմնական կանկլիոններու միացումն է, իր աջ կողմը կջղավորե իր հատվածին աջ կեսը և ձախ կողմը իր հատվածին ձախ կեսը: Եթե երկու-երեք հատվածներու կանկլիոններն են իրարու միացած՝ կանկլիոնին վերին բաժինը կջղավորե վերին հատվածեն ծագում առած մարմնի մասերը, միջին բաժինը՝ միջին հատվածին համապատասխանող մասերը և վարի բաժինն ալ՝ վարի հատվածի համապատասխանող մասերը: Այսինքն՝ ինչքան ալ սերտ ըլլա հատվածական կանկլիոններուն իրարու մոտենալն ու կեդրոնանալը, բջիջներու.և առանցք-թելերու խառնակութիւն չկա:

Այս բոլոր ջղային նոյրոնները իրենց պրոտոպլազմի զանգվածով և իրենց թելերով ըստ ընդհանուր օրենքի կառաջանան սաղմնային արտաշերտեն: Օղավոր որդերու ամենեն վարի տեսակներուն վրա ջղային այդ զույգ շղթան փակած է մարմնի փորի պատին. մյուս տեսակներուն մեջ հետզհետե կզատվի մարմնի պատեն և կուրույնանա կենդանական խոռոչին մեջ:

Օղավոր որդերու զգայարանքներեն ամենեն կարևորը շոշափելիքն է, այսինքն՝ մարմնի արտաշերտին մեջ նստած այն բջիջները, որոնք մասնավոր կերպով հարմարած են արտաքին ճնշումեն ու հպումեն գրգռվելու, գուցե նաև տաքեն ու պաղեն: Այդ շոշափական բջիջները ցրված են ամբողջ վերնամաշկին վրա. մասնավորապես կգործեն փորի կողմինները, քանի որ շարունակ կքսվին գետնին և իրերուն սողալու ատեն. կողմնական ցցված մետաքսային մազերն ալ կնպաստեն գրգիռներու ուժեղացման:

Նմանապես կզարգանան բերնին չուրջի մասերուն վրա, որոնք կծառայեն անուղղի որոնումին ու բռնումին: Բերնին առջևը հատկապես կզարգանան երկու ավելի կամ պակաս երկարությամբ ցցվածներ կամ շարժական բազկուկներ, որոնց վրա մասնավոր կերպով կնրբանա շոշափումը և որ կանվանենք շոշափուկներ:

Արտաքին շոշափումին կլից, մկաններու չատացման և մկանային աշխատանքներու ուժեղացման զուգընթաց՝ կսկսի զարգանալ նաև ներքին շոշափում մը. այսինքն՝ մկաններու մեջ ցրիվ նստած որոշ զգայական բջիջներու գրգռվիլը, երբ մկանները կաշխատին, կկծկվին ու կբացվին: Մկանային զգայության մը գոյությունը ստիպված ենք ենթադրելու, որովհետև սողալու նման բազմաթիվ և որոշ կարգով գործակից և որոշ կանոնավորությամբ իրար հաջորդող բարդ շարժումները կառավարել չէին կրնար կանկլիոնները, եթե մկաններու կատարած ու կատարվող շարժումներեն տեղեկություն չունենային: Ինչքան ալ աղոտ, ցանցառ ու թերի ըլլան այդ մկանային տեղեկությունները, պետք է որ ըլլան: Արդեն բոլոր զգայությունները դեռ չատ թերի են, նախնական ու աղոտ կենդանական այս աստիճանին վրա:

Շոշափուկներուն մոտիկ, կամ ուղղակի անոնց վրա, որդերու քանի մը տեսակները ունին երկու տեսողական կետեր, այսինքն՝ բջիջներու երկու խումբ, որոնք մասնավոր կերպով հարմարած են լույսեն գրգռվելու: Այդ աչքերը երբեմն կըլլան նաև հաջորդ հատվածներուն վրա երկ-երկու հատ յուրաքանչյուր հատվածին:

Օղավոր որդերու մեկ-երկու տեսակները ունին նույնպես հավասարակշռության զգայարանքներ իրենց առաջին, երկրորդ, երբեմն և ավելի վարի հատվածներուն վրա, ամեն մեկը իր հատվածեն ջղավորված: Այս հավասարակշռության զգայարանքները կա՛մ խոռոչիկ մը կներկայացնեն և մեջը կրի հատիկ մը, որ նայելով կենդանիի բռնած դիրքին՝ կդպչի խոռոչի ներքին պատի զանազան մասերուն: Կա՛մ թարթիչներ են մեջը, որոնք կենդանիի շարժման ատեն վերնամաշկի ծալքին կքսվի: Մեջը կրային հատիկ չունեցող խոռոչիկները նույնիսկ վեճի տակ են դեռ՝ արդյոք հավասարակշռությա՞ն կծառայեն, թե՞ ձայնական ալիքներու՝ լսողության:

Գ. ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Ի. ՄԵԿ ՀԱՏՎԱԾԻ ՍԱՀՄԱՆԻՆ ՄԵՋ

Հատվածական կենդանին բաղադիր գոյութիյուն մըն է՝ կազմված հատվածական ամբողջութիյուններու շարքե մը և բազմակրկնութիյամբ առաջացած գործարանային դրութիյամբ: Այս հատվածականութիյունը կկրե կենդանին ինչպես իր բուսական գործարաններուն վրա, այնպես ալ իր հոգեկան գործունեութիյան ծառայող գործարաններուն վրա: Եվ ինչպես տեսանք՝ մկանային գոտիներու և կանկլիոններու ելարանական դրութիյան մեջ այդ կենդանական գործարանները շատ ավելի հստակ ու ցայտուն կերպով պահած են իրենց կազմին վրա հատվածականութիյան դրոշմը:

Կազմին համեմատ է բնականաբար նաև այդ գործարաններուն գործունեութիյունը. գործարանի մը կազմը իր գործունեութիյան պատկերն է ու արդյունքը, ինչպես որ գործարանի մը գործունեութիյունը իր կազմին տված հնարավորութիյունն է ու իր կազմին արդյունքը: Կազմ ու գործունեութիյուն իրարմե կծնին և իրար կբացատրեն:

Կանկլիոններու հատվածական շղթա մը առաջացուցած ղղային դրութիյունը պիտի ունենա բնականապես հատվածականութիյան վրա հիմնված ղղային գործունեութիյուն մը:

Անողն նախնական կենդանիներու հոգեկան կարողութիյունը անդրադարձութիյուն անվանեցինք, այսինքն՝ գրգռականութիյուն մը, որ պզուկ կուգա չորս տարբեր բջիջներու շղթայավոր գործակցութիյամբ: Արդ՝ անողն միջնակ կենդանիներու ունեցած ղղային կարողութիյունն ալ այդ նույն չորս տեսակի բջիջներու շղթայով կատարվող անդրադարձութիյունն է նորեն. միացյալ հատվածական միութիյան բերած կազմին ու պայմաններուն շնորհիվ շատ ավելի բարդ տեսակի ու բաղադիր անդրադարձութիյուն մը: Նախորդ աստիճանի ավելի նախնական կենդանիներու ավելի նախնական անդրադարձութիենեն զանազանելու համար այս միջնակ անողն

կենդանիներու այս ավելի բարդ անդրադարձուԹյունները կանվանենք Հատուածական անդրադարձուԹյուն:

Հատուածական անդրադարձուԹյան մեջ նախ պետք է դանենք իր ավելի պարզ մասը, երբ ամբողջ անդրադարձ աշխատանքը նույն Հատուածի սահմաններեն դուրս չի գար, որով և կՀամապատասխանե միահատված կենդանիներու նախնական անդրադարձուԹյան:

Իր այս պարզ ձևին տակ զգայուԹյունը բռնող զգայարանքը, դրդիռը ստացող կեդրոնական կանկլիոնի զգայական բաժինը, դրդիռը մկաններուն փոխանցող շարժիչ բաժինը կանկլիոնի և շարժումը կատարող մկանային Հյուսքը բոլորն ալ կգտնվին միևնույն Հատուածին վրա:

Բայց մեկ Հատուածի մը մեջ սահմանափակված այս տեղական Հատուածական անդրադարձուԹյունն ալ ունի ինքն իր մեջ ներքին բաժանում մը: Ամեն Հատված երկու կանկլիոն ունի՝ աջ ու ձախ, Համաձայն մարմնի երկդիուԹյան. և բոլորովին միևնույնն է՝ արդյոք անջա՞տ են մնացած իրարմե, թե՞ կցված են իրարու: Արդ՝ երբ միայն մեկ կողմն է, որ անդրադարձուԹյան կմասնակցի, այսինքն՝ երբ նույն կողմի զգայարանքե մը կուգա դրդիռը նույն կողմի կանկլիոնը և նույն կողմի կանկլիոնեն շարժման Հրամանը կերԹա նույն կողմի մկանի մը, կունենանք միակողմ անդրադարձուԹյուն: Իսկ եԹե մեկ կողմի զգայարանքե ու զգայական կանկլիոնե դրդիռը կանցնի մյուս կողմի կանկլիոնի շարժիչ բաժնին և Հոնկե ալ այդ կողմի մկանին՝ կունենանք դիմակողմ անդրադարձուԹյուն:

Մեկ կողմի զգայական եզերային բջիջները կապված են միշտ նույն կողմի զգայական կանկլիոնի բջիջներուն. այդպես ալ մեկ կողմի մկանային բջիջները կապված են միշտ իրենց կողմի կանկլիոնի շարժիչ բջիջներուն. այսինքն՝ անդրադարձուԹյան առաջին ու երկրորդ օղակները, ինչպես և երրորդ ու չորրորդ օղակները գործարանապես իրարու անխզելի շարունակուԹյուն են. այնպես որ դրդիռին Հասանքը մեկ կողմեն մյուսը կամ ընդՀանրապես մեկ կանկլիոնեն ուրիշ կանկլիոն մը անցնելու Համար միայն մեկ անցման տեղ ունի՝ անդրադարձուԹյան չղԹային

երկրորդ ու երրորդ բջիջներուն մեջտեղը. գրգիռը կանկլիոնի զգայական մասին կրնա անցնիլ բնականաբար ամենեն առաջ նույն կանկլիոնի չարժիչ բաժինը, բայց կրնա անցնիլ նաև իր Հարևան կանկլիոնի կամ ընդհանրապես որևէ ուրիշ կանկլիոնի մը զգայական մասը: Իր կանկլիոնի չարժիչ բջիջներուն կփոխանցվի գրգիռը զգայական բջիջեն զգայական բջիջին մազիկներովն ու կարճ թելերովը, իսկ Հարևան և ավելի հեռավոր կանկլիոններուն գրգիռը կհասնի զգայական բջիջին առանցք-թելովը կամ առանցք-թելին ճյուղավորումովը:

II. ՀԱՏՎԱԾԵ ՀԱՏՎԱԾ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Սակայն ջղային գործունեության համեմատաբար այս ավելի պարզ վիճակին վրա կանգ առնել չի կրնար Հատվածական կենդանիին հոգեկան կարողությունը: Իրարու միացած Հատվածները, եթե նույնիսկ խիստ չեշտված ալ ըլլա իրենց անհատական կյանքը, չեն կրնար իրար ազդեցություն չկրել. անոնցմե մեկուն մեջ կատարվող մկանային ու ջղային աշխատանքը այս կամ այն չափով կանցնի դրացի և հետզհետե նաև հեռավոր Հատվածներու մկաններուն ու ջղային դրության:

Եվ ինչքան Հատվածականությունը զարգացած է, ինչքան կենդանին նախնական անողն արարածներեն ավելի վեր կբարձրանա, նույնքան կչեշտվի Հատվածներուն ներքին կապը, իրարու գործին միջամտությունը և անոնց սերտ գործակցությունը. որովհետև այդ չափով ալ ավելի հաճախ, ավելի շատ և ավելի ուժեղ կըլլան միասին կատարվելիք գործերը, իրար օգնելու, իրարմե օգտվելու և գործակցելու անհրաժեշտությունը:

Ինչպես մարսողական Հատվածական տոպրակները, ինչպես անոթային Հատվածական ճյուղավորումները, ինչպես յուրաքանչյուր Հատվածի երիկամները իրարու Հետ Հետզհետե անբաժան ու ձույլ ամբողջություն մը կկազմեն, որու ամեն մեկ մասը մյուս մասերու աշխատանքեն կօգտվի ու այդ աշխատանքը կշարունա-

կե, առանց Հատվածներու գոյութեան չատ կարեւորութիւն տալու, նոյնը կկատարվի նաեւ մկաններուն ու ջղերուն հետ:

Բոլոր Հատվածներուն ըստ երկարութեան ձգվող մկանները իրարու կկցվին և կկազմեն ապրող կենդանիին երկայնքովը վազող չորս Հաստ մկաններ, որոնք կգործեն միասնաբար, որոշ ու կանոնավոր Հաջորդականութեամբ, իբրև մեկ ամբողջութիւն մը: Այդպես ալ Հատվածական կանկիոնները ո՛չ միայն լայնքի ջիղերով են կապված իրարու, այլև ըստ երկարութեան ձգված ջիղերով ամեն մեկ Հատվածի կանկիոնները սերտ կապակցութեան մեջ են նախորդ ու Հաջորդ կանկիոններուն Հետ: Կկազմե ամբողջութիւն մը ինչպես իր արտաքին շղթայով, այնպես ալ իր ներքին գործունեութեամբ:

Ջուտ տեղական Հոգեկան գործունեութեան կից կա միշտ և Հետզհետե ավելի կամրանա Հարևանական գործունեութիւն մը. ո՛չ միայն նույն օղի զույգ կանկիոնները ընդՀանրապես միասին կգործեն կյանքի բերումով, այլև իրարու Հաջորդող ինչպես մկանները, այնպես էլ կանկիոնները չատ Հաճախ Հարկադրված են միասին գործելու կյանքի նույն բերումովը:

Այնպես որ երբ Հատվածի մը կանկիոնը կգրգռվի և գրգիռը բավական չափով ուժեղ է, կրնա անցնիլ քովի կամ առաջ ու ետև մեկ-երկու կանկիոններու. չատ ուժեղ գրգիռները կերթան ամբողջ շղթայի կանկիոններուն: Կանկիոններու շղթան անդրադարձութեան բարդ գործիք մըն է արդեն, որուն ամեն մեկ անՀատը երբեմն առանձին կգործե, երբեմն քանի մը անՀատներ կգործակցին իրարու ավելի կամ նվազ ընդգծված անՀրաժեշտութեամբ, երբեմն ալ կգործե շղթայի անՀատներուն մեկ մեծ մասը միասնաբար կամ որոշ կանոնավոր Հաղորդակցութեամբ, ըստ կյանքի պահանջին:

Բոլոր կանկիոնները պատահաբար կրնան իրենք դառնալ մյուս կանկիոններուն Հրահանգ-գրգիռները փոխանցողը. ամեն կանկիոն ալ կրնա վարիչ դառնալ, ավելի ճիշդը՝ դրդիչ դառնալ կապակից գործունեութեան մը, եթե ընդՀանուր գրգիռին աղբյուրը իր օղեն սկիզբ կառնե: Սակայն ինչ չափով որ գործակցաբար կատարվող ճիգերը կչատնան կենդանիի կյանքին մեջ և

ինչ չափով անհրաժեշտ ու սովորական կդառնան ընդհանուր կազմակերպված աշխատանքով բարդ մկանային աշխատանքներ դլուխ բերելը, այդ չափով ալ կսկսի ծայր տալ վարչական որոշ կեդրոնացում մը: Մարմնի տեղը փոխելը, հարձակվիլը, նահանջելն ու փախչիլը կարելի է իրականացնել միայն ընդհանուր համագործակցութիյամբ. և այդ համագործակցութիյունը այնքան հաջող, արագ ու վարժ կըլլա, որքան որ նույն կետեն, նույն ձևով ու նույն կարգով գա գործադրութիյան հրահանգը: Եվ այս տեսակետեն բացառիկ կարևոր դիրք մը ունի առաջին հատվածին կանկլիոնը. բերանը այդ հատվածին վրան է, նաև շոշափուկները և այդ ուղղութիյամբ է, որ կենդանին կշարժվի. առաջին գրգիռները այդ հատվածեն կստացվին ընդհանրապես, երբ հարցը տեղականեն դուրս ընդհանուր շարժումներուն կվերաբերի: Եվ այդ շարժումները կկատարվին նույն ձևով ու նույն կարգով նույն նպատակներուն հասնելու համար. այսպեսով կառաջանա ու կամրանա որոշ կերպով լարված ջղային պատրաստ կապակցութիյուն մը, որ լարված մեքենայի մը պես իսկույն կգործե առաջին կանկլիոններեն հրամանը գալուն պես:

Ուրեմն չղթա կանկլիոններու, այսպես ըսեմ, դաշնակցական, հավասարական կազմակերպութիյան մեջ հետզհետե կսկսի շեշտվիլ բացառիկ նպաստավոր դիրք ունեցող և ամենեն ավելի կարևորութիյուն ստացած անդամին գերակշռութիյունը համայնական գործունեութիյան ժամանակ. և այդ գերակշռութիյունը հետզհետե կրկնվելով և ուժեղնալով կդառնա մեքենական հարկադրանք մը: Հատվածե հատված ավելի պատահական ու տկար գործակցութենեն կամաց-կամաց բնական անհրաժեշտութիյամբ կառաջանա առաջին հատվածի կանկլիոններուն շատ ավելի կեդրոնացած ղեկավարութիյուն մը:

Գործունեութիյան բարդացումը, շատերուն մասնակցումն ու աշխատակցութիյունը և աշխատանքը վարժ ու արագ կատարելու պահանջը նաև ջղային դրութիյան մեջ կբերե վարչական կեդրոնացում: Հրամաններու կեդրոնացում մը, որ հաջորդ բարձրագույն անողն կենդանիներուն մեջ ավելի ևս կզորանա, երբ զգայարաններու զարգացումով և ավելի բարձր կարգի ջղային բջիջ-

ներու առաջացումով ավելի ևս կշեշավի առաջին հատվածի կանկիոններուն բացառիկ դիրքն ու դերը:

III. ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԲԱՆՈՒԿ ՃԱՄԲԱՆԵՐԸ

Վերի նկարագրություններեն պարզ է, որ կետե մը ստացված գրգիռը կրնա բազմաթիվ ուղղություններով հոսիլ, կրնա հատվածի մեկ կողմեն դուրս չգալ և հոտ ալ շատ զանազան գծերով, կրնա անցնիլ հատվածի հանդիպակաց կողմը և նորեն դեպի շատ տարբեր մկաններ, գրգիռը կրնա վերջապես մյուս հատվածներուն անցնիլ, իր կողմի կամ հանդիպակաց անսահման հնարավորություններով, քանի որ առանցք-թելերով ու մազայիններով կապեր կան ամեն ուղղությամբ: Արդ՝ երբ զգայական եզերային բջիջ մը գրգռված է, գրգիռը ո՞ր թելերով պետք է անցնի, ո՞ր մազայիններով և ո՞ր մկանային թելիկը պետք է շարժե. այսինքն՝ անդրադարձությունը ո՞ր ճամբով պիտի կատարվի:

Ամենանախնական կենդանիներուն մեջ, ուր թե՛ մկանային և թե՛ ջղային բջիջները շատ քիչ են, ամեն ջղային բջիջ կպատկանի գլխավորապես մեկ մկանային բջիջի մը. անոր համար է իր գոյությունը և անոր հետ է գործած անհաշիվ երկար սերունդներ. այնպես որ կապը շատ խոր է ու շատ հին այդ երկու իրար լրացումը եղող բջիջներուն մեջ: Եվ ապագային ալ, երբ թե՛ մկանային և թե՛ ջղային բջիջները կշատնան և հին ջղային բջիջը այս նորերուն հետ ալ հաղորդակցության կմտնե, էապես հին դարավոր ճամբովն է, որ ամենեն առաջ գրգիռը կփոխանցվի: Գրգիռը նախ ու անմիջականորեն կվազե հին, հիմնական, դարավոր ժառանգական կապակցության ճամբովը: Բայց այդ ճամբով հոսելեն ետքը կամ միևնույն ժամանակ ուրիշ ուղիներով ալ բան մը կհոսի՞, թե՞ ոչ՝ կախված է գրգիռին ուժեն. թույլ, միջակ ու սովորական ուժի գրգիռները կերթան հին բանուկ ճամբով. եթե սովորականեն ուժեղ է գրգիռին հոսանքը՝ այդ բանուկ ճամբեն զատ կրնա ուղղվիլ նաև մեկ կամ երկու ուրիշ ճամբաներով: Եվ հոս այդ շեղումին մեջն ալ պատահականություն չկա: Հաճախ իրեն գոր-

ծակից եղող որոշ մկաններու չարժիչ նոյրոններուն հետ նորեն դարերու կրկնութեամբ կառաջանան երկրորդ կարգի, այսպես ըսեմ, կիսաբանուկ ճամբաներ. ահա՛ այդ ուղիներով է, որ կհոսի ավելի-գրգիռը:

Գրգիռ մը կվազե նախ անպատճառ բանուկ ճամբաներեն, ետքը կիսաբանուկ ճամբաներեն և վերջը միայն նվազ բանուկ ճամբաներեն, եթե գրգիռը շատ է ուժեղ: Ջղային դրութեան մէջ գրգիռներուն վազելիք հունները տեսակ մը պատրաստ են արդեն. ինչպես որ լեռներեն հոսող հեղեղատները կհոսին միշտ հին փորված հուներով, և ինչքան հին ու խոր են հունները՝ այնքան բացարձակ հարկադրանքով. ջղային ուղիներուն մեջ փորված փոսեր և հուներ չկան անշուշտ, բայց դիմադրութեան մը պակասումը կա անշուշտ: Եվ բնական օրենք է ու բնական տնտեսութիւն, որ ամեն հեղուկ և ամեն հոսում կվազե նվազագույն դիմադրութեան ճամբով և անգամ մը հոսելեն ետքը ավելի ևս կդյուրանա նույն ճամբով հոսիլը:

Երբ գրգիռը կհորդի, երբ նոր պայմանները կստիպեն, բազմաթիվ փորձեր կըլլան նոր ճամբաներ բանալու ավելի-գրգիռի հոսումին հաջող ու անհաջող, պիտանի ու անպիտան բազմաթիվ ուղղութիւններով: Հոս ալ կգործե բնական ընտրութիւնը. ձախորդ կապակցութիւնները օգուտ մը չեն բերեր կենդանիին. հաջող ու հարմար ու պիտանի նոր կապակցութիւններն են, որ կնպաստավորեն կենդանիին, նոր զենք կուտան հաջողութեան. և այդ պիտանի նոր կապակցութիւններն են, որ սկիզբները գործածութեան կուգան իբրև նվազ բանուկ ճամբաներ, որ կրկնվելով ու կրկնվելով ու սերունդե սերունդ ամրանալով կդառնան նոր կիսաբանուկ ճամբաներ, մինչև որ ավելի ևս խորանալով դառնան նոր բանուկ ճամբաներ:

Իրականութեան մեջ երբեք չի պատահիր գրեթե, որ առանձնակի մեկ զգայական բջիջ մը միայն գրգիռ ստանա իր դուրսի զգայարանական մեկ բջիջեն կամ իր ներքին մեկ մկանային թելեն, այլ սովորաբար զգայարաններու բջիջային խումբեր են, որ միաժամանակ կգրգռվին և կգրգռեն կեդրոնական զգայական նոյրոններու ամբողջ խումբեր և հոնկե ալ չարժիչ նոյրոններու խումբեր

և շարժումը կատարողը կրկյան մկանային բջիջներու խուրձեր: Այսինքն՝ բանուկ ճամբա ըսածնիս իրականին մեջ անդրադարձության չորս բջիջներու մեկ շղթա մը չէ, այլ բազմաթիվ զուգահեռ վազող անդրադարձության շղթաներու տրցակներ, որոնց մեջեն միաժամանակ կանցնին նույն ու նման գրգիռները և կստեղծեն անդրադարձության սովորական խմբական շղթան:

Անդրադարձության այդ խմբական շղթաներով գրգիռներու հոսումին օրենքը կրնանք ձևակերպել հետևյալ երեք կետերուն մեջ. 1) զգայարանական բջիջները իրենց գրգիռները կփոխանցեն շարժիչ նոյրոններուն բանուկ ճամբաներու օրենքով. 2) նույն տեղեն և նույն պայմաններու տակ ստացված սովորական գրգիռներու խումբը նույն բանուկ ճամբաներով կհոսի նույն մկանային խուրձին և կառաջացնե նույն շարժումները. և 3) որչափ գրգիռը ուժեղնա՝ այնքան հավանական կդառնա ավելի նվազ բանուկ ճամբաներով գրգիռին հոսումը, այսինքն՝ անսովոր, «անբնական», չսպասված մկանային շարժումներու առաջանալը սովորականին կից:

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Ա. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԱՆՈՂՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ ԲԵՐԱԾ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի. ԽԻԹԻՆԵ ՊԱՏՅԱՆ

Անողն կենդանիներու հոգեկան զարգացման երրորդ ու ամենաբարձր աստիճանին կհասնինք հողմավոր ոտքերու առաջացումով. և այդ պատճառով ալ խեցեմորթերու, միջատներու և սարդազգիներու ընդհանուր ճյուղը կանվանենք հողտնիներ:

Հողտնիներն ալ հատվածական կենդանիներ են. թեև ավելի կամ նվազ չափով բոլորի արտաքին կերպարանքին վրա կանոնավոր հատվածականութիւնը խանգարված է:

Հատվածական կենդանիներեն իրենց ունեցած ամենեն առաջին ու ամենեն հիմնական տարբերութիւնը հատուկ պատյանով մը փաթթված ըլլալն է, որ և կդառնա ղեկավար պատճառը մյուս կարևոր նորութիւններուն:

Որդերը մերկ էին. իսկ այս նոր տեսակի հատվածական արարածները, որոնք որդերեն չէ, որ կառաջանան, այլ որդերուն նման և որդերուն զուգահեռ, ծագում են առած միահատված ոտիֆերներեն[15], պատած են իրենց ամբողջ մարմինը իրենց մարմնի արտաչերտեն արտադրված հատուկ նյութով մը: Խիստ դիմացկուն, բայց շատ թեթև նյութով մը, որ խիթին կկոչվի և որ շատ կնպաստե կենդանիի պաշտպանութեյան և միևնույն ժամանակ արգելք չի դառնար իր ծանրութեյամբը կենդանիի դյուրին տեղափոխութիւններուն և բազմատեսակ արագ շարժումներուն:

Այդ խիթինե պատյանին կազմութեան անխուսափելի հետևանքն են ոտքերը. այսինքն՝ գետնի երեսին վրա կենդանիի չարժվիլը հնարաւոր դարձնելու համար՝ կենդանիի գետնին դարձած կողմեն մասեր կերկարին մարմնեն դուրս, նմանապես պաշտպանված խիթինով: Եվ որպեսզի այդ խիթինապատ երկարացումները չարժել կարելի ըլլա, անհրաժեշտ է, որ ոտքի արմատին տեղը, ինչպես և մեկ-երկու տեղ ոտքին երկարութեանը վրա խիթինի չերտը չատ նուրբ ըլլա և ծալվիլ ու բացվիլ կարողանա: Այդ ծալվող կետերը հոդ կանվանենք, որ կապ ըսել է, և որով խիթինավոր կենդանիներուն ոտքերը կըլլան հոդավոր:

Սկզբունքով յուրաքանչյուր հատված ունի իր երկու կողմեն մեյ-մեկ խիթինապատ երկարեցում. բայց այդ բոլոր երկարեցումները ոտք չեն դարձած. ոտք կդառնան միայն մարմնի մեկ սահմանափակ մասի հատվածական երկարեցումները. մյուս հատվածներուն երկարեցումները կծառայեն այլ նպատակներու, որ պիտի տեսնենք. կան հատվածներ ալ, որոնց զույգ երկարեցումները կենդանիի սաղմնային զարգացման շրջանին կերևան, բայց կենդանիի հասուն շրջանին կչքանան:

Խիթինե պատյանին երկրորդ հետևանքը հոդտնիներու «չապիկ փոխելն է»: Որպեսզի կենդանիին աճումը ու իր ծավալին մեծացումը հնարավոր դառնա, պետք է, որ երիտասարդ կենդանին մեջեմեջ դուրս գա իր այդ պատյանի վերին ամուր չերտերեն՝ խիթինի ավելի նուրբ ու ճկուն մասերովը միայն փաթթված. դեռ չհասցած ու դեռ չկոշտացած խիթինը հնար կուտա մարմնի աճումին և անոր զանազան ձևափոխութիւններուն, մինչև որ նորեն հաստանա ու ամրանա:

Ասիկա կկրկնվի հոդտնիներու կյանքի թարմ շրջանին քանի մը անգամ, որու միջոցին տեղի կունենան նաև ներքին գործարաններու և արտաքին ձևի երբեմն չատ խոշոր ու արտասովոր փոփոխութիւններ, որ մեթամորֆոզ՝ այլափոխութիւն կանվանենք:

Խիթինավոր այս կենդանիներու բերած երկրորդ նորութիւնը իրենց մարմնի որոշ մասերու բաժնվիլն է և՛ սրտաքուստ, և՛ ներքուստ, և՛ ձևով, և՛ դերով:

Այս մասերը կառաջանան, երբ որոշ թիվով հատվածներ ավելի սերտորեն իրարու կմիանան, երբեմն կձուլվին և մարմնի մյուս մասերեն ալ կզատվին ավելի կամ նվազ խոր գացող շուրջանակի փոսով մը:

Այսպեսով կենդանիին վրա կզանազանվի հատակորեն առջևի մաս մը, միջին մաս մը և ետևի մաս մը, որ կանվանենք գլուխ, կուրծք և փոր: Երբեմն կուրծքն ու փորը նկատելի կերպով իրարմե զատված չեն ըլլար, տեսակ մը իրար շարունակութիւն կկազմեն, որով կենդանին կունենա գլուխ և իրան, սարդազգիներու մեջն ալ գլուխն ու կուրծքը այնքան սերտ կուգան, կմիանան իրարու, որ կենդանին կունենա միայն գլուխ ու փոր: Բայց երեք մասերու բաժանումը միշտ ալ ավելի հիմնական է, այլև շատ ավելի ընդհանուր:

Գլուխը կազմված է կենդանիի առջևի հինգ հատվածներու ձույլ միացումեն: Այս հինգ հատվածներու հինգ զույգ երկարեցումները եկած շրջապատած են բերնին անցքը և դարձած են սնունդը գտնելու, սնունդը բռնելու, սնունդը ծծելու, սնունդը մանրելու հատուկ գործիքներ. դարձած են շոշափուկներ, ծամիչներ, շրթունքներ, աքցաններ, երբեմն խայթոց կամ կնճիթ. որով և բերանը ավելի բարդացած է ու մեծցած՝ առաջին հատվածեն ավելի վար դեպի երկրորդ ու երրորդ հատվածները տարածվելով:

Բերնեն ավելի դեպի առաջ ու դեպի վեր ուռած ու զարգացած են տեսողական զույգ մը զգայարանքները, որով գլուխը բոլորովին բացառիկ երևույթ մը կստանա, ինչպես որ բացառիկ են արդեն իր բերնին ու աչքերուն դերն ու գործունեութիւնը: Անմիջապես ավելցնեմ, որ այդ գլխու բաժնին մեջն ալ բացառիկ մեծութեան ու կարևորութեան կհասնի հետզհետե այդ բացառիկ աչքերուն բերած գրգիռները ամբարող և այդ բացառիկ բերանը շրջապատող բացառիկ գործիքներուն մկաններուը ղեկավարող

գլխու կանկլիոնը, որ արդեն հինգ հատվածներու միացած կանկլիոն մըն է և որ իր տեղական պետքերուն զատ, նաև ամբողջ մարմնի համայնական շարժումներն ու տեղափոխութիւնները համակարգող կեդրոնն է: Բարդ կազմով ու դերերով խոշոր կանկլիոն մը բնորին վրա, որուն արդեն շատ անգամ ուղեղ անունը կտրվի:

Կուրծքի բաժինը կազմված է երեք հատվածներու միացումեն, երբեմն միացումը դեռ նկատելի, երբեմն բոլորովին ձուլված: Կուրծքի երեք հատվածներուն երեք զույգ երկարեցումներն են ահա՛, որ դարձած են երեք զույգ հոդաւոր ոտքեր: Եթե ավելցնեմ, որ կուրծքի բաժնին վրայի կողմն է, որ ոտքերեն անկախ կառաջանան մեկ կամ երկու զույգ թևեր հոդտնիներու որոշ բարձր տեսակներուն մեջ, իսկույն պարզ կդառնա, որ կրծքի բաժնին վիճակված է հետզհետե ուժեղցող, արագացող ու բարդացող շարժումներն ու տեղափոխութիւնները իրականացնելու պարտավորութիւնը. քալելն ու թռչիլը գործադրողը կուրծքի բաժնի մկաններն ու կանկլիոններն են գլխու բաժնի կանկլիոնին վերին հրամանին տակ:

Փորի բաժինը կազմված է շատ ավելի մեծ թիվով հատվածներե, սովորաբար մեկ-երկու տասնյակ, երբեմն և ավելի: Այդ հատվածները երբեմն նվազ զոդված կըլլան իրարու, երբեմն ավելի սերտորեն. և անհատապես ալ որքան դեպի վերջը՝ այնքան պակաս զարգացած կըլլան: Փորի բաժնին մեջն են էապես բուսական գործարանները՝ աղիքներ, երիկամ, սեռային գեղձեր, ինչպես և արյան մաքրութեյան անոթները: Փորի հատվածին երկարեցումները ետ մնացած գործարաններ են ընդհանրապես. երբեմն մասնավոր զարգացումով մը կծառայեն շարժումե տարբեր նպատակներու, օրինակ՝ կդառնան խրիկ. ուրիշ տեղ մը՝ խայթ. սովորաբար կերևան անոնք սաղմնային զարգացման ընթացքին և ետքը կչքանան. հասուն կենդանիին փորի բաժինը երկարեցումներ չունի ընդհանրապես:

Հողտնիներու բերած երրորդ շատ կարևոր նորութիւնը Հոտառութեան և աչքի զգայարանքներուն ստացած հաճախակի գործածութիւնն է և անոնց խաղցած դերին կարևորութեան խիստ բարձրացումը:

Զգայարանական զարգացման այս երևույթն ալ նորեն խիթինե պատյանին ու Հողավոր ոտքերուն բերած անխուսափելի հետևանքներեն մեկն է:

Հատվածներեն կախված երկարեցումները, ինչպես տեսանք, գլխավորապես կծառայեն շարժումներու զարգացման, նրբացման, ուժեղացման. բերնին շուրջը՝ իբրև բերնին օգնական, կրծքին վրա՝ տեղափոխության. իսկ փորի Հատվածներունը Հետադիմած են ու չքացած, այն պարզ պատճառով, որ տեղափոխութիւններու դյուրացման և արագութեան տեսակետեն ոտքերուն առատութիւնը մեծ օգուտ մը չունի, նույնիսկ խանգար ու բեռ է: Փորի Հատվածին երկարեցումները պարզապես ծնունդ են Հին սկզբունքին՝ Հատվածականութեան. նոր սկզբունքը շարժունակութիւն է, ամեն ինչ այդ նոր սկզբունքին պետք է Հարմարի. և ահա՛ այդ ավելորդ ոտքերը, որոնք Հին դրդումով սաղմնային զարգացման ընթացքին կառաջանան, ընթացք չեն ստանար, կնահանջեն ու կանհետանան:

Շարժումներու կատարելագործութեան տեսակետեն կարևորութիւն ունեցողը ոտքի զանազան մասերե կազմված ըլլալն է, այսինքն՝ Հողավորութիւնը և Հոդերուն մկանային ուժը, այլև Հոդե Հոդ եղած տարածութիւնը, որոնց գումարը ոտքին ընդՀանուր երկարութիւնը կկազմե:

Իսկ ոտքերուն թիվը կանգ է առած երեք զույգի վրա, որուն առաջին զույգը շատ անգամ բռնելու ալ կգործածվի. որով ոտքերուն առնվազն թիվը կիջնե չորսի, որ ծանրութիւն մը ոտքերու վրա պահելու ամենեն Հաստատուն նվազագույն թիվն է: Չորս ոտքը Հաստատ օրենք է Հաջորդ զարգացման բոլոր կենդանիներուն՝ բոլոր ողնավորներուն: Երկու ոտքով քալելը այնքան դժվար դիրք մըն է մարմնին ծանրութիւնը պահելու և այնքան

մկանային բարդ աշխատանքի ու վարժութեան կկարոտի, որ, օրինակ, մարդկային մանուկը տարիներ մը լուրջ ճիգերու պետք ունի չորքոտանիին երկոտանի դառնալու համար:

Հասուածական կենդանին հոդոտնիներու աստիճանին կեցած է երեք զույգ հոդաւոր ոտքերու վրա և ատոնք չարժելով է, որ իր տեղը կփոխե: Այսինքն՝ կենդանին փորին վրայեն բարձրացած է ոտքերուն վրա. փորին վրա քաշելով առաջ չարժվելու տեղ՝ ոտքերուն ծայրերուն վրա առաջ կշարժի, կենդանին սողալեն բարձրացած է քալելու: Իսկ քայլ ըսվածը եռանկիւնի մըն է, որուն սուր անկիւնը մարմնին է կպած և ինչքան որ այդ սուր անկիւնը կազմող կողմերը, այսինքն՝ կենդանիին ոտքերը երկար ըլլան, այնքան ավելի երկար կըլլա գետնին վրա մեկ քայլի մը կտրած տարածութիւնը: Միևնոյն ժամանակ այդ երեք զույգ ոտքերը մշտապես կրեն պիտի իրենց վրա մարմնին ամբողջ ծանրութիւնը և տեղափոխեն պիտի այդ ծանրութիւնը: Եվ վերջապես այդ ոտքերը ստեղծված են շատ քալելու համար, անհամեմատ ավելի չարժուն ու տեղափոփոխ կյանք մը վարելու համար, քան սողացող կենդանիները նախորդ աստիճանի. արդեն շատ ու շուտ չարժվելու պետքին բերած ու հասցուցած պտուղն են ոտքերը:

Ինչքան ատեն որ անողն կենդանին ամրացած է տեղ մը կամ գրեթե անշարժացած է քարե պատյաններու ու կափարիչներու ետև, և ինչքան ատեն որ հողին փակած կսողա դանդաղ իր ամբողջ փորին կողմը գետնին քսելով՝ անոր քովը էապես մեկ զգայարանք մը կգործե՝ շոշափելիքը:

Կենդանիի կաշին ընդհանրապես ամեն կողմեն, մասնավորապես փորի կողմեն և հատկապես բերնին շուրջը գտնվող մասերով անմիջական շփման մեջ է իր շրջապատին հետ. և այդ անմիջական շփումով կառաջնորդվի իր ուտելիքը գտնելու, իր գոյութիւնը պահելու հալիտեռնական կռվին մեջ: Մինչև որդերն ու հոդոտնիներուն սահմանները զգայարանք անվանածնիս մարմնի արտամաշկին մեջ նստած այն բջիջներն են, որոնք կգրգռվին անմիջական շոշափումով, այսինքն՝ կզգան ճնշումը, հպումը,

տաքն ու պաղը և հավասարակշռությունը միշտ ու անմիջական հպումով:

Աչքի կետեր, ականջի փոսիկներ և հոտառական մազիկներ մինչև հոդտոնիները կհանդիպինք միայն հոն, ուր կենդանին կա՛մ ջրերուն մեջ ազատ կլողա, կա՛մ որևէ ձևով համեմատաբար ավելի շարժուձ ունի. և ընդհանրապես դեռ շատ տկար զարգացումով և շատ համեստ գործունեությամբ դեռ շատ աղոտ զգայարանքներ են առոնք:

Արդ՝ հոդավոր ոտքերու և նոր ու աշխուժ շարժման գուգընթաց՝ այդ մինչև հիմա երկրորդական դեր խաղացող, քիչ զարգացած և քիչ գործող զգայարանքները հետզհետե նոր թափ կստանան, նոր զարգացումներ և ձեռք կբերեն առաջնակարգ կարևորություն:

Արագ քալող և արագ թռչող կենդանին այլևս չի կրնար իր կյանքն ու սնունդը ապահովել միայն անմիջական շոշափումով. որսը բռնելու, սնունդ ունենալու համար պետք է գիտնա, թե որ կողմը ուղղվի, ուր դիմե, այսինքն՝ հեռվեն պետք է տեղեկություններ ստանա: Ինքզինքը և իր սերունդը և իր նմանը պաշտպանելու համար պետք է դեռ հեռվեն տեղեկանա, թե վտանգը ուրկե կսպառնա, որ հարձակվի կամ փախչի: Ուրիշ խոսքով՝ ինչքան շարժումները արագանան ու տեղափոխությունները դյուրանան ու հաճախանան՝ այնքան ավելի ու ավելի պետքի կուգան և ավելի կգործեն ու պիտի գործեն այն զգայարանքները, որոնք հեռվեն հեռու, հեռվի ազդեցություններեն կգրգռվին, որոնք հեռու գտնվող աղբյուրներե կստանան իրենց գրգիռը:

Այդ հեռուներեն ազդվող զգայարանքներն են՝ հոտառությունը, տեսողությունը և լսողությունը:

Ա. ՀՈԴՈՏՆԻՆԵՐՈՒՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ի. ԽԵՑԵՄՈՐԹԵՐ

Հոդոտնիներուն երեք գլխավոր դասերն են՝ խեցեմորթերը, միջատներն ու սարդազգիները: Խեցեմորթերը ջրային կենդանիներ են և իրենց զարդացումով հոդոտնիներու ամենեն նախնական տեսակը: Միջատներն ու սարդազգիները, ընդհակառակը, ցամաքային կենդանիներ են՝ առաջացած ծովային տեսակներե:

Խեցեմորթերուն վրայի խիթինին մեջ մեծ չափերով կրային աղեր կան և որ այնքան կարծր կդարձնե անոնց պատյանը և դարձեր է անոնց անվանակոչութեան պատճառը:

Իրենց հատվածներու, ուրեմն և երկարեցումներու զույգերուն թիվը շատ փոփոխական է՝ յոթեն վաթսունի մեջ: Վերին տեսակները ընդհանրապես 20 հատված կըլլան 19 զույգ երկարեցումներով, քանի որ վերջին հատվածը չունենար երկարեցում: Այս բարձր տեսակին կպատկանի խեցգետինը:

Գլուխը կազմված է հինգ հատվածներու ձուլումով. երկու առաջին հատվածներուն երկարեցումները իրենց երկու զույգ շոշափուկներն են. երրորդ հատվածին զույգը դարձած է բերնին կարծր շրթունքը. հաջորդ երկու հատվածներուն երկարեցումները դարձած են ծամիչ ու ջարդիչ: Ավելի նախնական տեսակները գլխեն ետքի հատվածներուն երկարեցումներուն մեջ տարբերութիւններ չունին. երբեմն վերջին հատվածները երկարեցումներ չունին: Բարձր տեսակները ութը հատված ունին կրծքի, որոնց մեջ երկու զույգը ջարդող ոտքեր են, մյուսները քալելու ոտքեր, այլև յոթը հատված փորի, որոնցմե միայն վեցը ունին երկարեցումներ շատ զանազան ձևերով:

Մարսողական խողովակը առանց գալարումներու կերկարի բերնեն սրբանը, կազմված է կերակրափողե, ստամոքսե և աղիքե: Վարի տեսակներուն ստամոքսը պարզ է, իսկ ավելի բարձր տեսակներուն ստամոքսը իր առջևը տոպրակ մը ունի, որուն ներքին երեսին վրա խիթինեն ակռաներ կան և կրային ոսկրիկներ, որոնք

կլրացնեն բերնին մեջ սկսված մանրացման աշխատանքը և ատոր համար ալ կկոչվին ջաղացք: Ունին զույգ մը մարսողական գեղձեր, որոնց արտադրած թթուն ողնավոր կենդանիներու պանկրեասի[16] արտադրած հյութին դերը կխաղա:

Շնչառության վարի տեսակներուն մեջ կկատարվի ուղղակի կաշվի միջով. եթե մարմինը պատող խիթինը չատ է հաստ և արգելք է ազատ շնչառության, մարմնի որոշ կետերուն վրա կմնա բարակ, ուր և կկեդրոնանա շնչառությունը: Եվ այդ կետերը անմիջական կապակցության մեջ են ոտքերուն հետ և իբրև խրիկ կծառայեն: Երբ որ նոր կատարելագործումով ոտքերն ալ ամբողջովին խիթինով կպատվին, այն ժամանակ է, որ կառաջանան իսկական անկախ խրիկներ ոտքերուն մոտը կամ վրան:

Գալով արյան շրջանառության՝ խեցեմորթներու վարի տեսակներուն մեջ արյունը լեցված է ամբողջ մարմնի խոռոչը և մասնավոր անոթներ չկան արյան շրջանառություն տվող. արյան ներքին շարժումը կկատարվի մարմնի կատարած զանազան շարժումներուն իբրև հետևանք: Բայց որքան վեր կբարձրանանք խեցեմորթներուն դեպի բարձրագույն տեսակները, այնքան երևան կուգան հատուկ շրջանառական գործարաններ: Նախ սիրտ մը, որ տեղավորված է կռնակի կողմը և որ ունի կողմնական անցքեր. ուրկե ներս կմտնե արյունը մարմնի խոռոչեն և անցք մը դեպի առաջ, ուրկե ներս մտած արյունը առաջ կմղվի: Որոշ տեսակներ այս սրտեն զատ ուրիշ արյան անոթ չունին: Աստիճան մը ավելի բարձր է, երբ սիրտը կշարունակվի դեպի առաջ երկար խողովակով մը, որ կծկում չունի և կներկայացնե աորդան[17]: Բարձրագույն տեսակներուն մեջ այդ աորդան կճյուղավորվի, որով և ծնունդ կուտա զարկերակներու ամբողջ դրության մը: Բայց ինչ աստիճանի ալ որ ըլլա իրենց զարգացումը, այդ անոթները երբեք չեն վերածվիր մազային երակներու, այլ իրենց բովանդակությունը կթափեն նորեն ուղղակի մարմնի խոռոչը՝ ողողելով բոլոր գործարանները: Խեցեմորթներուն արյունը միշտ անգույն է և ամիոպային շարժումներով գնդիկներ ունի:

Իբրև արտաթորական գործարան սկիզբը երևի եղած են յուրաքանչյուր հատվածի վրա արտաթորող զույգ մը գեղձ իրենց

հատուկ անցքերով, որոնք կվերջանային իրենց հատվածի երկարեցումներուն հիմքին վրա: Բայց հիմա հասուն կենդանիներեն ոչ մեկուն վրա չէ մնացած այդ հատվածական արտաթորական շարքը. ատոնք միացած են և առաջացուցած մեկ-երկու զույգ գեղձ և ավելի հաճախ պարզապես միայն մեկ զույգ մը: Այս վերջնական զույգը սովորաբար կգտնվի շոշափուկներու հատվածին վրա կամ ծամիչ հատվածին վրա, բայց կրնա և ավելի ետ գտնվիլ:

Խեցեմորթները ունին արու և էգ գեղձերը միաժամանակ միևնույն անհատին վրա: Սեռական գեղձերը սկզբնապես զույգ են եղած, որոնք սակայն իրարու մոտենալով միացեր են և կենդանիի մեջտեղի գծին վրա կազմած են մեկ գեղձ մը, որը սակայն կպահէ ընդհանրապես իր երկու խողովակներն ու անցքերը: Սերմնիկները արտադրող գեղձին երկու անցքերը կբացվին կրծքի հատվածներուն վերջինին վրա, իսկ ձվիկները արտահանող անցքը կգտնվի կրծքի վեցերորդ հատվածին վրա:

Զգայարանքներեն շոշափումը կկատարեն վերնամաշկին բջիջները, որոնք մազային վերջավորութիւններ ունին դեպի արտաքին աշխարհը. այս բջիջները նստած են խիթինե զերծ մասերուն վրա, բայց մանավանդ շոշափուկներուն վրա: Շոշափուկներուն վրա են նաև հոտառական զգայարանները, որոնք մազային փունջով մը վերջացող կարճ ջղային թելեր են: Հավանորեն բերնի մասերուն վրա ըլլալու են համ առնելու բջիջներ իրենց վերջավորութիւններով:

Լսողական գործարան մը խեցեմորթերու մեկ-երկու տեսակներուն վրա միայն նկարագրված է քիչ-շատ ավելի հաստատութեամբ: Ասոնք ընդհանրապես փոս մը կներկայացնեն, որուն պատերուն վրա լսողական բջիջներ են մազային վերջավորութիւններով: Փոսը դեպի դուրս տանող անցք մը ունի, որ բռնված է մետաքսային մազերով և խոռոչին մեջն ալ քանի մը կրային հատիկներ: Կան տեսակներ ալ, որոնց անցքը զոց է և մեջի կրային հատիկները պարտադիր չեն: Այս լսողական խոռոչները, որոնք անշուշտ հավասարակշռութեան ալ կծառայեն շատ ավելի մեծ հավանականութեամբ, երբեմն պոչի հատվածին տակն են, որ իբրև

լուղակ ալ կգործածվի, երբեմն ալ շոշափուկներուն արմատին վրա:

Ավելի բարձր զարգացման հասած է աչքը: Խեցեմորթերուն աչքերը քանի մը տեսակ կրնան ըլլալ: Նախ՝ պարզ աչքը, որ ամենեն նախնական խեցեմորթերուննէ, կներկայացնե գույն պարունակող խորքի մը վրա շարք մը տեսողական բջիջներ՝ ընդհանրապես մեկ կեդրոնական բջիջի մը շուրջը դասավորված շրջանաձև: Այս տեսակ աչք կենդանին կրնա ունենալ մեկ կամ երկու հատ. երկու եղած պարագային իրարու կցված կամ իրարմե զատ-զատ. նույնիսկ կրնա ըլլալ երեք հատ և սովորաբար իրարու կից:

Խեցեմորթերու ավելի բարձր տեսակները ունին արդեն բաղադիր տեսակի աչքեր: Աչքը բաղկացած է բազմաթիվ միություններե, որոնցմե ամեն մեկը արդեն առանձին գործարան մըն է, առանձին ամբողջություն մը՝ կազմված քանի մը տեսակի բջիջներե, որոնք որոշ դասավորությամբ կգտնվին նույն առանցքին շուրջը: Խորքը ռետինային[18] բջիջներ, անոնց շուրջը գույն պարունակող բջիջներ և ատոնց վրան քրիստալային[19] բջիջներ, որոնք իրենց արտադրած հյութովը իրենց մեջը ձվաձև մարմին մը կկազմեն. քրիստալային բջիջներուն վրայեն կանցնի կորնեայի[20] մանր բջիջներ և անոր վրայեն ալ կենդանիի կաշիին արտամաշկը, որ այդ մասին վրա կդառնա թափանցիկ: Յուրաքանչյուր բաղադիր աչք կազմված է այս տեսակ տեսողական բազմաթիվ միություններե: Երբեմն կպատահի, որ այս փնջավորման միջոցին ամեն միության արտամաշկի առանձին երես մը կհամապատասխանե. երբեմն արտամաշկը այդ բոլոր միություններուն վրայեն իբրև մեկ երես մը կանցնի: Առաջին պարագային կստացվի բազմերես ու մանրերես բաղադիր աչք մը. իսկ երկրորդ պարագային՝ միերես խոշոր աչք մը, որ ներքուստ նորեն բաղադիր է սակայն: Բաղադիր աչքերը կըլլան սովորաբար երկու հատ կենդանիին գլխուն վրա և կողմնական դիրքով. սակայն կրնան և իրարու մոտենալ և իրար կցվիլ կեդրոնին մոտիկ և կազմել մեկ հատիկ կեդրոնական աչք մը:

Խեցեմորթերուն ղղային դրությունը կրնանք բաժնել երկուքի՝ գլխու կանկլիոնները և մարմնի կանկլիական շղթան: Գլխու

կանկլիոններուն մեկ մասը բերնին վրայի կողմն է, մյուս մասը՝ բերնին տակը: Բերնին վրայի կանկլիական զանգվածը ունի կեդրոնական կտոր մը. որուն հարած են երկու զույգ շոշափուկներուն կանկլիոնները և զույգ մը աչքերուն կանկլիոնները. բերնի վրայի կանկլիական զանգվածը կղեկավարե ուրեմն ընդհանրապես բերնին առջևը և բերնեն վեր գտնվող մասերուն և զգայարաններուն աշխատանքը. միևնույն ժամանակ, ինչպես արդեն գիտենք, կկեդրոնացնե ու կվարե մարմնի ընդհանուր շարժումներուն գործակցությունը: Բերնին վրայի այս ուղեղը ջղային զույգ մը թելով կկապվի կերակրափողի երկու կողմերեն բերնին տակը գտնվող գլխու մնացած հատվածներու կանկլիոն զույգերուն, այսինքն՝ ծամիչներու, ջարդիչներու, աքցաններու և ընդհանրապես բերնին շուրջը կատարվող աշխատանքներու տեղական ղեկավարութեան հետ: Բերնին տակի այս երկու-երեք զույգ կանկլիոնները միջին դիրք մը ունին. մեկ կողմեն գլխու կանկլիոն են, մյուս կողմեն մարմնի կանկլիական շղթային բնական շարունակութեյունը կներկայացնեն:

Գալով մարմնի կանկլիական շղթային՝ միևնույն որդերու ելարան դրութեյունն է փորի կողմեն, յուրաքանչյուր հատվածին զույգ մը: Բայց այս պարզ կանոնավորութեյունը հաճախ կփոխարինվի կանկլիական կցումներով. սովորաբար կուրծքի և փորին վերին հատվածներուն կանկլիոն զույգերն են, որ իրարու կմոտենան ու կմիանան, մինչդեռ մարմնի վերջին մասին կանկլիոն զույգերը ավելի հակում ունին իրարմե հեռու մնալու. բայց այս զույգերն ալ շատ հաճախ ըստ լայնքի կկցվին իրարու. որով իրանին կեսը կանկլիոններու ելարան կներկայացնեն և շարունակութեյունը միաթել կանկլիական շարք մը: Երբեմն մարմնի ամենավերջին քանի մը կանկլիոնները տեսակ մը լուծվելով միասին ընդհանուր թնճուկ մը կկազմեն: Երբեմն ալ մարմնի կանկլիոններուն բոլոր զույգերը կանոնավոր կերպով իրենք իրենց մեջ ըստ լայնքի միանալով կանկլիական միաթել շղթա մը կկազմեն վերեն վար:

Ուրեմն ընդհանուր պատկերն է. 1) Բերնին վրայի կողմը կանկլիական զանգված մը ավելի կամ նվազ ընդգծված զանազան

մասերով, 2) Բերնին տակը գլխու մնացած հատվածներուն երկու-երեք զույգ կանկլիոնները իրարմէ անջատ, որոնք մեկ կողմեն կապված են վերի զանգվածին, մյուս կողմեն ալ մարմնի շղթային, և 3) Մարմնի այդ շղթան, ըլլա կանոնավոր դասավորութեամբ թե ձևափոխված, ըլլա մեկ թե երկու շղթայով կազմված:

II. ՄԻՋԱՏՆԵՐ

Միջատներուն դասը կենդանական աշխարհի ամենահարուստն է իր տեսակներով: Մոտ 272.000 կհաշվեն կենդանական մեզի ծանոթ բոլոր տեսակներուն թիվը ընդհանրապես: Ատոնցմե 209.000-ը կպատկանի հոդոտնիներու ճյուղին. և հոդոտնիներեն ալ 180.000-ը միջատներն են. որ ըսել է՝ բոլոր կենդանական տեսակներուն երկու երրորդը: Ասոր փոխարեն այդ բազմատեսակ միջատները բոլորն ալ հիմնապես նույն կազմը ունին և այդ հիմնական սահմաններուն մեջ եղած փոփոխութիւններն ալ շատ կանոնավոր են ու շատ հստակ:

Միջատներուն մարմինը որոշ կերպով ունի միշտ երեք բաժանում՝ գլուխ, կուրծք, փոր:

Գլուխը արտաքին հատվածականութիւն չունի, կկրե աչքերն ու բերանը: Բերնին առջևը զույգ մը շոշափուկ և բերնին շուրջը չորս զույգ երկարեցումներ. զույգ մը միացած կկազմեն վերին շրթունքը, զույգ մը ծամիչներ են, զույգ մը մանրիչ. վերջին զույգը մանրիչներուն միացած կկազմեն ստորին շրթունքը: Ատոնցմե մանրիչները երկննալով և փրար կցվելով կկազմեն թիթեռնիկներուն կնճիթը՝ ծծիչը: Վերջին երկու զույգերու միացումեն ու երկարեցումեն կառաջանա մոծակներուն խայթը՝ ծակիչը, կամ կվերածվի մեղուներու լզելու գործիքին: Վերջին զույգերը կրնան և զգայարանքի վերածվիլ. արդեն բոլոր մասերուն վրա ալ կան զգայական մազիկներ. զգայութեյան կծառայե նմանապես և վերին շրթունքը:

Կուրծքը կազմված է երեք հատվածներե ընդհանրապես արտաքուստ ո՛չ որոշելի. իրենց զույգ երկարեցումները կկազմեն

միջատներուն վեց ոտքերը: Յուրաքանչյուր ոտք հինգ մասե և հոդավորված. ոտքերը քալելու համար են. առջևի զույգը երբեմն նաև բռնելու կծառայի, վերջին զույգը՝ նաև ոստնումի: Միջատներուն մեծագույն մասը ունին և թևեր, որոնք երկարեցումներուն հետ ո՛չ մեկ կապ չունին և կներկայացնեն թիկունքի վերնամաշկին աճմունքը: Թևերը հիմնապես երկու զույգ են և կրծքի վերջին երկու հատվածներուն վրա: Երբեմն միջին հատվածին թևերը թռչելու չեն, այլ պատյան են երրորդ հատվածի վրա եղող իսկական թևերուն: Երբեմն վերջին զույգ թևերը նահանջած վիճակով կըլլան կամ կծառայեն իբրև հավասարակշռության զգայարան:

Փորը նախապես կազմված է տասնմեկ հատվածե, որոնք հաճախ կսահին իրարու վրա դեպի վերջը կամ կզեղչվին, որով իրենց թիվը կպակսի մինչև հինգ: Կենդանիի հասուն վիճակին մեջ փորի հատվածները երկարեցումներ չունին. շատերը կունենան այդ երկարեցումները լրիվ կամ մասամբ իրենց սաղմնային շրջանին: Երբեմն հասուն վիճակի մեջն ալ ատոնցմե ոմանք կմնան ձևափոխված կերպով և զգայարանական կամ սեռական զանազան դերերով:

Մարսողական, արտաթորական և սեռական գործարանները իրենց կազմով ու աստիճանով խեցեմորթներեն հիմնական տարբերություն մը չունին. մեծ նորությունը շնչանոթներն են: Միջատները բոլորն ալ ըլլալով ցամաքային՝ օդեն սլիտի ստանան իրենց անհրաժեշտ թթվածինը. միջատներուն մեծ մասը ո՛չ միայն ցամաքային են, այլև օդային, մշտական չարժման մեջ են օդերուն մեջեն, որ թռչիլ կանվանենք: Մյուս կողմեն ալ միջատներուն մարմինը ամեն կողմե պատած է խիթինով: Քանի դեռ կենդանին օդ չէ բարձրացած՝ առանձին օդառական գործարաններ չկան, կաշվի միջով կկատարվի շնչառությունը: Բայց երբ չարժումը կարագի, երբ թռիչքը կսկսի և առատ ու արագ օդափոխությունը կդառնա պահանջ, միջատներու մարմնի վրան տակի կողմեն, սովորաբար ամեն հատվածի երկու կողմեն մեյ-մեկ անցք կբացվի օդի, ուրկե խողովակով մը կերկարի ներս մեկ-երկու ճյուղով. հետզհետե այդ զանազան հատվածներուն խողովակները տեղ-տեղ իրարու հետ հարաբերության կմտնեն, մինչև որ բոլորն ալ ի վեր-

ջո իրարու կապվելով թե՛ լայնքի և թե՛ երկայնքի ճյուղերով կառաջացնեն շնչանոթներու ամբողջական դրուքթյուն մը, որուն մեջեն օդը մշտապես շրջան կընե և իր թթվածինը կփոխանակե միջատի արյան ածխաթթվին հետ:

Իր զարգացման վերջնական վիճակին մեջ շնչանոթները կներկայացնեն երկու մեծ խողովակ ամբողջ մարմնի երկայնքով և բազմաթիվ կողմնական ճյուղերով կապված իրարու և փաթթված մյուս գործարաններուն: Այս տեսակ միություն մը առաջացնելեն ետքը ամեն հատվածի վրա անպատճառ անցքեր ունենալը կդառնա երկրորդական. սովորաբար վորի հատվածներու վրայի անցքերեն մեկ-երկուքն են, որ կմնան: Շնչառական այս խողովակները խխրինի օդակաձև թանձրացումներով մշտապես բաց վիճակի մեջ են: Շնչանոթային այս դրուքթյունը հատուկ է միայն միջատներուն: Հետաքրքիր է, որ ջրային կենցաղին հարմարած քանի մը միջատներու չերեփուկներուն քով ամեն մեկ հատվածի շնչանոթը մարմնեն դեպի դուրս կերկարի՝ ջուրին մեջը կազմելով պարկուկներ, նմանվելով կենդանիի կողերն ի վեր կախված խրիկներու. այս է, որ շնչանոթային խրիկներ կկոչվին:

Շնչանոթային այս նոր դրուքթյունը բնականաբար իր ազդեցուքթյունը կընե նաև միջատներուն արյան շրջանառուքթյանը վրա, որ միշտ սերտ կապված է շնչառուքթյան հետ, քանի որ իր դերը մաքրված արյունը դեպի գործարանները տանիլն է և գործածված արյունը դեպի շնչառական կեդրոնները. շրջանառուքթյան էուքթյունը արյան թթվածին մատակարարելն է: Արդ՝ շնչանոթները այդ անհրաժեշտ թթվածինը իրենք կհասցնեն մարմնի բոլոր մասերն ու գործարանները, որով ավելորդ կդարձնեն շրջանառական խողովակներու կազմվիլը: Այդ պատճառով ալ միջատներու շրջանառական անոթային դրուքթյունը հետագիմած է որդերու ու խեցեմորթներու հետ համեմատած: Եղածը մեջքի կողմը արյան շարժում տվող կծկվող անոթ մըն է, որ դեպի առաջ ալ քիչ մը կերկարի. կծկվող անոթը իրար հաջորդող փոքր տոպրակներու շարք մըն է, որոնցմե ամեն մեկը հատվածի մը կհամապատասխանե: Ամեն տոպրակ ունի կողմնակի անցքեր, ուրկե արյունը մարմնի խոռոչեն կմտնի այդ բազմատոպրակ սիրտը. դեպի ետ ճամբա

չկա. սրտին կծկումները կմղեն արյունը միակ խողովակով դեպի գլուխը և չարժում կուտան այսպեսով կենդանական խոռոչին մեջ լեցված և բոլոր գործարաններն ու չնչանոթները ողողող արյունային Հեղուկին: Ուժեղ թռիչք ունեցող միջատներու մարմնին մեջ չնչանոթները պարկեր կկազմեն երկու կողմեն մեյ-մեկ հատ, որոնք կենդանիի ծանրութիւնը կպակսեցնեն:

Միջատներու ավելի նախնական աստիճանի զգայարանքները, այսինքն՝ հպումի, ճնշումի, տաք ու պաղի, այլև համ ու հոտի գործարանները դուրս երկարած մազիկներով արտաշերտային բջիջներ են, որոնք առատութեամբ կգտնվին բերնի երկարեցումներուն վրա, վերին շրթունքին վրա մասնավորապես, որ խեցեմորթներու երկրորդ զույգ շոշափուկներուն կհամապատասխանե, ինչպես նաև բուն շոշափուկներուն վրա:

Բարձր զգայարանքներեն լսողութիւնը կկատարվի մասնավոր տեսակի բջիջներու միջոցով, որոնք անմիջապես վերնամաշկի տակ նստած կըլլան: Այս լսողական բջիջները կխմբվին հաճախ թաղանդի մը ետևը, ուրկե բաժնված կըլլան չնչանոթի մը լայնացումովը և ուր չնչանոթը ձայնը բազմապատկող սնտուկին դերը կխաղա: Այս տեսակի թմբկաթաղանդավոր լսողական գործարաններ ունին ծղրիթները փորի առաջին հատվածին վրա, մորեխներն ու ճպուռները՝ կրծքի վերջին հատվածին վրա:

Գրեթե բոլոր միջատները ունին բաղադիր բազմերես աչքեր, որոնք հաճախ ահագին զանգված մը կկազմեն գլխուն վրա: Ասկե զատ քողաթև միջատները ու երկթև բարձր միջատները ունին նաև ոսպավոր աչքեր. մեկ կամ երեք շարքով արտաշերտի բջիջներ են ասոնք, այսինքն՝ չիտակ կա՛մ անգամ մը ինքն իր վրա ծալք տված արտաշերտի կտոր մը խիթինին տակը, որ այդ մասին վրա կհաստնա կրկնուռուցիկ կերպով: Այս ոսպավոր աչքերը սովորաբար երեք հատ կըլլան իրարու մոտ եռանկյունի դասավորութեամբ: Միջատներեն շատերը իրենց չերեփուկ վիճակին մեջ միայն այս ոսպավոր աչքերը ունին, ինչպես և անթև միջատները:

Միջատներու գլխու կանկլիոնը հիմնական տարբերութեյուն մը չունի խեցեմորթներու վիճակեն: Հոս ալ բերնին վրա կեդրոնական կտորի մը քովերն ու առջևը կցված են շոշափուկներուն և

աչքերուն բերած աճմունքները. և ասոնց առջևն ալ ավելի ևս դեպի առաջ երկարած և ավելի կամ նվազ շեշտված կերպով ուրիշ երկու աճմունքներ, որոնց մասին վերջը խոսվի պիտի: Կերակրափողը գրկելով վերի զանգվածին կմիանան գլխու վարի կանկլիոնները, երբեմն ուղղակի կանկլիոնը կանկլիոնին կպած իբրև ամբողջություն մը, երբեմն ջիղերով իրարու հետ միացած:

Մարմնի կանկլիական շղթան երեք կուրծքի և տասնմեկ փորի կանկլիական զույգեր կկապե իրարու, բայց գրեթե միշտ կա կեդրոնացում: Մեղուն երկու կանկլիոն ունի միայն կրծքի մասին վրա. ավելի պզտիկ մը, որ առջևի զույգ մը ոտքը կջղավորե և ավելի խոշոր կանկլիոն մը, որ երկու հատվածներու մեկի ձուլված կանկլիոնն է և ետևի երկու զույգ ոտքերն ու թևերը կջղավորե: Մեղվի փորի շղթան ունի միայն չորս կանկլիոն: Ճանճի և քանի մը ուրիշ երկթև միջատներու մարմնի կանկլիոններուն վիճակը ամենեն կեդրոնացածն է. կանկլիական մեծ գունդ մը կրծքին մեջտեղը, ուրկե կճառագայթեն ջիղեր դեպի ոտքերն ու թևերը և երկար թել մըն ալ դեպի փորի մասը մինչև ծայրը, ուրկե կողմնակի թելերով ամբողջ փորը կջղավորեն: Մարմնի կանկլիոններուն դեպի կեդրոնացում դիմելը նկատելի է նույնիսկ միջատի շերեփուկային վիճակեն մինչև հասուն վիճակին հասնիլը:

Միջատները իրենց այս հիմնական ջղային դրության կից ունին հատուկ երկու զույգ կանկլիոն, որոնցմե մեկ զույգը կղեկավարե մարսողական գործարաններուն վերին մասերը՝ իր ջիղը ցանցելով անոնց վրա, իսկ մյուսը կջղավորե շնչանոթային բոլոր խողովակները: Այս երկու զույգերն ալ անմիջապես առանձին ջղային լարով կապված են գլխու վերին զանգվածին: Մասնավորապես հետաքրքիր է շնչանոթները ղեկավարող այս հավելվածական ջղային գոյությունը: Նախ հետաքրքիր է, որ կապված է անմիջապես գլխու ուղեղին. նոր ստեղծված այդ օդառական խողովակները այլևս չէին կրնար կապվիլ հին տեղական հատվածական կանկլիոններուն, որոնք իրենց հին կապերը ունեին և իրենց տեղերեն հեռացած էին: Այդ նոր խողովակները ընդհանուր գործածության նորահնար գործիք են և որոնց ղեկավարությունը կանցնի ահա՛ անմիջապես կեդրոնին: Եվ որովհետև հին հատվա-

ծական կազմին հետ զարգացած չէ, այդ կանկլիոններեն իջնող թելերն ալ հյուսված ու խառնված չեն ընդհանուր շղթայի ջիղերուն. այլ հավելվածական կերպով զատ ջիղով մը կանկլիական շղթային վրայեն կիջնեն մինչև մարմնին վերջը և ճանապարհին օգտվելով հիմնական շղթայի ճյուղավորումներեն՝ իրենք ալ կճյուղավորվին անոնց վրայով անոնց զուգահեռ:

III. ՍԱՐԴԱԶԳԻՆԵՐԸ

Միջատներու երրորդ դասը կկազմեն սարդազգիները, որոնց ավելի նախնական ձևերը առաջ նույնպես ջրային են եղած, բայց վերջը ելած են ցամաք և հիմա գրեթե բոլորը ցամաքային են. և կբաժնվին երկու գլխավոր կարգերու՝ զանազան տեսակի կարիճներ և զանազան տեսակի սարդեր:

Սարդազգիներուն առաջին հիմնական տարբերությունն այն է, որ գլուխն ու կուրծքը միացած անբաժան միություն մը կներկայացնեն, այնպես որ կենդանին արտաքուստ երկու մաս ունի միայն գլխակուրծ և փոր. փորին հատվածները կրնան նույնպես միացած ըլլալ և կամ բաժան: Կարիճները փորին ետևը ունին երկրորդական փոր մը ևս կամ ավելի ճիշդ՝ պոչ մը, այսինքն՝ քանի մը հատվածներու քիչ զարգացած չարք մը, որ կվերջանա թունավոր խայթոցով մը:

Կրծագլխուս վրա են կեդրոնացած կենդանիին բոլոր երկարեցումները: Փորը երկարեցումներ չունի, երբեմն հետքերը կըլլան, անցողակի կամ տևական: Երկարեցումներու ձևափոխում մը կնկատվի կարիճներու մարմնի վերջին խայթը, ինչպես և սարդերու փորին վերջը տեղավորված մետաքս արտադրող գործարանը: Կրծագլխուն վրա եղած երկարեցումները միշտ վեց զույգ են. ատոնցմե երկուքը կարելի է իբրև գլխու երկարեցումներ նկատել, չորսը՝ մարմնի, այսինքն՝ ոտքեր: Առաջին զույգը, որ միջատներու շոշափուկին կհամապատասխանե, կտրող գործիք մըն է՝ մկրատ մը, աքցան մը, երբեմն ճանկ մը: Երկրորդ զույգը բռնելու գործիք է դարձած կարիճներու համար և շոշափական դեր ունի սար-

ղերուն համար: Ուրեմն սարդագղիներու ոտքերը չորս զույգ են, ամեն մեկը վեց հոդե կազմված և ընդհանրապես շատ երկար:

Սեռական, մարսողական և արտաթորակ գործարանները միջատներու բարձրության եղող կազմություն ունին և մեծ տարբերություն մը չկա: Շնչանոթները նոր զարգացում մը ստացած են անով, որ առաջացուցած են թոքեր. իրարու սեղմված շնչանոթներու փունջ մը մարմնի խոռոչին մեջ երկարած կազմած է տոպրակ մը, որ լայն անցքով մը կբացվի փորին տակը: Արյունը մարմնի խոռոչեն կուգա երկու շնչանոթային պատյաններու մեջ ինկած մաս մը. շատ նուրբ պատերուն միջով կկատարվի թթվածինի ու ածխաթթվի փոխանակությունը: Փորի բաժնին մեջն են այս թոքերը և սովորաբար չորս հատ, կրնան և երկուքի բաժնվիլ. այդ թոքերուն կից կգործե նաև հին շնչանոթային դրությունը:

Թոքերու առաջացման հետ կկատարելագործվի նաև արյան շրջանառության դրությունը: Կարիճներու սիրտը գրեթե ամբողջ փորի բաժինը բռնող յոթը տոպրակներու շարք մըն է կծկվող, ամփոփված ընդհանուր տոպրակի մը մեջ, որ լեցված է թոքերեն եկող արյունով. հոնկե յուրաքանչյուր տոպրակիկ իր կողմնական զույգ մը ծակերեն ներս կառնե մաքրված արյունը և կողմնական արյան անոթներով կմղե մարմնի զանազան մասերը. սորդ մըն ալ արյունը կտանի դեպի գլուխը, ուր և կճյուղավորվի: Մազային անոթներ չկան. արյունը ուրեմն նորեն կուգա կթափի մարմնի խոռոչը գործածվելու համար գործարաններեն, շնչանոթներուն շուրջը մաքրվելու և նորեն դեպի սիրտերուն ընդհանուր տոպրակը լեցվելու համար:

Ջղային դրությունը կարիճներու քով ավելի հատվածական է. գլխու կանկլիոն մը խոշոր և անկե եռքը ամբողջ մարմնի երկայնքով մեկ ջիղի մը վրա շարված կանկլիոններ իր հատվածներուն համապատասխան. կուրծքի հատվածներուն զույգերը ավելի սերտ միացած են իրարու, փորի զույգերը ավելի անջատ են իրարմե: Իսկ սարդերուն կանկլիական դրությունը կեդրոնացման վերին աստիճանը կներկայացնե. անոնց գլխու ու կրծքի բաժիններուն իբրև մեկ ամբողջություն մը իրարու միացած ըլլալը կնպաստե նաև գլխու կանկլիոններու զանգվածի դեպի կուրծքը սահե-

լուն, որով կունենանք մեկ հատիկ կանկլիոն մը կենդանիի մարմնին մեջ, որ իր ամեն կողմ ճառագայթող ջղային լարերով կջղավորե ամբողջ մարմնի բոլոր մասերը:

Գլխու կանկլիոնը սահած և կպած է մարմնի ընդհանուր կանկլիոնին, բայց ձուլված չէ անոր հետ, միշտ իր զատութիւնը կպահէ: Եվ ընդհանրապես այս բոլոր աստիճանի ու ձևի միացումներու և կեդրոնացումներու ատեն պետք է միշտ ընդգծվի, որ կա մոտեցում, կցում և արտաքին միացում, բայց չկա իրարու խառնվիլ: Արտաքուստ իբրև մեկ անբաժան կանկլիոն մը կներկայացնեն, բայց ներքուստ անոնք իրարու սեղմված հատվածական կանկլիոններու չարքեր են, իրենց հին բնական-ժառանգական կարգովը: Եթե հոս ու հոն, մանավանդ գլխու բաժնին մեջ, երբեմն այս կանոնավոր դասավորութիւնը կխառնվի որոշ մասերու դուրս կամ ներս սահելովը, ատոնք բոլորը կունենան իրենց հատուկ պատճառները, նոր գործարանի մը զարգացումը, նոր աճմունք մը, նոր միջամտութիւն մը: Իբրև սկզբունք կմնա հատվածականութիւնը և հատվածական վարչութիւնը. այսինքն՝ ամեն մեկ հին հատվածի մը մասերը, ուր ալ որ սահած ըլլան ու հիմա գտնվին, միշտ կջղավորվին նույն կանկլիական կեդրոնեն, որ կներկայացնե իրենց հին հատվածին հին կանկլիոնը:

Գ. ՓԱՓԿԱՄՈՐԹԵՐՈՒՆ ՃՅՈՒԿԸ

Ի. ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Բարձրագույն անողն կենդանիները կկազմեն երկու ճյուղ՝ Հողտոնիները և փափկամորթերը:

Փափկամորթերու և օղավոր կենդանիներու նմանութենեն կեզրակացնե կենդանաբանութիւնը, որ փափկամորթերը առաջացած պիտի ըլլան օղավոր որդերու մեկ տեսակեն: Բայց արդի գոյութիւն ունեցող փափկամորթերու բոլոր դասերն ալ որդերեն շատ բարդ ու բարձր զարգացում ունին. այնպես որ պետք է են-

թաղրենք, թե օղավոր որդերեն առաջացած ըլլալու են շատ ավելի պարզ կազմով փափկամորթեր, որոնց ավելի զարգացած ու կատարելագործված վիճակը կներկայացնեն փափկամորթերու արդի ապրող տեսակները:

Փափկամորթերը կներկայացնեն անողն կենդանիներու վերջին ճյուղը. իրենց որոշ գործարաններն ու ընդհանուր կազմը անողն կենդանիներու ամենեն բարձր վիճակն է, մինչ անոնց մյուս գործարանները, հատկապես կենդանական գործարանները շատ ավելի հետամնաց են, քան հոդտոնիներունը. պատճառը իրենց չարժունակութեյան պակսիլն է, իրենց ջրաբնակ մնալը և իրենց հաստ կրային պատյանները, որոնց պաշտպանութեյան տակ կապրին անոնք, գոնե մեծագույն մասը:

Այդ պատյանը կըլլա երբեմն երկփեղկ, ինչպես ոստրեն կամ ձկնականջը, երբեմն մեկ կտորե ինքն իր վրա ոլորած փող մը, ինչպես խխունջինը, երբեմն և առանց ոլորի շեփորի ձևով. և վերջապես կան տեսակներ ալ, որոնց պատյանը դարձած է երկրորդական ու նահանջած մնացորդ գործարան մը և չի կատարեր այլևս իր պաշտպանողական դերը. կան և սակավաթիվ տեսակներ, որոնք ամենևին չունին այդ պատյանը:

Փափկամորթերը կբաժնեն երեք գլխավոր դասերու. 1) Շերտախրիկներ կամ անգլուխ փափկամորթեր, միշտ երկփեղկ պատյանով. 2) Փորոտնիներ. այսպես կկոչվին, որովհետև լայն մկանային շերտի մը վրա կսողան, որուն մեջեն կանցնի իրենց մարսողական գործարանը. ասոնք միակտոր պատյան ունին. և 3) գլխոտնիներ, որոնց բերնին չուրջը կերկարին ուժեղ բազուկներ կամ ոտքեր:

II. ՇԵՐՏԱԽՐԻԿՆԵՐ

Շերտախրիկներուն մարմինը պատյանին անմիջապես տակը ամբողջովին շրջապատված է վերարկուով մը, որուն կռնակի մասը փակած է կենդանիի մարմնին, իսկ փորի կողմի երկու փեշերը ազատ կմնան և իրենց ու կենդանիի մարմնին միջև բաց տարածութեյուն մը կձգեն. այդ փեշերը ամբողջ իրենց եզերքովը կամ

մասամբ կրնան իրարու միանալ, որով կառաջանա փեչային խոռոչ մը, որ մեկ կամ երկու անցքով արտաքին աշխարհի հետ կհաղորդակցի: Փեչերու այդ բացվածքին կամ խոռոչին մեջն են կախված կենդանիին երկու լայն չերտեր ներկայացնող շնչառական խրիկները. հոտ է կախված նաև, ուռած տոպրակի մը պես, կենդանիի ներքին գործարաններուն կապոցիկը և դեպի դուրս երկարող մսուտ ոտք մը. այդ խոռոչին մեջ կբացվին նույնպես ներքին գործարաններուն բոլոր անցքերը՝ բերանը, սրբանը, արտաթորական և սեռական անցքերը:

Ներքին գործարաններեն մարսողականը չատ պարզ է. բերնեն ուղիղ լայն ստամոքսը կմտնե, որ թաղված է ահագին լյարդի մը մեջ. գալարուն աղիքը կիջնե և, տարօրինա՛կ երևույթ, սրտին մեջեն անցնելեն ետքը կհասնի սրբանին: Երկու խոշոր երիկամներ, որոնք սիրտը շրջապատող կենդանական խոռոչեն կծծեն արյան մեջի այրված ու գործածված մասերը և կարտաթորեն: Սիրտը ինքը կազմված է կծկային պարկե մը, իր երկու կողմեն մեյ-մեկ ունկ ունի և դեպի առաջ ու դեպի ետ մեյ-մեկ զարկերակ կղրկե: Խրիկներուն մեջ մաքրված արյունը կուգա սրտին ունկերը, հոնկե կանցնի պարկուկը, որ և կմղե արյունը զարկերակներով դեպի մարմնին մասերը. ո՛չ դարձերակ կա, ո՛չ մազային երակներ. զարկերակներեն արյունը կթափի գործարաններուն մեջերը ու կլճանա. գործածված արյունը մասամբ կծծվի երիկամներեն, մասամբ կմաքրվի խրիկներուն մեջ և կհոսի նորեն սրտին ունկերը: Ուրեմն շնչառական գործարանները խրիկներն են: Այս դասի մեծագույն մասի սեռական գեղձերը երկսեռ են, որոնցմե ամեն մեկը առանձին անցքով կարտահանե իր արտադրությունը դեպի ջուրը, ուր և կկատարվի բեղմնավորությունը:

Զգայական գրգիռներեն հպումը, ճաշակն ու հոտը կստացվին այն զգայական բջիջներու միջոցով, որոնք ցրված են քիչ մը ամեն կողմ, մասնավորապես վերարկուի փեչերուն և բերնին վերի զգայական շրթունքին վրա: Լսողական զգայարանքը երկու տոպրակի ձևով կգտնվի կերակրափողին տակ, բայց կապված է ուղղակի գլխուն վրայի ուղեղին հետ. տոպրակներուն հիմքին բջիջները կոնաձև են և կվերջանան չարժուն թարթիչներով. տոպրակ-

ները հյութով են լեցուն, ուր կան մեկ կամ քանի մը կրային գնդիկներ: Այս կոնաձև բջիջներն են լսողական բջիջները, որոնց ետևը կուգան ու կվերջանան լսողական ջիլը կազմող թելերուն մազիկները:

Աչք ընդհանրապես չունին, ինչպես բոլոր տեղ մը փակած կյանք վարող կենդանիները. եղած ատենն ալ նախնական բան մըն է, քանի մը գույն պարունակող բջիջներե բաղկացած, որոնք կապված են գլխու ուղեղին: Այդ նախնական աչքերը կգտնվին վերարկու փեշին եզերքը, երբեմն մեկ-երկու հարյուրի չափ և ընդհանրապես կենդանիի դուրս երկարած մասերուն վրա:

Ջղային դրութիւնը կազմված է երիք զույգ կանկլիոնե. զույգ մը գլխու կանկլիոն կերակրափողին վրան. զույգ մը ոտքին կանկլիոնները կերակրափողին տակը, որ ջղային թելերով կմիանա նախորդ զույգին և միասին կկազմեն, այսպես կոչվող, առաջին մանյակը: Երրորդ զույգը ներքին գործարաններուն կանկլիոններն են, որոնք կգտնվին խեցի փեղկերը գոցող մկանային կապին մոտիկ, մարմնի վարի մասին վրա. ասոնք ալ ջիղերով կապված են գլխու կանկլիոններուն և իրար, որով կկազմվի կերակրափողին շուրջը երկրորդ մանյակ մը:

III. ՓՈՐՈՏՆԻՆԵՐ

Փորոտնիներուն մարմնին վարի մասի լայն շերտ մըն է, որ կծառայե տեղափոխութեյան և որուն առջևի մասը կկազմե գլուխը: Կենդանին իբրև պատյան ունի մեկ կտորե բաղկացած ոլորուն խխունջ մը, որուն մեջն են ներքին գործարանները դալարված դիրքով իրենց պատյանին հարմարվելով. ասոնք ալ ունին վերարկու մը, բայց միայն թիկունքին կողմը և որ կուգա մինչև պատյանին բերանը՝ բաց տարածութեյուն մը ձգելով իր ու մարմնին միջև, որ կանվանենք վերնոցին խոռոչ, ուր կբացվի սրբանը և ուր կախված է մեկ հատիկ խրիկը. հոս ալ պատյանը արտադրողը վերարկուն է:

Հիմնական տարբերութեյունը իր ներքին գործարաններուն

խխունջին մեջ ոլորված ըլլալու հետևանք է. ոլորված կողմի մեկ երիկամը, սրտին մեկ ունկը և զույգ խրիկներեն մեկը անհայտացած են: Մեկ-երկու տեսակներ, որ ցամաքաբնակ են դարձած, ինչպես, օրինակ, մեր սովորական խխունջն է, կորսնցուցած են այդ միակ խրիկն ալ. ատոր փոխարեն վերնոցին այդ մասերը թոքի պաշտոն կկատարեն, ուր կուգա գործածված արյունը օդի հետ շփվելու և նորոգվելու:

Ջղային կազմի ունեցած տարբերությունը շերտախրիկներեն այն է, որ երկրորդ մանյակին վրա երկու զույգ կանկլիոն ավելի ունին. առաջին զույգը վերարկուն կջղավորև. հաջորդ միջամուտ զույգը կջղավորև մարսողական գործարանները՝ երկրորդ մանյակի վերջին զույգ կանկլիոնին թողնելով մյուս գործարաններուն ջղավորումը: Այսպեսով փորոտնիներուն ջղային մեծ մանյակը կազմված կըլլա չորս զույգ կանկլիոններե. երկուքը գլխու, երկուքը վերնոցի, երկուքը մարսողական գործարաններուն համար և երկուքը մյուս ներքին գործարաններուն. իսկ ոտքի կանկլիոնները մեկ կողմեն միանալով գլխու կանկլիոններուն՝ կկազմեն փոքր մանյակը. մյուս կողմեն ալ հատուկ կապով մը կմիանան վերնոցի կանկլիոններուն: Ոլորման հետևանքով մեծ մանյակին ձվաձև դասավորումը ուղիի ձև կառնե սովորաբար:

Ցամաքաբնակներուն ջղային դրությունը ըստ էության նույնն է, միայն բոլոր կանկլիոնները խմբված են իրարու՝ կերակրափողին առջևն և առանձին թելերով միացած են մեկ կողմեն կերակրափողի տակը եկած ոտքի կանկլիոններուն, մյուս կողմեն ալ նորեն կերակրափողին տակը խռնված մյուս երեք զույգերուն. որով կներկայացնեն կերակրափողը գրկած ուղեղային օղակ մը:

Ջրաբնակ տեսակները զույգ մը շոշափուկ ունին գլխուն վրա և անոր հիմքին մոտիկ երկու աչքեր. ցամաքայինները երկու զույգ շոշափուկ ունին. առաջին զույգերը ավելի երկար են և կծառայեն միայն շոշափումի. հաջորդ զույգը ավելի կարճ է և ծայրը աչքերն են:

Կերակրափողին տակը ունին ոտքի կանկլիոններուն վրա երկու լսողական տոպրակ, որոնք հատուկ ջղային թելերով միացած են չիտակ գլխու կանկլիոնին:

IV. ԳԼԽՈՏՆԻՆԵՐ

Գլխոտնիներուն ամբողջ մարմինը կներկայացնե խոշոր ձվաձև տոպրակ մը, որուն երեսի մասը վերնոցն է, որ ամբողջ մարմինը կգրկե ամուր փակած կռնակի կողմեն. փորի կողմը միայն եզերքները կզատվին մարմնեն և կառաջացնեն վերնոցին խոռոչը, ուր խրիկներն են և ուր կբացվին սրբանը և սև նյութին գեղձը, որով ջուրը կապականե փախչելու առեն: Վերնոցին խոռոչը ձագարաձև կվերջանա, իբրև միակ անցք մը դուրսի հետ հաղորդակցող. հանկարծական կծկումով մը մեջի ջուրը դուրս մղելով՝ մարմնի ամբողջ զանգվածը եւս կնետե:

Գլուխը որոշ կզատվի մարմնեն. դեպի վեր ձագարաձև բացված բերանն է, որուն շուրջը բուսած տասը բազուկներ կծառայեն բռնելու. ատոնցմե մասնավորապես երկուքը շատ երկար և շատ ուժեղ կըլլան. բազուկներուն քիչ մը ավելի լայնկեկ վերջավորութիւնները զինված են ծծակներով, որով ամուր կփակչին բռնել ուզած մարմնին. երբեմն ուժը բազուկները կըլլան երկար և իրենց ամբողջ երկայնքը շարված կունենան ծծակներ:

Գլխուն վրա ունին երկու շատ խոշոր աչքեր՝ շատ զարգացած կազմով և խիստ մոտիկ ողնավորներու աչքին. հիմնական առավելութիւնը միջատներեն զարգացած ոսպ մըն է աչքի հեղուկին ու բետինային առջևը իր հատուկ մկաններով, որոնց կծկումներովը առարկաներուն նկարը կրնա ձգել բետինային վրա և ունենալ հստակ պատկերներ:

Ներքին գործարանները նման են նախորդ դասերուն. բերնին առջևը թռչունի կտուցին նմանող շատ ուժեղ և շատ սուր երկու ծամիչ-բզկտիչ ունի. կերակրափողը ունի խիթինի կարծրացումներ և ցայտեր իր ներքին երեսներուն վրա, որոնք քերիչի և մանրիչի դերը կխաղան: Շնչառութեան գործարանը զույգ մը խրիկներ են: Սիրտը բաղկացած է մեկ պարկուվկե և երկու կողմնական ունկերե. երկու զարկերակներով և անոնց ճյուղերովը արյունը կքշվի դեպի մարմինն ու դեպի գլուխը. զանազան գործա-

բաններեն դարձերակներով արյունը կհավաքվի գլխավոր դարձերակը, որ գլխավոր զարկերակին զույգ կերթա. գլխավոր դարձերակը կբաժնվի երկու ճյուղի, ամեն մեկը կերթա մեկ խրիկ մը. այս ճյուղերեն ամեն մեկը իր մղիչ այտուցքը ունի արյունը խրիկներուն մեջ մղելու համար, որոնք կկոչվին խրիկային սրտեր: Շրջանառական դրութիւնը ընդհանրապես չատ ավելի զարգացած է ու կատարելագործված, որովհետև չատ տեղ զարկերակներեն արյունը մազերակներով կանցնի դարձերակները. արյան աներակ լճացումները անհամեմատ քիչ են:

Ջղային դրութիւնը նույն երեք զույգ կանկլիոններով կազմված երկու մանյակներն են. բայց այդ բոլոր կանկլիոնները այնպես իրար սեղմված են, որ ամբողջական լայնկեկ զանգված կներկայացնեն կերակրափողին չուրջը օղաձև: Այս ուղեղը նստած է կռճիկե պատյանի մը մեջ, որ կպրկե նաև ականջներուն պարկերը և աչքերը. այսինքն՝ զանգային նախափորձ մը:

Պատյաններու տակ զարանակալ կյանքը, տեղափոխութեյան նվազագույնի հասնիլը և չարժումներուն պակսիլն ու դանդաղիլը կառաջացնեն մկանային և զգայարանական հետադիմում և ուղեղային աշխատանքի անկում: Փափկամորթերեն ամենեն չարժուն և ուժեղ դասը գլխոտնիներն են և անոնց վրա է, որ կգտնենք աղոտն կենդանիներուն մեջ ամենեն զարգացած աչքը, ամենեն զարգացած զանգը, այլև ջղային կանկլիոններու ամենեն զարգացած կեդրոնացումը՝ համեմատած մյուս փափկամորթներուն հետ:

Դ. ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ

Ի. ԳԼԽՈՒ ՈՒՂԵՂԻՆ ՆՈՐ ԱՃՄՈՒՆՔՆԵՐԸ

1. ԶԳԱՅԱԿԱՆ ԱՃՄՈՒՆՔՆԵՐ

Մինչև հոդոտնինները դեռ գլուխ ստեղծված չէ. չկա և գլխու ուղեղ:

Նախնական անողն կենդանիներու ավելի բարձր տեսակներուն համար գլխու ուղեղը փոխարինողը և ընդհանրապես ամբողջ ջղային դրուքթյունը ներկայացնողը նոյրոննելու և ջղային թելերու մանյակ մըն է կերակրափողին շուրջը, ուրկե ջղային թելեր կերկարին նաև դնպի մարմնին մյուս մասերը:

Օղավոր որդերու ունեցածը նորեն կերակրափողի մանյակ մըն է, որ կազմված է առաջին հատվածի զույգ կանկլիոններն կերակրափողին վրա և երկրորդ հատվածի զույգեն կերակրափողին տակը, որոնք ջղային թելերով միացած են իրարու և կներկայացնեն ջղային ելարանին վերին ծայրը:

Բերանն է առանցքը առաջին ուղեղային կազմակերպութթյան. բերնի մկաններուն շարժումները իրականացնելու համար է առաջացած ջղային առաջին հիմնական խմբումը, և բերանը մոտեցնելու, հեռացնելու և բռնելուն նպաստելու համար կատարվող մյուս շարժումներն ալ բնականաբար կղեկավարվին կերակրափողի այդ մանյակեն. որով մանյակին վրա կկեդրոնանա կամացկամաց ջղային դրուքթյան ընդհանուր ղեկավարութթյունը. և հատկապես կկեդրոնանա առաջին հատվածին կանկլիական զույգին վրա, որոնք նստած են կերակրափողի վրայի կողմը՝ երկրորդ հատվածի կանկլիոններուն թողնելով բերնի զանազան շարժումներուն անմիջական գործադրութթյունը: Հոդոտնիներու գլխու ուղեղն ալ ըստ էութթյան նույն մանյակն է կերակրափողին շուրջը վրայի ու տակի մասերով: Միայն թե հոդոտնիները արդեն գլուխ ունին, որ առաջացած է կենդանիի առաջին հինգ հատվածներուն

ձուլումովը. որով և անոնց մանյակն ալ բաղկացած է այդ հինգ հատվածներու կանկլիական զույգերեն:

Մանյակին տակի զանգվածը կստանա զգայութիւններ հինգ հատվածներուն վերջին երեքեն, երբեմն չորսեն և անոնց երկարեցումներեն և կվարե այդ մասերուն շարժումները. այսինքն՝ բերնի աշխատանքները կղեկավարե. տեղական գործունեութիւն է, թեև շատ կարևոր ու մասնագիտական:

Կերակրափողին վրայի զանգվածը իր ծագումով առաջին հատվածի զույգը կներկայացնե, որուն կմիանան նաև երկրորդ հատվածին կանկլիոնները, երբ երկրորդ հատվածին երկարեցումները կղադրին բերնին անմիջապես ծառայելե և կվերածվին երկրորդ զույգ մը շոշափուկներու. որով և բերանը քիչ մը ավելի դեպի վար կսահի:

Արդեն զարգացման դեռ նախորդ աստիճանեն այս վրայի զանգվածը ավելի ընդհանուր ղեկավարութեան կծառայե, քան տեղական աշխատանքներու: Եվ հիմա հողոտնիներու գլխուն մեջ իր այդ դերը շատ ավելի կշեշտվի զգայարանքներու ստացած նոր թափովը, մանավանդ հեռազգա զգայարանքներու բացառիկ զարգացման հետևանքով:

Կերակրափողի վրայի զանգվածին անմիջապես առջևը կենդանիի գլխուն վրա կերկարին մեկ կամ երկու զույգ շոշափուկները՝ վրան լեցուն հպական մազիկներով և հոտառական մազային փունջերով. անոնցմե ամեն մեկը եզերային բջիջ մըն է. իսկ զգայարանական ամեն բջիջ ուղեղին մեջ կապված է կանկլիական զգայական բջիջի մը. այս նոր ավելցող կանկլիական բջիջները իրենց ճյուղերով ու կապերով կառաջացնեն երկու նոր կույտեր ուղեղի վրայի զանգվածին առջևի մասերուն վրա. այս այտուցքները կանվանենք հոտառական աճմունքներ:

Նմանապես գլխուն վրա ուղեղային զանգվածին երկու կողմերեն կզարգանան աչքերը և երբեմն ահագին մեծութեամբ. տեսողական այդ եզերային բջիջներեն ամեն մեկը կապված է ուղեղին մեջ զգայական նոյրոններու, որոնք իրենց արձակած թելերովն ու կապերովը նորեն կկազմեն կանկլիական երկու նոր կուտակումներ, նախորդ աճմունքներեն քիչ մը ավելի ետ և կողմնական դիր-

քով. երկու նոր այտուցքներ, որ և կանվանենք տեսողական աճմունքներ: Ասոնք երբեմն այնքան մեծ կըլլան, որ իրենք կբաժնվին երկու կամ ավելի բաժիններու դուրսեն նկատելի:

Հոդտնիներու լսողական գործարանները գլխուն վրա չեն ընդհանրապես, բայց ուր ալ գտնվին, հատուկ ջիղով մը կապված են միշտ գլխու ուղեղի վրայի զանգվածին և հոն ունին իրենց կեդրոնը տեսողական կեդրոններեն ավելի ներս և ավելի ետ: Բայց առանձին աճմունքով մը չեն ներկայանար ուղեղին մեջ. անտարակույս այն պարզ պատճառով, որ հոտառության և տեսողության հետ համեմատած դեռ շատ ետ է լսողական գործարաններուն խաղցած դերն ու կարևորությունը:

Լսողական կեդրոններուն պես՝ ավելի ներսի միջին զանգվածի վրա են համի, հավասարակշռության և մկանային զգայություններուն կեդրոնները, ինչպես և բոլոր շարժիչ նոյրոններուն կեդրոնները:

Այսպեսով՝ հոդտնիներու քիչ-շատ զարգացած ցամաքային տեսակներուն գլխու ուղեղին վրայի զանգվածը շատ հաճախ դուրսեն տեսանելի կերպով բաղկացած է՝ 1) կեդրոնական կանկլիական միացած զույգե մը, 2) հոտկե ղեպի առաջ երկարող զույգ մը հոտառական աճմունքներե և 3) կողմնակի դիրքով երկու տեսողական աճմունքներե:

Հոտառական աճմունքները հաճախ ավելի մեծ են, քան կեդրոնական մասը, իսկ տեսողական աճմունքները ընդհանրապես շատ ավելի խոշոր: Այս պատկերեն պարզ է, որ հոդտնիներու ուղեղային կազմին առաջին մեծ նորություն հոտառական և տեսողական կեդրոններու տարապայման աճումն է, որ հետևանք է այդ երկու զգայարանքներու խիստ մեծ գործունեության, որ իր կողմեն արդյունք է բարձր հոդտնիներու շարժումներուն հաճախացման, արագացման ու բարդացման:

Եվ այս հեռզգա զգայական կեդրոնները կգործեն ո՛չ այնքան տեղական պետքի մը պատասխանելով, որքան ամբողջ մարմնի տեղափոխության, երթևեկին, թռիչքին և այլ ընդհանուր շարժումներուն ուղղություն տալով. և ասով ալ ինչքան մեծնան ու կարևորություն ստանան գլխու ուղեղին զգայական աճմունք-

նները, այնքան ավելի կշեշտվի գլխու ուղեղին բացառիկ ու ղեկավար դերը:

2. ՎԵՐԻՆ ԱՃՄՈՒՆՔՆԵՐԸ

Հողտոնիներու գլխու ուղեղին վրայի զանգվածը ունի երկրորդ նորութիւն մըն ալ և արդեն բոլորովին տարբեր արժեքի:

Հողտոնիներու ավելի բարձր տեսակներու գլխու ուղեղին վրա բացի վերը հիշված զգայական աճմունքներեն՝ կան նաև զույգ մը ուրիշ աճմունքներ, երբեմն նույնիսկ երկու զույգ, որոնք կապ չունին որևէ զգայարանքի, ո՛չ ալ որևէ մկանունքի հետ: Այս երկու աճմունքները դեպի առաջ կերկարին հոտառական աճմունքներուն մեջտեղեն բոլորովին կեդրոնական դիրքով և իրարու կից՝ ներկայացնելով գլխու ուղեղին ամենեն առաջ երկարած վերին աճմունքները:

Այս երկու վերին աճմունքները կազմող ջղային նոյրոնները ծնունդ են ուղեղի զգայական և չարժիչ կանկլիական բջիջներուն. նոր սերունդ մը գլխու ուղեղի սովորական նոյրոններուն, միայն մեկ հիմնական տարբերութեամբ: Գլխու ուղեղի մինչև հիմա մեր տեսած բոլոր կանկլիական բջիջները անպայման կապ ունին կա՛մ եզերային զգայարանական բջիջի մը հետ, այսինքն՝ զգայարանքի մը հետ, ուրկե դրգիռները կստանան, կա՛մ մկանային բջիջի մը հետ, որ կշարժեն:

Գլխու և բոլոր կանկլիոններու զգայական բջիջները, գիտենք, որ կկազմեն անդրադարձութեան շղթային երկրորդ օղակը, ինչպես որ գլխու և բոլոր կանկլիոններուն չարժիչ բջիջները կկազմեն անդրադարձութեան շղթային երրորդ օղակը: Իսկ այս վերին երկու աճմունքներուն բջիջները թեև ծնունդն են այդ երկրորդ ու երրորդ օղակներուն, բայց իրենք այլևս չեն պատկանիր այդ երկու օղակներուն, քանի որ կապ չունին անդրադարձութեան առաջին կամ չորրորդ օղակներուն հետ. որով դուրս կմնան մինչև հիմա մեր ճանչցած անդրադարձութեան շղթային. նոր հավելված

մըն են այդ չղթային վրա, նոր կգում մը. անդրադարձությունը կկատարվի և առանց այդ նորաստեղծ նոյրոններուն:

Ուրիշ խոսքով՝ մինչև հիմա մեզի ծանոթ անդրադարձության պարտավորություններեն ազատ եղող բջիջներ են ասոնք. բայց ըլլալով ծնունդը անդրադարձության նոյրոններուն՝ սերտ կապեր ունին իրենց ծնողներուն հետ իրենց պրոտոպլազմիկ երկարեցումներով. և երբ գրգիռներուն հոսանքը կանցնի անդրադարձության ճամբաներով, կհասնի նաև այս մեկուսացած նոյրոններուն:

Քանի զգայարանքը գրգռված է, քանի անդրադարձությունը տեղի կունենա՝ գրգռված են նաև այս վերին աճմունքին որոշ զգայական մասերը, ուրկե գրգիռը կրնա հասնիլ նաև անոր շարժիչ մասերը: Գրգիռը կդադրի զգայարանքին մեջ, կվերջանա անդրադարձությունը, կդադրի նաև գործունեությունը վերին աճմունքի համապատասխան մասերուն մեջ: Երբ նույն զգայարանական մասերը նորեն գրգռվին, նորեն տեղի ունենա նույն անդրադարձ շարժումը, նորեն հոսանքը կվազե նաև վերին աճմունքին նույն կապակցություններուն մեջեն: Եվ այսպես ալ բոլոր հաջորդ բազմաթիվ ու անթիվ կրկնություններու առեն:

Այսինքն՝ հավելյալ բջիջախումբեր են ասոնք անդրադարձության ճամբաներեն դուրս, անդրադարձության ճամբաներու դիմուն նստած, որոնք ներքին ու արտաքին զգայարանքներու գործունեության ժամանակ կատարվող անդրադարձություններուն զուգընթաց կստանան անոնց հասած գրգիռները իրենք ալ, անոնց հետ կկենդանանան, կվառին ու կմարին և ուրիշ դեր մը չունին:

Թեև բարձր անողն կենդանիներու միայն քանի մը բարձր տեսակներուն վրա կգտնենք որոշ կերպով այդ մեկ կամ երկու զույգ վերին աճմունքները, բայց հոտկե պետք չէ եզրակացնենք, որ բարձր անողն կենդանիներու մյուս տեսակները բոլորովին զուրկ են այդ հավելյալ տեսակի նոր բջիջներեն: Որոշ պատճառներով որոշ տեսակներու մեջ շատ են բազմացած այդ բջիջները և կազմած են առանձին աճմունքներ դուրսեն ալ նկատելի. նվազ կուտակված, նվազ թվով ու նվազ նշմարելի կերպով ունին ան-

չուշտ մյուս տեսակներն ալ իրենց ուղեղի առջևի մասերուն վրա այդ անդրադարձութենեն ազատ մնացած նոր բջիջներեն:

II. ՊԱՏԿԵՐԱՑՄԱՆ ԲՋԻՋՆԵՐ

1. ԶԳԱՅԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպե՞ս ծագում կառնեն և ինչո՞ւ համար են այս նոր բջիջները:

Մինչև հոս ջղային դրության աստիճանական զարգացումը կատարված է հետևյալ հիմնական սկզբունքով. 1) Գոյություն ունեցող մեկ տեսակի նոյրոններ, որոնք որոշ կարողություններ ունին, կծնին իրենց նման նոյրոններ ավելի մեծ թվով, քան իրենց կատարելիք դերը գործադրելու համար անհրաժեշտ է. 2) Պետք եղածեն ավելի եղող սերունդը կմնա անգործ, բայց կապրի, կաճի, կստանա սնունդ և հաղորդակից է իր ծնողներու ստացած գրգիռներուն. 3) Հետևանքը կըլլա, որ հին ձևով չգործադրված կարողությունները կսկսին նոր ձևով մը գործադրվիլ. և այդ նոր ձևը կա՛մ հին ձևի մեկ նոր մասնագիտացումն է, կա՛մ հին ձևի մեկ նոր լրացումը. ուրեմն միշտ բարդացում ու կատարելագործում:

Այսպեսով կառաջանան միևնույն նոյրոնի տարբեր-տարբեր կարողություններ ունեցող, զարգացման տարբեր աստիճաններ ներկայացնող սերունդներ. կառաջանան նոյրոնի զանազան կարողություններով օժտված տեսակները: Սկիզբը արտաչերտի բջիջներն էին միայն, որ դուրսեն կստանային գրգիռը և կհաղորդեին մկան-բջիջին. բայց արտաչերտի այդ բջիջները հետզհետե այնքան կչատնան, որ մեկ մասը գրգիռը բռնելու համար կդառնա ավելորդ ու ետ կքաշվի առջևի չարքեն կամ ուղղակի ծնած կըլլա առաջին չարքին ետևը. այլևս ինքը դուրսեն գրգիռը ստանալ չի կրնար անմիջորեն, այդ տեսակետեն կդառնա անգործ. իրեն կմնա միայն իր ծնողքեն ստացած գրգիռները մկան-բջիջներուն հաղորդելու գործը, որ և կդառնա իր մասնագիտությունը: Ինքը կդառնա ներքին, կանկյլիական նոյրոն:

Սակայն չուտով այս ներքին կանկլիական միատեսակ բջիջները նորեն այնքան կշատնան, որ մեկ մասը կդառնա ավելորդ եզերային-զգայարանական բջիջներուն հետ անմիջական կապ պահելու տեսակետեն: Այդ կապը պահող իրենց կանկլիական ծնողներեն կստանան անոնք գրգիռները և կփոխանցեն մկանբջիջներուն. որով ծնողները կմասնագիտանան իբրև գրգիռներուն ուղղութիւն տվող ներքին զգայական նոյրոններ, իսկ նոր սերունդին կմնա շարժումը հրամայելու մասնագիտութիւնը, կդառնան ներքին շարժիչ նոյրոններ:

Շատնալու, որոշ տեսակետե անգործ մնալու և գործունեութեան նոր ուղղութիւն մը բանալու այս հիմնական երևույթը նոյրոններու կյանքին մեջ հոս կանգ չառներ. և ընդհանրապես երբեք կանգ չա՛ռներ և երբեք ալ կանգ առնելու չէ. ատոր վրա է հիմնված ասկե ետքը գալիք բոլոր ջղային և հոգեկան կատարելագործումներն ու բարձրացումները մինչև մարդը և մարդու հոգեկան զարգացումը և անշուշտ մարդեն ալ ետքը:

Այսպես է, որ գլխու ուղեղի կանկլիական նոյրոններն ալ զգայարանքներու մեծ գործունեութեան հետևանքով, ինչպես և լավ սնունդի, երբ կսկսին արագ աճիլ ու շատնալ անդրադարձութեան անմիջական պետքերեն ալ ավելի, կառաջանա ահա՛ նոր սերունդ մը, որ այլևս եզերային կապ բնա՛վ չունի, ո՛չ զգայարանական, ո՛չ ալ մկանային. իր վրայեն վերցված է անդրադարձութեան ճամբուն մեկ անխուսափելի մաս ըլլալու պարտավորութիւնը. այդ տեսակետեն դարձած է անգործ. և մնացած է իրեն գրգիռներ ստանալու կարողութիւնը անդրադարձ աշխատանքներուն զուգընթաց:

Ամեն անգամ, երբ անդրադարձութիւն մը կկատարվի, վերին աճմունքն ալ կհասնին տեղի ունեցած բոլոր զգայութիւնները. նախ զգայարանքներեն դեպի ներս վազած զգայութիւններուն ամբողջութիւնը, ինչպես և անոնց առաջացուցած շարժումներուն զգայութիւնները. որով կունենանք զգայական էապես նույն կապակցութիւնները այս վերին աճմունքին մեջ, ինչ որ կա վարը անդրադարձության բջիջներուն մեջ. միայն թե հոն այդ զգայարաններեն դեպի ներս վազած զգայութիւններուն ամբող-

ջուլիայունը չարժում մը կատաջացնե, կապված է չարժումի մը. մինչդեռ վերի աճմունքին մեջ անիկա կկապվի այդ կատարված չարժումներուն մկանային զգայութիւններուն հետ:

Սարդի ոտայնին ցնցումները, ճանճի մը տզզոցը, հոտն ու տեսքը սարդը ստանալուն պես կվազե ոստայնեն վեր, կհարձակի, երկար մաքառտումով կկաշկանդե ճանճը ու կծծե իր որսը: Այս շարք մը անդրադարձ աշխատանքներու միջոցին սարդի վերին աճմունքը կհասնի ճանճի մը ձևն ու տեսքը, անոր հանած տզզոցը, անկե տարածվող հոտը, անոր թողած համը, անոր մարմնեն ստացած շոշափումները, դիմադրութիւնը և այդ ճանճը զսպելու, հաղթահարելու, կաշկանդելու և ծծելու ատեն իր կատարած բազմատեսակ չարժումներուն զգայութիւնները: Այսինքն՝ տարբեր-տարբեր զգայարանքներե միաժամանակ կամ հաջորդապես իրարու կապված գրգիռներով գրգռված են սարդի վերի աճմունքի բոլորովին տարբեր մասերուն մեջ նստած բջիջները միասին. այդ ուժեղ գործակցութիւամբ հարթված են որոշ ճամբաներ իրարու գործակից եղած նոյրոններու միջև, իսկ որոշ ճամբաներ ալ, որ արդեն հինեն հարթված էին, այս նոր գործակցութիւամբ չափ մը ավելի ևս հոսուն են դարձած նման գրգիռներու ապագա հոսանքներուն համար: Հին ու նոր այս գործակցութիւններով կազմված է զգայական որոշ բանուկ ճամբաներ, որոշ զգայական կապակցութիւններ:

Մարդուս ուղեղային կազմութեան մեջ անողն կենդանիներու այդ վերին աճմունքներուն կհամապատասխանե մեծ ուղեղին կեղևը. կեղևային զգայական նոյրոններու միասին գրգռվիլը հոն ալ կատաջացնե զգայական կապակցութիւններ, որ պատկեր կամ պատկերացում կանվանենք:

Ինչպես ողնավոր կենդանիներու մեծ ուղեղին, այնպես ալ անողն կենդանիներու այդ վերին աճմունքին մեջ տեղի ունեցող զգայական կապակցութիւններուն գրգռվիլը մեր ունեցած պատկերացման վիճակեն հիմնական տարբերութիւն մը ունենալու չէ: Անշուշտ ինչքան զարգացման ցած աստիճաններուն վրա է կենդանին, այնքան տկար է պատկերացումը, քիչ գործող, գործելու ատեն ալ ավելի աղոտ ու մշուշային, բայց էութիւնը նույն է:

Անողն կենդանիներու վերին աճմունքները պատկերացման կեդրոններ են:

2. ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՐՏԱՎՈՐՈՒՄ

Ինչքան ատեն որ կենդանիներուն մեջ անմիջական շոշափումով գործող զգայարանքները միայն կտիրեն՝ այդ պատկերացման կարողությունը դեռ շատ ժժգույն է ու խեղճ: Նույնիսկ հիմա մեզի համար, մենք, որ վարժված ենք, փորձված և դաստողության օժանդակությունը ունինք, նույնիսկ մեզի համար միայն համով, հպումով, տաք ու պաղով, հավասարակշռության զգայությամբ և մկանային զգայություններով բան մը պատկերացնելը հստակություն չստանար մեր գլխուն մեջ. շատ ավելի տկար ու անորոշ պիտի ըլլա ուրեմն անողն կենդանիներու դեռ նոր առաջացող վերի աճմունքին մեջ կատարվող պատկերացումը:

Հպական զգայարանքներու տիրապետության միջոցին պատկերացման այդ կեդրոններուն մեջ զգայություններու կապակցություններ կան, պատկեր մը կա, բայց դեռ մարմին չունի այդ պատկերը, ստվերային է ու ձևերը անհստակ:

Հեռազգա զգայարանքներու զարգացումով հոտի, ձայնի, բայց մանավանդ և հատկապես տեսողության զգայարանքի աստիճանական զարգացումով այդ պատկերները կենդանություն ու մարմին կստանան. որովհետև աչքի ռետինային վրա իրավ որ ձև ու գույն ու դասավորություն ունեցող պատկեր մըն է, որ կիյնա. այն աստիճան մեծ է աչքին դերը պատկերներու հստակացման մեջ, որ արդեն ինքը պատկերբառը վերջ կառնվի աչքի բռնած զգայական կապակցություններեն:

Հեռազգա զգայարանքներու զարգացումը կնպաստե զգայական կապակցություններուն մարմնավորվելուն նաև անով, որ հիմա շատ ավելի հաճախ շատ տեսակի զգայություններ միասին կգործեն. իրերեն ու երևույթներեն բազմակողմանի տպավորություններ միասին կստացվին, որոնք իրար կլրացնեն, իրար կպայծառացնեն: Մարմին ըսվածը հատկություններու գումար է. ինչ-

քան շատ հատկութիւններ իրարու դէմարվին, այնքան պատկերացումը կմարմնավորի:

Հեռազգա զգայարանքներու զարգացումը կնպաստե զգայական կապակցութիւններու կենդանացմանը նաև անով, որ պատկերներու մարմնավորման զուգընթաց կկատարվի ուրիշ գործողութիւն մը, որ կանվանեմ պատկերներու արտավորումը:

Անմիջական հպումով դրդռվող զգայարանները կենդանիին տեղեկութիւններ կուտան իսկապես միայն իր անձի մասին. կենդանիի մաշկին մեկ մասը կճմլվի, կքսվի, կտաքնա շրջապատի ազդեցութիւնեն. անոր զգացածը իր մարմնի կրած փոփոխութիւններն են, ախորժելի կամ անախորժ. դուրսի ազդակներու մասին կենդանին իսկապես տեղեկութիւն չունի: Բերնին եզերքը կատարված որոշ տեսակի հպում մը իսկույն կառաջացնե բռնելու, փշրելու և ներս առնելու որոշ անդրադարձ շարժումներ: Մարմնի որոշ մասի մը վրա կատարված ճմլում մը, այրուցք մը իսկույն կառաջացնե հին բանուկ ճամբաներով որոշ խուսափող շարժում մը: Արտաքին ազդակներու մասին բան մը զգալ չի կրնար կենդանին, իր ստացածը իր մաշկի մեկ մասին վրա կատարված փոփոխութիւնն է:

Հպումը, ճնշումը, տաքն ու պաղը, համը, ինչպես և իր մկաններուն շարժումները և իր մարմնին դիրքը անձնական զգայութիւններ են. ատոնք ներքին վիճակներ հաղորդող զգայարաններ են, ո՛չ արտաքին աշխարհի զգայարաններ. անոնց միջոցով արտաքին աշխարհի մասին ոչինչ չի գոյանար անողն կենդանիի ջղային կեդրոններուն մեջ. և բնականաբար կենդանին չունի դեռ արտաքին ու ներքին աշխարհներու մասին ոչ մեկ զանազանութիւն:

Հեռվեն ազդող զգայութիւններեն հոտը ամենեն մոտիկն է նախորդ խումբին. ան ալ տեսակ մը շոշափում է, կազային մասնիկներու շոշափումը, ախորժելի կամ անախորժ, որու համեմատ ալ որոշ բանուկ ճամբաներով կկատարվին որոշ անդրադարձ շարժումներ: Ինչքան ատեն որ աչքն ու ականջը դեռ չեն զարգացած որոշ բարձրութեան՝ հոտը ինքը առանձին դուրսի ու ներսի լուրջ զանազանութիւն մը ստեղծել չի կրնար. կենդանին կերթա

դեպի որոշ հոտերը ու կփախչի որոշ հոտերե և ուրիշ ոչինչ: Երբ աչքն ու ականջը կսկսին ուժեղ աշխատանքի և իրենց հետը կբերեն դուրսի ու ներսի զանազանությունը, հոտառությունն ալ իբրև հեռվեն ազդող զգայարանք, ինքն ալ կդառնա նպաստող մը այդ զանազանության:

Աչքն ու ականջն են մասնավորապես այդ գործը կատարողը. հեռվեն եկող լույսը, գույնը, ձայնը, ձևը այլևս մեր մարմնին մասը չէ. և չի զգացվիր իբրև մեր մարմնի մեկ մասին կրած փոփոխությունը, քանի որ անմիջական հպում չկա. անմիջական չփումն ու ճնշումն է, որ դուրսն ու ներսը կշփոթե, կնույնացնե իրար:

Կենդանին հազարավոր փորձերով և շատ կենսական պայմաններու մեջ քիչ-քիչ կվարժվի աչքեն ու ականջեն իր ուղեղային կեդրոնին մեջ առաջացած պատկերները ո՛չ թե իր մեկ մասը, իր մեջը կամ իր վրան եղող բան մը զգալու, իբրև իր էության մեկ կտորը, այլ իր զգայարանքեն, իր կեդրոններեն, իր մարմնեն ու ինքնութենեն զատ ու դուրս եղող բաներ: Եվ եթե կենդանին այդպես չզգա՝ կվնասվի չարաչար. և կենդանական այն տեսակները որոնք չուտ ու հստակ կսորվին դուրսեն եկող գրգիռները իբրև դուրսի եղելություն ստանալու, խիստ նպաստավորված կըլլան կյանքի կռվին մեջ. և ընդհակառակը, այդ իրողության դժվար ու դանդաղ վարժվողները չեն կրնար հառաջդիմել, ո՛չ ալ հետուներեն օգտվիլ:

Ինչքան կատարելագործվին աչքն ու ականջը, ինչքան շատ գործեն և ինչքան նուրբ գործեն, այնքան ավելի կհստակի նաև դուրսեն եկող գրգիռներն ու պատկերները դեպի դուրս նետելու, տարածության մեջ պատկերացնելու կարողությունը: Եվ այս դեպի դուրս նետելու վարժությունը հետզհետե կանցնի նաև մյուս զգայարանքներեն անմիջական հպումով ստացված գրգիռներուն: Աչքի ու ականջի բերած այդ նորությունը կընդհանրանա և ներքին պատկերներու արտաքորումը կդառնա զգայական ընդհանուր երևույթ: Եվ ճիշդ ատոր համար է, որ աչքն ու ականջը կանվանենք ավելի բարձր տեսակի զգայարանքներ, որոնց դերը չափազանց մեծ է արտաքին կյանքը պատկերելու կարողության վրա:

3. ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ԿԱԶՄԸ

Պատկերը բաժածը բանուկ ճամբաներ են վերի աճմունքի աւելի կամ պակաս մեծ թիվով զգայական բջիջներուն մէջ բացված, բազմաթիւ զգայական բջիջներու կապակցութիւններ են:

Եվ ինչպես տեսանք, այդ կապակցութիւնները կազմված են կատարված անդրադարձութիւններուն զուգընթաց. իսկ կատարված ու կատարվող անդրադարձութիւնները կենդանիի զանազան ապրումներն են, անոր ըրած ճիդերը, փորձերը, որսերը, շարժումները ըստ արտաքին ու ներքին գրգիռներու: Կենդանիի կյանքի ընթացքին անոր զանազան ապրումներուն թողած հետքն է վերի աճմունքի բջիջներուն մէջ, որ կանվանենք պատկեր. այդ ապրումներուն առաջացուցած կապակցութիւններն են պատկերները:

Ինչպես որ ուղեղի մյուս մասերուն մէջ անդրադարձության կազմած բանուկ ճամբաները կենդանիի ապրումներուն փորած մնայուն ուղիներն են, այնպես ալ վերի աճմունքին մէջ կազմված այս զգայական կապակցութիւնները նույն այդ ապրումներուն մնայուն կերպով դրոշմած պատկերներն են:

Ապրում մը, վարմունք մը, շարժում մը երբ կկատարվի, անդրադարձության ճամբա մը կբանա ուղեղի վարի մասերուն մէջ և պատկերացման ճամբա մը կբանա վերին աճմունքին մէջ. այդ բացված ճամբաները կդյուրացնեն հաջորդ նման գրգիռներու հոսումը այդ կազմված ճամբաներով. ուղեղի մյուս մասերուն մէջ կխորանա անդրադարձության բանուկ ճամբան, վերին աճմունքին մէջ կխորանա այդ ապրումի պատկերացման բանուկ ճամբան:

Երբ անգամ մը այդ ճամբաները բացված են՝ ալ անկե ետքը նույն զգայական գրգիռները միշտ նույն անդրադարձ շարժումը կառաջացնեն ուղեղի վարի մասերուն մէջ և միշտ նույն պատկերը կվերակենդանացնեն ուղեղի վերի աճմունքին մէջ:

Կըսենք «նույն» գրգիռները, «նույն» անդրադարձ շարժումը և «նույն» պատկերը, բայց ասիկա մարդկային խոսելու դյուրացնող ձև մըն է միայն. իրականության մէջ անկարելի է, որ կրկնության մը առեն բացարձակապես միևնույն զգայարանքները

և միևնույն չափով ու ձևով միևնույն գրգիռները տան, և անկարելի է, որ բոլորովին միևնույն թիվով ու չափով մկանային թելերը շարժման մեջ դնեն: Միևնույն անդրադարձության կրկնությունը, եթե քիչ մը մոտեն ու խոր քննենք՝ չնայելով որ միևնույն անդրադարձությունն է ընդհանուր առումով, բայց պիտի տեսնենք, որ ավելի կամ պակաս չեչտված տարբերություններ ունին իրարմե: Կան մասեր, զգայարանքներ և մկանային խուրձեր, որոնք առաջին անգամ չէին մասնակցեր. կան մասեր, թելեր ու զգայարանքներ, որոնք երկրորդ անգամուն չէին մասնակցեր: Այսպես ալ միչտ տարբեր են երրորդ ու հաջորդ կրկնությունները «միևնույն» անդրադարձության:

Եվ այս իրողության համապատասխան վերին աճմունքին մեջն ալ այդ անդրադարձության կրկնվող պատկերացումները բոլորովին նույնը չեն և նույնը ըլլալ չեն կրնար երբեք. ամեն անգամ պատկերները կունենան մասեր, որ նախորդ անգամներուն չկային, պակաս կըլլան մասեր, որ առաջին անգամուն կային: Երկրորդ անգամ ստացված հոտ մը քիչ մը ավելի ուժեղ կըլլա կամ թույլ, խառնված ուրիշ հոտերու, ամեն կողմեն կուգա կամ միայն դիցուք հովին փչած կողմեն: Շոշափումը կըլլա մեկ կամ երկու շոշափուկով և միայն առաջին զույգի կամ միայն մեկ կողմի, մասնակից կըլլա կամ ոչ որոշ չափով նաև շրթունքը: Տեսնված բան մը կըլլա ավելի տևական կամ անցողակի, մոտեն, հեռվեն, տարբեր կետերե, տարբեր դիրքերով, մաս մը ծածկված, ուրիշ իրերու հետ միասին, անոնց գործակից կամ մեկուսի:

Ավելի աչքի իյնող է, երբ զգայարանքներ կավելնան կամ կպակսին կրկնության ատեն: Անգամ մը տեսած է, հետն ալ առած է համն ու հոտը. երկրորդ անգամ միայն տեսքն է. ուրիշ անգամ մը շոշափումն է ու հոտը կամ վերջապես միայն հոտը:

Այսպես ալ մկանային թելերուն մասնակցությունը, ինչքան ալ միևնույն շարժումը կատարվի, մասնակցող մկաններուն թիվն ալ, կերպն ալ անշուշտ միչտ զգալի տարբերություններ կունենան. այս անգամ բեռ մը կար միջատին բերանը, քիչ մը վնասված էր ոտքը, կեցած տեղը շատ էր սահուն, հոգնած էր, քիչ մը թրջված էր մեկ թևը. և ասոր համեմատ ալ ավելի կամ պակաս տարբեր

կըլլան յուրաքանչյուր անգամվան մկանային զգայութիւններուն մասնակցութիւնը գլխու պատկերին մէջ:

Այս բոլոր տարբերութիւններուն հետևանքը այն կըլլա, որ վերին աճմունքին մէջ կազմվող պատկերը հետզհետե կմեծնա, կլրանա նոր տարրերով, կհարստանա. այդ բոլոր զանազանութիւնները կմտնեն զգայական կապակցութեան մէջ, այդ բոլոր հին ու նոր հավելվածները կդառնան մասը որոշ ապրումի մը պատկերացման, որոշ իրողութեան մը պատկերացման:

Վերի աճմունքին մէջ կազմվող զգայական կապակցութիւնները մեկ անդրադարձութեան մը, մեկ ապրումի մը միակ պատկերացումը չեն. ատոնք սովորաբար հիմնական կողմերով իրարու նման եղող բազմաթիվ ապրումներու իրարու կապված, իրարու միացած մեկ ընդհանուր պատկերացումն են: Եվ ատոր համար ալ ամեն պատկերացում իր մեջը քանի մը կարևոր մասեր ունի, որ գրեթե բոլոր ստացումներու ատեն կրկնված են. ունի և ավելի նվազ կարևոր մասեր, որոնք ստացումներու ատեն երբեմն եղած են, երբեմն՝ ոչ. և վերջապես շատ մըն ալ ավելի պատահական ու երկրորդական մասեր:

Ապրումի մը պատկերացումը ինչպես որ ինքը բաղկացած է մեծ ու փոքր ավելի կամ նվազ չեչտված կերպով կարևոր մասերե, այդպես ալ ինքը ամբողջ այդ ապրումը իր բոլոր մասերով մեկ կտորը կկազմե ավելի մեծ ամբողջութեան մը: Միևնույն առարկային ու երևույթին հանդեպ կենդանին տարբեր պայմաններու ու տարբեր պարագաներու մեջ բոլորովին տարբեր անդրադարձութիւններով կպատասխանե. միևնույն պատկերին կամ պատկերամասին կապված են շատ մը տարբեր ապրումներ:

Սև ցեղին պատկանող մրջյունի մը վերին բջիջներուն մեջ կա զարշելի հոտով, խոշոր, դեղին մրջյունի մը պատկերը. դեղին մրջյունը հարձակվելու վրա է, խածնել կուզե, անոր ոտքերուն շոշափումը կզգա սև մրջյունը իր վրա, բայց կերպով մը կսպրդի չյուղերուն տակը ու կփախչի: Ուրիշ անգամ մը դեղին մրջյունը սև մրջյուններու բույնին բերանն է, չրջապատված սև մրջյուններու ամբողջ բազմութեամբ մը և կռիվ է. դեղին մրջյունը կատաղի կպաշտպանվի. և սև մրջյունը սաստիկ գրգռված ինքն ալ կնետվի

իր ցեղակիցներուն նման՝ գարշելի թշնամիին վրա: Եվ ահա՛ դեղին մրջյունը անշարժ ու անկենդան ինկած է գետին, կռիվը շատոնց վերջացած է, սև մրջյունները ցրված և լայնամարմին բողոջ մը դեղին մրջյունի ոտքեն խածած կքաշքշե:

Սև մրջյունի վերին աճմունքին մեջ այս բոլոր ապրումները կան դրոշմված իբրև առանձին զգայական կապակցություններ. բայց այդ երեք բարդ կապակցություններն ալ կապված են նույն հիմնական առարկային. սև մրջյունին համար կենսական բացառիկ կարևորություն ունեցող այդ դեղին մրջյունը մեկ բաղադրիչ մասն է վերի բոլոր տարբեր-տարբեր ապրումներուն. որով այդ բոլոր ապրումները մեկ հիմնական ու կարևոր մասով մը միացած են իրարու և կկազմեն իրարու հետ սերտ առնչություն ունեցող պատկերներու ընդհանուր կապուկ մը:

Ուրիշ խոսքով՝ ամեն պատկեր ավելի կամ պակաս բաղադրություն մըն է իր մասը կազմող ավելի մասնակի պատկերներու. և ամեն պատկեր ավելի կամ նվազ անհրաժեշտ կերպով մեկ կողմը, մեկ կտորը, մեկ ապրումը կներկայացնե շատ ավելի բարդ պատկերային կապուկի մը:

Մեծ ու փոքր բոլոր պատկերները մեջեմեջ են, իրարու մաս և իրար լրացում:

Մարդս իր գլխուն մեջ եղած այդ մեծ ու փոքր, իրարու մաս և իրարու լրացում եղող պատկերներուն ամբողջությունը կանվանե միտք: Ուրեմն պատկերացման նոյրոններու ծագումով և զգայական կապակցություններու առաջացումով սկիզբ է առած միտքը:

Դ. ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Ի. ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԴՐԴԻՉՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Պատկերացման նոյրոններուն առաջացումը և պատկերներու կազմվիլը չէին կրնար ազդեցություն ու կարևորություն ձեռք չբերել կենդանիի դոյության, կյանքին ու գործունեության վրա: Ո՛չ մեկ կենսական կարողություն չի կրնար հող բունել կենդանական օրգանիզմին մեջ, զարգանալ ու փարթամանալ անհատե անհատ ու տեսակե տեսակ և հասնիլ ուժի, եթե ան չի ծառայեր ու չի նպաստեր կենդանիի դոյության ավելի լավ պահպանումին և անոր կյանքի ավելի հարմար ու ավելի հաջող զարգացումին:

Պատկերացման նոյրոնները չէին կրնար աճիլ ու զարգանալ և հասնիլ մեծ ուղեղներու ծավալին, եթե չծառայեին ջղային դրության ավելի նուրբ ու ավելի բարձր գործունեության: Իսկ ջղային դրությունը, ինչպես դիտենք, շարժում հրամայելու համար է, շարժումներ ղեկավարելու գործիք մըն է ըստ արտաքին ու ներքին բուսական ու կենդանական պահանջներու:

Պատկերացման նոյրոնները առաջացած են իբրև անդրադարձութենե դուրս մնացած կեդրոններ, անդրադարձության ուղիներեն մեկուսի. այսինքն՝ մինչև այդ ատենը օրգանիզմի ունեցած շարժումներ կատարելու եղանակին համար ավելորդ ու հավելյալ նոյրոններ էին ատոնք. այդ ավելորդության և ազատության մեջն էր իրենց վիճակին նորությունը և պատկերներու մշակման հնարավորությունը: Հին ձևով շարժումները ղեկավարելու համար ավելորդ էին այս նոր բջիջները, բայց իրենց առաջացումովն իսկ կբերեին անդրադարձության նոր կատարելագործություն մը:

Եվ այդ նոր կատարելագործությունն այն է, որ պատկերացման նոյրոններուն մեջ ամբարված հին ապրումները հետզհետե կզառնան ներքին դրդիչ մը գործունեության, որ ամեն անգամ կավելնա զգայարանքներեն եկող արտաքին դրդիչներուն:

Մինչև պատկերացման նոյրոններու առաջացումը պարզ անդրադարձություն էր, այսինքն՝ շարժումներուն դրդիչը զգայարաններն էին միայն. ո՞ր զգայարանները, ինչ չափով և ինչ կապակցությամբ գրգռված ըլլալն է, որ գրգիռին ուղղություն կուտար դեպի որոշ մկանային խումբեր. հիմա ապրում-պատկերներու գոյությամբ կստեղծվի ու կավելնա նախորդին վրա նոր ներքին դրդիչ մը:

Սկիզբները, երբ շատ քիչ են դեռ վերին աճմունքին մեջ պահվող ապրումները և այդ սակավաթիվ ապրումներու վերակենդանացումն ալ շատ տկար ու մշուշոտ է դեռ նման ապրումներու կրկնության միջոցին, անշուշտ որ դեռ շատ պատահական, հավելվածական ու աննկարևոր բան մըն են այդ պատկերացումները կատարվող անդրադարձության համար: Սակայն հետզհետե զգայարաններու զարգացումով և ժիր շարժումներու հաճախումով վերի աճմունքին մեջ պահվող ապրումներուն կապուկները իրենք իրենց մեջ կստվարանան և կապուկներն ալ ավելի կշատնան. այս ստվարացումներուն, ինչպես նաև անոնց ավելի հստակացման զուգընթաց՝ արագ կչեչտվի պատկերացման խաղցած դերը անդրադարձություններու միջոցին:

Պատկերացում ըսածնիս ապրումի մը կրկնություններովը կազմված փունջեր էին և նույնակերպ ապրումներու կցումով կազմված կապուկներ, բաղկացած բազմատեսակ մեծ ու փոքր մասերե, որոնց մեջ մշակված են բանուկ ճամբաներ: Արդ՝ նոր անդրադարձության մը սկիզբը, երբ զգայարանքներեն թարմ գրգիռներ կուգան, աւոնք կհասնին նաև վերին աճմունքը և հոն կարթնցնեն պատկեր մը կամ պատկերամաս մը. սակայն հարցը ասով չի վերջանար. այդ դուրսեն գրգռված մասերեն գրգիռը պատրաստ ճամբաներով կհոսի նաև բջիջախումբեր, որոնք հիմա դուրսեն գրգիռ ստացած չեն, երբ համապատասխան ազդակներ չկան դուրսը զգայարանքին դեմը:

Դիցուք զգայարանքը դուրսեն գրգռված է և հաղորդած ուղեղի վարին ու վերին կեդրոնները ղեղին մրջյունի զզվելի հոտը. սև մրջյունի աչքերուն և շոշափուկներուն դեմը ղեղին մրջյուն չկա. բայց սև մրջյունի վերին աճմունքին մեջ ղեղին մրջյունի

Հոտը Հասնելուն պես իսկույն կպատկերանա ավելի կամ պակաս Հստակութեամբ դէղին մրջյունին անպիտան կերպարանքը, գուցե և անոր խածնելու ճիւղերը, գուցե և ավելի պղտոր կերպով ամբողջ կռվի տեսարանը իրենց բույնին բերանը կամ շատ Հաճելի պատկերը դէղին մրջյունի սատկած վիճակին:

Եվ ասիկա արդեն մեծ նորութիւն մըն է Հոգեկան աշխարհի զարգացման մեջ և շատ կարևոր նորութիւն մը Հատկապես կատարվելիք անդրադարձութեան Համար: Պարզ անդրադարձութիւնը միայն զգայարանքը կճանչնա. իրական, արտաքին գրգիռը և ատոր Համեմատ կըլլա իր տված պատասխանը: Ախորժելի Հոտ մը՝ կենդանին կմոտենա. անախորժ տեսք մը՝ կենդանին կքաշվի, բայց այսքանը շատ նախնական ու թերի բան մըն է, որ գնչ-աղեկ կբավե դանդաղ ու սակավ չարժուն ունեցող արարածներուն. բայց արագ չարժուն և ժիր կյանք ունեցող կենդանիին Համար այլևս Հերիք չէ բանի մը միայն տեսքը, ձայնը կամ Հոտը. ան պետք է գիտնա, թե տեսածը ինչ է, իրեն ինչ օգուտ կամ վնաս ունի, որ մոտենա կամ Հեռանա:

Եվ ահա՛ վերին աճմունքին մեջ ձայնին կամ Հոտին կապված կան կենդանիին նախորդ ապրումները նախորդ ապրումներու ատեն փնջված ու կապակցված և որոնք իրենց մեջի բանուկ ճամբաներով կգրգռվին ու կպատկերանան, ըլլա՛ բոլորը, ըլլա՛ մասամբ. որով Հիմա կենդանիին մեջ կպատկերանա ո՛չ միայն Հոտն ու ձայնը կամ կերպարանքը, այլև իր նախորդ Հանդիպումներու ժամանակ այդ կերպարանքին Հետ կապված ամենեն կարևոր վիճակներն ու եղելութիւնները, այսինքն՝ այդ էակի կամ առարկայի մասին իր ունեցած բոլոր կարևոր տեղեկութիւնները:

Նոր ստացում մը, նոր ապրում մը, կարելի է ըսել, այլևս ասկե ետքը գրեթե երբեք առանձին չի պատկերանար. անմիջապես անոր կկապվին նույն նյութի չուրջ կենդանիի ունեցած Հին փորձերը, Հին ըրածները. որ ըսել է՝ կենդանին դիմացինը տեսածին պես գիտե անոր ինչ և ինչպես ըլլալը և ատոր Համեմատ ալ իր ընելիքն ու բռնելիք դիրքը: Պատկերացումը իր ազդեցութիւնը բանեցնել կարողանալու Համար բավական է, որ ճամբա մը ունենա դեպի մկաններըը: Եվ այդ ճամբան ունի: Ինչպես որ վերի

աճմունքի զգայական նոյրոնները ծնունդ են ու կապված անդրադարձուԹյան կեդրոնի զգայական բջիջներուն, այդպես ալ վերին աճմունքի շարժիչ նոյրոնները ծնունդ են ու կապված անդրադարձուԹյան շարժիչ բջիջներուն, որով հնարավորուԹյուն ունին վերին շարժիչ նոյրոնները վերին զգայական մասերեն եկող գրգիռները անդրադարձուԹյան վարի շարժիչ նոյրոններուն հաղորդելու:

Սկիզբները անշուշտ հազվադեպ ու պատահական է վերին աճմունքի պատկերներուն ունեցած ազդեցուԹյունը կատարվող շարժման վրա, տիրողը պարզ անդրադարձուԹյունն է դեռ, թեև անոր աշխատանքին ատենը որոշ հին ու նոր, աղոտ-անաղոտ պատկերացումներ կխլրտին վերի աճմունքին մեջ: Սակայն արագ կմեծնա պատկերացման դերն ու կչիռը կենդանիի անդրադարձ շարժումներու մեքենականուԹյան մեջ: Այս զարգացումը աստիճանաբար կհասնի հոն, որ բարձր անողն կենդանիներու արտաքին շարժումներու միջոցին անխուսափելի կդառնա պատկերացման նոյրոններու մասնակցուԹյունը:

Արտաքին շարժումի մը հրամանը այլևս ուղղակի զգայարանքեն չէ, որ կուգա ուղղակի կանկլիական բջիջներուն միջով, այլ գրգիռները կանկլիական կեդրոններեն նախ կբարձրանան պատկերացման կեդրոնները և հոնտեղի ապրում-կապուկներեն է, որ կմեկնի շարժման հրամանը: Հին պարզ անդրադարձուԹյունը դարձած է պատկերավոր անդրադարձուԹյուն, այսինքն՝ հին ու նոր ապրումներու պատկերացման միջոցով կատարվող անդրադարձուԹյուն:

Անմիջական զգայական դրդիչին, այսինքն՝ միայն ներկա զգայական իրականուԹյան ավելցած է նաև նույն աղբյուրեն ստացված հին զգայուԹյուններուն մթերված փորձերուն դրդումը: Այդ մթերված կապուկը որովհետև միշտ նույն է ըստ էուԹյան, իր տված հրամաններն ալ կըլլան միատեսակ. պարզ անդրադարձուԹյան նման:

Պատկերներու միջամտուԹյամբ անդրադարձուԹյան շղթան կերկարի: ԱնդրադարձուԹյան հոսանքը, որ մինչև հիմա չորս բջիջի միջով կվազեր, ասկե ետքը կվազե վեց բջիջի միջով: Զգա-

յարանական բջիջեն գրգիռը կուգա կանկլիական զգայական բջիջ մը, բայց հոնկե փոխանակ ուղղակի կանկլիական շարժիչ բջիջի մը անցնելու, նախ կհոսի դեպի վերի պատկերացման զգայական նոյրոն մը, հոնկե վերին շարժիչ նոյրոն մը, ուրկե կիջնե կանկլիական շարժիչ նոյրոնի մը և հոնկե ալ կհասնի մկան-բջիջին:

Անշուշտ դեռ շատ մը ընթացիկ շարժումներու համար հոսանքը կանցնի միայն չորս բջիջով, հին պարզ անդրադարձության ճամբով, միայն կանկլիական կեդրոններով, առանց վերին աճմունքը բարձրանալու. պարզ անդրադարձությունը կշարունակվի մանավանդ ներքին գործարաններու շարժումները ղեկավարելու համար: Մինչդեռ արտաքին իրականության մեջ կատարվելիք երթևեկը, թռիչքը, տեղափոխությունը, որսը, որոնումը, հարձակումն ու փախուստը և նման շարժումներու ատեն հոսանքը անպատճառ կանցնի վերին աճմունքեն, որ նիստն է կյանքեն ու իրականութենեն առնված ապրում-պատկերներու: Վերին աճմունքը կներկայացնե կենդանիին համար «դուրսի» ամենեն կարևոր մասերը՝ առնված ու պահված իր «ներսին» մեջը: Եվ դուրսի մեջ կատարվելիք շարժումները կղեկավարվին այդ «ներսին» մեջ ապրող «դուրսեն». հոտ են դուրսի հետ ունեցած իր հարաբերութիւնները, դուրսեն ստացած իր տեղեկութիւնները, արտաքին իրականութեան դրած պայմանները:

II. ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՇԱՐԱՆՆԵՐ

Բարձր միջատներու գլխու վերին աճմունքին մեջ նստած հին ու նոր ապրումներուն կապուկները փորձառական անջատ ամբողջութիւններ են՝ էապես ամեն մեկը իր համար ու իրմով լրացած: Բայց այդ կապուկներն ալ կրնան իրար հետ որոշ կապեր առաջացնել հետզհետե, միաժամանակ կամ հաջորդական գործակցութեամբ, իրականութեան բերումով:

Ապրումներու կապուկի մը կատարած շարժումները հաճախ կրնան այն տեսակ ներքին ու արտաքին փոփոխութիւններ առա-

ջացնել, որ կդառնան նոր գրգիռներու աղբյուր՝ բոլորովին տարբեր ապրումներու կապուկ մը արթնցնելով և գործունեութեան մեջ դնելով: Այս արթնցած կապուկը կրնա նույն ձևով իր գործունեութեամբը նոր ներքին ու արտաքին գրգիռներու տեղի տալ, որոնք երրորդ ու չորրորդ ապրում-կապուկներ գործունեութեան կկանչեն:

Եվ եթե այդ կապուկե կապուկ անցնող գործունեութիւնը նույն ձևով կրկնվի, ան ալ իր ճամբաները կբանա և ան ալ կդառնա կամաց-կամայ անհրաժեշտ հաջորդականութիւն մը. և մենք կտեսանանք շարք մը պատկերավոր անդրադարձութիւններ, որոնք ավելի կամ պակաս հարկադրանքով իրար կառաջացնեն, իրարու կհաջորդեն. կտեսանանք պատկերավոր անդրադարձութիւններու շարաններ:

Որսորդ բոզի մը ձու ածելու ժամանակն է, ունի իր ձվարանեն եկող ներքին գրգիռ մը, անհանգստութիւն մը, որոնում մը: Կտեսնե որոշ տեսակի բզեզ մը կամ կառնե անոր հոտը. իսկույն կհարձակվի վրան և իր խայթը կմխե բզեզին մեջքը. թույնին հետևանքովը որսը կդառնա անշարժ ու զգայազուրկ: Իր զոհի այդ տեսքն ու վիճակը կառաջացնե նոր գրգիռ մը և կսկսի փոս մը փորելու աշխատանքին՝ հողին մեջ: Պատրաստ փոսին տեսքը կդառնա գրգիռ մը այդ հարմար թաքստոցը քաշելու իր որսը և իր որսի կողքին վրա ալ իր ձուն ածելու: Ձուն ածելը, որսի կողին փակցնելը, ձուի տեսքն ու հոտը կդառնան նոր վերջին գրգիռը հողի կտորներով ծածկելու և լեցնելու իր բացած թաքստոցը:

Իրարու սերտորեն կապված և դարավոր ու դարավոր կրկնութեամբ ժառանգված իրար հաջորդող անդրադարձ շարժումներուն շարանը լրացած է արդեն և որսորդ բոզը կձգե այդ անկյունը ու կհեռանա. ընդմի՛շտ. ալ հոն գործ չունի: Քիչ մը ժամանակ ետքը իր ածած ձվեն ելլե պիտի պզտիկ որդ մը, որ իր քովը գտնվող անունդի հոտեն դրդված երկարի պիտի իր բերանը, պիտի սկսի կրծել ու աճիլ, մինչև որ իր մորը պատրաստ դրած որսեն անուտելի ոտքերն ու կեղևը մնացած ըլլան: Անունդի սպառումը և ներքին թելի մը օրգանական արտադրութիւնը կմղեն որոշ կանոնավոր շարժումներու, որով թելը կփաթթե իր շուրջը:

Այդ բոժոժին մեջն է, որ կ՚ըլլանա սաղմնային զարգացումը և որդը կդառնա բոռ մը: Հասունացումն ու ուժերու գոյանալը կդառնա նոր գրգիռ ծակելու բոժոժը ու թարմ օդին ու լույսին չփումը կմղե վեր թռչելու. նոր որսորդ բոռ մը եկած է աշխարհ:

Եվ եթե էգ մըն է աշխարհ եկածը, քիչ մը ապրելեն ու բեղմնավորվելեն ետքը, որոնք նորեն զանազան տեսակի պատկերավոր անդրադարձումներու չարաններ են ամբողջ, կենդանին կզգա ներքին գրգիռ ձու ածելու և պիտի սկսի իր մոր մասին նկարագրված վերի պատմությունը պատկերավոր անդրադարձումներու նույն կանոնավոր հաջորդականությամբ, ըստ իր ժառանգած կապուկե կապուկ բանուկ ճամբաներուն:

Կապուկե կապուկ անցնող ճամբաներն ալ ամրացած ու ժառանգական են դարձած միևնույն ձևով, ինչ ձևով որ կազմված են սովորական բանուկ ճամբաներեն ամեն մեկը առանձին առած: Շարան անդրադարձումներու այդ ամբողջ բարդ կապակցությունը առաջացած է նույնպես հետզհետե, պատահականություններու բնական ընտրությամբ, կամաց-կամաց սրբագրվելով, լրացվելով, անպետք փորձերը մոռցվելով, պիտանին ու օգտակարը կրկնելով ու ամրացնելով ու այդ չարան ամբողջությունը անխզելի ու անդիմադրելի բնազդ մը դարձնելով:

Բնազդ ըսվածը ավելի կամ պակաս ամրությամբ, ավելի կամ պակաս երկարությամբ չարան մըն է կապուկ ապրումներով պատկերավոր անդրադարձության: Եվ ընդհանրապես այնքան երկար և զարմանալի կըլլա անդրադարձումներու այդ շղթայավորումը և այնքան նպատակահարմար ու խելացի, և բոլոր իրար հաջորդող մանրամասնությունները կարծես այնքան խոր ու նուրբ մտածված, ինչպես վերի օրինակն էր, որ մարդուն հիացում կպատճառե և մարդկային միտքը կդժվարանա ըմբռնելու, որ այդ բոլորը կույր պատահականություններու դարավոր խաղին ծնած արդյունքն է: Այսինքն՝ նույն զարմանքը և նույն ապշությունը, ինչ որ պատճառեր են միշտ կենդանիներու բոլոր գործարաններուն և կարողություններուն առաջացումը, ինչպես և կենդանիներու ընկերային բոլոր երևույթներուն ստեղծագործությունը: Ճիշդ այդ խելացիության մեջն է սակայն բնական ընտրու-

թյան դերն ու կոչումը: Բնազդներու առաջացման միակ հնարավոր ճամբան իրենց նպատակահարմար և իմաստուն ըլլալն է, երբ անոնք կծնին որոշ անխուսափելի պետքերե և կծառայեն որոշ անհրաժեշտ պետքերու. ատոր համար ալ այդ բնազդները կապրին, կտևեն ու կամրանան՝ կենդանական տեսակին նոր առավելություններ ու հաջողություն տալով գոյության կռվին մեջ:

Անոնց կենդանիներու բարձրագույն տեսակներուն ըրածներն ու բնազդները, ինչքան ալ ապշեցուցիչ և հրաշալի ըլլան ու մարդկային բանականության նմանություն բերեն, իրենց էությամբ իրարու օղակված անդրադարձություններու շարաններ են և կբացատրվին բարդ պատկերավոր անդրադարձությամբ: Ատկե ավելի բարձր հոգեկան նոր զգացումներ և նոր ավելի գիտակից կարողություններ մեջ կանչելու կարիք չի մնար գտնե անոնց ստվար մեծագույն մասին համար:

Անշուշտ որ պատկերացումը իմացականություն մըն է, իմացականություն մը ավելի վարի աստիճանի. անոնց կենդանիներու բարձր սեռակները, մասնավորապես ընկերական միջատները, մեջեմեջ այդ նախնական իմացականության մակերեսեն վեր կբարձրանան, այսինքն՝ կրնան ունենալ պատահական թե կեսպատահական կերպով ավելի «մտածված» ավելի ընտրանքով կատարված շարժումներ, որոշ չեղումներ անդրադարձ ու բնազդական գործելու ձևեն:

Այսինչ միջատը սովորություն ունի, երբ որսը գրկած կհասնի իր բույնին բերանը, անպատճառ հոն վար կդնե բեռը, ինքը առանձին կմտնե բույնը, քիչ մը ետքը դուրս կուգա ու բերածը կքաշե ներս: Այս առանձին ներս մտնելու անդրադարձ շարժումին իմաստը հավանորեն բույնի ճամբաներու բաց ըլլալուն ստուգումն է: Արդ՝ երբ միջատը բեռը վար դրած կմտնե բույնը, միջատին խելքը չափել ուզող գիտունին ձեռքը կվերցնե որսը ու կդնե թիզ մը ավելի հեռու: Միջատը կելլե բույնեն որսը տանելու, չի գտներ, այս ու այն կողմ կիյնա որոնումներով և հավանորեն հոտառության նպաստով վերջապես կգտնե, կխածնե, կմոտենա բույնին բերանը, կդնե նորեն վար և ինքը առանձին կիջնե բույնը: Գիտունին ձեռքը նորեն կհեռացնե որսը թիզ մը ուրիշ ուղղությամբ: Եվ

այս փորձը կկրկնվի ուղիը անգամ և ուղիը անգամուն ալ կենդանին հին պատկերավոր անդրադարձութեան հարկադրանքով իր որսը կդնե վար բույնին բերանը և ինքը կմտնե նախ բույնը: Բայց ահա՛ իններորդ անգամ, երբ բույնեն նորեն հեռացված որսը՝ գտնելով կխածնե ու կհասնի բույնին բերանը՝ որուն հետ միասին չիտակ կմտնե բույնը:

Այս է ահա՛ անդրադարձութենեն կատարված չեղումը. գուցե պատահականութեան մը արդյունքն էր ատիկա, գուցե և հավանորեն ավելորդ հոգնութեան առաջացուցած ներքին գրգռված վիճակի մը արդյունքը, գուցե և տկար ու մչուշային մտածումի մը ներկայութիւնը. իրողութիւնն այն է, որ չեղումը կատարված է: Հաջորդ օրվան փորձերուն միջատը միշտ վար կդներ նորեն իր որսը բույնին բերանը. անշուշտ ուժեղն ու տիրողը հին անդրադարձութիւնն է. բայց երբ քանի մը անգամներ որևէ ձևով ու պատճառով կրկնվի այս չեղումը՝ մտքին մեջ հետզհետե նոր ճամբա մը կբացվի և որսի վար դնելն ու չդնելը քիչ-քիչ կդառնա երերուն:

Մտքի մասնակցութիւնը կատարվող չարժումներուն վրա ունի իր աստիճանական բնական խորացումը: Պատկերացման նոյրոններու սկզբնավորման շրջանին միտքը երեխա մըն է դեռ, որ ընտանիքին մեջ ակամա ներկա է անդրադարձութեան աշխատանքներուն: Բայց շուտով անդրադարձութեան հրամաններուն տակ օգտակար. երկրորդական ուժ մըն է, իբրև ընտանիքի հասունցող տղան: Հետզհետե սակայն ավելի հասուննալով կդառնա անդրադարձութեան համար անփոխարինելի աշխատակից մը, նոր կարողութիւններով օժտված թարմ ու երիտասարդ սերունդ մը: Մինչև որ ահա՛ հաջորդ՝ առնական աստիճանին միտքը՝ նոր պետքերուն ու նոր պայմաններուն դիմագրավելու ավելի կարող, հասունցած ու փորձված, իր ձեռքը կառնե արտաքին իրականութեան մեջ կատարվելիք չարժումներուն ղեկավարութիւնը՝ հայր անդրադարձութեան թողնելով ներքին գործարաններու շատ ավելի պահպանողական ու միակերպ չարժումները:

Անողն կենդանիներու բարձր տեսակներուն կատարած պատկերավոր անդրադարձութեան և անոր չարաններուն կից որոշ

չեղումներ, սրբագրություններ, գուցե և մտածումի և ընտրության շատ համեստ մասնակցություն մը տեղի կունենա: Մանավանդ ընկերական կյանք մչակած միջատներու տեսակներուն մեջ: Մտածումն ու կամեցումը անոնց հոգեկան կյանքին մեջեն բոլորովին ժխտելը ավելորդ է, քանի որ «պատկերավոր անդրադարձություն» արտահայտության մեջ իմացականություն մը կա. պետք է ընդունինք, առանց սակայն չափազանցելու. և ամեն անգամ մտածումի ու ընտրության ներկայությունը փորձի ենթարկելով: Եվ ամեն պարագայի պետք է չեշտենք, որ մտավոր այդ ավելի բարձր տեսակի մասնակցությունը տիրապետող կդառնա կենդանական զարգացման հաջորդ աստիճանին վրա ողնավոր կենդանիներու քով: Անողն կենդանիներուն մեջ մտածումն ու ընտրությունը սկզբնավորություն մըն է միայն, առաջին խարխափող քայլեր և համեմատաբար շատ քիչ տեսակներու և անոնց ալ համեմատաբար ավելի քիչ շարժումներուն մեջ միայն նկատելի:

Անողն կենդանիներու բարձր տեսակներուն ամբողջության համար իբրև հոգեկան բարձրության տիրող և ընդհանուր վիճակ կմնա պատկերավոր անդրադարձությունը, այսինքն՝ իմացականության շատ ավելի համեստ աստիճան մը:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԻՄԱՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ՈՂՆԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ի. ՈՍԿՈՐԻՆ ՄԵԾ ԴԵՐԸ

1. ՈՍԿՈՐ

Ողնաւոր կենդանիները անողն կենդանիներեն զատող հիմնական նորութիւնը ոսկորն է: Պրոտոպլազմայի պինդ մարմիններ արտադրելու կարողութիւնը նորութիւն չէ. նոյնիսկ միաբջիջ կենդանիները և անկե ետքն ալ ջրային կենդանիներու բազմաթիւ տեսակները ինքզինքնին խեցեպատեանով պատել գիտեին կա՛մ ամբողջովին, կա՛մ մարմնի մեկ մասը. և անոնց բազմաձև, բազմատեսակ պատեաններով, կափարիչներով, փուշերով և ասեղներով լեցուն են ծովուն հատակները. անոնց կուտակումովը ժայռեր ու լեռներ են կազմված, որոնք իրենց գոյներու, ձևերու և փայլին գեղեցկութեամբն ու կարծրութեամբը հիացում կազդեն հնախուզին, գեղագետին և ամեն դիտողի: Ցամաքի վրա ալ ապրող միջատներուն բազմաթիւ տեսակները իրենց մարմինը կպատեն սեղուլոիդի նման ամուր կեղևով մը, որ խիթին անվանեցինք, որ թեթև է ու դիմացկուն. այնքան թեթև, որ արգելք չէ կենդանիին օդը բարձրանալուն, և այնքան դիմացկուն, որ կրնա դիմադրել բազմատեսակ թշնամիներու հարձակման, այլև ժամանակի հարձակումին իր պաշտպանած կենդանիի մահեն ետքը:

Պրոտոպլազմայի արտադրութիւնը եղող այս պինդ մարմինները բոլորն ալ կենդանիի պաշտպանութեան համար են առաջացած: Ջրային կենդանիներու խեցեպատեանները կատարյալ անա-

ուիկ ամրոցները են քարերեն, որուն ետևը կծկուած կենդանին կպաշտպանի իր դոյութիւնը իրմէ ուժեղներեն: Ցամաքային կենդանիներու թեթև պատյանը նույնպես կենդանիի պաշտպանութիւնը ծառայող զրահներ են, տեսակ մը վերտ, ուսնոց, սաղաւարտ, ծնկակապ. ամեն մեկ ճպուռ ու մորեխ մեյ-մեկ միջնադարեան ասպետ է իր կատարեալ զրահավորված վիճակին մեջ: Ինչպես որ ծովային պատենավոր կենդանիները նորեն միջնադարեան ասպետներու են նման իրենց բերդերու պարիսպներուն ետևը: Ընդհանրապես հետաքրքիր է միջնադարեան քաղաքակրթութեան և միջատներու մեջ եղած նմանութեան համեմատութիւնը:

Ամրոցն ու դղյակը, խեցին ու պատյանը, այդ քարե ամրութիւնները, իրավ է, շատ մեծ ապահովութիւն ու պաշտպանութիւն կուտան կենդանիին, բայց միշտ կպակսեցնեն անոր կենդանութիւնը, կզրկեն ազատ շարժումեն: Իսկ շարժումի նվազումին կապված է ջղային աշխատանքին նվազումը. ուրեմն հոգեկան խեղճացումը: Միջատներու ավելի թեթև զրահները խեցիներու չափով չունին այդ թերութիւնը, արգելք չեն շարժումի, ուտնուտի, թռիչքի. բայց ճիշդ այդ թերութենեն խուսափելու համար սահման կդնեն կենդանիին խոշորացմանը. ինչքան փոքր է կենդանիին պատյանը, ուրեմն և իր պարփակած մարմինը, այնքան դյուրին ու ազատ է կենդանիին շարժումը. ինչքան մեծնա պատյանը, այնքան բեռը զգալի կըլլա: Բոլոր միջատները, մանավանդ արագաշարժները փոքրիկ կենդանիներ են, որոնց բուն մարմնին երկարութիւնը քանի մը սանդիմետրեն անդին չանցնիր: Տաս-տասերկու սանդիմետր երկարութիւն ունեցող և շատ դանդաղ շերամի որդը, երբ իբրև թռչող պատենավոր թրթուռ օդը պիտի բարձրանա՝ կվերածվի երկու-երեք սանդիմետրի. ամենեն մեծը իր թևերն են այդ երկու-երեք սանդիմետր բարակ մարմինը օդին մեջը պահելու համար:

Ըսել է թե՝ ամեն տեսակի քարե ու խիճին պատյանները մեկ կողմեն այս կամ այն չափով կկաշկանդեն կենդանիին շարժումները և մյուս կողմեն ալ չեն թողներ, որ կենդանին իր ծավալով շատ մեծնա ու խոշորնա, որ հոգեկան զարգացման տեսակետեն նմանապես կարևոր ազդակ մըն է:

Ոսկորը՝ այս նոր տեսակի կարծր արտադրությունը, այս նոր տեսակի դիմացկուն արտադրությունը պլաստոպլազմայի, ոչ միայն ապատ է այդ երկու շատ կարևոր թերություններեն, այլ ճիշդ հակառակը, իր բուն դերը շարժման զարգացմանը նպաստելն է, ինչպես և մարմնի խոշորացմանը նպաստելը:

Իր հիմնական տարբերությունը պրոտոպլազմայի մյուս կարծր ստեղծագործություններեն ան է, որ մարմնին դուրսը չէ, դուրսեն մարմինը պաշտպանելու համար չէ, իբրև բերդ ու բնակարան կամ իբրև զրահ ու վահան, այլ մարմնին մեջն է, մարմնին ներսը, ամենեն ներսը. անիկա մարմնին ներքին նեցուկն է, խորքի հենարանը, մարմնին մկանները և ներքին փափուկ գործարանները բռնող ու հաստատող կռվան մը. ան չի պաշտպաններ այդ մկաններն ու այլ փափուկ մասերը մարմնի. մկանները պիտի կատարեն այդ դերը, մկաններու հետզհետե ուժեղցող ու կատարելագործվող շարժումները պիտի կատարեն այդ դերը. մկանները իրենց այդ աշխատանքին համար հիմա ամուր բռնելու տեղ մը ունին. և ինչքան մեծ և ինչքան հարուստ է իրենց կռվան եղող այդ տարածությունը, այնքան կշատնան մկանները, որ անոր կհենվին, այնքան կավելնա իրենց առաձգականությունը, այնքան մեծ կծկումներ կրնան ընել և այնքան մեծ ծանրություններ կրնան բարձրացնել կամ դիմագրավել:

Այսինքն՝ ոսկորներու առաջացման և զարգացման միջոցով կընկերանա մկաններու շատացումը, մկաններուն հաստացումը, մկաններուն երկարելացումը, ուրեմն մկանային ուժին ու աշխատանքին արագ բարձրացումը: Իսկ մկան ըսվածը կույր գործիք մըն է, որ հլու կկատարե ջիլերուն հրամանը: Մկաններու թվին ու չափին մեծացումը անխուսափելի կերպով կապված է ջղային նոյրոններու արագ բազմացումին և ջղային կեդրոններու աշխատանքի բարդացումին:

Ոսկորներու բերած այս խոշորացումներն ու հավելումները սննդելու համար կմեծնան ու կկատարելագործվին սննդառական, շրջանառական, շնչառական, արտադրական և հարակից բոլոր գործարանները ձևով, ծավալով և գործունեությամբ: Ոսկորներու առաջացումը իր հետ կբերե կենդանիներու բուսական ու կենդա-

նական գործարաններուն բոլորովին բացառիկ աճումն ու զարգացումը: Ոսկորը կենդանական կազմին ու կարողութիւններուն զարդացման մեծ թափ կուտա և ատոր համար է արդեն, որ ոսկորներու ըլլալն ու չըլլալը կդառնա հիմնական բաժանման գիծը կենդանական վարին ու վերին տեսակներուն մեջ:

Ոսկորներու առաջացումն ալ սակայն, ինչպես գործարանավոր աշխարհին մեջ ամեն բանի առաջացումը, իրականացած է շատ դանդաղ աստիճանավորութեամբ: Նախ՝ պետք չէ ենթադրել, որ ան սկսած է անպատճառ բոլոր տեսակի միջատներու կազմութենեն ետքը. ընդհակառակը, շատ ավելի բնական է ենթադրելը, որ ոսկորներու առաջացումը սկսած էր ներսեն շատ ավելի առաջ որդերու նման եղող արարածներու մարմնին մեջ. և երբ մեկ կողմեն հողտոնիները կզարգանային ու կկատարելագործվեին՝ անոնց զուգահեռ հետզհետե կզարգանար նաև ոսկորներու դերը ողնավորներու առաջին տեսակներու մարմնին մեջ, որոնցմե սակայն մեզի հետք մը չէ մնացած հողի շերտերուն մեջ. ատոր պատճառն ալ կարելի է համարել իրեն՝ ոսկորի կազմին աստիճանական զարգացումը. հիմա մեր ոսկոր անվանածնուս նախնական վիճակը բնավ պինդ մարմին մը չէր, այլ լորճնուտ կազմված մը, որ սերուընդե սերուընդ ու կենդանական տեսակե տեսակ ստացած է ավելի ամուր ժելատինային կազմ: Արդեն հիմա ալ ողնավոր կենդանիները իրենց սաղմնային, ոմանք նույնիսկ իրենց երկրային կյանքին մեջ կանցնին ոսկրային այդ աստիճաններեն: Լորճնային կամ ժելատինային այդ զանգվածներեն մեծ բան մը մնալ չէր կրնար հողի շերտերուն գոգը մեզի հասնելու համար: Ժելատինային զանգվածին մեջ կրային մասնիկներու զետեղումով պետք է առաջանար նախ բուն ոսկորը, մեր հիմակվան ոսկորը, որ ժամանակներուն դիմադրել կարողանար և հետզհետե լեցներ իր դարերուն հողաշերտերը և ատով ալ պաշտպան ու վկայեր մեզի իր ժամանակի ողնավորներու կազմի ու կյանքի մասին:

Ողնաւոր կենդանիներու բոլոր ոսկրային մասերը միասին առած կանվանենք կմախք. և այդ կմախքը բաղկացած է միշտ ողնաշարե մը, գանգե մը և չորս վերջաւորութիւններե:

Ողնաշար ըսվածը սաղմնային զարգացման իր նախնական վիճակին մեջ գլանաձև լորճնային թոկ մըն է երկարած մեջքն ի վար: Սաղմնային զարգացման մեկ որոշ աստիճանին այդ միաձուլ թոկը կսկսի հատվածներու վերածվիլ, որոնք միևնույն ժամանակ քիչ մը ավելի կթանձրանան, ժելատինային կդառնան, եւքը մասամբ ոսկրային, բարձրագույն ողնաւոր կենդանիներու մեջ ամբողջովին կոսկրանան ու կներկայացնեն իրարմե զատված, բայց իրարու կպած ողերու շարք մը:

Հյուսիսային ծովու ու Միջերկրականի ջրերուն մեջ կապրի կենդանի մը, որ քանի մը գիտնականներու կողմե փափկամորթերու մեկ տեսակը կնկատվի. մինչ ուրիշները կհամարեն այդ կենդանին միակ ապրող միջին ձև մը անողն ու ողնաւոր կենդանիներու. փոխանցման տեսակ մը, որ ողնաշարի թոկը ունի, բայց գլուխ դեռ չունի: Յոթը սանտիմետր երկարութեամբ մարմին մըն է՝ երկու կողմեն սրածայր վերջաւորութեամբ, ուրկե և կուգա իր անունը՝ անֆիոքսուս, որ երկսայր ըսել է: Ողնուղեղը երկարած է բարակ թելի մը պես ժելատինային թոկին վրա: Իր շրջանառական դրութիւնը կնմանի որդերու ունեցածին, այսինքն՝ արյան անոթ մը մեջքի կողմը, անոթ մըն ալ փորին կողմը, որոնք կողմնակի անոթային օղակներով կմիանան իրարու. այդ միացնող անոթներուն վարի մասերը կծկայնութիւն ունեցող փոքրիկ այտուններ ունին, որոնք սրտին դերը կկատարեն: Անոթները լրիվ գոց են և բարակած մասերուն վրա մազային խողովակներու լրիվ ցանց մը կկազմեն: Իր մարսողական դործարանը պարզ ու լայնկեկ խողովակ մըն է մինչև մարմնին կեսերը, ուրկե անդին կբարակի: Կերակրափողի պատերուն մեջ զետեղված են խրիկները, այսինքն՝ իր շնչառական դործարանը. ջուրը այդ խրիկներուն միջով բերնեն

կանցնի մարմնին ընդհանուր խոռոչը և փորին տակի հատուկ անցքով մը կհեռանա մարմնեն:

Այս անցողիկ կենդանիեն զատ բոլոր ողնաշարավոր կենդանիները ունին նաև գանգ, այսինքն՝ որոշ ոսկորներու իրարու սերտ միացում մը մարմնի առջևի կողմը, որ կենդանիին գլուխը կներկայացնե. գանգին կպած է և գանգին անմիջական շարունակությունը կկազմե ողնաշարը. և գանգը բաղադրող ոսկորներն ալ իրենց ձևը փոխած քանի մը ողեր են, այսինքն՝ գանգ ըսվածը առջևի քանի մը ձևափոխված ողերու միացումն է, որ հարմարվեր է իր մեջի զարգացող ուղեղային զանգվածի մեծացումին և իր վրայի զգայարանքներու դրած պահանջներուն, ինչպես և բերնի բացվածքին:

Սողուններու մեկ տեսակեն՝ օձերեն զատ բոլոր մյուս ողնավոր կենդանիներու կմախքը ունի չորս վերջավորություն՝ երկուքը առջևի, երկուքը ետևի. այդ չորս վերջավորություններու բաղադրիչ ոսկորները, այդ ոսկորներու դերն ու փոխհարաբերությունները նույն են միշտ բոլոր ողնավոր կենդանիներու համար. բայց իրենց արտաքին ձևով և ավելի երկրորդական մանրամասնություններով այդ վերջավորությունները կենդանիե կենդանի շատ կտարբերին՝ նայելով անոնց ապրուստի տեղին ու եղանակին: Առջևի վերջավորությունները կղառնան լուղակ ձկներու համար, թև՝ թռչուններու համար, և ոտք՝ մնացած կենդանիներու համար. և շատ զանազան տեսակի ոտքեր. նայելով կենդանիի վարած կյանքին՝ ատոնք կղառնան վերջապես ճեռք կապիկներու և մարդու համար: Ետևի վերջավորությունները նորեն կա՛մ լուղակ են, կա՛մ ոտք և ընդհանրապես նաև կռվի զենք:

Ողերեն և երկու կողմերեն առաջ կերկարին կողի ոսկորները՝ կողերը, որոնք և վանդակ մը կկազմեն պաշտպանողական իրենց տակի փափուկ ու կարևոր գործարաններուն համար, ինչպես և հենարան՝ թևի ոսկորներուն համար:

Այս կմախքն է ողնավոր կենդանիներու գործարանական հիմնական մեծ նորությունը. կմախքեն զատ մնացած բոլոր գործարանական դրություններն ըստ էության ժառանգված են անոնն

կենդանիներին՝ անշուշտ հարմարվելով միշտ նոր կյանքի պայմաններուն և ոսկորներու դրած նոր պահանջներուն:

Նորացումներն ու կատարելագործումները շատ ավելի չեշտված են ողնաւորներու շրջանառական և շնչառական գործարաններուն վրա, որոնք անմիջական կերպով կապված են արագ և շատ շարժումին:

II. ՇՐՋԱՆԱՌԱԿԱՆ ԵՎ ՇՆՉԱՌԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

Շրջանառության մեջ կբազմանան ու կնրբանան արյան անոթները, որ անողն կենդանիներու քով ընդհանրապես թերի ամբողջություն մը կկազմեն, գոց ու լրիվ սիսթեմ մը չեն ներկայացներ ամեն տեղ ու կչփոթվին մարմնի ընդհանուր խոռոչին հետ: Ողնաւոր կենդանիներու նրակային դրությունը գոց ու լրիվ շրջան մըն է միշտ:

Բայց հիմնական կատարելագործումը սիրտն է՝ արյունը քշող մեքենան. անողն կենդանիներու մեջ կա՛մ մարմնի շարժումներն են, որ արյան հոսում կուտան մարմնի խոռոչին մեջ, կա՛մ տակար մկանային աշխատանք մը կսկսի զարկերակի ամենալայն մասերուն վրա և որ սիրտը կփոխարինե: Ողնաւոր կենդանիները բոլորն ալ հատուկ սիրտ մը ունին:

Ձկներուն սիրտը երկու բաժանում ունի՝ մեկ գավիթ մը և մեկ մղան, որ մարդկային սրտի միայն այ կեսին կհամապատասխանե: Անմաքուր արյունը սիրտը կհասնի հինգ մեծ զարճերակներով, ուրկե կերթա խրիկները մաքրվելու. մաքրված արյունը խրիկային զարճերակով կդառնա սիրտը և զարկերակով կհասնի բոլոր գործարաններուն: Բայց սրտի երկու խոռոչ ըլլալուն հետևանքով մաքուր ու անմաքուր արյունները կխառնվին սրտին մեջ իրարու և մեծ զարկերակին տարած արյան մեջ բավական անմաքուր արյուն կգտնվի. այսինքն՝ խոշոր թերություն մը շրջանառական:

Գորտին շնչափուկը, ձկներուն նման, երկու խոռոչով սիրտ

մը ունի, բայց հասուն գորտին սիրտը արդեն երեք խոռոչանի է՝ երկու գավիթ և մեկ մղան մը: Անմաքուր արյունը սրտի աջ գավիթեն կանցնի մղանը, ուրկե թոքերուն գարկերակովը կերթա մաքրվելու, թոքերուն զարձերակովը կուգա մաքուր արյունը սրտին ձախ գավիթը և հոնկե մղանը. ուրեմն մղանին մեջ մաքուր ու անմաքուր արյունները կխառնվին իրարու. և մղանին կծկումը այդ խառն արյունն է, որ կքշե մաս մը դեպի թոքերը, մաս մը դեպի մարմինը գլխավոր զարկերակով:

Սողուններուն սիրտը չորս խոռոչ ունի՝ մղանի երկու հատվածներու բաժնվելովը, բայց բաժնող որմը թերատ է, բոլորովին չի զատեր երկու բաժանումները, որով անմաքուր արյան փոքր քանակ մը նորեն կխառնվի գլխավոր զարկերակով դեպի մարմինը քշվող արյան: Սողուններեն կոկորդիլոսի մղանները բաժնող որմը լրիվ է արդեն, բայց զարկերակներուն իրարու հետ ունեցած կապը այնպես է, որ մարմնին վերին մասը մաքուր արյան հետ թեթև քանակութեամբ անմաքուր արյուն կստանա դեռ: Այսինքն՝ սիրտը թեև հասած է իր վերջնական վիճակին, բայց շրջանառութեյունը իր վերջնական կատարելութեյունը չունի: Այս վերջնական կանոնավորութեյունը կստանա թռչուններուն և կաթնասուններուն սիրտը, որ լրիվ իրարմե զատված չորս խոռոչ ունի և մարմնի վարի ու վերի մասերը տանող զարկերակները մաքրված արյուն միայն կկրեն:

Գալով շնչառութեյան՝ ձկներուն կկատարվի խրիկներով. ջուրը կմտնե բերնեն և դուրս կհոսի բերնի կողմնակի անցքերեն, ուր խրիկներն են շարված. խրիկ ըսվածը կտրտած եզրներով շերտեր են, որոնց վրա արյան խիստ նուրբ և առատ մազային անոթներ կան. օդառատ ջուրը, ողողելով խրիկները, իր թթվածինը այդ մազային անոթներու միջով կփոխանցե արյան: Ձկները իրենց մարսողական խողովակին վրա ունին բարակ մաշկով դիմացկուն տոպրակ մը, որ կառաջանա ճիշդ թոքերու նման, մարսողական խողովակի մեկ կողմնակի աճումեն, որը սակայն շնչառական դեր չունի. կենդանին այդ տոպրակը փոքրացնելով կամ լայնացնելով կդյուրացնե իր ջրին երեսը ելլելը կամ խորքը սուզվիլը:

Գորտին շերեփուկն ալ կշնչե խրիկներով, որոնք գլխու երկու

կողմեն վար կկախվին, սակայն գորտի Հասուն վիճակին մեջ տեղի կուտան թոքերուն և իրենք կանհայտանան: Հասուն գորտը երկու թոք ունի ծալծլված տոպրակներու նման՝ շնչառական մակերեսը մեծցնելու համար: Գորտի արյան մեկ մասը կմաքրվի թոքերուն մեջ, մինչ մյուս մասը կմաքրվի մորթային շնչառությամբ: Հասուն գորտը կողեր չունի, որով չունի և կրծքի վանդակ, որով օդը ներս ու դուրս կքշենք. գորտը օդը ներս կառնե կուլ տալու նման չարժումով մը: Կան երկակենցաղներ, որոնք իրենց ամբողջ կյանքը թոքերու կողքին կպահեն նաև իրենց կախված խրիկները. որով երկակենցաղները երեք գործարան ունին շնչառության՝ մորթը, խրիկները և թոքերը:

Սողուններուն շնչառությունը արդեն բացառապես թոքային է, բայց նվազ գործոն. անոնք տարվան զեչ եղանակը կանցընեն երկար քունի մը մեջ: Ունին նաև թերատ ստոծանի մը: Ընդհակառակը, թռչուններուն շնչառությունը շատ գործոն է. անոնց մարմնի տաքությունը կհասնի 40-44 աստիճանի: Իրենց ստոծանին միշտ թերատ է ու նախնական:

Թռչունները երկու փոքր թոքեր ունին երկար շնչափողով մը, որուն վերի մասը կլայնանա ու կկազմե լարինքսը[21] և ձայն հանելու չի ծառայեր. շնչափողի վարի մասը քիչ մը այտ կուտա, որ և կկազմե երգիչ թռչուններուն ձայնական գործարանը: Շնչափողին բազմաթիվ ճյուղերը կվերջանան թոքին գոգերուն մեջ. շնչափողին հինգ ճյուղերը կվերջանան հատուկ օդային ինը պարկերու մեջ, որոնք իրարմե անկախ են և որոնց երկարեցումները կմտնեն հաճախ կենդանիի մկաններուն և ոսկորներուն մեջը: Օդային այդ պահեստները կպակսեցնեն թռչունին տեսակարար կշիռը, կներկայացնեն տաք օդի մշտական պաշար մը, որ թռիչքի ատեն կօգտագործվի և վերջապես անոնց մեջ գոյացած հոսանքը կդյուրացնե թոքերու օդին նորոգումը:

Կաթնասունները միշտ կշնչեն թոքերով, նույնիսկ ջուրի մեջ ապրողները:

Այս բոլորեն պարզ է, որ շնչառական ու շրջանառական գործարաններուն կատարելագործությունը սերտ կապ ունի կենդանիներու կենդանականության զարգացման հետ. կենդանին

ինչքան չատ և ինչքան ուժեղ չարժումներ ընելու Հարկին մեջ գտնվի՝ այնքան ավելի պետք ունի մեծ քանակութեամբ ածխածինի, ուրեմն և մաքուր արյան, ուրեմն և կատարելագործված արյունը մաքրող գործարաններու և կատարելագործված արյունը փոխադրող գործարաններու: Եվ որովհետև ոսկորները մեծ դրդիչ մըն են չարժումներու չատացման և ուժեղացման, ատով ալ պատճառ կղառնան չնչառական ու շրջանառական գործարաններու կատարելագործմանը:

III. ԶԳԱՅԱՐԱՆՔՆԵՐՈՒՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ

1. ՆԱԽՆԱԿԱԶՄ ԶԳԱՅԱՐԱՆՔՆԵՐ

Զգայարանական բջիջներուն դերը արտաքին որոշ ազդակե մը գրգռվիլն է և այդ գրգիռը ղղային կեդրոնին հաղորդելը: Իրենց այդ դերը հաջող կերպով կատարելու համար որոշ զգայարաններու բջիջներ ուրիշ արտաքին օժանդակներու պետք չունին. իրենք են միայն, երբեմն խմբված, երբեմն ցրիվ՝ նայելով բռնվելիք գրգիռին: Բայց չատ անգամ ալ շրջապատի ոչ-ղղային բջիջները կուգան օգնութեյան, կկազմեն փոս մը, կամար մը, հենարաններ, պատյան, միջնորդ ոսկրիկներ, թաղանդ, մազեր՝ այդ գրգիռներուն ստացումը դյուրացնելու, այդ ստացումը ուժեղցնելու համար կամ գործարանը պաչտպանելու համար արտաքին վնասակար ազդեցութեյուններե կամ ներքին չափազանցութենե: Այսպեսով կառաչանան ավելի կամ պակաս բարդ մասերե կազմված գործարան մը, որ զգայարանք կանվանենք: Յուրաքանչյուր զգայարանքի մեջ խիստ կերպով պետք է զանազանենք անոնց ղղային և ոչ-ղղային մասերը: Հիմնական ու հոգեբանորեն կարևորը ղղային բջիջներն են, անոնք են բուն զգայարանքը, զգայարանական բջիջը. ոչ-ղղային մասերը օժանդակ են և ինչքան ալ կարևոր դեր խաղան՝ համեմատաբար միչտ երկրորդական են:

Իրենց կազմութեյամբ ողնավոր կենդանիներու մեջն ալ ամենեն պարզն են հպումի ու ճնշումի, տաքի ու պաղի զգայարանք-

ները, այսպես կոչված չոշափական զգայարանքները, որոնք անողն ու ողնաւոր կենդանիներուն մէջ մեծ տարբերութիւն մը չունին իրարմէ: Ատոնք զգայարանական բջիջներն են՝ սովորաբար բարակ թելով մը կամ թելիկներով վերջացած ոչ-ղղային բջիջներուն մէջը, կենդանիի ամբողջ մարմնին վրա ցրված, տեղ-տեղ ավելի խիտ, տեղ-տեղ շատ ավելի նոսր:

Ողնաւոր կենդանիներու ամբողջ մարմինը գրկող կաշին երկու գլխաւոր շերտ ունի՝ վերնամաշկ մը և ներքնամաշկ մը. վերնամաշկը պաշտպանութեան կծառայե և ներքին չերմութեան պահպանումին. անոր հիւսկենին բջիջները կարտադրեն եղջյուրային թեփեր, փուշեր, փետուրներ, ակռաներ ու մազեր. իսկ ներքնաշերտը, որ հարուստ է մազային երակներով, կաշին սնուցող մասն է և հոն է, որ կվերջանան զանազան աստիճանի խորութեան վրա զգայարանական բջիջները կամ այդ բջիջներուն թելիկները: Այդ թելիկները կվերջանան կա՛մ պարզ ու մերկ, կա՛մ կազմելով զգայարանական փոքր մասնիկներ, Հանգոյցներ, որոնք ոչ-ղղային տարրերու դասավորումներ են որոշ ձևով մը, որոնց մէջ և կուգան ու կվերջանան զգայական բջիջին թելիկները:

Այս պատճառով ալ ողնաւորներու մարմինը գրկող կաշին կանվանենք սովորաբար չոշափական զգայարանք: Բայց չոշափական մարմնիկները նստած են նաև մարսողական գործարանի լորձնաթաղանդի բջիջներուն մէջը, բերնի մասերուն մէջ մասնաւոր առատութեամբ:

Շոշափական զգայարանական մարմնիկներուն ամենեն ավելի մոտիկ են իրենց կազմով Համի ու Հոտի զգայարանական բջիջները, որոնք և չոշափական մարմնիկներուն հետ միասին կներկայացնեն կենդանական նախնակազմ զգայարանքները ինչպես անողն, այնպես ալ ողնաւոր կենդանիներուն համար. նախնակազմ ինչպես իրենց առաջացման ու տարածման տեսակետեն, այնպես ալ իրենց կազմի պարզութեան:

Շոշափական մարմնիկները եթե շատ ցրված են և տեսակ մը համատարած դիրք ունին ողնաւոր կենդանիներու կաշվին ու լորձնաթաղանդներուն վրա, ընդհակառակը, Համի ու Հոտի մարմնիկները չափազանց կեդրոնացած են ու իրարու մոտիկ իրենց

պաշտոնին բերումովը: Համի մարմնիկները բերնի խոռոչին մնջն են միայն ու լեզվին վրա, Հոտի մարմնիկները՝ քթի խոռոչին մնջը՝ խորքի մասին վրա: Գանգի վրայի այդ երկու խոռոչներեն առաջինը կծառայե սնունդ առնելուն, իսկ երկրորդը՝ օդ: Համը սնունդի ստացման համար կարևորություն ունեցող տեղեկատու է. իսկ Հոտը ստանալ կրնանք դյուրին և ուժեղ կերպով շնչառության միջոցով օդի ել ու մուտքի ընթացքին, երբ կենդանին սկսած է թոքերով շնչելու. անողն կենդանիներուն մոտ անոնց չոչափուկներուն վրա էին կեդրոնացած Հոտառական զգայարանական բջիջները:

Համի մարմնիկները մեկ-երկու տեսակ են. ավելի պարզ տեսակները լեզվի ծայրին մոտիկ մասի լորձնաթաղանդին մեջ են նստած իրենց պարզ թելային կամ փշային վերջավորությամբ. ավելի բարդ են լեզվի ավելի խորքի մասին վրա նստած Համառական մարմնիկները, որոնք այտուցք մը կկազմեն ամեն կողմեն փոսիկով մը շրջապատված. շրջապատվող այդ խրամը ուտելու ժամանակ կլեցվի սնունդին հյութովը և կդյուրացնե գրգիռին ավելի տևական ու լրիվ ստացումը, քանի որ Համ առնելու հիմնական պայմանն է համ տվող մարմնին լուծված ըլլալը:

Հոտի մարմնիկները պարզ զգայարանական բջիջներ են կարճ թելային վերջավորությամբ՝ նստած քթին խոռոչը պատող լորձնաթաղանդին խորքի մասերուն վրա: Բայց քիթը ինքը արդեն ոսկրային կամարներով և ոռնգի շարժուն մկանային մասերով ավելի բաղադիր դործարան մըն է. զուտ ջղային հիմնական մասը՝ պարզ, բայց իր օժանդակ մասերը՝ բաղադիր:

Հոտառության գործարանը թե՛ իր արտաքինի այդ ավելի բաղադիր կազմով և թե՛ մանավանդ իր ներքինի հեռվեն գրգռվելու և իր ստացած գրգիռները դեպի դուրս պատկերելու ունակությամբ արդեն միջին վիճակ մը կներկայացնե նախնակազմ և ավելի բարձր տեսակի զգայարանքներուն միջև. բարձր տեսակի են աչքն ու ականջը:

2. ԲԱՐՁՐ ՈՂՆԱՎՈՐՆԵՐՈՒՆ ԱՉՔԸ

Ողնավոր կենդանիներու տեսողության գործարանը իր ամենեն կատարելագործված վիճակին մեջ բաղկացած է բուն տեսողության գործարանեն, որ աչքերու գունդերն են, և անոնց հարակից լրացուցիչ մասերե:

Լրացուցիչ մասերն են՝ 1) աչքին խոռոչները և աչքին կոպերը իրենց թարթիչներով, ինչպես և ունքերը, բոլորն ալ իբրև պաշտպանողական. 2) աչքին գունդը ամեն ուղղությամբ շարժող չորս մկանները, ինչպես և աչքին կոպերը գոցող ու բացող մկանները. և 3) արցունքի գեղձը իր դեպի քիթը իջնող խողովակով. ասոնց դերը աչքը միշտ լվալ ու մաքուր պահելն է:

Աչքին գունդը, որ գետեղված է աչքի խոռոչին առջևի մասին մեջ, կազմված է թաղանդներե և թափանցիկ միջին մասերե: Թաղանդները երեք են. դուրսեն թելավոր թաղանդ մը, ներսեն անոր փակած անոթակիր թաղանդը և անոր վրա՝ ամենեն ներսը ջղային թաղանդը: Առաջինը պաշտպանողական պատյան մըն է ճերմակ գույնով, որ կգրկե ամբողջ աչքին գունդը. ետևի կողմեն անցք մը միայն ունի, ուրկե ներս կմտնե տեսողության ջիղը, իսկ առջևի կողմը քիչ մը կուռի, կդառնա թափանցիկ և կկազմե աչքին առջևի սենյակին արտաքին մակերեսը:

Երկրորդ թաղանդը աչքը սնուցող մաշկն է. բաղկացած է երկու չերտե՝ արտաքին ու ներքին, որոնց մեջտեղը կտարածվին արյան մազային անոթները. այդ երկու չերտերն ալ ծածկված են սև գունանյութով, որով աչքին գունդին ներսը կդառնա նկարչական մութ սենյակ մը: Աչքի առջևի սենյակին դեմը այդ անոթակիր թաղանդը, զատվելով աչքի պաշտպանողական պատյան թաղանդեն, կկազմե առջևի սենյակին ետևի մասը: Այդ թաղանդին եզերքները ամեն կողմեն իրար գալով կկազմեն անթափանց շրջանակ մը՝ աչքի ծիածանը, որուն ճիշդ մեջտեղը միայն բաց կմնա ծակ մը, որ բիբ կանվանենք: Ծիածանին պիկմենտներուն գույնը կտատանի սևի ու բաց կապույտի մեջտեղը և աչքերուն գույնը կորոշե: Ծիածանին վրա գտնվող նուրբ մկաններով ծիածանին կեդրոնական բաց անցքը կարելի է լայնացնել ու նեղցնել:

Միածանի աչքի պատյանին միացած մասին վրա՝ ծիածանին ետևը, մկանային նուրբ պսակ մը կազմված է, որոնք իրենց մեջը բռնած կպահեն աչքին բյուրեղը, որ կրկնուռուցիկ ոսպաձև թափանցիկ մարմին մըն է՝ կազմված թափանցիկ թաղանդե մը և անոր մեջ թափանցիկ բջիջներու համակեդրոն շարքերե: Բյուրեղը իր չուրջի մկանային պսակի պրկումին ու թուլացման հետևանքով կդառնա ավելի կամ նվազ ուռուցիկ, որով և կփոխե իր մեջեն անցնող լույսի ճառագայթներուն ֆոքուսը:

Աչքի ծիածանն ու բյուրեղը աչքի գունդին ներքին տարածութիյունը կբաժնեն երկու անհավասար մասերու. աչքի առջևի սենյակը, որ լեցված է ջուրե ու հանքային աղերու լուծումե մը կազմված թափանցիկ հեղուկով մը. իսկ բյուրեղեն անդին եղած աչքի գունդին ներքին տարածութիյունը լեցված է ժելատինային ապակենման թափանցիկ նյութով մը՝ առնված ապակենման բարակ մաշկի մը մեջ:

Աչքի գունդին ամենեն ներսի երրորդ թաղանդը բուն ջղային մասն է, որ րետինա կանվանենք և որ կտարածվի աչքի գունդին խորքը՝ փակած անոթակիր թաղանդին: Այս երրորդ թաղանդը ջղային թելերու շերտ մըն է և ապրող մարմնին վրա բոլորովին թափանցիկ է: Իր միապաղաղ մակերեսին վրա միայն երկու կետ կա տարբերվող: Մեկը կույր կետն է, աչքի կեդրոնեն քիչ մը դեպի ներս, ուրկե ներս կմտնե տեսողութիյան ջիղը նախորդ երկու թաղանդները ծագելեն ետքը և շրջանաձև կտարածե իր թելերը և կկազմե րետինան: Երկրորդը դեղին կետն է, որ կիյնա չիտակ տեսողութիյան առանցքին վրա. թեթև փոսիկ մըն է և րետինայի ամենեն նրբազգաց տեղը:

Ինքը րետինան մանրադիտակի տակ կներկայանա երկու մասե բաղկացած. պիկմենտավոր մաս մը և բուն ջղային մասը: Պիկմենտավոր մասը, որ անմիջապես անոթակիր թաղանդին կհարի, կազմված է էպիտելիալ բջիջներե, որոնց պրոտոպլազմիկ վերջավորութիյունները ուղղված են դեպի աչքին ներսը և սուր ծայրերով խրված են բուն ջղային մասի ձողիկներուն և դլանիկներուն մեջերը: Այս պրոտոպլազմիկ վերջավորութիյունները նույնպես գունանյութ կպարունակեն, որ տեսանելի է, եթե

բետինայի իր մահվանեն անմիջապես առաջ լույսի է ենթարկված եղեր. պիկմենտ չի տեսնվիր, եթե կենդանին մահացած է մութի ենթակա:

Րետինայի բուն ջղային մասը կկազմեն բազմաճյուղ նոյրոններու, երկճյուղ նոյրոններու և տեսողական նոյրոններու հաջորդական շերտերը: Առաջին շերտը բազմաճյուղ խոշոր բջիջներ են, որոնց դեպի աչքի ներսը ուղղված առանցք-թելերը տեսողական ջիղի բաղադրիչ մասերը կկազմեն, իսկ իրենց դեպի դուրս, այսինքն՝ դեպի գանդը ուղղված պրոտոպլազմիկ վերջավորութիւնները շոշափման մեջ են հաջորդ երկճյուղ շերտի բջիջներուն դեպի ներս երկարող առանցքի վերջավորութիւններուն հետ. մինչ դեպի դուրս երկարող առանցքին ճյուղավոր վերջավորութիւնները շոշափման մեջ են երրորդ շերտի տեսողական բջիջներուն պրոտոպլազմիկ վերջավորութիւններուն հետ. տեսողական այս բջիջները երկու տեսակ են՝ նայելով իրենց դեպի դուրս, դեպի գանդը երկարած մասի առած ձևին:

Այս ծայրագույն երկարեցումները բուն ջղային մասի ոմանք պզանաձև են, որոնց ավարտական ծայրը կպարունակե րետինային ծիրանի տվող գույնը. այս ձողիկները հստակ կերպով կզատվին իրենց բջիջային զանգվածեն և սերտ հաղորդակցութեան մեջ են իրենց վրայի պիկմենտավոր շերտին հետ: Այս ծայրագույն երկարեցումներեն ոմանք ալ քիչ մը ավելի կարճ են ու կոնաձև և իրենց բջիջին մարմինը կկազմեն. նախորդներուն պես չեն զատորոշվիր և ընդհանրապես գույն չունին:

Տեսողական ջիղի ներս մտած տեղը չկան բնականաբար այս բջիջաշերտերը, ատոր համար ալ այդ կտորը կույր է: Իսկ լույսի հանդեպ ամենեն նուրբ և ուժեղ կետը ներկայացնող դեղին կետին վրա երրորդ շերտը ամբողջապես կազմված է կոնաձև բջիջներով. հոն չկան ծիրանի գույն ձողուն բջիջներ:

Այս կազմը ունեցող աչքը կրնանք համեմատել լուսանկարչական գործիքի մը հետ: Ներքին թափանցիկ մասերը գունդի գործիքի օպեկտիվին կհամապատասխանեն. երկրորդ՝ պիկմենտավոր թաղանդը սև սենյակն է. ծիածանը տիաֆրակման[22] է գործիքի. մոտեցնող-հեռացնող բյուրեղը՝ հարմարեցման պտուտակը.

և վերջապես ըետինան կներկայացնե զգայուն ապակին, որուն վրա կիյնան արտաքին իրերու իսկական պատկերները հակառակ դիրքով. ինչքան առարկան մոտ է՝ նկարը մեծ կըլլա, ինչքան հեռուն՝ այնքան պզտիկ:

Երբ առարկան 65 մետրեն ավելի հեռու է, բյուրեղը ոչ մեկ հարմարեցման կարիք չունի, նկարը միշտ ինկած կըլլա ըետինայի վրա. 65 մետրեն մինչև 15 սանդիմետր հեռավորութ֊յան վրա եղած առարկան բյուրեղի զանազան աստիճանի լայնացումը կպահանջե պատկերը ըետինայի վրա ստացվելու համար. իսկ 15 սանդիմետրեն ավելի մոտիկ եղող առարկաները հետզհետե կպղտորին և կկորսնցնեն իրենց հստակութ֊յունը:

3. ԲԱՐՁՐ ՈՂՆԱՎՈՐՆԵՐՈՒՆ ԱԿԱՆՋԸ

Ողնավոր կենդանիներու բարձրագույն տեսակներուն վրա լսողական գործարանը կազմված է երեք մասե՝ արտաքին ականջ, միջին ականջ և ներքին ականջ:

Արտաքին ականջը ձայնը հավաքող խողովակն է իր դեպի դուրս տարածված չեփորով: Միջին ականջը ձայնը փոխադրող գործիքները պարունակող խոռոչն է մոտավորապես երկու սանդիմետր լայնքով և երկայնքով. արտաքին ականջի խողովակեն բաժնված է ոսկրոտ պատով մը, որուն մեջտեղը ծակ է և գոցված թմբկաթաղանդով: Ներքին ականջեն նույնպես բաժնված է ոսկրոտ պատով մը, որուն վրա երկու փոքր ծակ կա, երկուքն ալ թաղանդով ծածկված, մեկը կլոր, մյուսը ձվաձև: Միջին ականջի խոռոչը Եվստախի[23] խողովակով հարաբերութ֊յան մեջ է կլափի[24] հետ, իսկ դեպի խորքը՝ գանգի ոսկորներուն հաստատութ֊յանը մեջ տարածվող խոռոչներուն հետ:

Միջին ականջի խոռոչին մեջ ներքին ու արտաքին ականջներու թաղանդավոր անցքերուն մեջտեղը տեղավորված են լսողական ոսկրիկները: Երեք կտոր են ատոնք. արտաքին ականջի խորքի թմբկաթաղանդին հարած ոսկրիկը կկոչվի մուրճ, որուն կոթը հենած է թմբկաթաղանդին, իսկ մուրճին գլուխը կիյնա

երկրորդ ոսկրիկին վրա, որ սալ կկոչվի. սալի մյուս ծայրը կմիանա ասպանդակի ձև ունեցող երրորդ ոսկրիկին, որու ձվաձև մարմինը հարած է ներքին ականջի ձվաձև անցքի թաղանդին: Երեք ոսկրիկներն ալ նուրբ մկաններով միացած են իրարու և խոռոչի պատերուն և թմբկաթաղանդին շարժումները իրար հաղորդելով կփոխանցեն ներքին ականջին:

Ներքին ականջը իր բարդութեան պատճառով լաբյուրինդոս ալ կկոչվի: Նախ՝ ոսկրային լաբյուրինդոս մը գանգի քունքի ոսկորին մեջ փորված և անոր մեջը հագցված թաղանդային լաբյուրինդոս մը. թաղանդային լաբյուրինդոսը լեցուն է հյութով մը, որ ներհյութ կանվանենք: Ոսկրային և թաղանդային լաբյուրինդոսները իրարմե բաժնված են հյութով մը, որ արտահյութ կանվանենք: Լսողական ջիղը գանգի ոսկորին մեջ ունեցած իր հատուկ անցքով կմտնե լաբյուրինդոսը և կտարածե իր վերջավորութիւնները թաղանդային լաբյուրինդոսին մեջ:

Լաբյուրինդոսը բաղկացած է երեք գլխավոր մասերե՝ գավիթ մը, երեք կիսաշրջան ջրանցքները և խխունջը: Գավիթը պրկված է ամեն կողմեն ոսկրի պատով. միջին ականջին հետ կհաղորդակցի ձվաձև անցքով, որ թաղանդապատ է և ուր կհարի ասպանդակը: Գավիթին մեջն են ամրացած տիկուվ մը և պարկուվ մը, որոնք անցքով մը կմիանան իրարու: Այդ երկուքին մեջն ալ ջղային վերջավորութիւններ կան, լսողական բիծեր, որոնք փափկամորթներու լսողական փամփուշտները կհիշեցնեն. ունին մեջը շարժուն թարթիչներ և ներհյութին մեջ նկատելի են կրային շատ նուրբ թանձրացումներ:

Կիսաշրջան ջրանցքները երեք հատ են և տարածութեան երեք ուղղութիւններով իրարու միացած, յուրաքանչյուր կիսաշրջան ջրանցք իր հիմքին մոտ այտուցք մը կկազմե ու կբացվի գավիթին մեջ: Երեք ոսկորե կիսաշրջանները իրենց մեջ կպարունակեն երեք թաղանդե կիսաշրջան ջրանցքներ, որոնք կբացվին տիկուվին մեջ. յուրաքանչյուր թաղանդե կիսաշրջան ջրանցքերուն հիմքին մոտը այտուցքներ կկազմվին՝ թաղանդի թանձրացումներ:

Խխունջը իր առանցքին վրա երկու և կես անգամ դարձող և

երեք սանդիմետր երկարութիւն ունեցող ոսկորն խողովակ մըն է. իրեն առանցք ծառայողը մեջը վոս ոսկոր մըն է: Խխունջի ոսկրե խողովակը ոսկրի չերտով մը բաժնված է երկու մասի ամբողջ խխունջի ներքին երկայնքին և կկոչվի պտուտակ, որ իր գազաթին վրա միայն փոքր ծակ մը ունի, որով իրարմե բաժնված երկու կես խողովակները կհաղորդակցին իրարու: Մեկ կես խողովակը կբացվի ուղղակի ականջին գավիթը և ատոր համար ալ կկոչվի գավիթի բաժին. իսկ մյուս կես խողովակը կվերջանա միջին ականջի հետ հաղորդակցող թաղանդավոր կլոր անցքին վրա և կկոչվի թմբկային բաժին:

Գավիթի բաժնին մեջն է, որ կզտնվի թաղանդի խխունջը. թաղանդը անմիջապես կփակի ոսկրոտ մասերուն, այնպես որ ներքին ականջի միայն այս կտորին մեջն է, որ ոսկրային և թաղանդային մասերուն միջև արտահյուլթ չկա: Այս թաղանդ խխունջի վերին ծայրը գոց կերպով կվերջանա խխունջին գագաթը, մինչ իր մյուս արտաքին ծայրը միացնող խողովակով մը կապված է գավիթի միջի պարկուկին:

Թաղանդի խխունջը ուղղահայաց հատումներու վրա ուղիղ-անկյուն եռանկյունի ձև ունի, որու հիպոթենուզը[25] թաղանդն է միայն, որ կզատե ներքին հեղուկավոր մասը ոսկրե խխունջի գավիթային բաժիններն. ուղիղ-անկյունի կարճ կողմը խխունջի պատն է թաղանդ ու ոսկոր. իսկ ուղիղ-անկյունի երկար կողմը խխունջի երկու մասերը իրարմե բաժնող ոսկրե անջրպետն է, վրան թաղանդ: Հաստուբյան կեսին չափը ոսկորն է, մյուս կեսը թաղանդն է ու անոր վրայի բջիջներուն չարքը:

Այս բջիջներեն երկուքը մեծ են ու կանգնած դիրքով եռանկյունիի երկար կողմի գրեթե կեսին վրա և իրենց վերի ծայրերովը կհենվին իրարու, որով իրենց տակը անցք մը կկազմվի, որ կանվանենք Կորդիի փակուղի[26] և որ հիմքի թաղանդին գրեթե մեջտեղովը ամբողջ խխունջին երկայնքովը կգալարի: Այդ երկու բջիջային այուններուն կհենվին բջիջներու քիչ մը ավելի ցածլիկ խումբ մը. ասոնք մասամբ նեցուկ բջիջներ են, որոնց վերին ծայրերը շարժուն թարթիչներ են և կերկարին թաղանդն խխունջին ներհյուլթին մեջ. այս զգայարանական բջիջները անմիջական

հաղորդակցության մեջ են ջղային թելի մը վերջավորության հետ. այս ջղային թելերը, որ հատակի ոսկրուտ մասեն կուգան, հինգ-վեց հազարի չափ են և կկազմեն պրոտոպլազմիկ վերջավորությունները զգայական բջիջներու, որոնք նստած են գանգին եկող լսողական ջիղին ոսկրե անցքին մեջ. և այդ զգայական բջիջներու առանցք-թելերն են արդեն, որ կկազմեն դեպի ուղեղը դիմող լսողական ջիղին մեկ դլխավոր տրցակը. նույն ջիղի մյուս գլխավոր տրցակը կկազմեն տիկուվի ու պարկուվի բիծերեն և կիսաշրջան ջրանցքներու գագաթներեն եկող ջղային թելերը:

Հենակ բջիջները, փակուղին և անոնց կռթնող լսողական զգայարանական բջիջները միասին առած կանվանենք Կորդիի մարմինը՝ իր հետն առած նաև հիպոթենուզի դիրքով վրան փռված խխունջի թաղանդին դեպի ներս երկարող ծալքը՝ Կորդիի թաղանդը:

Արտաքին ականջը ձայնի ալիքները ժողվողն է. այդ ալիքները շարժման մեջ կդնեն թմբկաթաղանդը, որ իր թրթռումները կփոխանցե ետևի ոսկրիկներուն և օդին. ոսկրիկները այդ թրթիռները կհասցնեն ներքին ականջի ձվաձև ծակը. եթե ոսկրիկները փճանան, օդի միջոցով ալ ալիքները կհասնին, բայց անշուշտ շատ ավելի տկար հաստակությամբ: Ձվաձև թաղանդին թրթռումները կփոխանցվին ներքին ականջի արտահյութին, ալիքը կբարձրանա մինչև խխունջին գագաթը գավիթի բաժնեն և կիջնե ետ թմբուկի բաժնեն մինչև կլոր անցքը. կլոր թաղանդը տեղի կուտա, որով և հնարավոր կդարձնե կանոնավոր ալիքավորումը: Արտահյութին ալիքները խխունջի թաղանդին միջովը կփոխանցվին ներհյութին և կազդեն ներհյութին մեջ երկարող ջղային բջիջներու թարթիչներուն: Այս լսողական բջիջներու գրգռումն է, որ ուղեղը իբրև ձայն կզգա:

4. ԱՉՔ ՈՒ ԱԿԱՆՋԻ ՏԵՍԱԿԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերը նկարագրված աչքն ու ականջը մարդու բարձրագույն զգայարանքներն են. մյուս ողնավորներու աչքն ու ականջը թեև

ըստ էութեան նույն կազմութիւնը ունին, բայց երկրորդական կետերու մեջ բավական տարբերութիւններ կան:

Ձկներուն աչքը ո՛չ կոպ ունի և ո՛չ արցունքի գեղձ, և ատոնց պետք ալ չունին, քանի որ շրջապատի ջուրը շարունակ կլվա ու մաքուր կպահե աչքին մակերեսը: Աչքին բյուրեղը չատ խոշոր է և գնդաձև և չատ մոտիկ աչքի մակերեսին: Աչքի գունդին վերին պաշտպանողական թաղանդը ջուրի մշտական ճնշումին ավելի լավ դիմադրելու համար ոսկրե կամ կրճիկե օղակ մը կազմած է իր վրա: Բյուրեղին մկանները չատ քիչ են զարգացած և դժվար թե կարողանան տեսողութեան հարմարեցման մեջ լուրջ դեր մը խաղալ: Ատոր փոխարեն աչքի անոթակիր թաղանդեն բարակ երկարեցում մը կձգվի մինչև բյուրեղը և իր ուռած ծայրովը կկպչի բյուրեղին. հավանորեն երբ կսեղմե՝ թեթև մը կտապակցնե բյուրեղին գունդը և կհարմարցնե հեռուն տեսնելուն. բյուրեղին սովորական գնդաձև վիճակը ավելի մոտիկը տեսնելու համար է հարմարցված: Ձկան երկու աչքերը, կողմնակի զետեղված ըլլալով, յուրաքանչյուր աչք իր առանձին տեսողութեան դաշտը ունի:

Երկակենցաղներուն աչքը չատ նման է ձկներուն, մանավանդ իրենց տուտը մշտապես պահող տեսակները, որոնք և ընդհանրապես ջրի մեջ կապրին: Իսկ երկակենցաղներուն այն տեսակները, որոնք չերեփուկային վիճակը անցընելեն ետքը իրենց տուտը կկորսնցնեն և որոնք ավելի լավ են հարմարած օդաբնակ կյանքին, անոնք ունին արդեն և՛ կոպ, և՛ արցունքի գեղձ: Երկու կոպերեն զատ ունին նաև երրորդ կոպի մը նախնական թերատ վիճակը ստորին կոպին տակը: Գորտերը բացի սովորական աչքի գունդը զանազան ուղղութեամբ դարձնող մկաններեն ունին նաև մկան մը, որ կրնա աչքին գունդը ետ քաշել դեպի աչքին խոռոչին խորքը: Գորտը իր աչքի ծիածանին ոսկի գույնը կպարտի գնդին պիկմենտի մը:

Սողուններուն աչքը ունի միշտ արցունքի գեղձ և երկու կոպ և նույնիսկ երրորդ կոպի թաղանդ մը, միայն օձերուն աչքը այնպես կթվի, որ կարծես կոպեր չունի և որ անոնց նայվածքին հառած անշարժութիւն մը կուտա. իսկապես կոպեր կան՝ կպած

են իրար իրենց եզերքներով և կկազմեն թափանցիկ թաղանդ մը աչքի գունդին առջևը: Աչքին գունդը ոսկորե պաշտպան օղակ մը ունի, ինչպես ընդհանրապես բոլոր ձվածինները: Աչքին մեջ խորքի անոթակիր շերտին թաթանման երկարեցում մը ունի դեպի բյուրեղը և կկարծվի սննդելու գործարան մը: Սողուններու րետինային վրա գլանիկները չեն պարունակեր ծիրանի գույն, որ կապացուցե, թե այդ գունավոր նյութը բացարձակ անհրաժեշտություն մը չէ տեսողության համար:

Թռչուններուն աչքերը կողմնական են և ամեն մեկ աչքը ունի իր առանձին տեսողական դաշտը, բացառություն է բուն: Թռչունները ունին արդեն լրիվ երեք կոպ. երրորդը ամրացած է վարի կոպի ներսի կողմին անկյունը և հոն կմնա ծալված վիճակի մեջ. կենդանին միշտ կրնա առաջ քաշել աչքին առջևը վարագույրի մը պես ուժեղ լույսերեն երբ պաշտպանվիլ կամենա: Արցունքի գեղձերեն զատ ունին հատուկ ուրիշ գեղձեր՝ բոլորն ալ աչքին ներսի կողմին անկյունը: Թռչուններուն աչքին գունդը կլոր չէ, այլ երկարավուն: Պաշտպանության շերտը ամենեն հաստն է և ունի ոսկրուտ օղակ: Ծիածանը ուժեղ մկաններ ունի. լույսի ազդեցության տակ անդրադարձ շարժումով կրնա շատ բացվիլ ու գոցվիլ կլոր բիբ մը առաջացնելով. միայն բուին բիբը կլոր չէ, այլ ճեղք մը ուղղահայաց: Թռչուններու րետինան կազմված է գլանիկներե և ձողիկներե և ունի դեղին կետ. որոշ տեսակներ նույնիսկ ունին երկու դեղին կետ, որոնք կենդանիին հնարավորություն կուտան միաժամանակ երկու տարբեր պատկերներ ունենալու րետինային վրա. գուցե մեյ մը այն առարկային պատկերը, ուր կձգտի, մեյ մըն ալ այն առարկաներուն պատկերները, որոնց առջևեն կանցնի կենդանին: Բյուրեղը ետևեն ու առջևեն քիչ մը տափակած է, որով և աչքը հանգիստ վիճակի մեջ հարմարած է մոտիկը դիտելու. հեռուն դիտելու համար պետք է մկանները լարե. այդ մոտեցնող ու հեռացնող մկանները հավանորեն ծիածանի վրայի մկաններն են: Թռչունն ալ ունի խորքի անոթակիր թաղանդեն դեպի աչքի ապակենման նյութը մեկնված թաթանման երկարեցումը:

Կաթնակեր կենդանիներուն աչքը ըստ էության մարդու

աչքն է: Կան քանի մը երկրորդական առանձնահատկություններ: Երբեմն բացի աչքը դարձնող սովորական վեց մկաններեն կունենան նոր մկան մըն ալ, որ աչքը դեպի աչքին խոռոչը կքաշե: Կոպերը հոս է, որ իրենց լրիվ զարգացման կհասնին և իրենց ազատ շարժումներն ունին. մյուս ողնավորներու կոպերը, նույնիսկ թռչուններուինը սահմանափակ շարժունակություն մը միայն ունին: Այդ կոպերը թարթիչներ ունին, որ մյուս ողնավորները չունեին: Երրորդ կոպը միշտ լավ զարգացած է, թեև թռչուններու կատարելությանը չի հասնիր. միայն կապիկի ու մարդու աչքին մեջ վերածված է մահիկաձև փոքրիկ ծալքի մը աչքի ներսի կողմի անկյունը: Կաթնասուններու աչքին գեղձերը երեք տեսակի են՝ արցունքի գեղձերը. երկրորդ՝ Հարտըրի[27] գեղձերը, որ ունին բոլոր կաթնասուն կենդանիները և մարդուցմե միայն նեկրները, որ կերկարի քիչ մը աչքին տակովը. և երրորդ՝ ճարպային գեղձեր, որ ունին միայն կաթնասունները: Կաթնասուններու ջրաբնակ տեսակները պետք չունին այդ լվացարարներուն, անոնց քովը կմնա միայն Հարտըրի գեղձը: Աչքին գունդը ոսկորե կամ կրճիկե օղ չունի պաշտպանության, քանի որ աչքի խոռոչին մեջ լավ պաշտպանված է արդեն: Շատ մը կաթնասուններու աչքի գունդին անոթաակիր շերտը գունավոր տարրեր ունի, որոնք կգործեն աչքին ներսը և մետաղանման փայլ մը կուտան կենդանիի նայվածքին մթության մեջ, ձկներու աչքին նման: Բիբը միշտ կլոր չէ, երբեմն ուղղահայաց ճեղք մը, երբեմն ձվաձև և հորիզոնական:

Ինչ կվերաբերի ականջի զարգացման տարբերություններուն ողնավոր կենդանիներու զանազան տեսակներուն մեջ՝ առաջին ընդգծելիք իրողությունն ան է, որ ամենուն համար ալ հիմնականը ներքին ականջն է: Սաղմնային զարգացման սկզբնական շրջանին այդ ներքին ականջը ծագում կառնե իբրև արտաքերտի գոգավորումով կազմված պզտիկ պարկ մը: Աստիճանաբար սաղմնային զարգացման հաջորդ աստիճաններուն վրա այդ պզտիկ պարկը կմեծնա և կառաջացնե նոր ու նոր ներքին բաժանումներ. և ինչքան կենդանին բարձր տեսակի, այնքան այդ ներքին կերտումները ավելի ու ավելի բարդ:

Այնպես որ նախնական պարկեն, որ ներքին ականջի զա-

վիթն է, իր մեջտեղեն խորք տալով կվերածվի երկուքի՝ պարկուկն ու տիկուկը, որոնք որոշ ձկներու, տուտավոր երկակենցաղներու, սողուններու և թռչուններու քով ջրանցքով մը կապված են իրարու, մինչ ուրիշ ձկներու և կաթնասուններու ականջին մեջ բոլորովին զատված են իրարմե: Եվ ընդհանրապես կառաջանան երեք կիսաշրջան ջրանցքները, որոնք կվերջանան տիկուկի մեջ:

Բայց խխունջը դեռ փոքրիկ խողովակով մըն է անել վերջավորութեամբ ձկներուն և երկակենցաղներուն քով. սողուններուն քով քիչ մը ավելի երկար է այդ խողովակը, իսկ թռչուններունը արդեն շրջան մը ըրած է խողովակը ինքն իր վրա: Խխունջը իր զարգացման ամենեն բարձր վիճակին կհասնի կաթնասուններուն քով, ուր միշտ մեկ շրջանե մը ավելին է ըրած արդեն առնվազն: Կետ ձկանը մեկ ու կես շրջան է, ճագարինը՝ երկու և կես շրջան, չորս շրջան է ըրած խոզի խխունջը:

Մինչև թռչունները խխունջը պարզ խողովակ մըն է գալարած: Թռչունները արդեն մեջեն կիսած է գավիթային ու թմբկային հատվածներու ամբողջ ներքին երկարութեամբ: Բայց կորդիի թելերը դեռ գոյութիւն չունին, որմե ստիպված ենք ենթադրելու, որ առանց այդ թելերուն ալ կենդանին կրնա ըմբռնել ձայներուն երաժշտական բարձրութիւնը, քանի որ թռչուններուն որոշ տեսակները սքանչելի երգիչներ են:

Գալով արտաքին ու միջին ականջներուն՝ատոնք միայն այն ողնաւորներուն համար են, որոնք օդի մեջ կապրին. ջրաբնակ ողնաւորները միայն ներքին ականջ ունին, որ ուղղակի կից է մարմնի կաշվին և ուղղակի ջուրեն կստանա ձայնական ալիքները. ջուրը ավելի լավ հաղորդիչ է ձայնական ալիքներու, քան օդը: Կենդանին իննչքան խոր հարմարած ըլլա օդային կենցաղին, այնքան և զարգացած ու կատարելագործված կըլլան իր արտաքին ու միջին ականջի այդ ձայնահավաք ու ձայն փոխադրող մասերը:

Ձկներն ու տուտավոր երկակենցաղները, որոնք ջրաբնակ են, լսողական գործարանը կազմված է միայն ներքին ականջե, որ անմիջապես կաշվին տակն է և կաշին այդ կտորին վրա չատ բարակ է: Անտուտ երկակենցաղները, սողուններն ու թռչունները ունին նաև միջին ականջի ոսկրիկները և թմբուկ անմիջապես ար-

տաքին կաշվին տակը: Կաթնասունները կզարգացնեն նաև արտաքին ականջը, այսինքն՝ ավելի կամ նվազ խոշոր շեփոր մը ձայները հավաքելու համար և բռնած ալիքները փոխադրող խողովակ մը մինչև թմբկաթաղանդը:

IV. ՈՂՆԱՎՈՐՆԵՐՈՒՆ ՋՂԱՅԻՆ ԿԱԶՄԸ

1. ՄԵՐԿ ՈՒՂԵՂ

Ողնավոր կենդանիները առաջացած են հատվածական որդերու տեսակներեն, որով և իրենց հետ ժառանգաբար կրնային բերել, իբրև ջղային դրություն, հատվածական կանկլիոններու պարզ կամ զույգ շղթա մը, այլև քանի մը ցրիվ կանկլիոններ: Այդ հատվածական կանկլիոններու զույգ շղթան, ինչպես և ցրիվ կանկլիոնները անցած են ողնավորներուն, տևած ու մնացած նույնիսկ ամենաբարձր զարգացման կաթնասուններու մեջ: Նոր պետքերու և նոր պայմաններու հարմարվելով ստեղծվեր են նոր ուղեղային կեդրոններ և կապակցություններ, բայց հին հիմնական ուղեղը իր մերկ կանկլիական ձևովը և շղթայակերպ համակարգով մնացեր է միշտ ուրույն. ան չէ ձուլված նորաստեղծ ուղեղներու հետ, բայց սերտորեն կապվեր է և հաղորդակցության մեջ է անոնց հետ իր կողմնակի ջիղերովը: Իր աչխատանքին այն մասը, որ արտաքին շարժումներու համար էր, արտաքին մկաններու ղեկավարությունն էր, անցեր է բնականորեն նոր ուղեղային կազմակերպություններու, քանի որ այդ նոր ուղեղային մասերը առաջ են եկեր հատկապես ոսկորներուն և անոնց հենած նոր մկաններուն շարժումները ղեկավարելու համար: Բայց կանկլիոն շղթայի աչխատանքին երկրորդ մասը, այսինքն՝ ներքին գործարաններու շարժումներուն ղեկավարությունը մնացած է իրեն, քանի որ ոսկորներու առաջացումը և արտաքին մկանային նորություններ հիմնական բան մը փոխած չեն ներքին գործարաններու վարչության մեջ:

Կենդանական անոսկր վիճակեն ժառանգված, ոսկորներու

Հետ կապ չունեցող և ոսկորներեն դուրս, ողնավորներու մարմնին մեջ իբրև մերկ կանկլիոններ գոյութիւն ունեցող ջղային կեդրոնները բոլորը միասին առած ընդհանուր անունով մը կանվանենք ջղային համակիր կամ սիմպատիկ դրութիւն:

Սիմպատիկ դրութեան կեդրոնական մասը կկազմե ողնաշարի երկայնքովը, ողնաշարի երկու կողմեն երկու կանոնավոր շարքով դասավորված և խոշոր ջիղով մը բոլորը իրարու կապված չղթան: Այդ չղթայեն դեպի ներքին գործարանները կերթան ամեն կանկլիոնե հատուկ ջիղ մը. այդ ջիղերը հաճախ իրարու ցանցվելով կկազմեն ջղային ընկուզներ, որոնց մեջերը հաճախ նստած կըլլան մեծ ու փոքր ցրիվ կանկլիական զանգվածներ:

Ողնաշարին երկայնքովը իջնող երկու շարքը ամեն մեկը կազմված է 23 կանկլիոնե. ատոնք բազմաճյուղ նոյրոններու կույտեր են, թեթև մը վարդագույն: Բոլոր կանկլիոնները կանոնավոր կերպով դասավորված են ողնաշարեն ելլող ջղային երկու արմատներու իրարու միացած տեղը, այդ արմատներու ողնաշարեն դուրս ելլելու ծակին մոտիկը: Եվ համակիր կանկլիոնեն բաժնվող հատուկ ջիղով մը միացած են ողնաշարեն ելլող այդ երկու ջղային արմատներուն, այսինքն՝ կապված են մեջքի ուղեղի կեդրոններուն հետ և անոր միջոցով ալ գլխու ուղեղի կեդրոններուն հետ:

Յուրաքանչյուր կանկլիոնի դուրսի կողմեն ջիղ մը կբաժնվի, որ կերթա դեպի ներքին գործարանները, դեպի երակները, սիրտը, թոքերը, մարսողական գործարանները, լյարդը, երիկամները կամ այլ բուսական գործարաններ ու գեղձեր: Այս ջիղերն են, որ ներքին գործարաններուն մեջերն ու վրան բազմատեսակ կապակցութիւններ կստանան իրարու հետ, ցանցեր կկազմեն, այլև կապեր այդ ցանցերուն մեջ նստած հատուկ կանկլիոնին թելերուն հետ:

Յուրաքանչյուր կանկլիոնե դեպի վար ու դեպի վեր մեկնող թելերը կկազմեն չղթային հաստ ջիղը և բոլոր շարքի կանկլիոններուն նոյրոնները իրարու հետ հաղորդակցութեան մեջ կդնեն: Սիմպատիկի նոյրոններուն առանցք-թելերը չրջապատված չեն միելինի[28] բջիջներով. միելինի այդ բացակայութիւնն է, որ սիմպատիկի ջիղերը կտարբերե ոսկրային ջիղերեն իրենց գույնովը.

տժգույն են, բաց վարդագույնի մոտեցող. գանգի ու ողան ջիղերը արծաթի ու սատափի փայլ մը ունին:

Սիմպատիկի երկու հիմնական շարքերուն 23 զույգ կանկլիոնները կբաժնենք չորս խումբի.

1) Երեք վերին զույգերը վզի կանկլիոններն են, վզի երեք ողերուն երկու կողմեն. երեք զույգն ալ թելեր կղրկեն դեպի սիրտը և կցանցվին գանգային տասներորդ ջղի թելերուն հետ, որ չնչամարսական ջիղ կկոչվի, և կկազմեն սրտի ջղային դնջուկը:

2) Տասներկու զույգը կրծքի ու մեջքի կանկլիոններն են նույն մասերու 12 ողերու երկու կողմեն: Այս խումբի միջին կանկլիոններեն, վեցերորդեն մինչև տասներորդ զույգը, մեկնող հինգ ջիղերը կմիանան իրարու յուրաքանչյուր կողմի վրա ու կկազմեն փորին մեծ ջիղը (splanchnique), որ ստոծանին ծակել-անցնելեն ետքը կուգա կվերջանա ստամոքսին վրայի իր կողմի մահիկաձև խոշոր կանկլիոնին վրա: Այս երկու խոշոր մահիկաձև կանկլիոններուն մոտերը կան ուրիշ մանր կանկլիոններ աստղանման, որոնք և կկազմեն արևային կոչվող դնջուկը, ուրկե մեկնող ճյուղերը կջղավորեն մոտակա մասերը զարկերակի, ստամոքսը, աղիքները, փայծաղը, լյարդն ու երիկամը: Արևի դնջուկն ու մահիկի դնջուկը միասին կկազմեն ահագին զանգված մը ջիղերու ու կանկլիոնի ստամոքսին վրա:

3) Սիմպատիկի հաջորդ չորս զույգ ջիղերը կկազմեն կոնքի կանկլիոնները երիկամներու բարձրության. ասոնց ջղային թելերը իրարու ցանցվելով կկազմեն կոնքի դնջուկը, ուրկե մեկնող թելերը կջղավորեն այդ մասի երակներն ու հաստ աղիքը:

4) Եվ վերջապես մնացած չորս զույգերը կկազմեն ընջակի[29] (sacres) կանկլիոնները, որոնց թելերու խառնուրդեն կառաջանա ստորին փորի դնջուկը, որու վարչության տակն է միզափամփուշտը:

Համակիր դրության այս չղթայաձև կամ առանձնակի, բայց իրարու հետ հաղորդակցող ամբողջական սիսթեմեն դուրս կան երեք կանկլիոններ ալ, որոնք նստած են կխու եռորյակ կոչվող ջիղի երեք ճյուղերուն վրա. այս երեք կանկլիոնները, որ սիմպատիկի մյուս ցրիվ կանկլիոններեն անջատ ու անկախ են, տեսակ մը

իրենց զատ վիճակը ընդգծելու համար կանվանենք ընդ-սիմպատիկ կանկլիոններ:

Կան քանի մը ողնային ու գանգային ոսկրային ջիղեր, որոնք շատ սերտ հարաբերութեան մէջ կմտնեն սիմպատիկի որոշ ջիղերուն ու կանկլիոններուն հետ անոնց դնջուկներուն մէջ և կմասնակցին սիմպատիկի հատուկ աշխատանքներուն: Ասոնցմէ գլխավորներն են. 1) Թմբուկին լարը կոչվող ջիղը, որ գլխու յոթնեորդ զույգին մեկ ճյուղն է. այս ջիղը արտաթորիչ թելեր կղրկե ծնոտի տակի թուքի գեղձերուն, լեզվի տակի գեղձին և արցունքի գեղձին, կղրկե երակ լայնցնող թելեր լեզվի առջևի մասերը և ենթածնոտային ջիղին: 2) Երկրորդ և մանավանդ գանգային տասներորդ ջիղը՝ շնչա-մարսողական ջիղը, որ իջնելով վիզն ի վար կմտնե կրծքին վանդակը և կերակրափողին երկայնքովը կհասնի փորը: Այս ճամբուն վրա կուտա ճյուղեր. ասոնցմե են սրտին ջիղերը, որոնք կվերջանան սրտի ղնջուկին վրա, թոքային ճյուղեր և փորի ճյուղեր, որոնք կծածկեն ստամոքսն ու լյարդը և կուգան կվերջանան մահիկ կանկլիոնին վրա: Եվ 3) երրորդ՝ ընջակային երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ ողերեն մեկնող ջիղերեն չարժիչ թելեր կհասնին միզափամփուշտին և հաստ աղիքներուն:

2. ՈՍԿՐԱՊԱՏ ՈՒՂԵՂ

Այս մերկ ու հինեն ժառանգված ջղային դրութեան քովը ողնաշարի գոյացման հետ հետզհետե կառաջանա նոր ջղային համակարգ մը նույն այդ ողնաշարի ոսկորներուն մեջը անոնց հզոր պաշտպանութեան տակ կենդանիի արտաքին շարժումները ղեկավարելու համար, որոնք ոսկորներու մեջ գալովը չափազանց կուժեղնան, կբարդանան ու կհաճախին:

Թե այդ նոր ոսկրապատ ջղային սիսթեմը ինչպե՞ս է սկիզբ առեր, իրենչ նախնական աստիճաններեն է անցեր՝ մենք տեսնել ու ցուցադրել չենք կրնար արդի գոյութիւն ունեցող կեդրոններու ջղային դրութիւնները համեմատութեան դնելով, քանի որ մեր

արդի գոյութիւն ունեցող կենդանիները բոլորն ալ անհամեմատ բարձր զարգացման հասած վիճակները կներկայացնեն այդ ոսկրային ջղային կազմին: Այս նոր տեսակի ջղային կեդրոններու ստեղծումն ու նախնական աստիճանները ընդմիշտ անցած ու կորսված են մեզի համար արտաքին իրականութեան մէջ, ինչպես և անցած ու կորսված են նաև չատ ավելի հին անողն կենդանիներու ջղային դրութեան նախնական աստիճանները:

Բայց ինչպես հոն, այնպես ալ հոս մեզի օգնութեան կհասնի կենդանիներու սաղմնային զարգացումը, որ, ինչպես տեսանք, արագ ու ամփոփ կրկնութիւն մըն է անհատ կենդանիին կողմե ապրելու և անցնելու այն բոլոր հիմնական վիճակները, որով անցած է իր տեսակը զարաւոր գոյութեան ու զարաւոր ինքնազարգացման ընթացքին: Ամեն մեկ անհատ կենդանի ինքն իր վրա կապրի իր տեսակի զարգացման պատմութիւնը խոշոր ու հիմնական գծերով. ամեն մեկ անհատ կանցնի նախնական միաբջիջ պրոտոպլազմայեն մինչև իր տեսակին հատուկ եղող զարգացման բոլոր դլխաւոր ու կարևոր վիճակներեն:

Արդ՝ սաղմնային զարգացման այն աստիճանին, երբ կազմվող կենդանիի կռնակին կողմեն մարմնի երկայնքով և մարմնին մեջը կսկսի կազմվիլ լորձնային թոկը միջնաձերտի բջիջներեն և որ հետզհետե ողնաշար պիտի դառնա, ճիշդ նույն միջոցին կռնակին վրա դուրսի կողմեն երկար-բարակ փոս մը կգոյանա ամբողջապես արտաշերտի բջիջներեն: Այդ երկար-բարակ փոսի երկու եզերքները քիչ-քիչ ավելի ու ավելի բարձրանալով կմոտենան իրարու, մինչև որ կդիպչին իրար, կմիանան ու կկազմեն արտաշերտային խողովակ մը, որ և հետզհետե կթաղվի կենդանիի մարմնին մեջը, դուրսեն կանցնի ներս, և հոն չուտով կսլաշարվի իր տակը զարգացող ողնաշարի կողմնական աճմունքներեն, մինչև որ ամբողջովին գրկված ու առնված կըլլա ողնաշարին մեջը:

Միևնույն ժամանակ ջղային այդ խողովակին վերին մասը կսկսի ավելի մեծնալ և ուռչիլ, քան իր ամբողջ հասակը. կստանանք գանգուղեղ և ողնուղեղ: Գանգուղեղին այտուցքը հետզհետե մեծնալով իր երկարութեամբը կվերածվի երեք այտուցքներու, որ քիչ մը ետքը ավելի ևս մեծնալով կդառնա հինգ այ-

տուցք, որոնք և կկազմեն ասկե ետքը հետզհետե զարգացող գանգուղեղին մնայուն մասերը:

Այս հինգ զանազան մեծուքյան ու ձևի այտուցքներուն մեջը կմնա միշտ հին ջղային խողովակին պարապուքյունը, որուն շարունակուքյունը կկազմե ողնուղեղին մեջտեղեն վազող պարապուքյունը:

Գանգուղեղին առաջին այտուցքը ինքն իր մեջը ծալք տալով կվերածվի երկու կիսագունդի, որուն երկու ներքին պարապուքյունները կկոչվին առաջին ու երկրորդ խոռոչներ, իսկ իրենք երկու կիսագունդերը միասին առած՝ մեծ ուղեղ: Առաջին ու երկրորդ խոռոչները փոքրիկ անցքերով, որ Մոնրոյի ծակեր[30] կկոչվին, կմիանան երրորդ խոռոչին, որ կկազմե ներքին պարապուքյունը երկրորդ այտուցքին և որ կրնանք անվանել մեծընթեր ուղեղ: Սաղմնային գանգուղեղի երրորդ այտուցքը նախնական հինգ ուռեցքներուն միջինն է. այդ միջին ուղեղի ներքին պարապուքյունը կերկարի ու կբարակի և կկոչվի Սիլվիի[31] անցք, որ երրորդ խոռոչը կմիացնե չորրորդ խոռոչին. չորրորդ խոռոչ կանվանենք գանգուղեղի վերջին երկու ուռեցքներուն ներքին միացած պարապուքյունը, որուն շարունակուքյունը կկազմե ողնուղեղի ներուղին: Իսկ ինքը չորրորդ այտուցքը առջևի կողմեն կկոչվի Վերոլի կամուրջ[32], իսկ ետևի կողմեն՝ փոքր ուղեղ. և վերջապես սաղմնային հինգերորդ այտուցքը կկոչվի երկար ուղեղ և որուն անմիջական շարունակուքյունն է ողնուղեղը:

Ոսկրապատ ուղեղը Հոգեբանական տեսակետեն կրնանք բաժնել երեք մեծ ու հիմնական հատվածներու: Առաջին հատվածը կկազմե ողնաշարին մեջ երկարած և ողնաշարի ծուծը կազմող ողնուղեղը: Երկրորդ հատվածը կկազմեն զանգուղեղի չորս ետևի այտուցքներու զարգացումեն առաջացած բոլոր մասերը միասին առած, որոնք միջնակ վիճակ մը ունին ողնուղեղին ու մեծ ուղեղին մեջտեղը թե՛ իրենց դիրքովը և թե՛ իրենց դերովը. ատոր համար ալ գանգուղեղի այդ վարի մասերը կանվանեմ միջնակ ուղեղ: Երրորդ հատվածը կկազմեն առաջին այտուցքին երկու կիսագունդերը, որ և անվանեցինք մեծ ուղեղ:

Ոսկրապատ ուղեղի այս երեք հիմնական մասերուն և անոնց

ստորաբաժանումներուն զարգացումը բոլոր կենդանիներու համար անշուշտ որ բոլորովին նույնը չէ ձևով ու չափով: Ամենեն ավելի միակերպը ողնուղեղն է, որ և է ամենեն հինը այդ երեք հատվածներեն: Միջնակ ուղեղին տարբեր մասերը տարբեր չափերով ու ձևով զարգացած կըլլան՝ նայելով, թե գլխու ո՛ր զգայարանքը զարգացած է ավելի և կենդանին ինչ կյանք կվարե: Իսկ մեծ ուղեղի զարգացումը ուղղակի կապված է կենդանական մտավոր զարգացման աստիճանեն:

Հաջորդ գլուխներուն մեջ նկարագրվածը հատկապես մարդու հասած ուղեղային վիճակն է, այսինքն՝ ամենեն բարձրը մտավոր զարգացման տեսակետեն և մեզի համար գործնականապես ամենեն հետաքրքիրը: Զանազան կենդանական տեսակներու ունեցած չեղումներն ու տարբերությունները թեև հոս ու հոն մատնանիշ կընենք, բայց ավելի մանրամասնություններու մեջ մտնելու կարիքը չկա այս աշխատության նման հոգեբանական ընդհանուր սկզբունքները մշակող երկի մը մեջ:

Բ. ՈՂՆՈՒՂԵՂ

Ի. ՈՂՆՈՒՂԵՂԻՆ ԿԱԶՄԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔՆ ՈՒ ՄԱՍԵՐԸ

Ողնաշարին մէջ երկարող ողնուղեղը պաշտպանված է նաև երեք թաղանդով: Արտաքին թաղանդ մը՝ ամուր մաշկը՝ հաստ թելաւոր և դիմացկուն, որ ողերու ներքին պատերեն բաժնված է և կներկայացնէ ուրեմն ողնուղեղի համար տոպրակ մը, որ թելաւոր երկարեցումներով տեղ-տեղ կամրանա ողնաշարի ներքին պատերուն: Միջին թաղանդ մը՝ ոստայն-մաշկը, բաղկացած երկու թերթե. արտաքին թերթը փակած է ամուր մաշկին, ներքին թերթը ազատ կմնա, բայց սարդի ոստայնին նմանող թելերով կկապվի հաջորդ՝ բարակ մաշկին: Երկու թերթերուն մէջ հազիվ քանի մը կաթիլ հեղուկ կա. բայց ոստայն-մաշկեն արտաթորող հեղուկ մը աւատորեն կլեցնէ ոստայն-մաշկի և բարակ մաշկին մէջ եղած տարածութիւնը: Ներքին թաղանդը բարակ մաշկն է, որ անմիջապես փակած է ուղեղային նիւթին. այս մաշկն է, որ կկազմե ջիղերուն նևրիլեմը և որ մտնելով զանգուղեղի խոռոչներուն մէջը՝ անոնց պատերը կգծրգե և իր մէջ ունի բազմաթիւ մազային անոթներ՝ ուղեղը սննդող:

Այս մաշկերը կշարունակվին նաև զանգուղեղին շուրջը իրենց բոլորովին նոյն հատկութիւններով, այնպես որ ամբողջ ոսկրապատ ուղեղային զանգվածը մշտապես հեղուկի մէջ կապրի, ենթաոստային հեղուկին: Ասիկա նախ՝ շատ կթեթևցնէ ուղեղին ծանրութիւնը և երկրորդ՝ արյան խուժումներու միջոցին հեղուկը տեղի կուտա, որով ուղեղը կազատե ճնշումե:

Ողնուղեղը եթե մերկացնենք իր այս երեք մաշկերեն՝ կներկայանա մեզի իբրև երկար-բարակ ամբողջութիւն մը զանազան մեծութեան՝ նայելով կենդանիի բունին երկարութեանը. մարդու ողնուղեղին երկարութիւնը կես մետր է և լայնութիւնը՝ մեկ սանդիմետր: Ուղեղային այս պարանը կսկսի անմիջապես

գանգի ծակին և կիջնե մինչև ողնաշարի վերջին՝ պոչի մասը՝ հետզհետե բարակելով, մինչև որ կվերածվի բարակ թելի մը, որ իր ամուր մաշկով կամրանա պոչի վերջին ոսկորի ներքին հատակին:

Ողնուղեղը իր լայնքին՝ առջևեն ու ետևեն թեթև մը տափակած կլոր ձև ունի, իսկ իր երկայնքին վրա երկու տեղ քիչ մը ավելի կհաստնա. մեյ մը վերին այն մասը, ուրկե թևերուն ջիղերը ծագում կառնեն, մեյ մըն ալ ավելի վարը՝ ոտքի ջիղերուն սկիզբ առնելուն տեղը: Հասուն մարդուն ողնուղեղը 27-28 գրամ կկշռե:

Ողնուղեղը վերեն վար կբաժնվի երկու համաչափ մասերու երկու ակոսով, որոնք ճիշդ իրարու դեմ կգտնվին և ճիշդ մեջտեղը առջևեն ու ետևեն: Առջևի ակոսը քիչ մը ավելի լայն է, բայց նվազ խոր. ետևի ակոսը ավելի նեղ է, բայց ավելի խոր: Ուղեղի այդ երկու համաչափ կեսերը իրենց կողմերուն վրա ունին ուրիշ՝ երկու ավելի երեսանց ու թեթև ակոսներ, որոնք կկոչվին առջևի կողմնակի ակոս և ետևի կողմնակի ակոս: Առջևի կողմնակի ակոսին մեջեն դուրս կուգան ողնուղեղեն մեկնող ջիղերուն առջևի արմատները, իսկ ետևի կողմնակի ակոսին մեջեն սկիզբ կառնեն ուղեղեն մեկնող ջիղերուն ետևի արմատները:

Ողնուղեղը ամբողջապես կազմված է ղոային բջիջներե, այդ բջիջներուն պրոտոպլազմիկ մարմինները, այսինքն՝ բուն բջիջները հավաքված են ողնուղեղի ամբողջ երկարութեյամբը ողնուղեղի կեդրոնական մասը, մինչ այդ ղոային բջիջներու առանցք-թելերը, որոնք ողնուղեղի երկայնքով դեպի վար կամ դեպի վեր կուղղվին ու կճյուղավորվին, կկազմեն ողնուղեղի արտաքին շրջանակը: Այնպես որ ողնուղեղին ճիշդ կեդրոնը ամբողջ երկայնքովը զանգուղեղի խոռոչներուն չարունակութեյունը եղող ներուղին է, այդ ներուղիին շուրջը խմբված են ղոային բջիջները վերեն վար ամբողջական զանգվածով մը. իսկ այդ բջիջային զանգվածին շուրջը վեր ու վար վազող առանցք-թելերու հաստ կեղևն է նորեն ամբողջ ողնուղեղի երկայնքովը:

Ավելի գորշ գույն մը ունի կեդրոնական բջիջային մասը, իսկ թելային կեղևը սատափի ճերմակութեյուն ունի, որ արդյունքն է յուրաքանչյուր առանցք-թելը շրջապատող պաշտպանողական

բջիջներու չարքի մը պարունակած մեկ նյութին, որ միելին կանվանենք: Այսպեսով՝ ողնուղեղը բաղկացած կըլլա կեդրոնական գորշ զանգվածեն և այդ զանգվածը շրջապատող թելային ճերմակ կեղևեն:

2. ՈՂՆՈՒՂԵՂԻ ԳՈՐՇ ՄԱՍԵՐԸ

Ողնուղեղի կեդրոնական գորշ մասը բոլոր կողմերեն նույն հաստութիւնը և նույն ձևը չունի, կլորաձև չէ: Եթե ողնուղեղը որևէ կետի մը վրա հորիզոնական կերպով կտրելու ըլլանք, հատումին վրա գորշ մասը եվրոպական H տառին կնմանի: Ողնուղեղի վարի, վերի ու միջին մասերուն վրա կատարված հատումներու վրա գորշ մասերուն ինչպես մեծութիւնը, այնպես ալ ձևը բոլորովին նույն չէ, ավելի կամ պակաս զգալի տարբերութիւններ կան, բայց ամեն տեղ ալ այդ H տառի ընդհանուր հիմնական նմանութիւնը պահած է:

Գորշ զանգվածը ուրեմն կազմված է չորս թևերե և բուն կեդրոնական մասե մը, որ ներանցքին չուրջը այդ թևերը կմիացնե իրարու: Այդ թևերեն երկուքը կկոչվին ետևի կոտոշներ, որովհետև իրենց ծայրերը կնային կենդանիին կռնակի կողմը, մյուս երկու թևերը կկոչվին առջևի կոտոշներ, որովհետև կերկարին դեպի կենդանիին փորին կողմը: Ետևի կոտոշները քիչ մը ավելի հաստկեկ են ու կարճ, առջևի կոտոշները քիչ մը ավելի բարակ են բայց ավելի երկար:

Այդ կոտոշները իրարու կապող կեդրոնական մասերը կկոչվին միացուկներ. ներանցքի ետևեն, այսինքն՝ կռնակի կողմեն միացնողը ետևի միացուկն է, ներանցքին առջևը եղողը՝ առջևի միացուկը: Ետևի գորշ միացուկը ավելի զանգվածային է, ավելի հաստ, քան առջևի գորշ միացուկը:

Ետևի կոտոշներուն և ետևի միացուկին նոյրոնները ավելի պզտիկ են, առջևի կոտոշներուն և առջևի միացուկին նոյրոնները ավելի խոշոր են: Ետևի փոքր նոյրոնները զգայական բջիջներ են, առջևի ավելի խոշոր նոյրոնները շարժիչ բջիջներ են: Ուրեմն

ողնուղեղի ետևի կոտոշներն ու միացուկը զգայական կեդրոններ են, իսկ առջևի կոտոշներն ու միացուկը շարժիչ կեդրոններ են:

Ողնուղեղի զգայական կեդրոններուն այդ փոքրիկ նոյրոնները բազմանդուղ բջիջներ են, որոնց պրոտոպլազմիկ թելերն ու մազիկները դուրս չեն գար գորշ զանգվածի սահմանեն և շոշափման կմտնեն մոտավոր ու հեռավոր զգայական նոյրոններե եկող առանցք-թելերու մազային վերջավորուբյուններուն հետ: Իսկ իրենց առանցք-թելերը կըլլան երկու տեսակ՝ կա՛մ կարճ, կա՛մ երկար: Կարճերը կտարածվին ու կճյուղավորվին միայն գորշ մասին մեջ և միելինե զուրկ են: Երկար առանցք-թելերը կղառնան միելինավոր, դուրս կուգան գորշ զանգվածեն, կկազմեն ճերմակ թելերու մեկ մասը և ավելի կամ պակաս երկարաձգվելեն ետքը նորեն կմտնեն գորշ զանգվածը և կուղղվին դեպի շարժիչ կամ զգայական կեդրոնները:

Ողնուղեղի շարժիչ կեդրոններուն այն ավելի խոշոր նոյրոնները, որոնք բազմանկյուն կամ աստղաձև տեսք ունին, ամեն ուղղուբյամբ պրոտոպլազմիկ թելեր կմեկնեն և խիտ փնջային վերջավորուբյուններ ունին, որոնցմով շոշափման մեջ կմտնեն մոտեն ու հեռվեն իրենց երկարող զգայական ու շարժիչ մազայիններու հետ: Իրենց առանցք-թելերը ընդհանրապես երկար են, միելինավոր, որոնք դուրս գալով գորշ զանգվածեն կա՛մ անմիջապես դեպի մարմինը մեկնող ջիղերուն առջևի արմատին մեկ թելիկը կկազմեն, կա՛մ կերկարին ողնուղեղի ճերմակ մասին մեջ վար ու վեր, նորեն տեղ մը, ավելի ճիշդ՝ շատ մը տեղեր գորշ զանգվածին մեջ խրվելու և իրենց ստացած գրգիռը այդ մասերուն ալ հաղորդելու համար, այս միջնորդ տեսակի շարժիչ նոյրոնները իրենց արտաքինովն ալ քիչ մը նվազ խոշոր են:

Գորշ զանգվածին մեջ նստած նոյրոնները երբեմն ցրիվ կըլլան իրարմե, բայց ավելի հաճախ իրար մոտ կույտեր կկազմեն. այնպես որ հորիզոնական հատուածներու վրա իբրև առանձին-առանձին խտացումներ կներկայանան գորշ մասին մեջ, կորիզներու նման. իսկ ուղղահայաց հատուածներու վրա կներկայացնեն ամբողջական սյուներ:

Այդ կորիզ-սյուներեն ամենեն կարևորներն են. առջևի կո-

տուներուն վրա ներքին առջևի և արտաքին առջևի սյուները: Առջևի ու ետևի կոտոշներու միացման մասին վրա քիչ մը դեպի դուրս այտուցք տալով կուտակված է կողմնական կորիզ-սյունը: Ետևի կոտոշներու հիմքին վրա և դեպի ներս կարևոր կուտակում մը կա, որ Քլարքի[33] սյուն կանվանենք. Քլարքի սյունեն քիչ մը ավելի դեպի դուրս և ետևի կոտոշներու գլխեթե կեսին նոր կուտակում մը կա, որ կկոչվի Ոլտեյերի[31] միջնակ բջիջներ. հոսկե քիչ մը ավելի դեպի դուրս, կոտոշի դուրսի կողմի եզերքին վրա կուտակված կորիզ-սյուն մը, որ Պախտերևի[35] կողմնական բջիջներ կկոչվի: Եվ վերջապես ետևի կոտոշներուն ծայրը մահիկաձև կորիզով մը խառնված են խումբ մը բջիջներ, որ Ռոլանտի[36] ժելատինավոր նյութ անունը կկրեն. մահիկի գագին մեջ, ուրեմն քիչ մը ավելի դեպի ներս կուտակված է մանր բջիջներու խումբ մը, որ կկոչվին կոտոշին գլխուն կորիզը (Ոլտեյերի):

Ողնուղեղի գորշ մասերու ուսումնասիրության մեջ պետք է հիշվի նաև թիկնային կանկլիոններու զույգ շարքը. այս կանկլիոնները բուն ողնուղեղեն զատ են անշուշտ, բայց իրենց դիրքովն ու դերովը սերտորեն կապված են ողնուղեղին: Ասոնք շարված են ողնուղեղի երկու կողմեն, քիչ մը ետևեք, ողնաշարի խողովակին մեջը, այսինքն՝ ոսկրապատ են: Ողնաշարի ամեն մեկ ողեն մեկնող ջիղերը կազմված են երկու թևե յուրաքանչյուր կողմի վրա. առջևի թևը շարժիչ արմատն է, որ դուրս կուգա կողմնակի առջևի ակոսեն և բաղկացած է առջևի կոտոշին շարժիչ նոյրոններու առանցքթելերեն: Իսկ ողնաշարեն մեկնող ջիղին ետևի թևը զգայական արմատն է, որ դուրս կուգա կողմնակի ետևի ակոսեն: Ահա այս զգայական արմատին վրա են կուտակված թիկնային կանկլիոններուն նոյրոնները, որոնք շատ առանձնահատուկ միաթել կազմ ունին. նոյրոնեն միայն մեկ թել մը կպատվի, որ սակայն իսկույն կճյուղավորվի երկուքի, որոնք կերկարին երկու իրարու հակառակ ուղղությամբ. այս թելերեն ավելի երկարը ետևի արմատի դեպի դուրս մեկնող մասով կերթա մարմնի եզերային մասերը, իսկ անոր ավելի կարճ թելը ետևի արմատի ներքին մասով կողմնակի ետևի ակոսով կմտնե ողնուղեղի գորշ ու ճերմակ որոշ մասերը: Թիկնային այս կանկլիոններու միջնորդությամբն է, որ կաշվի զգացու-

ները կհասնին ողնուղեղի նույրոններուն, ինչպես և ավելի վեր՝ դեպի գանգային կեդրոնները:

3. ՈՂՆՈՒՂԵՂԻ ՃԵՐՄԱԿ ՄԱՍԵՐԸ

Ողնուղեղի ճերմակ կեղևը ողնուղեղեն դուրս եկող արմատներով բնական կերպով կբաժնվի երեք մասի յուրաքանչյուր կողմի վրա. վերեն վար երկարող այդ մասերը կանվանենք երիզներ. առջևի ակոսեն մինչև կողմնակի առջևի ակոսը եղած հատվածը կանվանենք առջևի երիզ. ետևի ակոսեն մինչև կողմնակի ետևի ակոսը եղած հատվածը կանվանենք ետևի երիզ. իսկ երկու կողմնական ակոսներուն մեջ ինկած հատվածը կանվանենք կողմնական երիզ: Այսպեսով ողնուղեղի կեդրոնական գորշ զանգվածը շուրջանակի գրկող ճերմակ պատյանը բաղկացած է երկու հատ առջևի երիզներե, երկու հատ ետևի երիզներե և երկու հատ ալ կողմնական երիզներն: Բայց այս արտաքին բաժանումը դեռ բավարար չէ, որովհետև յուրաքանչյուր երիզի մեջ վազող բոլոր թելերը նույն ծագումը, նույն ուղղությունը և նույն դերը չունին: Նման ծագում և նույն վերջակետը ունեցող թելերը կպած ու միացած են իրարու և կկազմեն երիզին բաղադրիչ առասաններ[37]. այնպես որ ամեն երիզ հատատատ կերպով կարելի է բաժնել քանի մը առասաններու, որոնք և միշտ նույն դիրքն ու տեղը ունին երիզին մեջ: Երբեմն նույնիսկ այդ առասանները կարելի է վերածել մեկ-երկու թոկերու, որոնցմե ամեն մեկը իր առանձնահատուկ դերը ունի: Այդ առասաններու ու թոկերու արժեքն ու առանձնահատկությունները հստակ ըմբռնելու համար պետք է աչքի առաջ ունենալ հետևյալ կետերը:

Ողնուղեղի ճերմակ մասը կազմված է ամբողջովին ավելի կամ պակաս երկար առանցք-թելերե: Այդ առանցք-թելերը կրնան պատկանիլ նախ շարժիչ կամ զգայուն նույրոններու, որոնք նստած են ողնուղեղի գորշ մասերուն մեջ և կերթան վերջանալու նորևն ողնուղեղի մեկ որևէ մասին մեջ դեպի վեր կամ դեպի վար. ուրեմն մնալով միշտ իրենց նույրոնի կողմին վրա, երբեմն ուշ կամ կանուխ

անցնելով դիմացի կողմը, այսինքն՝ նույնակողմ են կամ դիմակողմ: Ողնուղեղեն դուրս չեկող այս թելերը կանվանենք ներքին թելեր:

Առանցք-թելը կրնա ծագում առնել ողնուղեղի նոյրոնե մը, բայց չի վերջանար ողնուղեղի մեջ, այլ կերթա ավելի բարձր մասերը՝ դեպի միջնակ ուղեղ կամ դեպի մեծ ուղեղ: Առանցք-թելը կրնա սկիզբ առնել ողնուղեղեն ավելի բարձր մասի մը մեջ նստած նոյրոնե մը, բայց կուգա ու կվերջանա ողնուղեղի մեջ: Ողնուղեղեն վեր մասերու հետ հաղորդակցող այս թելերը կանվանենք արտաքին թելեր: Եթե նոյրոնը ողնուղեղի մեջն է նստած՝ առանցք-թելը կդառնա արտաքին բարձրացող թել. եթե նոյրոնը միջնակ կամ մեծ ուղեղներու մեջն է նստած՝ առանցք-թելը կդառնա արտաքին իջնող թել:

Այս արտաքին իջնող կամ բարձրացող թելերը տեղ հասնելե առաջ անպատճառ պետք է խաչաձևվին, այսինքն՝ ուղեղի աջ կողմի բջիջե մը ծագում առնողը պետք է վերջանա ձախ կողմի բջիջի մը վրա և ձախ կողմի բջիջե մը սկիզբ առնողը պետք է վերջանա աջ բջիջի մը վրա: Արտաքին առանցք-թելերու այս խաչաձևումը կկատարվի կա՛մ ողնուղեղի մեջ զանազան բարձրության վրա, կա՛մ զանգային երկար ուղեղին մեջ: Երբ ողնուղեղի մեջ կկատարվի մեկ կողմեն մյուսը անցումը, անցումեն ետքը թելը կդառնա դիմակողմ. երբ երկար ուղեղին մեջ կկատարվի այդ խաչաձևումը, ողնուղեղին մեջ առանցք-թելը կներկայանա իբրև նույնակողմ թել:

Եվ վերջապես առանցք-թելերը կրնան պատկանիլ նոյրոնի մը, որ սիմպատիկ դրության կպատկանի, բայց կուգա կվերջանա ողնուղեղի մեջ կամ նոյրոնը կպատկանի ողնուղեղին, բայց առանցք-թելը կերթա, կվերջանա սիմպատիկ դրության մեկ կանկլիոնին մեջ. սոսնք կկոչվին սիմպատիկ թելեր՝ բարձրացող կամ իջնող:

Ա. Ներքին առասաններըը կպարունակեն ուրեմն չարժիչ և զգայուն թելեր, որոնք կգրկեն խոշոր զանգվածով առջևի կոտոշները ամեն կողմեն:

1. Ներքին առասան մըն է առջևի երիզին ստվար մեծագույն

մասը իր ամբողջությամբ՝ ակոսի ու առջևի եզերքին վրա շերտ մը միայն թողնելով արտաքին թելերու էջքին:

2. Ներքին առասան մըն է կողմնակի երիզին առջևի կոտոչին կից մասերը մինչև երիզին կեսերը՝ նորեն եզերային քիչ մը ավելի թանձր շերտ մը միայն թողնելով զգայական բարձրացող թելերու:

Բ. Սիմպատիկի առասանները կուգան ու կերթան սիմպատիկի հաղորդակցության թևով:

1. Շարժիչ թելերը, որ սկիզբ կառնեն առջևի կոտոչներու նոյրոններեն առջևի արմատներով, քանի մը հատն ալ ետևի արմատներով կհասնին սիմպատիկի հաղորդակցության թևին և հոնկե սիմպատիկի կանկլիոններու շղթային, գուցե և ցրիվ կանկլիոններուն:

2. Զգայական թելերը կանկլիոններեն հաղորդակցության թևով կմտնեն ետևի արմատները վերջանալու համար ողնուղեղի գորշ մասերուն մեջ:

Գ. Արտաքին բարձրացող առասանները, որոնք մսրմնի զգայությունները կտանին միջնակ ու մեծ ուղեղներուն, բռնած են ամբողջ ետևի երիզը և կողմնական երիզին գրեթե բոլոր եզերային մասերը ավելի կամ նվազ հաստությամբ:

1. Կողմնական երիզի եզերային առջևի կեսը զգայական առասան մըն է, որուն թելերը կուգան ո՛չ իր, այլ հանդիպակաց կողմի Քլարքի սյուներն առջևի անցումով, այսինքն՝ Քլարքի սյունի նոյրոններու առանցք-թելերն են խաչաձևված. առասանը կբարձրանա միջնակ ուղեղ ու թելերուն մեծագույն մասը կվերջանան փոքր ուղեղի վերին որդի առջևի մասին կեղևին վրա: Ավելի նվազ թիվով թելեր կվերջանան փոքր ուղեղ չհասած՝ երկար ուղեղի կամ կամուրջ-ուղեղի նոյրոններուն վրա: Որոշ թելեր կհասնին մինչև թալամուս[38]:

2. Կողմնական երիզի եզերային ետևի մասը նույնպես զգայական առասան մըն է, նույնպես Քլարքի սյունի նոյրոններեն ծագում առած, բայց ո՛չ հանդիպակաց, այլ իր կողմի Քլարքի սյուներն. և առասանը կվերջանա նույնպես փոքր ուղեղի վերին որդին վրա, միայն անոր կեղևին ետևի մասերը:

Այս երկու կողմնակի զգայական առասաններով մարմնի մկանային զգայութիւններն են, որ կհասնին փոքր ուղեղը. ըստ այդ զգայութիւններու հավասարակշռութեան չարժումները փոքր ուղեղին մեջ կհամադրվին:

3. Ողնուղեղի ետևի երիզը ուղեղային թաղանդի չերտով մը բաժնված է երկու մասի. ետևի ակոսեն մինչև բաժանիչ մաշկը Կոլի[39] առասանն է, մաշկեն մինչև ետևի կողմնական ակոսը Պուրտախի[40] առասանն է: Անունները տարբեր, բայց հիմնական տարբերութիւն մը չունին այդ երկու առասանները իրարմե: Երկուքն ալ բաղկացած են երկու տեսակի թելերե. այդ թելերը կա՛մ կուգան ետևի արմատներուն վրա նստած թիկնային կանկլիոններեն, կա՛մ ողնաշարի ետևի գորչ մասերուն մեջ նստած նոյրոններե:

Թիկնային կանկլիոններուն միակ թելը իսկապես ճուլումն է երկու թելերու, որոնք իսկույն ալ կբաժնվին. դեպի մարմնի մասերը գացողը նոյրոնի խիստ երկարած պրոտոպլազմիկ թել մըն է, իսկ ետևի արմատով դեպի ողնուղեղը եկողը նոյրոնի առանցք-թելն է: Այդ առանցք-թելերեն ավելի կարճերը անմիջապես կճյուղավորվին ու հարաբերութեան մեջ կմտնեն ետևի կոտոշին գորչ մասերուն հետ. քիչ մը ավելի երկարները ետևի կոտոշին մեջ քիչ մը ճամբորդելեն ետքը կվերջանան ողնուղեղային նոյրոնի մը վրա:

Համեմատաբար ավելի փոքրաթիվ են թիկնային կանկլիոններու երկար առանցք-թելերը, որոնք և խիստ առանձնահատուկ ուղի մը ունին. ետևի արմատներեն կմտնեն երիզը և Կոլ ու Պուրտախի առասաններով չիտակ կբարձրանան երկար ուղեղը, հոն երկար ուղեղի կեսերուն և կեդրոնական մասերուն մեջ գտնվող Կոլի ու Պուրտախի կորիզներուն մեջ վերջանալու համար. իսկ Կոլ ու Պուրտախի նոյրոններուն առանցք-թելերը երկար ուղեղին մեջ խաչաձևվելեն ետքը կերթան մեծ ուղեղը կա՛մ չիտակ, կա՛մ թալամուսի մեջ կայան մը ընելեն ետքը:

Իսկ ինչ կվերաբերի ողնուղեղի գորչ մասերեն ետևի երիզը եկող թելերուն՝ ատոնք բոլորը զգայական միջնորդ նոյրոններու առանցք-թելերն են, որոնք ողնուղեղի զանազան բարձրութեան զգայութիւնները իրարու կփոխանցեն: Ասոնք որոշ ու զատ առա-

սաններ չեն կազմեր, ինչպես որ են շարժիչ միջնորդ առասանները. սակայն կան թոկերու նմանող մեկ-երկու թելային մնայուն խտացումներ Կոլ ու Պուրտախի մեջերը:

Դ. Արտաքին իջնող առասանները, որոնք մեծ ու միջնակ ուղեղներեն հրամաններ կբերեն ողնուղեղի առջևի կոտոշներուն, վեց հատը գոնե առանձնացված են արդեն. երկուքը կիջնեն մեծ ուղեղեն, չորսը՝ միջնակ ուղեղի զանազան մասերեն:

1. Կեղևային նույնակողմ շարժիչ առասանը, որ առջևի ակոսին ամբողջ եզերքը կբռնե: Առասանը բաղկացած է երկար թելերե, որոնց նյարդոնները նստած են մեծ ուղեղի կեղևին մեջ և թելի իջած կողմեն. խաչաձևումը կկատարվի իրենց վերջանալիք տեղին վրա, ուր առջևի միացուկով կանցնին հակառակ կողմը և կվերջանան մազայիններ կազմելով առջևի կոտոշներուն խոշոր բջիջներուն վրա:

2. Կեղևային ղիմակող շարժիչ առասանը կգրավե կողմնակի երիզին խոշոր մեկ մասը՝ ետևի արմատներուն և Ֆլարքի նույնակողմ զգայական առասանին մեջտեղը: Այս առասանի մայր նյարդոններն ալ նստած են մեծ ուղեղի կեղևին մեջ, միայն հանդիպակաց կողմին վրա. մինչև երկար ուղեղը այս երկու առասանները բոլորովին նույն ճամբան կկտրեն. երբ կհասնին երկար ուղեղին առաջին կեսերը՝ այս առասանին թելերը հետզհետե և զանգվածորեն կմտնեն երկար ուղեղին մեջ, կխաչաձևվին և կիջնեն վար իբրև կողմնակի առասան. մինչդեռ առջևի շարժիչ առասանը կիջնե ուղղակի առջևի ակոսով առանց նախնական խաչաձևումի:

3. Միջնակ ուղեղի մասերեն ծագում առնող առասաններն են. ա) Առջևի երիզի առջևի բարակ եզերքը բռնող՝ իջնող շարժիչ թելերը, որոնց մայր նյարդոնները նստած են երկար ու կամուրջ ուղեղներու ցրիվ մասերուն մեջ: բ) Նախորդի տեսակ մը շարունակութիւնն է առջևի արմատներեն անդին շարունակվող, այսինքն՝ կողմնակի երիզի ամենեն առջևը գրեթե եզերային առասան մը, որ կուգա Թալամուսեն. այս առասանը կհասնի ողնուղեղի մեջ ո՛չ ավելի վար, քան կուրծքի կողերը: գ) Այս թելերեն ո՛չ շատ հեռու առջևի արմատներուն մոտիկ և կոթնած առջևի կոտոշներուն կա

որոշ թոկ մը, որ իր սկիզբը կառնե երկար ուղեղին վերջը և կամուրջ ուղեղին սկիզբները գտնվող լսողական կորիզներեն և գավիթային կոչվող մասեն: դ) Կողմնակի երիզին ճիշդ մեջտեղը՝ գորշ մասեն մինչև եզերքը, երկու ծայրերը ավելի բարակ, մեջտեղի մասը շատ ավելի ուռած առաստան մը կա, որուն թելերը կիջնեն միջնակ ուղեղի միջին հատվածին մեջ գտնվող կարմիր կորիզեն, որ փոքր ուղեղի հրամանները կղրկե ողնուղեղի առջևի կոտոշներուն. մաս մը թելեր ալ կուգան կամուրջի ցրիվ գորշ կետերեն. բոլորն ալ խաչաձևված միջնակ ուղեղին մեջ:

4. ՈՂՆՈՒՂԵՂԻՆ ՋԻՂԵՐԸ

Ուղեղային կեդրոններեն դուրս եկող և դեպի մարմնի զանազան մասերը երկարող ջղային թելերուն հաստ կամ բարակ լարերը կանվանենք ջիղ: Ողնուղեղեն դուրս եկող յուրաքանչյուր ջիղ ունի իր առջևի ու ետևի արմատները և անոնց միացումով գոյացած իր բունը, որ դուրս գալով ողնաշարի կողմնական անցքերեն՝ կերկարին, կճյուղավորվին: Առջևի արմատներով դուրս կուգան շարժիչ թելերը, որոնք առջևի կոտոշներուն մեջ նստած նոյրոններուն առանցք-թելերն են: Ետևի արմատներով ջիղին բունը կմտնեն թիկունքի կանկլիոններուն մեջ նստած միալար նոյրոնի մը դեպի մարմինը երկարող ծայրերը: Ջիղի բունին մեջ այդ երկու արմատներուն բերած թելերը իրարմե անջատ չեն մնար, զգայական ու շարժիչ կխառնվին իրար և այդ խառնուրդով կգոյանան իրարու զուգահեռ վազող բազմաթիվ զանազան հաստության բաղադրիչ լարեր, որոնցմե ամենեն հաստին տրամագիծը հազիվ կհասնի մեկ միլիմետրի: Այդ բաղադրիչ լարերը շրջապատված կըլլան նուրբ մաշկով մը. և այդ մաշկին ամեն ուղղությամբ երկարող պաշտպանողական թելային տարբեր ջղային լարերը կհեռացնեն իրարմե և տեսակ մը պաշտպանող բարձերու դերը կխաղան. ասկե զատ բոլոր լարերը միասին, այսինքն՝ ամբողջ ջիղը փաթթված է ընդհանուր ճարպոտ հյուսկենով մը:

Ինչքան ջիղ մը կեդրոնեն հեռանա, այնքան ավելի շատ

կճյուղավորվի, այսինքն՝ զանազան լարեր, ինչպես նաև լարերու մասեր կզատվին իրարմե և կերթան տարբեր ուղղութիւններով, իբրև ջիղին մեկ առանձնացած ճյուղը՝ միշտ ընդհանուր պատյանով մը փաթթված: Երբ ճյուղն ու ճյուղիկները կհասնին իրենց եզերային վերջակետին, լարերու զգայական ու շարժիչ թելերը կզատվին իրարմե և ամեն մեկը կերթա իր պաշտոնին:

Առջևի արմատներեն եկող շարժիչ առանցք-թելերը կվերջանան փնջանման ծայրերով, որուն ամեն մեկ թելիկը իր քիչիկ մը ուռած ծայրովը կերթա կպչի մկանային թելի մը մարմնին, որ այդ միացման տեղին վրա այտուցք կուտա. ջղային թելը մկանային այտուցք մտնելեն առաջ կձգե իր միելինավոր բարակ մաշկը: Շարժիչ թելին բերած գրգիռը երբ կհաղորդվի մկանին, արդյունքը կըլլա մկանին կծկումը: Շարժիչ թելը կրնա վերջանալ գեղձի մը բջիջներուն վրա, այս պարագային ջղային թելի բերած գրգիռը պատճառ կդառնա, որ գեղձին բջիջները արտաթորեն իրենց պատրաստած հեղուկը:

Ետևի արմատներեն եկող զգայական ամեն թել կվերջանա մազային ամբողջ թուփով մը, որուն յուրաքանչյուր մազիկը կերթա կվերջանա ուղղակի կաշվի ապրող բջիջներուն մեջ, կա՛մ ուղղակի ինքը կստանա իր այդ մերկ ու պարզ վիճակին մեջ արտաքին գրգիռը, կա՛մ կվերջանա զգայարանական հատուկ բջիջային կազմութեան մը մեջ, որ զգայարանք կանվանենք և որուն դերը անտարակույս զգայութեան ավելի հստակ և ուժեղ կերպով ստացման նպաստելն է:

Ջիղերը դուրս կուգան երկու կողմերու միացման անցքեն. ողնաշարեն դուրս կուգան 31 զույգ ջիղեր, 31-ը աջեն, 31-ը ձախեն. կխմբենք չորս հատվածի.

ա. Ուղեղը զույգը կհեռանան ողնաշարի վզի հատվածեն և կկազմեն վզի ջիղերը. յուրաքանչյուր կողմի առաջին չորս ջիղերը ողնաշարեն դուրս գալուն պես կխճճվին իրարու ու կկազմեն վզին դնջուկը. այդ դնջուկեն կմեկնին տասնհինգ ջիղեր, որոնք վիզն ու գլուխը շարժող մկանները կջղավորեն, ատոնցմե մեկն ալ կջղավորե ստոծանին: Վզի ջիղերուն հաջորդ չորսերը նորեն իրարու

ցանցվելով կկազմեն թևին դնջուկը, ուրկե տասնուվեց ջիղեր կմեկնին և գլխավորապես դնդի թևը:

բ. Ողնաշարի ջիղերուն հաջորդ տասերկու զույգը կկազմեն մնջքի ջիղերը. կմեկնին նուշնանուն ողերեն և իրարու զուգահեռ կերկարին կողի ոսկորներուն մեջերովը կռնակի, կողերու և փորի իրենց բարձրության համապատասխան մասերը առանց իրար խառնվելու. միայն առաջին զույգն է, որ որոշ թելերով կմասնակցի թևի դնջուկի կազմության:

գ. Հաջորդ հինգ զույգը, որ դուրս կուգա ողնաշարեն երիկամներու բարձրության, կանվանինք կոնքի ջիղեր. յուրաքանչյուր կողմի վրա կկազմեն մեյ-մեկ դնջուկ, ուրկե կանջատվի ջիղ մը, որ կջղավորե զիստի առջևի մասը:

դ. Վերջին վեց զույգերը կկազմեն ընջակի ջիղերը, որոնք դուրս կուգան ողնուղեղի մնացած մասեն մինչև պոչի ոսկորը, որ քանի մը ողերու աղճատումը և ձուլումը կներկայացնե: Ընջակի ջիղերը իրարու ցանցվելով կկազմեն ընջակի դնջուկը, որ և կվերածվի ժապավենի նմանող միակ ջիղի մը, երկու սանդիմետր լայնութեամբ, բոլոր ջիղերեն ամենեն զանգվածայինը. կկոչվի զիստի ջիղ, որ զիստի ետևի կողմեն կիջնե և երկու ճյուղի բաժնվելով կջղավորե ամբողջ ոտքը:

Եթե կտրելու ըլլանք ջիղի մը բունը կամ անոր ճյուղերեն մեկը՝ կդադրի զգայնությունն ու շարժումը այդ ջիղի կամ ճյուղի վերջավորության տարածում ունեցող դաշտին մեջ, այդ մասերը կդառնան անշարժ ու անզգա: Եթե մեր կտրած տեղեն գրգռելու ըլլանք ջիղի եզերային կողմի ծայրը՝ ջիղի տարածման դաշտին մեջ կառաջանան ցնցումներ և շարժումներ. եթե մեր կտրած տեղեն գրգռելու ըլլանք ջիղի կեդրոնական կողմին ծայրը՝ կառաջանա ցավի զգացումը կեդրոնին մեջ:

Կտրված ջիղի մը դաշտին մեջ առաջացած անշարժությունն ու անզգայությունը բացարձակ չէ, քանի որ հարևան ջիղերեն թելեր միշտ կանցնին փոխադարձաբար իրարու դաշտ. որոշ դաշտի մը կատարյալ անզգայությունն ու անշարժությունը ստանալու համար, բացի իր ջիղեն, պետք է կտրվին նաև իր նախորդ և հաջորդ ջիղերը:

Եթե կտրելու ըլլանք ջիղի մը առջևի արմատը՝ կզգդրի շարժումը այդ ջիղով ղղավորված դաշտին վրա: Եթե գրգռելու ըլլանք կտրված տեղի եզերային ծայրը՝ կառաջանան ցնցումներ և շարժումներ. եթե գրգռենք կտրված տեղի կեդրոնական ծայրը՝ զգայութիւն չառաջանար:

Եթե կտրելու ըլլանք ետևի արմատը՝ կզգդրի զգայնութիւնը այդ ջիղի դաշտի տարածութեան վրա: Մեր կտրած տեղեն եթե գրգռելու ըլլանք կեդրոնական ծայրը՝ կառաջանա ցավի զգայութիւն. եթե գրգռենք եզերային ծայրը՝ զգայութիւն չառաջանար:

Կան շատ սակավաթիվ զգայական թելեր, որոնք ետևի արմատներով կմտնեն ջիղին բունը և բունին մեջ բավական առաջանալեն ետքը կծռին ետ և առջևի արմատներով կմտնեն ողնուղեղը. հետևանքը կըլլա, որ առջևի արմատը երբ կտրենք և գրգռենք եզերային կտրված ծայրը, բացի ցնցումներ ու շարժումներ առաջացնելե, կառաջացնե նաև ցավագին զգայութիւն մը: Այս բացառիկ մոլորուն թելերը կկոչվին Հետադարձ թելեր:

Ետևի արմատներուն մեջն ալ կան բացառիկ շարժիչ թելեր, որոնց նոյրոնը ողնուղեղի կողմնական գորշ մասերուն մեջն է նստած և որոնք կերթան կվերջանան սիմպատիկի կանկլիոններուն մեջ՝ անոթային, արտաթորական կամ այլ շարժիչ նոյրոնի մը վրա:

Ողնուղեղի ջիղերը կանոնավոր կերպով կապված են սիմպատիկի ջիղերուն հաղորդակցութեան թելով, որ մեկնելով սիմպատիկ շղթայի յուրաքանչյուր կանկլիոնեն՝ կուգա կմիանա իր բարձրութեան համապատասխանող ողնային բունին, այսինքն՝ Հոն, ուր ետևի ու առջևի արմատները կմիանան իրարու. այնպես որ իսկապես երեք արմատներ են, որ կմիանան՝ առջևի, ետևի և սիմպատիկի արմատները:

Սիմպատիկի արմատով որոշ կանկլիական թելեր ուղղակի կանցնին բունեն դեպի մարմնի եզերային մասերը դիմող ջիղը՝ սիմպատիկ կեդրոնները անմիջական հաղորդակցութեան մեջ դնելով մարմնի արտաքին որոշ մկաններու և զգայութիւններու Հետ: Բայց սիմպատիկի արմատով անցնող թելերը էապես սիմպատիկի ու ողնուղեղի կեդրոնները կկապեն իրարու:

Հաղորդակցության թևերը ճերմակ են՝ սատափազույն, քանի որ ողնուղեղի գորշ մասերեն սկիզբ առնող առանցք-թելերը միելինավոր են:

II. ՈՂՆՈՒՂԵՂԻՆ ԴԵՐԸ

1. ԲՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սիմպատիկ ջղային դրուքյունը ողնուղեղի հետ միասին կհամապատասխանե անողն կենդանիներու մարմնի կանկլիական ջղաթային և կկառավարե գլխեն վար եղող բոլոր մասերու մկանային աշխատանքը: Անողն կենդանիներու ջղաթան կվարե թե՛ ներքին բուսական գործարաններուն չարժումները և թե՛ արտաքին տեղ ու դիրք փոխելու չարժումները: Ողնավոր կենդանիներուն՝ մեջ այդ աշխատանքը բաժնված է. սիմպատիկ դրուքյունը կվարե բուսական գործարաններուն չարժումները, իսկ ոսկրային նոր ուղեղը՝ տեղ ու դիրք փոխելու չարժումները:

Բայց պետք է ուշադրության առնել, որ մեկ կողմեն անողն կենդանիներուն մեջն ալ կա ճգտում մը մասնավոր չանք ու հարատևության պահանջող ներքին գործարաններու չարժումներուն ղեկավարությունը զատելու առանձին կանկլիոնի մը մեջ. մյուս կողմեն ալ ողնավոր կենդանիներու այդ երկու ջղային մասերու անջատումը բացարձակ չէ, ո՛չ ալ կատարյալ. և բացարձակ ըլլալ չի կրնար, քանի որ արտաքին չարժումներու և ներքին գործարաններու մկանային գործունեության մեջ սերտ կապ կա և փոխադարձ մչտական ազդեցություն:

Ներքին գործարաններու չարժումներուն ղեկավարությունը անտարակույս Համակիր կանկլիոններուն մեջն է միայն, երբ չարժումը կկատարվի ներքին դրդռմով. ներքին գործարաններեն դեպի սիմպատիկի կանկլիոններուն զգայական մասերը եկած ներքին դրգիռներուն պատասխանը սիմպատիկի չարժիչ մասերը կուտան: Բայց երբ արտաքին չարժում մը կկատարվի, այդ չարժման պահանջած սրտի, թոքի, երակներու և այլ ներքին գործա-

րանային շարժումները կթելադրվին այդ արտաքին շարժումները վարող կեդրոնեն. արտաքին շարժումը վարող ողնուղեղի գորշ ու շարժիչ մասերեն է, որ գրգիռը կանցնի սիմպատիկի կանկլիոններեն շարժիչ մասերուն և հոնկե ալ հրամանը կերթա համապատասխան ներքին գործարանին: Բուսական գործարանին շարժիչ կեդրոնը նորեն սիմպատիկ կանկլիոնն է, բայց ո՛չ իր նախաձեռնութիւնմբ, ո՛չ իր ներքին մասերեն ստացած գրգիռներու անմիջական անդրադարձութիւնմբ, այլ իրմեն դուրս եղող արտաքին հրամանով մը, արտաքին շարժիչ ուղեղային մասի մը թելադրանքովը:

Այսինքն՝ ներքին գործարաններուն գալարված հարթ մկանները միշտ կգործեն սիմպատիկ կեդրոններու անմիջական հրամանով, քանի որ անմիջապես անոր նոյրոններու թելերուն հետ միայն հաղորդակցութիւն ունին, բայց այդ շարժումներու ղեկավարութիւնը երբեմն սիմպատիկ կանկլիոններու մեջն է, երբեմն ողնուղեղի առջևի կոտոշներուն մեջը:

Նույնը նաև ողնուղեղի կեդրոնաձիգ թելերուն համար. ներքին գործարաններեն լուր առնող ջղային թելերուն կանկլիոնը նստած է սիմպատիկի շղթային մեջ կամ սիմպատիկի ցրիվ կանկլիոն մըն է, ուրկե գրգիռը ուղղակի անցնելով նույն կանկլիոնի շարժիչ նոյրոններուն՝ կառաջացնե սիմպատիկ անդրադարձութիւն մը անմիջական աղեղը: Բայց սիմպատիկ զգայական կեդրոնը իր ներքին գործարաններեն ստացած գրգիռը կրնա փոխանցել նաև ողնուղեղային նոյրոնի մը, ուրկե կանցնի ողնուղեղային շարժիչ նոյրոնի մը և կառաջացնե արտաքին շարժում մը ներքին դրդումով. դրդողը, հրամայողը սիմպատիկ կանկլիոնն է, բայց մարմնի արտաքին շարժում մը կրնա իրագործվիլ միայն ողնուղեղի առջևի կոտոշներու միջոցով, քանի որ անոնց նոյրոններու վերջավորութիւններն են մարմնի արտաքին մկաններուն վրա:

Միայն ողնուղեղի ընդլայնային երկրորդեն մինչև հինգերորդ զույգ ջիղերն են, որ իրենց թելերը կղրկեն ստորին փորի ներքին գործարաններուն, որոնք և անմիջապես ողնուղեղային անդրադարձութիւնմբ կրնան շարժում մը կատարել, այդ պատճառով ալ ընդլայնային այդ չորս զույգ ջիղերը բացառիկ վիճակ մը ունին և

սիմպատիկի դերը կխաղան, այսինքն՝ ներքին գործարաններու անմիջական ղեկավարությունը:

Եվ վերջապես ողնուղեղի զգայական նոյրոն մը, ինչպես և ողնուղեղի թիկունքի կանկլիոններուն նոյրոնը իրենց գրգիռը կրնան փոխանցել սիմպատիկ զգայական նոյրոնի մը, ուրկե կանցնի սիմպատիկ չարժիչ նոյրոնի մը և հոնկե ալ ներքին գործարանի մը մկանին. այսինքն՝ բուսական գործարանին չարժումը դրդված կըլլա ողնուղեղի զգայական կեդրոնե մը:

Ասիկա կնշանակե, որ սիմպատիկ և ողնային երկու ջղային դրութիւնները կան իրարու քով իրենց որոշ ու զատ կեդրոններով, ցանցերով ու դերով, ամեն մեկը իր համար անկախ. բայց այդ երկու անկախ դրութիւնները դաշնակից ու գործակից են իրարու. ամեն մեկը իր պետքին ու պահանջին համեմատ կօգտվի իր դաշնակցի ճամբաներեն, կեդրոններեն ու վերջավորութիւններեն, առանց որևէ արգելքի ու սահմանափակութեան: Միակ արգելքն ու սահմանափակումը այդ գիծով երթալ-գալու, այդ ճամբով ազդել ու ազդվիլ կարողանալու դյուտը ըրած ըլլալն է: Ուղեղային նոր կեդրոններու առաջացումով, հին կեդրոններու նոր զարգացումով, նոր պահանջներու դրդումով նոր ու նոր ճամբաներ որոնող ջղային գրգիռներուն հոսումները հետզհետե, բնական ընտրութեան կույր խաղով, ավելի ու ավելի կմշակեն ու կսերտացնեն այդ երկու ջղային դրութիւններու սերտ կապը: Քանի կերթա այդ հաչտ ու համերաշխ գործակցութիւնը կզարգանա ու կչեշտվի և կներկայանա իբրև իրար լրացնող ամբողջութիւն մը:

2. ՈՍԿՐԱՅԻՆ ՄԿԱՆՆԵՐՈՒՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ողնուղեղի իրեն հատուկ դերն է ղեկավարել այն մկաններուն աշխատանքը, որոնք ոչ թե ներքին գործարանի մը, ներքին անոթներու, խողովակներու, տոպրակներու ու գեղձերու չարժումները կվարեն, այլ կվերջանան ոսկրային մկաններու վրա և այդ ոսկորներուն չարժումները կվարեն:

Ոսկրային այդ շարժումները շատ ավելի ուժեղ են, թափով, հանկարծ և իրարու հետ բազմաթիվ ու բազմատեսակ կապակցութիւններով, քան ներքին բուսական գործարաններուն փաթթված մկաններուն աշխատանքը, որոնք ավելի միակերպ, ավելի մեղմ են ու ավելի տևական են. հարթ են անոնց մկանային թելերը. ավելի տոկուն և ուժեղ դիմադրութեան ու գործունեութեան համար ոսկրային մկանները դարձած են գծավոր. ողնուղեղի անմիջական հրամանին տակ գործող մկանները գծավոր են:

Եվ ողնուղեղի անմիջական ղեկավարութեան տակ եղածը մարմնի արտաքին մկաններն են ողնաշարի ու կողերու մկանները և առջևի ու ետևի վերջավորութիւններու մանր ու խոշոր բոլոր ոսկորները շարժման մեջ դնող մկանները:

Եվ այս ղեկավարութիւնը հատվածական է. ամեն մեկ ողի գորշ մասերեն սկիզբ առնող թելերը նույն ողեն մեկնող ջիղին միջոցով իր բարձրութեան համապատասխանող մարմնի հորիզոնական շերտ մը կղեկավարե: Ամենեն վերջին ողերեն սկիզբ առնող ջիղերը մարմնի վարի մասերը կջղավորեն, միջին ողերեն մեկնող թելերը մարմնի փորի, կրծքի ու թիկունքի մասերուն շարժումները կվարեն. իսկ վերին ողերուն ետին նստած նոյրոնները կվարեն վզի, ուսի ու թևերուն շարժումները: Այնպես որ հատվածականութիւնը միայն ջիղերուն համար չէ, այլև ջիղերը ծնող կեդրոնական նոյրոններուն համար: Ամեն ջիղի առջևի ու ետևի արմատներով կմիանան ու ջիղ մը կկազմեն այն թելերը, որ կերթան կամ կուգան այդ ողին պատկանող գորշ մասին մեջ նստած նոյրոններեն կամ նոյրոններուն:

Այսինքն՝ ողնուղեղի գորշ մասերուն ամեն մեկ կտորը իր որոշ մկանային խումբը ունի կառավարելու և իր որոշ զգայական տարածութիւնը. հավանորեն ամեն մեկ չարժիչ նոյրոն իր հատուկ մկանային թելը ունի, որ կգրգռե անմիջական կերպով և ամեն մեկ մկանային թելի մկանային զգայութիւն կուգա որոշ նոյրոնե մը, որ նստած է Քլարքի սյունին մեջ. ինչպես և մարմնի արտաքին ամեն մեկ կետեն միայն որոշ նոյրոնի մը կհասնի անմիջական կերպով զգայական գրգիռը թիկնային կանկլիոններուն կամ ետևի կոտոշներուն մեջ: Եվ ինչպես որ զանազան ոսկորներ

զանազան ուղղութեամբ չարժող առանձին-առանձին մկաններ կան, այսինքն՝ մկանային թելերու որոշ ու հաստատ խուրձեր ու խմբեր, որոնց միահամուռ կծկումովը չարժումները կիրականանան, այդպես ալ ողնուղեղի գորշ մասերուն մեջ նոյրոններու խմբեր կան, որոնց միակ գործը այդ որոշ մկանային ամբողջութիւնը միահամուռ կծկելն է կամ մարմնի մեկ որոշ տարածութեան վրա կատարված գրգիռները միահամուռ ստանալը:

Ողնուղեղի ամեն մեկ գորշ կտոր, կետ ու նոյրոն իր ազդեցութեան որոշ տեղն ու շրջանակը ունի մարմնին վրա: Անշուշտ ամեն գորշ կտոր և ամեն նոյրոն կրնան նաև հարևան նոյրոններու և հարևան շրջանակներու վրա ալ ազդեցութիւն ունենալ կամ ազդվիլ, ինչպես և կրնա ավելի հեռավոր, նույնիսկ չափազանց հեռավոր դաշտերու, շրջանակներու և նոյրոններու վրա ազդել ու ազդվիլ, բայց ո՛չ անմիջապես, այլ միջնորդապես. այսինքն՝ ինքը կազդե իր պրոտոպլազմիկ վերջերով ուրիշ նոյրոններու, որոնց հետ հարաբերութեան մեջ է գորշ զանգվածին մեջ, և անոնք ալ կազդեն իրենց մկանին. կամ ինքը կստանա գրգիռը նույն ձևով ուրիշ ուղեղային նոյրոններե:

Մարմնի բոլոր մեծ ու փոքր մկանային ամբողջութիւնները ունին ողնուղեղին մեջ իրենց վարիչ հատուկ կեդրոնը. և այդ ուղեղային կեդրոններու հաջորդականութիւնն ու դասավորութիւնն ալ կհամապատասխանե մկանային խումբերու մարմնի վրա ունեցած դասավորութեան. ճիշդ այնպես, ինչպես որ սիմպատիկի ամեն մեկ կանկլիոն իր հատուկ գործարանը կամ գործարանի մը մեկ հատուկ մասը կղեկավորե նմանապես գործարաններու բնական դասավորութեան զուգահեռ: Ինչպես կանկլիոններուն, այնպես ալ ողնուղեղի գորշ մասերուն մեջ խառնակութիւն չկա. ամեն կեդրոն, ամեն կտոր և ամեն նոյրոն իր որոշ ու հատուկ գործը ունի, որ և իր միակ գործն է. ուրիշի գործին, ուրիշի մկանին, ուրիշներու եզերային մասին չի խառնվիր ու չի կրնար խառնվիլ: Ուրիշներուն հետ կրնա գործակցիլ, ուրիշներն ալ կրնա իրեն գործակից դարձնել, կրնան միասին ու խմբով գործել, կրնա ուրիշներու կալվածքին մեջ փոփոխութիւն մը առաջացնել, բայց

միշտ այդ կալվածքի հատուկ եղող նոյրոնին ու մկանին ու զգայական վերջավորութիւններու միջոցով:

Այնպես որ էապես ամեն ողի մէջ նստած ողնուղեղի զգայական և շարժիչ նոյրոն կկազմեն միասին ամենեն պարզ անդրադարձ շղթան: Իր դաշտի եզերային մեկ կտորեն գրգիռը կուգա ողնուղեղին մէջ իր զգայական կեդրոնը, հոնկե կանցնի իր շարժիչ կոտոշը՝ հոնկե ալ երթալու համար իր դաշտի մկանային որոշ խումբ մը թելերու: Ասիկա կհամապատասխանե հատվածական կենդանիներու նախնական-տեղական անդրադարձութեան: Բայց ինչքան կենդանին կզարգանա և ինչքան արտաքին շարժումները կբազմաճևվին, այնքան կփոքրանա ասպարեզը զուտ տեղական-հատվածական անդրադարձութեան և ատոր տեղը կբռնե հատվածե հատված անդրադարձութիւնը. մեկ դաշտե մը եկած գրգիռին ուրիշ դաշտի մկան մը կպատասխանե կամ զանազան դաշտերու մկաններ:

Ողնուղեղին մէջ գրգիռին այսպես հարկե հարկ փոխանցումը կկատարվի երկու եղանակով. նախ՝ գրգիռը իր դաշտեն ստացող զգայական նոյրոնի վար ու վեր երկարող պրոտոպլազմիկ վերջավորութիւններով, որոնք կերթան ուրիշ հարկերու զգայական կամ շարժիչ նոյրոններու պրոտոպլազմիկ վերջավորութիւններու հետ հարաբերութեան մտնելու. ասիկա փոխանցման զգայական ճամբան է. բայց փոխանցումը կրնա կատարվիլ նաև շարժիչ ճամբով, այսինքն՝ գրգիռը ստացած շարժիչ նոյրոն մը առջևի կոտոշներեն իր պրոտոպլազմիկ երկարեցումներով վերի ու վարի շարժիչ մասերը կրնա հասցնել գրգիռը, որ ան գործադրե գրգիռը կամ որ ա՛ն ալ միասին գործադրե:

Ըլլա զգայական թե շարժիչ ճամբով՝ ասիկա փոխադրութեան ավելի պարզ ու ավելի հասարակ եղանակն է. գրգիռը շատ ավելի հեռուները հասցնելու և շատ ավելի բազմատեսակ կեդրոններու գործակցութիւնը ապահովելու համար ծնունդ կառնե գորշ մասերուն մէջ բոլորովին նոր տեսակի նոյրոն մը, ծնունդ կառնե սովորական զգայական կամ շարժիչ նոյրոններեն. տարբերութիւնը հոն է, որ նորածինը նոր տեսակի սերունդ մըն է և մարմնի եզերային մասերուն հետ ինքը կապ չունի, ո՛չ մկանի հետ, ո՛չ

զգայարանքի, ինքը զուտ ուղեղային բջիջ է և ուղեղեն ալ դուրս չի պար. իր գործը միջնորդություն ընելն է. ընդունիլ գրգիռը զգայական կամ շարժիչ նոյրոնե մը՝ նայելով ծագումին, և տանիլ այդ գրգիռը քանի մը հարկեր և փոխանցել իր հյուղավորումներով ու մազայիններով այդ տարբեր հարկերու զգայական կամ շարժիչ կեդրոններու նոյրոններուն: Գրգիռներու տարածման ու փոխադրության ավելի բարդ ու կատարելագործված եղանակն է ասիկա:

Բոլորովին բացահայտ դարձնելու համար ողնուղեղի թե՛ տեղական և թե՛ հարկե հարկ գործակցական անդրադարձություններ կատարելու կարողությունը բոլորովին անկախ գանգային ուղեղներեն, ասեղ մը կկոխենք ծոծրակեն գորտին գանգը և կփճացնենք կենդանիին ողնաշարեն վեր եղող ուղեղային բոլոր մասերը: Կենդանին կդառնա անշարժ, որովհետև զրկված է իր կամավոր շարժումներեն: Արդ՝ եթե ծակելով կամ թթու բան մը քսելով գրգռելու ըլլանք անոր մարմնին մեկ որևէ մասը, օրինակ՝ մեկ թաթը, կտեսնենք, որ կենդանին ո՛չ միայն շարժումներ կկատարե, այլև կվարվի այնպես, ինչպես վարվելու էր, եթե իր ուղեղը փճացուցած չըլլայինք. օրինակ՝ կբերե մյուս թաթը ու կջանա սրբել թթուն: Ուրեմն ողնուղեղը առանց գլխու մասնակցության ալ կրնա կատարել շատ բարդ անդրադարձ շարժումներ, եթե անպամ մը կազմված է արդեն այդ անդրադարձության համբան:

Եթե զգույշ ու թեթև կերպով ենք գրգռած գորտին թաթը, կցնցվի ու կշարժի միայն գրգռված թաթը. այսինքն՝ տեղական անդրադարձություն: Եթե թթուն կամ ծակոցը ուժեղցնենք որակով կամ տարածությամբ՝ գրգիռը կանցնի նաև հանդիպակաց կողմը և կենդանին կբերե մյուս թաթը և կշփե իր գրգռված թաթը գրգիռեն ազատվելու ջանքով: Եթե մեր գրգիռը հասցնենք անսովոր չափերու՝ այլևս ո՛չ միայն գրգռված թաթը կցնցվի, ո՛չ միայն դիմացի թաթը օգնության հասնելու ճիգեր կընե, այլև ցնցումը կանցնի առջևի ոտքերուն և վերջապես ամբողջ մարմնին, փախչելու, հեռանալու ճիգով:

Այսինքն՝ տարածվող յուղի կաթիլի մը պես անդրադարձ շարժումներուն մասնակից կդառնան հետզհետե ավելի ու ավելի շատ ու ավելի հեռավոր ու անսովոր ուղեղային կեդրոններ:

3. ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳԱՆԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆՆԵՐՈՒ ՀԵՏ

Ողնուղեղի ճերմակ զանգվածի մոտավորապես մեկ երրորդը ներքին միջնորդ թելեր են՝ ողնուղեղի զանազան հատվածները իրարու հետ հաղորդակցության մեջ դնելու և միասին գործակցությունը հնարավոր դարձնելու համար: Այդ թելերը, ինչպես տեսանք, կգրկեն առջևի կոտոշները և կա՛մ առջևի երիզներու կեդրոնական մեծ մասը կկազմեն, կա՛մ կողմնական երիզներուն մեկ մեծ զանգվածը առջևի կոտոշներուն մոտիկ. այս զանգվածին մեջն են նաև սիմպատիկի հետ հաղորդակցության մեջ գտնվող թելերը:

Այս ներքին թելերը եթե մեկդի դնենք՝ ողնուղեղի մնացած 2/3 ճերմակ զանգվածը ամբողջովին արտաքին հարաբերության համար է, այսինքն՝ գանգային ուղեղներու հետ գործակցելու համար: Կեսի չափը զգայական թելեր, մյուս կեսն ալ շարժիչ:

Զգայական, այսինքն՝ արտաքին բարձրացող թելերը, ինչպես տեսանք, բռնած են եռևի ամբողջ երիզը և կկազմեն Կոլ ու Պուրտախի առասանները և կողմնակի երիզին ալ գրեթե ամբողջ եզերային մասերը: Ասոնք մարմնի դուրսեն ու ներսեն ստացված գրգիռները կա՛մ թիկնային կանկլիոններեն, կա՛մ Քլարքի սյուններեն կտանին ողնուղեղեն վեր միջնակ ու մեծ ուղեղներուն՝ այդ տեղեկություններուն համեմատ վերին կեդրոններեն շարժումներու հրամաններ ստանալու համար:

Արտաքին իջնող թելերը այդ հրամանները կբերեն. մեկ մասը մեծ ուղեղի նոյրոններեն կուգան կա՛մ առջևի երիզին ակոսային մասովը, կա՛մ կողմնական երիզի եռևի կոտոշներուն հենած զանգվածովը և կերթան, կվերջանան առջևի կոտոշներու շարժիչ նոյրոններուն վրա: Երեք-չորս ավելի փոքր առասաններ ալ կա՛մ առջևի երիզին առջևի եզերքովը, կա՛մ կողմնակի երիզին առջևի զանազան մասերովը կիջնեն միջնակ ուղեղի բոլոր մասերեն՝ թալամուսեն, կարմիր կետեն, որ ըսել է՝ փոքր ուղեղեն, կամուրջ-

ուղեղեն և երկար ուղեղեն և կուգան կվերջանան նորեն առջևի կոտոշներուն վրա:

Այս բոլոր արտաքին բարձրացող և արտաքին իջնող թելերը, ինչպես և գրչ ուղեղի մասերուն մեջ նստած բարձրացող թելերուն մայր նոյրոնները ամենքն ալ կպատկանին կամ կենթարկվին գլխու գործունեության. ողնուղեղային այդ մասերը կա՛մ գործադրող մըն են, կա՛մ գործակցող մը վերի ուղեղներու աչխատանքին, ավելի կամ պակաս չափով ենթակա ու պաշտոնյա:

Ողնուղեղի գործունեությունը կրնանք բաժնել ուրեմն երեք տեսակի. ա) Գործունեություն սիմպատիկ մասերու հետ, ուր ընդհանրապես ողնուղեղի նոյրոններուն վրա է վերին ղեկավարությունը, հիմնական դրդումը այդ գործակցություններու միջոցին: բ) Բուն ողնուղեղային գործունեություն, ուր ինքն ու իր զանազան մասերն են դրդողն ու գործադրողը: Եվ գ) Գործունեություն գանգային մասերու հետ միասին, ուր ընդհանուր առումով այդ վերին մասերու ձեռքն է գործակցության ղեկավարությունը:

Գ. ՄԻՋՆԱԿ ՈՒՂԵՂ

Ա. ՄԻՋՆԱԿ ՈՒՂԵՂԻՆ ԿԱԶՄԸ

Ի. ՄԻՋՆԱԿ ՈՒՂԵՂԻՆ ԲՈՒՆԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԶՄԸ

Ոսկրային ուղեղի գլխու ոսկորներուն մէջ պարփակված մասերը կանվանենք գանգուղեղ: Գանգուղեղը հոգեբանական տեսակետեն բաղկացած է երկու հիմնապես իրարմե տարբեր արժեքով հատվածներե, որ է՝ մեծ ուղեղ և միջնակ ուղեղ:

Միջնակ ուղեղ կանվանեմ ողնուղեղի ու մեծ ուղեղի մեջտեղը գտնվող բոլոր ուղեղային կազմությունները միասին առած: Միջնակ ուղեղի այդ զանազան կազմությունները հոգեբանական տեսակետեն ամենեն հարմարն է բաժնել երեք մասի՝ 1) միջնակ ուղեղին բունը, 2) միջնակ ուղեղին թիկունքը և 3) միջնակ ուղեղին գլուխը:

Միջնակ ուղեղին բունը կներկայացնե գլխու ուղեղի սաղմնային կազմության առաջին, երկրորդ և երրորդ այտուցքները, որոնք կգրկեն չորրորդ խոռոչը և Սիլվիի անցքը: Միջնակ ուղեղին բունը կսկսի գանգի ծոծրակի անցքեն, իբրև բնական շարունակությունը ողնուղեղի և կհասնի ներանցքի մինչև Սիլվիի անցքին վերջը:

Միջնակ ուղեղի բունը կկազմե ամբողջական մեկ կոճղ մը՝ ամեն կողմեն անհարթ, որ իր ամբողջ երկարության վրա չատ թեթև մը դեպի առաջ կծռի և որ իր վերջին մոտիկ տակի կողմեն կճեղքվի երկուքի մեծ ուղեղին մեջը մտնելու համար: Ուրեմն իր մեջ կընդգրկե բնախոսական բաժանման երկար ուղեղը, Վերոլի կամուրջին կեղրոնական մասը և ուղեղին սրունքները իրենց վրայի գորշ մասերով:

Միջնակ ուղեղի բունին ներքին կազմությունը շատ կտարբե-

րի և շատ ավելի անկանոն է ողնուղեղի հետ համեմատած. այդ տարբերությունն ու խառնակությունը արդյունք է երեք պատճառի:

Առաջին պատճառը ուղեղային թելերու խաչաձևումն է: Մեծ ուղեղեն իջնող թելերը, որոնք միջնակ ուղեղին մեջ կվերջանան, կխաչաձևվին բունին բոլոր մասերուն վրա, ընդհանրապես իրենց վերջանալու բարձրությանը երբ կհասնին. իսկ մեծ ուղեղեն դեպի ողնուղեղը իջնող թելերը ու լարերը մեծ մասով և զանգվածորեն կխաչաձևվին ողնուղեղին հասնելեն քիչ մը առաջ. այդպես ալ ողնուղեղեն դեպի միջնակ ուղեղը բարձրացող թելերու ու լարերու մեկ ստվար մասը իր խաչաձևումը կկատարե նորեն բունի մասին մեջ:

Երկրորդ պատճառը փոքր ուղեղի մը առաջացումն է բունի թիկունքին, որ տարապայման մեծնալով՝ ամեն կողմեն թելեր կղրկե ու թելեր կստանա բունեն: Երրորդ պատճառն ալ նոր ավելցող գորշ մասերն են, որոնք չկային ողնուղեղին մեջ և որոնք ջիլեր կստանան դյսու վրա եղող նոր զգայարանքներեն և իրենց ստացած այդ գրգիռները նոր թելերով ու լարերով կփոխադրեն զանազան հին ու նոր մասերու:

Այս երեք պատճառներն ալ կա՛մ նոր ջղային թելեր ու թոկեր կբերեն, կա՛մ հին երիզներն ու առասանները կճեղքեն, կպատառեն, տեղահան կընեն, աջ ու ձախ կքշեն, որով և հին կանոնավոր դասավորությունը կխանգարվի. գորշ կտորները կկտրվին իրենց հիմքի գորշ մասերեն ու կհեռանան իրարմե, ամբողջական միաձույլ սյուները կկտրտվին, կընդհատվին ու նորեն կշարունակվին. որով ողնուղեղի ավելի միաձև սյուներու ու կտորներու տեղը կստացվին գորշ զանգվածներու մեծ ու փոքր կտորներ որոշ լայնքով ու երկայնքով ամեն ուղղությամբ վազող թելերուն ու թոկերուն մեջերը:

2. ԲՈՒՆԻՆ ԿՈՐԻԶՆԵՐԸ

Այս լայնքով ու երկայնքով իրարմե զատված ջղային գորշ կղզյակները կանվանենք միջնակ ուղեղին կորիզները: Ողնուղեղի

գորշ մասերու կոտոշային ու սյունակային դրուքթյունը միջնակ ուղեղին մեջ կվերածվի կորիզային դրուքթյան:

Միջնակ ուղեղի բունին մեջ յուրաքանչյուր կողմին վրա յոթը կորիզ կներկայացնեն ողնուղեղի առջևի շարժիչ կոտոշներուն շարունակութիւնը, ուրկե ջիղեր կմեկնին դեպի գլխու ներքին ու արտաքին մկանները, որոնք և կիրականացնեն գլխու վրայի ու մեջի շարժումները՝ աչքերը դարձնել, գոցել-բանալ, լեզուն ու շրթունքները շարժել, ծամել, դեմքի շարժումներ կատարել:

Միջնակ ուղեղի բունին մեջ յուրաքանչյուր կողմին վրա վեց կորիզներ կներկայացնեն ողնուղեղի ետևի զգայական կոտոշներուն շարունակութիւնը, ուր ջիղեր կհասնին գլխու բոլոր մասերեն՝ բերելով ներքին ու արտաքին շոշափական զգայութիւնները, որոնց թիվին կպատկանի Հավասարակշռութիյան զգայութիյունը չորրորդ խոռոչի հատակը գտնվող Սկարպայի[41] կանկլիոնեն:

Այս տասերեք զույգ ողնուղեղին համապատասխանող կորիզներուն քովը միջնակ ուղեղին բունը ունի նաև այդչափ մըն ալ մեծ ու փոքր կորիզներ, որոնք միայն իրեն են հատուկ: Այս իրեն հատուկ կորիզներեն ամենեն կարևորներն են.

1. Երկու զույգ օլիվները[42]. ետևի զույգը շատ ավելի խոշոր, բաղկացած է միջնորդ շարժիչ նոյրոններե, որոնք մեծ ուղեղին և միջնակ ուղեղի վերին մասերեն շարժիչ գրգիռներ կստանան և իրենց առանցք-թելերով կփոխանցեն գլխավորապես փոքր ուղեղը:

2. Կոլի ու Պուրտախի երկու զույգ կորիզները իրարու քով, որոնց նոյրոններուն վրա կվերջանան ողնուղեղեն եկող Կոլ ու Պուրտախի զգայական առաջանները, իսկ իրենց առանցք-թելերը լայն շերտով մը, որ Ռեյլի[43] ժապավեն կկոչվի, կերկարեն դեպի միջնակ ուղեղի ավելի առջևի մասերը և դեպի մեծ ուղեղ. ուրեմն զգայական միջնորդ կեդրոններ են:

3. Կարմիր կոչված կորիզը քառյակ պտուկներուն առջևը, բայց զանգվածին ավելի խորքը նստած, ուր կվերջանան փոքր ուղեղեն եկող թելերուն ստվար մեծագույն մասը. և որու սեփա-

կան առանցք-թելերը կերկարին երկար ուղեղով դեպի ողնուղեղ ու կվերջանան առջևի կոտոշներուն վրա. ուրեմն նորեն միջնորդ չարժիչ կեդրոն մը, որ փոքր ուղեղին կարգադրութիւնները կտանի մարմնին:

4. Երկու զույգ լսողական կորիզներ կամուրջ-ուղեղին վերջն ու տակը, կողմնական դիրքով և իրարու մոտիկ, որոնց նոյրոննեբուն վրա կվերջանան ականջի խխունջի կանկլիոնեն եկող ջիղին թելերը. ուրեմն նոր զգայական կեդրոն մը:

5. Քառյակ պտուկները, այսինքն՝ երկու զույգ իրարու կից դուրս ցցված այտուցքներ միջնակ ուղեղի թիկունքի կողմեն, ուղեղին սրունք կոչվող հատվածին վրա. առջևի զույգը քիչ մը ավելի փոքր է: Առջևի զույգը կուգան բետինայեն սկիզբ առնող տեսողական ջիղին վերջավորութիւնները. ուրեմն զգայական կեդրոն մը. իսկ ետևի քիչ մը ավելի մեծ զույգը կապեր ունի լսողական կեդրոնին հետ, ինչպես նաև ուրիշ կեդրոններու հետ, ուրեմն ավելի միջնորդ կեդրոն մը զգայութեյան:

Այս կորիզային ավելի աչքի իյնող խտացումներեն ու առանձնացումներեն զատ միջնակ ուղեղի բունին բոլոր մասերուն մեջ զանազան ուղղութեյամբ վազող թելերուն մեջ միջնակ ուղեղին բունը ունի անհաշիվ ցրիվ եկած գորշ տարրեր, տեղ-տեղ բոլորովին փոշիացած ցրվումով: Քիչ մը ավելի խիտ եղած պարագային ցանցային զանգվածի մը տպավորութիւնը կթողնե:

3. ԲՈՒՆԻՆ ԿԱՆԿԼԻՈՆՆԵՐԸ

Գլխուն մեջ զանգուղեղի ընդհանուր զանգվածեն զատ, բայց զանգի ոսկրային պատյանին մեջ կան քանի մը զույգ կանկլիական կուտակումներ, որոնք կապված են միջնակ ուղեղի բունի կորիզներուն և անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ նաև ասոնք իբրև բունի գորշ մասեր:

Գլխու կանկլիոններու չորս զույգը ողնուղեղի թիկնային կանկլիոններու հարազատ շարունակութեյունն են. անոնց պես նստած են ուղեղեն դուրս եկող զգայական ջիղերու արմատին վրա

և անոնց պես կազմված են շատ բնորոշ միալար նոյրոններէ, որոնց լարը կճեղքվի իսկույն երկուքի. մեկը կերթա գլխու վրայի շոշափական զգայարանները իր վերջավորուվթյուններով գրգիռներ բռնելու, իսկ մյուս ծայրը կմտնե միջնակ ուղեղին բունը ու կվերջանա ետևի կոտոշներուն համապատասխանող զգայական կորիզի մը մեջ:

Գլխու կանկլիական զույգերեն մյուս չորսը միայն գլխու վրա գտնվող զգայարանքներու զգայուվթյունները բռնելուն կծառայեն. նստած են հեռզգա զգայարանքներեն ելլող ջիղերուն վրա, բայց չունին շոշափական կանկլիոններուն միալար ձևը, այլ սովորական երկու ծայր ունեցող նոյրոններ են:

Ասոնցմե առաջինն է խխունջին կանկլիոնը (Կորդիի կանկլիոնը), որ նստած է ականջի խխունջին ներքին ոսկրային պատուտակաձև անցքին մեջ, ուրկե նոյրոնները իրենց մեկ ծայրը կանցընեն խխունջին ոլորները կիսով ոսկրե չերտին նուրբ անցքերեն և հաղորդակցուվթյան կմտնեն խխունջի թաղանդավոր մասին մեջ գտնվող Կորդիի գործարանին ո՛չ-ղղային բջիջներուն հետ, որոնց տատանումները կբռնեն. իսկ իրենց ծայրը, որ իրենց առանցքթելն է, կկազմե լսողական ջիղի խխունջային մասը, որ կմտնե միջնակ ուղեղին բունը և կվերջանա լսողական երկու զույգ կորիզներուն մեջ:

Գլխու հատուկ կանկլիոններու երկրորդ զույգն է գավիթի կանկլիոնը (Սկարպայի կանկլիոն), որ նստած է ներքին ականջին խորքը ոսկրին մեջ. որու նոյրոններուն վերջավորուվթյունները կերթան կհանգին ներքին ականջի երեք կիսաշրջան խողովակներուն, պարկուվին ու տիկուվին ներքին պատերը գորգող լորճնաթաղանդին մեջ. կծառայեն դիրքի զգայուվթյունները բռնելուն, իսկ իրենց առանցք-թելերը միասին գալով կկազմեն լսողական ջիղի գավիթային մասը, որ միջնակ ուղեղի բունքն մեջ կերթա կվերջանա չորրորդ խոռոչի հատակին վրա գտնվող գավիթի կորիզին նոյրոններուն վրա:

Գլխու ինքնահատուկ կանկլիոններուն երրորդ զույգը կներկայացնե աչքի ըետինան, որ կտարածվի աչքի գունդերուն ներքին երեսներու խորքին վրա: Ըետինան բաղկացած է երեք շարք

բջիջներն. դուրսի երկու շարքերը օժանդակ են և ո՛չ-ջղայինին. բուն նոյրոնը խորքի երրորդ շարքն է, որ իր պրոտոպլազմիկ վերջերովը հարաբերութեան մէջ է երկրորդ շերտի ձողիկներուն ու պլանիկներուն հետ, իսկ իր առանցք-թելը կմիանա իր ընկերներուն և իբրև աչքի տեսողական ջիղը դուրս կուգա աչքեն, կծակե գանգը ու կմտնե միջնակ ուղեղին բունը և կվերջանա մասամբ քառյակ պտուկներու առջևի զույգին վրա, մասամբ ալ քիչ մը ավելի դեպի առաջ պտնվող արտաքին ու ներքին ծնկակերպ կոչվող կորիզներուն վրա և վերջապես միջնակ ուղեղի գլխու-բաժնին մէջ տեսողական շերտերուն վրա:

Զորրորդ զույգ կանկլիոնը հոտառական է, որուն նոյրոնները ցրված են քթի խորքի պատերը գորգող լորձնաթաղանթին ո՛չ-ջղային բջիջներուն մեջ՝ իրենց մեկ կարճ ծայրը դուրս երկարած գրգիռները բռնելու համար. մինչ իրենց առանցք-թելերը, անցնելով իրենց ետևի ոսկորին մանրիկ ու հատուկ անցքերեն ներս, կմիանան իրարու ու կերթան կխրվին միջնակ ուղեղի առջևը երկարած հոտառական այտուցքին մեջ, որ միջնակ ուղեղի գլուխ-բաժնին պատկանող զգայական կորիզ մըն է:

4. ԲՈՒՆԻՆ ՆԵՐՔԻՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Բունին մեջ ամեն ուղղութեամբ վազող թելերը կխմբենք երեքի. ա) տեղական բունական ուղիներ, որոնց թելերը կծառայեն միայն գլխու մեջն ու գլխու վրան կատարվելիք անդրադարձութեան. բ) ողնական ուղիներ, որոնց թելերը մաս կկազմեն մարմնի ու գլխու գործակցութեամբ կատարվող անդրադարձութեան չղթային. և գ) կեղևային ուղիներ, այսինքն՝ մեծ ուղեղին հետ գործակցող:

ա. Տեղական ուղիները երկու տեսակ են՝ եզերային ու կեդրոնական: Եզերային ուղիները կա՛մ գլխու կանկլիոններեն եկող զգայական ջիղերու ճյուղավորումներ են միջնակ ուղեղի բունին մեջ, մինչև որ երթան վերջանան իրենց ջիղընկալ կորիզին

վրա, կա՛մ միջնակ ուղեղի ջիղածին կորիզներեն դուրս եկող շարժիչ թելեր ու լարեր են, որոնք իրար միանալով շարժիչ ջիղ մը կ'ըլլան ու կերթան վերջանալու գլխու մկաններուն մեկուն վրա: Իսկ կեդրոնական կանվանենք այն տեղական ուղիները, որոնք անմիջական կապ չունին մկանի մը կամ զգայարանքի մը հետ, այլ բունին մեջ ջիղընկալ կորիզե մը մեկնող առանցք-թելեր են դեպի ջիղածին կորիզի մը նոյրոնները. ասոնք անցումի ու փոխանցումի ճամբաներ են և իրենց մայրը եղող նոյրոններն ալ՝ միջնորդ նոյրոններ:

Այս կեդրոնական միջնորդ ուղիները կա՛մ կարճ առանցք-թելեր են ցրիվ կամ շատ բարակ լարերով մոտիկ հաղորդակցութեան համար զգայական կորիզե մը դեպի իր կողմի կամ հակառակ կողմի շարժիչ կորիզները: Իսկ բունի քիչ մը ավելի հեռավոր շարժիչ կորիզներուն հասնելու համար թե՛ դեպի վեր, թե՛ դեպի վար ուղղութեամբ՝ առանցք-թելերը նախ կուղղվին դեպի ուղեղի կեդրոնական գիծը և կկազմեն երկու երկարավուն զուգընթաց ուղիներ գրեթե ամբողջ բունի երկայնքով. այդ գծով կերթան թելերը և հոն խաչաձևվելեն ետքը, եթե հակառակ կողմի համար են, կծռին դեպի իրենց կապված կորիզը:

բ. Ողնային ուղիները կըլլան ելլող ու իջնող:

Ողնուղեղեն դեպի միջնակ ուղեղի բունը կբարձրանա մեկ հիմնական առասան մը, որ կկազմե ողնուղեղի ետևի երիզը. երիզին խորքի մասերուն թելերը իրենց սկիզբը կառնեն, ինչպես տեսանք, թիկունքի կանկլիոններեն, որոշ թելեր ալ՝ ետևի կոտոշներեն, որոնք բոլորը միասին կուգան կխաչաձևվին երկար ուղեղի կեսերուն ու կվերջանան Կոլի ու Պուրտախի կորիզներուն վրա. այս կորիզներուն առանցք-թելերը կերկարին դեպի առաջ՝ կազմելով Ռեյլի ժապավենը. այս զգայական ժապավենին մեկ մասը կվերջանա բունին առջևի մասերուն շարժիչ գորշ կեսերուն վրա, բայց մնացած շատ ավելի մեծ մասը կանցնի միջնակ ուղեղին պլուխը և հոն կվերջանա տեսողական շերտեր կոչվող կորիզին վարի մասին վրա: Այս զույգ ժապավենով մարմնի շոշափական զգայութիւնները և մկանային-հոդային զգայութիւնները կհաս-

նին ուրեմն միջնակ ուղեղի բունի ու գլխու հատվածները և գլխու հատվածին միջովը նաև մեծ ուղեղը:

Միջնակ ուղեղի բունեն դեպի ողնուղեղ իջնող միայն մե'կ թոկ մը կա, որ զգայական է. իր սկիզբը կառնե չորրորդ խոռոչի հատակին վրա գտնվող Պախտերևի գավիթային կորիզեն. ուրեմն ականջի կիսաշրջաններեն եկող դիրքի զգայութիւնները կտանի ողնուղեղի չարժիչ կոտոշներուն կողմնական երիզի առջևի մասերով: Մնացած գրեթե բոլոր իջնող թելերը չարժիչ են. ատոնք սկիզբ կառնեն երեք աղբյուրե. կա'մ բունի որևէ չարժիչ կորիզե մը, կա'մ կարմիր կորիզեն, որ փոքր ուղեղեն եկող թելերու կայան մըն է, կա'մ օլիվներեն, որոնք դեպի փոքր ուղեղ և դեպի ողնուղեղ գացող չարժիչ թելերու միջնորդ կայան մըն է. այս բոլոր չարժիչ թելերը ի վերջո կուգան մաս կկազմեն ողնուղեղի առջևի երիզի առջևի եզերային մասին և ողնուղեղի զանազան բարձրութեյան վրա կմտնեն առջևի կոտոշներեն մեկը:

գ. Կեղևային ուղիները, որոնք կիջնեն ու կմտնեն միջնակ ուղեղին բունը, նորեն ընդհանրապես չարժիչ են և հրամաններ կբերեն վերեն՝ գլխուն վրա ու գլխուն մեջ չարժումները կատարել տալու համար: Կեղևներեն իջնող թելերուն մեկ բաժինն ալ կվերջանան օլիվներուն վրա՝ հոնկե փոքր ուղեղը երթալու համար: Կեղևային թելերու մեկ մաս մըն ալ, որոնք բունի երկու սրունքներուն և ետքն ալ միացած բունի առջևի մասերուն պիրամիտ կոչվող այտուցքները կկազմեն, բունի վրայով միայն կանցնին, առանց բունին հետ կապեր ունենալու. ասոնք կեղևային չարժիչ թելեր են ու չիտակ կիջնեն ողնուղեղի չարժիչ կոտոշներուն մեջ վերջանալու համար. իրենց ճամբան ալ ողնուղեղի վրա առջևի երիզին ակոսային եզերքն է:

II. ՄԻՋՆԱԿ ՈՒՂԵՂԻՆ ԹԻԿՈՒՆՔԸ

1. ՓՈՔՐ ՈՒՂԵՂ ԵՎ ԻՐ ԹԵՎԵՐԸ

Սաղմնային զարգացման երկրորդ այտուցքը, որուն առջևի մասը միջնակ ուղեղի բունին միջին մասը կկազմե, իր թիկունքի

մասովը հետզհետե կմեծնա, կխոշորնա ու կբարձրանա բունի մակերեսեն. այդ խոշորացումը արդյունք է այդ մասի նոյրոններու չատացման և այդ նոյրոններուն հասնող թելերու բազմապատկման. իսկ այս բոլորը արդյունք է այդ մասին մեջ նստած կեդրոններու գործունեության ուժեղացմանն ու բարդացմանը, որ զույգ կերթա ողնավոր կենդանիներու տեսակներու աստիճանական զարգացման: Ձկներու և երկակենցաղներու քով հատուկ մաս մըն է արդեն, սողուններու և թռչուններու քով ավելի ևս մեծցած ու չեշտված, իսկ կաթնասուններու քով այն աստիճան կուռի ու կտարածվի և ինքնուրույնություն կստանա, որ մեծ ուղեղին ետևը իբրև անոր մեկ ավելի փոքր կրկնությունը կզգացվի և ատոր համար ալ կոչվեր է փոքր ուղեղ:

Ուրեմն փոքր ուղեղ անվանածնիս միջնակ ուղեղի միջին կտորի թիկունքի հատվածին տարապայման զարգացումն է, որ խոշոր զանգվածով մը նստած է միջնակ ուղեղին չալակը և իր երկու թևերով ամուր կգրկե միջնակ ուղեղի բունին իր առջևը գտնված մասը. այդ գրկող թևերն են, որ միջնակ ուղեղի բունին չուրջը գոտի մը կկազմեն, որ կկոչվի կամուրջ՝ Վերոլի կամուրջը:

Ինքը փոքր ուղեղը կգտնվի քառյակ պտուկներուն անմիջապես ետևը և իր զանգվածովը ինչքան կմեծնա տեսակե տեսակ՝ հետզհետե կպառկի չորրորդ խոռոչին վրա և մարդու մոտ կծածկե ստվար մեծագույն մասը չորրորդ խոռոչի. պետք է բարձրացնես այդ զանգվածը, որ չորրորդ խոռոչը երևա:

Մարդկային փոքր ուղեղին կողմնական լայնքը 8-10 սանդիմետր է, երկարությունը՝ 5-6 սանդիմետր, իսկ զանգվածին հաստությունը՝ միջին հաշվով 5 սանդիմետր:

Այդ դեպի ետ պառկող փոքր ուղեղը արտաքուստ երեք որոշ մաս ունի. կեդրոնական, որդի ձևով մաս մը և որդի երկու կողմերեն երկու կիսագունդեր: Միջին մասը, այսինքն՝ որդ կոչվածը ունին բոլոր ողնավոր կենդանիները, իսկ կիսագունդերը ծագում կառնեն ստորին կաթնասուններուն հետ և, աստիճանաբար զարգանալով մինչև պրիմատները[44], իրենց զարգացման բարձրագույն աստիճանին կհասնին մարդու վրա:

Փոքր ուղեղն ալ կազմված է գորշ ու ճերմակ մասերե: Իր

զանգվածին կեղրոնական մեծագույն մասը թելեր են, ինչպես և միջնակ ուղեղի մեջքը պրկող զույգ թևերը, ինչպես և միջնակ ուղեղի կռնակի կողմեն դեպի առաջ և դեպի ետ երկարած երկու զույգ թևերը: Ուրիշ խոսքով՝ փոքր ուղեղը երեք զույգ թևերով ամուր փակած է միջնակ ուղեղի բունին:

2. ՓՈՔՐ ՈՒՂԵՂԻ ԿՈՐԻԶՆԵՐՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Գորշ նյութ է, այսինքն՝ բջիջային զանգված է, որդի ու երկու կիսագունդերուն կեղևին վրա բարակ շերտ մը, որոնց նոյրոններուն վրա կվերջանան ետևի թևերով ողնուղեղեն, մասամբ ալ միջնակ ուղեղի բունեն եկող զգայական առանցք-թելերը: Իսկ փոքր ուղեղի այդ կեղևային նոյրոններուն կարճ առանցք-թելերը կերթան կվերջանան փոքր ուղեղի կեղրոնական մասին մեջ գտնվող կորիզներու նոյրոններուն վրա:

Կեղրոնական այդ կորիզները չորս զույգ են. երկու կողմնական դիրքով ավելի մեծերը կկոչվին փոքր ուղեղի օլիվներ և իրենց ձևովը բոլորովին նման են բունի օլիվներուն. նույնպես ալեձև ու ծալծլուն դուրսի մասով մը և նույնպես քսակաձև միջին մաս մը. և քսակին մեջեն, ինչպես և մյուս ավելի փոքր զույգ մը կորիզներեն մեկնող թելերն են, որոնք փոքր ուղեղի միջին թևերովը կամ առջևի թևերովը դեպի միջնակ ուղեղի առջևի մասերը և դեպի մեծ ուղեղը կդիմեն:

Փոքր ուղեղ մտնող թելերը մեծագույն մասով կմտնեն ետևի թևերով. շատ ավելի նվազ են միջին ու առջևի թևերով մտնող թելերը: Փոքր ուղեղ մտնող լարերն ու թոկերը մեծ մասով զգայական են:

Չորս զգայական թոկեր կուգան ողնուղեղեն. 1) Ողնուղեղի ետևի կոտոշներու հիմքեն՝ ֆլարքի այուենեն՝ կողմնակի երիզով և փոքր ուղեղի ետևի թևերով կհասնին որդին կտուրը. կկարծվի, որ կբերեն մկանային ու հոդային զգայութիւններ. 2) Ողնուղեղի ետևի կոտոշներուն ծայրեն, կողմնակի երիզով և փոքր ուղեղի

առջևի թևերով կհասնին նորեն որդին վրա. կկարծվի, թե կբերեն ցավի ու ջերմութեան զգայութիւններ. և 3-4) Կոլ ու Պուրտախի բունական կորիզներեն, փոքր ուղեղի ետևի թևերով կբերեն թիկունքի կանկիւոններեն հոն հասած շոշափումի զգայութիւնները:

Երկու զգայական թոկեր կուգան միջնակ ուղեղի վերին մասերեն. 1) Ջորրորդ խոռոչի հատակին վրա գտնվող գավիթային կորիզեն, ետևի թևերով դէպի կորիզներեն մեկը փոքր ուղեղի. հավանորեն կբերե դիրքի զգայութիւնը փոքր ուղեղին. 2) Միջնակ ուղեղի բունի ետևի օլիվներեն մեկնող թոկեր, որոնք փոքր ուղեղի ետևի թևերով կհասնին փոքր ուղեղի կեղևին. և որովհետև միջնակ ուղեղի գլխու բաժնեն՝ տեսողական չերտերեն եկող առանցք-թելեր կվերջանան այդ ետևի օլիվներուն վրա, կենթադրվի, որ հոտառական և տեսողական զգայութիւններ կբերեն այդ թելերը փոքր ուղեղի ժողովին:

Երկու թոկ, որ փոքր ուղեղ կմտնեն, չարժիչ են: Մեկը, որ միջնակ ուղեղի բունին բոլոր մասերուն մեջ գտնվող ջիղածին կորիզներեն կամ միջնորդ չարժիչ կորիզներեն ծագում կառնեն և իրենց առանցք-թելերը ետևի թևերովը փոքր ուղեղի կհասցնեն փոքր ուղեղի կեղևին: Մյուս թոկը միջնակ ուղեղի կամուրջին տակի մասերուն մեջ ցրիվ եկած ավելի կամ նվազ փոքր գորշ կտերեն եկող առանցք-թելեր են, որոնք փոքր ուղեղի միջին թևերով կհասցնեն փոքր ուղեղին կեղևը՝ բունի վերի մասերեն, գծավոր մարմնեն և մեծ ուղեղեն այդ միջնորդ ցրիվ չարժիչ մասերուն հասած չարժիչ հրահանգները:

Փոքր ուղեղեն ելլող թելերն ու թոկերը գրեթե բացառապես առջևի թևերով դուրս կուգան փոքր ուղեղեն և ընդհանրապես չարժիչ առանցք-թելեր են:

Փոքր լար մը գավիթ-փոքր ուղեղ թոկին դուրս ելլող մասը կկազմե, ուրեմն ետևի թևերով կուգա ու կվերջանա միջնակ ուղեղի բունին միջին մասերու վրա. հավանորեն դիրքի ու հավասարակշռութեան ատեն անհրաժեշտ եղող ներքին ու արտաքին ականջի չարժումները կղեկավարե:

Ատամնավոր կեդրոնական կորիզեն ծագող առանցք-թելերու թոկեր կվերջանան միջնակ ուղեղի առջևի մասի չարժիչ կո-

բիզներուն և ցրիվ գորշ մասերուն վրա: Նույն տեղեն մեկնող առանցք-թելերու թոկեր կուգան կարմիր կորիզը և անոր հարակից ուրիշ ավելի մանր կորիզներ, մասնավորապես աչքի չարժիչ կորիզը. իսկ կարմիր կորիզի առանցք-թելերը իրենք մասամբ կվերջանան միջնակ ուղեղի ետևի մասի չարժիչ կոտոշներուն վրա, բայց մեծագույն մասը կիջնեն ողնուղեղ կողմնակի երիզով ու կվերջանա առջևի կոտոշներուն վրա:

Փոքր ուղեղեն դեպի կարմիր կորիզը եկող թելերուն մեջ կա զգայական թոկ մը, գրեթե միակը, որ փոքր ուղեղեն կելլե: Կկարծվի, որ ողնուղեղի ետևի երիզով փոքր ուղեղի կեղևը եկած ներքին ու արտաքին զգայութիւնները կփոխանցե, փոքր ուղեղի կեդրոնական կորիզի միջով, կարմիր կորիզի տակի ցրիվ զգայական կորիզներուն և մանավանդ միջնակ ուղեղին գլուխը գտնվող տեսողական չերտերուն, որ փոքր ուղեղի նման նորեն հավաքատեղի մըն է ամեն տեսակի զգայութիւններու:

III. ՄԻՋՆԱԿ ՈՒՂԵՂԻՆ ԳԼՈՒԽԸ

Միջնակ ուղեղին գլուխը կներկայացնե սաղմնային չորրորդ այտուցքը, երրորդ խոռոչին չուրջը: Սաղմնային զարգացման հինգերորդ այտուցքը չափազանց զարգանալով իբրև մեծ ուղեղ հետզհետե դեպի ետ կծալվի և բարձր ողնավորներուն մեջ բոլորովին կուգա կծածկե մինչև փոքր ուղեղ եկող միջնակ ուղեղին մասերը. իսկ այս սաղմնային չորրորդ այտուցքը ներկայացնող կտորները արդեն բոլորովին խրված են մեծ ուղեղի զանգվածին մեջ. և ատոր համար ալ անդամագիտական նկարագրութիւններուն ժամանակ մեծ ուղեղի հետ կուսումնասիրվին, իբրև մեծ ուղեղին հիմքը կազմող մասեր: Բայց թե՛ իրենց ծագումով և թե՛ հոգեբանական դերով այս մասերը զատ են բոլորովին մեծ ուղեղեն, որ մեծ ուղեղի կեղևը կներկայացնե. այս մասերը բնական շարունակութիւնը կկազմեն միջնակ ուղեղի բունին, իբրև այդ բունին ավելի զարգացած ծայրը, իբրև անոր գլուխը:

Իր բաղադրիչ գորշ մասերը կբաժնվին հիմնապես երկու

խոշոր Հատվածներու. մեկ Հատվածը խոշոր զգայական կեդրոն մըն է, մյուս խոշոր Հատվածը՝ շարժիչ կեդրոն մը:

Զգայական Հատվածը կանվանենք տեսողական շերտեր, որ կգտնվի երրորդ խոռոչին վրա և կկազմե այդ խոռոչին կողմնական պատերը, քառյակ պտուկներուն առջևը: Տեսողական շերտերը 35-40 միլլիմետր երկարութեամբ, 18-22 լայնութեամբ և 20-25 միլլիմետր հաստութեամբ ահագին զանգված մըն է գորշ նյութի, որ առանց հստակ անջատման չորս կեդրոններու բաժնված է. 1) առջևի կտորը հոտառական նոյրոններու կեդրոն է, 2) միջին կտորը՝ տեսողական կեդրոն, 3) ետևի կտորը՝ լսողական կեդրոն և 4) քովընտի արտաքին կտոր մը շոշափական կենթադրվի: Տեսողական շերտերուն տակը կիյնան ներքին ու արտաքին ծնկակերպ կորիզները, Լուիզի կորիզը և ուրիշ ավելի փոքր գորշ փշրտուքներ, որոնք անմիջական կապեր ունին տեսողական շերտերուն հետ:

Շարժիչ Հատվածը կկոչվի գծավոր մարմին, պայտաձև գորշ զանգված մը, պայտին մեջքը դեպի առաջ է ուղղված, պայտին ոտքերեն մեկը կպած է տեսողական շերտերուն անոնց դուրսի ու առջևի կողմեն և կկոչվի ագեաձև մարմին, 65-70 միլլիմետր երկարութեամբ, 15-20 լայնքով. իսկ պայտին մյուս ոտքը մոտ 50 միլլիմետր երկարութեուն ունի և իր խորութեամբ կատարված Հատումի մը վրա եռանկյունի ձև ունի և ճերմակ մասերով ընդհատված երեք շերտերե կբաղկանա. պայտին այս ոտքը կկոչվի ոսպաձև կորիզ:

Տեսողական շերտերը, որ և Թալամուս կանվանեն, թելեր կՀասնին բոլոր զգայարանքներեն: Հոտառական մասի նոյրոններուն վրա կվերջանան Հոտառական այտուցքեն եկող թելերը: Տեսողական բաժինը թելեր կուգան իր տակի ծնկակերպ կորիզներեն և մյուս դրացի գորշ փշրանքներեն մինչև քառյակ պտուկներուն երկրորդ զույգը: Լսողական բաժնեն թելեր կուգան լսողական զույգ ջիղնկալ կորիզներեն, որոնք նախ կխաչաձևվին և կբարձրանան բունին երկայնքովը կողմնական Ռեյլի ժապավենով մինչև ծնկակերպ կորիզներուն չուրջն ու վրան: Գավիթային կորիզեն զգայութիւններ կուգան փոքր ուղեղի մեջեն չրջան ընելով և կարմիր կորիզի տակով: Ողնուղեղի կողմնական զգայական թոկե-

րով, որոնց թելերը ետևի կոտոշներուն ծայրի նոյրոններեն կուգան և միջնակ ուղեղի բունով չիտակ կբարձրանան տեսողական շերտերը. կկարծվի, թե ցավի ու ջերմութեյան զգայութեյունները կբերեն: Սկանային զգայութեյունները և շոշափական զգայութեյունները կուգան Կոլ ու Պուրտախի կորիզներու կայանով և Ռեյլի ժապավենով:

Ուրեմն միջնակ ուղեղի բունով դեպի վեր՝ դեպի միջնակ ուղեղին գլուխը բարձրացող ուղիները հիմնապես երեք են. Ռեյլի ժապավենը, փոքր ուղեղեն կարմիր կորիզի տակով բարձրացող զգայական լարը և ողնուղեղի կողմնական երիզով եկող և բունի մեջեն առանց կայանի չիտակ բարձրացող զգայական ուղին:

Իսկ տեսողական շերտի նոյրոններուն առանցք-թելերը կերկարին երեք ուղղութեյամբ. 1) դեպի իր դրացի գծավոր մարմնին մասերը, 2) թոկ մը կիջնե դեպի միջնակ ուղեղի բունին ետևի օլիվները՝ հավանորեն փոքր ուղեղին կեղևը տանելու համար հոտառական և տեսողական զգայութեյունները, և 3) դեպի մեծ ուղեղին կեղևի զգայական մասերը:

Գծավոր մարմինը իր գրգիռները կստանա իր քովի տեսողական շերտերեն. իսկ իր նոյրոններուն առանցք-թելերը կերթան միջնակ ուղեղի վերին երկու սրունքներով դեպի միջնակ ուղեղի բոլոր մասերու շարժիչ կորիզները և դեպի ողնուղեղի շարժիչ կոտոշները. իսկ կամուրջի շարժիչ միջնորդ ցրիվ մասերը հասած թելերով՝ իր գրգիռները կփոխադրվի նաև փոքր ուղեղի կեղևին:

Գծավոր մարմինը թելեր չի ղրկեր մեծ ուղեղը. բայց մեծ ուղեղեն շարժիչ կեդրոններեն առանցք-թելեր կստանա ինքը:

Միջնակ ուղեղի գլխուն կպատկանի նաև բարձր ողնավորներու մեծ ուղեղին առջևը երկարած հոտառական երկու երկարավուն այտուցքները, որոնք անդամագիտական նկարագրութեյուններու մեջ մեծ ուղեղին կկցվին, անոր մեկ մասը կհամարվին և հաճախ ալ հոտառական ջիղ կկոչվին: Այդ երկարեցումները իսկապես միջնակ ուղեղի գլուխ հատվածին դեպի առաջ երկնցած մասերը կկազմեն և ո՛չ թե ջիղ: Շատ մը կենդանիներու գլխուն վրա, ուր մեծ ուղեղը շատ խոշորցած չէ և ուր հոտառութեյունը մեծ դեր կխաղա կենդանիի կյանքին մեջ, այդ հոտառական երկա-

բեցումներն են, որ ահագին այտուցքներ կղառնան միջնակ ուղեղին առջևը:

Այնպես որ այդ հոտառական երկարավուն այտուցքին նոյրոններուն շարքերը կներկայացնեն իսկապես միջնակ ուղեղի ջիղընկալ կորիզներեն մեկը, հոտառական զգայական կորիզը, որուն ջիղը կներկայացնեն քթի խոռոչի լորձնաթաղանթին մեջ նստած հոտառական եզերային նոյրոններուն առանցք-թելերը, որ քթին խորքի ոսկորի ծակերուն մեջեն ներս անցնելով կերթան ու կվերջանան հոտառական այտուցքին նոյրոններուն վրա: Իսկ հոտառական այդ կորիզեն մեկնող առանցք-թելերը երկու թոկով կերթան մեկ կողմեն դեպի միջնակ ուղեղի տեսողական շերտերը, մյուս կողմեն ալ որոշ թելեր կմտնեն չիտակ մեծ ուղեղը:

IV. ՄԻՋՆԱԿ ՈՒՂԵՂԻՆ ՋԻՂԵՐԸ

Գանգուղեղը ունի 12 զույգ ջիղ, որոնք դուրս կուգան միջնակ ուղեղեն: Զորս զույգը դուրս կուգա միջնակ ուղեղի վերջը ողնուղեղի ամենեն ավելի մոտիկ մասեն մինչև կամուրջը. երեք զույգը դուրս կուգան կամուրջի ետևի հորիզոնական փոսեն, մեկ հատը՝ կամուրջի առջևի հորիզոնական փոսեն: Միջնակ ուղեղի բունին վերջեն դուրս կուգան տեսողության զույգը. իսկ հոտառական այտուցքն ալ սովորական է դարձած դնել այս ջիղերուն շարքը, թեև ան, ինչպես տեսանք, ջիղ մը չէ: Կպահենք ջիղ անունը գիտության մեջ անգամ մը ընդունված շարքը չխանգարելու համար:

Այդ 12 զույգեն միայն չորս զույգը ողնուղեղի ջիղերուն նման միացում են շարժիչ և զգայուն թելերու: Այդ խառն ջիղերն են՝ եռորյակ ջիղը, դիմական ջիղը, լեզվակլափ ջիղը և շնչամարսական ջիղը:

Միայն շարժիչ թելեր ունին 5 զույգ՝ աչքի ընդհանուր շարժիչ ջիղը, աչքը ոլորող ջիղը, աչքի արտաքին շարժիչ ջիղը, թիկնային շարժիչ ջիղը և մեծ-լեզվային ջիղը:

Զուտ զգայական են 3 զույգ՝ լսողական ջիղը, տեսողական ջիղը և հոտառական այտուցքը:

Այս 12 զույգ գանգային ջիղերեն տասը զույգի տարածման դաշտը բացառաբար գլխու վրան կգտնվի. այսինքն՝ գլխու վրա գտնվող մասերե միայն կստանան իրենց գրգիռները և միայն գլխուն վրա գտնվող մասերուն կտանին իրենց շարժման հրամանները ներքին կամ արտաքին:

Երկու զույգ ջիղեր մասամբ միայն գլխուն կծառայեն. գլխավորապես կծառայեն մարմնին: Ատոնցմե մեկը թիկնային կոչվող ջիղն է, զուտ շարժիչ, որուն մեկ ճյուղը կերթա ղլավորելու քիմքի, կլափի ու կոկորդի մասերը, մինչ երկրորդ ճյուղ մը կիջնե վզի, ծոծրակի և ավելի վարի մասերու շարժումներու ղեկավարության մասնակցելու, թե՛ արտաքին մկաններու և թե՛ ներքին: Շատ ավելի գլխեն դուրս է գործունեությունը չնչամարսական ջիղի, որու անունը արդեն ցույց կուտա իր էությունը. զգայական ու շարժիչ բաժիններով խառն ջիղ մըն է, որ երկար ուղեղեն կիջնե դեպի սիրտը, թոքերը, ստամոքսը, լյարդը, լուսնային ու արևային դնջուկները, որոնցմե արձակված ջիղերը կիջնեն ստորին փորի մասերը ղլավորելու, որով միջնակ ուղեղը անմիջական մասնակցություն ու ազդեցություն կունենա ներքին գործարաններու գործունեության վրա. և այդ գործարաններեն լուրեր կտանի դեպի միջնակ ուղեղը: Ուրիշ խոսքով՝ կմասնակցի սիմպատիկ դրության աշխատանքին, կդառնա կապը սիմպատիկ դրության և գանգային ուղեղներուն միջև. գանգային ջիղերուն մեջ սիմպատիկ ջիղի մը դերը կխաղա, ինչպես որ չնչամարսական ջիղին մայրը եղող կորիզներն ալ գանգային կեդրոններուն մեջ կխաղան սիմպատիկ կանկլիոններուն դերը:

Գանգային ջիղերու միջնակ ուղեղեն դուրս գալուն կարգը հետևյալն է. անվան փոխարեն շատ հաճախ կգործածվին քանիերորդ ջիղը ըլլալը:

I. Առաջին ջիղ - հոտառական ջիղը - զգայական.

II. Երկրորդ - տեսողական ջիղը - զգայական.

III. Երրորդ - աչքի ընդհ. շարժիչ - . . . . . շարժիչ.

IV. Չորրորդ - աչքը ոլորող ջիղը - . . . . . շարժիչ.

V. Հինգերորդ - եռորյակ ջիղը - . . . . . խառն.
VI. Վեցերորդ - աչքի արտաքին չարժիչ - . . . . . չարժիչ.
VII. Յոթերորդ - դիմային ջիղ - . . . . . խառն.
VIII. Ութերորդ - լսողական ջիղ - զգայական.
IX. Իններորդ - լեզվակլափ ջիղ - . . . . . խառն.
X. Տասներորդ - շնչամարսական - . . . . . խառն.
XI. Տասնմեկ - թիկնային ջիղ - . . . . . չարժիչ.
XII. Տասերկու - մեծ-լեզվային - . . . . . չարժիչ:

Բ. ՄԻՋՆԱԿ ՈՒՂԵՂԻՆ ԴԵՐԸ

I. ՄԻՋՆԱԿ-ՈՒՂԵՂԻ ԲՈՒՆԻՆ ԴԵՐԸ

1. ՏԵՂԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Միջնակ ուղեղին բունը ինչպես իր կողմովը չարունակութեյունն է ողնուղեղին, այնպես ալ իր խաղցած դերովը: Միջնակ ուղեղին բունը ամենեն առաջ այն պաշտոնը ունի գլխուն համար, ինչ պաշտոն որ ունի ողնուղեղը մարմնի մյուս մասերուն համար: Միջնակ ուղեղին բունը ամենեն առաջ կծառայե տեղական անդրադարձութեյան, այսինքն՝ գլխուն վրա գտնվող մասերին կատանա զգայական գրգիռներ և ատոնց համեմատ կկատարե որոշ չարժումներ գլխուն վրայի ու գլխուն մեջը գտնվող մկաններով:

Բայց իր այս տեղական անդրադարձութեյան աղեղին մեջ մտած են զգայարանքներ, որ ողնուղեղը չունի, ինչպես և նոր պետքերու ծառայող մկանային խումբեր, որ մարմինը չունի:

Մարմնի ունեցած զգայարանքները հիմնապես չորս են՝ մկանային զգայութեյուն, հպումի զգայութեյուն, ջերմութեյան զգայութեյուն և ցավի զգայութեյուն: Այս չորս հիմնական զգայութեյունները ունի և գլուխը բոլորովին նույն ձևով, իբրև մարմնին մեկ սովորական անդամը: Բայց ասոնցմե զատ ունի հինգ նոր

զգայութիւններ իրենց համապատասխան զգայարանքներով, կանկլիոններով, ջիղերով, կորիզներով, որոնք միջնակ ուղեղի բունին առանձնահատուկ մասերը կկազմեն: Այդ զգայութիւններն են՝ համը, հոտը, դիրքի զգայութիւնը, ձայնը և տեսողութիւնը: Այս նոր հավելումները բնականաբար շատ կբարդացնեն գլխուղ վրայի տեղական անդրադարձութիւնները: Մարմնի անդրադարձութիւնները եթե կառաջանան չորս տեսակի գրգիռներե, ասոնց առանձնակի կամ միաժամանակ գործակցութիւամբ, գլխուն վրա կատարվող տեղական անդրադարձութիւնները կառաջանան կրկնակի թվով տարբեր-տարբեր տեսակի գրգիռներե. շատ բազմատեսակ գործակցութիւամբ:

Գլխուն վրայի մկանային գործունեութիւնն ալ իր նպատակով ու արդյունքով շատ ու խոր կտարբերի մարմնի շարժումներեն: Մարմնի բուսական մկանները կվարեն բոլոր ներքին բուսական գործարանները. ասոնցմե համեմատաբար շատ քիչ բան է մնացած գլխուն վրա. երակներու սեղմումն ու բացումը, կաշվի ու մազերու շարժումներ և գլխու վրայի գեղձերուն հոսումը: Մարմնի կենդանական մկանները կծառայեն տեղափոխութեան, դիմադրութեան և ծանրութիւններ բարձրացնելուն. գլխուն վրա միայն վզի ու ծոծրակի մկաններն են, որ թիկունքի դրացի մկաններու գործակցութիւամբ կկատարեն այդ տեսակի աշխատանքներ: Գլխու մկանները կծառային գլխավորապես կամ բացառապես բոլորովին նոր ու տարբեր նպատակներու, որ կրնանք խմբել չորսի:

Առաջինը զգայարանքներու գործածութիւնն է. ականջը արտաքին ու ներքին մասեր ունի, որ շարունակ պետք է լարես, որ հարմարցնես ձայնի տեղին, ուժին ու հեռավորութեան. աչքը նույնպես, պետք է դարձնես զանազան ուղղութիւամբ, բիբը լայնցնես ու նեղցնես, բյուրեղը պրկես ու թուլցնես հստակ տեսնելու համար. որոշ անդրադարձ շարժումներ կպահանջվին ուսնգերու ու թոքերու՝ հոտառութիւնը իրականացնելու համար. համն ալ կպահանջե լեզվի ու ծնոտի որոշ շարժումներ՝ համ տվող նյութը լեզվի մակերեսին վրա տարածելու համար:

Երկրորդ՝ գլխու առանձնահատուկ գործարանը բերանն է ու կլափը, այսինքն՝ մկանային երկար խողովակ մը, որու բոլոր

մասերը կշարժին ու կգործեն զանազան ուղղութեամբ ու ձևով և որոնց արդիւնքն է բռնելը, փրցնելը, խածնելը, ծամելը, կլլելը, որոնք իրենց Հատուկ կեդրոններն ունին բունին մէջ և իրենց Հատուկ կարևոր դերը:

Երրորդ՝ բերնին խորքը բացվողը միայն որկորը չէ, այլև կոկորդը, որ շնչափողի վերին ծայրը կներկայացնե և ուր նստած են զույգ մը թաղանդներ շարժուն կռճիկներու ամրացած. այդ թաղանդներու զանազան չափի ու ձևի պրկումովը թաղանդներուն միջով անցնող օդը տարբեր տեսակի թրթռումներ կստանա. կառաջանան կանոնավոր ալիքներ, որ ձայն կանվանենք. ձայնը բերնի մսեղեն խողովակի զանազան մասերուն զարնվելով, նեղցած մասերուն քսվելով կմիացնե իրեն զանազան շշուկներ, այսինքն՝ անկանոն հավելյալ ալիքներ և կդառնա Հնչյուն ու Հնչախումբ, որով կարտահայտենք մեր գաղափարները. բառ մը արտասանելը և խոսիլը բազմատեսակ մկաններու գործակցութեամբ կատարվող աշխատանք մըն է:

Չորրորդ՝ գլխու առանձնահատուկ շարժումներու խումբ մըն է դիմախաղ անվանածնիս. այսինքն՝ մեր Հոգեկան ապրումներուն զուգընթաց մեր դեմքի վրայի զանազան մկաններուն կատարած պրկումները, որոնք նույն պայմաններու մեջ միշտ նույն կերպով կրկնվելով կդառնան Հետզհետե Հոգեկան վիճակներու արտահայտիչ:

2. ԲՈՒՆԻ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՂՆՈՒՂԵՂԻ ՈՒ ՍԻՄՊԱՏԻԿԻ ՀԵՏ

Գլխու ու մարմնի ջղային ու մկանային գործակցութիւնը կրնա տեղի ունենալ երկու կերպով: Նախ՝ մարմնի որևէ մեկ մասեն եկող զգայութեան մը կպատասխանե գլխու վրայի որևէ մկանային խումբ մը, կրնա պատահիլ գլխու վրայի շարժումը ըլլա բոլորովին առանձին, կրնա նաև մարմնի մկաններու միաժամանակ գործակցութեամբ: Երբ աչքը գոց պառկած շունը Հանկարծ կբանա աչքերը և Հայացքը կուղղե իր ոտքի մեկ կետին, ուրկե չոչափական թեթև զգայութիւն մըն է առած, դեռ չկա մարմնի

մկաններու չարժում. բայց երբ գրգիռը ուժեղ է, ո՛չ միայն աչքը կբանա ու կնայի, այլև թաթը կտանի քերելու կամ կդառնա ու տեղեն կելլե, դունչը կմոտեցնե, կխածնե, կլիզե, կուներնանք գլխու ու մարմնի շատ ավելի բարդ գործակցություն մը վարեն եկած գրգիռով:

Երկրորդ տեսակն է գործակցության, երբ գլխու վրայի զգայության մը կպատասխանե մարմինը մեկ կամ քանի մը կետերե: Հոս պետք է զանազանենք զգայության տեսակը: Տարբեր է գլխու վրայի շոշափական զգայության մը եղած պատասխանը, տարբեր է գլխու հատուկ նոր զգայություններու դրդումին մարմնին տված պատասխանը: Կենդանին ականջին ետևը հպում մը կզգա, իսկույն կբերե թաթը ու կքերե. քիթը մժեղ մը կմտնե՝ կենդանին գլխու անդրադարձ փոշտալու, փչելու և գլուխը ցնցելու տեղական շարժումներուն հետ կրնա և ոտքի ցատկել, ետ-ետ երթալ և իր առջևի թաթերու օգնությանը դիմել: Այս տեսակ շոշափական դրդումով վերեն վար եղած գործակցությունը ո՛չ մեկ տարբերություն չունի վարեն վեր եղած նախորդ գործակցութենեն: Երբ աչքի առաջ ունենանք, որ միջնակ ուղեղին բունը էապես ողնուղեղի շարունակությունն է, այս տեսակ շոշափական հիմքով կատարված աշխատակցությունը կրնանք նկատել իբրև ուղեղի նույն մասերուն մեջ կատարված գործակցություն, իբրև ներքին գործունեություն և ո՛չ մասե մաս:

Բայց պարագան կփոխվի, երբ գլխու ու մարմնի գործակցության դրդումը կուգա զգայարանքե մը, որ հատուկ է գլխուն, որուն համապատասխանը մարմինը չունի, այսինքն՝ համի, դիրքի, հոտի, ձայնի ու լույսի գրգիռները և հատկապես վերջին երեք հեռզգա զգայարանքներեն եկած դրդումները: Այսպե՛ս, երբ թռչունը հանգիստ թառ եղած տեղեն հանկարծ կթռչի, երբ հեռուն կասկածելի շարժում մը կտեսնե կամ հեռավոր հեռուներեն պայթյուն մը կլսե. կամ ընդհակառակը, չունը ասդին-անդին կվազվզե անհանգիստ ու բան մը կփնտրե՝ հետևելով իր քթի հոտառական նյարդոններու ստացած գրգիռին: Կամ երբ ցուլը կատղած, աչքերը արյուն լեցած, կոտոշները առաջ ցցած ու վիզը պրկած առաջ կնետվի կռվի պատրաստ, երբ հեռավոր բակերե

ուրիշ ցուլի մը բառաչը կլսե: Այս ավելի «վերին» զգայարանքներու դրդումով կատարված անդրադարձումները, բնազդները, բնազդական շարժումները արդեն չենք կրնար հավասար աստիճանի վրա դնել մարմնեն դեպի գլուխ եղած շարժումներուն. նախ՝ որ մարմինը չունի այս նոր զգայարանքները, և երկրորդ՝ որ այս նոր զգայարանքներուն հոգեբանական արժեքը տարբեր է մարմնի ու գլխու վրա ամեն կողմ հավասարապես տարածված նախակազմ շոշափական զգայարանքներեն:

Եվ ինչքան ողնավոր կենդանին արագաշարժ, բազմաշարժ և դյուրաշարժ կդառնա, այնքան ավելի անհրաժեշտ ու կարևոր կդառնան այս հեռվեն և հեռուներու մասին լուրեր բերող զգայարանքներուն դերն ու գործունեությունը. այնքան ալ բնականաբար կզարգանան, կնրբանան ու կկատարելագործվին իրենք զգայարանքները: Ուրեմն քանի կենդանին զարգացած ու բարձր տեսակի է՝ այնքան ավելի իր գոյության պահպանման, իր հառաջացման ու իր հաջողության համար կարևոր կդառնան բարձր զգայարանքները. և այնքան ավելի վարող ու տիրապետող կըլլան գլխու զգայարանքներու դրդումով կատարվող շարժումներն ու գործակցությունները:

Հետզհետե ավելի ու ավելի մեծ չափերով գլխուն բերած ու գլխուն վրա նստած նոր զգայարանքներուն դրդումներով մարմնի կատարած աշխատանքները կհաճախեն. և այդ չափով ալ հետզհետե կչեշտվի միջնակ ուղեղի բունին ղեկավար դերը մարմնի ու գլխու բոլոր անդրադարձ գործունեության վրա:

Մինչև հիմա ըսվածը կվերաբերեր մարմնի արտաքին ոսկրային մկաններու շարժումին: Բայց գլխու զգայարանքները կազդեն նաև ներքին գործարաններու աշխատության վրա. կա ներքին սերտ գործակցություն նաև բունի զգայական կորիզներուն և սիմպատիկ կանկլիոններուն միջև. և այդ հաղորդակցության ու գործակցության լայն ճամփան ընչամարսական ջիղն է, ինչպես որ տեսանք:

II. ՓՈՔՐ ՈՒԼԵՂԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. ՄԱՐՄՆԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԵԼՈՒ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն չարժում այս կամ այն աստիճանի դիրքի փոփոխութիւն կուտայ կենդանի մարմնին, դիրքի փոփոխութեամբ կփոխվի և ծանրութեան կեդրոնը, որով ամեն չարժում կհարկադրե մարմնի տարբեր մասերուն մեջ տեսակ մը հակադիր չարժումներ, որ կենդանիի մարմինը հավասարակշռութիւնը չկորսնցնե, որ վար չիյնա իր առած դիրքեն:

Եվ ինչքան բազմատեսակ չարժումներ կատարելու կարող ըլլա կենդանին, ինչքան չատ և արագ չարժվի, այնքան ավելի ու ավելի մեծ չափերով մեծ ու փոքր մկաններ պետք է աշխատին իրարու հետ և իրարու ետևե այդ հավասարակշռութեան պահանջած չարժումները կատարելու համար: Վարժութիւն, ճարպիկութիւն, ճկունութիւն ըսված բաներուն մեջ չատ խոշոր է հավասարակշռութեան համար կատարված չարժումներու բաժինը:

Ամեն անդրադարձութիւն անհրաժեշտորեն կապված է ուրիշ խումբ մը անդրադարձութիւններու մարմնի բոլորովին տարբեր մասերուն մեջ՝ հատկապես այդ հավասարակշռութիւնը պահել կարողանալու համար: Քալելու, ուտքի ելլելու, ծռելու, պլուխը զանազան ուղղութեամբ թեքելու, ուտքին մեկը բարձրացնելու, թևերը բանալու, դուցելու և նման չարժումները, որոնք արդին իրենք անդրադարձութիւններու իրարու հաջորդող շղթաներ են, անխուսափելի կերպով կբերեն իրենց հետ իրենց ընկերացող հավասարակշռական անդրադարձութիւններու իրար հաջորդող շղթան: Շարժումներուն մչտապես ընկերացող այդ հավասարակշռութեան անդրադարձութիւնները որևէ պատճառով եթե չկատարվին կամ թերի կատարվին՝ կենդանին կկորսնցնե իր հավասարակշռութիւնը, կթեքի մեկ կողմի վրա, կկքի, կսայթաքի, չարժումը կդառնա դողդոջ, վարանոտ, անհաստատ: Ասով ալ մեր մարմնի կատարած ամեն չարժում կրկնակի կերպով կբարդանա:

Եվ որովհետև կենդանական գրեթե բոլոր չարժումները չատ

հաճախ կրկնվող խմբական շարժումներ են և այդ խումբերն ալ միշտ կառաջացնեն ուրիշ միևնույն խմբերու շարժումները իբրև Հավասարակշռութ֊յան շարժումներ, հետևանքը կըլլա, որ ամեն անդրադարձութ֊յան կզուգորդվին որոշ Հավասարակշռական անդրադարձութ֊յուններ. այսինքն՝ ամեն անդրադարձութ֊յան վրա կավելնան անդրադարձութ֊յան մը անդրադարձութ֊յունները, որոնք երբեմն շատ ավելի բարդ կրնան ըլլալ, քան ինքը հիմնական անդրադարձութ֊յունը:

Արտաքին մկաններու հիմնական անդրադարձութ֊յունները կկատարվին ողնուղեղի և միջնակ ուղեղի բունին կոտոշներուն ու կորիզներուն մեջ նստած զգայական ու շարժիչ նոյրոններու միջոցով. ներքին ու արտաքին զգայարանքներեն եկող դրդումները որոշ բանուկ ճամբաներով կգրգռեն այդ մասերու շարժիչ կեդրոնները և անդրադարձութ֊յունը տեղի կունենա. և իր տեղի ունենալովն իսկ կխախտե մարմնի կայուն վիճակը. և ահա՝ մարմնի ամեն կողմերեն կհեռագրվի Հավասարակշռութ֊յունը կորսվելու սպառնալիքը ջղային կեդրոնին, որուն կպատասխանե ջղային կեդրոնը նոր շարժումներով հատկապես այդ վտանգին առջևը առնելու աճապարանքով:

Արդ՝ ո՞ր զգայութ֊յուններն են, որ կտեղեկացնեն ուղեղին Հավասարակշռութ֊յան կատարվող խախտումը, և ուղեղային ո՞ր կեդրոններն են, որուն կուղղվին այդ տեղեկութ֊յունները:

Մարմնի ընդհանուր զգայութ֊յուններեն ներքին մկանային և արտաքին Հպական զգայութ֊յուններն են Հոտ գլխավոր դերը խաղացողը, իսկ գլխու Հատուկ զգայութ֊յուններեն մասամբ աչքը, մասամբ ալ ականջի երեք կիսաշրջաններեն Հաղորդվող գլխու դիրքին զգայութ֊յունները: Ամեն դիրքի փոփոխութ֊յուն մենք կզգանք մեր ամբողջ մարմնի արտաքին կաշիի շոշափումներովը. մարդու Համար Հագուստն ալ Հոա դեր մը ունի, Հագուստի առաջացուցած շոշափումները դիրքը փոխվելու միջոցին. կանգնած ժամանակ մասնավոր դեր կխաղան ոտքերու մատներուն ու ներբանին շոշափումները: Արտաքին շոշափումին զուգ կգործեն ներքին մկանային զգայութ֊յունները. մկանային ամեն լարում կապված է ջղային կեդրոններուն մեջ որոշ Հաստատ Հավասարա-

կշռական չարժումներու. երբ մկանի մը այսինչ խմբակցութեամբ ու չափով լարված ըլլալուն զգայութիւնը տեղ կհասնի իր բանուկ ճամբաներով՝ իսկույն կառաջացնե իր սովորական հավասարակշռական չարժումները. եթե այդ հավասարակշռական չարժումները իսկույն տեղի չունենան՝ գիտակցութեան մեջ կառաջանա պարապի զգայութիւնը, հենարանը կորսնցուցած ըլլալու զգայութիւնը: Աչքը կմասնակցի անով, որ ամեն դիրքի փոփոխութիւն փոփոխութեան կենթարկե րետինային վրա ինկած պատկերը. երբ մեր րետինային վրա պատկեր մը կշարժի՝ մենք երբեք հաստատ չգիտենք՝ դուրսի առարկա՞ն էր, որ շարժվեցավ, թե՞ մենք փոխեցինք մեր տեղը. ուրիշ զգայարանքներու օգնութեամբ միայն կրնանք ստուգել. երբ մեկ-երկու անգամ դառնանք մեր առանցքին վրա՝ «խելքերնիս կդառնա», այսինքն՝ շրջապատող իրերը կսկսին դառնալ հակառակ ուղղութեամբ. երբ պատկեր մը դուրսեն իյնա մեր րետինայի վրա այն տեսակ դիրքով մը, որ մենք միայն վար իյնալու միջոցին կրնանք տեսնել այդ վիճակով, կուներնանք վար իյնալու նման զգայութիւն մը և բնազդորեն կգործեն հակադիր մկանները վտանգի առաջքը առնելու համար. գլուխը հանկարծ կնետենք ետ, ձեռքերը կպարզվին հենարան փնտրելով, կնստինք. կենդանիներն ալ ոտքերնին կբանան ծանրութեան կեդրոնին ավելի ընդարձակ հիմք տալու համար: Իսկ ականջի երեք կիսաշրջանները, որոնք դիրքի և շարժումներու ուղղութեան ըմբռնումին կաշխատակցին, ուրեմն այս կամ այն չափով աշխատակից մըն են նաև հավասարակշռութիւնը պահելու ջանքերուն:

2. ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԿԵԴՐՈՆԸ

Ինչպես որ բանուկ ճամբաներ ունինք մեր ուղեղին մեջ անդրադարձ չարժումներու համար, այդպես ալ բանուկ ճամբաներ կան մշակված մեր ուղեղին մեջ այդ անդրադարձութիւններու պահանջած հավասարակշռութեան անդրադարձութիւններուն համար, որոնք կից ու գործակից են հիմնական անդրադարձութիւններուն, բայց իրրև զատ ու հավելյալ մաս մը: Սովորական անդրադարձութեան այդ բանուկ ճամբաները ողնուղեղի ու

միջնակ ուղեղի բունին մեջն են. իսկ հավասարակշռության այդ կից ու հավելյալ բանուկ ճամբաներուն հատուկ կեդրոնը փոքր ուղեղն է:

Շատ բնական կերպով, կարելի է ըսել տրամաբանորեն, այդ կեդրոնը պետք է գտնվեր բոլոր զգայարանքներու վրան մարմնի ու գլխու բոլոր մկանային շարժումներուն վրա, քանի որ ինքը հավասարակշռությունը նոր հավելում մըն է այդ ընդհանուր հիմնական անդրադարձության բանուկ ճամբաներուն վրա:

Եվ իրա՛վ, ինչ բան է փոքր ուղեղ անվանածնիս. բուն կռնակի կողմեն մեջտեղի մասի տարապայման հավելյալ աճում մը, որ սկիզբը ավելի նախնական ողնավորներուն մեջ այտուցք մըն է միայն՝ փոքր ուղեղին որդը, որ հետզհետե կմեծնա ու կաճի կենդանական տեսակներու բարձրացման գուգընթաց. կաթնասուններու ուղեղին մեջ այնքան կսկսի մեծնալ, որ որդի երկու կողմերեն կուռի ու կծավալի և իր երկու կիսագունդերու ծայրագույն աճմանը կհասնի մարդու ուղեղին մեջ: Հավասարակշռության աստիճանական բարդացում է ջուրի մեջեն օդի մեջ անցնիլը, սողալեն ցած ոտքերու վրա բարձրանալը, ցած ու կարճ ոտքերեն բարձր ոտքերուն վրա ելած չորքոտանիին և վերջապես չորքոտանիեն երկոտանիին. թե ինչ չանք է մշտական և ինչ լարված աշխատանք երկու ոտքի վրա հավասարակշռություն պահելը և երկու ոտքի վրա ամեն տեսակի դիրքեր, շարժումներ ու գործեր կատարելը՝ մենք միշտ կրնանք տեսնել նոր ոտքի ելլող երեխայի երկարատև ճիգերուն, վախերուն ու փորձերուն վրա:

Փոքր ուղեղին մեջն է, որ կմշակվին անդրադարձության այդ հավելյալ բանուկ ճամբաները: Փոքր ուղեղը կհավաքվին կատարվող բոլոր շարժումներու մասին լուրերը վերը հիշված զգայություններով և հոտկե է, որ կմեկնին այդ շարժումներուն պատասխանող հավասարակշռական շարժումներուն հրամանները: Եվ այդ իր համադրող ու հրահանգող դերին կհամապատասխանե փոքր ուղեղի գորշ մասերուն կազմությունը:

Փոքր ուղեղի որդին ու կիսագունդերուն կեղևը բաղկացած է երեք չերտ տարբեր տեսակի նոյրոններե: Ամենեն դուրսի չերտը լուրերը ստացողն է. այդ չերտի նոյրոններուն վրա կվերջանան

ամբողջ մարմնի զանազան մասերեն եկող զանազան տեսակի զգայութիւնները՝ շոշափական, մկանային, աչքի ու ղիրքի զգայութիւնները. մոլեքյուլային կկոչվին այս նոյրոնները, որ կարճ ու հարուստ ճյուղավորում ունին: Եկած գրգիռները համադրողի ու փոխադրողի ամենեն կարևոր դերը կխաղա երկրորդ շերտը, որուն նոյրոնները իրարմե գրեթե կանոնավոր հեռավորութիւնեն նոսր շարք մը կկազմեն, կկոչվին Պուրկինճեի[45] նոյրոններ. թել մը կերկարեն դեպի առաջին շերտը և այդ թելի խիտ ու փնջաձև վերջավորութիւններեն մազայիններ կերթան մոլեքյուլային բազմաթիվ նոյրոններու մազիկներուն հետ հաղորդակցելու. այլև հարաբերութեան մեջ են երրորդ շերտի հատիկ կոչվող փոքր նոյրոններու երկարած թելերու վերջերուն հետ, որով Պուրկինճեի դեպի առաջին շերտը երկարած թելը հարաբերութեան կմտնե նաև ավելի հեռավոր Պուրկինճե նոյրոններու հետ. այսինքն՝ Պուրկինճե նոյրոնները իրենց վրա կկեդրոնացնեն բոլորովին տարբեր կողմերե եկած գրգիռները. իսկ իրենց առանցք-թելը, որ դեպի ներս կերկարի, կերթա կվերջանա տանիքին տակի կամ ատամնաձև կեդրոնական կորիզներուն մեջ. ըսել է՝ անոնց կփոխադրե իր ժողված ու համադրած գրգիռներուն արդյունքը. այդ կեդրոնական կորիզներու առանցք-թելերն են, որ առջևի թևերով կերթան կարմիր կորիզն ու շրջապատի գորշ մասերը տանելով պետք եղած հավասարակշռութեան չարժումներուն հրամանները:

Ողնուղեղի ու միջնակ ուղեղի բունին մեջ հիմնական անդրադարձութեան շղթան կազմված է երեք կամ չորս նոյրոններե՝ կանկլիոնի նոյրոնը, ջիղընկալ նոյրոնը, ուրկե կա՛մ չիտակ կանցնի ջիղածին չարժիչ նոյրոնին, կա՛մ կանցնի միջնորդ նոյրոնի մը՝ հոնկե անցնելու համար ջիղածին նոյրոնին: Փոքր ուղեղի միջով կատարվող հավասարակշռութեան անդրադարձութիւնները այդ հիմնական 3 ու 4 նոյրոններուն կավելցնեն նոր 3 ու 4 նոյրոններ. կավելնան միայն երեքը՝ մոլեքյուլային, Պուրկինճե և կեդրոնական կորիզին նոյրոնը, եթե Պուրկինճեները իրարու կապող մանր ու հատիկ նոյրոնները չհաշվենք. կըլլան չորս, եթե անոնք ալ մեկտեղ հաշվենք: Այսինքն՝ զգայարանքեն մինչև մկանը կազմված է

Հավասարակշռութեան չղթա մը, որ ոչ թէ սովորական 3-4 նոյրոններով կանցնի, այլ 7-8 նոյրոններով:

Հավասարակշռութեան այս մեծ կեդրոնին գործունեութիւնը ուրեմն 3-4 նոյրոնով սովորական անդրադարձութեան մը չղթան չէ, այլ կրկնապատկված նոյրոններու թիվով շատ ավելի բարդ չղթա մը. սովորական անդրադարձութեան չղթային մեջը մտած է փոքրուղեղային հավելյալ 3-4 նոյրոններու աշխատակցութիւն մը: Հին անդրադարձութեան մեջքին հեծած է նոր անդրադարձութիւն մը: Անդրադարձութիւնը դարձած է տեսակ մը երկհարկանի: Փոքր ուղեղի հավելվածական կազմն ու գործունեութիւնը ոսկրային ուղեղին անդրադարձութիւնը կդարձնե երկհարկանի: Միջնակ ուղեղին բունը իր ձևովն ալ, տեղովն ալ իր նոր զգայարանքներովն ալ անշուշտ նորատեսակ մաս մըն է ոսկրային ուղեղին և ատոր համար ալ կզատենք ողնուղեղեն. բայց իրենց անդրադարձական-հոգեբանական հոսումովը հիմնական տարբերութիւն չունին իրարմե ողնուղեղն ու միջնակ ուղեղին բունը. անդրադարձական հոգեբանական տեսակետեն ատոնք նույնարժեք են իրարու: Բայց փոքր ուղեղը այդ նույն անդրադարձական-հոգեբանական տեսակետեն արդեն շատ ավելի բարդ գործունեութիւն մը կբերե իր հետ:

Փոքր ուղեղի այս երկրորդ աստիճանի հավելյալ կարողութիւն մը ըլլալը կտեսնենք նաև զանազան կենդանիներու փոքր ուղեղներուն վրա կատարված հատումներով: Կենդանիի զգայական ու իմացական կարողութիւնները ոչինչ չեն կորնցներ. կենդանին իրենը կճանչնա, վտանգը կտեսնե կհասկնա, հարկ եղած անդրադարձութիւնները կուզե ու կփորձե. պակսածը այդ շարժումներու ատեն իր հավասարակշռութիւնը շնորհքով պահել կարողանալն է: Եթե կտրված կտորը համեմատաբար փոքր է՝ անոր շարժումներուն մեջ անկաքգութիւն մը, անվստահութիւն մը կնկատվի: Ինչքան խոշոր կտորով ոչնչացնենք իր փոքր ուղեղը, այնքան ավելի անկարող կդառնա ոտքի վրա իր հավասարակշռութիւնը պահելու: Եվ ընդհանրապես իր բոլոր մկանային դրութեան վրա կնշմարվի թուլացում մը, լարման պակաս մը: Մեր ամենեն հանգիստ դիրքերուն մեջն ալ միշտ կենդանական մկան-

նները հավասարակշռութիւն պահելու աշխատանքներ ունին, մկաններըը միշտ որոշ աստիճանի լարում մը ունին, որ կպահվի փոքր ուղեղի մշտական գրգիռներով. երբ այդ կեդրոնը կփճացնենք՝ մկանը կզրկվի նաև իր այդ տևական լարումեն:

Փոքր ուղեղեն զրկված կենդանի մը քանի շաբաթներու անկարողութենե ետքը քիչ-քիչ կսկսի ետ ստանալ իր հավասարակշռութիւնը պահելու մեկ որոշ չափը ուղեղային մյուս մասերու թափած փոխարինող ճիգերով. բայց այլևս բնավ կենդանին տիրանալ չկրնար իր առաջվան ճկուն-թեթև, ազատ ու աշխուժ կեցվածքին ու շարժվածքին. դողդոջուն, վարանոտ, դանդաղ ու թերի կըլլան իր շարժուձևները, ջղային մեծ ճիգերով և սպառումով: Կորսնցուցած է կենդանին իր ժառանգած ու մարզված վստահ մեքենան, որ կվարեր հավասարակշռութեան իր անդրադարձութիւնները այնքան նրբութեամբ ու համոզմունքով:

III. ՄԻՋՆԱԿ ՈՒՂԵՂԻ ԳԼՈՒԽ ՀԱՏՎԱԾԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Իր դիրքով ու աստիճանով փոքր ուղեղին կնմանի նաև միջնակ ուղեղի գլուխը կազմող մասը, ան ալ առանձին աճմունք մըն է միջնակ ուղեղի բունին վրա. ան ալ ինքն իր մեջ ամբողջություն մըն է ըստ երևույթին իր որոշ դերով, ան ալ ավելի վերին ու ավելի բարդ գործունեութեան հատկացված հավելյալ կեդրոն մըն է, ան ալ բուն անդրադարձութիւններուն կցված և անոնցմե դրդված ու լրացնող երկրորդ կարգի անդրադարձութիւններ կներկայացնե: Անոր ալ անդրադարձության չղթան 3-4 նոյրոններե չէ կազմված, այլ միջանկյալ 2-3 նոր նոյրոն ունի իբրև հավելում: Կանկիոն նոյրոնեն ու ջիղընկալ նոյրոնեն ետքը գրգիռը կանցնի տեսողական շերտերու զգայական նոյրոնին՝ հոնկե անցնելու համար գծավոր մարմնի մեկ նոյրոնին. այս վերջին չարժիչ նոյրոնը եթե ոսպաձև կտորին վրա է նստած՝ գրգիռը կանցնի կարմիր կորիզը կամ անոր համապատասխանող ուրիշ կորիզ մը միջնակ ուղեղի բունին մեջ, ուրկե կերթա ջղածին չարժիչ նոյրոնի մը. այսինքն՝ միջանկյալ կավելնան միայն երկու նոր

նոյրոններ: Եթե տեսողական շերտեն գրգիռը ստացող նոյրոնը գծավոր մարմնի տարբեր մեկ հատվածին վրա է նստած՝ իր ստացած գրգիռը նախ կփոխանցե ոսպաձև կորիզին և հոնկն կերթա դեպի միջնակ ուղեղին բունը և ավելի վար, որով հավելյալ նոյրոնները կղառնան երեք: Ուրեմն միջնակ ուղեղի գլուխ մասի միջնով կատարվող անդրադարձության շղթան կազմված է 6-7 նոյրոններով:

Տեսողական շերտերու և գծավոր մարմնի գործունեությունն ու դերը դեռ հստակ պարզված չէ. մեծ ուղեղին մեջ նստած այդ կեդրոններուն վրա փորձեր կատարելը շատ է դժվար. մինչև վերջերս բոլորովին մութ էր. հիմա սակայն լույսի շատ կարևոր խուրձ մը ինկած է արդեն իր վրան: Առաջին հաստատ կետն ան է, որ տեսողական շերտերը բոլոր զգայությունները ժողվող և իրարու կապող կեդրոն մըն է անդրադարձ ճամբաներու գլխուն: Երկրորդ հաստատ կետն է, որ գծավոր մարմինը դեպի մեծ ուղեղը առանցք-թելեր չի ղրկեր և մեծ ուղեղի վրա ազդեցություն չունի. ան իր գրգիռները կստանա տեսողության շերտերեն և իր հրահանգները կղրկե միջնակ ուղեղի բունի շարժիչ մասերուն և անոնց միջոցով նաև ավելի վար: Այս երկու հաստատ կետերը պարզ ցույց կուտան, որ մեծ ուղեղի հիմքը կոչվող և մեծ ուղեղի մասը համարվող այս գորշ զանգվածները ո՛չ թե մեծ, այլ միջնակ ուղեղի ամբողջության կպատկանին իրենց գործունեությամբ, իրենց հոգեբանական արժեքով. անդրադարձության կեդրոններ են, ո՛չ գիտակցության, բայց փոքր ուղեղին պես երկրորդ աստիճանի անդրադարձության, բուն անդրադարձություններուն կից ու հավելյալ անդրադարձության, երկրորդ հարկի ավելի բարդ անդրադարձության:

Արդ՝ ի՞նչ տեսակի հավելյալ ու համաղիր անդրադարձություններ են այս նոր նոյրոններուն կատարածը: Զանազան կենդանիներուն մեծ ուղեղին կեղևը երբ կկտրեն առանց ձեռք դպցնելու անոր կեդրոնական գորշ մասերուն՝ կենդանին, օրինակ կատուն, կկորսնցնե իր հասկացողությունը, հիշողությունը, ճանաչումը, այսինքն՝ իր իմացական կարողությունները, բայց կպահե լիովին իր ներքին հուզական վիճակներու արտահայտություն-

նները. եթե որևէ անախորժութիւն պատճառենք՝ կկճռտե ակռաները, կտնկվին մազերը, ականջները կցցե, այսինքն՝ իր բարկութեան սովորական արտահայտութիւնները. այդպես ալ Հակառակը, եթե չոյենք մեղմակի՝ չեն ուշանար իր գոհունակութեան և ուրախութեան արտահայտութիւնները. կսկսի մռմռալ. պոչը կշարժե և ծայր կուտան իր քսվելու շարժումները:

Մյուս կողմեն փորձերը ցույց կուտան, որ մեծ ուղեղի կեղևեն զրկված կենդանիին տեսողական չերտերը եթե գրգռելու ըլլանք արտաքին միջոցով մը՝ իսկույն կառաջանան անոր բուսական գործարաններուն մեջ այն տեսակ երևույթներ, որոնք սովորական կյանքի մեջ կընկերանան մեծ հուզումներուն: Նայելով, թե տեսողական չերտերու որ կետերն ենք գրգռած՝ կառաջանան չնչառական փոփոխութիւններ, սրտի գործունեութեան արագացում կամ դանդաղում, աղիքային կծկումներ, միզափամփուշտի պարպում կամ արտահոսիլ կսկսին արցունքի գեղձերը:

Այդպես ալ դիտված է, որ որոշ հիվանդագին պատճառներով երբ քայքայված են տեսողական չերտերը մարդու ուղեղին մեջ, բայց մեծ ուղեղին կեղևը կպահե իր ամբողջութիւնը, մարդը տեր է իր բոլոր մկաններու ազատ գործունեութեան, երբ և ինչպես ուզենա, միայն կորսնցուցած է իր հուզումները արտահայտելու անմիջական ու սովորական արտահայտութիւնները. կրնա շարժել, օրինակ, իր դեմքին բոլոր մկանները ըստ կամս, բայց կկորսնցնե հոգեկան կյանքի արտահայտութիւնը եղող ամեն բնորոշ դիմախաղ:

Այս դիտողութիւններն ու փորձերը կբացատրվին հետևյալ եղանակով: Ամեն անդրադարձութիւն, որ կկատարվի, ամեն շարժում, որ տեղի կունենա, պարտադրաբար իր ետևեն կբերե ո՛չ միայն Հավասարակշռութեան պահանջած հավելյալ անդրադարձութիւնները, այլև շատ մը հավելյալ ուրիշ անդրադարձութիւններ ներքին բուսական գործարաններուն վրա. ամեն մեկ շարժում կպահանջե արյան խուժում այս ու այն մասերուն մեջ և ուրիշ մասերե արյունը ետ կքաշե. ամեն շարժման հետ սիրտը արագ կամ դանդաղ կզարնե, մարսողական գործարաններուն շարժումները կաշխուժանան կամ կդանդաղին, գեղձերը կառատացնեն

իրենց հոսումը կամ կնվազի ու կկասի. այս բոլորը կկատարվի բուսական գործարաններուն փարած մկաններու աշխատանքով, այսինքն՝ ներքին գործարանական անդրադարձություններով: Որևէ գրգիռի մը ազդեցության տակ ներքին գործարաններուն մեջ այս բազմատեսակ ու բազմակողմանի անդրադարձություններուն գումարը կանվանենք հուզում: Ամեն անդրադարձություն իր հետ կբերե հուզում մը, այսինքն՝ որոշ հուզական հավելյալ անդրադարձություններ, ինչպես որ կբերե նաև հավասարակշռության հավելյալ անդրադարձություններ:

Եվ հուզական ներքին անդրադարձություններուն կից տեղի կունենան հաճախ նույնիսկ արտաքին ոսկրային հավելյալ անդրադարձություններ. կենդանին աչքերը կգոցե, ակռաները կցուցնե, կկծկվի, կպառկի, մազերը կտնկվին, տարօրինակ ձայներ կհաներ, նայվածքը կփոխվի. մարդը նաև կժպտի, կշոյե, կհամբուրե, կբացականչե. և այս կարգի բազմաթիվ արտաքին շարժումներ, որոնք կընկերանան ներքին հուզական շարժումներուն և իրենց միակերպ կրկնությամբ կդառնան ներքին չտեսնվող հուզական վիճակներուն արտաքին երևցող արտահայտությունը: Այսպեսով յուրաքանչյուր հիմնական անդրադարձ շարժում ո՛չ միայն իր հետ կբերե ներքին հուզական հավելյալ անդրադարձություններ, այլև ատոնց զուգընթաց նաև հաճախ այդ հուզումներու արտահայտությունը եղող արտաքին հավելյալ անդրադարձություններ: Ահա՛ այս բոլոր հավելյալ ներքին հուզական անդրադարձություններու և արտաքին հուզական արտահայտություններու ղեկավար ու համադրող կեդրոնն է միջնակ ուղեղի պուլվը կազմող գորշ զանգվածը:

Եթե միջնակ ուղեղի մեջքին աճած փոքր ուղեղը անվանեցինք հավասարակշռության կեդրոն, հավանորեն սխալ պիտի չըլլա, եթե նույն միջնակ ուղեղի գլխուն աճած այս այոուցքը, այսինքն՝ տեսողական չերտերը, գծավոր մարմինը և անոնց տակի ավելի փոքր գորշ մասերը անվանենք հուզականության կեդրոն: Ամեն պարագայի կասկածե դուրս է այդ մասերու կարևոր դերը ամեն հուզական արտահայտություններու ներքին ու արտաքին շարժումներուն մեջ:

Դ. ՄԵԾ ՈՒՂԵՂ

Ա. ՄԵԾ ՈՒՂԵՂԻՆ ԿԱԶՄԸ

Ի. ԿԵՂԵՎԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԶՄԸ

Մեծ ուղեղը կներկայացնե սաղմնային զարգացման հինգերորդ այտուցքը՝ վերջինը, վերինը, որ հետզհետե մեծնալով վերածված է երկու կիսագունդերու: Յուրաքանչյուր կիսագունդի մէջ խոռոչ մը կա՝ առաջին ու երկրորդ կողմնական խոռոչները, որոնցմե ամեն մեկը առանձին ծակով մը կմիանա ուղեղային երրորդ խոռոչին: Գանգուղեղի հինգ խոռոչները չարունակութիւնն են ողնուղեղի ներանցքին, կկազմեն մեկ ամբողջութիւն մը և լեցված են նույն հեղուկ նյութով:

Առաջին ու երկրորդ խոռոչները կից են իրարու և կզատվին իրարմե երկութերթանի թաղանդով մը, որ թափանցիկ պատվար կկոչվի: Այս երկու խոռոչներուն առաստաղը կներկայացնե կոշտ մարմինը, այս երկու խոռոչներուն հատակը կներկայացնե եռանկյունի մարմինը, որ միաժամանակ երրորդ խոռոչի առաստաղն է. իսկ կոշտ ու եռանկյունի կոչվող մարմինները երկու կիսագունդերը իրարու հետ հաղորդակցութեյան մեջ դնող առանցք-թելերու խիտ տրցակներ են:

Երկու կիսագունդերը նախ դեպի առաջ ուղղված և կիսովին իրարու կից այտուցքներ են, որոնք սակայն ճակտի գանգային ոսկորներուն դեմ նույն ուղղութեյամբ զարգանալու անկարող, հետզհետե դեպի ետև կուղղեն իրենց տարածումը և կամաց-կամաց կենդանական տեսակներու զարգացման զուգընթաց՝ կուգան կպառկին միջնակ ուղեղի վերին մասերուն վրա և այնքան կխոշորնան, որ կգրավեն գանգային տարածութեյան մեծագույն մասը:

Ձկներու մեծ ուղեղը դեռ թեքում չունի դեպի ետ. չիտակ

դեպի առաջ երկարումն է ետևի մասերուն. այդպես է նաև մարդկային մեծ ուղեղը սաղմնային զարգացման առաջին երկու ամիսներու ընթացքին: Երկակենցաղներուն և սողուններուն մեծ ուղեղը իր ետևի մասով արդեն ինկած է միջնակ ուղեղի գլխուն վրա. այդ վիճակի մեջն է նաև մարդու մեծ ուղեղը իր զարգացման երրորդ ամսուն: Թռչուններուն մեծ ուղեղը հասած է արդեն միջնակ ուղեղի երրորդ այտուցքեն մինչև քառյակ պտուկները. այդ վիճակի մեջն է մարդկային մեծ ուղեղը իր գոյության չորրորդ ամսուն: Կաթնասուններուն մեծ ուղեղը կհասնի մինչև փոքր ուղեղին սկիզբի մասը. այդպես է մարդկային ուղեղը հինգերորդ ամսուն, որ վեցերորդ ամսվան ընթացքին կուգա կծածկե փոքր ուղեղի մեծագույն մասը:

Մեծ ուղեղի այս աստիճանական տարաբաժանումը պայմանավորված է բնականաբար իր գորշ մասերու նյարդոններու չաուցումովը և անոնց մեջ բազմապատիկ թելերու և ճյուղիկներու առաջացումովը: Մեծ ուղեղի գորշ զանգվածը բռնած է կիսագունդերուն արտաքին եզերային մասերը, որ և կանվանենք մեծ ուղեղին կեղևը: Մինչդեռ մեծ ուղեղին միջուկը, այսինքն՝ կեղևեն ու խոռոչներեն զատ մնացած ամբողջ ներքին տարածութիւնը կլեցնեն կեղևային նյարդոններեն մեկնող կամ դեպի կեղևային նյարդոնները վազող թելերը բազմատեսակ ուղղութիւնով: Ուրեմն միջուկը կներկայացնե մեծ ուղեղի ճերմակ զանգվածը, որ կգտնվի կեղրոնը և շրջապատված է գորշ բարակ մասով մը, կեղևի մը պես. այսինքն՝ ճիշդ հակառակը մինչև հիմա ջղային մասերու ցուցադրած վիճակին. և այն պարզ պատճառով, որ մեծ ուղեղը վերջին այտուցքն է և իրմեն վեր մասեր չկան, որուն թելերը իր վրայեն անցնին, բոլոր թելերը վարեն կուգան վերջին մասի գորշ զանգվածին կամ իրմեն կիջնեն վար. թելերը պիտի գտնվին վարի մասերու և վերջին գորշութեյան միջև. նույն էր պատկերը մոտավորապես նաև փոքր ուղեղին մեջ և նույն պատճառով:

Գանգային ոսկորներու պարտադրած սահմանափակութիւնը ո՛չ միայն պատճառ կդառնա մեծ ուղեղի ինքն իր վրան դեպի ետ ծալվելուն, այլև ուղեղային կեղևի ինքն իր մեջ ծալծլվելուն և բազմաթիվ կնճիռներ և ակոսներ առաջացնելուն: Կենդանական

տեսակն տեսակ անշուշտ չատ կատարելերին ինչպես ընդհանրապես կիսագունդերուն ձևն ու ծավալը, այնպես ալ անոր կեղևին առաջացուցած ծալքերն ու ակոսները: Բայց ընդհանուր նմանութիւններ կան ու կշեշտվին, ինչքան որ կենդանական տեսակները մոտիկ են իրարու իրենց զարգացմամբ:

Մեծ ուղեղն ալ, ուղեղի մյուս մասերուն պես, ամբողջովին փաթթված է կոչտ մաշկով, որ ուղեղը պինդ զրկած կմտնե անոր բոլոր ծալքերուն ու կնճիռներուն խորքը, կիջնե ու կլեցնե նաև կեղրոնական մեծ ճեղքը, որ մեծ ուղեղի ամբողջ երկարութեյամբ երկու կիսագունդերը կզատե իրարմե: Ամբողջ ուղեղը վրայեն ալ պատած է խորոիտ մաշկով մը, որ թեթև կերպով միացած կպահե ուղեղին զանգվածը գանգի ոսկորներուն:

2. ԶԳԱՅԱԿԱՆ ՈՒ ՇԱՐԺԻՉ ԿԵԴՐՈՆՆԵՐ

Ուղեղային բոլոր մյուս գորշ մասերուն նման, կեղևն ալ կազմված է զգայական ու շարժիչ նոյրոններե. և այդ երկու տեսակի նոյրոնները զատված են իրարմե և հավաքված անջատ՝ կազմելով կեղևի շարժիչ և զգայական կեդրոնները, որոնք կհամապատասխանեն ողնուղեղի կոտոշներուն և միջնակ ուղեղի կորիզներուն:

Եվ այդ երկու մասերու դասավորումն ալ բոլորովին կհամապատասխանե կոտոշներու և կորիզներու ընդհանուր դիրքին. կեղևի առջևի մասը շարժիչ նոյրոններու նիստն է. կեղևի ետևի մասը՝ զգայական նոյրոններու նիստը: Այդ երկու մասերը իրարմե զատող սահմանը երկու կիսագունդերուն վրա վերեն վար իջնող ակոս մըն է. սկսելով երկար ակոսի կեսերուն մոտիկ՝ երկար ակոսի տակեն սկսած թեք կերպով կիջնե դեպի վար ու դեպի առաջ առանց վարի եզերային գծին հասնելու. և կկոչվին Ռոլանտի ակոս:

Ռոլանտի ակոսեն դեպի առաջ կեղևային բոլոր մասերը, այսինքն՝ մեծ ուղեղի բոլոր ճակատային մասերը շարժումները ղեկավարող կեդրոններ են. իսկ Ռոլանտի ակոսեն դեպի ետ կեղևա-

յին բոլոր մասերը, այսինքն՝ գագաթի, ծոծրակի և քունքի հատվածները ամբողջովին զգայությունները ընդող և զգայական կապակցություններ առաջացնող կեդրոններ են:

Եվ ինչպես որ ողնուղեղի կոտոշներուն և միջնակ ուղեղի կորիզներուն մեջ որոշ կարգ ու հաջորդականություն կա և ամեն մեկ կտոր իր ազդեցության որոշ դաշտը ունի, նույն է իրողությունը նաև մեծ ուղեղի գորշ մասերուն համար:

Միջնակ և ողան ուղեղներուն մեջ շարժիչ կոտոշներն ու կորիզները վերեն վար ամբողջական սյուն կկազմեն ողան մեջ անընդհատ, միջնակ ուղեղի մեջ ընդհատումներով. այդ ամբողջական սյունին ամենեն վերին մասերը, այսինքն՝ միջնակ ուղեղի շարժիչ կորիզները գլխու մկանները միայն կշարժեն գլխուն վրան կամ գլխուն մեջը. այդ ամբողջական սյունին հաջորդ մասերը ողնուղեղի վերին կոտոշներեն կղեկավարեն ուսի ու թևերուն մկանները. շարժիչ սյունի ավելի վարի մասերուն դաշտը կողերն են, կուրծքն ու կռնակը, անկե ցածի շարժիչ կեդրոնները կղեկավարեն մեջքի, կոնքի ու փորի մկանները և վերջապես շարժիչ սյունի ամենեն վարի մասերը ստորին փորի ընջակային մկաններու վարիչներն են:

Ասոր համապատասխան է նաև Ռոլանտի ակոսին անմիջապես առջևը գտնվող կեղևային շարժիչ նոյրոններու դասավորությունը: Ռոլանտի անմիջապես առջևը գտնվող նոյրոններու զանգվածը եթե գրգռելու ըլլանք էլեքտրականությամբ՝ կունենանք հետևյալ արդյունքը. գագաթի երկար ակոսին ամենեն ավելի մոտիկ մասերու գրգիռը շարժման մեջ կդնե կամ կցնցե կենդանիին ետևի թաթերը, քիչ մը ավելի վար ոտքը, ազդրը, կոնքը. հետզհետե կուրծքի ու կռնակի մասերը. երբ էլեքտրականության ծայրերը կղպցնենք ավելի վարի կետերուն՝ կշարժվին ու կցնցվին առջևի ոտքերը, առջևի թաթերը. մեծ ուղեղի հատակի գծին մոտիկ մասերը երբ գրգռենք՝ կշարժվին վզի, գլխու վրայի ու մեջի մկանները, աչքի, շրթունքներու, լեզվի, կլափի շարժուումները և դիմախաղ: Նույն է արդյունքը, երբ որևէ հիվանդության հետևանքով ռոլանտական շարժիչ այդ ամբողջության որևէ մեկ մասը վնասվի կամ փորձի համար ենթարկվի հատումի. միշտ

կատանանք մարմնի համապատասխան դաշտերուն մէջ չարժման անկարողութիւն մեծ ուղեղի միջոցով, թեև մկանները առողջ են և անդրադարձ ճամբով կանոնավոր կգործեն:

Հիվանդներուն վրա եղած դիտողութիւնները, ապրող կենդանիներու ուղեղին վրա եղած հատումները և զանազան մասերու էլեքտրական գրգռումները կհաստատեն, որ մեծ ուղեղի ետևի մասի զգայական նոյրոններն ալ իրենց որոշ հատվածներուն մէջ կծառայեն միայն որոշ զգայութիւններու, նման ողնուղեղի զգայական սյուներուն և միջնակ ուղեղի զգայական կորիզներուն: Այսինքն՝ զգայական հատվածի տարբեր մասերուն մէջ նստած նոյրոնները տարբեր զգայութիւններ կուտան կենդանիին և արդեն կապված են տարբեր-տարբեր զգայարաններու հետ. միջնակ ուղեղի տեսողական կորիզներեն եկող առանցք-թելերը անպատճառ կվերջանան մեծ ուղեղի որոշ մասի նոյրոններուն վրա. այդպես ալ բոլոր մյուս զգայական կորիզներեն կամ սյուներեն եկող զգայական թելերը:

Արդ՝ Ռոլանտի ակոսին անմիջապես ետևը եղող մասերը նորեն վերեն վար և նորեն նույն հաջորդականութիւյամբ կծառայեն շոշափական և մկանային զգայութիւններուն. գագաթին մոտիկ մասերը պոչի ու ետևի ոտքերու ու թաթերու մասերեն կստանան իրենց գրգիռները. ավելի վարի մասերուն կհասնին մարմնի միջին մասերուն դաշտերեն շոշափական և մկանային զգայութիւններ. և ամենեն վարի մասերը կհասնին գլխու դաշտեն եկած մերձզգա գրգիռները:

Մեծ ուղեղի ծոծրակային մասը տեսողական կեդրոնն է. հոն ալ անշուշտ որոշ դասավորութիւն մը կա, որ հավանորեն ռետինայի դասավորութեան պիտի համապատասխանե:

Մեծ ուղեղը գանգի ետևի մասը հասնելեն ետքը զարգացած է գանգի հատակովը դեպի առաջ. այնպես որ մեծ ուղեղի քունքային մասը իսկապես մեծ ուղեղի ամենեն ետևի մասն է. և այս քունքային մասի արտաքին երեսին վրան է լսողական կեդրոնը, որ նույնպես անշուշտ ականջի Կորդիի մարմնին համապատասխանող հաջորդական դաշտեր պիտի ունենա, որ նմանապես դեռ ո՛չ փորձված, ո՛չ ապացուցված է:

Մեծ ուղեղի քունքին ներքին երեսին վրա, այսինքն՝ լսողականին կոնակը կգտնվի Հոտառական կեդրոնը: Իսկ Հոտառականեն ավելի խորը՝ մեծ ուղեղի ներքին երեսին վրա կոչտ մարմնին զուգահեռ գացող գորշ մասերուն մեջն է Համառական կեդրոնը: Թե՛ իրենց այս ավելի խոր դիրքի և թե՛ այդ երկու զգայութիւնները քննութեան ենթարկելու փորձերուն անհարմարութեանը պատճառով այս երկու կեդրոնները ավելի նվազ ուսումնասիրված են ղեռ:

3. ԱՐՏԱԿԱՊ ԵՎ ՆԵՐԿԱՊ ՄԱՍԵՐ

Զգայական կեդրոններու վերի նկարագրութեան մեջ նկատելի է բնական հաջորդականութիւն մը. Ռոլանտի ակոսին անմիջապես ետևը շոշափական ու մկանային զգայութիւններն են, այսինքն՝ ամենեն հինը և նախնականը, մերձզգա զգայութիւնները, ուրկե ետքը կուգա տեսողութեան կեդրոնը և անկե ետքը լսողութեան և հոտառութեան կեդրոնները. հավանորեն ասիկա է ողնավոր կենդանիներու զգայարանական զարգացման ընթացքը, նախ տեսողութիւնն է զարգացեր գլխուն վրա և ավելի ուշ՝ հոտառութիւնն ու լսողութիւնը հատուկ կարևորութեամբ:

Երկրորդ նկատելի կետն ալ ան է, որ Ռոլանտի ակոսին առջևի անմիջական շարժիչ զանգվածը մեկ մասն է միայն ճակատի հատվածին պատկանող կեղևային շարժիչ ուղեղին. այդպես ալ վերը հիշված զգայական կեդրոնները իրարու կպած և անմիջական շարունակութիւն չեն իրարու. Ռոլանտի ետևի շոշափական-մկանային կեդրոնին և ծոծրակին ծայրը եռանկյունիի պես բան մը կազմող տեսողական կեդրոնին մեջ ընդարձակ գորշ մասեր կան, ինչպես և տեսողական ու լսողական կեդրոններուն միջև, այլև լսողականեն ու հոտառականեն անդին: Այնպես որ մեծ ուղեղի կեղևին ամբողջ գորշ տարածութեան հազիվ կեսի չափը կբռնեն այդ բոլոր կեդրոնները միասին, ավելի զարգացած կենդանիներու մոտ՝ կեսեն ալ պակաս. մարդու ուղեղին մեջ մեկ

երրորդն է միայն բոլոր չարժիչ և զգայական կեղրոններուն բռնած տարածութիւնը:

Այս կեղրոնները հնար է եղած ճշդել ու որոշել, որովհետև գորշ կեղևի այն մասերն են, որ կապեր ունին կեղևեն դուրս. այդ մասերու նոյրոնները իրենց առանցք-թելերը կղրկեն կեղևեն դուրս՝ միջնակ ուղեղին կորիզները կամ ողնուղեղի կոտոշները. և կամ միջնակ ուղեղի կորիզներու նոյրոններու առանցք-թելերն են, որ վարեն կուգան ու կվերջանան կեղևի այդ զանազան զգայական մասերուն վրա: Կեղևային այս կտորները անմիջական հաղորդակցութեան մեջն են մեծ ուղեղեն վար եղող ուղեղային կեղրոններուն հետ: Մեծ ուղեղեն դուրս թելեր ղրկող կամ դուրսեն թելեր ստացող այս մասերը կանվանեմ արտակապ կեղրոններ:

Բոլորովին տարբեր են ճակտի ընդարձակ մասերուն վրա նստած մնացած կեղևային մասերուն վիճակը. այդպես ալ կեղևի գագաթային ու քունքային մնացած տարածութիւններուն վրա տեղավորված զգայական մյուս մասերուն վիճակը: Այս մասերը ինչքան ալ որ զրզռենք, ո՛չ չարժում կառաջանա մարմնի որևէ մեկ մասին վրա, ո՛չ ալ որևէ զգայութիւն մարմնի որևէ մեկ դաշտեն: Եվ հյուսվածային ուսումնասիրութիւնն ալ ցույց կուտա, որ այս ընդարձակ միջանկյալ տարածութիւններուն մեջ նստած նոյրոնները բնավ թելեր չեն ղրկեր մեծ ուղեղեն դուրս, ո՛չ ալ բնավ անմիջական շոշափման մեջ են իրենց վերջավորութիւններով միջնակ ուղեղի կորիզներեն եկող առանցք-թելերու մազաչիններուն հետ: Անոնց թե՛ առանցք-թելերը և թե՛ պրոտոպլազմիկ վերջավորութիւնները զուտ ներքին են, մեծ ուղեղի սահմաններեն դուրս չեն գար: Այս արտաքին աշխարհի հետ անմիջական կապեր չունեցող մասերը կանվանեմ ներկապ կեղրոններ: Ներկապ կեղրոններուն նոյրոնները կապված են կա՛մ իրար հետ, կա՛մ կեղևի արտակապ կեղրոններուն հետ. արդեն իրենք ալ նոր սերունդ մըն են պատկերացման այդ արտակապ նոյրոններուն:

Ուրեմն մեծ ուղեղի գորշ կեղևը բաղկացած է երկու տարբեր տեսակի նոյրոններե՝ արտաքին ջղային կեղրոններու հետ անմիջական հարաբերութեան մեջ եղող թե՛ չարժիչ և թե՛ զգայական կեղրոններե և արտաքին ջղային մասերու հետ անմիջական հա-

բաբերութ֊յան մեջ չեղող, միայն արտակապ նոյրոններու միջնորդութ֊յամբ անոնցմե ազդվող և անոնց վրա ազդող չարժիչ և զգայական ներկապ կեդրոններե:

Որքան կենդանին նախնական աստիճան է, այսինքն՝ որքան նվազ է իր չարժունակութ֊յունը, այնքան քիչ կգործեն զգայարանքները, մանավանդ հեռզգա զգայարանքները, և որքան քիչ են զարգացած մտավոր կարողութ֊յունները, այնքան փոքր են համեմատաբար արտակապ մասերուն մեջ խրված այդ ներկապ մասերը. կենդանիներու մտավոր աչխատանքի զարգացման զուգընթաց կաճին ու կչատնան այդ ներկապ ուղեղային դաշտերը իրենց միլիարտավոր ներկապ նոյրոններով:

Բարձր միջատներու վերին աճմունքը, որ ողնավոր կենդանիներու մեծ ուղեղին կհամապատասխանե, մասնավոր կերպով համապատասխան է կեղևի արտակապ կեդրոններուն: Անշուշտ բոլորովին ժխտել ներկապ նոյրոններուն գոյութ֊յունը հոն ալ ո՛չ կարելի է, ո՛չ ալ հավանական. հոն ալ անշուշտ կան արտակապ մեծ զանգվածներուն մեջերը խրված դիցուք և շատ ավելի համեստ չափերով ներկապ կտորներ ու կուտակումներ: Բայց հիմնական և ընդհանուր տիրապետող տարրը արտակապ նոյրոններու զանգվածներն են:

II. ՄԵԾ ՈՒՂԵՂԻՆ ԹԵԼԵՐԸ

1. ՆԵՐՔԻՆ ԹԵԼԵՐ

Մեծ ուղեղի կեդրոնական՝ճերմակ մասը կկազմեն մեծ ուղեղին թելերը:

Ատոնց մեկ մասը ներքին են, այսինքն՝ միայն կեղևային նոյրոնները կկապեն իրարու և մեծ ուղեղեն դուրս չեն գար. կրնան ըլլալ արտակապ կամ ներկապ նոյրոններու առանցք-թելեր կամ պրոտոպլազմիկ վերջավորութ֊յուններ ավելի կամ պակաս երկարութ֊յամբ:

Ներքին հաղորդակցութ֊յան .այս թելերը կանվանենք աղեղ-

նաձև թելեր, երբ նույն ուղեղային ծալքի կամ հարևան երկու ծալքերու նոյրոնները իրարու հետ հարաբերութեան կդնեն:

Երկարաձև թելեր կանվանենք, երբ նույն կիսագունդի իրարմե քիչ-շատ հեռավոր մասերը իրարու միացնող լարեր կազմեն. չորս հատ են երկարաձիգ թելերուն այդ լարերը: Երկայնքի վերին լարը, որ կեղևին զուգահեռական ճակտի հատվածեն կերթա ծոծրակի հատվածը: Երկայնքի վարին լարը, որ ծոծրակի հատվածեն կերթա դեպի քունքի հատվածին ծայրը: Օղակաձև լարը, որ քունքին ծայրեն ոլոր կուտա կոչտ մարմնին վրայով ու կերթա ճակտի հատվածը: Եվ ունկի լարը, որ ճակտի հատվածի ստորին մասերը կմիացնե քունքի ծայրին:

Կցուկի թելեր կանվանենք ներքին թելերու երրորդ տեսակը, որոնք մեծ ուղեղի երկու կիսագունդերուն իրար համապատասխանող կտորները կմիացնեն իրարու. և երեք ճամբա ունին՝ կոչտ մարմինը, եռանկյունաձև մարմնի հորիզոնական մասերը և անոնց առջևի ճերմակ միացուկը:

Կոչտ մարմինը կազմված է թելերե, որոնք կիսագունդի մը կեղևին բոլոր մասերեն ժողվվելով՝ ամուր խտացումով և իրարու զուգահեռ հորիզոնական դիրքով կանցնին հակառակ կիսագունդը և անցնելուն պես կբաժնվին իրարմե ու կճառագայթեն դեպի իրենց ծագման համապատասխանող ծալքերը:

Կեղևին վրա երկու տեղ կա, ուրկե թելեր չեն գար դեպի կոչտ մարմինը. ատոնք են քունքի ծալքին ներքին երեսը և անոր կից բարակ գոտի մը, որ քունքի ծայրին շարունակութիւնը կկազմե կարծես եռանկյունաձև մարմնի եզերքն ի վեր. այս երկու կտորները, որոնք հոտառութեան կպատկանին, իրենց դիմացի համապատասխան կտորներուն կկապվին առջևի ճերմակ միացուկով և եռանկյունաձևի հորիզոնական թելերով: Առջևի ճերմակ միացուկը կմիացնե մեկ կիսագունդի հոտառական այտուցքը և կեղևի հոտառական կեդրոնը մյուս կիսագունդի նույն մասերուն:

2. ԲԱՐՁՐԱՑՈՂ ԹԵԼԵՐ

Բարձրացող թելերը բնականաբար զգայական են. ատոնք առանցք-թելեր են միջնակ ուղեղի զանազան զգայական կորիզներու մէջ նստած նոյրոններու և կուգան կվերջանան կեղևի իրենց Հատուկ զգայական կեդրոններուն նոյրոններու մազայիններուն վրա:

Հոտառութեյան ջիղընկալ կեդրոնն է Հոտառական երկարավուն այտուցքը միջնակ ուղեղի ծայրին. Հոտկե առանցք-թելերը, անցնելով Հոտառական այտուցքի ամբողջ երկայնքովը, երեք լարով կերթան Հակառակ կողմի կեղևի Հոտառական կեդրոնները, որ, ինչպես տեսանք, քիմքի ծալքին ներքին երեսի առջևի մասն է և իրեն կից գորշ երիզը:

Լսողութեյան ջիղընկալ զույգ կորիզներեն միջնակ ուղեղի առջևի ու ետևի լարերով անոնց առանցք-թելերը կուգան մասամբ կվերջանան ետևի քառյակ պտուկներուն մեջ, մասամբ անոնց կից մասերը, իսկ մեծագույն մասը կերթան ավելի առաջ ու կվերջանան ծնկային կորիզին մեջ, որոնց նոյրոններուն առանցք-թելերն են Հավանորեն, որ կմտնեն մեծ ուղեղը ու կերթան վերջանալու քունքային մասի դուրսի մասի իրենց Հատուկ կտորին վրա:

Տեսողութեյան ջիղընկալ կեդրոններեն՝ արտաքին ծնկան մարմնեն և pulvinar[46]-են անոնց առանցք-թելերը ներքին պատյան կոչվող ճամբով կմտնեն մեծ ուղեղը ու կերթան կվերջանան մեծ ուղեղի ետևի ծայրը տեսողական կեդրոնին մեջ մեծ ուղեղի կեղևին:

Շոշափական զգայութեյունները՝ Հպում, ճնշում, տաք ու պաղ, ինչպես և մկանային-Հոդային զգայութեյունները կերթան դեպի միջնակ ուղեղին գլուխը երկու ճամբով՝ կարճ ճամբով մը ուղղակի միջնակ ուղեղի բունով և երկար ճամբով մը փոքր ուղեղի մեջեն անցնելով:

Թիկունքի կանկլիոններեն և Քլարքի սյուներու նոյրոններեն առանցք-թելերուն մեկ մասը կուգա Կոլ ու Պուրտախի առաասաններով միջնակ ուղեղի նույնանուն զույգ միջնորդ կորիզները և

Հոնկե մեկ մասը Ռեյլի ժապավենով կբարձրանա տեսողական չերտերուն վրա և կվերջանա. ասիկա զգայական կարճ ճամբան է:

Կոլ ու Պուրտախի թելերուն մեկ մասը, ինչպես և կողմնակի երիզներով Քլարքի այուներեն եկող առասանները փոքր ուղեղի ետևի թևերով կմտնեն փոքր ուղեղը ու կվերջանան վրայի որդի կեղևին վրա, որուն առանցք-թելերը կերթան կնդրոնի ատամնավոր կորիզը և կորիզի միջով կելլեն կարմիր կորիզին մոտերը միջնակ ուղեղի բունին մեջ. մեկ մասը ցրիվ գորշ մասերուն վրա, մեծ մաս մըն ալ կերթան կվերջանան նորեն տեսողական չերտերուն վրա փոքր ուղեղի այս ավելի երկար ճամբով:

Այս բոլոր մերձզգա զգայութիւններուն գրգիռները տեսողական չերտերու նոյրոններուն առանցք-թելերովը կմտնեն մեծ ուղեղը ու կհասնին Ռոլանտի ակոսին ետևի անմիջական մասերը:

3. ԻՋՆՈՂ ԹԵԼԵՐ

Մեծ ուղեղեն իջնող թելերը բնականաբար բոլորն ալ շարժիչ առանցք-թելեր են, որ հրամաններ կտանին շարժման միջնակ և ողան ուղեղներուն. և այդ շարժիչ առանցք-թելերուն նոյրոնները նստած են Ռոլանտի ակոսին առջևը գտնվող անմիջական գորշ մասերուն մեջ:

Կեղևեն եկող այդ թելերը գծավոր մարմնի ներքին պատյան կոչվող ճերմակ անցքով կմտնեն միջնակ ուղեղի սրունքները և կկազմեն այդ սրունքներուն ամենեն առջևի դուրս ցայտած մասը: Սրունքային այդ ցայտքի ներքին մեկ հինգերորդ մասը կգրավեն միջնակ ուղեղի բունին հատկացված թելերը. միջին երեք հինգերորդ մասը կգրավեն «բուրգի առասան» կոչվող դեպի ողնուղեղի առջևի կոտոշները մեկնող թելերը. իսկ արտաքին մեկ հինգերորդ մասը կկազմեն փոքր ուղեղին համար սահմանված թելային թոկերը:

Ներքին մեկ հինգերորդը, քանի սրունքներեն դեպի վար կսահի, այնքան կնվազի՝ իր թելերը բաժնելով ու ղրկելով միջնակ ուղեղի գլխու և կոթի կորիզներուն. մինչև երկար ուղեղին հաս-

նիլը բոլորովին կհատնի: Արտաքին մեկ հինգերորդը կմտնե ամբողջովին կամուրջ-ուղեղը՝ կամուրջի ցրիվ գործութիւններու միջոցով մեծ ուղեղին հրահանգները փոքր ուղեղին հասցնելու համար: Եվ միայն միջին երեք հինգերորդ մասն է, որ կհասնի երկար ուղեղին և կկազմե ողնուղեղ գացող բրգային առասանը:

Մեծ ուղեղի չարժիչ ճամբան ալ երկու տեսակ է՝ կարճ ճամբա մը և երկար ճամբա մը: Կարճ ճամբան զգայարանքեն մինչև մկան կանցնի վեց նոյրոնով՝ կանկլիական նոյրոն, ջիղընկալ զգայական նոյրոն, տեսողական չերտերուն նոյրոնը, կեղևային զգայական նոյրոն, կեղևային չարժիչ նոյրոնը և ջղածին չարժիչ նոյրոնը:

Երկար ճամբան նորեն փոքր ուղեղի միջամտութիւնը ունի: Կանկլիական նոյրոնեն, զգայական ջիղընկալ նոյրոնեն, տեսողական չերտերեն, կեղևային զգայական նոյրոնեն, կեղևային չարժիչ նոյրոնեն սրունքներու արտաքին մեկ հինգերորդ մասով կհասնին կամուրջ-ուղեղը. կամուրջի նոյրոնեն, փոքր ուղեղի միջին թևերով կհասնին փոքր ուղեղի կիսագունդերու կեղևի նոյրոնին. այդ նոյրոնեն, կեղրոնի ատամնավոր կորիզի նոյրոնեն միջնակ ուղեղի չարժիչ կորիզի մը կամ կարմիր կորիզին և հոտկե ողան ուղեղի կոտոշի չարժիչ նոյրոնին և հոնկե մկանին: Այսինքն՝ 8-9 նոյրոններու աշխատակցութեամբ կազմված անդրադարձական աղեղ մը:

Ինչպես զգայական, այնպես և չարժիչ երկար ճամբաներուն պատճառը փոքր ուղեղ հանդիպելն է հոսանքի. այսինքն՝ հավասարակշռութեան պահանջներուն կծառայե՝ կա՛մ տեղեկացնելով մեծ ուղեղին, կա՛մ հրահանգ ստանալով մեծ ուղեղեն:

Բ. ՄԵԾ ՈՒԼԵԼԻՆ ԴԵՐԸ

Ի. ՀԻՇԵԼ ՈՒ ՄՏԱԾԵԼ

1. ԱՐՏԱԿԱՊ ՆՈՅՐՈՆՆԵՐՈՒՆ ԴԵՐԸ

Ինչպես անողն կենդանիներու վերին աճմունքը, այնպես ալ անոր համապատասխանող ողնաւոր կենդանիներու արտակապ կեղրոնները կծառայեն գրգիռներու զգայացման և պատկերացման:

Կեղևային արտակապ զգայական զանազան մասերու գրգռվիլն է, որ իբրև որոշ զգայութիւն մը կզգանք: Մինչև մեծ ուղեղ ունինք գրգիռներ և գրգիռներու փոխադրութիւն ու փոխանցում, բայց չունինք զգայութիւն, այսինքն՝ գիտակցում, ըմբռնում գրգիռներու իբրև տարբեր-տարբեր տեսակի ուրույն երևույթ մը: Կեղևի որոշ արտակապ մասերու գրգռվիլն է, որ իբրև լույս կզգանք կամ գույն, ուրիշ որոշ մասի մը գրգռվիլը՝ իբրև ձայն կամ իբրև համ, իբրև հպում: Գրգիռները զգայութեան վերածողը արտակապ զգայական նոյրոններն են. ատոնց առաջին դերը ուրեմն զգայացումն է գրգիռներու:

Արտակապ զգայական նոյրոններու երկրորդ դերն ալ ուրեմն պատկերացումն է՝ կապակցելով, խմբելով, միացնելով իրարու միասին ստացված գրգիռները. պատկեր անվանածնիս կա՛մ միասին, կա՛մ իրարու ետևե ստացված զգայութիւններու մնայուն կապակցութիւն մը ըսել է. և այդ տեսակի զգայական կապակցութիւններու չատ մը մասերով իրարու հետ նույն եղող նման բազմաթիվ ստացումներու իրարու հետ ցանց կազմած ամբողջութիւններն են, որ մտակապուկ անվանեցինք:

Այդ ավելի կամ նվազ բարդ, ավելի կամ նվազ ծավալուն մտակապուկները միշտ դուրսի իրականութիւններ են, այնպես, ինչպես որ դուրսեն ստացվեր են, այն դասավորութեամբ, այն մասերով և այն փոխադարձ համեմատութեամբ, ինչպես որ դուրսեն եկեր են: Ամեն մեկ մտակապուկ փունջ մըն է նման հիմնական

մասեր ունեցող բազմաթիվ ստացումներու. իսկ յուրաքանչյուր ստացում իրական ու եզական դրոշմ մըն է անգամ մը եղածի: Մտակապուկի մը ամբողջական ցանցը իրարու վրա ինկած ստացումներու երբեմն խիստ խճողված, կցված, լրացված, ուրեմն չինված մտավոր գոյացութիւն մըն է, բայց իր հիմքը եղող բոլոր ստացումները իրական և մշտապես մնայուն պատկերացումներ են:

Ամեն մտակապուկ կեղևային գրեթե բոլոր զգայական կեդրոններուն պատկանող անհամար նոյրոններու գործակցութիւն մըն է, այդ գործակցութիւնը ալ անոնց միջև կազմված են բանուկ ճամբաներ: Այդ մնայուն բանուկ ճամբաներուն գոյութիւնն է, որ կդառնա պատճառ հոգեկան նոր երևույթի մը. երբ մտակապուկի մը բաղադրիչ մասերեն քանի մը հատը նորեն դուրսեն գրգռվելու ըլլա, դուրսեն ստացված գրգիռին հոսանքը այդ բանուկ ճամբաներով կանցնի նաև, կրնա անցնիլ, հիմա դուրսեն չգրգռված մասերը և այդ մասերն ալ կվերարտադրվին, կպատկերանան մեր մտքին դեմ: Ներքին այդ մնայուն ճամբաներով հիմա դուրսեն չգրգռված նոյրոնական զանգվածներու վերարտադրվիլն է, որ կանվանենք հիշել:

Շուն մը անգամ մը վրա նետվեցավ կատվին. երբ կատուն չունը կամ շուն մը կտեսնե, կհիշե իսկույն վտանգը: Վարդի խոշոր թուփե մը, բարեկամիս պարտեզին մեջ, օր մը չքեղ վարդ մը քաղեցի կամ քաղեցին ու նվիրեցին ինծի: Հիմա ձմեռ է և պարտեզը առատ ձյունի տակ, բայց երբ քալելով կմոտենամ այն վարդի թուփին, կհիշեմ իսկույն այն չքեղ կարմիր վարդը, այն սքանչելի ամռան իրիկունը և վարդը ինծի նվիրողը, պարտեզին ամբողջ պատկերը և բազմաթիվ ուրիշ մանր դեպքեր, որոնք ստացված ու կապված են մտքիս մեջ այդ վառ վարդի քաղումին հետ:

Հիշել կնշանակե մեր մտքին մեջ միասին ստացումով իրարու կապված մտակապուկի մը մեկ մասի արտաքին գրգռումով վերակենդանացումը տարածել և հասցնել ներքին բանուկ ճամբաներով այդ ամբողջութեյան հիմա դուրսեն չգրգռված մասերը: Հիշել կնշանակե մտակապուկի մը հիմա իրականութեյան մեջ չեղած մասերը լրացնել կարողանալ ներքին ճամբաներով: Այսինքն՝

տեսնել չեղածը, լսել գոյութիւն չունեցող ձայնը և զգալ գոյութիւն չունեցող շոշափումը: Ասով ալ մտած ենք արդէն գուտ մտային ստեղծագործութեան աշխարհը:

Զգայական արտակապ կեդրոններուն դերը ուրեմն էապես երկք է՝ ա) Մեծ ուղիղը հասած գրգիռները զգայութեան վերածել, զգայացնել: բ) Պահել միասին ստացված զգայական կապակցութիւնները, թէ՛ մեկ անգամ մը միայն պատահածը և թէ՛ բազմաթիվ անգամներ կրկնված կապակցութիւնները իրենց ամեն անգամվան կողմնակի հավելվածներով ու փոփոխութեամբ, այսինքն՝ պատկերացնել, մնայուն դարձնել պատկերացումը և մտակապուկնեը կազմել: գ) Հիմա չեղած բայց ուրիշ անգամ մը կամ ուրիշ անգամներ եղած մասերը մտակապուկներուն վերակենդանացնել կարողանալ բանուկ ճամբաներով, այսինքն՝ հիշել:

2. ՆԵՐԿԱՊ ԿԵԴՐՈՆՆԵՐՈՒՆ ԴԵՐԸ

Ներկապ մասերուն նոյրոնները ծնունդ են արտակապ նոյրոններուն. նոր սերունդ մը զգացման, պատկերացման և հուշի, որոնք սակայն մեծ ուղեղեն դուրս անմիջական կապեր չունին. մեծ ուղեղեն դուրս գրգիռներ կղրկեն և գրգիռներ կստանան իրենց ծնող նոյրոններու միջոցով. իրենք կապեր ունին միայն իրենց մայրերուն հետ և իրարու հետ: Վիճակի այս հիմնական տարբերութիւնը տարբերութիւն կբերե նաև իրենց բնածին կարողութիւններու գործադրութեանը մեջ:

Ներկապ մասերու զգայական նոյրոններն ալ զգայացման նոյրոններ են անշուշտ, այսինքն՝ հասած գրգիռները կվերածեն զգայութեան և կկազմեն զգայական կապակցութիւններ բանուկ ճամբաներով. բայց եթէ ասոնց կազմած ու մթերածն ալ ըլլար նույն մտակապուկները, որ կկազմեն ու կմթերեն արտակապ կեդրոններու մեջ նստած իրենց մայրերը, ներկապ կեդրոններու նոր սերունդին կատարածը կղառնար կրկնութիւն մը և շատ ավելի տկար ու ավելորդ կրկնութիւն մը, քանի որ զգայարաններու հետ շատ ավելի անմիջական հարաբերութիւններ ունեցող իրենց

մայրերը իրենցմե առաջ կկատարեն այդ գործը իրենցմի ավելի նպաստավորված պայմաններու մեջ:

Ամբողջ մտակապուկ մը նորեն երկրորդ անգամ կազմել ու պահել մտքի ցանցին մեջ բոլորովին նույն ձևով կդառնար անիմաստ. բայց իրենց բնածին կարողություններու քիչ մը այլ ձևով գործադրումը, իբրև հետևանք իրենց նոր վիճակին, կառաջացնե քիչ մը տարբեր տեսակի պատկերներ. մտակապուկներու մթերանոցին քովը կառաջանա նոր տեսակի պատկերներու մթերանոց մը, որ և կդառնա հիմք մտավոր նոր զարգացումներու և հոգեկան նոր բարձրացման:

Առաջին տարբերությունը, որ կմտնե ներկապ պատկերացման մեջ, մտակապուկներու մասնատումն է. խոշոր ու քարացած մտակապուկի մը բաղադրիչ կարևոր մասերը կանջատվին իրարմե իբրև առանձին պատկերացումներ: Ներկապ մասերուն մեջ տեղի ունեցող այս երկրորդ պատկերացումը ընդհանրապես շատ ավելի տկար է լուսավորված, որով ամենեն ավելի շարժուն, կենդանի, ցայտուն ու լուսավոր և կրկնվող մասերը հստակ կդրոշմվին, իսկ ատոնց մեջեն ավելի երկրորդական, անցողական ու անհետաքրքիր մասերը չեն դրոշմվիր և հետևանքը կըլլա, որ մինչդեռ արտակապ ցանցին մեջ ամեն մտակապուկ իր կարևոր ու անկարևոր կտորներով անբաժան ամբողջություն մըն է ըմբռնված ու ամուր մթերված, հոս այս ներկապ կեդրոններու ցանցին մեջ մտակապուկներու այդ ձույլ անբաժանականությունը հետզհետե կփշրտի և մտակապուկին բաղադրիչ կարևոր մասերը իրենք իրենց համար իբրև առանձին բան մը կդրոշմվին, իբրև զատ և ինքնուրույն պատկեր մը:

Դաշտին մեջ որսորդը իր չան հետ ելած է որսի. նչան կառնե և հրացանը կարձակե. թռչունը ծառի ճյուղեն վար կիյնա. չունը կվազե, կխածնե ու կբերե: Մարդու, չան, նաև ուրիշ թռչունի մը արտակապ կեդրոններուն մեջ անհիկա կենդանի դրոշմված, բոլորովին իրական ու ամբողջական մտակապուկ մըն է: Եթե մարդը իր չան հետ այս տեսակ քանի մը որսեր է ըրած կամ հաճախ որսեր է ըրած, մարդու և չան արտակապ կեդրոններուն մեջ այդ բոլոր իրական ու կենդանի ամբողջությունները դրոշմված են

իրարու վրա ու կկազմեն անոնց մտավոր արտակապ ցանցին մեկ բարդ ու բաղադիր մտակապուկը: Բայց այդ նույն մարդու, նույն չան, նաև նույն դիտող թռչնակի մտքի ներկապ մասերու ցանցին մեջ մարդը, չունը, թռչնակը, ծառը, դաշտը, հրացանը, հրացանի պայթյունը, հետզհետե նաև թռչունի վար իյնալը, չան վազելը պատված են իրարմե և դարձած են առանձին-առանձին պատկերացումներ:

Ներկապ պատկերացման երկրորդ տարբերությունն ալ կբխի առաջին տարբերութենեն. արտակապ կեդրոններու մեջ դրոշմված ամեն մտակապուկ կա՛մ իրական ու եզական դեպքի մը ամբողջական պատկերացումն է, կա՛մ իրական ու եզական դեպքերու իրարու վրա դրոշմված պատկերացումներ. երբ այդ պատկերացումները կվերակենդանանան, միշտ իրական ու եզական դեպք մըն է, որ կներկայանա, կամ իրար հաջորդող քանի մը իրական ու եզական դեպքեր: Արտաքին իրականության, իսկապես պատահած իրողության մթերանոցն է արտակապ կեդրոններուն ցանցը. մասնավոր պատահարներու հավաքածու: Ներկապ կեդրոններուն մեջ դրոշմված ու պահված պատկերացումները այլևս միայն մեկ մտակապուկի մը, միայն մեկ պատկերացումի մը մասը չեն. չեն պատկանիր ոչ մեկ անխզելի ամբողջության. իրենք իրենց համար են, անջատ. անջատություն մը, որ իրականության մեջ չկա. իրականության կտորներ են, որ շատ մը մոտավոր ու հեռավոր եզական պատկերացումներու մեջ կրնանք հանդիպիլ. և եզական չըլլալով՝ ավելի անկենդան, ավելի անորոշ, ավելի ընդհանուր պատկեր մըն են:

Այսպիսով՝ արտակապ մասերու կենդանի, իրական ու եզական պատկերացումներե կազմված մտակապուկներուն դեմը ներկապ մասերու մեջ կկազմվին շատ ավելի պարզ ու փոքր, շատ ավելի անկենդան, շատ ավելի ընդհանուր, շատ ավելի մեկուսի մտային պատկերացումներ, որ այլևս մտակապուկ անվանել չենք կրնար, այլ կանվանենք մտապատկեր:

Մտապատկերը մտքի չինածն է, տեսակ մը արվեստական, թեև քաղված իրականություններուն վրայեն. իր հատկությամբ, կենդանությամբ և իրականությամբ շատ ետ կմնա մտակապուկ-

ներու պատկերացումներեն. բայց այդ բոլորը տուժելով ձեռք է բերած միայն ազատ ու անկախ գոյություն մը մտակապուկներեն. այսինչ կամ այնինչ մտակապուկի մեկ անխզելի ու անբաժան մասը չէ, այլ ինքն իրեն համար լոկ պատկերացում մը: Իր այս լոկ ու ազատ ըլլալովն է, որ մտապատկերը կդառնա հիմքը ավելի բարձր հոգեկան կարողություններու ավելի բարձր տեսակի մտավոր աշխատանքի: Միտքը մինչև որ իր դուրսեն ստացած ու քարացած մտակապուկները չփշրեր, չմասնատեր և ուրույն գոյություններու չվերածեր, չէր կրնար ստեղծել մտավոր նոր ու ազատ ու կամայական կապակցություններ, չէր կրնար իր ուզած ձևով մտապատկերե մտապատկեր անցնիլ, չէր կրնար շեղիլ, չէր կրնար դուրս գալ մտակապուկներու պարտադրած ճամբաներեն:

Մտակապուկներու ճամբաներով միտքը միայն հիշել ունի, այսինքն՝ արդեն անգամ մը եղածի վերարտադրությունը: Մտապատկերներու կապակցությունները, մտապատկերներու իրար արթնցնելը, մտապատկերե մտապատկեր անցնիլը շատ ավելի ազատ է, շատ ավելի բազմակողմանի ճամբաներով և շատ ավելի անկախ ճամբաներով: Մտապատկերե մտապատկեր անցնիլն է, որ կանվանենք մտածել: Ներկապ նոյրոններու ծնունդին և աշխատանքին հետ ծայր կուտա մտածողությունը, որ միայն եղածը հիշել չէ, այլև չեղածը պատկերացնել, երևակայել, ենթադրել:

Այսպեսով՝ ներկապ կեդրոններուն դերը կդառնա երկու բան. նախ՝ ավելի ընդհանուր ու զատ մտապատկերներու ստեղծումը և երկրորդ՝ այդ մտապատկերները նոր ու բազմատեսակ կապակցություններու մեջ դնելով մտապատկերե մտապատկերի անցնիլը, այսինքն՝ մտածումը:

II. ԸՆԵԼԻՔԸ ԸՆՏՐԵԼ

Ինչ որ մեծ ուղեղի աշխատանքը մեծ ուղեղեն վար եղած ջղային մասերու անդրադարձությենեն կզանազանե՝ պատկերացման նոյրոններու անդրադարձության շղթային մեջ մտնելն է: Եզերային նոյրոնեն եկած գրգիռը, փոխանակ զգայական

կեդրոնեն ուղղակի չարժիչ կեդրոնը և հոնկե ալ մկանին անցնելու, վարի զգայական կեդրոնեն կբարձրանա մեծ ուղեղի զգայական կեդրոնը, հոնկե մեծ ուղեղի չարժիչ կեդրոնով վարի չարժիչ կեդրոնը իջնելու և հոնկե մկանին անցնելու: Նախնական ավելի պարզ անդրադարձուԹյունը կփոխարինվի պատկերավոր անդրադարձուԹյամբ: Վերի ուղեղին պատկերացումը կմտնե անդրադարձուԹյան մեջ:

Նախնական ավելի պարզ անդրադարձուԹյան մեջ չարժման դրդողը զգայարանական եզերային նոյրոններն են. ըստ այդ ստացված գրգիռներու և ըստ արդեն կազմված բանուկ ճամբաներով տեղի կունենա չարժումը: Պատկերներու միջամտուԹյունը ահա կփոխե պայմանը. զգայարանքեն եկած գրգիռները անմիջապես չարժում չեն առաջացներ, նախ կերԹան կարԹնցնեն մեծ ուղեղի համապատասխան մտակապուկները և հոնկե է, որ կելլե չարժման հրամանը. իսկ մտակապուկ ըսածնիս բազմաԹիվ հին նույնատեսակ ապրումներու և նման պայմաններու մեջ մեր ունեցած փորձերուն ամուր պահված փունջն է. որով հիմակվան կատարվելիք չարժումին որոշումը տվողը միայն այդ վայրկյանի արտաքին զգայարանական դրդիչը չէ. արտաքին դրդիչը կարԹնցնե նման պարագաներուն մեր ունեցած փորձերը, նման պայմաններու մեջ մեր ունեցած ապրումները, այդ մասին մեր բոլոր գիտցածը և այդ մԹերված մտակապուկեն է, որ կելլե չարժման հրամանը: Կենդանին զգայարանքներու բերած գրգիռներուն կպատասխանե ո՛չ միայն այդ վայրկյանին իր տեսածն ու լսածը աչքի առաջ ունենալով, այլև այդ տեսածի ու լսածի չուրջ իր հին փորձերեն ու ապրումներեն իր մտքին մեջ կազմված մտակապուկը աչքի առաջ ունենալով: Ընելիքի արտաքին դրդումներուն կմիանան մտքի ցանցին ներքին դրդումները:

Բայց մտակապուկը ինքն ալ բանուկ ճամբաներու օրենքով կազմված, հաստատ ու մնայուն, ժառանգուԹյամբ, կրկնուԹյամբ ու վարժուԹյամբ ձեռք բերված ու ամրացած գոյուԹյուն մըն է. և իր տված որոշումը Թեև անշուշտ չատ ավելի խելացի է և պիտանի, քան միայն արտաքին դրդումով ստացված չատ ավելի պարզ ու չատ ավելի մեքենական անդրադարձուԹյունը, բայց ինքն ալ նո-

րեն մեքենականութիւն մըն է, քանի որ միշտ նույն հին փորձերուն և հին ապրումներուն վրա է հենված միշտ նույն ձևերով, նույն զգայական բանուկ ճամբաներով միևնույն հրամանները կուտա. անշուշտ շատ ավելի խելացի ու նպատակահարմար մեքենա մը. հոգեբանորեն անհամեմատ ավելի բարձր մեքենա մը. դարերու փորձով, սերունդներու միատեսակ կրկնութեամբ ստացված ու մշակված մեքենա մը, ինչ որ սովորաբար կանվանենք բնազդ:

Ներկապ կեդրոններու առաջացումով, մտակապուկներեն մտապատկերներու առանձացումով և ավելի ազատ ու բազմակողմանի կերպով այդ նոր չինված մտապատկերները իրարու հետ հարաբերութեան դնելով, երբ կենդանին կհասնի մտածողութեան, բնականաբար կփոխվի նաև մտքի միջամտութեան եղանակը անդրադարձութեան մինչև հիմա եղած ձևին մեջ:

Որչափ շատ զարգացած ըլլան այդ ներկապ կեդրոնները, ինչքան հաճախ միջամտեն անդրադարձություններու աշխատանքին, ինչքան ուժեղնա մտածելու վարժութիւնը, այնքան ավելի ներքին կեդրոնները կարևորութիւն կստանան անդրադարձութեան միջոցին, այնքան ավելի կխառնվին արտակապ կեդրոններու տված հրահանգներուն. հետզհետե կկոտրեն անոնց քարացած միակերպութիւնը՝ զանազան թեթև շեղումներ ու սրբագրութիւններ մտցնելով կատարվելիք շարժման մեջ, մտածելով, մտքի ներկապ նոր կապակցութիւնները աչքի առաջ ունենալով:

Կենդանին այս կամ այն շարժումը կընե նորեն իր զգայարանքներեն ղրկված, անշուշտ նորեն շատ մեծ չափերով իր արտակապ կեդրոններուն մեջ մշակված վարժութիւնով ու բնազդով, բայց հոս ու հոն կսկսի նաև որոշ կետեր փոխել ըստ վայրկյանի, ըստ պայմաններու պահանջած փոփոխութեան, ըստ իր նոր մտածումներուն:

Որով և հետզհետե կառաջանա երեք տեսակի շարժում ըստ իրենց ղրկիչներու՝ զուտ ու նախնական կույր անդրադարձութիւն, բնազդական մտակապուկային պատկերավոր անդրադարձութիւն, մտածումով, ամեն մեկ առանձին պարագայի հարմարվելով, ավելի անձնական և ավելի ազատ անդրադարձութիւն:

Այս նոր տեսակի մասնավոր ու ազատ անդրադարձությունը այլևս չենք անվաններ անդրադարձություն. անդրադարձություն բառը պահելով նախորդ տեսակներուն՝ այս նոր ու հավելյալ դրդումով կատարված շարժումները կանվանենք կամավոր շարժում: Անվանենք ով ինչպես կուզե, բայց միշտ աչքի առաջ ունենանք, որ հոգեկան զարգացումը կանոնավոր ելք մըն է աստիճանե աստիճան և որ կամավոր անվանածնիս բնազդական շարժումներուն մեկ նոր տեսակն է և բնազդական շարժումը ինքն ալ զգայարանական կույր անդրադարձության մեկ ավելի կատարելագործված տեսակն է:

Մարդկային մարմնի կատարած բոլոր շարժումները խորքին մեջ բոլորն ալ անդրադարձություններ են. շարժվող մկանները միշտ նույնն են, ինչպես և անմիջական շարժող ջղային կեդրոնները միշտ նույնն են, այսինքն՝ սիմպատիկի, ողնուղեղի և միջնակի կոթին շարժիչ նոյրոնները. աստիճանական զարգացումը բերողը այդ անմիջական շարժիչ նոյրոններու գլխուն աճած նոր տեսակի նոյրոնական սերունդներ են, նախ արտակապ կեղևային սերունդը, ասոնց վրան ալ ներկապ կեղևային նոյրոնները:

Կեղևային, այսինքն՝ մեծ ուղեղի, նոյրոններուն դերը այսպեսով անմիջական կույր անդրադարձության փոխարեն՝ կատարվող շարժումներուն մեջ ընտրություն մտցնելն է, մտքի միջոցով կատարվող ընտրություն մը: Կույր ու զուտ անդրադարձությունը արդյունք է բնական ընտրության, ո՛չ մտավոր: Պատկերավոր անդրադարձությունը արդեն մտքո՛վ կատարված ընտրություն է. հին փորձառություններու, հին ապրումներու մտակապուկեն եկող միակերպ ու տևական ընտրություն մը. սերունդներու և դարերու կատարած կամ առնվազն անհատի մը երկար կրկնություններով ձեռք բերած մնայուն ու միակերպ ընտրությունն է: Իսկ այս նոր ազատ անդրադարձությունը ավելի անկախ մտապատկերներով և այդ ներկապ նոր մտապատկերներու ավելի անձնական ու ավելի ազատ հարակցությամբ կատարված ընտրություն մըն է. ավելի անհատի կամեցումեն, անհատի այդ վայրկյանի մտածումեն ու տրամադրութենեն ծնունդ առած ընտրություն մը:

Մեծ ուղեղին դերը ընտրությունն է կա՛մ հին հուշերու վրա հենված, կա՛մ նոր մտածումներու:

III. ԻՄԱՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արդ՝ երբ կենդանին դուրսեն ու ներսեն ստացված զգայություններն ու պատկերները կմթերե իր մտքի ցանցին մեջ, երբ մթերածը կրնա վերստին վերարտադրել ու հիշել, երբ այդ դուրսեն ստացած մտակապուկները, իր ապրումները հետզհետե կմասնավորե և առանձին-առանձին մտապատկերներ կկազմե և այդ մտապատկերները իրարու հետ հարաբերության դնելով կսկսի մտածել, երբ կսկսի իր շարժումները կատարել հին հուշերու ու փորձերու վրա հենված և երբ մանավանդ իր նոր մտածումները, նոր դիտողությունները աչքի առաջ ունենալով, նոր պայմաններուն ու նոր վիճակներու հարմարվելով, այսինքն՝ ընտրելով կսկսի գործ տեսնել՝ կըսենք կենդանին հասած է հետզհետե հասկացողության: Կենդանին սկսած է հասկնալ իր շուրջը, դուրսի մասին բաներ մը գիտնալ. մտածողություններ ունենալ և այս նոր ներքին դրդումներուն և իմացումներուն հարմարցնել իր շարժումները: Հոգեկան զարգացման այս աստիճանը կանվանենք իմացականություն:

Իմացականության ծնունդը կապված է վերին աճմունքի կամ վերին ուղեղի կեղևային նոյրոններու զարգացման հետ. վերին աճմունքը և մեծ ուղեղն են իմացականության գործարանները: Բայց ինչպես բոլոր զարգացումները կենդանական մարմնին մեջ, իմացականության զարգացումն ալ կատարված է աստիճանաբար:

Իմացականության երեք գլխավոր աստիճանները կրնանք անվանել՝ հուշական, մտածական և բանական: Վերջին աստիճանի ուսումնասիրությունը, որուն հիմքը մարդկային խոսքն է և բառերու ստեղծումը և այդ բառերու բերած հոգեկան երևույթները, պիտի տեսնենք մարդկային հոգեբանության մեջ. մարդեն զատ ո՛չ մեկ կենդանի հասած չէ հոգեկան այդ բարձրության:

Նախորդ երկու աստիճանները՝ հուշականն ու մտածականը, ընդհանուր են մարդուն և կենդանիներուն. ավելի ցած տեսակի կենդանիներու ունեցածը հուշական իմացականութիւնն է, արտակապ կեղևային կեդրոններով կատարվող իմացական աշխատանքը, ուր իմացականութիւնը դեռ իր նախնական և ստորին զարգացման մեջն է. գրգիռները վերածել զգայութեան, ստացված պատկերները մթերել և հետզհետե անդրադարձութիւններու միջոցին օգտվիլ այդ ապրված ու մթերված պատկերացումներեն: Այս նախնական իմացականութեյան լույսը դեռ շատ տկար է. ունի միայն բնազդական իմացականութիւն մը, սերնդական իմացականութիւն մը, մեքենական իմացականութիւն մը, տեսակ մը անդրադարձ իմացականութիւն, ուր տիրողը անդրադարձութիւնն է. և իմացականութիւնը դեռ իր այն նախնական աստիճանին վրա է, որ ընդհանրապես կդժվարանանք իմացականութիւն անվանելու. այսինքն՝ հոգեկան զարգացման այն աստիճանը, որ տեսանք բարձր միջատներուն քով և որ անվանեցինք պատկերավոր անդրադարձութիւն:

Անդրադարձութեյան երեք աստիճաններն էին՝ նախնական անդրադարձութիւնը միահատված կենդանիի, հատվածական անդրադարձութիւնը հատվածական կենդանիներու. այս երկու աստիճաններուն մեջ դեռ չկա վերին աճմունք, անդրադարձութեյան երրորդ աստիճանը՝ պատկերավոր անդրադարձութիւնը, կուգա վերին աճմունքի նոյրոններուն մթերած պատկերներուն հետ, այսինքն՝ նախնական իմացականութեյան հետ:

Անդրադարձութեյան բարձր աստիճանը և իմացականութեյան ստորին աստիճանը իրար կծածկեն. և՛ անդրադարձութիւն են, և՛ իմացականութիւն, բարձր ու կատարելագործված անդրադարձութիւն մը, նոր սկիզբ առնող ու դեռ չհասունցած իմացականութիւն մը, և ատոր համար ալ փոխանակ իմացականութեյան կդասենք անդրադարձութեյան շարքը, իբրև պատկերավոր անդրադարձութիւն:

Որով իմացականութիւն բառը կմնա հատկապես ավելի բարձր մտածական իմացականութեյան համար, ավելի բարձր ողնաւորներու հոգեկան վիճակի անվանում, ուր ներկայ կեդրոն-

ները արդեն զարգացած են բավական և իրենց մտապատկերներով, մտածումներով և ավելի ազատ ընտրությամբ կմասնակցին կենդանիի կատարած շարժումներուն, ուր մտածողությունը, անձնական ու վայրկենական ընտրությունը և շրջապատող երևույթներու ըմբռնումն ու հասկացողությունը շատ ավելի չեշտված է, ակնհայտնի և սովորական:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լևոն Շանթի երկերի 8-րդ հատորն ընդգրկում է «ընկերաբանական» հարցեր արծարծող հրապարակախոսական չորս աշխատություններ՝ «Ազգությունը հիմք մարդկային ընկերության», «Մեր անկախությունը», «Անհավասարությունը ընկերային կյանքին մեջ», «Մտավորականություն և կուսակցություն», որոնք նա գրել է Մոնպելիեում 1922-23 թվականներին, ինչպես նաև «Հոգեկան կարողությունների զարգացումը մինչև մարդ» գիտական աշխատությունը:

ԱԶԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՔ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Հոդվածը գրվել է 1922 թ-ին Մոնպելիեում: Տպագրվել է Բոստոնի «Հայրենիք» ամսագրում. 1922, թ. 2 (դեկտեմբեր), էջ 13-22, 1923, թ. 3 (հունվար), էջ 15-25, թ. 4 (փետրվար), էջ 62-80, այնուհետև Լ. Շանթի երկերի Բեյրութի 2 հրատարակությունների V հատորներում, որտեղից էլ արտատպվում է:

1. Հոմերոս–Հին Հունաստանի էպիկական լեգենդար բանաստեղծ, ում վերագրվում են «Իլիական» և «Ողիսական» պոեմները: Հոմերոսի ծննդավայր համարվելու պատվի համար վիճել են յոթ քաղաքներ՝ Զմյուռնիան, Քիոսը, Կոլոփոնը, Սալամինը, Հռոդոսը, Արգոսը, Աթենքը: Տարբեր կարծիքներ են եղել նաև Հոմերոսի ապրած ժամանակի մասին՝ մ. թ. ա. 12-7-րդ դդ.:

2. Հերոդոտոս–Հույն պատմիչ (մ. թ. ա. մոտ 485, Հալիկառնաս – մ. թ. ա. մոտ 425): Առաջին պատմիչն է, որը գրել է համաշխարհային պատմությունը՝ օգտագործելով բազմապիսի նյութեր՝ գրավոր և բանավոր աղբյուրներ, վիմագիր արձանագրություններ, ճանապարհորդությունների ընթացքում քաղած տեղեկություններ և այլն: Պայմանականորեն «Պատմություն» կոչվող նրա երկը հնագույն ժողովուրդների մասին պատմական, աշխարհագրական տեղեկությունների և գիտելիքների ինքնատիպ մի հանրագիտարան է: Այն առաջին պատմագրական հուշարձանն է, որտեղ հավաստի տեղեկություններ կան Հայաստանի և հայերի մասին, որոնք մեծ նշանակություն ունեն հայ ժողովրդի պատմության հնագույն շրջանն ուսումնասիրելու համար:

3. Սոկրատես–Հույն փիլիսոփա (մ. թ. ա. 469, Աթենք – 399, Աթենք): Հայացքները շարադրել է բանավոր, և դրանց բովանդակությունը դժվարությամբ հնարավոր է եղել բացահայտել այլ աղբյուր-

ներից (Պլատոն, Քսենոփոն և ուրիշներ): Նրա նշանաբանն է եղել հույն փիլիսոփա Քիլոնի «Ճանաչի՛ր ինքդ քեզ» ասույթը: Սոկրատյան իմաստասիրմանը նպաստել են սոփեստները: Ավանդական փիլիսոփայությունից անցում է կատարել բարոյականության փիլիսոփայությանը: Նրանն է «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ» դրույթը: Սոկրատեսի լուսավորական գործունեության և հատկապես դեմոկրատիայի դեմ ելույթների պատճառով նրան ներկայացրին երիտասարդության այլասերելու և աստվածներին չճանաչելու մեղադրանք, ապա՝ դատապարտեցին մահվան:

4. Էսխիլես– Էսքիլես, հույն դրամատուրգ (մ. թ. ա. 525, Էլևսիս – մ. թ. ա. 456, Սիցիլիա): Համարվում է ողբերգության հայրը: Նրա մոտ 90 ողբերգություններից մեզ են հասել 7-ը: Առավել հայտնի են «Պարսիկներ», «Յոթն ընդդեմ Թեբեի», «Ագամեմնոն», «Պրոմեթևսը չղթայված» գործերը:

5. Պլատոն– Պլատոն Աթենացի, իսկական անունը՝ Արիստոկլես, հույն փիլիսոփա, անտիկ իդեալիզմի խոշորագույն ներկայացուցիչը (մ. թ. ա. 428–348): Աշակերտել է Սոկրատեսին, ում մահապատժից հետո հեռացել է Աթենքից, կապեր է հաստատել պյութագորասականների հետ: Վերադարձել է Աթենք, հիմնադրել սեփական դպրոցը՝ Պլատոնյան ակադեմիան: Նրա գրական հարուստ ժառանգությունից մեզ են հասել 34 փիլիսոփայական երկխոսությունները, «Սոկրատեսի ջատագովությունը» ճառը, էպիգրամներն ու նամակները: Գլխավոր գործերն են՝ «Ֆեդոն», «Թեետետոս», «Խրախճանք», «Ֆեդրոս», «Մենոն», «Պարմենիդես», «Սոփեստ», «Տիմեոս», «Ֆիլեբոս», «Պետություն», «Օրենքներ» երկխոսությունները: Պլատոնի օբյեկտիվ իդեալիզմը հենվում է Սոկրատեսի «Համընդհանուրի», էլեացիների միասնական ու անչարժ գոյի և Պյութագորասի թվերի ուսմունքների վրա: Նա առաջ է քաշել «իդեաների» ուսմունքը՝ հռչակելով դրանք գերազույն գոյեր: Պլատոնի իդեալիզմը հին հունական փիլիսոփայության առաջին համակարգված աշխարհայացքն է, այն գիտակցված ձևով հակադրվել է մատերիալիզմին:

6. Արիստոտել–Հույն փիլիսոփա և գիտնական (մ. թ. ա. 384–322): Էգեյան ծովի ափին գտնվող իր ծննդավայր Ստագիր քաղաքից 367-ին գնացել է Աթենք և 20 տարի աշակերտել Պլատոնին՝ նրա Ակադեմիայում: 335-ին հիմնադրել է սեփական դպրոցը՝ Լիկեյոնը: Արիստոտելի փիլիսոփայական ուսմունքը հիմնականում շարադրված է «Մետաֆիզիկա» և «Հոգու մասին» աշխատություններում, տրամաբանության տեսությունը՝ «Ստորոգություններ», «Վերլուծականք», «Տեղերի մասին» և այլ երկերում, որոնք հետագայում ամփոփվեցին «Օրգանոն» ընդհանուր խորագրի տակ: Նրա սոցիալ-քաղաքական

հայացքները չարադրված են «Պոլիտիկա» և «Էթիկա» աշխատությունների: Պահպանվել են նաև մի քանի քնարգիտական երկեր:

7. Շեքսպիր Վիլյամ (1564 - 1616) - անգլիացի դրամատուրգ:

8. Փյունիկեցիք - փյունիկիացիներ, հնագույն սեմական ցեղեր, պատկանել են արևմտասեմական ցեղերի քանանական ճյուղին:

9. Միջին և Հարավային Ամերիկայի Հանրապետություններ- նկատի ունի Կենտրոնական (Գվատեմալա, Սալվադոր, Հոնդուրաս, Նիկարագուա, Պանամա, Կոստա Ռիկա) և Հարավային Ամերիկայի (Արգենտինա, Բոլիվիա, Բրազիլիա, Կոլումբիա, Պարագվայ, Պերու, Գայանա, Վենեսուելա, Ուրուգվայ, Չիլի, Էկվադոր և այլն) պետությունները և նրանց մարզաբանական և էթնիկական կազմը:

10. Գալիցիա- Գալիչինա, արևմտաուկրաինական հողերի պատմական անվանումը (այժմ՝ Ուկրաինայի Լվովի, Իվանո-Ֆրանկովսկի և Տերնոպոլի շրջանները): Գալիցիայում հայերն ապրել են դեռևս 12 - 13-րդ դարերում: 17-րդ դարում լեհական իշխանությունները Վատիկանի հրամանով Գալիցիայի հայերին պարտադրել են կաթոլիկություն, որից հետո հայերն աստիճանաբար ձուլվել են լեհերին:

11. Տրանսիլվանիա- պատմական մարզ Ռումինիայի հյուսիսում: 17-րդ դ-ից եղել է Հաբսբուրգների և Օսմանյան կայսրության պայքարի առարկա, կարևոր դեր է խաղացել Հաբսբուրգների դեմ հունգարական թագավորության պայքարում: Ավստրո-Հունգարիայի միապետության ստեղծումից (1867) հետո Տրանսիլվանիան Հունգարական թագավորության կազմում էր: 1920 թ-ի Տրիանոնի հաշտության պայմանագրով Տրանսիլվանիան տրվեց Ռումինիային: 1940-ին հյուսիսային մասը միացվեց Հունգարիային: Փարիզի հաշտության պայմանագրով 1947-ին հյուսիսային Տրանսիլվանիան վերադարձվեց Ռումինիային: Տրանսիլվանիայի հայերն ունեցել են նույն ճակատագիրը, ինչ Գալիցիայի հայերը:

12. Անգլո-սաքսոն ժողովուրդներ- անգլո-սաքսեր, 5-6-րդ դդ. Կելտական Բրիտանիան նվաճած գերմանական ցեղերի՝ անգլերի, սաքսերի, յուտերի և ֆրիզների ընդհանուր անվանումը: 7-10-րդ դդ. անգլո-սաքսերի և կելտական տարրերի՝ մասնավորապես բրիտների խառնուրդից կազմավորվեց անգլո-սաքսոնական ժողովուրդը: 1066 թ-ի նորմանական նվաճումից հետո անգլո-սաքսոնները, որոնք արդեն խառնվել էին Անգլիայի հյուսիս-արևելքում և հյուսիսում բնակվող հաստատուած դանիացիների և նորվեգացիների հետ, ձուլվեցին Ֆրանսիայից եկածներին, և սկզբնավորվեց անգլիական ազգությունը:

13. Սոնքացող - հպարտացող, պարծեցող, սիգացող:

14. Կանկլիոն հանգույցներ- գանգլիոններ, հուն.՝ հանգույց, նյարդային բջիջների, նյարդամթերքների և հարակից հյուսվածքների մեկու-

սացած կուտակումներ: Ունեն մարդը, ողնաշարավոր կենդանիները, ինչպես նաև որոշ անողնաշարավորներ: Վերջիններիի գանգլիոնները կատարում են կենտրոնական նյարդային համակարգի փոխկցիա:

15. Անթել–անթել, անլար հեռագիր: Հնոագրության հիմքը դրել է Պ. Լ. Շիլլինգը՝ 1832 թ-ին ստեղծելով էլեկտրական կլպի սարքավորումների առաջին համալիրը:

16. Լահեի խորհրդաժողով–նման անունով քաղաք և նման իրադարձություն որևէ աղբյուրում գտնել չհաջողվեց:

17. Ազգերու լիգա– Առաջին համաշխարհային պատերազմից (1914-18 թթ.) հետո միջազգային խաղաղությունը պահպանելու նպատակով ստեղծված կազմակերպություն: Հիմնադրվել է 1919 թ. Փարիզի հաշտության կոնֆերանսում: Սկսել է գործել 1920-ի հունվարի 10-ից: Ազգերի լիգայի ղեկավար մարմիններն էին՝ ասամբլեան, խորհուրդը և քարտուղարությունը՝ գլխավոր քարտուղարի ղեկավարությամբ: Ուներ մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, ինքնավար մարմիններ (Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Արդարադատության միջազգային մշտական պալատ և այլն): Աշխատատեղին ժնևն էր, պաշտոնական լեզուները՝ անգլերենն ու ֆրանսերենը: Պաշտոնապես լուծարքի է ենթարկվել 1946 թ-ի ապրիլի 18-ին: Ազգերի լիգան բազմիցս անդրադարձել է Հայկական հարցին, մասնավորապես՝ Հայաստանը Ազգերի լիգայի մեջ ընդունելու, Հայաստանի նկատմամբ մանդատ հաստատելու, 1920 թ. թուրքական ներխուժման, Թուրքիայի կազմում հայկական ազգային օջախ ստեղծելու և հայերին օգնելու կապակցությամբ: Հայաստանը Ազգերի լիգայի անդամ ընդունելու հարցը առաջ է քաշվել 1920 թ. մայիսին, սակայն մի քանի ամիսների քննարկումներից հետո մերժվել է՝ այն պատճառաբանությամբ, թե Հայաստանը «որպես պետություն դեռևս գոյություն չունի և չի կարող միջազգային պարտավորություններ ստանձնել»:

18. Քաֆր – կաֆրեր, Աֆրիկայի հարավում ապրող ժողովուրդ:

19. Փոքր ռուսներ– ուկրաինացիներ:

20. Մեծ ռուսներ– ռուսներ:

ՄԵՐ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

«Մեր անկախությունը» աշխատությունը Լ. Շանթը գրել է Մոնպելիեում 1922-23 թթ-ին, այն 1925 թ-ին տպագրվել է «Հայրենիք»-ի տպարանում, «Հայրենիք» մատենաշարով (թ. 1, Պոսթըն):

Այս աշխատությունից մի շարք հատվածներ քաղի տեսքով (այդպես էլ ենթավերնագրել է Լ. Շանթը՝ «Քաղ ընթացիկ հոդվածներու շարքե մը») որպես հոդված՝ «Անկախությունը պահանջ ազգային գոյության» վերնագրով, տպագրվել է Լևոն Շանթի երկերի ե հատորում (1948 թ., Բեյրութ, տպարան Հայ ճեմարանի):

Նույն քաղը առանձին դրքույկով հրատարակել է Երևանի պետական Համալսարանի հրատարակչությունը 1991 թ-ին:

Նույնությամբ այդ սեղմագիրը զետեղվել է նաև Լևոն Շանթի՝ 2008 թ-ին Բեյրութում հրատարակված երկերի ժողովածուի ե հատորում:

Ներկա հրատարակության համար հիմք է հանդիսացել 1925 թ-ին Բոստոնում հրատարակված «Մեր անկախությունը» հոդվածաշարը:

Պետք է նշել, որ «Անկախությունը պահանջ ազգային գոյության» հոդվածի (համապատասխանում է սույն հատորի 92-124, 151-190, 220-224 և 273-285 էջերին) և «Մեր անկախությունը» դրքի ուղղագրությունը որոշ բառերի և անունների դեպքում տարբեր է: Մենք հիմնվել ենք Բեյրութի 1948 թ. հրատարակության ուղղագրության վրա՝ որպես հեղինակի վերջին կամքի արտահայտություն:

1. Ազգերու լիգա–տե՛ս «Ազգությունը հիմք մարդկային ընկերության» հոդվածի ծանոթագրություն թիվ 17-ը:

2. Յանցեննկյանկ –Յանցզի (չինարեն՝ երկար գետ), Եվրասիայի ամենաերկար և ջրառատ գետը: Յանցզի գետի ավազանը (խոսանախե գետի ավազանի հետ մեկտեղ) հանդիսանում է չինական քաղաքակրթության օրրանը:

3. Ճափոնի ծով– Ճապոնական ծով, խաղաղ օվկիանոսի կիսափակ ծով Եվրասիա մայրցամաքի, Ճապոնական կղզիների և Սախալին կղզու միջև:

4. Արաբեսկ– երկրաչափական և ոճավորված բուսական մոտիվներով միահյուսված բարդ նախշ: Միջին դարերում մշակվել և լայն տարածում է գտել Մերձավոր Արևելքի արվեստում որպես արաբասնախշ: Կոչվում է նաև արաբենիք:

5. Բայքալ– Բայկալ լիճը:

6. Պալթիկ– Բալթիկ ծովը: Արալը Արալյան ծովն է:

7. Կարթագեն– Կարթագեն (փյունիկերեն՝ Կարթադաշտ՝ նոր քաղաք), ստրկատիրական քաղաք-պետություն Հյուսիսային Աֆրիկայում: Հիմնել են Տյուրոսից գաղթած փյունիկեցիները մ. թ. ա. 825 թ-ին: Մ. թ. ա. 149 թ-ին Հռոմը, երկյուղելով Կարթագենի տնտեսական հզորացումից, սկսեց Փյունիկյան երրորդ պատերազմը (մ. թ. ա. 149-146

թթ.), որի հետևանքով Կարթագենը եւամյա պաշարումից հետո լիովին ոչնչացվեց, իսկ բնակչությունը ստրկացվեց:

8. Դրական փիլիսոփայություն- պոզիտիվիզմ, 19-20-րդ դդ. փիլիսոփայության հիմնական ուղղություններից մեկը, ըստ որի՝ աշխարհի պատկերի ստեղծումը ոչ թե փիլիսոփայության, այլ մասնավոր դրական, գիտությունների խնդիրն է: Զբաղվում է ճանաչողության, հատկապես գիտության մեջ ծագող մեթոդաբանական և իմացաբանական խնդիրներով՝ փիլիսոփայության վրա տարածելով ճշգրտության գիտական չափանիշները:

9. Ոդիսևս – (լատ.՝ Ուլիսս, Ուլիքս) Հունական դիցաբանության մեջ իթակե կղզու առասպելական թագավորը, Լայերտեսի և Անտիկլեայի որդին, «Իլիական»-ի և «Ոդիսական»-ի հերոս: Այդ անունը Ոդիսևսին տվել է նրա պապը («Թող իմ թոռը կոչվի Ոդիսևս, այսինքն՝ զայրացնող»): Ըստ դիցաբանության՝ Ոդիսևսը լսեց Ագամեմնոնին ու Մենելաոսին և մասնակցեց հույների արշավանքին Տրոյայի դեմ՝ հակառակ անբարենպաստ գուշակություններին: Առասպելը պատմում է, թե Ոդիսևսին ամեն բանում օգնում էր Աթենասը: Ոդիսևսի խորհրդով են հույները պատրաստում տրոյական ձին: «Ոդիսական»-ում պատմվող արկածները տեղի են ունենում կործանված Տրոյայից վերադառնալու ճանապարհին:

10. Պալլաս Աթենաս- Հունական դիցաբանության մեջ Զևսի և Մետիսի դուստրը: Վախենալով, թե Մետիսը կծնի երեխա, որն իրենից ուժեղ կլինի, Զևսը կուլ է տվել Մետիսին (բառացի նշանակում է՝ իմաստություն), իսկ հետո իր գլխից ծնել Աթենասին: Համարվել է հավերժական կուսության, իմաստության և գիտության մարմնացում, խաղաղ աշխատանքի հովանավոր: Նա է սովորեցրել մարդկանց սանձել ձիերը, լծել եզները: Հնարել է գութանը, իլիկն ու ջուլհակի դազգահը:

11. Աֆրոդիտե – Հունական դիցաբանության մեջ Զևսի և օվկիանուհի Դիոնեի դուստրը: Ըստ դիցաբանության՝ ծնվել է Կիթարա կղզու մոտ, ծովի ալիքների ճյունաապիտակ փրփուրներից: Համարվել է սիրո, մայրության, գեղեցկության. սիրային կախարդության աստվածուհի: Եղել է ամուսնության ու սիրահարների հովանավոր, հաճույքների տիրուհի: Հետագայում՝ հեչտասիրության աստվածուհի:

12. Հոնիական ծով- Միջերկրական ծովի կենտրոնական մասը՝ Բալկանյան և Ապենինյան թերակղզիների, Կրետե և Սիցիլիա կղզիների միջև:

13. Վիգեր-անգլիական քաղաքական կուսակցություն (17-19-րդ դդ.): Առաջացել է 17-րդ դ-ի 70-ական թթ-ին որպես արիստոկրատիայի չահերն արտահայտող խմբավորում, որը դեմ էր թագավորական բացարձակ պետության վերականգնմանը: 19-րդ դ-ի կեսերին, միավոր-

վելով բուրժուական այլ քաղաքական խմբերի հետ, վերակազմավորվել են որպես Մեծ Բրիտանիայի լիբերալ կուսակցություն:

14. Թորիներ– անգլիական քաղաքական կուսակցություն, որն առաջացել է 17-րդ դ-ի 70-ական թթ-ի վերջին որպես բացարձակ միապետության կողմնակիցների խմբավորում: 19-րդ դ-ի կեսին Թորիների կուսակցության քայքայման հետևանքով ձևավորվել է Մեծ Բրիտանիայի պահպանողական կուսակցությունը, որի կողմնակիցներին ոչ պաշտոնական շարունակում են անվանել «Թորի»:

15. Նինվե– Ասորեստանի հնագույն քաղաքներից, ավերակները գտնվում են Իրաքի Մոսուլ քաղաքից ոչ հեռու՝ Տիգրիս գետի ձախ ափին: Եղել է ժամանակի ամենամեծ քաղաքներից մեկը: Մ. թ. ա. 7-րդ դ-ի 2-րդ կեսին Նինվեում ստեղծվել է խոշոր գրադարան, որը պարունակում էր 30 000 սեպագիր կավե սալիկ: Մ. թ. ա. 612 թ-ին Նինվեն կործանել են բաբելա-մարական զորքերը: Տիգրան Բ Մեծի ժամանակ (մինչև մ. թ. ա. 66 թ.) Նինվեն գտնվել է Հայաստանի կազմում:

16. Բաբելոն– Բաղդադ, Հին կտակարանում՝ Սենաար, Հնագույն պետություն Տիգրիս և Եփրատ գետերի ստորին ավազանում մ. թ. ա. 1894–539 թթ.: Կոչվել է գլխավոր քաղաք Բաբելոնի անունով, որ աքքադերեն բառացի նշանակում է աստծո դարպաս: Վերջինիս ավերակները գտնվում են Իրաքի Հիլլա քաղաքի մոտակայքում: Բաբելոնի առավելագույն ծաղկումն ու զարգացումը կապված են Նաբուգոդոնոսոր 2-րդ թագավորի անվան հետ: Նրա օրոք Բաբելոնը փռվել է Եփրատի ափերին կանոնավոր քառանկյունու ձևով, որի յուրաքանչյուր կողմի երկարությունը, ըստ Հերոդոտոսի, եղել է 120 ստադիոն՝ մոտավորապես 20 կմ:

17. Մերձավոր Արևելք– Ասիայի արևմուտքի և Աֆրիկայի հյուսիս-արևելքի տերիտորիաների անվանումը: Այստեղ են գտնվում Եգիպտոսի Արաբական Հանրապետությունը, Սուդանը, Իսրայելը, Հորդանանը, Սիրիան, Լիբանանը, Թուրքիան, Իրաքը, Սաուդյան Արաբիան, Եմենը, Քուվեյթը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Քաթարը, Օմանը, Բահրեյնը, Կիպրոսի Հանրապետությունը: Մերձավոր Արևելքի երկրները Իրանի և Աֆղանստանի հետ կազմում են Մինչև Արևելք հասկացությունը:

18. Թրակիա– մարզ Հունաստանի հյուսիս-արևելքում՝ Էգեյան ծովի ափին:

19. Սելևկյան տուն– Սելևկյաններ, տիրապետող դինաստիա Սելևկյան պետության մեջ մ. թ. ա. 312-64 թթ. ընթացքում՝ ընդհատումներով: Հիմնադիրն էր Ալեքսանդր Մակեդոնացու զորավար Սելևկոս 1-ին Նիկատորը, որը գահակալել է մ. թ. ա. 312-281/280 թթ.: Մ. թ. ա. 84/83 թ. Տիգրան Բ Մեծը դրավեց Սելևկյան պետությունը: Հայ-

Հռոմեական պատերազմի ժամանակ (մ. թ. ա. 69-66 թթ.) հռոմեական զորավար Լուկուլլոսը Սելևկյանների գահը հանձնեց Սելևկյանների չառավիղ Անտիոքոս 13-րդ Ասիացուն, բայց Տիգրան Բ Մեծը պահպանեց իր գերիշխանությունը: Մ. թ. ա. 64 թ. հռոմեական զորավար Պոմպեոսը վերացրեց Սելևկյանների թագավորությունը:

20.Պաղոմյան տուն- Պաղոմեյաններ, թագավորական հարստություն, որ իշխել է հելլենիստական Եգիպտոսում մ. թ. ա. 305-30 թթ.: Հիմնադիրն էր Ալեքսանդր Մակեդոնացու զորավար Պաղոմեոս 1-ին Սոտերը:

21. Հելլենիզմ- Ալեքսանդր Մակեդոնացու նվաճած Արևելյան-Միջերկրածովյան, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմության չուրջ երեք հարյուրամյա ժամանակաշրջանը (մ. թ. ա. 3-րդ-1-ին դդ.): Տերմինը գիտական շրջանառության մեջ է դրել գերմանացի պատմաբան Յո. Դրոյզենը (1808-1884)՝ հասկանալով «Հունական պատկանության ու կրթվածության տարածումը» արևելյան ժողովուրդների մեջ: Այնուհետև տերմինը մեկնաբանվել է որպես միայն մշակութային կամ տնտեսական և այլ ազդեցություն: Հելլենիզմի պատմական նշանակությունը Արևմուտքի և Արևելքի միջև աննախադեպ եռանդուն փոխհարաբերությունն է: Պետական կառավարման տարբերեզում ստեղծվեց նոր տիպի պետություն՝ հելլենիստական միապետություն, որ զուգորդում էր արևելյան բռնապետության և հունական քաղաք-պետությունների՝ պոլիսների ավանդույթները:

22. Հինդուկուշի լեռներ- Հինդուկուշ, լեռնային համակարգ Աֆղանստանում, Պակիստանում և Հնդկաստանում: Երկարությունը մոտ 800 կմ է, լայնությունը՝ 50-300 կմ, բարձրությունը՝ 7690 մ (Տիրիչմիր լեռ):

23. Լոմպարտական քաղաքներ- Լոմբարդիա, վարչական մարզ Հյուսիսային Իտալիայում, ընդգրկում է 9 նահանգ՝ Բերգամո, Բրեշիա, Վարեսե, Կրեմոնա, Կոմո, Մանտուա, Միլան, Պավիա, Սոնդրիո և 14 քաղաք՝ Միլանի գլխավորությամբ:

24. Օսմանյան կայսրություն- Օսմանյան կայսրություն, սուլթանական Թուրքիայի պաշտոնական անվանումը Օսման 1-ինի անունով: Կազմվել է 15-16-րդ դդ. Ասիայում, Եվրոպայում, Աֆրիկայում Թուրքական նվաճումների հետևանքով: 17-րդ դ-ի վերջից աստիճանաբար կորցրել է նվաճած տարածքները, իսկ 1918-ին՝ Առաջին համաշխարհային պատերազմում պարտվելուց հետո, քայքայվել է:

25. Վասկո դե Կամա- Վասկո դա Գամա (1469-1524), պորտուգալացի ծովագնաց:

26. Քրիստափոր Կոլոմպոս-Քրիստափոր Կոլոմբոս (1451-1506), իտալացի ծովագնաց:

27. Խաչակիրներ– նրանց նշանաբանն էր՝ «Քրիստոնեական սրբավայրերի ազատագրումը մահմեդականներից»: Իրենց թիկնոցներին կրում էին խաչի նշանը, որտեղից էլ առաջացել է նրանց «խաչակիր» անվանումը: 1070-80-ական թթ-ին սելջուկները Փոքր Ասիայում նվաճեցին բյուզանդական տիրույթները, ինչպես նաև Երուսաղեմը: Բյուզանդիան «Տիրոջ գերեզմանը» (Երուսաղեմում) ազատագրելու պատրվակով ռազմական օգնություն խնդրեց արևմուտքից: Եվ սկսվեցին խաչակրաց արշավանքները, որոնք արևմտաեվրոպական ֆեոդալների զավթողական արշավանքներն էին Արևելքում 1096-1270 թթ.: 1097 թ-ին խաչակիրները հայերի օգնությամբ սելջուկներից գրավեցին Տարսոնը, Ադանան և Մամեստիան: 1098-ին գրավեցին Եդեսիան և ստեղծեցին առաջին լատինական իշխանությունն արևելքում:

28. Կոնֆուցիոս– Կուն Ցզի (մ. թ. ա. մոտ 551-479 թթ.), հին չինական մտածող, կոնֆուցիականության (2000 տարուց ավելի Չինաստանի հոգևոր մշակույթի, քաղաքական կյանքի, հասարակարգի վրա մեծ ազդեցություն ունեցած բարոյա-քաղաքական ուսմունք) հիմնադիրը: Կոնֆուցիոսի հայացքները շարադրված են «Զրույցներ ու դատողություններ» («Լունյու») գրքում, որ նրա ասույթների և զրույցների գրառումն է:

29. Պալքանյան դաշնակցություն– Բուլղարիայի, Սերբիայի, Հունաստանի և Չեռնոգորիայի ռազմաքաղաքական դաշինքն ընդդեմ Թուրքիայի, ըստ էության, նաև Ավստրո-Հունգարիայի: Ձևավորվել է 1912 թ-ին: Նույն թվականի հոկտեմբերին դաշինքի պետությունները Թուրքիայի դեմ պատերազմ սկսեցին, որն ավարտվեց նրանց հաղթանակով: Բայց Մակեդոնիայի բաժանման համար դաշնակիցների միջև սկզբում առած տարաձայնությունները հանգեցրին երկրորդ Բալկանյան պատերազմին, որով և դաշինքը քայքայվեց:

30. Փոքրիկ Անտանտ– Փոքր Անտանտ, 1920-21 թթ. Չեխոսլովակիայի, Ռումինիայի և Հարավսլավիայի միջև ստեղծված դաշինք, որ նպատակ ուներ պահպանել Առաջին համաշխարհային պատերազմից հետո կենտրոնական և հարավարևելյան Եվրոպայում ստեղծված ուժերի հարաբերակցությունը: Այն Ֆրանսիայի կազմակերպած ռազմա-քաղաքական դաշինքների կարևոր օղակներից մեկն էր 1920-30-ական թվականներին:

31. Միջին Ամերիկյան դաշնակցություն– Հավանաբար Կենտրոնական Ամերիկայի երկրների ռազմաքաղաքական դաշինք ընդդեմ ԱՄՆ-ի, որի վերաբերյալ, սակայն, կոնկրետ տեղեկություններ գտնել չհաջողվեց:

32. Պալթիկ երկրների դաշնակցություն– այս դաշինքի վերաբերյալ ևս տեղեկություններ հնարավոր չեղավ գտնել: Խոսքն ամենայն

հավանականությամբ Լիտվայի, Լատվիայի և Էստոնիայի դաշինքի մասին է:

33. Կովկասյան դաշնակցություն- խոսքը Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի կազմած Անդրկովկասյան Դեմոկրատական Դաշնային Հանրապետության մասին է, որը գոյատևել է 1918-ի ապրիլի 22-ից մինչև նույն թվականի մայիսի 26-ը:

34. Լեման- լիճ Շվեյցարիայում և Ֆրանսիայում: Նրա ափին է գտնվում ժնևը՝ Ազգերի լիգայի կենտրոնակայանը:

35. Պիրման-Բիրմա, այժմ Մյանմար կոչվող պետությունը Հնդկաչին թերակղզում, հարևան Թաիլանդին:

36. Սիամ- Թաիլանդի պաշտոնական անվանումը մինչև 1939 թ. և 1945-48 թթ.:

37. Անամ- Աննամ, այսպես է կոչվել Վիետնամը 1802-1945 թթ.:

38. Պելուճ- Բելուջստան, Պակիստանի վարչական տարածքներից մեկը: Անվանումն ստացել է այդ տարածքում բնակվող ժողովրդի ինքնանվանումից՝ բալուչ, բալոչ: Բելուջներ ապրում են նաև Հնդկաստանում, Իրանում, Աֆղանստանում, Թուրքմենիայում և Տաջիկստանում:

39. Ատեն- Ադեն, քաղաք Եմենում, տարանցիկ խոշոր նավահանգիստ Ադենի ծոցի ափին, միջազգային օդանավակայան, նավթի վերամշակման խոշոր կենտրոն: Ադեն- անգլիական նախկին գաղութային տիրապետություն (1839-1967 թթ.):

40. Սուեզի ջրանցքը, որը Հնդկական օվկիանոսը Միջերկրական ծովով կապում է Ատլանտյանին, բացվել է 1869 թ-ի նոյեմբերի 17-ին:

41. Գապ- մեզ անհայտ տեղանուն:

42. Ֆաթալիստ -ճակատագրապաշտ:

43. Խիվա- Խիվայի խանություն, ֆեոդալական պետություն Միջին Ասիայում:

44. Բուխարա- Բուխարայի խանություն, ֆեոդալական պետություն, որը ինչպես Խիվան և Սամարղանդը, 19-րդ դ. 70-80-ական թթ. միացվեց Ռուսական կայսրությանը:

45. Սմրղանդ- Սամարղանդ:

46. Աճառիա- Աջարիա:

47. Սարը Քամըչ- Սարիղամիշ:

48. Անգորա- Անկարա:

49. Յոամուրթալըք և Հայտար փաշա-առաջինը Այաս նավահանգիստն է, երկրորդը՝ երկաթուղային կայարան Ստամբուլում:

50. Օման- Օմանի սուլթանություն, պետություն Արաբական թերակղզու հարավարևմտյան մասում: Սահմանակից է Սաուդյան Արաբիային, Եմենին, ԱՄԷ-ին:

51. Ռուստեմ, Զոհրաբ- Ֆիրդուսու «Շահնամե» պոեմի «Ռոստամ և Սոհրաբ» ասքի հերոսները:

52. Ֆիրտուսի – Աբուլղասիմ Ֆիրդուսի (մոտ 940, ք. Թուս-1020 կամ 1030 թթ., ք. Թուս), պարսկական և տաջիկական բանաստեղծ: 976 թ-ից շարունակել է «Շահնամե» պոեմը, որ սկսել էր Դաղիղին:

53. Քյուրդիստան- Քուրդիստան, Քրդստան: Իրականում նման քաղաքական միավոր գոյություն չունի, սակայն պատմագիտության մեջ այս անվանումն օգտագործվում է սոսկ ազգագրական իմաստով (Իրանի Քուրդիստան, Իրաքի Քուրդիստան, Թուրքիայի Քուրդիստան)՝ այդ տարածքները քրդերով խիտ բնակեցված լինելու պատճառով:

54. Պասրա- Բասրա, քաղաք Իրաքի հարավում

55. Պուշիր- Բուշիր, քաղաք և երկրամաս Իրանի հարավում:

56. Ալեքսանդրետ- Ալիքսանդրեթ (Թուրքերեն՝ Իսկենդերուն) քաղաքին հարող մարզի նախկին անվանումը: Մինչև 1918 թ-ը գտնվում էր Օսմանյան կայսրության կազմում: 1918-ին օկուպացրին անգլիացիները, հետո՝ ֆրանսիացիները: Այստեղ է գտնվում Մուսա լեռը: 1936-ին որպես ինքնավար միավոր մտավ Սիրիայի մեջ, որի կազմում ձևականորեն մնալով՝ անցել է Թուրքիայի և Ֆրանսիայի համատեղ հսկողության ներքո: 1938-ին Թուրքիան զորք մտցրեց այստեղ և ստեղծեց Հաթթայի ինքնավար պետությունը, իսկ 1939-ին, հակառակ տեղի ազգաբնակչության կամքին և Սիրիայի ընդդիմության, միացվեց Թուրքիային:

57. Արղանա- այժմ՝ Մադեն, գյուղաքաղաք Արևմտյան Հայաստանում, Դիարբեքիրի վիլայեթի Արևնի գավառում, Արղանա գետի (Տիգրիսի վտակներից) աջ ափին: Ունի պղնձի հարուստ հանքեր, որոնք շահագործվում են հին ժամանակներից մինչև այսօր: Արղանայի հայ բնակչությունը հիմնականում աշխատում էր այդ հանքերում, նաև զբաղվում երկրագործությամբ, արհեստներով և առևտրով:

58. Մանդա- մանդաստ:

59. Մուսուլ-Մոսուլ, քաղաք Իրաքի հյուսիսում:

60. Զորրորդ խաչակրություն- խաչակրաց չորրորդ արշավանքը, կազմակերպվեց 1199-ին՝ խաչակիրների և Բյուզանդիայի միջև ծագած հակասությունների պայմաններում: Գերմանացի, ֆրանսիացի և իտալացի ասպետները 1204 թ-ին գրավեցին Կ. Պոլիսը և ստեղծեցին Լատինական կայսրությունը (1204–61 թթ.):

61. Ջաթիհ-Թուրք.՝ «նվաճող», Մեհմեդ 2-րդ Ջաթիհ, Մուհամմեդ 2-րդ (1432-1481), Թուրքիայի սուլթան 1444-1446 և 1451-ից: 1453-ի մայիսի 29-ին գրավել է Կ. Պոլիսը՝ վերացնելով Բյուզանդական կայսրությունը: Կ. Պոլիսը դարձրել է Օսմանյան կայսրության մայրաքաղաքը: 1459-79 թթ. ընթացքում վերջնականապես նվաճել է Սեր-

բիան, Մորեան, Տրապիզոնի հունական կայսրությունը, Լեսբոս կղզին, Բոսնիան, Վալախիան և Ալբանիան, իրեն է ենթարկել Կարամանիայի թուրքական բեյությունը, Ղրիմի խանությունը: Մուհամմեդ 2-րդի օրոք կազմվել են օսմանյան առաջին օրենսդրական ակտերը: 1461-ին Կ. Պոլսում հաստատել է հայ համայնքի պատրիարքություն, և Բուրսայի Հովակիմ եպիսկոպոսը նշանակվել է հայոց պարտրիարք:

62. 1683-ին Վիեննայի մատույցներում թուրքական զորքերը ծանր պարտություն են կրել լեհական և ավստրիական զորքերից, և կանգնեցվել է նրանց հետագա առաջխաղացումը:

63. Կ. Պոլսի (Ստամբուլի) համալսարանը հիմնադրվել է 1453-ին և մինչև 20-րդ դ. կոչվել է կրոնական բարձրագույն դպրոց: Այստեղ Շանթը նկատի ունի Ստամբուլի տեխնիկական (կամ Բողազիչիի) համալսարանը:

64. 1908-ի հեղափոխությունը- երիտթուրքական հեղափոխություն, երբ Աբդուլ Համիդը գահընկեց եղավ, և սուլթան դարձավ նրա եղբայր Մուհամմեդ 5-րդը (1909-18):

65. Իթթիհատի կուսակցություն- Իթթիհատ, երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» (թուրք.՝ «Իթթիհատ վե թերաքքի») կուսակցության կրճատ անվանումը:

66. Կյավուր- գյավուր (թուրք.՝ անհավատ), այսպես թուրքերը կոչում էին քրիստոնյաներին:

67. Սոնքալ- հպարտանալ, պարծենալ:

68. Քեմալ- Մուստաֆա Քեմալ Աթաթուրք (1881-1938), թուրք պետական, քաղաքական և ռազմական գործիչ, Թուրքիայի Հանրապետության հիմնադիրն ու առաջին նախագահը (1923-ից): 1919-ից ղեկավարել է թուրք բուրժուազիայի գլխավորած ազգային շարժումը, որն էլ նրա անունով կոչվել է քեմալական:

69. Ղուրան- արաբ.՝ «ընթերցվածք», մահմեդականության սուրբ գիրքը, Մահմեդի (Մուհամմեդ) քարոզների հավաքածուն: Մուհամմեդի օրոք տարածվել է բանավոր կերպով, գրի է առնվել 632 թ-ից: Ղուրանը դասական արաբերենի անկրկնելի նմուշ է:

70. Շերիաթ- շարիաթ (արաբ.՝ ճշմարիտ ուղի), իսլամի կրոնական և իրավական նորմերի ժողովածու: Մշակվել է Արաբական խալիֆայությունում՝ 7-12-րդ դդ.: Մահմեդական երկրների մեծ մասում (Պակիստան, Հյուսիսային Աֆրիկայի երկրներ, Իրան և այլն) շարիաթի նորմերը ներառված են աշխարհիկ օրենսդրության մեջ: Շարիաթը պահպանվում է որպես իրավունքի աղբյուր և մահմեդական գաղափարախոսության հիմքերից է:

71. Սյոննի- սուննի (արաբ.՝ սուննա–գործելակերպ, սովորություն), մահմեդականության ուղղափառ ուղղության՝ սուննիզմի հե-

տևորդ: Սուննիները Ղուրանից բացի ընդունում են Մահմեդի գործունեության մասին բանավոր ավանդությունների ժողովածուն՝ սուննան, որով նրանց համայնքը առաջնորդվում է առօրյայում:

72. Շիի- արաբ.՝ չիա-աղանդ, կուսակցություն, կողմնակցություն, մահմեդականության սուննիների աղանդին հակադիր ուղղության պատկանող մահմեդական: Շիիզմը առաջացել է 7-րդ դ. Արաբական խալիֆայությունում, Մահմեդի մահից հետո, իմամության չուրջ ծագած տարաձայնության հիման վրա:

73. Սելիմները, Ֆաթիհները, Եղլտըրըմները ու Թիմուրները – Սելիմ անունով սուլթաններից առավել նշանավոր են Սելիմ I Ահեղը (1512-1520) և Սելիմ III-ը (1789-1807), Ֆաթիհը՝ տե՛ս ծանոթ. 61, հաջորդը Բայազետ Յիլդիրիմ (Կայծակնային) սուլթանն է (1389-1402), իսկ Թիմուրը՝ միջինասիական նշանավոր զորավար Լենկթեմուրը (1336-1405):

74. Ջիհատ- ջիհադ (արաբ. բառացի՝ եռանդ, նկրտում), «սրբազան պատերազմ», որ, ըստ Ղուրանի որոշ դրույթների, պետք է մղեն մահմեդականները «անհավատների» դեմ: Ջիհադին մասնակցելը յուրաքանչյուր մարտունակ մահմեդականի սրբազան պարտքն է: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքական ղեկավարները ջիհադի օգնությամբ իրականացրին հայկական կոտորածները:

75. Էնվեր-Էնվեր փաշա (1881-1922), թուրքական պետական գործիչ, դեներալ (1913), «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներից, 1915-ի Եղեռնի գլխավոր կազմակերպիչներից մեկը: 1914-ի փետրվարից զբաղեցրել է ռազմական նախարարի պաշտոնը և դարձել երիտթուրքական «եռապետության» (Թալեաթ փաշայի և Ջեմալ փաշայի հետ) ամենաազդեցիկ դեմքը: Վարել է պանթուրքական ու պանիսլամական քաղաքականություն: Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո փախել է Գերմանիա, 1919-ին որպես պատերազմի հանցագործ և հայասպանության կազմակերպիչ հեռակա կարգով դատապարտվել է մահվան: 1921 թ-ին գլխավորել է բասմաչական շարժումը Միջին Ասիայում և սպանվել կարմիր բանակի զորամասերի հետ ընդհարման ժամանակ:

76. Ճեմալ- Ջեմալ փաշա Ահմեդ (1872-1922), թուրքական պետական գործիչ, երիտթուրքերի պարագլուխներից, Եղեռնի հանցագործներից, երիտթուրքական «եռապետության» (Թալեաթի և Էնվերի հետ) անդամ: Մեղսակից է Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից հայերի զանգվածային տեղահանմանն ու կոտորածին: Սպանվել է Թիֆլիսում հայ վրիժառուներ Պետրոս Տեր-Պողոսյանի և Արտաշես Գևորգյանի ձեռքով:

77. Ելտըզի պալատին մեջ- Ելդըզ (թուրք.՝ աստղ)՝ պալատ Ստամբուլում, թուրք սուլթանների նստավայրը: Այն հայտնի ճարտարապետ Կարապետ Պալյանի (1800-1866) կառուցած 7 պալատներից մեկն է:

78. Հինգ վիլայեթները- Հայաստանի տարածքն ընդգրկված էր Վանի, Էրզրումի, Սեբաստիայի, Բիթլիսի, Խարբերդի, Տրապիզոնի, իսկ Կիլիկիան՝ Ադանայի վիլայեթներում:

79. Մոնտանյարներ- ֆրանս.՝ լեռնցիներ, Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ ձևավորված քաղաքական կուսակցություն, որի առաջնորդն էր Դանտոնը: Մոնտանյարներին էին հարում նաև Մարատը, Կոլո դ'Էրբուան, Շաբոն և այլք:

80. Նապոլեոն Բոնապարտ (1769-1821)- ֆրանսիացի զորավար, պետական գործիչ, Ֆրանսիայի կայսր 1804-1815 թթ.:

81. Ֆեթվա-հրովարտակ, հրաման:

82. Լենկթիմուրյան պետություն-միջինասիական զորապետ Լենկթեմուրի (1336-1405) ձեռնարկած ավելի քան 20 խոշոր արշավանքների արդյունքում ստեղծված աշխարհապետությունը (Սամարղանդ մայրաքաղաքով), որն ընդգրկում էր Միջին Ասիան, Աֆղանստանը, Փենջաբը, Իրանը, Միջագետքը, Հայաստանը, Վրաստանը և Ատրպատականը:

83. Օսման-Օսման 1-ին (մոտ 1258-1324), թուրքական սուլթան 1299-ից, թուրքական սուլթանների դինաստիայի հիմնադիր: 1281-ին հորից՝ կայը ցեղի առաջնորդ Էրթողրուլից ժառանգել է բեյլիքյուն Իկոնիայի սուլթանության հյուսիս-արևմուտքում, որն աստիճանաբար ընդարձակել է բյուզանդական հողերի հաշվին, իսկ Իկոնիայի սուլթանության անկումից հետո վերածել անկախ իշխանության, որը նրա անունով կոչվել է օսմանյան: Օսման 1-ինի անունով էլ թուրքերը կոչվել են օսմաններ, օսմանցիներ:

84. Հալտի- Խալդի: Ուրարտուի գերագույն աստվածը, որի անունով կոչվել է ժողովուրդը:

85. Մենուաս և Արգիշտիս- նկատի ունի Ուրարտուի (Վանի Արարատյան թագավորության) Մենուա (մոտ 810-786 մ.թ.ա.) և նրա որդի Արգիշտի I (մ.թ.ա. 786-764) արքաներին:

86. Պելոպոնես- թերակղզի և պատմաաշխարհագրական մարզ Հունաստանում, որ մայր ցամաքին է միանում Կորնթոսի պարանոցով: Այստեղ են գտնվում Սպարտա, Կորնթոս, Պատրա քաղաքները և Օլիմպոս, Միկենե քաղաքների ավերակները:

87. Միկենյան ժողովուրդներ- կոչվում են Ծովի ժողովուրդներ, էգեյան ծովի ժողովուրդներ են՝ միկենացիներ, կրետեցիներ, նաև ահհայա-աքայացիներ (նախահույները) և այլք, որոնք Ք.ա. 13-12-րդ դդ.

մեծ երաշտի հետևանքով սկսել են գաղթել դեպի հարավ ու Նեղոսի բերքատու տարածքներ՝ ճանապարհին կործանելով Տրոյան, Խեթիան, Ուգարիան ու այլ տերություններ: Այդ տեղաշարժերում նրանց են միացել նաև տեղի բնիկները: Միկենյան ժողովուրդները սկզբնավորել են հունական մշակույթի պատմության հնագույն՝ կրիտա-միկենյան փուլը (մ.թ.ա. 15-13-րդ դդ.):

88. Լյուդիա–Լիդիա, պատմական երկիր Փոքր Ասիայի արևմուտքում: Նրա տարածքում բնակվել են հնդեվրոպական լիդիացիների ցեղը, որ խոսել է խեթա-լուվիական լեզուներից մեկով, իսկ մ. թ. ա. 7-րդ դ-ում հոնիացիներից փոխառել է հունական գիրը: Նույն դարում մարդկության պատմության մեջ առաջին անգամ հատել են դրամ:

89. Քարքեմիշ– հնագույն քաղաք Միջագետքում, Հալեպից մոտ 100 կմ հյուսիս:

90. Հեթիթյան մնացորդները – խեթական պետություն, Խատտի, Հաթի, հնագույն պետություն Փոքր Ասիայում: Ստեղծվել է մ. թ. ա. մոտ 18-րդ դ. 1-ին կեսին, կործանվել մ.թ.ա. 12-րդ դարում:

91. Մարաթոն– բնակավայր Հունաստանում՝ Ատտիկայի համանուն հարթավայրում, Աթենքից 40 կմ հյուսիս-արևելք: Մարաթոնի մոտ մ. թ. ա. 490-ի սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ հույն-պարսկական պատերազմների առաջին խոշոր ճակատամարտը, որում հունական զորքը պարտության մատնեց պարսկական զորքին:

92. Սալամինա– Սալամին, Սալամիս, կղզի Էգեյան ծովում՝ Ատտիկայի ափերի մոտ: Հույն-պարսկական պատերազմների ժամանակ Սալամինի մոտ մ. թ. ա. 480 թ-ի սեպտեմբերին տեղի է ունեցել ծովամարտ, որն ավարտվել է հույների հաղթանակով, ինչը զրկեց պարսիկներին ծովում գործելու հնարավորությունից:

93. Դարեհի բիսիթունյան արձանագրություն-Աքեմենյան արքա Դարեհ Ա-ի հրամանով մ.թ.ա. 523-521 թթ. Բեհիսթուն ժայռի վրա փորագրված եռալեզու (հին պարսկերեն, էլամերեն և բաբելոներեն) տեքստ: Գտնվում է Իրանի Քիրմանշահ քաղաքի մոտ: Ըստ նշանակության՝ Աքեմենյան Պարսկաստանի դարաշրջանին պատկանող մինչ այժմ գտնված ամենակարևոր արձանագրությունն է: Վերծանվել է XIX դարի 30-40-ական թթ. անգլիացի դիտնական Հենրի Ռոուլինսոնի կողմից: Արձանագրությունը բովանդակում է պարսից արքա Կամբյուսեսի մահից հետո Աքեմենյան տերության մեջ ծագած ապստամբությունների և դրանց Դարեհ Ա-ի կողմից ճնշման պատմությունը: Ապստամբած երկրների թվում հիշատակվում է նաև Հայաստանը (Հայաստանի համար հին պարսկերենով գործածված է Արմինա անունը), ընդարձակ տեղեկություններ կան Հայաստանում ապստամբության ընթացքի վերաբերյալ:

94. Ալեքսանդր Մակեդոնացի-Ալեքսանդր Մեծ (մ. թ. ա. 356-323), զորավար և պետական գործիչ, Մակեդոնիայի թագավոր մ. թ. ա. 336-ից: Աշակերտել է Արիստոտելին, ռազմական պատրաստություն անցել Հոր՝ Փիլիպոս 2-րդ Մակեդոնացու ղեկավարությամբ: Իր արշավանքների ժամանակ իշխանությունն ամրապնդելու նպատակով հիմնեց մոտ 70 քաղաք-գաղութներ, որոնք մեծ մասամբ կրում էին Ալեքսանդրիա անունը: Վաղաժամ մահն ընդհատեց չարունակելիք արշավանքների նախապատրաստումը: Նրա արշավանքները նպաստեցին Արևելքի և Արևմուտքի մերձեցմանը, նրանց տնտեսության ու մշակույթի աշխուժացմանը՝ սկիզբ դնելով հելլենիզմին:

95 Սելևկյան իշխանություն-Սելևկյանների պետություն, հելլենիստական պետություն (մ. թ. ա. 312-64-ին, ընդհատումով): Ստեղծվել է Ալեքսանդր Մակեդոնացու տերության տրոհումից հետո: Հիմնադիրը Սելևկոս 1-ին Նիկատորն էր: Տարածքային ամենամեծ ընդարձակման ժամանակ ընդգրկել է Փոքր Ասիայի մեծ մասը, Ասորիքը, Փյունիկիան, Միջագետքը, Իրանական սարահարթը, Միջին Ասիայից մինչև Հնդկաստան ընկած երկրները (հելլենիստական ամենամեծ պետությունն էր): Մայրաքաղաքն էր Անտիոքը: Մ. թ. ա. 84/83-69-ին Սելևկյան պետության կազմի մեջ մտնող հիմնական տարածքները՝ Ասորիքը, Փյունիկիան և Կիլիկիան, ընդգրկվեցին Տիգրան Բ Մեծի հայկական տերության մեջ: 69-66-ի հայ-հռոմեական պատերազմի ժամանակ Ասորիքն անցավ Հռոմին:

96. Երկրորդ դարուն վերջերը- պետք է լինի՝ երկրորդ դարուն սկիզբները (մ.թ.ա. 189 թ.):

97. Արտաշիսյան հարստություն-թագավորական հարստություն Հայաստանում մ. թ. ա. 189-մ. թ. 1 թթ.:

98. Տիգրան Մեծ- (մ.թ.ա. 140-մ.թ.ա. 55), Մեծ Հայքի թագավոր մ.թ.ա. 95-ից մինչև մահը, Ասորիքի և Փյունիկիայի թագավոր (մ.թ.ա. 83-մ.թ.ա. 69), մ.թ.ա. 85-ից կրել է արքայից արքա տիտղոսը: Հանդիսացել է Արտաշեսյան հարստության հզորագույն ներկայացուցիչը, հաջորդել է Հորը՝ Տիգրան Ա-ին: Տիգրան Մեծի օրոք Մեծ Հայքի թագավորությունը հասավ իր հզորության գագաթնակետին: Պարտության մատնելով Պարթևական թագավորությանը և ստանալով Սելևկյան գահը՝ Հայաստանը կարճ ժամանակով դարձավ Առաջավոր Ասիայի հզորագույն պետությունը. Տիգրան Մեծի տերությունը տարածվում էր Կասպից ծովից մինչև Միջերկրական ծով, Կովկասյան լեռներից մինչև Միջագետքի անապատները: Տիգրանը, սակայն, կորցրեց իր նվաճումների մեծագույն մասը Պարթևական թագավորության և ուժեղացող Հռոմեական հանրապետության դեմ պայքարում:

99. Արշակունիներ-թագավորական հարստություն Հայաստանում 52 (պաշտոնապես՝ 66) - 428 թթ.:

100. Քրիստոնեությունը 301 թ. առաջինն աշխարհում հայտարարվեց Հայոց թագավորության պետական.կրոն: Հռոմում 313 թ. Միլանի կայսերական հրովարտակով այն ընդամենը հեթանոսությանը հավասարազոր կրոն ճանաչվեց, իսկ պետական կրոն դարձավ միայն IV դ. վերջին քառորդին:

101. Սասանյան տուն- Սասանյաններ, կառավարող վինաստիա Իրանում 3-7-րդ դդ., որ հիմնել է Սասանյանների պետությունը Մերձավոր և Միջին Արևելքում՝ Պարթևական թագավորության տեղում: Հիմնադիրն է Արտաշիր 1-ին Պապականը (226-239/241):

102. Բյուզանդիոն-Հին հունական քաղաքապետություն: Գանվել է Բոսֆորի նեղուցի եվրոպական ափին: Հիմնել են մեգարացի գաղութարարները մ. թ. ա. 660 թ-ին: Երկար ժամանակ եղել է նեղուցներին վերիշխելու Աթենքի և Սպարտայի միջև ընթացող պայքարի առարկա: 330-ին Կոստանդին կայսրը Բյուզանդիոնը դարձրել է Հռոմեական կայսրության մայրաքաղաքը, որն այդ թվականից կայսեր անունով կոչվել է Կոստանդնուպոլիս: Գիտության մեջ Բյուզանդիոնի անունով է կոչվել Արևելյան Հռոմեական կայսրությունը՝ Բյուզանդիա: 1453-ից քաղաքն անվանվում է Ստամբուլ:

103. Քաղկեդոնի ժողով- Քաղկեդոնի տիեզերաժողով, չորրորդ տիեզերաժողովը, տեղի է ունեցել 451 թ-ին Կոստանդնուպոլսի արվարձան Քաղկեդոնում՝ բյուզանդական կայսր Մարկիանոսի (450-457 թթ.) նախաձեռնությամբ: Քաղկեդոնի տիեզերաժողովը բանադրել է միաբնակությունն ընդունած Եփեսոսի 449 թ-ի ժողովը և ճանաչել Հիսուս Քրիստոսի երկու բնույթի մասին դավանաբանական ուսմունքը: Առաջնության համար պայքարում Քաղկեդոնի տիեզերաժողովը արևմտյան եկեղեցու (Կոստանդնուպոլսի և Հռոմի) հաղթանակն էր արևելյանի (Հայաստանի, Ասորիքի և Եգիպտոսի) նկատմամբ: Այն քրիստոնեական համաշխարհային եկեղեցու առաջին խոշոր տրոհումն էր: Հայաստանը, որ 450 թ. Մարկիանոս կայսեր կողմից մերժում էր ստացել պարսից պետության դեմ իր ազատագրական պայքարին աջակցելու խնդրանքին, չի մասնակցել Քաղկեդոնի տիեզերաժողովին և չի ճանաչել նրա կանոնները՝ մնալով միաբնակ:

104. Այաս- Կիլիկիայի գլխավոր նավահանգիստը:

105. Մամլյուքներ- արաբ.՝ մուլք-սեփականություն, բառացի՝ որևէ մեկին պատկանող, ստրուկ: Վաղ հասակում գերված կամ գնված, մահմեդականացված և ռազմական գործին վարժեցված սպիտակամորթ ստրուկներ: Եգիպտոսի էյուբյանները 13-րդ դ-ի սկզբներին մամլուք-

ներից ստեղծեցին հատուկ զինվորական ընտրանի, որը դարձավ խաչակիրների դեմ պայքարող գլխավոր ուժը:

106. Կիլիկիայի թագավորություն- Կիլիկիայի Հայկական Պետություն, ստեղծվել է 11-րդ դ-ի վերջին քառորդին՝ Փոքր Ասիայի հարավ-արևելքում՝ Միջերկրական ծովի ափին, բյուզանդական և սելջուկյան նվաճողների դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի շնորհիվ: Ապրել է զարգացման երկու փուլ՝ Մեծ իշխանապետություն (1080-1198) և թագավորության (1198-1375): 1360-ին մամլուքները նվաճել են Դաշտային Կիլիկիան՝ Տարսոն և Ադանա քաղաքներով: Եգիպտոսի սուլթան Մելիք Աշրաֆի զորքերը ներխուժել են Կիլիկյան Հայաստան և 1375 թ. հունվարի 5-ին պաշարել Սիսը: Փետրվարի 24-ին նրանց են միացել Հալեպի ամիրայության զորքերը: Հայկական սակավաթիվ ուժերը, ամրանալով Սսի միջնաբերդում, չուրջ երեք ամիս դիմադրել են թշնամուն: Սովից և հիվանդություններից նեղված՝ ապրիլի 22-ին Լևոն Զ թագավորը հաշտություն է խնդրել և, իր անձի ապահովության երաշխիք ստանալով, բերդը հանձնել թշնամուն: Սսի գրավումը հայ պատմիչները գնահատել են որպես Հայոց պետականության կործանում:

107. Լենկթեմուր- Լենկթեմուր (1336-1405), միջինասիական զորապետ: Մարտում վիրավորվելով՝ ստացել է «Լենկ» (կաղ) մականունը: 1386-ին առաջին անգամ արշավել է Հայաստան, գրավել Նախճավանը, պաշարել բերդը, ասպատակել է Այրարատը և կոտորել Երևան գյուղաքաղաքի բնակիչներին:

108. 1603 թ-ին սկսվեց թուրք-պարսկական պատերազմը, և Շահ Աբասի (1587-1629) կազմավորված պարսկական բանակը հեշտությամբ գրավեց Թավրիզը, ապա երասխն անցնելով՝ շարժվեց Նախիջևան: 1604 թ. գարնանը պարսիկները գրավեցին Ջուղան, Նախիջևանը և պաշարեցին Երևանը: Երևանի պաշարումը տևեց իննն ամիս: Վերջապես հանձնվեց նաև Երևանի բերդը: Հետագայում, ստիպված լինելով նահանջել, Շահ Աբասը Պարսկաստան քշեց բազմահազար հայերի:

109. Նկատի ունի Ռուսաստանի Պետրոս Մեծ ցարին (1689-1725):

110. Ռոբինզոն-անգլիացի գրող, հրապարակախոս Դանիել Դեֆոյի (1660-1731) «Ռոբինզոն Կրուզո» վեպի հերոսը:

111. Ներսես եպիսկոպոս- Ներսես Ե Աշտարակեցի (1770-1857), հայ ազգային ազատագրական շարժման գործիչ: Ամենայն Հայոց կաթողիկոս 1843-ից: Եղել է հայ ժողովրդի ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման պաշտպան: 1804-13 թթ. ռուս-պարսկական պատերազմի սկզբին՝ Երևանյան առաջին արշավանքի ժամանակ (1804 թ.), աջակցել է ռուսական զորքերին: 1814 թ. նշանակվել է Թիֆլիսի

Հայոց թեմի առաջնորդ, 1824-ին հիմնադրել է Ներսիսյան դպրոցը: 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ կազմակերպել է հայկական կամավորական դոմմսրատակներ, անձամբ մասնակցել Երևանի, Էջմիածնի, Սարդարապատի ազատագրմանը:

112. Կաղզվան- Կաղզվան, քաղաք, Համանուն գավառի կենտրոնը Կարսի մարզում՝ Երասխ գետի ավի՛ն: Ունեցել է ամուր բերդ:

113. Իսրայել Օրի- (1659-1711), Հայ ազգային-ազատագրական չարժման գործիչ:

114. Ալիշան Ղևոնդ-Խերովբե Ալիշանյան (1820-1902), Հայ բանաստեղծ, բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, Թարգմանիչ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ:

115. Պեչիկթաշլյան Մկրտիչ (1828-1868)-Հայ բանաստեղծ, մանկավարժ, թատերական և հասարակական գործիչ, Հայ նոր քնարերգության հիմնադիր:

116. Ծերենց-Հովսեփ Շիշմանյան (1822-1888), Հայ գրող, հրապարակախոս, Հեղինակը «Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու», «Թորոս Ռշտունի» վեպերի:

117. Աբովյան Խաչատուր (1809-1848)- Հայ գրող, մանկավարժ, լուսավորիչ-դեմոկրատ, Հայ նոր գրականության և մանկավարժության հիմնադիր:

118. Նալբանտյան Միքայել (1829-1866)-Հայ գրող, հրապարակախոս, փիլիսոփա, հեղափոխական-դեմոկրատ, Հայ ռեալիստական գեղագիտության և քննադատության հիմնադիր:

119. Գամառ-Քաթիպա- Ռափայել Պատկանյանի գրական անունը, որ բանաստեղծը կազմել է Մոսկվայի Համալսարանի բժշկական ֆակուլտետում սովորելու ժամանակ՝ 1854-ին, իր իսկ հիմնադրած գրական ընկերության երեք անդամների՝ Գևորգ Քանանյանի, Մնացական Թիմուրյանի և Ռափայել Պատկանյանի անունների՝ ա հոդակապով միացող սկզբնատառերից և ազգանունների առաջին վանկերից:

120. Րաֆֆի-Հակոբ Մելիք-Հակոբյան (1835-1888), Հայ գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ:

121. Խրիմյան- Խրիմյան Հայրիկ, Մկրտիչ Ա Վանեցի (1820-1907), հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային գործիչ, գրող: 1893-ից՝ Ամենայն հայոց կաթողիկոս:

122. Վարժապետյան- Ներսես Բ Վարժապետյան (1837-1884), Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքը 1874-ից: 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո կապի մեջ մտնելով ռուսական բանակի հրամանատարության և դիվանագետների հետ՝ նպաստել է Հայկական հարցի արծարծմանը Սան Ստեֆանոյում: Հայկական հարցը հարուցելու նպատակով կազմել և Մկրտիչ Խրիմյանի պխավորությամբ Եվրոպա է

ուղարկել Հայկական ազգային պատվիրակություն: Նա բարձր է գնահատել Ռուսաստանի դերը արևմտահայ ազատագրական պայքարի գործում: Կյանքի վերջին տարիներին խիստ հիասթափված էր եվրոպական՝ հատկապես անգլիական դիվանագիտությունից:

123. Արմենական կազմակերպություն– ազգային-ազատագրական կազմակերպություն, առաջին քաղաքական կազմակերպությունը Հայ իրականության մեջ: Հիմնվել է 1885-ին Վանում՝ Մ. Փորթուգալյանի և նրա «Արմենիա» (Մարսել) թերթի շուրջ համախմբված գաղափարակիցների ջանքերով: Նրանց ծրագիրն էր Արևմտյան Հայաստանը ազատագրել սուլթանական բռնապետության լծից և ստեղծել անկախ պետություն: Արմենականները ժողովրդի ազատագրության միջոցներ էին համարում զինված ապստամբությունը, դրամը, դիվանագիտական ուղիները:

124. Հնչակյան կուսակցություն– Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցություն, ստեղծվել է 1887-ին Ժնևում: Հնչակյան կուսակցության ծրագիրն էր թուրքական լծից ազատագրել Արևմտյան Հայաստանը և միավորելով հայկական հողերը՝ ստեղծել անկախ հայկական պետություն: Կուսակցության գործունեության հիմնական ասպարեզը Արևմտյան Հայաստանն էր:

125. Հայ Հեղափոխական դաշնակցություն–ՀՅԴ, ազգեցիկ քաղաքական կուսակցություն՝ ստեղծված 1890-ին Թիֆլիսում: Հիմնադիր ղեկավարներն էին Ք. Միքայելյանը, Ս. Զավարյանը, Ս. Զորյանը (Ռոստոմ):

126. Ուիլսըն – Վիլսոն Թոմաս Վուդրո, ԱՄՆ-ի 28-րդ նախագահը (1913-1921)՝ դեմոկրատական կուսակցությունից: 1918 թ-ի հունվարին Վիլսոնը Կոնգրեսին է ներկայացնում իր «Տասնչորս կետեր»-ը, որ հետպատերազմյան աշխարհի մասին նրա հայացքների չարադրանքն էր, որոնցով նա երաշխավորում էր քաղաքական անկախություն և տարածքային միասնություն մեծ ու փոքր պետություններին հավասարապես: 1919-ին գլխավորում է ԱՄՆ-ի պատվիրակությունը Փարիզի հաշտության կոնֆերանսում: 1919-ին ԱՄՆ-ի սենատը հրաժարվում է վավերացնել Վերսալի հաշտության պայմանագիրը: Մեծ Բրիտանիան և Ճրանսիան չարունակում են պահպանել իրենց առանձնատուր դերը համաշխարհային, հատկապես՝ եվրոպական քաղաքականության մեջ, որն իր արտահայտությունն է գտնում նաև Վիլսոնի նախաձեռնած Հայաստանի մանդատով (որը մերժվում է ԱՄՆ-ի սենատի կողմից 1920-ին) և Սևրի հաշտության պայմանագրով ստեղծվելիք Հայկական պետության սահմանների որոշման հարցում:

127. Տրիպոլիս –քաղաք Սև ծովի ափին, Տրապիզոնից 100 կմ արևմուտք: 1915-ին քաղաքում ապրել են մոտ 1500 Հայեր, որոնց մեծ

մասը զոհ է գնացել Մեծ եղեռնին, մնացած մասը ենթարկվել է բռնապաղթի:

128. Կանտոն– ֆրանս.՝ canton–օկրուգ, վարչատարածքային միավոր Շվեյցարիայում:

129. Զվիցերիա– Շվեյցարիա:

130. Մոնրոյի սկզբունք– ԱՄՆ-ի կառավարության արտաքին քաղաքականության ծրագիրը, որը հռչակվել է 1823-ին ԱՄՆ-ի նախագահ Ջ. Մոնրոյի՝ կոնգրեսին հղած ուղերձի մեջ: Մոնրոյի դոկտրինան առաջ էր քաշում աշխարհը ամերիկյան և եվրոպական համակարգերի բաժանելու և վոխադարձաբար միմյանց ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը (այստեղից էլ՝ «Ամերիկան ամերիկացիների համար» սկզբունքը) միաժամանակ փորձում էր ԱՄՆ-ի հզորացումը պայմանավորել նոր տարածքների միացմամբ ու նոր նահանգների կազմավորմամբ:

131. Կլեմանսո Ժորժ (1841-1929) – ֆրանսիացի պետական և քաղաքական գործիչ, ֆրանսիական ակադեմիայի անդամ, 19-րդ դարի 80-ական թթ. բուրժուական արմատական կուսակցության պարագլուխը: 1917 թ. անցնելով կառավարության գլուխ՝ միաժամանակ զբաղեցրել է ռազմական նախարարի պաշտոնը: Փարիզի հաշտության կոնֆերանսի (1919-1920) նախագահն էր և Վերսալի հաշտության պայմանագրի հեղինակներից: Թեև Կլեմանսոն հանդես է եկել հօգուտ Հայկական հարցի լուծման, այնուամենայնիվ, չարունակել է ֆրանսիական կառավարության ավանդական չահախնդրական քաղաքականությունը, որից տուժել են և՛ Հայաստանը, և՛ հայերը: 1920 թ. պարտվելով նախագահական ընտրություններում՝ հեռացել է քաղաքական ասպարեզից:

132. Սևրի դաշնագիր– Սևրի հաշտության պայմանագիր, ստորագրվել է 1920 թ-ի օգոստոսի 10-ին Սևր քաղաքում (Փարիզի մոտ) Թուրքիայի սուլթանական կառավարության և Առաջին համաշխարհային պատերազմում (1914-1918) հաղթանակած դաշնակից պետությունների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Հայաստան, Բելգիա, Հունաստան և այլն) միջև: Ըստ պայմանագրի՝ Թուրքիան ճանաչում էր Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն, իսկ նրանց միջև սահմանները (Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթների սահմաններում) որոշելու էր ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը՝ որպես միջնորդ: Թուրքիայի քեմալական կառավարությունը չընդունեց, իսկ սուլթանը չհամարձակվեց վավերացնել պայմանագիրը:

Արձանագրելով հայ ժողովրդի պահանջները և հաստատելով ու հրահրելով Հայաստանի Հանրապետության դաշնակցական կառավարությանը՝ հանդես գալու քեմալականների դեմ, Անտանտի պետու-

թյուններըը իրական ոչ մի օգնություն չցուցաբերեցին հայ ժողովրդին: Թուրքական կառավարությունը ոչ միայն չճանաչեց Սևրի հաշտության պայմանագիրը, այլև գլխավորեց այդ պայմանագրի վերացման համար չարժումը՝ օգտագործելով նաև Սևրի հաշտության պայմանագրի վերացման շուրջ Անգլիայի և Ֆրանսիայի միջև ծագած սուր հակասությունները: Լոզանի 1923 թ-ի պայմանագրով Սևրի հաշտության պայմանագիրը չեղյալ հայտարարվեց:

133. Լոզանի կոնֆերանս (1922-1923)– միջազգային կոնֆերանս Մերձավոր Արևելքի հարցով: Տեղի է ունեցել 1922 թ-ի նոյեմբերի 20-ից 1923 թ-ի հուլիսի 24-ը Լոզանում (Շվեյցարիա): Մասնակցել են Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Հունաստանը, Ճապոնիան, Ռումինիան, Հարավսլավիան, ԱՄՆ-ը՝ որպես դիտորդ: Ստորագրվել է Լոզանի պայմանագիրը, որով հաստատվեցին Թուրքիայի արդի սահմանները՝ փաստորեն ի չիք դարձնելով 1920 թ-ի Սևրի հաշտության պայմանագիրը:

Լոզանի կոնֆերանսում քննարկվեց նաև Հայկական հարցը: Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը (ղեկավար՝ Ա. Ահարոնյան) չթույլատրվեց պաշտոնապես մասնակցել կոնֆերանսին, քանի որ այն այլևս չէր կարող ներկայացնել Հայաստանը, որտեղ հաստատվել էր խորհրդային իշխանություն: Այդուհանդերձ ազգային պատվիրակության հետ համատեղ նրանք կոնֆերանսին ներկայացրին մի հուշագիր, որն առաջարկում էր Հայկական հարցի երեք հնարավոր լուծում. հայկական ազգային օջախի ստեղծում ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի սահմանագծած Հայաստանի տարածքում, Հայաստանի Հանրապետության ընդարձակում՝ նրան կցելով Արևմտյան Հայաստանի մի մասը դեպի ծով ելքով, իսկ հակառակ դեպքում՝ ազգային օջախի ստեղծում Կիլիկիայում:

134. Ֆիլաքո-ֆիլասկո, բացարձակ և նվաստացուցիչ ձախողում:

135. Թորոս-Թորոս Ա (ծն. թ. անհայտ -1129), Կիլիկիայի հայոց իշխան 1100-ից: Հաջորդել է հորը՝ Կոստանդին Ա-ին: Դահակալման սկզբնական տարիներին հաղթել և երկրից վտարել է բյուզանդական զորքերին, միավորել է Դաշտային Կիլիկիան: Հայ իշխան Գող Վասիլի զինակցությամբ Բերդուսի մոտ ջախջախել է Իկոնիայի սուլթանության նախահարձակ զորքերին և երկիրը մաքրել սելջուկ-թուրքերից: Պետության արևելյան սահմաններն ամրապնդելու նպատակով իր դուստր Արտային կնության է տվել Եդեսիայի դուքս Բալդուին II-ին և դաշնակցել նրան՝ ընդդեմ մահմեդական ամիրայությունների: Մատթեոս Ուռհայեցին վկայում է, որ Թորոս Ա-ն վրեժխնդիր է եղել Գագիկ Բագրատունի աքսորյալ թագավորին նենգորեն սպանած Հույն իշխան Մանդալեի որդիներից, այնուհետև հարաբերությունները բարելավել է Բյուզան-

դիայի կայսր Ալեքսիոսի հետ և արժանացել «Առաջին սեբաստոս» տիտղոսին: Սպի մոտ հիմնել է Դրազարկի հուշակալավոր վանքը, որտեղ թաղվել է, և որը այնուհետև դարձել է արքունի դամբարան:

136. Զիզիֆոս–Սիզիփոս, Սիզիֆ: Կորնթոսի հիմնադիրը և թագավորը: Հոմերոսի մոտ խարդախ, անբարոյական, չահախնդիր մարդ է, որը մահից հետո պատժվել է իր մեղքերի համար: Անդրշիրիմյան կյանքում՝ Հադեսի թագավորությունում, նա հարկադրված էր հավերժորեն սարն ի վեր գլորել ծանր մի քար, որը, հազիվ դագաթին հասցրած, դարձյալ գլորվում էր ցած: Եվ Սիզիփոսն ամեն ինչ սկսում էր նորից:

137. «Նոթ»-եր-այստեղ՝ բողոքի նոտաներ:

138. Էլզաս Լորենե-Էլզաս-Լոթարինգիա, Ալզաս, պատմական մարզ Ֆրանսիայի արևելքում:

139. Բելճիկա–Բելգիա:

140. Էնզելի-նավահանգիստ Իրանում, Կասպից ծովի ափին: 1925-ից կոչվում է Փեհլևի:

141. Նկատի ունի հռոմեացի քաղաքական գործիչ, զորավար և գրող Հուլիոս Գայոս Կեսարին (մ.թ.ա. 100-44) և մ.թ.ա. 60 թ. նրա կազմած եռապետությունը Գնեոս Պոմպեոսի ու Մարկոս Կրասոսի հետ:

142. Դենիկին-Անտոն Դենիկին (1872-1947), ռուս զորավար, քաղաքական գործիչ: 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմում ցուցաբերում է ռազմական տպայի գերազանց հատկություններ, դառնում է գնդապետ և պարգևատրվում է երկու շքանշաններով: 1918-ի աշնանից զարձել է հակահեղափոխության «Ռուսաստանի հարավի զինված ուժերի» զլխավոր հրամանատար: 1919-ի ամռան-աշնանը գլխավորել է դեպի Մոսկվա արշավանքը: Լինելով խորհրդային կարգերի համոզված հակառակորդ՝ նա, այնուամենայնիվ, հրաժարվել է գերմանացիների համագործակցության առաջարկից:

143. Կատե-կադետ, ցարական Ռուսաստանի սահմանադրական-դեմոկրատական կուսակցության անդամ:

144. Կարսի դաշնագիր-Կարսի պայմանագիր, կնքվել է 1921 թ-ի հոկտեմբերի 18-ին կարսում մի կողմից՝ Ադրբեջանական, Հայկական և Վրացական ԽՍՀ-ների, մյուս կողմից՝ Թուրքիայի միջև, ՌԽՖՍՀ մասնակցությամբ: Պայմանագիրը գրեթե նույնությամբ կրկնում էր 1921 թ-ի մարտի 16-ի Մոսկվայի տնտրահրչակ պայմանագրի դրույթները, որոնք կոպտորեն ոտնահարում էին Հայաստանի շահերը:

145. Տրոցկի Լև–Լեյբա Բրոնշտեյն (1879-1940), միջազգային աշխատավորական և կոմունիստական շարժման գործիչ, մարքսիզմի տեսաբան, իր անունով տրոցկիզմ կոչված հոսանքի գաղափարախոս:

146. Դումա- ցարական Ռուսաստանի օրենսդիր բարձրագույն մարմինը: Պետական դումայի հիմնադրման վերաբերյալ մանիֆեստը հրապարակվել է 1905 թ. օգոստոսի 6-ին, իսկ I Պետական դումայի անդրանիկ նիստը գումարվել է 1906 թ. ապրիլի 27-ին: 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո դադարեցվել է վերջին՝ IV Դումայի գործունեությունը:

147. Ալիեներուն- բնագրում գրված է՝ Ալիեներուն: Յավոք, հնարավոր չեղավ պարզել, թե ում (կամ ինչի) մասին է խոսքը:

148. Գալիցին-Գոլիցին Գրիգորի Սերգեևիչ (1838-1907), ռուս պետական և ռազմական գործիչ, 1896-1904 թթ.՝ Կովկասի փոխարքա, Հայոնի էր իր մոլի հայասոյացությամբ:

149. Զեմստվոյություն-ռուս.՝ земство, տեղական ինքնավարության մարմիններ Եվրոպական Ռուսաստանի մի շարք նահանգներում՝ ստեղծված 1864 թ-ի զեմստվոյին ռեֆորմի համաձայն: Վերացվեցին խորհրդային կարգերի հաստատումից հետո:

150. Մազդեզ-մազդեականություն, մ. թ. ա. 9-6-րդ դդ-ում Մարաստանում և մ. թ. ա. 6-4-րդ դդ-ում Աքեմենյան Պարսկաստանում տիրապետող կրոն, որի դավանաբանական հիմքը գերագույն աստված Մազդայի (Ահուրամազդա) և կրակի պաշտամունքն է: Մազդեականության որոշ գաղափարներ և ծեսեր (ամենից առաջ՝ կրակի պաշտամունքը) վերամիաստավորված ձևով ներառվել են զրադաշտականության մեջ:

151. Նկատի ունի հայ-վրացական զինված ընդհարումը 1918-ին, երբ Վրաստանը, օգտվելով Հայաստանի ծանր վիճակից, փորձեց գրավել Լոռին, բայց ստացավ արժանի հակահարված:

152. Բնագրում՝ կիմբրներ: Ակնհայտ է, որ Շանթը նկատի ունի կիմմերներին (գամիրներ)՝ կիսավայրենացած ռազմիկ ցեղերին, որոնք մ.թ.ա. 8-րդ դ. հաստատվել են Փոքր Ասիայում՝ Կապադովկիայում, և որոնց անունով հայերը Կապադովկիան կոչել են Գամիրք:

153. Նկատի ունի 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը:

154. Շանթն այսպես անվանում է Անդրկովկասյան Ֆեդերացիան՝ կազմված Հայկական, Վրացական և Ադրբեջանական ԽՍՀ-ներից: Գոյատևել է 1922-37 թթ.:

155. Ջիչերիններու- Ջիչերին Գեորգի Վասիլևիչ (1872-1936), ռուս դիվանագետ, քաղաքական-պետական գործիչ, 1918-30 թթ. ՌԽՍՖՍՀ (1923-ից՝ ԽՍՀՄ) արտգործժողկոմ: Ղեկավարել է ռուսական պատվիրակությունը Շանթի պատվիրակության հետ բանակցությունների ժամանակ 1920 թ.:

156. Ստալըքինները- Ստոլիպին Պյոտր Արկադևիչ (1862-1911)- Ռուսական կայսրության պետական գործիչ, տարբեր տարիների զբա-

ղեցրել է տարբեր պաշտոններ՝ նահանգապետից մինչև ներքին գործերի նախարար և վարչապետ: Հայտնի է որպես հռետոր, ռեֆորմատոր, 1905-07 թթ-ի հեղափոխությունը ճնշած գործիչ: Վարչապետության տարիներին անցկացրել է մի շարք օրենադրական նախագծեր, որոնք հայտնի են «Ստոլիպինյան ագրարային ռեֆորմ» անունով:

157. Մուղանի անապատ-Մուղանի դաշտավայր, Մուղանի տափաստան, Կուր-Արաքսյան դաշտավայրի մաս Ադրբեջանում: Տարածքի հարթավարմտյան մասը գտնվում է Իրանում:

158. Ռիոն -գետ Վրաստանում:

159. Ցեքա-Ներեն ու Ջեքա-Ներեն-Ցեկա (ՃԿ)՝ կենտրոնական կոմիտե, Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության ղեկավար օրգանը:

Չեկա (ՃԿ)՝ Արտակարգ հանձնաժողով, 1917-ին ստեղծված մարմին՝ կոմկուսի իշխանությունն ամրապնդելու և հակահեղափոխության դեմ պայքարելու համար:

160. Քսենոֆոնյան գյուղեր-նկատի ունի հույն զորավար և պատմաբան Քսենոֆոնի (մոտ 430-355 կամ 354 մ.թ.ա.) նկարագրած գյուղերը Հայաստանում՝ գետնափոր տներով, ուր մարդիկ ապրում էին ընտանի կենդանիների հետ (Քսենոֆոն, Անաբասիս, գիրք IV, մաս IV, 23):

161. Բարեգործական ընկերություն-«Հայոց բարեգործական ընկերությունը» հիմնադրվել է 1881 թ. Թիֆլիսում՝ բժիշկ Բագրատ Նալբանդյանի նախաձեռնությամբ և գործել է մինչև 1921 թ.:

162. Հրատարակչականը-խոսքը Աբգար Հովհաննիսյանի նախաձեռնությամբ 1880-ին ստեղծված «Թիֆլիսի Հայերեն գրքերի հրատարակության ընկերության» մասին է, որը գործել է մինչև 1921 թ. (ընդհ. 1900-1910 թթ.):

163. Կուլտուրական ընկերություն-«Բաքվի Հայոց կուլտուրական միություն», ստեղծվել է 1906-ին և գործել մինչև 1917-ը: Մեծապես նպաստել է հատկապես Բաքվի Հայկական թատրոնի գործունեությանը:

164. Տրամատիկ ընկերություն- նկատի ունի «Հայոց դրամատիկ ընկերությունը», որը հիմնվել է 1901-ին հասարակական և մշակութային գործիչ Մարիամ Թումանյանի և Գ. Սունդուկյանի ջանքերով: Գործել է մինչև 1921-ը:

165. Համշիրակ-բառացի՝ կսթենովից, աննդասկից, կսթենեղբայր:

166. «Անկախությունը պահանջ ազգային գոյության» հոդվածում չարիք մը բառերից հետո դերբայական դարձվածը փոխարինված է իբրև ռուսականության երդվյալ գործիք մը ներկայացնելով մեզի դարձվածով:

167. Սիլոկիզմ- սիլոգիզմ, մտահանգման տեսակ, որտեղ եզրահանգումը հետևում է երկու և ավելի մտքերից:

168. Անարշիզմ-անարխիզմ, անիշխանականություն, սոցիալ-քաղաքական տեսություն, որը հայտարարում է պետության ոչնչացման անհրաժեշտությունը և հարկադիր իշխանության բոլոր ձևերի փոխարինումը քաղաքացիների ազատ ու կամավոր միությամբ: Զևավորվել է 19-րդ դ. 40-70-ական թթ., նրա հիմնադիրներն են Մաքս Շտիները, Պիեռ-Ժոզեֆ Պրուդոնը, Միխայիլ Բակունինը և Պյոտր Կրոպոտկինը:

169. Սերվիլիզմ-լատիներեն serviles (ստրկական) բառից, ստրկական հոգեբանություն, հակումը դեպի ստորաքարշություն ու ստրկական հնազանդություն:

170. Նկատի ունի Ալեքսեյ Բորիսովիչ Լոբանով- Ռոստովսկուն (1824-1896), ռուս դիվանագետ, իշխան, 1895-96 թթ. Ռուսաստանի արտաքին գործերի նախարար, «Հայաստանն առանց հայերի» քաղաքականության կողմնակից:

ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ ՄԵՋ

Շանթը հոդվածը գրել է 1922 թ. Մոնպելիեում: Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրում, Ա. տարի, թ. 12, էջ 38-52 (Հոկտ., 1923 թ.), Բոստոն: («Հայրենիք» ամսագրի առաջին համարը լույս է տեսել 1922 թ., որը թվագրվում է Ա. տարի):

Տպագրվել է Լ. Շանթի երկերի Ե. հատորում, 1948 թ., Բեյրութ, տպարան Հայ ճեմարանի:

Ներկա հրատարակության համար հիմք է հանդիսացել 2008 թ. Բեյրութում Համազգայինի «Վահե Սեթյան» տպարանի հրատարակած Լևոն Շանթի երկերի Ե. հատորում տպագրված հոդվածը:

1. Փիլիպոս II Մակեդոնացին (մոտ 382-336 մ.թ.ա.), Մակեդոնիայի թագավոր մ.թ.ա. 359-ից:

2. Արդի պատմագիտությունը Կրետեի հնագույն պատմությունը բաժանում է մինոսյան երեք փուլերի (Մինոսի անունով): Մինոսը Կնոսոսի (Կրետե կղզում) առասպելական թագավոր էր: Համարվել է Զևսի և Եվրոպայի որդին: Մինոսին են վերագրվում Կրետեի առաջին օրենսդրությունը, ծովային հզոր տիրակալության ստեղծումը: Կրետեի հնագույն պեղումները հիմք են տալիս Մինոսի մասին առասպելները համադրելու կղզու մ.թ.ա. 17-15-րդ դդ. պատմությանը:

3. Րուտին – (անգլ. routine) սահմանված կարգ, որոշակի ռեժիմ:

ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Շանթն աշխատությունը գրել է 1923 թ. Մոնպելիեում: Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրում «Ժողովուրդ և մտավորականություն» վերնագրով՝ Բ. տարի, թ.3, էջ 71-83 (Հունվար 1924 թ.), թ.4, էջ 86-101 (փետրվար), թ.5, էջ 87-93 (մարտ), թ.6, էջ 72-80 (ապրիլ 1924 թ.):

Տպագրվել է Լևոն Շանթի երկերի Ե. հատորում, 1948 թ. Բեյրութ, տպարան Հայ ճեմարանի:

Ներկա հրատարակության համար հիմք է հանդիսացել 2008 թ. Բեյրութում Համազգայինի «Վահէ Սեթյան» տպարանի կողմից հրատարակված Լևոն Շանթի երկերի Ե. հատորում տպագրված հոդվածը:

1. Մամիկոնյաններ- նախնարարական տոհմ Հայաստանում: Ըստ Մովսես Խորենացու և Սեբեոսի՝ Մամիկոնյանների նախնիները՝ ավանդական Մամիկն ու Կոնակը, 3-րդ դարի առաջին կեսին Հայաստան են գաղթել Ճննաց աշխարհից (Հնդկաստանի և Միջին Ասիայի միջև): 4-րդ դարի վերջին կենտրոնական իշխանության թուլացման ժամանակ Հայ Արշակունիների գահին հավատարիմ Մամիկոնյանները եռանդուն պայքարել են Մեծ Հայքի թագավորության ամբողջականության համար: Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության միջև Մեծ Հայքի թագավորության բաժանումից (387 թ.) և Արշակունիների անկումից (428 թ.) հետո Մամիկոնյանների շուրջը համախմբվել են հայրենասեր ուժերը և շարունակել ազատագրական պայքարը Սասանյան Պարսկաստանի դեմ (450-451 թ.թ., 481-484 թ.թ., 571-572 թ.թ.):

2. Բագրատունիներ – Հայ նախնարարական հնագույն տոհմ, 9-11-րդ դդ. արքայատուն Հայաստանում: 9-րդ դարում նրանք դարձել են ամենաազդեցիկ նախնարարական տոհմը և ժառանգաբար կառավարել երկիրը նախ որպես Հայոց իշխան, այնուհետև՝ իշխանաց իշխան, իսկ 885 թ-ից՝ Հայոց թագավոր: Բագրատունիների թագավորությունը (885-1045 թթ.) ստեղծվել է Արաբական խալիֆայության թուլացման պայմաններում հայ ժողովրդի ազատագրական պայքարի շնորհիվ: Հիմնադիրն է Աշոտ Ա Բագրատունին, որին 870-ական թթ. հայ նախնարարները հռչակեցին Հայոց թագավոր, իսկ արաբ խալիֆան հարկադրաբար 885 թ. պաշտոնապես ճանաչից նրա գահն ու թագը, որով վերականգնվից ընդհատված Հայկական պետությունը:

3. Բրահմաններ –վեդայական գրականության մեջ հնդկական սրբազան տրակտատներ՝ գրված մոտավորապես 8-6 դդ. մ.թ.ա.:

Բրահմաններում արտացոլվել է հասարակական կյանքում քրմերի անսահմանափակ իշխանության ժամանակաշրջանը:

Պարունակում են առասպելներ և ավանդություններ, ինչպես նաև կրոնական ծեսերի մանրամասն նկարագրություններ: Այստեղ Շանթը նկատի ունի հոգևորական դասակարգին:

*4. **Արշակունիներ** – արքայատոհմ Հայաստանում 52 (պաշտոնապես՝ 66) – 428 թթ., պարթև Արշակունիների հայկական ճյուղը: Արտաշեսյանների անկումից հետո Հայաստանում քաղաքական ազդեցության համար պայքարել են Հռոմն ու Պարթևաստանը: 52 թ. հայ-պարթևական զորքերը Հայաստանում գահ են բարձրացրել պարթևաց արքա Վաղարշ I-ի կրտսեր եղբորը՝ Տրդատ Ա-ին: Հռոմի պատերազմը (58-63 թթ.) Հայաստանի և նրա դաշնակից Պարթևաստանի դեմ ավարտվում է Հռոմի պարտությամբ: Վերջինս 66 թ. պաշտոնապես ճանաչում է Մեծ Հայքի անկախությունը և Տրդատ Ա-ի գահը, որը և համարվում է հայ Արշակունիների հիմնադիրը: Մովսես Խորենացին և այլ հայ պատմագիրներ Արշակունիների հիմնադիր են համարում Վաղարշակ Արշակունուն:*

*5. **Լոմպարդյան քաղաքներ** – տե՛ս «Մեր անկախությունը» աշխատության թիվ 23 ծանոթագրությունը:*

*6. **Գերմանական Հանզայի քաղաքներ** – (գերմ.՝ Hanse-միություն) հյուսիսգերմանական քաղաքների առևտրական միություն 14-16 դդ.՝ Լյուբեկ քաղաքի գլխավորությամբ: Հանզայի բարգավաճման շրջանում նրա կազմի մեջ եղել է շուրջ 100 քաղաք: Հանզան առևտրական գրասենյակներ ուներ Անգլիայում, Ֆրանսիայում, Հոլանդիայում, Սկանդինավյան երկրներում, Ռուսիայում: Հանզան ձգտում էր իր մենիշխանությունը հաստատել եվրոպական առևտրում:*

*7. **Ղուրան** – տե՛ս «Մեր անկախությունը» աշխատության թիվ 69 ծանոթագրությունը:*

*8. **Բնալուծություն** – քիմիա:*

*9. **Այերային** – (անգլ. air բառից) օդեղեն, հողից կտրված:*

ՀՈԳԵԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՆՉԵՎ ՄԱՐԴ

Աշխատությունն առաջին անգամ հրատարակվել է «Ակոս» ամսագրում առանձին գլուխներով՝

«Կյանք և հոգի», Ը. գիրք, Բեյրութ, 1945 թ.;

«Գրգռականություն», Թ. գիրք, 1945 թ.;

«Նախնական անդրադարձություն», Ժ. գիրք, 1945 թ.;

«Հատվածական անդրադարձություն», ԺԱ. գիրք, 1945 թ.;

«Պատկերավոր անդրադարձություն», ԺԲ. գիրք, 1945 թ.;

«Կենդանական խմացականություն», ԺԴ. գիրք, 1946 թ., ԺԵ. գիրք, ԺԶ. գիրք, ԺԷ. գիրք, ԺԸ. գիրք; ԺԹ. գիրք, 1947 թ.:

Աշխատությունն առանձին հատորով լույս է տեսել 1948 թ. Բեյրութում, հրատարակություն Հայ ճեմարանի շրջանավարտից միության, որը և հիմք է հանդիսացել ներկա հրատարակության համար: Ներսի սիտղոսաթերթիկի վրա թվագրված է 1946 թ.:

Լևոն Շանթի ծննդյան հարյուրամյակի առթիվ 1969 թ. Բեյրութում հրատարակված «Լևոն Շանթ: 1869-1969» գրքի (հրատարակություն Համազգային մշակութային ընկերակցության Բեյրութի մասնաճյուղի) «Մատենագիտություն » բաժնում նշված է, որ «Հոգեկան կարողություններու զարգացումը մինչև մարդ» աշխատությունը պետք է կազմեր Շանթի երկերի Ժ. հատորը, սակայն որպես այդպիսին չի թվագրվել. այն լույս է տեսել առանձին գրքով:

Հոգեբանության Բ. հատորը, որը պետք է կազմեր Շանթի երկերի ԺԱ. հատորը, այդպես էլ չի հրատարակվել:

1. Թալոֆիտ բույսեր – թալոֆիտներ, ստորակարգ բույսեր, որոնց մարմինը՝ թալոմը, տարբերակված չէ ցողունի, տերևի և արմատի (բակտերիաներ, ճահճագայթասնկեր, կապտականաչ ջրիմուռներ և այլն):

2. Բեղմնիկ – արու ծաղիկների փոշին, որով բեղմնավորվում են էգ. ծաղիկները:

3. Շամ, չոճի -երկուան էլ նույն սոճի ծառատեսակն են, չամին կամ չամը թուրքերեն է:

4. Տիարե – (անգլ.՝ diarrhea) լուծ:

5. Խիթին – (Հուն.՝ ծածկույթ) ածխաջրերի խմբի օրգանական նյութ: Խիթին եզրույթն առաջարկել է ֆրանսիացի Ա. Օդյեն միջատների արտաքին ամուր ծածկույթն ուսումնասիրելիս: Խիթին պարունակվում է հողվածոտանիների արտաքին կմախքի բաղադրության մեջ, ինչպես նաև որոշ ջրիմուռների ու բակտերիաների բջջաթաղանթում:

6. Սելյուլոզ – (ֆրանս.՝ celulose, լատ.՝ cellula – բջիջ, թաղանթ) թաղանթանյութ, բարձրամոլեկուլային ածխաջուր, բույսերի բջջապատերի բաղադրիչ մասը, որով պայմանավորված է բուսական հյուսվածքների մեխանիկական ամրությունն ու ճկունությունը:

7. Քալք – կալցիում:

8. Սիլիզ – սիլիցիում. կենդանի օրգանիզմներում սիլիցիումի պարունակությունը հիմնականում գտնվում է կարծր հյուսվածքներում: Կուտակվում է ծովային որոշ բույսերում և կենդանիներում:

9. Նյուքթոն –Իսահակ Նյուտոն (1643-1727), անգլիացի փիլիսոփա:

10. Օլինթուա – կրային գոյացություն:

11. Կճան –կծող, խայթող, դաղող:

12. Նոյրոն – նեյրոն, նյարդային բջիջ, նյարդային համակարգի կառուցվածքային և ֆունկցիոնալ հիմնական միավորը:

13. Սրբան – հետույք, նախասաղիքի վերջին ծայրը:

14. Սիմպատիկ կանկլիոն – նյարդային վեգետատիվ համակարգի հանգույց:

15. Միահատված ռոտիֆեր – միկրոսկոպիկ ջրային կենդանի:

16. Պանկրեաս – (pancreas) ենթաստամոքսային գեղձ:

17 Աորտա – աորտա:

18. Բետինա – (retina) ցանցաթաղանթ:

19. Քրիստալային – (crystal) բյուրեղային:

20. Կորնեա – (cornea) եղջերաթաղանթ:

21. Լարինքս – (larynx) կոկորդ, խռչակ:

22. Տիաֆրակմա – 1.միջնապատ, թաղանթ: 2. ստոծանի:

23. Եվստախ – Եվստախիո Էուստաւկիո Բարտոլոմեո (մոտ. 1510-1574), իտալացի բժիշկ, անատոմ: Գիտական, հատկապես համեմատական անատոմիայի հիմնադիրն է: «Գիրք լսողության մասին» (1563 թ.) աշխատության մեջ առաջինը մանրամասն նկարագրեց մարդու լսողության օրգանը; հայտնաբերել է ներքին ականջը քիթ-ըմպանային խոռոչին միացնող այսպես կոչված եվստախյան խողովակը, ստորին սինեբրալի կիսալուսնաձև փականը:

24. Կլափ – կափույր, փական:

25. Հիպոթենուզ – ներքնաձիգ:

26. Կորդիի փակուղի -այդպես է կոչվել իտալացի անատոմ Ալֆոնսո Ջիակոմո Քորթիի (1822-1876) անունով:

27. Հարտըր-Հարդր Յոհան Յակոբ (1656-1711), շվեյցարացի անատոմ:

28. Միելին – պաշտպանողական բջիջների մեջ պարունակվող նյութ:

29. Ընջակ – կոնքեր, գոտկատեղից ներքև ընկած մասը:

30. Մոնրոյի ծակեր - այդպես կոչվել են շոտլանդացի անատոմ Ալեքսանդր Մոնրոյի (1733-1817) անունով:

31. Սիլվի – Սիլվիուս Ֆրանչեսկա Դելե Բոե (1614-1672), հոլանդացի բժիշկ և քիմիկոս: Նկարագրել է միջանկյալ ուղեղի ակոսը, որը նրա անունով կոչվում է Սիլվիի անցք:

32. Վերոլի կամուրջ-Կոնստանցո Վարոլիո (1543-1575), իտալացի անատոմ:

33. Քլարք Յակոբ Ավգուստո Լոքհարթ (1817-1880)- անգլիացի անատոմ, բժիշկ և նյարդաբան:

34. Ոլտեյեր – Վոլդեյեր Հենրիխ Վիլհելմ Գոդֆրիդ (1836-1921), գերմանացի անատոմ:

35. Պախտերև - Բեխտերև Վլադիմիր Միխայլովիչ (1857-1927), ռուս նյարդաբան, հոգեբան, հոգեբույժ, փիզիոլոգ և մորֆոլոգ: Գիտական մեծ արժեք են ներկայացնում Բեխտերևի ուղեղի մորֆոլոգիայի մասին ուսումնասիրությունները: Բացահայտել է ողնուղեղի և գլխուղեղի առանձին նյարդային հաղորդիչ ուղիները, վեր հանել թալամուսային (տեսաթմբային) շրջանի դերն ու նշանակությունը:

36. Ռոլանտ - Ռոլանդո Լուիջի (1773-1831), իտալացի բժիշկ, անատոմ, ֆիզիոլոգ: Հիմնականում զբաղվել է ուղեղի անատոմիական, ֆիզիոլոգիական և սաղմնաբանական ուսումնասիրությամբ: Նրա անունն առնչվում է Ռոլանդի ակոսի հետ՝ Rolandic fissure.

37 Առասան – բարակ թել, լար:

38. Թալամուս – տեսողական թմբեր. գորշ նյութի զույգ կուտակումներում, միջանկյալ ուղեղում, երրորդ փորոքի երկու կողմերում: Դրանց միջով են անցնում կեղև գնացող բոլոր զգացող ուղիները, բացառությամբ հոտառականի: Տեսաթմբերը կազմված են մի շարք կորիզներից, որոնք զգայությունների մինչկեղևային վերամշակման, վերլուծության և հուզական երանգավորման կենտրոններն են:

39. Կոլ - Գոլլ Ֆրիդրիխ (1829-1903), շվեյցարացի նեյրոանատոմ: Հայտնի է fasciculus gracilis-ի՝ ողնաշարի նուրբ թելիկների հանգույցի նկարագրությամբ, որը հայտնի է նաև Գոլլի տրակտ անունով:

40. Պուրտախ - Բուրդախ Կառլ Ֆրիդրիխ (1776-1847), գերմանացի անատոմ, ֆիզիոլոգ, սաղմնաբան: Նա է առաջին անգամ օգտագործել «բիոլոգիա» բառը 1800 թ.: Նրա անունով են կոչվում ողնաշարից ուղեղ գնացող նյարդային հանգույցները:

41. Սկարպա Անտոնիո (1752-1832)- իտալացի անատոմ, նյարդաբան և վիրաբույժ: Ուշագրավ են նկարագրական անատոմիայի բնագավառում նրա կատարած ուսումնասիրությունները: Հայտնի են նյարդային պանգլիոնների և ոսկրերի նրա մանրադիտակային նկարագրությունները:

42. Օլիվ - կորիզ, բառացի՝ ձիթապտուղ (olive):

43. Ռեյլ Յոհան Քրիստիան (1759-1813) - գերմանացի բժիշկ, ֆիզիոլոգ: Ուսումնասիրել է ուղեղի անատոմիան:

44. Պրիմատ – կաթնասունների բարձրագույն կարգ: Գիտնականների մեծ մասը դրանք բաժանում է երկու ենթակարգերի՝ կիսակապիկների և կապիկների:

45. Պուրկինճե - Պուրկինե Յան Էվանգելիստա (1787-1869), չեխ փիզիոլոգ, կենսաբան և հասարակական գործիչ: Մեծ է նրա դերը անատոմիայի, փիզիոլոգիայի, սաղմնաբանության և բջջաբանության զարգացման գործում: Առաջին անգամ ներմուծել է «պրոտոպլազմա» հասկացությունը 1839 թ., հայտնաբերել է մաշկի քրտնագեղձերը, փոքր ուղեղի կեղևի նեյրոնները, սրտամկանի հյուսվածքային ցանցը, որը նրա անունով կոչվում է Պուրկինեի ցանցային համակարգ:

46. Pulvinar – թալամուսի թմբիկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՔ ՄԱՐԴԿԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 5

ՄԵՐ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ 80

ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԿԵՐԱՑԻՆ ԿՑԱՆՔԻՆ ՄԵՋ 295

ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝.....327

ՀՈԳԵԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՆՉԵՎ ՄԱՐՄՆ 407

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 678

ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ՈՒԹԵՐՈՐԴ

Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր՝ N 700
Հանձնված է արտադրության՝ 16.06.2016թ.:
Չափսը՝ 60 x 84 1/16: Թուղթ՝ օֆսեթ N 1:
44,5 տպագր. մամուլ: Տպաքանակը 300 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան
Երևան, Բաղրամյան 24:

[1000 ր.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0438011